Աշոտ դպիր Ահնշատյան

ՀԱՅԱՍՏԱՆ ԱՐԱՐՉԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԻՑ ՄԻՆՉԵՎ ԵՐԿՐՈՐԴ ԳԱԼՈՒՍՏ

Հատոր II

Գիրք–I Հայաստանը և նոր ձևավորվող կայսրությունները
Գիրք–II Նախախնամության կամքի իրականացնողները Հայկական լեռնաշխարհից
Գիրք–III Նոր բացահայտումներ
Գիրք–IV Խորհուրդ մեծ և սքանչելի
Գիրք–V Հայաստան. անկումների և նոր վերելքների շրջան
Գիրք–VI Երվանդունիներից՝ մինչ առաջին դար

Երևան – 2020

ՀՏԴ 94(479.25)
ԳՄԴ 63.3(5Հ)
Ա 865

Մեր խորին երախտագիտությունն ենք հայտնում բարեւարին՝ «Հայաստան. Արարչագործությունից մինչև երկրորդ Գալուստ» աշխատության *II* հատորի տպագրությունը հովանավորելու համար։

Խմբագրական կազմ՝ Սասունիկ Ալեքսանյան, Լիլիթ Թափալցյան
Սրբագրում՝ Կարմեն Մարտիրոսյան
Անգլերենից արված թարգմանություններ՝ Անահիտ Հովհաննիսյան
Համակարգչային ձևավորում՝ Հեղինե Փիլոյանի
Շապիկի ձևավորում՝ Արման Կարախանյան
Խոհրդատվություն, համակարգչային տեխնիկայի ապահովում՝ Մանվել Բաբայան

Մեր խորին երախտագիտությունն ենք հայտնում նաև բոլոր այն անձանց, ովքեր չզլացան «Հայաստան. Արարչագործությունից մինչև երկրորդ Գալուստ» աշխատության II հատորի իրականացման համար տրամադրել իրենց մտավոր, հոգևոր և նյութական աջակցությունը։

Արևշատյան Ա.
Ա 865 Հայաստան. Արարչագործությունից մինչև երկրորդ Գալուստ / Ա. Արևշատյան.- Եր.: «Էդիթ Պրինտ», 2020.- 672 էջ։

Ընթերցողին ներկայացվող սույն հատորը նույնպես նվիրված է Հայոց պատմության այն էջերին, որոնց մասին շատ քիչ է խոսվել, իսկ որոշ նյութեր ընդհանրապես ծածկված են եղել անհայտության շղարշի ներքո։ Սա Հայկ Նահապետի ժամանակներից սկսած մինչ Քրիստի ծնունդն ընկած մոտ 2300 տարվա ժամանակաշրջանում եղող Հայոց պատմությունն է, ինչը չունի ընդհատվող շրջան։ Հայոց պատմության որոշ կարևոր դրվագներ, վերջին դարերում ներկայացվում են որպես առասպել, իսկ այս աշխատությունում հիմնավորապես ապացուցվում է դրանց միանգամայն իրական լինելը։

ՀՏԴ 94(479.25)
ԳՄԴ 63.3(5Հ)

ISBN 978-9939-75-513-7

© Աշոտ դպիր Արևշատյան, 2020
© «Էդիթ Պրինտ» հրատարակչություն, 2020

«Երանի այն ազգին, որի օգնականը Տեր
Աստված է, երանի այն ժողովրդին, որին Իր համար Նա
ժառանգություն ընտրեց»[1]:


Հրվանդան
Տիգրիս
Տիգրիս
Տիգրիս
Եփրատ
Տիգրիս
Տիգրիս
Տիգրիս



Երկու խոսք

Հինգ երկար տարիների սպասումից հետո վերջապես Տիրոջ շնորհով արժանացանք հայոց պատմության ծրարված էջերը բացահայտող ինքնատիպ գրքաշարի երկրորդ հատորյակի ըմբոշխմանը: Այո՛, Տիրոջ շնորհով, և հենց Տիրոջ կողմից մեր «փոքրիկ ածու»-ին շնորհված բազմաթիվ իրադարձություններ և իրավիճակներ են հառնում մեր առաջ, և, անկեղծ լինենք, ներքին մի անհամբերությամբ կցանկանայինք ամբողջացած տեսնել հեղինակի գեղեցիկ և չափազանց օգտակար մտահղացումը՝ հոգևոր շաղախով ներկայացնել Հայոց աշխարհին և Հայկի սերնդին Աստծուց տրված առանձնաշնորհները՝ Դրախտից մինչև Երկրորդ Գալուստ:

Այս գրքում հեղինակի խոսքերով՝ «յուրովի խորհրդավոր» Հայաստանը և հայ ժողովուրդը բոլորովին այլ մի տեսակետից են ներկայանում ընթերցողին, աստվածաշնչյան և պատմական ամենատարբեր դեպքեր և դեմքեր բոլորովին այլ հարթության վրա են հանդես գալիս, հերքվում են բազմաթիվ սխալ ու անհիմն պնդումներ հայ ժողովրդի և նրա համար մաշկի գույն դարձած քրիստոնեության վերաբերյալ, հայթայթվում են բացատրություններ շատ ու շատ ողբերգական շրջադարձների, որ եղել են մեր ժողովրդի և տառապյալ մեր Հայրենիքի՝ Երկիր Դրախտավայրի կյանքում ու պատմության մեջ:

Հայտնագործել Հայաստանը, գտնել կորած բանալին ամբողջ մարդկության գանձերն իր մեջ ամփոփող սենյակի. ահա՛ Աշոտ Արևշատյանի ձեռնարկած աշխատության հիմնական նպատակներից մեկը: Եվ հեղինակը ջանք ու եռանդ չի խնայում, որ այն դառնա ոչ միայն յուրաքանչյուր հայորդու, այլև՝ ամեն մարդու նպատակ՝ անկախ ազգությունից և բնակության վայրից: Քանի որ միայն հայտնագործելով, միայն ճանաչելով՝ կարելի է միանալ նրան, սիրել ու գուրգուրել այն, պահել ու պաշտպանել ամեն գնով՝ որպես սրբություն, որպես մեծագույն արժեք, որպես պարգև Արարչից:

Աշխատության երկրորդ հիմնական նպատակն ընթերցողին Աստծուն մոտեցնելն է, նրան փառաբանության մղելը, Իր պարգևների համար Նրան մշտապես օրհնելը, Նրա ձեռքից ստացածը երկյուղածությամբ ու խնամքով պահելը և «տոկոսով» վերադարձնելը, ամեն բարիքի և շնորհի աղբյուր՝ Նրան համարելը, և ամեն մի կորուստ Նրա ողորմությամբ ու շնորհով՝ Իր օգնությամբ և օժանդակությամբ վերականգնելու և վերահաստատելու հույսով ու հավատով ապրելը:

Մեծ ուրախությամբ շնորհավորում ենք հեղինակին գրքի երկրորդ

հատորի լույս ընծայման առթիվ և հայցում Տիրոջ օրհնութիւնն ու սերը բոլոր նրանց, ովքեր իրենց հոգևոր, բարոյական և նյութական աջակցութեամբ նպաստ են բերել հատորյակի պատրաստման և հրատարակման գործին։

Հույսով աղոթում ենք, որ ամեն մի ընթերցող, քայլելով ներկայացված պատմութեան զարմանահրաշ շավիղներով, թափանցի խորքերը խորհրդավոր «երկիր Դրախտավայրի» և հիացած բացականչի. «Ես երջանիկ եմ, որ ճանաչեցի Հայաստանը՝ Արարչի սքանչելի ստեղծագործութիւնը»։

Մինաս ավագ
քահանա Մարտիրոսյան



Խնդրում ենք, աղոթքո՛վ հիշեք

ՍԱՐԳԻՍ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ,

ում հիշատակին է նվիրվում սույն
հրատարակությունը:
Թող ամենողորմ Աստված արդարների լույս
օթևաններում
պահի նրա հոգին և դատաստանի օրը
հավիտենական կյանք պարգևի:

Ամեն

ԱՌԱՋԱԲԱՆ

«Հայ ժողովրդի պատմությունը բավարար չափով քննված չէ. հայոց արմատները պատված են մշուշով, միջազգային դերը հաճախ չափազանց անտեսված է, ինչն արդյունք է սխալ դիտարկման: Մինչդեռ հայ ժողովրդի պատմությունն առավել ուշադիր ուսումնասիրելիս հարկ է այդ ազգի հանդեպ ցուցաբերել առավել հետաքրքրություն, առավել համակրանք, առավել հարգանք»[1]:

*Ահա, իրականացավ **«Հայաստան. արարչագործությունից մինչ երկրորդ Գալուստ»** աշխատության երկրորդ հատորի տպագրությունը: Առաջին հատորից իսկ միանգամայն հստակ էր, որ Հայաստանը և հայ ժողովուրդը յուրովի խորհրդավոր են. ենթագրքերից ամեն մեկը մի զարմանահրաշ նյութի մասին էր, որ համամարդկային բնույթ ունենալով՝ վերաբերում էր հենց Հայաստանին և նրա բնիկներին՝ հայ ժողովրդին: Իսկ այդ ամենը չէր կարող պատահականությունների շղթա լինել. այդքան շնորհներ՝ տրված մի երկրի և ժողովրդի: Դա միանշանակ կարող էր լինել միայն Նախախնամության կամոք:*

Եվ եթե, արարչագործության չափանիշներով, այդքան շնորհներ կենտրոնացված են եղել միևնույն երկրում, և ինչպես ասվեց, այդ ամենը չէր կարող պատահականության արդյունք լինել, ուրեմն, կարելի է հետևություն անել, որ այդ զարմանահրաշ իրողությունները նաև շարունակական պիտի լինեին: Իրականում, այդպես էլ կա. և այս՝ երկրորդ հատորն էլ իր հերթին ի ցույց է դնում հայ ժողովրդին վերաբերող նոր անսովոր դեպքեր:

Տվյալ հատորում ներկայացվում է արդեն Հայկ Նահապետից հետո՝ նրա ավագ որդի Արամանյակի ժամանակներից սկսած՝ մինչև Ն.Ք. I դարի վերջը եղող, մոտ 2300 տարի ձգվող հայոց պատմությունը: Ինչպես տեղեկացվեց առաջին հատորում, պատմության այդ ընթացքն այստեղ կներկայացվի՝ որպես մի ամբողջական շղթա՝ առանց որևէ օղակի խաթարման:

Այս հատորը նույնպես հագեցած է նյութը հիմնավորող բազմաթիվ պատմաբանների, հնագետների, աստվածաբանների, բանասերների և

---

[1] Ֆրեդերիկ Սակլեր, տե՛ս Երկիր Դրախտավայր. Օտարերկրացիները Հայաստանի և հայերի մասին.... Երևան 2014 թ., էջ 457:

այլոց աշխատություններից բերված փաստարկներով: Եվ քանի որ այս աշխատությունը ևս ներկայացնում է Հայոց պատմությունն՝ իր ամբողջ լիությամբ, այսինքն՝ հոգևորը և պատմականը միասնականորեն, այն նույնպես դառնում է զարմանալիորեն հարուստ և արտասովոր:

Երկու ազգ կա Երկիր մոլորակի վրա, որոնց պատմությունները, եթե դրանցից հանեն հոգևորը, կդառնան չափազանց սնանկ և ծանծաղ. այդ ազգերն են հայերն ու հրեաները:

Ի՞նչ կպատահի, եթե հրեաների պատմությունից հանվեն բոլոր այն տեղեկությունները, որ կան Աստվածաշունչ մատյանում: Կմնան ընդամենը կցկտուր տեղեկություններ՝ անտիկ պատմագիրներից:

Իսկ ինչ վերաբերում է Հայաստանի պատմությանը. ինչպես տեղեկացանք առաջին հատորից, Հին Կտակարանում խորին խորհուրդներ կան հենց հայ ժողովրդի և Հայկական լեռնաշխարհի վերաբերյալ: Նմանապես և այս՝ երկրորդ հատորում կտեսնենք նոր բացահայտումներ՝ կապված Հայաստանի և հայ ժողովրդի հետ, որ ի հայտ են եկել Աստվածաշունչ մատյանի առաջին մասի՝ Հին Կտակարանի խորհրդավոր և մինչ այժմ ծածուկ խորհուրդների բացահայտումներից:

Ոմանք համարում են, որ Հին Կտակարանը բացառապես հրեաների պատմություն է, սակայն այս երկու հատորներն ի ցույց են դնում, որ Հին Կտակարանում կան հենց Հայաստանի հետ կապված շատ մեծ և խորհրդավոր հրաշալիքներ, որ Նախախնամության կամոք գաղտնազերծվելով՝ սկսում են ի հայտ գալ մեր ժամանակներում: Հնագիտությունն ու պատմությունն էլ դառնում են միջոց, որպեսզի մինչ այժմ անհայտ այդ տեղեկությունների վրայից վերցվի դրանք ծածկող քողը:

*Եվ ուրեմն, Հայոց պատմությունը, չնայած դարերի խորքից մեզ հասած պատմական բազմաթիվ գրքերի՝ գլխավորապես, Մովսես Խորենացու «Հայոց պատմության» առկայությանը, դեռ կարիք ունի բազմաթիվ նոր բացահայտումների: **«Այսօր, հիմնականում վստահելով մեր հանճարեղ պատմահայր Մովսես Խորենացուն՝ պարտավոր ենք նրա «Հայոց պատմությունը» լրացնել, նաև հաստատել հին աշխարհից պահպանված արձանագրությունների ու գրքերի վստահելի տվյալներով և այդպես վերականգնել պատմական ճշմարտության պատկերը»**[2]:*

Հայաստանի և հայ ժողովրդի վերաբերյալ խորհրդավորությունը շատերի մեջ է մեծ հետաքրքրություն բորբոքել, և ոչ միայն՝ հայ, այլև այլազգի ուսումնասիրողների, որոնցից է ազգությամբ լեհ հրապարակախոս, արևելագետ, թարգմանիչ Բոգդան Գեմբարսկին: Նա էլ, ինչ-որ չափով կանխազգալով Հայաստանի խորհրդավորությունը և ջանալով խորանալ Հայոց աշխարհի զարմանահրաշ գաղտնիքների մեջ, այլոց կոչ է արել իր

[2] Ռ.Ա. Իշխանյան, Հայ ժողովրդի ծագման ու հնագույն պատմության հարցեր, Երևան 1988 թ., էջ 76:

պես վարվել՝ համարելով, որ օբյեկտիվ պատճառներով ինքն ի զորու չէ դա իրականացնել. «Այժմ ձեզ պետք է ասեմ, թե ինչու հենց Հայաստանը սիրեցի։

Հնդկաստանի հանգուցյալ վարչապետը՝ Ջավահառլալ Ներուն, Անգլիայում դաստիարակված հնդիկ էր։ Նախքան իր հայրենիքը՝ Հնդկաստանը սիրելը, պետք է հայտնագործեր այն։ Ու հենց այդպես էլ նա վերնագրել է իր մեծ ստեղծագործությունը՝ այդ երկրի մասին՝ «Հնդկաստանի հայտնագործումը»։

Ես պետք է հայտնագործեի Հայաստանը՝ նախքան նրան իր տառապանքների մեջ սիրելը, մանավանդ, որ երակներիս մեջ չի հոսում հայկական արյան ոչ մի կաթիլ։

Այդ հայտնագործումը մեծապես ցնցեց ինձ։ Կարծես գտա վաղուց կորած բանալին այն սենյակի, որի մեջ խառնիխուռն թափթփված են ամբողջ մարդկությանը պատկանող գանձերը։ Դրա համար երկար ժամանակ մարդիկ անցնում էին այդ սենյակի մոտով՝ առանց նկատելու սարդոստայնով ու փոշով ծածկված այդ դուռը. մոռացել էին հրաշագործ բանալու մասին։ Եղել են անհատներ, որ հանկարծակի պայծառատեսության պահերին հիշել են հանկարծ նրա մասին, բայց չեն կարողացել բանալ զարմանահրաշ դուռը։

Ես էլ, ավա՛ղ, ինքս իմ սեփական ուժերով չեմ կարողանա բացել այդ դուռը, եթե դու, անծանո՛թ ընթերցողս, չգաս ինձ օգնության։

Դրա համար էլ հենց սկսեցի այս խոսակցությունը քեզ հետ։ Չգիտեմ նույնիսկ, թե ով ես դու, որովհետև չգիտեմ, թե որտեղ և ինչ լեզվով լույս կտեսնի, վերջապես, այս նամակը։ Գուցե գյուղացի ես կամ արհեստավոր, գուցե գիտնական կամ բանվոր։ Գուցե նաև նոր ազատագրված երկրներից մեկի քաղաքացին ես կամ որևէ այլ անձ։ Բայց, ով էլ որ լինես, կկարողանաս շատ ավելի բան անել, քան՝ ես, որովհետև ծեր եմ արդեն և հիվանդոտ, պակասում է ինձ նաև երիտասարդական եռանդն ու նախաձեռնողականությունը։

Խոստանում եմ քեզ մի բան. եթե կատարես այն, ինչի մասին խնդրում եմ քեզ, ապա հավերժ կհիշվես մարդկության պատմության մեջ։ Իսկ դա արդեն շատ բան է նշանակում, այնքան շատ, որ միայն դրա համար արժե՛ ապրել։

Կատարի՛ր միայն մեկ բան. օգնի՛ր ինձ բանալ կախարդված դուռը, իսկ եթե հանկարծ սիրտս դադարի բաբախել, եղի՛ր մեկը նրանցից, որոնք իմ սկսած գործը կհասցնեն մինչև վերջ։

Բայց նախքան ասելը, թե ինչպես եմ պատկերացնում քո մասնակցությունն այդ մեծ գործին, թո՛ւյլ տուր, որ նախևառաջ պատմեմ քեզ իմ սիրո առարկայի մասին. առանց հողի՝ մարդկանց մասին և առանց մարդկանց՝ հողի մասին, որն Աստված անվանեց Հայաստան։ Դա հենց

այն Հայաստանն է, որ ես գտել, հայտնագործել եմ, ինչպես Կոլումբոսը հայտնագործել է Ամերիկան՝ Երկրի վրա, իսկ Ներուն՝ Հնդկաստանը՝ իր սեփական սրտի մեջ»[3]*:*

Այո, իսկապես, այսօր Հայաստանն իր ամբողջ պատմական լիութ-յամբ դեռ հայտնագործվելու կարիք ունի՝ թե՛ մեզ՝ հայերիս և թե՛ աշխար-հի միլիոնավոր ժողովուրդների համար:

Ճիշտ է նկատել Բոգդան Գեմբարսկին, որ Հայոց պատմութ-յան՝ դեռ չբացահայտված առեղծվածային դուռը դարեր շարունակ քողարկված է եղել սարդոստայնով և այդ զարմանալի դռան հետևում գտնվող հրաշա-փառ գանձերի հանդեպ անտարբերութ-յան և չար դիտավորութ-յան փոշով:

Հուսանք, որ այս աշխատութ-յունը կկարողանա ծառայել՝ որպես հա-զարավոր տարիներ փակված այդ առեղծվածային դռան բանալի:

Մեր հնագույն պատմութ-յունից շատ բաներ գիտական աշխարհում ընդունված է համարել առասպել: Սակայն այստեղ հենց նույն գիտա-կան աշխարհի հիմնավորումներով ի ցույց է դրվում դրանց՝ միանգամայն իրական լինելը:

Իհարկե, գրքում բերված բազմաթիվ փաստերը ծառայում են որպես հիմք՝ բերված նյութերի համար: Սակայն հիշենք, որ խոսքը Հայկ Նահա-պետի որդի Արամանյակի ժամանակներից սկսած պատմութ-յան մասին է, և այդ խորը հնութ-յան խորխորատների հետազոտութ-յունը, ինչքան էլ վստահելի հիմնավորումներով ամրապնդված լինի, միևնույն է՝ ինչ-ինչ անստույգութ-յուններ կարող է ունենալ: Նման բաները խորթ չեն պատմա-կան և հնագիտական աշխարհին: ***«Երբ պատմաբանները քննադատութ-յան են ենթարկում Աստվածաշնչում առկա տեղեկութ-յունները, որ վերա-բերում են ինչպես տվյալ ժամանակահատվածին***[4]***, այնպես էլ ավելի վաղ ժամանակներին, անփորձ մարդու մոտ տպավորութ-յուն է ստեղծվում, թե գիտութ-յունն այս ժամանակների մասին գիտի այնպես հստակ, ինչպես՝ երեկվա օրվա մասին: Բայց իրականում, ոչ մի նման բան. հնագույն պատ-մութ-յունն ավելի ենթադրութ-յունների և հիպոթեզների շրջան է, և որքան հին, այնքան ավելի հիպոթեզային: Նույնիսկ այն դեպքում, երբ առկա է հին դպրութ-յան հուշարձան, նրա արտածումը հաճախ փորձադաշտ է հի-պոթետիկ ենթադրութ-յունների և պարզապես երևակայութ-յան համար»***[5]*:*

Տեսնում ենք, որ ըստ պատմաբան Մարիա Զգուրսկայայի՝ նույնիսկ հնագիտութ-յունը և պատմութ-յունն այդ հնագույն ժամանակների մա-սին չեն կարող միանգամայն հստակ և վերջնական խոսք ասել: Սակայն հուսալով Ամենակարող Աստծո շնորհին՝ մենք կաշխատենք՝ հնարավո-րինս հիմնավոր, փաստերով ի ցույց դնել Հայոց պատմութ-յան այդ հնա-

---

3 Բոգդան Գեմբարսկի, տես Սև Գիրք, Երևան 2011 թ., էջ 627–628:

4 Ն.Ք. XVIII – XVI դարեր:

5 Мария Павловна Згурская, Древний Египет, Харьков 2008 г., ст. 339.

գույն շրջանի թե՛ հայտնի, թե՛ մինչ օրս անհայտ և, որ ամենակարևորն է, առեղծվածային դեպքերի մասին տեղեկություններ։

«Չի կարող լավ քրիստոնյա լինել նա, ով անտարբեր է պատմության հանդեպ»[6]։

Այսօր Երկիր մոլորակն ապրում է համաշխարհայինացման (գլոբալացման) շրջան. երբ ազգայինը և հոգևորը հետևողականորեն դուրս են մղվում մարդկության մտահորիզոնից, և մեր հայրենակիցները աշխարհի տարբեր ծայրերում սկսում են կորցնել իրենց լեզուն և կապը հայրենիքի հետ՝ գտնվելով այլ ազգերի մեջ տարրալուծվելու վտանգի տակ։

«Մարդկանց ոչնչացնելու առավել արդյունավետ միջոցը սեփական պատմությունը ժխտելն ու ոչնչացնելն է»[7]։

«Խլիր ժողովրդից իր պատմությունը և որոշ ժամանակ անց այն կվերածվի ամբոխի, իսկ մեկ սերունդ հետո նրան կարող ես կառավարել ինչպես նախրի»[8]։

Իսկ այս աշխատությունը կարող է մեծ դրական ազդեցություն ունենալ այդ անկումը կասեցնելու առումով և նպաստել ազգայինի և հոգևորի զարթոնքին. ***«Հայությունն աշխարհի ամենահին ու ամենահետաքրքիր ազգերից է։ Դուք ունեցել եք ոսկեղեն պատմություն»[9]։***

Օտարներն էլ այստեղ կարող են շատ կարևոր ուղերձներ գտնել. եթե ծանոթանան մեր երկրի խորհրդավորությանը՝ այստեղ տեսնելով իրենց բուն նախահայրենիքը՝ մարդկության բնօրրանը, և այն, որ հենց այստեղից պետք է սպասեն աշխարհային ամեն ինչի վախճանին և սպասվող հավիտենականության սկզբին՝ Տիրոջ Երկրորդ փառավոր Գալստյանը, միլիոնավոր մարդիկ կճանաչեն մեր երկիրը՝ որպես նոր Ավետյաց Երկիր, և ամեն մեկն էլ կցանկանա իր լուման ներդնել մարդկության հնագույն հայրենիքի՝ Հայաստան աշխարհի բարգավաճման համար։

«Հայ ժողովուրդը մեծ անցյալ ունի իր թիկունքում... Այն ժողովուրդը, որ շատ փորձություն է տեսել, հոգեպես ավելի ուժեղ է, նա հոգեկան հմայք ունի։ Սա մեծ ժողովուրդ է։

Ես երջանիկ եմ, որ եղա Հայաստանում։

Ես տեսա անսովոր հին մի արվեստ, որն ինձ ցնցեց. մի երկիր, ուր պետք է մտնել գլխաբաց, ինչպես Ճապոնիայում, և կոշիկները հանած՝ այնպես, ինչպես Հնդկաստանում տաճար են մտնում։

Այդպես է ամբողջ երկիրը, նրա յուրաքանչյուր մասնիկն անսովոր հին է և իմաստուն։

---

6 Գեորգի Ֆլորովսկի, ռուս աստվածաբան։

7 Ջորջ Օրուել։

8 Դոկտոր Գեբելս։

9 Ջեյմս Բրայս, Տե՛ս Երկիր Դրախտավայր. Օտարերկրացիները Հայաստանի և հայերի մասին.... Երևան 2014 թ., էջ 275։

Հայաստանի պատմությունը պատմություն է որքան վաղնջական, առավել՝ եղերական։ Դարերն այնտեղ չեն հաշվի մանկական թվաբանությամբ։ Այստեղ են խաչաձևվել հյուսիսն ու հարավը, արևելքն ու արևմուտքը»[10]։

Դե, այժմ ոտք դնենք Մեծ Հայքի տարածք և ն.Ք XXIV դարի վերջերից սկսենք մեր պատմական ճամփորդությունը մինչև ն.Ք I-ին դար. Աստված մեզ օգնական։

Աշոտ դպիր Արևշատյան

[10] Իլյա Էրենբուրգ, տես Երկիր Դրախտավայր. Օտարերկրացիները Հայաստանի և հայերի մասին.... Երևան 2014 թ., էջ 566:

ԳԻՐՔ I

ՀԱՅԱՍՏԱՆԸ ԵՎ ՆՈՐ ԶԵՎԱՎՈՐՎՈՂ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հայաստան և Սարգոն Առաջին

«Դու պատկանում ես նախնական և քաջ ազգի՝ արդյունաբեր և պիտանի՝ ոչ միայն խոսքի ու խոհականության մեջ, այլև բազմաթիվ մեծամեծ, փառավոր գործերով, որոնք մենք կհիշատակենք այս պատմության ընթացքում»[1]:

Հայաստանը, ինչպես արդեն նախորդ հատորում տեսանք, Տիգրիս և Եփրատ գետերի ամբողջ երկայնքով ձգվող և, ընդհանրապես, մարդաբնակ ամբողջ տարածքում ամենազարգացած երկիրն էր: Այդ անհերքելի փաստը դարեր շարունակ ծածկված է եղել հնագետների և պատմաբանների հայացքից կամ էլ միտումնավոր անտեսվել է:

Աշխարհի տարբեր անկյուններում կյանքի այս կամ այն ոլորտներից յուրաքանչյուրի (մետաղագործության, գյուղատնտեսության, շինարարության, հանքարդյունաբերության, աստղագիտության, ռազմական և այլն) ուսումնասիրմամբ զբաղվող գիտնականներից շատերը եզրահանգում են, որ այդ գիտությունների ծննդավայր-հայրենիքը Հայկական լեռնաշխարհն է, սակայն այդ բոլոր փաստարկների մեկտեղումը ոչ մի աշխատության մեջ առկա չէ: Մինչդեռ երբ այդ հետազոտություններն ի մի ենք բերում, մեր աչքերի առջև պատկերվում է Արատտա հեքիաթային երկիրը: Եվ սա անվիճելի փաստ է:

Ոմանք Արատտան տեղադրում են Իրանական լեռնաշխարհում, ոմանք Ուկրաինայում, սակայն բազմաթիվ լուրջ փաստերի առկայությունը միանշանակ խոսում է Արարատյան երկրի և Արատտայի նույնության մասին: Եվ ուրախալի է այն, որ օրեցօր ավելանում են իրենց ոլորտում մեծ ճանաչում գտած ազնիվ մասնագետները, ովքեր համարձակորեն և

---

[1] Մովսես Խորենացի, Պատմություն հայոց, Երևան 1968 թ., էջ 58:

*անկեղծությամբ աշխարհին են ներկայացնում իրենց գիտական հետազոտությունների արդյունքներն այս խնդրահարույց նյութի շուրջ. նրանցից է Մաքսիմիլիան դե Լաֆաետը. **«Հայաստանը (Ուրաշտու՝ աքքադերենում, Արմինա՝ հին պարսկերենում և Արմինիա՝ արաբերենում) 8000 տարեկան է: Շումերները հիշատակում էին Հայաստանը որպես Արարատ կամ Արատտա, քաղաքակրթության օրրան: Վաղ շումերական գրագիրներն ընդունում էին, որ արատտացիները (հայերը), ովքեր ապրում էին Հայկական բարձրավանդակում, եղել են իրենց նախահայրերը: Այսպիսով, քաղաքակրթությունը սկսվել է ո՛չ Միջագետքում և ո՛չ էլ աշխարհի որևէ այլ մասում, այլ՝ Հայաստանում»**[2].*

Այդ վաղնջական ժամանակաշրջանում Հայկ Նահապետն իր Աստվածառաք գործն էր կատարում Սաղեմում, իսկ նրա զավակներն՝ իրենց փառահեղ հոր օրինակով, ջանում էին Արարատյան աշխարհում բարձր պահել հոգևոր կենսամակարդակն ու զարգացնել տնտեսությունը: Դրան մեծապես նպաստում էր Պաղեստինի հայկական թագավորության՝ Սաղեմի և Հայաստանի միջև եղած կապը:

Հայկը մինչ Պաղեստին գնալն իր ավագ որդուն՝ Արամանյակին հանձնեց Հայաստանի կառավարումը. նա էլ իր հերթին տարբեր գավառներում իշխաններ կարգեց իր եղբայրներին, նաև՝ իր և նրանց սերունդներից կարող մարդկանց:

*Մարգարեական շնորհով օժտված մեր օրհնյալ նահապետ Հայկ-Մելքիսեդեկը, կանխազգալով, որ Միջագետքում, վաղ թե ուշ, նորից գլուխ կբարձրացնի իշխանատենչության ոգին, անձամբ կարգադրեց, որ Հայաստանի հարավում իշխանությունն իր ձեռքն առնի իր քաջ ու հավատարիմ թոռ Կադմոսը. այդ գավառն էլ նրա անվամբ կոչվեց Կորդուք: Որպեսզի հարավային դարպասները հնարավորինս ապահով լինեին, մեծ նահապետը չզլացավ Կադմոսին նաև առատ ինչքեր բաժին հանել. **«Հայկը դառնում է իր բնակության տեղը: Իր Կադմոս թոռին պարգևում է շատ ինչք՝ պատերազմի ավարից և անվանի մարդիկ՝ իր ընդոծիներից»**[3]:*

Այդ ժամանակաշրջանում Հայաստանի հարևան երկրներում հարաբերական խաղաղություն էր: Իհարկե, երբեմն տնտեսական և քաղաքական խնդիրները հարթելու նպատակով դիմում էին պատերազմական գործողությունների, սակայն դրանք զուտ տեղային (լոկալ) ընդգրկում ունեին: Մեծածավալ զավթողական արշավներ ձեռնարկելու փորձեր անգամ չեն եղել՝ առավել ևս, հյուսիսում գտնվող Արարատյան երկրի հանդեպ:

Բելի պարտությունից հետո Բաբելոնում հիմնականում բնակվում

---

2 Maximillien de Lafayette, “Civilization and Arts of Armenia from Pre–History to the Present Day: Its Culture, Society, Stars, Artists and Celebrities” Volume 1, USA San Bernardino, CA 25 May 2015, p. 25.

3 Մովսես Խորենացի, Պատմություն հայոց, Երևան 1968 թ., էջ 89:

էին Բել-Ներբովիթի ցեղակիցները, այսինքն՝ Քամի սերունդները, սակայն իրենց կուռքի՝ Բելի կործանումից հետո նրանք հեռացան Միջագետքից և բնակություն հաստատեցին ներկայիս Պաղեստինում՝ նեղելով տեղաբնակ սեմական ցեղերին, որոնց բաժին էին հասել այդ տարածքները: Այդ ներգաղթից հետո նրանք իրենց նախահոր անվամբ գրաված տարածքներն անվանեցին Քանան: Իսկ սեմական ցեղերից շատերն էլ, հեռանալով այդ վայրերից, միացան Արաբական թերակղզում բնակվող իրենց ցեղակիցներին և հզորանալով ներխուժեցին Միջագետք՝ Բաբելոնի տարածքում ստեղծելով մի նոր պետություն, որն անվանվեց Աքքադ:

Այսպիսով, այդ ժամանակաշրջանում Միջագետքի հարավում հիմնականում տիրում էին շումերները, կենտրոնական մասերում՝ աքքադացիները, իսկ հյուսիսային մասում՝ մինչ Հայաստանի հարավային սահմանները՝ ասորեստանցիները: Այդ միջագետքյան երկրների տնտեսական բարգավաճումը պայմանավորված էր ոչ միայն Քուռարաքսյան մշակույթի կենտրոն հանդիսացող Հայաստանից ներմուծվող հումքով ու գործիքներով, այլև Հայկական լեռնաշխարհից դեպի այդ հարթավայրերը հոսող և նրանց կյանք պարգևող Տիգրիս և Եփրատ գետերով:

«Առաջավոր Ասիայի երկրներում հողագործության լայն զարգացման համար համեմատաբար հարմար է եղել Տիգրիս և Եփրատ գետերի միջև ընկած երկիրը, որին հին հույներն անվանում էին Միջագետք: Այդ երկիրը ձգվում է հյուսիսից՝ Հայաստանի լեռներից մինչև հարավ՝ Պարսից ծոց: Արևմուտքում այն սահմանակից է Սիրիա-միջագետքյան տափաստանին, իսկ արևելքում՝ արևմտյան Իրանի լեռնաշղթային: Միջագետքի միջին և հարավային մասերն իրենցից ներկայացնում են հարթավայր, որն առաջացել է Տիգրիսի և Եփրատի բերած նստվածքների արդյունքում: Այդ գետերը, պարբերաբար ափերից ելնելով, պարարտացնում և ոռոգում են հողը: Տիգրիսն իր սկիզբն առնում է Հայաստանի՝ Վանա լճի հարավի լեռներից: Եփրատի ակունքները գտնվում են Էրզրումից արևելք՝ ծովի մակարդակից 2 հազար մետր բարձրության վրա...

Տիգրիսն ու Եփրատը ոչ միայն երկրի ոռոգման հիմնական երակներն էին, այլև՝ երթուղային ցանցի մայրուղիները: Երկու գետերն էլ միացնում էին Միջագետքը հարևան երկրների՝ Հին Հայաստանի (Ուրարտուի), Իրանի, Փոքր Ասիայի և Սիրիայի հետ:

Տիգրիսի և Եփրատի պարբերական հեղեղումները՝ պայմանավորված Հայաստանի լեռների ձնհալով, մեծ նշանակություն ունեին արհեստական ոռոգման վրա հիմնված գյուղատնտեսության զարգացման համար: Շումերը, որը տեղակայված էր Միջագետքի հարավում և Աքքադը, որը զբաղեցնում էր երկրի կենտրոնական մասը, կլիմայական պայմաններով որոշ չափով իրարից տարբերվում էին: Շումերում ձմեռը համեմատաբար մեղմ էր, այստեղ կարող էր վայրի արմավենի աճել: Աքքադը կլիմայական

պայմաններով մոտ էր Ասորեստանին, որտեղ ձմռանը ձյուն է իջնում և վայրի արմավենի չի աճում»[4]***:***

Նորաստեղծ Աքքադի առաջնորդները ջանում էին ինտեգրվել և հաստատվել Միջագետքի իրենց նոր հայրենիքում: Այդ ժամանակ Աքքադի գահին նստեց Սարգոնը: Նա պատմության մեջ, ի տարբերություն ավելի ուշ շրջանում իշխած Սարգոնների, հիշատակվում է որպես «Սարգոն Աքքադացի», «Սարգոն Առաջին», նաև «Սարգոն Մեծ»: Նա արքայական տոհմի չէր պատկանում, այլ ուներ կասկածելի ծագում: Ըստ հնագիտական տվյալների՝ Սարգոնին որդեգրել է թագավորի ջրկիր-այգեպանը: Այդ ընտանիքում մեծանալով՝ երիտասարդ Սարգոնը գործի է անցել թագավորական պալատում՝ որպես այգեպան. իշխանավորների մոտ աչքի ընկնելով՝ նա հասել է մեծ բարձունքների, և ի վերջո, բազմել Աքքադի թագավորական գահին: Մերձավոր Արևելքի պատմության մասնագետ Ա.Ազիմովը դա այսպես է ներկայացնում.

«Երբ Սարգոնը մեծացավ, ծառայության մտավ Կիշի արքայի մոտ և իր վաստակի շնորհիվ դարձավ թագավորի հպատակներից ամենավստահելին: Վստահությունը, հավանաբար, չարդարացվեց: Այնտեղ, որտեղ արքան թույլ է, իսկ առաջին նախարարը՝ զորեղ, ինչպես որ դա շատ հաճախ է պատահել պատմության ընթացքում, թագավորին գահընկեց են անում, և նոր թագավոր է դառնում նախարարը: Այդպես է եղել և Սարգոնի պարագայում»[5]***:***

Սարգոնի կողմից Աքքադի գահին տիրանալը խախտում է այն հարաբերական կայունությունը, որ կար Միջագետքում և նրան սահմանակից երկրներում: Դառնալով Աքքադի արքա՝ նա համախմբում է իր հպատակներին և ամրապնդելով նորաստեղծ աքքադական թագավորությունը՝ սկսում է ասպատակել հարևան երկրները: Բոլոր ոչ մեծ երկրները գրավվում են, մի քանիսն էլ, տեսնելով Սարգոնի հաղթարշավը, կամավորապես են զենքը վայր դնում՝ խոնարհվելով օրեցօր հզորացող նորաթուխ բռնակալի առջև:

Հաղթանակներից ոգևորված, վստահ իր բազկի և արդեն բազմամարդ զորքի վրա՝ Սարգոնը մտադրվում է այդ նորաստեղծ կայսրության սահմանները էլ ավելի մեծացնել: Սակայն դա արդեն դյուրին գործ չէր, քանզի նրան սահմանակից մյուս երկրները բավականին հզոր էին, նրանց ծնկի բերելն ու հպատակեցնելը շատ դժվար և նույնիսկ վտանգավոր կարող էր լինել: Աքքադի հարավային հարևանը Շումերն էր՝ հարուստ մի երկիր, որը Միջագետքի ամենահին և մեծապես զարգացած պետություններից էր: ***«Շուտով գոյացավ Աքքադական հզոր թագավորությունը, որը դարձավ իրական սպառնալիք՝ անկախ և միավորված Շումերական***

---

4 Авдиев В. И., История Древнего Востока, Ленинград 1953 г., ст. 40–41.

5 Азимов А., Ближний Восток. 100 веков истории: Эксмо; Москва 2011 г., ст. 49.

թագավորության ինքնուրույն գոյության համար: Պայքարն այդ երկու պետությունների միջև վաղ թե ուշ պետք է հասունանար»[6]:

Ճիշտ է, Շումերը պակաս չէր Աքքադից ո՛չ ռազմական, ո՛չ էլ տնտեսական առումով, սակայն ներքին խնդիրներ ուներ՝ հակասություններ իշխող և ենթակա դասերի միջև: Դա այս երկրի ամենախոցելի կողմն էր: Երկրի կառավարումն էլ կենտրոնացված չէր՝ ինչպես Աքքադում. մի քանի թագավոր իրար մեջ էին բաժանել երկիրը: ***«Շումերները, հավանաբար, իրենց քաղաքներում պառակտված են եղել ներքին տարակարծությունների հետևանքով: Շումերական քաղաքները նվաճվելուց առաջ տառապում էին բարձր խավի, իշխող դասի և չքավոր աշխատավորության միջև անընդհատ մեծացող վիհից»***[7], *- գրում է Ս. Ու. Բաուերը:*

Շումերական թագավորները թերագնահատում էին աքքադացիների կարողությունը, և նրանց առանձնապես չէր մտահոգում անընդմեջ հզորացող Աքքադական պետության սպառնալիքը: Դրանից օգտվելով՝ Սարգոնն իր բանակի հետ է միավորում հպատակ երկրների զորքերը և սկսում հարձակումն անհոգ Շումերի վրա, որը, բաժանված-պառակտված լինելով, չէր կարող մեկ ճակատով դիմակայել աքքադական բանակին: ***«Սարգոնի՝ համեմատաբար արագ հաղթանակն ամբողջ միջագետքյան հարթավայրում բավականին զարմանալի է. այն ցույց է տալիս շումերական թագավորների երեք – չորս քաղաք ունեցող մարզից ավելի մեծ տարածք հսկելու անկարողությունը: Շումերների թուլությունը և Սարգոնի կողմից ուժերի համախմբումը նժարը թեքեցին վերջինի կողմը»***[8]:

Սարգոնը հանկարծակի հարձակումով տապալեց պարսպապատ քաղաքները, գրավեց և հպատակեցրեց այդ հինավուրց երկիրը. ***«Սարգոնն իր թագավորության սկզբում զորքերն ուղղեց Միջագետքի հարավային կողմը՝ գրավելով շումերական Ուրուկ, Ուր, Ումմու քաղաքները: Գրառումներում պատմվում է այն մասին, թե ինչպես է նա հաղթել 50 էնսիների (տեղական իշխաններ) և լվացել իր արյունոտ զենքերը «Ներքին ծովում» (Պարսից ծոցում)»***[9]:

Աքքադին միացնելով նաև Շումերը՝ Սարգոնն իր կայսրությունն արդեն պատկառելի չափերի է հասցնում: ***«Այդ պայքարից հաղթող դուրս եկավ սեմական Աքքադը, որը նվաճեց շումերական հարավը և ստեղծեց միասնական ու հզոր Շումերա-Աքքադական թագավորություն»***[10]:

---

6 Авдиев В. И., История Древнего Востока, Ленинград 1953 г., ст. 64.

7 Сьюзен Уайс Бауэр, История Древнего мира. От истоков Цивилизации до падения Рима История Древнего мира, АСТ, Москва, 2011 г., ст. 127.

8 Сьюзен Уайс Бауэр, История Древнего мира. От истоков Цивилизации до падения Рима История Древнего мира, АСТ, Москва, 2011 г., ст. 126.


9 Кьяра Децци Бардекси, Месопотамия: колыбель человечества, Изд. «Ниола–Пресс», Москва 2008 г., ст. 31.

10 Авдиев В. И., История Древнего Востока, Ленинград 1953 г., ст. 64.

Գրավելով Շումերը՝ Սարգոնը նաև ասպատակեց արևելքը՝ իրեն ենթարկելով էլամն ու հարակից բնակավայրերը. ապա դարձավ դեպի արևմուտք՝ գրավելով այդ տարածքներում եղող երկրները՝ Մարին, էբլան և մինչև Միջերկրական ծով ընկած տարածքները. ապա իջավ հարավ և հպատակեցրեց Դիլմունը, Մագանն ու մյուս երկրները. ***«Սարգոնը նախաձեռնեց արշավներ դեպի այնպիսի երկրներ, ինչպեսիք են Դիլմունը (Բահրեյնում), Մագանը (Օման), Մելուխան (Ինդոսի հովտում) և էլամը»***[11]*:*

Այս բազմազգ կայսրության գահին նստած Սարգոն Աքքադացին ճանաչվել է որպես աշխարհում առաջին միապետ, ով կարողացել է այդքան երկրներ ոչ միայն հպատակեցնել, այլև իր երկարամյա կառավարման ընթացքում ամուր պահել և կառավարել նրանց՝ մինչև իր կյանքի ավարտը (2334-2279 թ.՝ նախքան Քրիստոս), ապա կայսրության գահը հանձնել է իր ժառանգներին:

Նրա մասին այսպիսի կարծիք կա պատմագրության մեջ. ***«Քաղաքակրթության պատմության մեջ Սարգոնն առաջինն էր, որ կառավարեց իսկական կայսրություն, առաջին պետությունը՝ հիմնված մեկ մարդու կողմից, ով ղեկավարում էր տարբեր ծագում ունեցող ազգերի»***[12]*:*



«Սարգոնը դարձավ առաջին միապետը, ով իր իշխանության ներքո միավորեց միջագետքյան հարթավայրի բոլոր երկրները»[13]*,-* *նշում է Ժ.Գլասները: Այլ գիտնականներ ևս համարում են, որ Սարգոնն է եղել աշխարհում առաջին կայսրության հիմնադիրը: Սակայն դա այդպես չէ, քանզի մինչ Սարգոնը Բել-Նեբրովթն էլ է գրավել այդ տարածքները և հռչակել իրեն ոչ միայն միապետ, այլև՝ «աստված»:* ***«Այն բանից հետո, երբ Սարգոնը հափշտակեց գահը Ուր-Զաբաբից՝ Կիշի IV դինաստիայի տիրակալից (ում մոտ նա ծառայում էր որպես մատուռակ), նա սկսեց կառուցել հսկայական կայսրություն՝ ավելի լայնատարած, քան Նեբրովթի կայսրությունն էր»***[14]*:*

Հնարավոր է, որ Նեբրովթի գրաված տարածքներն իրենց ընդգրկմամբ զիջել են Սարգոնի կայսրությանը, քանզի այն ժամանակներում դեռ այդքան պետություններ գոյություն չունեին: Դրանք ձևավոր-

11 Кьяра Децци Бардекси, Месопотамия: колыбель человечества, Изд. «Ниола–Пресс», Москва 2008 г., ст. 31.

12 Азимов А., Ближний Восток. 100 веков истории: Эксмо; Москва 2011 г., ст. 52.

13 Жан–Жак Гласснер, Месопотамия, Москва «Вече», 2012 г., ст. 21.

14 Девид Рол, Утраченный завет. Изд–во Эксмо – Москва 2005 г., ст.125.

վել են ավել ուշ, ինչի պատճառով էլ Բելի կայսրությունն ավելի փոքր է եղել, քան Սարգոնի կայսրությանը, ինչով էլ հպարտանում էր հենց ինքը՝ Սարգոնը. **«Թող որևէ արքա, ով իրեն համարում է ինձ հավասար, հասնի այն սահմաններին, որոնց հասա ես»**[15]։

Բելի կառավարման շրջանն էլ համեմատաբար ավելի կարճ է եղել, քան Սարգոնինը։ Հավանաբար, դա է պատճառը, որ Սարգոնին ոմանք համարել են Առաջին Կայսր։ Իհարկե, եթե Բելը չհանդգներ անցնել Հայոց սահմանները, նա՛ էլ կարող էր Սարգոնի չափ կամ ավելի երկար մնալ իր գահին։

Իսկ Սարգոնի փառքն ու հարստությունն օրեցօր աճում էր. կայսրությանը պատկանող թագավորություններն իրենց հարկերով հարստացնում էին Աքքադը։ Սարգոնն էլ կառուցել տվեց մի նոր թագավորանիստ քաղաք՝ ճոխ պալատներով և այլ կառույցներով։ **«Կայսրությունը սովորաբար վառ փայլում է, քանի դեռ այն գոյություն ունի։ Տիրող խումբն առանց տատանվելու յուրացնում է հպատակ ժողովուրդների՝ մեծ ջանքերով ձեռք բերած հարստությունը։**

Ավելի վաղ շրջանում շումերական տասնյակ քաղաք-պետություններում ցրված առատ հարստությունը հավաքվեց Սարգոնի պալատներում։ Այն հասավ նախկինում երբեք չտեսնված չափերի ու ճոխության։

Հենց կայսերական մայրաքաղաքով են ժամանակակիցները (նաև սերունդները) դատում կայսրության մասին. նրա շքեղությունը մեծապես ազդում է նրանց վրա և ստիպում կայսրին համարել մեծ մարդ՝ հերոս, թեև ամբողջ շքեղությունը կարող է հիմնված լինել կողոպուտի վրա, իսկ կայսրության գավառները՝ սուզված չքավորության մեջ»[16]։



Սարգոնի կարողության և փառքի մասին կարելի է դատել նաև նրա ամենօրյա հավաքների ու ճաշկերույթների մասնակիցների թվից. **«Սարգոն Աքքադացին պարծենում էր, որ ամեն օր իր սեղանի շուրջ հավաքում էր 5400 մարդ։ Արքայի մոտ ծառայության անցած մարդիկ և մշտապես պալատում գտնվող պաշտոնյաներն ու զինվորականներն ստանում էին նաև լրացուցիչ դրամական պարգևներ...»**[17]։

---

15 Стивен Бертман, Месопотамия, университет Виндзора, «Вече», Москва 2007 г., ст. 118–119.

16 Азимов, Айзек. Ближний Восток. 100 веков истории, Эксмо, Москва 2011 г., ст. 52–53.

17 Жан–Жак Гласснер, Месопотамия, Москва «Вече», 2012 г., ст. 406.

Ըստ հնագետների՝ Սարգոնն առաջինն էր, որ ուներ մշտական գործող արհեստավարժ բանակ: Դա, իհարկե, կարելի էր թույլ տալ, եթե կայսերական գանձարանը լեցուն էր. իսկ դրա համար Սարգոնի հարկահավաքները ջանք չէին խնայում: ***«Այդպիսի հսկայական տարածքների հսկումն իրականացնելու համար հարկավոր էին բանակներ: Մարդիկ, որոնք ամեն օր «հաց էին ուտում» Սարգոնի մոտ, հավանաբար, եղել են պատմության մեջ առաջին պրոֆեսիոնալ զինվորները»***[18]*:*

Հայաստան և Աքքադ

Այնքան հին էր այդ երկիրը (Հայաստանը), որ երբ առաջին բանական արարածները սկսեցին կառուցել առաջին տերությունը, ապա դա կարծես թե պետք է լիներ հենց այստեղ և ոչ թե Եգիպտոսում կամ Բաբելոնում: Միայն թե՝ մարդկությունն այդ մասին մոռացել է»[19]*:*

Աքքադը գտնվում էր Սարգոնի կայսրությանն կենտրոնում, քանզի Աքքադի թե՛ արևելյան, թե՛ արևմտյան, թե՛ հյուսիսային և թե՛ հարավային կողմերի շատ երկրներ հպատակեցված էին: ***«Եթե հավատանք քարտեզին, Սարգոնի կայսրությունն իր մեջ ներառում էր քսաներեք երկիր»***[20]*:*

Հետաքրքիր է, որ նա այդ հսկայական տարածքն իրեն ենթարկելով և ստեղծելով այն ժամանակների համար նման հզոր կայսրություն՝ համարձակություն չունեցավ արշավել ավելի հյուսիս՝ դեպի Հայկական լեռնաշխարհ: ***«Եփրատով առաջանալով դեպի հյուսիս-արևմուտք՝ նա գրավեց Խաբուրը և հասավ մինչ Անատոլիայի սահմանները»***[21]*: Այսպիսով, Սարգոնի կայսրության հյուսիսային սահմանները հասնում էին մինչև Հայոց հարավային սահմանները՝ ներկայիս Թուրքիայի հարավային կողմը. հիշեցնենք, որ այս տարածքն է, որ (ինչպես բազմիցս շեշտել ենք) ներկայիս հնագետներից ոմանք, անտեսելով իրականությունը՝ քաղաքական նկատառումներով կամ թյուրիմացաբար, Մեծ Հայքի փոխարեն անվանում են Անատոլիա:*

«Միջագետքի պատմության մեջ Սարգոնի կառավարման հետ է կապ-

---

18 Сьюзен Уайс Бауэр, История Древнего мира. От истоков Цивилизации до падения Рима История Древнего мира, АСТ, Москва, 2011 г., ст. 129.

19 Բոգդան Գեմբարսկի, տես Սեւ Գիրք, Երևան 2011 թ., էջ 629:

20 Жан–Жак Гласснер, Месопотамия, Москва «Вече», 2012 г., ст. 221.

21 Кьяра Децци Бардекси Месопотамия: колыбель человечества, Изд. «Ниола–Пресс», Москва 2008 г., ст. 31.

ված մի շրջադարձային դրվագ։ Նրա զինվորական նվաճումներն ստեղծեցին մինչ այդ գոյություն ունեցած կայսրություններից խոշորագույնը։ Այն տարածված էր հարավային Անատոլիայի (ժամանակակից Թուրքիա) հյուսիսից մինչև Պարսից ծոց և նույնիսկ՝ Արաբիա»[22]։

Այսպիսով, Սարգոնն անխոհեմություն չցուցաբերեց և չտրվեց այդ ժամանակների «էլդորադո» համարվող հեքիաթային Արատտա երկրի վրա հարձակման գայթակղությանը, և նրա կայսրության բազմազգ ու մեծաթիվ զորքը դեմ առավ Հայաստանի ներքին՝ հարավային սահմաններին՝ Կորդվաց գավառին և կանգ առավ։ Սա ևս մեկ ապացույց է, որ Հայաստանն այդ շրջանում հզոր երկիր էր և անսասան կմնար Սարգոնի կայսրության հուժկու հարվածներից։ Սարգոն Աքքադացին չէր կարող չիմանալ միջագետքյան նախորդ կայսեր՝ Բելի դառը ճակատագրի մասին, ով հանդգնեց խախտել Մեծ Հայքի սահմանները։ Եվ այդ օրինակն իր առջև ունենալով՝ Սարգոնը խելամտորեն սահմանափակվեց այդքանով։

Ոչ միայն հնագետների հոդվածները, այլև նրանց կազմած քարտեզներն են խոսում այն մասին, որ Սարգոնը Հայաստանի հարավային՝ Կորդվաց գավառի սահմաններից վեր չի բարձրացել։ ***«Ք.ա. III հազարամյակի առաջին կեսին Միջագետք էին ներթափանցել սեմական ցեղեր, որոնցից մեկի ներկայացուցիչ Սարգոն (Շարրում-քեն) Աքքադացուն Ք.ա. XXIV դարի երկրորդ կեսին հաջողվեց ստեղծել պատմությանը հայտնի առաջին մասնագիտացված (պրոֆեսիոնալ) մշտական բանակը և նվաճել գրեթե ողջ Միջագետքը։ Նա ստեղծեց նախադեպը չունեցող մի աշխարհակալություն՝ պատմությանը հայտնի առաջին բռնապետությունը։ Նրա արշավանքները հասան մինչև Հայկական լեռնաշխարհի հարավային փեշերը, որից հյուսիս բարձրանալ նրան չհաջողվեց»***[23]։



Սարգոնը կարող էր ձեռնպահ մնալ դեպի Հայկական լեռնաշխարհ ասպատակություն սկսելուց որոշ պատճառներով, նախ եթե այդ տարածքում ոչ մի գրավիչ բան չկար, ապա անիմաստ էր այդ լեռնեբում մաքառելը, և ջանքերին անհամարժեք՝ ակնկալվող շահը, և երկրորդ՝ եթե այդ երկիրն այնքան հզոր էր, որ նույ-

---

22 Девид Рол, Генезис цивилизации. Откуда мы произошли, Изд–во Эксмо, Москва 2002 г., ст.51.

23 Արտակ Մովսիսյան, Հայոց պատմության աշխարհակալությունները, Երևան, 2008 թ., էջ 10:

նիսկ իր ամբողջ կայսրության զորքերն էլ միանային, չէին կարողանա հաջողության հասնել։

Նախ՝ լիովին բացառվում է, որ Հայկական լեռնաշխարհն անմարդաբնակ, աղքատ լեռնային տարածք լիներ. այդ մասին վկայում են քուռա-րաքսյան քաղաքակրթության մասին առկա հիմնավոր փաստարկները՝ չնայած որ այդ ժամանակաշրջանի հետ կապված հետազոտողները ոչինչ չեն ասում Հայաստանի մասին և նույնիսկ քարտեզներում որպես երկիր չեն նշում։

Սակայն այդ երկիրն իսկապես շատ հարուստ է եղել, զարգացել՝ ամենատարբեր ոլորտների նյութատեխնիկական հիմքի վրա, ինչի մասին խոսել ենք սույն գրքի առաջին հատորի համապատասխան գլխում՝ ընդգծելով, որ այն պղնձի, բրոնզի, երկաթի հայրենիք էր, հարուստ՝ նաև ոսկով, արծաթով, թանկարժեք և շինարարական քարերով և շատ այլ հանածոներով։ Եվ, ուրեմն, ինչու՞ հզոր կայսրության տիրակալ Սարգոնը պիտի չցանկանար գրավել այն և այդ բոլոր ռեսուրսները ծառայեցնել իր երկրին, մանավանդ որ նրա մեջ զավթողական ոգին ուժեղ էր և անդիմադրելի։ Նա հավանաբար հասկանում էր, որ դա կարող է կործանել թե՛ իրեն, թե՛ իր կայսրությունը՝ հատկապես, որ նա այդ դեպքում պետք է երկու ճակատով պատերազմեր. եթե հարձակվեր հյուսիսում գտնվող Հայաստանի վրա, նա ոչ միայն կզգար հայկական մարտունակ և հզոր բանակի կործանիչ ուժը, այլև հարված կստանար Աքքադի հարավ-արևելյան կողմում գտնվող Սաղեմի հայոց թագավորության կողմից։

Հետաքրքիր է և այն, որ Սարգոնը ոչ միայն չանցավ Հայաստանի սահմանները, այլև, գրավելով Միջերկրական ծովի մերձակա երկրները, չհամարձակվեց ավելի հարավ իջնել, այսինքն՝ Քանանի երկիր, որտեղ գտնվում էր Սաղեմի հայկական թագավորությունը։ Քանի որ, եթե նա ավելի հարավ շարժվեր Միջերկրական ծովի ափերով և հարձակվեր Սաղեմի վրա, ապա այս պարագայում էլ, վստահաբար, ծանր հարված կստանար հյուսիսից՝ Հայաստանից։ Կարծում ենք՝ Սարգոնը քաջ գիտակցում էր, որ Հայաստանի և Սաղեմի վրա հարձակվելը և նրանց հպատակեցնելն իր ուժերից վեր է։

Սակայն այդ ամենից բացի՝ կար ևս մի պատճառ. նա, հավանաբար, խորն ակնածանքով էր նայում այդ երկրների և նրանց բնակիչների կողմը։ Իսկ թե ի՞նչը կարող էր այդ ակնածանքի պատճառ լինել, կանդրադառնանք ստորև։

Սարգոնի ծնունդը

«Հայաստանն առեղծված է և սրբություն»[24]:

Սարգոնն անվանվում է Աքքադացի, և դա շեշտվում է. բայց, ինչպես ասվեց, նրա ծագումը մշուշապատ է: Հնագետներից շատերը կասկած են հայտնում Սարգոնի աքքադական ծագման վերաբերյալ, սակայն չեն ընդունում նաև, որ նա կարող է շումերներից սերված լինել: Ոմանք էլ կարծիք են հայտնում, թե նա կարող էր ամորհացի լինել, իսկ ամորհացիները սեմիտներ չէին, այլ, ըստ Սուրբ Գրքի, սերում էին Քամից[25]:

*Դեվիդ Ռոլը նրա մասին հետևյալ կարծիքն է հայտնում. «**...Սարգոնը եղել է ամորհացի տիրակալ, ով պալատում գրավել է իշխանությունը՝** coup d'etat[26] **արդյունքում: Ճակատագրի հեգնանքով նրա անունը նշանակում էր «արդար թագավոր»: Ենթադրվում է, որ նա ընդունել է այդ անունը, որպեսզի քողարկի իր գահ բարձրանալու հանգամանքները»**[27]:*

Սակայն փաստերն այլ բան են ասում. Սարգոնը ո՛չ Սեմից է սերվել և ո՛չ էլ՝ Քամից: Ուրեմն, նա պետք է որ Հաբեթի սերնդից լիներ: Իսկ թե ի՞նչն է մեզ հանգեցնում նման հետևության, և թե ինչու՞ աքքադացի Սարգոնի ծագման մասին գիտնականների մոտ նման հարցեր են առաջացել, կարող ենք հասկանալ՝ քննելով Սարգոնի ծննդյան հետ կապված պատմությունը. նրա կենսագրությունից պահպանված այս դրվագը լույս է սփռում այդ առեղծվածի վրա.

«Սարգոնը եղել է մարդկանցից խուսափող և մենասեր մարդ: Նկարագրության մեջ,

որը ներկայացնում է նրա աշխարհ գալը, Սարգոնի խոսքում ասվում է.

«Իմ մորը փոխել են, հորս չեմ ճանաչել,
Սակայն հորս եղբայրը սիրում էր լեռները. հավանաբար,
Իմ տունը գտնվել է կանաչ լեռներում.
Թաքցնելով ծանրությունը (հղիությունը)՝ մայրս ինձ թաքուն է ծնել:
Նա ինձ դրել է կողովի մեջ և կափարիչը կնքել խեժով:
Այնուհետև կողովը հրել է գետը, որը քնքշորեն ընդունել է ինձ:
Ջրերն ինձ ափ հանեցին Աքքադում, և ջրկիրը, շնորհակալություն նրան,

---

24 Էդվարդ Միրզոյան, կոմպոզիտոր:

25 Ծննդ. 10:16:

26 Պետական հեղաշրջում:

27 Девид Рол, Генезис цивилизации. Откуда мы произошли, Изд-во Эксмо, Москва 2002 г., ст. 51.

Բռնեց այդ կողովը, երբ լցնում էր իր սափորը,
Նա ինձ ընդունեց՝ որպես որդու և հոգ էր տանում ինձ համար։
Նա ինձ դարձրեց այգեպան՝ արքայական պալատում»։

***Նրա՝ աշխարհ գալու հետ կապված այդ պատմությունը մեզ ոչինչ չի ասում Սարգոնի ծագման մասին։ Մենք չգիտենք ո՛չ նրա ազգության մասին, ո՛չ էլ նրա անունը՝ մանուկ հասակում»*[28]*։** Տեսնում ենք, որ, իսկապես, Սարգոն Աքքադացու ազգության և արմատների առումով գիտնականները տարակուսում են։

Այսպիսով, ըստ Սարգոնի թողած տեղեկության՝ ինքը լեռնային երկրի ծնունդ էր. այսինքն՝ ո՛չ միջագետքյան, որը հիմնականում հարթավայրային տարածք է։ Իսկ լեռնային էին Աքքադի արևելյան և հյուսիսային տարածքները. արևելքի կողմում Զագրոսի լեռնաշղթան էր, իսկ հյուսիսում՝ Հայոց լեռնաշխարհը։

Ուրեմն, նա կարող էր ծագումով արևելքի կողմում բնակվող էլամացիներից լինել կամ էլ հյուսիսում գտնվող Հայկական լեռնաշխարհի բնիկներից, այսինքն՝ հայկազուններից։

Սարգոնի կենսագրականում մի հիշատակում էլ կա. խոսքն այն քաղաքի անվան մասին է, որը, հավանաբար, նրա ծննդավայրն է եղել, ինչն, ըստ մասնագետների՝ նորից կապված է լեռնային տարածքի հետ. ***«Այս տողը գրականորեն ասում է. «Իմ քաղաքը եղել է Ազուպիրանուն», սակայն Ազուպիրանուն իրական քաղաք չէ, ինչպես ասում է հնագետ և ասորագետ Գվենդոլին Լեյկը. խոսքը հյուսիսում գտնվող լեռնային տարածքի մասին է»»*[29][30]*։**

Այս մեջբերումը հատկապես հետաքրքիր է նրանով, որ այդ բնակավայրը, որ Սարգոնը համարում է իր քաղաքը, գտնվել է հյուսիսի լեռներում։ Իսկ դա բացառում է արևելյան կողմի՝ այսինքն Արևելյան Զագրոսի տարբերակը՝ մեր ուշադրությունը սևեռվելով դեպի հյուսիս՝ դեպի Հայկական լեռնաշխարհ՝ Արարատյան երկիր։

Սարգոնի ծագման մասին հիմնավորումները չեն սահմանափակվում նրա վկայությամբ, որ նա լեռնային երկրի ծնունդ է, և այն փաստով, որ այդ լեռները գտնվել են Միջագետքի հյուսիսային կողմում։ Այս հարցում ևս մեկ կողմնորոշիչ է գետը, որը Սարգոնին հասցրել է Աքքադ։ Հյուսիսից այդ կողմ են հոսում Տիգրիսն ու Եփրատը, և Եփրատն էլ անցնում է հենց Աքքադի միջով՝ Բաբելոնի և մյուս կենտրոնական քաղաքներին մերձ, և այն ժամանակ ուղղակի «գետ» ասելով՝ առաջին հերթին հասկանում

---

[28] Сьюзен Уайс Бауэр, История Древнего мира. От истоков Цивилизации до падения Рима История Древнего мира, АСТ, Москва 2011 г., ст. 122–123.

[29] См. книгу Г. Лейк «Месопотамия: изобретение городов» (Gwendolyn Leick, Mesopotamia: The Invention of the City, p. 94).


[30] Сьюзен Уайс Бауэр, История Древнего мира. От истоков Цивилизации до падения Рима История Древнего мира, АСТ, Москва 2011 г., ст. 122.

*էին եփրատը: Սարգոնն էլ, ասելով «**գետն ինձ քնքշորեն ընդունեց**», ըստ մանանագետների, հենց եփրատը նկատի ուներ:*

***«Սարգոնը մնաց որպես կիսաառասպելական անձնավորություն մ. թ. ա. II հազարամյակի ամբողջ ընթացքում: Նրա ծննդյան մասին պատմությունը և այն, թե ինչպես են նրան գցել գետը, իսկ հետո փրկել, երբ նա կողովով լողում էր Եփրատով... այս ամենի մասին սիրով կարդում էին եգիպտական Ամարնում, և անատոլիական խատտուսասում. և ոչ միայն կարդում էին, այլև թարգմանում էին խուրրիտական և խեթական լեզուներով»**[31]:*

Իսկ Արևելքի կողմից՝ Զագրոսի լեռներից հոսող գետերը լցվում էին Տիգրիսի մեջ, ինչն էլ խոչընդոտում էր նրանց հոսքը դեպի նորաստեղծ Աքքադ: Իհարկե, Սարգոնի կողմից թողած կենսագրական հիշատակումներում որոշ հակասական տեղեկություններ կան, սակայն, ամեն դեպքում, սրանք են հնագետների հայտնած տեղեկությունները:

Հետաքրքիր է, որ այս պատմությունը շատ նման է Մովսեսի ծննդյան Աստվածաշնչյան դրվագին: Հիշում ենք, որ Սարգոնից մոտ 700 տարի հետո եգիպտոսում մանուկ Մովսեսին մահից փրկելու նպատակով մայրը նրան դնում է զամբյուղի մեջ և հանձնում է Նեղոսի հոսանքին: Զամբյուղը լողալով հասնում է փարավոնի դստեր ապարանքի մոտ, փարավոնի դուստրն էլ որդեգրում է նրան՝ դարձնելով եգիպտոսի արքայազներից մեկը: Եգիպտացիները չգիտեին Մովսեսի ծագման մասին, տեղյակ չէին, որ նա եգիպտացի չէ, այլ՝ օտարերկրացի հրեա, և եթե Մովսեսի հետ տեղի չունենային այն խորհրդավոր դեպքերը, ապա նա էլ կարող էր նստել եգիպտոսի գահին՝ դառնալով փարավոն, և բացի նրա խորթ մորից՝ եգիպտացիներից ոչ ոք չէր իմանա, որ փարավոնն իրենց արյունակիցը չէ. հատկապես, որ նրա «Մովսես» անունը հրեական չէ, այլ՝ եգիպտական, և նշանակում է «ջրից հանված»:


King Sargon of Akkad

*Այդպես և սեմական ծագում ունեցող «Սարգոն» անունն էլ նրա՝ Սարգոնի իսկական անունը չէր, այլ տրվել էր նրան շատ ավելի ուշ, երբ նա արդեն դարձավ Աքքադի թագավոր և չի կարող հիմք լինել՝ ի նպաստ նրա սեմական ծագման: **«Մեզ ոչ մի կերպ չի օգնում «Սարգոն» անվանումը, քանզի նա ինքն է այդ անունն ավելի ուշ վերցրել: Սկզբնական ձևով «Շարրում-կին» նշանակում է ուղղակի «Օրինական արքա» և (ինչպես օրինականության մասին հանդիսավոր հայտարարությունների***

[31] Оппенхейм А. Лео, Древняя Месопотамия. – 2-е, испр. и доп... – Москва: Наука, 1990 г., ст. 120.

մեծ մասը) ընդամենը ցույց է տալիս, որ նրա կրողը, անխոս, չի ունեցել ոչ մի օրինական հիմք իշխանության հավակնելու համար»[32]***:***

Պատմաբանները, ինչպես ասվեց, հստակ ի ցույց են դնում այն, որ Սարգոնը պատկանել է այլ ազգի, այսինքն՝ ծագումով աքքադացի՝ սեմիտ չի եղել: ***«Ջրից հանված Սարգոնն ընդունեց իր խորթ հոր՝ Ակկիյի կարգավիճակը, նրան փրկող մարդն ուներ սեմական անուն. այսպիսով՝ Սարգոնը դարձավ սեմիտ»***[33]***:***

Ինչպես տեսնում ենք, խոսուն փաստեր կան, որ Սարգոնը ծննդով Հայկական լեռնաշխարհից է եղել: Սարգոնի հայկական արմատների մասին է խոսում նաև նրա բացառիկ նախաձեռնողականությունը, հմտությունը և իմաստնությունը, ինչի շնորհիվ կարողացավ այգեպանից հասնել աքքադական թագավորության գահին, իսկ հետո նաև՝ իր ստեղծած կայսրության թագը կրելուն: Սարգոնի հայկական ծագման մասին է խոսում նաև նրա արտաքինը՝ հայերին բնորոշ արծվաքիթը:

Մեկ այլ փաստարկ էլ կա՝ ի նպաստ Սարգոնի հայկական ծագման: Միջագետքյան երկրների զորքերը նետ ու աղեղ չէին օգտագործում համապատասխան փայտանյութի բացակայության պատճառով: Փայտանյութի պակաս չկար Հայկական լեռնաշխարհում, և հայերը մեծ տեղ էին տալիս նետ-աղեղին՝ հատկապես Հայկ Նահապետի մեծ հաղթանակից հետո: Սարգոնն առաջինն էր Միջագետքում, որ սկսեց իր զորքերին զինել այդ զինատեսակով, այն էլ՝ ծանր նետ ու աղեղով, ինչը մինչև ն. Ք. V դարն օգտագործվում էր միայն Հայաստանում. այդ մասին հանգամանորեն ներկայացված է առաջին հատորում: Հավանաբար, կամ Սարգոնի հայկական գենն է խոսել նրա մեջ, կամ իր լեռնեցի հորեղբոր՝ Հայաստանի մասին պատմություններն են մղել՝ Հայկ Նահապետի ամենակործան զենքին դիմելու: ***«Հայտնի է, որ շումերներն աղեղի պատրաստման համար ճկուն և առաձգական ծառերի տեսակներ չունենալու պատճառով լիովին հրաժարվել էին նետաձիգ զենքից: Սակայն ահա Սարգոն առաջինը, գրավելով իշխանությունը, մեծ նշանակություն տվեց այդ զենքին և իր բանակում ստեղծեց աղեղնավորների հատուկ ջոկատներ»***[34]***:***

Բազմաթիվ մարտերում հաղթելու՝ հատկապես Շումերը գրավելու մեջ, անկասկած, մեծ դեր է խաղացել հենց նետ-աղեղի օգտագործումը Սարգոնի բանակում: ***«Նրա բանակն ավելի հզոր գտնվեց, քան մնացած շումերական զինվորականությունը, ծանր նետ ու աղեղի առկայության շնորհիվ»***[35]***:***

---

[32] Сьюзен Уайс Бауэр, История Древнего мира. От истоков Цивилизации до падения Рима История Древнего мира, АСТ, Москва 2011 г., ст. 123.

[33] Сьюзен Уайс Бауэр, История Древнего мира. От истоков Цивилизации до падения Рима История Древнего мира, АСТ, Москва 2011 г., ст. 124.

[34] Սամվել Դիլանյան, Մանկական հանրագիտարան, Երևան 2001 թ., էջ 71–72:

[35] Сьюзен Уайс Бауэр, История Древнего мира. От истоков Цивилизации до падения Рима История Древнего мира, АСТ, Москва 2011 г., ст. 126.

*Ոմանք այնքան են առաջ գնում, որ Սարգոնի ժամանակաշրջանին են վերագրում լայնալիճ աղեղի գյուտը: **«Շումերում բավականաչափ ճկուն և էլաստիկ ծառատեսակների պակասության պատճառով շումերական բանակն ամբողջովին հրաժարվեց աղեղալար զենքերից, իսկ Սարգոնը և սարգոնականներն, ընդհակառակը, մեծ նշանակություն տվեցին աղեղնավորներին, որոնք ընդունակ էին ծանրաշարժ վահանակիրների և նիզակավորների վրա հեռվից արձակել նետերի ամպեր՝ խարխլելով նրանց շարքերը, մինչ ձեռնամարտի հասնելը: Ակնհայտ է, որ Սարգոնը հասել է կամ Փոքր Ասիայի, կամ Իրանի նախալեռների կենու (կամ կաղնու) մացառուտներին, կամ նրա ժամանակ է եղել բաղադրովի կազմածո կամ սոսնձով հագեցած եղջյուրից, փայտից և ջլերից պատրաստված աղեղի գյուտը: Լավ աղեղն ահեղ զենք է, որը 200 մետրից ավելի հեռավորության վրա դիպուկ խոցում է. նրանից կարելի է մեկ րոպեում 5-6 նետարձակում կատարել, իսկ պահեստային նետերը կապարճում կարող են 30-50 հատ լինել. մոտ տարածությունից նման նետը ծակում է հաստ տախտակը»**[36]:*

Հայոց պատմության մասին անտեղյակությունը միայն կարող է պատճառ լինել, որպեսզի հնագետներից ոմանք այնպիսի կարծիք հայտնեն թե իբր Սարգոնի ժամանակ է եղել լայնալիճ աղեղների գյուտը, այնինչ շատերը կասկած անգամ չունեն, որ Սարգոնից մոտ 200 տարի առաջ Հայկ Նահապետն է այդ գյուտը ստացել երկնային հայտնությամբ. և լայնալիճ աղեղը դարեր շարունակ գործածվել է հիմնականում միայն Հայաստանի տարածքում: Այդ մասին իմանում ենք նաև Քսենոֆոնի թողած տեղեկություններից:

Արքայական ծագումը

«Այն ժամանակ, երբ Հայաստանը երկիր էր,
չկար գրեթե և ոչ մի այլ երկիր... »[37]:

Սարգոնը, լինելով օտարական, չէր կարող միայն իր հմտության շնորհիվ դառնալ թագավոր, եթե չունենար արքայական ծագում. չէ՞ որ նա եղել է ընդամենը ջրկիր-այգեպանի որդի, և ո՛չ աքքադական, ո՛չ էլ շումերական որևէ արքայական տոհմի չի պատկանել: Իր պատմությունն էլ՝ մանուկ հասակում Աքքադում հայտնվելու մասին, իր հերթին տարբեր բացատրական ենթադրությունների տեղիք է տվել: Նրա խորթ հայրը ջրկիր

[36] История Древнего мира, том 1. Ранняя Древность. Ирина Сергеевна Свенцицкая (Сборник) Москва 2010 г., ст. 67.

[37] Сергей Доренко журналист, главный редактор радиостанции «Говорит Москва».

էր. սակայն, ուսումնասիրողները հիմնականում առավել բացասական բնութագրի են արժանացրել նրա մորը, քանզի նա իր մանկահասակ որդուն զամբյուղով հանձնել գետի քմահաճույքին: Սարգոնի մոր մասին ամենատարբեր կարծիքներ կան պատմաբանների աշխատություններում. ըստ դրանցից մեկի՝ նա հարուստ և ճանաչված կին է եղել, հղիացել է արտամուսնական կապի հետևանքով և թաքցրել է իր արարքը՝ նորածնին հանձնելով գետի հոսանքին: Մեկ ուրիշն էլ ասում է, թե նա եղել է քրմուհի և, հավանաբար, հերթական ծիսական արարողության ընթացքում է հղիացել ու նման կերպ է վարվել: Կա նաև կարծիք, թե մայրն աղքատ կին էր և չի կարողացել ապահովել երեխայի դաստիարակությունն ու խնամքը, ինչի հետևանքով էլ մանուկը հայտնվել է գետում:

Թեպետ այս բոլորն էլ միայն ենթադրություններ են, սակայն, իհարկե, Սարգոնին՝ որպես Աքքադի գահի թեկնածու, չէին կարող դրականորեն բնութագրել: ***Սակայն Սարգոնի պատմությունը ոչ մի կերպ չի հաստատում նրա սեմական ծագումը, քանզի նա շատ նրբանկատորեն իր կենսագրության ամեն մի մանրամասնություն դարձրել է անհասկանալի: Նա հայտարարում է, որ չի ճանաչում հորը, և դա համարյա վերացնում է նրա ցածր կամ խայտառակ ծագման խնդիրը. «փոխելով» մորը՝ տալիս է խուսափողական տվյալներ»***[38]*:*

Ուրեմն, ինչպե՞ս է, որ նման կասկածելի բնութագիր ունեցող անձը գրավեց աքքադացիների վստահությունը: Սարգոնը, հավանաբար, իր համար ոչ նպաստավոր բոլոր կասկածները ցրելու համար ստիպված է եղել ասել ճշմարտությունը: Այսինքն, հայտարարել է, որ ճի՛շտ է, նա իրենց ցեղակիցը, այսինքն՝ աքքադացի չէ, սակայն դրա փոխարեն նա մի այլ մեծ առավելություն ունի, քանզի ծագումով այն երկրից է, որ միջագետքյան երկրների կողմից մեծարվել է տարբեր խորհրդավոր անվանումներով, այսինքն՝ Արատտայից: Իսկ դա նշանակում է, որ նա սերում է Հայոց հզոր արքա Հայկ Նահապետի ժառանգներից. ***«Արատտան ոչ միայն «բարձր լեռների», «անմահների», «աստվածների», այլև «սուրբ օրենքների» և «սուրբ ծեսերի» երկիր էր: Հնագույն գրավոր աղբյուրներում այսպիսի բնորոշում այլևս չկա ոչ մի երկրի համար»***[39]*:*

Նման ծագումը միանգամայն ընդունելի կարող էր լինել աքքադական գահին բազմելու համար՝ անկախ որոշ կասկածելի հանգամանքներից: Եթե Աքքադի կամ Շումերի արքաներն ուղղակի կոչվել են «արքա», ապա նման արմատներ ունենալու շնորհիվ նա անվանվել է ոչ միայն «արքա», այլև՝ «ճշմարիտ արքա», այսինքն՝ Սարգոն: Իսկ տեսակետը, որ Արատ-

---

38 Сьюзен Уайс Бауэр, История Древнего мира. От истоков Цивилизации до падения Рима История Древнего мира, АСТ, Москва, 2011 г., ст. 124.

39 Ամժելա Տերյան, Եվրոպայի ժողովուրդների հնագույն գրավոր աղբյուրները իրենց նախահայրենիքի՝ Հայաստանի ու հայերի մասին, Երևան 2014 թ., էջ 19:

տան Հայաստանն է և այդ ժամանակվա ամենախորհրդավոր երկիրը, բազում կողմնակիցներ ունի գիտական աշխարհում։

«Ալեքսանդր Մակեդոնացին մ.թ.ա. IV դարում գիտեր այդ տարածաշրջանը՝ որպես Արմենիա... մ. թ. ա. IX դարում ասորեստանցիները նրան անվանում էին Ուրարտու, իսկ շումերները մ. թ. ա. III հազարամյակի սկզբում հիշատակում էին հրաշալի երկրի մասին, որ անվանվում էր Արատտա... Գիլգամեշի մասին էպոսում այդ տաք, բարեխառն կլիմայական գոտին անվանվում էր «Ողջերի երկիր», և նրան կարելի էր հասնել Միջագետքից այն կողմ՝ խիտ անտառով ծածկված լեռնային լանջերով։ Վաղ տոհմական ժամանակաշրջանի շումերների համար այնտեղ էր գտնվում սրբազան Դիլմունը՝ արևածագի երկիրը և աստվածների կացարանը»[40]։

Եվ այսպես, ի մի բերենք այն փաստարկները, որոնք օգնում են պարզաբանել Սարգոնի ազգության խնդիրը։ Նախ այն, որ նրա ծննդավայրը Աքքադի հյուսիսում գտնվող լեռնային երկիրն է՝ Հայկական լեռնաշխարհը։ Նրան այդ հյուսիսային լեռնաշխարհից Աքքադի տարածք է բերել Եփրատը, որը բխելով Հայաստանից, հոսում-իջնում է Միջագետք։ Իսկ Արարատյան երկրում չէին բնակվում ո՛չ Քամի սերունդները, ոչ էլ՝ Սեմի, այլ միայն՝ հաբեթածին Հայկի։ Նաև հիշենք Սարգոնի արտաքին տվյալների, իմաստնության ու հանճարի, և վերջապես նաև՝ նետ-աղեղի մասին։

Ուստի Սարգոնը չփորձեց խախտել Հայաստանի սահմանը ոչ միայն այն պատճառով, որ իր առջև ժամանակի ամենահզոր երկիրն էր, այլև, որ հատուկ ջերմ զգացում էր տածում այդ լեռնաշխարհի հանդեպ։ Իսկ դրա պատճառը, ելնելով բավականին համոզիչ փաստերի առկայությունից, կարծում ենք այն էր, որ նա հայկական արմատներ ուներ, և նրա ծննդավայրը Հայկական լեռնաշխարհն էր։

«Այստեղ մենք տեսնում ենք, թե ինչպես է քաղդեական պետության հիմնադիր Սարգոնը՝ իբրև մի խեղճ տղա, Մովսեսի նման, ճյուղերից շինված փոքրիկ նավակաձև տաշտի մեջ դրված Հայաստանի կողմերից նետվում Եփրատ գետի մեջ, մինչև որ հասնելով Բաբելոնի կողմերը գթասիրտ մեկը հանում է նրան ջրից և սնուցում»[41]։

Տեսնում ենք, որ Սարգոնի հայկական ծագման վարկածը միանգամայն հիմնավոր է (դրա իրական լինելը չպնդելով՝ մենք ներկայացրինք բավականին խոսուն փաստերի համադրումներ). իսկ դա վկայում է այն մասին, որ Աքքադա-Շումերական կայսրության գահին բազմել են հայկական արմատներ ունեցող կայսերական դինաստիայի ներկայացուցիչներ։

Սարգոն Աքքադացին իր ստեղծած կայսրությունը 50 տարուց ավելի

---

40 Дэвид Рол, Утраченный завет, Новая хронология событий Библейской эпохи, «эксмо», Москва 2005 г., ст. 36–37.

41 Հ. Յ. Ավգեր «Դասեր Հայոց եւ Հայաստանի հնագոյն պատմութեան», Բազմավեպ ամսագիր, հատոր Հ, թիվ 7–8–9, Վենետիկ, Սուրբ Ղազար 1912 թ., էջ 302:

կառավարելուց հետո վախճանվեց՝ իր գահը թողնելով որդուն՝ Ռիմուշին: Սարգոնի մահից հետո Շումերն ու Էլամը ապստամբեցին, սակայն Աքքադի նոր արքան դաժանորեն ճնշեց ապստամբությունները՝ միայն Շումերում կոտորելով 13 000 մարդ: Սակայն ներքին քաղաքական խարդավանքների հետևանքով Ռիմուշը սպանվեց յուրայիննների կողմից: Նրա մահից հետո Աքքադի գահին նստեց նրա եղբայրը՝ Սարգոնի մյուս որդին՝ Մանիշտուսուն, որի օրոք նորից շարունակվեցին ապստամբությունները՝ խարխլելով կայսրության հիմքերը: Նա էլ, չանալով ըմբոստներին ճնշել, արժանացավ եղբոր ճակատագրին:

Աքքադական կայսրության հաջորդ գահակալն այս անգամ դարձավ Սարգոնի թոռը՝ պատմության մեջ շատ ավելի մեծ հետք թողած Նարամ-Սուենը կամ Նարամսինը: Մանիշտուսուից՝ ***«բռնության հետևանքով մահացած այս թագավորից հետո Աքքադում թագավորեց հանրահայտ Նարամ-Սուենը (2236-2200 թ. մ. թ.ա.)»***[42]*:*

Հայաստանը և Նարամ-Սուենը

«Բոլոր առումներով Հայաստանը
մեր քաղաքակրթության օրրանն է և հին
աշխարհի ամենամեծ կայսրություններից մեկը»[43]*:*

Սարգոն Աքքադացու որդիներից հետո Աքքադի գահին նստեց նրա թոռը՝ Նարամ-Սուենը (Նարամսին): Նրա հոր՝ Մանիշտուսուի սպանությունից հետո սկսեց ավելի քայքայվել Սարգոնի ստեղծած աքքադական կայսրությունը, որը կազմված էր տարբեր ազգերի պատկանող թագավորություններից: Սարգոնի՝ Աքքադի գահին իրար հաջորդած որդիների ջանքերը հիմնականում ուղղված էին այդ խնդիրների կարգավորմանը:

Եվ ահա՝ կայսրության ամբողջականությունը պահպանելու հերթը հասավ Սարգոնի թոռանը՝ Նարամ-Սուենին. ***«Նրա հոր մահից հետո՝ այն պահին, երբ Նարամ-Սուենն արդեն պետք է ժառանգեր գահը, բոլոր տերությունները ապստամբեցին նրա դեմ՝ ստիպելով ապաստան գտնել մայրաքաղաքի պարիսպներից դուրս:***

Այնտեղից Նարամ-Սուենն անցնում է հուժկու հակահարձակման՝

---

42 История Древнего Востока, под ред. В. И. Кузищина, Москва 1979 г., ст. 125.

43 Maximillien de Lafayette, “Civilization and Arts of Armenia from Pre–History to the Present Day: Its Culture, Society, Stars, Artists and Celebrities” Volume 1, USA San Bernardino, CA 25 May 2015, p. 25.

ընդամենը տասներկու ամսվա ընթացքում հաղթանակ տանելով ինը ճակատամարտում: Նրա թագավորության շրջանը նշանակալից էր զինվորական հաջողություններով, հատկապես՝ էլամի դեմ պատերազմում (որի հետ, ի վերջո, Նարամ-Սինը խաղաղ դաշինք կնքեց), նաև էբլայի թագավորության դեմ, որի մայրաքաղաքը հիմնահատակ ավերեց: Իրականացրեց ռազմական արշավ՝ դեպի Օման (հին Մագան), որի զորքերը ծովային մարտի ժամանակ ջախջախվեցին»[44]:

Նա ոչ միայն ճնշեց ապստամբությունները, այլև սկսեց կայսրության տարածքների ընդլայնման ծրագրեր իրականացնել: ***«Մանիշտուշուի տասնչորս տարվա կառավարումը հիմնականում հետաքրքիր է նրանով, որ նա դարձավ Սարգոն Մեծի թոռան՝ Նարամսին Մեծի հայրը, ով Աքքադական կայսրության սահմանները հնարավորինս ընդլայնեց: Նարամսինը, ինչպես իր պապը, մշտապես պատերազմում էր: Նրա արձանագրություններից մեկում խոսվում է մեկ տարում տարած ինը հաղթանակի մասին»***[45]:

Կայսրության սահմանների ընդլայնման հետ, բնականաբար, ավելի բարգավաճեց բուն Աքքադը, քանզի ինչպես՝ Սարգոնի և նրա որդիների, առավել ևս Նարամ-Սուենի օրոք կայսրության տարբեր մասերից, որպես հարկ, Աքքադի տարածք էին բերվում տարատեսակ ու տարաբնույթ ապրանքներ՝ հանքանյութեր, պատրաստի ապրանքներ, գյուղատնտեսական բարիքներ, ստրուկներ և այլն: Այդպես, 36 տարի շարունակ Նարամ-Սուենի տիրապետության ընթացքում կայսրությունն օրեցօր ավելի հզորացավ: ***««Նարամ-Սին» Աքքադացին՝ Սարգոն Աքքադացու թոռը, Աքքադի թագավորն էր (2202-2166 մ.թ.ա.): Նրա կառավարման տարիներին կայսրությունն ապրեց իր ամենալավ ժամանակները»***[46]:

Նարամ-Սուենն՝ «աստված»

Աքքադացիները Նարամ-Սուենին մեծարում էին, փառաբանում և աստվածային պատիվների արժանացնում: Նման ձևով պատվում էին նաև նրա նախորդներին, քանզի Աքքադում ընդունված էր արքաներին դիմելիս ասել՝ «իմ աստված». դա զուտ դիմելաձև էր և ոչինչ ավելի չէր ենթադրում: Սակայն Նարամ-Սուենն, ի տարբերություն իր նախնիների, սկսեց լուրջ ընդունել իր անձի հանդեպ նման մեծարանքը: Դրան թերևս նպաստում էր նաև այն փառքը, որը նա ձեռք էր բերել կայսրության սահ-

44 Жан-Жак Гласснер, Месопотамия, Москва «Вече», 2012 г., ст. 434.

45 Сьюзен Уайс Бауэр, История Древнего мира. От истоков Цивилизации до падения Рима История Древнего мира, АСТ, Москва, 2011 г., ст. 150.

46 Жан-Жак Гласснер, Месопотамия, Москва «Вече», 2012 г., ст. 39.

մաններն ընդլայնելու շնորհիվ։ ***«Ավելի վաղ Աքքադական դինաստիայի արքաները, իհարկե՝ ոչ պաշտոնական, արդեն օգտագործում էին աստվածային պատիվներ՝ հին ժամանակների հերոսների նման... սկսած Սարգոնի ժամանակներից՝ մենք հանդիպում ենք այնպիսի անվանումների, ինչպես «Սարգոն՝ իմ աստված», «Իմ աստված Ռիմուշ» և այլն։ Եվ միայն Նարամ-Սուենն սկսեց իր տիտղոսներին միացնել «Աքքադի աստված» տիտղոսը՝ ստորագրությունների ժամանակ սկսելով աստվածության նշան դնել իր անվան առաջ. սա նշանակում էր Նարամ–Սուենի պաշտամունքի պաշտոնական ընդունում իր կենդանության օրոք»***[47]*։*

Իհարկե, այդ նոր «աստծո» մուտքը միջագետքյան «աստվածությունների» պանթեոն չէր կարող հարթ ընթանալ. եթե ժողովուրդը խնդիր չուներ այդ հարցում, ապա քրմերի մոտ դա սկսեց դժգոհություններ առաջացնել։ Եվ քանի որ այս բռնակալին այլևս չէր բավարարում «աշխարհի չորս կողմերի տիրակալ» լինելու տիտղոսը, և նա անզուսպ տենչում էր նաև աստվածային փառք, սկսեց հալածել ընդդիմացող քրմերին ու շատերին հեռացնելով՝ նրանց տեղում կարգեց իր համախոհներին։ ***«Իր իշխանության հենց սկզբից նա մեծ հարված էր հասցրել միջագետքյան բնիկ իշխանատոհմերին և քրմությանը՝ առաջիններին զրկելով տոհմատիրությունից, իսկ քրմական կարևորագույն պաշտոններում իր մերձավորներին նշանակելով։ Այդ վերջին միջոցի գործադրման շնորհիվ էլ հնարավոր դարձավ՝ միջագետքյան իրականության մեջ նախադեպը չունեցող մի սրբապղծություն. Նարամ-Սուենն իրեն հռչակեց «աստված»՝ կործանելով գերագույն աստծո տաճարը և հաստատելով իր անձի պաշտամունքը»***[48]*։*

Ըստ հետազոտողների՝ նրա նշանակած նոր քրմերն իրենց անվանում էին «Նարամ-Սուենի ստրուկներ»։ Նաամ-Սուենը նրանց մեծ արտոնություններ էր տալիս՝ շնորհելով հողեր, այլ նյութական բարիքներ, նրանք էլ որևէ բանում չէին հակառակվում թագավորին, այլ կատարում էին նրա բոլոր քմահաճույքները։

Լիովին իրեն ենթարկելով քրմական դասը՝ Նարամ-Սուենն իր որդիների հետ սկսեց լայն թափով նոր տաճարներ (կռատներ) կառուցել իր և աքքադական մյուս «աստվածների» համար՝ կործանելով շումերական «աստվածների» տաճարները, որոնց սպասավորներն էին հիմնականում հրաժարվում Նարամ-Սուենին՝ որպես կենդանի աստված, դավանել։ ***«Աքքադի չորրորդ տիրակալ Նարամ-Սուենին (Ք.ա. 2236-2200 թթ.) հաջողվում է վերականգնել Սարգոնի տերության՝ նրա հաջորդների օրոք անկում ապրած հզորությունը։ Նա իրեն հռչակում է ոչ միայն «Շումերի և Աքքադի արքա» - «աշխարհի չորս կողմերի արքա» ու «տիեզերքի արքա», այլև՝***

---

47 История древнего востока, под. ред. И. М. Дьяконов, Москва 1983 г., ст. 250–252.

48 Արտակ Մովսիսյան, Բարեպաշտ արքաների աշխարհակալությունը, Երևան 1997 թ., էջ 11։

«աստված»»[49]*։*



Հատկապես ցայտուն է երևում նրա՝ որպես «աստծու» մեծարումը հուշակոթողներից մեկում, որտեղ նա հաղթում է արևելյան Զագրոսի լեռնաբնակներին։ Հավանաբար, դա վերջին տարածքն էր, որ նա միացրեց Աքքադական կայսրությանը, քանզի այդ հուշակոթողում նա գտնվում է բոլորից վեր՝ երևակայելով իրեն որպես «աստված» և «երկրի չորս կողմերի տիրակալ»։ ***Սուզի «Նարամ-Սուենի հուշաքարն» արվեստի նշանավոր ստեղծագործություն է. թագավորն «աստծո» սաղավարտով է, իր ետևից եկող զինվորներից բավականին բարձր է, նա բարձրանում է դեպի լեռների գագաթները՝ դեպի լուլուբեների երկիրը։ Խոցվելով նիզակից՝ ընկնում է թշնամին, գթասրտություն է խնդրում մյուսը... Հաղթողի վերևում միայն լեռների գագաթներն են և աստղերը»***[50]*։*

Սակայն նման պահվածքը վաղ թե ուշ հասցնելու էր ծանր գահավիժման, քանզի ինչպես ասում է Սուրբ Գիրքը. ***«Տղամարդու սիրտը գոռոզանում է կործանումից առաջ»***[51]*։ Դա ապացուցել էր դեռևս Բել-Նեբրովթն իր սեփական օրինակով, միայն թե դրանից դաս չառան՝ թե՛ Նարամ-Սուենը, թե՛ հետագա դարերի մյուս բռնակալները։*

Իրեն «աստված» հռչակելով՝ նա գրավեց նախորդ նեռի՝ Բելի տեղը։ Այն Բելի, ում տաճարներն էին կանգնեցվել Միջագետքյան տարածքներում, ում երկրպագում էին՝ կոչելով Բել կամ Բահաղ։ Այն Բելին, ում հայոց մեծ Նահապետ Հայկն իր հսկայական նետով գամեց գետնին։

---

49 Արտակ Մովսիսյան, Հայոց պատմության աշխարհակալությունները, Երևան, 2008 թ., էջ 10–11:

50 История Древнего Востока, под ред. В. И. Кузищина, Москва 1979 г., ст. 125.

51 Առակ. 18:12:

Նարամ-Սուենի ոտնձգությունները Հայաստանի հանդեպ

«Հայաստանը ճանաչելու համար բավարար չէ լինել այնտեղ, պետք է նրան լսել»[52]:

Նարամ-Սուենն իր կայսրությունը հաստատելով՝ ընդարձակեց ավելի, քան իր հռչակավոր պապը՝ Սարգոն Աքքադացին. եթե նրա ժամանակ Աքքադը միայն տեղ-տեղ էր մերձենում Հայոց սահմաններին, ապա Նարամ-Սուենն Աքքադական կայսրության տարածքներն ամբողջովին սահմանակից դարձրեց Հայաստանին. ***«Սարգոն Մեծը՝ (2334-2279 թ. մ.թ.ա.), սեմիտական Աքքադի արքան, գրավեց շումերական քաղաքները և հիմնեց աշխարհում առաջին կայսրությունը (2334-2193 թ. մ.թ.ա.)՝ Աքքադ մայրաքաղաքով: Նրա թոռան՝ Նարամսինի ժամանակ (2254-2218 թ. մ.թ.ա.) կայսրությունը տարածվեց մինչև Հայաստանի և Իրանի սահմանները»***[53]:

Այս ամենից Նարամ-Սուենը շատ հպարտացավ, ինչի հետևանքով էլ նրա միտքը մթագնեց. իր փառքի գագաթնակետին հասած բռնակալը մտադրվեց անել այն քայլը, որը Բելից հետո դեռ ոչ ոք չէր հանդգնել անել. այն է՝ ներխուժել Արատտայի՝ Հայաստանի սահմաններից ներս: Նա գիտեր, որ այդ խորհրդավոր երկիրը համարվում էր «Աստվածների կաճառ», «Աստծո որդիների երկիր» և ձեռնպահ էր մնում այդ կողմն ասպատակելուց: Բայց երբ ինքն իրեն «աստված» հռչակեց, արդեն համարեց, որ հավասարը հավասարների հետ գործ ունի, և նախապատրաստվեց պատերազմի: ***«Աքքադի հզորության ցայտուն վկայություն են Նարամսինի ճոխ տիտղոսները, ով իրեն արդեն անվանում է «աստվածային Նարամսին, հզորագույն, Աքքադի աստված». Աքքադի արքային արդեն տալիս են մաքուր աստվածային պատիվներ»***[54]:

Այդ բաբելոնյան տարածքներում կարծես հաստատվել-մնացել էր այն չար ոգու ազդեցությունը, ինչը մղեց Բելին՝ աստվածուրացության և աշխարհին տիրանալու տենչանքին, քանի որ նույն այդ մոլեգնությամբ բռնկվեց նաև Նարամ-Սուենը: Եվ այն կործանարար ոգին, որ բնորոշ էր Քամի նզովված սերունդներին, հատկորոշ դարձավ նաև Սեմի միջագետքաբնակ սերունդների համար:

Այսպիսով, իրեն «աստված» երևակայելով՝ Նարամ-Սուենը որոշեց արդեն ասպատակել կայսրության հյուսիսային սահմանին կից լեռնաշ-

52 Инакентий Иванов, Росия.

53 Стивен Бертман, МЕСОПОТАМИЯ, Университет Виндзора, «Вече», Москва 2007, ст. 389.

54 Авдиев В. И., История Древнего Востока, Ленинград 1953 г., ст. 69.

խարհը՝ Արատտայի տարածքը։ ***«Նարամ-Սուենի ժամանակ կայսրության տարածքն ընդլայնվեց հյուսիսի և հյուսիս- արևմուտքի կողմերում»***[55]*։*



Նա, իր կայսերական բազմազգ և մեծաթիվ զորքով կարողացավ անցնել Հայաստանի հարավային սահմաններից, սակայն չկարողացավ շատ խորանալ և հասնել Ամիդ[56] *(Դիարբեքիր)՝ այնտեղ մի արձանագրություն թողեց՝ որպես իր ձեռքբերման վկայություն. որպես հավաստիք, որ այն, ինչ չհանդգնեց անել նույնիսկ իր պապը՝ Սարգոնը, արեց ինքը՝ ինքնակոչ «աստվածը»։*

Եվ սա դարձավ Նարամ-Սուենի ու նրա կայսրության կործանման սկիզբը։

Սև ամպեր Աքքադական կայսրության գլխին

Նարամ-Սուենի կառավարման ուշ շրջանում, ըստ հնագիտական տվյալների, հենց այն ժամանակ, երբ նա իրեն «աստված» հռչակեց և ռազմարշավ սկսեց Հայաստանի ուղղությամբ, Աքքադի կայսրությունը հզոր հարձակման ենթարկվեց կուտիներ կամ գուտիներ կոչվող ժողովրդի կողմից։ Այդ արշավանքն այնքան սրընթաց էր և հուժկու, որ ցնցեց կայսրության հիմքերը. ինչին բնավ չէր սպասում միջագետքյան բռնակալը։ ***«Նարամ-Սուենի բանակները չկարողացան դիմակայել կուտիների հորդաներին, որոնք գրավեցին քաղաք քաղաքի հետևից։ Կուտիների գրաված աքքադական քաղաքներում օրինական կարգը գլխիվայր շրջվեց»***[57]*։*

---

55 Кьяра Децци Бардекси Месопотамия: колыбель человечества, Изд. «Ниола–Пресс», Москва 2008 г., ст. 34.

56 Ըստ Մովսես Խորենացու՝ քաղաքի ամրությունները կառուցել է Հայկազունի կամ Երվանդունի Տիգրանը՝ նախքան Քրիստոս՝ VI դարի կեսերին։ Այդ պատճառով էլ հայ պատմագրության մեջ Ամիդը հիշատակվում է նաև Տիգրանակերտ անունով, որը հաճախ շփոթել են Տիգրան Բ–ի կառուցած (70–ական թթ. Ք.ծ.ա.) Հայոց հայտնի մայրաքաղաքի՝ Աղձնիքի Տիգրանակերտի հետ։

57 Сьюзен Уайс Бауэр, История Древнего мира. От истоков Цивилизации до падения Рима История Древнего мира, АСТ, Москва, 2011 г., ст., 152.

Արձանագրություններում մնացել են հիշատակումներ այդ ներխուժման մասին, ըստ որոնց՝ այդ սրընթաց արշավանքի ժամանակ մեծ պարտություն կրեց կայսրական բանակը, սրի մատնվեցին լավագույն զինվորներն ու զորապետերը։

Կուտիներին աքքադացիները համեմատում էին գիշատիչ թռչունների հետ, որոնց մահացու հարվածներից ոչ ոք չէր կարողանում խույս տալ։ Մարդկանց կոտորելու հետ մեկտեղ կուտիներն ավիրում և հրի էին մատնում պալատները, կռատները և տաճարները, ոչնչացնում էին տնտեսական և այլ կառույցներ։ Արդեն վաղուց նման հարձակման չենթարկված աքքադացիներն այդ անսպասելի, հուժկու և անողորմ հարվածներից այլևս չկարողացան ուշքի գալ. ***«Միջագետքի հյուսիսում գտնվող լեռներից իջան ռազմաշունչ ցեղեր... մասնավորապես, գուտիները հարվածեցին Աքքադական տերության բուն կենտրոնին (ժամանակակից Բաղդադի մոտ), և Սարգոնի մեծ կայսրությունն աստիճանաբար սկսեց քանդվել»***[58]*։*

Աքքադացիները կարծում էին, որ միայն իրենց է վերապահված հարևան ժողովուրդներին սրի քաշել, հպատակեցնել և ստրկացնել, նրանց քաղաքներն ու մյուս բնակավայրերն ավերել (ինչպես վարվեցին Էբլայի հետ)։ Եվ ահա իրենք առերեսվեցին այդ նույն արհավիրքներին, որ իրենք էին բերում հարևան երկրների վրա։ Սակայն երբ աքքադացիները՝ սարսափած ու հուսալքված, կանգնեցին անակնկալ պարտության ցավալի փաստի դեմ, իրենց արձանագրություններում նկարագրական հիշատակություններ թողեցին այդ դեպքերի մասին, կուտիներին համարելով որպես անողորմ ասպատակողներ, ավերողներ և բնորոշում տարբեր այլ վարկաբեկիչ արտահայտություններով։ Այնպես որ, մասնագետներից ոմանք այդ արձանագրությունները հիմք ընդունելով՝ կուտիներին համարել են կիսավայրենի ցեղեր՝ բարբարոսներ. ***«Ոչ ոք իրեն չի անվանում բարբարոս, - նշում է Դավիդ Մակ-Կալլոուն, - այլ միայն ձեր թշնամին է ձեզ այդպես կոչում»... իհարկե, աքքադացիների գրառումներից ոչ մեկում չի օգտագործվել «բարբարոս» բառը, ինչը ծնունդ է առել Հունաստանում շատ ավելի ուշ։ Ասորեստանի գծով մասնագետ Լեո Օպենհեյմերը նշում է, որ աքքադական ժամանակագրություններում առկա խորը ատելությունը նոր բան է հին աշխարհի համար. դա, ինչպես նշում է նա, համեմատելի է միայն հիքսոսների հանդեպ եգիպտացիների ատելության հետ, այսինքն՝ մի երևույթի հետ, որ տեղ է գտել երկու հարյուր տարի անց»***[59]*։* *Ինչ վերաբերվում է հիքսոսներին. թեպետ պատմաբաններից ոմանք նրանց ևս անվանում են քոչվոր ցեղեր, սակայն միանգամայն հստակ է և ապացուցված, որ տնտեսության և ռազմական ոլորտին վերաբերվող բազմաթիվ*

---

58 Дэвид Рол, Утраченный завет, Новая хронология событий Библейской эпохи, «эксмо», Москва 2005 г., ст. 152.

59 Նույն տեղում:

առաջընթացների համար եգիպտացիները պարտական են հենց հիքսոսներին: Այդպիսի պատկեր չենք կարող տեսնել, եթե հիքսոսները լինեին քոչվոր, խառնիխուռն ցեղեր. սակայն այս մասին կխոսենք այս հատորի համապատասխան ենթագրքում:

Այն որ Նարամ-Սուենը աջ ու ձախ ավերում էր հարևան երկրները, դա, իրենք համարում էին, որ պետք է ընդունվեր որպես քաղաքակիրթ երկրին հարիր գործունեություն, իսկ երբ այդ նույնն իրականացվում էր իրենց նկատմամբ, դա կոչում էին «բարբարոսություն»: Այսպես արշավելով՝ կուտիները Միջագետքում հասան մինչև Շումեր և ամենուր վերջ դրեցին աքքադական բռնակալությանը:

*Ինչպես աքքադական, այնպես էլ շումերական արձանագրություններում պահպանվել են կուտիներին վարկաբեկող նյութեր: Սակայն դրանք գրվել են շումերների այն իշխանավորների ձեռամբ, ովքեր աքքադացիների կողմից էին կարգված. քանզի Աքքադի կործանմանը զուգընթաց՝ այդ դրածոներն էլ, բնականաբար, հալածանքների ենթարկվեցին. **«Թագավորական ցուցակից մենք գիտենք, որ կուտիների զորքերը գրավել են Ուրուկը՝ վաղ անցյալում Գիլգամեշի ժառանգական տունը: Քանի որ հասան այդքան հեռու՝ հարավ, նրանք, ամենայն հավանականությամբ, ոչնչացրեցին աքքադացիների իշխանությունը հարավային Շումերում»**[60]:*

Մինչդեռ կուտիներն ավերողներ չեն եղել, այլ ուղղակի վրեժխնդիրներ, որ ծառացել են հղփացած բռնակալների դեմ: Այդ մասին է վկայում այն, որ կուտիների իշխանության տակ գտնվող Շումերը մեծ վերածնունդ ապրեց այդ ժամանակ, երբ Գուդեա անվամբ իշխանը նրանց կողմից կարգվեց Շումերի կառավարիչ:

Ովքեր էին կուտիները

*Ինչպես վերը նշվեց որոշ մասնագետների կարծիքով կուտիները քոչվոր ցեղեր են եղել: Սակայն պատմաբանների ու հնագետների մեծ մասը եզրահանգում է, որ նրանք ունեցել են իրենց երկիրը, որը գտնվել է Աքքադից հյուսիս ընկած Զագրոսի լեռնաշղթայում: **«Մոտ մ.թ.ա. 2200 թ. քաղաքը և նրա կայսրությունն ընկան՝ «գուտիներ» անվանվող ասպատակող հորդաների ճնշման տակ, ովքեր Զագրոսի լեռների վրայից ներխու-***

[60] Сьюзен Уайс Бауэр, История Древнего мира. От истоков Цивилизации до падения Рима История Древнего мира, АСТ, Москва 2011 г., ст. 153.

ժեզին երկիր»[61]*։ Տարօրինակ է, սակայն ո՛չ Սարգոնի, ո՛չ նրա որդիների, ո՛չ Նարամ-Սուենի գրաված երկրներում, ո՛չ էլ հարևան տարածքներում նման երկիր չի հիշատակվել։*

Եթե կուտիների երկիրը գտնվել է Աքքադի մերձակա՝ հարևան տարածքում, ապա դրա մասին տեղեկությունների բացակայությունը (մինչև Աքքադի վրա հարձակումը) խորհելու տեղիք է տալիս։ Եվ դա անհիմն չէ, քանզի որոշ մասնագետներ նշել են, որ կուտիների ***«ճշգրիտ շրջանը և բնակեցման վայրը հայտնի չէ»***[62]*։*

Նրանց ոչ միայն տեղը ստույգ հայտնի չէ, այլև՝ թե ովքեր են նրանք եղել իրականում. ինչ-որ բարբարոս ցեղախմբե՞ր, թե՞ վաղուց կայացած ու մեծ զարգացման հասած ազգ։ ***«Կուտիների պատկերը մեզ չի հասել, և մեզ ոչինչ հայտնի չէ իրենց զինանոցից»***[63]*։*

Ըստ մասնագետների՝ Կուտիումը զագրոսաբնակ լուլուբեների հարևանությամբ է գտնվել, իսկ լուլուբեների երկիրը Նարամ-Սուենը ժամանակին նվաճել էր. նա կարող էր նաև հարևան կուտիների երկիրն էլ գրավել կամ գոնե փորձել հպատակեցնել։ Սակայն նման բան չի հիշատակվում ոչ մի տեղ։ Կամ էլ սա, հավանաբար, մի հզոր երկիր է եղել, որից վախենալով՝ այդ մեծ կայսրության տիրակալը՝ Նարամ-Սուենը ձեռնպահ է մնացել այդ կողմն ասպատակելուց։ Եթե այն, իրոք, հզոր, ներկայանալի երկիր է եղել, ապա գոնե կհիշատակվեր, ինչպես՝ Արատտան. սակայն այս մասին կրկին ոչ մի տեղեկություն չի պահպանվել։ Իսկ միգուցե, այն անպիտան, անարժեք երկիր է եղել, որ ուղղակի արհամարհվե՞լ է կայսեր կողմից. այդ դեպքում, իրենից ոչինչ չներկայացնող երկրի ժողովուրդը, որին համարում են բարբարոսների խառնամբոխ, ինչպե՞ս կարողացավ կործանել իր հզորության գագաթնակետին հասած Աքքադի կայսրությունը։

Այս բոլոր տարբերակներն էլ տրամաբանական չեն և կարող են կասկածի տակ դնել Կուտիումի և նրա ժողովրդի՝ կուտիների գոյությունը։ Սակայն անժխտելի է, որ նրանք պատմության ասպարեզում են հայտնվում այն ժամանակ, երբ Նարամ-Սուենը 30 տարուց ավելի տիրակալն էր իր կայսրության։ ***«Հին Միջագետքի Ք.ա. 3-րդ հազարամյակի երկրորդ կեսին վերաբերող ամեն մի աշխատությունից կարելի է տեղեկանալ, որ միջագետքյան տիրակալ Նարամ-Սուենի (Ք.ա. 2236-2200թթ.) իշխանության վերջում նրա տերության վրա արշավեցին լեռնական կուտիները, որոնք տապալեցին նրան, ապա գերիշխեցին Առաջավոր Ասիայում։ Ովքե՞ր են այդ լեռնականները և որտեղի՞ց եկան նրանք»***[64]*։*

---

61 Стивен Бертман, Месопотамия. Вече, Москва 2007 г., ст. 14.

62 История древнего востока, под. ред. И. М. Дьяконов, Москва 1983 г., ст. 255.

63 История древнего востока, под. ред. И. М. Дьяконов, Москва 1983 г., ст. 260.

64 Արտակ Մովսիսյան, Բարեպաշտ արքաների աշխարհակալությունը, Երևան 1997 թ., էջ 3:

Հարց է առաջանում. իրականում որտե՞ղ է եղել այդ հզոր երկիրը՝ Կուտիումը, և ովքե՞ր են եղել այդ երկրի քաջարի ռազմիկները, որ կարողացել են ծնկի բերել մինչև աստղերն իր փառքը բարձրացրած Նարամ-Սուենին, սանձել ու ենթարկեցնել հին աշխարհի ամենամեծ կայսրությունը։

«Կուտիների հայրենիքի տեղորոշման հարցում ուսումնասիրողները բաժանվում են մի քանի խմբի։

Առաջինն այն տեղադրում է Կորդվաց (Գուրդիենյան, ալ-Ջուդի) լեռների շրջանում[65]։ Այս տեսակետը տարածում էր գտել անցյալ դարում և մեր դարի առաջին տասնամյակներին։ Երկրորդ տեսակետի համաձայն՝ կուտիների երկիրը (Կուտիում, Գուտիում[66]) գտնվել է Տիգրիս, Փոքր Զաբ, Դիալա գետերի և Սուլեյմանիե լեռների կազմած քառանկյան տարածքում[67]։ Գիտնականների մի ուրիշ խումբ այն տեղադրում է Զագրոսյան լեռներում՝ առանց կոնկրետացման[68]։ Չորրորդ տեսակետի համաձայն՝ կուտիների երկիրը պետք է գտնված լինի Զագրոսի հյուսիսում՝ Ուրմիո լճի ավազանում՝ երբեմն ընդգրկելով նաև Կորդվաց լեռները[69]»[70]։

Այս ամենից կարելի է եզրակացնել, որ այդ առեղծվածային երկիրը հարկ է փնտրել Աքքադի մոտակայքում։ Զագրոսյան լեռնաշղթան, որի հյուսիսային կողմից իջել են կուտիները, սկսվում է էլամի մոտից և, ձգվելով դեպի հյուսիս, հասնում է մինչև Հայոց հարավային սահմանում գտնվող Կորդվաց լեռները, ինչը հստակ երևում է այս քարտեզում։

---

65 Մ. Շտրեք, Հայաստան, Քրդստան և Արևմտյան Պարսկաստան՝ բաբելական-ասորեստանեայ սեպագրերու համաձայն, (թարգմ. Հ. Բ. Պիլէգիկ-եան), Վիեննա, 1904 թ., էջ 52; Г. Масперо, Древняя история народов Востока, М. 1911 г., с. 156: Տես նաև И. М. Дьяконов, История Мидии, М.–Л., 1956 г., ст. 104–ում նշված գրականությունը Կուտիների երկիրը Վանա և Ուրմիո լճերի միջնատարածքում են տեղադրում Հ. Վինքլերը, նրան հետևելով՝ նաև Գ. Խալաթյանցը ու Լեոն (Г. Винклер, Западная Азия в древные времена (История человечества, т.III), Пет. 1903 г., ст. 12; Г. А. Халатянц, Очеркъ истории Армении, М., 1910 г., ст. 35–39; Լեո, Երկերի ժողովածու, հ. 1, Ե. 1966 թ., էջ 176–177): Առանց նշելու իր տեղեկության աղբյուրը, Ա. Ղարիբյանը «Հայ ժողովրդի պատմության սկզբնավորման շրջանը» հոդվածում գրում է. «Գիտության մեջ հավանական է համարվում, որ Գութիումի անունը պահպանվել է «Խոյթ» կամ «Խոյթ» երկրամասի վրա...» («Տեղեկագիր», թիվ 9, 1946 թ., էջ 14):


66 Անվան վերջին ում մասնիկը աքքադերենի ուղղական հոլովի ցուցիչն է, բուն երկրանունն է Կուտի կամ Գուտի:

67 И. М. Дьяконов, История Мидии, М.–Л., 1956 г., ст. 104–ի համապատասխան հղումները:

68 Г. А. Меликишивили, Наири-Урарту, Тб., 1954 г., ст. 118–120; J. Bottero, "The First Semitic Epmire", The Near East: The Early Civilizations, London, 1967, p. 99.


69 И. М. Дьяконов, Ассири-вавилонские источники по истории Урарту (АВИИУ), 1, прим. 4: И. Алиев, История Мидии, 1, Баку, 1960 г., ст. 64, прим, 8; H.R. Hall, The Ancient History of the Near East, L. 1952, p. 186.

70 Արտակ Մովսիսյան, Բարեպաշտ արքաների աշխարհակալությունը, Երևան, 1997 թ., էջ 3–4:



Ի դեպ, սա այն եզակի քարտեզներից է, որի վրա արևմտյան քարտեզագիրները նշել են Հայաստանի անունը՝ Շումերի, Աքքադի և Էլամի հետ միասին: Ուրեմն, շատ հավանական է, որ ասելով, թե կուտիները հյուսիսային Զագրոսի կողմից են իջել՝ իրականում նկատի են ունեցել հենց Կորդվաց լեռները, որից այն կողմ Հայոց Կորդվաց գավառն է, որի անվամբ երբեմն անվանվել է ամբողջ Հայաստանը: Այդ մասին արդեն մանրամասն խոսվել է առաջին հատորի երկրորդ գրքում՝ «Երկիր, որտեղ հանգրվանեց փրկության Տապանը» խորագրի ներքո: Այսպիսով, պարզ է դառնում, որ Կուտիում և Կորդուք անվանումները վերաբերում են նույն տարածքին. Կորդուքը աքքադա-շումերական լեզվում տառադարձվել է «Կուտիումի»:

Շատ կարևոր և հետաքրքիր փաստ է այն, որ ուսումնասիրողներից ոմանք համարում են, որ այնտեղ՝ Զագրոսի լեռներում, որտեղ ապրել են կուտիները, շատ ավելի վաղ ապրել են շումերները: Նրանք այդտեղից են իջել ու բնակություն հաստատել հարավային Միջագետքում. ***«Աքքադական կայսրության ժամանակ նշանավոր հարևաններից են եղել գուտինները, որոնք բնակվել են Զագրոսի լեռներում, որը նախկինում շումերների բնակավայրն էր»***[71]*:*



Իսկ այն, որ շումերները, ըստ գիտական աղբյուրների, Միջագետք են իջել Արարատյան երկրից՝ Հայաստանից, խոսում է հենց այն մասին, որ Հայաստանի հնագույն անվանումներից մեկի՝ Կորդուքի, այսինքն՝ Կուտիումի անվան տակ պետք է հասկանալ Արարատյան երկիրը կամ (ինչպես այն ժամանակ էր անվանվում) Արատտան. ***«Շումերների բնակչության մեծ մասը եկել է Զագրոսի լեռնային զանգվածից, այսինքն՝ այն աշխարհագրական***

[71] Азимов А. Ближний Восток. 100 веков истории»: Эксмо; Москва 2011 г., ст. 56.

տարածաշրջանից, որը մենք անվանում ենք Մեծ Հայք. այն նույն տարածքից, որտեղ գտնվել է Արատտայի թագավորությունը և աստվածաշնչյան երկիր Եդեմը»[72]:

Ըստ Դեվիդ Ռոլի՝ շումերները բնակվել են այն տարածքում, որտեղ ապրել են հայերը՝ այսինքն, Մեծ Հայքում: Նա նաև նշում է, որ այդ տարածքը Զագրոսյան լեռնակողմում է գտնվում, ու հենց այդ տարածքում է նա տեսնում նաև Կուտիումը. ***«Աքքադացիների հզոր տերությունը փլուզվեց, երբ գուտիների ռազմատենչ ցեղերը ներխուժեցին Միջագետքյան հարթավայր՝ իրենց նախկին բնակության տարածքից՝ Զագրոսի լեռնաշխարհից»***[73]:

Փաստորեն, նա նույնացնում է այն տարածքը, որտեղ ապրել են հայերը և որտեղից, ինչպես նշվում է, սկսել են իրենց արշավանքը կուտիները՝ ակամա ապացուցելով, որ կուտիները հենց հայերն են:

Այս քարտեզում էլ Զագրոսի լեռնաշղթայի այն հատվածը, որտեղից իջել են կուտիները, Դեվիդ Ռոլը տեղադրել է ոչ թե Աքքադի հյուսիս-արևելքում, այլ՝ հենց հյուսիսում, այսինքն՝ Կորդվաց գավառի տարածքում՝ մի անգամ ևս նշելով այն փաստը, որ կուտիները Հայաստանի տարածքից են սկսել Աքքադի դեմ իրենց հաղթարշավը: Կուտիումի և Կորդուքի նույնացման խնդրին անդրադարձել է պատմաբան Արտակ Մովսիսյանը՝ այդ վարկածի մասին տալով հիմնավոր պարզաբանումներ:

Վերը խոսվեց շումերական Գուդեա իշխանի մասին, ով բազմաթիվ արձանագրություններ է թողել, որոնցից մեկում նույնպես Կուտիումն ու Հայաստանը նույնացվում են. ***«Առաջին հայացքից տարօրինակ է թվում, որ Գուդեայի արձանագրությունները հիշատակում են Հայկական լեռնաշխարհի հարավարևելյան սահմանային Մենուա լեռները, հյուսիս-արևմուտքում գտնվող Խախ(ում)ը, բայց ոչինչ չեն հաղորդում Կուտիումի մասին: Սակայն դա խաբուսիկ տպավորություն է. Գուդեայի բնագրերում հիշվում է Արատտա երկիրը, որը լավ հայտնի է շումերական դյուցազնավեպից՝ կապված Ք.ա. 28-27-րդ դարերի իրադարձությունների հետ և որը տեղադրվում է Հայկական լեռնաշխարհում՝ փոխարինելով Կուտիումին:***

Այս ուշագրավ հանգամանքը գալիս է մեկ անգամ ևս փաստելու Արատտայի և Կուտիումի տեղորոշման՝ մեր տեսակետի ճշմարտացիությունը, խոսում է հօգուտ նույն երկրի նկատմամբ կիրառված երկու անունների համարժեքության և լրացնում է Հայաստանի հնագույն պատմության բաց օղակներից մեկը»[74]:

---

72 Девид Рол, Генезис цивилизации. Откуда мы произошли, Изд–во Эксмо, Москва 2002 г., ст. 145.

73 Девид Рол, Генезис цивилизации. Откуда мы произошли, Изд–во Эксмо, Москва 2002 г., ст. 51.

74 Արտակ Մովսիսյան, Բարեպաշտ արքաների աշխարհակալությունը, Երևան 1997 թ., էջ 20–21:

Հետևաբար, կուտիներ՝ առանձին ազգ, Կուտիում առանձին երկիր գոյություն չեն ունեցել: Կուտիումը Մեծ Հայքի Կորդվաց գավառի անվանումն է, որով երբեմն, և հատկապես այդ շրջանում, կոչվել է ամբողջ Հայաստան աշխարհը:

Միջագետքի երկրների կողմից Հայաստանը Կորդուք անվանելու պատճառն այն է, որ Կորդո՛ւքը (կամ Կորճայքը) Միջագետքի երկրներին սահմանակից գավառ է եղել, և առաջինը հենց այդ գավառն է իր վրա վերցրել պատերազմական գործողությունների հետևանքները:



Ինչպես Հայկի ու Բելի բախման ժամանակաշրջանում՝ Կորդվաց լեռներն էին Հայաստանը բաժանում Միջագետքի երկրներից: Եվ եթե Միջագետքի կողմից հարձակում էր լինում, առաջին հարվածն իր վրա էր վերցնում հենց Կորդուք գավառը: Իսկ երբ Հայոց զորքերն էին հակահարձակման անցնում, բնական է, որ Կորդվաց լեռներից իջնելով էին մտնում Միջագետքի տարածք: Այդ պատճառով էլ Հայաստանի մասին խոսելիս Կորդուք անունն էին օգտագործում, ինչը նրանց շուրթերին հնչում էր «Կուտիում»:

«Մ.թ.ա. 22-րդ դարի վերջերին Հայկական լեռնաշխարհի հարավարևելյան մասերից՝ Կորդվաց լեռներից, խոշոր մի արշավանք է կազմակերպվել դեպի Ստորին Միջագետք, որտեղ ստեղծվել էր Աքքադ բռնապետությունը»[75]:

*Ինչպես ասվեց, մինչ Նարամ-Սուենի վրա հարձակվելը, կուտիների մասին տեղեկությունների չենք հանդիպում, սակայն Նարամ-Սուենի ժամանակներից սկսած՝ այդ անվանումը հաճախ է հանդիպում արձանագրություններում, որտեղ նույնպես Կուտիումը և Հայաստանը նույնացվում են: Նման տեղեկություններ են պահպանվել Ադադներար Ա-ի (Ք.ա. 14 դար), Սալմանասար Ա-ի (Ք.ա. 13 դար.) և Ասորեստանի այլ արքաների արձանագրություններում[76]: **«Ամփոփելով Ասորեստանի արքաների հաղորդածները՝ տեսնում ենք, որ կուտիների երկիրը պետք է փնտրել Կադմուխիի, Բաբխիի, Կումենուիի, Ուրուատրիի, Թուրուկիի և Մեխրիի հարևանությամբ:***

---

75 Անժելա Տերյան, Հայաստանը արարչագործության և քաղաքակրթության բնօրրան, Երևան 2002 թ., էջ 181:

76 Արտակ Մովսիսյան, Բարեպաշտ արքաների աշխարհակալությունը, Երևան 1997 թ., էջ 13-14:

Իսկ այդ երկրները քարտեզի վրա շրջան են կազմում, որի կենտրոնը ճիշտ և ճիշտ համընկնում է Մեծ Հայքի Կորդվաց աշխարհ (Կորճայք) նահանգի Կորդուք գավառի հետ: Կորդուքի և կուտիների կապի օգտին է խոսում նաև այն փաստը, որ արամեական աղբյուրներում Կորդվաց լեռները կոչվում են Կուտի (որից էլ՝ արաբական Ջուդի)...

Գուշակությունների և մարգարեությունների ժամանակ երկրները կոչվում էին ոչ թե իրենց ժամանակակից, այլ հնում ունեցած անուններով: Եվ Ուրարտուն տվյալ բնագրի գուշակության մասում կոչվում է Գուտիում: Այսինքն՝ Ք.ա. I հազարամյակի Ուրարտուն համապատասխանում է Ք.ա. III հազարամյակի Կուտիումին: Նույն՝ Ք.ա. 8-րդ դարի ավելի վաղ՝ Սալմանասար 4-րդի ժամանակ (Ք.ա. 781-772) գրված մի արձանագրության մեջ Վանի թագավորությունն ուղղակի կոչվում է «կուտիների երկիր»[77]*:*

Վերոշարադրյալ ողջ քննությունը հանգեցնում է մի եզրակացության. կուտիական աշխարհակալության մեկնակետը Հայկական լեռնաշխարհի հարավն էր: Այդ կայսրությունը ստեղծվել է հնագույն Հայաստանի (գուցե նաև հարևան երկրների) դաշնակից զորքերի ջանքերով, ուստի և պետք է դիտարկվի՝ իբրև մեր երկրի ու ժողովրդի հնագույն պատմության բաղկացուցիչ մաս: Թերևս այդ ժամանակներից եկող ավանդությամբ է պայմանավորված Աստվածաշնչի թարգմանություններում Հայաստանը՝ Կորդուք անվան տարբերակներով (Կարդու, Քարդու, Քարդա) ներկայացնելը (ինչպես որ Ուրարտուն՝ Կուտիում)»[78]*:*

Ամփոփելով, պետք է փաստենք, որ երբ Նարամ-Սուենը հանդգնեց անցնել Հայոց սահմաններից ներս, աքքադական կայսրության գնդերն ուղղելով դեպի Հայաստանի խորքերը, ենթարկվեց հզոր հակահարձակման հայկական զորքերի կողմից, որոնք էլ վերջ դրեցին Աքքադական կայսրությանը և նրա ամբարտավան ու ամբարիշտ կայսր Նարամ-Սուենին: Հայկական կողմի այդ հզոր հակահարվածը պատմության մեջ հիշատակվում է որպես կուտիների հաղթարշավ: «Համեստ և խաղաղ անուն է կուտին, բայց այդ ժողովուրդը շատ ռազմատենչ էր: Այն եկել էր Հայկական լեռնաշխարհից»[79]*:*

---

77 АВИИУ, 38:

78 Արտակ Մովսիսյան, Բարեպաշտ արքաների աշխարհակալությունը, Երևան 1997 թ., էջ 15, 17:

79 Деопик Дега Витальевич, История Древнего Востока, Москва 2016 г., ст. 87.

Պարզաբանումներ՝ Աքքադի վրա կուտիների հարձակման վերաբերյալ

Այսպիսով տեսանք, որ երբ Նարամ-Սուենը հարձակվեց Հայաստանի՝ Կորդուքի վրա, նա մեծ հակահարվածի առերեսվեց. հայկական բանակը, ներխուժելով Աքքադի տարածք, ծանր պարտության մատնեց նրան։

*Գիտնականներից ոմանք նշում են, թե կուտիները սրընթաց հարձակումով են պարտության մատնել Նարամ-Սուենի բանակը, սակայն ավելի խորն ուսումնասիրությունների արդյունքում ի հայտ են եկել կարևոր մանրամասներ։ Ստորև կտեսնենք, որ բավականին երկարատև պատերազմներ են եղել այդ հզոր կայսրությանը ծնկի բերելու համար։ Նարամ-Սուենի դեմ ելել են ոչ միայն հայկական՝ կուտիական գնդերը, այլև՝ հայերի գլխավորությամբ 17 երկրների զորքերից բաղկացած մի հսկայական բանակ. «**Կուտիների առաջնորդությամբ մարտնչող զորքը պետք է ներառած լիներ Հայկական լեռնաշխարհի և նրանից արևելք ու արևմուտք ընկած երկրների դաշնակից բանակները, որոնց համատեղ ուժերով էլ հնարավոր դարձավ հաղթանակն Աքքադի նկատմամբ**»[80]։ Փաստորեն, Նարամ-Սուենին կործանարար հարված հասցնողը Հայաստանի գլխավորությամբ միավորված 17 երկրների մի դաշինք էր, որը և ի զորու է եղել կործանել այդ հզոր կայսրությունը և այն դուրս մղել պատմության թատերաբեմից։ **«Քութայի արքայի լեգենդը» բնագրի համաձայն՝ Նարամ-Սուենը դաշնակից զորքերի դեմ է ուղարկում երեք բանակ՝ 120 հազար, 90 հազար և 60700 զինվորով, որոնցից «ոչ ոք չվերադարձավ»։ Որքան էլ այս թվերը վիպականացված լինեն, Միջագետքում և Փոքր Ասիայում տարածված այս բնագիրը միանշանակ վկայում է Հայկական լեռնաշխարհի և հարակից***


ԱՌԱՋԱՎՈՐ ԱՍԻԱՆ Ք.Ա. XXII ԴԱՐԱՒՄ
ՄԵՎ ԾՈՎ
ՍԻՐԻԱ
ՄԻՋԵՐԿՐԱԿԱՆ ԾՈՎ
ՊԱՐՍԻԿ ԾՈՎԻ ԼԵՌՆԱՇԽԱՐՀ
ՊԱՐՍԻԿ ԾՈՎԻ ԼԵՌՆԱՇԽԱՐՀ
ՊԱՐՍԻԿ ԾՈՎ
ՊԱՐՍԻԿ ԾՈՎ
ՊԱՐՍԻԿ ԾՈՎ

շրջանների զորքերի տարած լիակատար ու բացառիկ հաղթանակների մասին։

Որոշ ժամանակ անց՝ դաշինքի զինված ուժերի առաջնորդությունը ստանձնում է Կուտի(ում) երկիրը։ Կուտիական դաշինքի վտանգն այնքան շոշափելի էր, որ Աքքադի տիրակալը դեպի էլամ (Իրանի հարավարևմուտքում) կատարած արշավանքի ժամանակ ոչ թե սովորական դարձած ավերածություններ է գործում, այլ էլամի արքայի հետ հաշտության ու փոխօգնության պայմանագիր է կնքում՝ ստեղծելով հակակուտիական միություն։

Սակայն դա ևս չէր փրկելու Նարամ-Սուենին կործանումից, որի և՛ արտաքին, և՛ ներքին քաղաքականությունը շատ ամպեր էին կուտակել նրա գլխին»[81]*։*

Ահա այսպես, Բելի աշխարհատիրական նկրտումներից հետո համաշխարհային չարիքը նորից բախվեց Հայաստան աշխարհին և հերթական անգամ փլուզվեց. դա, ինչպես կտեսնեք հետագայում, Հայաստանի պատմության մեջ վերջին անգամը չէր լինելու։

Արմանում – Արմենիա

«Նրանց հեռավոր նախնիների ժամանակիցները եղել են քաղդեացիները, խեթերը, փյունիկացիները և փռույգիացիները, մեդացիները և լիդիացիները։ Այս բոլոր ժողովուրդները շատ վաղուց չքվել են, իսկ հայերն առաջվա պես գոյություն ունեն»*[82]*։

Նարամ-Սուենն իր թողած արձանագրություններից մեկում պարծենում է, որ ներխուժել է Արմանում կամ Արմանի երկիրը, ինչը մինչ այդ դեռ ոչ ոքի չէր հաջողվել։ Գիտնականները տարբեր կարծիքներ են հայտնում Արմանիի մասին. ոմանք գտնում են, որ դա վերաբերում է Հայաստանին. «Արմանի»-ն «Արմենիա» անվան աքքադական ձևն է։ Մինչ այդ մասին պարզաբանումներ ներկայացնելը նշենք, որ Միջագետքի և նրա շրջակայքի երկրներից այդ ժամանակաշրջանում միայն Քուռարաքսյան քաղաքակրթության կենտրոնը՝ Հայաստանն էր, որ նվաճված չէր, ինչը վկայում է, որ խոսքը վերաբերում է հենց այդ երկրին. մանավանդ որ, այդ մասին վկայող կոթողը կանգնեցված է եղել Մեծ Հայքի հարավային

---

81 Արտակ Մովսիսյան, Հայոց պատմության աշխարհաքաղաքականությունները, Երևան 2008 թ., էջ 12:

82 Франк Вивиано, выдающийся американский журналист.

տարածքում։ ***«Նարամ-Սուենն արձանագրում է, որ «մարդու ստեղծման ժամանակից ի վեր՝ երբեք ոչ մի թագավոր չէր կործանել Արմանը...». ինչը և իրագործեց ինքը»***[83]։

Հայաստանին հնագույն ժամանակներից մինչ օրս ամենատարբեր անվանումներ են տվել։ Ոչ միայն՝ Հայաստանին, այլև շատ ուրիշ երկրների էլ տարբեր ազգեր տարբեր կերպ են կոչել և կոչում։ Մեր երկրի դեպքում՝ առավել ևս, քանի որ այն գալիս է հազարամյակների խորքից և առնչվելով բազմաթիվ ժողովուրդների հետ՝ նրանց լեզուների առանձնահատկությունների պատճառով բազմաթիվ տարբեր անուններ է առել։

«Թե՛ հնում, թե՛ այժմ մի ժողովուրդ ու նրա երկիրը հաճախ մեկից ավելի անուններ են ունեցել և ունեն։ Օրինակ՝ գերմանացիներն իրենց կոչում են դոյչ, երկիրը՝ Դոյչլանդ, իսկ այլ ազգեր նրանց անվանում են նեմեց (երկիրը՝ Նեմչեինա), գերման (երկիրը՝ Գերմանիա), ալեման (երկիրը՝ Ալեմանյը) և այլն։ Վրացիներին ու Վրաստանը անվանել են ու անվանում են. իրենք իրենց՝ քարթվելի, երկիրը՝ Քարթլի, Սաքարթվելո, ուրիշները՝ իբեր, Իբերիա, վրացի, Վիրք, Վրաստան, գյուրջի, Գյուրջստան, Գյորգիեն, գրուզին, Գրուզիա և այլն։ Հայերն իրենց Թորգոմյան են անվանել, նաև՝ հայ, երկիրը՝ Հայք, Հայաստան, պարսկերեն ու հունարեն՝ արմին(իյա), արման, արմեն, երկիրը՝ Արմինա, Արմենիա, Արմանստան և այլն, վրացիներ՝ սոմեխի, երկիրը՝ Սոմխեթի։ Հին հրեաները երկիրն անվանել են Արարատ, աքքադացիները, ինչպես կտեսնենք, նախ՝ Արմանի, ապա՝ Ուրարտու (Ուրաշտու), հայերին կոչել են ուրարտ (ուրարտայա)...

Վաղուց վերացած որոշ հին ժողովուրդներ ու ցեղեր հայերին պետք է կոչած լինեն նաև այլ անուններով, որոնք հիմա վերականգնել դժվար է կամ անհնար, քանի որ չկան այդ ցեղերը և նրանցից մի քանիսի լեզուներով գրված արձանագրությունների մեջ հնարավոր չի լինում որոշել, թե բազմաթիվ տեղանուններից ու ցեղանուններից որոնք ում են վերաբերում կամ որոնք են Հայաստանին ու հայերին վերաբերում։ Այնպես որ, այսօր հին սեպագիր ու գաղափարագիր արձանագրություններն ընթերցելիս՝ կարող ենք կարդալ հայերի ու Հայաստանի մասին մեզ անծանոթ անուններով և չիմանալ, որ խոսքը հայերին է վերաբերում։

Օտարների կողմից հնում հայերին տրված և այժմ տրվող ամենատարածված անունն է արմենը՝ իր տարբերակներով (արմին, արման, արմյանին, արմենիեր, էրմանի, և այլն)։ Գիտնականները հին սեպագիր արձանագրություններում ու այլ գրություններում նախ այդ հայտնի անունն են փնտրում։ Եվ հայերի ու նրանց երկրի այդ անվան հնագույն գործածությունները դարձյալ աքքադական թագավորների վիմագիր արձանագրություններում են հանդիպում։

---

[83] Արտակ Մովսիսյան, Բարեպաշտ արքաների աշխարհակալությունը, Երևան 1997 թ., էջ 25:



***Մ.թ.ա. III հազարամյակի երկրորդ կեսին Միջագետքում գտնվող Աքքադ պետության թագավոր Նարամ-Սուենը (Նարամ-Սինը) մի քանի անգամ արշավել է Միջագետքից դեպի հյուսիս: Նրա արշավանքների մասին վկայող աքքադերեն (ասուրաբաբելերեն) և խեթերեն արձանագրություններ են պահպանվել: Աքքադերեն արձանագրություններից մեկում (փորագրված մարմարի բեկորի վրա) գրված է. «Աստվածային Նարամ-Սուենը՝ չորս կողմերի հզոր թագավորը, նվաճողը** Armani-**ի և** Ebla-**ի» (ոմանք այս անունները կարդում են** Armanum, Armanim, Ibla**): Armani-ի նվաճման մասին պատմում է նաև աքքադական մի այլ արձանագրություն (փորագրված՝ սկավառակի վրա), որը ջարդված է, պահպանված է այն մասը, որտեղ Նարամ-Սուենը հիշվում է՝ իբրև** Armani-**ի նվաճող»**[84]:

Ահա, այդ հնագույն ժամանակներում էր, որ օտար աղբյուրներում առաջին անգամ հիշատակվեց Հայաստանի մի այլ՝ ավելի ճանաչված անվանում՝ «Արմենիան», որը, ինչպես ասվեց, ըստ միջագետքյան հնչողության՝ ստացել է «Արմանի» ձևը: ***«Նարամ-Սուենը բախվել է Արմանումի (Արմանի) երկրի թագավորին: Հայկազուններ գլխավորությամբ հայ ժողովրդի մղած պայքարն այս դարաշրջանում ուղղված է եղել հարավցի հարձակվող նվաճողների դեմ»***[85]: *Հայոց հարավային սահմաններից մի փոքր ներս խուժելը և որոշ ավերածություններ գործելը նա ներկայացրել է՝ որպես մի հզոր երկիր կործանել, իր մասին էլ նշել՝ որպես այդ անպատկերացնելի գործն արած մեկի: Նկատելի է, որ այն հեռավոր ժամանակներում էլ էին ապատեղեկատվությունն օգտագործում որպես ռազմավարական զենք: Հայաստանն այնպիսի հզոր ու անհասանելի երկիր էր, որի դեմ Բելից հետո ոչ ոք չէր համարձակվել ոտնձգության փորձ անգամ անել: Բնականաբար, Նարամ-Սուենի համար Հայաստանի հարավային տարածքներ ներխուժելն արդեն մեծ պարծանք էր:*

Որոշ «գիտնականներ», հայերին համարելով եկվորներ Հայկական լեռնաշխարհում (այն էլ շատ ավելի ուշ շրջանի՝ ն.Ք. VI-V դարերի), պնդում են, թե այդ հեռավոր անցյալում չէր կարող Հայաստանն Արմենիա անվանվել, ինչից էլ եզրակացնում են, թե «Արմանում»-ն ուրիշ մի երկիր է եղել՝ Հայկական լեռնաշխարհից ավելի հարավ ընկած տարածքներում:

---

84 Ռ.Ա. Իշխանյան, Հայ ժողովրդի ծագման ու հնագույն պատմության հարցեր, Երևան 1988 թ., էջ 41–42:

85 Է. Դանիելյան, Ա. Մելքոնյան, Հայոց Պատմություն, Երևան 2008 թ., էջ 31:

*Այս Արմենիա-Արմանի-Արմանում խնդրին անդրադարձել է ականավոր հայագետ Ռաֆայել Իշխանյանը՝ լիովին համոզիչ և հիմնավոր կերպով ապացուցելով Արմենիա և Արմանում անվանումների՝ միևնույն երկրին վերաբերելը. **«Այն գիտնականները (Ն. Ադոնց, Ի. Դյակոնով և ուրիշ...), ովքեր պաշտպանում էին եկվորության տեսակետը, բնականաբար, հայտարարեցին, որ Արմանի երկիրը Արմենիան չէ, այսինքն՝ Հայաստանը չէ, քանի որ, ըստ այդ տեսակետի, մ.թ.ա. III հազարամյակում հայերը դեռ Եվրոպայից չէին եկել Հայկական լեռնաշխարհ: Եղան գիտնականներ էլ, ովքեր նկատի ունենալով, որ աքքադերեն արձանագրություններում Armani-ից հետո անմիջապես նշված է Ebla-ն, որոշեցին, որ դրանք իրար շատ մոտ գտնվող երկրներ կամ քաղաքներ են: Հյուսիսարևմտյան Սիրիայում 1970-ական թվականների առաջին կեսին կատարված պեղումների շնորհիվ Հալեպից 60 կմ դեպի հարավ էբլան գտնվեց: Եվ ահա՝ ոմանք որոշեցին, որ Արմանին էլ նրան շատ մոտ մի տեղ պիտի լինի և տեղադրեցին Կիլիկիայից հարավ ընկած տարածքում:***

Դա, իհարկե, համոզիչ որոշում չէր: Արձանագրության մեջ երկու տեղանունների՝ միմյանց մոտ հիշատակելը դեռ հիմք չի կարող լինել մտածելու համար, թե այդ անուններն ունեցած երկրները միմյանց մոտ են գտնվել:

Ապա խեթերեն վերոհիշյալ արձանագրության մեջ Արմանին հիշվում է բոլորովին ուրիշ երկրների կողքին, երկրներ, որոնց մեծ մասը գտնվել է Միջագետքից հյուսիս, հյուսիս-արևմուտք. դրանցից է, օրինակ, Խաթթին, որ խեթերի երկիրն է ու գտնվել է Փոքր Ասիայի կենտրոնական մասում՝ Հայկական լեռնաշխարհից արևմուտք. կամ Կանեշը, որ եղել է խեթերի հարևան և այլն»[86]:

Հայերի՝ եկվորության հետ կապված խնդրին մենք արդեն անդրադարձել ենք այս աշխատության առաջին հատորում և ապացուցել, որ դա լիովին հիմնազուրկ, կանխակալ կարծիք է: Իսկ այն տեսակետը, թե Արմանին գտնվել է հարավում՝ էբլայի հարևանությամբ, ևս քննադատության չի դիմանում, քանի որ եթե մի արձանագրությունում Արմանին Հայաստանից հարավ գտնվող մի երկրի հետ է հիշատակվում, ապա մեկ ուրիշում՝ Հայաստանի արևմուտքում գտնվող տարածքի:

*Եթե Նարամ-Սուենը Հայաստանի տարածքում է թողել իր արձանագրությունն Արմանի ներխուժելու մասին, ապա բնական է, որ այն վերաբերում է հենց Արմենիային, ոչ թե՝ մի այլ երկրի: **«Մեծ Հայքի Աղձնիք աշխարհում՝ այժմյան Դիարբեքիրի մոտ (հիմա՝ Թուրքիա) գտնվել է Նարամ-Սուենի հաղթանակի կոթողը՝ այդ թագավորի անունը կրող արձանագրությամբ (գտնվում է Կոստանդնուպոլսի մի թանգարանում): Այս հայտնագործությունը ցույց է տալիս, որ Նարամ-Սուենը եղել է Մեծ Հայքի***

[86] Ռ.Ա. Իշխանյան, Հայ ժողովրդի ծագման ու հնագույն պատմության հարցեր, Երևան 1988 թ., էջ 43–44:

հարավում, այդտեղ պատերազմել ու այդ երկրի անունը հիշատակել է իր արձանագրություններում՝ («հաղթողը Արմանիի»)[87]։

Գուցե թվում է, թե նյութը շատ է ծանրաբեռնվում ապացույցներով, սակայն որպեսզի հայ ժողովուրդի պատմական հնագույն անցյալն այլևս կասկածի չենթարկվի, կարծում ենք, հարկ է համապատասխան մեջբերումներով առավելագույնս ամրացնել այն փաստական հիմքերը, որ տարիներ շարունակ խնդրահարույց են համարվել։ Նշենք դրանցից ևս մի քանիսը. «Կան նաև այլ փաստեր, որոնք ցույց են տալիս, որ Նարամ-Սուենի հիշատակած Armani-*ն Արմենիան է՝ Հայաստանը, կամ ավելի ճիշտ՝ նրա հարավային մասը։ Դրանցից մեկը ծիրանի աքքադական անունն է։ Ծիրանը մի շարք հին լեզուներում կոչվել է Հայաստանի անունով՝ որպես հայկական կամ հայաստանյան պտուղ։ Այսպես. հին հռոմեացիներն իրենց լեզվով (լատիներեն) ծիրանն անվանել են* armeniacum *(հայկական), բուսաբանության մեջ ծիրանի՝ այժմ ընդունված լատիներեն անվանումն է* prunus armaniaca *(հայկական սալոր). իտալական ծիրանի անուններից է* armellino, *ծիրանն արաբերեն կոչել են տուֆֆահ ալ-արմանի (հայկական խնձոր)*[88]։ *Միջագետքում արաբներին*[89] *նախորդել են արամեացիները, որոնք ծիրանը կոչել են* hazzura armenaja, *դարձյալ՝ հայկական խնձոր։ Արամեացիներին Միջագետքում նախորդել են աքքադացիները, որոնք այս երկրի բնակիչներն են եղել հնագույն ժամանակներից (նրանց լեզվով արձանագրությունները գալիս են մ.թ.ա.* III *հազարամյակից) մինչև մ.թ.ա.* VI *դարը։ Եվ ահա՝ աքքադերեն ծիրանը կոչվել է* armanu[90], *եղել է նաև* armanis *աքքադական բառը, որ նշանակում է ծիրանանման*[91]։

Հայտնի է, որ լատիներեն, արաբերեն, արամեերեն ծիրանի անվան մեջ՝ armeniaca-*ն, ալ-արմանի-ն,* armenaia-*ն նշանակում են հայկական կամ հայաստանյան, այսինքն՝ ծագել են հայերի արմեն կամ արման անունից, սրանից էլ պարզ է, որ աքքադերեն* armanu-*ն նույնպես կարող է միայն այդ անունից ծագած լինել։ Ուրեմն, եթե աքքադացիները՝ այսինքն, ասորեստանցիները և բաբելացիները ծիրանն իրենց լեզվով* armanu *են կոչել, որ նշանակել է հայաստանյան, ապա* Armani-*ն էլ (կամ* Armanum-*ը) նշանակել է Հայաստան, Արմենիա»*[92]։

---

87 Ռ.Ա. Իշխանյան, Հայ ժողովրդի ծագման ու հնագույն պատմության հարցեր, Երևան 1988 թ., էջ 44:

88 Ծիրանի այս անվանումները տես՝ Հ. Աճառյան, «Հայերեն արմատական բառարան, հ. 2, Երևան 1973 թ., էջ 459:

89 Միջագետքի այժմյան բնակիչները՝ արաբները, հիմա էլ հայերին կոչում են արմանի:

90 Wolfram von Soden, Akkadisches Handworterbuh, Band l, Wiesbaden, 1965, S. 69.

91 Նույն տեղում:

92 Ռ.Ա. Իշխանյան, Հայ ժողովրդի ծագման ու հնագույն պատմության հարցեր, Երևան 1988 թ., էջ 44–45:

Արմանի և Արմենիա անվանումների նույնացմանը նպաստող ապացույցներ կան՝ կապված ոչ միայն բուսական, այլև՝ կենդանական աշխարհի հետ։ ***«Կա նաև մի այլ հետաքրքիր փաստ. աքքադերեն քարայծը կոչվել է*** armu ***կամ*** armatu[93]***։***

Աքքադացիների բնակավայրի՝ Միջագետքի հյուսիսում կանգնած են խոշոր լեռներ. դա Հայկական լեռնաշխարհն էր։ Քարայծերը մեծ մասամբ բարձր լեռների բնակիչներ են, և եթե աքքադացիներն այդ վայրի կենդանիներին անվանել են արմու, արմանտու, արմատու, ըստ երևույթին, իրենց հարևան լեռնային երկրի անունով են կոչել այդպես։ Հիշենք նաև, որ մ.թ.ա. III հազարամյակում և դրանից հետո էլ Հայաստանում, իրոք, քարայծեր շատ են եղել...

Եթե աքքադացիները հայաստանյան քարայծին կոչել են արմու, արմատու, նշանակում է՝ սկզբնավանկ այդ արմ-ը երկրի կամ նրա բնակիչների անունից է և նշանակել է հայկական, որով և կրկին հիմնավորվում է, որ աքքադերեն Արմանի տեղանունն էլ Հայաստան է նշանակել»*[94]։***

Նշենք ևս մի փաստ. Արմանիի թագավորներից մեկի անունն ավելի նման է սեմականի, քան՝ հնդեվրոպականի, ինչը ևս պարզաբանման խնդիր է առաջադրում. ***«Նարամ-Սուենի արձանագրություններում հիշվող երկու թագավորների (որոնք երևի ցեղապետեր են եղել) անուններն էլ են հետաքրքրել գիտնականներին։ Նրանցից մեկը Ռեդ-Թեշուբ կամ ըստ այլ ընթերցման՝ Ռեդ-Ադադ սեմական բնույթ ունի. ոմանք դրանից շտապ եզրակացություն են հանում, իբրև անվան սեմական լինելը ցույց է տալիս, թե նրա կրողը հայ չի եղել։ Սա միամիտ դատողություն է. եթե անունների լեզվական ստուգաբանությամբ որոշենք մարդկանց լեզվացեղային (էթնիկական) պատկանելությունը, ապա սոսկալի շփոթ կստեղծվի. այդ դեպքում Արտաշես, Արտավազդ, Վռամշապուհ, Սահակ, Արշակ, Մովսես, Ղազար, Խոսրով և շատ ուրիշ անուններ կրած ու կրող հայերը՝ թագավորներ, կաթողիկոսներ, իշխաններ, հայ հասարակ մահկանացուներ հայ չեն եղել կամ չեն, քանի որ այդ անուններն իրանական կամ սեմական ծագում ունեն։ Եվ կամ Մահմեդ, Հուսեին, Աբաս, Հասան, Աբդուլ ու շատ ուրիշ անուններ կրող պարսից շահերը, խաները պարսիկ չեն եղել, քանի որ այդ անունները պարսկական չեն, այլ արաբական են։ Սա անհեթեթություն է։ Անունը հաճախ որոշիչ չէ տվյալ անձի լեզվացեղային պատկանելությունը պարզելու համար։***

Բացի այս ամենից՝ հնարավոր է, որ աքքադացիները թագավորի կամ ցեղային առաջնորդի հայկական անունը թարգմանեին, ինչպես հնում հաճախ են արել...

---

93 Wolfram von Soden, Akkadisches Handworterbuh, Band l, Wiesbaden, 1965, S. 69.

94 Ռ.Ա. Իշխանյան, Հայ ժողովրդի ծագման ու հնագույն պատմության հարցեր, Երևան 1988 թ., էջ 45:

Armani-ի մյուս թագավորի անունը՝ Մադակինա-ն (չի բացառվում, որ գործ ունենք նույն անձի երկու անվանակոչումների հետ) այլ բնույթ ունի: Նրա առաջին բաղադրիչը հայերեն ստուգաբանվում է. այն պետք է լիներ բնիկ հայերեն մատ արմատը, որ պահպանվել է այժմյան մատչելի, մատուցել, մատույց և մի քանի այլ բառերի մեջ, նշանակել է շարժվել, մոտեցնել, մոտենալ: Հնդեվրոպական մայր լեզվում եղել է mad *ձևով, նշանակում է՝ հայերեն հնագույն ձևը կարող էր լինել մադ, որ և տեղ է գտել Մադակինա անվան մեջ:*

Եվ այսպես. հիմք կա ասելու, որ Նարամ-Սուենի արձանագրություններում, մ.թ.ա. III հազարամյակի II կեսում, մեզանից շուրջ 4200 տարի առաջ, առաջին անգամ հիշատակվել է Հայաստանը՝ Արմանի անունով»[95]:

Բերված փաստերն ամփոփենք. ամենայն հավանականությամբ՝ Արամանյակի օրոք Նարամ-Սուենը ներխուժել է Հայաստան, որն այդ ժամանակ կոչվել է Արմենիա, Արմանում, իսկ արդեն երբ Արամանյակի որդին՝ Հայկի փառապանծ թոռ Կադմոսն է նստել Հայոց գահին և անցել այդ հակաաքքադական դաշնության գլուխ, հենց նրա անունը՝ «Կադմոսը» հնչել է միջագետքյան ազգերի լեզվով՝ Կուտի, իսկ Հայաստանը նրա անվամբ՝ Կուտիում:

Աստծո կամքի իրականացնողները

«Կադմոսը՝ թոռը Հայկի, ով ուներ պիրկ աղեղ,
չգցեց սրասույր թուրն երբեք իր ձեռքից: Եվ այդ
ժամանակներից ի վեր, թեև հարյուրամյակներ են
անցել, հայերը բոլորը գիտեն, որ եղել է Կորդուք՝
***գավառ այդպիսի»*[96]:**

Հայաստանում, ինչպես ասվեց, ի տարբերություն այլ երկրների՝ պահպանվել էր աշխարհում միակ և ճշմարիտ դավանանքը. պաշտամունք էր մատուցվում այն Աստծուն, Ում դավանել, պաշտել և փառաբանել են Ադամը, Նոյը, Հայկը և իր սերունդները: Եվ ահա, մոլեգնած Նարամ-Սուենը որոշեց, որ բոլոր ազգերն իրեն՝ իբրև աստծո, պիտի պաշտեն: Պարտադրելով դա իրեն հպատակ ազգերին՝ մտադրվեց նաև իր ենթակայության տակ չեղող Հայոց աշխարհի բնակիչներին ստիպել ուրանալ Ճշմարիտ Աստծուն և ընդունել իր անձի պաշտամունքը: Նման

---

95 Ռ.Ա. Իշխանյան, Հայ ժողովրդի ծագման ու հնագույն պատմության հարցեր, Երևան 1988 թ., էջ 45-47:

96 Зинуров Рафаиль Нариманович (Уфаеци), Армения–путь тысячелетий, том I, Москва 2010 г., ст. 34.

առաջարկին, ինչպես Հայկն էր պատասխանել, այդպիսի պատասխան էլ պիտի ստանար Նարամ-Սուենը կադմոսից, թե՝ «շուն ես դու և քո հետևից եկողներն էլ՝ շների ոհմակ»: Սրանից կատաղելով է, որ Նարամ-Սուենն իր ամբողջ կայսերական զորությամբ հարձակվեց Հայաստանի վրա, և պատիժը չուշացավ. նա էլ արժանացավ Բելի ճակատագրին:

«Հայկական տարբերակներում Բելը սպանվում է Հայաստանում, իսկ Միջագետքի գրավոր աղբյուրների համաձայն՝ Նարամ-Սուենը տապալվում է հայաստանյան զորքերի արշավանքի հետևանքով: Նկատված ընդհանրությունները չի կարելի դասել պատահական նմանությունների ու զուգադիպությունների շարքին»[97]*:*

Նարամ-Սուենը հույսն իր «ամենակարողության» վրա էր դրել, և նրա մտքով չէր անցնում, որ կարող էր երբևիցե պարտվել և գահավիժել կայսերական ու կեղծ «աստվածության» բարձունքից: ***«Իր ճակատամարտերի համար Նարամ-Սուենը որևէ աստվածության օրհնանքի կարիքը չի ունեցել. դա կարող էր ինքն էլ անել»***[98]*:*

Սակայն, ինչպես Աստծո պատիժը չուշացավ Բելի պարագայում, և Հայկ նահապետի միջոցով Աստծո արդար դատաստանն իրականացավ, այդպես և նրա թոռ կադմոսը՝ որպես Աստծո պատժի գործիք, իր փառքի գագաթնակետին հասած Նարամ-Սուենին, մահվան մատնեց և ավերեց մարդապաշտության որջ դարձաց Աքքադական միապետությունը: ***«Նարամ-Սուենը Եփրատի և Տիգրիսի հոսանքներն ի վեր ձեռնարկում է բազմաթիվ արշավանքներ: Ընդ որում, եթե առաջին արշավանքների ընթացքում նա որոշ հաջողություններ ունենում է, ապա ի վերջո հաղթանակներն ուղեկցում են Հայկական լեռնաշխարհի զորքերին և նրանց դաշնակիցներին, իսկ միջագետքյան բռնակալն ընկնում է մեր նախնյաց արդարադատ սրից...»***[99]*:*

Հիշենք, որ Բելի կործանումից հետո շատերը զգաստացան. նրա մահից հետո հատկապես շումերներն սկսեցին պաշտել Արարչին: Եվ քանի որ նրանք Հայկական լեռնաշխարհից էին իջել Միջագետք, նրանց մոտ հայերի հետ բազմաթիվ ընդհանրություններ էին պահպանվել: Այդ ժամանակաշրջանի Հայաստանում պաշտում էին Նոյի Տեր Աստծուն, Որին անվանում էին նաև Ար՝ այսինքն Արարիչ. ***«Ար-ը Արարիչ է, տիեզերք է, լույս է, երկինք ու երկիր է, Աստված է...»*** [100]*:*

---

97 Արտակ Մովսիսյան, Բարեպաշտ արքաների աշխարհակալությունը, Երևան, 1997 թ., էջ 25:

98 Сьюзен Уайс Бауэр, История Древнего мира. От истоков Цивилизации до падения Рима История Древнего мира, АСТ, Москва, 2011 г., ст. 150.

99 Արտակ Մովսիսյան, Հայոց պատմության աշխարհակալությունները, Երևան 2008 թ. էջ 11:

100 Անժելա Տերյան, Եվրոպայի ժողովուրդների հնագույն գրավոր աղբյուրները իրենց նախահայրենիքի՝ Հայաստանի ու հայերի մասին, Երևան 2014 թ., էջ 17:

Նորավանքում նույն Ար-Արարչի՝ Հայր Աստծո պատկերն է քանդակված եկեղեցու մուտքին, Ում ի սկզբանե պաշտել են Արարատյան երկրում. ***«Արարիչ՝ Հայր Աստծո մարդակերպ պատկերը (թուլատրված միակ դեպքը) Նորավանքի գավթի պատին (ճարտարապետ՝ Մոմիկ),*** XIII *դար։ Արարիչը ձեռքին բռնել է ստեղծած առաջին մարդու գլուխը և կենդանություն, շունչ է հաղորդում նրան»*[101]։



Աստված մի այլ անվամբ էլ է պաշտվել հայ ժողովրդի մոտ. այն այսօր էլ կարդում ենք Սուրբ Գրքի հայերեն թարգմանությունում՝ ***«Է»****, որ նշանակում էություն.* ***«Ես այն Աստվածն եմ, որ Է»***[102]։ *«Է» կամ «Էություն» անվամբ Տերը հիշվել է նաև շումերների մոտ, որ շումերերեն հնչել է «էնլիլ»։ Սակայն Շումերում ժամանակի հետ հոգևոր ոլորտում շատ բան է խաթարվել, և Է-ի (էնլիլի) հետ մեկտեղ սկսել են պաշտել բազում չաստվածների՝ կուռքերի, ինչի հետևանքով աղավաղվել են նրանց ընկալումները՝ դառնալով իրական աստվածպաշտության և կռապաշտության խառնուրդ։ Եվ սակայն նրանք էնլիլին համարել են գերագույն Աստված և հատուկ տաճարներ նվիրաբերել Նրան։*

Շումերներն, անկասկած, Ադամի և Նոյի Տեր Աստծուն՝ Է-ին են «էնլիլ» անվանվել. այդ մասին վկայում են հենց շումերական արձանագրությունները։ Հայտնի է, որ Աստվածաշնչյան «Է»-ն է ջրհեղեղով կործանել աշխարհը, իսկ ըստ շումերական ընկալումների՝ ջրհեղեղով երկիրը կորստի մատնողը եղել է էնլիլն. ***«Էնլիլն՝ օդային տարերքների աստվածը և շումերական պանթեոնի գլխավորը, բարկությունից իրեն կորցրած այն բանի համար, որ նրան անհանգստացրել է մարդկության կողմից բարձրացված աղմուկը, սարսափելի անձրևներ ուղարկեց, ինչը հանգեցրեց Ջրհեղեղի և համայն մարդկության կործանման»***[103]։

Հետաքրքիր է, որ Աստծո սրբազան անուններից մեկը հրեաների մոտ «էլոհիմն» է, որն ըստ համացանցային հանրագիտարանի[104]՝ *ազգակից է Աքքադական «էլ»-ին, որ նշանակում է «Աստված»։ Ուրեմն, Հայաստանում դեռ ամենավաղ շրջանում Տեր Աստծուն անվանել են «Է» կամ «Էություն», Շումերում՝ «էնլիլ», Աքքադում «էլ», իսկ Իսրայելում՝ «էլոհիմ»։ Ավելի խոսուն փաստ է այն, որ շումերական ընկալումներով՝ Արատատա-*

---

101 Անժելա Տերյան, Եվրոպայի ժողովուրդների հնագույն գրավոր աղբյուրները իրենց նախահայրենիքի՝ Հայաստանի ու հայերի մասին, Երևան 2014 թ., էջ 15:

102 Ելք 3:14

103 Девид Рол, Генезис цивилизации. Откуда мы произошли, Изд–во Эксмо, Москва 2002 г., ст. 246.

104 Википедия.

յում (Հայաստանում) պաշտել են «էնկի» Աստծուն, ում աքքադացիներն անվանել են «Հայա», ինչը կարելի է հասկանալ՝ որպես հայերի Աստված «է» կամ «էնկի»: ***«... Արատտայի գլխավոր գերագույն աստվածը կամ գերագույն աստվածներից մեկը եղել է «երկրի տիրակալ», իմաստության և ջրերի աստված էնկին, որին աքքադական աղբյուրներում տրված Հայա անունը նույնանում է հայ ժողովրդի ինքնանվան հետ»***[105]: *Բնական է, որ կռապաշտությամբ վարակված միջագետքյան ժողովուրդներն իրենց գրառումներում «է»-ին, այսինքն՝ էնկիին ներկայացրել են նաև առասպելական դրսևորումներով:*

*Իրեն «աստված» հռչակելով՝ Նարամ-Սուենը ոչ թե՝ կուռքերի, այլ հենց էնլիի տաճարը կործանեց, ինչպես Բելը, որ ապստամբելով Աստծո դեմ, սկսել էր կառուցել բազմաթիվ կռատներ՝ իր և այլ կուռքերի համար: Պատմագրությունը Նարամ-Սուենի աստվածամերժության մասին գրում է. **«Նարամսինն ավերում է էնլիի մեծ տաճարն՝ իր մայրաքաղաքում և հափշտակում է տաճարի ոսկին, արծաթը և պղինձը: Այս սրբապղծության փաստը նրա երկիրը մատնում է դժբախտության. նա բարձում է գանձերը նավերի վրա: Եվ «երբ նավերը հեռացան նավահանգստից, քաղաքը կորցրեց իր իմաստությունը»»***[106]:

*Միջագետքյան աղբյուրները նշում են, որ հայերի զարկից աքքադական կայսրության անկումը պատիժ էր ամբարիշտ Նարամ-Սուենի արարքների համար, քանզի էնլիի տաճարներն ավերելով՝ նա կռատներ կառուցեց: **«Ռազմական հաջողությունները, որ արտահայտվում էին նրա «աշխարհի չորս կողմերի արքա», «տիեզերքի արքա» տիտղոսներում, պատճառ դարձան սեփական ուժերի գերագնահատման: Նա պատմության մեջ առաջինը եղավ, որ իրեն հռչակեց «աստված»: «Աքքադի նզովումը» պատմավիպական երկում ասվում է, որ նա կործանեց գերագույն աստծո տաճարը և ստիպեց ժողովրդին զոհեր մատուցել իր տաճարին: Աստվածները չհանդուրժեցին նրա փառամոլությունը և Հայաստանցի լեռնականների միջոցով տապալեցին նրան»***[107]:

Այս մեջբերումներից այնպիսի տպավորություն է ստացվում, որ այդ պատերազմները եղել են ոչ այնքան զավթողական, որքան՝ կրոնական: Ինչպես որ Հայկ Նահապետն իր սերունդներով ելավ պատերազմի «վասն հավատո և վասն հայրենյաց», այդպես էլ այժմ Կադմոսի գլխավորությամբ հայկական զորքերը կենաց-մահու պայքարի ելան հանուն իրենց Տեր Աստծու և Հայկյան ոստանի՝ Հայաստան աշխարհի. ու կործանե-

---

105 Արտակ Մովսիսյան, Հնագույն պետությունը Հայաստանում Արատտա, Երևան 1992 թ., էջ 50:

106 Сьюзен Уайс Бауэр, История Древнего мира. От истоков Цивилизации до падения Рима История Древнего мира, АСТ, Москва 2011 г., ст. 152.

107 Արտակ Մովսիսյան, Բարեպաշտ արքաների աշխարհակալությունը, Երևան 1997 թ., էջ 25:

*ցին հերթական կռապաշտ կայսրությունը: Ուրեմն, Տիրոջ օրհնությունն ակնհայտորեն հայերի վրա էր, իսկ Աքքադին բաժին հասավ երկնառաք նզովքը, որ, Տիրոջ կամոք, իրագործեցին հայկական զորագնդերը: **«Ըստ «Աքքադի նզովումը» պատմավիպական բնագրի՝ սրբապղծությունից զայրացած մեծ աստվածները նզովում են Աքքադը, իսկ գերագույն աստված Էնլիլը (որի պաշտամունքի կենտրոնը Նիպպուրն էր) լեռներից Աքքադի դեմ է ուղարկում կուտիական մեծաթիվ զորքերը: Ք. ա. մոտ 2200թ. Միջագետքի կենտրոն արշավեցին կուտիական դաշինքի զորքերը, որոնց դեմ պատերազմող ինքնակոչ «աստվածն» սպանվեց»**[108]:*

*Աքքադացիներն այնքան էին խորացել Նարամ-Սուենի և այլ կուռքերի պաշտամունքի մեջ, որ հպարտանում էին իրենց թագավոր «աստծով»: Երբ կուտիները ներխուժեցին Աքքադ, աքքադացիներին ցնցեց ոչ միայն սեփական երկրին ու իրենց հասած աղետը, այլև՝ այդ ինքնակոչ «աստծու»՝ Նարամ-Սուենի սատակումը և կռատների ու կուռքերի կործանումը: Այդ է պատճառը, որ Հայկական լեռնաշխարհը կռապաշտ աքքադացիները կոչել են. **«Գուտիում՝ լեռների վիշապ, աստվածների թշնամի»**[109]:*

Կուտիներին «աստվածների թշնամի» անվանելով՝ հասկանալի է, որ աքքադացիները նկատի ունեին «կուռքերի թշնամի» են, և ոչ թե՝ Մեկ Աստծո՝ Միաստվածության թշնամի: Ինչ վերաբերվում է «լեռներին», ապա խոսքը Հայկական լեռնաշխարհի մասին է: Իսկ սա ասում է այն մասին, որ հայերը Ճշմարիտ Աստծո ժողովուրդն էին, և թշնամին՝ միջագետքյան կուռքերի, որոնց կործանելով՝ նույն ճակատագրին արժանացրին նաև նորընծա կուռք Նարամ-Սուենին:

Խորհրդանշական է, որ աքքադացիները հայերին անվանել են «լեռների վիշապ»: Սրանով, ակամա, բնութագրել են նրանց՝ որպես հզորներ, անհաղթներ ու կործանողներ: Չի բացառվում, որ եղել է մի հանգամանք, որը դարերի ընթացքում կրկնվել է ժամանակ առ ժամանակ:

*Հիշենք, թե ինչպես Ն. Ք. Ծ. V դարում հայոց արքա Տիգրան Երվանդյանը կործանեց Աժդահակին՝ մեդացիների արքային: Հպանցիկ անդրադառնանք Հայաստանի պատմության այս դրվագին: Աժդահակը, որը խարդավանքներ էր հյուսում Հայաստանի և Տիգրանի դեմ, մի օր երազ տեսավ, ինչը նրան շատ մեծ տրտմություն պատճառեց: Եվ իր հպատակների հարցերին, թե ի՞նչն է իր հուսահատ վիճակի պատճառը, նա պատմում է իր տեսած երազը: Ասում է, որ երազում հայտնվել էր Հայոց երկրում և կանգնած էր մի հսկայական լեռան առջև, երբ այդ լեռան գագաթին տեսավ մի զարմանալի կնոջ, ով ծնեց երեք դյուցազունների, որոնցից մեկը **վիշապին** նստած՝ հարձակվեց մեդացիների երկրի վրա:*

---

108 Արտակ Մովսիսյան, Հայոց պատմության աշխարհակալությունները, Երևան 2008 թ., էջ 13:

109 Б. А. Тураев История Древнего Востока, том I, Ленинград 1936 г., ст. 95.

*եվ ավելացնում է, որ այդ հրաշալի այրը հայոց արքա Տիգրանն էր. **«Այս խառը երազների մեջ մեկ էլ ինձ թվաց, թե կանգնած էի իմ ապարանքի տանիքի վրա. տեսնում էի նրա կտուրը՝ բազմաթիվ գեղեցիկ շատրվաններով զարդարված, մեզ պսակող հրաշալի տեսքով աստվածներին՝ այնտեղ կանգնած, և ես, ձեզ հետ միասին, նրանց զոհերով և խնկելով պատվում էի: Երբ հանկարծ վեր նայեցի, տեսա, որ այն վիշապ հեծած մարդը, իսկական արծվի թևերով սլանալով, հարձակվեց և մոտենալով ուզում էր աստվածներին կործանել»: Իսկ ես՝ Աժդահակս, մեջ ընկնելով, այն հարձակումն ինձ վրա ընդունեցի՝ սքանչելի դյուցազնի հետ կռվի բռնվելով... Բայց երկար խոսքը ի՞նչ օգուտ կբերի ինձ. որովհետև գործի վերջն իմ կործանումը եղավ: Տագնապից սաստիկ քրտինք կոխեց, և քունս փախավ, և այլևս կենդանի չէի թվում: Որովհետև այս երազն ուրիշ բան չի նշանակում, քան այն, որ Հայկազյան Տիգրանի կողմից ուժգին հարձակում պիտի կատարվի մեզ վրա»*[110]:

Տիգրանը, վիշապ հեծած, Հայոց լեռներից հարձակվելով մեդացիների վրա, ցանկացել է կործանել նրանց կուռքերը և դրանց պաշտպան կանգնած Աժդահակին: Այդպես, հավանաբար, նաև Կադմոսն է իր նախնյաց օրինակով ու կերպարով Նարամ-Սուենի ու նրա կռապաշտ ժողովրդի մոտ տպավորվել՝ որպես վիշապին հեծած դյուցազուն, որ կործանեց նրանց կռապաշտական համակարգը և կուռք թագավոր Նարամ-Սուենին, ով պատմության մեջ մնաց՝ որպես պարսավելի բռնապետ:

«Հետագա պատմական գրականության մեջ Սարգոնի կերպարը մնաց՝ որպես արքայական մեծության «չափանիշ», իսկ Նարամ-Սուենինը՝ նրա ժառանգների համար՝ որպես «աստվածների կողմից անիծված» տիրակալի խորհրդանիշ»[111]:

Նշենք, որ Տիգրանի և Աժդահակի հայտնութենական-խորհրդանշական պատմությանն անդրադառնալու, դրանով այլ իրավիճակներ պարզաբանելու բազմաթիվ առիթներ դեռ կունենանք:

---

110 Մովսես Խորենացի. Պատմություն Հայոց. Երևան 1968 թ., էջ 112–113 էջ:

111 Кьяра Децци Бардекси, Месопотамия: колыбель человечества, Изд. «Ниола–Пресс», Москва 2008 г., ст. 34–35.

Աստծո պատիժը

«Հայերը, որպես պատմական իրողություն, կայացան այնքան, որքան կայացել է ինքը՝ մարդկության պատմությունը: Մենք հանդիպում ենք նրանց հիշատակումները ամենուր՝ լինի դա Աստվածաշնչյան ավանդություններ, սեպագիր արձանագրություններ կամ հիշատակարանների պատմվածքներ»[112]:

*Կուտիների հարցին պատմահայր Մովսես Խորենացին չի անդրադարձել գուցե իրեն հայտնի փաստերի սակավության պատճառով: Պատմական որոշ շերտեր բացվել են միայն դարեր անց: Օրինակ՝ կուտիների հակահարձակման նկարագրությունը հայտնաբերվել է միջագետքյան արձանագրություններում՝ որպես թալանչիական ներխուժում, թեպետ նման գործելաոճը բնորոշ էր ոչ թե կուտիներին, այլ՝ Աքքադին: Պարզ շարադրված այդ տեքստերից հասկանում ենք, որ կուտիները պարզապես պատժիչ գործողություններ են իրականացրել բռնակալ երկրի՝ Աքքադի դեմ, և Տեր Աստված Ինքն է նրանց աջակից եղել: Ահա, թե ինչպես է բնորոշվել հայ կուտիների հարձակումը. **«Փոթորիկը, որ իրեն է ենթարկում ամբողջ երկիրը, կամ կատաղի ջրհեղեղը, որին հնարավոր չէ դիմակայել, այդպե՛ս եղավ Աքքադի հետ: Մարդկային հորդաները դարձան Աստվածային բարկության գործիք»**[113]:*

Այն, որ դա իսկապե՛ս Աստծո պատիժն էր ամբարշտացած Աքքադի հանդեպ, այնքան ակնհայտ է, որ աքքադացիները և նրանց դրածո շումերական իշխաններն իրենց ձեռքով են այդ ամենն արձանագրել: Նկարագրելով, թե կուտիական հարձակումն ինչ քաոսային վիճակի մատնեց աքքադական տերությանը, սակայն աքքադա-շումերական գրագիրներն ավելացրել են բաներ, որոնք ոչ մի կերպ չէին կարող կուտիների գործողությունների հետևանք լինել, այլ միայն՝ երկնային հատուցման.

««Դաշտերը ցորեն չէին տալիս, լճերը՝ ձուկ,
Իսկ պտղատու այգիները՝ պարագաներ գինու համար.
Ամպերն անձրև չէին բերում...»

***Էնլիլն որոշում է այդ բանի համար կուտիական հորդաներին հնարավորություն ընձեռել՝ վրեժ լուծելու... Որպես Պաղեստինյան անալոգ՝ կարող է համարվել Երիքով քաղաքը, որն ընկավ իսրայելացիների հարձակման հետևանքով և գտնվում էր անեծքի ծանրության տակ»**[114]:*

---

112 В.В. Коноплёв: Армения как состояние любви, статья, главный редактор сетевого СМИ «Наша Среда online».

113 Сьюзен Уайс Бауэр, История Древнего мира. От истоков Цивилизации до падения Рима История Древнего мира, АСТ, Москва 2011 г., ст. 152–153.

114 Сьюзен Уайс Бауэр, История Древнего мира. От истоков Цивилизации до падения Рима История Древнего мира, АСТ, Москва 2011 г., ст. 152, 154.

Սյուզան Բաուերն արդարացիորեն Աքքադը համեմատում է Երիքովի հետ. քաղաք, որ նզովված էր Աստծո կողմից, և որը գրավելիս պատվիրված էր Հեսու Նավեին, որ բոլորին կոտորեն, և ոչինչ այդտեղից չվերցվի, այլ ամեն ինչ հրի մատնվի:

Երիքովից դեռ դարեր առաջ նման ճակատագրի պետք է արժանանար Աքքադը՝ իսպառ չքվելով աշխարհի երեսից: «Համաձայն «Աքքադի անիծումը» պոեմի՝ քաղաքի կործանումն աստվածների վրեժն էր... Աստվածների անեծքի իրականացման հետևանքով խմելու ջուրը քաղաքում դարձավ աղի, բնակչությունը լքեց քաղաքի շուրջ եղած տարածքները:

Ի հիասթափություն հնագետների և պատմաբանների՝ Աքքադի ավերակները չգտնվեցին: Հնարավոր է, որ նույնիսկ ներկայումս էլ աստվածների անեծքը մնում է ուժի մեջ»[115]*,- նշում են հնագետ պատմաբանները:*

Միանգամայն հստակ է, որ Աքքադի բնության հետ տեղի ունեցող արհավիրքները ոչ մի կերպ չէին կարող մարդկային գործոնի հետևանք լինել: Կասկածից վեր է, որ Նախախնամության ամենակարող զորությունն էր աջակցում Իրեն հավատարիմ հայոց քաջարի ռազմիկներին: Այսպես կործանվեց հերթական ապստամբ նեռը՝ երկնքի դեմ հոխորտացողը՝ իր հետևորդներով հանդերձ: «Նարամսինը մահացավ մոտ 2255 թ. մ.թ.ա. և գրեթե միանգամից Աքքադական կայսրությունը հայտնվեց անելանելի վիճակում: Ընդամենը մի սերնդի կյանքի ընթացքում նա ընկավ հզորության բարձունքից մինչև կործանում: Այդ գործընթացը շատ անգամ է նկատվում միջագետքյան ուշ պատմությունում... Աքքադն այնպես հիմնահատակ կործանվեց, որ մինչ օրս՝ միջագետքյան բոլոր մայրաքաղաքներից միայն նրա տեղը հայտնի չէ»[116]*:*

Նարամ-Սուենի մահվանից հետո նրա գահին բարձրացավ որդին՝ Շարկալիշարին, որ ջանում էր ինչ-որ կերպ փրկել հոգեվարքի մեջ հայտնված աքքադական կայսրությունը: Բայց արդեն շատ ուշ էր. կուտիական զորքերն ու նրանց դաշնակիցներն այն վերջնականապես կործանեցին. «Շարկալիշարիի մահից հետո կուտիներին հաջողվում է տիրանալ Աքքադին ու Շումերին և իրենց աշխարհակալության սահմանը հասցնել Պարսից ծոցի ջրերին: Քիչ անց՝ կուտիական գերիշխանությունը տարածվում է նաև Էլամի վրա, որի տիրակալները Նարամ-Սուենի ու նրա որդու դաշնակիցներն էին և պատերազմել էին կուտիների դեմ: Այդ դեպքերից հետո շուրջ յոթ տասնամյակ շարունակվում է կուտիական գերիշխանությունն Առաջավոր Ասիայի մեծ մասի վրա»[117]*:*

---

115 Стивен Бертман, Месопотамия. Вече, Москва 2007 г., ст. 14.

116 Азимов А. Ближний Восток. 100 веков истории: Эксмо, Москва, 2011 г., ст. 54, 56.

117 Արտակ Մովսիսյան, Բարեպաշտ արքաների աշխարհակալությունը, Երևան 1997 թ., էջ 12:

Հայաստան և Շումեր

«Հայաստանը մեծության և հնության փայլ է»[118]:

*Հայերը, ամբողջովին վերացնելով աքքադական կառավարման կերպը, Միջագետքում նոր կարգեր հաստատեցին: Սկսեց վերափոխվել հատկապես Շումերը, զարգանալ ոչ միայն քաղաքական ու տնտեսական առումով, այլև՝ կրոնական. վերականգնվեցին Էնլիի՝ Նարամ-Սուենի կողմից ավերված տաճարները. **«Տապալելով աքքադական բռնապետությունը և իրենց գերիշխանությունը տարածելով Առաջավոր Ասիայի մեծ մասի վրա՝ կուտիական տիրակալները ոչ միայն չեն ստեղծում նմանատիպ իշխանություն, այլև սկսում են արմատախիլ անել աքքադական բռնապետության օրոք հաստատված ռեժիմի մնացորդներն ու հետևանքները: Պաշտոնից հեռացվում են նախկին դրածոները, վերականգնվում են շումերական ավանդական հոգևոր ու աշխարհիկ կարգերը: Վերսկսում են գործել ավագների խորհուրդներն ու ժողովրդական ժողովները, որոնք ընտրում էին իշխանավորներին:***

Կուտիական ժամանակաշրջանից մեզ հասած միջագետքյան բնագրերը պատմում են հիմնականում մաքրագործումների և կրոնական բնույթի այլ իրադարձությունների մասին. դա շումերական հոգևոր ավանդույթների վերականգնման դարաշրջանն էր, և պատահական չէ, որ «շումերական վերածնունդը» սկսվեց հենց այդ ժամանակ:

Կուտիական արքաների տիրապետությունը պայմաններ է ստեղծում շումերական վերածննդի համար: Հարկ է նշել, որ արդարությունը վերականգնած արքաների մասին հիշողությունը երկար է պահպանվել Միջագետքում. գերիշխանության ավարտից ավելի քան կես դար անց՝ Լագաշ քաղաքի իշխանները շարունակում էին կրել «կուտիական երկրի կառավարիչ» տիտղոսը: Ավելացնենք, որ Լագաշը դեռևս Ք. ա. XXV – XXIV դարերում հայտնի էր՝ արդարության ու ազատության համար մղվող պայքարի ավանդույթներով, և հենց այդ քաղաքն էր դարձել կուտիական իշխանության պատվարը Միջագետքում... »[119]:

Աքքադական լծից ազատվելով՝ ոչ միայն Շումերը, այլև Էլամը, Էբլան և մյուս երկրները սկսեցին բարգավաճել: Բացի Աքքադից՝ բոլորը գոհ էին, քանզի հպատակ երկրներն անկախացան: Դադարեց հարկերի վճարումը, և ստրուկների շարասյուների երթը՝ դեպի Աքքադ: Բնական է,

---

118 Александр Кулебякин, русский военачальник, поэт и общественный деятель.

119 Արտակ Մովսիսյան, Հայոց պատմության աշխարհակալությունները, Երևան 2008 թ., էջ 15–16:

որ նյութական արժեքների ու ստրկական աշխատուժի հոսքի կասեցումն ու բնության արհավիրքները շատ ծանր էին տանում հղփացած աքքադացիները, քանզի սովոր էին ուրիշներին աշխատեցնել իրենց համար: Աքքադն սկսեց քայքայվել, աշխատող չկար. ոռոգման ուղիներն սկսեցին խցանվել, դաշտերը մնացել էին առանց վարուցանքի, և իրենց գլուխը պահելու համար նրանք արդեն իրենց ձեռքով քաղաքների բակերում էին ինչ-որ բան վարում-ցանում:

Հայերը, գերիշխանություն հաստատելով ողջ Միջագետքում և կառավարիչներ կարգելով տեղաբնակներից, այդ գործընթացներին հետևում էին իրենց սուրբ լեռնաշխարհից. ***«Կուտիների ցեղն ինքը չէր ղեկավարում Միջագետքում, այդ հանձնարարում էր աքքադացի և շումերացի պաշտոնյաներին. կուտիական առաջնորդները հետաքրքրված էին միայն հարկերով»***[120]*:*



«Կուտի արքաներն անմիջապես իրենք չէին կառավարում գերիշխանության տակ մտնող երկրները: Այդ գործը նրանք հանձնարարում էին տեղացիներից ընտրված կառավարիչներին (հմմտ. Գուդեայի վերոհիշյալ օրինակը), որոնք կանոնավոր կերպով հարկեր ու նվերներ էին ուղարկում լեռնական արքաներին: Հարկերի մեջ մտնում էին հիմնականում երկրագործական մթերքներ (հացահատիկ, բուսական յուղեր և այլն), իսկ որպես նվեր՝ ուղարկում էին թանկարժեք քարերից ու մետաղներից պատրաստված գահեր, զենքեր ու զարդեղեն (վերջիններս հասցեագրվում էին հիմնականում արքայական ընտանիքի անդամներին՝ թագուհուն և արքայազուններին)»[121]*: «Լեռնական արքաներ» ասելով՝ թերևս, նկատի ունեն հայ փոխարքներին կամ կառավարիչներին, որ հերթափոխով հետևում էին միջագետքյան երկրների կարգ ու կանոնին:*

«Համարվում է, որ կուտիները կառավարել են Աքքադը մոտ հարյուր տարի... Հնարավոր չէ որոշել այդ ազգի ազդեցությունը միջագետքյան մշակույթի վրա»[122]*: Միջագետքում կուտիների տիրապետության ժամանակաշրջանի մասին կարծիքները տարբեր են. 70, 90, 100 և 125 տարի, ինչից ելնելով՝ կարող ենք ասել, որ այն տևել է մոտ հարյուր տարի, և այդ կառավարման ընթացքում նրանք չեն լքել իրենց՝ ի սկզբանե շնորհված Աստվածաշնչյան երկիր Հայաստանը:* ***«Իրենց գերիշխանության՝***

120 История древнего востока, под. ред. И. М. Дьяконов, Москва 1983 г., ст. 260.

121 Արտակ Մովսիսյան, Բարեպաշտ արքաների աշխարհակալությունը, Երևան 1997 թ., էջ 22–23:

122 Оппенхейм А. Лео Древняя Месопотамия. — 2-е, испр. и доп... — Москва: Наука, 1990 г., ст. 301–302.

շուրջ հարյուրամյա ժամանակահատվածում հայաստանցի արքաները սեփական աթոռանիստը չփոխադրեցին Միջագետք կամ այլ տեղ, որի հիմնական պատճառը, թերևս, դեռ Ք.ա. 28-27-րդ դարերից եկող հավատամքն էր՝ սեփական երկրի սրբազան և ժողովրդի աստվածընտրյալ լինելու մասին» [123]:

*Այդ հարյուրամյակի ավարտին շումերական իշխաններն ապստամբեցին՝ լիովին անկախ լինելու հավակնությամբ: Նրանք հայկական տիրապետության տակ այնքան էին բարգավաճել ու զորացել, որ համարեցին, թե կարող են լիովին ինքնուրույն տիրել իրենց երկրին. սակայն, սխալվեցին. **«... կուտիական տոհմը մնաց Միջագետքում 91 տարի, մինչև որ նրա վերջին թագավոր Տիրիգանը պարտություն կրեց Ուտուխեգալի կողմից՝ Ուրուկի V դինաստիայի միակ կառավարչից»***[124]:

Վերջին կուտիական տիրակալ փոխարքայի անունը հավանաբար եղել է Տիգրան: Այդ ապստամբությունից որոշ ժամանակ անց Շումերը վերացավ՝ անցնելով պատմության գիրկը, իսկ երկիրը զբաղեցրին քաղդեացիները:

Կարծես օրինաչափությամբ՝ Հայաստանի դեմ ելնող բռնակալները՝ իրենց պետություններով հանդերձ, չքվում են երկրի երեսից, ինչպես բաբելոնյան Բելը՝ վաղ շրջանի իր կայսրությամբ, հետո աքքադացի Նարամ-Սուենն՝ իր ընդգրկուն կայսրությամբ, այդպես և՝ ըմբոստացած Շումերը: Նշենք, որ ըստ մարգարեությունների՝ շուտով ի չիք կդառնան նաև Հայաստանին շրջապատող ներկայիս թշնամիները:

*Եվ ուրեմն Հայաստանը՝ ոչ որպես նվաճող, այլ՝ որպես չարի տիրակալության դեմ պայքարող և Աստծո կամքն ու պատիժն իրականացնող, դարձավ մի մեծ կայսրության գլուխ՝ տիրելով միջագետքյան երկրներին. **«Այսպիսով տեսնում ենք, որ կուտիական աշխարհակալության ճիշտ վերագնահատումը կարևոր լուսաբանումներ է մտցնում Հայաստանի հնագույն պատմության այլ հարցերում ևս... Լուսաբանվում են մեր պատմության նոր դրվագներ: Վերականգնվում և իր տեղն է գրավում փառահեղ մի դարաշրջան. դարաշրջանը մի աշխարհակալության, որը ստեղծվեց այսօր հայտնի առաջին բռնակալությունը կործանող ազատարարների կողմից: Դա աշխարհակալություն էր՝ Տիգրան Մեծից շուրջ երկու հազար տարի առաջ, որը տարածքով չզիջելով տիգրանյան սահմաններին՝ տևողությամբ գերազանցում է նրան մի քանի անգամ: Դա բարեպաշտ արքաների աշխարհակալությունն էր...»***[125]:

---

123 Արտակ Մովսիսյան, Բարեպաշտ արքաների աշխարհակալությունը, Երևան 1997 թ., էջ 23:

124 Дэвид Рол, Утраченный завет, Новая хронология событий Библейской эпохи, «эксмо», Москва 2005, ст. 127.

125 Արտակ Մովսիսյան, Բարեպաշտ արքաների աշխարհակալությունը, Երևան 1997 թ., էջ 29, 30:

Հայաստանը և շրջակա պետությունները

«Անկասկած է, որ Հայաստանը բնակեցված է եղել անհիշելի ժամանակներից և գտնվել է հին աշխարհի քաղաքակիրթ ժողովուրդների կենտրոնում: Միևնույն ժամանակ դա այն վայրն էր, որտեղ, մինչ ամենաուշ ժամանակները, տեղի էին ունենում Արևմուտքի բոլոր ընդհարումներն Արևելքի հետ»[126]:

Հայկ նահապետի ժամանակ Հայաստանի տնտեսությունը մեծ զարգացում էր ապրում իր ներքին ռեսուրսների և դրանք լավագույնս կիրառելու շնորհիվ: Միջագետքյան երկրներին տիրելուց հետո տնտեսությունն ավելի զարգացավ: Դա պայմանավորված էր Նարամ-Սուենի կողմից Հայաստանին պարտադրած պատերազմում հայոց բանակի հաղթանակներից հետո միջագետքյան երկրներից Հայկական լեռնաշխարհ զգալի տուրքերի ներմուծմամբ: Ստորև կներկայացվի դեպքերի հաջորդականությունը, իսկ մինչ այդ հիշեցնենք, որ Հայոց նահապետ Հայկի՝ Քանան տեղափոխվելուց հետո, ըստ Մովսես Խորենացու, Հայաստանում իշխում էր Արամանյակը:

Արամանյակը հաստատվում է երկրի հյուսիսարևելյան կողմում, որտեղ գտնվող լեռը մինչ օրս կոչվում է Արագած, իսկ կալվածքը՝ ոտն Արագածո (այժմ՝ Արագածոտն): Արամանյակի որդին՝ Կադմոսը, դեռ Հայկ նահապետի օրոք ժառանգել էր հարավի կողմն ընկած գավառը և իր անունով այն կոչել Կորդուք:

*Հայկի մյուս երկու որդիները՝ Խոռը և Մանավազը, Արամանյակի ցուցումով, իրենց տոհմերով հաստատվում են Հարքում: Մանավազի որդին՝ Բազը, ժառանգում է աղի (Վանա) ծովի հյուսիսարևմտյան ափը՝ գավառն ու ծովը կոչելով իր անվամբ (Բզնունյանց). **«Ասում, են որ սրանից են առաջ եկել Մանավազյան և Բզնունյանց նահապետությունները... Իսկ Խոռը բազմանում է հյուսիսային կողմերում»**[127]: Խոռից էլ առաջանում է Խոռխոռունիների ցեղը:*

Արամանյակից սերված Արամայիսը կառուցում է Արմավիրը՝ մոտակա գետն իր թոռան անվամբ կոչելով Երասխ: Արամայիսի որդի Շարան հյուսիսային տարածքներում հիմնում է բնակավայր, որն իր անվամբ

---

126 К. П. Патканов, смотри Магда Нейман, Армяне, Ереван 1990 г., ст. 60.

127 Մովսես Խորենացի, Պատմություն Հայոց, Երևան 1968 թ., էջ 90:

*կոչում է Շիրակ: Իսկ Արամայիսի մյուս որդին՝ Ամասիան, Արարատ լեռն իր անվամբ կոչում է՝ Մասիս: Արամայիսի ժառանգ Գեղամը, շարժվելով դեպի հյուսիսարևելյան կողմը, շենացնում է Սևանա լճի մերձակա տարածքները և շրջակա լեռներն իր անվամբ կոչում է Գեղ. **«իսկ շենները՝ Գեղարքունի, իր անունով կոչվում է նաև ծովը՝ Գեղամա»**[128]: Գեղամի մյուս ժառանգ Սիսակը իր շենացրած տարածքները կոչում է իր անվամբ. **«Սիսակն, այստեղ բնակվելով, իր բնակության սահմանները լցնում է շինություններով և երկիրն իր անունով կոչում է Սյունիք. բայց պարսիկներն, ավելի ճիշտ, կոչում են Սիսական»**[129]: Գեղամը շինում է նաև մի դաստակերտ, որն իր թոռան՝ Գառնիկի անվամբ կոչում է Գառնի: Նա իր ժառանգ Հարմայիին պատվիրում է բնակություն հաստատել Արմավիրում:*

Հարմայի օրոք տնտեսությունը Հայաստանում զարգացած էր, սակայն երկար ժամանակ՝ 80-100 տարի, խաղաղության մեջ մնալով՝ հայոց բանակը մատնվել էր անհոգության և կորցրել էր իր մարտունակությունը, ինչի մասին տեղյակ էին հարևան ռազմատենչ ազգերը: Հարմայի տիրապետության շրջանում միջագետքյան երկրներն ապստամբելով հեռացրին իրենց երկրներից հայկական գնդերը՝ սպանելով վերջին հայ-կուտի փոխարքային՝ Տիրիգանին. այսպես, դադարեց նաև տուրքերի ներմուծումը Հայաստան:

Այս ամենը ոգևորվում էր միջագետքյան երկրներին, Հայաստանին սահմանակից այլ երկրների. դրանք, հզորանալով ու, հավանաբար նաև, դաշնակցելով, միաժամանակ տարբեր կողմերից հարձակվեցին Արարատյան երկրի վրա: Հարման հիմնականում հետ մղեց այդ հարձակումները, բայց տարածքային կորուստներից, այնուամենայնիվ, խուսափել չհաջողվեց:

*Արևելքից ներխուժելով՝ որոշ առաջխաղացում ունեցան մեդացիները, որոնք Հաբեթի սերնդից էին և գրավեցին արևելյան սահմանամերձ տարածքները. **«Պատմաբաններից ոմանք հաղորդում են, որ Հարմայի մահվանից դեռ երկու տարի առաջ մեդացիները ներխուժեցին Հայաստանի խորքերը և հպատակեցրին սահմանամերձ բնակչությանը»**[130]:*

*Սեմից սերված ասորիներն իրենց տիրակալի՝ Բարշամի գլխավորությամբ հարավային կողմից հարձակվեցին և գրավեցին Կորդուքը և Մոկաց գավառը. **«Ծվ ապա (Բարշամը) քառասուն հազար հետևակով և հինգ հազար հեծելազորով խրոխտ շարժվեց դեպի Հայոց աշխարհի սահմանները և ներխուժեց սահմաններից ներս»**[131]:*

Արևմուտքի կողմից էլ իրենց հերթին Քամի հետնորդ ցեղախմբերը

---

128 Մովսես Խորենացի, Պատմություն Հայոց, Երևան 1968 թ., էջ 92:

129 Մովսես Խորենացի, Պատմություն Հայոց, Երևան 1968 թ., էջ 92:

130 Сергей Глинка, Обозрение истории армянского народа, Москва 1832 г., ст. 59–60.

131 Միքայել Չամչյանց, Պատմություն Հայոց, Երևան 1985 թ., էջ 73:

գրոհեցին և նույնպես որոշ տարածքներ վերցրին իրենց հսկողության տակ: Միայն Հայաստանի հյուսիսային սահմանները մնացին անխախտ:

Հարման շատ զավակներ ունեցավ, սակայն պատմության մեջ մեծ հետք թողեց նրա անդրանիկ որդին՝ Արամը, որ հորից ժառանգել էր Արարատյան երկրի գահը. ***«Հարմայից սերվեց Հին Աշխարհի հզորագույն տիրակալներից մեկը՝ Արամը»***[132]:

Արամ I Մեծ

«Հազարամյակների պայքարը հավիտենական ու նոր թշնամիների հետ, բնականաբար, պետք է հայերի մոտ զարգացներ ուժեղ բնավորություն և ամուր ոգի, և նրանցից ստեղծեր այնպիսի թրծված մարտիկներ, ինչպիսիք մենք արդեն տեսել ենք»[133]:

Արամը հայոց արքա դարձավ խիստ լարված ու անբարենպաստ պայմաններում: Վտանգն առկա էր ամեն կողմից: Թշնամական երկրները կարող էին հարմար պահին նորից ասպատակել՝ փորձելով նոր հողեր գրավել և Հայաստանն ամբողջովին մասնատել:

Գիտական աշխարհում Արամը համարվում է ամենաառեղծվածային նահապետներից մեկը: Նրա՝ ով լինելու մասին տարբեր կարծիքներ կան. ոմանք համարում են, որ խոսքն ուրարտական շրջանի Արամեի (IX ն.Ք.ծ.) մասին է, ըստ մի այլ մոտեցման՝ նա եղել Տիգրան Երվանդյանի հայրը՝ Արմենը (VI ն.Ք.ծ.): Սակայն պատմաբաններից շատերի կարծիքը համապատասխանում է հենց պատմահոր՝ Մովսես Խորենացու նշած տվյալներին. Հարմայի որդի Արամը թագավորել է ն.Ք. երկրորդ հազարամյակի սկզբում: ***«Հայոց աշխարհակալ այս արքայի գործողությունները ևս լիովին համապատասխանում են համաշխարհային պատմությանը և այն ժամանակի ոգուն, երբ Ջամշյանը տեղադրել է նրա գահակալության տարիները: Պատմահայրը հայտնում է, որ Հարմային հաջորդել է վերջինս որդին՝ Արամ I Մեծը (մ.թ.ա. 1827-1769)»***[134]:

Հետևելով Սուրբգրային պատմություններին՝ նկատում ենք, որ երբ Իսրայելում թագավոր էր դառնում բարեպաշտ և աստվածավախ անձնավորություն, երկիրն օրհնվում էր և բարգավաճում, նրա թշնամիները մեկը մյուսի հետևից պարտություն էին կրում: Եվ ընդհակառակը. երբ մոռանում

132 Լևոն Միրիջանյան, Հայկյաններ, Երևան 1988 թ., էջ 34:

133 Магда Нейман, Армяне, смотри – Армяне [сборник], Ереван 1991 г., ст. 68.

134 Միհեր Հակոբյան, Հայկազունիները, Երևան 2012 թ., էջ 25:

էին Տիրոջը և անտարբեր գտնվում Նրա պատվիրանների հանդեպ, երկիրը մատնվում էր բնության արհավիրքներին, սկսվում էր սով, տարածվում՝ համաճարակներ, և թշնամիներն ամեն կողմից սկսում էին նեղել։

Հավանաբար, Հարմայի թագավորության ժամանակ սկսել էր անկում ապրել ճշմարիտ աստվածպաշտությունը, ինչի հետևանքով էլ Հայաստանը հայտնվել էր աննախանձելի վիճակում։ Սակայն, երբ Տերը ներում և ողորմում է իր դեմ մեղանչած և անօրենություններ գործած ժողովրդին և ցանկանում է նորից նրանց օրհնել և ոտքի կանգնեցնել, Նա այդ ժողովրդի միջից հանում է աստվածահաճո մեկին և նրանով երկիրն ազատագրում է օտարներից։ Այդպիսի անձանց թվին էին պատկանում Աստվածաշնչյան հերոսներ Գեդեոնը, Սամսոնը, Դավիթը։

*Հայաստանի՝ նշված անկումային ժամանակաշրջանում էլ, այս բարեպաշտ առաջնորդներից դեռ շատ առաջ, Տիրոջ ողորմությամբ ասպարեզ իջավ հայոց մեծ արքան՝ Արամը. նրա՝ բնատուր շնորհներով զարդարված լինելու մասին է խոսում այն, որ նրան անվանել են Արամ քաջ, Արամ բարի։ Եվ նա՝ մեր քաջարի արքան, ամենայն հավանականությամբ, սկսել է բարեփոխումներ անել երկրում։ Նա հորդորել է իր հպատակներին, որ ապաշխարելով վերստին հաստատեն իրենց ուխտը Տիրոջ հետ, Ադամից ու Նոյից ստացած պատվիրանների հանդեպ անհոգություն չցուցաբերեն, և հիշեն, որ իրենց երկիրը, բնականաբար, նաև՝ հայոց Սաղեմը միակ լուսավոր տարածքներն էին այդ համատարած կռապաշտության խավարում։ Հայերը համարվում էին Աստծո ժողովուրդ, և իրենց էր շնորհվել ապրել մի երկրում, որը թե՛ Ջրհեղեղից առաջ և թե՛ Ջրհեղեղից հետո եղել է մարդկության օրրան և աստվածպաշտության երկիր. **«Սուրբ Գրքի համաձայն՝ Հայաստանը եղել է ամբողջ մարդկության օրրանն ու երկրային դրախտը»**[135]։*

*Հոգևոր և տնտեսական հարցերը շտկելուց հետո Արամն անցել է ամենակարևոր խնդիրներից մեկի կարգավորմանը՝ հայոց բանակի մարտունակության վերահաստատմանը։ Նա իր բարեպաշտության, հայրենասիրության ու քաջության օրինակով, նաև հիշեցնելով Հայկ Նահապետի ու նրա փառահեղ հաղթանակի մասին Բելի դեմ, բոլորին ոգևորել, և վհատված սրտերին արիության շունչ է հաղորդել։ **«Հայկի ժառանգներից ոմանք զբաղվում էին քաղաքների շինությամբ, զարդարմամբ և ամրապնդմամբ... Ուրիշներն աչքի էին ընկնում ռազմական ոգով և անգերազանցելի քաջությամբ, ինչպես՝ Արամը, որի ժամանակ Հայաստանը կենթարկվեր մեծագույն վտանգների՝ ասիական ժողովրդների արշավանքներից, եթե նա քաջարի զինվորներին չտար հայրենիքի հանդեպ սիրո օրինակ՝ իրենով»**[136]։*

---

135 Բոգդան Գեմբարսկի, տես Սև Գիրք, Երևան 2011 թ., էջ 629:

136 Я. и Д. Арзановы, Начертания истории Царства Армянского, Москва 1827 г., ст. 19.

Արևելյան տարածքների ազատագրումը

Ռազմական հարցերում երկիրն այդ (Հայաստանը) ֆենոմեն է, գիծն այդ պահպանվել է այստեղ՝ առանց հատուկ փոփոխման։ Պատերազմներում բնավորությունն ամրացրեց ազգի ոգին, ինչպես հսկայական խարույկ՝ կազմված առանձին փայտերից[137]։

Արամը, գահ բարձրանալով, որոշեց առաջին հերթին ազատագրել Հայոց արևելյան տարածքները, որ գրավել էին մեդացիներն՝ իրենց տիրակալ Նյուքար Մադեսի գլխավորությամբ. ***«Նյուքարն, այս լեռներից (Զագրոս և Զարասպ) անցնելով, իր ավերող զորքով հանկարծակի հարձակվելով, տիրեց մեր հին՝ Պարսկահայք կոչված նահանգը, հավանաբար, մինչ մեր Վասպուրականի արևելյան և հարավային կողմերը, և երկու տարի ճնշեց նրանց բնակիչներին, որ այն ժամանակ էլ Հայկազյան երկիր և ժողովուրդ էին համարվում»***[138]։

Արամը զորաժողով արեց և բավական ժամանակ զորավարժությունների միջոցով ռազմական հմտությունները զարգացնելով՝ զորացրեց հայոց՝ շուրջ 50.000-անոց բանակը, որը Հարմայի գահակալության ժամանակ կրած պարտություններից հետո միայն պաշտպանական մարտեր էր մղել, իսկ հարձակողական մարտավարության մասին արդեն չէր էլ մտածում։ ***«Արամը, որ երկու տարվա ընթացքում անդադրում տարված էր Մեդացիներին վռնդելու միջոցներով, ոչ միայն՝ մեծաթիվ զորք, այլև մարտական սարքեր հավաքեց»***[139]։

Եվ այդ երկարատև ու մեծ ջանքերի գնով արդեն վարժ ու կազմավորված բանակի գլուխն անցած Հայոց արքա Արամը շարժվեց դեպի Մեծ Հայքի արևելյան սահմանների կողմը, որտեղ երկու տարուց ավելի բնակչությանը ճնշման և թալանի էին ենթարկում մեդացիների հրոսակները։

Խորենացին գրում է. ***«Այս Արամը... շրջակա ազգերից նեղվելով՝ հավաքում է հարազատ, քաջ և աղեղնավոր մարդկանց մի բազմություն, մոտ հինգ բյուր մարդ՝ վարժ նիզակավոր, շատ ուժեղ երիտասարդներ հաջողակ ձեռքերով, սրտոտ ու հմուտ պատերազմող։ Նա հանդիպում է հայոց սահմանների մոտ գտնվող մեդացիների քաջերին, որոնց առաջնորդում***

---

137 Зинуров Рафаиль Наримановичˇ (Уфаеци), Армения–путь тысячелетий, том I, Москва 2010 г., ст. 14.

138 Ղեւոնդ Ալիշան, Հայաստան յառաջ քան զլինելն Հայաստան, Վենետիկ, Սուրբ Ղազար, 1904 թ., էջ 174:

139 Сергей Глинка, Обозрение истории армянского народа, Москва 1832 г., ст. 60.

էր մի ոմն Նյուքար Մադես՝ հպարտ և պատերազմասեր մի մարդ»[140]*։*

Պատմաբանները գրում են, որ Արամը միանգամից չհարձակվեց մեդացիների վրա, այլ հատուկ մարտավարություն մշակեց, և ինչպես որ Նյուքարն էր անակնկալ հարձակվել, այդպես էլ Արամը որոշեց պատերազմ չհայտարարել, այլ գիշերով արշավելով՝ նրան հանկարծակիի բերել։ ***«Եվ շարժվեց իր աշխարհի այն կողմը, որտեղ տիրում էր Նյուքարը։ Եվ հանկարծակի, մինչ արևածագը, հարձակվեց նրա վրա և դիմացից հարվածելով՝ նրա ամբոխից շատերին սատկեցրեց, իսկ Նյուքարին բռնելով՝ տարավ Արմավիր... և Նյուքարի երկիրը դարձրեց հարկատու»***[141]*։*



Արամի այս հաղթանակը դարձավ ահազանգ՝ մյուս երկրների համար, որոնք ևս հանդգնություն էին ունեցել՝ Նյուքար Մադեսի նման, ներխուժել Հայոց սահմաններից ներս։

Ահն ընկավ ոչ միայն ժողովրդների վրա, որ իմացան մեդացիների բանակի մեծ կորուստների և ծանր հարկերի տակ ընկնելու մասին, այլև սարսափ ապրեցին նրանց արքաները, որովհետև ինչ տեղի ունեցավ մեդացիների տիրակալի հետ, նույն սպառնալիքը կախվել էր նաև իրենց գլխին։

Իսկ ի՞նչ եղավ հայ ժողովրդի կողոպտիչ և տանջարար Մադեսի հետ, որ նման տագնապի էր մատնել այդ արքաներին։ Արամը և Հայոց բանակը, հաղթանակով վերադառնալով, նրան գերի բերեցին, որպեսզի հայոց մայրաքաղաք Արմավիրում նրա հետ իր ոճրագործություններին արժանի դատաստան տեսնեն։

Արամ արքային հայ ժողովուրդն ընդունեց մեծ շուքով և երկնքի Աստծուն փառաբանեց փայլուն հաղթանակի համար։ Իսկ այդ համընդհանուր ուրախության մեջ կար մեկը, որի համար դա սգո և տառապանքի օր էր, քանզի այդ ուրախությունը հենց իր՝ Նյուքար Մադեսի ու մեդացի ժողովրդի պարտության առթիվ էր։ Նյուքարը, թերևս, նզովում էր այն օրը, երբ խախտեց Հայոց սահմանները, ինչի հետևանքով փառազուրկ, ամոթահար ու կարկամած կանգնել էր հազարավոր հայերի առջև, որ նողկանքով էին նայում իր կողմը և հիանում էին իրենց արքայով։

Նման պատկեր է լինելու Ահեղ Դատաստանի օրը, երբ Աստծո և իր սրբերի առջև մեղավորները կկանգնեն դատվելու՝ որպես օտարներ,

---

140 Մովսես Խորենացի, Պատմություն Հայոց, Երևան 1968 թ., էջ 93:

141 Միքայել Չամչյանց, Պատմություն Հայոց, Երևան 1985 թ., էջ 73:

երկնային խնդութեան մաս ու բաժնից զուրկ, ահ ու դողով սարսափելի դատավճռի կայացման սպասումով...

Նյուքարը հայ ժողովրդի հանդեպ գործած իր ծանր հանցանքների պատճառով գուցե չի էլ մտածել զղջումով ներում աղերսել, այլ սպասել է, թե ի՛նչ կերպ է իր նկատմամբ իրագործվելու արդար դատաստանը:

Դատավճիռը կայացավ. Հայաստանը գրավելու մոլուցքով լցված այդ փառամոլ մարդուն բարձրացրին այնպես, ինչպես Հայկն էր բարձրացրել Բելին: Հայկը Բելի մարմինը թաղել էր լեռան գագաթին՝ ի տես հարևան ոազմատենչ երկրների: Այդպես և Արամը վարվեց. Մադեսին բարձրացնելով՝ գամեց Արմավիրի պարսպին՝ ի տես բոլոր օտարազգիների, որ տարբեր երկրներից էին ժամանել Հայաստան և վերադառնալով՝ պիտի պատմեին հայերի մեծ հաղթանակի և այդ դատավճռի մասին. ***«Արամը... Նյուքարի՛ն էլ, որ Մադես էր կոչվում, ձերբակալ անելով, բերեց Արմավիր և հրամայեց պարսպի աշտարակի ծայրին վարսել՝ երկաթե ցից մխելով ճակատին, ի ցույց դնելով անցորդներին և բոլոր եկվորներին, իսկ նրա երկիրը՝ մինչև Ջարասպ կոչված լեռը, իրեն հպատակեցնելով՝ հարկատու դարձրեց»***[142]*:*



Գրավված տարածքներն Արամը հանձնեց Սիսակի ցեղին, այսինքն՝ Սյունիքի վերահսկողության տակ դրեց, քանզի հենց այդ նահանգն էր մեծապես տուժել մեդացիների ասպատակություններից:

Մեդացիների մասին

Հայոց Արամ արքայի գլխավորած ազատագրական պատերազմի արդյունքում ոչ միայն գլխովին ջախջախվեց մեդացիների բանակը, այլև նրանց երկիրը՝ Մարաստանը կամ Մեդիան դարձավ Հայաստանին հարկատու: Ծանր պարտությունից ու տնտեսական անկումից հետո այդ երկիրը գրեթե 700 տարի չհիշատակվեց պատմության մեջ, քանզի դարձավ երկրորդական, անտեսված մի տարածք՝ ժամանակ առ ժամանակ այս

142 Մովսես Խորենացի, Պատմություն Հայոց, Երևան 1968 թ., էջ 94:

կամ այն պետության մաս կազմելով: Սա է պատճառը, որ հնագետներից ոմանք, անտեսելով պատմահոր՝ Մովսես Խորենացու և ուրիշների կողմից մեդացիների մասին մեզ հասած տեղեկությունները, ենթադրում են, որ հեռավոր անցյալում ընդհանրապես նման ազգ ու երկիր գոյություն չի ունեցել, այլ միայն ն.Ք. առաջին հազարամյակի սկզբում են նրանք հայտնվել այդ վայրերում՝ ներկայիս Իրանի տարածքում:

Այդ կարծիքը ներկայումս գերիշխող է: Սակայն, ըստ մեկնիչների՝ մեդացիների նախահայր է համարվում Աստվածաշնչյան Մադան, ինչից պետք եզրակացնել, որ այդ ազգն ամենահին ազգերից մեկն է: ***«Մեդական ժողովրդի նահապետը համարվում է Մադան՝ Հաբեթի որդին (Մննդ. 10:2): Մեդական ցեղերը՝ որպես քաղաքական ուժ, պատմությանը հայտնի են սկսած մ.թ.ա. իններորդ դարից: Նրանք ի սկզբանե չեն կազմավորել առանձին պետություն, այլ իրենցից ներկայացնում էին ցեղերի միություն»***[143]*:*

Եթե նրանք այնքան խելամիտ լինեին, որ չհարձակվեին Հայաստանի վրա, հավանաբար, դեռ այդ հնագույն ժամանակներից կմնային՝ որպես քաղաքական ուժ ներկայացնող երկիր: Սակայն Արամի կողմից նրանց հասցված կործանարար հարվածը դարեր շարունակ թույլ չտվեց ոտքի կանգնել և դասվել ժամանակի կայուն պետությունների շարքը: Մեդացիները գոյատևեցին ցեղային միություններով մեկ հազարամյակ, մինչև հզորացան և կրկին քաղաքական ասպարեզ մտան:

Այն մասնագետները, որ համարում են, թե մեդացիները շատ ավելի ուշ շրջանում են զբաղեցրել այս տարածքները, հիմնականում հենվում են Հերոդոտոսի պատմությունից մեզ հասած տեղեկությունների վրա. նաև հիմք են ընդունում այն, որ հին շրջանի սեպագրերում նրանց մասին տեղեկություններ չկան: Սակայն այդ կարծիքի ջատագով ռուս պատմաբան Դյակոնովն ասում է, որ Մեդիայի տարածքը համարյա թե չի ենթարկվել խորն ուսումնասիրությունների, ինչը և շատ է դժվարացնում մեդացիների մասին վերջնական կարծիք կազմելը:

«Մեդիայի պատմությունը գրելու խնդիրն արտակարգ բարդանում է աղբյուրների սակավության պատճառով: Եթե անցած դարի կեսերին Մեդիան Հին Արևելքի մյուս երկրների հետ եղել է մոտավորապես հավասար վիճակում, այն առումով, որ նրա, ինչպես և նրա հարևանների մասին կիսաառասպելական և հատվածային տեղեկություններ կային հույն պատմիչների մոտ, ապա վերջին հարյուր տարում գիտությունը ձեռք է բերել ահռելի քանակությամբ նյութեր՝ Բաբելոնի և Ասորեստանի և Հին Արևելքի այլ երկրների պատմության վերաբերյալ՝ մեծ թվով փաստաթղթերի տեսքով և տասնյակ քաղաքների պեղումներից ստացած նյութերով: Իսկ Մեդիայի ուսումնասիրումը գիտական ընդհանուր զարգացման ուղղությունից մնաց մի կողմի վրա: Բավական է ասել, որ

[143] Библия и наука, http://nauka.bible.com.ua/vs-istor/vi1-13.htm

Մեդիայի տարածքում չի պեղվել և ոչ մի քաղաք, և մենք չունենք ոչ մի գրավոր հուշարձան, որ ծագումով Մեդիայից, նրա պետականության գոյության ժամանակաշրջանից լինի»[144]:

Այն, որ Մեդիայի տարածքում շատ քիչ պեղումներ են եղել, թույլ չի տվել մեդացիների մասին բավարար չափով տեղեկություններ հավաքել: Սակայն ավելի ուշ ներկայիս Իրանի տարածքում մեդացիների բնակության վայրերը պեղելով՝ հնագետները հայտնաբերել են բավականին զարգացած մշակութային մի շերտ, որի կրողներն ապրել են այդտեղ՝ դեռ բրոնզե դարից և գոյատևել են հազարամյակներ շարունակ: Այդ մշակույթային շերտը հնագետները պայմանականորեն անվանել են Ջիրովթի քաղաքակրթություն, քանի որ այդ մշակույթի հետ կապված առաջին գտածոները հայտնաբերել են Իրանի հարավ-արևմուտքում գտնվող Ջիրովթ կոչված բնակավայրի մոտակայքում: Արդեն հստակ է, որ Մադեսը և իր ժողովուրդը եղել են բուն այդ քաղաքակրթության ներկայացուցիչները, որոնք էլ հենց մեդացիների նախահայրերը պետք է որ եղած լինեն: Նրանց հնագույն պատմության էջերը լրացնում է մինչ վերջերս անհայտ մնացած Ջիրովթի մշակույթը[145]:

Ղևոնդ Ալիշանը նույնպես մեդացիներին դասում է հնագույն ժողովուրդների շարքը: Նրա կարծիքով այդ ժողովրդի վաղ շրջանի մասին տեղեկություններ մեզ չեն հասել. ***«Այս ազգը՝ (մեդացիները) հնագույն ազգերից մեկն է և բյուզանդացիների ու եվրոպացիների կողմից Մեդ է անվանվում իր նախահոր՝ Մադայի անվամբ, որ Հաբեթի զավակներից էր... Անտարակույս է, որ Հայոց պես նրանք էլ ազգապետեր և թագավորներ են ունեցել և եղել են բավական կրթված և զարգացած: Բայց իրենց հին պատմությունն ամբողջովին կորել է, և նրանց մասին ծանոթությունն սկսվում է Աստրեստանյան ինքնակալության կործանման և նոր թագավորության ծագման ժամանակ (Քրիստոսից առաջ VIII կամ IX դարերին)»***[146]:

Մեդացիների և նման այլ ժողովուրդների պատմության՝ ամբողջովին կամ մասամբ անհետանալու պատճառներից կարող է լինել նաև այն, որ գոռոզամիտ թագավորներից ոմանք Նինոսի նման այրել, ոչնչացրել են այլ թագավորների և երկրների մեծ գործերը հիշեցնող տեղեկությունները, որպեսզի պատմության մեջ թողած իրենց հետքն ավելի ընդգծված լինի. ***«Նինոսը, հպարտ և անձնասեր մարդ լինելով և կամենալով միայն իրեն ցույց տալ՝ իբրև սկիզբ աշխարհակալության, ամեն տեսակ քաջության և կատարելության, հրամայում է նախնիների բազմաթիվ մատյաններ, որոնք վերաբերում էին զանազան երկրների և առանձին մարդկանց***

---

144 Дьяконов И. М., История Мидии, Ленинград 1956 г., ст. 9.

145 http://dic.academic.ru/dic.nsf/ruwiki/896324

146 Ղեւոնդ Ալիշան, Հայաստան յառաջ քան զլինելն Հայաստան, Վենետիկ, Սուրբ Ղազար, 1904 թ., էջ 174:

քաջագործություններին, այրել, իսկ իր ժամանակակիցների մասին գրառումներ չանել, այլ գրել միայն այն, ինչն իրեն է վերաբերում»[147]:

*Այն որ Արամի հակառակորդները, իսկապես մեդացիներն են եղել, փաստում է նրանց առաջնորդի անունը՝ «Մադես»: Մեդացիների նախահայրը, ինչպես նշվեց, Հաբեթի որդի՝ Նոյ նահապետի թոռ Մադան էր, ով էլ կրում էր իր նախահոր անունը: Հույն թարգմանիչներն, ուղղակի, ըստ հունական սովորության, անվան վերջում հավելել են իրենց լեզվին հատուկ («ոս» կամ «ես» վերջածանցներից) «ես»-ը: Ինչպես՝ Որոգինե<u>ս</u>, Դիոնիսո<u>ս</u>, այդպես և՝ Մադան, ըստ հունարեն լեզվամտածողության, դարձել է Մադես: Նաև հենց այդ անվանումից էլ առաջացել է երկրի անվանումը «Մադա» կամ «Մեդիա». **«Մ.թ.ա. IX դարի ասորեստանյան արձանագրություններում ասվում է «մադա» ցեղախմբի մասին, որի հետ ասորեստանցիները համառ պայքար են մղում»**[148]:*

Ակնհայտ է, որ մեդացիներն այս տարածաշրջանում բնիկներ են եղել. Հայաստանի հետ ընդհարվելուց հետո բաժանվել են մեծ նշանակություն չունեցող իշխանական համակարգերի:

Որևէ կասկած չի կարող ստվերել Խորենացու տեղեկությունն, ըստ որի՝ Մեդիան կամ Մարաստանն, իսկապես, Ն.Ք. II հազարամյակի սկզբին եղել են Հայոց հարավարևելյան հարևանը:

Հարավային տարածքների ազատագրումը

«Արամն աշխարհապահ էր՝ այսինքն,
իր հայրենյաց սահմաններն ազատող,
շինող և պահող... աշխատասեր և
չափազանց հայրենասեր»[149]:

Հայոց մայրաքաղաք Արմավիրում մեծ շուքով տոնելով մեդացիների դեմ տարած հաղթանակը՝ Արամը պատրաստվեց ազատագրել ասորեստանցիներից Հայաստանի հարավային տարածքները, քանզի եթե Մեդիան Հայաստանի արևելյան կողմում էր գտնվում, ապա Ասորեստանը

---

147 Մովսես Խորենացի, Պատմություն հայոց, Երևան 1968 թ., էջ 96:

148 Авдиев В. И. История Древнего Востока, Ленинград 1953 г., ст. 532.

149 Ղեւոնդ Ալիշան, Հայաստան յառաջ քան զլինելն Հայաստան, Վենետիկ, Սուրբ Ղազար, 1904 թ., էջ 176:

Հայաստանի անմիջական հարևանն էր հարավից: Այս անգամ ամեն բան շատ ավելի դյուրին էր, քանզի հայոց զորքը մեծ ոգևորություն էր ապրում՝ մեդացիների դեմ տարած փառահեղ հաղթանակից և պատրաստ սպասում էր Արամի հրամանին:

«Ասորեստանը գրավում էր ոչ մեծ տարածք՝ Տիգրիսի վերին հոսանքի երկայնքով: Այն ձգվում էր Զաբի ստորին հոսանքից դեպի հարավ՝ մինչև Զագրոսի լեռները և մինչև Մասիուս լեռը՝ հյուսիսարևմուտքում: Ասորեստանից դեպի արևմուտք բացվում էր լայնատարած սիրիա-միջագետքյան տափաստանը, որ հյուսիսային կողմում հատվում էր Սինգարի լեռներով: Հյուսիսում Ասորեստանի տարածքն աննկատ մտնում էր Հայկական լեռնաշխարհ»[150]*:*

*Ասորեստանի տիրակալն այդ ժամանակ Բարշամ անունով մեկն էր Սեմի սերնդից: Նա մինչև Հայաստանի սահմանները խախտելն ասպատակել ու կողոպտել էր շրջակա տարածքները և մեծ անուն էր հանել: Հավանաբար, նա արտաքին տվյալներով էլ շատ ազդեցիկ էր, քանզի սերվել էր հսկաներից: Բարշամի հպատակները նրա արձանը կերտեցին և Բելի ու Նարամ-Սուենի նման աստվածացնելով՝ սկսեցին պաշտամունք մատուցել. **«Այս Բարշամը ժամանակին շատ խիզախություններ է կատարել, որի համար ասորիները նրան պաշտում էին՝ իբրև աստծո»***[151]*:*

*Արամի հզորանալը Բարշամի գլխին սև ամպեր էր կուտակում: Մադեսին կործանելուց, Հայոց արևելյան կողմի հողերը ազատագրելուց և մեդացիներին հարկատու դարձնելուց հետո Արամն իր բանակի արշավն ուղղեց դեպի Հայոց հարավային սահմաններ. **«Արամն արևելցիների հետ ճակատամարտը վերջացնելուց հետո նույնպիսի զորությամբ շարժվում է Ասորեստանի կողմերը, այնտեղ ևս գտնում է իր երկրի մի ուրիշ ոչնչացնող՝ Բարշամ անունով, հսկաների ցեղից, չորս բյուր սպառազեն հետևակներով և հինգ հազար հեծյալներով. նա խիստ հարկերով սաստիկ նեղելով՝ անապատ էր դարձրել իր ամբողջ շրջակայքը»***[152]*:*

Հայոց բանակը նախանձախնդիր էր հայրենի հողերն օտար զավթիչներից ազատագրելու առումով՝ հատկապես, որ ուներ այնպիսի հզոր և աստվածահաճո առաջնորդ, ինչպիսին Արամն էր: Հայերը քաջաբար առաջ էին ընթանում, քանզի եթե ասորեստանցիների հույսն իրենց կեղծ «աստծո»՝ Բարշամի վրա էր, ապա հայոց բանակը պատերազմից առաջ իր աղոթքն էր առաքում Նոյ և Հայկ մեծ նահապետների միակ ճշմարիտ Աստծուն:

Ասորեստանցիները, չնայած մեծաթիվ զորքին և իրենց առաջնորդի՝ կենդանի կուռք, հսկայատես Բարշամի ներկայությանը, այլևս չունեին

---

150 Авдиев В. И. История Древнего Востока, Ленинград 1953 г., ст. 411.

151 Լևոն Միրիջանյան, Հայկյաններ, Երևան 1988 թ., էջ 36:

152 Մովսես Խորենացի, Պատմություն հայոց, Երևան 1968 թ., էջ 95:

*այն ինքնավստահությունը, որով զինված էին Հարմայի օրոք Հայոց երկիր ներխուժելիս: Այժմ արդեն նրանց դեմ ոչ թե ծերացած Հարման էր կանգնած, այլ՝ Արամը, որը հաղթել էր մեդացիներին, և էլ ավելի զորացած՝ քաջաբար արշավում էր իրենց վրա. **«Արամն իր զորքով գնաց դեպի Ասորեստան, որպեսզի վրեժ լուծի այս ազգից այն չարիքի համար, որ նա հասցրել էր Հայաստանին: Տեղ հասնելով՝ մարտի մեջ մտան ասորական բանակի հետ, որը կազմված էր հինգ հազար հեծելազորից և քառասուներեք հազար հետևակից: Նրանց առաջնորդում էր ասորեստանցիների մեջ իր քաջությամբ փառավոր մի այր՝ Բարշամ անվամբ: Այդ արյունալի մարտում, ասորեստանյան բանակը ջախջախվեց»**[153]:*

*Արամը, հարձակվելով ասորական զորքերի վրա, ոչ միայն կոտորեց նրանց, այլև կարծեցյալ «աստված» Բարշամին էլ արժանացրեց Մադեսի ճակատագրին. **«Արամը պատերազմելով՝ ընդհարվում է նրա հետ և հարվածում նրան՝ կորդուքի միջով ու շպրտում Ասորեստանի դաշտը՝ շատերին կոտորելով, իսկ Բարշամը նրա զինակիրներին հանդիպելով՝ սպանվում է: Այս Բարշամին ասորիները երկար ժամանակ աստվածացրած պաշտում էին նրա քաջագործությունների պատճառով: Իսկ Ասորեստանի դաշտերի մեծ մասն Արամը գրավեց և հպատակության մեջ պահեց երկար ժամանակ»**[154]:*

*Արամը ոչ միայն իր բանակի հուժկու զարկից մազապուրծ եղած թշնամիներին վռնդեց հայոց երկրից, այլև մտավ Ասորեստանի սահմաններից ներս, և այս անգամ էլ ինքը գրավեց նրանց հյուսիսային սահմանամերձ տարածքները՝ թողնելով դրանք ասորեստանցիների ներխուժումից տուժած կորդվաց գավառի վերահսկողության տակ: Միքայել Չամչյանցն այդ մասին գրում է. **«Եվ նրանցից շատ-շատերին սատկեցրեց և գերեվարելով Բարշամին՝ սպանեց նրան և նրա սահմանամերձ տարածքները տվեց Կադմոսի սերունդներին»**[155]:*

Ըստ միջագետքյան տեղեկությունների՝ Արամի թագավորության շրջանում Ասորեստանում տիրում էր ոչ թե Բարշամը, ում մասին ասում են հունական թարգմանությունները, այլ Էրիշում II-ը (ն.Ք. 1818-1813): Այս անվանումների նմանությունը խոսում է այն մասին, որ «Բարշամն» Ասորեստանի արքայի հունական տարբերակն է, որն իր գրառումների համար ընտրել է Մար Աբաս Կատինան, իսկ «Էրիշումը» նույն անվանումն է ասորական հնչողությամբ: Բարշամ և Էրիշում անվանումների նույնության մասին այլ պարզաբանումներ ևս կան[156]:

---

153 Краткое историческое описание царства Арменскаго, Яковом Шамировым, Санктпетербургъ 1786 г., ст. 13.

154 Մովսես Խորենացի, Պատմություն հայոց, Երևան 1968 թ., էջ 95:

155 Միքայել Չամչյանց, Պատմություն Հայոց, Երևան 1985 թ., էջ 73:

156 Մհեր Հակոբյան, Հայկազունիները, Երևան 2012 թ., էջ 26:

Ասորեստանում Բարշամի անփառունակ կործանումից հետո, Ասորեստանի գահին նստեց պատմության մեջ մեծ հետք թողած Նինոսը։

Արամ արքայի Արշավը դեպի Արևմուտք

Իսկ թե ինչ քաջագործություններ նա կատարեց արևմտյան կողմում՝ Տիտանյանների դեմ, մենք դեռ պետք է պատմենք[157]։

Արամը վերահաստատեց Հայոց արևելյան ու հարավային սահմանները և ներխուժելով հակառակորդների, սահմանամերձ տարածքներ՝ գրավեց դրանք՝ հարկատու դարձնելով բնակչությանը։ Քանի որ այլևս վտանգ չէր սպառնում այդ կողմերին, իսկ հյուսիսային սահմաններն էլ անխախտ էին, Արամն արդեն խորհում էր Հայոց արևմտյան սահմաններում կարգուկանոն հաստատելու մասին։

*Ըստ Ղևոնդ Ալիշանի՝ այդ կողմերում երբևէ չէր եղել ամբողջական մեծ պետություն. եղել էին միայն փոքր տերություններ։ Իսկ Քամից սերող ոմն տիտանյան՝ Պայապիս անունով, գրավել էր Հայաստանից դեպի արևմուտք ձգվող տարածքները. որոնք հետագայում անվանվեցին Կապադովկիա։ Պայապիսը, տեսնելով Արամի հաղթարշավը և մտածելով, որ, հնարավոր է, ինքն էլ Արամից պարտվածների ճակատագրին արժանանա, որոշում է նախահարձակ լինել. **«Ոմն Պայապիս Քաղեա՝ Քամի տնից, երկու՝ Սև և Միջերկրական ծովերի միջև եղած տարածքները բռնությամբ իր ձեռքն էր առել։ Նա, տեսնելով, որ Արամը տիրում է իրեն սահմանակից երկրին, ելավ նրա դեմ՝ սաստիկ պատերազմով»**[158]։*

Լուրը հասնում է Արամին։ Նա, չնայած իր ժողովրդի հետ հերթական հաղթանակն էր տոնում, սակայն իսկույն անցնում է բանակի գլուխ՝ շարունակելու իր հաղթարշավը, պատերազմների մեջ թրծված իր զորքն ուղղելով դեպի արևմտյան սահմանները։ Երկու մեծ հաղթանակ տարած հայկական բանակը հարձակվում է այդ տիտանյանի վրա և ցիրուցան անում նրա զորքը։ Պայապիսը, զգուշանալով արևելյան և հարավային երկրների արքաների ճակատագրից, երկար չի դիմադրում, այլ ճողոպ-

---

157 Մովսես Խորենացի, Պատմություն հայոց, Երևան 1968 թ., էջ 95:

158 Միքայել Չամչյանց, Պատմություն Հայոց, Երևան 1985 թ., էջ 74:

*րում է կռվի դաշտից. **«Տիտանյանը... լսելով, որ ուրիշ զորավոր մեկն էր եկել իր տիրածին տիրելու, փութաց վռնդել, բայց ինքը, հալածվելով Արամից, որը 40 հազար հետևակ և 2 հազար ձիավոր էր բերել, փախավ և Կիլիկիայի հարավակողմյան կղզիներից մեկում՝ Կիպրոսում կամ Կրետեում ապաստան գտավ»**[159]:*

Արամը, տեսնելով արևմտյան այդ տարածքների անխնամ վիճակը, այդտեղ կուսակալ է նշանակում իր զորավարներից մեկին՝ Մշակին՝ 10 հազարանոց զորք թողնելով նրա տրամադրության տակ և պատվիրելով, որ աշխատանքներ տանի տեղի ժողովրդին լուսավորելու և բարեկեցիկ կյանքի նախադրյալներ ստեղծելու համար:

*Բնականաբար, Արամը պետք է Մշակին հանձնարարեր այդ ժողովուրդների միջից նախ արմատախիլ անել կռապաշտությունը և սերմանել ուղիղ հավատքն առ Աստված, Ում պաշտում և երկրպագում էին Արարատյան երկրում՝ Հայաստանում: Արամը կարգադրում է նաև, որ այդ տարածքներում ապրող ժողովուրդներին սովորեցնեն հայերեն խոսել. **«Գրաված երկրների բնակիչներին Արամը հրաման տվեց ուսանել հայոց խոսքն ու լեզուն: Այդպիսով հայերենի սահմանները տարածվեցին մինչև այդ հեռավոր կողմերը»**[160]:*

*Տեղացիները, փաստորեն, պետք է խոսեին այն մայր լեզվով, որով դարեր առաջ՝ մինչ Բաբելոնում լեզուների խառնակումը, խոսել էին նաև իրենց նախնիները, որպեսզի թե՛ հավատով, թե՛ լեզվով հաղորդակից լինեին հայ ազգին բաժին հասած երկնառաք շնորհներին: **«Հայաստանի ուժն ու հմայքը կենդանի ապրող ժողովուրդն ինքն է, նրա լեզուն, որի միջոցով ժողովուրդը գնում է դեպի հոգևոր անմահություն»**[161]:*

*Արամի կողմից կուսակալ նշանակված Մշակը նաև քաղաք է կառուցել իր անվամբ, սակայն տեղաբնակները, չկարողանալով պարզ արտաբերել հայերեն բառերը, քաղաքն անվանում էին Մաժաք. **«Նա այնտեղ թողեց իր ազգից մեկին՝ Մշակին, որը կառուցեց Մաժաքը, որը հետո կոչվեց Կեսարիա»**[162]: Նշենք, որ մինչև 1915 թվականը Կեսարիայի բնակչության մեծամասնությունը՝ մոտ 20000 մարդ, հայեր էին:*

Եվ այսպես՝ Արամը Հայոց աշխարհի չորս կողմերն ամրապնդեց, ընդարձակեց և որպես Աստծո որդիներ ճանաչված արմենների՝ հայերիս երկիրն իր նախկին փառքի բարձունքին հասցրեց:

Եվ նորից, Հայաստանին պարտադրած պատերազմների հետևանքով այդ գրավված տարածքներից սկսեցին Հայաստան ներմուծվել համա-

---

159 Ղեւոնդ Ալիշան, Հայաստան յառաջ քան զլինելն Հայաստան, Վենետիկ, Սուրբ Ղազար, 1904 թ., էջ 178:

160 Լևոն Միրիջանյան, Հայկյաններ, Երևան 1988 թ., էջ 37:

161 Միխայել Դուդին, «Գարուն» ամսագիր, թիվ 12, Երեւան 1982 թ., էջ 14–15:

162 Սամուէլի Քահանայի Անեցւոյ, Հաւաքմունք ի գրոց պատմագրայ, Վաղարշապատ 1893 թ., էջ 43:

պատասխան տուրքեր։ Ամենայն հավանականությամբ, այդ տուրքերը տրվել են կամովի՝ Արամի բարի և հանդուրժողական վարքի շնորհիվ. ***«Կապադովկիան գտնվում էր Պոնտոսի, Լիկոնիայի, Փոքր Հայքի, Գաղատիայի և Եփրատի միջև... Պոնտական երկրի նման նա ընկղմված էր խորին տգիտության մեջ։***

***Գրավելով Կապադովկիայի տարածքները, Արամը, Հայաստան վերադառնալիս, այնտեղ ուղարկեց իր վերակացուին՝ հանձնարարելով նրան՝ ջանալ գրավված երկրները ծաղկուն վիճակի բերել և տեղի երիտասարդներին սովորեցնել հայոց լեզուն։ Նոր գրողներից մեկը, հիշեցնելով, որ Գելոնը՝ Սիրակուզայի տիրակալը, հաղթելով կարթագենացիներին և նրանց հետ խաղաղություն կնքելով, պատվիրում է, որ նրանք այսուհետ չեղյալ համարեն իրենց երեխաներին աստվածներին զոհաբերելու վայրենաբարո սովորությունը, և ավելացնում է, որ «ամենալավ հաղթական պսակն այն է, որ տարած հաղթանակներից մարդկության համար մի ինչ-որ օգտակար բան իրականացնես»։ Արամը վաստակեց այդ պարգևը՝ դառնալով պարտված երկրների բնակիչների բարերար»*[163]*։*

Պայապիսի և Հայաստանի որոշ տարածքների հետ կապված խնդիրները

Ինչպես մեդացի և ասորի արքաների՝ Մադեսի և Բարշամի, այնպես էլ Պայապիս Քաղցայի անվան դեպքում պարզաբանումների կարիք կա։ Սև և Միջերկրական ծովերի միջև գտնվող տարածքներում այդ ժամանակաշրջանից սկսած երկար դարեր բնակվել են խեթերը, որ սերում էին Քամից։ Ըստ ուսումնասիրողների՝ Պայապիսը, որը նույնպես տիտանյան էր՝ այսինքն, Քամի սերնդից, հենց խեթերի տիրակալն էր։ Խեթական արձանագրություններում նա անվանվում է ոչ թե Պայապիս՝ հունարեն տարբերակով, այլ՝ Անիտա։ ***«Անչափ հետաքրքիր են նաև տեղեկությունները Արամի ու «Տիտանյան Պայապիս Քաղցայի միջև մղված պատերազմի պարագայում։ Պատմահայրը հայտնում է, որ նախորդ հակառակորդներին հաղթելուց հետո Արամ I Մեծն իր հիմնական ռազմական ուժերը տեղափոխում է թագավորության արևմուտք և երկարատև պայքարից հետո հաղթում ու քաղաքական ասպարեզից դուրս է մղում տարածաշրջանի իր հակառակորդներից ամենաուժեղին և վտանգավորին՝ Տիտանյան Պայապիս Քաղցային։ Ո՞վ է այս խորհրդավոր անձնավորությունը՝ Մովսես***

[163] Сергей Глинка, Обозрение истории армянского народа, Москва 1832 г., ст. 62–63.

Խորենացու հիշատակած և Արամ I Մեծի (մ.թ.ա. 1827-1769) ժամանակակից «Տիտանյան Պայապիս Քաղյան»:

***Պահպանված «Անիտայի գրվածքներ» խեթական արձանագրության մեջ պատմվում է, թե ինչպես խեթական թագավորության առաջին արքաներից մեկը՝ Անիտան (մ.թ.ա. մոտ 1810-1790), իր գահակալության սկզբում հաջող արշավանքներով նվաճում է Փոքր Ասիան՝ Սև և Միջերկրական ծովերի միջև ընկած տարածքները: Այս հանգամանքը լիովին համապատասխանում է Պատմահոր այն հաղորդմանը, թե «Տիտանյան Պայապիս Քաղյան» «... բռնացել, գրավել էր տարածությունը երկու մեծ ծովերի միջև՝ այսինքն, Պոնտոսի (Սև ծով – Մ.Հ.) և Օվկիանոսի (Միջերկրական ծով – Մ.Հ.)»: Հետաքրքիր է, որ վերոհիշյալ արձանագրությունը լռության է մատնում խեթական թագավորության արքայի գահակալության հետագա տարիների իրադարձությունները, որոնք հայտնի են կողմնակի աղբյուրներից: Իսկ դրանցից մասնավորապես պարզ է դառնում, որ Անիտայի թագավորության վերջից խեթական թագավորությունը մոտ 160 տարով անկում է ապրում: Ինչպես տեսնում ենք, սա ևս լիովին համապատասխանում է Մովսես Խորենացու հիշատակած «Տիտանյան Պայապիս Քաղյայի» գործունեությանը, նրա պետությանը, դրա տարածքին»**[164]:

Այստեղ նույնպես անտիկ պատմիչների և սեպագիր արձանագրությունների տեղեկությունները լիովին համընկնում են: Սակայն այս՝ արևմտյան տարածքներում տեղի ունեցած դեպքերը ևս պարզաբանման կարիք ունեն: Խորենացին գրում է, որ Արամի գրաված արևմտյան հողերը չորս մասի բաժանվեցին՝ իրենց ստացած նոր անվանումներով. ***«Այս է բուն և ճշմարիտ պատճառը մեր՝ արևմտյան կողմն Առաջին և Երկրորդ, այլև Երրորդ և Չորորդ Հայք անվանելու»***[165]:

Սակայն խնդիրն այն է, որ նման անվանումներ այդ տարածքներն ստացել են Մովսես Խորենացու՝ «Հայոց պատմությունը» շարադրելուց շուրջ մեկ դար անց: Հիմնելով այս տարակուսելի իրողության վրա՝ Արևմտյան և Խորհրդային շրջանի պատմաբաններից ոմանք քննադատում են Խորենացու պատմությունը, թե իբր այն գրվել է շատ ավելի ուշ, քանի որ այդ տարածքներն այդպես են անվանվել նրանից մոտ հարյուր տարի հետո, և ուրեմն, Խորենացու անվան տակ, ըստ նրանց, պետք է գործած լինի մի այլ՝ յոթերորդ դարում ապրած անհայտ անձնավորություն:

Եթե Խորենացին ազգությամբ ոչ թե հայ, այլ այդ գիտնականներից որևէ մեկի ազգակիցը լիներ և գրեր իրենց ազգի պատմությունը, նրանք կուսումնասիրեին և կգտնեին ճշմարտությունը: Սակայն երբ խոսքը վերաբերում է Հայաստանին, հայ ազգին, հապշտապ դատավճիռ են կայացնում: Պատմաբան Ալբերտ Մուշեղյանը հիմնավորում է, որ դա ընդամենը թյու-

---

164 Մհեր Հակոբյան, Հայկազունիներ, Երևան 2012 թ., էջ 27:

165 Մովսես Խորենացի, Պատմություն հայոց, Երևան 1968 թ., էջ 95:

*րիմացության արդյունք է, և ընդգրկուն հետազոտությամբ՝ ներկայացնում բացատրությունը: Խորենացու պատմությանը միջնադարում անդրադարձել են Ուխտանեսը, Վարդան Արևելցին, Մխիթար Անեցին, Մխիթար Այրիվանեցին և Հովհաննես Դրասխանակերտցին: Սակայն բացի Դրասխանակերտցուց՝ ոչ մեկը նրանցից չի հիշատակել այդ չորս Հայքերի մասին. **«Դրասխանակերտցին ոչ միայն հաստատում է Առաջին, Երկրորդ, Երրորդ և Չորրորդ Հայքերի ստեղծումը հայոց նահապետ Արամի ձեռքով՝ նախապատմական շրջանում, այլև որոշում է այդ Հայքերի սահմանները»**[166]:*

*Ա. Մուշեղյանն իր ծավալուն աշխատության մեջ նշում է, որ Պատմահոր բնօրինակում այդ մասին ընդհանրապես ոչինչ գրված չի եղել: Այդպիսի խմբագրական միջամտություն է արել պատմիչ Հովհաննես Ե Դրասխանակերտցի կաթողիկոսը (898-929թթ.): Հետաքրքիր է, որ ինքը՝ Դրասխանակերտցին էլ գրում է, որ լիովին վստահ չէ՝ իր միջամտությունն արդյոք անհրաժեշտ է. **«Բայց պատմիչը իսկույն էլ երկյուղ է հայտնում, թե չլինի՝ իր մեկենասը կամ ընթերցողը իրեն տգիտության մեջ մեղադրի այն բանի համար, որ ինքն ավելի վաղ, իր «Հայոց պատմության» սկզբում, Արամի քաջագործությունների մասին համառոտակի պատմելիս՝ Առաջին, Երկրորդ, Երրորդ և Չորրորդ Հայքերն առանց որևէ հիմքի՝ վերագրել է մեր քաջ Արամին»**[167]: Փաստորեն, Հայքերի մասին տեղեկությունները չեն պատկանում Մովսես Խորենացու գրչին, այլ ընդամենը Հովհաննես Դրասխանակերտցու հավելումներն են:*

Իր ժամանակաշրջանում Արամի գրաված տարածքները համապատասխանում էին Դրասխանակերտցու ժամանակվա՝ արդեն գոյություն ունեցող այդ չորս Հայքերին, ինչից ելնելով՝ նա այդ հավելումներով ուղղակի ցանկացել է ավելի հստակություն մտցնել այդ տարածքների տեղանքի առումով, ինչը, սակայն, հետագայում բավականին մեծ խառնաշփոթի պատճառ է դարձել:

Նինոս

Արամն իր հայրենի երկրի, ժառանգած արժեքների պաշտպանն էր և չէր ձգտում նվաճել Հայաստանի սահմանները խախտած երկրները, այլ իր իշխանության տակ էր առնում միայն դրանց սահմանամերձ տարածքները, որպեսզի Հայաստանն ապահով լինի: Այդ կերպ Ասորեստանը Բարշամի կործանումից հետո կորցրեց իր հյուսիսային տարածքների

---

166 Ա.Վ. Մուշեղյան, Մովսես Խորենացու դարը, Երևան 2007 թ., էջ 56:

167 Ա.Վ. Մուշեղյան, Մովսես Խորենացու դարը, Երևան 2007 թ., էջ 87:

*սոսկ մի մասը: Երբ Արամ արքան գերեվարեց ու սպանեց Բարշամին, որ Սեմի սերնդից էր, Ասորեստանի գահը գրավեց օտար մեկը՝ Քամի սերնդից: Պատմիչները նրան անվանել են Նինոս. նա դեռևս երիտասարդ էր, երբ դարձավ Ասորեստանի թագավոր, սակայն լի էր եռանդով և բռնված՝ ամբողջ աշխարհին տիրանալու մոլուցքով: Բնական է, որ նա առաջնահերթ պետք է ցանկանար Արամից հետ վերցնել ասորական տարածքները: Սակայն իր նախորդի՝ Բարշամի կորուստը նրան զգուշավորության էր մղում և անզորությունից չարությամբ էր լցվում: Նա մի այլ պատճառով էլ ատելություն էր տածում Արամի և, ընդհանրապես, հայ ժողովրդի հանդեպ. **«Նինոսը Նինվեում թագավորելով՝ մտքում պահած ուներ իր նախնիի՝ Բելի վրեժի հիշատակը. զրույցներից լսած լինելով՝ երկար տարիներ մտածում էր վրեժխնդիր լինել՝ դիտելով և սպասելով նպաստավոր ժամանակի, որպեսզի քաջ Հայկի սերունդներից սերմանված ամեն մի արու ժառանգ ոչնչացնի: Բայց կասկածելով, թե այսպիսի ձեռնարկումը կարող է նրա թագավորության կորստյան պատճառ դառնալ, իր չար խորհուրդը թաքցնում էր»**[168]:*



*Պատերազմներում թրծված Հայոց բանակը պատրաստ էր Հայաստանի հանդեպ ոտնձգություններն իսկույն կանխել՝ հակառակորդին կործանարար հարվածներ հասցնելով: Իսկ ասորական զորքերը կորցրել էին մարտական ոգին և շատերն էլ, հավանաբար, հեռացել էին բանակից՝ այլ վայրերում իրենց բախտը փորձելու: Ինչից էլ հետևում է, որ իր զավթողական ծրագրերն իրականացնելու համար Նինոսից քրտնաջան աշխատանք էր պահանջվում. **«Այս երիտասարդ տիրակալը վաղուց արքայական պսակով փայլելու ցանկությունից այրվում էր, որպեսզի վրեժ լուծի իր պապի՝ Բելուսի մահվան համար և հենարան ստեղծի Արամի՝ Հայաստանի տիրակալի տարածքները ներխուժելու համար: Սակայն նրա խելամիտ նախարարները ներկայացրին նրան Արամի ուժերի առավելությունը և ասորեստանցիների անփորձությունը զինվորական գործում: Ջնայած իշխանատենչությունը հազվադեպ է ընդունում օգտակար խորհուրդ, բայց այստեղ այն զիջեց համոզիչ դատողությանը»**[169]:*

«Արամն իր հաղթանակներով ամեն կողմ տարածեց նախնիների տե-

---

168 Մովսես Խորենացի, Պատմություն հայոց, Երևան 1968 թ., էջ 95:

169 Сергей Глинка, Обозрение истории армянского народа, Москва 1832 г., ст. 63-64.

րությունը: Չնայած որ Ասորեստանի արքա Նինոսը շատ էր ցանկանում իր իշխանությանը հպատակեցնել Հայաստանը և իր նախնու՝ Բելի վրեժը լուծել, բայց Արամը շատ վտանգավոր հակառակորդ էր թվում նրան»[170]*:*

Այսպես, Նինոսը, հետագային թողնելով Հայաստանի հանդեպ իր նկրտումները, սկսեց ասպատակել հարևան երկրները, և մեծ հաջողության հասավ: Նա երկար տարիներ մղվող պատերազմների արդյունքում շատ երկրներ հպատակեցրեց: Եվ սկսվեց վաղ Ասորեստանյան կայսրության ձևավորումը:

«Երբ երիտասարդ աշխարհը բաժանվեց ոչ մեծ մարզերի, և երբ նրանց տիրակալները դեռ ապրում էին նահապետական կենցաղով, ջանում էին ոչ թե տարածվել, այլ իրենց մարզերը պահպանել: Իսկ Նինոսը, բռնված իշխանատենչության անհագ ծարավով, իր զենքի ուժով հպատակեցնում էր այդ մարզերը և մեծացնում իր տերության սահմանները»[171]*:*

Դառնալով տարածաշրջանի ամենամեծ երկիրը՝ գրաված տարածքների ընձեռած հնարավորություններով անգամ Նինոսը ոչ միայն չէր համարձակվում իր մտադրությունների իրականացման փորձ անել Հայաստանի հանդեպ, այլև ջանում էր խորամանկությամբ Արամի բարեհաճությունը շահել: Նա թանկարժեք նվերներով դեսպաններ էր ուղարկում հայոց արքայի մոտ, որպեսզի նրա վստահությունը շահի և բանակցությունների միջոցով Հայաստանի հսկողության տակ գտնվող ասորական հյուսիսային տարածքները հետ բերի: ***«Եվ այսպես, զենք չվերցնելով, Նինոսը դեսպաններին արքայական նվերներով ուղարկեց Արամի մոտ: Արամը ոչ միայն մերժեց դեսպաններին, այլև ամրացրեց Ասորեստանին մերձ Հայաստանի սահմանները: Նինոսն իր կողմից երկու տարվա ընթացքում մշտական բարյացակամություն էր ի ցույց դնում: Վերջապես, Արամը հավատալով խաղաղության նրա անկեղծ հակումներին, վերադարձրեց նրան այն տարածքները, որ գրավել էր ասորեստանցիներից»***[172]*:*

Արամը երբեք չի ունեցել կայսրություն ստեղծելու մտադրություն, այնինչ դա նրա համար շատ իրատեսական էր: Նրա հաղթարշավները և առաքինությունները տեսնելով՝ շատ երկրներ կամավոր կհպատակվեին, եթե տեսնեին, որ Արամի կողմից իրենց վտանգ է սպառնում: Սակայն Արամի խաղաղասեր էությունը թույլ չէր տալիս նման ոտնձգություններ հարևան ազգերի նկատմամբ: Լինելով երկնքի ու երկրի ճշմարիտ Աստծուն պաշտող արժանավոր արքա՝ ակնկալիք չուներ նրանցից մեծարվելու, ի տարբերություն կռապաշտների իշխանատենչ արքա Նինոսի, ով չէր կարողանում սանձել նոր երկրներ գրավելու իր մոլուցքը:

Միայն Հայաստանն էր անհաղթահարելի հարևան Նինոսի համար:

---

170 Абаза В. А., История Армении, С. Петербург 1888, ст. 26.

171 Сергей Глинка, Обозрение истории армянского народа, Москва 1832 г., ст. 61.

172 Сергей Глинка, Обозрение истории армянского народа, Москва 1832 г., ст. 63-64.

*եվ շատերին տիրելուց հետո նա իր ձևավորվող կայսրության ապահովության և իր նախահայր Բելի ճակատագրին չարժանանալու համար մշտապես ջանում էր հաճելի երևալ Արամին: Սակայն իր հպարտության գերին լինելով՝ այնպիսի քայլի դիմեց, որ ցույց տար, թե ինքն, ամեն դեպքում, իր ձեռք բերած տարածքների շնորհիվ ավելի մեծ մեկն է, քան՝ Արամը. Նինոսն Արամին հռչակեց Ասիայում երկրորդ տիրակալ՝ իրենից հետո. **«Ինքը՝ Նինոսը, չնայած այրվում էր վրեժխնդրությունից՝ Հայկի կողմից իր պապին սպանելու համար, սակայն տեղյակ լինելով Արամի մեծ սխրանքների մասին՝ ոչ միայն ետ կանգնեց իր մտադրություններից, այլ նույնիսկ ջանում էր նրան ունենալ՝ որպես բարեկամ և դաշնակից: Դրան հասնելու համար նրա մոտ ուղարկեց դեսպանների՝ թանկարժեք քարերով զարդարված պսակով, և հռչակեց նրան Ասիայի երկրորդ տիրակալ»**[173]:*

*Նինոսը, չկարողանալով վրեժխնդիր լինել Արամից և ընդհանրապես հայերից, և որպեսզի հարևանությամբ չունենա իր համար նվաստացուցիչ նման հզոր հակառակորդ, ստիպված որոշեց ամեն գնով նրան բարեկամ դարձնել. **«Տեսնու՞մ եք որքան ողորմած և համեստ է ձևանում Ասորեստանի հպարտ արքա Նինոսը: Իսկ չէ՞ որ մենք նրան կտեսնեինք միանգամայն այլ դերում, եթե նա տիրապետեր բավարար հզորության՝ հայոց արքային պատժելու համար: Այո, երևում է «ուժը ուժին կոտրում է» ասացվածքն այն ժամանակներում էլ էր արդարացնում իրեն»**[174]:*

*Իհարկե, բարեպաշտ ու ազնվազարմ Արամը Նինոսից ո՛չ մեծարվելու, ո՛չ էլ բացատրություն պահանջելու կարիք ուներ, թե ինչու է իրեն վեր դասել, քանզի հեռու էր փառասիրությունից: Նա գիտեր, որ իր նախնիները և հայ ժողովուրդն, ընդհանրապես, այս աշխարհում ընտրված էին երկնքի կողմից՝ մեծագույն առաքելություններ իրականացնելու, ոչ թե՝ ինքնանպատակ ապրելու և աշխարհի փուչ քաղաքական տարուբերումներին մասնակցելու համար. **«Հայերը թվական առումով եղել են ոչ մեծ ժողովուրդ, սակայն ժամանակին Փոքր Ասիայում գրավել են շատ ավելի մեծ տարածք՝ ավելի, քան իրենց ուժերին համապատասխան է, և նույնիսկ՝ ավելի, քան պետք է եղել: Դրա համար էլ երկրի աշխարհագրական ամենաանպաստ վիճակում նրանք ամեն կերպ ջանում էին պահել միայն այն, ինչ ունեին, ոչ թե՝ աննպատակ տարածվեին՝ միայն հանուն փառքի և զավթողական գործընթացի»**[175]:*

Արամը ոչ թե մարդկանցից էր փառք փնտրում, այլ ջանում էր իր երկնային Տիրոջը հաճելի լինել ու իր պարտքն Աստծո և հայրենիքի հանդեպ կատարելով՝ խաղաղությամբ հեռանալ այս աշխարհից և միանալ

---

173 Я. и Д. Арзановы, Начертания истории Царства Армянского, Москва 1827 г., ст. 21.

174 Реваз Джапридзе, Четыре дня в стране Айоса, Тбилиси 1988 г., ст. 110.

175 Магда Нейман, Армяне, Ереван 1990 г., ст. 94.

իր նախնիներին՝ Նոյին, Հայկին և մյուսներին, ինչի համար էլ Տերը նրան արժանացրեց նաև երկրային փառքի, ինչից նա խուսափում էր: Հայոց Արամ թագավորին այսպիսի հակիրճ բնորոշում է տալիս ժամանակաշրջանը վերլուծող մշակութային գործիչ Լևոն Միրիջանյանը. ***«Հզոր և անվանի Արամը դարձավ մեծագույն հեղինակություն նաև օտար ազգերի և ժողովուրդների աչքում»***[176]*:*

Սուրբ գրքում էլ հիշատակումներ կան Արամ անունը կրող անձանց մասին, սակայն նրանք Սեմից են սերված: Իսկ Հաբեթական Արամի և Սեմիտ Արամների անվանումները թեև նույն կերպ են հնչում, սակայն դրանց տարբեր իմաստային մեկնաբանություններ են տրվում: Սուրբգրային Արամ անվան իմաստը մեկնում են՝ որպես «ազնվական», «ողորմած», «հանգիստ» և «մխիթարություն»: Սակայն Հաբեթածին Արամի անվանումն ավելի կապվում է Արմեն անվան մի այլ իմաստի հետ, որի մասին նախկինում ասել ենք, որ նշանակում է «Արարչի այր»: Սուրբ Գրքում Հեսուի (Նավե) անունը նշանակում է «փրկիչ», նմանապես և Հիսուս անվանումը նշանակում է Փրկիչ: Երբեմն Հեսուի անունն էլ թարգմանություններում Հիսուս Նավե է գրվում: Այդպես է նաև Արմեն և Արամ անվանումների դեպքում. ***«Պատմվում է Արամի բազմաթիվ քաջագործությունների ու պատերազմների մասին և ասվում է, որ բռնի կերպով գրավելով շատ տեղեր՝ ընդարձակում է Հայաստան աշխարհի չորս կողմերը: Եվ նրա պայծառափայլ զորության համար մեր շուրջ եղած ազգերը նրա անունով մեզ հարակցաբար Արմանյակք են անվանում»***[177]*:*

Այսպես, Հայկ նահապետի անվամբ մեր երկիրն անվանում են Հայք կամ Հայաստան, իսկ Արամի անվամբ՝ Արմենիա: ***«Արամը՝ Հարմայի որդին, բազմաթիվ քաջության գործեր արեց պատերազմում, ընդարձակեց հայոց աշխարհն իր չորս կողմում: Նրա անվամբ են բոլոր ազգերն անվանում մեր աշխարհը. հույները՝ Արմենիա կոչելով, ասորիները և պարսիկները՝ Արմնիկ»***[178]*:*

---

176 Լևոն Միրիջանյան, Հայկյաններ, Երևան 1988 թ., էջ 38:

177 Հովհաննես կաթողիկոս Դրասխանակերտցի, Հայոց պատմություն, Երևան 1996 թ., էջ 21:

178 Սամուէլի Քահանայի Անեցւոյ, Հաւաքմունք ի գրոց պատմագրայ, Վաղարշապատ, 1893 թ., էջ 43:

Նինոսն՝ ասորական արձանագրություններում

Նինոսն իր հզորության գագաթնակետին հասնելով՝ իրեն կին առավ հին աշխարհում իր վառ կերպարով մեծ հետք թողած Շամիրամին: Սակայն անտիկ շրջանի պատմիչների և հին միջագետքյան արձանագրությունների միջև որոշ անհամապատասխանություններ են ի հայտ եկել նաև այս պարագայում, ինչը խնդիրներ է առաջացրել որոշ ուսումնասիրողների մոտ:

Ըստ որոշ գիտական աղբյուրների՝ Նինոսն ու Շամիրամն ապրել են Արամի ժամանակաշրջանում՝ XIX-XVIII դարերում, սակայն ոմանք էլ այս պատմական զույգին շուրջ տաս դարով մեզ են մոտեցնում՝ նրանց ժամանակաշրջանը դիտարկելով ն.ք. IX դարը:

Բնական է, որ այդ խոր անցյալը լուսաբանելիս միշտ էլ կարող են առաջանալ տարբեր խնդիրներ՝ հատկապես ժամանակագրական առումով, սակայն, ինչպես վերը տեսանք, ոչ միշտ է, որ նման հակասություններն անլուծելի են: Այստեղ էլ խնդիրը փակուղի չի մտել. լաբիրինթից ելք կա: Շամիրամին դեռ կանդրադառնանք. հիմա պարզաբանումներ ներկայացնենք Նինոսի վերաբերյալ:

Ինչպես տեղեկացանք, Նինոսն Ասորեստանի գահին նստեց անմիջապես Բարշամից հետո, բայց, ըստ սեպագիր արձանագրությունների, այդ շրջանում Ասորեստանի գահին նստել է Շամշի-Ադադ I-ը. ***«Հյուսիսային Միջագետքում Շամշի-Ադադի ժամանակ (1813-1781), ծավալվեց և սկսեց հզորանալ համեմատաբար երիտասարդ ասորեստանյան թագավորությունը»***[179]*:*

Այդ հակասությունը պարզաբանելու համար որոշ համեմատականներ տանենք Նինոսի և Շամշի-Ադադի միջև: Ըստ պատմիչների՝ Նինոսն Ասորեստանից ու Սեմի սերնդից չէր, նա օտար էր, ազգությամբ ամորեացի, այսինքն՝ պատկանում էր Քամի սերնդին և բռնությամբ էր գրավել Ասորեստանի գահը:

«Ասուրը, որ երրորդն էր Սեմից հետո, առաջինը կառուցեց Նինվեն: Մինչդեռ Նինոսը Սեմից ու Քամից հետո տասներորդն էր: Նինվեն իսկապես Սեմի բաժինն էր, իսկ Նինոսը, ինչպես ասել են Արիստոնիկոս Քաղդեացին, Եվսեբիոս Կեսարացին, Մովսես Խորենացին, Հուլիանոս Հալիկառնասցին, սերում էր Քամից»[180]*:*

Այս բոլոր պատմիչները միանգամայն վստահ են, որ Նինոսը եղել է

---

179 Кьяра Децци Бардекси, Месопотамия колыбель человечества, Москва 2008, ст 41.

180 Թովմա Արծրունի և Անանուն, Պատմություն Արծրունյաց տան, Երևան 1978, էջ 31:

*Քամի սերնդից և ապրել է ն.Ք. XIX-XVIII դարերում, և ահա ըստ միջագետքյան արձանագրությունների՝ այդ նույն ժամանակաշրջանում Ասորեստանի գահին տիրած Շամշի-Ադադ I-ը նույնպես ծագումով եղել է ամորեացի՝ այսինքն Քամի սերնդից. **«Աշշուրում իշխանությունը բռնագրավեց ամորեացի Շամշիադադը»**[181]:*

*Նինոսը գրավեց բազմաթիվ երկրներ. թեպետ այլազգի էր, սակայն աննախադեպ ընդարձակեց Ասորեստանի տիրապետության սահմանները և իրեն էլ առաջին մեծություն հռչակեց: Այդ ամենը նույնությամբ տեսնում ենք նաև Շամշի-Ադադ I-ի պարագայում. **«Հատկապես ակտիվ արտաքին քաղաքականություն, որտեղ գերիշխում է արևմտյան ուղղությունը, տարվում է Շամշի-Ադադ I-ի (1813-1781)՝ ամորեացի առաջնորդի ժամանակ, ով հաստատվել էր Աշշուրում: Նրա զորքերը գրավում են հյուսիսմիջագետքյան քաղաքները... ենթարկում են իրենց Մարիին, սեմական որոշ ցեղեր, որոնք ապրում էին Եփրատի միջին հոսանքի շրջանում, դաշնակցում են Կերկամիշի հետ, տիրում են սիրիական Կատնո քաղաքին: Աշշուրին է անցնում միջնորդական առևտուրն արևմուտքի հետ... Այսպիսով, XIX-ի վերջում և XVIII-ի սկզբում մ.թ.ա., Ասորեստանը վերածվեց խոշոր առաջավորասիական պետության»**[182]:*

*Այսպիսով, ըստ Խորենացու, Կտեսիասիի և այլոց՝ Նինոսն ապրել է ն.Ք. XIX-XVIII դարում, և ահա ինչպես տեսանք, նույն այդ ժամանակ՝ ն.Ք. XIX-XVIII դարերում, Ասորեստանում թագավորել է Շամշի-Ադադ I-ը: Նաև տեսնում ենք, որ Նինոսի մասին պատմիչներն ասում են՝ նա չի եղել Ասորեստանից, այսինքն՝ Սեմի սերնդից, այլ ամորեացի Քամի սերնդից, այդ նույնն էլ ասում են հնագետները նաև Շամշի-Ադադ I-ի մասին, որ նա նույն այդ ն. Ք. XIX-XVIII դարում, լինելով ամորեացի, այսինքն՝ նույնպես Քամի սերնդից, նստեց Ասորեստանի գահին: **«Էրշում-Արշամ-Բ(Վ)արշամի մահից հետո իշխանությունը բռնազավթում է ամորիացիներից սերող Շամշի-Ադադ I-ը (մ.թ.ա. 1813-1781)»**[183]:*

Համոզված ենք, որ ժամանակագրական, ազգակցական և քաղաքական ընդհանրություններն այդ երկու անձանց միջև չի կարող պատահականության արդյունք լինել: Ակնհայտ է, որ խոսքը նույն մարդու, այսինքն՝ Շամշի-Ադադ I-ի՝ նույն Նինոսի մասին է: Ուրեմն, Նինոսն անկասկած ապրել և գործել է ն. Ք. XIX-XVIII դարերում, ոչ թե ն. Ք. IX դարում:

*Հետաքրքիր է, որ չնայած Հերոդոտը գրում է, որ Նինոսը թագավորել է IX դարում, սակայն միևնույն ժամանակ այն կարծիքին է, որ հենց նա է եղել ասորեստանյան կայսրության հիմնադիրը. **«Հերոդոտը ասորես-***

---

181 В.В. Струев, История древнего востока, Москва 1941 г., ст. 242.

182 История древнего востока, под ред. В.И. Кузищина (изд. третье, переработанное и дополненное), Москва 2005 г., ст. 139–140.

183 Մհեր Հակոբյան, Հայկազունիները, Երևան 2012 թ., էջ 26:

տանյան կայսրության հիմնադիր համարում է Նինոսին»[184]:

Իսկ ըստ պատմիչների՝ Ասորեստանն առաջին անգամ հենց Ն.Ք. XIX-XVIII դարում հզորացավ ու դարձավ կայսրություն, որի գլուխը, ըստ մի կարծիքի, Նինոսն էր, իսկ ըստ մյուսի՝ Շամշի-Ադադ I-ը: Եվ ուրեմն, կամա-ակամա, խոսվում է Ն.Ք. 1813-1781 թվականներն ընկած ժամանակաշրջանի, ոչ թե՝ Ն.Ք. IX դարի մասին:

Բացատրենք նաև, թե ինչո՞ւ է Շամշի-Ադադը, պատմիչների մոտ դարձել Նինոս. ***«Ակնհայտ է, որ տվյալ ժամանակահատվածում գործող Ասորեստանի արքան իրականում ամենևին էլ «Նինոս» անունը չէր կրում, քանզի մի կողմից, ըստ սեպագիր աղբյուրների, նման անունով արքա այդ ժամանակաշրջանում Ասորեստանում չի եղել, իսկ մյուս կողմից էլ՝ պարզ երևում է այս անվան ծագումը Նինվե քաղաքի անունից է: Այսինքն, «Նինոս»-ը ոչ թե հատուկ անուն է, այլ դա, պատկերավոր ասած, Ասորեստանի մայրաքաղաք Նինվեում իշխող Ասորեստանի հերթական արքան է, և դա նրա պատվանունն է»***[185]:

Աշուրի կամ Ասուրի կառուցած Նինվեն աչքի ընկնող քաղաք չէր, և միայն Նինոսը այն մեծացրեց և դարձրեց Ասորեստանի մայրաքաղաք. ***«Ասում են, թե նա (Նինոսը)... վերաշինեց արքունի առաջին քաղաք Նինվեն, որը կառուցել էր Ասուրը»***[186]:

Առաջինն այդ պատվանունը կրող Նինոսից հետո այն արդեն նրա Նինվաս որդին է կրել, որի իրական անունը Ջամեսես[187] *էր: Հետագայում, երբ Աշշուրը դարձավ մայրաքաղաք, Ասորեստանի տիրակալներն արդեն այդ քաղաքի անվամբ սկսեցին իրենց ներկայացնել. Ինչպես օրինակ՝ Աշշուրնասիրապալ, Աշշուրբանապալ և այլն: Այսինքն, Ասորեստանում ընդունված էր մայրաքաղաքի անվամբ պատվանուն ձևավորվելը:*

Այն, որ Շամշի-Ադադը հենց Նինոսն է, վկայում են նաև այն տիտղոսները, որ ինքն է իրեն շնորհել. ***«Շամշի-Ադադ I-ն իրեն վերագրեց «բազմաց թագավոր» տիտղոսը»***[188]:

Եվ նույնանման տիտղոսով մեծարել է իրեն նաև Նինոսը. ***«Նա (Նինոսը) Բելի օրինակով, անձնասեր ամբարտավանությամբ է՛լ ավելի փքվեց, իրեն համարեց քաջերից ու թագավորներից առաջինը»***[189]:

---

184 Авдиев В. И. История Древнего Востока, Ленинград 1953 г., ст. 23.

185 Մհեր Հակոբյան, Հայկազունիներ, Երևան 2012 թ., էջ 26:

186 Թովմա Արծրունի և Անանուն, Պատմություն Արծրունյաց տան, Երևան 1978, էջ 48:

187 Մովսես Խորենացի, Պատմություն Հայոց, Երևան 1968 թ., էջ 103–104:

188 История древнего востока, под ред. В.И. Кузищина (изд. третье, переработанное и дополненное), Москва 2005 г., ст. 139–140.

189 Թովմա Արծրունի և Անանուն, Պատմություն Արծրունյաց տան, Երևան 1978, էջ 48:

Արամ Մեծի վախճանը

«Ահա այսպիսի մեծագործություններ կատարեց Արամը, որին պատմիչները կոչում են Հայկյան Արամ՝ դրանով ընդգծելով նրա և դյուցազուն Հայկի հարազատությունը»[190]:

Նինոսն, իր զավթողական քաղաքականությամբ Ասորեստանը դարձնելով մեծ կայսրություն, միայն Հայաստանին և վերջինի տիրապետության տակ եղող տարածքներին չկարողացավ դիպչել: Նա իրեն հռչակեց ամբողջ ասիական տարածքների տեր, իսկ Արամին՝ իրենից հետո երկրորդը, քանի որ Հայաստանը՝ իրեն պատկանող երկրներով, այնքան ընդարձակ չէր, որքան՝ Ասորեստանը:

Այստեղ տեսնում ենք անմիջական հարևանությամբ երկու տարբեր կայսրություններ: Առաջինը զավթողական մեծ պատերազմների միջոցով հասավ դրան, մյուսը՝ զուտ իր Հայրենիքի սահմանները թշնամական ներխուժումներից ապահովելու համար ընդարձակեց Հայոց սահմանամերձ շրջանները հարևան ռազմատենչ երկրների տարածքների հաշվին:

«Արդյունքում՝ Հայոց Պատմահոր հայտնած տեղեկությունները համադրման մեթոդի օգնությամբ ուսումնասիրելիս՝ հանկարծ պարզ է դառնում, որ, ի դեմս «Խորենացու» կամ Հայկազունիների Արամի, մենք գործ ունենք մի կատարյալ աշխարհակալ արքայի, Հայոց պատմության ընթացքում կայսրություն հիմնած մի տիրակալի հետ, որի գործունեության լիակատար պատկերը բացահայտվում է սեպագիր և գրավոր-մատենագիր աղբյուրների հայտնած տեղեկությունների համալիր վերլուծությունից»[191]:

Արամը երկար տարիներ տիրակալեց իր երկրում՝ բարեպաշտությամբ և հայրենասիրությամբ արժանանալով ոչ միայն՝ հայրենակիցների, այլև օտարների սիրուն ու մեծարանքին, անջնջելի հետք թողնելով պատմության մեջ: ***«Արամը բնավորությամբ ավելի նվաճելու, քան նվաճվելու համար էր ստեղծված: Նա ոչ միայն կտրիճ էր, անվախ և կռվող, այլև իր ազգի, նախնիների և երկրի վրա մեծ և հաստատուն նախանձախնդրություն ու սեր ունեցող է եղել, որով և պատրաստ՝ ամենայն գործի և ջանքի՝ Հայոց իրավունքը և որդիների ժառանգությունը ապահովելու համար:***

Այս բանը համառոտ, սակայն ազդեցիկ և պանծալի կերպով բացատրում է մեր պատմության նախապատմիչը (Մար-Աբասը). «Սա մի հայրենասեր և աշխատասեր այր էր, լավ էր համարում մեռնել հայրենիքի համար, քան տեսնել օտարների կողմից հայրենի սահմանները խախտելը և

---

190 Լևոն Միրիջանյան, Հայկյաններ, Երևան 1988 թ., էջ 37:

191 Միհեր Հակոբյան, Հայկազունիներ, Երևան 2012 թ., էջ 28–27:



արյունակից հարազատներին տիրե-լը»... հին պատմիչները և երգիչներն այս ցանկալի և աշխարհածանոթ այրին մի այլ, ստույգ, հազվագյուտ «Հայրենասեր» անունն են ընծայել, և նա առաքինությամբ արժանապես ժառանգել է դա, նմանապես և մյուս՝ «Աշխատասեր» անուն էլ: Առանց աշխատասիրության ընդունայն և սուտ է հայրենասիրությունը. գուցե հայրենյաց բարիքը և վայելքը սիրի, բայց բարերարել հայրենիքը և վա-յելել տալ հայրենակիցներին՝ սա է բուն հայրենասիրությունը, որն անկարելի է հաջողել՝ առանց շատ աշ-խատության»[192]:

*Արամի տիրապետության շրջանում ո՛չ Ասորեստանը, ո՛չ էլ որևէ այլ երկիր չհամարձակվեց Հայաստանի հանդեպ ոտնձգություն թույլ տալ, քանզի, չնայած խաղաղ պայմաններին, բանակը միշտ պատրաստ վիճա-կում էր: Եվ այդ խաղաղության պայմաններում երկրի տնտեսությունը, որ այլ երկրների համեմատ շատ առավելություններ ու մենաշնորհներ ուներ, մեծ բարգավաճում ապրեց տարբեր ոլորտներում (հատկապես՝ մետաղագործության մեջ): Պետք է հատկապես նշել, որ Աստվածպաշ-տությունն Արամ արքայի ժամանակ բարձունքի վրա էր. այն չէր, ինչ նրա հոր՝ Հարմայի ժամանակ: Արամը, նմանվելով իր նախահայր բարեպաշտ Հայկ նահապետին, իր օրինակով ժողովրդին մղում էր մերժել այլ ազգերի կուռքերին և հավատարիմ մնալ նախնիների Տեր Աստծուն՝ հետամուտ լինելով Սուրբ պատվիրաններին, որոնք պահպանվել էին միայն Հայոց աշխարհում. **«Կարող եմ առանց կողմնակալության ասել թե՛ ստույգ, թե՛ ստույգագույն, որ պատմության մեջ եղող հնագույն, սիրելիագույն և պանծալի կերպար է Արամը, որը Հայկի նման շատ հիշատակություններ է թողել աշխարհի մեջ, որոնց մոռացության պատճառը տալիս է մեր պատմահանը (Մարիբասը). մեկն՝ այն ժամանակ պատմություն գրելու սովորություն չլինելն էր, մյուսն էլ՝ Նինոսի նախանձը, որ ջնջում էր իրե-նից առաջ եղողների հիշատակը»**[193]:*

*Հասնելով իր կյանքի մայրամուտին՝ Արամը Հայոց գահը հանձնեց իր որդուն՝ Արային. **«Իր բազմաթիվ հռչակավոր հաղթանակներն Արամը***

---

[192] Ղեւոնդ Ալիշան, Հայաստան յառաջ քան զլինելն Հայաստան, Վենետիկ, Սուրբ Ղազար, 1904 թ., էջ 173:

[193] Ղեւոնդ Ալիշան, Հայաստան յառաջ քան զլինելն Հայաստան, Վենետիկ, Սուրբ Ղազար, 1904 թ., էջ 184:

ծառայեցրեց իր թագավորության բարգավաճմանը, ինչն իր ժամանակ ամենածաղկուն վիճակի էր հասել: Հայոց տիրակալների մեջ ամենափառավոր այս արքան իրեն ժառանգորդ թողեց իր որդուն՝ Արային[194]*: Արան իր բարեպաշտ և առաքինի հորից ժառանգել էր հոգու արիություն և գեղեցկություն, ինչն արտացոլվել էր նաև նրա արտաքին տվյալների մեջ, ինչի համար անվանվեց Արա Գեղեցիկ:*

Արա Գեղեցիկ

«Հայոց գահին, դեռ Արամի կենդանության ժամանակ, նստեց աստվածային գեղեցկությամբ և հերոսական ոգով օժտված նրա որդին՝ Արա-Գեղեցիկը»[195]*:*



Արամից հետո Հայաստանի գահին նստելով Արան երկիրը ժառանգեց բարգավաճ վիճակում: Նա՝ որպես իր մեծանուն հոր արժանի ժառանգ, նույն ուղին բռնեց: Արան ամենայն զգուշությամբ հոգ տարավ, որպեսզի հոգևոր կյանքը, տնտեսությունը և ռազմական ոլորտը նույն բարձր մակարդակի վրա մնան: Եվ ինչպես նախորդ նահապետները, նա էլ երկրում անվանափոխություններ արեց. ***«Հոգալով աշխարհի շենության մասին՝ Արան իր բնակության վայրերն իր անունով կոչում է Այրարատ»***[196]*:*

Ինչպես իր հայրը՝ Արամը, Արան էլ հայոց պատմության մեջ հիշատակվում է՝ որպես յուրահատուկ անձնավորություն, ով հատկապես առանձնանում էր զարմանալի գեղեցկությամբ, ինչի համար էլ հազարամյակների մեջ նրանից անբաժան մնաց Արա Գեղեցիկ պատվանունն:

---

194 Краткое историческое описание царства Арменскаго, Яковом Шамировым, Санктпетербургъ 1786 г., ст. 15.

195 Реваз Джапридзе, Четыре дня в стране Айоса, Тбилиси 1988 г., ст. 110.

196 Հովհաննես կաթողիկոս Դրասխանակերտցի, Հայոց պատմություն, Երևան 1996 թ., էջ 21:

*Արամի և Արայի օրոք՝ այդ վաղնջական ժամանակներում, Հայաստանը ճանաչված երկիր էր՝ իր բազմաթիվ առանձնաշնորհներով: Եվ առավել ճանաչելի դարձավ Արարատյան Արայի գահակալությամբ, քանզի նրա հոգևոր ու արտաքին գեղեցկության համբավը տարածվեց աշխարհով մեկ. **«Արամի ժառանգորդը դարձավ իր որդին՝ Արան, ով առանձնանում էր անսովոր գեղեցկությամբ և հոգևոր գերազանց որակներով: Արամը ոչ միայն հիշվեց Հայաստանի անվամբ (Արմենիա), այլև իր կյանքն արտացոլվեց իր որդու գործերում»**[197]:*

*Արան իրեն կողակից և Հայոց թագուհի ընտրեց հայոց իշխանական տներից մի օրիորդի՝ Նվարդին, ով օժտված էր Արային հարիր եզակի գեղեցկությամբ և առաքինությամբ, լիովին արժանի՝ Հայոց թագուհի տիտղոսին: **«Արան իր սրտին ու անձին համապատասխան՝ վայելուչ կին ուներ՝ Նվարդին, որը... մեր պատմության մեջ առաջին և միայն մեկ անգամ անվանական հիշված հայուհին է»**[198]:*

*Հայաստանը հզոր երկիր էր, որի հետ հաշվի էին նստում ոչ միայն շրջակա թագավորությունները, այլև՝ այդ ժամանակներում իր կայսերական բարձունքին հասած Ասորեստանը, որ Հայաստանը նվաճելու բազմաթիվ պատճառներ և բաղձանք ուներ: Նինոսը հույս ուներ, որ անհաղթ Արամից հետո նրա որդիներից այնպիսի մեկը կնստի Հայոց գահին, որի տիրապետության ժամանակ նա կկարողանա, ի վերջո, իր նախնի Բելի վրեժը լուծել և, գրավելով Հայաստանը՝ դառնալ միահեծան աշխարհակալ: Սակայն, նրա նկրտումներն ի չիք դարձան, երբ Արամը Հայոց գահի ժառանգորդ ընտրեց իր ամենասիրելի, կրտսեր որդուն՝ Արային: Հորը փոխարինեց միանգամայն արժանավոր որդին. **«Արամի՝ վերը նշված Արա արքայազնը, նրա որդիների միջի կրտսերն էր, և... Արամը նրան թողեց իր նստավայր Արմավիրը»**[199]: Նինոսին միայն մնում էր՝ նրան շնորհավորել և մաղթել բարիդրացիական հարաբերություններ երկու երկրների միջև: Եվ որպես իր մաղթանքների հաստատում՝ ինչպես Արամին, այդպես և Արային պատվեց արքայավայել ընծաներով:*

Եվ այսպես, Հայաստան երկիրը խաղաղությամբ կառավարում էր Արա Գեղեցիկը՝ իր բարեպաշտ տիկնոջ՝ Նվարդ թագուհու հետ: Իսկ Ասորեստանում զարգացող դեպքերն ահազանգում էին մեծ ցնցումներ: Քամից սերող Նինոսն՝ իր փառամոլ ու ցանկասեր բնույթի համեմատ, իր բազմաթիվ կանանցից և հարճերից զատ՝ կնության առավ Սեմից սերող մի կնոջ՝ Շամիրամին: Ինչպիսին էր Նինոսը՝ իշխանատենչ, քինախնդիր և հեշտասեր. պարզվեց, որ նրանից վատթարն էր Շամիրամը: Եվ երկուսն

---

197 Сергей Глинка, Обозрение истории армянского народа, Москва 1832 г., ст. 65.

198 Ղեւոնդ Ալիշան, Հայաստան յառաջ քան զլինելն Հայաստան, Վենետիկ, Սուրբ Ղազար, 1904 թ., էջ 186:

199 Նույն տեղում:

էլ ընդգծված բացասական մեծ հետք թողեցին պատմության մեջ: Հատկապես Շամիրամի մասին բազմաթիվ հիշատակություններ են մնացել, որոնցից շատերն ավելի առասպելական պատմություններ են, թեպետ կասկած չկա, որ նա իրական կերպար է եղել:

Ըստ որոշ տեղեկությունների՝ Շամիրամը տիրապետել է դիվական հնարքների ու հմայությունների: Ասում են, թե նա դյութել է Նինոսին, որն էլ խոստացել է կատարել նրա բոլոր ցանկությունները: Շամիրամը խնդրել է, որ Նինոսը թույլ տա իրեն կարճ ժամանակով նստել Ասորեստանի գահին և ամբողջ իշխանությունն իր ձեռքն առնել: Նինոսը՝ դյութանքի ազդեցության տակ, թույլ է տվել, իսկ Շամիրամի առաջին գործը եղել է այն, որ կարգադրել է Նինոսին մահապատժի ենթարկել: Շամիրամը տեսնում էր, որ իր նախնիների՝ Սեմի սերունդներին պատկանող Ասորեստանի գահը բռնագրավել էր Քամից սերող Նինոսը, և նման կերպ, ըստ իր պատկերացումների, իբրև թե վերականգնել է արդարությունը:

*Պատմական այս պահն այլ կերպ է ներկայացնում Մովսես Խորենացին. ըստ նրա՝ Շամիրամը խարդավանքներով այնքան կողմնակիցներ է հավաքում իր շուրջը, որ իրավիճակը սկսում է սպառնալից լինել Նինոսի կյանքի համար, և դա հասկանալով՝ վերջինը փախուստով ազատվում է մահվանից. **«Նինոսը, ոչ թե, ինչպես ասվում է, մեռավ ու թաղվեց նրա ձեռքով Նինվեում՝ արքունիքում, այլ գիտենալով նրա ախտասեր և չարասեր վարքը՝ թողեց թագավորությունը և փախավ-գնաց Կրետե»**[200]:*

*Ըստ մի այլ վարկածի՝ Նինոսը մահամերձ վիճակում կամավոր է գահը հանձնում Շամիրամին. **«Որովհետև նրա մահանալու ժամանակ որդիները մանկահասակ էին, իշխանությունը թողեց իր կնոջը՝ Շամիրամին, որն ավելի մեծ քաջությամբ տիրեց բոլորին, ում իշխել էր Նինոսը»**[201]:*

*Շամիրամը մինչ Նինոսի գահընկեց լինելը, բնականաբար, լսել էր Արայի մասին և դժգոհ էր, որ լինելով Ասորեստանի թագուհի և ունենալով ամեն ինչ՝ կինն էր Նինոսի պես բիրտ և տարեց մեկի. այնինչ Նվարդը՝ հայոց թագուհին, բարեբախտություն ուներ լինելու փառակիցը Արայի պես երիտասարդ, աննկարագրելի գեղեցկության, իմաստության և քաջության տեր արքայի: Շամիրամը տենչում էր նրան, սակայն Նինոսի ներկայությունը մեծ խոչընդոտ էր, որպեսզի ցանկասեր թագուհին սկսեր ինչ-որ բաներ ձեռնարկեր այդ ուղղությամբ. **«Երիտասարդ հայոց արքայի հեքիաթային գեղեցկության և հազվագյուտ համարձակության լուրը հասավ Նինվե: Անառակ Շամիրամը բորբոքվեց նրա հանդեպ՝ աստվածանարգ կրքով»**[202]:*

Նինոսից ձերբազատվելով, ամբողջ իշխանությունն իր ձեռքն առնե-

---

200 Մովսես Խորենացի, Պատմություն Հայոց, Երևան 1968 թ., էջ 102:

201 Թովմա Արծրունի և Անանուն, Պատմություն Արծրունյաց տան, Երևան 1978, էջ 49:

202 Реваз Джапридзе, Четыре дня в стране Айоса, Тбилиси 1988 г., ст. 110.

*լով և Արայի պես մեկին չգտնելով՝ նա իր կրքերին լիովին ազատություն տվեց. **«Արամի մահից 2 տարի հետո թագավորեց Ասորեստանի այս հրեշավոր կինը, որը, ասում են, բնիկ ասորի, Սեմի ցեղից էր... Ամուսնու (Նինոսի) մահից կամ փախուստից հետո, որի ապօրինի կինն էր եղել, ասում են՝ չուզեց ուրիշ օրինավոր ամուսին ունենալ, այլ իր անթիվ հպատակների և զորապետերի միջից անառակության ընկեր էր ընտրում, հետո թողնում էր, նույնիսկ սպանել էր տալիս և նրանց մարմնի վրա մեծ հողաբլուր էր կանգնեցնում... Ասում են՝ Շամիրամը կառուցել տվեց ձեռակերտ շատ բլուրներ, որ դեռ երևում են Միջագետքի և Ասորիքի կողմերում»**[203]:*

*Սակայն իր մոլեռանդ վավաշոտությանը նման կերպով հագուրդ տալն էլ ի զորու չեղավ հանգցնել Հայոց թագավորի հանդեպ բորբոքված իր տոփանքը: Իսկ բարեպաշտ, աստվածավախ Արային նողկանք էր պատճառում անգամ լսելը Շամիրամի մասին, որ արդեն ո՛չ Աստծուց էր վախենում, ո՛չ մարդկանցից ամաչում, այլ բացեիբաց՝ պղծաբարո կյանքով էր ապրում. **«Իր անկարգ բաղձանքներից մեր ազգի նահապետի վրա (որը բնական շնորհներով, վայելուչ կերպարանքով զարդարված լինելու համար Գեղեցիկ մականունն էր ստացել և հոգու ազնվությամբ ատում էր մոլի տիկնոջը) մեծ կրակ եկավ»**[204]:*

*Եվ ահա Շամիրամը, ամոթը և պատկառանքը կորցրած, պատգամավորներ է ուղարկում Արայի մոտ՝ առաջարկ անելով նրան. **«Բայց այն վավաշոտ և անառակ Շամիրամը... իր ախտը համարձակ պատվելով՝ Արա Գեղեցիկի մոտ պատգամավորներ է ուղարկում՝ ընծաներով ու նվերներով և շատ աղաչանքներով ու պարգևների խոստումով խնդրում է գալ Նինվե՝ իր մոտ կամ իրեն կին առնել ու թագավորել այն ամենի վրա, որոնց տիրում էր Նինոսը, և կամ նրա ցանկությունը կատարել ու մեծ նվերներով խաղաղությամբ իր տեղը դառնալ»**[205]:*

***«Ասորիների Նինոս արքայի կին Շամիրամը, որ լսեց նրա գեղեցկության մասին, կամեցավ նրա հետ բարեկամություն հաստատել, որպեսզի Արան կատարի իր պոռնկական ցանկությունը. համաձայն համբավի՝ սաստիկ ցանկանում էր նրան և նրա գեղեցկությունը, քանի որ այն ժամանակ ամենևին չկար նման ճոխապատկեր որևէ տղամարդ»**[206]:*

Շամիրամը, ոչ միայն ամենատարբեր առաջարկներով ցանկանում էր իր կողմը գրավել Արային, այլև դիմում էր կախարդության՝ հուսալով չար ուժերի միջոցով հայոց արքայի մոտ կիրք բորբոքել իր հանդեպ, ինչը նման կերպ հաջողել էր իր բազմաթիվ հոմանիների նկատմամբ:

---

203 Ղեւոնդ Ալիշան, Հայաստան յառաջ քան զլինելն Հայաստան, Վենետիկ, Սուրբ Ղազար, 1904 թ., էջ 185-186:

204 Ղեւոնդ Ալիշան, Հայաստան յառաջ քան զլինելն Հայաստան, Վենետիկ, Սուրբ Ղազար, 1904 թ., էջ 186:

205 Մովսես Խորենացի, Պատմություն Հայոց, Երևան 1968 թ., էջ 97:

206 Սեբեոս, Պատմություն, Երևան 2005 թ., էջ 13:

*Սակայն նա չգիտեր, որ դիվական դյութանքներն ազդեցություն չունեն, անզոր են Տիրոջը հուսացողներին գերելու համար: Իսկ Արան, լինելով իր բարեպաշտ նախնիների արժանի ժառանգորդը, առավել ապավինում էր Արարչի շնորհին. **«Մեր պատմիչի ասածից իմանում ենք, որ Շամիրամը Նինոսի կենդանության ժամանակ լսել էր Արայի գեղեցկության մասին և վաղուց էր փափագում նրան: Սակայն առաջին տարիներին ծածուկ կախարդությամբ փորձեց հրապուրել նրան»**[207]:*

Հայոց բարեպաշտ արքան՝ Արան, բնականաբար, ոչ միայն հետ էր ուղարկում Շամիրամի պատգամավորներին, այլև խիստ խոսքերով պախարակում էր նրան՝ ծանր վիրավորանք համարելով նման աղտեղի առաջարկներով դիմելն այն երկրի արքային, որտեղ սուրբ Լեռան գագաթին գտնվում էր մեղավորների հանդեպ Աստծո բարկության և արդարների փրկության խորհրդանիշը՝ Նոյան տապանը:

*Հայոց արքայի առաքինության և վեհության մասին հիշատակել են նաև օտարները տարբեր դարերում: Նրանցից ազգությամբ վրացի պատմաբան Ռևազ Ջափարիձեն գրում է. **«Արա-Գեղեցիկը շատ սառնասրտորեն ընդունեց Նինվեի արքունի դեսպաններին, և կրքով տարված այդ անամոթ կնոջն ուղարկեց արհամարհանքով լի պատասխան. «Ինձ նողկանք է պատճառում քո կենդանական տուփանքը և անսանձ այլասերվածությունը, Շամիրամ, ես երբեք չեմ դառնա նման կեղտոտ գործերի մասնակիցը, թեկուզ ամբողջ երկնակամարը փուլ գա ինձ վրա: Իմ կողքին ինձ հավասար իմ սիրելի կինն է՝ Հայոց թագուհին: Ես ավելի նախընտրում եմ մահը, քան նրան դավաճանելը և պղծության հորձանուտի մեջ ներքաշվելը»**[208]:*

*Եվ իսկապես, մոլի Շամիրամն այնքան էր ամբարտավանացել, որ նույնիսկ հաշվի չէր առնում հայոց թագուհու գոյությունը և Արայի վերաբերմունքն ու պատասխանատվությունն իր սիրելի կողակցի հանդեպ: Ղևոնդ Ալիշանը կտրուկ հակադրում է Նվարդ թագուհու և Շամիրամի կերպարները. **«Ակնհայտ է, որ այսպիսի սիրելի, պարկեշտ մի տիկնոջ ամուսնու մոտ որչափ ավելի զզվելի ու զայրալի կլինեին այնպիսի անառակ, անամոթ մի կնոջ հրապույրները և հրավերքները, ինչպիսին էր շվայտ և թանձրամարմին Շամիրամը»**[209]:*

Ինչպես արդեն բազմիցս ասվեց, ի տարբերություն մյուս բոլոր երկրների, որոնք կռապաշտության և բազմաստվածության հետևորդներ էին և կենցաղավարում էին իրենց դիվական ուսմունքների համաձայն (ինչի ցայտուն օրինակն էր Շամիրամը)՝ Հայաստանում՝ Արարատյան սուրբ

---

207 Ղեւոնդ Ալիշան, Հայաստան յառաջ քան զլինելն Հայաստան, Վենետիկ, Սուրբ Ղազար, 1904 թ., էջ 186:

208 Реваз Джапридзе, Четыре дня в стране Айоса, Тбилиси 1988 г., ст. 111.

209 Ղեւոնդ Ալիշան, Հայաստան յառաջ քան զլինելն Հայաստան, Վենետիկ, Սուրբ Ղազար, 1904 թ., էջ 186:

երկրում, հետևում էին Նոյից ստացած նահապետական պատվիրաններին. և չէր կարող ընդհանուր բան լինել Ճշմարիտ Աստծուն դավանող հայերի և այդ օտար կռապաշտ ժողովուրդների միջև:

«Անհավատներին լծակից մի՛ եղեք, որովհետև ի՞նչ կապ ունի արդարությունն անօրինության հետ, և կամ ի՞նչ հարաբերություն՝ լույսի և խավարի միջև»[210]:

Ուստի, այդպես և Արա՛ն ոչ մի նման կապի մասին չէր կամենում լսել. «Արա Գեղեցիկի վրա հյուսված զրույցը, ինչպես բոլոր ազգերի ավանդությունները, անտարակույս, իր պատմությունն ունի, որ այսօր մեզ համար մութ է, բայց և այնպես գեղեցիկ կերպով փայլեցնում է Հայոց նախնական կյանքի բարոյական կողմերից մեկը: Արայի զգաստությունը, որով նա անդրդվելի մնաց Ասորեստանի թագուհու բոլոր հրապույրների առաջ, ցույց է տալիս հին հայոց ընտանեկան կյանքի մաքրությունը. առաքինություն, որ նույնիսկ օտարների վկայությամբ՝ մեր ազգի հատկանիշներից մեկն է համարվել»[211]:

*Սակայն Շամիրամը ոչ մի կերպ չէր ցանկանում հետ կանգնել իր մտադրություններից. նույնիսկ պատրաստ էր պատերազմ հայտարարել՝ վտանգելով թե՛ իր երկրի և թե՛ հայոց աշխարհի գոյությունը: Նրան բնավ չէր հետաքրքրում, թե քանի մարդ կզոհվեր այդ պատերազմի ընթացքում, քանի երեխա որբ կմնար, քանի մայր կողբար կորցրած զավակներին... Նա կարևորում էր միայն իր անարգ կրքերին հագուրդ տալը. **«Աշխարհիկ հաճույքներին տրված նենգ, ուժեղ, հարուստ, տրամադրության տակ մեծաթիվ զորք ունեցող կինը մտածեց ամեն գնով տիրանալ Արա Գեղեցիկին»**[212]:*



Արդեն չկար իր ցանկության իրականացման խոչընդոտը՝ Նինոսը, բայց կար մի պատճառ, որը թույլ չէր տալիս Շամիրամին պատերազմական գործողությունների դիմել: Դա այն նույն պատճառն էր, որը նրա ամուսնուն՝ Նինոսին թույլ չտվեց պատերազմ սկսել Հայաստանի դեմ: Դա հայոց հզոր և մարտունակ բանակի առկայությունն էր. զորքը պատրաստ էր իր խիզախ և զորեղ արքայի հրամանով քաջաբար մարտի մեջ մտնել:

Այդ ամենից ելնելով՝ Շամիրամը

---

210 Բ Կորն. 6:14:

211 Պալասանեան Ս., Պատմութիւն Հայոց, սկզբից միչեւ մեր օրերը, Թիֆլիս 1890 թ., էջ 25:

212 Реваз Джапридзе, Четыре дня в стране Айоса, Тбилиси 1988 г., ст. 110.

ստիպված եղավ միաժամանակ հետ կանգնել իր մտադրություններն իրականացնելուց, սակայն իր սրտի մեջ մնաց Արայի հանդեպ բորբոքուն կիրքը: Եվ նա սկսեց իր բարկությունը թափել նրանց վրա, ում վրա ուժը պատում էր. ***«Շամիրամն արշավեց մինչև Եթովպիա և Լիբիայում այցելեց Ամոնի տաճարը»***[213]*:*

Այդ կողմերն ավերի ու կողոպուտի մատնելով՝ Շամիրամը շուռ է գալիս դեպի արևելք և ասպատակություն ձեռնարկում Հնդկաստանի դեմ, սակայն հաջողության չի հասնում: Հեռանալով Հնդկաստանից, նա զորքի գլուխն անցած, հետդարձի ճանապարհին տարբեր երկրներ ասպատակելով՝ վերադառնում է Նինվե. ***«Շամիրամը գնաց Բակտրիա, իսկ այնտեղից եկավ Բաբելոն և ապա ետ դարձավ Նինվե և այնտեղ մնաց»***[214]*:*

Այդ ընթացքում Հայոց Լեռնաշխարհում կյանքը խաղաղ էր անցնում. Արան արդեն թագաժառանգ որդի էր ունեցել, որին անվանել էր Կարդոս: Արան գիտեր, որ Շամիրամը մարտարշավների է ելել, և էլ չէր անհանգստանում՝ համարելով, որ այդ երկարատև արշավներից հետո նա արդեն մոռացած կլինի իր մասին:

Սակայն Շամիրամի մեջ դեռ չէր հանգել կիրքն Արայի հանդեպ, և վերադառնալով՝ որոշում է նոր գայթակղիչ առաջարկ չանել և հերթական անգամ չնսեմացնել իր հպարտ անձը՝ նոր մերժումներ ստանալով Արայից: Իր նպատակին հասնելու համար Շամիրամն, ի վերջո, որոշում է դիմել ռազմական միջոցների՝ Արային ուժով տիրելու համար: Սա իր ամբողջ կայսրության սահմաններում հայտարարում է զորահավաք և, ծածկելով արշավի բուն նպատակը՝ հայտարարում է, որ դա արվում է անհնազանդ Հայաստանին հպատակեցնելու համար, որն իբրև թե եղել է Նինոսի վերջին ցանկությունը: Եվ մինչ կայսրության հպատակ երկրների զորքերի գալը, Շամիրամն Ասորեստանի մեծաթիվ զորքով հասնում է Հայաստանի հարավային սահմանը՝ հուսալով անակնկալ հարձակմամբ առավելության հասնել հայոց բանակի նկատմամբ. ***«Շամիրամն ազատ և հարմար ժամանակ է գտնում, որ իբր Հայաստանն ամբողջովին նվաճելու միջոցով Նինոսի աշխարհակալությունը գագաթնակետին հասցնի, և վերցնում է իր զորքերի բազմությունն ու փութում է հասնել Հայոց երկիր՝ Արային: Բայց իր նպատակը ոչ այնքան նրան սպանելն էր, որքան՝ նվաճելը կամ բռնելը, որպեսզի իր ցանկական կամքը կատարի, քանզի ... շամբշությամբ վառվում էր»***[215]*:*

---

213 Միքայել Չամչյանց, Պատմություն Հայոց, Երևան 1985 թ., էջ 77:

214 Նույն տեղում:

215 Ղեւոնդ Ալիշան, Հայաստան յառաջ քան զլինելն Հայաստան, Վենետիկ, Սուրբ Ղազար, 1904 թ., էջ 186–187:

Պատերազմը

«Այս աշխարհակալ թագուհին իր ամուսնու նվաճած երկրների վրա ավելացրեց... և ուրիշ երկներ. մնացել էր Հայաստանը՝ այս գեղեցիկ երկիրը»[216]։

*Առանց պատերազմ հայտարարելու՝ Շամիրամը, կայսրության հսկայական զորքով անցնելով Հայոց հարավային սահմաններից, հանկարծակիի է բերում Արային։ Իսկ Արան այդ անակնկալ հարձակման պատճառով չի հասցնում համապատասխան պատրաստություններ տեսնել. **«Զսպասելով նման ահեղ հարձակման՝ Արան չկանչեց այլ վայրերում գտնվող զորագնդերին»[217]։***

*Այս պատերազմի մասին ավանդություններ են պահպանվել Հայաստանի երկու տարբեր վայրերում, ինչն էլ հիմք է ուսումնասիրողների համար՝ նշելու, որ պատերազմը բավականին երկար է տևել։ Երբ Արան լսում է, որ Շամիրամն՝ իր ահռելի բանակն առած, շտապում է դեպի Արարատյան դաշտավայր, նրան ընդառաջ է ուղարկում տարածքում եղած փոքրաթիվ զորքը, մինչև որ երկրի տարբեր վայրերից հավաքվեին մնացած ուժերը։ Հայկական ուժերը դուրս են գալիս ասորեստանյան բանակին դեմ-հանդիման և բախվում են նրա հետ՝ Վանի մոտակայքում։ **«Անհավանական է, որ Արան Շամիրամին թողներ ոտնակոխ անել իր նստավայրի սահմաններն՝ առանց նրա զորքի դեմ ելնելու։ Մեր գրավոր և բանավոր ավանդությունների մեջ երկու տեղանքում է հիշվում Արայի և Շամիրամի պատերազմը. մեկն Արարատյան գավառում, մյուսը ծայր հարավ-արևելքում՝ Տոսպ (Վան) գավառի մեջ՝ ոչ շատ հեռու Հայկի և Բելի ճակատամարտի վայրից։ Վան քաղաքից մի քանի ժամ հեռու՝ Ավանս ավանի մոտ է Լեզք գյուղը, և մինչև հիմա տեղացիք պատմում են, թե այդտեղ է եղել Արայի պատերազմը»[218]։***

*Հայոց զորքերը քաջաբար կռվի են բռնվում և միաժամանակ կասեցնում Շամիրամի սրընթաց առաջխաղացումը, ինչին նա չէր սպասում։ Երկու կողմն էլ մեծ կորուստներ են կրում։ **«Պարզվեց, որ պատերազմը շատ ավելի թեժ էր, քան սպասում էր այն հրահրող Շամիրամը։ Երկու կողմերն էլ կրեցին մեծ կորուստներ»[219]։** Եվ մինչդեռ Շամիրամի բանակը*

---

216 Պալասանեան Ս., Պատմութիւն Հայոց, սկզբից մինչեւ մեր օրերը, Թիֆլիս 1890 թ., էջ 24:

217 Сергей Глинка, Обозрение истории армянского народа, Москва 1832 г., ст. 67.

218 Ղեւոնդ Ալիշան, Հայաստան յառաջ քան զլինելն Հայաստան, Վենետիկ, Սուրբ Ղազար, 1904 թ., էջ 187:

219 Реваз Джапридзе, Четыре дня в стране Айоса, Тбилиси 1988 г., ст. 111.

համալրվում էր նոր զորագնդերով, հայկական բանակը գնալով նոսրանում էր՝ ստիպված լինելով նահանջել։ ***«Հայերն ստիպված էին նահանջել ոչ թե թշնամու խիզախության, այլ մեծաթիվ լինելու պատճառով»***[220]*։*

Տեսնելով հայերի նահանջը՝ ասորական բանակը՝ Շամիրամի գլխավորությամբ, կատաղի հարձակման է անցնում։ Իսկ հայկական գնդերն, ի զորու չլինելով կասեցնել նրանց առաջխաղացումը, որոշում են նահանջել և միանալ Արարատյան դաշտավայրում գտնվող հիմնական բանակին։ Շամիրամն էլ, տեսնելով, որ մոտ է իրականացումն իր անօրեն բաղձանքի, էլ ավելի է ոգևորում և շտապեցնում իր զորքերին. ***«Բայց որքան դեմքից կարելի էր գուշակել, շտապում էր ոչ այնքան նրան սպանելու կամ հալածելու, որքան՝ նվաճելու կամ ձեռքը գցելու, որպեսզի իր կամքը կատարի։ Որովհետև կատաղի կրքի պատճառով տուփանքով սիրահարված էր նրա մասին եղած զրույցներին, ինչպես՝ տեսնելիս լիներ։ Շտապով գալիս-հասնում է Արայի դաշտը, որ նրա անունով կոչվել է Այրարատ»***[221]*։*

Բելն՝ իր հսկաներով և բազմաթիվ զորքերով, չկարողացավ Վանից այն կողմ անցնել և այդտեղ մահը վրա հասավ նրան։ Իսկ մոլեգնած Շամիրամին դա հաջողվեց. և առաջին անգամ օտար բանակը հասավ Հայաստանի կենտրոն՝ Արարատյան դաշտավայր. ***«Մեր երկիրն առաջին անգամ օտար զորքերի ոտների կոխան եղավ՝ Շամիրամի այլանդակ փափագից...***

Հայաստանի հարավային կողմերի տերերը չկարողացան դիմադրել նրա բյուրավոր բանակներին, որոնք հեղեղի պես գալով՝ հասան մինչև Միջին աշխարհը և Հայկազյան ոստանը՝ առատ երկիրը և Արարատյան դաշտը։

Որքան էլ հիմա մեզ ծանոթ չեն մեր քաջ, առաքինի և գեղեցիկ նահապետի գործերն՝ ընդդեմ Շամիրամի, ակնհայտ է, որ դրանք հռչակված էին նաև մասնավոր դիպվածների պատճառով։ Եվ միայն մեկ անգամ իրար հետ բախվելով չի ավարտվել պատերազմը։ Այս կամ վերջին պատերազմը եղել է Արարատյան գավառում և դաշտի մեջ, ուր Շամիրամը «գալիս-հասնում է փութով»՝ հավանաբար, որպեսզի Արային պատրաստվելու և զորք հավաքելու ժամանակ չթողնի։ Ինչպես պատմում են մինչև հիմա»[222]*։*

Արան դեռ չէր հասցրել ի մի բերել ամբողջ հայոց զորքը, երբ ասորական բանակը հեղեղեց Արարատյան դաշտավայրը։ Ըստ ավանդության՝ վճռական մարտը, այնուամենայնիվ, տեղի է ունեցել Արարատյան դաշտավայրին կից՝ ավելի հյուսիսային կողմում գտնվող տարածքում։ ***«Շամիրամը հաստատվել է Կոտայքի գավառի եզրին գտնվող մի լեռան***

---

220 Сергей Глинка, Обозрение истории армянского народа, Москва 1832 г., ст. 67–68.

221 Մովսես Խորենացի, Պատմություն Հայոց, Երևան 1968 թ., էջ 98:

222 Ղեւոնդ Ալիշան, Հայաստան յառաջ քան զլինելն Հայաստան, Վենետիկ, Սուրբ Ղազար, 1904 թ., էջ 187:

վրա, որ հայերը Շամիրամի լեռ են դեռ կոչում: Դրա արևմտյան կողմում Արայի լեռն է, որտեղ մեր նահապետն է կանգնել: Մեջտեղում Արարատյան դաշտի մի մասն է, որտեղ Արամուս գյուղն է, ըստ ոմանց՝ Արայի մասին մի հիշողության համար: Այս լեռնամիջյան դաշտում եղավ Հայոց և ասորեստանցիների պատերազմը»[223]:



Այսպիսով, այդ երկու լեռների միջև էլ տեղի է ունենում վճռական ճակատամարտը: Բանակները բախվում են իրար: Արան լեռան բարձունքից հետևում է պատերազմի ընթացքին, իսկ Շամիրամն էլ իր հերթին հանդիպակաց լեռան վրայից է իր կարգադրություններն անում: Մարտն ընթանում է մեկ այս, մեկ այն կողմի հաջողությամբ: Արան, երբ տեսնում է, որ ասորիները թվային մեծ առավելություն ունեն, զորքին քաջալերելու համար իր թիկնապահ գնդով մտնում է մարտի մեջ. ***«Շամիրամը, հավանաբար, իր թիկնապահ գնդով հեռու կանգնած՝ դիտում էր: Արան նույնպես՝ սկզբում: Հետո, անշուշտ, թշնամու բազմությունից յուրայինների տկարանալը տեսնելով՝ ինքն էլ նետվեց նրանց մեջ»***[224]:

Արայի՝ մարտի մեջ մտնելու լուրը հասցնում են Շամիրամին: Իսկ նա, մտահոգված ոչ թե իր զորքի հաղթանակով, այլ միայն՝ Արային տիրելու փափագով, հրամայում է ամեն ինչ անել, որպեսզի հանկարծ նրան չսպանեն, այլ ողջ-ողջ բերեն իր մոտ: ***«Ճակատամարտը նախապատրաստելիս՝ նա իր զորապետներին պատվեր է տալիս՝ եթե դեպքը բերի, պետք է ջանալ կենդանի պահել Արային»***[225]:



Այդ կենաց և մահու պատերազմում թշնամուն իր քաջարի ներկայությամբ ահաբեկած հայոց արքան չէր էլ մտածում անձնատուր լինե-

[223] Ղեւոնդ Ալիշան, Հայաստան յառաջ քան զլինելն Հայաստան, Վենետիկ, Սուրբ Ղազար, 1904 թ., էջ 188:

[224] Ղեւոնդ Ալիշան, Հայաստան յառաջ քան զլինելն Հայաստան, Վենետիկ, Սուրբ Ղազար, 1904 թ., էջ 188:

[225] Մովսես Խորենացի, Պատմություն Հայոց, Երևան 1968 թ., էջ 98:

*լու մասին՝ գիտակցելով, որ ասորական բանակի անվերջանալի հեղեղից կենդանի դուրս գալու քիչ հնարավորություն կար: Սակայն ճակատամարտի խառնարանը մտնելով՝ Արա Գեղեցիկ արքան սարսափի ու զարմանքի էր մատնել Շամիրամին, որն ամեն կերպ ցանկանում էր նրան կենդանի տեսնել իր առջև. **«Հայոց տիրակալի խիզախությունն ի չիք դարձրեց Շամիրամի զգուշավորությունը: Հզոր և անզիջում կերպով մարտնչում էին հակառակորդ բանակները»**[226]:*

Իսկ Արան վճիռ էր կայացրել. Հայոց արքան վստահ էր, որ եթե ընկնի մարտում, ապա քաջի մահով մեծ հիշատակ կթողնի և հավիտենական կյանք կժառանգի, ինչից ոգևորված՝ իր հաջորդները վաղ թե ուշ թշնամուն դուրս կքշեն հայրենի սուրբ երկրից:

*Եվ նրա խիզախումներից տագնապի մատնված ասորի զինվորների մի պատահական նետից զոհվում է հայոց բարեպաշտ արքա Արա Գեղեցիկը. **«Պատերազմի բորբոքման պահին քաջ Արան մարտնչում էր արիաբար: Եվ նույն արիությամբ ու առաքինությամբ զարնվելով՝ ընկավ այնտեղ, որտեղ իր անունն անմահ և անմոռաց թողեց»**[227]:*

Մեծ ավերների ու կոտորածի պատճառ դառնալով՝ Շամիրամն այնպես էլ չհասավ իր նպատակին: Երբ նրան հասցրեցին Արայի զոհվելու լուրը, նա սաստիկ տրտմեց: Հղփացած կայսրուհին տեսավ, որ Արան առավել գերադասեց մահը՝ իր հայրերի ու երկրի սուրբ հավատքն, անկախությունն ու առաքինությունը, և չտրվեց աշխարհի տիրակալ դառնալու գայթակղությանը, ինչն առաջարկում էր նրան կռապաշտ ու վատահամբավ Շամիրամը: Այդպիսով, Արան վերջնականապես ամոթապարտ թողեց այդ վավաշոտ կնոջը՝ մերժելով նրա մարմնահաճ սերը:

Արա Գեղեցիկն իր նախնիների՝ Հայկի և Արամի նման, պատմության մեջ հիշատակվել է հազարամյակներ շարունակ՝ որպես հայրենասիրության և բարեպաշտության կատարյալ տիպար:

*Հայոց սուրբ հողի վրա էր, որ նախքան Ջրհեղեղը եղավ առաջին նահատակությունը. այստեղ հեղվեց բարեպաշտ Աբելի արյունը: Իսկ Ջրհեղեղից հետո արդեն առաջին նահատակն Արան եղավ, ում արյունը ևս հեղվեց նույն սրբազան տարածքում: **«Բաբելոնի ողջ գրգռակեցությունը, թովչանքն ու ցոփությունը, առասպելները մարմնավորվել են Շամիրամ թագուհու կերպարում...***

Մաքրակենցաղ թագավոր Արան, որ անսասան է մնացել նրա գեղեցկության առջև, ողբերգականորեն ընկել է թագուհու տարփածուների սրից... Այո, Շամիրամը հաղթեց. Հայոց թագավորությունը՝ քրիստոնեութ-

---

226 Сергей Глинка, Обозрение истории армянского народа, Москва 1832 г., ст. 67.

227 Ղեւոնդ Ալիշան, Հայաստան յառաջ քան զլինելն Հայաստան, Վենետիկ, Սուրբ Ղազար, 1904 թ., էջ 188:

յան այդ առաջապահը, ընկավ... անհավասար մարտում»[228]*։*

Աստծո պատվիրաններին դեմ չգնալու համար էր, որ Արան շարունակ մերժեց Շամիրամի գայթակղիչ առաջարկները։ Ուրիշ մեկը կարող էր մտածել, որ եթե ընդունի դրանք, հայրենիքը կխուսափի պատերազմական գործողություններից, իսկ ինքը, դառնալով միահեծան կայսր, ավելի օգտակար կլինի սեփական երկրին։ Սակայն նրան այդպես չէր դաստիարակել իր քաջ ու անվանի հայրը՝ Ճշմարիտ Աստծուն պաշտող Արամը։ Նման կերպ վարվող արքաների ոչ միայն կայսրությունները, այլև ժողովուրդները վերացան աշխարհի երեսից՝ դառնալով պատմության անհուշ անցյալ։ Մինչդեռ հայ ազգը, Աստծո ողորմությամբ, այդ հեռավոր ժամանակներից եկել հասել է մինչև մեր օրերը՝ 21-րդ դար, և դեռ կշարունակի, քանզի ունեցել է Հայկի, Արամի և Արա Գեղեցիկի նման բարեպաշտ, աստվածահաճո նահապետներ, որ հույսը դրել են ոչ թե քաղաքական խարդավանքների, այլ՝ Արարչի վրա, որն ամենայն բարիքների աղբյուրն է։ ***«Արան ընկավ կռվի դաշտում՝ որպես ազգի և առաքինության հավատարիմ բարեկամ»***[229]*։*

Արա Գեղեցիկն իր բարձր առաքինությամբ և Աստվածապաշտ վարքով հիշեցնում է Հովսեփ Գեղեցիկին։ Ծննդոց գրքում Հովսեփը եգիպտական գերության մեջ կարողացավ դիմադրել իր պղծաբարո տիրուհու գայթակղությանը։ Սակայն Հայոց Արա Գեղեցիկ արքան ավելին արեց. իր Աստվածանմանությամբ պատերազմեց անցողիկ աշխարհի կայսրուհու և նրա առաջարկած կայսերական տիտղոսի դեմ և... նահատակությամբ հեռացավ այս ժամանակավորից դեպի հավիտենություն։ Իսկ Շամիրամի նման նենգաբարո և հղփացած թագավորները և թագուհիները մարդկության պատմության մեջ միայն նզովքի են արժանացել։ Նրանցից երկուսի՝ Հեզաբելի և Գոդողիայի մասին հիշատակվում է Նաև Հին Կտակարանում, սակայն Շամիրամն իր թողած ամոթալի հիշատակով գերազանցել է բոլորին։ Նրա կերպարին անդրադարձել է նաև միջնադարի հանճար, աստվածաբան-բանաստեղծ Ալիգիերի Դանտեն։ Նա «Աստվածային կատակերգության» «Դժոխքի» բաժնում Շամիրամի մասին այսպես է վկայում.

«Եվ մուրիկը, որ երբեմ չի դադարում,
Հոգիներին իր հորձանքի մեջ առած՝
Պտուտում է, ֆշում, իրար ընդհարում։

Երբ հասնում են նրանք ժայռին եզրային,
Հեծեծում են, ողբում, գոռում ու գոչում
Եվ անիծում աղաղությունն երկնային.....

---

228 Սերգեյ Գորոդեցկի, տես Սև Գիրք, Երևան 2011 թ., էջ 571։

229 Сергей Глинка, Обозрение истории армянского народа, Москва 1832 г., ст. 68.

.....Առաջինն այն պիղծերից,
Որոնց մասին դու ուզում ես իմանալ,
Կայսրուհին էր բազմալեզու ազգերի:

Նա այնման մեղկ ու անառակ կյանք վարեց,
Որ խույս տալու համար մարդկանց պարսավից,
Ամեն հաճույք օրինական համարեց:

Շամիրամն է, որ, ինչպես գիրքն է գրում,
Եղավ կինը և հաջորդը Նինոսի»[230]:

Արալեզների պատումը

Հայոց բանակը, տեսնելով իր սիրելի արքայի նահատակությունը, թողնում է կռվի դաշտը և նահանջում, որպեսզի նոր ուժեր հավաքելով՝ վրեժխնդիր լինի Շամիրամից: Իսկ Շամիրամը, ձգտելով մոտիկից տեսնել գեղեցկությամբ հռչակված Արային, հրամայում է՝ գտնել նրա դին և բերել իր մոտ: ***«Հաղթությունից հետո տիկինը դիակապուտներ է ուղարկում ճակատամարտի տեղը՝ ընկած դիակների մեջ փնտրելու իր ցանկալիին և տարփածուին: Արային մեռած գտնում են քաջամարտիկների մեջ»***[231]*:*



Երբ բերում են Արային, Շամիրամը, տեսնելով նրա անպատմելի գեղեցկությունը, ավելի մեծ նվաստացում է ապրում, որ չի կարողացել տիրել նրան: Միտք չունենալով հետ կանգնել իր ցանկություններին հագուրդ տալու մղումից՝ որոշում է իր քրմերի կախարդության ամբողջ զորությունն ի գործ դնել՝ հուսալով կենդանացնել Արային. ***«Պատերազմի ավարտից հետո Շամիրամը... շատ ջանաց փնտրել և գտավ իր փափագած քաջազնի դիակը, որը տեսնելով՝ լավ գիտակցեց կորուստը և իր***

[230] Դանտե Ալիգիերի, Աստվածային կատակերգություն, Երևան 1983 թ., էջ 26–27:
[231] Մովսես Խորենացի, Պատմություն Հայոց, Երևան 1968 թ., էջ 98:

անարժանութիւնն այդպիսի կտրիճին։ Բայց դեռ մասամբ զայրագին ցանկութիւնից, մասամբ էլ սնահավատութեամբ հիմարացած, կարծեց կամ կարծել տվեց, թե կախարդութեան հնարքով պիտի կարողանա ողջացնել Արային, որ իր սերը կամ վրեժն առնի նրանից»[232]*։ Նրա բոլոր ջանքերը, սակայն, ի դերև ելան։*

*Ըստ ավանդության՝ Շամիրամը բերել է տալիս ինչ-որ շների (մոգերի կողմից վարժեցված՝ վիրավորի վերքերը լիզելով ապաքինելու համար)՝ հուսալով, որ մահացած Արային էլ հնարավոր կլինի կենդանացնել։ Սակայն, բնականաբար, ամեն ջանք անօգուտ է լինում. **«Միևնույն ժամանակ նա հույս ուներ իր կախարդական դյութանքով Արային կենդանացնել՝ տուփական ցանկութիւնից ցնորված։ Բայց նրա դիակն սկսեց նեխել, հրամայեց գցել մեծ վիհի մեջ ու ծածկել»***[233]*։*

Այդ ընթացքում հայոց զորքը վերադասավորվելով ցանկանում է հարձակվել և իրենց արքայի վրեժը լուծել։ Շամիրամն էլ հայտարարում է, թե իբր իր մոգերն այդ շների օգնությամբ հարություն են տվել Արային (Արայի հետ կապված միջադեպից հետո այդ կենդանիները մնացին պատմության մեջ «արալեզ» անվամբ)։

*Կա կարծիք՝ իբր նման կերպ Շամիրամը հանդարտեցրել է հայերին, սակայն դա առասպել է՝ հորինվածք։ Շամիրամը գիտեր, որ եթե նման բան է ասում, վաղ թե ուշ պիտի Արային դուրս բերի ժողովրդի առջև։ Պատմում էին, թե նա նույնիսկ մի այլ տղամարդու, Արայի նման հագցնելով, կանգնեցրել է հայերի առջև. ու իբր նրան տեսնելով՝ հայերը հանգստացել են։ Սակայն հայերը, լինելով Ճշմարիտ Աստծո պաշտամունքն ունեցող և ավանդաբար Տիրոջ սուրբ օրենքներով առաջնորդվող ժողովուրդ, հասկանում էին, որ կուռքերին պաշտող և մոգության կեղծ հնարքներ բանեցնող Շամիրամն իր հմայություններով ի զորու չէր նման հրաշք գործել. **«Աբրահամ նահապետի կյանքի ժամանակաշրջանում էր, երբ կռապաշտությունն, անտարակույս, տարածված էր բազմաթիվ տեղերում։ Բայց այլ վայրերում դեռ Աստվածպաշտության մնալը նույնպես անտարակույս էր։ Այդպես է երևում և մեր երկրում, որտեղ Արային ողջացնելու հնարքը... Շամիրամի ստության փորձառությունն ունեցող հայ զորքին զայրացել էր»***[234]*։*

Շամիրամը, հետագա պայքարն անիմաստ համարելով, պատգամավորներ է ուղարկում հայերի մոտ՝ ասելով, թե խոսք է տալիս, որ հայոց գահին կնստի Արայի որդին՝ Կարդոսը, և ինքն էլ նրա խնամակալը կլինի, եթե հպատակվեն իրեն և դառնան Ասորեստանին հարկատու։ Հակառակ

---

232 Ղեւոնդ Ալիշան, Հայաստան յառաջ քան զլինելն Հայաստան, Վենետիկ, Սուրբ Ղազար, 1904 թ., էջ 188:

233 Մովսես Խորենացի, Պատմություն Հայոց, Երևան 1968 թ., էջ 98:

234 Ղեւոնդ Ալիշան, Հայաստան յառաջ քան զլինելն Հայաստան, Վենետիկ, Սուրբ Ղազար, 1904 թ., էջ 190:

պարագայում կարդոսի կյանքը վտանգի տակ կդնեն։

Փաստն այն էր, որ արդեն չկար հայոց արքան, և հայոց զորքը պարտություն էր կրել։ Իսկ աշխարհի տարբեր ծայրերից դեռ ժամանում էին ասորահպատակ զորքեր, որոնց դեմն առնելն այդ վհատված վիճակում շատ դժվար կլիներ, մանավանդ, որ մանկահասակ արքայազն Կարդոսը գտնվում էր Շամիրամի ձեռքում։ Այս ամենից ելնելով՝ հայոց նախարարները հնազանդվելու որոշում են կայացնում, որ երկիրը ամբողջովին կործանումից փրկեն. **«Հայերը, որ դեռ բավական զորք և ուժ ունեին, Արայի մահվան սաստիկ ցավից ուզեցին նորից հարձակվել ասորիների վրա։ Բայց Շամիրամն շտապեց անիմաստ կռիվը դադարեցնել... ոմանք էլ որոշ ժամանակ անց սառչելով՝ վրեժխնդիր չեղան, շատերն էլ, տեսնելով, որ պատերազմով չեն կարողանա գործ գլուխ բերել, կամաց-կամաց հանդարտվեցին։ Մանավանդ տեսան, որ իրենց հափշտակված դյուցազնի որդին՝ Կարդոսը, որ դեռ 12 տարեկան էր, Շամիրամի ձեռքն ընկնելով՝ նրա համար սիրելի և գգվելի եղավ։ Հիրավի, նրա հոր հանդեպ ունեցած սիրուց, միաժամանակ հայերի հակադրման վախից Կարդոսին հոր անունով էր կանչում, մինչև որ հայերն էլ այնպես ասացին՝ Արա Արայան»**[235]։



Հայոց պատմության մեջ մեծ հետք է թողել Արա Գեղեցիկը։ Ըստ ավանդության՝ մինչ օրս նրա անունով «Արայի լեռ» է կոչվում այն լեռը, որի բարձրունքից հայոց արքան հետևում էր պատերազմի ընթացքին։

Հավանաբար, Շամիրամը հրամայել է՝ Արայի մարմինը թաղել հենց այդ լեռան վրա գտնվող վիհերից մեկում։ Հետաքրքիր և հուզական է, որ հայ ժողովուրդն Արայի լեռան գագաթի ուրվագծերը նմանեցնում է լեռան գագաթին պառկած Արային։ Այդ տարածքում է գտնվում նաև Արայի անվամբ կոչվող Արամուս գյուղը։ Իսկ Արևմտյան Հայաստանում, ինչպես ասվեց, Լեզք անունով գյուղ կա, որն էլ հիշեցնում է այդ իրողությունների մասին։ 1915 թվականին Վանից գաղթած հայերն Արարատյան դաշտում Արայի դրամատիկ վախճանն անմոռաց պահելու համար այդ գյուղը կոչել են Արալեզ։

Արայի ազնվագույն, վառ կերպարը երբեք չի խամրել մեր ժողովրդի հիշողության մեջ։ Արա Գեղեցիկի մասին ծնունդ են առել բարձրարվեստ

---

[235] Ղեւոնդ Ալիշան, Հայաստան յառաջ քան զլինելն Հայաստան, Վենետիկ, Սուրբ Ղազար, 1904 թ., էջ 188–189:

ստեղծագործություններ՝ դրամա, բալետ, պոեմ, բանաստեղծություններ, մեծարժեք կտավներ և այլն։

Հայոց մեջ ամենատարածված և սիրելի անվանումներից է Արան։ Նաև հետաքրքիր է, որ հայերն՝ առավելապես երիտասարդները և տղաները, խիստ հաճախ են իրար դիմում «արա» ձևով՝ թե ընկերական ջերմ և թե «սառը» հարաբերություններում։ Սակայն «արա» դիմելաձևը մեզ՝ հայերիս համար միշտ չէ, որ պատշաճ և ընդունելի ձևով է գործածվում։ Եթե «արա» դիմելաձևն ի սկզբանե անհարգից վերաբերմունքի դրսևորում լիներ, մեր բարեպաշտ և բարեշնորհ արքաներն Արամանյակ, Արամայիս, Արամ ու Արա անուննները չէին ունենա։

Դիտարկելով «բառիմաստ»-ի տեսանկյունից՝ նկատում ենք, որ անգամ Սուրբ Գրքում անուններն իրենց ներքին բովանդակությամբ բնութագրական էին և կրում էին մարդուն կամ տեղանքին բնորոշ հատկանիշներ։ Այդպես և «Արա»-ն Արմեն, Արամ անվանումների կրճատ ձևն է, որը ինչպես գիտենք, նշանակում է Արարչի՝ այսինքն «Աստծո մարդ», ինչի մասին պարզաբանումներ ժամանակին տրվել են։

Կիրառելով «արա» դիմելաձևը՝ պետք է հիշել նաև հինավուրց շրջանի մեր արքաներին, հատկապես՝ Արա Գեղեցիկին, որ ոչ միայն՝ արտաքինով, այլև հոգով աննկարագրելի գեղեցկության տեր էր, բարեպաշտ և իր հավատի, հայրենիքի և ազգի համար պատրաստ պայքարելու ընդհուպ մինչև նահատակություն, որ իր մահվանից հետո էլ մեծ անուն թողեց և մեծարվում է արդեն մոտ 4000 տարի։

Եվ թեպետ այդ հարցում կան հակասական հոգեբանական, պատմական և լեզվաբանական քննության խնդիրներ, սակայն հուսանք, որ կգա ժամանակ, երբ այս վեհ «արա» դիմելաձևով կդիմենք իրար՝ այդ բոլոր առաքինությունները միմյանց վերագրելով և ջանալով արժանի լինել այդ մեծ պատվին, մի կողմ թողնելով մեզ համար օտար խորհրդային անաստվածության ժամանակների «ընկեր» և արևմուտքի ձևախեղված «պարոն», այսինքն՝ եվրոպական «բարոն», ռուսական «բարին» դիմելաձևերը։

Արայան Արա՝
Կարդոս

«Հայաստանը «դժվար» երկիր է: Սա այն վայրն է երկրի վրա, որտեղ տառապանքը նման է խիզախության և հերոսության համար պարգևի»[236]:

Շամիրամը, ի վերջո, Հայաստանն էլ կցելով իր կայսրությանը, դարձավ Միջագետքի և շրջակա հսկայական տարածքների միահեծան կայսրուհի: Հայաստանում իշխանությունը, բնականաբար, նրանց ձեռքում էր, ովքեր հպատակվում էին Շամիրամին և հարկեր էին վճարում Ասորեստանին: Իսկ ովքեր չէին հանդուրժում երկրի՝ նման վիճակը, լռում էին, քանի որ արքայազն Կարդոսը գտնվում էր Շամիրամի խնամակալության տակ: Սպասում էին՝ հույսով, որ երբ նա տարիքն առնի, գուցե ինչ-որ բան փոխվի, իսկ ոմանք էլ ուղղակի հեռացան երկրից:

Հայոց Նվարդ թագուհին էլ, հնարավոր է, նույնպես զոհ է գնացել Շամիրամի խանդոտ չարությանը, իսկ Կարդոսը՝ Արայան Արան, ինչպես նշեցինք, դեռ մանուկ հասակից անցել էր Շամիրամի խնամակալության տակ: Շամիրամն իր պաշտելի արքայի հանդեպ ունեցած մեղքի զգացումից դրդված՝ հոգ է տանում նրա մասին:

*Հայաստանին տիրելով՝ Շամիրամն սկսում է ծանոթանալ նոր ձեռք բերված երկրին. շրջում է Հայաստանով մեկ և այստեղ իր նստավայրը կառուցելու համար համապատասխան տեղանք փնտրում: **«Այդպիսի հաջող գործերից հետո Շամիրամը կարճ ժամանակով մնում է այն դաշտում, որ Արայի անունով կոչվում է Այրարատ: Նա բարձրանում է երկրի հարավակողմն ընկած լեռնային վայրերը, որովհետև ամառային եղանակ էր, կամենում էր հովիտներում և ծաղկավետ դաշտերում զբոսնել: Եվ տեսնելով երկրի գեղեցկությունը, օդի մաքրությունը, բխող մաքուր աղբյուրները, կարկաչահոս ու բարեգնաց գետերը՝ ասում է. «Մենք պետք է այսպիսի բարեխառն կլիմայում, մաքուր ջրերով երկրում մեզ համար քաղաք և բնակության արքունիք շինենք, որպեսզի տարվա մի մասն ամեն տեսակ վայելչությամբ անցկացնենք Հայաստանում, իսկ մյուս երեք մասը՝ օդի զով ժամանակը, կյանք վայելենք Նինվեում»**[237]:*

Երկար փնտրտուքներից հետո նա ընտրում է Վանա լճի մոտ գտնվող նույնանուն քաղաքը՝ գեղատեսիլ բնության գրկում, և որոշում է այն

---

236 Д. Хьюгз, Астроном Шеффиилдского университета.

237 Մովսես Խորենացի, Պատմություն Հայոց, Երևան 1968 թ., էջ 98–99:

*դարձնել իր նստավայրը՝ կառուցելով նոր արքայավայել շինություններ, պալատներ, բաղնիքներ, տնկելով պարտեզներ և այլն։ **«Շամիրամն իր արքունիքը շինեց Վան քաղաքում։ Այդ նպատակով Վանը հիմնովին վերակառուցեց։ Շամիրամի վարպետները 72 կիլոմետրանոց ջրանցք փորեցին և Վան բերեցին խմելու ջրի անսպառ պաշարներ։ Այդ ջրանցքն այսօր էլ կա, գործում և պահպանում է չորսհազարամյա իրադարձությունների կենդանի հիշատակը։***

Շամիրամը տարբեր գույների քարերից Վանում կառուցել տվեց ոչ միայն կրկնահարկ, այլև եռահարկ ապարանքներ, ընդարձակ փողոցներ, հիմնեց ծաղկանոցներ։ Քաղաքի արևելյան, հյուսիսային և հարավային մասերը զարդարեց դաստակերտներով, տարբեր տեսակի սաղարթախիտ ծառերով, տնկեց հրաշալի այգիներ։

***Ամենամեծ հրաշալիքը Շամիրամի կացարանն էր։ Այն գտնվում է քաղաքի վերին ծայրին՝ ժայռեղեն բարձունքին։ Այդտեղ, գագաթի շուրջը պարիսպ քաշելով՝ ներսում շինեց օտարի աչքի համար անհասանելի արքայանիստ օթևաններ ու կառույցներ»**[238]։ Վանը պատմության մեջ հիշվում է նաև՝ որպես Շամիրամակերտ։*

*Իր անձնական բարեկեցության մասին հոգալուց բացի՝ Շամիրամն իր տիրապետության տակ անցած Հայաստանում տարածում էր իր արժեհամակարգը, Հայոց օրհնյալ երկիրն ապականում էր իր հետ բերած տարբեր դիվապաշտական հավատալիքներով. **«Նաև մի ինչ-որ նոր արձան է կանգնեցնում աստվածների անունով և մեծամեծ զոհերով պատվում է նրան»**[239]։*

*Շամիրամի կարգադրությամբ՝ Հայաստանով մեկ սկսվում է մեհյանների կառուցում և կուռքերի համատարած տեղադրում։ **«Ասորեստանի թագուհին կարգադրեց Հայաստանի տարբեր վայրերում արձաններ կանգնեցնել»**[240]։*

Բնականաբար, սկսեցին հալածվել բոլոր նրանք, ովքեր դիմադրում էին։ Տիրոջը ծառայող քահանաները սրի էին քաշվում, զնդան էին նետվում կամ աքսորվում էին։ Ոմանք էլ կամավոր էին հեռանում երկրից։ Դեռ Ադամից և Նոյից մնացած ամենաառաջին սրբավայրերը՝ զոհասեղաններն ավերվում էին կամ էլ ծառայեցվում կռապաշտությանը։

*Այսպես, միակ երկիրը, որը դեռ Ադամից սկսած պաշտում էր միմիայն Ճշմարիտ Աստծուն՝ երկնքի և երկրի, երևելիների և աներևույթների Արարչին, առաջին անգամ տեղի տվեց կռապաշտությանը։ **«Մեր ազգի մեջ ընդունելի ավանդություն է այն, որ Հայկի՝ Բելի դեմ գլուխ բարձրացնելու պատճառը Բելի անաստվածությունն էր, և ընդունված է, որ Հայկը***

---

238 Լևոն Միրիջանյան, Հայկյաններ, Երևան 1988 թ., էջ 43–44:

239 Մովսես Խորենացի, Պատմություն Հայոց, Երևան 1968 թ., էջ 98:

240 Сергей Глинка, Обозрение истории армянского народа, Москва 1832 г., ст. 74.

և նրա թոռները ճշմարիտ աստվածապաշտ էին: Եվ մինչև Հայաստանի՝ Ասորեստանի տիրապետության տակ անցնելը, Շամիրամից սկսած, մեր պատմության մեջ ոչ մի դիցաբանական հիշատակություն չկա» [241]:

Հայոց լեռնաշխարհում էր գտնվում բերկրության Դրախտը, սակայն երբ կինը՝ Եվան, մեղք գործեց, մարդկությունը վտարվեց Դրախտից, և մահն աշխարհ մտավ: Մինչ Ջրհեղեղն Արարատյան երկրում ապրում էին Սեթից սերված բարեպաշտ սերունդները, որ Աստծո որդիներ կոչվեցին. սակայն Կայենի անպարկեշտ դուստրերը գայթակղեցին նրանց, և այդ խառնակման պատճառով մեղքը մտավ նաև Արարատյան երկիր, ինչի հետևանքով էլ Ջրհեղեղ եղավ, և մինչջրհեղեղյան մարդկությունը կործանվեց: Եվ հիմա էլ այս կինը՝ Շամիրամը պատճառ դարձավ, որ Հայոց լեռնաշխարհում աստվածապաշտությանը փոխարինեց կռապաշտությունը. ***«Շամիրամի պես-պես գործերի հիշողություններն ամենավտանգավորը եղան մեր երկրի մեջ, դժբախտաբար երկար ժամանակ»***[242]:

Իրապես, այս երեք ծանր հարվածներն իջան կանանց ձեռքով, սակայն դժվար է ասել՝ ինչու հատկապես դրանց դիմագրավել չհաջողվեց, ինչու հենց դրանք եղան կործանարար: Կանանց նկատմամբ հավասարակշիռ մոտեցումը վերահաստատելու համար վերհիշենք, որ Հայաստանն ունի սուրբ Աստվածածնի խորհուրդը (մանրամասն խոսվել է առաջին հատորում. Տիրամայրն է մեր մեծ բարեխոսը). նաև խոնարհումով մտաբերենք Նվարդին՝ բարեպաշտ և առաքինի հայոց թագուհուն, որ առաջին՝ անվանե հիշատակված հայուհին է:

Կռապաշտ կայսրուհի Շամիրամի շահամոլ գործունեության արդյունքում Հայոց աշխարհը՝ շրջապատի այլ երկրների նման, ընկղմվեց կռապաշտության խավարի մեջ: Դաստիարակվելով այդ մթնոլորտում՝ Կարդոսը՝ Արայի որդին էլ դարձավ կռապաշտության հետևորդ և ջատագով՝ ամեն կերպ ջանալով հաճոյանալ այդ դիվաբարո կնոջը՝ Շամիրամին, որին որպես մայր էր ընդունում: ***«Հայաստանը Շամիրամի համար եղավ իր սիրելի երկրորդ երկիրը... 42 տարի տևեց իր տիկնությունը: Սակայն եթե պատերազմներն ու շինարարությունը դադարեցրեց, ապա բռնությունը, զբոսանքներն ու կախարդությունները՝ ոչ... Իր հավատարիմներին զանազան տարածքներում վերակացու էր դնում: Նրանցից մեկն էլ Կարդոսն էր, որը մեր երկրի օրինական իշխանավորն էր: Եվ Արայան Արա անվանվածը, որ պատանեկությունը Շամիրամի արքունիքում էր անցկացրել, երևում է՝ նրա գգվանքներով և զբոսանքներով փափկացել ու թուլացել էր, Ասորեստանի, մանավանդ իրեն երկրորդ մայր եղած Շա-***

---

241 Ղեւոնդ Ալիշան, Հայաստան յառաջ քան զլինելն Հայաստան, Վենետիկ, Սուրբ Ղազար, 1904 թ., էջ 137:

242 Ղեւոնդ Ալիշան, Հայաստան յառաջ քան զլինելն Հայաստան, Վենետիկ, Սուրբ Ղազար, 1904 թ., էջ 189:

միրամի սովորույթները մտցրեց Հայաստան»[243]**:**

Կարդոսը Շամիրամի կողմից կարգվում է Հայաստանի տիրակալ, ապա ամուսնանալով՝ ունենում է որդի, որին անվանում է Անուշավան: Հայկի, Արամի և Արայի ժամանակ նորածնի համար զոհ էին մատուցում Աստծուն՝ նրան հանձնելով Տիրոջ պահպանությանը: Իսկ Հայաստանի համար այդ չարագույժ ժամանակներում սկսեցին նորածնին հանձնել դևերի պահպանությանը՝ հատուկ կարգ կատարելով մեհյաններում. ***«Կարդոսը, որ Արայան Արան է, երբ սկսեց Հայաստանի վրա իշխել, ունեցավ որդի՝ Անուշավանին և նվիրեց նրան սոսյաց անտառին, որ Արմավիրի մոտ՝ արքունի պալատի դիմաց էր: Քանզի այն ժամանակ հայերը հմայություններ էին անում, որովհետև համարում էին, որ այնտեղ դիցեր կան, որոնց էլ ձոնում էին բազմաթիվ բաներ և առատ զոհաբերություններ էին մատուցում սոսյաց անտառի չաստվածներին: Դրանով նվիրյալ անձն իբր սուրբ և դյուցազն էր համարվում: Այդպես և Անուշավանը նվիրաբերվելով անվանվեց Սոս կամ Սոսանվեր»***[244]**:**



Հայաստանը լցվել էր տարբերի ազգերի մոլար հավատալիքներով: Եվ այն, որ Արայան Արան Անուշավանին նվիրաբերեց սոսիների անտառին, փաստում է, որ այդ ժամանակ արդեն հայերի մոտ առկա էր ծառապաշտությունը: ***«Կարծում եմ՝ այս օտարներից սովորած հմայություններին և կուռքերի հավատալիքներին նախ ինքը համարձակվեց տուրք տալ, և իր իսկ իշխանազուն որդուն՝ Անուշավանին նվիրեց իր արքունիքի մոտ (Արմավիրի) տնկած սոսյաց անտառին... ծառապաշտության մղելով նրան»***[245]**:**

Այդ դժնդակ ժամանակների հետքերը, ըստ հետազոտողների, հասել են մինչ մեր օրերը: Վանի ժայռի հյուսիսային կողմում կան մի քանի որմնախորշեր, որոնք ըստ հետազոտողների՝ կապված են Հայաստանում Շամիրամի կողմից կռապաշտություն տարածելու հետ. ***«Ըստ ավանդության՝ մի ինչ-որ կապ կա այդ որմնախորշերի դիմացի՝ մի քանի վերստի վրա***

---

243 Ղեւոնդ Ալիշան, Հայաստան յառաջ քան զլինելն Հայաստան, Վենետիկ, Սուրբ Ղազար, 1904 թ., 195–196 էջ:

244 Միքայել Չամչյանց, Պատմություն Հայոց, Երևան 1985 թ., էջ 79:

245 Ղեւոնդ Ալիշան, Հայաստան յառաջ քան զլինելն Հայաստան, Վենետիկ, Սուրբ Ղազար, 1904 թ., էջ 196:

ընկած Լեսկա ուղղաբերձ ապառաժի և Մովսես Խորենացու հանրահայտ պատմության մեջ եղող Արա Գեղեցիկի՝ հայոց արքայի և վավաշոտ Շամիրամի միջև: Որմնախորշերում կամ նրանցից մեկում, ըստ ավանդության, կար զոհասեղան, իսկ նրա առջև՝ ավազան, որի մեջ լցվում էր զոհաբերվող կենդանիների արյունը: Զոհաբերություններն այնքան առատ էին մատուցվել, որ արյունը վար հոսելու համար ժայռի վրա սահանք էին փորել. ըստ Մովսես Խորենացու խոսքի՝ այդ զոհարանը կապում են Շամիրամի կանգնեցրած նոր կուռքի և նրան մատուցված առատ զոհաբերության հետ»[246]:

Կարող է տարակուսանք առաջացնել, որ աստվածապաշտ, օրհնյալ երկիրը՝ Հայաստանը, տեղի տվեց կռապաշտությանը: Սակայն նման օրինակներ մենք տեսնում ենք Սուրբ գրքում: Երբ երկիրը կառավարում էին բարեպաշտ թագավորները, ժողովուրդը երկյուղածությամբ հետևում էր Տիրոջ պատվիրաններին, իսկ ամբարիշտ արքայի գահակալությամբ՝ ամբողջ երկիրն ընկնում էր կռապաշտության մեջ: Դրա ցայտուն օրինակն է բարեպաշտ Եզեկիա թագավորը և նրան հաջորդած կռապաշտ որդին՝ Մանասեն, որ նստելով հոր գահին՝ ամբողջ երկիրն ապականեց, թողնելով իր հայրերի Տեր Աստծուն՝ երկիրը լցրեց ամբարիշտ ազգերի անարգ կուռքերով:

Իհարկե, այս ամենը դեռ չի նշանակում, թե մեր հինավուրց ճշմարիտ հավատն իսպառ արմատախիլ եղավ Արարատյան երկրում: Հայոց մեջ դեռ մնացած սուրբ հավատքի հետևորդները, հալածանքների և բազմաթիվ նահատակությունների հետևանքով նվազելով, շարունակում էին գաղտնի պաշտել իրենց նախնիների Տեր Աստծուն:

Ապստամբություն

Շամիրամի մերձավորների մեջ Զրադաշտ անունով մի մեդացի կար, ով եղավ կրակապաշտության աղանդի հիմնադիրը: Շամիրամն Ասորեստանից բացակայելու ժամանակ պետության ղեկը վստահում էր նրան: Զրադաշտը, հավանաբար, նաև հոգևոր ասպարեզում էր Շամիրամին ծառայություններ մատուցում. ***«Նա (Շամիրամը) ամառները շարունակ, երբ գալիս էր հյուսիս՝ Հայաստանում շինած իր ամառանոցային քաղաքը, Ասորեստանի ու Նինվեի կուսակալ և վերակացու էր թողնում Զրադաշտ մոգին՝ մարաց նահապետին՝ երկար ժամանակով նրան վստահելով իր***

[246] Археологическая экспедиция 1916 года въ Ванъ, доклад Н. Марра и І. Орбели, Петербург 1922 г., ст. 7–8.

իշխանությունը»[247]*։*

*Շամիրամն իր հաճոյասեր ու շվայտ ապրելակերպով մտահոգել էր իր որդիներին, որ անտեսված էին մոր կողմից, մինչդեռ այլք օգտվում էին նրա բարեհաճությունից։ Մովսես Խորենացին գրում է. **«Նա, իր ամբողջ իշխանությունն ու գանձերը բարեկամներին ու սիրեկաններին պարգևելով, որդիների մասին ամենևին հոգ չի տանում»**[248]։*

*Որդիները, տեսնելով իրենց մոր ապրելակերպը, խորհրդակցում են, որպեսզի ինչ-որ կերպ իշխանությունն իրենց ձեռքն առնեն։ Սակայն Շամիրամին հայտնի է դառնում, որ իր զավակները խարդավանքներ են լարում և պատրաստվում են ապստամբել իր դեմ։ **«Այն ժամանակ խռովություն ընկավ Շամիրամի և նրա որդիների մեջ, քանի որ տեսնելով նրա անզուսպ և մոլի ընթացքը՝ հանդիմանում էին նրան։ Եվ սպառնալով նրան՝ խորհեցին կորստի մատնել»**[249]։*

*Մոլեգնած Շամիրամը սրի է քաշում իր որդիներին։ Եվ նրանցից միայն կրտսերին՝ Նինվասին է կենդանի թողնում՝ համարելով, որ նրանից ոչ մի վտանգ իրեն չի սպառնա։ Այդ մասին Ղևոնդ Ալիշանն այսպես է գրում. **«Բայց այն աչալուրջ ժանտուհին ո՛չ նրանց կյանքը, ո՛չ իր արյունակցությունը խնայեց. բոլորին սպանել տվեց։ Միայն Նինոսից մնացած Նինվաս կամ Ջամես կոչված զավակն ազատվեց, որն ամենևին վախկոտ ու անվնաս երևալով՝ պահպանվեց՝ որպես մոր հաջորդ»**[250]։*

*Սակայն երկար չէր շարունակվելու Շամիրամի անհոգ կյանքը։ Իր ամենավստահելի մերձավորը՝ Զրադաշտը, իրեն թույլ է տալիս արարքներ, որոնք Շամիրամի սրտով չէին, ինչից էլ նրանց մեջ գժտություն է ծագում։ Երկար ժամանակ Շամիրամից հետո կայսրությունում երկրորդը եղող Զրադաշտն արդեն մեծ հեղինակություն և բազմաթիվ կողմնակիցներ էր ձեռք բերել, և դժվար էր նրան էլ արքայորդիների պես ճանապարհից հեռացնել. այսպես, սկսվեց մեծ պատերազմ. **«Իսկ երբ Զրադաշտը տիկնոջ դեմ մի սխալ գործեց, և մեջտեղը հակառակություն ընկավ, Շամիրամը նրա դեմ պատերազմ սկսեց, որովհետև մարացին մտադրվել էր ամենքի վրա բռնանալ»**[251]։*

*Այս պատերազմում Շամիրամի միակ կենդանի մնացած որդին՝ Նինվասը, բռնում է Զրադաշտի կողմը և միասնական ուժերով հարձակվում են Շամիրամի կողմնակիցների վրա և հաղթանակ տանում. **«Այս նույն Նինվասը, միանալով Զրադաշտի հետ, ելավ Շամիրամի դեմ և հրահրելով***

---

247 Մովսես Խորենացի, Պատմություն Հայոց, Երևան 1968 թ., էջ 102:

248 Նույն տեղում:

249 Միքայել Չամչյանց, Պատմություն Հայոց, Երևան 1985 թ., էջ 79:

250 Ղևոնդ Ալիշան, Հայաստան յառաջ քան զլինելն Հայաստան, Վենետիկ, Սուրբ Ղազար, 1904 թ., էջ 196:

251 Մովսես Խորենացի, Պատմություն Հայոց, Երևան 1968 թ., 102 էջ:

մեծ պատերազմ բորբոքեց, իսկ Շամիրամը նրանց երեսից փախավ»[252]*։*

Շամիրամի զորքի մնացորդները ցիրուցան եղան և միայն քչերը մնացին նրան հավատարիմ, որոնց հետ փախուստի դիմելով՝ ապաստան գտավ Հայաստանում՝ իրեն միակ հավատարիմ մնացած Արայան Արայի՝ Կարդոսի մոտ։ ***«Շամիրամը, երբ պարտվեց, փախավ, եկավ Հայաստան։ Վրեժխնդիր Զրադաշտը հորդորեց և թագավոր դարձրեց Նինվասին, որը հրաման տվեց՝ մորը հալածել մինչև մահ»***[253]*։*

Զայրույթից մոլեգնած՝ Շամիրամը հորդորեց Կարդոսին միանալ իրեն և, թշնամիներին կորստյան մատնելով՝ նորից հաստատել իր կայսրությունը։ Անդավաճան Կարդոսն էլ առանց հապաղելու վերցրեց հայոց բանակը և միանալով Շամիրամին հավատարիմ մնացած զորքերի հետ՝ ելավ հակառակորդի բանակի դեմ։ Սակայն այս անգամ ևս ձախողվեց իշխանությունը հետ բերելու Շամիրամի փորձը. ***«Շամիրամն, իր սիրելի և հավատարիմ Արայան Արայի հետ զորք հավաքելով, նորից ուզեց ապստամբների դեմ ելնել, սակայն նրանք հասան իր հետևից, և նորից պարտության մատնեցին պատերազմում, որը հավանաբար տեղի է ունեցել Շամիրամ գյուղի և բերդի մոտ, որտեղից այն գոռոզ և աշխարհասեր դշխոն ստիպված եղավ գերի աղախնի պես ոտքով փախչել»***[254]*։*

Այս երկրորդ պարտությունը ճակատագրական եղավ Շամիրամի համար։ Նա այլևս ապավեն չուներ և ամեն ինչից զրկված՝ միայն իր ոտքերի վրա էր հույս դրել ու դիմել էր փախուստի։ Նա կոտորեց իր որդիներին, և հիմա իր որդին է ընկել իր ետևից իրեն նույն ճակատագրին արժանացնելու համար. ***«Եվ երբ հոգնած ու սաստիկ ծարաված՝ ջուր ուզեց ու խմեց (գուցե այն համանուն գետի մոտ՝ մի գյուղում, որը մինչև հիմա Ջրհոր է կոչվում), այս ծարավը հագեցնելու կարոտն իր կյանքը մարելու պատճառ եղավ»***[255]*, - շարունակում է Ալիշանը։*

Նինվասը հիշում էր իր նվաստացուցիչ կարգավիճակը կայսրությունում, հաշվի էր առնում, որ իր մայրն այնպիսին չէր, որ ողջ մնալով՝ հանգիստ կյանք վարեր, քանզի նա հաստատապես ամեն ինչ կաներ նորից գահին տիրելու համար, այդ պատճառով էլ մինչև վերջ հալածելով Շամիրամին՝ նրան մահվան է մատնում. ***«Նինվասը վրեժխնդրության համար հարմար ժամանակ գտնելով՝ մորն սպանում է, և ինքը թագավորում է Ասորեստանի Նինվեի վրա»***[256]*։*

Շամիրամի վախճանի մասին մնացել են հնագույն այլ ավանդություններ ևս, դրանք կապված են նրա կռապաշտական հնարքների հետ։

---

252 Միքայել Չամչյանց, Պատմություն Հայոց, Երևան 1985 թ., էջ 79:

253 Ղեւոնդ Ալիշան, Հայաստան յառաջ քան զլինելն Հայաստան, Վենետիկ, Սուրբ Ղազար, 1904 թ., էջ 196:

254 Նույն տեղում:

255 Նույն տեղում:

256 Մովսես Խորենացի, Պատմություն Հայոց, Երևան 1968 թ., 102 էջ:

«Ուրիշ մի ավանդություն ասում է, որ... Շամիրամը կախարդության կամ հմայիլի պես ուլունգ է ունեցել: Եվ այս խոսքը կամ առածը՝ «ուլունք՝ ի ծով Շամիրամայ», նրանից է մնացել Հայաստանում՝ մինչև քրիստոնեությունը և մեր թարգմանչաց ժամանակները, որը գուցե հին ազգային երգից է առնված:

Շամիրամը հուռութքների հետ իր կյանքն էլ կորցրեց (և ուլունգների փոխարեն անխնա սուրը պատեց վիզը). ըստ ամենահավանական կարծիքի՝ այս կերպ եղավ գերահռչակ աշխարհակալ թագուհու վախճանը, որ ուրիշ ազգերի պատմության մեջ անծանոթ է մնացել: Եվ թեպետ մեր մեջ մնացածն էլ առասպելախառն է, սակայն ավելի մոտ է ստուգությանը»[257]***, -եզրակացնում է Ալիշանը:***

Այս պատերազմին մասնակցելու համար թանկ վճարեց նաև Արայան Արան. որպես Շամիրամի դաշնակցի՝ նրան էլ չխնայեցին: Հատկապես Նինվասն էր նրա կորուստն ուզում, երբ հիշում էր, որ իր մայրն ավելի լավ է վերաբերվել նրան՝ Կարդոսին, քան իրեն՝ հարազատ որդուն[258]*. **«Շամիրամը, միաբանվելով Կարդոսի հետ, նորից սկսեց պատերազմ Նինվասի դեմ և 62 տարեկանում սպանվեց Նինվասի կողմից՝ թագավորելով 42 տարի, իսկ Կարդոսը կամ Արայան Արան՝ 18 տարի՝ ապրելով 30 տարի»***[259]***:***

*Այսպիսով, Շամիրամի գահակալությունը շատ ծանր եղավ Հայաստանի համար: Նա գրավեց Հայոց երկիրը, ինչը մինչ այդ ոչ ոքի չէր հաջողվել, նաև ոտնձգություն կատարեց հայոց հավատքի դեմ՝ հալածելով նախահայրերից ժառանգած ճշմարիտ աստվածպաշտության հետևորդներին, նաև դարձավ պատճառ՝ Արա Գեղեցիկի և բարեպաշտությունից հեռացած ու կռապաշտությանը հարած նրա որդու՝ Արայան Արայի մահվան. **«Ջրադաշտի սուսերավորներն սպանեցին նաև Կարդոսին՝ Արայան Արային, որն անձնուրացաբար փորձում էր պաշտպանել Շամիրամին: Ասորեստանի մեծահամբավ թագուհին, այսպիսով, պատճառ դարձավ թե՛ Արա Գեղեցիկի, թե՛ նրա որդու՝ Կարդոսի անժամանակ մահվան»***[260]***:***

---

257 Ղեւոնդ Ալիշան, Հայաստան յառաջ քան զլինելն Հայաստան, Վենետիկ, Սուրբ Ղազար, 1904 թ., էջ 197:

258 Միքայել Չամչյանց, Պատմություն Հայոց, Երևան 1985 թ., էջ 79:

259 Ղեւոնդ Ալիշան, Հայաստան յառաջ քան զլինելն Հայաստան, Վենետիկ, Սուրբ Ղազար, 1904 թ., էջ 197:

260 Լևոն Միրիջանյան, Հայկյաններ, Երևան 1988 թ., էջ 46:

Շամիրամի առեղծվածը

Բոլոր ասորեստանցի կանանց
մթագնեց Շամիրամը»[261]:

Ինչպես պարզաբանման կարիք ունեցող խնդիրներ կային Նինոսի՝ ով լինելու հետ կապված, այնպես էլ՝ Շամիրամի պարագայում: Շամիրամի ու Նինոսի մասին գրել են Կտեսիաս Կնիդացին, Մար Աբաս Կատինան, Հերոդոտը, Ստրաբոնը, Դիոդորոս Սիկիլացին, Եվսեբիոս Կեսարացին, Մովսես Խորենացին և այլք: Խնդիրն այն է, որ այս պատմիչների աշխատություններից ելնելով՝ մերօրյա պատմաբանները ժամանակային առումով հանգել են տարբեր կարծիքների: Ոմանք համարում են, որ Շամիրամը եղել է Նինոսի՝ Շամշի-Ադադ I-ի կինը, ով ապրել է Ն.Ք. XIX-XIII դարերում, իսկ մյուսները պնդում են, թե նա եղել է Շամշի-Ադադ V-ի կինը, հետևաբար, ապրել է Ն.Ք. IX դարում:

*Մեկ այլ կարծիքի համաձայն՝ Շամիրամը եղել է ընդամենը առասպելական անձնավորություն՝ դիցաբանական կերպար, քանզի նրա մասին պատմվում են նաև այնպիսի բաներ, որոնք չեն կարող համապատասխանել իրականությանը: Ղևոնդ Ալիշանը գրում է. **«Այս կինը, որ և առաջին տիկին, այսինքն, տիրապետող կին եղավ ժողովուրդների վրա, հին պատմության ամենանշանավոր և տարօրինակ անձերից մեկն է: Այդ պատճառով ոմանք բոլորովին առասպելական և մտքի հնարանք են համարում նրան: Անաչառ քննողները խոստովանում են, որ շատ առասպել կա իր պատմության մեջ, մանավանդ իր ծագման շուրջ, և հետագայում օտարոտի դիպվածներ են իր մասին պատմել: Այս ամենով հանդերձ՝ ինքն ստույգ պատմական անձ է»**[262]:*

Այնպես որ Շամիրամի մասին եղած առասպելական նյութերի վրա սևեռվելու հարկ չկա՝ հատկապես, որ Մովսես Խորենացու աշխատություններում ոչ մի նման բան գրված չէ: Մեզ պետք է ուղղակի ճշտել, թե իրականում ի՛նչ ժամանակաշրջանում է ապրել Շամիրամը: Հույն պատմիչներից Կտեսիասը, որ Ն.Ք. V դարում գրել է Նինոսի և Շամիրամի մասին, վերջին ժամանակաշրջանի պատմաբանների կողմից համարվում է ոչ այնքան լուրջ տեղեկությունների տիրապետող. ոմանք էլ կարծում են, որ նա իր հորինածները խառնել է պատմական տեղեկությունների հետ, որոնց նա ծանոթացել է պարսկական և ասորական գրադարաններում.

---

261 Оппенхейм А. Лео Древняя Месопотамия. — 2-е, испр. и доп... — Москва: Наука, 1990 г., ст. 83.

262 Ղեւոնդ Ալիշան, Հայաստան յառաջ քան զլինելն Հայաստան, Վենետիկ, Սուրբ Ղազար, 1904 թ., էջ 185:

«Առավել սակավ գիտական նշանակություն ունեն Կտեսիաս Կնիդացու վկայությունները, ով ծնվել է մ.թ.ա. V դարի երկրորդ կեսին: Կտեսիասն ասորեստանյան պատմության իր ակնարկում մտցրեց բազմաթիվ ժողովրդական առասպելներ. օրինակ՝ իմաստուն Ախիկարի, վեզիրներ Սենեքերիմի և Ասարխադոնի, ասորեստանյան թագավորության հիմնադիրներ Նինոսի և Շամիրամի մասին»[263]:

Ավդիևն ամեն դեպքում չի բացառում, որ Կտեսիասը տիրապետել է նաև արքայական գրադարանի բնօրինակներից ստացած տեղեկություններին. ***«Ի դեպ, որոշ դեպքերում Կտեսիասը կարող էր հիմնվել ավելի հավաստի աղբյուրների վրա, մասնավորապես, թագավորական մագաղաթե ձեռագրերի: Նա հնարավորություն ուներ ուսումնասիրություններ անել Շուշանի (Սուզի) թագավորական արխիվներում, որտեղ նա թույլտվություն ուներ մտնելու»***[264]:

Կտեսիասը պարսկական կայսրության մայրաքաղաք Շուշանում գտնվել է գերու կարգավիճակում, ապա՝ դարձել կայսերական բժիշկ: Նա պարտավոր էր միշտ արքունական քաղաքում լինել, քանզի ամեն վայրկյան կարող էր կայսրին պետք գալ: Ուստի հավանական է, որ նա պատմություն գրելու համար հիմնականում օգտվել է Շուշանի, ոչ թե Նինվեի գրադարանից, որը բավականին մեծ հեռավորության վրա էր գտնվում այդտեղից, որից օգտվել է Մար Աբաս Կատինան:

Իսկ ինչու՞, ունենալով արքայական գրադարաններից օգտվելու նման հնարավորություն՝ ըստ Ավդիևի, նա չի կարողացել բավարար չափով ուսումնասիրել այդտեղ պահվող պատմական նյութերը: Այդ կապակցությամբ Դյակոնովը գրում է. ***«Ակնհայտ է, որ Կտեսիասը վատ է իմացել արևելյան լեզուները, ամեն դեպքում՝ նաև չգիտեր արևելյան գրերը, հետևաբար, չէր կարող օգտվել և ոչ մի թագավորական ժամանակագրությունից»***[265]:

Բայց Նինոսի և Շամիրամի պատմությունը հիմնականում հասել է հենց Կտեսիասի համապատասխան աշխատությունից, որի բնօրինակը (ինչից ժամանակին օգտվել են Դիոդորոս Սիկիլացին և այլք, բայց ոչ՝ Մար Աբասը) չի պահպանվել: Իսկ եթե Կտեսիասը քաղդեերեն լավ չիմանալու պատճառով որոշ առասպելական հավելումներ է արել, դրանից Նինոսն ու Շամիրամը չեն դադարել իրական կերպարներ լինել: Քանզի կան նաև Մար Աբաս Կատինայի հայթայթած պատմական նյութերը, որոնք բնավ կապ չունեն Կտեսիասի աշխատության հետ և ոչ էլ Պարսկաստանի մայրաքաղաք Շուշանի գրադարանում գտնվող մագաղաթների հետ:

Կտեսիասը ծնվել է Ն.Ք. 441թ., այսինքն՝ V դարի երկրորդ կեսին

---

263 Авдиев В. И., История Древнего Востока, Ленинград 1953 г., ст. 24.

264 Նույն տեղում:

265 Дьяконов И.М., История Мидии, Ленинград 1956 г., ст. 22.

և ապրել է մինչ IV դարի սկիզբը: Կտեսիասի մահվանից մոտ 50 տարի անց՝ Ն.Ք. IV դարի վերջերին, այդ երկրները գրավել է Ալեքսանդր Մակեդոնացին և կարգադրել, որ Նինվեի արքայական գրադարանի կարևոր աշխատությունները թարգմանվեն հունարեն:

Իսկ արդեն Հայոց Վաղարշակ Թագավորի օրոք՝ Ն.Ք. II դարի կեսին, նրա հրամանով քաղդեերենին և հունարենին քաջատեղյակ, ազգությամբ ասորի Մար Աբաս Կատինան գնացել է Նինվե և արքայական արխիվներում գտել այդ պատմությունները՝ քաղդեերենով և Մակեդոնացու հրամանով թարգմանված հունարեն տարբերակներով: Նա տեսել է, որ հունարենը բավականին լավ է թարգմանված և այդ տարբերակը բերել է Հայաստան:

Տեսնում ենք, որ նախքան Մակեդոնացին՝ Կտեսիասի ժամանակ, հունական տարբերակն այդ գրադարանում չէր կարող գոյություն ունենալ, իսկ Կտեսիասը, քաղդեերեն չիմանալով հանդերձ, ստիպված էր ինչ-որ կերպ թարգմանել այդ նյութերը: Այդ աշխատությունները կարող էին պիտանի լինել միայն իր հունալեզու հայրենիքում՝ Հունաստանում, ուր և, հավանաբար, առաքել է դրանք, քանզի մինչ Մակեդոնացին հելլենականությունը դեռ տարածում չէր գտել, և այդ ժամանակ հունարեն աշխատությունները Միջագետքի երկրներում իրենցից արժեք չէին ներկայացնում: Իսկ եթե ինչ-որ բան էլ մնացած լիներ Կտեսիասից, ապա կմնար Շուշան քաղաքի, ոչ թե Նինվեի արխիվներում, որտեղ իր ուսումնասիրություններն է արել Մար Աբասը:


*Ուրեմն, եթե, ըստ Դյակոնովի՝ Կտեսիասի պատմությունում կարող էին թյուրիմացություններ լինել նրա՝ օտար լեզուներին ոչ վարժ տիրապետելու հետևանքով, ապա Մար Աբաս Կատինայի պատմությունը, որից օգտվել է Մովսես Խորենացին, պետք է համարել կատարյալ, քանզի Մար Աբասը թե՛ լեզուների իմացության և թե՛ նյութերն ուսումնասիրելու հարցում հմուտ մասնագետ է եղել, նաև իր ձեռքի տակ ունեցել է հունարեն թարգմանված տարբերակը Նինոսի և Շամիրամի մասին (ի տարբերություն Կտեսիասի, ով ընդամենը բժիշկ էր և ձեռքի տակ չունենալով հունարեն տարբերակ՝ ստիպված օգտվել է իր համար անծանոթ քաղդեերեն լեզվով պահպանված տարբերակից): Հետևաբար, եթե Մար Աբասի բերած տարբերակը հին քաղդեացի պատմիչների կողմից գրված բնօրինակ է, և Նինոսի ու Շամիրամի մասին որոշ համապատասխանություններ ունի Կտեսիասի աշխատության հետ, կարելի է եզրակացնել, որ Կտեսիասը քաղդեերենի վատ իմացությամբ հանդերձ՝ կարողացել է բավարար չափով թարգմանել Շուշան քաղաքի գրադարանում պահվող այն ձեռագրերը, որոնք վերաբերում էին Նինոսին և Շամիրամին: Այդ են վկայում այլ հեղինակավոր պատմիչների և ուսումնասիրողների կարծիքները Նինոսի և Շամիրամի մասին, ինչը նշում է նաև Ավդիևը: **«Դիոդորոսը, որ***

ապրում էր մ.թ.ա. I դարում, իր «Պատմական գրադարանում» լայնորեն օգտագործում էր իր նախորդների, մասամբ էլ Հերոդոտի և Կտեսիասի աշխատությունները: Դիոդորոսը հատկապես մանրամասն նկարագրում է Ասորեստանյան կայսրության հիմնադիրներ լեգենդար Նինոսի և Շամիրամի կյանքն ու գործունեությունը»[266]:

Դիոդորոսն ասում է, որ Շամիրամը եղել է Նինոսի կինը, և դրանով ընդունում է, որ Շամիրամն ապրել է շատ ավելի վաղ, քան Շամշի-Ադադ V-ը: Իսկ Շամշի-Ադադ I-ի ապրած կյանքից մեզ հասած դրվագները լիովին համապատասխանում են Նինոսի թե գործունեության և թե ժամանակաշրջանի հետ. ***«Ն.Ք. 2000 տարի առաջ Շամիրամը՝ Ասորեստանի արքայի՝ Նինոսի կինը, հիմնադրեց և կառուցեց Բաբելոնը և զարդարեց այն հրաշալի կառույցներով, պալատներով, կախովի այգիներով և այլն»***[267]:

Դեռ Մովսես Խորենացուց մոտ 100 տարի առաջ՝ 263—340 թ. Եվսեբիոս Կեսարացին իր ժամանակագրության՝ «Քրոնիկոնի» մեջ գրելով Նինոսի և Շամիրամի մասին՝ կարծիք է հայտնում, որ նրանք ապրել են Աբրահամ նահապետի հետ նույն ժամանակաշրջանում՝ այսինքն Արամի և Արա Գեղեցիկի ժամանակ: ***«Նինոսի թագավորության շրջանում և Աբրահամի ժամանակ թագավորեց Շամիրամը՝ Նինոսի կինը»***[268]:

Տեսնում ենք, որ բավականին լուրջ հիմնավորումներ կան այն մասին, որ Շամիրամն ապրել է հենց Արամի և Արա Գեղեցիկի ժամանակ: Իսկ որ հետագայում որոշ մասնագետներ արտահայտել են այլ կարծիք, թյուրիմացություն պետք է համարել. և ահա, թե ինչու՛: Խնդիրն այն է, որ Դյակոնովը, Օպենհեյմերը, Ավդիևը և այլք, համարելով, որ Շամիրամն ապրել է Ն.Ք. IX դարում, իրենց համոզմամբ՝ բերում են այդ տեսակետը հիմնավորող որոշ պատմական տվյալներ. ***«Շամիրամը՝ Ասորեստանի թագուհին, Սալմանասար III-ի խորթ աղջիկն էր, կինը՝ Շամշի-Ադադ V-ի և մայրը՝ Ադադ-Նիրարի III-ի (IXդ. մ.թ.ա.): Հերոդոտը Շամիրամի մասին ասում է՝ որպես Բաբելոնի տիրուհու և վերագրում է նրան կախովի այգիների***



[266] Авдиев В. И., История Древнего Востока, Ленинград 1953 г., ст. 24.

[267] Энциклопедия Библейская, труд и издание архимандрита Никифора, Москва 1891 3-е издание, Москва 2005, ст. 68.

[268] Երևանի Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռագիր 2629, Եւսեբի ժամանակագիր, 201 բ:

ստեղծումը: Բայց Շամիրամն ինքը երբեք չի կառավարել. սակայն գոյություն ունեն ձեռագիր վկայություններ այն մասին, որ նա ուղեկցել է իր ամուսնուն՝ նրա պատերազմական արշավներից մեկի ժամանակ»[269]*:*

Շամիրամի մասին այստեղ նշվում է, թե նա եղել է Շամշի-Ադադ V-ի կինը, և որ ինքն անձամբ երբեք չի կառավարել, իսկ ռազմարշավի է գնացել ընդամենը մեկ անգամ, այն էլ՝ ամուսնու հետ:

*Ուրեմն, այս Շամիրամը բացարձակ հակապատկերն է այն Շամիրամի, որին ներկայացրինք, քանզի Ասորեստանի այս իշխանատենչ թագուհին, որը ճանաչված էր որպես **«այրասիրտ և վավաշոտ»***[270]*, կայսրությանը տիրելու համար սպանեց կամ հալածեց իր ամուսնուն, սրի քաշեց հարազատ որդիներին, դառնալով կայսրուհի՝ ինքն անձամբ գլխավորեց երկարատև ռազմարշավներ և 42 տարի միահեծան տիրեց կայսրությանը: Այս տարբերությունն ինչ-որ կերպ հարթելու նպատակով ասում են, որ այդ ամենի պատճառը հույներն են, որ ինչ-որ բաներ հնարել և կցել են Շամիրամի կենսագրությանը: Բերտման Ստիվենը գրում է. **«Շամիրամը Շամշի-Ադադ V-ի կինն էր: Նա իրեն անսովոր էր պահում՝ իր ամուսնու հետ առնվազն մեկ անգամ մասնակցելով արշավներին: Շամիրամը հաճախ է հանդիպում արքայական ձեռագրերում: Շնորհիվ նրա գունազարդված կենսագրության՝ ավելի ուշ պատրաստված հույն պատմաբանների կողմից, նա դարձավ Ասորեստանյան ամենահանրահայտ, լեգենդար թագուհին՝ իր գեղեցկության, դաժանության և ցանկահարույց ախորժակի պատճառով»***[271]*:*

Սակայն, ինչպես ասվեց, Մար Աբասի տրամադրության տակ եղել են թե՛ քաղդեերեն և թե՛ հունարեն տարբերակները. այնպես որ, եթե ինչ-որ բան անհամապատասխան լիներ քաղդեերեն բնօրինակի և հունարեն թարգմանված տարբերակի միջև, այդ ձեռագրերում նա իսկույն կնկատեր: Այսինքն, հույները թարգմանել են այն, ինչը եղել է քաղդեերեն բնօրինակում: Մի բան հստակ է, որ այս պատմաբանների ներկայացրած Շամիրամը ոչ մի կերպ չէր կարող լինել Նինոսի՝ Շամշի-Ադադ I-ի կին Շամիրամը, քանզի սրանք կատարյալ հակապատկերներ են: Այս ամենից կարելի է եզրակացնել, որ խորհրդային և արևմտյան որոշ մասնագետներ երկու տարբեր կերպարներ արհեստականորեն միացրել են իրար: Հավանաբար այդ երկու տարբեր ժամանակաշրջաններում տիրել են Շամիրամ անունով ասորական տարբեր թագուհիներ. մեկը Շամշի-Ադադ I-ի՝ Նինոսի կինը, Ն.Ք. XVIII-րդ դարում, իսկ մյուսը՝ Շամշի-Ադադ V-ի կինը, Ն. Ք. IX դարում:

Հետաքրքիր է, որ անհամապատասխանությունները վերաբերում են

---

269 Жан–Жак Гласснер, Месопотамия, Москва 2012 г., ст. 437.

270 Մովսես Խորենացի, Պատմություն Հայոց, Երևան 1968 թ., էջ 99:

271 Бертман Стивен, Месопотамия, Москва 2007 г., ст. 120

ոչ միայն նրանց բնավորություններին ու վարք ու բարքին, այլև՝ հենց անվանումներին, քանզի Շամշի-Ադադ V-ի կնոջն անվանել են ոչ թե Շամիրամ, այլ՝ Շամմուրամատ, և այդ անվանումների որոշ նմանությունն էլ, հավանաբար, վերցվել է՝ որպես փաստարկ Կտեսիասի, Մար Աբասի, Եվսեբիոսի, Մովսես Խորենացու և այլոց աշխատություններն արժեզրկելու համար։

*Հակասություններն այսքանով չեն ավարտվում։ Ըստ Դիոդորոսի՝ այդ «կրտսեր» Շամիրամը՝ Շամմուրամատը, չի կառավարել երկիրը նույնիսկ իր ամուսնու մահվանից հետո, և դա ընդունելով հանդերձ՝ այս երկու կերպարները մեկտեղող մասնագետները միևնույն ժամանակ ընդունում են, որ այդ Շամմուրամատը, ինքն իր բանակի գլուխն անցնելով, ասպատակել է մեդացիների և այլ երկրներ, այն էլ՝ ոչ մեկ անգամ. **«Շամմուրամատը շարունակում է մեծ դեր խաղալ. շատ անգամ արշավում է մեդացիների և Մաննի վրա... Ցավոք, այդ արշավների մասին մենք գիտենք ընդամենը կարճ թվարկումից, որ կա «Անվանումների ցուցակում» և մի փոքր ավելի ընդարձակ՝ ներկայացվող ձեռագրից... որը մեզ չի հասել»**[272]։*

Այս հակասություններից և վերը նշված պարզաբանումներից ելնելով՝ կարող ենք ասել, որ այդ գիտնականները Շամիրամի կյանքի որոշ դրվագներ վերագրել են Շամմուրամատին և ստացել են այդ «հիբրիդը»։ Նման կողմնակալ փաստարկներով նրանք ջանացել են ցանկալին՝ որպես իրականություն ներկայացնել՝ ինչ-ինչ քաղաքական նկրտումներով ձգտելով ստվերել Մովսես Խորենացու և մյուս պատմիչների աշխատությունները։

Մինչդեռ ներկայացված փաստերի հիման վրա կարող ենք եզրահանգել, որ Շամշի-Ադադ I-ի՝ այսինքն Նինոսի կինը եղել է Շամիրամը (ն.Ք. XVIII դ.), իսկ Շամշի-Ադադ V-ի կինը եղել է Շամմուրամատը (ն.Ք. IX դ.)։

*Ասույթը՝ **«Բոլոր Ասորեստանից կանանց մթագնեց Շամիրամը»**, մեզ համար ակնհայտ է դարձնում, որ Շամմուրամատն ընդամենը Շամիրամի ստվերում մնացած, պատմականորեն մթագնված ասուրուհիներից մեկն է եղել։*

---

272 Дьяконов И.М., История Мидии, Ленинград 1956 г., ст. 167–168:

Զրադաշտ

Զրադաշտ մոգը, որ դարձավ նույնանուն աղանդի հիմնադիրը, սկզբում Շամիրամի ամենավստահելի մերձավորներից էր: Նրա պարագայում ևս «ո՞ր դարում է ապրել» հարցը հստակ և վերջնական պատասխան չունի: ***«Ավեստայի» ամենասրբազան մասի՝ «Գատի» լեզվաբանական վերլուծությունը թույլ է տալիս Զրադաշտի գործունեության ժամանակաշրջանը վերագրել մ.թ.ա. XII—X դարին»***[273]*:*

Այլ ուսումնասիրողներ ժամանակային ավելի մեծ միջակայքում են փնտրում Զրադաշտի գործունեության շրջանը. ***«Համարվում է, որ Զրադաշտը ծնվել է ներկայիս Իրանի կենտրոնական մասում, բայց դա հաստատ չէ: Ավելի բարդ է Զրադաշտի ծննդյան տարեթիվը ճշտելը: Գիտնականները համարում են, որ նա ծնվել է մոտավորապես մ.թ.ա. 1700 և 600 թթ. միջև ընկած ժամանակաշրջանում: Համընդհանուր ընդունված կարծիք է, որ նա ապրել է մոտավորապես մ.թ.ա. 1000 թ. կամ ավելի վաղ»***[274]*:*

Ամեն դեպքում, տեսնում ենք, որ գիտնականների մեծ մասը կարծում է, որ նա ծնվել է ն.Ք. 1000 թ. կամ ավելի վաղ, իսկ ավելի վաղ տարբերակը՝ 1700 թվականը, համապատասխանում է Մովսես Խորենացուց առաջ՝ ն.Ք. ապրած հույն և ասորի պատմիչների տեղեկություններին. այսինքն, որ Զրադաշտը ապրել է հենց Շամիրամի և Արայան Արայի ժամանակաշրջանում:

Մովսես Խորենացին ասում է, որ ինքը հիմնականում օգտվել է այլ պատմիչների աշխատություններից, որպեսզի իրեն չվերագրեն խնդրահարույց ժամանակագրության հետ կապված հարցերը. ***«Ես նկատի ունեմ Կեփաղիոնի պատմածն էլ, որպեսզի շատերին տեղիք չտամ մեզ ծաղրելու, որովհետև նա ուրիշ շատ բաների թվում խոսում է նախ՝ Շամիրամի ծնունդի մասին, հետո դնում է Շամիրամի պատերազմը՝ Զրադաշտի հետ, ապա տալիս է Շամիրամի հաղթելը և արդեն վերջը դնում է Հնդկաստանի պատերազմը: Բայց մեզ ավելի հավաստի թվաց քաղդեական մատյանների՝ Մար Աբաս Կատինայի կատարած քննությունը, քան այս, որովհետև տեղին է պատմում և պատերազմի պատճառն էլ հայտնում է»***[275]*:*

Մար Աբաս Կատինայի գոյությունը Արևմտյան և խորհրդային շրջանի գիտնականներից ոմանք ընդհանրապես չէին ընդունում՝ նրան համարելով ընդամենը Մովսես Խորենացու երևակայության արդյունք: Մի

---

273 Википедия, Заратустра.

274 *SPACE* Искусственный Интеллект. https://otvet.mail.ru/question/18411070

275 Մովսես Խորենացի, Պատմություն Հայոց, Երևան 1968 թ., էջ 102:

մասն էլ նրան նույնացրել է Մովսես Խորենացու հետ: Նաև կարծիքներ են հնչեցրել, թե նա ապրել է Խորենացուց շատ ավելի ուշ շրջանում՝ IX դարում և այլն:

Սակայն իրականում Մար Աբաս Կատինան եղել է հենց այն ժամանակաշրջանում, որի մասին գրել է Մովսես Խորենացին: Խորենացին մեր Եկեղեցու կողմից հռչակված սուրբ է, աշակերտը՝ մեծն Մեսրոպ Մաշտոցի: Ղազար Փարպեցին գրում է, որ նա ապրել է՝ մեծ հալածանքներ կրելով մինչ մահ, և նման մարդը ո՛չ հայրենիքի վիճակը բարվոքելու, ո՛չ իշխանավորներին հաճոյանալու և ո՛չ էլ որևէ այլ պատճառով չէր կարող ստել, քանզի նա լավ գիտեր, որ սուտը մեղք է և մեծ խոչընդոտ՝ հավիտենական կյանքի ձգտող քրիստոնեայի ճանապարհին: Խորենացին, ինչպես ամեն մի ուղղադավան, ճշմարիտ քրիստոնյա, երբեք իրեն թույլ չէր տա հոգու կորստյան գնով որևէ գործ հաջողել: Սա հաշվի չեն առել հավատքից հեռացած աթեիստ պատմաբանները, ինչից ելնելով՝ Խորենացուն վերագրում են մեղքեր, որոնք իրենք են գործել հանուն կարիերայի:

*Մար Աբաս Կատինան առավել հայտնի է հայկական աղբյուրներից: Նա այնպես հանրահայտ չէ, ինչպես Նինոսի և Շամիրամի մասին գրած մյուս ուսումնասիրողները, քանի որ նա չի եղել կտեսիասի, Հերոդոտոսի, Դիոդորոս Սիկիլացու, Եվսեբիոս Կեսարացու և այլոց նման պատմիչ, այլ՝ ուղղակի գիտակ հունարենի, քաղդեերենի, բնականաբար նաև՝ ասորերենի, քանի որ ազգությամբ ասորի էր: Նա հայոց Վաղարշակ թագավորի պատվերով գնացել էր Նինվե, այնտեղի արքայական գրադարանում փնտրել և գտել պատմության այն դրվագները, որ վերաբերել են Հայաստանին: Մար Աբաս Կատինան որևէ աշխատության հեղինակ չի եղել, այլ ընդամենը բերել է այն հատվածները, որոնք ցանկանում էր տեսնել Վաղարշակ թագավորը: Դա բավարար չէր, որպեսզի նա Հերոդոտոսի կամ մյուսների նման հայտնի դառնար՝ որպես պատմիչ, և նրա բերած ձեռագրերն էլ ընդամենը մեկ օրինակ է եղել, որն էլ պահպանվել է Հայոց արքայական գանձատանը: Դրա համար էլ նա անտիկ պատմիչների նման մեծ ճանաչում չի գտել, մանավանդ, որ ապրել է Հայաստանում՝ լինելով Վաղարշակի տրամադրության տակ և հեռու իր հայրենիք Ասորեստանից: **«Ըստ Խորենացու՝ Մար Աբաս Կատինան եղել է այնպիսի մի անձնավորություն, որ հայրենիքից հեռու ապրելով՝ անծանոթ է մնացել ասորական գրական շրջաններին»**[276]:*

Սակայն, այս ամենը դեռ չի նշանակում, որ Մար Աբասի աշխատության մասին տեղեկություններն իսպառ բացակայում են աշխարհի հանրահայտ գրադարաններում, քանզի նա, լինելով ազգությամբ ասորի, այդ

[276] Մելքոնյան Հ. Գ., Հայ-ասորական հարաբերությունների պատմությունից, Երևան 1970 թ., էջ 148:

աշխատությունը թարգմանել է նաև ասորերեն և իր հայրենակիցներին էլ է օրինակ ուղարկել, ինչի մասին վկայում է Բրիտանական թանգարանում գտնված մի աշխատություն. ***«Այս կապակցությամբ շատ հետաքրքրական է եվրոպացի պատմաբան Կարրիերի՝ 1897 թ. Հ. Տաշյանին գրած մի նամակ, որով նա ծանուցում էր, թե Բրիտանական թանգարանի թիվ 4402 ձեռագրում գտել է մի ասորատառ արաբերեն աշխատություն՝ կարշունի, որն ունի այսպիսի խորագիր. «Այժմ սկսում ենք ընդօրինակել Մեծն Մար Միքայէլի՝ ասորվոց պատրիարքի ժամանակագրությունից, որ նա քաղել ու հավաքել է քաղդեացի Մարիաբասի, Սոկրատի, Թեոդորետի գրքերից»***[277]*:*

Այս ծանուցումը Խորենացու հարցով զբաղվող բանասերների ու պատմաբանների վրա ցնցող տպավորություն է գործում. նրանք անհամբեր սպասում էին վերոհիշյալ երկի հրատարակմանը»[278]*:*

Այդ պատմաբանը՝ Կարրիերը, ծանուցում է ժամանակը, թե երբ պիտի զեկուցում կարդա այդ մասին, սակայն ասորագետներից ոմանք նրան խորհուրդ են տալիս հետաձգել զեկուցումը, և այդպես էլ՝ այդ ցնցող (սենսացիոն) զեկուցումը տեղի չի ունենում, այլապես բազմաթիվ պատմաբաններ գլխիկոր պիտի մնային. ***«Կարիերը ոչ միայն իր զեկուցումը չկարդաց, այլև հրաժարվեց կարշունի բնագրի հրատարակությունից: Դա կատարեց եվրոպացի մեկ այլ պատմաբան՝ Մակլերը, որը, սակայն, իր գրած առաջաբանում խուսափում է Մարաբասյան այս բնագրի մասին տեղեկություններ տալուց***[279]***»***[280]*:*

Տեսնում ենք, որ ոչ միայն լռեցնում են Կարրիերին, այլև այդ աշխատությունը ներկայացնում են՝ անտեսելով Մար Աբասի մասին տեղեկությունները՝ դրանով ջանալով մարել այդ աշխատության հետ կապված բորբոքուն հետաքրքրությունը: Որոշ ժամանակ անց այդ նույն թանգարանում գտնվում է նաև մեկ այլ ձեռագիր՝ նորից կապված Մար Աբասի անվան հետ. ***«Շաբոյին հաջողվել էր նույն Բրիտանական թանգարանի 306 համարի ասորերեն ձեռագրում գտնել ասորերեն մի բնագիր՝ «Քաղդեացի Մարիաբասի ժամանակագրությունից հատվածներ» վերնագրով*** [281]***»***[282]*:*

---

277 Մարիբաս Կատինայի ասորի բնագրի բեկորներուն գիւտը, Յ. Տաշեան, «Հանդես ամսօրեա, համար 1, 1897 թ., էջ 2:

278 Մելքոնյան Հ. Գ., Հայ-ասորական հարաբերությունների պատմությունից, Երևան 1970 թ., էջ 148:

279 «Jonrnal Asiatique», 1903, p. 491.

280 Մելքոնյան Հ. Գ., Հայ-Ասորական Հարաբերությունների պատմությունից, Երևան 1970 թ., էջ 149:

281 J. B. Chabot, la pretendue chronique de Mariabas le Chaideen, «Jonr. Asiatique», 1905, p. 251.

282 Մելքոնյան Հ. Գ., Հայ-Ասորական Հարաբերությունների պատմությունից, Երևան 1970 թ., էջ 149:

Այս ասորագետն էլ ընդամենը խոսել է այն մասին, որ կապ է տեսել այդ երկու ձեռագրերի միջև և բավարարվել է դրանով: Սակայն մեզ համար հստակ է, որ շատ ավելի հիմնավոր է վստահել Մովսես Խորենացուն, քան՝ այս կողմնակալ գիտնականներին:

Սոսանվեր Անուշավանը՝ Հայոց թագավոր

*Շամիրամի մահվանից հետո Ասորեստանի գահին նստեց նրա որդի Նինվասը, և Նինոսի ու Շամիրամի կազմավորած կայսրությունը հպատակվեց նրան: **«Նինվասն, սպանելով իր հեշտասեր մորը, թագավորում է ինքը և խաղաղ կյանք է վարում»**[283]:*

*Հայաստանում այդ ժամանակ, հավանաբար, որպես կառավարիչ՝ կարգվում է ասորի տեղապահ: Քանի որ Շամիրամն Արայան Արայի հանդեպ ավելի լավ էր տրամադրված, քան իր սեփական որդու՝ Նինվասի, դրա պատճառով էլ Նինվասն ատելություն էր տածում Նինվեում պատանդի կարգավիճակում գտնվող Անուշավանի նկատմամբ: **«Արայան Արայի հավատարմությունը Շամիրամին Նինվասի աչքում հանցանք էր: Այդ պատճառով նրա որդի Անուշավանին, որին Շամիրամը Նինվե՝ իր արքունիքն էր տարել իբրև պատանդ կամ ծառայող, Նինվասն ավելի խստությամբ պահեց այնտեղ՝ իբրև իր թշնամու որդու»**[284]:*

*Անուշավանը դժվարությամբ էր կրում այդ նվաստացուցիչ կարգավիճակը, որում հայտնվել էր, սակայն, լինելով բավականին առույգ և գործունյա անձնավորություն՝ այդ վիճակից ելք գտնելու համար ջանք չէր խնայում: Մշակութաբան Լևոն Միրիջանյանը նրա մասին գրում է. **«Անուշավանը մտքով մեծահարուստ և խոսքի արվեստի մեջ շատահանճար մի անձնավորություն էր»**[285]: Նա, բարեկամական հարաբերություններ հաստատելով ասորի հեղինակավոր պալատականների հետ, խնդրում է, որ իր համար բարեխոսեն Նինվասի մոտ: Նման գործելակերպով Անուշավանը ցանկանում էր հետ բերել իր նախնիների գահը և իր գլխին դնել Հայոց երկրի թագը, ինչը և մասամբ հաջողեց. **«Այս Անուշավանը բավական ժամանակ արհամարհանք կրելով Ջամեսեսից՝ տառապում է արքունի դռանը. հետո բարեկամներից օգնություն գտնելով՝ ձեռք է բերում մեր***

---

283 Մովսես Խորենացի, Պատմություն Հայոց, Երևան 1968 թ., էջ 103–104:

284 Ղևոնդ Ալիշան, Հայաստան յառաջ քան զլինելն Հայաստան, Վենետիկ, Սուրբ Ղազար, 1904 թ., էջ 197:

285 Լևոն Միրիջանյան, Հայկյաններ, Երևան 1988 թ., էջ 47:

երկրի մի մասը՝ կառավարելու համար իբրև հարկատու»[286]*։*

*Վերադառնալով Հայաստան՝ Անուշավանն ամեն ինչ անում է Նինվասին իր հավատարմությունը ցույց տալու համար՝ հուսալով, որ վաղ թե ուշ ամբողջ Հայաստանի վրա կկարգվի տիրակալ, ինչն էլ շուտով իրականանում է՝ Անուշավանի հնարամտության շնորհիվ. **«Անուշավանը, երկար տարիներ նրա մոտ մնալով, ճարտարությամբ պալատականներից մի քանիսի համակրանքը շահեց և Նինվասի հավանությունն ստացավ, որ ինքը Հայաստանում իր նախնյաց աթոռին նստի՝ հավատարիմ հարկատու մնալով Ասորեստանին (թեպետ և նախ՝ ոչ մեր ամբողջ երկրի, այլ միայն մի մասի վրա վերակացու դրեց նրան Նինվասը)։ Իսկ վերջում բոլորն էլ նրան հանձնեց, որը և Անուշավանը իմաստությամբ կառավարեց՝ Նինվեի ինքնակալների հպատակությամբ»***[287]*։*

*Դիոդորոս Սիկիլացին իր պատմության գլուխներից մեկում որոշ բաներ է հիշատակում Նինոսի և հայոց արքայի մասին, ում անվանում է Բարզանես։ Սակայն նրա ներկայացրած տեղեկություններն ավելի հունական այն աղբյուրներից են վերցված, որոնք համարվում են գունազարդված կամ այլակերպված և այնքան էլ չեն համընկնում Մար Աբաս Կատինայի պատմության հետ. **«Սրանից հետո արքա Նինոսը Բաբելոնից իր զորքերը տարավ Հայաստան և մի քանի քաղաք գրավելով՝ սարսափի մատնեց տեղաբնակներին։ Բարզանեսը՝ նրանց արքան, հասկանալով, որ ինքն ի վիճակի չէ դիմադրել, գնաց նրան ընդառաջ՝ ընծաներով և հնազանդվելու պատրաստակամությամբ։ Նինոսն էլ իր կողմից մեծահոգություն ցուցաբերեց. նրան թողեց Հայաստանի իշխանությունը, միայն պահանջեց, որ իր զորքի համար օգնական գնդեր և պարեն ուղարկի»***[288]*։*

Դիոդորոսը, հավանաբար, գրել է փոքր Նինոսի, այսինքն՝ Նինվասի մասին, որ հաղթելով Շամիրամի և Կարդոսի միասնական բանակին՝ մտավ Հայաստան և ավերածություններ գործեց։ Սակայն Անուշավանը, որն ասորեստանցիների մոտ, հավանաբար, անվանվել է Բարզանես, կարողացավ շահել Նինվասի բարեհաճությունը և դառնալ Հայոց տիրակալ՝ պարտաճանաչ կերպով հարկեր մուծելով Նինվասին։

Եվ այսպես, Անուշավանը կարողացավ հասնել իր փափագին. հայոց թափուր գահին նստեց ոչ թե ասորի, այլ՝ Հայկ նահապետի Արամայիս որդու ճյուղից սերող արքա։ Կարծես թե այս փաստը ուրախալի պետք է լիներ, սակայն, իրականում, այդպես չէր։ Անուշավանը, մանկությունն անցկացնելով կռապաշտության հետևորդ դարձած իր հոր՝ Կարդոսի մոտ, պատանեկությունը՝ Շամիրամի շվայտ, անբարո արքունիքում, չափահա-

---

286 Մովսես Խորենացի, Պատմություն Հայոց, Երևան 1968 թ., էջ 106:

287 Ղեւոնդ Ալիշան, Հայաստան յառաջ քան զլինելն Հայաստան, Վենետիկ, Սուրբ Ղազար, 1904 թ., էջ 198:

288 Диодор Сицилийский, Историческая библиотека, книга II. http://ancientrome.ru/antlitr/t.htm?a=1454002000#6

սությունն էլ կրկին Նինվեում՝ Նինվասի տիրապետության ներքո, իր համար Ասորեստանը երկրորդ հայրենիք էր դարձել: Եվ ինչպես կարդոսն էր հավատարիմ Շամիրամին, այդպես և Անուշավանը Նինվասի հանդեպ իր հավատարմությունը դրսևորեց՝ մեծ հարկեր դնելով ժողովրդի վրա, որպեսզի կարողանա թե՛ ինքը ցոփ ու անհոգ կյանքով ապրել և թե՛ ասորիներին հաճոյանալ:

Անուշավանի տիրապետության շրջանում նաև նոր թափ ստացավ կռապաշտությունը: Ինքը, մանկուց կռապաշտական ծեսով նվիրված լինելով այդ հավատալիքներին, տարիքն առած ժամանակ կուռքերի պաշտամունքի մեծ ջատագով էր դարձել և հայ ժողովրդին էլ առաջնորդում էր դեպի կռապաշտություն՝ ամենուր կառուցելով նոր մեհյաններ. ***«Բայց (Մար Աբասը) պատմությունը շարունակում է այսպես. Արայան Արան պատերազմի մեջ մեռնում է Շամիրամի հետ՝ թողնելով արու զավակ՝ շատ գործունյա, հանճարախոս Անուշավան Սոսանվերին, որովհետև նա պաշտամունքի համաձայն նվիրված էր Արմենակի՝ Արմավիրում գտնվող սոսի ծառերին, որոնց տերևների սոսափյունից, նայելով քամու ուժին և ուղղությանը, մեր հայոց աշխարհում սովորեցրեց գուշակություններ անել և այն էլ՝ երկար ժամանակ»***[289]*:*

Հայաստանը՝ այս սուրբ երկիրը, ճանաչված էր մեծահամբավ Հայկ նահապետի անվամբ, որ եղել էր Հայոց և Սաղեմի արքա և բարձյալ Աստծո քահանայապետ: Սակայն նրա հետնորդներից Անուշավանը, բազմելով Հայոց գահին, դարձավ նաև Հայաստանի քրմապետ, ով հորդորում և ստիպում էր հայերին հավատարմություն ցուցաբերել այդ դիվական հավատալիքների կարգ ու կանոնին: ***«Սոսանվեր Անուշավանը սոսյաց անտառի պատգամախոսն էր: Հայկյան երկրում սովորել էին գուշակություն անել՝ սոսիների սաղարթի սոսափյունից»***[290]*:*

Հայաստանում ոչ միայն սոսիների միջոցով գուշակություններ անելն էր ընդունվել, այլև շրջակա ազգերի տարբեր կռապաշտական հավատալիքները, որոնցից հատկապես լայն տարածում էր գտել նոր-նոր առաջ եկած մի ուղղություն՝ Զրադաշտ մոգի կողմից հորինված կրակապաշտությունը. ***«Անուշավանը շատ ձիրքերի տեր և հանճարեղ մի երիտասարդ էր: Արդեն հիշեցինք, որ հայրն իրեն նվիրել էր Արմավիրի սոսյաց ծառաստանին, որտեղ, կարծում ենք, Զրադաշտի նորահռչակ կրոնի մոգերի ժողովարան էր հաստատել, և նրանց էր հանձնել իր իշխանազնի կրթությունը»***[291]*:*

Մի խոսքով, Անուշավանը հայոց ազգին ներքաշեց կռապաշտության խավարի մեջ և իր հանճարը գործադրեց՝ սեփական ժողովրդին ծանր հար-

---

289 Մովսես Խորենացի, Պատմություն Հայոց, Երևան 1968 թ., էջ 105–106:

290 Լևոն Միրիջանյան, Հայկյաններ, Երևան 1988 թ., էջ 47:

291 Ղեւոնդ Ալիշան, Հայաստան յառաջ քան զլինելն Հայաստան, Վենետիկ, Սուրբ Ղազար, 1904 թ., էջ 197:

կերով ծանրաբեռնելու միջոցով մեծ հարստություն կուտակելու և ասորիներին պարարտացնելու համար. «...ըստ պատմիչի՝ նա եղավ «ամենահարուստը և շատահանճարը՝ գործով և խոսքով»: Հարստությամբ ենք միանգամայն իմանում նրա հաջողության, զորության և գործունեության մասին»[292]:

Նման վարքագիծը, բնականաբար, չէր կարող դժգոհություններ չառաջացնել հատկապես նրանց մոտ, ովքեր դեռ հավատարիմ էին մնացել իրենց բարեպաշտ նախնիների Տեր Աստծու հավատքին: Եվ այդ դժգոհության ալիքները կամաց-կամաց մուխ ամպեր էին կուտակում Անուշավանի և իր համախոհների գլխին, ինչը վաղ թե ուշ՝ ամպրոպի պես պիտի ճայթեր:

Ազատագրում

«Հայերն արժանի են մեր առանձին ուշադրության ոչ միայն՝ մարդաբանական, այլև կենսաբանական ու պատմական տեսակետից: Մի ազգություն, որ կարողացել է պաշտպանել իր անհատականությունը Նեբրովթի և Շամիրամի ժամանակներից մինչև մեր օրերը՝ պահպանելով և իր տիպը, սովորությունները, լեզուն ու կրոնը, չնայած այն բանին, որ ոչ մի ազգ չի ենթարկվել այնքան տառապանքների»[293]:

Հայաստանում Անուշավանի կառավարումից դժգոհ անձանց թիվն օրեցօր աճում էր, և հասունանում էր ապստամբությունը, որի գլուխն էր անցել Պարետ անվամբ մի հայկազուն: Անուշավանի անօրինություններից հոգնած ժողովրդին առանձնապես համոզել պետք չէր այդ շարժմանը միանալու համար, քանզի նա մեծ դժվարությամբ էր կրում հարկերի այն բեռը, որ դրել էր նրա վրա հայոց այդ արքան: Շատերն էլ, խորշելով օտարոտի և զազրելի կուռքերի պաշտամունքից, լսում էին Տիրոջը հավատարիմ մնացած փոքրաթիվ իշխանների և քահանաների խոսքը, որ հորդորում էին դառնալ իրենց բարեպաշտ հայրերի՝ Նոյ և Հայկ նահապետների Տեր Աստծուն՝ մերժելով Շամիրամի ներմուծած աղտեղի կուռքերը, որոնց պաշտամունքն Անուշավանը տարածել էր ամբողջ Հայաստանով մեկ:

Անուշավանին սատարում էին ոչ միայն նրա համախոհ հայ իշխանավորները, այլև՝ Նինվասը՝ Ասորեստանի հզոր բանակով հանդերձ, ինչը

---

[292] Ղեւոնդ Ալիշան, Հայաստան յառաջ քան զլինելն Հայաստան, Վենետիկ, Սուրբ Ղազար, 1904 թ., էջ էջ197:

[293] Ալեքսանդր Ելիսեև: Տես Երկիր Դրախտավայր. Օտարերկրացիները Հայաստանի և հայերի մասին..., Երևան 2014, էջ 394:

մեծ խոչընդոտ էր այդ ապստամբության համար: Բայց Նինվասը նման չէր ո՛չ աշխարհակալության տենդով բռնված հորը՝ Նինոսին, ո՛չ էլ խելահեղ մորը՝ Շամիրամին: Նա առանձնապես չէր մտահոգվում նրանց հաստատած կայսերությամբ. նրան միայն անհոգ ու ցոփ կյանքն էր հետաքրքրում. ***«Նինվասը Կարդոսի և իր մոր սպանվելուց հետո խաղաղությամբ տիրեց նրանց ընդարձակ կայսրությանը և պատերազմի ու նոր աշխարհակալության փոխարեն մոր հավաքած գանձերը շռայլությամբ վայելեց»***[294]*:*

Նման ցոփակեցությունը չէր կարող իր բացասական հետևանքները չթողնել ասորական կայսրության վրա: Նինվասի անտարբերությունը հանգեցրեց տերության քայքայմանը: Ասորեստանին հպատակ բոլոր երկրներում ապստամբական խմորումներ սկսվեցին: Նինվասի վարքագիծն անդրադառնում էր ոչ միայն իր իշխանների, այլև՝ ողջ կայսերական բանակների վրա, որ նույնպես տրվելով անհոգ կյանքի՝ կորցրել էին նախկին մարտունակությունը: Նման իրավիճակում ապստամբության հաջողությունը Հայաստանում միանգամայն իրատեսական էր թվում: Հավանաբար, Ասորեստանին հարկատու բոլոր երկրները համագործակցելով գլուխ բարձրացրին և դուրս քշեցին ասորական կուսակալներին և նրանց տրամադրության տակ գտնվող զորքերին, և հարվածի անսպասելիությունից շփոթահար՝ Նինվասն ավելի շատ մտածում էր գահը չկորցնելու, քան՝ այդ երկրներում գլուխ բարձրացրած ապստամբությունները ճնշելու մասին:

Անուշավանը, որ հույսը դրել էր Նինվասի վրա, հանկարծ մնաց առանց հովանավորի: Հայաստանում գլուխ բարձրացրած ապստամբությունը գահընկեց արեց կռապաշտության հետևորդ Անուշավանին:

Հայոց գահին նստեց Պարետը, ով հայ իշխաններից էր, սակայն ոչ՝ Հայկ նահապետի ավագ որդու՝ Արամանյակի թագավորական ճյուղից, որից, մինչև Անուշավանը, սերում էին բոլոր թագավորները. ***«Անուշավան Սոսանվերին հաջորդեց Հայկյան մյուս գահակալը՝ Պարետը»***[295]*:*

Պարետը Հայկյան էր, սակայն հայտնի չէ, թե նա Հայկի որ որդուց էր սերված: Եվ քանի որ Հայկ նահապետն արքայական գահը հանձնել էր հենց Արամանյակին և նրա սերունդներին, Պարետը հայոց պատմության մեջ համարվեց ինքնակոչ, որ ուժով վերցրեց իրեն չպատկանող գահը: Այդ ժամանակից դադարեց Արամանյակի սերունդների գահակալությունը, որը պետք է վերահաստատվեր շատ դարեր անց: ***«Այս Անուշավան Սոսանվերը հարուստ էր և հանճարեղ... նրանից հետո հայոց գահին սկսեցին տիրել ոչ ըստ ազգի, այլ առաջ եկան բռնակալ այրեր և տիրեցին աշխարհիս, և սրանք են Պարետը, Արբոկը, Զավանը...»***[296]*:*

---

294 Ղեւոնդ Ալիշան, Հայաստան յառաջ քան զլինելն Հայաստան, Վենետիկ, Սուրբ Ղազար, 1904 թ., էջ 198:

295 Լևոն Միրիջանյան, Հայկյաններ, Երևան 1988 թ., էջ 48:

296 Սամուէլի Քահանայի Անեցւոյ, Հաւաքմունք ի գրոց պատմագրայ, Վաղարշապատ 1893 թ., էջ 44–45:

Պարետը մեծ նախանձախնդրություն ցուցաբերեց նախահայրերի պաշտամունքի և հայրենիքի հանդեպ: Ավերելով ասորական կռատները՝ նա Հայաստանից դուրս վռնդեց դրանցում ծառայություն մատուցող քրմերին: Ապա քահանաների հետ միասին ջանացին վերականգնել հայրենի հավատքն առ երկինքն ու երկիրն արարող Տեր Աստված: Կռապաշտությունն այնպիսի խորը վերքեր էր հասցրել, որ նախկին մաքուր հավատքը շատ դժվար էր ազգի մեջ վերահաստատել: Այնուամենայնիվ, Կարդոսի ու Անուշավանի ժամանակ ծածուկ քահանայագործող հոգևորականները Պարետի գահակալության ժամանակ ամեն ջանք թափում էին և բավականին հաջողության հասնում:

*Դժվար է ասել, թե Անուշավանն ինչ վախճան ունեցավ, սակայն այն, ինչ նա և իր հայրն արեցին հայ ժողովրդի հետ, հղի էր ծանր պատժի սպառնալիքով: Հատկապես որ, ըստ ավանդության՝ Արմավիրի այդ սոսիների պուրակում էր գտնվում արքունական մեհյանը, որտեղ Անուշավանը պաշտամունք էր մատուցում կուռքերին, իսկ դա մոտ էր այն աշտարակին, որին գամվեց Նյուքար Մադեսը. **«Այսպես, Սոսանվեր կոչումն Անուշավանի սեփականը եղավ: Ըստ մեր հեղինակներից մեկի՝ մասնավորապես մի սոսի ծառ կար Արմավիրի ապարանքի դռանը, որին նվիրված էր Անուշավանը, այդ ծառը մոտիկ էր այն աշտարակին, որի վրա կախվեց Նյուքարը»**[297]:*

Եթե Անուշավանը, մշտապես աչքի առջև ունենալով այդ կառափնատեղին, համապատասխան հետևություններ աներ, ապա կխուսափեր ծանր հատուցումից: Բայց ըստ երևույթին, նրան կուրացրել էր այս աշխարհի փառքը և կռապաշտության դիվական մոլորությունը:

*Հայաստանը շատ մեծ ներուժ ունեցող երկիր էր: Նրան պետք էր միայն բարեպաշտ, հայրենասեր, իմաստուն և քաջարի առաջնորդ, իսկ Պարետն այդպիսին էր, և նրա տիրապետության ժամանակ երկիրը սկսեց բարգավաճել: Մինչդեռ ոմանք կարծիք են հայտնում, թե այդ ժամանակ Հայաստանը ոչ միայն Ասորեստանի հարկատուն էր, այլև մի քանի պետությունների միջև բաժանված մի թշվառ երկիր էր: **«Հայ պատմաբան Շամիրովը ենթադրում է, որ որոշ ազգեր Անուշավանից հետո գրավեցին Հայաստանը և տիրեցին այնտեղ՝ մինչ Պարույրը: Բայց դա արդարացի չէ: Այդ ժամանակ Ասորեստանից բացի՝ որևէ այլ երկիր չէր կարող սպառնալ Հայաստանին»**[298]: Այո, միայն Ասորեստանն էր ի զորու Հայաստանին իր տիրապետությանը ենթարկել, քանզի այդ ժամանակաշրջանում որևէ այլ հզոր երկիր չի հիշատակվում:*

Ոմանք էլ այն կարծիքն են հայտնում, թե Արայան Արայից, այսինքն՝ Կարդոսից ու Անուշավանից սկսած՝ Հայաստանը 1000 տարուց ավելի

---

297 Ղեւոնդ Ալիշան, Հայաստան յառաջ քան զլինելն Հայաստան, Վենետիկ, Սուրբ Ղազար, 1904 թ., էջ 198:

298 Сергей Глинка, Обозрение истории армянского народа, Москва 1832 г., ст. 81.

մնացել է Ասորեստանին հպատակ հարկատու երկիր, սակայն դա ևս չի համապատասխանում իրականությանը։ ***«Հայաստանն Ասորեստանի տիրակալներին հարկատու մնաց Շամիրամից սկսած՝ մինչև Սարդանապալ՝ տասնմեկ դար շարունակ»***[299]*։*

Երբ թերթում ենք վաղ շրջանի պատմաբանների աշխատությունները, թվում է, թե իրոք Հայաստանը դարեր շարունակ պետք է որ գտնված լիներ Ասորեստանի գերիշխանության տակ։ Ոմանք էլ տեղեկությունների պակասի պատճառով ձեռնպահ են մնում այդ մասին վերջնական կարծիք հայտնելուց և համարում են, թե դեռ հայտնի չէ՝ իրականում ինչ է տեղի ունեցել այդ ժամանակներում։ Օրինակ՝ Սերգեյ Գլինկան գրում է. ***«Ասորեստանին հարկատու դառնալուց հետո, Հայաստանի պատմությունը կարծես թե ծածկվում է մշուշով»***[300]*։*

Այդ մշուշը ցրում են այն տեղեկությունները, որոնք ի հայտ եկան ավելի ուշ և լրացրին այն բացը, որը կար վաղ շրջանի պատմիչների մոտ։ Խոսքը համեմատաբար վերջերս գտնված ասորական և այլ սեպագրերի արձանագրությունների մասին է։ Դրանցից իմանում ենք, որ հենց այդ ժամանակաշրջանում՝ այսինքն Ն.Ք XVIII դարի վերջին, Ասորեստանը խորը անկում է ապրել։ Այն համարյա չի հիշատակվել ոչ միայն որպես կայսրություն, այլև որպես պետություն։ ***«Ասորեստանյան պատմությունն սկսվում է նրանից, որ Ուրի III տոհմի արքաների փոխարքան բնակություն հաստատեց Աշշուրում։ Ասորեստանի թագավորներից ամենանշանավորը, մինչ «խավար շրջանը», եղել է Շամշի-Ադադ I-ը (մոտ 1813-1781), որը ծագմամբ Ասորեստանից չէր»***[301]*։*

Օպպենհեյմը խոսում է ինչ-որ խավար շրջանի մասին, ինչին ենթարկվել է ամբողջ Միջագետքը և հատկապես՝ Ասորեստանը, և դա եղել է Նինոսից, այսինքն Շամշի-Ադադ I-ից հետո, իհարկե, աստիճանաբար, այսինքն՝ Շամիրամի և Նինվասի տիրապետությունից հետո։

««Խավար շրջան» արտահայտությունն առաջին անգամ ի հայտ եկավ Բ. Լանդսբերգերի մոտ, իր «Ասորական արքաների ցանկը» և «Խավար շրջան» հոդվածներում։ Նա շեշտում է Բաբելոնում աղբյուրների ապշեցուցիչ բացակայության մասին, սկսած Խամպուրապիի դինաստիայի վերջին թագավորներից, մինչև միջին քասեցիական դինաստիան։ Ասորեստանում այդ ժամանակաշրջանում եղավ Շամշի-Ադադ I-ի դինաստիայի ավարտը և շարունակվեց մինչև Աշշուր-Ուբալլիտ I-ը։ Երկու երկրներում էլ արքայական անվանացանկերը փոխադրվում, նետվում են այդ վիհից այն կողմ՝ բարակ և նուրբ թելով։ Միջագետքյան ժամանակագրական բազմաթիվ խնդիրներ, որոնք վերաբերում են այդ «խավար շրջանին»,

---

299 Լևոն Միրիջանյան, Հայկյաններ, Երևան 1988 թ., էջ 47։

300 Сергей Глинка, Обозрение истории армянского народа, Москва 1832 г., ст. 81.

301 Оппенхейм А. Лео, Древняя Месопотамия, Москва 1990 г., ст. 131.

սերտ կապված են այդ ժամանակահատվածի մեծության հետ»[302]*։*

Պատմաբանները գրում են, որ Միջագետքում սկսվել էր արագընթաց անկում, որը նրանք բնորոշում են որպես «խավար շրջան»։ Ասորեստանում դա սկսվել է Նինոսից հետո։ Այստեղ, իհարկե, Նինոսն ու Շամիրամն ավելի ընդհանրացված են ներկայացվում։ Անկումն սկսվում է նրանցից հետո, ինչը միանգամայն համապատասխանում է Պարետի ապստամբության և Նինվասի ժամանակներում Ասորեստանի անկման սկզբին։ Ուրեմն, Հայաստանը ոչ մի կերպ չէր կարող հպատակ լինել մի երկրի, որն ինքն էր մեծ անկում ապրում դարեր շարունակ, անընդմեջ։ Իսկ թե ի՞նչն էր իրականում Ասորեստանի, նաև Միջագետքի մյուս երկրների սրընթաց անկման պատճառը, այդ մասին կխոսվի ստորև։

Հայաստանը Պարետի օրոք. Քասեցիներ

«Եթե ինձ հարցնեին, թե ի՞նչն է ամենաբնորոշը հայկական դեմքի համար, ես հավանաբար ասեի՝ կնճիռները։ Փառահե՛ղ, առյուծի՛ կնճիռներ։ Նայելով հայի դեմքին, ես տեսնում եմ ոչ միայն իր անձնական, մասնավոր կնճիռները, այլև՝ ժողովրդի, պատմության կնճիռները։ Այդ կնճիռներն ավելի շատ ժողովրդի հնության մասին են խոսում, քան՝ մարդու ծերության։ Դրանք քանդակված են շատ ավելի ծանր գործիքով, քան ամիսների ու տարիների թեթև հերձակն էր։ Այդպիսի կնճիռներով ծնվում են։ Միառժամանակ պահում են սրտի մեջ, հետո գալիս է օրը, և նրանք դուրս են գալիս դեմքի մակերես»*[303]*։

Պարետի գահակալությամբ Հայաստանը նորից անկախություն ձեռք բերեց, ազատվեց Ասորեստանին հարկ վճարելու նվաստացումից, և ամեն ինչ արվեց երկրի տնտեսությունը զարգացնելու և բանակը հզորացնելու համար։ Դաշնակցելով հարևան պետությունների հետ՝ Պարետը որոշեց մարտարշավի ելնել միջագետքյան երկրների դեմ, քանզի այդ կողմից չարիքն անպակաս էր։ Եվ եթե նրանց չսանձեր, ապա այդ կռապաշտ երկրները հերթական զավթողական ասպատակությունը կսկսեին։ Հիշենք Բաբելա-Շումերական Բել-Նեբրովթին, Աքքադական Նարամ-Սուենին և վերջա-

---

302 Оппенхейм А. Лео, Древняя Месопотамия, Москва 1990 г., ст. 307.

303 Յոթ գարունների երկրում. Ռամիլ Հաքիմով, «Զրույց քարի հետ», գիրք – 3, Երևան 1983 թ., էջ 305:

պես՝ Ասորեստանյան Նինոսին ու Շամիրամին։ **«Գրավոր փաստաթղթերում արտացոլվող իր՝ գրեթե երեքհազարամյա պատմության ընթացքում Միջագետքը հարևանների, երբեմն էլ նաև առանձին քաղաքակրթությունների հետ մշտապես գտնվել է հակամարտությունների մեջ»**[304]։

Այդ ժամանակ Հայաստանի դաշնակիցների մեջ զգալի ուժ էին ներկայացնում խեթերը, որոնց հետ էլ՝ Պարետը հայոց բանակի գլուխն անցած, արշավեց Ասորեստանի վրա։ **«Մի ոմն Պարետ հայոց հզոր իշխաններից, երիտասարդ և անպարտելի, Անուշավանի մահվանից հետո նվաճեց և տիրեց բովանդակ հայոց աշխարհին երկար տարիներ՝ շատ պատերազմներ մղելով»**[305]։

Իսկ Ասորեստանը Նինվասի օրոք հղփացած և զգոնությունը կորցրած երկիր էր, որ հանկարծակի կորցնելով իր հպատակության տակ գտնվող պետությունները՝ չհասցրեց ուշքի գալ, դիմակայել հայոց սրընթաց հարձակմանը, և արդյունքում՝ ավերվեց և կործանվեց։ Այդ ժամանակներից էլ սկսվեց Ասորեստանի մեծ և երկարատև անկումը՝ այսպես կոչված, «խավար շրջանը»։

Խեթերի և հայերի միասնական ուժերն Ասորեստանին հուժկու հարված հասցնելուց հետո շարժվեցին դեպի Բաբելոն, որը ևս, ինչպես Նինվեն, պատուհաս էր հարևան ազգերի համար։ Քաջարի Պարետի ռազմական ունակությունների շնորհիվ հայոց բանակը հարձակվում և գրավում է նաև այդ երկիրը։

Հայերի այս ասպատակումը պատմության մեջ հայտնի է՝ որպես «Քասեցիների արշավանք». **«Ք. ա. XVIII դարում՝ Համմուրապի օրոք (Ք.ա. 1792-1750թթ.), հզորանում է Բաբելոնը, որի իշխանության ներքո միավորվում են ողջ Միջագետքը և որոշ հարակից տարածքներ։ Նրա օրոք տեղի են ունենում մի շարք ապստամբություններ, որոնք դաժանորեն ճնշվում են։ Ապստամբությունների ալիքը մեծանում է նրա որդի Սամսուիլունայի օրոք (Ք.ա. 1749-1712թթ.), որի իշխանության ութերորդ տարում էլ տեղի է ունենում քասեցիների առաջին արշավանքը դեպի Բաբելոն»**[306]։

Ըստ պատմաբանների՝ Բաբելոնն ամբողջովին գրավվել է մի քանի արշավանքներից հետո միայն, ինչին նպաստել են վերոհիշյալ դաշնակից խեթերը. ավելի ուշ նրանք հեռացել են՝ գրավելով այլ տարածքներ։ **«Քասեցիների առաջնորդ Գանդաշը ներխուժեց Բաբելոն և իրեն վերագրեց ճոխ տիտղոս՝ «Աշխարհի չորս կողմերի արքա, արքա Շումերի և Աքքադի, արքա՝ Բաբելոնի»։ Սակայն երկրի իրատեսական նվաճումը դեռ տեղի չէր ունեցել։ Եվ միայն խեթերի կողմից հասցված ջախջախիչ հարվածը նպաս-**

---

304 Оппенхейм А. Лео, Древняя Месопотамия, Москва: Наука, 1990 г., ст. 51.

305 Միքայել Չամչյանց, Պատմություն Հայոց, Երևան 1985 թ., էջ 80:

306 Արտակ Մովսիսյան, Հայոց պատմության աշխարհակալությունները, Երևան, 2008 թ., էջ 18:

տեց բաբելոնյան գահին քասեցիների վերջնական հաստատմանը»[307]*։*

Բաբելական արձանագրություններում, հավանաբար, Պարետին են անվանել Գանդաշ, կամ էլ Գանդաշը եղել է Պարետի կողմից նշանակված հայոց սպարապետ և կուսակալ։ Գրավելով այդ տարածքները՝ հայերը դրանք դարձում են ոչ միայն հարկատու, այլև երկրի ամբողջ կառավարումը հայազգի կուսակալները վերցնում են իրենց ձեռքը, ինչպես որ արեցին Աքքադի և Շումերի գրավման ժամանակ։

*Իսկ ավելի ուշ, առաջանալով՝ հայերը գրավում են նաև Շումերի տարածքները. **«Նրանց հաջողվում է գրավել Բաբելոնը և համառ պայքարից հետո, որ ընթանում էր փոփոխական հաջողություններով, նրանք իրենց ենթարկեցին նաև Մերձծովյան երկիրը...***

Քասեցի արքաները լիովին նվաճում են ամբողջ Շումերը և դնում են Մերձծովյան դինաստիայի տիրապետության ավարտը»[308]*։*

*Բայց այդ ժամանակ Շումերի տարածքում, ըստ պատմաբանների, տիրում էին ոչ թե բնիկ շումերները, այլ՝ Սեմի և Քամի սերունդներից կազմավորված ժողովուրդ։ Շումերները՝ որպես ազգություն, արդեն վաղուց դադարել էին գոյություն ունենալ։ Իսկ քասեցիները, այսինքն՝ հայկական զորքերը, ժամանակի ընթացքում գրավում են նաև Բաբելոնի արևելյան կողմում ընկած երկրները, որոնցից ամենահայտնին էլամն էր. **«Ք.ա. 1450թ. քասեցիները նվաճում են Պարսից ծոցի առափնյա շրջանում գտնվող Մերձծովյան թագավորությունը և դառնում ողջ կենտրոնական ու հարավային Միջագետքի տերերը։ Ք.ա. XV դ. վերջին նրանց հաջողվում է տիրանալ նաև էլամի թագավորությանը (Իրանական սարահարթի հարավ-արևմուտքում)»***[309]*։*

*Երբ գրավվեցին այդ երկրները, Ասորեստանը, Բաբելոնը, Շումերը և էլամը (որոնք հիմնականում եղել են ռազմատենչ և մշտական լարվածության մեջ են պահել իրենց հարևաններին՝ ծանր հարկերի տակ ճնշելով նրանց), այդ տերություններից տուժած երկրները հայերի շնորհիվ սկսեցին հանգիստ շունչ քաշել. **«Օգտվելով քասեցիների հաղթանակից՝ ապստամբում և բաբելոնյան բռնապետությունից անկախանում են մի շարք նվաճված պետություններ»***[310]*։*

*Գրավելով ամբողջ Միջագետքը՝ հայազգի տիրակալները մոտ 500 տարի կառավարեցին միջագետքյան երկրները. **«Քասեցի կառավարիչները զբաղեցրին բաբելոնյան գահը մոտ հինգ հարյուր տարի՝ չնայած***

---

307 История древнего востока, под ред. В.И. Кузищина (изд. третье, переработанное и дополненное), Москва 2005 г., ст .133–134.

308 Авдиев В. И. История Древнего Востока, Ленинград 1953 г., ст. 97.

309 Արտակ Մովսիսյան, Հայոց պատմության աշխարհակալությունները, Երևան 2008 թ., էջ 21–22:

310 Արտակ Մովսիսյան, Հայոց պատմության աշխարհակալությունները, Երևան 2008 թ., էջ 20:

նրանք իրենց անվանումները պահպանեցին մոտավորապես մինչև մ.թ.ա 1700-1230 թթ.: Գնահատել նրանց ազդեցության լայնածավալությունն ու խորությունը միջագետքյան քաղաքականության վրա ամբողջությամբ՝ որոշակիորեն դժվար է՝ հիմնականում փաստաթղթային տեղեկությունների պակասի պատճառով»[311]:

*Այդ ժամանակաշրջանի հետ կապված քիչ տեղեկություններ են պահպանվել. **«Քասեցիներին հաջողվեց ստեղծել իրենց դինաստիաները, բայց այդ դինաստիաների կազմն անհայտ է. անհայտ է նաև այն, թե ովքե՞ր են կառավարել, ինչքան են կառավարել և ինչու՞»**[312]:*

*Սակայն եղած տեղեկություններն էլ բավարար են, որպեսզի ապացուցվի, որ «քասեցիներ» անվան տակ հենց Հայաստանի բնիկները՝ հայերն են գրավել Միջագետքը, հատկապես նրա խորհրդանիշ Բաբելոնը: Հենց այստեղ էլ նրանք կենտրոնացել են, ինչի մասին գրում է նաև Ջ. Շիլտբերգերը. **«Հայերը ժամանակին տիրել են Բաբելոնին, որը, սակայն նրանց էլ չի պատկանում»**[313]:*

Այն որ քասեցիները տիրել են Միջագետքին. դա ընդունում են այս ժամանակաշրջանը ուսումնասիրող բոլոր հետազոտողները՝ չնայած ժամանակագրական առումով պատմաբանների մոտ կան առանձին տարաձայնություններ:

Զագրոսի՞ լեռնաշղթա, թե՞ Հայկական լեռնաշխարհ

Այժմ Տեսնենք, թե ինչու՞ է պատմության մեջ այդ ռազմարշավը հիշատակվում՝ որպես «Քասեցիների»: Ինչպես՝ կուտիների, այդպես և քասեցիների ծագումնաբանության խնդիրները տարակարծությունների տեղիք են տվել: Պատմաբանները, հիմնականում, ինչպես՝ կուտիների, այնպես էլ քասեցիների բնակավայր են համարել Միջագետքից դեպի արևելք ընկած Զագրոսյան լեռների տարածքները:

Այդ ժամանակներում Միջագետքի արևելյան կողմում գտնվող Զագրոսյան լեռներում, ինչպես վերը տեղեկացանք, բնակվում էին էլամացիները և լուլուբեացիները. այս փաստի առումով հետազոտողներն առարկություն չունեն: Սակայն, ինչպես՝ կուտիներին, այնպես էլ քասեցինե-

311 Оппенхейм А. Лео, Древняя Месопотамия, Москва 1990 г., ст. 50.


312 Деопик Дега Витальевич, История Древнего Востока, Москва 2016 г., ст. 140.

313 Reisen des Johannes Schiltberger aus München in Europa, Asia und Afrika von 1394 bis 1427, 1475.

*րին, որոշ պատմաբաններ, առանց ապացույց ներկայացնելու, ջանում են նույնպես այդ վայրում տեղավորել. **«Ջգիտես՝ ինչու, առանց համոզիչ հիմնավորման, քասեցիների հայրենիքը հաճախ տեղադրվել է Զագրոսյան լեռներում... մինչդեռ, Զագրոսից դեպի Միջագետքի հյուսիս քասեցիների տեղաշարժի մասին վկայող որևէ փաստ, հիշատակություն չկա»**[314]:*

Քանի որ այդ ժամանակաշրջանի Հայաստանը լիովին անտեսվել է պատմաբանների կողմից, այդ պատճառով էլ Հայկական լեռնաշխարհի հետ կապված դեպքերը ստիպված են եղել ուրիշ տեղ խցկել և որպես տարբերակ՝ ընտրել են Զագրոսյան լեռները:

*Նախ, եթե այդ ժողովուրդն անվանվել է «քասեցիներ», ուրեմն տրամաբանական է ենթադրել, որ նրանք ինչ-որ «Քաս» կամ «Քոսիա» կոչվող երկրից պետք է եկած լինեին: Սակայն Զագրոսի լեռնաշղթայում նման երկիր չի հիշատակվում, մինչդեռ նման տեղանք կա Մեծ Հայքի տարածքում, որի հետ քասեցիների երկիրը նույնացնում է հանրահայտ հնագետ և պատմաբան Դեվիդ Ռոլը. **«Վիկտորինյան դարաշրջանի գիտնականները ոչ միայն նույնացնում էին Արաքսը Գեհոնի հետ, այլև մատնացույց էին անում, որ անտիկ երկիր Քոսսիան... կարելի է նույնացնել Ասավածաշնչյան երկիր Քուշի հետ, որտեղով հոսում էր Գեհոնը: Քուշը, ամենայն հավանականությամբ, պետք է նույնացնել քասեցիների երկրի հետ՝ լեռնային ժողովրդի, որ ներխուժեց Միջագետք մ.թ.ա. II հազարամյակում և տիրեց քասեցիական Բաբելոնին՝ ամենաքիչը հինգ ու կես դար (մ.թ.ա. 1700-1160 թ.)»**[315]:*



*Այստեղ Դեվիդ Ռոլը կարծիք է հայտնում, որ քասեցիների հայրենիքը՝ Քոսիան կամ Քուշը, գտնվում է այնտեղ, որտեղով հոսում է Արաքս գետը: Իսկ Արաքսը, հոսելով դեպի Կասպից ծով, անցնում է արևելյան Վասպուրականի և Փայտակարանի տարածքներով, որոնք բնավ չեն առնչվում Զագրոսյան լեռնաշղթայի հետ: Հնարավոր է, որ Պարետը ծննդով Մեծ Հայքի այդ գավառներից մեկի իշխանն է եղել, ինչի համար էլ շարժումը կոչվել է այդ տարածքի անվամբ, ինչպես որ կուտիներին էին կապում Կորդուքի և Կադմոսի անվան հետ: **«Որտեղի՞ց հայտնվեցին քասեցիները:***

---

314 Արտակ Մովսիսյան, Հայոց պատմության աշխարհակալությունները, Երևան 2008 թ., էջ 18–19:

315 Двеид Рол, Генезис цивилизации. Откуда мы произошли, Изд–во Эксмо, Москва 2002 г., ст. 68–69.

Հին միջագետքյան բնագրերը նշում են նրանց արշավանքի մեկնակետը՝ Քաշու (կամ Քասու) երկիրը»[316]***։***

Սակայն կարծիք կա նաև, որ քասեցիներ և կուտիներ անվանումները վերաբերում են նույն կորդուք գավառին կամ ավելի ճիշտ՝ հենց Հայաստանին. ինչպես վերը՝ կուտիների հետ կապված տեսանք, Միջագետքյան որոշ երկրներ Հայաստանը հենց այդպես էլ անվանել են՝ կորդուք կամ Քարդու. ***«Ասվածին ավելացնենք մի կարևոր փաստ ևս. ավելի ուշ ողջ բաբելոնյան պետությանը տիրելուց հետո, քասեցիներն այն վերանվանում են Քարդունիաշ։ Անջատելով վերջավորությունները՝ կստանանք մաքուր տեղանուն՝ Քարդու, որը Հայաստանի հնագույն անվանումներից է։ Այդ անվամբ է Հայաստանը հանդես գալիս նաև Աստվածաշնչի հին ասորական և հին արաբական թարգմանություններում։ Հատկանշական է նաև, որ Հայկական լեռնաշխարհի և Միջագետքի հնագիտական առնչություններում իր առատությամբ հստակորեն առանձնանում է քասիթական Բաբելոնի դարաշրջանը***[317]***»***[318]***։***

---

316 Արտակ Մովսիսյան, Հայոց պատմության աշխարհակալությունները, Երևան 2008 թ., էջ 18:

317 Ք.ա. 16–13–րդ դարերում է, որ... նկատվում է Հայկական լեռնաշխարհի համար կապերի ու փոխառնչությունների հարավային (միջագետքյան) ոչ ավանդական ուղու աշխուժացում: Ճանապարհ, որն իր գոյության ողջ ընթացքում, կասսիտական գերիշխանության ժամանակներից ոչ առաջ և ոչ էլ հետո այլևս երբեք նման կարևորություն չի ունեցել Հայկական լեռնաշխարհի համար և իր անակնկալ դրսևորմամբ, ռազմաքաղաքական խիստ կարևոր գործոնից զատ, հնարավոր է, որ պայմանավորվել է նաև դեռևս ըստ արժանվույն չուսումնասիրված էթնիկական, սոցիալական, տնտեսական և այլ դրդապատճառներով» (Փիլիպոսյան, 1998 2., էջ 102):

318 Արտակ Մովսիսյան, Հայոց պատմության աշխարհակալությունները, Երևան 2008 թ., էջ 20:

Քասեցիների էթնիկական պատկանելիության մասին

«Ակնհայտ է, որ նման հինավուրց պատմություն ունեցող ժողովուրդը (հայերը), որը անկոտրում է ազգային հպարտությամբ և անսասան հավատով, արժանի է քաղաքակիրթ աշխարհի ամենալուրջ և շահագրգիռ վերաբերմունքին»[319]:

Ըստ որոշ պատմաբանների՝ հստակ չէ ոչ միայն քասեցիների ազգային պատկանելության հարցը, այլև Բաբելոնում նրանց գահակալելու հանգամանքները: Եվ ուրեմն քասեցիների հետ կապված իրողությունները բացահայտելու խնդիրը դեռևս մնում է անորոշ. ***«Քասեցիները՝ տիրակալներն օտարերկրյա անվանումներով, Բաբելոնում տիրացան արքայական իշխանությանը մոտ կես հազարամյակ: Նրանց՝ իշխանության գալու հանգամանքները ծածկված են «խավար ժամանակաշրջանի» մշուշով»***[320]:

Իսկ այդ «խավար շրջանի» մշուշը ցրելու համար հարկավոր է նայել Հայկական լեռնաշխարհի՝ Հայաստանի կողմ, որպեսզի կարողանանք քասեցիների առեղծվածին հիմնավոր լուծում տալ, իսկ եթե ոչ, ուրեմն այն այդպես էլ կմնա առեղծված:

«Վերին Խոասպում բնակվել են քասեցիները և քոսեցիները, որոնց ազգագրական պատկանելությունը բացահայտված չէ, սակայն նրանք, հավանաբար, իրենց մեջ կրում էին հնդեվրոպական էլեմենտներ, նրանց հաջողվեց գրավել Բաբելոնը և երկար դարեր այնտեղ նստեցնել իրենց դինաստիան»[321]:

Միջագետքյան երկրներում և նրա արևելքում գտնվող Զագրոսյան լեռնաշղթայում բնակվող ազգերը հիմնականում եղել են Սեմի և Քամի սերնդից, իսկ քասեցիների մասին տեղեկանում ենք, որ հնդեվրոպական ընտանիքի մաս են կազմել. ***«Քասեցիների՝ սակավ պահպանված լեզվի գենետիկական կապերը դեռ չեն սահմանվել: Կարծիք են հայտնում քասեցիների՝ հնդեվրոպական ծագման մասին»***[322]:

Իսկ քասեցիների՝ հնդեվրոպական ընտանիքին պատկանելն ավելի շատ խոսում է նրանց հայկական ծագման օգտին. ***«Ավելացնենք, որ քասեցիների հնդեվրոպական ծագման մասին դեռ տասնամյակներ առաջ են հրապարակվել մեծ թվով ուսումնասիրություններ՝ խիստ համոզիչ***

---

319 Генрих Хюбшман, немецкий арменолог.

320 Оппенхейм А. Лео, Древняя Месопотамия, Москва 1990 г., ст. 301.

321 Тураев Б. А., История древнего востока, том I, Ленинград 1935 г., ст. 68.

322 Сабатино Москати, Цивилизации Древнего Востока, Москва 2010 г., ст. 334.

փաստարկներով»[323]*։*

Հետաքրքիր է ռուս պատմաբան Ավդիևի տեսակետն այս կապակցությամբ։ Նա ուղղակիորեն շեշտում է, որ թե՛ քասեցիները և թե՛ կուտիները եղել են ուրարտացիների, այսինքն՝ հայերի ազգակից։ ***«Քասեցիները... կուտիները պատկանում էին Առաջավոր Ասիայի բնակչությանը և ազգակից էին ուրարտացիներին»***[324]*։*

Հայերը, հազարավոր տարիներ ապրելով իրենց բնօրրանում՝ Հայկական լեռնաշխարհում, մի մասն էլ երբեմն այնտեղից դուրս, հիմնականում չեն ձուլվել այլ ազգերի հետ, և իրենց էթնիկ տեսակը պահպանել են մինչ օրս։ Նման կերպ և քասեցիները չանացել են այդ 500 տարվա ընթացքում պահպանել իրենց ազգային պատկանելությունը և չձուլվել միջագետքյան տեղաբնակների հետ. ***«Քասեցիների արքայատոհմն իշխեց մինչև Ք. ա. 1155թ։ Հատկանշական է, որ Միջագետքում իրենց տիրապետության ողջ ընթացքում քասեցիները չեն ձուլվում տեղացիների հետ»***[325]*։*

Քասեցիներից մնացած արձանագրություններում կան այնպիսի տեղեկություններ, ըստ որոնց՝ նույնպես կարելի է հետևություններ անել նրանց՝ Հայաստանից Միջագետք տեղաշարժված լինելու մասին. ***«Հետաքրքիր է նաև, որ ասորեստանյան աղբյուրներում պահպանվել է ուշագրավ տեղեկություն Ք.ա. XII դ. երկրորդ կեսին անհնազանդ ազնվականների 300 ընտանիքի ըմբոստացման և Բաբելոնից Հայաստան հեռանալու մասին։ Չի բացառվում, որ այդ ազնվական ընտանիքները լինեին գահազրկված քասեցիները»***[326]*։*

Այսպիսով տեսնում ենք, որ հիմնավոր փաստարկներ կան հօգուտ այն վարկածի, որ քասեցիներն իջել են Միջագետք Հայկական լեռնաշխարհից, հետևաբար, ունեցել են հայկական ծագում։ ***«Միով բանիվ՝ բոլոր փաստերի համակողմանի քննությունը ցույց է տալիս, որ քասեցիներն ունեին հնդեվրոպական ծագում, և նրանց հայրենիքը Հայկական լեռնաշխարհում է»***[327]*։*

---

323 Արտակ Մովսիսյան, Հայոց պատմության աշխարհակալությունները, Երևան 2008թ., էջ 20:

324 Авдиев В. И. История Древнего Востока. https://www.litmir.co/br/?b=237520&p=114

325 Արտակ Մովսիսյան, Հայոց պատմության աշխարհակալությունները, Երևան 2008 թ., էջ 22:

326 Արտակ Մովսիսյան, Հայոց պատմության աշխարհակալությունները, Երևան 2008 թ., էջ 22–23:

327 Արտակ Մովսիսյան, Հայոց պատմության աշխարհակալությունները, Երևան 2008 թ., էջ 19–20:

Խիստ զարգացած «թափառաշրջիկ քոչվորները»

«Հայաստան՝ հնագույն քաղաքակրթության երկիր, բազմադարյա մշակութային ավանդույթների կրող»[328]։

Քասեցիների մասին ձևավորվել էր թյուր կարծիք, որ իբր նրանք քոչվոր ցեղեր են եղել, և Միջագետքի վրա հարձակում են գործել Զագրոսյան լեռներից։ Նույն բանն էին ասում նաև կուտիների մասին։ Մենք արդեն տեսանք, որ որոշ պատմաբաններ Հայաստանի հարցում խուսափում են ճշմարտության երեսին նայել։ Երբ խոսքը տարածաշրջանի երկրների մասին է լինում, նմանները ձեռնպահ են մնում ոչ միայն Հայաստանի անունը տալուց, այլև այդ ժամանակաշրջանի քարտեզներում Մեծ Հայքի տարածքը չեն գունավորում և ոչ մի անվանում չեն գրում այնտեղ։ Դրանով կարծես ցանկանում են ցույց տալ թե դա կամ վայրենաբնակ, կամ անմարդաբնակ տեղանք է եղել։ Նման կերպ են նրանք վերաբերվում Քուռ-Արաքսյան քաղաքակրթությունը կերտողներին, որոնց մշակույթի արտահանումը զարգացրեց այն երկրները, որոնց մասին սիրում են խոսել իբրև այդ ժամանակների առաջավոր պետություններ։ Այսպես վարվելով՝ այս հետազոտողները նախ և առաջ նսեմացնում են իրենց հեղինակությունը գիտական աշխարհում։ Այդ կանխակալությունը, որն ավելի շեշտվեց Խորհրդային անաստված կարգերի և Արևմուտքի ճնշումների ժամանակ, այնքան ակնառու է, որ անհնար է չտեսնել։

*Քանի որ այդ պատմաբանները համարում էին, որ քասեցիները զագրոսյան տարածքների բնակիչներ են եղել **«Քասեցիները Զագրոսի ցեղերից մեկն են»**[329], իսկ այդ կողմերում բացի էլամից, ուրիշ՝ քիչ թե շատ զարգացած երկիր չի եղել, հետևաբար, պետք էր քասեցիներին դարձնել քոչվոր ցեղեր, որ չունեին նստակյաց ազգերին բնորոշ մշակույթ, զարգացած տնտեսություն և այլն։ **Մի քանի տարի քասեցիների քոչվոր խմբերը թափառում էին Զագրոսի լեռներով, հազվադեպ անցնելով Տիգրիսից այն կողմ՝ ներխուժում էին մինչև Միջագետքի կենտրոն...***

Սամսուիլունի տիրապետության իններորդ տարին հայտնի է՝ որպես տարի, «երբ եկան քասեցիների բանակները», թափառականները զինվեցին և սկսեցին թալանել հյուսիսարևելյան սահմանները»[330]։

---

328 С. Мамулов, заместитель министра внутренних дел СССР.

329 История древнего востока, под ред. В. И. Кузищина, Москва 1979, ст. 133.

330 Сьюзен Уайс Бауэр, История древнего мира. Москва 2011 г., http://laiforum.ru/viewtopic.php?f=188&t=4788

Քանի որ տվյալ հեղինակը քասեցիներին համարում է զագրոսաբնակ, դրանից էլ հետևություն է անում, որ նրանք պետք է որ եղած լինեն «քոչվոր և թափառաշրջիկ»: Սակայն միևնույն ժամանակ, նրանք քասեցիների մասին գրում են այնպիսի բաներ, որ ամբողջովին հակասում են իրենց իսկ կարծիքին: ***«Քասեցիներն իրենցից ներկայացնում էին ազդեցիկ զինվորական ուժ, որի հիմքում, հնարավոր է, ընկած էին մարտակառքերի գնդերը, որ լծված էին նժույգներով... քասեցիները զգալիորեն կատարելագործեցին մարտակառքերի սարքավորումները, և նժույգների վարժեցումը և առաջին անգամ պատերազմում մտցրեցին նժույգամարտակառքային մարտավարությունը»***[331]*:*

Ուրեմն, քասեցիները եղել են ոչ թե խառնիխուռն ռազմատենչ ամբոխ, այլ՝ կազմավորված բանակ ունեցող ժողովուրդ, որն ուներ այնպիսի զարգացած մարտական տեխնիկա, որի մասին ո՛չ Միջագետքում, ո՛չ Եգիպտոսում պատկերացում իսկ չեն ունեցել: ***«Քասեցիները զգալիորեն բարելավեցին առաջավորասիական թեթև մարտակառքի սարքավորումները՝ կիրառելով սեփական ձեռքբերումները: Բացի դրանից՝ լծված ձիերին սկսեցին պաշտպանել ճակատակալները և մեջքի զրահը: Հետևակ զորքերն ստացան թեփուկավոր բրոնզե զրահներ, կաշվե աստառներով սաղավարտներ և որակյալ աղեղներ, նաև՝ ոչ մեծ բրոնզե թրեր»***[332]*:*

Մարտակառքեր պատրաստելը այդ ժամանակներում նույնն էր, ինչն այսօր՝ հրթիռաշինությունը: Նմանապես ձիեր ընտելացնելը, և դրանց տարբեր ոլորտներում, հատկապես՝ ռազմական, ծառայեցնելը նույնպես մեծ ձեռքբերում էր, որից միջագետքյան մյուս երկրները դեռևս շատ հեռու էին: ***«Քասեցիների մասին քիչ բան է հայտնի: Կա վարկած, որ առաջինը նրանք են ձի թամբել: Օրինակը վարակիչ չդարձավ, և հեծելազորը հայտնվեց միայն 500 տարի անց: Հնարավոր է, որ հենց դա էլ ուժեղ տպավորություն թողեց հին Բաբելոնյան թագավորության բնակիչների վրա»***[333]*:*

Ասել, որ նման բարձունքի չէր հասել ո՛չ Բաբելոնը, ո՛չ Ասորեստանը և ո՛չ էլ Եգիպտոսը, այլ միայն այդ Զագրոսյան լեռներում կորած մի «քոչվոր թափառաշրջիկ ցեղ», կատարյալ անհեթեթություն է: ***«Քասեցիները կատարելագործեցին առաջավորասիական մարտակառքերի կառուցվածքը: Այդ մարտակառքերի պատրաստման ժամանակ աշխատում էին տարբեր մասնագիտությունների և ամենաբարձր որակավորման արհեստավորներ՝ հյուսներ, պղնձագործներ, կաշեգործներ և զինագործներ: Կատարելագործման ենթարկվեցին և մյուս զինատեսակները, երևան եկան թեփու-***

---

331 История древнего Востока, под. ред. И. М. Дьяконова, Москва 1983 г., ст. 418.

332 История древнего Востока, под. ред. И. М. Дьяконова, Москва 1983 г., ст. 438–439.

333 Деопик Дега Витальевич, История Древнего Востока, Москва 2016 г., ст. 139.

կավոր զրահներ հետևակի, նաև ձիերի համար, հզոր աղեղներ և այլն»[334]***:***

Դա դեռ մարտակառքերի մասին: Իսկ բրոնզե զրահները և թրե՞րը, որակյալ նետ-աղեղնե՞րը: Մի՞թե քոչվորները կարողանում էին նման զենքեր պատրաստել, այն էլ՝ բրոնզից, ինչը պահանջում էր տեխնոլոգիական լուրջ հմտություններ: Իսկ մենք արդեն տեղեկացրել ենք այս աշխատության առաջին հատորում, որ թե՛ պղնձի, թե՛ բրոնզի գյուտի դափնեպսակը պատկանում է Հայկական լեռնաշխարհի բնիկներին, այսինքն՝ հայերին. մարտակառքերինը, որակյալ զենք-զինամթերքինը՝ նույնպես: ***«Մետաղագործության զարգացումը զինագործության (նաև ռազմարվեստի) առաջընթացի կարևոր նախապայմաններից էր հնագույն ժամանակների համար, մանավանդ, երբ այն ուղեկցվում էր ձիերի և մարտակառքերի կիրառմամբ: Ձիերի առաջին հիշատակությունը գրավոր աղբյուրներում վերաբերում է Հայկական լեռնաշխարհի՝ այսօր հայտնի հնագույն պետությանը՝ Արատտա երկրին (Ք.ա. XXVIII-XXVII դդ.)»***[335]***:***

Նորանոր անհերքելի փաստեր են գալիս ապացուցելու, որ ձիաբուծության և մարտակառքերի հայրենիքը եղել է Հայաստանը, սակայն այդ մասին ավելի հանգամանորեն կխոսվի հաջորդ ենթագրքում:

Ինչպես տեղեկացանք, տիրելով Բաբելոնին՝ քասեցիներն իրենց էթնիկ առանձնահատկությունը պահպանելու համար չէին ձուլվում բաբելացիների հետ, ինչը հատուկ է եղել հայերին: Եվ չձուլվելու շնորհիվ է, որ այսօր՝ Հայկ նահապետից հազարամյակներ անց, հայ ժողովուրդը գոյություն ունի. այնինչ, եթե քասեցիները քոչվոր լինեին, իրենց ցեղն ազնվացնելու համար կձգտեին զարգացած բաբելացիների հետ խառնվել: ***«Իրենց ինքնատիպությունը պահպանելուն բծախնդիր լինելով՝ նրանք թույլ չէին տալիս տեղական զորքերի միաձուլումն իրենց մարտակառքերի զորամասերին, որոնք յուրօրինակ գվարդիական գնդերի դեր էին կատարում»***[336]***:***

Քասեցիները միայն ռազմասպարեզում չէին առաջատար: Իսկ ինչե՞ր արեցին, այսպես կոչված, «քոչվորները» մեծ զարգացում ապրած Բաբելոնի տնտեսության բարգավաճման համար. ***«Քասեցիական շրջանում շեշտվում է զինվորական գործում և փոխադրամիջոցներում ձիերի և ջորիների կանոնավոր օգտագործումը, գյուղատնտեսությունում կիրառվում է համակցված գութան-սերմնացան, ստեղծվում են ճանապարհային ցանցեր, ակտիվանում է արտաքին առևտուրը»***[337]***:*** *Եվ այս ամենը կողմնակալ հետազոտողները վերագրում են քոչվոր, հետամնաց ցեղի, որ*

---

334 В. А. Якобсон, Месопотамия в XVI–XI вв. до н.э., 1988 г., ст. 203.

335 Արտակ Մովսիսյան, Հայոց պատմության աշխարհակալությունները, Երևան 2008 թ., էջ 17:

336 Արտակ Մովսիսյան, Հայոց պատմության աշխարհակալությունները, Երևան 2008 թ., էջ 22:

337 История древнего востока, под ред. В. И. Кузищина (изд. третье, переработанное и дополненное), Москва 2005 г., ст. 134.

մտնելով զարգացած Բաբելոն՝ նրա տնտեսությունը մի նոր, ավելի բարձր մակարդակի հասցրեց: Սա, իհարկե, ակնհայտորեն անտրամաբանական է. մի՞թե քոչվոր լեռնեցիները կարող էին հարթավայրերում ապրող, զարգացած բաբելացիներին սովորեցնել հերկելու և ցանելու արդյունավետ եղանակներ կամ առևտրի կազմակերպում:

Իսկ ի՞նչ ասել այն մասին, որ «քոչվոր» քասեցիները երկու մեծ գետերի՝ Եփրատի և Տիգրիսի շրջակայքում ապրող բաբելացիներին սովորեցնում են ոռոգման համակարգը կատարելագործելով՝ բնակելի դարձնել նորանոր տարածքներ, դրանով զարկ տալ գյուղատնտեսության զարգացմանը. ***«Տնտեսական վերելքը քասեցիների ժամանակաշրջանի երկրորդ կեսում, հավանաբար, կապված է ջրանցքներ փորելով և բնակչության տեղափոխություններով անբնակ տարածքներ յուրացնելու հետ: Այդ մասին է վկայում գյուղատնտեսության վերելքը»***[338]:

Անառարկելի փաստ է, որ այդ ժամանակներում հայերն արդեն մեծ նվաճումների էին հասել գյուղատնտեսության ոլորտում, հետևաբար, Բաբելոնի գյուղատնտեսության մեջ նկատված ամեն դրական փոփոխությունն էլ, բնականաբար, պետք է վերագրել Հայկական լեռնաշխարհի բնիկներին: Դրանից էլ հետևում է, որ քասեցիները ոչ թե զագրոսաբնակ խաշնարած քոչվորներ էին, այլ՝ Քուռարաքսյան մշակույթը կերտող հայեր:

Այն, որ Հայաստանի տարածքում մինչ օրս հայտնաբերվում են այնպիսի գտածոներ, որ ոչնչով չեն տարբերվում քասեցիներին վերագրվող առարկաներից, ևս Միջագետքի պետությունների վրա հայկական ազդեցության ծանրակշիռ վկայություն է. ***«Վերջերս Հայկական ՍՍՀ-ի տարածքում, Մեծամոր քաղաքում... հուղարկավորման վայրերում գտնվել են քասեցիական առարկաներ»***[339]:

Նաև կարծիք կա, որ քասեցիների, այսինքն՝ հայերի մարտարշավը միջագետքյան տեղաբնակ ժողովրդի համար սպասելի և նույնիսկ բաղձալի է եղել, քանզի նրանք ցանկանում էին ազատվել իրենց ճնշող սեփական իշխանավորների կամայականություններից և հույս ունեին, որ այդ դեպքում տնտեսությունը կզարգանար՝ ի շահ նաև տեղացիների: ***«Այդ պայմաններում իրենց իշխանությունը հաստատած քասեցիներն իրական զավթիչներ չեն եղել: Դա ներխուժում էր դեպի՝ դրան պատրաստ և դա ցանկացող հասարակություն»***[340]:

Փաստորեն, Միջագետքի ժողովուրդները քաջատեղյակ էին Մեծ Հայքի՝ զարգացած լինելու, բնիկների բարեպաշտության, դրանից բխող

---

338 История древнего Востока, под. ред. И. М. Дьяконова, Москва 1983 г., ст. 438.

339 В.А. Якобсон, Месопотамия в XVI–XI вв. до н.э., в книге – История Древнего мира, Москва 1989 г., ст. 199.

340 Деопик Дега Витальевич, История Древнего Востока, Москва 2016 г., ст. 140.

կամեցողության և այն մասին, որ նրանք իրենց հետ բերում են միայն օրհնություն և բարգավաճում։ ***«Ավանդություններից առավել հիշարժան են նրանք, որոնք պատմում են, որ Հայկի սերունդից ոմանք՝ որպես օրինապահ, գնում էին կարգ ու կանոն հաստատելու Ասիայի տարբեր երկրներում և ըստ Միխայիլ Կալիխայի՝ համագործակցում էին տարածքների կազմավորման և ազգերի կարգավիճակը բարելավելու գործում։ Ահա՛ մարդկային փառքի դափնեպսակը»***[341]։

Այս ամենը, ինչպես նաև այն, որ խեթերը կարող էին դաշինք կնքել անմիջական հարևանների՝ հայերի, ոչ թե իրենցից զգալի հեռավորության վրա գտնվող Ջագրոսյան լեռնաշղթայում դեգերող ինչ-որ թափառաշրջիկ խաշնարածների հետ, ևս փաստում է, որ քասեցիներ կոչել են հայերին, և դա անհերքելի է։

Փաստարկներն ամբողջացնենք պատմաբան Արտակ Մովսիսյանի եզրահանգմամբ. ***«Բաբելոնում իշխելու ժամանակամիջոցում քասեցիները փոխում են Բաբելոնյան տերության անվանումը՝ վերանվանելով Քարդու(նիաշ), որը Հայաստանի հնագույն անվանումներից է... այլ կերպ ասած՝ շուրջ կես հազարամյակ Բաբելոնյան տերությունը կոչվում է... «Հայաստան»»***[342]։

Նոր արշավանք՝ Հայաստանից Հնդկաստան. Արիներ

«Հնդկական Հյուսիսարևելյան հանրագիտարանում կարող ենք գտնել տեղեկություններ այն մասին, որ հայերը եկել են Հնդկաստան՝ մ.թ.ա. 3-2-րդ հազարամյակում և իրենց հսկայական ներդրումն են ունեցել Հնդկաստանի մշակույթի զարգացման մեջ»[343]։

Երբ ամբողջ Միջագետքն ընկավ հայկական գերիշխանության տակ, բնական է, որ բուն Հայաստանն սկսեց էլ ավելի հզորանալ, քանզի նորից սկսվեցին Միջագետքից հարկի տեսքով Հայաստան ներմուծվել տարբեր բնույթի ապրանքներ։ Այդ ժամանակ, հավանաբար, կրկին Պարետի օրոք, ևս երկու արշավանք սկսվեց Հայաստանից, սակայն այս արշավանքներն

---

341 Сергей Глинка, “Обозрение истории Армянского народа”, Москва 1832 г., ст. 58.

342 Արտակ Մովսիսյան, Հայոց պատմության աշխարհակալությունները, Երևան 2008 թ., էջ 23:

343 Ռոման Ղիրշման:

*արդեն հակահարված չէին, այլ ունեին հատուկ առաքելություն, որն ուղղված էր դեպի Եգիպտոս և Հնդկաստան. **«Թերևս, մետաղագործության զարգացմամբ և ձիերին լծված մարտակառքերի կիրառումով էր պայմանավորված ռազմական այն «պայթյունը», որ տեղի ունեցավ Հայկական լեռնաշխարհից Ք.ա. XVIII դ. երկրորդ կեսին՝ երեք ուղղություններով։ Դրանցից առաջինը քասեցիների արշավանքն էր դեպի Բաբելոն, երկրորդը՝ հիքսոսյան հաղթարշավը՝ դեպի Եգիպտոս... Այս ժամանակաշրջանով պետք է թվագրել նաև արիացիների առաջին արշավանքը դեպի Հնդկաստան, որը ևս մեկնարկել է հնդեվրոպական նախահայրենիքից՝ Հայկական լեռնաշխարհից և հարակից շրջաններից»**[344]։*

*Դեպի Հնդկաստան արշավն անվանվում էր «արիացիների արշավ» և, հավանաբար, ուղղված էր այդ տարածքներում մշակույթի և տնտեսության բարգավաճմանը։ Այդ ժամանակ Հնդկաստանը շատ այլ նորույթներից բացի՝ ծանոթացավ երկաթի ու մարտակառքերի գյուտերին։ Այդ մասին է վկայում հայտնի հնդիկ հնագետ Ս. Դիկշիտը։ **«Վերջապես, մեր տրամադրության տակ կան կարևոր վկայություններ՝ կապված մարտակառքերի օգտագործման հետ լայն տարածում գտած Ռիգվեդայի արիացիների մեջ։ Միանգամայն ակնհայտ է, որ միայն երկաթե դարի սկզբին շարքային զինվորները հնարավորություն ստացան օգտվելու այդպիսի մարտակառքերից, քանի որ առանց երկաթե լանջափեշի՝ մարտակառքը հազիվ թե կարողանար դիմանալ մարտարշավի ժամանակ անհարթ տեղանքներով եղող թափահարումներին։***

***Արիացիներն, ամենայն հավանականությամբ, իրենց մարտակառքերի համար որպես քարշակ ուժ օգտագործում էին ձիեր՝ բերված իրենց սկզբնական հայրենիքից՝ Կովկասից և այլ տեղերից, քանզի՝ միայն երկաթե, և ոչ երբեք բրոնզե լանջափեշը կարող էր դիմանալ այդ նժույգների սրարշավ ընթացքին»**[345]։*

Եվ զարմանալի չէ, որ արիացիները նման են եղել քասեցիներին այն առումով, որ նույն զենքն ու զինամթերքն են օգտագործել, հատկապես՝ մարտակառքերը, իսկ այդ ամենը հատուկ էր հենց Հայկական լեռնաշխարհի բնիկներին։

«Արիներ» անվան հետ կապված նշենք, որ եթե «կուտիներ» և «քասեցիներ» անվանումները մեկնաբանության կարիք ունեին, ապա «արիներ» անվանումն ինքնին պետք է պարզաբանված համարել, քանզի «Ար»-ն, արդեն գիտենք, Արարիչ անվան սկզբնատառերն են, իսկ «արիներներն» էլ, ըստ այդմ, «Արարչի ժողովուրդ», այսինքն՝ «արիներ»-ը և «արմեններ»-ը հոմանիշներ են։

---

344 Արտակ Մովսիսյան, Հայոց պատմության աշխարհակալությունները, Երևան 2008 թ., էջ 18:

345 С. К. Дикшит, Введение е археологию, Москва 1960 г., ст. 464.

«Մ.թ.ա. 2-րդ հազարամյակի կեսերին արևմուտքից Հնդկաստան են թափանցում ցեղեր, որոնք իրենց անվանում էին ari-***ներ,*** arya-***ներ, նաև*** ayu-***ներ և*** (h)ayu-***ներ***[346]***: Նրանք օգտագործում էին ձիեր, մարտակառքեր և զինված էին մետաղե զենքերով: Արիական այս ցեղերը հաստատվում են Հնդկաստանի հյուսիսային, ապա կենտրոնական ու հարավային մասերում»***[347]***:***

Հնդիկ պատմաբանները համոզված են, որ արիացիները Հնդկաստան են եկել Հայաստանից: Դա հաստատում է նաև Երևանում բնակվող հնդկուհի լեզվաբան Սանթոշ Արորան: Հնդիկ մասնագետներն այդ տեղեկությունը ուսուցանում են իրենց կրթական կենտրոններում: Այդ մասին նյութերը տեղադրված են նրանց դասագրքերում: Կան հավաստի վկայություններ առ այն, որ Հնդկաստանը հնագույն ժամանակներից իր մշակույթի զարգացման համար պարտական է Հայկական լեռնաշխարհի բնիկներին, և ըստ այդ վկայությունների՝ Հնդկաստան արիների մուտքից դեռևս շատ առաջ էլ արշավ կամ գաղթ է եղել Հայաստանից. ***«Ինչպես նշում է Ռ.Բ. Մանդալն իր «***Systems of Rural settlements in Developing countries***» աշխատությունում, Հնդկաստանում մինչ արիանիզացիան բնակություն հաստատած երկու կարևորագույն ցեղերն էին՝ հայերը և Մունդա խոսողները: Հնդկաստանում ծնված գրող Ֆիրոզ Դորաբջի Մեհթան 1944-ին գրել է, որ Հնդկաստանում քաղաքակրթություն կառուցողները արմենոիդներն էին: Մեկ այլ հնդիկ գրող Հարվարդից՝ Բիրաջա Սանկար Գուհան, իր «Ռասսայական էլեմենտները բնակչության մեջ» աշխատությունում ներկայացրել է, որ հնագույն սանսկրիտ տեքստերը և դասականներն արմենոիդներին ընդգրկում են Շուդրաների մեջ, և պատմականորեն Կոհիրտան, Ջիտրալ, Կաֆիրստան և Գիլգիթ Կաշմիր շրջանները կոչվում են «Արմենոիդ շրջաններ»»***[348]***:***

Հայաստանում Հնդկաստանի դեսպանը (2014թ.) վկայում է, որ երբ պատրաստվել է Փենջափից տեղափոխվել Հայաստան, մայրն իրեն ասել է. ***«Շնորհավորում եմ, քանի որ դու գնում ես քո հայրենիքը՝ քո նախահայրերի երկիրը»*** [349]***:***

Այս նկարներում պատկերված մարդիկ երկուսն էլ Հնդկաստանի բնակիչներից են, սպիտակամորթը այդ հյուսիսային՝ արիական տարածքներից է, իսկ սևամորթը հարավային:

Հայոց պատմության էջերից կարող ենք տեղեկանալ, որ հայերը տարբեր ժամանակաշրջաններում հարաբերություններ են ունեցել Հնդկաս-

---

346 Ригведа, Москва, 1972 г., I, 31, 10. I, 130, 6. II, 20, 24, III, 59, 5. Литература древнего Востока, 1984, Махабхарата (63, 65), стр. 58, 318.

347 Անժելա Տերյան, Հայաստանը արարչագործության և քաղաքակրթության բնօրրան, Երևան 2002 թ., էջ 145:

348 Նույն տեղում:

349 https://www.hayagitaran.am/2014/07/id–4544.html



*տանի հետ. «**Կարելի է ասել, որ Հնդկաստանը հայերին ծանոթ է եղել դարերի խորքից։ Քանի որ, սկսած Մաշտոցից, հայոց լեզվով և հայոց գրերով պահպանված ամենաառաջին տեքստերից շատերն իրենց մեջ կրում են տեղեկություններ այդ մասին։ Ահա հեղինակների ոչ լրիվ ցանկը, որոնք Մատենադարանում պահպանվող իրենց գրքերում, անդրադարձել են Հնդկաստանի թեմային. Մովսես Խորենացի՝ V դ., Եղիշե՝ V դ., Եզնիկ Կողբացի՝ V դ., Աբրահամ Խոստովանող՝ VI դ., Դավիթ Անհաղթ՝ VI դ., Անանիա Շիրակացի՝ VII դ., Սեբեոս եպիսկոպոս՝ VII դ., Մովսես Կաղանկատվացի՝ VII դ., Ստեփանոս Ասողիկ՝ X-XI դ., Թովմա Արծրունի՝ X դ., Արիստակես Լաստիվերցի՝ XI-XII դ., Մատթեոս Ուռհայեցի՝ X-XI դ., Վարդան Արևելցի՝ XIII դ., Ստեփանոս Օրբելյան՝ XIII դ., առակագիր Վարդան Այգեկցի՝ XII-XIII դ., Կիլիկիայի թագավոր Հեթում՝ XIV դ., փիլիսոփա Գրիգոր Դարանաղեցի՝ XVI-XVII դ. և շատ ուրիշներ, ինչպես նաև՝ սրան կից անհայտ հեղինակների մի ամբողջ ցանկ։ Հնդկաստանը հիշատակողների այս ցանկը գլխավորում է Ագաթանգեղոսը՝ IV դ.»**[350]։*

Հայաստանից դեպի Հնդկաստան արիացիների արշավանքի մասին, թերևս՝ այսքանը։

Ինչ վերաբերում է մյուս՝ Հիքսոսների արշավանքին, ամենայն մանրամասնությամբ կանդրադառնանք հաջորդ ենթագրքում։

[350] Лия Аветисян, Индия и армяне, Армянский фактор (независимый ежедневник), 31. 07. 2015 г., № 18.

Ամփոփում

«Ահավոր են բոլոր ժողովուրդների պատմությունները։ Բոլոր ժողովուրդներն էլ ապրել են բազմաթիվ օրհասական պահեր։ Շատերը, շատ-շատերը չեն դիմացել ճակատագրի հարվածներին։ Հայ ժողովուրդը դիմացել է»[351]։

«Հայաստան. Արարչագործությունից մինչև երկրորդ Գալուստ» հատորաշարի երկրորդ հատորի առաջին գիրքն ավարտելով՝ գալիս ենք այն եզրակացության, որ համաշխարհային պատմագիտության կողմից Հայաստանի պատմության այս հեռավոր ժամանակաշրջանն ամբողջապես անտեսված է եղել, և եթե ինչ-որ բան էլ հիշատակվել է, ապա նշվել է որպես առասպել, բանահյուսական նյութ, ինչն իբր ոչ մի առնչություն չի կարող ունենալ իրական պատմական փաստերի հետ։ Բայց ժամանակն է, որ Քուռարաքսյան քաղաքակրթության կենտրոն հանդիսացող Հայկական լեռնաշխարհի բնիկների՝ հայ ժողովրդի իրական պատմությունը ներկայացվի թե՛ հայ, թե՛ օտար հանրությանը։

Ինչպես տեսանք, Հայկ Նահապետի՝ Սաղեմ գնալուց հետո էլ Հայաստանում առ Աստված հավատքը հիմնականում մնացել է անսասան, և տնտեսությունն էլ բարգավաճել է։

Խոսվեց այն մասին, որ Սարգոն Առաջինի նորաստեղծ փոթորկուն կայսրության ահարկու ալիքները, հասնելով Հայաստան, զարնվելով Մեծ Հայքի հարավային սահմաններին, չկարողացան առաջ գնալ և նահանջեցին։

Սարգոնի թոռ Նարամ-Սուենն իր հռչակավոր պապի խելամտությունը չէր ժառանգել, ինչի հետևանքով խախտեց Հայոց հարավային սահմանները և ներխուժեց Հայաստան. դա նրա և աքքադական կայսրության համար ճակատագրական եղավ։Հայոց լեռներից ստացած հակահարվածի հետևանքով փլուզվեց աքքադական կայսրությունը, սպանվեց Նարամ-Սուենը, և ամբողջ Միջագետքը երկար ժամանակ մնաց հայերի՝ կուտիների իշխանության տակ։

Դարեր անց Հայաստանի սահմանները խախտվեցին արևելքից, հարավից և արևմուտքից։ Այդ ժամանակ Հայոց գահին նստեց Արամ Մեծը և ըստ արժանվույն պատասխան տվեց ասպատակողներին՝ պատժելով նրանց առաջնորդներին և հարկատու դարձնելով նրանց երկրները։

Արամից հետո նրա գահը ժառանգած բարեպաշտ Արա Գեղեցիկը պատերազմ մղեց Ասորեստանի կայսրուհու՝ վավաշոտ Շամիրամի դեմ և

[351] Ռամիլ Հաքիմով, Սովետական գրականություն, ամսագիր, թիվ 11, Երևան, 1980 թ.:

սուրբ նահատակությամբ կնքեց իր մահկանացուն: Այդ ժամանակ էր, որ Մեծ Հայքի տարածքում առաջին անգամ Բարեպաշտությանը փոխարինեց կռապաշտությունը, ինչը տևեց մինչև Արա Գեղեցիկի թոռան՝ Անուշավանի վախճանը: Այդ ընթացքում Հայաստանը դարձել էր Ասորեստանին հարկատու:

Ապա հայոց աշխարհում Պարետի գահակալությամբ սկսվեց Ասորեստանից անկախանալու գործընթաց: Հայերը պատմության մեջ հիշատակված կուտիներ անվամբ գրավեցին ամբողջ Միջագետքը, իսկ դարեր անց նրանք՝ արդեն «քասեցիներ» անվամբ, նորից տիրեցին Միջագետքին և մոտ հինգ դար պահեցին իրենց գերիշխանության տակ:

Հայկական լեռնաշխարհի տարածքից իրականացավ արիների արշավը դեպի Հնդկաստան:

*Իսկ քասեցիների և արիների մեծ հաղթարշավից հետո Հայաստանից դեպի Եգիպտոս արշավանքը հայտնի է արդեն՝ որպես «հիքսոսների արշավանք». **«Քասեցիները պատմության մեջ առաջիններից մեկը լինելով՝ կատարեցին ձի լծած մարտակառքերով արշավանք: Այն նախորդեց հիքսոսների արշավանքին, որի մեկնակետը ևս Հայկական լեռնաշխարհն էր»**[352]:*

[352] Արտակ Մովսիսյան, Հայոց պատմության աշխարհաքաղաքականությունները, Երևան 2008թ. էջ 6–23:

ԳԻՐՔ – II

ՆԱԽԱՆՆԱՄՈՒԹՅԱՆ ԿԱՄՔԻ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂՆԵՐԸ ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՌՆԱՇԽԱՐՀԻՑ

Հիքսոսներ

Հայաստանի հոգին ես փորձեցի հասկանալ,
Ազգն այդ հինավուրց մոտիկից իմանալ.
Միամտորեն ջանում եմ ես արդեն երկար տարիներ.
չէ՞ որ օվկիանոսի հատակը մեզ համար հեշտ չէ ճանաչել[1]:

Պարետի թագավորության շրջանում Հայաստանից սկսվեց երրորդ արշավանքը: Առաջինը դեպի հարավ՝ Միջագետք էր, որը հիշատակվել է որպես «Քասեցիների մարտարշավ», երկրորդը՝ դեպի հարավ-արևելք՝ Հնդկաստան, որն անվանվեց «Արիների արշավանք» և երրորդը դեպի հարավ-արևմուտք՝ Եգիպտոս, որն անվանվեց «Հիքսոսների մարտարշավ»:

*Հայերի արշավանքը դեպի Եգիպտոս ամենանշանակալին էր բոլոր արշավանքներից՝ բացառությամբ Հայկ նահապետի նախաձեռնածից, քանզի այս երկու արշավանքներն ունեին մի ընդհանրություն. դրանք **Մեսիական** բնույթ էին կրում, որով և առանձնանում էին մյուսներից, հետևապես, ավելի ճիշտ կլինի դրանք անվանել ոչ թե մարտարշավ, այլ՝ **առաքելություն**:*

Հայաստանից դեպի Պաղեստին Հայկ նահապետի առաքելությունը, հանգամանորեն ներկայացվել է առաջին հատորում: Այժմ կներկայացվի երկրորդ խորհրդավոր արշավանքի նպատակը:

Ջնայած այդ ժամանակաշրջանում հայերը տիրում էին տարբեր երկրների, սակայն հիմնականում բնակվում էին երկու երկրում, որ իրենց խորհրդավորությամբ ամենաառանձնահատուկն են եղել ամբողջ աշխարհում՝ հատկապես հոգևոր տեսանկյունից:

---

[1] Уфаеци (Зинуров Рафаил Наримановичь), Армения–путь тысячелетий, том I, Москва 2010 г., ст. 15.

Հայերը ծագում են առել, որպես ազգ՝ ձևավորվել, պետություն են ստեղծել և առայսօր բնակվում են Հայկական լեռնաշխարհում՝ համայն մարդկության և կենդանական աշխարհի կրկնակի օրրանում: Սակայն նրանք Պաղեստինում իրենց նահապետ Հայկ-Մելքիսեդեկի գլխավորությամբ հիմնել են նաև Սաղեմի քաղաք-թագավորությունը՝ ներկայիս Երուսաղեմը՝ դարեր շարունակ բնակվելով նաև այդ վայրում, որը հետագայում նույնպես պետք է հռչակվեր Սուրբ Երկիր: Այսինքն, այս երկու համամարդկային և համաքրիստոնեական մեծագույն երկրներում հենց հայ ժողովուրդն է առաջնային դեր խաղացել:

Թե առաջին գրքի և թե այս՝ երկրորդ հատորի նյութերը բավական խնդրահարույց են, այդ իսկ պատճառով արվել են բազմաթիվ հղումներ տարբեր գիտնականների աշխատություններին: Դա վերաբերում է հատկապես հիքսոսների մասին տվյալ ենթագրքին, քանզի սա ամենախրթիններից է և կարիք ունի հիմնավոր ապացույցների:

Սուրբ երկիր Արարատից դեպի Սուրբ Երկիր Պաղեստին

«Հայաստանը գալիս է պատմության այնպիսի խորքերից, որոնք համեմատելի են միայն Արարատի բարձրության հետ: Ինձ համար Հայաստանը կրկնակի Արարատ է: Մեկը գտնվում է պատմական անցյալի խորքերում, մյուսը հասնում է աստղերին: Ահա, թե ինչ է Հայաստանը: Խոշոր, ես կասեի՝ կոթողային մի զանգված, քաղաքակրթության ապառաժ»[2]:

Հայկական լեռնաշխարհից՝ Քուռարաքսյան քաղաքակրթության կենտրոնից սկսվեց երրորդ արշավը՝ արդեն ուղղված դեպի հարավարևմուտք, որտեղ ծաղկում էր մի այլ մշակույթ՝ եգիպտական քաղաքակրթությունը: Հայկական գնդերը, որ այդ արշավանքի ժամանակ հիշատակվել են «հիքսոսներ» անվամբ, սպառազինված էին այն ժամանակների համար ամենաառաջավոր զենք ու զրահով, մանավանդ՝ մարտակառքերով: Սկզբի համար նրանք ուղևորվեցին դեպի Սիրիա, ապա՝ Պաղեստին, որտեղ նախ հանդիպեցին Սաղեմի՝ իրենց հայրենակիցների հետ և համընդհանուր ուժերով նախապատրաստական աշխատանքներ տարան պատերազմի համար: Եվ որպեսզի այդ արշավի ընթացքում

[2] Էդուարդաս Մեժելայտիս, «Իմ կրկնակի Արարատը», Երևան 1994 թ., էջ 8:

*եգիպտացիներին համակրող քանանացի ցեղերը թիկունքում խարդավանքներ չնյութեին, բոլոր շրջակա տարածքները ենթարկեցրին իրենց. **«Թե ովքե՞ր են այդ հիքսոսները, որ Ք. ա. մոտ 1650թ. գրավեցին Ներքին Եգիպտոսը, մնում է անհայտ: Կասկած չի հարուցում այն, որ նրանց նախկին տիրապետությունը գտնվել է Պաղեստինում, ինչի համար էլ շատ պատմաբաններ նրանց համարում են սեմիտներ: Բայց արդյոք հիքսոսները քանանացինե՞ր էին, թե՞ նրանք ինչ-որ եկվոր ազգ էին, որոնք հպատակեցրել էին քանանացիներին, մնում է գուշակել»**[3]:*

*Պաղեստինը մինչ այդ համարվում էր տարբեր ցեղախմբերով բնակեցված, ոչնչով աչքի չընկնող մի տարածք, որտեղ կայուն ու հզոր էր միայն Սաղեմի հայոց թագավորությունը, որի հետ հաշվի էին նստում: Ըստ Սուրբ Գրքի՝ պաղեստինյան տարբեր գաճաճ թագավորությունները (որոնց մեջ նաև Սոդոմն ու Գոմորը) հարկատու էին Պաղեստինից պատկառելի հեռավորության վրա գտնվող էլամացիներին: Միայն Սաղեմն էր զերծ մնացել այդ նվաստ վիճակից: Ավելին, Հայկական լեռնաշխարհից եկած հզոր և մեծաթիվ զորքը բոլորին իրեն հպատակեցրեց՝ Պաղեստինը դարձնելով մեծ և հզոր տարածաշրջան՝ բնակեցված Քամի և Սեմի սերունդներով, որոնց գլխավորում էին Հաբեթածին հայերը. **«Հայտնի է, որ հիքսոսների գլխավոր հենակետը նախքան եգիպտոս արշավելը գտնվել է Պաղեստինում: Եգիպտական աղբյուրները, որպես այդպիսին՝ դիտում էին Պաղեստինում գտնվող Շարուխեն քաղաքը (Թել էլ-Աջուլ հնավայրը)՝** (Kempinski, 1974: 145ff.)... **Պաղեստինում հիքսոսյան տիրապետության շրջանում հնագիտական ուսումնասիրությունները թույլ են տալիս եզրակացնել նախորդ փուլի համեմատ բնակչության մեծ աճի մասին: Ըստ ամենայնի՝ այս շրջանի Պաղեստինում ստեղծվել էր բավական հզոր պետականություն, որն աչքի էր ընկնում ռազմականացման բարձր մակարդակով...***

***Մինչդեռ դրանից առաջ ռազմաքաղաքական և տնտեսական առումով Պաղեստինը երկրորդական նշանակություն ունեցող տարածաշրջան էր: Բնական է ենթադրել, որ Պաղեստինում վերը նշված փոփոխությունները պետք է որոշակիորեն պայմանավորված լինեին զգալի թվով եկվոր բնակչության առկայությամբ»**[4]:*

*Հայկական հզոր ուժին ենթարկվելը տեղացիների համար ոչ թե ծանր լուծ եղավ, այլ նպաստեց նրանց տնտեսական և մշակութային վերելքին: Այդ մասին են վկայում Պաղեստինի տարածքում պեղված գտածոները, որ համընկնում են Հայաստանի հնավայրերից գտնված իրերի հետ. **«Զափազանց կարևոր են Քանաանի տարբեր հնավայրերից այս ժամանա-***

---

[3] К. В. Рыжов, Священная Иудея, Москва 2006 г., ст. 16–17.

[4] Հովհաննես Ահրամանյան «Հայ Արիներ», Թիվ 85, 86, 87, մայիս, հունիս, հուլիս, 2007 թ., էջ 24–25:

կաշրջանին վերաբերող նյութերը՝ հատկապես մետաղյա գտածոները, որոնք խիստ բնութագրական են Անդրկովկասի գրեթե բոլոր հնավայրերի համար: Անդրկովկասի հնավայրերում դրանց մեծ տեսականու մի շարք՝ 26 ներկայացուցիչներ (միաձույլ, շուրջ կես մետր երկարությամբ սրեր, մարտակառքերի և սայլերի վրա դրվող եղջերվակերպ ու ցլակերպ արձանիկներ և այլն) առկա են, օրինակ՝ Վրաստանում և Եգիպտոսում»[5]:

Հնագետները, խոսելով հիքսոսների՝ Պաղեստին գալու մասին, ասում են, որ նրանք ավելի վաղ էլ են եղել այդտեղ: Որպես ապացույց՝ նրանք վկայակոչում են հիքսոսյան որոշ գտածոներ, որպիսիք, սակայն, շատ ավելի վաղ էլ են հայտնվել Պաղեստինում: Իսկ դա, բնականաբար, առնչվում է այս դեպքերից առաջ Հայկ նահապետի՝ Քանան գալու հետ: ***«Հիքսոսների տիրապետությունը Պաղեստինում սկսվել է մ.թ.ա. XVIII դարի երրորդ քառորդում և, ձգվել մոտավորապես երկու հարյուր տարի, սակայն նրանց մշակույթը տարածված է եղել այս տարածքներում դեռ շատ առաջ՝ մինչ նրանց տիրապետությունը: Հիքսոսական նյութական մշակույթը հայտնվեց Պաղեստինում և սկսեց զարգանալ ամբողջ մ.թ.ա. XIX դարում, իսկ Եգիպտոսում այդ գործընթացը տեղի ունեցավ XII դինաստիայի տիրապետության ժամանակ... Հիքսոսների առաջին խմբերը, հնարավոր է, հայտնվեցին այստեղ ավելի վաղ՝ մ.թ.ա. XX դ.»***[6]:

Հիքսոսների երկրորդ գալուստն ավելի մեծ հետք թողեց Պաղեստինում, քանզի բոլոր տեղաբնակ ժողովուրդները ենթարկվեցին նրանց բարձր մշակույթի ազդեցությանը՝ նոր զարգացում ապրելով շինարարության, կավագործության, մետաղագործության և այլ արհեստների, ինչպես նաև որոշ արվեստների ոլորտներում. ***«Միանգամայն հավանական է, որ ռազմիկների հանրությունը, որն իր մարտակառքերով մ.թ.ա. XVIII դ. ներխուժեց Պաղեստին, եղել է բավականին միասեռ: Այդ բանակում եղել է հիասքանչ կարգապահություն և կենտրոնացված հրամանատարություն, մեծ տեղ է տրվել ռազմիկների մարզումներին:***

Ակնհայտ է, որ մինչ այդ այստեղ են եկել մարդկանց առանձին խմբեր, ովքեր հաստատվել են Պաղեստինում և աստիճանաբար խառնվել տեղի բնակչության հետ:

Նրանք իրենց հետ բերեցին հնդեվրոպական լեզուն, նոր ապրելաձև, գեղանկարչական հնարքներ, կրոնական պատկերացումներ և ձևեր:

Գերմանացի գիտնական Կուրտ Գալլինգը համարում էր, որ հիքսոսները Պաղեստինի բնակչությանը ծանոթացրին ազգային կառուցվածքների և քաղաքական կազմակերպությունների հետ, ինչի մասին մինչ այդ նրանք չգիտեին...

---

5 Հովհաննես Ահրամանյան «Հայ Արիներ», Թիվ 85, 86, 87, մայիս, հունիս, հուլիս, 2007 թ., էջ 27:

6 Эммануэль Анати, “Палестина до древних евреев”, Москва 2007 г., ст. 310.

Եվ Գալլինգն այս ամենից եզրակացրեց, որ նոր կառուցվածքները, հավանաբար, ներմուծվել են Կովկասից կամ Փոքր Ասիայից»[7]:

Հուղարկավորություններն էլ մինչ հիքսոսների գալը Պաղեստինում այլ կերպ են եղել, և միայն նրանցից հետո են այնտեղ սկսել մարդու հետ հուղարկավորել նաև նրան պատկանող ձիուն: Նման հուղարկավորություններ այդ ժամանակներում հատուկ էին Հայկական լեռնաշխարհի բնակիչներին: Նման գերեզմաններ մինչ օրս հայտնաբերվում են ներկայիս Հայաստանի հնավայրերի պեղումների ժամանակ: Հայերի և հիքսոսների այդ նույնանման հուղարկավորությունները ևս ապացուցում են, որ հիքսոսները Հայկական լեռնաշխարհից են իջել Պաղեստին. ***«Միջին քաղաքային շրջանում Պաղեստինի տիրակալները ննջեցյալներին հուղարկավորում էին նրանց պատկանող ավանակների և ձիերի հետ... Մարդկանց իրենց պատկանող ձիերով և այլ կենդանիներով թաղելու սովորությունն ավելի վաղ շրջանում սեմական ցեղերի մոտ չի եղել: Միևնույն ժամանակ դա հատուկ է հնդեվրոպական ցեղերին... Այն, որ այդպես էին անում նաև հիքսոսները, ակնհայտ է»***[8]:

Նոր եկած հայկական գնդերը չէին կարող տեղավորվել իրենց հայրենակից սաղեմացիների կառուցած բնակավայրերում: Դրա համար էլ նրանք նախաձեռնեցին նոր բնակավայրերի կառուցման աշխատանքներ. ***«Համարվում էր, որ հիքսոսները բավական բարվոք և երկար ապրել էին Սիրիայում ու Պաղեստինում, կառուցել այնտեղ մեծ ամրոցներ, ինչպիսիք են Կարկեմիշը, Քատնան, Գազան (Թել-էլ-Ադժուլ) և Շարուխենը (Թել-էլ-Ֆառա)»***[9]:

Տնտեսապես ամրապնդելով թիկունքը, հայ առաջնորդներն սկսեցին ամենայն լրջությամբ սևեռվել ռազմական խնդիրների վրա՝ տեղացիներին էլ հավաքագրելով և վարժեցնելով նոր տեսակի զենքերով պատերազմելու մարտարվեստին: ***«Հիքսոսները և նրանց միավորված մարդկանց խմբերն այս տարածաշրջան բերեցին զենքերի նոր տեսակներ, զինվորական հնարքներ և ճարտարապետություն: Գեզերում, Բեֆ-Ջերախում և պաղեստինյան այլ հուշակոթողներում կարելի է տեսնել հիքսոսների՝ մինչև մեր օրերը հասած զինվորական նշանակություն ունեցող կառույցների մնացորդներ, որոնք թվագրվում են մ. թ. ա. 2-րդ հազարամյակի սկզբներին: ... Մ. թ. ա. 3-րդ հազարամյակում Միջագետքում ի հայտ եկավ խոյահարումը (տարանը), բայց Սիրիա-Պաղեստինյան տարածաշրջանում և Եգիպտոսում այն կարևոր նշանակություն ձեռք բերեց միայն հիքսոսների ժամանակաշրջանում: Հիքսոսյան տիրակալներն ստեղծեցին նաև***

---

7 Эммануэль Анати, “Палестина до древних евреев”, Москва 2007 г., ст. 325.

8 Эммануэль Анати, “Палестина до древних евреев”, Москва 2007 г., ст. 327.

9 Штайндорф Георг, Когда Египет правил Востоком. Пять столетий до нашей эры, Москва 2013 г., ст. 36.

ամրաշինության տպավորիչ համակարգեր»[10]*։*

*Այն մշակույթը, որ իրենց հետ բերեցին հիքսոսները, բնականաբար, կարող է հուշել, թե որտեղ պետք է փնտրել նրանց հայրենիքը։ Մասնագետները հիքսոսների հայրենիքը տեղադրում են Սիրիայից և Պաղեստինից հյուսիս ընկած տարածքներում, որտեղ և գտնվում է Քուռարաքսյան քաղաքակրթության կենտրոնը՝ Հայկական լեռնաշխարհը. **«Հիքսոսները Պաղեստին բերեցին բազում նորություններ, և այս նորամուծությունների ծագումն ակնհայտ էր։ Այս ամենից դատելով՝ դրանք առաջացել են արևելքում՝ մի որևէ տեղ կամ «Բերրի կիսալուսնից» հյուսիս»***[11]*։*

*Կարելի է անհերքելի համարել Սիրիայում և Պաղեստինում հիքսոսների օգտակար և բարենպաստ ներկայության փաստը։ **«Հիքսոսների կառավարած նման կայսրությունը պետք է հետք թողներ Սիրիայի և Պաղեստինի ժողովուրդների մեջ»***[12]*։*

Փաստորեն ձևավորվել էր մի աննախադեպ մեծության հզոր կայսրություն, քանզի այդ ժամանակ հայերի տիրապետության տակ էին գտնվում Միջագետքը, Սիրիան, Պաղեստինը, և շուտով նրա մեջ պիտի ընդգրկվեր նաև Եգիպտոսը.

«Հին Հայաստանի Արագածոտն գավառում Ք.ա. III հազարամյակում ձևավորվել էր հնդեվրոպական կամ հին արիական մշակույթը կրողների ռազմատենչ, սոցիալ-տնտեսական բարդ կառուցվածքով հզոր հասարակություն, որը տիրապետում էր մետաղագործության և ձիաբուծության գաղտնիքներին։ Բարդ տեխնոլոգիաների տիրապետումը, ձին ռազմի նպատակով որպես հեծկան օգտագործումը, անագային բրոնզի, գուցե նաև երկաթի հայտնագործումը, դրանցից նորագույն զինատեսակների պատրաստումը, հասարակության բարդ կառուցվածքը և անսահմանափակ լիազորություններով օժտված թագավորական իշխանությունը ձևավորել էին մի հուժկու ռազմական մեքենա, որը շուտով շարժման մեջ դրվեց։ Դա պատմագրության մեջ հիքսոսների արշավանք կոչվող շարժումն էր դեպի Եգիպտոս։ Հայաստանից արշավելով՝ նրանք մեկը մյուսի ետևից նվաճեցին իրենց հարևան ժողովուրդներին, նրանցից շատերին համախմբեցին իրենց շուրջ և, կուտակվելով Պաղեստինում, նախապատրաստվեցին իրենց վճռական և կարևոր թռիչքին՝ հարուստ և բարգավաճ փարավոնների երկրի նվաճմանը»[13]*։*

---

10 Эммануэль Анати, “Палестина до древних евреев”, Москва 2007 г., ст. 334–335.

11 Эммануэль Анати, “Палестина до древних евреев”, Москва 2007 г., ст. 330.

12 Д. Г. Брэстедъ, История Египта, Москва 1915 г., ст. 229.

13 Հակոբ Սիմոնյան, Հիքսոսներ, ամսագիր Անդին 10, 2013 թ.:

Մարտարշավ դեպի Եգիպտոս

«Որպես պատմաբան, որպես գիտության այր՝
ես Հայաստանի պատմության մեջ տեսա մի ամբողջ
առանձնահատուկ աշխարհ, որում հազարավոր
հետաքրքրագույն և բարդ հարցեր արթնացնում էին
գիտական հետաքրքրություն»[14]:

Հայոց բանակը՝ Պաղեստինում արդեն կազմ ու պատրաստ, սպասում էր հրամանի դեպի Եգիպտոս շարժվելու համար: Բանակի առջևում հայոց այրուձին էր, որն այն ժամանակ հիմնականում կազմված էր ձիերին լծված մարտակառքերից, որոնցում տեղավորվում էր երկու զինվոր՝ կառապանը և աղեղնավորը:

*Հիքսոսների զենքերն այդ ժամանակների համար ամենակատարյալներն էին՝ բարձրորակ մետաղից պատրաստված, իսկ մարտիկները բազմաթիվ պատերազմական գործողությունների մասնակցած՝ փորձառու էին և թրծված: Հայոց հետևակին միացել էին Պաղեստինի և Սիրիայի տեղաբնիկ ժողովուրդներից կազմված գնդերը. **«Ենթադրվում է սակայն, որ հիքսոսները կազմում էին միայն ռազմիկների փոքրաթիվ վերնախավը, մինչդեռ զինվորական մասսան բաղկացած էր անկարգապահ մի խաժամուժից՝ անապատների ու լեռների տարացեղ ու բազմալեզու բնակիչներից»**[15]:*

Եգիպտացիներն այդ ժամանակ համեմատաբար ապահով, մեկուսացած էին ապրում, իսկ երկար ժամանակ մեծ պատերազմներից հեռու մնալը նպաստել էր տնտեսության, մշակույթի զարգացմանը. կառուցվել էին տպավորիչ մեծության և շքեղության տաճարներ, բուրգեր, այլ ճարտարապետական կոթողներ: Ռազմական ուժերն էլ հետ չէին մնացել: Այդ ամենն ինքնավստահություն էր ներշնչում, և նրանք ապրում էին համեմատաբար անհոգ կյանքով՝ չնայած երկրի որոշ պառակտվածության և ներքին հուզումների:

Եգիպտացիք շարունակում էին իրենց անհոգ և ինքնավստահ առօրյան, երբ հիքսոսների զորքերն, անցնելով Սինայի անապատը, հասան Եգիպտոս:

***«Մ.թ.ա. մոտ 1675-ին հիքսոսները, միջցեղային միություն ստեղծելով Պաղեստինի և Հյուսիսային Արաբիայի տարածքներում, ներխուժեցին Եգիպտոս»**[16]:*

---

14 Валерий Брюсов, в книге «Русские писатели об Армении», Ереван 1946 г., ст. 84.


15 Ջենոն Կոսիդովսկի, «Բիբլիական ավանդապատումներ», Երևան 1980 թ., էջ 128:

16 Филипп Симон, Мари-Лор Буэ, Древний Египет, Москва 2009 г., ст. 13.

*Եգիպտոսի սահմանապահները և հսկող ջոկատները լուրը հասցրին փարավոնին՝ գուժելով, որ մի մեծ և անսովոր բանակ է մոտենում իրենց սահմաններին. **«Այսպես էին զեկուցում փարավոնին՝ նրա իմաստուն գուշակ-քրմերը և աստրական սահմանից վերադարձող հավատարիմ լրտեսները։ Տագնապած փարավոնը զորք էր ժողովում Մեծ Եգիպտոսի բոլոր ծայրերից։ Մ.թ.ա. 1710 թվականն էր»**[17]։*

*Եգիպտական մեծաթիվ բանակը պատրաստվում էր օտար զորքերի դեմն առնել և ջարդ տալով՝ դուրս շպրտել իր երկրի սահմաններից, քանզի հենց այդպես էր վարվել բոլոր նրանց հետ, ովքեր հանդգնել էին նման ոտնձգության։ Սակայն այս անգամ իրավիճակը միանգամայն այլ էր. Եգիպտոսի դեմ էր ելել ոչ թե ինչ-որ քոչվոր ցեղերի խառնամբոխ, այլ՝ Հայոց լեռնաշխարհից իջած կազմակերպված, մարտունակ, նորագույն զենք ու զրահով հանդերձավորված հզոր բանակ, ինչում միաւոժամանակ անց համոզվեցին եգիպտացիները։ Հատկապես ահաբեկող էին մարտակառքերն ու ձիերը, քանզի դրանք եգիպտացիների համար լիովին անծանոթ երևույթներ էին. **«Նրանք իրենց ետևից քարշ տվեցին եգիպտացիների համար շատ տհաճ գյուտ՝ մարտակառքը։ Եգիպտացիները միանգամայն անպատրաստ գտնվեցին այս առարկայի հետ հանդիպմանը»**[18]։*

Մարտը դեռևս չսկսված՝ եգիպտական բանակի ինքնավստահությունը հօդս ցնդեց, քանզի նրա կողմ էր սլանում մի սարսափելի արհավիրք.



«Կարելի է պատկերացնել, թե ինչպիսի տպավորություն էին թողնում սրընթաց հարձակվող այրուձիու ամպերը հետիոտն զինվորների վրա, որոնք երբևէ չէին բախվել նման բանի հետ։ Կատաղի նժույգներն իրենց դղրդացնող սմբակներով և ծփացող բաշերով ահազդու տեսարան էին ներկայացնում։ Ոչ մի հետիոտն զինվոր, որ սովոր չէր դիմակայել հեծելազորի, չէր կարող առանց վախի նայել այդ սրընթաց կենդանիներին։ Եվ եթե զինվորները, չդիմանալով, փախուստի դիմեին, ինչը որ նրանք սովորաբար անում էին, մարտակառքերը կարող էին նրանց արագ շրջապատել՝ մատնելով լիակատար պարտության»**[19]։


---

17 Ս. Մ. Այվազյան, Հնագույն Հայաստանի մշակույթի պատմությունից, Երևան 1986 թ., էջ 97 –98:

18 Деопик Дега Витальевич, История Древнего Востока, Москва 2016 г., ст. 159.

19 Айзек Азимов, “Египтяне”, Москва 2007 г., ст. 77–78.

Անապատի փոշին երկինք բարձրացնելով՝ հիքսոսյան մարտակառքերն ընթանում էին եգիպտացիների կողմ, իսկ մարտականչերից ոգևորված նժույգներն էլ իրենց կատաղի խրխինջով խիստ ահաբեկում էին նրանց, ինչի հետևանքով նրանք մատնվել էին տագնապի ու խռովքի և չէին հասկանում, թե ինչ է պետք անել. հարձակվեն, պաշտպանվեն, թե դիմեն փախուստի։ ***«Զավթիչները հայտնվել էին մարտակառքերով, որոնց լծված են եղել ձիեր։ Իսկ նման բան եգիպտոսում մինչ այդ չէին տեսել։ Քառատրոփ արշավող այդ հրեշներին տեսնելով՝ եգիպտական հետևակը՝ ահ ու սարսափի մեջ, խուճապահար փախուստի է դիմել»***[20]։



Մարտակառքերից արձակված նետերի տարափը խոցում էր եգիպտացի մարտիկներին, քանզի ո՛չ վահանները, ո՛չ զրահներն ի զորու չէին նրանց պաշտպանել բարձրորակ, ամուր մետաղյա ծայրակալներով նետերից, որ արձակվում էին նորատիպ, առանձին մասերից բաղկացած՝ կազմածո հայկյան հզոր աղեղներից։ Իսկ երբ հիքսոսների բանակը մխրճվեց արդեն փախուստի պատրաստված եգիպտական բանակի մեջ, այդժամ գործի դրվեցին նույն բարձրորակ մետաղից պատրաստված սրերն ու նիզակները. ***«Փոթորկի պես փլվեցին Եգիպտոսի վրա հյուսիսային նվաճողների երկաթապատ, սրընթաց մարտակառքերը։ Կայծակում էին նրանց անողոք թրերը՝ մոմի պես հատելով փարավոնի ընտիր վաշտերի զրահները, փոշիացնելով աշխարհի լավագույն՝ եգիպտական գնդերը։ Կառավարների անխոցելի զրահները, նետերի երկաթյա ամենահաս սլաքները սարսափի էին մատնել եգիպտացիներին։ Եգիպտոսում մինչ այդ չտեսնված վիթխարի, մոլեգին ձիերը սմբակներով կոխկռտում, ցրիվ էին տալիս եգիպտական նշանավոր հետևակ զորքը։ Ամեն ինչ ոչնչանում, փլուզվում էր այդ հիրավի անկասելի տարերքի ճնշման տակ։ Ընկավ Մեծ Եգիպտոսը, փարավոնն իր բանակի հետ զոհվեց Սինայի անապատում, կողոպտվեցին, հրո ճարակ դարձան Եգիպտոսի տաճարներն ու պալատները»***[21]։

Եգիպտացիների մի մասը զոհվեց, մյուսները խուճապահար փախան կամ գերի ընկան։ Շատ չանցած՝ Եգիպտոսի ապահովությունը պահպանող բանակից ոչինչ չմնաց։ Պատերազմի՝ նման ելք եգիպտացիք բնավ

---


[20] Ջենոն Կոսիդովսկի, Երբ արևը աստված էր, Երևան 1987 թ., էջ 137:

[21] Ս. Մ. Այվազյան, Հնագույն Հայաստանի մշակույթի պատմությունից, Երևան 1986 թ., էջ 98:

չէին սպասում։ Պարտության պատճառը մինչ այդ երբևէ չհանդիպած զինտեխնիկան ու այրուձին էին, որ վկայում էին հարձակվողների զարգացածության բարձր մակարդակի մասին։

Շատ պատմաբաններ են այս պատկերը ներկայացրել իրենց աշխատություններում։ Մեջբերենք նրանցից ևս մեկ-երկուսի կարծիքը տեղի ունեցած իրադարձությունների և դրանց հետևանքների ավելի լավ պատկերացնելու համար. ***«Գրոհող հետևակը՝ առջևում հիքսոսական «տանկմարտակառքերով», եգիպտական բանակի համար նորույթ էր։ Ո՞րն էր նրանց հաջողության պատճառը. մարտակառքում կանգնած նետաձիգ աղեղնավորի համեմատական անհասանելիությունը։ Լիցքավորման և նշանառության համար գնում է տասը վայրկյան, ոչ ավելի։ Երբ նետաձիգը, պաշտպանված կառքերի կողերով, ելնում է հետևակի դեմ, նա կարող է նետարձակել մի քանի անգամ, մինչ հետևակայինը կհասնի իրեն, և քիչ հավանական է, որ նետաձիգը վրիպի։ Քանի դեռ զինվորականները չէին հորինել մարտակառքերի դեմ պայքարի մեթոդներ, հիքսոսների հետ դժվար էր մրցել...***

Եգիպտական հետևակը հրաշալի զորք էր, բայց ընդհարվելով նոր, անհայտ տեսակի ռազմական տեխնիկայի հետ՝ նա անզոր էր։ Մանավանդ, որ մարտակառքերի ետևից գնում էին խիտ բազմությամբ թշնամական հետևակայինները՝ հանդերձավորված մետաղական թիթեղավոր հանդերձանքով»[22]*։*



Մյուս պատմաբանը կրկնում է առաջինին՝ որոշ հավելումով. ***«Երբ եգիպտացիները սովորեցին օգտվել մարտակառքերից, նրանք հիքսոսների հետ հաշիվները մաքրեցին, բայց դրա համար նրանցից պահանջվեց 100 տարի և ավելին։ Եգիպտական հետևակը հրաշալի զորք էր, բայց, հանդիպելով նոր, անհայտ տեսակի ռազմական տեխնիկայի՝ նա շփոթվեց։ Հատկապես, որ մարտակառքերի ետևից խիտ բազմությամբ գնում էին հակառակորդի զինվորները ճարմանդապատ վերնահագուստներով (որոնց խոցելը բավականին դժվար էր), վահաններով և թրերով, իսկ մարտակառքերի կողմից ցիրուցան եղած եգիպտական զորքն արդեն չէր կարող նրանց լուրջ դիմադրության ցույց տալ։ Հիքսոսները շատ չէին,***

[22] Мария Павловна Згурская, Древний Египет, Харьков 2008 г., ст. 352–353.

բայց Եգիպտոսին այդքանն էլ բավական եղավ»[23]:

Ինչպես վերևում նշվեց, այդ ժամանակ Եգիպտոսը ներքին խնդիրների պատճառով պառակտված և տկարացած վիճակում էր: Դա էլ իր հերթին պատճառ դարձավ նման պարտության. ***«Տկարացած Եգիպտոսը չկարողացավ այն ժամանակ լուրջ դիմադրություն ցուցաբերել եկվորներին: Մինչ այդ եգիպտացիների համար անհայտ հիքսոսների մարտակառքերը լցվեցին Արևելյան դելտա, որտեղ էլ հիմնավորվեցին զավթիչները»***[24]:

Սակայն պատմական հավաստի տեղեկություններով ապացուցված է, որ Եգիպտոսի՝ այդ ծանր պարտությունը պայմանավորված էր ոչ այնքան այդ երկրի թուլությամբ, որքան թշնամական բանակի աննախադեպ հզորությամբ. ***«Քաղաքական անկման այդ ժամանակաշրջանում մի դժբախտություն ցնցեց երկիրը: Արևելքից շարժվեց օտարերկրյա ռազմիկների անհամար բանակը և լեռնային հեղեղի պես խուժեց Եգիպտոս: Զավթիչները, երկաթե զրահներով, երկար նիզակներով զինված, կայծակնային արագությամբ սլացան՝ ձիեր լծած մարտակառքերով: Եգիպտացիներն իրենց կյանքում առաջին անգամ բախվեցին կռիվ մղելու այդ նոր եղանակին: Քափ-քրտինք մտած ձիերը, տեգերով ռազմիկները և մարտակառքերը մեծ իրարանցում առաջացրին նրանց մեջ: Եգիպտական զինվորները կռվում էին հետիոտն և համարյա մերկ. մինչ նրանք կհասցնեին գործի դնել իրենց նիզակները, պարսատիկներն ու աղեղները, նրանց տրորում էին ձիերի սմբակները և ճզմում մարտակառքերի անիվները: Նրանք պարզապես անօգնական գտնվեցին իրենց պարտադրված մարտի այդպիսի թափի առջև... Զավթիչները հիքսոսներն էին»***[25]:

Տեսնում ենք, որ գիտնականները, խոսելով հիքսոսների սպառազինության մասին, հաճախակի շեշտում են երկաթյա մարտակառքերը, սրերը, նիզակները, նետերի ծայրակալները և զրահները. ***«Արևելքից մոտենում էր օտարերկրյա անհամար հիքսոս մարտիկների բանակը, որը, ինչպես լեռնային հեղեղ, իջնում էր Եգիպտոս: Զավթիչները, պատված երկաթյա զրահներով, զինված երկար թրերով, կայծակնային արագությամբ սլանում էին ձիերով լծված մարտակառքերով... Կարճ ժամկետում դարեր շարունակ անպարտելի եգիպտական տերությունը հող ու մոխրի վերածվեց, և փարավոնների փառքը խամրեց մոտ երկու հարյուրամյակ»***[26]:

Այդ ժամանակ երկաթը անհայտ էր տարածաշրջանում՝ բացառությամբ Հայկական լեռնաշխարհի: Ինչպես համոզվեցինք առաջին հատորի համապատասխան բաժնում, երկաթի հայրենիքը Հայաստանն էր, որտեղ խստորեն պահվում էր այդ մետաղի ստացման գաղտնիքը: Եվ սա էլ է

23 Деопик Дега Витальевич, История Древнего Востока, Москва 2016 г., ст. 160.

24 И. В. Виноградов, смотри История Древнего Востока, Москва 1989 г., ст. 270.

25 Ջենոն Կոսիդովսկի, «Բիբլիական ավանդապատումներ», Երևան 1980 թ., էջ 127–128:

26 Архиепископ Вениамин (Пушкарь), Священная Библейская история. Санкт Петербург – Владивосток 2008 г., ст. 667:

խոսում այն մասին, որ հիքսոսները Հայկական լեռնաշխարհի բնիկներն են եղել՝ քուռարաքսյան քաղաքակրթության կերտողները։

Եգիպտացիներն այդ անակնկալ պարտությունը համարեցին երկնային պատիժ։ Ամբողջ Եգիպտոսը հուսահատության մեջ ընկավ։ Նրան սպասվում էր մոտ երկդարյա նվաստացման շրջան։ Այս ամենի մասին ամենահին տեղեկությունները մեզ հասել են եգիպտացի քուրմ Մանեթոնի թողած պատմությունից, որտեղ նա մեծ ցավով պատմում է այդ եղելության մասին։ Մանեթոնը ոչ թե այդ ամենի ականատեսն է եղել, այլ օգտվել է ուրիշ աղբյուրից, որովհետև նա Ն.Ք. IV-III դարերում է ապրել՝ հիքսոսների եգիպտական արշավանքից մոտ 1300 տարի հետո։ Իր հերթին Մանեթոնի այդ վկայությունն էլ մեզ է հասել I-ին դարի հրեա պատմիչ Հովսեփոս Փլավիոսի «Ընդդեմ Ապիոնի» աշխատության միջոցով.

«Մեզ մոտ մի թագավոր կար՝ Տիամոս անվամբ։ Նրա թագավորության ժամանակ, ինձ համար անհայտ պատճառներով, Աստված բարկացավ, և անսպասելի արևելյան երկրներից... հանդուգն մարդիկ հարձակվեցին երկրի վրա և առանց մարտի՝ հեշտությամբ տիրեցին նրան»[27]։

*Այսպիսով, հիքսոսները կայծակնային արագությամբ գրավեցին Եգիպտոսը՝ ապշահար անելով իրենց կարողությունների վրա վստահ եգիպտացիներին։ Ասպատակելով Եգիպտոսը՝ նրանք, ըստ Մանեթոնի, գրավեցին իշխանական աթոռները և իրենցից մեկին՝ Սիլատիս անվամբ, նստեցրին փարավոնի գահին։ Հիքսոսները, հիմնավորվելով Եգիպտոսում, իրենց համար Նեղոսի դելտայում կառուցեցին մայրաքաղաք՝ այն անվանելով Ավարիս. **«Հիքսոսները մայրաքաղաք են հռչակում Ավարիսը, որում, ըստ պատմիչի, պահում էին 240 հազարանոց ծանրազեն բանակ»[28]։***

*Մայրաքաղաք Ավարիսը հիմնելով Նեղոսի դելտայում՝ հիքսոսներն ամբողջ Եգիպտոսում տարածեցին իրենց իշխանությունը, սակայն Նեղոսի ակունքների մոտ գտնվող տարածքները՝ Վերին Եգիպտոսը, թողեցին եգիպտացիների իշխանության ներքո՝ նրանցից միայն հարկեր վերցնելով։ Եվ քանի որ եգիպտացիներն արդեն հաստատել էին գործուն կառավարման կարգեր, հիքսոսներն առանձնապես փոփոխություններ չարեցին, այլ գործածեցին եղածը՝ միայն նոր իրավիճակից բխող որոշ օրենքներ ավելացնելով. **«Նրանց առաջնորդներն ընդօրինակեցին փարավոնների իշխանության արտաքին բոլոր հատկանիշները և նվաճված Եգիպտոսում մնացին մոտ հարյուր հիսուն տարի, հրով և սրով ճնշելով ըմբոստության նվազագույն դրսևորումներն իսկ։ Իհարկե, հիքսոսները նվաճեցին միայն Ստորին Եգիպտոսը և Նեղոսի դելտան, բայց Վերին***

---

27 Иосиф Флавий, О древности еврейского народа, Против Апиона, Москва 1994 г., ст. 128.

28 Արտակ Մովսիսյան, Հայոց պատմության աշխարհիկալությունները, Երևան 2008 թ, էջ 24:

Եգիպտոսի գավառային իշխանավորները նույնպես դարձան նրանց հարկատու։ Եգիպտոսի նոր տերերի մայրաքաղաքը դարձավ Ավարիսը. այդ քաղաքը գտնվում էր դելտայի արևելյան մասում»[29]։

Չնայած հիքսոսները երկար տարիներ իշխեցին Եգիպտոսում, սակայն եգիպտական արձանագրություններից նրանց մասին առանձնապես շատ տեղեկություններ չեն հասել, քանզի եգիպտացիները ջանացել են իրենց պատմությունից ջնջել հիքսոսների՝ որպես զավթիչների մասին հիշատակումները. ***«Եգիպտոսում թագավորել է հիքսոսների երկու տոհմ, և Մանեթոնը նշում է դրանք՝ որպես տասնհինգերորդ և տասնվեցերորդ դինաստիաներ (կարևոր է հիշել, որ օտարերկրյա տիրակալները նույնպես մտնում են եգիպտացիների դինաստիաների մեջ)։ Այս դինաստիաների մասին փաստացի ոչինչ հայտնի չէ, քանի որ հետագայում եգիպտացիները նախընտրեցին չնկատել նրանց և չներգրավեցին իրենց պատմության մեջ։ Եթե եկվորներն ընդհանրապես հիշատակվում են արձանագրությունների մեջ, ապա միայն առանձնահատուկ թշնամանքով»***[30]։

Սակայն բացի Մանեթոնի թողած տեղեկություններից՝ վերջին շրջանում եգիպտական հնությունների հետազոտությունների և պեղումների արդյունքում հիքսոսների մասին բավականին նոր փաստեր ի հայտ եկան. մասնավորապես, գտնվեց և նրանց մայրաքաղաքի՝ Ավարիսի հնավայրը։

Այսպիսով, հայ-հիքսոսյան իշխանությունն, իրեն ենթարկելով Սիրիան և Պաղեստինը, այդ տարածքներին միացրեց նաև Եգիպտոսը։ Գիտնականներից ոմանք, որպես գրավյալ երկրներ՝ նշում են Եգիպտոսը և Պաղեստինը, մյուսները՝ Եգիպտոսն ու Սիրիան.

«Զավթիչները կառուցեցին իրենց մայրաքաղաքը՝ Ավարիսը, Նեղոսի դելտայի հյուսիսարևելյան շրջաններում՝ թագավորության համար կենտրոնական տեղում. մի ոտքով կանգնած Դելտայում, իսկ մյուսով՝ Սիրիայում»[31]։

«Երիքովի հնագիտական պեղումները ցույց տվեցին, որ որոշակի ժամանակահատվածում այդ հնագույն քաղաքը զբաղեցրել են հիքսոսները։ Այսպիսով, կարելի է ենթադրել, որ Եգիպտոսը գրավողներն իրենց ձեռքում են պահել նաև Պաղեստինը»[32]։

Ուսումնասիրողների մեծամասնությունը պնդում է, որ այդ երեք երկրներն էլ գտնվել են հիքսոսների տիրապետության տակ։

«Մ. թ. ա. 18-րդ դ. կեսերին Սիրիայի, Պաղեստինի և Եգիպտոսի իշխանությունը զավթեցին մարդիկ, որոնց եգիպտացիներն անվանում էին

---

29 Զենոն Կոսիդովսկի, «Հիբլիական ավանդապատումներ», Երևան 1980 թ., էջ 128:

30 Айзек Азимов, “Египтяне”, Москва 2007 г., ст. 79.

31 Նույն տեղում:

32 Мария Павловна Згурская, Древний Египет, Харьков 2008 г., ст. 346.

հիքսոսներ կամ «օտար երկրի տիրակալներ»»[33]։

«Թուլացած Եգիպտոսը զավթիչների համար ավար դարձավ և վերածվեց հիքսոսյան լայնածավալ կայսրության մասի, որը բացի Եգիպտոսից, գրավել էր Սինայի թերակղզին, Պաղեստինի մարզերը և Սիրիայի տափաստանները»[34]։

Այդ երեք երկրներից բացի՝ հիքսոսներին տարբեր կարգավիճակներով ենթարկվել են այլ երկրներ ևս։ ***«Նրանց իշխանությունը ճանաչվել է ոչ միայն Նեղոսի հովտի ողջ տարածքում, այլև ավելի հարավ՝ Նուբիայում (Քուշում), որտեղ Միջին թագավորության անկումից հետո ձևավորվեց ինքնուրույն, այս ամբողջ տարածաշրջանն ընդգրկող պետություն՝ Քերմի շրջանում (Նեղոսի 3-րդ շեմին), որը հիքսոսներից ընդունել է վասալական կախվածություն։ Բացի այդ՝ իր հզորության գագաթնակետին՝ մ. թ. ա. XVII 2-րդ կեսին, Հիան թագավորի ժամանակ, հիքսոսները կախվածության մեջ գցեցին Արևելյան Միջերկրական ծովի փոքր պետություններին։ Դատելով ամենից՝ նրանց ազդեցության ոլորտի հյուսիսային սահմանը տարածաշրջանում եղել է Եփրատի մեծ ոլորանը։ Ավարիսը, Արևելյան Դելտան, Սինայի և Հարավային Պաղեստինի շրջանը, ինչպես նաև Նեղոսի հովիտների մի մասն իր միջին հոսանքում (մինչև հարավում՝ Քուս քաղաքը) ուղղակիորեն ենթարկվում էին հիքսոս թագավորներին, մնացած տարածքները գտնվել են տեղական տիրակալների իշխանության տակ, որոնք համարվում էին նրանց վասալներ»***[35]։

Փաստորեն, հայերի տիրապետության տակ անցավ պատկառելի մեծության մի տարածք ևս. Սիրիային և Պաղեստինին գումարվեց Եգիպտոսը։ Կազմավորվեց մի հսկայական կայսրություն։ Սակայն եթե հաշվի առնենք, որ մինչ այդ էլ նրանք գրավել էին նաև Միջագետքի երկրները (քասեցիների արշավանքի շնորհիվ), այդժամ այդ կայսրությունը դառնում էր իսկապես աննախադեպ հսկայածավալ։ ***«Այդպիսով՝ XVIII-XVII դարերի սահմաններում գոյացավ մեծ պետություն, որը հաստատվեց Կրետե կղզում և Բաբելոնի մի մասում։ Հաղթողներն իրենց մայրաքաղաքը դարձրեցին Ավարիսը, Եգիպտոսի հյուսիսարևելյան սահմանների մոտ»***[36]։

---

33 Эммануэль Анати, “Палестина до древних евреев”, Москва 2007 г., ст. 306–307.

34 История Древнего Востока, под ред. В.И. Кузищина, Москва 1979 г., ст. 48.

35 М. Д. Бухарин, И. А. Ладынин, Б. С. Ляпустин, А. А. Немировский, История Древнего Востока, Москва 2009 г., ст. 217–218.

36 В. В. Струве, История Древнего Востока, Москва 1941 г., ст. 170.

Գիտական աշխարհի կարծիքները հիքսոսների ազգային պատկանելության մասին

«Աչքերս Արարատի գագաթներին հառած, ես հանկարծ սկսեցի ամեն ինչի մեջ տեսնել հնամյա մագաղաթների հետքեր, որոնք դեռ բացված չէին: Եվ եթե նույնիսկ բացված էին, ապա այնպես չէին ընթերցված, ինչպես պետք է» [37]:

*Պատմաբանները մինչ օրս չեն կարողացել պատասխանել այն հարցին, թե ովքեր են եղել հիքսոսները, որ նվաճելով Եգիպտոսը՝ հարյուր հիսուն տարուց ավելի այն պահել են իրենց տիրապետության տակ: **«Եթե մենք հարցնենք խորհրդավոր հիքսոսյան կայսրության ազգության, ծագման և բնութագրի մասին, ապա մենք, որպես պատասխան՝ շատ բան չենք ստանա»***[38]: *Իսկ այդ ժամանակներում Եգիպտոսը, ինչպես տեսանք, զարգացած երկիր էր՝ ճանաչված իր առանձնահատուկ մշակույթով, տնտեսական և ռազմական ոլորտներում շրջակա երկրների համեմատությամբ ավելի բարձր մակարդակով:*

*Տարբեր ազգության հետազոտողներ հիքսոսների առեղծվածը բացահայտելու ճանապարհին հիմնականում կրկնում են միմյանց և նոր բան չեն ասում: Նրանք առավելապես խոսում են հիքսոսների ինչպիսին և ո՛չ՝ ով լինելու մասին. **«Մերձավոր Արևելքն ուսումնասիրող հնագետներին միշտ հետաքրքրել է հիքսոսների ծագման խնդիրը... Հիքսոսների մասին մենք բավականին շատ գիտենք. մեզ հայտնի է նյութական մշակույթը, ծանոթ են սովորությունները և կրոնական պատկերացումները, շինարարության կերպերը, քաղաքների պլանավորումը և ամրացումները, պատերազմ մղելու մեթոդները, նրանց սոցիալական և քաղաքական կազմակերպությունը, սակայն նրանց ծագումը մինչ օրս մնում է գաղտնիք»***[39]:


*Հիքսոսները մոտ երկու դար տիրեցին Եգիպտոսում, իսկ Հին Կտակարանում Եգիպտոսի մասին քիչ չեն հիշատակումները՝ հատկապես այդ ժամանակաշրջանի հետ կապված, սակայն Սուրբ Գրքում էլ հստակ ոչինչ չի ասվում նրանց մասին. **«Ես քրիստոնյա եմ, և ինձ համար Աստվածաշունչը ոչ միայն Սուրբ Գիրք է, որի իսկությունը ենթակա չէ կասկածի, այլև՝ պատմական փաստաթուղթ. բայց Աստվածաշնչում նույնպես ոչինչ***

---

37 Լև Կրիվենկո, Ամմահականը:

38 Д. Г. Брэстедъ, История Египта, Москва 1915 г., ст. 229.

39 Эммануэль Анати, “Палестина до древних евреев”, Москва 2007 г., ст. 323.



չի ասվում հիքսոսների մասին։ Եվ ահա, այս հանգամանքն ինձ ավելի քան տարօրինակ թվաց...

***Լռում են հիքսոսների մասին եգիպտական աղբյուրները (հանդիպում են միայն ծայրահեղ սուղ, անուղղակի տվյալներ), նաև իրենք՝ հիքսոսները, ինչպես որ հաստատում են պատմաբանները, ոչ մի հետք իրենց մասին չեն թողել. հրեաները նույնպես լռություն են պահպանում։ Եգիպտացիների և հիքսոսների միջև տեղի է ունեցել լուրջ տարաձայնություն, հրեաների և եգիպտացիների միջև՝ նույնպես։ Բայց մի հարցում այս երեք ազգերը գալիս են փոխհամաձայնության, նրանք համերաշխ և միակամ «պայմանավորվում են» սերունդներից թաքցնել այն ամբողջ տեղեկությունը, որը գոնե ինչ-որ չափով առնչություն ունի հիքսոսների հետ։ Եվ դա նրանց հաջողվում է։ Անհավանական է, բայց փաստ է։ Ի դեպ, ես չեմ կարող և մտադիր չեմ պնդել, որ նման համաձայնություն իրո՛ք կայացել է։ Անբնական է։ Բայց ամեն ինչ հենց այդպես է երևում»*[40]։

*Գիտական աշխարհում մինչ օրս հիքսոսների ազգային պատկանելության վերաբերյալ անհերքելի կարծիք չձևավորվելու համար կան լուրջ պատճառներ։ Պաղեստինի և Սիրիայի բազմալեզու ցեղերից կազմված հսկայական գնդերը, հիքսոսյան սակավամարդ, սակայն հզոր բանակի հետևակներն էին. **«Ենթադրվում է սակայն, որ հիքսոսները կազմում էին միայն մարտիկների փոքրաթիվ վերնախավը՝ ազգերի և խմբերի այդ «բաբելոնյան խառնակությունում»»**[41]։*

*Եվ, ուրեմն, ոչ միայն զորքերի վերնախավ հիքսոսները, այլև նրանց հպատակ Քանանի ցեղերը հետք են թողել եգիպտական աղբյուրներում. ըստ այդմ էլ միաժամանակ խոսվում է ինչպես այդ զավթիչների քաղաքակիրթ և բարձր զարգացածության, այնպես էլ քոչվոր բարբարոս լինելու մասին. **«Հիքսոս թագավորների մեջ, ինչպես Մանեթոնից, այդպես և տեղական հուշարձաններից մեզ հասել են ոչ սեմական անվանումներ, որոնց մեկնությունն առայժմ չի տրվում։ Շարժման գլխին, հավանաբար,***

---


40 Валентина Новомирова, Гиксосы, журнал «Вера и жизнь», Киев 1/1998 г., ст. 25.

41 Мария Павловна Згурская, Древний Египет, Харьков 2008 г., ст. 345.

եղել է ոչ սեմական ազգ, սակայն նվաճողների զորակազմում ավելի նշանակալի էին սեմիտները»[42]*։*

Եգիպտոսում իրենց հետքն են թողել տարբեր ազգեր, որոնց ճանաչում են մեկ՝ հիքսոս անվամբ։ Սակայն նման մոտեցումը ճիշտ չէ, քանզի դրանք լիովին տարբեր ազգեր էին, տարբեր մշակույթի կրողներ՝ միացած մեկ նպատակի շուրջ։ ***«Միգուցե ես տպավորություն եմ ստեղծում, որ Մանեթոնին չի կարելի վստահել. և ես իսկապես այդպես եմ մտածում։ Մեջբերված հատվածից ճիշտ են երեք տեղեկություններ՝ Եգիպտոսը ենթարկվեց ներխուժման, նվաճողները եկան «արևելյան շրջաններից», և նրանցից ոմանք՝ ոչ բոլորը, անվանվում էին հիքսոսներ»***[43]*։*

Նկատում ենք, որ Բարբարա Մերտցը հստակ կարծիք է հայտնում այս հարցում՝ զատելով բուն հիքսոսներին իրենց միացած այլազգիներից։ Եվ քանի որ այդ մեծաթիվ բանակը եղել է բազմազգ, դա հնագետների մոտ առաջացրել է խառնաշփոթ նաև լեզվական հարցում, քանզի հիքսոս արքաների մոտ նկատվում են թե՛ հնդեվրոպական, և թե՛ սեմական անուններ. ***«Այս լեզվական խառնուրդը բազմաթիվ գիտնականների մոտ տարակուսանք է առաջացնում։ Դա համարվում է այն հիմնական պատճառը, որը խանգարում է նրանց կողմնորոշվել հիքսոսների ծագման հարցում։ Հետազոտողներից ոմանք կարծում էին, թե հիքսոսները եղել են հյուսիսարևմտյան սեմիտներ։ Ուրիշներն էլ համարում էին, որ նրանց պետք է դասել հնդեվրոպացիների շարքը։ Երրորդները մտածում են, որ հիքսոսները եղել են Սիրիա-Պաղեստինյան տարածաշրջանի տիրակալներ, որ եկել էին Եգիպտոս եբրայական պատրիարքների շրջանում և գրավել այն։ Չորրորդները նրանցում տեսնում են խեթերին, կամ կովկասի ժողովուրդներին...***



Մնացած գիտնականները հայտարարում են, թե իբր հիքսոսները էթնիկական, լեզվաբանական և մշակութային խառնուրդ են՝ մարդկանց համախումբ, որ կարողացավ իր առաջադեմ սպառազինության շնորհիվ գրավել Պաղեստինը և Եգիպտոսը՝ այդ տարածքներում ստեղծելով կենտրոնացած կառավարություն,

---

42 Тураев Б. А., История Древнего Востока, Ленинград 1935 г., ст. 232.

43 Барбара Мертц, “Древний Египет, храмы, гробницы, иероглифы”, Москва 2007 г., ст. 156–157.

այնտեղ ներմուծելով իրենց սովորությունները և մշակույթը: Նրանց դա լիովին հաջողվեց՝ շնորհիվ կատարելագործված զենքերի...

Այս բոլոր վարկածները գոյություն ունենալու իրավունք ունեն, իսկ հեղինակները, կառչած յուրաքանչյուրին, հօգուտ իրենց տեսակետի՝ բերում են բազմաթիվ համոզիչ փաստարկներ»[44]***:***

Որոշ գիտնականներ էլ առաջ են քաշում մի տեսակետ, ըստ որի՝ հիքսոսները ծագումով եղել են արիացիներ՝ նկատի ունենալով հնդիրանցիներին. ***«Վ. Օլբրայթը հիքսոսներին համարում էր հնդիրանցիներ՝ նշելով, որ անկախ սեմական տարրի ներկայությունից, չի կարելի արհեստականորեն մեծացնել վերջիններիս դերը հիքսոսյան արշավանքում: Նա միաժամանակ որպես հիքսոսների հնդիրանական ծագումը բացահայտող փաստարկներ նշում էր մարտակառքերի և ուղղանկյունաձև ամրացված ռազմական ճամբարների ներմուծումը Եգիպտոս (***Albright, ***1930-31: 218***f.***):* ***Գերմանացի եգիպտագետ Հ. Շտոկի (***Stock, ***1942: 70***ff.***) դիտարկմամբ՝ հիքսոսյան արքաները ծագումով հիմնականում արիացիներ էին, բայց կային նաև խուրրիներ ու սեմիտներ: Ավելի վաղ՝ այդ կարծիքը զգուշավորությամբ արտահայտել էր Ռ. Էնգբերգը (***Engberg, ***1939: 40***ff.***)»***[45]***:***

Շրջանառվում է ևս մի կարծիք, ըստ որի՝ հիքսոսները եղել են հրեաներ: Այդ տեսակետն առաջինը հայտնել է հրեա պատմիչ Հովսեփոս Փլավիոսը, որի աշխատության միջոցով է մեզ հասել Մանեթոնի պատմությունը հիքսոսների մասին: Սակայն պետք է ասել, որ սա ամենաանհավանականն է բոլոր շրջանառվող վարկածներից.

«Հովսեփոսի միամիտ ենթադրությամբ՝ հիքսոսները նույնացվել են հրեաների հետ. հնարավոր է, որ դա իր մեջ պարունակի ճշմարտության մի մաս՝ թեկուզ և պատահական: Սակայն այսպիսի ենթադրություն անելիս պետք է ինքն իր առջև հաշիվ տա իր ասածի ռիսկայնության համար»[46]***:***

«Փլավիոս պատմիչը, մտադրվելով ապացուցել հրեական ժողովրդի մեծ անցյալը, պնդում էր, որ հիքսոսները հրեաներ են եղել, որ նրանք Եգիպտոսը հենց այդ շրջանում են գրավել: Սակայն դա, իհարկե, այդպես չէ»[47]***:***

Հովսեփոս Փլավիոսի կարծիքը հակասում է Մանեթոնի տեղեկություններին: Քանզի, ըստ Մանեթոնի՝ հիքսոսները գրավեցին Եգիպտոսը նորագույն զենքերով զինված և մարտակառքերով: Իսկ երբ հրեաները սովից փրկվելու համար ճանապարհ ընկան դեպի Եգիպտոս, նրանց

---

44 Эммануэль Анати, “Палестина до древних евреев”, Москва 2007 г., ст. 324.

45 Հովհաննես Աիրամանյան «Հայ Արիներ» Թիվ 85, 86, 87, մայիս, հունիս, հուլիս, 2007 թ., էջ 25:

46 Д. Брестед, Б. Тураев, ‘’История Древнего Египта”, Москва 2007 г., ст. 216.

47 Айзек Азимов, “Египтяне”, Москва 2007 г., ст. 80.

առաջնորդում էր խորը ծերության հասած Հակոբ նահապետը: Իսկ նրա ամբողջ ժողովրդից զենք կրել կարող էր ընդամենը 75 հոգի: Կատարյալ անհեթեթություն է պնդումը, թե քաղցից հյուծված յոթանասունհինգ հոգի կարող էր գրավել Եգիպտոսը.

«Սակայն ավելի մանրամասն քննության ժամանակ կարելի է եզրակացնել, որ, բացի մի քանի զուգադիպություններից՝ հիքսոսների և հին հրեաների միջև ոչ մի ընդհանուր բան չի եղել:

Հովսեփը և իր եղբայրները, ի տարբերություն հիքսոսների, բռնի ուժով չէ, որ գրավել են Եգիպտոսը, այլ այնտեղ բնակություն են հաստատել փարավոնի հրավերով»[48]*:*

Իհարկե, հիմնավորումներ ունեին հիքսոսների ազգային պատկանելության մասին բոլոր տարբերակներն էլ, սակայն դրանցից և ոչ մեկը չդարձավ անհերքելի, որովհետև ինչ-որ լուրջ ապացույց միշտ պակասում էր: Այդ պակասը մինչ օրս պատմաբանները չեն կարողանում լրացրել, քանզի այն գտնվում է հայոց պատմության խորքերում: Իսկ քանի որ այդ պատմությունը անտեսված ու արհամարհված է թե Արևմուտքի, թե աշխարհի այլ ծագերի գիտնականների կողմից, հետևաբար, նրանց համար հիքսոսների ծագման խնդիրն այդպես էլ անլուծելի կմնա: ***«Այժմ թագավորում էր, այսպես կոչված, թագավոր-հովիվների կամ հիքսոսների դինաստիան: Այն պատկանում էր օտարերկրյա ազգերին, որոնք բռնությամբ ներխուժել էին Եգիպտոս և գրավել փարավոնի գահը: Հստակ հայտնի չէ, թե որտեղից հայտնվեցին զավթիչները, և թե որ ազգին էին նրանք պատկանում»***[49]*:*

Իսկ այժմ մենք աստիճանաբար կներկայացնենք հայոց պատմությունից մեզ հասած տեղեկություններն ու հնագիտական տվյալները, որպեսզի, ի վերջո, լույս սփռվի դարեր շարունակ մութ մնացած այդ հարցի վրա:

---

48 Мария Павловна Згурская, Древний Египет, Харьков 2008 г., ст. 357.

49 А. П. Лопухинь, Библейская История Ветхого Завета, Монреаль, 1986 г., ст. 83.

Քաղաքակիրթ ազգ, թե վայրենաբարո քոչվորներ

«Հայ ժողովուրդը պատմական դժվարին պայմաններում ստեղծել է աշխարհի ամենափայլուն մշակույթներից մեկը»[50]:

Հիքսոսների ծագման մասին երկու հակասական կարծիք ձևավորվեց: Մեկը, որ նրանք եղել են ավելի բարձր մշակույթի կրողներ, քան՝ եգիպտացիները. մյուսը, որ դա եղել է ռազմատենչ քոչվոր ցեղերի միություն: Այս երկու տեսակետն էլ մինչ օրս տարբեր պատմաբաններ և հնագետներ քննարկում են, սակայն առավելությունը տրվում է երկրորդին՝ չնայած դրան հակասող նոր փաստերի ի հայտ գալուն: ***«Հիքսոսները, ըստ բոլոր նշանների, եղել են քոչվոր ցեղերի համախումբ և գտնվել են տնտեսական ու մշակութային ավելի ցածր զարգացման մակարդակի վրա, քան եգիպտացիները»[51]:***

Հիքսոսներին քոչվոր ցեղ համարողները պնդում են, որ նրանք պետք է որ դաժան բարբարոսներ եղած լինեին, ինչի հետևանքով էլ եգիպտացիները չեն կարողացել դիմակայել: Սակայն այս պարագայում էլ ամեն բան չէ, որ միանշանակ է. ***«Ժամանակակից պատմաբաններն այնքան էլ չեն հավատում Հովսեփոս Փլավիոսին, որին մենք վերը հիշատակեցինք: Նրանք չեն ընդունում, որ հիքսոսների տիրապետության ժամանակ նյութական կորուստները կործանարար են եղել... Հիքսոսներն օգտվում էին բարիքներից, ոչ թե կործանում էին դրանք»[52]:***

Ըստ Մանեթոնի՝ հիքսոսները խիստ ծանր վիճակի մեջ են դրել եգիպտացիներին, սակայն պեղումների արդյունքներն այլ բան են փաստում: Քոչվոր ցեղերն, իհարկե, կարող էին եգիպտացիների հետ վարվել ըստ իրենց վայրենաբարո բարքերի՝ ճնշելով ու ծայրաստիճան կեղեքելով նրանց: Սակայն հիքսոսներն ավելի քաղաքակիրթ ազգին բնորոշ վերաբերմունք են ցուցաբերել՝ զերծ մնալով բարբարոսական դրսևորումներից. ***«Այնպիսի պատկերացում է ստեղծվել, թե հիքսոսները շատ կոպիտ և դաժան են եղել, և անողոքաբար ավերել են Եգիպտոսը: Սակայն նրանք բավականին արդարամտորեն են կառավարել»[53]:***

Իհարկե, պատերազմ է եղել, եղել են հաղթող և պարտվող կողմեր: Իսկ պարտվող կողմը՝ հպարտ և ինքնավստահ Եգիպտոսը, չէր կարող իր

---

50 Մ. Ռիլսկի, Կամուրջներ, Երեւան 1973 թ., էջ 5-6:

51 История Древнего Востока, под ред. В.И. Кузищина, Москва 1979 г., ст. 48.

52 Кристиан Жак, Египет великих фараонов, Москва 1992 г., ст. 129.

53 Айзек Азимов, “Египтяне”, Москва 2007 г., ст. 79.

դիրքերը հեշտությամբ զիջել նույնիսկ պարտությունից հետո. հետևաբար, չի բացառվում, որ հիքսոսների կողմից որոշ ճնշումներ եղած լինեն. ***«Սակայն նվաճումն այնքան արյունոտ և ավերիչ չի եղել, ինչպես որ ներկայացնում են եգիպտական հեղինակները»***[54]*:*

Բայց և այնպես՝ շատերը հակված են մնում նրանց դաժան քոչվորներ լինելու տարբերակին. ***«Ովքե՞ր էին այդ «ասիացիները», որ երբեք ավելի հստակ չեն անվանվել: Ինչպե՞ս կարողացան բիրտ քոչվորների ցեղերը հպատակեցնել հզորագույն եգիպտական թագավորությունը»***[55]*:*

Չի բացառվում, որ քոչվորները կարող էին գրավել Եգիպտոսն իրենց մեծ թվի և ռազմատենչության շնորհիվ, սակայն ոչ երբեք՝ առաջադեմ զինվորական տեխնիկայի օգնությամբ, ինչը հայտնագործելը և գործածելն արդեն նստակյաց, կայուն և զարգացած ապրելակերպ ունեցող ազգին էր հարիր՝ հատկապես այդ ժամանակաշրջանում:

«Բայց ինչպե՞ս կարող էր պատահել, որ լեռնաբնակ թշվառ օտարերկրացիները ներխուժեին Եգիպտոս (Թեկուզև՝ պառակտված Եգիպտոս) և առանց պայքարի գրավեին այն»[56]*: Իհարկե, տեղին է Այզեկ Ազիմովի զարմանքը:*

Քոչվորության մասին կարծիքը հակասության մեջ է ավելի տրամաբանական տեսակետի հետ, ըստ որի՝ հիքսոսներն առավել զարգացված են եղել, քան՝ եգիպտացիները. ***«Հիքսոսների մշակույթի առանձնահատկությունները մինչև վերջ պարզված չեն: Նրանց վերագրել են որոշակի տեսակի բրուտագործություն և հողային ամրոցների ինչ-որ տեսակներ: Առավել հայտնի փաստ է, և այն հաստատվել է հետազոտությունների արդյունքում, որ հիքսոսներն ունեին Հին աշխարհի համար եզակի ռազմական գիտելիքներ: Նրանք շատ լուրջ ներդրում են ունեցել ռազմական գործի զարգացման մեջ»***[57]*:*

Տեսնում ենք, որ այստեղ միանգամայն այլ տեսանկյունից է տվյալ նյութին նայում Մ. Զգուրսկայան. և իսկապես, եթե նրանք քոչվոր էին, ապա որտեղի՞ց նրանց քաղաքակիրթ ազգին բնորոշ հատկանիշները:

«Հիքսոսները, ինչպես հայտնի է, նվաճելով Եգիպտոսը, իրենց տիրապետությունը հաստատեցին այնտեղ և հիմնեցին թագավորական նոր դինաստիա, որը դիմացավ մինչև մ.թ.ա. 1580 թվականը: Հիքսոսյան փարավոնները, բնականաբար, ձգտում էին զարգացնել իրենց իշխանության տակ գտնվող երկիրը, ամրապնդել իրենց տիրապետությունը և այլն: Այդ ժամանակաշրջանը բնութագրվում է եգիպտական մշակույթի վերելքով՝ թեպետ եգիպտական ժողովուրդը թշնամաբար էր վերաբերվում նվաճող-

54 Владимир Борисович Миронов, Москва 2006 г., ст. 406.

55 Барбара Мертц, “Древний Египет, храмы, гробницы, иероглифы”, Москва 2007 г., ст. 157.

56 Айзек Азимов, “Египтяне”, Москва 2007 г., ст. 74.

57 Мария Павловна Згурская, Древний Египет, Харьков 2008 г., ст. 350–351.

ներին և չէր դադարեցնում պայքարն օտար լծից ազատվելու համար»[58]*:*

Այն նորույթները, որ հիքսոսներն իրենց հետ բերեցին Եգիպտոս, ինքնըստինքյան վկայում են, որ եգիպտացիները գործ են ունեցել իրենցից ավելի բարձր մշակույթի տեր ժողովրդի հետ. ***«Նրանք (հիքսոսները) Մերձավոր Արևելքից Եգիպտոս բերեցին բազմաթիվ նոր տեխնոլոգիաներ, որոնց մեջ վերջին տեղում չէր գտնվում ռազմական տեխնիկան՝ մարտակառքերը, փայտի և եղջյուրի մի քանի շերտերից բաղկացած աղեղը, ինչը մեծ ամրություն էր տալիս և հնարավորություն՝ շատ ավելի հեռու արձակել նետը: Բրոնզի նոր համաձուլվածքը, որ բերել էին նրանք, թույլ էր տալիս պատրաստել սուր և ամուր զենքեր, որոնց առավելությունը (հետագայում) թույլ տվեց Եգիպտոսին, նոր թագավորական շրջանում, ռազմաշունչ կայսրություն դառնալ»***[59]*:*

Եթե հիքսոսների նորամուծությունները նպաստել են Եգիպտոսի հզորացմանը, մի՞թե դա չի վկայում, որ նվաճողները զարգացման շատ ավելի բարձր մակարդակի վրա են եղել, քան՝ Եգիպտոսը:

«Հիքսոսներն են եղել: Նկան իրենց համար և սկսեցին ղեկավարել.... եկել էին սոցիալական զարգացման բարձր մակարդակի հասած հասարակությունից, այդ պատճառով նրանք բավականին արագ և վստահ սկսեցին ղեկավարել եգիպտացիներին»[60]*:*

Այս հանգամանքը չէր կարող տարակուսանք չառաջացնել գիտնականների և հետազոտողների մոտ. քոչվոր և միևնույն ժամանակ՝ քաղաքակիրթ, և ոչ միայն քաղաքակիրթ, այլև, կարելի է ասել, հին աշխարհի ամենազարգացած ժողովուրդը, որի անվանումը՝ հիքսոս, ըստ Մանեթոնի, թարգմանվել է «հովիվ արքաներ», որով ցանկացել են իբր շեշտել նրանց քոչվորական բնույթը, ինչը սակայն տվյալ անվան միանգամայն սխալ թարգմանություն է և մոտեցում. ***«“Вера и жизнь” 1/1988 թ. ամսագրում տեղադրված էր Վալենտինա Նովոմիրովայի «Հիքսոսներ» գրքի նախաբանը: Նյութը շատ խնդրահարույց է, այնտեղ հետաքրքիր հարցադրումներ են արված, ընդ որում՝ նաև հանգուցային. «Ովքե՞ր են հիքսոսները» ...հեղինակը հարցեր է առաջ քաշում՝ անհեթեթ իրավիճակից բխող, որ ձևավորվել է պատմական գիտությունում՝ կապված Եգիպտոսում հիքսոսների տիրապետության հետ. անհեթեթություն, որ անզեն աչքով տեսանելի է ոչ միայն պատմաբանին, այլև միջին դասարանում սովորողին: Ինչե՞ր արժե միայն այն, որ հովիվները նավատորմ ունեին: Հովիվները, պարզվում է տիրապետում էին առաջնակարգ տեխնիկայի և մետաղներ ստանալու տեխնոլոգիաների, թեթև անիվներով մարտակառքերի, մար-***

---

58 Ս. Մ. Այվազյան, Հնագույն Հայաստանի մշակույթի պատմությունից, Երևան 1986 թ., էջ 100:

59 Гари Адес “История страны Египет”, МИДГ орг., Москва 2008 г., ст. 109.

60 Деопик Дега Витальевич, История Древнего Востока, Москва 2016 г., ст. 146.

տական շինություններին... Իսկ ի՞նչ ասել առաջադեմ այբուբենի և հիքսոսների գրերի մասին, որոնք, սակայն, գիտությանը հստակ հայտնի չեն»[61]:

Եթե հիքսոսներն, իրոք, ավելի բարձր մշակույթի կրողներ էին, քան այդ ժամանակաշրջանի երկրները և նույնիսկ նրանցից համեմատաբար ավելի առաջընթաց ապրած եգիպտացիները, ապա հարց է առաջանում. «ովքե՞ր էին նրանք»:

Այդ ժամանակաշրջանում, ըստ հնագետների և պատմաբանների, աշխարհի վրա հիմնականում մեծ մշակութային հետքեր թողել են այն ժողովուրդները, որ ապրել են Հայկական լեռնաշխարհից հարավ գտնվող միջագետքյան տարածքներում, իսկ արևմուտքում նման երկիր եգիպտոսն էր: Եթե հիքսոսներն ասորեստանցի, բաբելացի, մեդացի չէին, ո՛չ էլ էլամացի կամ խեթ, ապա էլ ովքե՞ր պիտի լինեին, որ նման բարձր մշակույթ ստեղծած լինելով հանդերձ՝ մինչ օրս մնային անհայտ ժողովուրդ: Այդ հարցի պատասխանը գտնելու համար բավական է միայն նայել Քուռարաքսյան քաղաքակրթությունը կերտող ժողովրդի կողմը, այսինքն՝ նրա, ում երկիրը տարաբնույթ պատճառներով կարծես աներևույթ է դարձել գիտական աշխարհի համար:

Հիքսոսների՝ հայկական ծագման տարբերակի անտեսումը հիմնականում կապված է պատմական փաստերի նենգափոխման հետ, որը հայերին դարձրել է իր բնօրրանի եկվոր՝ բացառելով նրանց առկայությունը Հայկական լեռնաշխարհում Ն. Ք. V դարից առաջ: Հետևաբար, քննարկման առարկա չէին կարող դարձնել հայերի և հիքսոսների նույնության հարցը, քանի որ, ըստ այդ խաբեության, Հայկական լեռնաշխարհում հայերը հաստատվել են հիքսոսների եգիպտական արշավանքից մոտ 1200 տարի հետո: Սակայն բազում անհերքելի ապացույցները, որ հայերը եղել են Հայկական լեռնաշխարհի բնիկ տերերն ի սկզբանե: Այս աշխատության մեջ ևս մեկ անգամ չէ, որ այդ ապացույցները ներկայացվել են և դեռ կներկայացվեն:

---

61 Матвей Вениаминов, К вопросу о гиксосах, Вера и Жизнь, Киев 3/1999 г., ст. 27.

Քուռարաքսյան քաղաքակրթության կենտրոն Հայաստանի հնագույն մշակույթը և հիքսոսները

«Հայերը ոչ մի ընդհանուր բան չեն ունեցել մշակութային էպիգոնության[62] հետ. նրանց միշտ խորթ է եղել օտար մշակույթի պատճենահանումը: Հայ ժողովուրդն ստեղծել է միայն բնօրինակներ: Նա արարիչ ժողովուրդ է»[63]:

Կրկին դառնանք գիտական աշխարհի ուշադրությունից «վրիպած» Քուռարաքսյան քաղաքակրթությանը: Քանի որ հիքսոսներն անհամեմատ ավելի բարձր քաղաքակրթության կրողներ էին, քան՝ եգիպտացիք, առավել ևս՝ այդ ժամանակների մյուս ազգերը, ապա պետք է եզրակացնել, որ նրանք եղել են հենց Քուռարաքսյան բարձր մշակույթի կերտողները՝ այսինքն, Հայկական լեռնաշխարհի բնիկները, որ են հայերը:

Այդ ժամանակաշրջանում Միջագետքը և շատ այլ երկրներ գտնվում էին Քուռարաքսյան մշակույթը կերտողների տիրապետության և ազդեցության ոլորտում: Անհերքելի են փաստերն առ այն, որ Հայկական լեռնաշխարհում է ծնունդ առել Հին աշխարհի ամենազարմանահրաշ քաղաքակրթությունը՝ Քուռարաքսյանը, և այդ մշակույթի դրական ազդեցությունն են կրել շուրջը գտնվող բոլոր երկրները:

*Այժմ տանենք որոշ զուգահեռներ հիքսոսների և Հայկական լեռնաշխարհի բնակիչների՝ հայերի կերտած Քուռարաքսյան մշակույթների միջև և կտեսնենք, որ դրանք լիովին համապատասխանում են միմյանց, քանզի ունեն միևնույն ծագումը. **«Սակայն այդ նվաճողներն իրենց հետ բերեցին մեծաթիվ նորույթներ՝ մարտակառքեր, ուղղահայաց ջուլհակային հաստոցներ, երաժշտական գործիքներ»**[64]:*

Դա Ն.Ք. մոտ 1700 տարեթվին էր: Եվ ինչպես ցույց են տալիս հնագիտական պեղումները, Հայաստանում այդ արհեստներին ու գործիքներին տիրապետել են դրանից դեռ 700 տարի առաջ: Այդ մասին հիմնավոր ապացույցներ բերել ենք դեռևս առաջին հատորում: Շեշտադրվել է, որ Հայկական լեռնաշխարհում մեծ զարգացում էր ապրում նաև գյուղատնտեսությունը, հատկապես՝ այգեգործությունը: Եվ այն, որ հիքսոսները

---


62 Առանց իր կողմից նոր խոսք ասելու՝ արվեստի, գիտության, գրականության մեջ մեկին կուրորեն հետևող:

63 Էդուարդաս Մեժելայտիս, «Իմ կրկնակի Արարատը», Երևան 1994 թ., էջ 7:

64 Филипп Симон, Мари-Лор Буэ, Древний Египет, Москва 2009 г., ст. 13.

նոր մրգատու ծառատեսակների են ծանոթացրել եգիպտացիներին, ևս խոսում է այն մասին, որ նրանք Հայկական լեռնաշխարհից գնացած հայեր էին: **«Նռենենին, ձիթենին, խնձորենին եգիպտոս բերեցին հիքսոսները: Այդ ծառերն ընտելացան և տվեցին առատ բերք»**[65]:

Հետաքրքիր է, որ եգիպտացիներին տարբեր երաժշտական գործիքների նույնպես հիքսոսներն են ծանոթացրել. **«Նաև հիքսոսները բերել են... երաժշտական գործիքներ՝ դափ ու քնար»**[66]: Ապացուցված է, որ այդ վաղնջական ժամանակներում գործածվող երաժշտական նվագարանների հայրենիքը նույնպես Հայկական լեռնաշխարհն է. **«Երաժշտական գործիքների մեծ մասը (այդ թեմայով իմ հոդվածը կարող եք ընթերցել «Հայազգ» էլեկտրոնային հանրագիտարանում) հայտնագործել են հին հայերը: Եվ շնորհիվ հիքսոսների է, որ եգիպտոսում ծանոթացան հոբոյի, ֆլեյտայի տեսակներին և շատ այլ երաժշտական գործիքների»,**- տեղեկացնում է Նատալյա Սոբոլը[67]:



Հնագիտական հուշարձանների պեղումներից պարզվել է նաև, որ հիքսոսները Եգիպտոսում և Պաղեստինում նոր՝ բարձր մակարդակի հասցրին ոսկերչությունը: Սույն գրքի առաջին հատորում տեղեկացանք նաև, որ ոսկերչությունը ևս ձևավորվել է Հայաստանում հնագույն ժամանակներում: **«Հիքսոսների մշակույթում Հայկական լեռնաշխարհի հասարակությունների մասնակցության լավագույն դրսևորումներից մեկը պետք է համարել Ավարիսից շուրջ 10 կմ հեռու գտնվող Սալխիա հնավայրում պեղված արքայական դամբարանի կարեւորագույն գտածոն: Դա էլեկտրումից (ոսկու եւ արծաթի համաձուլվածք) պատրաստված թագն է (ավելի ճիշտ՝ գլխանոց), որի շուրջբոլորը պատկերված են եղնիկներ ու եղջերու: Մ. Բիտակն այս իրի ավելի վաղ համարժեքն է համարում կենտրոնական Փոքր Ասիայի Ալաջահյոյուք հնավայրից հայտնի իրը, նաև Ցերիխոնից հայտնաբերված կավանոթի վրա պատկերված տղամարդու գլխանոցը (**Bietak, *1979: 242f.*)**: Սակայն հարկ**

65 Пьер Монтэ, Египет Рамсесов: Москва 1989 г. http://annales.info/egipet/monte/egram_04.htm

66 Гари Адес “История страны Египет”, Москва 2008 г., ст. 109.

67 Наталья Борисовна Соболь (арменовед). https://www.youtube.com/watch?v=sPs-XbdIN9k

է նշել այն, որ նման մի իր է հայտնաբերվել ՀՀ-ում՝ Լոռի բերդի դամբարաններից մեկում (Դեւեջյան, 1982)։ Նշված իրերի նմանությունը յուրահատկության տեսանկյունից ակնհայտ է և այստեղ միանշանակ կարելի է խոսել դրանց ստեղծողների միջև էթնիկական առնչության մասին»[68]։

Հիքսոսները նաև մեծ շինարարական գործնեություն ծավալեցին Եգիպտոսում, ինչը ևս բնորոշ է նստակյաց կյանքով ապրող քաղաքակիրթ ազգին և ո՛չ քոչվորներին։ ***«Հիքսոսների դինաստիան ամեն կերպ խրախուսում էր շինարարությունը, արվեստը և արհեստները։ Դա եղել է զարգացման և վերելքի շրջան»***[69]։

Հայաստանում շինարարությունը նույնպես բավականին զարգացած է եղել։ Շումերներն Արատտայից, այսինքն՝ Հայաստանից, շինարարներ էին հրավիրում, որպեսզի նրանք իրենց հետ բերած շինանյութերով տաճարներ կառուցեն։ Հայաստանում կատարված պեղումների ընթացքում ի հայտ են գալիս այդ հնագույն ժամանակների քաղաքաշինության անհերքելի ապացույցներ։ ***«Վաղ բրոնզեդարյան ժամանակաշրջանում Հայաստանի շատ բնակիչներ նստակյաց կյանք էին վարում՝ վարպետորեն պատրաստած քարե, եղեգե և արևի տակ չորացրած աղյուսե տներում... Կուր-արաքսյան մշակույթի հայկական քաղաքաշինության լավ օրինակ է Շենգավիթը»***[70]։

Այդ շինարարական հմտություններով հիքսոսները Հայկական լեռնաշխարհից իջան Եգիպտոս և մեծ ներդրում ունեցան Նեղոսի հովտում. ***«Մ.թ.ա. III-II հազարամյակներում Հայաստանում առանձնակի կարևորություն է ձեռք բերում ամրոցաշինական գործը։ Հայոց ամրոցաշինության ավանդույթները մ.թ.ա. II հազարամյակի առաջին կեսին անտիկ սկզբնաղբյուրներից հիքսոսներ անվամբ հայտնի ցեղախմբերը Քանանով հասցրին մինչև Եգիպտոս»***[71]։

Շինարարական աշխատանքները, հատկապես քաղաքաշինությունն ու ամրոցաշինությունը չէին կարող հասու լինել քոչվոր ցեղերին, մինչդեռ Եգիպտոսը նվաճելուց դեռևս շատ դարեր առաջ այդ ասպարեզում մեծ փորձառություն ունեին Հայկական լեռնաշխարհի բնիկները։ ***«Հիքսոսների ներկայացրած քաղաքակրթության բարձր մակարդակի մասին են վկայում Եգիպտոս և Մերձավոր Արևելքի երկրներ նրանց բերած՝ ամրոցաշինական յուրահատուկ հմտությունները»***[72]։

Առևտուրը ևս զարգացած էր Քուռարաքսյան քաղաքակրթության կենտրոն Հայկական լեռնաշխարհում։ Հայերը շումերներից գնում էին հա-

---

68 Հովհաննես Ահրամանյան «Հայ Արիներ» Թիվ 85, 86, 87, մայիս, հունիս, հուլիս, 2007 թ., էջ 26:

69 Энтони Холмс, Древний Египет, Москва 2014 г., ст. 42.

70 Девид Лэнг, “Армяне народ-созидатель”, Москва 2004 г., ст. 78.

71 Է. Դանիելյան, Ա. Մելքոնյան, Հայոց Պատմություն, Երևան 2008 թ., էջ 31:

72 Նույն տեղում:

ցահատիկ և նրանց հարթավայրային պայմաններին հատուկ այլ մթերք, իսկ նրանց վաճառում էին զենք, հանքանյութ և այլն: Իսկ հիքսոսները Եգիպտոսում զարկ տվեցին նաև առևտրի զարգացմանը: ***«Հիքսոսների շնորհիվ Եգիպտոսն ունեցավ մի շարք ձեռքբերումներ, առևտուրն աճեց, զարգացավ դրամական տնտեսությունը»***[73]*:*

Առաջին հատորում տարբեր աշխատություններից մեջբերված ծավալուն հատվածներն ապացուցում են, որ աստղագիտությունը ևս Հայաստանում մեծ զարգացում է ապրել: Իսկ հայկական տոմարը դեռևս Հայկ Նահապետի ժամանակներից է գործածության մեջ եղել: «Քոչվոր» հորջորջված հիքսոսներն այս ասպարեզում ևս ավելի խորը գիտելիքներ ունեին, քան՝ եգիպտացիները. ***«Հիքսոսները կատարելագործեցին եգիպտական տոմարը՝ անկայուն տարվա փոխարեն ներմուծելով հաստատուն տարի: Նման կատարելագործումն անհնարին էր՝ առանց աստղաբաշխական որոշակի գիտելիքների: Աստղագիտական այդպիսի բազա ունեի՞ն, արդյոք, Հայկական լեռնաշխարհի բնակիչները: Ինչպես ցույց տրվեց, այո, ունեին՝ դեռևս մ.թ.ա. III հազարամյակում»***[74]*:*

Շատ այլ ասպարեզներում ևս հիքսոսները դրսևորել են միայն բարձր քաղաքակրթությանը բնորոշ գործելակերպ. ***«Հիքսոսյան տիրապետությունը Եգիպտոսի համար չեղավ ավերի ու ամայացման շրջան: Ընդհակառակը. այս ժամանակաշրջանից հայտնաբերվել են արվեստի բարձրաճաշակ ստեղծագործություններ, հայտնի են գրի ու գրականության, մաթեմատիկայի, բժշկության բնագավառի ակնառու գործեր»***[75]*:*



Պահպանվել են նաև գրական և այլ արժեքներ ներկայացնող աշխատություններ, որոնք հիքսոս գրիչների շնորհիվ հասել են մեզ: Իսկ եթե Եգիպտոս ներխուժած լինեին հետամնաց քոչվորներ, արվեստի, գիր ու գրականության մասին խոսելն իսկ ավելորդ կլիներ. ***«Հիքսոսների ժամանակ շարունակեց ծաղկել եգիպտական արվեստը և գրականությունը: Հանրահայտ մաթեմատիկական պապիրուսը թվարկվում է Ապոպի II-ի 33-րդ տարով. այդ թագավորից մեզ է հասել Բեռլինյան թանգարանում պահպանվող գրենական պիտույք, որ պատկանում էր գրիչ Ահմին: Հիքսոսների դարաշրջանին է վերաբերում մեզ հայտնի վեստկար պապիրուսը: Իսկ մի փոքր ավելի ուշ գրված***

---

73 В. В. Струве, История Древнего Востока, Москва 1941 г., ст. 170.

74 Ս. Մ. Այվազյան, Հնագույն Հայաստանի մշակույթի պատմությունից, Երևան 1986 թ., էջ 101:

75 Արտակ Մովսիսյան, Հայոց պատմության աշխարհիակալություններ, Երևան 2008թ. էջ 24:

Շբերսի պապիրուսը չէր կարող կազմվել, եթե հիքսոսների դարաշրջանը եղած լիներ ընդմիջման և լճացման ժամանակաշրջանում»[76]:

Հիքսոսները զարմացրել են գիտական աշխարհին մի այլ գյուտով ևս, որը իրականացրել են արդեն Եգիպտոսում. դա այբուբենի ստեղծումն էր. ***«Բայց հիքսոսները Եգիպտոսում կատարեցին գիտական մի սխրանք, որն անջնջելի հետք թողեց համամարդկային մշակույթի պատմության մեջ: Նրանք ստեղծեցին առաջին գաղափարագրային այբուբենը: 1963 թ. Մեծամորում մեր հայտնաբերած գաղափարագրերի համեմատումը հիքսոսյան, ինչպես նաև Մատենադարանում գտնվող հին հայկական ձեռագրերի գաղափարագիր նշանների հետ ցույց տվեց, որ դրանց միջև գոյություն ունի անտարակուսելի ծագումնաբանական կապ. դրանք բացարձակապես նույնական են: Այս փաստի նշանակությունը դժվար է գերագնահատել»***[77]:

Այդ այբուբենը գիտնականները համարում են բոլոր այբուբենների հիմքը, քանզի մինչ այդ եղել են գաղափագրեր՝ հիերոգլիֆներ: Այն, որպես հիմք ունենալով, ստեղծվեցին այլ այբուբեններ ևս: ***«Հիքսոսյան Եգիպտոսի գրիչների դպրոցներում եգիպտական հիերոգլիֆյան գրերի հիման վրա ստեղծվեց այն այբուբենը, որը սինայական այբուբեն անվամբ իր ազդեցությունը թողեց Փյունիկական գրերի ստեղծման վրա, ինչը դարձավ աշխարհի բոլոր գրերի նախնին»***[78]:

Հիքսոսյան գրերի հետ կապված իր կարծիքն է հայտնել նաև Մաքսիմիլյան դե Լաֆայետը՝ նախ նույնացնելով հայերին և հիքսոսներին: Նա համարում է, որ, տարբեր ոլորտներում ունեցած նվաճումների համար, մարդկությունն այդ գրերին է պարտական: ***«Շատ հին Հայկական-Հիքսոսյան Ք.ա. 4-րդ դարի խորհրդանիշներ, և կաշվե գալարների վրա արձանագրված փաստաթղթեր են հայտնաբերվել Սինայում, որոնք կոչվում են նշանագիր ձեռագրեր: Սրանք աշխարհի առաջին ձեռագրերն են, որոնք օգտագործվել են՝ որպես գրականության, ալքիմիայի, աստղաբանության, աստղագիտության, ճարտարապետական երկրաչափության, հանրահաշվի... և բժշկության «գրավոր լեզու»»***[79]:

Սակայն որոշ հետազոտությունների արդյունքում համոզմունք առաջացավ, որ հիքսոսներն այդ այբուբենը ստեղծել են ոչ թե Եգիպտոսում, այլ իրենց բուն հայրենիքում՝ Հայկական լեռնաշխարհում. ***«Վերջապես, Մեծամորում հայտնաբերված Հայաստանում առաջին գաղափարագրերը և դրանց վերծանումը մեկ անգամ ևս հաստատեցին հիքսոսների էթնո-***

---

76 А. Тураев, История Древнего Востока, Ленинград 1935 г., ст. 259.

77 Ս. Մ. Այվազյան, Հնագույն Հայաստանի մշակույթի պատմությունից, Երևան 1986 թ., էջ 100–101:

78 В. В. Струве, История древнего востока, Москва 1941 г., ст. 170.

79 Maximillien de Lafayette “Civilization and Arts of Armenia from Pre–History to the Present Day: Its Culture, Society, Stars, Artists and Celebrities”, USA San Bernardino, CA 25 May 2015 p., Volume 1, p. 35.

գենեզի վերաբերյալ նոր տեսությունը։

Մեծամորի գաղափարագրերը լավ զուգակցվում են հին հայկական գաղափարագրերի հետ, որ հանդիպում են Մատենադարանի ձեռագրերում։ Դրանք ունեն մի շարք ընդհանրություններ հեթիթական և եգիպտական գաղափարագրերի հետ։

Այժմ՝ Մեծամորի պեղումներից և այնտեղ գաղափարագրերի հայտնաբերելուց հետո, միանգամայն ակնհայտ է, որ հիքսոսներն իրենց հայրենիքում ունեցել են գաղափարագրեր և կարող էին հասնել այբուբենի գաղափարին ոչ թե Եգիպտոսում (արշավանքը կատարելուց հետո), այլ իրենց հայրենիքում՝ Հայաստանում։ Կարծում ենք, որ միանգամայն ստույգ ենք արտահայտում պատմական այն իրողությունը, երբ պնդում ենք, թե հայերը (հիքսոսները) հանգել են այբուբենի գաղափարին՝ ելնելով հենց իրենց գաղափարագրերից և կատարել են այդ գիտական սխրանքն իրենց հայրենիքում՝ Հայաստանում, և ոչ թե Եգիպտոսում՝ եգիպտական գաղափարագրային համակարգը կատարելագործելիս։

Այսպիսով, XVIII դարը (մ.թ.ա.) եղել է առաջին անձայնավոր այբուբենի ստեղծման դար, որը սկիզբ է դրել Ասիայի, Աֆրիկայի և Եգիպտոսի այբուբեններին։ Հիքսոսյան այբուբենի, հին հայկական գաղափարագրերի ու Մեծամորում գտնված գաղափարագրերի նշանների համեմատությունը ցույց է տալիս դրանց լիակատար նմանությունը, անտարակուսելի ծագումնաբանական կապը»[80]*։*

Հետևապես, հիքսոսներն առաջնակարգ ձեռքբերումներ ունեին ոչ միայն ռազմական, այլև՝ մշակույթային ոլորտում։ Մի՞թե քոչվորը կարող է նման բարձր, գիտական, մտավոր ունակություններ ցուցաբերել, այն էլ՝ եգիպտոսի պես հզոր, զարգացած երկրում։

Իսկ հիքսոսների վերաբերյալ Մաքսիմիլյան դե Լաֆաետի զարմանքն այն աստիճանի է, որ նա, գրելով հայկական այբուբենի մասին և ընդունելով, որ հիքսոսները եղել են հայերը, նշում է, որ նրանց կարելի է համարել գերքաղաքակրթության ներկայացուցիչներ. «Հաճախ ես ինքս ինձ հարցնում եմ. արդյո՞ք հիքսոսներն իրական էին, նախատիպն ու սերմն էին՝ գալակտիկական հասարակության, վիրտուալ տեսակ էին, թե՞ չափազանց առաջադեմ, համարյա հումանոիդ քաղաքակրթություն, ինչպիսիք էին Լեմուրիայի ժողովուրդը և Ատլանտները։ Ես կպաշտպանեի այս ավանգարդիստական տեսությունը, եթե հայկական գրային համակարգը չփոխակերպվեր, չզարգանար և պարբերաբար չփոխվեր դարերի ընթացքում, ինչպես և մարդկային նյութն է փոխվում դարերի ընթացքում»[81]*։*

---

80 Ս. Մ. Այվազյան, Հնագույն Հայաստանի մշակույթի պատմությունից, Երևան 1986 թ., էջ 72–73:

81 Maximillien de Lafayette, “Civilization and Arts of Armenia from Pre–History to the Present Day: Its Culture, Society, Stars, Artists and Celebrities” Volume 1, San Bernardino 2015, p. 25.

Մարդաբանական տեսանկյունից էլ հիքսոսները մեծապես նպաստեցին եգիպտացիների զարգացմանը, որ մեկուսացված լինելով այլ քաղաքակիրթ երկրներից՝ ամուսնական կապեր էին հաստատում ազգականների հետ, ինչը տանում էր այլասերման: Իսկ հիքսոսների հայտնվելով՝ եգիպտացիների մոտ փոփոխություններ եղան նաև այդ հարցում. ***«Հիքսոսները, որքան էլ դա պարադոքսալ է, նոր ուժ ներշնչեցին տկարացած երկրին... Մինչև նրանց նվաճումը եգիպտացիներն ապրում էին նեղ համայնքներով և ամուսնական կապեր էին հաստատում այդ համայնքների ներսում: Բացի այդ՝ ամուսնության համար արգելք չկար նույնիսկ շատ մոտ հարազատների համար. եղբայրները հաճախ ամուսնանում էին քույրերի հետ: Այս ամենը հանգեցրեց ազգի թուլացման և այլասերման: Իսկ հիքսոսները, կնության վերցնելով եգիպտուհիներին, բերեցին նոր՝ առողջ գեներ»***[82]:

Այսպիսով, կարող ենք եզրահանգել, որ հիքսոսները տարբեր ասպարեզներում առավել մեծ զարգացման հասած պետության ներկայացուցիչներ էին. իսկ այդպիսի պետություն կարող էր լինել միայն հզոր Արատտան՝ Հայաստան աշխարհը: ***«Այսպես, ուրեմն, մենք քննեցինք մի շարք փաստեր, որոնք հիքսոսներին մոտեցնում են հայերի նախնիներին: Բոլոր այդ փաստերի համադրությունը մեզ թույլ է տալիս՝ առաջ քաշելու այն կարծիքը, որ եգիպտացիների աղբյուրներում նշված հիքսոսները Հայկական լեռնաշխարհի ծնունդ են»***[83]:

Հիմնավորումները, որ բերվեցին ի նպաստ այն տեսակետի, որ հիքսոսները եղել են Հայկական լեռնաշխարհի բնիկներ, որքան էլ կարևոր են, այնուամենայնիվ, ամենահամոզիչները չեն: Հիքսոսները հիմնականում հայտնի են իրենց մարտունակությամբ, ռազմական ոլորտում ձեռք բերած հաջողություններով, նոր տեսակի զենքերով: Նրանք եգիպտոսին ծանոթացրին մարտակառքին, ձիուն, բարձր որակի մետաղական զենքերին և կազմածո աղեղին: Եթե կարողանանք ապացուցել, որ եգիպտոսին, առավել ևս մյուս երկրներին անծանոթ վերոհիշյալ նորույթները նույնպես ծնունդ են առել Մեծ Հայքի տարածքում, ուրեմն, հիքսոսների՝ հայկական ծագման խնդիրը կարելի է լուծված համարել, և այլևս հարկ չի լինի տարակուսած հարցնել. ***«Սակայն որտեղի՞ց իրենք՝ հիքսոսները, սովորեցին այդ մշակույթը»***[84]:

---

82 Баганова Мария, Всемирная история в сплетнях, Москва 2011 г., ст. 66.

83 Ս. Մ. Այվազյան, Հնագույն Հայաստանի մշակութային պատմությունից, Երևան 1986 թ., էջ 101:

84 Мария Павловна Згурская, Древний Египет, Харьков 2008 г., ст. 351.

Հայ – հիքսոսներ
Մետաղագործություն, զենք, զինամթերք

Հին հույն պատմագիրները նշում են, որ առաջինը մետաղների՝ երկաթի, պղնձի և բրոնզի հետ աշխատել են հայերը»[85]:

Առաջին հատորում տարբեր աշխատություններից բերված նյութերի հիման վրա ապացուցվեց, որ մետաղագործության հայրենիք է համարվել Հայաստան աշխարհը, քանզի պղինձը, բրոնզը և երկաթը հայտնաբերել և առաջինը գործածության մեջ են դրել Հայկական բարձրավանդակում: Սակայն հարկ ենք համարում կրկին անդրադառնալ այդ թեմային, որպեսզի ավելի համոզիչ դարձնենք հիքսոսների հայկական ծագումը:

*Ըստ Սո տրբ Գրքի՝ առաջին մետաղագործները եղել են Հայաստանից: Նույնն են ասում նաև բազմաթիվ հնագետներ: **«Պատմական Հայաստանն աչքի է ընկել օգտակար հանածոների հարուստ հանքերով: Մշակում էին պղինձ, անագ, ոսկի, արծաթ, երկաթ, կապար, ցինկ, մկնդեղ, ծծումբ, մանգան, ծարիր, մագնեզիում, սնդիկ, կվարց, աղ, շիբ, մարմար, հանքային ներկեր, որձաքար, տուֆ և այլն: Բազմազան օգտակար հանածոների առկայությունը մեծապես նպաստում էր մետաղաձուլման եղանակների զարգացմանը: Մետաղաձուլման և օգտակար հանածոների մշակման տեխնիկայի սկզբնաշրջանը Հայաստանում պետք է համարել մ.թ.ա.** V-IV **հազարամյակները:***

Մ.թ.ա.** III **հազարամյակի վերջին և** II **հազարամյակի սկզբին առանձնահատուկ զարգացում է ստանում բրոնզե իրերի մշակումը. իրեր, որոնք պարունակում էին հազվադեպ հանդիպող անագի հավելանյութի բավական քիչ տոկոս: Այդ իրերն աչքի էին ընկնում նրբագեղ ձևավորմամբ:

Հայաստանում մետաղի (ոսկու, արծաթի, երկաթի, պղնձի) մասին ամենավաղ վկայությունները հանդիպում են մ.թ.ա.** II **հազարամյակի առաջին կեսի հեթիթական կամ խեթական աղբյուրներում: Նույն աղբյուրները վկայում են նաև լազուրիտի, մարմարի, լեռնային բյուրեղի առկայության մասին...

Հայկական լեռնաշխարհը հին աշխարհում աչքի է ընկել նաև մետաղների արտահանմամբ: Հնագույն քաղաքակրթությունների զարգացման անհրաժեշտ պայման էր՝ երկիրն ապահովել անհրաժեշտ օգտակար հանածոներով կամ մետաղե իրերով: Հայաստանի բնական հարստություն-

[85] Maximillien de Lafayette, “Civilization and Arts of Armenia from Pre–History to the Present Day: Its Culture, Society, Stars, Artists and Celebrities” Volume 1, USA San Bernardino, CA 25 May 2015 p. 25.

ներն օժանդակում էին մերձավոր երկրների տնտեսության և ռազմական գործի զարգացմանը: Ուստի Մերձավոր Արևելքի հնագույն պետությունները ձգտում էին իրենց ենթարկել Հայաստանը կամ նրա հետ մշտապես առևտրական կապեր հաստատել»[86]:

Եգիպտոսում պղինձը վաղուց էր գործածության մեջ, քանզի հիքսոսների շրջանից դեռ դարեր առաջ այն ներմուծել են հենց արմենոիդ ռասայի ներկայացուցիչները, ինչի մասին վկայում են պեղումները. ***«Համաձայն Գ. Ր. Հոլլուի՝ «եգիպտացիները պղնձի մշակման հմտություններն անկասկած ստացել են Միջագետքից՝ Սիրիայի միջոցով, հավանաբար, «արմենոիդ» ռասայի ներկայացուցիչներից, որոնք հայտնվել են Ներքին Եգիպտոսում, հավանաբար, մինչդինաստիական շրջանից դեռ շատ առաջ... Միանգամայն հավանական է, որ «արմենոիդները» (եթե իսկապես նրանք են պղինձն իրենց հետ բերել) ի սկզբանե այն արդյունահանում էին ինչ-որ ավելի հյուսիսային աղբյուրից՝ հենց ժամանակակից Հայաստանի լեռներից»***[87]:

Բրոնզ

«Մենք լավ գիտենք Հայաստանը, որպես հնագույն մշակույթ կրող երկիր»[88]:

Հիքսոսները Եգիպտոս մտան բարձրորակ զենք ու զինամթերքով, ինչը նորույթ և անակնկալ էր եգիպտացիների համար: Վերջինների զենքերը փափուկ մետաղից էին և չէին դիմանում հիքսոսների՝ ավելի ամուր մետաղներից պատրաստված զենք ու զրահներին:

Հիքսոսների զենքերը պատրաստված էին տարբեր մետաղներից՝ ամեն մեկն իր նպատակին ծառայեցնելու համար: Դրանցից հիշատակվում է բարձր որակի բրոնզը, ինչն այդ ժամանակ դեռևս անծանոթ էր եգիպտացիներին. ***«Ք. ա. III հազարամյակի վերջից, երբ Եգիպտոսը մտավ Միջին թագավորության ժամանակաշրջան, մինչև Ք. ա. XVIII դ. վերջերը Եգիպտոսին անհայտ էր բրոնզը (գործածվում էր պղինձը)»***[89]:

---

86 Ս. Մ. Այվազյան, Հնագույն Հայաստանի մշակութային պատմությունից, Երևան 1986 թ., էջ 6–7:

87 С. К. Дикшит, Введение в археологию, Москва 1960 г., ст. 272.

88 Джузеппе Галассо.

89 Արտակ Մովսիսյան, Հայոց պատմության աշխարհակալությունները, Երևան 2008 թ., էջ 25:

Երկար ժամանակ էր պետք, որպեսզի եգիպտացիները հիքսոսներից սովորեին այդ յուրահատուկ զենք-զինամթերքի պատրաստման գաղտնիքները։ ***«Հիքսոսները Եգիպտոս բերեցին ավելի կատարելագործված զենքեր՝ դաշույն, աղեղ, բրոնզե թուր և այնտեղ առաջին անգամ սկսեցին օգտագործվել ձիեր լծած մարտակառքեր»***[90]։

Եթե հիքսոսները բարձրորակ բրոնզ էին օգտագործում (իսկ ինչպես՝ պղնձի, այնպես և բրոնզի հայրենիքը Հայկական լեռնաշխարհն է), ուրեմն կամ հիքսոսներն այդ տարածքի բնիկներ, այսինքն՝ հայեր էին, կամ էլ վերջիններից են ընդօրինակել։ ***«Պղնձե դարին հաջորդում է բրոնզե դարը, իրականացվում է ավելի ամուր մետաղի՝ բրոնզի ձուլման գյուտը (պղնձի, անագի, կապարի խառնուրդ)։ Հայկական լեռնաշխարհի տարբեր մասերում հայտնաբերվել են բազմաթիվ ձուլարաններ։ Այս հարցը հանգամանորեն մեկնաբանված է Հ. Մարտիրոսյանի (1964) ծավալուն մենագրության մեջ։ Ցույց են տրված բրոնզե դարի տարբեր փուլերը, նրանցում ծավալված իրադարձությունները»***[91]։

Ըստ վերջին հետազոտությունների՝ Հայաստանում բրոնզն ի հայտ է եկել շատ ավելի վաղ, քան ընդունված էր համարել մինչ այժմ։
«...Մ.թ.ա. 3-րդ հազարամյակում ինտենսիվ մետաղամշակման արդյունաբերություն էր ծավալվել Մեծամորում և Արաքսի սարահարթում։ Նախիջևանում եղած գտածոների ուսումնասիրությունը ցույց տվեց, որ արդեն մոտ 3000 տարի մ.թ.ա. տեղաբնակ վարպետները լիովին տիրապետում էին պղինձը և այլ մետաղները խառնելու արվեստին, ինչի միջոցով ստանում էին տարբեր տեսակի բրոնզներ. օրինակ՝ Քյուլ-Տեպեի երկրորդ շերտը տվեց բրոնզե առարկաներ, որոնք պարունակում էին մոտ 6 տոկոս մկնդեղի խառնուրդ։ Ինչի համար էլ այժմ ընդունված է համարել, որ ուշ բրոնզե դարը Հայաստանում սկսվել է մ.թ.ա. մոտ 3,2 կամ 3 հազար ոչ թե մ.թ.ա. 2,5-2 հազար տարի առաջ, ինչպես նախկինում կարծում էր գիտնականների մեծամասնությունը»[92]։

Չկա որևէ փաստ, որ մետաղագործությունը սկիզբ է առել այլ տարածքում։ Մինչդեռ բազմաթիվ են այն իրողության ապացույցները, որ մետաղը հայտնաբերվել է Հայկական լեռնաշխարհում և նրա տարբեր համաձուլվածքները՝ պղինձ, բրոնզ, երկաթ և այլն առաջինը հայերն են ստացել։ Հետևաբար, հենց այս բարձրավանդակից են հիքսոսներն այդ մետաղներից պատրաստված զենքերով իջել Եգիպտոս. ***«Այսպիսով, երրորդ հազարամյակից մինչև մեր դարաշրջանը, Հայաստանը ամենևին էլ հետին պլանում չի եղել Մերձավոր Արևելքում... Բրոնզի և հողագոր-***

---

90 Кристиан Жак, Египет великих фараонов, Москва 1992 г., ст. 130.

91 Գաբրիելյան Հ. Կ., «Հայերի բնօրրանը՝ Հայկական լեռնաշխարհը», տես – Հանդես ամսօրյա, 1998 թ., էջ 411։

92 Девид Лэнг, “Армяне народ-созидатель”, Москва 2004 г., ст. 72.

ծուխյան զարգացմանը վարպետորեն տիրապետելը բերեց սերունդների էական աճի և կենսամակարդակի կտրուկ բարձրացման»[93]

Հիքսոսների երկաթե զենքերը

«...հայկական ցեղերը, որ դրել էին երկաթի քաղաքակրթության սկիզբը, բնակեցրել են լեռնային շրջանները»[94]***:***

Հիքսոսների մասին տարբեր աշխատություններից տեղեկանում ենք, որ նրանք օգտագործել են նաև երկաթե զենքեր: Պատմաբան Անժելա Տերյանը գրում է. ***«Այսպես. հաք-սոսները Եգիպտոս տարան երկաթե զենքեր ու ձիեր»***[95]***:***

Եթե հիքսոսները տիրապետել են նման մետաղի, որի մասին զարգացած Եգիպտոսում հավանաբար չէին էլ լսել, ուրեմն ինչպե՞ս կարելի է նրանց քոչվոր համարել: ***«Նոր տեսակի տարբեր արդյունավետ զենքերը, որ կիրառել են հիքսոսները, մասամբ հանդիսանում են պատճառ՝ Եգիպտոսի հանդեպ այսքան դյուրին հաղթանակի համար: Նրանք եգիպտացիներին ծանոթացրեցին ձիեր լծած մարտակառքերին, երկաթե զենքին, ինչպես նաև տարբեր մասերից բաղկացած աղեղներին, ինչպիսիք Եգիպտոսում առաջ չէին տեսել: Եվ այդ ծանոթությունը շատ տհաճ եղավ: Եգիպտացիները բացարձակ անպատրաստ գտնվեցին մարտակառքերի և, ընդհանրապես, հիքսոսների նոր «ռազմավարական մշակումների» հետ հանդիպմանը»***[96]***:***

Առաջին հատորում տեղեկացանք, որ երկաթի հայրենիքը Հայաստանն է, և այդ մետաղի ստացման գյուտը երկար ժամանակ գաղտնի է պահվել՝ մնալով հայոց մենաշնորհ: Սակայն երկաթը շատ ավելի ուշ է Հայաստանից դուրս եկել և տարածվել մյուս երկրներում. ***«Բրոնզի դարին հաջորդում է երկաթի դարը: Երկաթի գյուտը մի նոր հեղափոխություն էր: Մորգանը, Գորդոն Չայլդը, Դիկշիտը և ուրիշներ հնագիտական հարուստ նյութերի հիման վրա եկել են այն եզրակացության, որ հանքաքարից երկաթի ձուլման պատիվը պատկանում է Հայաստանի բնակիչներին: Այսպիսով՝ Հայկական լեռնաշխարհը մետաղաձուլության այն օջախն է***

---

93 Девид Лэнг, “Армяне народ–созидатель”, Москва, 2004 г., ст. 77.

94 С. К. Дикшит, Введение е археологию, Москва 1960 г., ст. 432.

95 Անժելա Տերյան, Հայաստանը արարչագործության և քաղաքակրթության բնօրրան, Երևան, 2002 թ., էջ 182:

96 Мария Павловна Згурская, Древний Египет, Харьков 2008 г., ст. 350–351.

եղել, որտեղից այդ մշակույթի ալիքները տարածվել են այլ երկրներ։

***Մինչև երկաթի դարը Հայկական լեռնաշխարհում կյանքի՝ անընդմեջ լինելու հանգամանքը ապացուցվում է հիմնականում հնագիտական նյութերի հիման վրա։ Երկաթի դարից արդեն ստույգ գրավոր հիշատակություններ կան Հայաստան-Արմենիայի մասին, և եղած նյութերն անառարկելիորեն ցույց են տալիս հայերի՝ տեղաբնիկ լինելու հանգամանքը»**[97]։*

Գիտական աշխարհում խոստովանում են, որ տնտեսական և ռազմական ոլորտներին պատկանող բազմաթիվ նորույթներ հենց Քուռարաքսյան քաղաքակրթության կենտրոնից՝ Հայաստանից են տարածվել այլ երկրներ, ինչի շնորհիվ վերջինները զարգացում են ապրել և ճանաչում գտել։ Իսկ Հայաստանը, որը սնել է բոլոր մյուս երկրները և մեծապես նպաստել է նրանց առաջընթացին ու բարգավաճմանը, մինչ օրս շարունակում է դիտավորյալ անտեսվել։

*Ս.Կ. Դիկշիտը գրում է. **«...Մեզ նաև հայտնի է, որ երկաթե դարաշրջանը դրվում է մոտավորապես մ.թ.ա. 1500 թ. Հայոց լեռների շրջանում... Վերը նշված ենթադրության օգտին կարելի է նաև այլ փաստեր բերել Արխարվավեդի թվագրության հետ կապված։ Հայաստանում երկաթեդարյան սկզբնական շրջանի և դրա՝ Ինդոսում հաստատվելու միջև, անխոս, որոշ ժամանակ է անցել։ Նույնիսկ նրա՝ Եգիպտոսում հաստատվելու համար, որտեղ այն ներթափանցեց Սիրիա-Պաղեստինից, մի քանի հարյուրամյակ պահանջվեց։ Արևելքում ասորեստանցիները նույնպես յուրացրեցին երկաթե զենքերի պատրաստումը միայն մ.թ.ա. I հազարամյակի սկզբից ոչ շատ ուշ, այսինքն՝ մի քանի հարյուրամյակ հետո այն ժամանակաշրջանից, երբ երկաթը հայտնի դարձավ Հայաստանում»**[98]։*

*Այսպիսով, հստակ է, որ Հայաստանը ոչ միայն պղնձի ու բրոնզի, այլև երկաթի հայրենիքն է։ Իսկ առանց այս գյուտերի՝ թերևս աշխարհը մինչ օրս էլ մնար քարի դարի մակարդակին. **«Հայ մետաղագործները, որ մեծ հաջողության էին հասել բրոնզի ձուլման մեջ, Ք. ա. 2-րդ հազարամյակի կեսերին կատարեցին ևս երկու խոշոր հայտնագործություն։ Նրանք սովորեցին հանքաքարից երկաթ ստանալ և այն կռել։ Հիրավի, այդ երկու նվաճումները նրանց մետաղաձուլական խորը գիտելիքների հանրագումարն էր, որը հնարավորություն տվեց նոր որակի գործիքներ ու զենքեր կռել։ Եվ, ինչպես Բաքսն է գրել. «Նրանք մարդկության առջև ուղի բացեցին բրոնզի դարից դեպի երկաթի դար ու վերջին հաշվով ազդեցին քաղաքակրթության զարգացման ընթացքի վրա՝ ընդհուպ մինչև մեր օրերը»»**[99]։*

---

97 Գաբրիելյան Հ. Կ., «Հայերի բնօրրանը՝ Հայկական լեռնաշխարհը», տես – Հանդես ամսօրյա, 1998 թ., էջ 411–412:

98 С. К. Дикшит, Введение в археологию, Москва 1960 г., ст. 462–463.

99 Սամվել Դիլանյան, «Մանկական հանրագիտարան», Երևան 2001 թ., էջ 93:

*Անտիկ շրջանի հեղինակություններից շատերն են իրենց աշխատություններում մեջ հիշատակել, որ երկաթի հայրենիքը Հայաստանն է, և գովասանքով են խոսել այնտեղ ստացված երկաթի բարձր որակի մասին. **«Էսքիլեսը (Ք. ա. 6 դ.), մատնացույց անելով Փոքր Հայքը, նշում է, որ այնտեղ է «երկաթն առաջին անգամ հայտնաբերվել»: Փոքր Հայքի երկաթի մասին հիշատակում է Էվրիպիդեսը (Ք. ա. 5-րդ դ.), իսկ համաձայն Քսենոփոնի (Ք. ա. 5-րդ դար)՝ բնակչության մեծ մասն այստեղ «զբաղվում էր երկաթաքարի մշակմամբ»: Արիստոտելը (Ք. ա. 4-րդ դար), խոսելով Հայաստանում երկաթաքարի մշակման և հալման մասին, նշում է, որ «միայն այդ երկաթը չի ենթարկվում ժանգոտման»: Եվդոքսոս Հռոդոսցին (Ք. ա. 3-րդ դար) հայկական երկաթը գովաբանում է կոփման պիտանիության համար»**[100]:*

*Մի՞թե զարմանալի չէ, որ այդ վաղնջական շրջանում երկաթի գաղտնիքին ամբողջ աշխարհում բացի հայերից՝ տիրապետում էին նաև ինչ-որ անհայտ, անհայրենիք հիքսոսներ: **«Հիքսոսները սովորել էին երկաթ հալել այլ ազգերից 500 տարի առաջ»**[101],-հաստատում է Պ. Գ. Նազարովը:*

*Իսկապես, հիքսոսները երկաթյա թրեր են օգտագործել այն ժամանակ, երբ նման բան կարող էին անել միայն հայերը: Իսկ հայերին հաջողվել է երկաթի ստացման գաղտնիքը երկար ժամանակ պահել, այդ պատճառով էլ միայն իրենք էին կարողանում երկաթե զենքեր պատրաստել և դրանք օգտագործել. **«Սկսվեց երկաթյա թրերի ժամանակը: Թրերի առաջին իրավատերերը Հայաստանի լեռնականները եղան»**[102]:*



*Փաստորեն, միայն հայերն էին այդ ժամանակ երկաթ ստանում և այն օգտագործում, մինչդեռ հիքսոսները նույնպես կռվում էին երկաթե զենքերով: Հետևաբար պետք է եզրակացնել, որ հիքսոսները Հայոց լեռնաշխարհի բնիկներն էին՝ հայերը. **«Երկաթի ձուլման և արտադրության գյուտը, փաստորեն, պայմանավորեց հիքսոսների սրընթաց հաջողությունը Եգիպտոսը նվաճելիս: Սրությամբ և ամրությամբ երկաթե թուրը գերազանցում էր բոլոր թրերին, երկաթակոփ զրահներն ավելի ապահով էին, քան պղնձե կամ բրոնզե պահպանակները: Հիքսոսներն առաջինը գործադրեցին երկաթե***

---

100 Սամվել Դիլանյան, «Մանկական հանրագիտարան», Երևան 2001 թ, էջ 93:

101 Назаров П.Г., Происхождение дадонской арты еврейской арцы, Ур–Арту и стран артавы, част 14, Челябинск 1997 г., ст. 87.

102 С. А. Нефедов, Иллюстрированная история древнего мира, Екатеринбург 1994 г., ст. 89.

զենք: Աշխարհի մերօրյա հնագետների միահամուռ կարծիքով երկաթի ձուլումն առաջին անգամ իրագործվել է մ.թ.ա. II հազարամյակի սկզբին՝ Հայկական լեռնաշխարհի սահմաններում, այսինքն՝ հիքսոսների հայրենիքում, որտեղ այդ ժամանակ գոյություն ուներ Հայք-Հայասա պետությունը՝ «հայերի բնօրրանը»[103]:

Հիքսոսների նետ ու աղեղը

*Բազմաթիվ նորույթների հետ հիքսոսները եգիպտոս բերեցին նաև նետ-աղեղ, որը միանգամայն տարբերվում էր ոչ միայն՝ եգիպտական, այլև մինչ այդ հայտնի բոլոր աղեղներից: Հիքսոսների աղեղը կազմված էր տարբեր մասերից, ինչի շնորհիվ այն կարող էր ավելի ուժգին և ավելի մեծ հեռավորության վրա խոցել թիրախը. **«Կազմածո աղեղը հեքսոսների մի այլ նորույթ, գյուտ էր, շատ ավելի հզոր, քան՝ հասարակ աղեղը, որը եգիպտացիներն էին օգտագործում»***[104]:

Առաջին հատորից գիտենք, որ նման հատկություններով էր օժտված նաև Հայկ նահապետի աղեղը, որից արձակած նետով նա գետնին գամեց Բելին: Հայկյան աղեղը նույնպես բաղկացած էր տարբեր մասերից, որ ապահովում էին յուրահատուկ ճկունություն և նետարձակման մեծ ուժ: Այդ նետ-աղեղի գյուտը փոխանցվեց նրա ժառանգներին ու երկար ժամանակ մնաց որպես հայոց ազգի մենաշնորհ:

Հայերի մոտ նման նետ–աղեղի առկայության մասին վկայել է Քսենոփոնը: Ըստ նրա՝ այդ ահռելի մեծության աղեղներից հայերն արձակում էին նետեր, որոնք մինչ այդ հայտնի աղեղների համար անսովոր հեռավորության վրա խոցում էին թշնամուն, իսկ նետերը հասնում էին տեգի չափսերի:

Դեռ Քսենոփոնից մի քանի հարյուրամյակ առաջ կա մի այլ վկայություն, ըստ որի՝ հայոց թագավոր Արգիշտի Բ-ն (ն.Ք. VIII-VII դ.), իր աղեղից արձակած նետը նպատակին է հասցրել սովորական աղեղներից արձակվող նետերի համեմատ կրկնապատիկ նետընկեց և ավելի հեռավորությունից:

Ըստ Վանի մոտակայքի արձանագրությունների՝ Արգիշտի արքայի արձակած նետը մարզումների ժամանակ հատել է 950 կանգունի (մոտ 492 մետր) սահմանագիծը: Այնինչ մյուս ազգերի գործածած աղեղները կարող էին նետը թիրախին հասցնել առավելագույնը 250 մետր հեռավորությունից: Եվ ահա հայերի մենաշնորհ այդ կազմածո հզոր նետ-աղեղ-

---

103 Ս. Մ. Այվազյան, Հնագույն Հայաստանի մշակույթային պատմությունից, Երևան 1986 թ., էջ 99–100:

104 Барбара Мертц, “Древний Египет, храмы, гробницы, иероглифы”, Москва 2007 г., ст. 166–167.

ներով էին զինված նաև եգիպտոսը նվաճած հիքսոսները։ ***«Հիքսոսներն էական ներդրում կատարեցին ռազմական ոլորտում. եգիպտացիներին ծանոթացրին ձիեր լծած մարտակառքերին, ինչպես նաև՝ տարբեր բաղադրամասերից կազմված աղեղներին, որոնց մասին եգիպտոսում նախկինում չգիտեին»***[105]*։*

Նույնատիպ՝ կազմածո հայկյան նետ-աղեղների առկայությունը հիքսոսների մոտ ևս մի ապացույց է, որ նրանք եգիպտոս են իջել Հայկական լեռնաշխարհից. ***«Բացի այդ, եգիպտացիներն այժմ հավանաբար սկսեցին օգտագործել շատ ավելի լավ զենքերի տեսակներ, որոնք բերվել էին Ասիայից՝ հիքսոսների կողմից. նոր տեսակի բրոնզե թրեր, դաշույններ և հզոր կազմածո աղեղ»***[106]*։*

Բնական է, որ նման հզոր զինանոցի առկայությունը պետք է որ ապահովեր դյուրին հաղթանակ, ինչը և, ի զարմանս եգիպտացիների, ինչպես նաև այդ ժամանակաշրջանն ուսումնասիրող գիտնականների, տեղի ունեցավ. ***«Հիքսոսներն այնքան էլ մեծաթիվ չէին, սակայն նրանց ռազմական կազմակերպվածությունը գերազանցում էր եգիպտականին. ձիեր լծած մարտակառքերի և նոր տիպի աղեղների կիրառումը որոշեց եգիպտոսի հանդեպ հաղթանակը»***[107]*։*

Զիաբուծության հայրենիքը ևս Հայաստանն է

«Հայաստանն իր նժույգներով հայտնի է եղել դեռևս բիբլիական ժամանակներից։ Այդ մասին հիշատակում է Եզեկիէլ մարգարեն»[108]*։*

Հիքսոսների առեղծվածի բացահայտման համար անդրադառնանք նաև ձիաբուծությանը, որի հայրենիքը նույնպես Հայաստանն է։ Առաջին հատորում ձեռնպահ մնացինք այս ոլորտը լուսաբանելուց՝ այն վերապահելով բացառապես այս ենթագրքին։

Հիքսոսները, կառքերին լծված ձիերով, մտան եգիպտոս, և եգիպտա-

---

105 Владимир Борисович Миронов, Москва 2006 г., ст. 406.

106 Штайндорф Георг, Когда Египет правил Востоком, Пять столетий до нашей эры, Москва 2013 г., ст. 39.

107 Мария Павловна Згурская, Древний Египет, Харьков 2008 г., ст. 342.

108 Լեոնիդ Վոլինսկի, «Երկու շաբաթ Հայաստանում», տես – «Յոթ գարունների երկրում» գիրք II, Երևան 1981 թ., էջ 334:

*կան բանակը, իրեն անծանոթ կենդանու տեսքից ահաբեկվելով, դիմեց փախուստի: Սակայն այն ամենը, ինչը դարձավ պարտության պատճառ, հետագայում մեծապես նպաստեց Եգիպտոսի հզորացմանը: Եգիպտացիները հիքսոսներից սովորեցին օգտագործել ոչ միայն նորագույն սպառազինություններ, այլև՝ բուծել ու վարժեցնել ձիեր: **«Հիքսոսները ձի բերեցին Նեղոսի հարթավայր և եգիպտացիներին սովորեցրին պատերազմել, ինչպես հարկն է: Չնայած բոլոր այն տառապանքներին, որ կրեցին եգիպտացիները, նրանք շատ բաներով անվերջ պետք է պարտական լինեին իրենց հաղթողներին»***[109]*:*

*Հնագետ Բորիս Պիոտրովսկին տեղեկացնում է, որ Եգիպտոսն ասպատակելուց դեռևս 200 տարի առաջ հիքսոսները տիրապետում էին ձիերին վարժեցնելու և պատերազմում օգտագործելու արհեստին, որն այդ ժամանակաշրջանի համար կատարյալ արվեստ էր. **«...Հիքսոսները ստեղծել են հզոր բանակ՝ հագեցված այն ժամանակների համար ամենաառաջադեմ մարտական միջոցներով, ինչն, ըստ երևույթին, թույլ էր տալիս նրանց համատեղել խաղաղ և պատերազմական գործողությունները և աստիճանաբար տիրել հինարևելյան քաղաքակրթության խոշորագույն օջախներից մեկին՝ Եգիպտոսին: Մինչ այդ՝ մոտ երկու հարյուր տարի առաջ, հիքսոսները լիովին ընտելացրել էին ձիուն»***[110]*:*

*Ուրեմն, այդ վաղնջական շրջանում ձին արդեն ընտելացված էր հիքսոսների կողմից: Եվ քանի որ գիտական աշխարհի ներկայացուցիչները, փոքրաթիվ բացառություններով, ձիաբուծության հայրենիքը համարում են Հայկական լեռնաշխարհը, հետևաբար, հիքսոսները ձիեր տարան Եգիպտոս Հայկական լեռնաշխարհից՝ իրենց հայրենիքից: **«Հիքսոսյան արշավանքի մեկնակետը Հայկական լեռնաշխարհում տեղադրելու օգտին է անուղղակիորեն վկայում նաև Հայկական լեռնաշխարհի՝ ձիաբուծության հայրենիքը լինելու փաստը»***[111]*:*



*Սակայն կարծիք կա, թե Հայաստանն ընդամենը ձիաբուծության նախահայրենիքներից մեկն է, և ոչ՝ միակը: **«Ա. Կ. Վեկուայի հայտնագործությունները՝ հրատարակված***

---

109 Д. Брестед, Б. Тураев, ''История Древнего Египта", Москва 2007 г., ст. 232.

110 Древняя Анатолия, изд. «Наука», г. ред. Акад. Б. Пиотровский, Москва 1985 г., ст. 201.

111 Արտակ Մովսիսյան, Հայոց պատմության աշխարհակալությունները, Երևան 2008 թ., էջ 25:

1962 թ., անխոս հաստատում են այն եզրակացությունը, որ Հայկական լեռնաշղթան հանդիսացել է ձիաբուծության նախահայրենիքներից մեկը»[112]*:*

Եթե, իրոք, այդպես է, ուրեմն պետք է այլ հայրենիք ևս լինի: Ոմանք ժամանակին համարել են, որ դա Մոնղոլիայի տափաստաններն են:

«Մինչև վերջերս համարվում էր, որ ձին առաջին անգամ ընտելացվել է կենտրոնական Ասիայում՝ այսինքն այնտեղ, որտեղ դեռևս պահպանվել է նրա վայրի նախնին, որը գիտության մեջ հայտնի է «Պրժևալսկու ձի» անունով: Սակայն կենդանաբանների հետազոտությունները հերքեցին այդ կարծիքը: Ժառանգականության օրենքով միևնույն կենդանու վայրի և ընտանի տեսակները ունենում են բջջի քրոմոսոմների նույն թիվը: Պրժևալսկու ձին ունի քրոմոսոմների 66 զույգ՝ ընտանի ձին՝ 64: Ուրեմն, Մոնղոլիայի տափաստաններում այսօր էլ թափառող ձիու վայրի տեսակը չի կարող համարվել ընտանի ձիու նախնին: Ձիու ընտելացման հայրենիքը հարկ է որոնել մեկ այլ տեղ, որտեղից այդ կենդանու ընտանի տեսակը ներմուծվել է Մոնղոլիա, Տիբեթ, Չինաստան»[113]*:*

*Աշխարհի տարբեր ծայրերում կատարված պեղումները ոչ մի տեղ չեն հայտնաբերել ձիու մասին հիշեցնող գտածոներ: Սա նշանակում է, որ ընտանի ձին այդ շրջանում բացակայել է, ի տարբերություն Հայկական լեռնաշխարհի, որտեղ քիչ չեն նման գտածոները (հատկապես՝ Լճաշենի հնավայրում): **«Հայտնի է, որ ձին ընտելացվել է համեմատաբար ավելի ուշ: Քարե դարի ցցաշեն շինություններում ձիու հետքեր գրեթե չկան, մինչդեռ շան, խոզի և եղջերավոր անասունների մնացորդները հանդիպում են առատությամբ... Մինչ մ. թ. ա. 2-րդ հազ. սկիզբը Միջագետքի, Փոքր Ասիայի և Եգիպտոսի ժողովուրդները ձիերի մասին ընդհանրապես չեն իմացել:***

Անդրկովկասի վաղ բրոնզե մշակութային հուշարձաններում ձիեր ոչ մի տեղ չեն հայտնաբերվել: Բացակայում են նրանք նաև Վրաստանի տարածքի համաժամանակյա հուշարձաններում, նաև՝ Մինգեչաուրի մշակութային շերտերում: Բացակայում են ընտանի ձիերը և Դաղստանի վաղ բրոնզե բնակավայրերում: «Հատուկ հետաքրքրություն է ներկայացնում, - նշում է Վ. Ի. Գրոմովան, - ընտանի ձիու և խոզի ոսկորների իսպառ բացակայությունը: Հաշվի առնելով ոսկրանյութի մեծաքանակ առկայությունը՝ այդ փաստը չի կարող պատահականություն համարվել: Անառարկելի է, որ ընտանի ձին բացարձակապես անհայտ էր այդ ժամանակ Դաղստանում»:

Շատ հատկանշական է Տրիալետյան դամբարանաթմբի ոսկրային մնացորդների մեջ ձիու հետքերի կատարյալ բացակայությունը... Այս բանից հետևում է, որ Լճաշենյան գերեզմանների ընտանի ձին իրենից ներկայացնում է վաղ բրոնզե դարի հնագույն նմուշներից մեկը, հնարավոր

---

112 Дэвид Лэнг, «Армяне, народ–созидатель», Москва 2004 г., ст. 37.

113 Սամվել Դիլանյան, «Մանկական հանրագիտարան», Երևան 2001 թ., էջ 013:

է, նույնիսկ Անդրկովկասում ձիերի հնագույն ցեղատեսակը»[114]։

Հակառակ այլ երկրների՝ Հայաստանում ձիերի բազմաթիվ գտածոներ են հայտնաբերվել։ Իսկ ն. Ք. III հազարամյակի համար դա հազվագյուտ երևույթ է, եթե չասենք՝ եզակի։ Եվ նման պեղումների հիման վրա գիտնականների ճնշող մեծամասնությունը հակված է ձիաբուծության հայրենիքը համարել Հայաստանը։ ***«Անասնապահության մեջ խոշոր և մանր եղջերավոր անասունների հետ միասին օժանդակ դեր է խաղում նաև բեռնակիր անասունների՝ ձիու և ավանակի բուծումը։ Նորագույն հետազոտությունները ցույց են տալիս, որ Հայաստանում արդեն մ. թ. ա. III հազարամյակում գոյություն է ունեցել ընտանի ձի։***

Հայաստանի՝ մ. թ. ա. երրորդ հազարամյակի հուշարձաններում ձիերի ոսկրային մնացորդներ են հայտնաբերվել Շենգավիթում (ի դեպ, ոսկորների քանակությամբ սրանք այստեղ գրավում են երրորդ տեղը՝ Մեծամորում, Էլարում, և Գառնիում եղած խոշոր և մանր եղջերավոր անասունների գտածոներից հետո....

Դեռ մ. թ. ա. երրորդ հազարամյակում Հայկական լեռնաշխարհում ձիաբուծության զարգացման մասին են խոսում նաև Շենգավիթում և Կարազում հայտնաբերված տարբեր արձանիկները»[115]։

Այլ տարածքներում, եթե անգամ նկատվել են ընտելացված ձիու հետքեր, դրանք եղել են խիստ հազվադեպ և աղքատիկ գտածոներ։ Նման վայրերը շատ հեռու են ձիաբուծության հայրենիք լինելուց։ Այնպես որ, ակնհայտ է՝ Հայաստանն է բուն ձիաբուծության հայրենիքը. ***«Կարելի է համարել, որ մ.թ.ա. 3-րդ հազարամյակում Կովկասում արդեն եղել է ընտելացված ձի։ Դա են վկայում նաև Նախիջևանի Կյուլ-տեպեում, Շենգավիթում և Էջմիածնի Մոխրաբլուրում գտնված ձիերի կավե արձանիկները... Սակայն կարծես թե այս հարցը ներկայումս լուծված չէ, այժմ արդեն լիովին ակնհայտ է, որ վաղ բրոնզեդարյան Կովկասի և հատկապես Անդրկովկասի բնակիչները ծանոթ են եղել ընտելացված ձիերին։ Այս դեպքում, ըստ երևույթին, այստեղ էլ սկսվել է ձիաբուծության զարգացումը։ Հետաքրքիր է Ի. Մ. Դիակոնովի ենթադրությունը։ Նա գտնում է, որ հին արևելյան բանակներում՝ որպես ձիերի կազմի համալրման հիմնական աղբյուր է ծառայել լեռնային տարածքը, հատկապես՝ Արևելյան Հայաստանը, Ուրմիայի ավազանը և Հյուսիսային Իրանի այլ տարածքներ, այսինքն՝ Քուռարաքսյան մշակույթի արիալի ամբողջ կազմը։ Ելնելով սրանից՝ նա ենթադրում է, որ հատկապես այստեղ է առաջինը զարգացել ձիաբուծությունը»***[116]։

---

114 С. А. Межлумян. Палеофауна эпох энеолита, бронзи и железа на теретории Армении. Ереван 1972 г., ст. 124–125.

115 Л.Л. Карапетян. «Хозяйство и духовная культура древной Армении». Ереван 1999 г., ст. 64–65.

116 Р. М. Мунчаев, Кавказ на заре бронзового века, изд. “Наука”, Москва 1975 г., ст. 387, 389.

Այսօր քիչ չեն օտարերկրյա այն գիտնականները, ովքեր իրենց աշխատություններում հաստատում են, որ Հայաստանն է ձիաբուծության հայրենիքը: Շատերն են ուսումնասիրել բոլոր էական փաստերը և եկել նման եզրահանգման. նրանցից է նաև հնագետ Վ. Շապոն: ***«Անառարկելի փաստ է, որ Հայաստանը եղել է աղբյուր հրաշալի բուծված ձիերի: Մարդիկ այդ երկրում հասկացել են, որ ձիերը ոչ միայն տնտեսական արժեք են, այլև կարող են օգտագործվել ռազմական նպատակներով»***[117]*:*

Ուղղակի թե անուղղակի կերպով Միջագետքի երկրների ու Եգիպտոսի կողքին Հայաստանն անտեսած գիտնականները ևս հաստատել են, որ այն բազմաթիվ հայտնագործությունների, այդ թվում նաև ձիերի ընտելացման, բուծման և օգտագործման հայրենիք է: ***«Վեհ գիտնական Յուլյա Զաբլոցկան համարում է, որ ձին ընտելացվել է Անատոլիայի՝ Հայկական լեռնաշխարհի և Իրանի նախալեռնային ընդարձակ արոտավայրերում...***

Փաստերը վկայում են, որ Հայաստանում հնում եղել է ընտանի ձիու երկու տեսակ՝ խոշորամարմին և փոքրակազմ: Լոռի բերդի գերեզմաններ՝ ձիերի կմախքների ուսումնասիրությունը պարզել է, որ նրանք պատկանում են հարավային ցեղին: Սրանք խոշոր են. նման ձիեր թաղվել են նաև Լճաշենի ուշ բրոնզեդարյան դամբարաններում»[118]*:*

Ըստ հնագետ Հակոբ Սիմոնյանի Ներքին Նավերի դամբարանադաշտում 2003 թ. պեղվել են դամբարաններ, որտեղ հետագայում հայտնաբերվեցին Ք.ա. XXII-XIX դդ. թվագրվող և ձիաբուծության մասին վկայող այլ արտեֆակտներ. մարտակառքերի անիվներով զարդարված կարաս, տոհմիկ ձիերի երամակի պատկերով գունազարդ սափոր, որոնք հնագույնն են ողջ Հին-արևելյան մշակութային համատեքստում, բրոնզե սուսեր, երկուական ձիերի զոհաբերություններ բոլոր արքայական դամբարաններում, իսկ ընդամենը 1 կմ արևելք ընկած Վերին Նավերի արքայական դամբարաններում՝ մարտակառք և հերոս արքաների դիմաքանդակներով զարդարված թագ:

«Ներքին և Վերին Նավերի դամբարանադաշտերի ամենամյա պեղումները մեկը մյուսից զարմանալի տվյալներ են փաստագրում, որոնք գալիս են հիմնավորելու Հայաստանում ձիու հնագույն ընտելացման և ռազմի նպատակով օգտագործման մասին: Սա Հին աշխարհի պատմությունը սրբագրելու և հանելուկային մի շարք երևույթների, այդ թվում նաև հիքսոսների առեղծվածի բացահայտման համար կարևորագույն նշանակություն ունի»[119]*:*

Համընդհանուր կարծիք է, որ հայերի երկիրը անվանվել է նաև Թորգոմի՝ Հայկ նահապետի հոր անվամբ, իսկ Աստվածաշունչ մատյանում գրված

---

117 http://vstrokax.net/avtorskaya-kolonka/armyanskaya-konnitsa/

118 Սամվել Դիլանյան, «Մանկական հանրագիտարան», Երևան 2001 թ., էջ 103-014:

119 Հակոբ Սիմոնյան, Հիքսոսներ, ամսագիր Անդին 10, 2013 թ.:

*է, որ այդ երկիրը զբաղվում էր ձիերի առևտրով. **«Թորգոմ անվանը երկու անգամ հանդիպում ենք Եզեկիելի մարգարեության մեջ՝ որպես Տիրի առևտրականներին ձիեր և ջորիների մատակարարողներ։ Մովսես Խորենացու շնորհիվ մեզ հասած ավանդության համաձայն՝ Հայաստանի բնակչության նախահայրերը եղել են Թորգոմի որդիները, ինչով էլ որոշվում է այդ ազգության հարցը՝ նրանց հայերի հետ նույնացնելու տեսակետից»**[120]։*

Իսկ եթե նրանք ձիերի նման առևտուր են իրականացրել, նշանակում է, ձիաբուծությունը մեծ զարգացում պետք է ապրած լիներ այդ երկրում։

***«Թորգոմը Հաբեթի որդի Գոմերի որդին է (Մննդ. 10։3, Ա Մնաց. 1։6, Եզ. 27։14)։ Նրանից են սերում հայերը։ Հայաստանը Սուրբ Գրքում հասկացվում է առանձին շրջանների անուններով, ինչպես օրինակ՝ Արարատ, Միտանի, Ասքանազ և Թորգոմ։ Հայաստանին առավել ընդհանրական նշանակություն են հաղորդում Արարատ և Թորգոմ անունները։ Հայաստան ասելով՝ ընդհանրապես հասկացվում է Կովկասի հարավային լանջի լեռնային շրջան։ Լեռնային վայրերում հանդիպում են անտառներ, հարթավայրերում զգացվում է անտառների պակասություն։ Լեռան լանջերը և հովիտները ծածկված են ճոխ արոտավայրերով... այդ պատճառով էլ հնում այս երկիրը հռչակվել է ձիաբուծությամբ և ջորիաբուծությամբ։ Հայաստանը ձիերով առևտուր էր անում հատկապես Պարսկաստանի և Փյունիկիայի հետ (Եզ. 27։14)։ Հայաստանը մեծ մասամբ անվանել են Մեծ Հայք։ Փոքր Հայք կոչել են Արևմտյան Հայաստանը։ Թորգոմ անունը նույնացվել է Մեծ Հայքի հետ»**[121]։*

*Դոկտոր Վահան Ինգլիզեանն էլ Եզեկիելի մարգարեության գրքի Թորգոմատան մասին այդ վկայությամբ հաստատում է հետևյալը. **«Եզեկիելի այդ համարը ենթադրում է ձիաբուծության մի նշանավոր երկիր»**[122]։*

Շումերները՝ ձիու մասին

Շումերները, որ ամենավաղ շրջանի քաղաքակիրթ ազգերից էին, որպես հիմնական փոխադրամիջոց՝ ավանակներ էին օգտագործում։ Նրանք պատկերացում չունեին ձիերի ընտելացման մասին։

Լինելով բարձր մշակույթի կրողներ՝ շումերները հիացմունքով էին խոսում իրենցից հյուսիս գտնվող Արատտա լեռնային երկրի՝ Հայաստա-

---

120 А. П. Лопухина, Толкования Библия, 1, Петербургъ, 1904–107 г., ст. 70.

121 Энциклопедия Библейская, (труд и издание архимандрита Никифора, М. 1891), Москва 2005 г., ст. 678.

122 Դկտ. Հ. Վահան Վ. Ինգլիզեան, «Հայաստան Սուրբ Գրքի մէջ», Վիեննա, 1947 թ., էջ 220։

նի մասին՝ միակ երկրի, որի հրաշալքներից մեկն էլ ընտելացված ձին էր. **«Հայտնի է, որ տնտեսության մեջ կարևոր դեր են խաղացել կենդանիները, որոնք օգտագործվել են՝ որպես քաշող ուժ և փոխադրամիջոց։ Վիպերգի համաձայն՝ շումերները, որպես փոխադրամիջոց՝ օգտագործել են էշերին։ Նրանք էշերին օգտագործել են նաև ռազմական արշավանքների ժամանակ և հեծյալներին կոչել են «էշերի կողերը սեղմողներ (խթողներ)»։ Վիպերգից ակնհայտ է, որ այդ շրջանում (Ք. ա. 28-27-րդ դարեր) շումերները ձի չեն օգտագործել։ Նույնը չի կարելի ասել արատտացիների մասին. նրանք, ի տարբերություն շումերների, ապրանքների փոխադրումն իրականացնում էին ձիերի միջոցով։ Պետք է ենթադրել, որ ձիերն օգտագործվել են նաև ռազմական գործում։ Նշենք, որ սա ձիերի առաջին հիշատակությունն է սեպագիր բնագրերում, և հիշատակվող ձիերը սանձվել են Հայոց լեռնաշխարհում»**[123]։

Շումերները, որ բազմաթիվ բարիքներ էին ներմուծում Արատտայից, հետագայում սկսեցին նաև ընտելացված ձիեր ներմուծել։ Ավելի ուշ՝ նույնն արեցին նաև հնդիկները։ **«Հին շումերերեն ձիու՝ «լեռնային էշ» անվանումն ապացուցում է ձիու ներմուծումը Միջագետքի լեռնային շրջանից, որը կատարվել է Ք. ա. 3-րդ հազարամյակի երկրորդ կեսին»**[124]։

Խեթական աղբյուրներում, ըստ հանրահայտ հնագետ Ռոբերտ Դրույսի, կան փաստեր, որ նույնպես հաստատում են, որ ձիաբուծության հայրենիք պետք ընդունել Հայաստան աշխարհը, որտեղից հարևան խեթական Կարչեմիշի տիրակալ Ապլաչանդային են առաքվել վարժեցված ձիեր. **«Հայաստանի ձիերի մասին վաղագույն վկայություն կարող է համարվել Կարչեմիշացի Ապլաչանդայի նամակը Մարիացի Զիմրի-Լիմին՝ Ք.ա. 1800թ.։ Կարչեմիշում ձիեր չէին բուծում, և դրա համար Ապլաչանդան ստիպված էր մարդ ուղարկել Զարսամնա կոչվող վայրը՝ մարտակառքերի ձիեր ձեռք բերելու համար, որ պահանջում էր Զիմրի-Լիմը...**

Չնայած ճշգրտությունն անհնար է, սակայն գրեթե հաստատ է, որ Զարսամնան գտնվում է ինչ-որ տեղ Արևելյան Անատոլիայում, և հնարավոր է, որ այն ընկած է Ուզուն Յայլա շրջանում՝ Կեսարիայի արևելքում։ Այս տարածքում գրավոր արձանագրությունների պակասի պատճառով երկրաբանությունը միշտ հանդես է եկել՝ որպես կարևորագույն վկայության աղբյուր՝ հնագույն Հայաստան երկրի ձիերի և փոխադրամիջոցների համար։ Հիպոլոգիական հետազոտություններն այդ դարաշրջանի նույնիսկ վաղ տասնամյակներում Հայաստանը ներկայացնում են այս տեսակետից՝ որպես բարգավաճ երկիր։ Այստեղ գտնվել են բրոնզե սանձեր, վաղագույն եղջյուրավոր լկամներ, տարբեր տեսակի փոխադրամիջոցներ

---

123 Արտակ Մովսիսյան «Հնագույն պետությունը Հայաստանում՝ Արատտա», Երևան 1992 թ., էջ 59:

124 Սամվել Դիլանյան, «Մանկական հանրագիտարան», Երևան, 2001 թ., էջ 013:

և շատ ավելի հին հեծելասարքեր: Այս բոլորը պեղվել են գերեզմաններից, որոնք հիմնականում փորված են եղել մարդկանց համար, սակայն դրանցից շատերը հատուկ փորվում էին՝ ձիերին թաղելու համար: 1950-ականների սկզբին Հայաստանի վերաբերյալ հիպոլոգիական հաշվետվությունը մանրակրկիտ կերպով ներկայացված էր Ֆրանց Հանցարի ծավալուն հետազոտության մեջ: Այստեղից ես ընտրել եմ երեք ցուցանմուշ: Այն ձիերին, որոնք «անձնապես արժևորված էին» իրենց տերերի կողմից, խնամքով էին թաղում՝ բոլոր անհրաժեշտ պարագաներով, որ, թեպետ հազվադեպ, լինում էին նաև ոսկուց»[125]:

Ձիասարքեր

Շատ կարևոր ապացույց են նաև այն գտածոները, որոնք անհրաժեշտ են ձիու ընտելացման և օգտագործման համար: Խոսքը սանձերի, լկամների և այլ պարագաների մասին է, որոնք Հայաստանի հին գերեզմանադաշտերում պեղումների ժամանակ հաճախ են ի հայտ գալիս. ***«Ձիերի համար նախատեսված լկամներն ի սկզբանե հայտնվել են Կովկասյան լեռներից հարավ՝ Արևելյան Անատոլիայում և Արևմտյան Իրանում՝ այն վայրում, որին անտիկ հեղինակներն անվանում էին Հայաստան»***[126]:

Իհարկե, միայն Հայաստանի տարածքում չէ, որ հայտնաբերվել են այդ պարագաները, սակայն նրանց հնությունը և ավելի բարձր որակը նույնպես, ըստ մասնագետների, խոսում են Հայաստանի առաջնության մասին. ***«Անդրկովկասյան սանձով լկամը տեխնոլոգիապես գերազանցում էր մյուս բոլոր հնագույն լկամներին, ինչպես նաև՝ դրանցից ավելի արդյունավետ էր: Դա հաստատում է այդ տարածքի առաջնությունը՝ ձիերի եռանդագին բուծման և ավելի բարձրորակ լծասարքի ու հեծելասարքի արդյունավետ զարգացման հարցում»***[127]:

---

125 Robert Drews, "The Coming of the Greeks," PRINCETON UNIVERSITY PRESS Princeton, New Jersey 1988, page 113–114.

126 Дэвид Рол, Боги Авариса, Москва 2011 г., ст. 293.

127 Robert Drews, "The Coming of the Greeks," PRINCETON UNIVERSITY PRESS Princeton, New Jersey 1988, page 114 էջ:

Ուշ շրջան

Այսպիսով, ձիերի ընտելացման, բուծման և վաճառքի մեջ առաջինը լինելու պատիվը պատկանում է Հայաստանին. այստեղ ձիաբուծությամբ սկսել են զբաղվել դեռ ն. ք. III հազարամյակում։ ***«Հայաստանի էնեոլիթյան մշակույթում ձիերի գոյության վերաբերյալ խոսք կա Բ. Պիոտրովսկու մոտ (1955թ.), որը գրում է. «...ըստ երևույթին, այդ ժամանակ (3-հազ. մ. թ. ա.) տեղ է գտել վայրի ձիերի ընտելացումը»։ Եվ վերջապես, Հայկական լեռնաշխարհում, բրոնզի շրջանում (վաղ շրջանից՝ մինչև ուշ) ձիերի լայն օգտագործման մասին խոսում են գերեզմանափոսերի գտածոները, գանգերը, տարբեր տեսակի սանձերը և մարտակառքերը, որոնց լծվում էին ձիերը»»***[128]։

Ձիաբուծության ոլորտը Հայաստանում եղել է շարունակական։ Այնտեղ ոչ միայն բուծել, այլև վարժեցրել են նժույգներին և նույնիսկ մրցումներ կազմակերպել։ Վանի թագավորության սեպագիր արձանագրություններից տեղեկանում ենք, որ Ուրարտուի, այսինքն՝ Արարատի Մենուա արքայի (ն.ք. IX-VIII դ.) նժույգը, որ անվանվում էր Արծիբի, այսինքն՝ Արծիվ, ցատկել է 11 մ. 39 սմ երկարություն, իսկ դա, ինչպես տեղեկացնում են այդ խնդրի գիտակները, 2800 տարվա ընթացքում մնացել է անգերազանցելի ցատկ և միայն 20-րդ դարում է հնարավոր է եղել այն գերազանցել։

Հայաստանում ձիերի մասին կա նաև ավելի ուշ շրջանի (ն.ք. Vդ.) հիշատակություն. խոսքը Քսենոփոնի աշխատության մասին է։ Երբ նա իր 10 հազարանոց զորքով անցնում է Հայաստանով, գրի է առնում այդ երթի ընթացքում տեղի ունեցած դեպքերը, երկրի բնակչության առօրեական զբաղմունքները, որոնց թվում նաև՝ ձիերի հետ կապված։ ***«Եթե հավատանք Քսենոփոնի «Անաբասիսում» արված զարմանահրաշ նկարագրությանը, կտեսնենք, որ հայերը ձիերի մեծ սիրահար են եղել և ունեցել են ամեհի երիվարներ, որոնք իրենց բացառիկ ծածկոցների շնորհիվ հայտնի են դարձել՝ որպես ոսկեջրած ձիեր»***[129]։

Հայաստանում տարբեր տեսակի ձիեր են բուծել՝ թե խոշոր և թե ավելի փոքրամարմին՝ տարբեր իրավիճակներում օգտագործելու համար. ***«Հայաստանում բուծվող փոքրամարմին ձիերի մասին հիշատակում է հույն պատմիչ Քսենոփոնն իր «Անաբասիսում»։ «Այստեղ ձիերը փոքր էին պարսկականներից, բայց՝ ավելի աշխույժ»։ Այնուհետև նա նշում է մի***

---

128 С. А. Межлумян. Палеофауна эпох энеолита, бронзы и железа на теретории Армении. Ереван 1972 г., ст. 90.

129 Ալերամո Հերմետ, Պաոլա Կոնի Ռատտի Դի Դեզիո, Հայերի Վենետիկը, Երևան 2000 թ., էջ 33:

հնարանքի մասին, որն անծանոթ էր իրեն. «Այստեղ իսկ գեղջավագը սովորեցրեց ձիերի ու գրաստների ոտքերին, ձյան միջով գնալիս, պարկեր փաթաթել, քանզի առանց պարկերի՝ անասունները մինչև փորը խրվում էին ձյան մեջ»[130]*:*

Իրոք որ, հասարակ բան է ձիերի ոտքերին պարկ կապել ձյան միջով անցնելը հեշտացնելու համար, սակայն, ամեն դեպքում, հույներն այդ մասին չէին մտածել: Հետևաբար, դա ևս կարելի է համարել նորույթ՝ հնարք, որ կիրառել են հայ ձիաբույծները:

*Ձիերին անդրադարձել է նաև հայտնի հույն պատմաբան Ստրաբոնը (ն. Ք. I դ.)՝ հաստատելով, որ ձիերը Հայաստանում են բուծվել և առաքվել այլ երկրներ. **«Այս երկիրն այնքան «առատ է ձիերով», որ նույնիսկ նեսիական նժույգները, որ ծառայում էին պարսկական արքաներին, բուծվում էին այստեղ: Հայաստանի կուսակալը պարսից արքային տարեկան ուղարկում էր 20000 քուռակ: Անտոնիոսի հետ Մեդիա ներխուժելու ժամանակ Արտավազդը (հայոց արքա) բացի մնացած այրուձիից՝ ի ցույց դրեց նաև 6000 զրահապատ նժույգ՝ նրանց մարտական կարգի մեջ դնելով»***[131]*:*

*Հայաստանի՝ ընտելացված ձիերի մասին գրում է նաև Ղևոնդ Ալիշանը՝ նշելով, որ ձին Հայաստանում օգտագործվել է դեռ Հայկ Նահապետի ժամանակներից, և այդպես շարունակվել է հազարամյակներ: Հայկ Նահապետից սերված Արամ Մեծի զորքի մեջ եղել է կազմակերպված հեծյալ գունդ՝ այրուձի, իսկ Տիգրան Մեծն արդեն ունեցել է սպառազինված հեծելազորի մի ամբողջ բանակ. **«Մեր պատմությունը (եթե ցանկանում ես, ավանդություն համարիր կամ խորհրդաբանություն) ասում է, որ աշխարհի առաջին պատերազմում՝ լեզուների խառնակումից հետո, մեր ազգի նահապետն ու զորավար Հայկը ձիավոր պատերազմողներ էլ ուներ Բելի դեմ: Ձին եղել և մինչև այսօր էլ մնում է Հայաստանի ամենանշանավոր բարիքներից մեկը և իր փառքի գործիքը. մեր ազգային զինուժը գլխավորապես հեծելազորի վրա էր: Արամը՝ Հայկի սերնդի մեջ ամենահզորը՝ Նինոսի ժամանակակիցը, 40.000 հետևակ և 2000 ձիավոր ուներ, ժամանակը փոխեց այս համեմատությունը. 12 կամ 14-րդ դ. վերջում Հայաստանը, ըստ Եզեկիելի, կարող էր իր կարիքները հոգալուց բացի՝ Կյուրոսի վաճառատեղի ուղարկել նաև ձի և ձիավոր. երկուսն էլ անվանի էին հին ժամանակներում: Նույն մարգարեի մի այլ գրառումից կարելի է հասկանալ, որ Ասորեստանի բանակին պարտության մատնողը հայոց հեծելազորն էր: Հայ ձիավորները ճակատամարտեցին Տրոյայի դաշտերում՝ Ծերունի Պրիամոսի վերջին որդու հետ՝ ընդդեմ Հունաստանի քաջերի: Աքեմենյան (պարսից) տիեզերակալության ժամանակ Հայաս-***

---

130 Սամվել Դիլանյան, «Մանկական հանրագիտարան», Երևան 2001 թ., էջ 104:

131 Страбон, изд. «Наука», Москва 1964 г., ст. 499.

տանը թագավորաց թագավորին ամեն տարի միհրական տոնին 20.000 ձի էր ուղարկում, որոնք պարսիկների և մարերի մոտ ընտիրներն էին համարվում, և 50.000-ից ավելի նժույգ տարվա հարմար եղանակին հավաքում էին Մուղանու դաշտերի մեջ։ Մեր թագավորների մեջ ամենաաշխարհակալն, ամենախրոխտն ու հպարտը Տիգրանն էր. նա, ըստ օտար պատմիչների, 150.000 ձիավոր ուներ՝ 17.000 սպառազինվածներից բացի, այսինքն՝ ձիերն ու ձիավորներն ամբողջովին զրահով էին ծածկված, ինչը պատմիչը նմանեցնում է զրահամորթ կոկորդիլոսի։ Բաց դաշտում այս սպառազինվածները լավ առաջնորդի ձեռքում գրեթե անհաղթելի էին...

Հայկական երիվարները հին ժամանակներում ավելի հայտնի են եղել, քան՝ արաբական ձին։ Մի հին և անանուն հույն հեղինակ, նկարագրելով ձիերին՝ ըստ երկրների, նախ հիշում է հայկական երիվարին և այն համարում է բավական հաղթանդամ և շատ ուժեղ, ողնալայն և պնդակող և Հոբի ձիու պես սաստիկ խրխնջացող»[132]։

Ինչպես տեսնում ենք, Հայաստանը ձիաբուծության հայրենիք համարում են թե հայ և թե օտարազգի գիտնականները, այդպես և Ռոբերտ Դրույսն է իր աշխատության մեջ նշում, որ տարատեսակ ձիերի կողքին Հայաստանում բուծվում էր նաև այդ ժամանակների ամենանշանավոր և թանկարժեք նեսեյական ձին. «Ամենավաղ գրական աղբյուրները ցույց են տալիս, որ Արևելյան Անատոլիան հայտնի էր իր ձիերով։ Ստրաբոնը, ով բնիկ Պոնտոսի Ամասիայից էր, համարել է, որ Հայաստանը «ձի բուծող» մեծագույն երկիրն էր։ Նա ասում էր, որ Պարսից արքաներն իրենց «Նեսեյան» ձիերից շատերը ձեռք էին բերում Հայաստանից։ Այս «Նեսեյան» ձիերը հայտնի էին բոլոր դասականներին. Հերոդոտոսը հաղորդում էր, որ դրանք ամենամեծ ձիերն էին, իսկ Արիստոտելը («կենդանիների պատմություն», 9.48) հայտնում էր, որ դրանք այն ժամանակի հայտնի ամենաարագավազ ձիերն էին։ Ստրաբոնն անցում է կատարում այն պատմությանը, որ Պարսից արքաներն իրենց «Նեսեյան» ձիերի երամակում 50 հազար զամբիկներ էին պահում Մեդիայում և Հայաստանում։ Մեկ այլ տեղում (11.14.9) նա նշում է, որ ամեն տարի Հայաստանի սատրապը 20 հազար մտրուկ էր ուղարկում Պարսից արքային։ Ք.ա. վեցերորդ դարում Եզեկիէլը (27։14) հայտարարեց, որ փյունիկիացիները, որոնք սովոր էին ունենալ ամեն ինչի լավագույնը, իրենց ձիերն ստանում էին Թորգոմից։ Այս Թորգոմը, կամ Թիլ-Գարիմուն, գտնվում էր հարավարևմտյան Հայաստանում՝ «Թաբալի սահմանին»։ Ասորեստանցիները դատողություններ են արել Սևանա, Ուրմիա լճերի և Արարատ լեռան շուրջը գտնվող Ուրարտու երկրի ձիերի և ձիավարժության մասին. որպես օրինակ՝ Սարգոն 2-րդի ութերորդ արշավանքի արձանագրությունը (Ք.ա. 714թ.)։ Ք.ա. տասներ-

---

[132] Ղեւոնդ Ալիշան, «Յուշիկք հայրենեաց Հայոց», հատոր Ա, Ս. Ղազար Վենետիկոյ, 1920 թ., էջ 59–60:

կուերորդ դարի վերջին Թիգլաթ-Պալասար I-ը ասորեստանցի առաջին թագավորներից մեկն էր, ով արշավել է Հայաստանի վրա: Նա պնդում է, որ ինքն այնտեղից, որպես ավար, հավաքել է 12 հազար ձի, ինչպես նաև 2 հազար խոշոր եղջերավոր անասուն»[133]:

Ձիաբուծության ոլորտում Հայաստանի՝ առաջինը լինելու փաստերից մեկն էլ, ըստ մասնագետների, այստեղ ձիերի շատ և շատ անվանումների առկայությունն է. ***«Հայերը ձիուն անվանում են նաև ասպ: Ընտիր ձիուն՝ նժույգ: Արու ձիուն՝ հովատակ, էգ ձիուն՝ մատակ, զամբիկ, ճակ, մատյան կամ սարակ: Հեծնելու ձիուն՝ երիվար: Կառքին լծվածին՝վարգաձի: Դեռատի ձիուն՝ մտրուկ: Ասպարափայլին՝ ճերմակ: Շիկագույնին՝ աշխետ: Մոխրագույնին՝ մողոշիկ: Թխակարմիրին՝ շառատ: Սև ու ճերմակավունին՝ ճանճկեն: Սպիտակ սևախայտ ձիուն՝ ճարտուկ: Սպիտակախայտ ոտքերով ձիուն՝ կոստնտոտիկ: Եզի պես լայն ու տափակ գավակ ունեցողին՝ եզնգավակ: Մերկ, անթամբ ձիուն՝ մերկիկ: Ձիու ձագին՝ քուռակ»***[134]:

Ձիաբուծությունը հազարավոր տարիներ համարվել է ամենապահանջված ոլորտներից մեկը, մինչև ի հայտ եկան ժամանակակից փոխադրամիջոցները: Աշխարհում ավտոմոբիլային արտադրության հայրենիք է համարվել ԱՄՆ-ը, հետո՝ աշխարհի այլ զարգացած երկրներ: Ապա սկսեցին արտադրել տանկեր, այլ շարժական զրահատեխնիկա, գնացքներ և այլն: Այս տրանսպորտային նորագույն տեսակները գոյություն ունեն մոտ 250 տարի, իսկ ձիաբուծությունը՝ 5000 տարի: Սա է եղել մարդկության զարգացման շարժիչ ուժը տնտեսական, ռազմական և այլ ոլորտներում: Այսօր էլ որևէ փոխադրամիջոցի կամ ռազմական ու այլ տեխնիկայի հզորությունը չափվում է ձիաուժով: ***«Մետաղագործության զարգացումը, հնագույն ժամանակների համար, զինագործության (նաև ռազմարվեստի) առաջընթացի կարևոր նախապայմաններից էր, մանավանդ, երբ այն ուղեկցվում էր ձիերի և մարտակառքերի կիրառմամբ: Ձիերի առաջին հիշատակությունը գրավոր աղբյուրներում վերաբերում է Հայկական լեռնաշխարհի՝ այսօր հայտնի հնագույն պետությանը՝ Արատտա երկրին» (Ք.ա. XXVIII-XXVII դդ.)»***[135]:

«Բազմավեպի» 1912 թ. հրատարակության մեջ կարդում ենք. ***«Հայաստանն Աստուածաշնչում ներկայացվում է որպես քաջազունների երկիր՝ նշանավոր ձիերի և ձիավորների բազմությամբ, ինչը հիշատակում է նաև Եզեկիէլը»***[136]:

---

133 Robert Drews, "The Coming of the Greeks," PRINCETON UNIVERSITY PRESS Princeton, New Jersey 1988, page 112–113.

134 Հայկ Խաչատրյան, «Քերթողահայրը», Սովետական գրող, Երևան 1985 թ., էջ 239–240:

135 Արտակ Մովսիսյան, Հայոց պատմության աշխարհակալությունները, Երևան 2008 թ., էջ 15:

136 «Դասեր Հայոց եւ Հայաստանի հնագոյն պատմութեան», Բազմավեպ, 1912 թ., հատոր Հ, թիվ 12, Վենետիկ Սուրբ Ղազար, էջ 530:

Այսպիսով, ապացուցված է, որ հիքսոսները, որ հարստացրին եգիպտացիների տնտեսության տարբեր ոլորտները, մշակույթը, եկել էին Հայաստան աշխարհից: Նրանք այն նույն հայերն էին, որ դեռ հիքսոսների արշավանքից մոտ 1000 տարի առաջ եգիպտացիներին և այլ ժողովուրդներին ծանոթացրեցին պղնձի հնարավորություններին: ***«Եթե հիքսոսները տիրում էին Եգիպտոսի հարստություններին և նրա փայլուն քաղաքակրթության բարիքներին, ապա եգիպտացիները նույնպես շահել են հիքսոսների տիրապետությունից: Նրանք յուրացնում են զենքեր պատրաստելու նոր եղանակները և մի քանի տարում վերացնում են իրենց «հետամնացությունը», կատարելագործում են բրոնզի արտադրության տեխնոլոգիան, իսկ մարտակառքերին լծում էին հիքսոսների բերած ձիերին, ինչը թույլ տվեց իրենց՝ հետագա պատերազմներում հաղթանակներ տանել»***[137]:

Այսքանով չեն սահմանափակվում ապացույցները՝ ըստ որոնց հիքսոսների հայրենիքը Հայաստանն է, և հիքսոսներն էլ նույն Հայկ-Մելքիսեդեկ մեծ արքայի և քահանայապետի ժառանգներն, այսինքն՝ հայեր են:

Մարտակառքերի հայրենիք՝ Հայաստան

«Հայաստանը քաղաքակրթության բնօրրան է,
Հին աշխարհի առաջադեմ և զարգացած
երկրներից մեկը»[138]:

Այս վերնագրի ներքո ներկայացնենք այն, որ մարտակառքերի և անիվավոր այլ փոխադրամիջոցների համար նույնպես աշխարհը պարտական է Հայաստանին ու հայերին:

Նախ նշենք, որ հայոց լեռների հարուստ անտառների ծառատեսակները նպաստել են տարբեր ոլորտների զարգացմանը: Իսկ այս երեքը՝ մետաղը, ձին և փայտանյութը ամենաանհրաժեշտ պարագաներն էին մարտակառքերի պատրաստման համար:

Մեր նպատակը ոչ թե աշխարհին համոզելն է, որ առաջին մարտակառքերը պատրաստվել են Հայաստանում, այլ հիքսոսների և հայերի նույնությունը վերջնականապես ու անառարկելիորեն ապացուցելը: Այժմ

---

137 Д. Брестед, Б. Тураев, ''История Древнего Египта'', Москва, 2007 г., ст. 218.

138 Франц Верфель, австрийский поэт и драматург:

նորից հիշենք, թե ինչպես հիքսոսները մարտակառքերով՝ հին աշխարհի «տանկերով» ներխուժեցին Եգիպտոս. ***«Այսպիսով, հիքսոսներն իրենց հետ բերեցին մարտակառքը: Առջևից այդպիսի «տանկերով» գրոհող հետևակը եգիպտական բանակի համար նորույթ էր»***[139]*:*

Քանիցս ասվել է, որ մարտակառքերը պատկանում էին բարձր տեխնոլոգիայի տիրապետող ժողովրդի, տվյալ դեպքում՝ հիքսոսներին: Մինչդեռ որոշ գիտնականներ շարունակում են նրանց քոչվոր համարել, սակայն դա հեռու է տրամաբանությունից, քանզի մարտակառքի առկայությունն արդեն իսկ փաստում է դրա հեղինակների բարձր զարգացվածությունը: Նրանք գերազանց տիրապետում էին մետաղագործությանը, առաջինն էին, որ ձի ընտելացրին և փայտից ու բարձրորակ մետաղներից մարտակառք պատրաստեցին: Այդ ամենը նորույթ էր աշխարհի մակարդակով:

Այդ ժամանակներում Եգիպտոսում և Միջագետքում, որպես փոխադրամիջոց՝ դեռ օգտագործում էին ավանակներ և հասարակ սայլեր. ***«Եգիպտացիները ձի չունեին: Որպես փոխադրամիջոց՝ նրանք օգտագործում էին դանդաղաշարժ ավանակներին: Նրանք չունեին նաև մարտակառք»***[140]*:*

Մինչդեռ Հայաստանում ձին վաղուց գործածության մեջ էր: ***«Հիքսոսների կարևոր ժառանգությունը եղել են ձիերն ու մարտակառքերը, որոնց մասին միջին թագավորության եգիպտացիները չգիտեին»***[141]*:*

Ուրեմն, իրականում, հիքսոսները մեծ զարգացում ապրած հայ ժողովրդի զավակներն էին, և նրանց էր պատկանում մարտակառքերի գյուտը: Մարտակառքը նրանց հանճարի արգասիքն էր՝ իր բոլոր նրբություններով և բարդություններով հանդերձ: Եվ ուրեմն, անիվը նույնպես հիքսոսներն են ստեղծել և կատարելագործել, ինչի մասին ևս եգիպտացիները պատկերացում չունեին:

«Հիքսոսները, որքան էլ դա պարադոքսալ է, նոր ուժ ներշնչեցին տկարացած երկրին: Նրանք Եգիպտոսին ծանոթացրին անիվների և ձիերի հետ»[142]*:*

---

139 Деопик Дега Витальевич, История Древнего Востока, Москва 2016 г., ст. 159.

140 Айзек Азимов, “Египтяне”, Москва 2007 г., ст. 78.

141 А. Тураев, История Древнего востока, Ленинград 1935 г., ст. 235.

142 Баганова Мария, Всемирная история в сплетнях, Москва 2011 г., ст. 65.

Հայաստանը և անիվի գյուտը

«Հայաստանը գիրք է, որով սովորել են առաջին մարդիկ»[143]***:***

Իսկապես, մարդկության պատմության խոր անցյալում Հայկական լեռնաշխարհում ստեղծված և աշխարհով մեկ տարածված կարևոր գյուտերից մեկը հենց անիվի հայտնագործումն էր, որը նոր հնարավորություն ստեղծեց թե՛ տնտեսության, թե՛ ռազմական ոլորտի զարգացման համար. ***«Եթե ճիշտ է, որ տեխնիկական որևէ գյուտ լույս աշխարհ է գալիս կյանքի պահանջից մղված, ապա հետաքրքիր է՝ ի՞նչն է դրդել նախնադարյան հայկական ցեղերին՝ ստեղծելու անիվ կոչված փոխադրական այդ սքանչելի հարմարանքը, որի գաղափարից են ծնվել խեցեգործական դուրգը, մանելու իլիկը, ճախարակը, կլոր երկանաքարը, ջրաղացն ու հողմաղացը»***[144]***:***

Անիվը, ինչպես աշխարհ եկած ամեն նոր բան, ժամանակի ընթացքում կատարելագործվել է: Առաջին անիվները պատրաստել են քարից, հետո անցել են փայտի, ի վերջո՝ փայտի և մետաղի համատեղման: Իսկ Հայաստանը, ինչպես քարի, այդպես էլ մետաղի ու փայտի պակաս չուներ. ***«Եթե ընդունենք, որ անիվի գաղափարը ծագել է սկավառակաձև քարից, ապա սկզբնական շրջանում ինչպես շումերներին, այնպես էլ հարավարևելյան Եվրոպայի տափաստանների քոչվոր ցեղերին հատուկ չէր քարագործությունը, որը հենց թելադրվում էր նրանց զբաղեցրած սակավաքար տարածքներով: Մեր ձեռքի տակ եղած փաստերը, որոնք, ցավոք, այնքան էլ հարուստ չեն, այնուամենայնիվ, մեզ բերում են Փոքր Ասիա՝ մասնավորապես, Հայկական լեռնաշխարհ»***[145]***:***

Ինչպես մյուս, այնպես էլ անիվի գյուտը երկար ժամանակ չմնաց հայերի մենաշնորհ: Այն կամաց-կամաց հասու դարձավ նաև Միջագետքի, Հնդկաստանի, Եգիպտոսի և այլ երկրների ժողովուրդներին: Չնայած նրանք հետագայում ևս յուրացրին այդ գյուտը, սակայն այն իր հայրենիքում՝ Հայաստանում զարգացում էր ապրում, ի տարբերություն այլ երկրների, որտեղ շարունակում էին մի կտոր փայտից պատրաստել պարզ անիվ՝ առանց ճաղերի. ***«Դա լեռնային տարածք էր՝ մասնատված լայն հարթավայրերով, հարուստ մի քանի տեսակի փայտանյութով՝ ճաղավոր***

---

143 Օսիպ Սանդելշտամ:

144 Ե. Մոմջյան, Անիվի ծագման պատմությունից, տես – Գիտություն և տեխնիկա, 1970–ական թ., էջ 45–46:

145 Սամվել Դիլանյան, «Մանկական հանրագիտարան» Երևան, 2001 թ., էջ 102:

անիվ պատրաստելու համար և թեթև սայլակներ՝ մարտակառքերի համար... Բրոնզի մշակման ոչ մեծ, սակայն լավ զարգացած ինդուստրիան շուտով կատարելագործվեց Քուռի և Արաքսի ջրառատ հարթավայրերում. այն սարքավորումներով ապահովում էր տեղական նժույգներին և կառքերը: Քուռարաքսյան մշակույթը մ.թ.ա. III հազարամյակում աշխարհագրական և ժամանակագրական առումով գտնվում էր ամենաշահեկան վիճակում՝ պատերազմ մղելու նոր ձև հայտնագործելու համար, որտեղ մարտակառքերը գլխավոր հարվածող ուժն էին: Էրման եկավ այն եզրակացության, որ արագընթաց ձիերին լծված փայտե անիվներով մարտակառքերը (որ շատ էին տարբերվում ջորիներով և ավանակներով լծված շումերական դանդաղ սայլերից), ի սկզբանե հայտնվեցին Քուռի և Արաքսի հարթավայրերում, ինչպես նաև Սևան, Վան և Ուրմիա լճերի շրջակայքի հարթավայրերում»[146]:

Քուռարաքսյան մշակույթը կերտող հայերը Հայկական լեռնաշխարհում բացի եզներից ու գրաստներից առաջինը սկսեցին լծել նաև ձիուն. ***«Կովկասի հարավային երկրներում մարտակառքերի զարգացման առաջնության վերաբերյալ լրացուցիչ ապացույցները գալիս են Հայաստանի Սյունիքի տարածաշրջանի հազարավոր ժայռապատկերներից՝ 3300 մետր բարձրության վրա: Չնայած այդ ժայռապատկերները հեշտ չէ թվագրել, համարվում է, որ դրանք ընդգրկում են Ք.ա. 5-րդ հազարամյակից մինչև Ք.ա. 2-րդ հազարամյակն ընկած ժամանակահատվածը և ցույց են տալիս ֆուրգոններից մինչև անվաճաղերով սայլերի (որոնցից շատերը եզներով էին վարվում) և ձիով վարվող մարտակառքերի զարգացումը: Կարճ ասած, հնարավոր է, որ 3-րդ հազարամյակում և 2-րդ հազարամյակի սկզբին անիվավոր փոխադրամիջոցների նորարարությունների մեծ մասը կատարվել է Անդրկովկասում: Հավանաբար, անվաճաղերն առաջացել են այստեղ՝ կատարելագործելու համար եզներով վարվող սայլերը, և հավանաբար, միայն թեթև անվաճաղերով փոխադրամիջոցների ստեղծումից հետո են սայլապանները եզներին փոխարինել ձիերով և դրանք բուծել... Մենք կարող ենք անվարան եզրակացնել, որ մարտակառքն ստեղծվել է Հայաստանում և պատճառը, թե ինչո՞ւ է այն զարգացել այդտեղ, այն է, որ հենց սկզբից անիվավոր փոխադրամիջոցների՝ անիվավոր տրանսպորտի կառուցումն ամբողջությամբ այդ տարածաշրջանի մասնագիտությունն էր»**[147]:

Այն փաստը, որ Հայաստանում են ի հայտ եկել անիվները և անիվային փոխադրամիջոցները, գիտական աշխարհում շատերն են ընդունում: ***«Նշենք նաև, որ քուռարաքսյան ցեղերի մեջ լայնորեն տարածված է եղել***

---

146 Дэвид Рол, Боги Авариса, Москва 2011 г., ст. 293.

147 Robert Drews, "The Coming of the Greeks," PRINCETON UNIVERSITY PRESS Princeton, New Jersey 1988, page 118.

անիվային փոխադրամիջոցը: Կա նաև մի լուրջ հիմք, որը խոսում է մ.թ.ա. 3-րդ հազարամյակում Անդրկովկասում ձիերի ընտելացման մասին»[148]:

Գիտական աշխարհի հեղինակավոր ներկայացուցիչները շարունակում են ապացույցներ բերել առ այն, որ մարտակառքերի հայրենիքը Հայկական լեռնաշխարհն է. ***«Ակնհայտ է, որ նույնիսկ մինչ ձիերի բուծումը և նրանց կարևորումը՝ հին Հայաստանի ժողովրդի մոտ անիվավոր փոխադրամիջոցները երկար ավանդույթ ունեին: Փաստորեն, վերջին մի քանի տասնամյակում սովետական գիտնականները հաստատել են Հայաստանի կամ ավելի ճշգրիտ՝ Քուռ-Արաքսի հովիտների քարե և բրոնզե դարերի քաղաքակրթության կարևորությունն անիվավոր փոխադրամիջոցների զարգացման հարցում, ներառյալ՝ մարտակառքը»***[149]:

Գիտնականների աշխատություններից ստորև կբերվեն նոր ապացույցներ այն մասին, որ մարտակառքերի հայրենիքն իսկապես Հայաստանն է, ինչով առավել ևս կհիմնավորվի հիքսոսների հայկական ծագման փաստը:

Հայկական լեռնաշխարհը, թե տափաստանային երկրները...

«Հայաստան... ամենուր վեհության
և հնության հետքեր»[150]:

Արդեն առաջին հատորում տեսանք, որ Քուռարաքսյան քաղաքակրթության կենտրոն Հայաստանը եղել է ամենահին և զարգացած երկիրը:

Աստծո հաճությամբ՝ առաջին մարդիկ Ջրհեղեղից հետո բնակություն հաստատեցին Արարատյան երկրում՝ Սուրբ լեռան՝ Արարատի մերձակայքում: Դա երկիր էր, որի բնական պայմանները նպաստավոր էին մարդկային ցեղի բազմացման առաջընթացի ու զարգացման համար. ***«Հայկական լեռնաշղթայի եզակի երկրաբանական կառուցվածքը բացատրվում է այնտեղի արտասովոր հարստությամբ՝ հանքերի, մետաղի հանքաքարերի, ինչպես նաև շինարարական քարերի մեծ ընտրանիով՝ արդյունաբերական աշխատանքների համար պիտանի: Հրահեղուկ մագմայի տարբեր***

---

148 Р. М. Мунчаев, Кавказ на заре бронзового века, изд. “Наука”, Москва 1975 г., ст. 160.

149 Robert Drews, “The Coming of the Greeks,” PRINCETON UNIVERSITY PRESS Princeton, New Jersey 1988, page էջ 115.

150 Է. Ֆերրուկ:

շերտավորումները, որ առաջացել են տարբեր դարաշրջաններում, հանգեցրել են նրան, որ Հայաստանը հարուստ է պղնձի, մոլիբդենի, այլումինի, արճիճի, ցինկի, սնդիկի, ոսկու, արծաթի, երկաթի, քրոմի և այլ մետաղներով, ինչպես նաև կվարցով, ազբեստով և ամենատարբեր հրակայուն և այլ օգտակար հատկություններ ունեցող հանքերով: Հրաբխային գործունեության հետևանքով առաջացել են տարբեր տեսակի քարեր»[151]:

Ոմանք, առանց խորը դատելու, հարթավայրային երկրներում են փնտրում մարտակառքերի հայրենիքը, քանզի այնտեղ կարելի է ավելի հեշտ վարել և փորձարկել մարտակառքերը: Իսկ այն, որ բացի հարթ տարածքից որևէ այլ, շատ ավելի անհրաժեշտ, նախադրյալ չկա, հաշվի չեն առնում: ***«Որոշ հետազոտողներ ենթադրում են, թե մարտակառքն առաջին անգամ պետք է հայտնվեր հարթ տեղանք ունեցող երկրում, ասենք՝ Միջագետքում կամ Եգիպտոսում, որտեղ հարմար է մարտակառքին արագություն հաղորդել և խուսանավել: Սակայն խեթական պետության գրաված դիրքը (Հալիս գետի լեռնոտ ավազանը), էլ չենք խոսում Հայկական լեռնաշխարհի մասին, հուշում է, որ այդ գործոնը ամենևին կարևոր չէ, ավելին՝ ինչպես նշվեց վերևում, մարտակառքերի պատրաստման համար անհրաժեշտ էին զարգացած մետաղամշակություն, զանազան փայտատեսակներ, որոնցից, մինչև պատերազմական բռնագրավումներն ու առևտուրը, զուրկ էին և՛ Միջագետքը, և՛ Եգիպտոսը»***[152]:

Եգիպտոսից հիքսոսների ելքից հետո էլ, երբ արդեն գաղտնիք չէր մարտակառքերի պատրաստման եղանակը, միևնույն է, եգիպտացիներն այդ փոխադրամիջոցներն ու դրանց առանձին մասերը գնման կամ փոխանակման միջոցով էին ձեռք բերում, քանզի դրանք պատրաստելու նյութական բազա չունեին: ***«Հայաստանի կարևորությունն ուշ բրոնզեդարում ռազմական կառքերի արտադրման և զարգացման գործում փաստող ամենաուղիղ ապացույցը գալիս է եգիպտական տապանաքարերից: Քանի որ Եգիպտոսը չուներ անհրաժեշտ փայտանյութ, կարելի է ենթադրել, որ փարավոնները արտասահմանից մշտապես գնում էին կամ պատրաստի կառքեր, կամ էլ կառքերի համար անհրաժեշտ փայտանյութ՝ եգիպտացի փայտագործների հմտությունների կատարելագործումից հետո: Ամենհոտեպ II-ի շիրմաքարի արձանագրությունում գրված է, որ Նորին գերազանցության կառքի համար փայտանյութը բերվել է «Նահարին երկրից»»***[153]: *«Նահարինը» հայոց «Նաիրին» է, ինչին դեռ կանդրադառնանք:*

Ոչ միայն՝ Եգիպտոսը, այլև Միջագետքյան երկրները և խեթերը մարտակառքեր պատրաստելու համար անհրաժեշտ ատաղձ չունեին: Նրանք

---

151 Девид Лэнг, “Армяне народ-созидатель”, Москва 2004 г., ст. 18.

152 Սամվել Դիլանյան, «Մանկական հանրագիտարան», Երևան 2001 թ., էջ 107:

153 Robert Drews, “The Coming of the Greeks,” PRINCETON UNIVERSITY PRESS Princeton, New Jersey 1988, page 120.

*ևս նման առաջադեմ տեխնիկա ձեռք բերելու համար դիմել են իրենց հարևան Հայաստանին. **«Նույնիսկ Միջագետքն ու Սիրիան էին շատ հեռու մարտակառքեր կառուցելու գործում, քանի որ այդ վայրերը չունեին ոչ միայն անհրաժեշտ փայտանյութ, այլև՝ ձիեր: Ասորեստանի Շամշի-Ադադի նամակն իր որդուն, ինչպես նաև Կարչեմիշի Ապլաչանդայի նամակը Մարիացի Զիմրի-Լիմին, ցույց են տալիս, որ առնվազն Բարեբեր Մահիկի հարուստ և հզոր մարդիկ Ք.ա. տասնութերորդ դարում մարտակառքերն ու ձիերը բերել էին տալիս հեռավոր վայրերից, որոնք ընկած էին Բարեբեր Մահիկից դեպի հյուսիս: Եկեք վերանայենք Հայաստանի կամ Արևելյան Անատոլիայի լիազորությունները՝ որպես այն կենտրոնի, որտեղից պետք է, որ բերված լինեին մարտակառքերը, իսկ անհրաժեշտության դեպքում՝ մարտակառքերի ձիերը»*[154]:*

*Մարտակառքերի պատրաստման համար նպաստավոր կարող էր լինել այն երկիրը, որն ուներ անհրաժեշտ հումք, համապատասխան սարքեր, և պատրաստելու համար՝ նպաստավոր պայմաններ: Իսկ նման երկիր էր հենց Հայկական լեռնաշխարհը: **«Թամազ Գամկրելիձեի և Վյաչեսլավ Իվանովի կարծիքով՝ «Մերձավոր Արևելքում սայլերի ստեղծման կենտրոններ կարող էին լինել միայն այն շրջանները, որոնք հարուստ էին փայտի ամուր տեսակներ ստանալու համար անհրաժեշտ լեռնային անտառներով: Այդ շրջաններում պետք է գոյություն ունենար նաև բրոնզաձուլություն գործիքներ պատրաստելու համար, առանց որի անհնար էր կամ չափազանց դժվար էր մշակել փայտի ամուր տեսակները: Սայլանիվների ծագման նման օջախներ Մերձավոր Արևելքի տարածքի սահմաններում կարող էին լինել Հյուսիսային Միջագետքը՝ Տիգրիսի վերին հոսանքներում կամ Տիգրիսից արևելք, կամ Անդրկովկասից մինչև Հյուսիսային Միջագետք ընկած շրջանը՝ Վան և Ուրմիա լճերի միջև գտնվող կենտրոններով»*[155]:*

*Ինչպես ձիերի ընտելացման, այդպես էլ մարտակառքերի կառուցման վայրի շուրջ տարբեր կարծիքներ են եղել: Ժամանակին նման տարածք էր համարվել Եվրոպայի հյուսիսը, ինչը, սակայն, հերքվեց՝ հօգուտ Հայաստանի: **«Գերտրուդ Հերմեսը 1930-ականների կեսերին հրատարակած իր հոդվածներում հստակ ցույց է տալիս, որ մարտակառքերը Հյուսիսային Եվրոպայում չեն ստեղծվել, ինչպես նախկինում համարում էին պատմաբանները: Նրա՝ վկայություններով կազմված տեսությունը մատնացույց է անում Արևելյան Անատոլիան՝ որպես մարտակառքերի հայտնվելու ամենահավանական վայր: Սկզբում այդ զարմանալի եզրակացությունը չընդունվեց, սակայն ավելի ուշ այն հաստատվեց մի քանի հիպոլոգիա-***

---

154 Robert Drews, "The Coming of the Greeks," PRINCETON UNIVERSITY PRESS Princeton, New Jersey 1988, page 112.

155 Սամվել Դիլանյան, «Մանկական հանրագիտարան», Երևան 2001 թ., էջ 102:

կան ուսումնասիրություններով: Ամենակարևորն այն է, որ չափազանց մանրամասնորեն քննարկելով բոլոր հնարավորությունները՝ Ֆրանցը հանգել է այն եզրակացության, որ ձիով վարվող մարտակառքը ծագել է Արևելյան Անատոլիայի բարձրավանդակում, հատկապես՝ Հայաստանում և Անդրկովկասում:

Էգեյան ծովում և Մերձավոր Արևելքում ձիերի և մարտակառքերի մասնագիտորեն ուսումնասիրությունները համընկել են Հերմեսի և Ֆրանցի գտածոների հետ: Այսպիսով, ուսումնասիրելով միքենյան մարտակառքերը՝ Ֆրից Շախերմեյերը գտնում էր, որ նրանց հետքերը տանում են «դեպի Հայկական լեռնաշխարհ»: Իսկ 1963 թ. Ալբրեխտ Գյոցեն իրավացիորեն նկատեց, որ փաստերը մատնացույց են անում «Արարատի շրջանը՝ որպես մարտակառքերի ստեղծման վայր»»[156]*:*

Լճաշեն

«Լճաշենի սայլերը, հիրավի,
ցնցեցին գիտական աշխարհը»[157]*:*

Հայաստանում մարտակառքերի և, ընդհանրապես, անիվավոր սայլերի հետքեր կարելի է գտնել տարբեր վայրերում՝ ինչպես հնագույն ժայռապատկերներում, այնպես և գերեզմանադաշտերում, որտեղից հայտնաբերվել են մարտակառքերի բրոնզե պարագաներ: Իսկ փայտյա մասերը, իհարկե, չորսից հինգ հազար տարվա ընթացքում փտել, ոչնչացել են:

*Ժայռապատկերներում եղած մարտակառքերը և գերեզմաններից պեղված մարտակառքերի մետաղական մնացորդները գուցե և շատ բան չեն ասում: Սակայն ի զարմանս գիտական աշխարհի՝ ներկայիս Հայաստանի Լճաշեն հնավայրում հայտնաբերվեցին 4000 տարուց ավելի հնություն ունեցող ամբողջական սայլեր և մարտակառքեր, որ համարվում են եզակի գտածոներ. **«Ավելի տպավորիչ են Սևանա լճի հարավային ափին գտնվող Լճաշեն գյուղից ներքև գտնվող հարթավայրում պեղված գերեզմանաբլուրները... Այդ գերեզմանները պարունակում էին անիվավոր 23 փոխադրամիջոց, որոնք թաղվել էին հանգուցյալների հետ՝ որպես գերեզմանների պարագաներ: Դրանք մի քանի տեսակի էին՝ սկավառակավոր անիվներով քառանիվ ֆուրգոններ, երկանիվ և թեթև անվաճաղերով***

---

156 Robert Drews, "The Coming of the Greeks," PRINCETON UNIVERSITY PRESS Princeton, New Jersey 1988, page 107.

157 Սամվել Դիլանյան, «Մանկական հանրագիտարան», Երևան 2001 թ., էջ 104:

ուղևորատար սայլեր կամ «մարտակառքեր»»[158]։

Այդ հազվագյուտ գտածոները հայտնաբերվել են Սևանի առափնյա Լճաշեն գյուղի շրջակայքի պեղումների ժամանակ, ինչի պատճառով էլ այն ճանաչված է «Լճաշենի հնավայր» անվամբ։ Փայտյա ամբողջական սայլերը երկար են պահպանվել, քանի որ գտնվել են Սևանա լճի տակ։ Երբ ջրերը ետ են քաշվել, միայն այնժամ են հնավայրի հետքերը երևացել։ ***«Կարևոր նշանակություն ունեն փայտե մարտակառքերը և կառքերը (սայլ), որոնց հայտնաբերումը սկսվեց 1956-ին՝ Սևանա լճի ափին գտնվող Լճաշենի պեղումների ժամանակ։ Այդ հիասքանչ սայլակները լույս աշխարհ եկան, երբ Հրազդանի հիդրոէլեկտրակայանի գործարկումից հետո լճում ջրի մակարդակն իջավ։ Այստեղ հայտնաբերվեցին բազմաթիվ գերեզմանափոսեր, պատեր և տանիքներ, որոնք կառուցված էին քարերից։ Այս դամբարանները դարեր ի վեր ծածկված էին լճի ջրերի տակ։ Եթե չլինեին դրանց ծածկող տիղմն ու ջուրը, ապա փայտե սայլի ամբողջ հենքն ու ակերը վաղուց փոշիացած կլինեին։ Իսկ այժմ 25 սայլեր վարպետորեն վերականգնեց երևանյան ճարտարապետ Գ. Կ. Կոչոյանը։ Դրանցից չորսը ցուցադրվում են Հայաստանում՝ Երևանի պատմության թանգարանում։ Մեկն իրենից ներկայացնում է փայտի վրա աշխատանքի մի գեղեցիկ նմուշ, ի դեպ, առանձնահատուկ ուշադրության է արժանի հետին պատի փորագրությունը։ Չնայած այդ քառանիվ սայլերը թվագրվում են մոտավորապես մ.թ.ա. 2150 թ., դրանք ժամանակակից տեսք ունեն։ Դրանց տանիքը ճկված փայտե ձողերից է, որոնց վրա ձգված է կենդանու մորթի. ճիշտ այնպես, ինչպես ամերիկյան ֆուրգոնները (ձիաբեռնասայլ)՝ Վայրի Արևելքի գրավման շրջանում։ Լճաշենի գտածոների մեջ պետք է նշել քառանկյուն սայլերը և երկանիվ մարտակառքերը։ Եթե ֆուրգոնների և սայլերի անիվներն ամբողջական են, ապա մարտակառքերինը՝ գերազանց կերպով պատրաստված միջանցիկ անիվներ են՝ զարմանալիորեն մեծաթիվ ճաղերով»**[159]։

Ներկայիս այս փոքրիկ Հայաստանում կան տարբեր դարաշրջանների բազմաթիվ հնագիտական հուշարձաններ, որոնց անցյալ դարի երկրորդ կեսերին ավելացավ նաև Լճաշենի զարմանահրաշ հնավայրը։ Թերևս անհնար է պատկերացնել, թե դրանք որքան են ամբողջ Մեծ Հայքի տարածքում։ ***«Մենք գնում էինք հնագիտական պեղումներից՝ մեկից մյուսը, մի հին քաղաքակրթությունից՝ մյուսը։ Սևանի ափին մի հին քաղաք են պեղել, գտել են անտիկ սայլեր և հետաքրքիր այլ առարկաներ։ Պեղումների ժամանակ հայտնաբերվել են կիկլոպային կառույցների ավերակներ, իսկ դրանց տակ՝ բրոնզի ձուլման հալոցներ։***

---


158 Robert Drews, “The Coming of the Greeks,” PRINCETON UNIVERSITY PRESS Princeton, New Jersey 1988, page էջ 115.

159 Девид Лэнг, “Армяне народ–созидатель”, Москва, 2004 г., ст. 87.

Մի խոսքով՝ կատարյալ մետալուրգիական ձեռնարկություն։ Լճաշենի պեղումները, ըստ նախնական ենթադրությունների, մեզ հանդիպման են տանում նախքան մեր թվարկության երրորդ հազարամյակի վերջի և երկրորդ հազարամյակի սկզբի հետ։

Իսկ Զոդում հայտնաբերվել է ավելի վաղ շրջանի՝ չորրորդ հազարամյակի քաղաքակրթություն»[160]***։***

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ Լճաշենում հայտնաբերված կառքերը ոչ թե բերվել են ուրիշ վայրերից, այլ տեղական արտադրության են, ինչի մասին են ասում այն նյութերը, որոնցից դրանք պատրաստվել են. ***«Սևանա լճի «մարտակառքերը» պատրաստվել են Հայաստանում, քանի որ դրանց կառուցման համար օգտագործվող փայտերի (ծփի, կաղնի, հաճարենի և սոճի) համակցությունը Հայկական բարձրավանդակից դուրս առկա չէր։ Ե՛վ «մարտակառքերը», և՛ մյուս փոխադրամիջոցները տպավորիչ վկայություն են, որ փայտե իրերը, որոնք անհրաժեշտ էին մարտակառքերի արտադրության համար, պատրաստված էին մեծ վարպետությամբ, այսինքն՝ փայտագործությունը չափազանց զարգացած է եղել Հայաստանում։ Մասնիկները միացված են անցքով և լեզվակով, կամ էլ միացման սեպով, կամ սռնիով։ Մի փոխադրամիջոցի վրա կա «12.000-ից ոչ պակաս անցք՝ մեծ և փոքր, կլոր և քառակուսի»։ Այս սայլի միայն թեք կմախքն ուներ 600 այդպիսի անցք»***[161]***։***



Այդ սայլերի կառուցման տեխնիկան եզակի բնույթ է կրել։ Որևէ այլ տարածքում նման սայլեր գոյություն չեն ունեցել։ Եվ միայն շատ դարեր հետո է, որ այլ երկրներում կարողացան սայլերի ու մարտակառքերի պատրաստման այդ եղանակը կիրառել. ***«Լճաշենի հայկական մարտակառքերը ոչ միայն ունեն հազվագյուտ մեծաթիվ ճաղեր, այլև կարծես մեկ ընդհանուր օղագոտի են կազմում՝ ընդամենը մեկ միացման կետով։ Այլ շրջաններում նման տեխնիկան ի հայտ է եկել միայն վաղ երկաթյա դարում։ Հայկական մարտակառքերը կարելի է համարել նախատիպն այն մարտակառքերի, որոնք փորագրվել են Պերսեպոլիսի պարսկական թագավորական տաճարի բարելեֆների վրա՝ 750 տարի***

---

160 Ռամիլ Հաքիմով, «Զրույց քարի հետ», տես –Յոթ գարունների երկրում, գիրք II, Երևան 1983 թ., 299:

161 Robert Drews, "The Coming of the Greeks," PRINCETON UNIVERSITY PRESS Princeton, New Jersey 1988, page 117.

հետո»[162]*։*

Հայաստանի՝ ոչ միայն հարավային և արևմտյան հարևանները, այլև հյուսիսային կողմում գտնվողները, ավելի հստակ՝ եվրոպական երկրները նույնպես Հայաստանից են ստացել տարբեր տեսակի կառքեր, նաև՝ դրանք պատրաստելու տեխնոլոգիաները։ ***«Հիմնվելով Լճաշենի և Վրաստանի Թրիալեթիի հարթավայրի «ֆուրգոն» տեսակների սայլերի զարգացման վրա՝ Ստյուարտ Պիգգոտը մի հիմնավոր փաստարկ ներկայացրեց, որ այստեղ՝ Քուռ-Արաքսի մշակույթում են առաջին անգամ օգտագործվել անվավոր փոխադրամիջոցները, և որ այս տարածաշրջանից է դրանց գործածումը տարածվել Միջագետքում և կենտրոնական Անատոլիայում և, ի վերջո, Եվրոպայում։ Այս ֆուրգոններից շատերը թվագրվում են երրորդ հազարամյակից և ենթադրաբար եզներով էին վարվում»***[163]*։*

Վրաստանի Թրիալեթիի հնավայրում հայտնաբերված կառքերը նույնպես տեղական չեն։ Դրանք նույնպես բերված են Հայաստանից, ինչի մասին վկայում են հենց Լճաշենի գտածոները. ***«Տասնամյակներ առաջ հնագետ Կուֆտինը Թրիալեթիում (պատմական Թռեղք) քառանիվ սայլեր հայտնաբերեց նախ նորքարեդարյան, ապա՝ վաղ բրոնզի դարաշրջանների դամբարաններից։ Ք. ա. 4-3-րդ հազարամյակներով թվագրվող այդ սայլերը Հայկական լեռնաշխարհի մշակույթի արգասիք են, որի հետագա դրսևորումները տեսնում ենք Լճաշենի գտածոներում»***[164]*։*

Հայաստանից արևելք ընկած երկրներում՝ հատկապես Չինաստանում հայտնաբերված վաղեմի մարտակառքերը նույնպես Լճաշենի մարտակառքերի հետքերն են կրում։ Սրանից կարելի է եզրակացնել, որ Հայաստանը աշխարհի չորս կողմերին մատակարարել է մարտակառքեր, այն էլ՝ ձիերին լծված, և այդ հզոր մեքենաշինական և ռազմական արդյունաբերությունը հայոց մենաշնորհն էր. ***«1974թ. ուսումնասիրության մեջ Պիգգոտն իր ուշադրությունն այս անգամ դարձնում է Լճաշենի՝ անվաճաղերով փոխադրամիջոցներին և այդ տարածքում ձիերի մասին ապացույցներին... Ինչ ակնհայտորեն վերաբերում է ձիավարվող երկու «մարտակառքերին», Պիգգոտը ոչ միայն նշեց նրանց նմանությունը Մերձավոր Արևելքի ուշ բրոնզեդարի ռազմական մարտակառքերին, այլև ուշագրավ զուգահեռներ անցկացրեց Լճաշենի երկանվավոր և Չինաստանի Շանգ և Ջոու Դինաստիայի մարտակառքերի միջև։ Այն զուգահեռները, որ գտավ Պիգգոտը, «չափազանց մասնագիտական են՝ պատահական զուգադիպություն համարելու համար», և նա հնարավոր է համարում, որ այդ***

---

162 Девид Лэнг, “Армяне народ-созидатель”, Москва 2004 г., ст. 88.

163 Robert Drews, “The Coming of the Greeks,” PRINCETON UNIVERSITY PRESS Princeton, New Jersey 1988, page 115–116.

164 Սամվել Դիլանյան, «Մանկական հանրագիտարան», Երևան 2001 թ., էջ 102:

փոխադրամիջոցը Հայաստանից է բերվել արևելք» [165]*։*

Եվ ընդհանրապես, հնագույն ժամանակներում Հայաստանում ստեղծված այդ փոխադրամիջոցների շնորհիվ է, որ մարդկությունը յուրացրել է նորանոր անմարդաբնակ տարածքներ։ ***«Գիտնականները ենթադրում են, որ հենց լճաշենում պեղված հյուսկեն, բարձր կողերով, կամարածածկ սայլերի նման փոխադրամիջոցներով են հնդեվրոպական հնագույն ժողովուրդները նվաճել նոր հողեր»***[166]*։*

Մարտակառքերը և Հնդեվրոպական աշխարհը

«Հավանաբար, հիքսոսների մեծ մասը սերվել է
հնդեվրոպացիներից, իսկ հետո այդ միջուկի շուրջ
հավաքվել են նաև այլ ժողովուրդների ներկայացուցիչներ»[167]*։*

Ըստ գիտական եզրակացությունների՝ մարտակառքերի հայրենիքն է այն տարածքը, որտեղ ծնունդ են առել հնդեվրոպացիները։ Իսկ մենք առաջին հատորում նշեցինք, որ նախահնդեվրոպական լեզվի և ցեղերի նախահայրենիքը Հայկական լեռնաշխարհն է։

«Ժամանակն է՝ պրոտո-հնդեվրոպական լեզուներով խոսողներին իրենց կառքերի մեջ վերադարձնելու։ Հօգուտ նման վերանայման է խոսում Գամկրելիձեի և Իվանովի այն նոր թեզը, որ պրոտո-հնդեվրոպական լեզվով «ի սկզբանե» խոսել են Կովկասի հարավում...

V գլխում բերված ապացույցները կառքերի ստեղծման և որպես ռազմական միջոց՝ օգտագործելու վերաբերյալ, ամբողջովին համընկնում են այն թեզի հետ, որ երկրորդ հազարամյակի սկզբին պրոտո- հնդեվրոպական (ՊՀԵ) լեզուներով խոսողներն ապրել են Հայաստանում։ Այս փաստարկը երկակի է աշխատում։ Ինչպես որ Գամկրելիձեի և Իվանովի թեզն ամրապնդում է այն հավանականությունը, որ ռազմական կառքերը ստեղծվել են Հայաստանում, այդպես էլ նման հավանականությունն ամրապնդում է լեզվաբանների թեզը»[168]*։*

---

165 Robert Drews, "The Coming of the Greeks," PRINCETON UNIVERSITY PRESS Princeton, New Jersey 1988, page 116.

166 Սամվել Դիլանյան, «Մանկական հանրագիտարան», Երևան 2001 թ., էջ 103:

167 Эммануэль Анати, "Палестина до древних евреев", Москва 2007 г., ст. 331

168 Robert Drews, "The Coming of the Greeks," PRINCETON UNIVERSITY PRESS Princeton, New Jersey 1988, page 149.

*Ժամանակին Հարվարդի համալսարանի գիտաշխատող Մարիա Գիմբուտասն իր աշխատություններից մեկում կարծիք հայտնեց, որ նախահնդեվրոպացիների հայրենիքը պետք է փնտրել Եվրասիայի տափաստաններում: Այդ եզրահանգումը հիմնված էր լեզվաբանական ուսումնասիրությունների վրա: Նրա տեսակետը հավանության արժանացավ, սակայն, շատ չանցած, դա հերքեց լորդ Ռենֆրուն՝ այդ հայրենիքը տեսնելով Հայկական լեռնաշխարհում, որը Մեծ Բրիտանիայի վարչապետ Բենջամին Դիզրայելիի հրահանգով վերանվանվել է Արևելյան Անատոլիա: **«Գիմբուտասի տեսությունը մինչ վերջերս հանրաճանաչ էր, սակայն 1987 թ. այն կասկածի տակ դրեց բրիտանական հնագիտության հայտնի դեմքերից մեկը՝ լորդ Ռենֆրուն Քեմբրիջի համալսարանից: Քոլին Ռենֆրուն նորից ուղարկում է մեզ ավելի հեռու՝ դեպի հարավ, Կովկասյան լեռնաշղթայից այն կողմ և հաստատում, որ նախահնդեվրոպացիներն առաջացել են Արևելյան Անատոլիայի բնակչությունից՝ նեոլիտի դարաշրջանում»**[169]:*

*Հետագայում շատերը եկան այս համոզմանը՝ իրավացիորեն համարելով, որ Հայկական լեռնաշխարհն է հնդեվրոպական ցեղերի, հետևաբար՝ նաև մարտակառքերի հայրենիքը: **«Հնդեվրոպական նախահայրենիքի վայրի որոշման փաստարկ է հին, ընդհանուր հնդեվրոպական լեզուն կրող ժողովրդի՝ ձիակառք ունենալը: Ձիակառքերը, սայլերը Հայկական լեռնաշխարհում՝ Արարատյան դաշտից մինչև Վան, Էրզրում, Խարբերդ, Մալաթիա, Ուրմիա լիճ, օգտագործվել են դեռևս նոր քարի դարի վերջից՝ պղնձի դարի սկզբին (մ.թ.ա. IV հազարամյակում): Հայաստանում ավելի վաղ կառքերի, սայլերի և անիվների մանրակերտեր գտնվել են Մաշտոցի բլուրի, Կղզյակ բլուրի, Շրեշ բլուրի, Շենգավիթի, Հառիճի ուշ նոր քարի և պղնձի դարի շերտերում: Գտնվել են ոչ միայն ձիու արձանիկ, խեցու վրա ձիու պատկեր, ցուլերի արձանիկներ, այլև՝ ձիերի և ցուլերի ոսկորների (ծնոտ, ատամներ, գանգ) մնացորդներ, որոնք վկայում են դեռևս նոր քարի դարի վերջին, վաղ պղնձի դարում Հայաստանի ցեղերի կողմից ինչպես ձիերի, եզների, այնպես էլ սայլերի օգտագործման մասին: Այսպիսով, ձիակառքը և սայլը օգտագործվել են մ.թ.ա. V-IV հազարամյակից սկսած... Բոլոր հիմքերը կան ենթադրելու, որ հնդեվրոպացիների նախահայրենիքը գտնվել է այն շրջանում, որտեղ գտնվել են ձիակառքեր և սայլեր»**[170]:*

Հնագետները համոզված են, որ մետաղագործության հայրենիքը եղել է այն տարածքներում, որտեղ ի սկզբանե բնակվել են հնդեվրոպացիները: Իսկ դա ևս մեկ ապացույց է, որ հենց Հայաստանն է նախահնդեվրոպականության հայրենիքը, դրանով էլ՝ այն վայրը, որտեղ առաջինը

---

169 Дэвид Рол, Боги Авариса, Москва 2011 г., ст. 293.

170 Սանդրո Սարդարյան, Հայաստանը քաղաքակրթության բնօրրան, Երևան 2004 թ., 431–432 էջ:

*լույս աշխարհ եկան անիվավոր փոխադրամիջոցները, այդ թվում՝ մարտակառքերը. **«Հազիվ թե հնդեվրոպական նախահայրենիքի սահմանման համար վճռորոշ նշանակություն չունենային ձիերով լծված անվասայլակների (մարտակառքերի) և դրանց մասերի (անիվ, առնակ, լուծ, առեղ) անվանումները: Բոլոր հնագույն հնդեվրոպացիներին հայտնի է միևնույն, այն էլ՝ բավականին լուրջ թաղման ծեսը, որտեղ մահացածին պատկերող «մանրատիպարը» («տիկնիկը») նստեցնում էին մարտակառքի վրա: Դրա պատրաստման համար պահանջվում էին ամուր տեսակի լեռնային ծառեր, որոնց մշակումը հնարավոր էր միայն մետաղյա գործիքի օգնությամբ, հաճախ՝ բրոնզե: Իսկ այն ձուլելը, տվյալ լեզվից դատելով, կարողանում էին հին հնդեվրոպացիները: Անգլիացի գիտնական Ս. Պիգգոտտան պնդում է, որ մարտակառքերը նախ և առաջ ի հայտ են եկել Անդրկովկասից մինչև Վերին Միջագետքի տարածքներում՝ Վան և Ուրմիա լճերի միջև՝ մ.թ.ա IV հազարամյակում»**[171]:*

Այլ գործոններ ևս հաստատում են, որ Հայաստանը պետք է ճանաչել՝ որպես Հնդեվրոպական հայրենիք: Սակայն, քանի որ դրանք խիստ մասնագիտական են և իրենց մանրամասնությամբ կարող են ծանրաբեռնել նյութը, ձեռնպահ մնացինք նման մեջբերումներից:

*Հետաքրքիր է, որ Հնդեվրոպական հայրենիքի տեղանքով է պայմանավորված ոչ միայն մարտակառքերի, այլև՝ ձիաբուծության սկզբնավայրը. **«Գրավոր աղբյուրներում սանձված ձիերն առաջին անգամ հիշատակվում են Արատտայում [172] (Ք.ա. 28-27-րդ դդ.)՝ ծառայելով որպես փոխադրամիջոց, մինչդեռ շրջակա աշխարհում որպես փոխադրամիջոց էին ծառայում էշերն ու եզները: Ի դեպ, ձիավոր հեծյալ ռազմիկների առկայությունը հնագույն շրջանում բնորոշ է հնդեվրոպական աշխարհին, իսկ Հայկական լեռնաշխարհը կազմել է հենց հնդեվրոպական նախահայրենիքի միջուկը»**[173]:*

*Այն ժամանակ, երբ Եգիպտոսում դեռևս անտեղյակ էին մարտակառքերին և ձիերին, հիքսոսները դրանցով ներխուժեցին այնտեղ, հետևաբար, նրանք պետք է առնչություն ունենային հնդեվրոպականության հետ: Եվ, իսկապես, շատերն են համարում, որ հիքսոսները հնդեվրոպական ծագում ունեն, իսկ նրանց միացած քանանական ազգերն ունեցել են սեմական կամ այլ ծագում. **«Հավանաբար, հիքսոսների մեծ մասը սերվել***

---

171 Наука и человечество, международный ежегодник, Т. В. Гамкрелидзе, В. В. Иванов. Индоевропейцы, Москва 1989, ст. 76.

172 Արատտան հիշատակվում է իբրև աստվածապետական (թեոկրատական) կարգերով մի երկիր, որն, ըստ շումերական աղբյուրների, ուներ պարսպապատ մայրաքաղաք, զինված ուժեր և իրականացրել է ռազմական արշավանք Եփրատ գետով դեպի հարավ:

173 Արտակ Մովսիսյան, Հայոց պատմության աշխարհիակալությունները, Երևան 2008 թ., էջ 25:

է հնդեվրոպացիներից, իսկ հետո այդ միջուկի շուրջ հավաքվել են նաև այլ ժողովուրդների ներկայացուցիչներ»[174]*։*

Գիտական աշխարհում քիչ չեն նրանք, ովքեր համոզված են, որ հիքսոսներն Եգիպտոս են ներխուժել հենց այն վայրից, որտեղ գտնվել է հնդեվրոպացիների նախահայրենիքը. ***«Բազմաթիվ մասնագետներ, հիմնվելով հիքսոսյան մի շարք հատուկ անունների և տիտղոսների հնդեվրոպական ստուգաբանության, նրանց մարտավարման գործում մարտակառքերի կարևոր դերի և այլ փաստարկների վրա, հիքսոսներին համարում են Հյուսիսային Միջագետքից և հարակից շրջաններից եկած հնդեվրոպացիներ***[175]***»***[176]*։***

Հյուսիսային Միջագետքն՝ իր հարակից տարածքներով, հենց Հայկական լեռնաշխարհն է, այսինքն՝ հնդեվրոպացիների նախահայրենիքը. ***«Դեռ չբաժանված պրոտո-հնդեվրոպական լեզուներով խոսողներն ապրում էին Հայաստանում»***[177]*։*

Հիքսոս-հայ նույնությունն ապացուցելուն իր նպաստը կարող է բերել նաև լեզվաբանական մոտեցումը։ Եգիպտացիները ջանացել են ատելի հիքսոսների հետքերն առավելագույնս վերացնել Եգիպտոսից, սակայն նրանց լեզվամտածողության մեջ մնացած հետքերը խոսուն են. ***«Եգիպտացիք մարտակառքը կոչեցին «վարատ» տերմինով, որտեղ առաջին վանկը՝ «վար», հայերեն նշանակում է «ղեկ», «ղեկավարել», այստեղից էլ՝ «վարել» բայը։ Նեղոսի գետաբերանում հիքսոսները հիմնեցին նոր մայրաքաղաք և անվանեցին «Ավարիս»։ «Իս»-ն այստեղ տեղանունների վերջավորություն է (համեմատենք՝ «Ապրուկանիս», «Խառակոնիս», «Արաբիս» և այլն), իսկ «Ավար»-ի նշանակությունը հայերենում պարզ է։ Հիքսոսյան թագավորներից մեկի անունը՝ Հիան, լավ համեմատելի է հայերեն «հիանալի» բառի հետ»***[178]*։***

Մաքսիմիլյան դե Լաֆայետն էլ լեզվաբանական յուրահատուկ մոտեցում ունի, որի հետ կարելի է համաձայնել, երբ խոսքը վերաբերում է հին այբուբենին, սակայն՝ ոչ հին հայոց լեզվին, որը շարունակում է ապրել. ***«Յավոք սրտի, հին հիքսոս-հայկական լեզուն չգոյատևեց մի քա-***

---

174 Эммануэль Анати, “Палестина до древних евреев”, Москва 2007г., ст. 331

175 Նշենք հիքսոսների հնդեվրոպական ծագման ուշագրավ փաստարկներից մեկը: Միտանիի, ինչպես նաև սիրիա-պաղեստինյան իշխանությունների զորքերի կազմում երկանիվ թեթև մարտակառքի կառավարները կոչվում էին maryannu: Այս բառի հիմքում ընկած է հին հնդկ. Marya – «երիտասարդ մարդ, պատանի» բառը: Հատկանշական է, որ հիքսոսյան արքա Խիանի «պատանիների արքա/իշխան» տիտղոսը համահունչ է հնդիրանական marya «պատանի» բառին. հին հնդկական Ինդրա աստծո ուղեկիցները՝ marut-ները, որոնք արշավում էին մարտակառքերով, կոչվում էին maryas:

176 Արտակ Մովսիսյան, Հայոց պատմության աշխարհակալությունները, Երևան 2008 թ., էջ 6–30, 50:

177 Robert Drews, “The Coming of the Greeks,” PRINCETON UNIVERSITY PRESS Princeton, New Jersey 1988, page 33.

178 Ս. Մ. Այվազյան, Հնագույն Հայաստանի մշակույթային պատմությունից, Երևան 1986 թ., էջ 101:

նի պատճառներով, որոնցից թվարկենք մի քանիսը՝ Արմենոիդների իշխանությունը փլուզվեց, և նրա անկման հետ հին հայկական այբուբենը նույնպես անկում ապրեց»[179]***՝***

Հայերի հետ ունեցած մի շարք մարդաբանական ընդհանրությունները նույնպես ապացուցում են հիքսոսների հայկական ծագումը՝ ***«Բայց առավել շատ ֆիզիկական կազմությունն է խոսում ի նպաստ այս նույնացմանը՝ Մեծ և աղեղնաձև քթերը, ցցված այտերը, լայն դեմքերը, մեծ ծնոտները, որոնք երևում են հիքսոսների արձանների վրա, հատուկ են հայկական տիպարին՝ Նույնիսկ համեմատաբար փոքր աչքերը և թավամազ գլուխները հազվագյուտ չեն այսօրվա հայկական տիպարի համար՝ Աշխարհագրությունն ու պատմությունն էլ միաձայն հաստատում են հայերի և հիքսոսների նմանությունը»***[180]***՝***

Հայ-հիքսոս մարդաբանական նույնություններին առավել մանրամասն անդրադարձել է Սուրեն Այվազյանը՝ իր «Հնագույն Հայաստանի մշակութի պատմությունից» աշխատությունում. ***«Ինչպիսի՞ տեսք ունեին մեր նախնիները՝ Հարցը նոր չէ, այն վաղուց է հետաքրքրում գիտնականներին՝ Այդ ուղղությամբ վերջին ժամանակներս տարվում են ծավալուն աշխատանքներ, որոնց նպատակն է, մասնավորապես, վերականգնել նախնիների կերպարը գանգերով՝***

Բոլորին քաջ հայտնի են Միխայիլ Գերասիմովի աշխատանքները «Ալեքսանդր Նևսկու», «Հաջի Մուրադի» և ուրիշների կերպարները վերականգնելու գործում՝ Հայաստանում այդպիսի աշխատանքներ տանում էր պրոֆեսոր Անդրանիկ Ճաղարյանը՝ Երևանի բժշկական ինստիտուտի լաբորատորիաներից մեկում՝

Հին մարդու կերպարի մասին պատկերացում կազմելու համար որոշակի նյութ են մատուցում տարբեր տեսակի աղբյուրներ՝ եգիպտական մումիաները, փարավոնների քանդակները, ինչպես նաև Եգիպտոսում բազմիցս հանդիպող նավաստիների, ջուլհակների, արհեստավորների արձանիկները, Ասորեստանի, Բաբելոնի, Հեթիթ թագավորների և զինվորների պատկերաքանդակները և, ի վերջո, դամբարանները՝

Եգիպտոսի դամբարաններից մեկում հայտնաբերվել է հիքսոսյան թագավորի եզակի մի արձանիկ, որը պատրաստված է մոխրագույն ավազաքարից և կերտված ապշեցուցիչ արվեստով՝ հին վարպետի ձեռքով՝ Այդ արձանիկը հիքսոսների մասին զարգացող պատկերացումների տեսակետից մեծ հետաքրքրություն է առաջացնում՝

Ըստ Մովսես Խորենացու՝ մ.թ.ա. XVIII դարում, այսինքն՝ դեպի Եգիպ-

---

179 Maximillien de Lafayette “Civilization and Arts of Armenia from Pre–History to the Present Day: Its Culture, Society, Stars, Artists and Celebrities”, USA San Bernardino, CA 25 May 2015 p., Volume 1 p. 36.

180 Հ. Յ. Աւգեր. «Դասեր Հայոց եւ Հայաստանի հնագոյն պատմութեան», Բազմավեպ ամսագիր, 1912 թ. հատոր Հ, թիվ 7–8–9, Վենետիկ Սուրբ Ղազար, էջ 296:

տոս հիքսոսների արշավանքի ժամանակ, Հայաստանում շարունակում էր իշխել Հայկազյան հարստությունը։ Ուստի ենթադրելի է (նաև նախորդ փաստերով), որ հիքսոսյան թագավորը պատկանում է այդ հարստությանը։ Քանի որ Սինայի թերակղզում հիքսոսների թողած արձանագրություններում հիշատակվում է «Հիան» (համեմատիր՝ «հիանալի») թագավորի անունը, ապա շատ հավանական է, որ հենց այդ թագավորի (ըստ երևույթին, ամենահայտնի թագավորի, որը գլխավորել է հիքսոսների արշավանքը դեպի Եգիպտոս) կերպարն է քանդակված՝ ի նշան հատուկ երախտագիտության նրա ծառայությունների և արժանիքների գնահատման։

Այդ թագավորի կերպարն ակնհայտորեն տարբերվում է եգիպտական փարավոնների կերպարներից։ Այն, անշուշտ, մարդաբանական «արմենոիդ» (հայատիպ) տեսակին է պատկանում։ Ուշադրության է արժանի հիքսոսյան սաղավարտի յուրահատուկ ձևը և նետի կտրվածքը՝ սաղավարտի ճակատային մասում։ Թագավորն արծվաքիթ է, թեթևակի ուռուցիկ աչքերի բացվածքով, հոնքերի հաստ աղեղներով, սեղմված զուսպ շուրթերով, կամային կզակով, մկանուտ, մի փոքր երկարավուն դեմքով։ Նրա աչքերը՝ երկարացված և խիստ սլաքաձև, ներկված են ծարիրով։ Երբ այս դեմքը համեմատում ենք եգիպտական (եգիպտացի) փարավոնների դեմքերի հետ, նրանց միջև նկատվում է մարդաբանական ակնհայտ տարբերություն։ Ուշագրավ է, որ տարբերություն կա նաև սաղավարտների միջև։ Այն դեպքում, երբ եգիպտական փարավոնի սաղավարտը լայնանում է դեպի վեր և ճակատի մասում ունի իշխանություն խորհրդանշող օձի կերպար, հիքսոսյան թագավորի սաղավարտը վերնամասում նեղանում է, իսկ ճակատի մասում ուժ և արիություն խորհրդանշող նետ է կերտված։

Հիքսոսյան թագավորի քանդակագործական կերպարը, որը հայտնաբերվել է Եգիպտոսում և այժմ պահվում է Լուվրում, հնագույն (մ.թ.ա. XVIII դար) և բավական լավ պահպանված հայատիպ մարդաբանական կերպարի նմուշ է, և նրանով կարելի է դատել, թե ինչպիսի տեսք ունեին հայերի նախնիները՝ 3700 տարի առաջ։

Գանգի մնացորդներով մարդու կերպարի վերականգնումը միշտ համարվել է մեծագույն արվեստ, գիտական մոտեցման և նրբազգացության մի ձուլվածք։ Այս մեթոդին կատարելապես տիրապետել են ռուս գիտնական Միխայիլ Գերասիմովը և նրա հետևորդ Անդրանիկ Ճաղարյանը։ Ա. Ճաղարյանի լաբորատորիայում հաջողությամբ կիրառվում է դեմքի վերականգման նրա մշակած անատոմիամաթեմատիկական մեթոդը։ Ստուգաբանական փորձերը վկայում են, որ գիտնականը հասել է գանգերի միջոցով մարդու կերպարի վերականգման ապշեցուցիչ կատարելության։

Այս գանգերը հայտնաբերվել են Լճաշենում՝ Սևանա լճի ցամաքած առափնյա հատակում եղած դամբարանները պեղելիս, և պատկանում են մ.թ.ա. II հազարամյակի առաջին կեսերին։ Այդ գանգերը, ինչպես նաև

հիքսոսյան թագավորի կերպարը դիտելիս, աչքի է ընկնում խիստ վառ արտահայտված մարդաբանական ընդհանրություն:

Եզրակացնենք: Մ.թ.ա. II հազարամյակում Հայկական լեռնաշխարհի բնակչությունը ունեցել է հայատիպ կերպարանք, որը 4000 տարվա ընթացքում էական փոփոխություններ չի կրել: Այս եզրակացությունը հաստատվում է նաև Հայկական լեռնաշխարհի տարածքում հայտնաբերված մ.թ.ա. III-I հազարամյակների այլ գանգերի ուսումնասիրությամբ, ինչպես նաև՝ պատմահնագիտական և լեզվաբանական այլ տվյալներով»[181]:

Հիքսոսներ և քասեցիներ

«Ծառայել Հայաստանին՝ նշանակում է
ծառայել քաղաքակրթությանը»[182]:

Հիշեցնենք, որ Հայաստանից միաժամանակ երեք ուղղությամբ է արշավանք եղել. դեպի Միջագետք՝ «քասեցիների», դեպի Հնդկաստան՝ «արիների» և դեպի Եգիպտոս՝ «հիքսոսների»:

*Քասեցիները Հայկական լեռնաշխարհից իջած մարտիկներ էին, որ մարտակառքերով մտան Միջագետքի տարածք: Որոշ գիտնականներ, սակայն, նրանց նույնացնում են հիքսոսների հետ: **«Եղել են կապ տեսնելու փորձեր հիքսոսների և քասեցիների միջև, ովքեր այդ նույն ժամանակամիջոցում գրավեցին Բաբելոնը»**[183]: Եվ եթե այդ կապն առկա է, ուրեմն դա ևս մի ապացույց է հիքսոսների՝ հայկական ծագման:*

*Դեպի Միջագետք, Հնդկաստան և Եգիպտոս իրականացված արշավանքների կարևոր, ինչպես նաև ամենահատկանշական ընդհանրությունն այն էր, որ զորքերն ասպատակում էին այդ երկրներին անծանոթ, սարսափազդու, նրանց համար կատարյալ արհավիրք դարձած մարտակառքերով: **«Ձիեր լծած երկանիվ մարտակառքերը կազմում էին բանակի հիմքը: Մարտակառքի վրա կանգնում էր երկու մարդ. մեկը կառավարում էր ձիուն, մյուսը պահում էր նիզակը, կամ աղեղն ու նետը: Ահեղ գրոհի համար նախատեսված նրանց զենքերն ավելի երկար էին, ամուր և հեռահար, քան այն զենքերը, որոնցով զինված էին դանդաղաշարժ հետիոտն զինվորները... Արևմուտքում թույլ պաշտպանված Սիրիայի քաղաքները***

---

181 Ս. Մ. Այվազյան, Հնագույն Հայաստանի մշակութային պատմությունից, Երևան 1986 թ., էջ 102–105:

182 Уильям Гладстон, английский государственный деятель и писатель.

183 Тураев Б. А., История Древнего Востока, том I, Ленинград 1935 г., ст. 232.

չկարողացան այնքան երկար դիմակայել հյուսիսային ձիավորներին, որքան՝ Բաբելոնի քաղաքները»[184]*։*

Այզեք Ազիմովը նույնպես Սիրիա և Քանան մտած հիքսոսներին նույնացնում է այդ նույն ժամանակամիջոցում Բաբելոնը գրաված և երկար տարիներ իրենց իշխանության տակ պահած քասեցիների հետ։ Նրա կարծիքը եզակի չէ. ***«Նրանք իրենց ձեռքում էին պահում Պաղեստինը, որ միացնում էր Սիրիան Եգիպտոսի հետ։ Հնարավոր է, որ հիքսոսները նաև ներխուժել են Բաբելոն և Էգեյան ծովի երկրներ»***[185]*։*

Հիքսոս-քասեցի նույնականության մասին առավել հստակ գրում է ռուս պատմաբան Վասիլևը. ***«...Հիքսոսները... եգիպտացիներին ծանոթացրին Եգիպտոսում մինչ այդ միանգամայն անհայտ, ձիեր լծած մարտակառքերին (ինչպես որ այդ արեցին քասեցիները Բաբելոնում) »***[186]*։*

Ինչպես քասեցիները չխառնակվեցին միջագետքյան ժողովուրդների հետ, այդպես և հիքսոսները պահեցին իրենց ազգային պատկանելությունը և չտարրալուծվեցին եգիպտացիների մեջ, ինչը ևս վկայում է, որ մենք երկու դեպքում էլ գործ ունենք նույն ժողովրդի, այսինքն՝ հայերի հետ։ ***«Պետք է ասել, որ հիքսոսները, հավանաբար, չեն խառնվել եգիպտացիների հետ և չեն թափանցել եգիպտական հասարակության խորքերը, այլ մնացել են որպես հսկիչներ, որոնց ջոկատները նստում էին, ըստ Մանեթոնի, «հարմար վայրերում»»***[187]*։*

Հետաքրքիր է, որ ընդհանրություններ կան ոչ միայն հիքսոսների և քասեցիների միջև, այլև՝ կուտիների և հիքսոսների միջև։ ***«Ի վերջո, պետք է հիշել կուտիներին, որոնց ներխուժումը Հարավային Միջագետք և նրանց կարճաժամկետ կառավարումն այնտեղ հայտնի է շումերական աղբյուրներից։ Ի դեպ, դա միակ դեպքն է, երբ սեպագիր տեքստերում անթաքույց թշնամությամբ հաղորդվում է հաղթանակը զավթիչների հանդեպ, նման ատելություն, հավանաբար, տածել են եգիպտացիները հիքսոսների հանդեպ»***[188]*։*

---

184 Айзек Азимов, “Египтяне”, Москва, 2007 г., ст. 77–78.

185 В. В. Струве, История Древнего Востока, Москва, 1941 г., ст. 170.

186 Л.С. Васильев, История Востока, Т. 1., Москва, 2016 г., ст. 166.

187 В. В. Струве, История Древнего Востока, Москва, 1941 г., ст. 171.

188 Оппенхейм А. Лео, Древняя Месопотамия. — 2-е, испр. и доп... — Москва, 1990 г., ст. 50–51.

Հիքսոսները և արիները

«Հայ ժողովուրդը կանգնած է հինավուրց քաղաքակրթության գագաթին»[189]***։***

Ինչպես արդեն ասվել է, արիական արշավանքը դեպի Հնդկաստան սկսվել է Հայկական լեռնաշխարհից։ Եվ այդ արշավանքի ամենահատկանշական նորույթյունը կրկին ձիեր լծած մարտակառքերն էին, որոնցով նույն լեռնաշխարհից՝ Հայաստանից, իրականացվեցին արշավանքներ նաև դեպի Միջագետք ու Եգիպտոս։

*Այսպիսով, դեպի նշված բոլոր երկրներ արշավել է նույն ժողովուրդը, որին Միջագետքում անվանել են «քասեցիներ», Եգիպտոսում՝ «հիքսոսներ», իսկ Հնդկաստանում՝ «արիներ». **«Արիացիների մասին... այստեղ բավական է նշել, որ անկախ նրանից, թե նրանց բուն «հայրենիքը» Հայաստանն է, թե պարզապես անցել են Հայաստանով, որպես տեղաշարժվող ժողովուրդ, նրանք հայտնվել են Արևելյան Անատոլիայից՝ որպես մարտակառքերի գիտակ ռազմիկներ»***[190]***։***

*Վերջին շրջանում գիտնականները հակված են այն կարծիքին, որ արիները հենց Հայաստանի բնիկներն են, այսինքն՝ հայերը, և նրանց է պատկանում մարտակառքերի գյուտը, ձիերի ընտելացումն ու բուծումը։ **«Ըստ երևույթին, արիները դեռևս մինչ իրենց բաժանումը ծանոթ էին ոչ միայն ձիերին, այլև՝ մարտակառքերին։ Սա ապացուցվում է Գորդոն Ջայլդի բերած հետևյալ փաստերով. «Ըստ Միջագետքի վեդայական գրականության և Հոմերոսի նախապատմական փաստաթղթերի վկայության՝ ձին արիների հատուկ սեփականությունն է»»***[191]***։***

*Այսպիսով, և՛ հնդեվրոպացիների, և՛ արիների հայրենիքը Հայաստանն է, որտեղ ստեղծել են մարտակառքերը և ընտելացրել են ձիերին. **«Ձիեր լծած մարտակառքը եղել է հնդեվրոպական հայտնագործություն, և դրա հայտնվելը յուրաքանչյուր տարածաշրջանում նշանակում էր արիների ժամանում»***[192]***։***

*Մենք տեսանք, որ գիտնականներից ոմանք հիքսոսներին նույնացնում են քասեցիների հետ, բայց և հետաքրքիր է և այն, որ նույն հիքսոսներին նույնացնում են նաև արիների հետ։ **«Բազում գիտնականներ հակված են հանձինս հիքսոսների տեսնել արիացիների մի ցեղ, որն***

---

189 Рафаил Зинуров, российский сенатор.

190 Robert Drews, “The Coming of the Greeks,” PRINCETON UNIVERSITY PRESS Princeton, New Jersey 1988, page 119.

191 С. К. Дикшит, Введение в археологию, Москва 1960 г., ст. 471:

192 Дэвид Рол, Боги Авариса, Москва 2011 г., ст. 291.

առաջին անգամ Եգիպտոսում կիրառության մեջ դրեց զարմանահրաշ մարտակառքերը»[193]*։*

Ի մի բերելով կարծիքները՝ վերջնականապես համոզվում ենք, որ Եգիպտոսը նվաճած հիքսոսները, Միջագետքի երկրներին տիրած քասեցիներն ու Հնդկաստան արշաված արիները նույն ժողովուրդն են, այսինքն՝ հայերը։ Հետևաբար, առաջինը հայերն են ձուլել և արդյունահանել պղինձ, բրոնզ, երկաթ, կռել ու օգտագործել մետաղյա զենք ու զրահներ, կենցաղային իրեր, զարկ տվել փայտամշակմանը, մարտակառքեր կառուցել, ձիեր ընտելացրել ու բուծել։ Եվ ուրեմն, հիքսոսների, արիների, քասեցիների մեկնակետը Հայկական լեռնաշխարհն է։ Այնտեղից են նրանք՝ Հայկ նահապետի սերունդները սփռվել աշխարհով մեկ, իրենց հետ տանելով այդ բոլոր գյուտերն ու նորարարությունները, նպաստելով այլ երկրների զարգացմանը, հզորացմանն ու առաջընթացին։

Մարտակառքեր – եզրահանգում

«Հայերը քաղաքակիրթ ժողովուրդ են, հողագնդի հնագույն ազգերից մեկը, նրանք մոտ 4000 տարվա պատմություն ունեն և թե՛ իրենց երկրում և թե՛ իրենց երկրից դուրս քաղաքակրթությանը մեծ ծառայություններ են մատուցել»[194]*։*

Գիտական աշխարհում, վերջնական կարծիք չկա հիքսոսների ծագման և նրանց մշակույթի վերաբերյալ, մինչդեռ առավել քան ակնհայտ է, որ նման գյուտեր արած ժողովուրդը պետք է որ ունենար Եգիպտոսից և Միջագետքի երկրներից ավելի զարգացած հայրենիք։ Ահա թե ինչ է գրում հետազոտող գիտնականը. ***«Հիքսոսները լավ հանդերձավորված էին՝ լիովին մարտական, նրանց գերազանցությունը եգիպտացիների նկատմամբ կասկած չէր հարուցում։ Արագությունը և ձիերի ու մարտակառքերի հարվածային ուժը, զրահների, նոր տեսակի զենքերի, հատկապես կազմածո աղեղի առավելությունը նրանց տալիս էին ակնհայտ առավելություն և մեծացնում էին հաղթելու հնարավորությունը»***[195]*։*

Հետազոտողներն այդ հնագույն ժամանակաշրջանի մարտակառքը համեմատում են մերօրյա տանկի հետ, մինչդեռ այդ «տանկը» ստեղծող-

---

193 С. К. Дикшит, Введение в археологию, Москва 1960 г., ст. 431.

194 Գեորգ Բրանդես, տես Սև Գիրք, Երևան 2011 թ., էջ 87:

195 История человечества, том II, (смотри) Гамаль Мохтар, Долина Нила (1780–700), Москва 2003 г., ст. 137.

ներին և երկար ժամանակ այդ գյուտի տեսության և արտադրության մենաշնորհը վայելողներին ներկայացնում են որպես հետամնաց ցեղեր: Ո՞վ կհավատա անհեթեթ պնդմանը, թե ժամանակակից հրասայլը (տանկը) ստեղծել է ջունգլիներում ապրող ինչ-որ ցեղ և երկար ժամանակ այն գաղտնի է պահել քաղաքակիրթ աշխարհից: ***«Համարվում է, որ ռազմական գործում ձիերի օգտագործումը թույլ տվեց հիքսոսներին (որ օգտագործում էին երկանիվ մարտակառքեր՝ հին ժամանակաշրջանի այդ «տանկերը»), վերջիվերջո, գրավել Եգիպտոսը»***[196]*:*

Բազմիցս ապացուցվել է, որ տարբեր մետաղների, հատկապես՝ երկաթի հանքանյութի հայտնաբերման և մշակման հայրենիքը Հայաստանն է: Նույնը վերաբերում է նաև մարտակառքերին: Դրանք մարդկային պատմության մեջ տեղի ունեցած հեղափոխություններ էին, որոնք ցնցեցին աշխարհը: Եվ, այնուհանդերձ, հիքսոսներն այնքան ժամանակ առեղծված կներկայացվեն, քանի դեռ գիտնականներն իրենց հայացքը չեն շրջել դեպի Քուռարաքսյան հզոր մշակույթը կերտած Հայաստանի կողմը և չեն ցանկացել տեսնել ակնհայտը: ***«Համարվում է, որ հիքսոսները Պաղեստինի և Եգիպտոսի բնակիչներին սովորեցրել են ձիաբուծություն և երկանիվ զինվորական մարտակառք վարել: Բավականին հետաքրքիր է տեսնել, թե ե՞րբ, որտե՞ղ, և ինչպե՞ս են այս մարդկանց նախնիները ձեռք բերել նման հմտություններ»***[197]*:*

Դա հետաքրքրել է ոչ միայն պատմաբան Էմմանուել Անատիին: Սառույցը կարծես սկսել է հալչել: Հետազոտողները՝ ոմանք՝ զգուշորեն, մյուսներն՝ ավելի համարձակորեն, սկսել են խոսել Հայաստանի՝ որպես հնագույն քաղաքակրթության կենտրոնի մասին: Դրանց թվում և՝ Ռոբերտ Դրյուսը, որ համոզված է հիքսոսների և հայերի նույնության մեջ՝ հիմք ունենալով նաև այն, որ մարտակառքերը ստեղծվել են Հայաստանում: ***«Թե որտեղից էին հիքսոս առաջնորդները, որ Ք.ա. 1650 թ. գրավեցին Եգիպտոսը, ձեռք բերել իրենց մարտակառքերն ու դրանց վարողներին, հայտնի չէ, սակայն Արևելյան Անատոլիան (Հայկական լեռնաշխարհը)՝ որպես աղբյուր, անհավանական չէ»***[198]*:*

Ռոբերտ Դրյուսը և մի շարք այլ գիտնականներ «Արևելյան Անատոլիա» անվանումը համարում են «Հայաստան» անվան հոմանիշ, այսինքն՝ նույնացնում են Հայաստանը և Արևելյան Անատոլիան: Սրանով նրանք կամա-ակամա հաստատում են, որ ներկայիս Թուրքիան դեռևս բռնազավթած է պահում Մեծ Հայքի հիմնական մասը. ***«Հին աշխարհի ձիու և մարտակառքի մասնագետների մեծամասնությունը եկել է այն***

---

196 Мария Павловна Згурская, Древний Египет, Харьков 2008 г., ст. 352.

197 Эммануэль Анати, “Палестина до древних евреев”, Москва, 2007 г., ст. 331.

198 Robert Drews, “The Coming of the Greeks,” PRINCETON UNIVERSITY PRESS Princeton, New Jersey 1988, page 120.

եզրակացության, որ մարտակառքը ստեղծվել է Արևելյան Անատոլիայի բարձրավանդակում»[199]:

Դրյուսը պատահական մարդ չէ գիտական աշխարհում. նրա կարծիքը հիմք է համարվում պատմագիտության ոլորտում. ***«Ռ. Դրյուսը նույնպես տեղադրում է հնդեվրոպացիներին Անատոլիայում՝ Հայաստանում, բայց կապում է մարտակառքերի օգտագործմամբ զինվորական գործողությունների տարածման հետ՝ մոտ 1600 թ. մ.թ.ա.»***[200]:

Իտալիայի թանգարաններից մեկում գտնվող հնագույն շրջանի մարտակառքը ևս, ըստ հետազոտությունների, հաստատում է, որ դրա ստեղծման վայրը Հայաստանն է: Այդ մասին Ռոբերտ Դրյուսը գրում է. ***«Ֆլորենցիայի հնագիտության թանգարանում գտնվող (ն.Ք.) 15-րդ դարի կառքի փայտանյութի ուսումնասիրություններն ավելի քան 50 տարի առաջ հանգեցրել են այն եզրակացության, որ այդ կառքը պատրաստվել է Հայաստանում»***[201]:

Հայազգի հետազոտող Սուրեն Այվազյանը ևս, նկատի ունենալով մարտակառքերի որոշ մասերի փայտանյութի տեսակը, հաստատում է, որ դրանք հայկական ծագում ունեն. ***«Հիքսոսներն իրենց արշավանքը կատարեցին մարտակառքերով: Երկաթապատ մարտակառքերն ապշեցրին եգիպտացիներին իրենց ռազմական հզորությամբ: Եվ ահա պարզվում է, որ դրանց շինափայտը մի ծառից է, որն աճում է միայն Արարատ լեռան շրջակայքում և Տրապիզոնում՝ հիքսոսների հայրենիքում»***[202]:

Այսպիսով, առավել քան վստահ կարող ենք ասել, որ մարտակառքերը ստեղծվել են Հայկական լեռնաշխարհում, ինչն էլ անառարկելի ապացույց է, որ հիքսոսները հայեր էին, որ իջել են իրենց սուրբ Լեռնաշխարհից և գրավել Եգիպտոսը: Կրկին դիմենք Ռոբերտ Դրյուսին, որ ասում է. ***«Եթե Եգիպտոսը կառքերի առումով 18-րդ դինաստիայի ժամանակ ինչ-որ չափով կախում է ունեցել Արևելյան Անատոլիայից (Հայկական լեռնաշխարհից), ապա հիմքեր կան ենթադրելու, որ առաջին անգամ, երբ կառքերը՝ որպես պատերազմական միջոց, մտել են Եգիպտոս, դրանք բերված են եղել Հայաստանից»***[203]:

Եթե Քուռարաքսյան տարածաշրջանի զարմանահրաշ քաղաքակրթության կերտողների՝ հայերի մշակույթը աշխարհի գիտական շրջա-

---

199 Robert Drews, "The Coming of the Greeks," PRINCETON UNIVERSITY PRESS Princeton, New Jersey 1988, page 107.

200 История человечества, том II, (смотри) Дж. П. Мэллори, Индоевропейский феномен: Лингвистика и археология Москва 2003 г., ст. 89.

201 Robert Drews, "The Coming of the Greeks," PRINCETON UNIVERSITY PRESS Princeton, New Jersey 1988, page 120.

202 Ս. Մ. Այվազյան, Հնագույն Հայաստանի մշակութի պատմությունից, Երևան 1986 թ., էջ 101:

203 Robert Drews, "The Coming of the Greeks," PRINCETON UNIVERSITY PRESS Princeton, New Jersey 1988, page 120.

նակների կողմից բարեխղճորեն հետազոտվեր, համաշխարհային պատմության շատ առեղծվածներ, ինչպես նաև հիքսոսների ազգային պատկանելիության հարցը, վաղուց բացահայտված կլիներ։

«Ընդհանրապես հիքսոսների ռազմական ձեռքբերումների կատարելությունն արժանի է զարմանքի՝ ինչպե՞ս այդ փոքրաթիվ քոչվոր ժողովուրդը կարողացավ մտածելով հնարել և իրականացնել այդքան արդյունավետ, ռազմավարական և տեխնիկական «նոու-հաու» (ծանր մարտակառքեր, հավաքովի հատուկ կերպով կորացված աղեղներ, այլ զենքեր, հետևակի հատուկ դասավորություն և ուրիշ շատ բաներ), որ կարող էին պատիվ բերել մեծ և հզոր ռազմական կայսրության։ Սա կարող է լինել առանձին առեղծված, կարող է նաև լինել հիքսոսների ծագման հարցի «Թե որտեղից նրանք եկան» մասի պատասխանը»[204]։

Փաստորեն, որքան էլ Եգիպտոսը զարգացած էր, այն նվաճողներն անհամեմատ ավելի բարձր մշակույթի կրողներ էին։ Հայ-հիքսոսները ոչ միայն՝ Եգիպտոսին, այլև իրենց իշխանության տակ հայտնված բոլոր երկրներին հաղորդակից դարձրին իրենց առաջադեմ մշակույթին։

«Գերմանացի ականավոր արևելագետ Մաքս Մյուլլերը, ցույց տալով, որ հիքսոսների տիրապետությունը տարածվել է մինչև Փոքր Ասիա և Հայկական լեռնաշխարհ, նշում է, որ պատահական չէր Ավարիսի տեղի ընտրությունը. այն պետք է գտնվեր նրանց տերության կենտրոնական շրջանում։ Հնարավոր համարելով դա՝ իր հերթին ականավոր ռուս արևելագետ Բ. Ա. Տուրաևը գտնում է, որ «հիքսոսների դարաշրջանն ունեցել է կարևոր մշակութային նշանակություն. այն առաջին անգամ մեկ քաղաքական օրգանիզմի մեջ է միավորել Եգիպտոսն առաջավորասիական քաղաքակրթության մարզերի հետ», ինչի արդյունքում միավորվել են հնդեվրոպական, եգիպտական ու սեմական էթնիկ միավորները»[205]։

Այսպիսով տեսնում ենք, որ հենց Մեծ Հայքի տարածքից սկսված արշավանքն էր, որ ավարտվել է Նեղոսի հովտում՝ հին աշխարհի ամենազարգացած երկրներից մեկում՝ Եգիպտոսում։

---

[204] Мария Павловна Згурская, Древний Египет, Харьков 2008 г., ст. 342.

[205] Արտակ Մովսիսյան, Հայոց պատմության աշխարհաքաղաքականությունները, Երևան 2008 թ., էջ 25:

Հիքսոս, Հաքսոս, թե Հայքսոս

«Իսկ միգուցե հիքսոսների անվան տակ թաքնվում է մի ինչ-որ միանգամայն ուրի՞շ ժողովուրդ»[206]:

Այժմ անդրադառնանք հիքսոս անվան պարզաբանմանը: Հետազոտողները հիքսոս անվանումը տարբեր կերպ են բացատրել. ***«Շարունակելով մեջբերել Մանեթոնին՝ Հովսեփոսն ասում է. «Այդ ամբողջ ժողովուրդն անվանվում էր «հիքսոսներ», ինչը նշանակում է «թագավոր-հովիվներ», քանզի առաջին վանկը, «hyk» սրբազան լեզվով նշանակում է թագավոր, իսկ «sos»՝ հովիվ»»***[207]:

Եվ ուրեմն, նրանք կոչվել են թագավորներ, բայց, որքան էլ տարօրինակ է, միևնույն ժամանակ նաև՝ հովիվներ, ինչը, կարծես, այդ անվան մեկնաբանման էության ընկալումն է: Հիքսոս անվան նման մեկնաբանումն անտրամաբանական է համարում Տուրաևը, քանզի եթե դա ազգի անուն է, ապա այդ ժողովրդից յուրաքանչյուրը պիտի կրեր այդ անունը՝ «թագավոր-հովիվ»: «...իր նկատառումներից ելնելով՝ նա չի նկատում որոշ անհամապատասխանություններ. քանզի նման դեպքում ամբողջ ժողովուրդը պետք է կոչվեր «հովիվ թագավորներ» կամ ինքն իրեն պետք է անվաներ «գերյալներ»»[208]: *Իսկ ինչու՞ գերյալներ. քանի որ, ըստ մի այլ անտրամաբանական կարծիքի էլ՝ «հիքսոսը» մեկնվում է՝ որպես «գերի հովիվ», ինչի մասին իր «Քրոնիկոնում» գրում է նաև Եվսեբիոս Կեսարացին*[209]: *Ի վերջո, գիտական աշխարհը կանգնեց մեկ այլ՝ «օտարերկրյա թագավորներ» տարբերակի վրա.* ***«Պետք է ասել, որ «հիքսոս» բառը հետազոտողների կողմից մեկնվել է տարբեր կերպ: ժամանակին կարծում էին, որ դա նշանակում է «անապատի առաջնորդներ» կամ «հովիվների թագավորներ»: Ավելի ժամանակակից հետազոտությունները ցույց են տվել, որ ավելի ճիշտ է այն թարգմանել «օտարերկրյա թագավորներ»»***[210]:

Այսօր, իսկապես, Մանեթոնի կողմից հիքսոսների անվան պարզաբանումը՝ «թագավոր-հովիվներ», արդեն քննարկման առարկա չէ, և հիմնականում ընդունված է, որ «հիքսոս» անվան ներքո պետք է հասկանալ «օտարերկրյա թագավորներ». ***«Մանեթոնի ստուգաբանություն... որոշ անճշտություններ ունի: «Հիքսոս» բառը նշանակում է ոչ թե «հովիվների***

---

206 Мария Павловна Згурская, Древний Египет, Харьков 2008 г., ст. 340

207 Д. Брестед, Б. Тураев, ''История Древнего Египта'', Минск 2007 г., ст. 213.

208 А. Тураев, История Древнего Востока, Ленинград 1935 г., ст. 232.

209 Եւսեբի Պամփիլեայ Կեսարացիոյ, Ժամանակականք Երկմասնեայ, Ի Վէնէտիկ, 1818 թ., էջ 226–227:

210 Мария Павловна Згурская, Древний Египет, Харьков 2008 г., ст. 341.

առաջնորդ», այլ ծագել է երկու եգիպտական բառերից՝ «օտարերկրյա տիրակալներ»[211]*։ Սակայն «օտարերկրյա տիրակալները» ևս ազգի անուն չի կարող լինել։*

Նմանօրինակ տարբերակ է առաջարկում նաև Այզեք Ազիմովը. հիքսոսներ անվանումը հասկանալ՝ որպես «լեռնային տիրակալներ»։ Նա համարում է, որ հիքսոսները եգիպտոս են եկել հյուսիս-արևելքից, իսկ հյուսիս-արևելքում լեռնային տարածքները հիմնականում գտնվում են հենց Հայկական լեռնաշխարհում։ Հետևաբար, թեկուզ և Ազիմովն անուղղակի մատնացույց է անում Հայաստանը, այնուամենայնիվ, «լեռնեցիները» նույնպես ազգի անվանում չի կարող լինել. ***«ենթադրվում է, որ այդ բառն առաջացել է եգիպտական հիկ-շասու-ից, ինչը նշանակում է «լեռնային տիրակալներ»... Բացի դրանից, ապացուցված է այն, որ հիքսոսները եգիպտոս լցվեցին հյուսիս-արևելքից՝ անցնելով Սինայի թերակղզով. նրանք ասիացիներ էին և լավ ռազմիկներ»***[212]*։*

Եվ այսպես, հիքսոսների թե՛ անվան և թե՛ ազգային պատկանելության առումով դեռևս դիտարկվում են որոշ ժողովուրդներ, որոնք կարող էին «հիքսոսներ» անվան տակ ներխուժել Եգիպտոս. ***«Ուսումնասիրելով հենց հիքսոսների կողմից հետագայում թողած առավել քան աղքատ հուշարձանները՝ մենք բացահայտում ենք մի քանի անորոշ, բայց, համենայն դեպս, նշանակալից տողեր, որ վերաբերում են այդ տարօրինակ զավթիչների բնավորությանն, որոնց ավանդությունը կոչում էր արաբներ կամ փյունիկացիներ, իսկ նրանց ժամանակակից հուշարձանները՝ «ասիացիներ», «բարբարոսներ» և «երկրի տիրակալներ»***[213]*։*

Այստեղ հարց է ծագում, թե ինչու՞ հիքսոս անվանումը չի համապատասխանում այն ազգերի անվան հետ, որոնց ջանում են տեսնել այդ անվան տակ։ Եթե հիքսոսները փյունիկեցիներն էին, ապա ինչու՞ չէին անվանվում հենց փյունիկեցիներ. կամ եթե արաբ կամ հրեա էին, ինչու՞ հենց այդպես էլ չէին անվանվում։ Եվ պետք է հաշվի առնել, որ փյունիկեցիները և արաբները Եգիպտոսի ամենամոտ հարևաններն էին, և նրանց մասին Մանեթոնը չէր խոսի՝ որպես անհայտ ծագում ունեցող ժողովրդի. ***«Ինքը՝ Մանեթոնը արևելքից եկածներին անվանում է «անհայտ ծագման» ժողովուրդ»»***[214]*։*

«Հիքսոս» անվանումն ամեն կերպ ջանացել են ներկայացնել՝ որպես այդ ժողովրդին բնութագրող անվանում, ոչ թե՝ ազգի անուն, քանզի այդ դարաշրջանում նման ազգ չի նկատվել այն տարածքներում, որտեղից կարող էին հայտնվել նրանք՝ համաձայն ընդունված մոտեցումների։

---

211 Барбара Мертц, “Древний Египет, храмы, гробницы, иероглифы”, Москва 2007 г., ст. 157.

212 Айзек Азимов, “Египтяне”, Москва 2007 г., ст. 75.

213 Д. Брестед, Б. Тураев, ‘’История Древнего Египта”, Москва, 2007 г., ст. 213–214.

214 А. Тураев, История Древнего Востока, Ленинград 1935 г., ст. 232.

Եգիպտոսի մոտակայքում համեմատաբար նշանակալից ժողովուրդներից էին՝ արևելքի կողմում՝ արաբները, քանանացիները, սիրիացիները, փյունիկ-ասորիները, դեպի հյուսիս-արևելք՝ խեթերը, Միջագետքում՝ ասորեստանցիները և բաբելացիները, նրանցից այն կողմ էլ՝ էլամացիները և այլն: Սակայն սրանցից ոչ մեկի անվանումը ամենահեռավոր նմանություն իսկ չունի հիքսոս անվան հետ: Իսկ եթե մենք նորից զննման առարկա դարձնենք խեթերից դեպի արևելք և միջագետքյան երկրներից դեպի հյուսիս ընկած Հայկական լեռնաշխարհը, կտեսնենք, որ ենթադրյալ թեկնածուների շարքում չընդգրկված և գիտական աշխարհում անտեսված, Քուռարաքսյան քաղաքակրթության կենտրոն Հայկական լեռնաշխարհի բնիկների՝ հայերի անվանումն է, որ համապատասխանում է հիքսոս անվանը: Այս թեմային առավել մանրամասն անդրադարձել է Սուրեն Այվազյանը, որ հանգամանորեն ստուգաբանելով Հայք և Հիքսոս անվանումները, առավել քան համոզիչ ապացուցում է դրանց նույնությունը:

«Մանեթոնը հունարեն էր գրում և այդ պատճառով էլ հունաբանում էր՝ անուններին ու անվանումներին ավելացնելով հունական «ոս» կամ «սոս» վերջավորությունները:

Իր՝ Մանեթոնի երկը, ցավոք, չի պահպանվել: Մեզ են հասել սոսկ առանձին հատվածներ՝ երրորդ ձեռքից: Եվ միայն մի հեղինակի, որը, ի տարբերություն մյուսների, օգտվել է անմիջապես Մանեթոնից, Եվսեբիոս Կեսարացու երկն է պահպանվել մինչև մեր օրերը՝ հայերեն թարգմանությամբ:

Այս հազվագյուտ և իր տեսակի մեջ եզակի աղբյուրը՝ Կեսարացու «Ժամանակագրությունների» հայերեն թարգմանությունը, ամենաարժանահավատն է ու արժեքավորը, քանի որ աղավաղումների հնարավորությունն այստեղ նվազագույն է:

Հատկապես այդ աղբյուրն առավելագույն հետաքրքրություն ներկայացրեց: Պարզվեց, որ այն դեպքում, երբ մյուս աղբյուրները նվաճողներին անվանում են, «հիքսոս» (արմատը «հիք»-ն է, «սոս»-ը՝ վերջավորությունը), Կեսարացու «Ժամանակագրությունների» համաձայն՝ եկվորների առավել ստույգ անվանումը պիտի «հաք»-ը համարել:

1963 թ. ուշադրության առնելով «Ժամանակագրությունների» այս վկայությունը՝ առաջ քաշեցինք նշված անվանումի և հայկական «հայ» (կամ «հայք») էթնիկական տերմինի նմանության հարցը: Եվ, իրոք, հին եգիպտերենը չուներ «յ» հնչյունը, և անհնարին էր այդ հնչյունն արտահայտել եգիպտական գաղափարագրերով: Եթե հին եգիպտացիք փորձեին գրել «հայք» բառը, ապա այն անխուսափելիորեն կունենար «հաք» ձևը, քանի որ այդ գաղափարագրերում «յ» -ի համար հատուկ նշան չկար, բայց նվաճողների անվանման այս ձևն էլ («հայք») Կեսարացին ավելի մոտ է համարում իսկությանը: Հարց է ծագում. թաքնված չէ՞ արդյոք, «հիքսոս»

անվան մեջ «հայ» (կամ «հայք») հայկական էթնիկական տերմինը: Ի՞նչ խոսք, եթե ձեռքի տակ ունենայինք սոսկ այդ փաստը, ապա այն մեզ քիչ բան կարող էր հուշել, քանի որ այդ կարգի զուգադիպությունը կարող է լիովին պատահական լինել և հեշտությամբ առիթ տալ սխալի: Ուստի անհրաժեշտ է բերել նաև այլ փաստարկներ և քննել դրանք ամբողջության մեջ, միասնական մի տեսանկյունից:

Մանեթոնն ավանդում է, որ նվաճող «հիքսոսները» եկել են Հուրի երկրից, որի տակ բոլոր գիտնականները հասկանում են Հայկական լեռնաշխարհը: Հարց է ծագում. մ.թ.ա. XVIII դարում կարո՞ղ էր Հայկական լեռնաշխարհի սահմաններում իրեն հայ անվանող ժողովուրդ լինել: Պարզվում է, որ՝ այո: Հեթիթական աղբյուրների հաղորդած տեղեկությունների համաձայն՝ մ.թ.ա. II հազարամյակի առաջին կեսին Հայաստանի տարածքում գոյություն ուներ Հայասա պետությունը: Բացի այս, ըստ Մովսես Խորենացու, Հայկական ամբողջ լեռնաշխարհը մ.թ.ա. II հազարամյակի վերջերից սկսած՝ Հայք էր կոչվում՝ Մեծ ու Փոքր Հայքերը միասին վերցրած:

Այսպիսով, եթե մենք մտովի տեղափոխվենք մ.թ.ա. XVIII դար և ուղևորվենք Հայկական լեռնաշխարհ՝ հիքսոսների հայրենիք, ապա այնտեղ կգտնենք Հայք անունով երկիր ու ժողովուրդ և Հայասա պետություն, որոնց էթնիկական անունն իր մեջ պարունակում է «հիքսոսների» առավել ճիշտ անվանումը: Հետևաբար, արդեն ավելի շատ հիմքեր ունենք մտածելու, որ «հիքսոսները» հայերի նախահայրերն են՝ Հայք-Հայասա երկրից»[215]:

*Այս մեկնության փաստարկներն ավելի քան համոզիչ են. հիրավի, միայն Հայաստանը և հայերը կարող էին տառացի և անժխտելի նույնանալ «հիքսոս»-«հայքսոս» անվամբ մի ժողովրդի հետ, որն այդ ժամանակաշրջանում նվաճեց Եգիպտոսը: **«Հիքսոսների ցեղանվան Եվսեբիոս Կեսարացու (260-339 թթ.) պահպանած «հաք» ձևն արտացոլում է հայք ցեղանվան հիմքը»**[216],- հաստատում են ժամանակակից անաչառ պատմաբանները:*

Եվ այսպես՝ «հիքսոս» անվամբ ժողովրդի համար ընդամենը սուբյեկտիվ բնորոշիչներ են եղել «թագավոր հովիվներ», «գերի հովիվներ», «օտարերկրյա տիրակալներ», «անապատի տիրակալներ», «լեռնային տիրակալներ» անվանումները: Սակայն միայն Հայաստանի, հայ ժողովրդի անվանումն է, որ որպես ազգի անվանում՝ համընկնում է «հիքսոս» անվան հետ՝ ըստ անվան հայոց մեծ նահապետ Հայկի, ում ռուս պատմաբան Սերգեյ Գլինկան այդպես էլ անվանում է՝ «Հայկուս»[217]:

---

215 Ս. Մ. Այվազյան, Հնագույն Հայաստանի մշակույթի պատմությունից, Երևան 1986 թ., էջ 98–99:

216 Է. Դանիելյան, Ա. Մելքոնյան, Հայոց Պատմություն, Երևան 2008 թ., էջ 31:

217 Сергей Глинка, "Обозрение истории Армянского народа", Москва 1832 г., ст. 43.

Փաստորեն, եթե հանենք այդ «սոս»-ը, որ հունական հավելում է անվան վերջում, «հիքսոս»-ից կմնա «հիք»-ը: Եվ եթե ըստ Եվսեբիոսի՝ այն պետք կարդալ ոչ թե «հիքսոս», այլ՝ «հաքսոս» ապա այդ դեպքում առանց «սոս» -ի կմնա միայն «հաք»-ը: Եվ, վերջապես, եթե (ըստ մասնագետների) «յ»-ի գաղափարագիրը եգիպտերենում չի եղել, ապա մենք «սոս»-ը որպես հունական հավելում առանձնացնելով և «յ»-ն որպես եգիպտականում պակասող տառ կամ միավոր ավելացնելով՝ կստանանք «Հայք» անվանումը:

«Հայքը» հենց «Մեծ Հայքն» է, որն այն ժամանակ հնչում էր «Հայասա», իսկ ներկայումս՝ «Հայաստան»: Եվ եթե «Հայքը» պետք հասկանալ՝ որպես Հայաստան, ապա «հայքսոսներին» էլ պետք է ընկալել՝ որպես «հայեր»: Հետևաբար, հիքսոսների ասպատակությունը պետք է հասկանալ «հայերի» ասպատակություն:

Հայազգի գիտնականներից այս թեմային Սուրեն Այվազյանից դեռևս մոտ 100 տարի առաջ անդրադարձել է Վենետիկի Սուրբ Ղազար վանքի միաբան հայագետ Հ. Յ. Ավգերը. ըստ նրա՝ դեռ հազարամյակներ առաջ «հայ» ազգի անվանումը հնչել է Եգիպտոսում. ***«Հիրավի, Եգիպտոսի մեջ է, որ առաջին անգամ հանդիպում ենք հայ անվանը և հայ ազգին և իր իսկ անվամբ կոչվող Հայքին, ինչպես սխալմամբ մինչև այսօր կարդացել ենք, Հիք(սոս)ին»***[218]*:*

Տուրաևն արդարացի էր, երբ ասում էր, որ այդ բոլոր հովիվ-թագավոր, գերյալ-հովիվ և այլ նմանատիպ անվանումները չեն կարող ժողովրդի անուն լինել: Հակառակ դեպքում այդ ժողովրդից յուրաքանչյուր ներկայացուցիչ պիտի ասեր «ես ազգությամբ հովիվ-թագավոր եմ» կամ «գերյալ-հովիվ եմ»: Մինչդեռ առավել տրամաբանական է պարզապես ասել՝ «ես ազգությամբ հայ եմ», ինչն էլ լիովին համապատասխանում է թե՛ պատմական, թե՛ լեզվաբանական փաստարկներին:

---

[218] Հ. Յ. Ավգեր. «Դասեր Հայոց եւ Հայաստանի հնագոյն պատմութեան», Բազմավեպ ամսագիր, հատոր Հ, թիվ 7–8–9, Վենետիկ 1912 թ., էջ 291:

Հիքսոսները Հայկական լեռնաշխարհից եկած Հայկի սերունդներն էին՝ հայերը

«Հայերը պատմության հետ խոսում են «դու»-ով»[219]:

Չնայած հիքսոսներին վերաբերող բազմաթիվ աշխատություններին՝ նրանց ազգային պատկանելիության մասին դեռևս վերջնական տեսակետ չի ձևավորվել գիտական աշխարհում: ***«Ինչպես տեսնում ենք, հիքսոսների ծագման ամենատարբեր տեսությունները և նրանց հնարավոր նույնականացումն ու կապերը հրեա և այլ ժողովուրդների հետ բավական կլինեն ոչ թե մեկ, այլ ավելի շատ գրքերի համար: Բայց, ինչպես հաճախ է լինում, քանակը դեռ որակ չի նշանակում. հիքսոսներն առաջվա պես շարունակում են մնալ առեղծված. առեղծված՝ ոչ միայն եգիպտական, այլև համաշխարհային պատմության համար»[220]:***

Իսկ մենք կարծում ենք, որ հազարավոր տարիների փոշու տակ ծածկված՝ հիքսոսների ազգային պատկանելության գաղտնիքը կարելի է համարել բացահայտված, քանզի Հայաստան աշխարհի պատմության ընդերքում պահված խորհրդավոր և հրաշափառ գանձերը Նախախնամության կամոք պետք է ի հայտ գային հենց այս՝ վերջին օրերին:

Այժմ ամփոփ ներկայացնենք հիքսոսների՝ հայոց ազգին պատկանելու մասին այն գիտնականների և հետազոտողների կարծիքները, որ ուղղակիորեն վերաբերում են հայերի և հիքսոսների նույնությանը: Նախ՝ հայ գիտնականների և հետազոտողների կարծիքները. ***«Այլևս ոչ մի կասկած չի մնում, որ հիքսոսները Հայկական լեռնաշխարհից են հայտնվել, որտեղ, համաձայն հեթիթական արձանագրությունների և հայկական աղբյուրների, գոյություն է ունեցել Հայք-Հայասա պետությունը: Հայերի և հիքսոսների բառապաշարի նմանությունները, հիքսոսների՝ Եգիպտոս տարած մարտակառքերը, որոնց նյութը ծնունդ է առել Արարատ լեռան շրջակայքում, Նեղոսի ափին Ավարիս մայրաքաղաք հիմնելը, հիքսոսների՝ ծանոթ լինելը երկաթաձուլմանը, որն առաջին անգամ իրագործվել է Հայկական լեռնաշխարհի սահմաններում և, ի վերջո, այսպիսի փաստերի կողքին ամենակարևորը՝ հիքսոսների ու հայերի գաղափարագրային այբուբենի ծագումնաբանական կապը, թվում է, հաստատում են մեր կարծիքը»[221]:***

---

219 Ռամիլ Հաքիմով, «Զրույց քարի հետ», տես՝ Յոթ գարունների երկրում, Գիրք II, Երևան 1983 թ., էջ 299:

220 Мария Павловна Згурская, Древний Египет, Харьков 2008 г., ст. 377:

221 Ս. Մ. Այվազյան, Հնագույն Հայաստանի մշակութի պատմությունից, Երևան 1986 թ., էջ 73–74:

«Հիքսոսների արշավանքի սկզբնակետի և էթնիկ բնութագրերի պարզաբանումը եղել է երկարատև գիտական բանավեճերի առարկա։ Նրանց փորձել են նույնացնել տարածաշրջանի գրեթե բոլոր ժողովուրդների, ամենից ավելի՝ արևելամիջերկրածովյան սեմիտների հետ, ինչն անհավանական է, քանի որ նշված ժամանակաշրջանում չկար որևէ սեմական ցեղ կամ ցեղամիություն, որն ի զորու լիներ նվաճել Եգիպտոսը և միայն մայրաքաղաքում պահել 240 հազարանոց զորք հիշեցնող մի կայազոր։ Դա պետք է լիներ կա՛մ հզոր պետություն, կա՛մ փոքր իշխանություններից կազմված հզոր միություն-դաշինք, որոնցից ոչ մեկն էլ առկա չէր արևելամիջերկրածովյան ավազանում։ Միջագետքի կենտրոնում և հարավում Հին Բաբելոնյան տերություններն էր, որի արձանագրություններում չի հիշատակվում նման արշավանք ո՛չ իրենց կողմից, ո՛չ արևելքից՝ իրենց տարածքով։

Նշանակում է՝ արշավանքը պետք է մեկնարկեր Հյուսիսային Միջագետքի և Հայկական լեռնաշխարհի տարածքից, որտեղ դեռևս Ք. ա. XXIII-XXII դդ. գործում էր հզոր մի համադաշնություն, որը կործանել է աքքադական բռնակալությունը»[222]*։*

«Մ.թ.ա. II հազարամյակի առաջին կեսին՝ արիական ցեղերի ընդհանուր տեղաշարժերի ընթացքում, հիքսոսները դարձան Հայկական լեռնաշխարհի քաղաքակրթության հայ-արիական էթնո-հոգևոր ակունքներից սնվող ավանդությունների կրողները»[223]*։*

«Այս խառնաշփոթ ժամանակներում է, որ հայերը հերթական անգամ ռազմական զորությամբ մտնում են Եգիպտոս և կարճ ժամանակի ընթացքում վերականգնում օրինականությունն ու Եգիպտոսի երբեմնի հզորությունը։ Հայերի այս արշավանքի առաջնորդներին է, որ Մանեթոնն անվանում է հիքսոս»[224]*։*

«Հայկական լեռնաշխարհից կատարված այս երկու խոշոր արշավանքները սոսկ արշավանքներ չէին։ Անկասկած, դրանք նպաստել են պատմական, քաղաքական, մշակութային և այլ բնույթի իրադարձությունների արագ զարգացմանն ու առաջընթացին։ Այսպես. հաք-սոսները Եգիպտոս տարան երկաթե զենքեր ու ձիեր»[225]*։*

«Շատ հետաքրքիր է Հայ-Հիւք հովիվ ասպատակության պատմությունը ուսումնասիրելը, ինչը հին դարերի պատմության մեջ պիտի կարողանար նոր էջ գրավել, բայց բավարարվենք հաստատելով այն, որ առաջին ան-

---

222 Արտակ Մովսիսյան, Հայոց պատմության աշխարհակալությունները, Երևան 2008 թ., էջ 25–26:

223 Է. Դանիելյան, Ա. Մելքոնյան, Հայոց Պատմություն, Երևան 2008 թ., էջ 31:

224 Համլետ Ս. Սարտիրոսյան, Հայոց հնագույն պատմության էջեր, Երևան 2011 թ., էջ 157–158:

225 Անժելա Տերյան, Հայաստանը արարչագործության և քաղաքակրթության բնօրրան, Երևան 2002 թ., էջ 180–182:

գամ պատմության մեջ հայերը համարվում են Եգիպտոսի վրա արշավող և տիրապետող մի հրոսակ՝ 200 տարի (1800-1600) այնտեղ տիրելով»[226]:

Արձակագիր Հրանտ Մաթևոսյանն իր գործերից մեկում՝ «Մեծամոր»-ում, գրական հերոսին կերտելիս՝ այս թեմային անդրադառնում է այսպես. ***«Թուխ ու ջղային մարդկանց մի ցեղ, որ իրեն հիքսոս էր կոչում, հյուսիսից Ասորիք ու Փյունիկիայով Նեղոսի հովիտ մտավ և փարավոնների տասնյոթերորդ հարստությունը մեկ բախմամբ կործանեց ոչ այն պատճառով, որ տասնյոթերորդ հարստության վերջին գահակալները հզորություն չունեին, այլ շնորհիվ այն բանի, որ նվաճողները հատում ու խոցում էին պողպատե թրերով, և նրանց մարտակառքերի անիվները շրջանակված էին երկաթով, և նրանց նժույգներն ինչպես էլ սուրային, մարտակառքի անիվները փուլ չէին գալիս: Հյուսիսի իրենց լեռներից նրանք իջան՝ ձիեր երախակալները կիպ բռնած, դանդաղ, ձիերին զսպելով, մտան ասորական հարթավայր, միանգամից սլացան ու երկաթով փշրեցին բրոնզե բանակներն ու կուռքերը՝ Ասորիքից մինչև Եթովպիա... Թուխ ու ջղային մարդկանց մի ցեղ, որ իրեն հիքսոս էր կոչում, հյուսիսի Արարատ երկրում զինվեց Մեծամորի պողպատե սրով, մարտակառքի անվաճաղերը հղկեց Արեգունու կենի ծառից, որ մետաղի կարծրություն ունի... Թուխ ու ջղային մարդկանց մի ցեղ, որ իրեն հայ ու իր երկիրը Հայք էր կոչում, հեթիթներին ոտնատակ տալով՝ հյուսիսից իջավ Ասորիք, սուրաց ու փշրեց երկաթով՝ բրոնզե բանակները»**[227]:

Բրիտանացի հայտնի դիցաբան Ռոբերտ Գրեյվսն իր տարբեր աշխատություններում անդրադառնում է այս թեմային, նշելով, որ հիքսոսների արշավանքի սկզբնակետ պետք է համարել Հայաստանը. ***«Հիքսոսները՝ ոչ սեմական ծագումով հովիվները, Կապադովկիայով, Սիրիայով, Պաղեստինով մոտ 1780 թ. Ք.ա. Եգիպտոս են եկել Հայաստանից»***[228]: *Նա նաև հիքսոսներին իրավացիորեն կապում է մետաղագործության հայրենիքի հետ և իր մի այլ աշխատությունում գրում է նրանց մասին՝ որպես մետաղագործության հայրենիքից, այսինքն՝ Հայաստանից եկածների.* ***«Chalybs հունարեն նշանակում է «երկաթ», իսկ «խալիբներ»-ը, հավանական է, եղել է անվանումներից մեկը տիբերանների, որ հայտնի էին հնում՝ որպես առաջին երկաթ կռող դարբիններ: Մննդոց 4:22-ում երկիրն անվանվում էր Տուվալ (Tubal=Tïbar), իսկ Տուվալ Կայենը ենթադրում է տիբերաններին, ովքեր եկել էին Հայաստանից Քանան՝ հիքսոսների հորդաների հետ»***[229]:

Էդրիան Ջիլբերդը ևս գրում է հիքսոսների հայկականության մա-

---

226 Հ. Յ. Աւգեր, «Դասեր Հայոց եւ Հայաստանի հնագոյն պատմութեան», Բազմավէպ ամսագիր, 1912թ. հատոր Հ, թիվ 7–8–9 Վենետիկ, Սուրբ Ղազար, էջ 297:

227 Հրանտ Մաթևոսյան, Հատընտիր հ. 1, «Մեծամոր», Երևան 2005 թ., էջ 344, 345:

228 Р. Грейвс, Белая богиня. Историческая грамматика поэтической мифологии, Екатеринбург, 2005 г., ст. 655.

229 Р. Грейвс, Мифы Древней Греции, Санкт–Петербург, 2016 г., ст. 830.

սին՝ նշելով, որ նրանք եկել են Արարատ լեռան շրջակայքից։ ***«Մոտ 1670 թ. մ.թ.ա. ժողովուրդը՝ հայտնի «հիքսոս» կամ «թագավոր-հովիվներ» անվամբ, ներխուժեց Եգիպտոս... նրա ներխուժումը Եգիպտոս մասն է Արևելյան Թուրքիայի և Արարատ լեռան շրջաններից ժողովուրդների առավել սփռման»***[230]։

Մաքսիմիլիան դե Լաֆայետը առավել հստակ է խոսում հիքսոսների ազգային պատկանելության մասին՝ շեշտելով ոչ միայն Հայաստան երկիրը, որտեղից նրանք եկան, այլև՝ հենց բուն ազգությունը. ***«Հայերը հիքսոսների հետնորդներն են. անուն, որը տրվել է Հայկական լեռնաշխարհի առեղծվածային ռազմիկներին, ովքեր մոտավորապես Ք.ա 1720թ. զավթեցին հին Եգիպտոսը և կառավարեցին Նեղոսի երկիրը՝ շատ երկար ժամանակ»***[231]։

Այդ մասին առանց ակնարկների, ուղիղ խոսում է նաև ռուս հետազոտող Նազարովը. ***«Հիքսոսները սերվել են Արա Գեղեցիկից՝ բոլոր հայերի՝ արմենների նահապետից։ Հիքսոս նշանակում է հայեր, հայկյաններ»***[232]։

Բազմաթիվ վկայություններ կան այն մասին, որ հիքսոսները եկել են Հայկական լեռնաշխարհից, սակայն դրանք ոչ միշտ է, որ տեղ են գտնում հրատարակված գրքերում։ Կան նաև հոդվածներ կամ սեղմ գիտական աշխատություններ, որ հեղինակները տեղադրում են համացանցում։ Ներկայացնենք դրանցից մի քանիսը. ***«Կա նաև հիմք՝ համարելու, որ հանրահայտ հիքսերը կամ հիքսոսները հենց հայերն են, որ կան»***[233]։

«Հիքսոսների ծագման խնդիրը հուզել և հուզում է գիտական աշխարհին։ Ովքե՞ր են իրականում հիքսոսները։ Համոզիչ պատասխան կա հայկական ժողովրդական էպոսում։ Այո, հիքսոսները հայկական լեռնականներն են»[234]։

«Այսպիսով, մենք եզրակացնում ենք, որ նախ և առաջ չնայած որ հայքսոսները թողեցին Եգիպտոսը մինչ Մովսեսը, համենայն դեպս, Մովսեսը նրանց անվանեց հարազատ ժողովուրդ. երկրորդ՝ հայքսոսները հիմնեցին Երուսաղեմը եբրայեցիների՝ այնտեղ հայտնվելուց շատ ավելի առաջ. երրորդ՝ որպեսզի վերադառնան իրենց երկիր, նրանք ստիպված պիտի լինեին հատել Ասորեստանի տարածքը, որի հետ գտնվում էին քաղաքական հարաբերությունների մեջ (ըստ Մանեթոնի)։ Ինչպես հայտնի է, հյուսիսում Ասորեստանին սահմանակից էր Հայաստանը, ինչի համար էլ այն համար-

---

230 Эдриан Джилберт, Тайны волхвов, Москва 1998 г., ст. 393.

231 Maximillien de Lafayette "Civilization and Arts of Armenia from Pre-History to the Present Day: Its Culture, Society, Stars, Artists and Celebrities", USA San Bernardino, CA 25 May 2015 p., Volume 1 p. 32.

232 Назаров П.Г., Происхождение дадонской арты евреской арцы, Ур-Арту и стран артавы, часть 14, Челябинск 1997 г., ст. 85.

233 Константин Ковалев. http://babon.sitecity.ru/ltext_0903104639.phtml?p_ident=ltext_0903104639.p_1808042823

234 Кирпотин, Валерий Яковлевич, «О былинном эпосе эпос Давид Сасунский». http://www.armenianhouse.org/bryusov/also-ru/kirpotin.html

վում է հիքսոսների առավել հավանական հայրենիքը»[235]***։***

Այսօր գիտական աշխարհն դեռ անտեսում է հիքսոսների՝ հայ լինելու տարբերակը, և հայ գիտնականների առաջ քաշած հիքսոս-հայ նույնությունն օտարներից ոմանք սուբյեկտիվ են համարում։

«Հիքսոսների ծագման վերաբերյալ կան այլ, կարելի է ասել, էկզոտիկ տարբերակներ։ Հայ պատմաբան Սուրեն Այվազյանը համարում է, որ հիքսոսները հին հայերն են։ Իսկ ակադեմիկոսներ Ֆոմենկոն և Նոսովսկին ընդհանրապես պնդում են, որ հիքսոսներն իրականում կազակների զորքերն են՝ եկած Ռուսաստանի տարածքից։ Բայց թողնենք նման վարկածները չակերտների մեջ»[236]***։***

Ֆոմենկոյի և Նոսովսկու առաջարկած արտառոց վարկածը, հարկավ, պետք է թողնել չակերտների մեջ, իսկ ինչ վերաբերում է հիքսոս-հայ տարբերակին, ապա արդեն ժամանակն է ընդունել այն՝ ի գիտություն։ Հակառակ դեպքում անվերջ կհնչեն այդ հարցերը՝ ովքե՞ր էին հիքսոսները և որտեղի՞ց եկան. ***«Ովքե՞ր էին հիքսոսները։ Անորսալի և խորհրդավոր հիքսոսների ինքնության հարցը իսկապես շատ հետաքրքիր է... Հարցեր՝ առանց պատասխանների։ Ինչպե՞ս կարողացան քոչվոր ցեղերը գրավել այնպիսի հզոր տերություն, ինչպիսին Եգիպտոսն էր։ Ովքե՞ր պետք է եղած լինեին այդ հիքսոսները, որպեսզի Եգիպտոսն ընկներ նրանց առջև։ Ովքե՞ր էին նրանք։ Որտեղի՞ց եկան»***[237]***։***

Եզրակացություն

«Երկու–երեք տարվա ուսումնասիրություններն ինձ, իհարկե, չդարձրեցին գիտնական-հայագետ։ Սակայն ես կարողացա գնահատել այն, թե ինչպիսի հսկայական նշանակություն ունի հայկական աշխարհը՝ համայն կիրթ մարդկության համար»[238]***։***

Հիմք ընդունելով հատորաշարի առաջին և այս՝ երկրորդ գրքում զետեղված փաստարկները՝ հիքսոսների ազգային պատկանելության խնդիրը պետք է համարել լուծված։ Այո, այդ ժամանակներում նման ժողովուրդ կարող էին լինել միայն հայերը, որ բնակվում էին մետաղագործության

---

235 Пивоваров С., Торосян А., Загадка тысячелетий или кто такой Моисей?. https://ok.ru/group54037507670021/topic/65022577497349

236 Мария Павловна Згурская, Древний Египет, Харьков 2008 г., ст. 345.

237 Мария Павловна Згурская, Древний Египет, Харьков 2008 г., ст. 337, 338.

238 Валерий Брюсов, в книге «Русские писатели об Армении», Ереван 1946 г., ст. 86.

հայրենիքում, որը նաև հայտնի էր որպես ձիերի բուծման վայր: Ապացուցվեց նաև, որ մարտակառքերը, կազմածո աղեղները, տարբեր բարձրորակ մետաղներից պատրաստված զենք ու զրահը ստեղծվել են Հայկական լեռնաշխարհում: Իսկ հիքսոսները տիրապետում էին այդ ամենին, ինչով էլ գրավեցին Եգիպտոսը: Դա ինքնին խոսում է այն մասին, որ մենք գործ ունենք միևնույն ժողովրդի՝ հայ-հիքսոսների հետ:

Միայն ավելի զարգացման բարձր մակարդակի հասած նստակյաց ժողովուրդը կարող էր նման մշակույթ ձևավորել, նվաճել հզոր Եգիպտոսը և երկու հարյուր տարի իշխել այնտեղ:

Մեծ Հայքի՝ քուռարաքսյան քաղաքակրթության այդ կենտրոնի տարածքը հետազոտողները պատշաճ ուշադրության չեն արժանացրել, ինչը նրանց թույլ չի տալիս հիքսոսների մասին ամբողջական պատկերացում կազմել: Մեծ Հայքի տարածքում սփռված անթիվ-անհամար հուշարձանները պահում են հին աշխարհին վերաբերող այնպիսի արժեքավոր տեղեկություններ, որ լիուլի բավարար են ոչ միայն հիքսոսների առեղծվածը լուծելու, այլև՝ խորհրդավորության քողով ծածկված այլ հարցերի պատասխանները գտնելու համար: Եթե Հայաստանի Հանրապետության՝ Մեծ Հայքի այս փոքրիկ բեկորի ընդերքից այդքան գտածոներ են լույս աշխարհ հանվում, ապա դժվար չէ պատկերացնել, թե ինչպիսի գանձեր են թաքնված Արևմտյան Հայաստանի տարածքում, որն «ուսումնասիրում են» օտարները և այդ պատմության կերտողների հայրենիքը զավթած, նրանց մշակույթը ոչնչացրած բարբարոսները:

*Սակայն արդեն հայտնի դարձած փաստերին հպանցիկ ծանոթանալն էլ վերացնում է բոլոր կասկածներն առ այն, որ հիքսոսներն այդ հզոր, աշխարհին անծանոթ մշակույթն իջեցրել են Եգիպտոս հենց Մեծ Հայքի՝ իրենց հայրենի լեռներից. **«Հանրապետության գիտությունների ակադեմիայի հնագիտության թանգարանի արշավախմբերը ծավալուն պեղումներ են կատարում Հրազդան գետի դարավանդներում, Միծեռնակաբերդում, Շենգավիթում, Թեյշեբաինիում, Էրեբունիում, Մեծամորում, Արմավիրում և այլուր: Ամենուրեք հայտնաբերվում են նյութական մշակույթի մեծաթիվ արժեքներ: Թանգարանն ամեն տարի ստանում է հնագիտական, միջին հաշվով, երեք հազար առարկա: Կավե հազարավոր ամաններ, բրոնզե իրեր, դաշույններ ու կենցաղային այլազան առարկաներ են հայտնաբերվել Արթիկի տուֆի հնագույն դամբարանադաշտի պեղումներից: Մեծ հետաքրքրություն է ներկայացնում Հառիճ գյուղի բերդ-ամրոցը, որը պատկանում է մեր թվարկությունից առաջ երրորդ հազարամյակին...***

Պեղումնավայրերում կուտակվել էին նյութական մշակույթի այնքան արժեքներ, որ Գիտությունների ակադեմիայի հնագիտության թանգարանի ղեկավարությունն ստիպված էր, դրանք տեղում պահպանելու նպատակով, թանգարաններ դարձնել Դվինը, Գառնին, Էրեբունին: Մեկ-երկու

տարի հետո թանգարաններ կդառնան Մեծամորը, Հառիճը, Շենգավիթը, Արմավիրը, Լճաշենը, Գլաձորը, Սյունիքը, Աղստևի հովիտը, Սևանի ջրերից ազատված տարածությունները և, շատ հավանական է, ազատվելիք տարածությունները՝ նույնպես։

Մեր գործի կարևորությունը, ես կասեի, համապատասխանությունը ընդգծելու համար բերեմ թեկուզ միայն մեկ իրողություն. մեծամորյան մետաղաձուլարանների հայտնաբերումը, գիտնականների ենթադրությամբ, արդեն ուղի է նշում դեպի մեր թվագրությունից առաջ տասնյոթերորդ դարում Եգիպտոսը նվաճած հիքսոսների առեղծվածի լուծումը։ Ովքե՞ր էին հիքսոսները, որտեղի՞ց էին գալիս, որտե՞ղ էին կռել իրենց երկաթե սրերը»[239]։

Ի վերջո, նորից անդրադառնանք Աժդահակի տեսիլքին, որ նա տեսավ, թե ինչպես Հայաստանի հսկայածավալ և բարձր լեռան գագաթին, որը սրբասուն Արարատ լեռն է, մի հղի կին, որը խորհրդանիշն է մայր Հայաստանի, ծննդաբերեց երեք դյուցազուններ, որ ասպատակեցին աշխարհի տարբեր կողմերը. նրանցից մեկը՝ առյուծ հեծած, սլացավ մի կողմ, երկրորդն՝ ընձառյուծ հեծած, մյուս կողմ, և երրորդը՝ վիթխարի վիշապ սանձած, մի ուրիշ կողմ։

Հիրավի, ն.Ք. 1700-ական թվականներին Հայոց աշխարհից իրականացավ նման երեք ասպատակություն՝ մարտակառքերով, համարյա միաժամանակ. առաջինը՝ դեպի Միջագետք, որ «Քասեցիների» արշավանքն էր, երկրորդը՝ դեպի Հնդկաստան «Արիների» արշավանքը, և այս երրորդը՝ դեպի Եգիպտոս «Հիքսոսների» արշավանքը։

Այսպիսով, հիքսոսների հայկական ծագումը համարում ենք ապացուցված, անցնենք այն ոչ պակաս կարևոր հարցին, թե ինչ մղումներով է, որ նրանք թողեցին իրենց հայրենիքը՝ Հայկական լեռնաշխարհը և գրավելով Սիրիան ու Պաղեստինը՝ նվաճեցին Եգիպտոսը և մոտ երկու դար իշխեցին այնտեղ։

[239] Հրանտ Մաթևոսյան, Հատընտիր հ. 1, «Մեծամոր», Երևան 2005 թ., էջ 343–344:

Հիքսոսների իշխանությունը Եգիպտոսում և հրեաների գալուստը հիքսոսյան Եգիպտոս

«Հայը ստեղծել է մի ամբողջ մշակույթ, մի ամբողջ քաղաքակրթություն, խելացի և հարատև գործունեության մի ամբողջ անցյալ. և դրանք իրեն տալիս են անկախության անուրանալի իրավունք: Տեր է նա արվեստի, գրականության, բանաստեղծական գանձերի: Հարյուրներով ունեցել է հոյակապ մարդիկ, որ պատիվ են բերել իրենց ցեղին՝ գերազանց ծառայություններ մատուցելով Մերձավոր Արևելքին, եվրոպային և Ամերիկային: Լավ կլինի, որ մեր բարձրագույն դպրոցների և համալսարանների մեջ պատշաճ կերպով ծանոթացնեն գեղեցիկ պատմությանը մի ժողովրդի, որը շուրջ երեք հազար տարի եղել է Մերձավոր Արևելքի քաղաքակրթության յուրահատուկ առաջապահը»[240]:

Այժմ փորձենք պատկերացնել Եգիպտոսի կարգավիճակը հիքսոսների կառավարման շրջանում:

Նախ, արդեն գիտենք, որ հետազոտողների մի մասը, հետևելով Մանեթոնից հասած տեղեկություններին, այն կարծիքին էր, որ հիքսոսները դաժանորեն ճնշել են եգիպտացիներին, ավերել են նրանց տաճարները, աջ ու ձախ հարստահարել և ստրկության մատնել տեղաբնակներին: Իսկ մյուսները, ընդհակառակը, լուրջ չընդունելով Մանեթոնի խոսքերը, համարում են, որ հիքսոսները, գրավելով Եգիպտոսը, ոչ թե ամեն ինչ քարուքանդ արեցին, այլ եղածի վրա ավելացրեցին այն նորույթները, որ բերել էին իրենց հետ: ***«Եգիպտական գրավոր աղբյուրները, հասկանալի պատճառով, մռայլ գույներով են ներկայացնում հիքսոսներին՝ համարելով նրանց աննսանձ թալանչիներ և վայրենիներ, ինչը ևս հասկանալի է: Սակայն եգիպտական Նոր թագավորության աննախադեպ ռազմական հզորությունը և ծաղկումը պայմանավորված էր հենց հիքսոսների արշավանքով, որոնք ռազմի նոր հնարքներ (ձի և մարտակառք, նոր տիպի զենքեր, ռազմարվեստ սովորեցրին եգիպտացիներին) և թարմ արյուն ներարկեցին փարավոնների խամրող արյանը»***[241]:

Նրանք նույնիսկ կառավարման կերպը մեծ փոփոխությունների

---

240 Անտոնի Կրաֆտ–Բոնար, տես Սև Գիրք, Երևան 2011 թ., էջ 341:

241 Հակոբ Սիմոնյան, Հիքսոսներ, ամսագիր Անդին 10, 2013 թ.:

չենթարկեցին և բազմաթիվ եգիպտացի պաշտոնյաների թողեցին իրենց պաշտոններում։

Հիքսոսների անմիջական իշխանության ներքո հիմնականում ներքին Եգիպտոսն էր՝ Նեղոսի բերրի դելտան, որտեղ և նրանք կառուցեցին իրենց մայրաքաղաք Ավարիսը։ Իսկ վերին Եգիպտոսը, չնայած մնում էր եգիպտացիների իշխանության տակ, այնուամենայնիվ, դարձավ հարկատու հիքսոսներին։ Եգիպտոսը սկսեց բարգավաճել հատկապես հիքսոսների ժամանակ, քանզի նրանք, եգիպտական մշակույթի առանձնահատկությունները պահպանելով հանդերձ, ներմուծեցին Հայաստանին պատկանող Քուռարաքսյան մշակույթի յուրահատուկ նորարարություններ։

Ըստ մանանգետների՝ հիքսոսների երկու դինաստիա է տիրել Եգիպտոսում։ Հիքսոս տիրակալների անուններից ելնելով՝ մի մասին վերագրում են հնդեվրոպական ծագում, մյուսին՝ սեմական։ Սակայն անվանումների տարբերությունները չեն կարող որոշել ազգությունը, քանզի այդ շրջանում Եգիպտոսում բնակվում էին տարբեր ազգեր. բնիկ եգիպտացիներ, հիքսոսներ, քանանացիներ և սեմիտներ։ Հնարավոր է՝ ինչ-որ հիքսոս արքա կրել է սեմական անուն, ինչպես ներկայումս էլ տարբեր ազգերի և հատկապես հայերի մոտ կարելի է հանդիպել հնդեվրոպական, սեմական, պարսկական կամ այլ անուններ, ինչից նրանց ազգությունը, բնականաբար, չի փոխվում։

«Մանեթոնը հաղորդում է Եգիպտոսում թագավորած հիքսոսյան առաջին վեց տիրակալների անունները և տիրակալության տարիների թիվը.

Սիզիտիս	*(*Salatis*)*	***թագավորել է 15 տարի***
Բանոն	*(*Bnon*)*	***թագավորել է 43 տարի***
Ապաքնան	*(*Apacnas*)*	***թագավորել է 36 տարի 7 ամիս***
Ափովսիս	*(*Apophis*)*	***թագավորել է 61 տարի***
Հիան/Աննան	*(*Jannas*)*	***թագավորել է 50 տարի 1 ամիս***
Ասէթ	*(*assis*)*	***թագավորել է 49 տարի 2 ամիս***

Հետևաբար, ըստ հիշյալ աղբյուրների, հիքսոսների առաջին վեց թագավորները Եգիպտոսին տիրել են 254 տարի 10 ամիս»[242]***։***

Հիքսոսների տիրակալության ժամանակաշրջանը միանշանակ չի ընդունվում գիտական աշխարհում։ Այն, ըստ տարբեր աղբյուրների, տատանվում է 100-ից մինչև 250 տարվա միջև։

Հիքսոսների առաջին արքաների ժամանակ էր, որ Աբրահամի որդի Իսահակի որդին՝ հրեաների նահապետ Հակոբն՝ իր սերունդներով, բնակություն հաստատեց Պաղեստինում։ ***«Շամիրամի վերջին տարում ծնվեցին Եսավն ու Հակոբը, որ անվանվում են երկու նահապետներ... Սրա***

[242] Համլետ Ս. Սարտիրոսյան, Հայոց Հնագույն պատմության էջեր, Երևան 2011 թ., էջ 127:

վերջին տարում եգիպտացիներին տիրեցին հովիվները»[243]*։*

Հայոց պատմիչներից Թովմա Արծրունին նշում է, որ երբ հիքսոսները մտան Եգիպտոս, միաժամանակ անց այնտեղ հայտնվեցին Հակոբը և իր սերունդները։ Իսկ դա մոտ է Ասորեստանի թագուհու՝ Շամիրամի կառավարման ժամանակաշրջանին, ավելի ստույգ՝ նրա կառավարումից մի քանի տասնամյակ անց է, ինչը ևս մեկ հիմնավորում է, որ Շամիրամն ապրել է ավելի վաղ շրջանում (ն.Ք. XIX-XIII դ.)։

Սակայն մինչ հրեաների գալը Եգիպտոս, երբ նրանք դեռ ապրում էին Քանանում, եղբայրները, նախանձելով Հակոբի սիրելի որդուն՝ Հովսեփին, որոշեցին սպանել նրան, ապա նրանից ձերբազատվելու ավելի հարմար տարբերակ գտան՝ վաճառեցին այդ կողմերով Եգիպտոս գնացող ստրկավաճառներին։ Այդպես Հովսեփը հայտնվեց հիքսոսյան Եգիպտոսում[244]*։ Իսկ Հովսեփի՝ Եգիպտոսում հայտնվելը հենց հայկական դինաստիայի տիրապետության ժամանակ ծածկված է խորհրդավորության շղարշով, ինչը կապված է առանձնահատուկ մի առեղծվածի հետ։ Նախ տեղեկանանք, թե Սուրբ Գիրքը և հնագիտությունն ինչ են ասում Հովսեփի մասին։ Հովսեփը՝ ստրուկի կարգավիճակում, հանգամանքների բերումով, ի վերջո, հայտնվում է Եգիպտոսի հիքսոս փարավոնի առջև՝ մինչ այդ պատվով հաղթահարելով տարբեր փորձություններ, նաև չտրվելով Պետափրեսի կնոջ գայթակղություններին։ Ինչպես որ բարեպաշտ Արա Գեղեցիկը կյանքի գնով մերժեց վավաշոտ ասորուհուն, այդպես և՝ Հովսեփ Գեղեցիկը, ապրելով համարյա նույն ժամանակաշրջանում, նույնպես Աստծո երկյուղը սրտում՝ կյանքը վտանգեց՝ մերժելով վավաշոտ եգիպտուհուն։* ***«Հովսեփը դեմքով շատ գեղեցիկ էր ու վայելչակազմ»***[245]*։*

Ըստ Սուրբ Գրքի՝ այդ փարավոնը կրկնվող երազներ էր տեսնում, ինչից ահաբեկվելով՝ հրաման է տալիս, որ կարող մարդիկ մեկնաբանեն նրա երազները, սակայն ոչ ոք ի զորու չի լինում դա անել։ Ի վերջո, փարավոնին հայտնում են, որ կա մի բանտարկյալ՝ եբրայեցի ստրուկ, որ երազներ մեկնելու շնորհ ունի, և փարավոնի հրամանով Հովսեփին բերում, և կանգնեցնում են նրա առջև[246]*։*

Հովսեփը, Տիրոջ կողմից օժտված լինելով տարբեր շնորհներով, լսում է փարավոնին անհանգստացնող երկու երազի մասին և ասում է, որ այդ երազները կանխագուշակում են, որ Եգիպտոսում կլինի առատության յոթ տարի, որին կհաջորդի սովի յոթ տարի։ Փարավոնը և նրան շրջապատող իշխանավորները, լսելով Հովսեփի խոսքը, մտածմունքի մեջ են ընկնում, իսկ Հովսեփը նրանց մի խորհուրդ է տալիս գալիք աղետին դիմակայելու

---

243 Թովմա Արծրունի և Անանուն, Երևան 1978 թ., էջ 55–56:

244 Ծննդ. 37:1–36:

245 Ծննդ. 39:6:

246 Ծննդ. 41:1–36:

համար։ ***«Արդ, տե՛ս, գտի՛ր խոհեմ ու իմաստուն մի մարդու, որ դառնա փարավոնի խորհրդականը, և նրան վերակացու նշանակի՛ր եգիպտացիների երկրի վրա։ Փարավոնը երկրի վրա նաև գործակալներ թող նշանակի, որ եգիպտացիների երկրի առատության յոթը տարիների ընթացքում բերքի մեկ հինգերորդ մասը հարկ վերցնեն։ Նրանք թող հավաքեն առաջին յոթը տարիների բերքի ամբողջ պաշարը, ցորենը թող դրվի փարավոնի տրամադրության տակ, և պարեները թող պահվի քաղաքներում։ Երկրի պարենը թող պահվի եգիպտացիների երկրի վրա տարածվելիք սովի յոթը տարիների համար, որպեսզի երկիրը սովից չկոտորվի»*[247]*։***



Փարավոնը հիանում է Հովսեփի թե՛ իմաստնությամբ, թե՛ արտաքինով, և որպես իր խորհրդատու և երկրի վերակացու՝ տեսնում է հենց նրան, քանզի հասկանում է, որ այդ ստրուկը պատահական մարդ չէ, այլ՝ ընտրյալ մեկը, ով կրում էր իր մեջ երկնառաք շնորհներ։ ***«Հովսեփի խոսքերը հաճելի թվացին փարավոնին ու նրա բոլոր պաշտոնյաներին։ Փարավոնն ասաց իր բոլոր պաշտոնյաներին. «Մի՞թե կգտնենք այսպիսի մի մարդու, որն իր անձի մեջ կրի Աստծու Հոգին»։ Եվ փարավոնն ասաց Հովսեփին. «Քանի որ Աստված քեզ հայտնեց այդ ամենը, ուրեմն քեզնից ավելի իմաստուն ու խելացի մարդ չկա։ Դո՛ւ եղիր իմ տան վերակացուն, և քո հրամանին թող ենթարկվի իմ ամբողջ ժողովուրդը։ Իմ գահով միայն ես քեզնից բարձր կլինեմ»։ Փարավոնն ասաց Հովսեփին. «Ահա այսօր քեզ վերակացու եմ կարգում եգիպտացիների երկրի վրայ»։ Եվ փարավոնը մատից հանելով իր մատանին՝ դրեց Հովսեփի մատին, նրան հագցրեց բեհեզյա պատմուճան, ոսկե մանյակ անցկացրեց նրա պարանոցին, նրան նստեցրեց իր երկրորդ կառքը։ Մունետիկը Հովսեփի առաջից գնալով՝ այդ մասին ազդարարեց, և նա վերակացու կարգվեց եգիպտացիների երկրի վրա։ Փարավոնն ասաց Հովսեփին. «Ահա ես փարավոնն եմ։ Եգիպտացիների ողջ երկրում ոչ ոք իրավունք չունի նույնիսկ իր ոտքը կամ ձեռքը բարձրացնելու առանց քո հրամանի»*[248]*։***

Եգիպտացիները խորշում էին այլազգի խաշնարածներից, որոնց

[247] Ծննդ. 41:33–36:

[248] Ծննդ. 41:37–45:

թվին էր պատկանում նաև Հովսեփը, հետևաբար, փարավոնը ոչ թե եգիպտացի էր, այլ՝ հայ-հիքսոս, որն օտար ազգի ներկայացուցչին նման շնորհների արժանացրեց։ ***«Այն ժամանակ, երբ մադիամացիները վաճառեցին Հովսեփին ստրուկների շուկայում, Եգիպտոսն արդեն հասել էր ծաղկունքի և հզորության բարձր աստիճանի։ Եգիպտոսում արդեն փոխվել էր 15 թագավորական տոհմ կամ դինաստիա՝ հաջորդականությամբ ղեկավարելով նրա ճակատագիրը։ Այժմ թագավորում էր, այսպես կոչված, թագավոր-հովիվների, կամ հիքսոսների դինաստիան... Միայն հովիվների դինաստիայի փարավոնի ժամանակ հնարավոր եղավ, որ հետին ծառան, որ դուրս էր եկել եգիպտացիների ատելի խաշնարածների միջից, նշանակվեր երկրի բարձրաստիճան ղեկավարի պաշտոնում»***[249]։

Այսպիսով, Աստծո պատվիրաններին հավատարիմ մնալը Հովսեփին վերջին ստրուկի և բանտարկյալի կարգավիճակից միանգամից դուրս բերեց և հասցրեց գլխապտույտ բարձունքների. հիքսոսյան Եգիպտոսում նա դարձավ փարավոնից հետո երկրորդ մարդը։ ***«Հովսեփին բարձրացրած փարավոնը, ենթադրվում է, որ եղել է Ապոֆիսը կամ Ապոպին՝ հիքսոսների դինաստիայից»***[250]։

Հայ-հիքսոս փարավոնը, որ նույնպես հավատում էր նույն միակ ճշմարիտ Արարիչ Աստծուն, ինչպես և՝ Հովսեփը, այս ամենում տեսավ Բարձրյալի կամքը, Ում կամոք և իրենք էին թողել Հայկական լեռնաշխարհը և իջել Եգիպտոս։ ***«Այսպիսով, երբ Հովսեփն առաջարկեց վերահաս սովը կանխելու իր ծրագիրը, փարավոնը նրան ողջունեց՝ որպես Նախախնամությունից ուղարկված մարդու։ Դրանով է բացատրվում նաև Հովսեփի՝ խիստ արտոնյալ դիրքը պալատում, և այն շնորհները, որ նրա գլխին տեղում էր փարավոնը»***[251]։

Մեծ հանդիսավորությամբ Հովսեփին կարգեցին այդ բարձրագույն պաշտոնում, փարավոնը նրան կնության տվեց իր մերձավորներից մեկի դստերը՝ Ասանեթին։ Փարավոնը նրան տրամադրեց նաև իր երկրորդ կառքը, և մունետիկներն ամբողջ Եգիպտոսով մեկ հնչեցրին Հովսեփի՝ Եգիպտոսում պաշտոնավարելու լուրը։

«Նոր արքունականը փարավոնի ձեռքից ստանում էր իր բարձր կոչմանը համապատասխան պատվավոր պարգևներ՝ թանկարժեք զգեստ, վզին կախելու թանկագին շղթա և, բացի այդ, ազնվազարմ կին։ Հանդիսավոր շքերթների ժամանակ փոխանորդը զբաղեցնում էր պալատի ոսկեզօծ մարտակառքերից մեկը և ընթանում անմիջապես փարավոնի մարտակառքի ետևից»[252]։

---

249 А. П. Лопухинь, Библейская История Ветхого Завета, Монреаль 1986 г., ст. 81.

250 А. П. Лопухина, Толкования Библия, 1, Петербургъ, 1904–107 г., ст. 225.

251 Ջ Կոսիդովսկի, «Բիբլիական ավանդապատումներ», Երևան 1980 թ., էջ 132:

252 Ջ Կոսիդովսկի, «Բիբլիական ավանդապատումներ», Երևան 1980 թ., էջ 134:

*Այսպիսով, Հովսեփին անցավ փարավոնի վստահած գործին՝ Եգիպտոսի կառավարմանը: Նա, ծանոթ չլինելով կառավարման մեթոդներին, միանգամից բազմեց նման բարձր իշխանական աթոռի և պատվով սկսեց իրականացնել փարավոնի վստահած գործը: Նման ունակությունները կարելի է բացատրել միայն այն առանձնահատուկ շնորհներով, որոնցով նրան Տերն էր օժտել: **«Եվ այնուամենայնիվ, ավելի հավանական է, որ Հովսեփը հեշտությամբ հաղթահարեց իր ծառայական կարգավիճակի անհարմարությունը եգիպտական դասին չպատկանող կառավարողների շրջանում: Վիճակը, որին նա հասավ, հավասարազոր էր վեզիրի կարգավիճակին, դա երկրի՝ ոչ ժառանգական պաշտոններից ամենաբարձրն ու ամենաազդեցիկն էր արքայականից հետո»*** [253]:*

Այն մասին, թե ինչպես Հակոբն իր սերունդներով նույնպես եկավ Եգիպտոս

«Աշխարհն ավելի լավ հասկանալու համար հարկավոր է ավելի
ուշադիր նայել Հայաստանին: Հայաստանի պատմությունը
արմատներով հասնում է այն ժամանակներին,
երբ նույնիսկ եբրայեցիները հավանաբար ման էին
գալիս գազանների մորթիներով: Հայոց պատմության և
մշակույթի մեջ դրված է ամեն ինչ» [254]:

Հովսեփն իր կառավարման առաջին յոթ տարիների ընթացքում, նախապատրաստվելով առաջիկայում սպասվող սովի յոթ տարիներին, ցորենով լիուլի լցրեց Եգիպտոսի բոլոր ամբարները: Նա նաև կառուցեց բազմաթիվ նոր ամբարներ՝ հաստատ համոզում ունենալով, որ ըստ փարավոնի մարգարեական երազի՝ շուտով պիտի սկսվեր սովի յոթնամյա ծանր ժամանակաշրջանը: Եվ իսկապես, յոթ տարի անց սով սկսվեց ոչ միայն Եգիպտոսում, այլև՝ շրջակա երկրներում: Սովը չշրջանցեց նաև Քանանի երկիրը, որտեղ ապրում էին Հովսեփի հայրը և եղբայրները՝ իրենց ոչ մեծաթիվ ընտանիքներով: Լուր տարածվեց, որ միայն Եգիպտոսում հաց կա, այն էլ՝ մեծ քանակությամբ: Եգիպտոսի շրջակա երկրներից մարդիկ գալիս էին հաց գնելու: Եվ քանի որ սովը թակել էր նաև Հակոբի և իր որդիների դուռը, որ պիտի դառնային Իսրայել ազգի նահապետները, նրանք էլ, Հա-

[253] Барбара Мертц, “Древний Египет, храмы, гробницы, иероглифы”, Москва 2007 г., ст. 159.
[254] Борис Оскарович Бурда, журналист и телеведущий, писатель, бард.

կոբից օրհնություն առնելով, նույնպես ճանապարհ ընկան դեպի Եգիպտոս:

Յորենը վաճառվում էր խիստ հսկողության ներքո: Հովսեփին անձամբ էր հետևում այդ գործընթացին: Մի օր էլ նա օտարազգի մարդկանց մեջ տեսավ իր եղբայրներին՝ ցորեն գնելու իրենց հերթին սպասելիս: Նրանք չճանաչեցին Հովսեփին, ում վաղուց մահացած էին համարում: Հովսեփը, որ արդեն առնական տղամարդ էր, այն էլ՝ եգիպտական փառահեղ զգեստներով, բնականաբար, կասկած չհարուցեց իրեն ստրկության դատապարտած եղբայրների մոտ: Նա եղբայրներին ամբաստանեց Եգիպտոսը հետախուզելու մեղադրանքով և նրանց բանտ նետեց: Դա եղբայրների համար հարմար առիթ էր՝ խորհելու և հասկանալու, որ այդ չարիքներն իրենց վրա են գալիս իրենց չարագործության պատճառով: Հովսեփը շուտով նրանց ազատ արձակեց՝ որպես պատանդ պահելով միայն մեկին՝ Շմավոնին, իսկ մյուսներին պատվիրեց մյուս անգամ իրենց հետ բերել նաև ամենակրտսեր եղբորը՝ Բենիամինին, որին Հակոբը թույլ չէր տվել եղբայրների հետ Եգիպտոս գնալ: Բենիամինն ու Հովսեփը նույն մորից էին ծնվել, Հակոբի սիրելի կին, վաղամեռիկ Ռաքելից, ինչի համար էլ Հակոբը Հովսեփին կորցնելուց հետո չէր ուզում վտանգի ենթարկել նաև Բենիամինի կյանքը:

Սակայն սովը դարձյալ սկսեց հիշեցնել իր մասին, քանզի նրանց բերած ցորենը վերջացավ, իսկ եղբայրներն առանց Բենիամինի չէին ցանկանում Եգիպտոս վերադառնալ, քանի որ այդ իշխանավորը հստակ պատվիրել էր առանց Բենիամինի Եգիպտոս չգալ: Հակոբն էլ՝ դժկամությամբ, բայց ստիպված, որդիներին թույլ տվեց Բենիամինին իրենց հետ տանել Եգիպտոս: Հովսեփն իր պալատում ընդունեց եղբայրներին. հատկապես մեծ հուզմունք ապրեց՝ տեսնելով իր հարազատ եղբորը՝ նույն մորից ծնված Բենիամինին: Նրանց առջև սեղան գցել տվեց և առավել պատվեց իր կրտսեր եղբորը՝ դեռևս չբացահայտելով իր ով լինելը:

*Նա իր պաշտոնյաներին էլ հրավիրեց ճաշի, սակայն նրանց համար առանձին սեղան պատրաստեց, քանզի Հովսեփին ենթակա այդ պաշտոնյաները հիքսոսներ չէին, այլ՝ բուն եգիպտացիներ: **«Եգիպտական լեզուն մնաց որպես արձանագրությունների և տեքստերի պաշտոնական լեզու, եգիպտացիները ծառայում էին հիքսոսներին որպես ադմինիստրատորներ»**[255]:*

Ինչպես հայտնի է, հիքսոսները կազմում էին այդ մեծաթիվ զորքի գլխավոր գնդերը և բանակի հրամանատարությունը, իսկ մնացած զորքը համալրված էր հիմնականում քանանացիներով ու սիրիացիներով: Վերջիններս Հայկական լեռնաշխարհի բնիկներից սովորել էին լավ մարտնչել, սակայն տնտեսական, կառավարման և այլ հարցերում հմուտ չէին, և հիքսոսները գերադասում էին պաշտոններ տալ ոչ թե իրենց հետ եկած քա-

[255] Бауэр С.У., История Древнего мира: от истоков цивилизации до падения Рима, Москва 2011 г., ст. 221.

նանացիներին, այլ՝ բուն եգիպտացիներին, որ անհամեմատ ավելի վարժ էին սեփական երկրի կառավարման, տնտեսական և այլ հարցերում: Արդյունքում, համայն Եգիպտոսի կառավարիչ Հովսեփի աշխատող-ենթակաները հիմնականում բուն եգիպտացիներ էին, և նրանք բավականին շատ էին, քանզի ամբողջ Եգիպտոսը կառավարելու համար Հովսեփին անհրաժեշտ էին բազմաթիվ տեղակալներ: Եվ քանի որ եգիպտացիները խորշում էին եկվորներից և հովիվներից, Հովսեփը նրանց առանձին նստեցրեց: ***«Քանի որ եգիպտացիները զզվում էին եբրայեցիներից և նրանց հետ սեղան չէին նստում, ուստի նրանցից յուրաքանչյուրին, ինչպես նաև նրա հետ ճաշող եգիպտացիներից յուրաքանչյուրին ճաշ մատուցեցին առանձին-առանձին»***[256]*:*

Ջենոն Կազիդովսկին էլ է այն կարծիքին, որ եթե Եգիպտոսի իշխանությունը լիներ բնիկ եգիպտացիների ձեռքում, նրանք երբեք թույլ չէին տա, որ իրենց համար խորշելի որևէ այլազգի հովիվ դառնար մեծ իշխանավոր, և երբեք նրան իրենց տուն չէին հրավիրի և առավել ևս նրա հետ նույն սեղանին չէին նստի: ***«Այդ քաղաքական ֆոնին բիբլիական ավանդապատումի կասկածելի էպիզոդները գտնում են իրենց տրամաբանական մեկնաբանությունը: Եվ ամենից առաջ պարզվում է Հովսեփին փարավոնի փոխանորդի պաշտոնում կարգելու հարցը: Դժվար է պատկերացնել, որ սովորական պայմաններում ազնվազարմ եգիպտացիները համաձայնեին բարձր պաշտոն վստահել իրենց համար ատելի ասիացիներից մեկին: Ծննդոց գրքում հրեաների մասին տառացիորեն ասված է. «...Ամեն հովիվ եգիպտացիների համար գարշելի է»»***[257]*:*

Ճաշկերույթից հետո Հովսեփն այնպիսի իրավիճակ ստեղծեց, որպեսզի եղբայրները հասկանան և զղջում ապրեն իրենց գործած մեղքի համար: Այնպես ստացվեց, որ Բենիամինը պետք է մնար Եգիպտոսում՝ որպես ստրուկ, ամբաստանված գողության մեջ: Բայց իրականում ինքը գողություն չէր արել, այլ Հովսեփն էր կարգադրել, որ իր գավաթը դնեն Բենիամինի պարկի մեջ: Եղբայրները մեծ ցավ ապրեցին դրա համար, իսկ Հուդան նույնիսկ առաջարկեց Բենիամինի փոխարեն իրեն վերցնել ստրկության, քանզի իրենց տարեց հայրը՝ Հակոբը չէր դիմանա այդ ծանր հարվածին՝ առավել ևս, որ նրան արդեն դառնացրել էին՝ Հովսեփի մահվան կեղծ լուրը գուժելով:

Տեսնելով նրանց մեծ զղջումը՝ Հովսեփը բացեց գաղտնիքը՝ հայտնելով իր ով լինելը: ***«Հովսեփն ասաց իր եղբայրներին. «Ես Հովսեփն եմ: Իրո՞ք, իմ հայրը դեռ ո՞ղջ է»: Նրա եղբայրները չէին կարողանում նրան պատասխանել, որովհետև տակնուվրա եղան նրա ներկայությունից: Հովսեփն ասաց եղբայրներին. «Մոտեցեք ինձ»: Նրանք մոտ գնացին: Հովսեփն ասաց. «Ես***

---

256 Ծննդ. 43:32

257 Ջ. Կոսիդովսկի, «Բիբլիական ավանդապատումներ», Երևան 1980 թ., էջ 129:

Ձեր եղբայր Հովսեփն եմ, որին դուք վաճառեցիք, որ Եգիպտոս տանեն: Բայց դուք մի՛ տրտմեք, մի՛ նեղվեք, որ ինձ վաճառել եք այստեղ բերելու համար, որովհետև Աստված ձեզ փրկելու համար է ուղարկել ինձ այստեղ ձեզնից առաջ: Հիմա երկրի վրա եղած սովի երկրորդ տարին է, և հինգ տարի ևս կա, որ ո՛չ վար է լինելու, ո՛չ հունձ: Աստված ձեզնից առաջ ինձ է ուղարկել այստեղ, որ երկրի վրա պահպանի ձեր սերնդին և կերակրի ձեզ՝ մնացածներիդ մեծ մասին: Արդ, ոչ թե դուք եք ինձ ուղարկել այստեղ, այլ՝ Աստված: Նա ինձ դարձրեց փարավոնի գործերի վերակացու, նրա ողջ տան տերը և համայն եգիպտացիների երկրի իշխանը»[258]:

Ինչպես տեսնում ենք, զարհուրած եղբայրներին նա հորդորեց չվախենալ, քանզի այդ ամենի մեջ Հովսեփը տեսնում էր Տիրոջ առաջնորդությունը. նա ասաց, որ Տերն է իրեն նման կերպով հասցրել Եգիպտոս, որպեսզի նա էլ իր Հոր՝ Հակոբի ամբողջ ընտանիքը փրկի սովից: Այդպիսով, պետք է կատարվեին նաև այդ դեպքերին հաջորդող պատմական իրողությունները, այսինքն՝ հրեաները պիտի ապրեին հիքսոսյան Եգիպտոսում, ապա՝ դարեր անց, Մովսես մարգարեի առաջնորդությամբ պիտի դուրս գային՝ ընթանալով դեպի Ավետյաց երկիր՝ Պաղեստին:

Այսպես, Հովսեփը, ողջագուրվելով եղբայրների հետ, նրանց պատվիրում է գնալ և իրենց հորը՝ Հակոբին իր ողջ ցեղով, բերել Եգիպտոս: ***«Հովսեփը մարդ ուղարկեց և բերել տվեց Հակոբին՝ իր հորը և ամբողջ ազգատոհմին՝ յոթանասունհինգ հոգի»***[259]:

Հովսեփը մեծ սիրով ու կարոտով ընդունեց իր հորը և եղբայրներին՝ իրենց ընտանիքներով: ***«Գիտնականները մեր օրերում միաձայն եզրահանգում են, որ յոթանասունհինգ իսրայելցիների գաղթը Եգիպտոս համընկնում է հիքսոսների տիրապետության ժամանակաշրջանին»***[260]:

Այն, որ նորաստեղծ Իսրայել ազգն իր նահապետ Հակոբի առաջնորդությամբ մտավ Եգիպտոս հենց հիքսոսների իշխանության օրոք, կասկած չի հարուցում: ***«Հին հրեաների՝ Եգիպտոսում վերաբնակեցվելու առավել հավանական ժամանակը համընկնում է հիքսոսյան նվաճման դարաշրջանին»***[261]:

«Վիճելի է համարվում Հակոբի՝ Եգիպտոս գալու ժամանակը: Հետազոտողների մեծամասնությունն այն կարծիքին է, որ դա պետք է որ տեղի ունեցած լինի հիքսոսների տիրապետության շրջանում»[262]:

«Հիքսոսների հետ հրեաները հայտնվեցին Եգիպտոսում»[263]:

---

258 Ծննդ. 45:3–8

259 Գործք. 7:14:

260 Архиепископ Вениамин (Пушкарь), Священная Библейская история. Санкт Петербург – Владивосток 2008 г., ст. 667.

261 Мария Павловна Згурская, Древний Египет, Харьков 2008 г., ст. 7.

262 Эммануэль Анати, “Палестина до древних евреев”, Москва, 2007 г., ст. 322.

263 Нефедов С. А., История древнего мира, Москва 1996 г., ст. 118.

Ոչ միայն գիտական աշխարհի ներկայացուցիչները, այլև տարբեր կրոնական ուղղությունների ավանդություններն են փաստում, որ հենց հիքսոսների տիրապետության շրջանում եբրայեցիները բնակություն հաստատեցին Նեղոսի դելտայում։ ***«Թե՛ հրեական, թե՛ քրիստոնեական ու մուսուլմանական ավանդությունները հակված են եբրայեցիների՝ եգիպտոսում բնակություն հաստատելը դիտարկել այդ ժամանակաշրջանում։ Կինքելին համարում է, որ Ապոպին է Հովսեփի փարավոնը, իսկ մուսուլմանները համարում են, որ նա Իաննան էր։ Դա հնարավոր է ժամանակագրական առումով»***[264]*։*

Ընդունելով իր հարազատներին՝ Հովսեփն առաջին հերթին իր հորը՝ Հակոբին ներկայացրեց փարավոնին, իսկ հիքսոս փարավոնը, տեսնելով 130-ամյա շնորհազարդ ծերունուն, զրուցեց նրա հետ և նրանից օրհնություն ստացավ։ ***«Հովսեփն իր հայր Հակոբին բերեց ու ներկայացրեց փարավոնին։ Եվ Հակոբն օրհնեց փարավոնին։ Փարավոնը հարցրեց Հակոբին. «Քանի՞ տարեկան ես»։ Հակոբը պատասխանեց փարավոնին. «Պանդխտության մեջ անցկացրած տարիներիս թիվը հարյուրերեսուն է։ Քիչ ու դժվարին են եղել իմ ապրած տարիները և չեն հասել իմ նախնիների՝ պանդխտության մեջ անցկացրած տարիներին»։ Հակոբն օրհնեց փարավոնին և հեռացավ նրա մոտից»***[265]*։*

Բնիկ եգիպտացի փարավոնը երբեք իրեն թույլ չէր տա օրհնություն ընդունել այլակրոն հովվից, բայց հիքսոս փարավոնն ընդունեց օրհնություն Հակոբից, քանզի նրանք, ինչպես ասվեց, նույն հավատքն ունեին։ Այո, հիքսոսները ոչ թե կռապաշտ էին, այլ՝ միաստվածության հետևորդ, ինչպես և՝ եգիպտոս գաղթած նոր-նոր ձևավորվող եբրայեցիների ցեղը, ինչի համար էլ փարավոնը նման բարյացակամություն ցուցաբերեց նրանց հանդեպ։ ***«Իսկապես, Հովսեփի և նրա եղբայրների մասին Աստվածաշնչյան պատմությունը կարող է լինել այդ ժամանակաշրջանի եգիպտական պատմության պատկերը։ Անկասկած, այն բարի եգիպտական միապետը, որ Հովսեփին դարձրեց իր գլխավոր նախարարը, ողջունեց Հակոբին և թույլ տվեց հրեաներին ապրել Գեսեմում (Դելտայում՝ Ավարիսից դեպի արևելք), չէր կարող բնիկ եգիպտացի լինել։ Նա, անկասկած, հիքսոս թագավոր էր»***[266]*։*

Մինչ իր ազգականների՝ եգիպտոս գալը Հովսեփն արդեն որոշել էր նրանց բնակության վայրը. դա հիքսոսների մայրաքաղաք Ավարիսից ոչ հեռու գտնվող Գեսեմն էր՝ շատ բերրի, ոչխարի հոտերին հարմար արոտավայրերով լի։ Հիքսոս փարավոնը Հովսեփի խնդրանքով նրանց տրամադրեց այդ տարածքները և պատվիրեց, որ եթե նրանց մեջ կան կարող

---

264 Тураев Б. А., История Древнего Востока, Ленинград 1935 г., ст. 233.

265 Ծննդ. 47:7–10:

266 Айзек Азимов, “Египтяне”, Москва 2007 г., ст. 80.

մարդիկ, հետևեն նաև իր հոտերին։

Սովի յոթ տարիների ընթացքում Հովսեփը, վաճառելով ցորենը, ամբողջ Եգիպտոսի ունեցվածքը դարձրեց փարավոնի սեփականությունը։ ***«Հովիվների դինաստիան Հովսեփի ժամանակ հասավ իր ծաղկման և հզորացման բարձրագույն աստիճանին»***[267]***։***

Հակոբի սերունդը բարգավաճեց, բազմացավ Եգիպտոսում։ Տասնութ տարի անց, երբ բոլորեց Հակոբի 148 տարին, նա, զգալով, որ արդեն մերձ է մահվանը, իր մոտ կանչեց իր որդիներին. նա մարգարեական օրհնությամբ օրհնեց նրանցից յուրաքանչյուրին՝ խորհրդաբար ներկայացնելով նրանց հետագա ուղիները։ Հակոբը Հովսեփին ստիպեց երդվել, որ իր մարմինը կվերադարձնի Քանանի երկիր և իր նախնիների գերեզմանում կհուղարկավորի. ինչը Հովսեփն ի կատար ածեց։

Թվում էր, թե Հովսեփը լիովին տեր ու տիրական էր Եգիպտոսում, բայց երբ Հակոբը մահացավ, նա խնդրեց բարձրաստիճան հիքսոս իշխանավորներին բարեխոսել փարավոնի առջև, որ նա թույլ տա Հակոբին թաղել Քանանի երկրում՝ իր նախնիների գերեզմանում։ ***«Հովսեփը, ընկնելով իր հոր երեսին, լաց եղավ և համբուրեց նրան։ Հովսեփը հրամայեց իր սպասավորներին զմռսել իր հոր դին. զմռսողները զմռսեցին Իսրայելին։ Լրացան նրա քառասուն օրերը. այդքան էր տևում թաղելու կարգը։ Եգիպտոսը յոթանասուն օր սգաց նրան։ Սգո օրերն անցնելուց հետո Հովսեփը խոսեց փարավոնի իշխանների հետ և ասաց. «Եթե շնորհ եմ գտել ձեր առաջ, ապա դիմե՛ք փարավոնին և ասացե՛ք, որ իմ հայրը երդվեցրել է ինձ ու ասել. «Ահա, ես մեռնում եմ։ Ինձ կթաղես այն շիրիմում, որ ես ինձ համար փորել եմ քանանացիների երկրում»։ Արդ, թո՛ւյլ տուր գնամ, թաղեմ իմ հորն ու վերադառնամ»։ Փարավոնն ասաց. «Գնա՛, թաղի՛ր քո հորը, ինչպես, որ նա երդվեցրել է քեզ»»***[268]***։***

Այսպիսով, հրեաները բարգավաճ կյանքով ապրեցին Եգիպտոսում հայ-հիքսոսների տիրապետության ներքո։ Տարիներ անց Հովսեփն էլ ծերացավ և հասավ մահվան մահճին, նա էլ պատվերներ տվեց իր եղբայրներին և ննջեց խաղաղությամբ։ ***«Ով Եգիպտոսում բնակվեցին Հովսեփն ինքը, իր եղբայրներն ու իր հոր ողջ գերդաստանը։ Հովսեփն ապրեց հարյուրտասը տարի։ Հովսեփը տեսավ Եփրեմի որդիների՝ մինչև երրորդ սերունդը։ Մանասեի որդի Մաքիրի որդիները ծնվեցին Հովսեփի ծնկներին։ Հովսեփը, դիմելով իր եղբայրներին, ասաց. «Ահա ես մեռնում եմ։ Աստված թող այցելի ձեզ, հանի այս երկրից ու տանի այն երկիրը, որ Աստված երդվել է տալ մեր նախնիներին՝ Աբրահամին, Իսահակին ու Հակոբին»։ Հովսեփը երդվեցրեց Իսրայելի որդիներին ու ասաց. «Այն ժամանակ, երբ Աստված ձեզ կայցելի, այստեղից կհանեք նաև իմ ոսկորները***

---

[267] А. П. Лопухинь, Библейская История Ветхого Завета, Монреаль 1986 г., ст. 83.

[268] Ծննդ. 50:1-6:

և կտանեք ձեզ հետ»։ Հովսեփը վախճանվեց հարյուր տասը տարեկան հասակում։ Թաղեցին նրան ու տապանի մեջ դրեցին Եգիպտոսում»[269]։

Հովսեփի մարմինը տարիներ անց դուրս կբերվի Եգիպտոսից, երբ Մովսեսն Իսրայելի ամբողջ ժողովրդին կհանի եգիպտական գերությունից, և նրա մարմինը կթաղվի իր նախնիների կողքին։ Եգիպտոսում Հովսեփի կառավարման, մայրաքաղաք Ավարիսում նստելու, նրա հարազատների՝ Գեսեմում բնակվելու մասին ամփոփիչ գրում է Ջ. Կազիդովսկին։ ***«Մենք այժմ արդեն գիտենք, որ Ավարիսը գտնվում էր Նեղոսի դելտայում, որովհետև այդ քաղաքի ավերակները հիքսոսական բազմաթիվ կնիքների հետ միասին հողի տակից հանվել են ժամանակակից Ծան-էլ-Խագար գյուղի մոտերքում։ Եվ եթե Հովսեփը իշխանավորում էր Ավարիսում, ապա վերանում է ամեն մի տարակուսանք. նրա կյանքի պատմությունը պետք է դնել հիքսոսների տիրապետության դարաշրջանում։ Ավելի ուշ թվականը լիովին բացառվում է, որովհետև նվաճողներին վտարելուց հետո 18-րդ դինաստիայի ազնվազարմ փարավոնները մայրաքաղաքը փոխադրեցին Թեբա։ Ինչպես տեսնում ենք, հիքսոսյան տեսությունը հենվում է միանգամայն կայուն նախադրյալների վրա, դրա համար էլ այժմ այն ընդունում են շատ գիտնականները...***

Վերջում արժե ավելացնել, որ Հովսեփի ավանդազրույցը հստակ պատկերացում է տալիս Եգիպտոսի տեղագրության մասին։ Բերված մանրամասները հնարավորություն են տալիս հեշտությամբ կողմնորոշվել Գեսեմ երկրի տեղի հարցում, և անուղղակի նշաններով որոշել, թե որ մայրաքաղաքում է ապրել Հովսեփը։ Կարճ ասած, այդ նյութը, որից կառուցված է եգիպտական խճանկարը, լիովին դիմացավ ժամանակակից գիտական հետազոտությունների քննությանը»[270]։

---

269 Ծննդ. 50:22–26:

270 Ջ. Կոսիդովսկի, «Բիբլիական ավանդապատումներ», Երևան 1980 թ., էջ 133–136:

Հիքսոսները և հրեաները հավատակիցներ էին

«Թորգոմին՝ Հաբեթի հարազատ թոռանը, որ նրա որդի Գոմերից է, հայերը համարում են իրենց ազգի նախահայրը, ումից էլ ելել է Հայկը, այսինքն՝ նրա հարազատ որդին. ինչի պատճառով էլ իրենց մեծարում են հին գրքերում և վավերագրերում՝ Հայաստանը կոչելով «Թորգոմատուն»: Ահա թե ինչ նախապատմական հնություններից, ինչ Հինկտակարանյան ավանդություններից է իր ծագումը սկսում հայ ժողովուրդը: Այդ ալեհեր հնության համեմատ, մեր Գոստոմիսլովների և Ռյուրիկովների հնությունը թվում է երեխայական կատակ»[271]:

*Հայոց արքա Պարետի ժամանակ Հայկական լեռնաշխարհից իջած հզոր բանակն իր հետ եգիպտոս բերեց ոչ միայն ռազմական, տնտեսական և մշակութային բարձրարժեք նորույթներ, այլև կռապաշտ եգիպտոսի համար նոր հավատալիք՝ միաստվածություն: Այս առումով էլ նրանք բարձր գտնվեցին եգիպտացիներից: Ինչպես արդեն տեղեկացանք, հայհիքսոսներն իրենց լեռնաշխարհում պաշտում էին իրենց հայրերի՝ Նոյի և Հայկի միակ ճշմարիտ Աստծուն՝ երկնքի և երկրի Արարչին, ոչ թե՝ անարգ կուռքերի: Նրանք կործանեցին հեթանոսական տաճարներն ու կուռքերը, որոնց պաշտամունքի մեջ եգիպտացիները թաղված էին մինչև ուղն ու ծուծը. **«Հիքսոսների կողմից եգիպտական կրոնի հետապնդման մասին նշվում է նաև Խատշեպսուտի արձանագրություններում»**[272]:*

*Սակայն հետո հիքսոսները բոլոր առումներով մեղմեցին իրենց վերաբերմունքը, անգամ թույլ տվեցին, որ այդ բազմազգ ժողովուրդներն իրենք ընտրեն իրենց կրոնը: Եգիպտացիք անձայն-աննկատ վերադարձան իրենց կուռքերի պաշտամունքին, իսկ հիքսոսների հետ եկած սիրիա-քանանացիներն էլ, հավանաբար՝ իրենց: **«Հիքսոսներն ունեին իրենց հավատը, բայց հանդուրժում էին նաև եգիպտացիների կրոնը»**[273]:*

Շրջակա ժողովուրդների համար եգիպտացիք հեղինակություն էին, շատ բաներ նրանցից էին սովորում, օրինակ էին վերցնում, որոշ բաներ էլ եգիպտացիք պարզապես պարտադրում էին: Սակայն հիքսոսների դեպքում դերերը փոխվել էին: Նրանք կարիք չունեին որևէ բան վերցնել

---

271 Вестник Европы. Книга V, Том III. Евгенний Марков. Русская Армения. Санкт–Петербург 1901 г., ст. 491.

272 В. И. Авдиев, Военная история Египта, Москва 1948 г., ст. 137.

273 А. П. Лопухинь, Библейская История Ветхого Завета, Монреаль 1986 г., ст. 83.

եգիպտացիներից, քանզի անհամեմատ ավելի զարգացած քաղաքակրթության ներկայացուցիչներ էին և իրենց հետ բերել էին շատ կարևոր նորույթներ: Այնպես որ, եգիպտացիք էին սկսել հիքսոսներից սովորել: ***«Բանն այն է, որ իրենց հավատքի հնությամբ և իրենց պետականությամբ հիքսոսները եգիպտացիներից ետ չէին մնում, նրանց ոչինչ պետք չէր վերցնել իրենցից: Քաղաքային կյանքը նրանց մոտ ավելի վաղ է սկսվել, քան Եգիպտոսում»***[274]*:*

Ինչ վերաբերում է հավատքին, ապա հիքսոսները եգիպտական կուռքերի կարիքը չունեին, մինչդեռ եգիպտացիներին անհրաժեշտ էր հայկական աստվածպաշտությունը: ***«Սակայն հիքսոսներն, ի տարբերություն նուբիացիների, ունեին մի առանձնահատկություն. նրանք ոչ մի կերպ չընդունեցին եգիպտական հավատը»*** [275]*:*

Այն, որ հիքսոսներն արհամարհում էին եգիպտացիների կրոնը, ավելի էր խորացնում վերջինների ատելությունը, առավել ևս, որ նրանք սովոր էին իրենցը փաթաթել ուրիշների վզին: Կռապաշտության մեջ խրված եգիպտացիների համար այլ կրոնի, այն էլ միաստվածության մասին դժվար էր նույնիսկ մտածել, երբ իրենք ունեին բազմազան կուռքերի «ճոխ» պանթեոն: Նրանք հիքսոսներին համարում էին անաստվածներ, քանզի պաշտում էին մեկ Աստծո՝ այն էլ այնպիսի Աստծո, որ ո՛չ կռապատկեր ուներ, ո՛չ քանդակ և միայն հավատով է, որ պետք է ընդունվեր նրա լինելությունը: ***«Եգիպտացիները զայրանում էին, որ հիքսոսները պահպանել են իրենց ասիական սովորությունները և ուշադրություն չեն դարձրել եգիպտական աստվածների վրա: Եգիպտացիները, հազարավոր տարիներ ապրելով իրենց օրենքներով և օտարերկրացիների մասին էապես ոչինչ չիմանալով, չկարողացան հասկանալ և համակերպվել այն մտքի հետ, որ հիքսոսներն այլ կերպ էին ապրում»***[276]*:*

Իհարկե, դա չի նշանակում, որ եգիպտացիներից և մյուս հպատակ ազգերից հայ-հիքսոսների աստվածպաշտության հետևորդներ չեղան: Հայոց Հայկ-Մելքիսեդեկ նահապետից միառժամանակ անց, նման առաքելությամբ տարբեր երկրներ իջած նրա ժառանգներն իրենց հետքը թողեցին Հնդկաստանի, Միջագետքյան երկրների, Սիրիա-Պաղեստինի ժողովուրդների, Եգիպտոսի և այլ երկրների վրա: Այս ազդեցությունը ոչ միայն ռազմա-տնտեսական և մշակութային էր, այլև՝ հոգևոր. շատերը լսեցին և հավատացին Արարիչ՝ Ար Աստծուն, Ով հայոց մոտ ճանաչվում էր ոչ միայն Ար անունով, այլև՝ «Է», այսինքն՝ «էություն», իսկ այլ ազգերի մոտ «Էնկի», «Էլի», «Էլոհիմ», «Յահվե» և այլ անվանումներով: ***«Օտարերկրացիների ներխուժումն այդքան կայացած ու հաստուն հասարակություն, ինչպես եգիպ-***

---

274 Деопик Дега Витальевич, История Древнего Востока, Москва 2016 г., ст. 162.

275 Деопик Дега Витальевич, История Древнего Востока, Москва 2016 г., ст. 162.

276 Айзек Азимов, “Египтяне”, Москва 2007 г., ст. 79–80.

տականն էր, միշտ կրում է իր մեջ ինչ-որ անտրամաբանականություն և անբնականություն: Էտրուսկների մասին գրքի հեղինակը՝ Զ. Մայհանին, նշել է, «Ես մտածում եմ այդ երևույթի մասին՝ ուսումնասիրելով հիքսոսների ներխուժման խնդիրը Եգիպտոս մ.թ.ա. XVIII դարում: Այդ օտարերկրացի հաղթողները փարավոնների կայսրություն բերեցին պատկերացում բրոնզի, անիվի, կառքի, ձիու և այլ բաների մասին, ինչպես նաև՝ պարզունակ պատկերացում միաստվածության մասին»[277]*: Հայաստանի հնագույն պատմության անտեսումը, բնականաբար, պետք է բերեր նման «անտրամաբանականության» և «անբնականության»: Ի՞նչ առնչություն կարող են ունենալ բարբարոս, քոչվոր ցեղերն այն զարմանահրաշ նորույթների հետ, որ իրենց հետ Եգիպտոս բերեցին հայ-հիքսոսները:*

Մեր նյութին վերադառնալով՝ ասենք, որ, ինչպես Հայկ Նահապետի այդ հնագույն շրջանում, նաև՝ ավելի ուշ՝ հիքսոսների ժամանակ, շատ այլ ազգեր դարձան աստվածաճանաչ հենց հայերի շնորհիվ: Դա մենք տեսնում ենք նաև բազմաչարչար Հոբ Երանելու և տարբեր երկրներից եկած ու նրա շուրջ հավաքված աստվածապաշտ թագավորների օրինակով. նրանք բոլորն էլ խորը հավատք ունեին և պաշտում էին նույն Աստծուն, Ում պաշտում էին Հայկական լեռնաշխարհում: ***«1898թ. Սաուսը հայտարարություն արեց, որ հայտնաբերել է Խամմուրապիի շրջանի երեք տարբեր տախտակներ, որոնք այժմ պահպանվում են Բրիտանական թանգարանում. դրանց վրա գրված էր. «Յահվեն Աստված է»: Առաջատար մարդաբանները վերջերս հայտարարեցին, որ բոլոր հասարակ ժողովրդների մեջ եղել է հավատք մեկ ամենակարող Աստծո հանդեպ»***[278]*:*

Այսպիսով, Հովսեփը եկավ ոչ թե՝ կռապաշտության հետևորդ եգիպտացիների, այլ այդ ժամանակ Եգիպտոսի տիրակալ իրական աստվածապաշտ հիքսոսների մոտ: Իհարկե, արդեն գիտենք, որ նա մեծագույն պատվի արժանացավ, քանի որ հիքսոս փարավոնը նրանում տեսավ այնպիսի շնորհներ, որ կարող էր տալ միայն իր պաշտած Աստվածը, ոչ թե՝ Եգիպտոսի կուռքերը: Եթե այդ ժամանակ կռապաշտության հետևորդները՝ եգիպտացիները, տիրեին Եգիպտոսում, Հովսեփը, հավանաբար, երբեք բանտից դուրս չէր գա, ուր մնաց կանգներ փարավոնի առջև և նման մեծ պատվի արժանանար:

Ոմանք, արտառոց համարելով այն, որ հիքսոս փարավոնը Հովսեփին նման բարձր պաշտոն վստահեց, այն կարծիքն են հայտնում, թե հիքսոսները նույն սեմական ցեղախմբին են պատկանել, ինչ՝ Հովսեփը, դրա համար էլ, կարողացել են լեզու գտնել: Սակայն, այդ ժամանակ, սեմական և ոչ մի ցեղ զարգացման այդ աստիճանի չէր հասել, որ ուժ ու

---

277 Владимир Борисович Миронов, Древний Восток и Азия, Москва 2006 г., ст. 405.

278 Доктор Генри Г. Геллей, 19-й век, "Краткий Библейский Толкователь", Торонто, Канада 1989 г., ст. 70.

հնարավորություն ունենար նման մասշտաբի ու հզորության արշավանք իրականացնել: Ըստ Տուրաևի, Ասիայի այդ շրջանի պատմությունը լիովին պարզաբանված չէ, հետևաբար, մնում է միայն ենթադրություններ անել: ***«Անկասկած է, որ հիքսոսների մեջ եղել են բազմաթիվ սեմիտներ... Սակայն սեմական ո՞ր ազգն էր այն ժամանակ այնքան հզոր, որ կարողանար նվաճել Եգիպտոսը և պահեր այն: ...Այդ ժամանակվա Ասիայի պատմությանը մեր անբավարար ծանոթությունը մեզ առայժմ թույլ չի տալիս ավելի առաջ գնալ պարզ ենթադրություններում»***[279]:

Տուրաևի խոսքերն Ասիայի պատմությանն «անբավարար ծանոթության» վերաբերյալ տեղին են, քանզի այնպիսի մի զարմանահրաշ քաղաքակրթության անտեսումը, ինչպիսին Քուռարաքսյանն է, կարող է շատ թյուրիմացությունների պատճառ դառնալ և արդեն դարձել է:

Հետազոտողներից շատերն են համոզված, որ հիքսոսների սեմական ծագումն անհավանական է, քանզի հակասում է պատմական փաստերին: ***«Եթե Իսրայելի զավակները ժամանել են Եգիպտոս սեմիտների կառավարման օրոք, ապա պե՞տք է արդյոք զարմանալ, որ նրանք այնտեղ զգում էին իրենց, ինչպես տանը՝ զբաղեցնելով կարևոր պաշտոններ թագավորական պալատում: Սակայն ավելի սևեռուն հայացք գցելով՝ տեսնում ենք, որ դա այնքան էլ համահունչ չէ աստվածաշնչյան դեպքերի նկարագրությունների հետ»***[280]:

Եգիպտոսում Հովսեփին և նրա ազգակիցներին ընդունեցին ամենևին էլ ոչ այն պատճառով, որ հիքսոսներն ու հրեաները նույն ազգատոհմին են պատկանել. հրեաները սեմական ծագում ունեին, իսկ հայ-հիքսոսները հնդեվրոպական: Նրանց մոտ ընդհանուր է եղել կրոնը՝ հավատն առ ամենակարող Արարիչը: Այսինքն՝ թե՛ փարավոնը և թե՛ պալատականները հիքսոս-աստվածապաշտներ էին, որ Հովսեփի մեջ տեսան իրենց հավատակցին: Դա էր պատճառը, որ փարավոնը նրան վստահեց ողջ Եգիպտոսի կառավարումը՝ համոզված լինելով, որ դա՝ ըստ Տիրոջ կամքի է: Երբ փարավոնը լսեց Հովսեփից իր երազի մեկնությունը, ոչ միայն հավատաց, այլև հետևեց նրա խորհրդին: Ավելին, նա բոլորի առջև վկայեց, որ Հովսեփի միջոցով իրենց հայրերի՝ Հայկ-Մելքիսեդեկի, Արամ Մեծի, Արա Գեղեցիկի Աստվածն է, որ խոսում է իրենց հետ: ***«Փարավոնն ասաց իր բոլոր պաշտոնյաներին. «Մի՞թե կգտնենք այսպիսի մի այլ մարդու, որ իր անձի մեջ կրի Աստծու Հոգին»»***[281]:

Եթե փարավոնը կռապաշտ եգիպտացի լիներ, նա չէր ասի «Աստծո Հոգին», այլ կասեր աստվածների կամ կուռքերի ոգիները, ինչից էլ պետք է եզրակացնել, որ հիքսոս փարավոնը միաստվածության հետևորդ էր:

---

279 Тураев Б. А., История Древнего Востока, Ленинград 1935 г., ст. 232.

280 Мария Павловна Згурская, Древний Египет, Харьков 2008 г., ст. 355.

281 Ծննդ. 41:38–39:

*Այն, որ հիքսոս փարավոնը պաշտում էր Աստծուն, ոչ թե՝ հեթանոսական կուռքերին, ակնհայտ է նաև նրանից, որ նա չհարցրեց Հովսեփին, թե եգիպտական ո՛ր կուռքն է նրան հայտնել երազների մեկնությունը, այլ ասաց. **«Քանի որ Աստված քեզ հայտնեց այդ ամենը, ուրեմն քեզնից ավելի իմաստուն ու խելացի մարդ չկա»**[282]:*

*Եթե փարավոնն անտեղյակ լիներ Աստծո մասին, ապա Հովսեփը նման հարցադրմանը կպատասխաներ այնպես, ինչպես ժամանակին դա արեց Դանիելը, երբ մեկնեց Բաբելոնի կռապաշտ արքա Նաբուգոդոնոսորի երազը և մեկնությունը պատմեց նրան. **«Թագավորը պատասխանեց Դանիելին, որի անունն էր Բաղդասար, և ասաց. «Կարո՞ղ ես պատմել ինձ իմ տեսած երազն ու հայտնել նրա մեկնությունը»: Դանիելը պատասխանեց թագավորին և ասաց. «Այդ գաղտնիքը, որի մասին հարցնում է արքան, իմաստունները, մոգերը, հմայողներն ու բախտագուշակները արքային պատմել չեն կարող, այլ երկնքում կա Աստված, որ հայտնում է գաղտնիքները: Նա՛ ցույց տվեց Նաբուգոդոնոսոր արքային, թէ ինչ պիտի լինի գալիք օրերում»»**[283]:*

Բաբելոնի կուռքերի հետևորդ իմաստուններին արքան հրամայեց սրի քաշել, քանզի նրանց կուռքերը, որոնց մասին լավ գիտեր և երկրպագում էր նաև Նաբուգոդոնոսորը, բնականաբար, չէին կարող հայտնել այն, ինչ արքան էր ցանկանում լսել: Դանիելը Նաբուգոդոնոսորին պատմեց ճշմարիտ Աստծո մասին, ինչից երևում է, որ Բաբելոնի արքան անտեղյակ էր, որ կա երկինք և երկիր արարող Աստված: Իսկ ահա հիքսոս Փարավոնի պահվածքից միանգամայն հստակ երևում է, որ նա Հովսեփին հանդիպելուց առաջ էլ ճանաչել և երկրպագել է Նրան՝ միակ և ճշմարիտ Արարչին:

*Հետաքրքիր է, որ երբ եկան Հովսեփի եղբայրները, Հովսեփը նրանց ներկայացավ՝ որպես բարեպաշտ հիքսոս, այլ ոչ՝ կռապաշտ եգիպտացի՝ հասկացնելով նրանց, որ ինքն էլ նույն հավատն ունի, ինչ որ նրանք. **«Ես ինքս էլ աստվածավախ մարդ եմ»**[284], այսինքն՝ **«Ես ինքս էլ»** ասելով՝ նկատի ունի, որ ինքը նրանց նման է. «Ինչպես որ դուք եք, այդպես էլ ես եմ»:*

Այն, որ հիքսոսներն ու հրեաները նույն կրոնն են ունեցել, երևում է նրանից, որ, ինչպես նշեցինք, հիքսոս արքան Հակոբի օրհնությունն ընդունեց: Կռապաշտ եգիպտացի փարավոնը Հակոբին թույլ չէր տա նույնիսկ պալատ մտնել, ուր մնաց նրա օրհնությունն ընդուներ:

Նկատենք նաև, որ հիքսոս փարավոնը, տեսնելով Աստծո շնորհներով զարդարված ծերունազարդ սուրբ նահապետին, ուրախությամբ ընդունեց նրա օրհնությունն այն Աստծո անունով, ում պաշտում էին երկուսն էլ. բայց փարավոնը դրա համար նրան տասանորդ չտվեց, քանզի Հակոբը,

---

282 Ծննդ. 41:39:

283 Դանիել 2:26–28:

284 Ծննդ. 42:18:

չնայած որ օրհնյալ և հաճելի անձ էր Աստծո առջև, սակայն ո՛չ քահանա էր, ո՛չ թագավոր, ինչպես մեր Հայկ նահապետն էր, ով օրհնելով Աբրահամին՝ Հակոբի պապին՝ նրանից տասանորդ ընդունեց։

Սեթ

Կարծիք կա, որ հիքսոսների ժամանակ եղել է Սեթ կամ Սուտեք անվամբ ինչ-որ աստվածության պաշտամունք. սակայն հայտնի չէ՝ ինչպիսին էր նա։

Եգիպտոսի հեթանոսական պանթեոնում, իսկապես, հանդիպում ենք նման անվան «Ռա, Իսիդա, Գոր, Օսիրիս, Նուտ, Խոռ, Լուվր, Պտախ, Տոտ, Ամոն, Անուբիս և Սեթ»։ Տեսնում ենք, որ Սեթը բուն եգիպտական վաղ շրջանի կուռքի անվանում է, և դրսից չէ, որ ներմուծվել է Եգիպտոս, այն էլ՝ ավելի ուշ շրջանում հիքսոսների միջոցով։

Սակայն, մենք գիտենք, որ հիքսոսների բանակում քանանացիներ ևս կային, և հնարավոր է, որ Սեթի պաշտանմունքի հետ նրանք են առնչվել՝ հավանաբար, եգիպտացիներին ընդօրինակելով։

Կարող է հարց ծագել. ինչու՞ եգիպտական կուռքերի և Սեթի մասին արձանագրություններ և հիշողություններ մնացել են, իսկ հիքսոսների միաստվածության մասին՝ շատ կցկտուր։ Դրա պատճառը նախ և առաջ այն է, որ եգիպտացիներն ատում էին հիքսոսներին, ինչպես նաև՝ նրանց կողմից հովանավորության արժանացած հրեաներին, ինչից ելնելով՝ ջանացել են ջնջել, վերացնել նրանց մասին ամեն հիշատակում։

Երկրորդ, պետք է հաշվի առնել նաև, որ եգիպտական չաստվածների, այդ թվում նաև Սեթի համար բազմաթիվ արձաններ էին կանգնեցվել. դրանք նաև պատկերվել են տաճարների պատերին, ինչի պատճառով էլ ավելի շատ տեղեկություն է պահպանվել նրանց մասին։ Սակայն պաշտամունքի նման կերպը հարիր չէր հիքսոսների և հրեաների պաշտած Տեր Աստծո համար, քանզի Նրա համար միայն քարե զոհասեղաններ էին կառուցում, և դրանց վրա զոհեր մատուցում։ Իսկ երբ բնիկ եգիպտացիք ապստամբեցին, այդ տաճարները և զոհասեղանները ավիրեցին, և հիքսոսների ու նրանց պաշտամունքի հետքերը հնարավորինս վերացրին Եգիպտոսից։ ***«Չի կարելի, սակայն, մոռանալ մի շատ կարևոր բան։ Հիքսոսներն իրենց նկատմամբ այնպիսի ատելություն էին առաջացրել, որ եգիպտացիները ոչնչացնում էին այն ամենը, ինչ հիշեցնում էր նրանց իշխանության ժամանակաշրջանը։ Նույնիսկ տարեգիրները լռությամբ են անցնում հիքսոսական օկուպացիայի ժամանակաշրջանի՝ եգիպտական տերության տառապանքների ու ստորացումների ժամանակաշրջանի***

վրայով: Պատմական տարեգրությունները հանկարծ ընդհատվում են մ. թ. ա. 1730 թվականին և վերսկսվում միայն մ. թ. ա. 1580 թվականին: Պատմության այդ հարյուրհիսունամյա ժամանակաշրջանը ջնջելու զոհերից մեկն է եղել նաև Հովսեփը, որը հիքսոսական քաղաքականության կույր կատարողն էր և եգիպտացիների մոտ ժողովրդականություն չվայելած տնտեսական խոր հեղաշրջումների պատասխանատուն: Նրա գործողությունները հետագայում ծանր կերպով անդրադարձան իսրայելացիների վրա, որ Հովսեփի մահից հետո դեռ երկար մնացին Գեսեմ երկրում»[285]***:***

Իհարկե, չի բացառվում, որ ավելի ուշ՝ արդեն վերջին շրջանի հիքսոս թագավորներից ոմանք էլ հետևած լինեն Սեթի պաշտամունքին, ինչի պատճառով էլ Տերը լքեց նրանց և եգիպտացիները հզորանալով վտարեցին հիքսոսներին իրենց երկրից:

Արեգ քաղաքի մասին

*Ինչպես տեսանք, հիքսոս փարավոնը հոգաց նաև Հովսեփի անձնական կյանքի մասին և նրան կնության տվեց Արեգ քաղաքի քուրմ Պետափրեսի դստերը՝ Ասանեթին: **«Եվ փարավոնը Հովսեփի անունը դրեց Փսոմփթոմբանե, իսկ Արեգ քաղաքի քուրմ Պետափրեսի դուստր Ասանեթին նրան տվեց կնության»***[286]***:***

Հիքսոսները, վտարելով բուն եգիպտացիներին բարձր պաշտոններից, իրենք սկսեցին կառավարել երկիրը՝ գրեթե անփոփոխ թողնելով եգիպտական կառավարման կերպերը. այնպես որ նույնիսկ հիքսոս թագավորն անվանվեց փարավոն: Նմանապես և, Եգիպտոսի կռապաշտ քուրմերը վտարվեցին այն բոլոր տարածքներից, որոնք զբաղեցնում էին, ինչպես նաև՝ Արեգ քաղաքից, որը, հավանաբար, նվիրված է եղել Արևի կուռք Ամոն-Ռային, իսկ նրանց տեղը պետք է որ գրավեին հիքսոսների հետ եկած միաստվածության հետևորդ հոգևորականները:

Ինչպես հիքսոս արքան Եգիպտոսում ճանաչվեց փարավոն տիտղոսով, այդպես և միաստվածության հետևորդ հոգևորականները, այսինքն՝ քահանաները, պատմության մեջ մնացին քուրմ անվամբ:

Ադամից եկող քահանա և թագավոր կարգավիճակը շարունակվեց՝ հասնելով մինչև Նոյ և ապա՝ Հայկ-Մելքիսեդեկ նահապետը, որտեղ էլ ավարտ գտավ, այսինքն՝ այլևս ոչ ոքի չփոխանցվեց: Ինչպես ասվեց առաջին հատորում, «Մելքիսեդեկի կարգի քահանա» նշանակում է չփոխանցվող քահանայություն: Մեր Տերը՝ Հիսուս Քրիստոսը, դարձավ քահանա

[285] Ջ. Կոսիդովսկի, «Բիբլիական ավանդապատումներ», Երևան 1980 թ., էջ 136:

[286] Ծննդ. 41:45:

Մելքիսեդեկի կարգի, այսինքն՝ հավիտենական քահանա: Հայաստանում Հայկից հետո արքաներն այլևս նաև քահանաներ չէին, այլ միայն թագավորներ էին: Իսկ քահանայապետներն էլ, բնականաբար, արդեն նաև արքաներ չէին, այլ միայն հոգևորականներ: Ուրեմն, ըստ այդ նոր կարգի՝ թե՛ Հայաստանում, թե՛ Սաղեմում և թե՛ Ավարիսում կային առանձին թագավորներ և քահանաներ, բայց ոչ՝ թագավոր և քահանա միաժամանակ:

Վտարելով և ճնշելով եգիպտական քրմերին՝ հիքսոս արքաներն իրենց հետ եկած հոգևորականներին մեծ արտոնություններ տվեցին: ***«Այսպիսով, երկիրը դարձավ փարավոնի սեփականությունը, և նա Եգիպտոսի մի ծայրից մինչև մյուս ծայրը բնակվող ժողովրդին դարձրեց իր ստրուկը. մնացին միայն քրմերի կալվածքները, որովհետև Հովսեփը դրանք չգնեց, քանի որ փարավոնը քրմերին առատորեն պարգևատրում էր, և նրանք սնվում էին այդ պարգևներով»***[287]*:*

Պետք է նաև նկատի ունենալ այն, որ Աստծուն պաշտող Հովսեփին պատշաճ չէր կռապաշտ կին ունենալ: Հիքսոս փարավոնն ինքն էլ չէր հանդուրժի կռապաշտ քրմապետի աղջկա ամուսնությունը Հովսեփի հետ: Բուն եգիպտացիներն էլ խորշում էին հրեաներից, սակայն Ասանեթի հայրը նույն դավանանքն ուներ, ինչ՝ Հովսեփը, դրա համար էլ չխորշեց տալ իր դստերը նրան կնության: Եվ ուրեմն, հիքսոսուհի էր Ասանեթը, ում հետ էլ ամուսնացավ Հովսեփը. և նրանցից ծնվեցին Մանասեն ու Եփրեմը: Երկու ազգերի՝ հայերի և հրեաների շառավղից էր նաև Հեսու Նավեն՝ իսրայելացիներին Սինայի անապատից Ավետյաց երկիր առաջնորդողը:

Մեսիական երկրորդ առաքելությունը Հայաստանից

«Հայաստանում ամեն քար կենսագրություն ունի, ոգեղեն առնչություն, Հայաստանի ճամփաներով անցել է ինքը՝ մեր պատմությունը: Հայաստանը պարզապես հրաշքների երկիր է... Հայաստանի ուժն ու հմայքը ինքնին իր ապրող ժողովուրդն է, նրա լեզուն, որի միջոցով ժողովուրդը գնում է դեպի հոգևոր անմահություն»[288]*:*

Անցնենք բացահայտմանն այն առեղծվածի, թե ինչու՞ հենց Եգիպտոսը հիքսոսների համար դարձավ հիմնական թիրախ, ի՞նչ նպատակ էին նրանք հետապնդում, երբ թողնելով իրենց հայրենիքը՝ Հայկական լեռ-

[287] Ծննդ. 47:21–22:

[288] Միխայել Դուդին, «Գարուն» ամսագիր, թիվ 12, Երևան 1982 թ., էջ 14–15:

նաշխարհը և իջնելով Եգիպտոս՝ գրավեցին այն և գրեթե երկու դար պահեցին իրենց իշխանության տակ: Այս հարցը մինչ օրս էլ հետաքրքրում է շատերին: ***«Ովքե՞ր պետք է որ լինեն այդ հիքսոսները... Ո՞ր տարածքներում են զարգացրել իրենց ռազմական ուժը, և ինչու՞ այն չուղղեցին ավելի թույլ հարևանների դեմ, այլ՝ հենց Եգիպտոսի»***[289]*:*

Լայն գիտական շրջանակներում մինչ օրս պարզ չէ հիքսոսների ազգային պատկանելությունը, առեղծված է մնում նաև պատճառը, թե ինչու հիքսոսները Եգիպտոսն ընտրեցին՝ որպես ասպատակության թիրախ: Այս հարցը մինչ օրս մութ է մնացել, քանզի գիտական աշխարհը հաշվի չի առել, կարելի է ասել, լիովին անտեսել է ամենակարևոր շարժառիթները. նախ, տվյալ հարցի հոգևոր կողմը, ապա նաև՝ հայոց պատմության առանձնահատկությունները:

Այս աշխատությունում, փառք Աստծո, հնարավոր եղավ պարզել, թե ովքեր են եղել հիքսոսները, այսինքն՝ ինչ ազգի են պատկանել: Այժմ էլ, հուսալով Բարձրյալի ողորմությանը, ջանանք պարզել, թե հանուն ինչի էին նրանք նախաձեռնել այդ ասպատակությունը դեպի Եգիպտոս՝ թիրախ ունենալով հատկապես Նեղոսի հովիտը: ***«Գիտությանը հայտնի չէ, թե երբ է դա տեղի ունեցել, ոչ էլ՝ թե ովքեր էին հիքսոսները, ինչպես անհայտ է այն պատճառը, որը մղել է այդ քոչվոր ցեղին անտեսել ինքնապահպանման բնազդը և, շրջանցելով բոլոր Մերձարևելյան երկրները և ժողովուրդներին՝ հարձակվել հզոր Եգիպտոսի վրա»***[290]*:*

Այս առեղծվածը պարզելու համար նախ հարկ է ևս մեկ անգամ հիշել հայ ժողովրդի անցած ուղին: Ինչպես արդեն ասվել է, հայ ազգն ի սկզբանե եղել է Աստծո ժողովուրդ և որպես ընտրյալ ազգ՝ բնակվել է Աստվածընտրյալ երկրում, որտեղ ստեղծվել էր մարդ արարածը. այնտեղ էր նաև Քրիստոսի եկեղեցու նախատիպ Եդեմական Դրախտը: Դա այն երկիրն է, որտեղ տեղի ունեցան մարդկության հետագա ուղին կողմնորոշող դեպքեր: Այդ նույն հայոց երկրում էր, որ Նոյ Նահապետը կառուցեց փրկության տապանը, ինչը նույնպես ընդունված է համարել եկեղեցու խորհրդանիշ, որը ջրհեղեղից հետո հանգրվանեց Արարատ լեռան վրա: Եվ ուրեմն, քանի որ Հայկական լեռնաշխարհը համայն մարդկության բնօրրանն է, ուրեմն ի սկզբանե այն եղել է մարդկության թե հոգևոր, և թե մարմնավոր նախահայրենիքը. ***«Հայաստանը գերազանցապես ընդհանուրի հայրենիքն է, մեր մասնավոր հայրենիքի նախահայրենիքը: Ֆրանսիացիները, անգլիացիները, գերմանացիները և իտալացիները բոլորս դեռ երազում ենք այնտեղ՝ Վերին Ասիայում տեսնել այն նվիրական վայրը, որը եղավ մեր նախնիների օրրանը»***[291]*:*

---

289 Мария Павловна Згурская, Древний Египет, Харьков 2008 г., ст. 7–8.

290 Валентина Новомирова, Гиксосы, журнал «Вера и жизнь», Киев 1/1998 г., ст. 25.

291 Էլիզէ Ռեկլիի, տես Սև Գիրք, Երևան 2011 թ., էջ 178:

Այստեղ Հայոց մեծ նահապետ Հայկն իր հզոր աղեղից արձակած նետով գետնին գամեց Աստծո դեմ հպարտացած Բել-Նեբրովթին, որ հիշվում է որպես առաջին աստվածամարտ նետ. մինչդեռ Բելին և նրա ժողովրդին ջախջախող հայոց մեծ նահապետը նկատվում է նախակերպարը մեր Տեր Հիսուս Քրիստոսի, Ով իր երկրորդ Գալստյամբ պիտի սատկեցնի արդեն բուն նեռին և նրա հպատակներին:

Մեր երանելի աստվածընտրյալ նահապետ Հայկը, Նախախնամության կամոք, գլխավորելով իր հպատակ-ժառանգների մի մասին, իջավ հայոց լեռնաշխարհից դեպի Պաղեստին և հաստատվեց այնտեղ: Դա ոչ թե Հայկի մտահղացումն էր, այլ երկնառաք պատվեր էր, հատուկ առաքելություն:

Այստեղ վերհիշենք, որ Հայկ նահապետն իր ժառանգների՝ հայերի հետ արդեն իսկ այդ հեռավոր ժամանակաշրջանում ճանապարհ էր հարթում մեր Տեր Հիսուս Քրիստոսի՝ աշխարհ գալու համար. Ով պետք է գար այդ դեպքերից մոտ 2000 տարի հետո: Դրա համար էլ մեծ նահապետ Հայկը կառուցեց Սաղեմը, որ ներկայիս Երուսաղեմն է, քանզի մեսիական բնույթի շատ մարգարեություններ հենց այդ սուրբ քաղաքում պիտի իրագործվեին: Նա նաև Աստծո այր Աբրահամ նահապետին տվեց սուրբ հաղորդության խորհրդանիշ հացն ու գինին՝ ցույց տալով, որ Աբրահամի շառավղից էր, որ պիտի գար աշխարհի Փրկիչը: Նաև, այդ քաղաքի՝ Սաղեմի հետ են առնչվում մարգարեները, որ պատմում էին Տիրոջ գալստյան մասին Նրա գալուստից դեռ շատ առաջ, և առաքյալները, որ արդեն ավետում էին Նրա հարության հրաշալի լուրը:

Եվ այս պարագայում էլ, մեր նահապետ Հայկը, ով Քանանի երկրում հանդես եկավ Մելքիսեդեկ անվամբ, արդեն երկրորդ անգամ Քրիստոսի՝ Աստծո Որդու նախատիպը լինելու մեծագույն պատվին արժանացավ:

*Այդ դեպքերից միաւոժամանակ անց Հայաստանից սկիզբ առած մի այլ առաքելություն՝ հիքսոսների մարտարշավը ևս, ինչպես կտեսնենք, մեսիական բնույթ էր կրում. այսինքն՝ նորից պետք է փրկչական ուղին հարթվեր, ինչպես հետագայում դա վերջնականորեն արեց սուրբ Հովհաննես Կարապետը, ով ասում էր. **«Անապատում կանչողի ձայնն է. պատրաստեցե՛ք Տիրոջ ճանապարհը, հարթեցե՛ք նրա շավիղները: Բոլոր ձորերը թող լցվեն, բոլոր լեռներն ու բլուրները խոնարհվեն, դժվարին ճանապարհները հեշտ թող դառնան, առապարները՝ հարթ ճանապարհներ. և ամեն մարդ կտեսնի Աստծու փրկությունը»**[292]:*

Անցնենք արդեն այս երկրորդ արշավի բուն խորհրդին և տեսնենք, թե ինչու հիքսոս-հայերը մտան Եգիպտոս, և ինչու սիրով և պատրաստակամությամբ ընդունեցին Հովսեփին և Հակոբին, այսինքն՝ որն էր նրանց առաքելության շարժառիթը: Իսկ առաքելության նպատակը մեկը չէր: Նախ,

[292] Ղուկ. 3:4–6:

եգիպտացիներն այդ շրջանում թաղվել էին կռապաշտության և դրանից բխող անօրենությունների ու պղծությունների մեջ՝ իրեն աստված հռչակած փարավոնի գլխավորությամբ, ինչի համար էլ պատժվեցին: Իսկ այդ պատիժը իրականացրին հայերը, ինչպես որ իրեն աստված հռչակած Աքքադի արքա Նարամ-Սինի դեպքում նրանք պատժեցին աքքադացիներին:

*Ինչպես կուտիների հարձակումն աքքադացիներն ընդունեցին՝ որպես Աստծո պատիժ, այդպես և եգիպտացիները համարեցին, որ հիքսոսների հարձակումն Աստծո պատիժն էր: **«Պատմաբան Հովսեփոս Փլավիոսը, հղում անելով Մանեթոնին, գրում է, որ ասպատակությունը եղել է Աստծո պատիժը՝ առաքված եգիպտոսին: Հիքսոսները եկան արևելքից և համարյա անարգել գրավեցին եգիպտական հողերը: Նրանք հրդեհեցին քաղաքները, ավերեցին տաճարները, սպանեցին կամ գերեվարեցին եգիպտացիներին՝ չխնայելով ոչ կանանց, ոչ երեխաներին»**[293]:*

Հետագայում կտեսնենք, որ Աստծո կամքով նման առաքելություններ Հայկական լեռնաշխարհից էլի են իրականացվել. և դրանց մասին վկայում է նաև Աստվածաշունչ մատյանը[294]:

*Առաքելության երկրորդ նպատակն ամենակարևորն է: Այն կապված է Հովսեփի և նրա հարազատների, այսինքն՝ Աբրահամի սերունդների՝ հիքսոսյան եգիպտոս գալու հետ: Ինչպես գրված է Սուրբ Գրքում, առանց Տիրոջ կամքի՝ ծառից տերև անգամ չի պոկվում և գետին չի ընկնում: Առավել ևս, Հովսեփի հայտնվելը եգիպտոսում, հատկապես՝ հիքսոսների կառավարման շրջանում, չէր կարող պատահականություն լինել: **«Սրանց թագավորության ժամանակ եգիպտոսում երևաց Հովսեփը»**[295]:*

*Աստված առաջնորդեց Հովսեփին եգիպտոս՝ նախօրոք այնտեղ նպաստավոր պայմաններ ստեղծելով նրա և իր սերնդակիցների համար: Հենց Աստծո կամքն էր կատարում հայկական հզոր բանակը, երբ հովիվներից խորշող եգիպտացիներին զրկեց իշխանությունից, իսկ հայազգի փարավոնը Հովսեփին իրենից հետո երկրորդ մարդ կարգեց ողջ եգիպտոսում: **«Եվ նահապետները, Հովսեփին նախանձելով, նրան վաճառեցին, որ եգիպտոս տարվի. բայց Աստված նրա հետ էր ու ազատեց նրան իր բոլոր նեղություններից, և նրան շնորհներ ու իմաստություն տվեց եգիպտոսի Փարավոն թագավորի առաջ. և նրան իշխան կարգեց եգիպտացիների և նրա ամբողջ տան վրա»**[296]:*

*Հովսեփն էլ է վկայում, որ Աստված է իրեն այդ բարձր պաշտոնին արժանացրել, երբ իր եղբայրներին պատվիրել էր վերադառնալ Քանան և իր հորը՝ Հակոբին և ամբողջ ազգատոհմին բերել եգիպտոս: **«Արդ,***

---

293 Кристиан Жак, Египет великих фараонов, Москва 1992 г., ст. 128.

294 Երեմ. 51:27:

295 Եւսեբի Պամփիլեայ Կեսարացւոյ, Ժամանակագրութիւն երկմասնեաց, Վենետիկ 1818 թ., 214 էջ:

296 Գործք. 9–10:

շտապ գնացե՛ք իմ հոր մոտ և ասացե՛ք նրան. «Այսպես է ասում քո որդի Հովսեփը. Աստված ինձ եգիպտացիների ողջ երկրի տեր է դարձրել»[297]*: Եվ եթե Աստված հայի ձեռքով է Հովսեփին այդպես բարձրացրել, ուրեմն՝ հայերը հնագույն ժամանակներից են եղել Տիրոջ ընտրյալ ժողովուրդ, Նրա սուրբ կամքը իրականացնող:*

Տեսնենք, թե ինչ մեծ և առանձնահատուկ նպատակի կարող էր ծառայել հրեաներին եգիպտոսում ընդունելը, որ նման աննախադեպ հսկայածավալ արշավի միջոցով իրականացավ: Չէ՞ որ հայոց բանակը, զորաժողով անելով, իջավ Հայկական լեռնաշխարհից՝ իրեն ենթարկելով Սիրիան և Պաղեստինը, ապա մտավ Եգիպտոս՝ այդ երկիրն էլ կցելով իր տիրապետությանը, և մոտ 150-250 տարի տիրեց այնտեղ: Եվ այդ ամենն այն բանի համար, որ Եգիպտոսում ընդունեին Աբրահամի սերունդներին՝ Հովսեփին, Հակոբին և մյուսներին: Իսկ այդ ժամանակ Աբրահամի ժառանգների մեջ էր նաև Հակոբի 12 որդիներից Հուդան, ում շառավղից էլ պիտի լիներ Մեսիան՝ մեր Տեր Հիսուս Քրիստոսը:

Այսպիսով, հայերը Եգիպտոսը գրավեցին հատուկ այդ նպատակի համար, որպեսզի Աբրահամի սերունդները, ըստ մարգարեությունների՝ բազմանային և հզորանային Եգիպտոսում և մի քանի դար հետո՝ Մովսես մարգարեի օրոք, դուրս գային և բնակություն հաստատեին Քանանի երկրում՝ Պաղեստինում: Այդ ժամանակներում Աբրահամի սերունդներից պիտի ելնեին բարեպաշտ դատավորներ, արքաներ, մարգարեներ և ժամանակների լրմանն արդեն մեր Տեր Հիսուս Քրիստոսը՝ անսկիզբ և անվախճան Աստվածը: Նա պիտ իջներ աստվածային անմերձենալի փառքից և, մարմին առնելով սուրբ կույս Մարիամից՝ համայն մարդկության փրկության համար խաչվեր, թաղվեր և երրորդ օրը հարություն առներ՝ որպես նոր Ադամ, և դրանով նորից բացեր Դրախտի դռները, որ փակվեցին համայն մարդկության առջև հին Ադամի գործած մեղքի պատճառով:

Աստծո Որդու՝ Քրիստոսի աշխարհ գալու համար, ահա այսպիսի երկար և դժվարին ուղի էր հարթվում, ինչի իրականացման գործում իրենց մեծ դերն են ունեցել Հայկ-Մելքիսեդեկը և իր սերունդները: Ինչպես Հայկ նահապետը Հացն ու Գինին տվեց Աբրահամին, հայազգի Փարավոնն էլ իր մատանին տվեց Հովսեփին՝ որպես նշան, որ զորությունների և ամեն իշխանությունների Տերը՝ Քրիստոսը պիտի գա Իսրայելից:

Չնայած Աբրահամը շատ մեծ էր, սակայն ոչ այնքան, որքան՝ Հայկը, որին նա տասանորդ մատուցեց, ինչպես փոքրը՝ մեծին: Այդպես և՝ Հովսեփը, ինչպիսի բարձունքների էլ հասավ, այնուամենայնիվ, մնաց ցածր հայազգի փարավոնից, որն ասաց, թե աթոռով նրանից բարձր կլինի: Եվ ուրեմն, ինչպես Մելքիսեդեկն էր իր դիրքով բարձր Աբրահամից, այդպես էլ հայազգի Փարավոնը՝ Հովսեփից: Բայց, Հայաստանը, որ Դրախ-

[297] Ծննդ. 45:3–9

տի, Տապանի, Մելքիսեդեկի, Բեթղեհեմյան Աստղի երևման երկիրն էր, ի սկզբանե կոչված լինելով՝ երկնային կամքն իրականացնելուն, իր առաքելությունը միաժամանակ պիտի հանձներ հրեաներին: Նրանց փոխարեն արդեն հրեաներն էին բարձրանալու՝ որպես Աստծո ժողովուրդ, ինչպես, որ Հովհաննես Մկրտիչը Տեր Հիսուս Քրիստոսի համար ասաց թե. ***«Պետք է, որ Նա մեծանա, իսկ ես՝ նվազեմ»***[298]*: Այսինքն՝ հոգևոր և իշխանական զորությունը, որ նահապետական հայերն Աստծուց էին ստացել, փոխանցվեց Իսրայելին:*

Իսկ Հայաստանը մինչ Քրիստոս, համեմատաբար պասիվանում է հոգևոր առումով, բայց չի անտեսվում Աստծո առջև, և չնայած հետագայում ընկնում է հեթանոսության մեջ, սակայն նորից մնում է Աստծո կամքը իրագործող, և իր վրա դրված բարձր պարտականություններն իրականացնող, ինչին դեռ ավելի մանրամասն կանդրադառնանք հաջորդ գլուխներում:

Հայոց աշխարհը նորից հոգևոր վերելք է ապրում արդեն քրիստոնեության շրջանում՝ դառնալով աշխարհում առաջին քրիստոնյա պետությունը: Այսինքն, Ում առջև հայերը ճանապարհ էին բացում հազարամյակներ շարունակ, Նրա շնորհով էլ դարձան Իրեն դավանող առաջին պետությունը: Այս անգամ էլ հրեաները նվազեցին, ընկան Աստծո փառքից, մինչդեռ հայերը բազմաթիվ երկնառաք շնորհների առկայությամբ, թե՛ մինչ Քրիստոս և թե՛ հետո, «աթոռով» բարձր եղան հրեաներից՝ մնալով հոգևոր պատերազմի առաջամարտիկ:

Հետաքրքիր է, որ Տեր Հիսուս Քրիստոսի՝ աշխարհ գալը հիմնականում առնչվեց այն երեք պետությունների հետ, որտեղ ապրել և տիրել էին հայերը՝ իրենց հոգևոր և աստվածատուր առաքելությունը կատարելու նպատակով, այսինքն՝ հայերի բուն հայրենիք Հայաստանը՝ Արարատյան երկիրը, Պաղեստինը և Եգիպտոսը:

Հայաստանի հետ կապված է նախ այն, որ այնտեղ ծագեց սուրբ Ծննդյան ավետաբեր աստղը և մոգերին ցույց տվեց ուղին դեպի Պաղեստին՝ Բեթղեհեմի մսուր: Երկրորդ, Տերը նամակագրական կապ ունեցավ հայոց Աբգար թագավորի հետ:

Եգիպտոսի հետ առնչությունն էլ այս է. Հերովդեսի հալածանքներից խուսափելով՝ սուրբ ընտանիքը մի քանի տարի ապաստան գտավ այդ երկրում, որտեղ ժամանակին հայ-հիքսոսները ճանապարհ էին հարթում Նրա գալստյան համար:

Իսկ Պաղեստինի հետ կապված է այն, որ այնտեղ հայերը կառուցել էին Սաղեմը, այսինքն՝ ներկայիս Երուսաղեմ քաղաքը, որտեղ Նա խաչվեց, թաղվեց և երրորդ օրը հարություն առավ:

Այսպիսով, հիքսոսների բուն առաքելությունն այն էր, որ նրանք,

---

298 Յովհ. 4:30:

Հայոց լեռնաշխարհից գալով, ճանապարհ բացեցին Քրիստոսի՝ Աստծո Միածին Որդու առաջին գալստյան համար: Իսկ քանի որ Տերը պետք է գար Աբրահամի սերնդից, ուրեմն, որպեսզի ի կատար ածվեին Տիրոջ մարգանալու և աշխարհ գալու բոլոր մարգարեությունները, հայերը Աբրահամի սերնդի ներկայացուցիչների համար ստեղծեցին բարենպաստ պայմաններ:

Մեծ խորհուրդ է և այն, որ հայերին տրված է ոչ միայն Տիրոջ՝ առաջին, այլև երկրորդ փառավոր Գալստյան համար ճանապարհ հարթել, որը, ինչպես արդեն տեղեկացանք, կլինի Հայաստանի՝ այսինքն բուն աստվածաշնչյան Արևելքի երկնակամարից:

Հիքսոսների ելքը

«Ի վերջո, պետք է հիշել կուտիներին, որոնց ներխուժումը
Հարավային Միջագետք և նրանց կարճաժամկետ կառավարումն
այնտեղ հայտնի է շումերական աղբյուրներից:
Իմիջիայլոց, սա միակ դեպքն է, երբ սեպագիր տեքստերում
անթաքույց թշնամանքով հաղորդվում է զավթիչների
նկատմամբ հաղթանակի մասին, նման ատելություն,
հավանաբար, տածում էին եգիպտացիք հիքսոսների հանդեպ»[299]:

Այսպիսով, հայ-հիքսոսների հովանավորությամբ Աբրահամի սերունդները՝ հրեաները, Գեսեմում բարգավաճեցին և բազմացան: Մինչդեռ եգիպտացիները ծանր էին տանում այն նվաստացումները, որ կրում էին հիքսոսների երկդարյա տիրապետության ներքո, հատկապես այն, թե իրենց համար խորշելի խաշնարած եբրայեցիներին ինչպիսի փառահեղ ընդունելության էին արժանացնում նրանց հովանավորող հիքսոսները: ***«Իսրայելացիներն այսպիսի քաղաքական և հասարակական պայմաններում էին բնակվում Եգիպտոսում: Նրանք երկրում բացառիկ դիրք էին զբաղեցնում: Որպես պալատական բարձրաստիճան պաշտոնյայի հարազատ ցեղեր և գտնվելով հովիվների դինաստիայի հովանավորության տակ՝ նրանք օգտվում էին հասարակական լավագույն դիրքից առավել, քան բնիկ եգիպտական բնակչությունը: Գեսեմի լայնարձակ և բերքառատ դաշտերում նրանք արագ բազմացան և հարստացան»[300]:***

Գուցե դրա համար էլ «հիքսոս», այսինքն՝ «հայ», անվանումը եգիպ-

[299] Оппенхейм А. Лео, Древняя Месопотамия, Москва 1990 г., ст. 50–51.

[300] А. П. Лопухинь, Библейская История Ветхого Завета, Монреаль 1986 г., ст. 83–84.

*տացիք նմանեցնում էին նման հնչողություն ունեցող եգիպտական բառին և այն աղավաղելով՝ թարգմանում էին «հովիվների տիրակալներ»։ **«Ուշ պատմական ավանդությունը, պահպանված անտիկ հեղինակների մոտ, բացատրում է այդ ցեղական անվանումը՝ «հիքսոս», որպես եգիպտական աղավաղված բառ «հովիվների տիրակալներ»**[301]։*

*Ինչու՞ են նրանք դիտավորյալ աղավաղել այդ անվանումը. նման կերպ եգիպտացիք իբր նսեմացում էին իրենց տիրակալներին, քանզի հիքսոսներ՝ «հայեր» անվանումը վերածելով «հովիվների տիրակալների»՝ նրանք ցանկանում էին ասել, որ հիքսոսները ոչ թե՝ իրենց, այլ ընդամենը այդ «խորշելի խաշնարածների»՝ հրեա հովիվների տերերն են։ Նրանց այդ պահվածքի հանդեպ հիքսոսներն անտարբեր չէին մնում, և իրենք էլ նրանց էին նվաստացնում։ Օրինակ, Ափովսիս II-ը վերին Եգիպտոսի՝ Թեբայի կառավարիչ Սեկեն-նե-Ռայի մոտ է ուղարկել սուրհանդակների՝ ներկայացնելով զավեշտական պահանջ. լռեցնել նեղոսյան գետաձիերին, որոնք, իբր, իրենց աղմուկով թույլ չեն տալիս հիքսոսյան արքային Ավարիսում քնել։ Իսկ Ավարիսը և Թեբան իրարից հարյուրավոր կիլոմետրեր հեռավորության վրա էին գտնվում, և այդ արարքը եգիպտացի կառավարչին իր տեղը ցույց տալու նպատակ ուներ։ Սակայն Սեկեն-նե-Ռան չի հրաժարվում իր ամբարտավան կեցվածքից, ինչն էլ նրա համար ճակատագրական է դառնում։ **«Հնագետների կողմից գտնված Սեկեն-նե-Ռայի մումիան ծանր վերքերի հետքերով վկայում է այն մասին, որ նա ընկել է կռվի դաշտում, հնարավոր է Ափովսիս II-ին փոխարինող Ափովսիս III-ի կողմից»**[302]։*

*Այդ ժամանակներից սկսած եգիպտացիների մոտ ավելի բարձրացավ ըմբոստության ոգին։ Դրան նպաստեց այն, որ հիքսոսների՝ գրեթե երկդարյա իշխանության ժամանակաշրջանում եգիպտացիները ծանոթացան նրանց մարտական զինանոցին և իրենք էլ սկսեցին տիրապետել ռազմական նորույթներին, որոնցով հայերը հեշտությամբ ծնկի էին բերել իրենց։ **«Եգիպտոսի զարգացման մեջ, հատկապես՝ ռազմական ոլորտում, իրենց մեծ ներդրումն ունեցան հիքսոսները։ Նրանք ներկայացրին եգիպտացիներին ձիեր լծած մարտակառքերը, նաև կազմածո աղեղը, որ Եգիպտոսում նախկինում չէին տեսել։ Թե դրանց և թե նոր տեսակի արդյունավետ զենքերի առկայությունը կարող է մասամբ բացատրել նվաճման դյուրությունը»**[303]։*

Եգիպտացիներն արդեն կարողանում էին ավելի ամուր մետաղներից զենքեր պատրաստել։ Իսկ դա հիքսոսների և եգիպտացիների ուժերը

---

301 Всеволод Игоревич Авдиев, История Древнего Востока, Москва 1948 г., ст. 234.

302 М. Д. Бухарин, И. А. Ладынин, Б. С. Ляпустин, А. А. Немировский, История Древнего Востока, Москва 2009 г., ст. 219.

303 Барбара Мертц, “Древний Египет, храмы, гробницы, иероглифы”, Москва 2007 г., ст. 158.

հավասարեցնելու հնարավորություն էր տալիս։ ***«Բացի դրանից, եգիպտացիներն այժմ, հնարավոր է, սկսել են կիրառել լավագույն տեսակի զենքեր՝ բերված հիքսոսների կողմից Ասիայից, նոր տեսակի բրոնզե սրեր և դաշույններ և տարբեր մասերից հավաքված հզոր աղեղներ։ Բացի դրանից, եգիպտացիներն առաջին անգամ օգտագործեցին ձիեր ու մարտակառքեր»***[304]։

Եգիպտացիների համար առավել կարևոր էր, որ կարողանային պատրաստել հիքսոսյան ամուր մարտակառքեր, և վարժեցնել ձիեր, ինչը, նրանց հաջողվեց միայն երկար տարիներ անց։ ***«Ձին և մարտակառքը մինչ հիքսոսները Եգիպտոսում հայտնի չէին։ Հետագայում հին եգիպտական բանակում ներառվեցին մարտակառքեր»***[305]։

«Հիքսոսների շնորհիվ Եգիպտոսում տեղեկացան սանձած ձիերի և մարտակառքերի մասին»[306]։

Ինչպես տեսնում ենք, գերիշխող տեսակետ է, որ հիքսոսները, այսինքն՝ հայերը, իրենց հետ Եգիպտոս բերեցին թե՛ ռազմական, թե՛ տնտեսական բարձրակարգ նորույթներ։ Եվ, չնայած երկդարյա նվաստացման՝ եգիպտացիները, յուրացնելով հայերի ձեռքբերումները, մեծ զարգացում ապրեցին, ինչի շնորհիվ կարողացան ոչ միայն հիքսոսների դեմ պատերազմ մղել, այլև հետագայում շրջակա երկրները հեշտությամբ հպատակեցնել։ ***«Հիքսոսների արտաքսումից հետո հաղթողներն ուղիղ իմաստով որդեգրեցին նրանց ռազմական ստեղծագործությունները։ Հետհիքսոսյան շրջանում Եգիպտոսում ստեղծվեցին նոր ռազմական սարքավորումներ։ Ավելի բարդ, ավելի խորը ետ ճկվող աղեղ, տարբեր տեսակի թրեր և դաշույններ, նոր տեսակի վահան, պատյան, մետաղական սաղավարտ։ Իսկ ամենակարևոր նորամուծությունը ձիեր լծած երկանիվ մարտակառքն էր, որի օգտագործումը կռվի դաշտում հանգեցրել է ռազմական մարտավարության փոփոխման»***[307]։

Եգիպտացիք հաջողության հասան ոչ միայն ռազմական ոլորտում՝ գործի դնելով հայկական նորագույն զենքերը, այլև մեծ առաջընթաց ունեցան քաղաքականության մեջ. նրանց հաջողվեց շրջակա երկրներն իրեն դաշնակիցներ դարձնել։ Ապստամբության գլուխ էր անցել իրեն թագավոր հռչակած Քամոսը, ով տիրացավ հիքսոսների նվաճած տարածքներին և երկար ժամանակ շրջափակման մեջ պահեց Ավարիսը։ Սակայն հիքսոսների դաշնակից նուբիացիները հարձակվեցին եգիպտական բնակավայրերի վրա, ինչի պատճառով էլ Քամոսը, թողնելով Ավարիսը, ետ դարձավ՝ նուբիացիների դեմն առնելու։ Հարձակման անցնելով և այ-

304 Штайндорф Георг, Когда Египет правил Востоком. Пять столетий до нашей эры, Москва 2013 г., ст. 39.

305 И. Л. Снегирев и Ю. П. Францов, Древний Египет, Ленинград 1938 г., ст. 189.

306 Эмили Бомон, Древний Египет, Москва 2009 г., ст. 13.

307 Мария Павловна Згурская, Древний Египет, Харьков 2008 г., ст. 353.

րելով նուբիացիների քաղաքները՝ ի վերջո, Քամոսը նրանց էլ ներառեց իր դաշնակիցների մեջ: Սակայն Քամոսին չհաջողվեց գրավել Ավարիսը. դա վերապահված էր իր հաջորդին՝ Յահմոսին:

Եգիպտացիք՝ վրեժխնդրությամբ լցված, նոր արքա Յահմոսի գլխավորությամբ նորից հարձակվեցին Ավարիսի վրա: Այս անգամ մարտերը վճռորոշ եղան. նրանք, հիքսոսներին զրկելով մոտակա զինակիցներից և փակելով հեռավոր Ասիայի կողմից հնարավոր դաշնակիցների մուտքը, իրենց ամբողջ կարողությամբ գրոհեցին Ավարիսի՝ հիքսոսների վերջին և ամենակարևոր պատսպարանի վրա: ***Ակնհայտ է, որ մարտերում հիքսոսները շատ մեծ վնասներ կրեցին: Յահմոսի կողմից սակավաթիվ գերիներ վերցնելը ցույց է տալիս, որ Ավարիսի մարտերը չափազանց դաժան և արյունահեղ են եղել, և որ, անխնա ոչնչացնելով թշնամիներին՝ եգիպտացիները գերիներ գրեթե չեն վերցրել»***[308]*:*

Սակայն, Ավարիսի երկարատև պաշարումը եգիպտական զորքերին կանգնեցնում էր հյուծվելու վտանգի առջև, ինչից ելնելով՝ Յահմոսը բանակցություններ է սկսում հիքսոսների հետ: Ի վերջո, համաձայնության են գալիս, որ հիքսոսները պետք է հեռանան Եգիպտոսից՝ պայմանով, որ եգիպտացիները որևէ խոչընդոտ չեն հարուցի: ***«Երկկողմանի հյուծիչ հակամարտությունը կողմերին առավելություն չէր տալիս և, ի վերջո, սկսվում են բանակցություններ, որ ավարտվում են հաշտությամբ. հիքսոսները համաձայնում են առանց պատերազմի եգիպտացիներին թողնել իրենց երկիրը և վերադառնալ հայրենիք: Դա տեղի ունեցավ Ք. ա. մոտ 1580 թվին»***[309]*:*

Ինչու՞ հայ-հիքսոսները պարտվելով հեռացան Եգիպտոսից: Այզեք Ազիմովը երկու պատճառաբանություն է բերում այդ առումով: ***«Առաջինը... հիքսոսները հանդարտվեցին և դարձան «ավելի մեղմ»: Նրանց ղեկավարները և առաջնորդները սկսեցին ընդունել եգիպտական մշակույթը և նրանց վարքագիծը պատերազմի ժամանակ այդքան էլ սպառնալի չէր, ինչպես՝ առաջ: Երկրորդ. «գաղտնի զենքերը» դադարել էին լինել գաղտնի այն բանից հետո, երբ դրանք օգտագործվել էին: Եգիպտացիները հարավում սկսեցին սովորել օգտագործել ձին ու մարտակառքը և այժմ կարող էին հիքսոսների հետ մարտի մեջ մտնել»***[310]*:*

Այո, վերջին շրջանում հիքսոսներն ավելի անհոգ կյանքով էին ապրում, ինչը միշտ բերում է Աստծո երկյուղից հեռանալուն, մարմնավորի և նյութականի վրա սևեռվելուն, ինչն էլ հասցնում է բարոյականության անկման, ի վերջո, նաև Աստծուն ուրանալուն ու կուռքերի կողմ շրջվելուն,

---

308 В. И. Авдиев, Военная история Египта, Москва 1948 г., ст. 147.

309 Արտակ Մովսիսյան, Հայոց պատմության աշխարհակալությունները, Երևան 2008 թ., էջ 27:

310 Айзек Азимов, “Египтяне”, Москва, 2007 г., ст. 82.

ինչը պատահեց Սողոմոն Իմաստունի և շատ շատերի հետ: Հնարավոր է, որ այդ շրջանում էլ Սեթի պաշտամունքին առնչվել են նաև հիքսոսները:

Կար ևս մի պատճառ, որ շատ ավելի կարևոր էր. հիքսոսներն իրականացրել էին իրենց առաքելությունը: Աբրահամ նահապետի՝ եգիպտոս մտած յոթանասունհինգ հոգանոց սերունդներն արդեն դարձել էին մեծ և բարգավաճ ժողովուրդ, որը, ծանր փորձությունների շրջան անցնելով, արդեն Մովսես մարգարեի առաջնորդությամբ պիտի հետևեր հիքսոսների օրինակին և դուրս գալով Եգիպտոսից՝ նույնպես գնար Ավետյաց երկիր՝ Պաղեստին:

«Բայց շուտով՝ հատկապես Ափովսիսի թագավորության վերջում, Թեբայում երկրի հնագույն մայրաքաղաքում, տեղական իշխանների կողմից անկախության համար շարժում սկսվեց, իսկ հաջորդ փարավոնի օրոք այն բացահայտ ապստամբության վերածվեց՝ իր առջև նպատակ դնելով տապալել օտարերկրացիների դինաստիան: Սկսվեց համառ և շարունակական պայքար: Հիքսոսները քայլ առ քայլ թողնում էին իրենց դիրքերը և ճնշման տակ հարկադրված էին ավելի ու ավելի նահանջել դեպի հյուսիս-արևելք, մինչև որ ամբողջովին վտարվեցին Եգիպտոսից»[311]:

Հրեաները Եգիպտոսում հիքսոսներից հետո

«Գահ բարձրացավ մի ուրիշ թագավոր,
որ Հովսեփին չէր ճանաչում»[312]:

Այսպիսով, հիքսոսները մոտ երկու դար իշխելուց հետո եգիպտացիների հետ համաձայնության գալով՝ թողեցին Եգիպտոսը և ուղղություն վերցրին դեպի Պաղեստին, որտեղ նրանք ունեին իրենց քաղաքները Սաղեմը, Շարուխենը և այլն: ***«Ավարիսի գրավումը եգիպտական զորքերի կողմից ստիպեց հիքսոսներին ազատել ամբողջ Ստորին Եգիպտոսը և նահանջել Ասիա»***[313]:

Հրեաներն այդ օտար երկրում՝ Եգիպտոսում մնացին առանց հովանավորների: Իսկ Սուրբ Գիրքը մեզ տեղեկացնում է այն մասին, թե ինչ պատահեց նրանց հետ Եգիպտոսում, երբ հայտնվեցին արդեն եգիպտա-

---

311 А. П. Лопухинь, Библейская История Ветхого Завета, Монреаль 1986 г., ст. 83–84.

312 Ելք 1:8:

313 В. И. Авдиев, Военная история Египта, Москва 1948 г., ст. 147.

ցիների տիրապետության ներքո։ ***«Երբ մոտեցավ ավետյաց ժամանակը, որ Աստված խոստացել էր Աբրահամին, ժողովուրդը Եգիպտոսում աճեց և բազմացավ, մինչև որ Եգիպտոսում ելավ մի ուրիշ թագավոր, որ չէր ճանաչում Հովսեփին»***[314]։

Ահա տեսնում ենք, որ Աստվածաշունչ մատյանում հստակ ասվում է, որ հրեաները սկզբնական շրջանում «աճել և բազմացել են», և դա եղել է հիքսոսների տիրապետության շրջանում, իսկ երբ ելել է ***«մի ուրիշ թագավոր»*** *այդ ժամանակ էլ սկսվել են հալածանքները։*

Սա նշանակում է, որ Եգիպտոսի գահին արդեն նստել էր ոչ թե մեկը հիքսոս արքաներից, որ ճանաչում և հովանավորում էին Հովսեփի ցեղակիցներին, այլ փարավոն էր դարձել եգիպտացիներից մեկը, որ ոչ միայն չէր ցանկանում հանդուրժել հրեաների արտոնյալ վիճակը, այլև խորշում էր նրանցից և, ըստ եգիպտական սովորույթի, քամահրում ու արհամարհում էր նրանց։ ***«Երբ Հիքսոսները պարտվեցին, նրանց բազմաթիվ ենթակաների դրությունը կտրուկ փոխվեց։ Միանգամայն հավանական է, որ նման ճակատագիր հասավ նաև եբրայեցիներին։ Հավանական է, որ հիքսոսների տիրապետության վերջը և XVIII դինաստիայի թագավորության սկիզբը, համապատասխանում են եբրայեցիների ստրկացմանը»***[315]։

Հրեաների համար ծանր ժամանակներ սկսվեցին։ Հիքսոսների տիրապետության ժամանակ նրանք ավելի լավ պայմաններում էին ապրում, քան՝ եգիպտացիները, և հանկարծ ոչ միայն զրկվում են արտոնյալ դիրքից, այլև հայտնվում են արհամարհված և ստորացված վիճակում։ ***«Հիքսոսների իշխանության ժամանակաշրջանում իսրայելացիները Եգիպտոսում հարգանք էին վայելում, բայց երբ հիքսոսների դինաստիան դուրս մղվեց 18-րդ դինաստիայի կողմից, այդ ժամանակ իսրայելացիները հայտնվեցին ստրուկի կարգավիճակում»***[316]։

Հիքսոսները և հրեաները նույն միաստվածության հետևորդներ էին, որ ճնշված վիճակում էին պահում եգիպտական կռապաշտությունը։ Սակայն երբ հիքսոսները դուրս եկան Եգիպտոսից, եգիպտացիները հրեաների նկատմամբ սկսեցին կրոնական, տնտեսական, քաղաքական հետապնդումներ։ Ատելությունը հատկապես խորն էր այն պատճառով, որ այդ պատերազմում հրեաները բռնել էին իրենց հովանավոր հայ-հիքսոսների կողմը։ ***«Զափազանց դժվար է որոշել, թե Հովսեփի մահից հետո իսրայելացիները որքան ժամանակ խաղաղություն և բարօրություն վայելեցին։ Բայց, հավանաբար, կարելի է մտածել, որ նրանց վիճակը վատագույնի փոխվեց, երբ գահին բազմեց բուն եգիպտական դինաս-***

---

314 Գործք 8:17–18:

315 Эммануэль Анати, “Палестина до древних евреев”, Москва 2007 г., ст. 322.

316 Доктор Генри Г. Геллеи, 19–й век, “Краткий Библейский Толкователь”, Торонто, Канада 1989 г., ст. 118.

տիան։ «Գահ բարձրացավ մի ուրիշ թագավոր, որը Հովսեփին չէր ճանաչում» և դրա հետ մեկտեղ չէր կարող ընդունել նաև նրա հետնորդների իրավունքը, հատկապես այն արտոնություններով, որոնցից նրանք օգտվում էին նախորդ դինաստիայի ժամանակ։ Հովսեփ անունը, որպես տապալված դինաստիայի բարձրաստիճան պաշտոնիայի, հնարավոր է, նրան ծանոթ չէր (կամ էլ նա կարող էր ուղղակի չընդունել նրա արժանիքները)։ Սրանից էլ հասկանալի է դառնում, թե այդ վիճակում գտնվող թագավորը ինչ զգացմունքով կվերաբերվեր իսրայելացիներին։ Նրանք արտոնյալ հպատակներ էին, որ օգտվում էին տապալված դինաստիայի հատուկ բարեհաճությունից, որի ժամանակ նրանք իշխում էին Եգիպտոսի կարևորագույն շրջաններից մեկում՝ տիրապետելով հենց երկրի սրտին մոտ գտնվող մատույցների վրա։ Տապալված դինաստիայի նկատմամբ ատելությունն ու թշնամանքը թագավորը, բնականաբար, շրջեց նրա սիրելի ցեղի կողմը։ Բայց իսրայելացիների հանդեպ հատուկ թշնամանքի պատճառ կարող էին լինել նաև այլ՝ զուտ քաղաքական հանգամանքներ։ Եգիպտական իշխանների պայքարը հովիվների դինաստիայի և ազգության դեմ տեղի էր ունենում գլխավորապես Գեսեմի շրջակայքում, որտեղ հիքսոսները ամուր ճամբար գցելով, երկար ժամանակ դիմագրավում էին եգիպտացիների ճնշումներին։ Այս պայքարում ակամայից պետք է որևէ մասնակցություն ունենային նաև իսրայելացիները և ոչ մի անհավանական բան չկա նրանում, որ նրանք պահում էին հիքսոսների կողմը...

Բուն եգիպտացիներից նրանք ոչինչ չէին կարող սպասել, քանի որ նրանց համար յուրաքանչյուր հովիվ «զզվելի» էր, և ամբողջ հովիվների դինաստիան նրանց կողմից արհամարհանքի էր արժանանում։ Հիքսոսների հետ այդ միությունը նրանց դարձրեց եգիպտացիների քաղաքական թշնամիներ, և երբ հիքսոսները վերջնականապես վտարվեցին երկրից, ապա իսրայելացիները պիտի ստրկությամբ վճարեին բուն եգիպտական փարավոնի հանդեպ իրենց դավաճանության համար...

Ամենից առաջ, իհարկե, նա զրկեց իսրայելացիներին այն կարողություններից և ազատություններից, որոնցից նրանք օգտվում էին նախորդ դինաստիայի ժամանակ, բայց հետո այն վերափոխվեց նրանց հանդեպ բացարձակ ճնշման՝ «ծանրագույն աշխատանքով նրանց հյուծելու»[317]։

*Հասկանալի է՝ ինչու են եգիպտացիները ջնջել, ոչնչացրել են թե՛ հիքսոսների, թե՛ հրեաների մասին տեղեկություններ պարունակող հիշատակությունները, սակայն զարմանալի է, թե հրեանե՛րն ինչու հիքսոսների մասին չեն հիշատակել Հնգամատյանում. միայն նշել են, թե «եկավ նոր թագավոր, որը Հովսեփին չէր ճանաչում»։ **Իսրայելի զավակները շուրջ երկու դար ապրում են Եգիպտոսում, որը կառավարում էին հիքսոսները, նրանց տիրապետության կործանումը տեսնում են նաև իրենք,- ինչպես կարծում***

[317] А. П. Лопухинь, Библейская История Ветхого Завета, Монреаль 1986 г., ст. 87–88.

են Աստվածաշնչի քրիստոնյա մեկնաբանները,- և հենց Եգիպտոսից հիքսոսների վտարման արդյունքում է, որ նրանք դառնում են եգիպտացիների ստրուկը... և ոչ մի բառով իսկ հիքսոսների մասին չեն հիշատակում»[318]:

Այո, իսկապես, այդ մասին տեղեկությունները շատ սուղ են, ինչը կարելի է բացատրել միայն այն հանգամանքով, որ դա նույնպես, ի թիվս շատ այլ կարևոր տեղեկությունների, ծածկված է, և դրան ևս վերապահ-ված է ի հայտ գալ միայն հիմա:

Թե հիքսոսներից հետո հրեաներն ինչպես ապրեցին Եգիպտոսում, մանրամասն տեղեկացնում է Սուրբ Գիրքը. դրան ևս մենք հետագայում կանդրադառնանք: Իսկ այժմ հետևենք հիքսոսներին և նրանց հետքերով գնանք Քանանի երկիր, և տեսնենք, թե ինչ իրադարձություններ են տեղի ունենալու այնտեղ հիքսոսների գալստյամբ:

Հիքսոսները Քանանում

Հիքսոսներն, ավարտելով իրենց առաքելությունը, դուրս եկան Եգիպտոսից և ուղղություն վերցրին դեպի Քանան՝ այն երկիրը, ուր մոտ 200 տարի անց, Եգիպտոսից ելնելով, Մովսեսի առաջնորդությամբ պետք է գային նաև իսրայելացիները: Հիքսոսների և եգիպտացիների հակա-մարտությունը բավականին երկար տևեց, ինչի լուրը տարածվեց ամբողջ շրջակայքում, հասնելով նաև Պաղեստին: Բոլոր այն երկրները, որոնք գտնվում էին հիքսոսների տիրապետության ներքո, տեղեկանալով Եգիպ-տոսից եկած այդ լուրերին, իրենք էլ ըմբոստացան հիքսոսների դեմ, փոր-ձելով թոթափել նրանց լուծը: Ի վերջո, հասնելով Քանան, պարտություն կրած, սակայն դեռ բավականին հզոր հիքսոսներն իրենց քաղաքները կիսավեր գտան:

Ինչպես եգիպտացիներն էին հիքսոսներից սովորել որակյալ մե-տաղից զենքեր և մետաղյա անիվներով ռազմակառքեր պատրաստել և դրանցով պատերազմել հիքսոսների դեմ, այդպես էլ քանանացիները տիրապետեցին այդ հմտություններին և ապստամբեցին քանանաբնակ հիքսոսների դեմ:

*Հայկական Սաղեմը համարյա թե ավերվել էր, սակայն այդ ժամա-նակ Եգիպտոսից դուրս եկած հիքսոսական բանակը, հասնելով Քանան, զորավիգ եղավ իր ազգակիցներին՝ նրանց, ովքեր ավելի վաղ էին եկել Քանան և կառուցել Սաղեմը, որտեղ հայոց Հայկ-Մելքիսեդեկ նահապե-տը ընդունել էր հրեաների Աբրահամ նահապետին: **«Աքքադում տիրում***

[318] Валентина Новомирова, Гиксосы, журнал «Вера и жизнь», Киев 1/1998 г., ст. 25.

էր Խամմուրապիին, որի ժամանակ Աբրահամը տեղափոխվեց հիքսոսյան Պաղեստին»[319]:

Եգիպտոսից տեղաբնակ հայերին օգնության հասած եգիպտահայ հիքսոսների բանակը շատ արագ կարգ ու կանոն հաստատեց՝ ճնշելով ապստամբությունները:

Հատկապես խիստ էր տուժել հայկաշեն Սաղեմը. հեբուսացիները ցանկացել էին այն գրավել այնտեղ բնակություն հաստատելու համար: Սակայն նրանք ևս, պարտություն կրելով, ետ շպրտվեցին Սաղեմի մատույցներից:

*Հիքսոսները վերակառուցեցին Շարուխենը և Սաղեմը, ամրացրին դրանց պարիսպները: Սաղեմն ապստամբությունից այնքան էր տուժել, որ այն պետք էր գրեթե հիմքից կառուցել: Մանեթոնը հենց այդպես էլ գրում է, որ հիքսոսները, հետ գալով եգիպտոսից, կառուցեցին Երուսաղեմ քաղաքը: **«Նրանք քաղաք հիմնեցին, որը կարող էր տեղավորել բազմաթիվ բնակիչների, և այն անվանեցին Երուսաղեմ»***[320]:

Սակայն, իրականում, ոչ թե կառուցեցին, այլ վերակառուցեցին, քանզի հայտնի է, որ քաղաքն ի սկզբանե կոչվել է Սաղեմ և, ուրեմն, վերակառուցումից հետո է այն անվանվել Երուսաղեմ, ինչը, հավանաբար, նշանակում է «Նոր Սաղեմ»:

*Կարծիք կա, որ հիքսոսները ասորեստանցիներից վախենալու պատճառով են մնացել Քանանում: **«Ասորեստանի բազմամբոխ բանակի ահից, գնացին ասիացիների երկիրը, որն այժմ կոչվում է Հրեաստան, այնտեղ քաղաք շինեցին, որ բազմաթիվ մարդկանց կարող էր տանել, և այն քաղաքի անունը Երուսաղեմ էին կոչում»***[321]:

*Սակայն Ասորեստանի հետ կապված մանեթոնյան այս վարկածը ճիշտ չէ, քանզի, ինչպես նշում են պատմաբաններից շատերը, Ասորեստանն այդ ժամանակ դեռևս չէր հասել իր հզորությանը, և չէր կարող հիքսոսներին խանգարել վերադառնալ իրենց բուն հայրենիք: **«... Հիքսոսների մի մասը վտարվում է եգիպտոսից, և զգուշանալով ասորեստանցիների վրեժխնդրությունից չի վերադառնում հայրենիք՝ Հայկական Լեռնաշխարհ, այլ հիմնում է Երուսաղեմ քաղաքը»***[322]:

*Այսպիսով, հայրենիքից՝ Մեծ Հայքի տարածքից ելնելով՝ հայերը Պաղեստինում կառուցեցին իրենց պաղեստինյան մայրաքաղաքը՝ Երուսաղեմը, իսկ մտնելով եգիպտոս՝ այնտեղ էլ կառուցեցին իրենց եգիպտական մայրաքաղաքը՝ Ավարիսը: **«Հիքսոսները, համաձայն Մանեթոնի և***

---

319 Назаров П.Г., Происхождение дадонской арты еврейской арцы, Ур–Арту и стран Артавы, част 14, Челябинск 1997 г., ст. 86.

320 Иосиф Флавий О древности еврейского народа, Против Апиона. Москва, 1994 г., ст. 129.

321 Եւսեբի Պամփիլե, Ժամանակականք Երկմասնեայ, Վէնէտիկ 1818 թ., էջ 228:

322 Пивоваров С., Торосян А., Загадка тысячелетий или кто такой Моисей? https://ok.ru/group54037507670021/topic/65022577497349

Հովսեփոս Փլավիոսի հաղորդումների՝ հիմնեցին Ավարիս մայրաքաղաքը Եգիպտոսում, Երուսաղեմը՝ Քանանում»[323]***:***

Խորհրդանշական հիմնավորումներ կան առ այն, որ Երուսաղեմն ի սկզբանե եղել է հայկական քաղաք. օրինակ՝ դեռ առաջին դարում այնտեղ կար հայկական համայնք, և այդ ժամանակներում հայերի կողմից կառուցված և խնամված քրիստոնեական սրբավայրեր:

«Իսրայելում բնակվում է աշխարհում հայկական ամենաակտիվ համայնքներից մեկը: Երուսաղեմի հին մասը հայ-քրիստոնյաները կիսում են հրեաների, մահմեդականների և այլ քրիստոնյաների հետ: Նրանց համար գոյություն ունի երկու հայրենիք՝ պատմականը և հոգևորը՝ Երուսաղեմը»[324]***:***

Չորրորդից մինչ իններորդ դար Սուրբ Երկրում եղել է մոտ 90 գործող հայկական վանք, իսկ հին Երուսաղեմի չորս թաղամասերից մեկն էլ հայկական թաղամասն է: Սուրբ Երկրում ներկայումս էլ հայերին են պատկանում բազմաթիվ Տերունական և այլ սրբավայրեր ու հողատարածքներ: ***«Հայկական սրբությունները, տաճարները, հողատարածքներն այնքան շատ են, և գրավում են այնպիսի կարևոր վայրեր (օրինակ Գեթսեմանին և Աստվածածնի դատարկ գերեզմանը), որ կարելի է հեշտությամբ ապակողմնորոշվել պատմության և աշխարհագրության մեջ և հայերին պատկերացնել որպես ինչ-որ համաշխարհային և հզոր քրիստոնեական կայսրության ներկայացուցիչներ: Ենթադրում եմ, որ նրանք հենց այդպես էլ պատկերացնում են իրենց»***[325]***:* *Եվ ուրեմն, Երուսաղեմը կառուցել են Հայաստանից եկած հայերը, ապա այն վերակառուցել են արդեն Եգիպտոսից վերադարձող հայերը՝ հիքսոսները:*

Այսպիսով, հիքսոսներն ամբողջ Պաղեստինում և Սիրիայում նորից ամրացնում են իրենց դիրքերը, ինչն արդեն բավականին բարդ էր, քանզի Եգիպտոսն օրըստօրե հզորանում էր, և նրա կողմ էին թեքվում քանանաբնակ ցեղերը՝ հույս ունենալով եգիպտացիների օգնությամբ ձեռք բերել լիակատար անկախություն:

---

323 Է. Դանիելյան, Ա. Մելքոնյան, Հայոց Պատմություն, Երևան 2008 թ., էջ 31:

324 Александр Лапшин, российский путешественник, блогер.

325 Протоиерей Андрей Ткачев, Израиль чуть–чуть. http://www.pravoslavie.ru/jurnal/60627.htm

Հիքսոսների ելքը Քանանից

«Այսպիսով, հիքսոսները, որ հանկարծ հայտնվեցին պատմության էջերում, թագավորելով հարուստ կայսրությունում 1,5 դար՝ կարծես, այդպես հանկարծակի էլ անհետացան: Սակայն դա պատրանք է: Անհետացավ անվանումը, բայց ոչ՝ ազգը»[326]:

Թողնելով Եգիպտոսը, այսպիսով, հիքսոսներն իրենց դիրքերն ամրապնդեցին Քանանում՝ նորից իրենց ենթարկելով քանանաբնակ ցեղերին, որոնց մեջ էին ամորհացիները, հեբուսացիները, ամաղեկացիները, մովաբացիները և շատ ուրիշներ:

*Սակայն իրադրությունն արդեն այլ էր, քանզի Եգիպտոսը, հայկական քաղաքակրթության ռազմական և տնտեսական մեծագույն նվաճումների յուրացման և կիրառման շնորհիվ բավական հզորացել էր, բարձրացրել էր իր բանակի մարտունակությունը և հիքսոսների համար արդեն սպառնալիք էր դարձել նաև Պաղեստինում: **«Իրենց հաջողություններով եգիպտացիները ոչ պակաս պարտական էին հիքսոսյան տիրակալության դեմ պայքարի փորձին: Այդ ժամանակ նրանք սովորեցին ձիեր վարժեցնելու գործը, իսկ նրանց բանակում հայտնվեցին մարտակառքեր՝ ամենաահեղը բոլոր զենքերից»**[327]:*

*Դա մեծ սպառնալիք էր հիքսոսների համար: Եվ, իրոք, պատերազմի ավարտից շատ չանցած, երբ նրանք դեռևս ուշքի չէին եկել պարտությունից, Յահմոսը եգիպտական բանակն ուղղեց դեպի Պաղեստին: **«Գրավելով Ավարիսը՝ եգիպտացիները շարժվեցին դեպի հարավային Պաղեստին, որպեսզի կործանեն իրենց թշնամիներին այնտեղ, որտեղից նրանք ժամանակին ներխուժեցին Եգիպտոս»**[328]:*

*Յահմոսը ոչ միայն ոգեշնչվել էր հիքսոսների դեմ տարած իր հաղթանակով, այլև հույս ուներ Պաղեստինում գտնել հակահիքսոսյան տրամադրություն ունեցող ցեղերի աջակցությանը: **«Յանկանալով ապահովել Եգիպտոսի անվտանգությունը հիքսոսների նոր հարձակումից և վերջնականապես կոտրել Եգիպտոսի դարավոր թշնամու ուժերը, Յահմոսը, եգիպտական բանակի գլուխն անցած, ներխուժեց Պաղեստին՝ այդպիսով ռազմական գործողությունները տեղափոխելով Առաջավոր Ասիա»**[329]:*

Այդ հարձակումը չպսակվեց կայծակնային հաղթանակով, քանզի

---

326 Айзек Азимов, "Египтяне", Москва 2007 г., ст. 83.

327 М. Д. Бухарин, И. А. Ладынин, Б. С. Ляпустин, А. А. Немировский, История Древнего Востока, Москва 2009 г., ст. 221: http://www.litres.ru/pages/biblio_book/?art=183198

328 В.В. Струве, История Древнего Востока, Москва 1941 г., ст. 173.

329 В. И. Авдиев, Военная история Египта, Москва 1948 г., ст. 116.

*հիքսոսները դեռ բավականին զորեղ էին: Միայն Շարուխենը գրավելու համար եգիպտացիներից պահանջվեց վեց տարի այն շրջափակման մեջ պահել: **«Այնուհետև եգիպտացիները որոշեցին վրիժառու պատերազմ սկսել հիքսոսների դեմ, որը չափազանց երկար տևեց»**[330],*

Բայց և այնպես հիքսոսների ուժերը տեղի տվեցին և, եգիպտական բանակի ճնշման տակ նրանք թողեցին նաև Պաղեստինը՝ հեռանալով դեպի Սիրիա: Յահմոսը շարունակեց հետապնդել նահանջող հիքսոսներին, և Սիրիայի հարավային տարածքներն էլ ընկան եգիպտացիների իշխանության տակ: Հիքսոսներն էլ, նահանջելով ավելի վեր, ամրացան Սիրիայի հյուսիսային տարածքներում: Իսկ թե հետո ինչ եղավ նրանց հետ՝ կանդրադառնանք առանձին վերնագրով:

Քանանացի որոշ կռապաշտ ցեղեր, միանալով եգիպտացիներին, նույնպես սկսեցին հալածել հիքսոսներին, հատկապես՝ հեբուսացիները, որ կամավոր անցան եգիպտացիների կողմը: Եվ հենց եգիպտացիների օգնությամբ նրանք գրավեցին Պաղեստինի հայոց մայրաքաղաք Սաղեմը և բնակվեցին այդտեղ մի քանի դար: Իսկ մոտ երկու դար անց, հրեաները, դուրս գալով Եգիպտոսից, եկան և բնակություն հաստատեցին Պաղեստինում: Դրանից միայն տասնամյակներ հետո Դավիթ թագավորը, երուսաղեմը հեբուսացիներից գրավելով, դարձրեց հրեաների մայրաքաղաք:

Չնայած հիքսոսները հիմնականում հեռացան Պաղեստինից, սակայն նրանցից շատերն էլ, հատկապես նրանք, ում պապերը Պաղեստինում հաստատվել էին դեռևս հայոց նահապետ Հայկ-Մելքիսեդեկի օրոք, մնացին այնտեղ: Աչքի չընկնելու համար նրանք չէին կարող մեծ համայնքով ապրել, և ովքեր հիքսոսական բանակին չմիացան, փոքր խմբերով տարածվեցին Պաղեստինի տարբեր ցեղերին պատկանող երկրներում՝ հուսալով ապաստան գտնել նրանց մոտ:

Քանանում ցրված հայկական այդ փոքր համայնքներին մենք դեռ կանդրադառնանք, քանզի նրանցից մի քանիսին վերապահված էր առնչվել մեծագույն շնորհների հետ:

---

330 Արտակ Մովսիսյան, Հայոց պատմության աշխարհակալությունները, Երևան, 2008 թ., էջ 27:

Վերջաբան

«Քարե գմբեթ՝ ահա թե ինչպես եմ ես պատկերացնում հայ ժողովրդի էությունը: Ժողովուրդ, որն իր մեջ կրում է Շենգավիթյան դարաշրջաններից մինչև գալիք... ապագան եղող պատմական տարածքները: Մեր ժամանակների այն սակավաթիվ ժողովուրդներից մեկն է, որը հավերժական է թվում հենց այն պատճառով, որ ելնում է մարդկության պատմության խորքից և ձգտում ապագայի ամենաբարձր հորիզոններին»[331]:

Բերված ապացույցները, փաստերը, գիտնականների և այլ հետազոտողների կարծիքները լիովին փարատում են հիքսոսների հայկական ծագման վերաբերյալ եղած բոլոր ողջամիտ կասկածները: Մեզ համար կարևոր էր ապացուցել պատմական այն անհերքելի փաստը, որ հիքսոսները Հայկական լեռնաշխարհից են եկել և եղել են այդ լեռնաշխարհի բնիկները ամենևին էլ ոչ այն պատճառով, որ ցանկանում ենք պարծենալ:

Հայերը կարողացել են գրավել և գրեթե երկու հարյուր տարի տիրել Եգիպտոսի նման հզոր երկրին: Գուցե և դա հպարտանալու առիթ է, սակայն հայերը երբեք չեն ներխուժել որևէ երկիր որպես ավարառու. նրանք գրավել են բազմաթիվ երկրներ, որոնցից ձևավորվել են աննախադեպ հզոր և անծայրածիր կայսրություններ: Այստեղ, իհարկե, հակասություն կարող է նկատվել: Սակայն եթե ուշադիր հետևենք գրքի դեպքերի ընթացքին, ապա դժվար չի լինի հասկանալ այդ թվացյալ առեղծվածը: Հայաստանը և հայ ժողովուրդը Նախախնամության կողմից ընտրված են եղել ի սկզբանե. հայերը գործել են որպես Տիրոջ ժողովուրդ՝ երբեմն-երբեմն կարգ ու կանոն հաստատելով այն երկրներում, որոնք մխրճվել են անօրենությունների մեջ: Ճնշելով և կարգի բերելով դրանք՝ Հայկական լեռաշխարհից իջած նվաճող-բարեկարգողներն այդ ժողովուրդներին հաղորդ էին դարձնում Քուռարաքսյան քաղաքակրթության բարիքներին՝ գիտական, արդյունաբերական, ռազմական, արվեստի և այլ ոլորտների: Դա զարգացման նոր աստիճանի հասնելու ազդակ էր, ինչի արդյունքները տեսնում ենք թե՛ միջագետքյան ժողովրդների, թե՛ սիրիա-պաղեստինյան ցեղերի և թե՛ Եգիպտոսում ու շրջակա մյուս երկրներում, ինչու չէ նաև՝ հեռավոր Հնդկաստանում:

Ամենակարևոր, սակայն, այս ամենը չէ, այլ այն, որ Երկինք և երկիր, տեսանելի և անտեսանելի բոլոր արարածների Արարիչը հայերին

[331] Никола Инджов. Высоты и подножья // Литературная Армения. 1988. № 3.

առաքում էր՝ որպես համայն մարդկության հավիտենական փրկության համար ուղի հարթողներ, այսինքն՝ որպես կարապետներ Փրկչի՝ մեր Տեր Հիսուս Քրիստոսի աշխարհ գալու համար: Այո, ինչպես բազմիցս ասվեց, այս պատճառով էր, որ Հայկ նահապետը եկավ Պաղեստին և կառուցեց Երուսաղեմը, ապա հացն ու գինին, այսինքն՝ Քրիստոսի փրկչական մարմնի և արյան նախատիպը տվեց Աբրահամին: Նմանապես և հիքսոսները հատուկ մեսիական առաքելությամբ գրավեցին Եգիպտոսը՝ ընդունելով Աբրահամի փոքրաթիվ սերունդներին, իրենց մեծ Նահապետ Հայկ-Մելքիսեդեկի օրինակով շարունակելով հարթել Փրկչական ուղին:

ԳԻՐՔ – 3

ՆՈՐ ԲԱՅԱՀԱՅՏՈՒՄՆԵՐ

Արդար և Երանելի Հոբի մասին

«Հայաստանն՝ Աստվածաշնչյան երկիր։
Նրա ընդերքում եռում է կյանքը»[1]։

Նյութը, որին պետք է անդրադառնանք, զուտ Աստվածաշնչյան պատմություն է, և այլ պատմական աղբյուրներում անդրադարձ դրան հիմնականում չկա։

Հաճախ, երբ խոսքը վերաբերում է այդ հնագույն ժամանակներին (ն.Ք. II հազարամյակ), տպավորություն է ստեղծվում, թե տվյալ ժամանակաշրջանում ամբողջ աշխարհը գտնվել է խորը կռապաշտության մեջ, և միայն հրեաներն էին՝ որպես ընտրյալ ժողովուրդ, հավատում Միակ Ճշմարիտ Աստծուն։

Բայց, ինչպես արդեն գիտենք, դա բացարձակապես չի համապատասխանում իրականությանը. որպես ապացույց՝ նշենք հենց միայն այն, որ հրեաների նահապետ Աբրահամը, երբ դեռ նոր էր հավատքի եկել, և դուրս եկել իր ծննդավայրից՝ Միջագետքում գտնվող Քաղդեացիների Ուր քաղաքից և գնացել Քանանի երկիր, այնտեղ հանդիպել էր մի ամբողջական թագավորության, ուր վաղուց հավատում և պաշտում էին այն Աստծուն, Որին Աբրահամը դեռ նոր-նոր էր սկսում ճանաչել և հավատալ։ Խոսքն, իհարկե, Քանանում Սաղեմի հայոց թագավորության մասին է։ Իսկ որ հայերն այդ օրերից դեռ դարեր առաջ իրենց բուն հայրենիքում՝ Արարատյան թագավորությունում, հավատում և փառավորում էին Տիեզերքի Արարչին, դա անկասկած է։

*Վերհիշենք Ժուլ Լեկլերի խոսքը. **«Հայաստանը Հին աշխարհի այն երկրներից է, որոնց պատմությունը պատկանում է ամենահոր հնությանը, քանզի նրա մասին հիշատակվում է դեռ Մննդոց գրքում։ Ինչպես որ***

[1] Андрей Тарковский, советский кинорежиссер и сценарист.

Արարատն Աստվածաշնչյան լեռ էր Սինայից առաջ, այնպես Հայաստանը դարձավ Սուրբ երկիր Պաղեստինից առաջ, և արդարությամբ համարվում է մարդկության բնօրրան»[2]:

Կարող է հարց առաջանալ թե ինչո՞ւ են Հին Կտակարանյան այդ ժամանակներում հրեաները համարվել ընտրյալ ազգ, եթե մինչ նրանց՝ որպես ազգ ձևավորվելը հայերն արդեն իսկ Տիրոջ ընտրյալ և հավատարիմ ժողովուրդ էին:

Երբ հրեաներին կոչում են ընտրյալ ժողովուրդ, դա նշանակում է, որ նրանք ընտրված էին, որպեսզի Մեսիան՝ Քրիստոսը, մարմնով գար հենց իրենցից, ինչի համար էլ նրանցից ելան մարգարեները, որ պատմում էին գալիք Աստվածորդու մասին: Եվ այդ ամենը գրի էր առնվում դարերի ընթացքում, ինչի արդյունքում ձևավորվեց Հին Կտակարանը: Բայց ճշմարտությունից բացարձակ հեռու է այն կարծիքը, թե այն հեռավոր ժամանակներում միայն հրեաներն են եղել Աստծուն դավանող ժողովուրդ, ինչը հստակ ի ցույց է դնում հենց Հին Կտակարանը:

Անցնելով բուն նյութին՝ անդրադառնանք Հին Կտակարանի բազմաչարչար Հոբ Արդարին և նրա ընկերներին, ովքեր մեծ հավատք ունեին առ Աստված, և ըստ քիչ հավաստի որոշ աղբյուրների՝ բնակվում էին Քանանի երկրում կամ նրա մոտակայքում:

Իսկ ինչո՞ւ ենք այս թեման դարձրել ուսումնասիրության առարկա, ի՞նչ կապ կարող է ունենալ այն մեր գրքի ընդհանուր ուղղվածության հետ: Այդ հարցն ուսումնասիրելու ընթացքում ավելի կառարկայանա, և կպարզաբանվի, որ Հոբը և իր բարեկամները, լինելով մեծ հեղինակություն վայելող անձինք՝ թագավորներ և իշխաններ, կռապաշտներ չէին, այլ՝ հավատում և երկրպագում էին այն Աստծուն, Ում հավատում և փառավորում էին այդ ժամանակներում թե՛ հայերը և թե՛ հրեաները:

Բազմաթիվ հեղինակավոր անձինք են անդրադարձել Հոբի պատմությանը և ջանացել մեկնել նրա հետ տեղի ունեցած զարմանալի միստիկ դեպքերը: Սակայն մենք չենք ցանկանում այստեղ անդրադառնալ նրա հետ կապված դեպքերին և ներկայացնել տարբեր մեկնիչների մոտեցումները: Մեր խնդիրն այլ է. ուղղակի կաշխատենք ճշտել և իմանալ, թե ո՛վ էր Հոբը, ի՛նչ ազգի էր պատկանում և թե որտեղ էր բնակվում:

Այժմ ներկայացնենք համառոտ տեղեկություններ՝ Հոբի և նրա բարեկամների վերաբերյալ: ***«Ավսիդ[3] քաղաքում մի մարդ կար, որի անունը Հոբ էր: Այդ մարդը ճշմարտախոս էր ու անարատ, արդար էր ու աստվածապաշտ, ամեն տեսակի չար ու մեղավոր գործերից հեռու: Յոթը տղա ու երեք աղջիկ ունեցավ նա: Նրա հոտի մեջ յոթը հազար ոչխար կար, երեք***

---

[2] Жюль Леклерк. Поездка на Арарат. С.– Петербург 1893 г., ст. 37.

[3] Սուրբգրային այս հատվածը հունարեն բնագրից է, իսկ եբրայերենում Հոբի բնակության վայրի անվանման՝ «Ավսիդի» փոխարեն գրված է «Հուս»:

հազար ուղտ, հինգ հարյուր լուծ եզ և արածող հինգ հարյուր մատակ էշ. նաև բազմաթիվ սպասավորներ ուներ: Մեծամեծ գործեր ուներ նա երկրի վրա: Այդ մարդը բոլոր արևելաբնակներից ամենաազնվականն էր»[4]:

Բարեպաշտ Հոբն իր տասը զավակների համար միշտ հոգ էր տանում, որ նրանք Աստծո ճանապարհներից չշեղվեն: Նա այնպիսի հոչակ ու հեղինակություն ուներ, որ բոլոր ծեր իմաստունները ոտքի էին կանգնում նրա առաջ:

*Հոբի բարեպաշտության ու առաքինի վարքի համար Աստված օրհնել էր նրա բոլոր գործերը: Սակայն մի օր երկնքում, երբ հրեշտակները կանգնում են Աստծո առջև, սատանան էլ է հայտնվում[5]. **«Եվ Տերն ասաց սատանային. «Որտեղի՞ց ես գալիս դու»: Պատասխան տվեց սատանան Տիրոջն ու ասաց. «Երկրի երեսին շրջելով ու երկնքի տակ ման գալով եմ եկել»: Եվ Տերն ասաց նրան. «Ուշադրություն դարձրի՞ր իմ ծառա Հոբին, որի նման անարատ, ճշմարտախոս, աստվածապաշտ, ամեն տեսակի չար գործերից հեռու մնացող մարդ չկա երկրի վրա»:***

Պատասխան տվեց սատանան՝ ընդդիմանալով Տիրոջը. «Միթե Հոբը ձրի՞ է պաշտում Տիրոջը. չէ՞ որ Դու ես պաշտպանել նրան արտաքուստ ու նրա տունը՝ ներքուստ, և ամեն ինչ, որ կա նրա շուրջը. նրա ձեռքի գործերը Դու ես օրհնել, երկրի վրա նրա անասունները դու ես բազմացրել: Բայց դե փորձի՛ր մեկնել ու գցել Քո ձեռքը նրա ամբողջ ունեցվածքին, ու կտեսնես, որ նա դեմ առ դեմ կանիծի քեզ»: Այն ժամանակ Տերն ասաց սատանային. «Ահա նրա ամբողջ ունեցվածքը քո ձեռքն եմ տալիս, պայմանով, որ նրա անձին ձեռք չտաս»: Եվ սատանան հեռացավ Տիրոջ առաջից»[6]:

Որպեսզի բացահայտվի Հոբի անխախտ հավատարմությունը Տիրոջ հանդեպ, Աստծո թույլատու կամքով Հոբը ենթարկվում է սատանայի փորձություններին. մի օրում նա ամեն ինչ կորցնում է. տարբեր ցեղախմբեր, բոլոր կողմերից հարձակվելով, կոտորում են նրա հովիվներին և քշում տանում բոլոր անասուններին, մի մասն էլ հրո ճարակ է դառնում: Հոբը դեռ ուշքի չեկած՝ մի այլ լուր էլ է գալիս. ուրախության համար հավաքված բոլոր զավակները հզոր փոթորկի պատճառով զոհվել են տան փլատակների տակ:

*Հոբը խիստ ծանր է տանում այդ ամենը, սակայն չի մեղանչում Աստծո դեմ: **«Ապա Հոբը վեր կացավ, պատառոտեց իր հագուստները, կտրեց իր գլխի մազերը և գետնին փռվելով՝ երկրպագեց Տիրոջն ու ասաց. «Իմ մոր որովայնից ես մերկ դուրս եկա, մերկ էլ կվերադառնամ: Տերը տվեց,***

---

4 Յոբ 1:1–3:

5 Սա Քրիստոսի մարդանալուց առաջ դեռ իրավունք ուներ՝ հայտնվելու երկնային հավաքի: Տեր Հիսուս Քրիստոսի՝ աշխարհ գալով՝ սատանան վերջնականապես վռնդվեց երկնքից:

6 Յոբ 1:7–12:

Տերն էլ ետ առավ։ Ինչպես որ հաճելի էր Տիրոջը, այնպես էլ եղավ։ Թող օրհնեալ լինի Տիրոջ անունը»։ Եվ նրան պատահած այս բոլոր դեպքերի ժամանակ Հոբը չմեղանչեց Տիրոջ առաջ, ոչ էլ անզգամություն հանդես բերեց Աստծու հանդեպ»[7]։

Բայց սատանան՝ մարդկային ցեղի թշնամին, նորից է հայտնվում Տիրոջ առաջ և ասում, որ եթե Հոբի առողջությանը վնաս հասցվի, նա անպայման կանիծի Տիրոջը։

Տերը թույլ է տալիս սրան, որ դիպչի Հոբի մարմնին։

Հոբը հիվանդանում է բորոտությամբ. նրա ամբողջ մարմինը պատվում է վերքերով, և նա, հեռանալով քաղաքից, մի ամայի տեղում խեցիով սկսում է իր վերքերը քերել։ Նաև տառապում ու ծաղրվում է մարդկանց կողմից ու գիշերային մղձավանջներից։

Հոբի խոսքից երևում է, որ այդ վիճակը շարունակվել է ամիսներ[8]։

Այս ամենի մասին իմանալով՝ նրա երեք բարեկամները, որ տարբեր երկրների թագավորներ էին, գալիս են նրան այցելության, և տեսնելով Հոբին այդ վիճակում՝ մեծ կսկիծ են ապրում։ Հոբն, իրեն արդար տեսնելով, տարակուսում է, թե ինչու են պատուհասներն իրեն հասել՝ համարելով, որ հանիրավի են դրանք իրեն վիճակվել։ Իսկ բարեկամներն սկսում են նրան հանդիմանել՝ կարծելով, թե նա պիտի որ որևէ ծանր մեղք գործած լիներ, որի պատճառով էլ Տերը նման բան էր թույլ տվել։

Հոբի և ընկերների վեճը երկար է տևում...

Ի վերջո, Տերը հայտնվում է փոթորկի մեջ՝ հանդիմանելով Հոբի ընկերներին, որ հանիրավի մեղադրում են նրան։ Իսկ որպեսզի Հոբը հասկանա, որ Աստծո գործերն անքննելի են, Տերը հարցադրումներով ի ցույց է դնում Իր անընդգրկելի իմաստությունը, զորությունն ու ամենակարողությունը։

*Եվ Հոբին փոքր-ինչ հասկանալի է դառնում ամբողջ արարչագործության պատմությունը։ Հոբը, որքան էլ մեծ հավատքի տեր էր, սակայն որպես մարդ՝ նա չէր կարող ընդգրկուն պատկերացում ունենալ Աստծո մասին։ Եվ խոնարհվելով Տիրոջ առաջ՝ ասում է. **«Սրանից առաջ ես ականջներովս էի լոկ լսել, բայց հիմա աչքերս էլ տեսան հենց Քեզ։ Այդ պատճառով նվաստ համարեցի ինձ ու հալվեցի ես։ Ինքս ինձ հող ու մոխիր եմ դիտում»[9]։***

Այս ամենից հետո Տերն ավելի մեծ օրհնությամբ է օրհնում Հոբին՝ նրան իր նախկին ունեցածի կրկնակին տալով։ Հոբը նորից յոթը որդի և երեք դուստր է ունենում, և ապրում շատ երկար, խաղաղ ու երջանիկ կյանքով, մահից հետո էլ հավիտենական կյանքի հաստատուն հույսով։

---

7 Յոբ 1:20–23:

8 Յոբ 7:3:

9 Յոբ 42:5–6:

Ահա, շատ համառոտ ներկայացնելով բազմաչարչար Հոբ երանելու սուրբգրային պատմությունը՝ հիմա անցնենք մեզ հետաքրքրող բուն նյութին։

Բարեպաշտությանը հետամուտ տարածքներ

Այժմ փորձենք պարզել, թե ովքե՛ր էին Հոբը և նրա ընկերները, ի՛նչ ժամանակներում էին ապրում, ո՛ր երկրներում էին բնակվում և ի՛նչ ազգի էին պատկանում, որ այնքան մեծ հավատք ունեին առ Աստված այն ժամանակներում, երբ դեռ աշխարհը հիմնականում խարխափում էր կռապաշտության խավարի մեջ։

Իսկ թե ե՞րբ են այս դեպքերը տեղի ունեցել, կարծիքները խիստ տարբեր են, հստակություն չկա։

Ըստ առավել ընդունված տեսակետների՝ Հոբին առնչվող դեպքերը տեղի են ունեցել Ն.Ք. մոտ II հազարամյակի առաջին կեսերին։ Կան նաև ավելի մասնավոր կարծիքներ, որ Հոբի գիրքը գրվել է շատ ավելի ուշ շրջանում։ Դրան կանդրադառնանք ստորև։

Եզակի կարծիք է նաև 4-5 դդ. քրիստոնյա աստվածաբան Թեոդորոս Մոպսեուեստացու մոտեցումը Հոբի գրքին, ըստ որի՝ այն ընդամենը առակների հավաքածու է, և որ նման անձ գոյություն չի ունեցել։ Սակայն նրա այս կարծիքը դատապարտվել է V եկեղեցական ժողովում։ Համանման կարծիք ունեցել են նաև մի քանի հրեա ռաբբիներ, սակայն Սուրբ Գիրքը միանշանակ ի ցույց է դնում Հոբի՝ աստվածաշնչյան իրական կերպարը (Եզկ 14։13-20, Հկ 5։12)։ Այնպես որ, քրիստոնյա մեկնիչների մեծամասնությունն ընդհանրապես ոչ մի կասկած չի ունեցել Հոբի՝ իրական պատմական անձնավորություն լինելու առումով. ***«Մենք վստահ ենք, որ սա իր էությամբ ճշմարիտ պատմություն է, այլ ոչ՝ գրական ստեղծագործություն, թեկուզ և երկխոսությունը գրված է բանաստեղծական ոճով։ Որևէ կասկածից վեր է, որ Հոբ անվամբ մարդ իսկապե՛ս եղել է»***[10]։

Նախ ասենք, որ ո՛չ Հոբն էր ազգությամբ հրեա և ո՛չ էլ՝ իր ընկերները. թե՛ հրեա, թե՛ քրիստոնեա, թե՛ այլ դավանանք կրող մեկնիչները դա ուղղակի բացառում են՝ առհասարակ չդարձնելով քննարկման նյութ. ***««Ընդհանրապես գրքի օտարերկրյա՝ ոչ եբրայական ծագման մասին հավաստիանում ենք գրչի կողմից լուության պահպանումից, նաև եբրայեցի***

[10] Matthew Henry's, Commentary, In One Volume Genesis to Revelation, Grand Rapids, Michigan, USA 1960, page 514.

անձանց, եբրայական հինկտակարանյան օրենքների, եբրայական պատմական դեպքերի և այլնի մասին նկարագրության բացակայությունից»[11]:

Հրեաներն այդ ժամանակներում դեռ գտնվում էին Եգիպտոսում. սկզբում՝ հիքսոսների, իսկ հետո էլ՝ բուն եգիպտացիների տիրապետության տակ:

Սբ. Հովհան Ոսկեբերանն ասում է, որ Հոբն ապրել է այն ժամանակներում, երբ դեռ «ո՛չ օրենքները կային և ո՛չ շնորհը»: Ուրեմն, նրանք ապրել են օրենսդիր Մովսեսից առաջ: ***«Հոբի գիրքը պատմում է բավականին վաղ շրջանի՝... Եգիպտոսում Իսրայելի թափառելու ժամանակաշրջանի մասին»***[12]:

Ռուսական Եկեղեցում աղոթք կա՝ ուղղված Հոբին՝ որպես Աստծո առջև մեծ բարեխոսի. այստեղ նույնպես նշվում է, որ Հոբը Մովսեսից առաջ է ապրել. ***«Ո՛վ մեծ արդար, բազմաչարչար Հոբ, քո մաքուր վարքով և Աստծո հետ սուրբ մտերմությամբ պայծառացածդ, դու մինչ Մովսեսը և Քրիստոսը՝ այս երկրի վրա ապրեցիր՝ Աստծո բոլոր պատվիրանները քո սրտում կրելով և կատարելով... »***[13]:

Իսկ ինչ վերաբերում է Հոբի և ընկերների՝ ով և որտեղից լինելու մասին կարծիքներին, դրանք հիմնականում ձևավորվել են Հոբի գրքի վերջում տեղ գտած հատվածի հիման վրա. այստեղ մանրամասն ներկայացվում է նաև թե ումի՛ց է Հոբը սերել, ովքե՛ր են նրա պապը և հայրը, ո՛ր երկրից էին նրանք, և ո՛ր երկրում էր թագավորում Հոբը:

Հարց է ծագում. եթե այդ ամենը գրված է, ի՛նչ իմաստ ունի այդ թեմային անդրադառնալ և նոր ուսումնասիրություններ սկսել. Սուրբ Գրքի տեղեկությունները մի՛թե բավարար չեն:

Սակայն խնդիրն այն է, որ այդ մասին եղած փոքրիկ հատվածը բնագրերի հետ կապ չունի: Այն ավելի ուշ շրջանի հավելում է, ինչը թարգմանվել է աստրերենից և հետագայում կցվել հունական բնագրին: Այն եբրայերենում ընդհանրապես բացակայում է: Իսկ սլավոնական Աստվածաշնչում այդ հատվածը գրված է Հոբի գրքի բուն շարադրանքից դուրս՝ «նշումների» մասում:

Այսպիսով, աստրական ուշ շրջանի այդ հատվածը, կարելի է ասել, հորինվածք է և կապ չունի Հոբի գրքի հետ: Սակայն մեկնիչներից ոմանք դա ընդունել են որպես հիմք և առաջնորդվել են դրանով:

Աստրերեն գրքի թարգմանության մեջ ասվում է. ***«Հոբը բնակվում էր Ավստա երկրում՝ եդոմայեցիների ու արաբների սահմաններում: Առաջ նրա անունը Հոբաբ էր: Արաբ կին առնելով՝ որդի ունեցավ, որի անունն էր Ենոով: Նրա հայրը Զարեհն էր՝ Եսավի որդու որդին: Նրա մայրը բո-***

---

11 Православный собеседникь, Казань 1906 г., ст. 366–7.

12 Генри Г. Геллей, Краткий библейский толкователь, Торонто – Канада 1989 г., ст. 249:

13 Акафист святому и праведному Иову Многострадальному.

սորացի էր։ Այնպես որ, նա Աբրահամից սկսած՝ հինգերորդ սերունդն էր։ Սրանք են այն թագավորները, որ թագավորեցին Եդոմում. առաջինը՝ Բեորա Բաղակը (սրա քաղաքի անունն էր Դենաբա), Բաղակից հետո՝ Հոբաբը (որ Հոբ կոչվեց)»[14]։

Հոբ և Եսավ

Ասորերենից թարգմանված այս հատվածում ասվում է, որ Հոբը սերում է Աբրահամի թոռ Եսավից։ Ո՞վ էր Եսավը. նա Աբրահամի որդի Իսահակի երկվորյակ որդիներից անդրանիկն էր։ Իսկ կրտսեր Հակոբն իսրայելացիների նահապետն էր։ Քանի որ Եսավն առաջնեկն էր, նա էր համարվում Աստծո ընտրյալը, և բոլոր օրհնությունները պատկանում էին նրան։ Սակայն Եսավին ընդհանրապես չէր հետաքրքրում հավատքը. նա զվարճանում էր որսորդությամբ և հարևան կռապաշտ ազգերից կանայք առնելով՝ վշտացնելով ծնողներին՝ Իսահակին և Ռեբեկային։

Հակոբը Աստծո ճանապարհներին շատ նախանձախնդիր էր և երկյուղած էր Տիրոջ հանդեպ։ Մի օր Եսավը որսից վերադառնում է շատ հոգնած ու սոված և տեսնելով, որ Հակոբը ոսպապուր է եփել և պատրաստվում է այն ճաշակել, խնդրում է Հակոբին, որ ոսպապուրից իրեն էլ տա։ Հակոբն, իմանալով Եսավի անհոգությունը հոգևոր կյանքի հանդեպ, ասում է, որ եթե նա տա իրեն անդրանկության պարգևը, ինքն էլ կզիջի ոսպապուրը։ Եսավը որպես ոչ կարևոր մի բան՝ անդրանկությունը պատրաստակամ և անհոգ կերպով փոխարինում է այդ մի ափսե ապուրի հետ։ ***«Եսավն իր անդրանկությունը վաճառեց Հակոբին, իսկ Հակոբը Եսավին տվեց հաց ու ոսպապուր։ Սա կերավ, խմեց ու վեր կացավ, գնաց։ Այսպիսով, Եսավն արհամարհեց իր անդրանկությունը»***[15]։

Տեր Աստված, տեսնելով Հակոբի նախանձախնդրությունն ու Եսավի արհամարհանքը, համապատասխան վերաբերմունք ցուցաբերեց՝ ասելով. ***«Ես սիրեցի Հակոբին, բայց Եսավին ատեցի»***[16]։

Իսկ Պողոս Առաքյալը Եսավին ընդհանրապես անվանում է «պոռնիկ և պիղծ», որը թեև զղջաց արցունքներով, սակայն թողություն չստացավ։ ***«... և չլինի, թե որևէ մեկը լինի պոռնիկ և պիղծ, ինչպես Եսավը, որը մի ման կերակրի դիմաց անդրանկությունը վաճառեց»***[17]։

Ուրեմն, մի՞թե պոռնիկ և Աստծո համար ատելի Եսավից կսերվեր

---

14 Յոբ 42:17:

15 Ծննդ. 25:34:

16 Մաղաք. 1:2:

17 Եբր. 12:14–17:

Հոբի պես ընտրյալ մեկը. հատկապես որ, Եսավի կանայք անօրեն-կռապաշտ էին և անպատշաճ վարքով վշտացրել էին Իսահակին ու Ռեբեկային: Այդ փշի՝ Եսավի և տատասկանման իր կանանցից Հոբ երանելու նման զարմանալի, քաղցրապտուղ ծառ չէր աճի: Եսավից և իր կռապաշտ կանանցից կարող էին սերվել միայն իրենց կերպարին համապատասխան ցեղեր, օրինակ՝ ամաղեկացիները, որոնք, ըստ Սուրբ Գրքի, սերվել են Եսավի թոռ Ամաղեկից. սա մի ազգ էր, որ հայտնի էր իր անօրինությամբ: Մինչ պատմության ասպարեզից վերանալը՝ սա մշտապես եղել է Աստծուն թշնամի, կռապաշտ ազգ: Այդ մասին մանրամասն կխոսվի հետագայում:

*Եթե Հակոբից սերվեցին իսրայելացիները, ապա նրա ավագ եղբորից՝ Եսավից էլ սերվեցին եդոմացիները: Քանզի թե՛ Եսավը, թե՛ Եդոմը նույն անձի անուններն են. **«Եսավը՝ նույն ինքը Եդոմը, հաստատվեց Սեիր լեռան վրայ»**[18]:*

Աստվածաշունչ մատյանում մենք տեսնում ենք, որ եդոմացիները միշտ եղել են կռապաշտ և երբեք չեն դավանել Աստծուն: Բայց հակառակը պատահել է. Հուդայի Ամասիա թագավորը, թողնելով Տիրոջը, հարեց եդոմացիների կուռքերին:

Ուրեմն, ինչպե՞ս եղավ, որ կռապաշտությանը հետամուտ ժողովրդին վերագրվեց ծնող լինել ոչ միայն Հոբի պես սուրբ, անարատ և աստվածապաշտ մարդու, այլև՝ մի ամբողջ բարեպաշտ ժողովրդի, որի վրա իշխում էր Հոբը:

*Մի խոսքով, ոչ մի կերպ հնարավոր չէ ասորական այդ կցորդն իրական համարելու համար որևէ հիմնավոր փաստ գտնել. **«Աստվածաշնչյան քննադատական գրականությունը չգիտի այնպիսի օրինակ, որտեղ Հոբի գրքի իսկությունն ամբողջովին մերժվում է: Կասկածի տակ են դրվում միայն որոշ մասեր»**[19]:*

Այստեղ միակ նմանությունն այն է, որ Եսավից սերված եդոմացի թագավորներից մեկի անվանումը որոշ նմանություն ունի Հոբի հետ. դա Հոբաբն է:

***«Այս Հոբաբը, այն համբերող Հոբը չէ»**[20]:*

*Հոբի բարեկամները ևս տարբեր երկրների թագավորներ էին և աստվածապաշտ էին: Նրանցից մեկին՝ Եղիփազին նույնպես վերագրվում է եդոմական ծագում. թե նա էլ, իբր, Եսավի սերնդից էր: **«Իսկ այն բարեկամները, որ նրա մոտ եկան, սրանք էին. Եղիփազը՝ Թեմնացիների արքան (Եսավի որդիներից), Սոքեցիների բռնակալ Բաղդատը, մինեցիների արքա Սոփարը»**[21]:*

---

18 Ծննդ. 36:8:

19 А. П. Лопухин, Толковая Библия, Петербургъ 1907 г., ст. 13–14.

20 Պետրոս Արքեպիսկոպոս Բերդումյան, Մեկնություն Ծննդոց, Ս. Էջմիածին 2010 թ., էջ 180:

21 Յոբ 42:17:

*Նման մոտեցման դեպքում սխալմամբ կարելի է ենթադրել, թե անօրեն ու պիղծ Եսավից ավելի շատ աստվածապաշտ մարդիկ են սերվել (ամբողջ երկու թագավորություն), քան Աստծո սիրելի Հակոբից: Դա լիովին հակասում է Սուրբ Գրքից մեզ հասած տեղեկություններին: Մի այլ տեղում էլ եդոմայեցիները հատուկ նշված են՝ որպես **«թշնամի ժողովուրդ»**[22]: Իսկ Աստծուն թշնամի ժողովուրդն իր ամբարիշտ վարքի համար ժամանակի ընթացքում ընդունում է անխուսափելի հատուցում. **«Սուրն իմ, որ հարբել է երկնքում, այժմ իջնելու է եդոմայեցիների վրա և կորստյան դատապարտված ժողովրդի վրայ՝ դատաստանի համար»**[23]: Նաև շեշտվում է. **«Եսավը Հակոբի եղբայրը չէ՞ր», - ասում է Տերը, - ես սիրեցի Հակոբին, բայց Եսավին ատեցի, նրա սահմանները ամայության դարձրի և նրա ժառանգությունը՝ անապատի բաժին: Եթե Եդոմն ասի, թէ՝ ահա կործանվեցինք, դառնանք և շինենք ավերված քաղաքները, այն ժամանակ այսպես կասի Ամենակալ Տերը. «Թող նրանք շինեն, իսկ Ես կկործանեմ, և նրանց սահմանները կկոչվեն անօրինության սահմաններ, իսկ ժողովուրդը, որի հետ Տերը հավիտյան պատերազմ պիտի մղի, կկոչվի՛ անօրեն»»**[24]:

Ըստ մի այլ եզակի կարծիքի՝ Հոբը կարող էր Աբրահամի եղբոր՝ Նաքորի որդին լինել: Սակայն Աբրահամի հայրը և եղբայրը՝ Նաքորը, նույնպես եղել են կռապաշտներ, ինչի մասին մի տեղ չէ, որ գրված է Սուրբ Գրքում: Եվ ուրեմն որևէ լուրջ հիմք չկա, ըստ որի՝ կռապաշտ Նաքորը համարվի Հոբի նախնի:

*Կա մասնավոր մի այլ կարծիք ևս, ըստ որի՝ Հոբի գրքի հեղինակը, հնարավոր է, որ արաբական ծագում ունեցող մեկն է եղել. **«Տարածում է գտել կարծիք, որ ի սկզբանե պատմությունը գրի է առնվել արաբերեն լեզվով, իսկ հետո այն թարգմանել է եբրայերեն»**[25]:*

*Սակայն Աբրահամի որդի Իսմայելից սերված արաբները նույնպես եղել են անօրեն կռապաշտներ: Նման ժողովրդի մեջ Հոբի և իր իշխանության տակ գտնվող բարեպաշտ անձանց ներկայությունն անհավանական է համարում Հովհան Ոսկեբերանը: **«Մի մարդ կար, որ ապրում էր Ավստիդ երկրում»: Ուշադրություն դարձրու նրա առաջին գովասանքին, որ մարդը... ապրում էր Ավստիդիայի երկրում: Դա մեծ գովասանք է, որ նա եղել է Արաբիայում, որտեղ բոլորը այլասերված էին, որտեղ չի հանդիպում բարեպաշտություն, և դա զարմանալի է»**[26]:*

---

22 Թուեր 24:18:

23 Եսայի 34:5:

24 Սաղար. 1:2–4:

25 П. Юнгеровъ, Частное историко-критическое введение въ священныя Ветхозавътныя книги. Книги законоположительныя, историческия и учительныя. Казан 1907 г., ст. 302.

26 Полное собрание творений святителя Иоанна Златоуста в 12-ти томах, том 10–12, Минск 2005 г., ст. 1442.

Իսկ եթե կան այնպիսի կարծիքներ, որ Հոբը կարող էր Նաքորից (քաղդեացիներից) կամ Իսմայելից, այսինքն՝ արաբներից լինել, ուրեմն նման կարծիք ունեցողներն էլ, բնականաբար, չեն ընդունել Աստվածաշունչ մատյանի աստրական այդ կցորդը՝ կապված Հոբի՝ Եսավից սերվելու հետ, չնայած որ իրենց կարծիքներն էլ այդ տեղեկության նման անհիմն են։

Այսպիսով, եթե Հոբը և իր ընկերները հրեա չէին, ինչպես տեսանք, նաև Եսավի, Նաքորի կամ Իսմայելի սերնդից էլ չէին. դրանից հետևում է, որ մի այլ տեղ է պետք փնտրել նրանց ազգային ծագման հարցի պատասխանը։

Հոբի գրքի մասին

Հոբի գիրքը Հին Կտակարանի գրքերի մեջ ամենախնդրահարույցն է ժամանակագրական, աշխարհագրական, բանասիրական և հոգևոր տեսանկյունից։ Եթե հաշվի առնենք տարբեր մեկնիչների հիմնավոր և մասնակի հիմնավոր կարծիքները, ապա կեզրակացնենք, որ ժամանակագրական առումով այդ գիրքը կարող էր գրված լինել մոտ 1300 տարի ընդգրկող ժամանակաշրջանի մի որևէ հատվածում՝ սկսած մոտ ն.Ք. XVII դարից մինչ ն.Ք. VI դ.։ Սակայն այն մեկնիչները, որ Հոբի գրքի ստեղծման ժամանակը նախընտրում են դնել վաղ շրջանում, ավելի հիմնավոր փաստարկներ են բերում։ Իսկ նրանք, ովքեր համարում են, որ Հոբի գիրքն ավելի ուշ է գրվել, այդպիսի եզրահանգման են եկել միայն այն պատճառով, որ այդ գիրքը դարերի ընթացքում թարգմանիչների և արտագրողների կողմից որոշ խմբագրական փոփոխությունների է ենթարկվել։

*Միմյանցից այդքան տարբեր կարծիքներ հայտնողները պատահական մարդիկ չեն, այլ՝ ճանաչված հեղինակություններ. **«Թալմուդիստ ռաբբիները տարբեր ժամանակներ էին նշում գրքի ծագման համար և հեղինակ էին համարում Մովսեսին, Սողոմոնին, Երեմիային կամ անհայտ արաբական բանաստեղծի։ Հետևելով հրեական ավանդույթներին՝ քրիստոնեական ավանդույթն էլ չի տալիս ճշգրիտ պատասխաններ. Որոգինեսը, Հերոնիմոսը, Մեթոդիոսը և Եփրեմ Ասորին Մովսեսին կամ նրա ժամանակակիցներին էին վերագրում այն, Բարսեղ Մեծը համարում էր, որ գիրքը պատկանում է դատավորների դարաշրջանին, Գրիգոր Աստվածաբանը վերագրում էր Սողոմոնին»**[27]։*

[27] П. Юнгеровъ, Частное историко-критическое введение въ священныя Ветхозавътныя книги. Книги законоположительныя, историческия и учительныя. Казан 1907 г., ст. 289.

*Ինչպես տեսնում ենք, այստեղ Հոբի գրքի ենթադրյալ հեղինակներից ամենավաղեմին Մովսեսն է: Սակայն Հոբի գրքում կան դրվագներ, որոնցով հերքվում է, որ այստեղ ներկայացվող դեպքերը Մովսեսի ժամանակ են կատարվել: Ըստ Մովսեսի օրենքների՝ Աստծուն կարող էին զոհ մատուցել միայն եբրայեցի քահանաները: Իսկ Հոբի բարեկամներին Տերը պատվիրում է Հոբին խնդրել, որ իրենց համար զոհ մատուցի և աղոթի, որ չպատժվեն Հոբին հանդիմանելու համար. **«(Տերը) չէր պատվիրի դա, եթե Օրենքը գոյություն ունենար. նա՝ ինքը (Հոբը) դառնում է քահանա, երբ զոհ է մատուցում. տես՝ զոհ է մատուցում և՛ զավակների համար, և՛ ընկերների համար»**[28]:*

*Ուրեմն, դեպքերը տեղի են ունեցել Մովսեսից և Օրենքներից առաջ, երբ դեռ եբրայեցիները Եգիպտոսից դուրս չէին եկել և մտել Սինայի անապատ, որտեղ ստացան օրենքները: Ուստի, հավաստի ենք գտնում այս հաստատումը. **«Երբ փայլում էր այդ արդարը, հրեաները դեռ գտնվում էին Եգիպտոսում»**[29]:*

*Ահա, չնայած ժամանակագրական առումով կարծիքները շատ տարբեր են, սակայն կա ավելի ընդունված կարծիք, որ Հոբն ապրել է Ն.Ք. մոտ 1700-1500 թվականներին՝ Մովսեսից բավական առաջ, և գիրքն էլ գրվել է այդ ժամանակներում. **«Այսպես՝ մետրոպոլիտ Ֆիլարետը, սրբազան Ագաֆանգելը և արքեպիսկոպոս Ֆ. Բուխարևը այն դասում են Աստվածաշնչյան գրականության հնագույն ստեղծագործությունների թվին. «Ենթադրվում է,- ասում է առաջինը,- որ Հոբի գիրքը վերաբերում է նահապետների ժամանակաշրջանին»: «Այն,- նկատում է վերջինը,- ի հայտ է եկել՝ նախքան Մովսեսի օրենսդրությունը»»**[30]:*

*Իսկ «Մովսեսից առաջ» ասվածը, հատկապես երբ խոսքը վերաբերում է Ն.Ք. 1700 թվականներին, համընկնում է Իսահակի և Հակոբի ժամանակաշրջանին: Կա նաև կարծիք, որ թեև դեպքերը տեղի են ունեցել նրանց օրոք, սակայն գրի են առնվել արդեն Մովսեսի ժամանակ և ավելի ուշ ընդգրկվել են Սուրբ Գրքում: Այդ մասին Մեթյու Հենրին գրում է. **«Մենք համոզված ենք, որ այս պատմությունը շատ հին է՝ չնայած չենք կարող ճշգրիտ որոշել Հոբի կյանքի ժամանակաշրջանը կամ գիրքը գրելու ժամանակը: Գիրքը պարունակում է շատ «ալեհերության»՝ այսինքն, հնության ակնհայտ նշաններ, ըստ որի՝ մենք հիմք ունենք կարծելու, որ այն ունի «նույն տարիքը», ինչը՝ Մննդոց գիրքը: Իսկ սբ. Հոբը Իսահակի կամ Հակոբի ժամանակակիցն է՝ չնայած նա չի եղել այն խոստման ժառանգակից, որը տվել էր նրանց երկրային Քանանի կապակցությամբ, սակայն նրանց***

---

28 Полное собрание творений святителя Иоанна Златоуста в 12–ти томах, том 10–12, Минск 2005 г., ст. 1482–1483.

29 Полное собрание творений святителя Иоанна Златоуста в 12–ти томах, том 10–12, Минск 2005 г., ст. 1483.

30 А. П. Лопухин, Толковая Библия, Петербургъ 1907 г., ст. 10.

պես Հոբն էլ լավ հայրենիքի՝ երկնայինի ակնկալիքն ուներ»[31]։

Մեկնիչներն ակնհայտ տարակուսանքի մեջ են ժամանակաշրջանի հարցում, քանզի, ինչպես ասվեց, ամենավաղ շրջանը համարվել է Ն.Ք. XVII դ., իսկ ամենաուշը՝ Ն.Ք. VI դ.։ ***«Հոբի գիրքը Հին Կտակարանի ամենավաղ և ամենաուշ շրջանի կանոնական գրքերից մեկն է. այս երկու ծայրահեղ տեսակետներն են ժամանակագրության հարցում»***[32]։

Այն, որ այս գիրքը գրվել է Մովսեսի կողմից գրված Հնգամատյանից առաջ, շատերին է զարմանք պատճառել և դժվարացրել նրա հեղինակին ճանաչելու խնդիրը. հատկապես որ, գրքի ոճն էլ չի համընկնում այն ժամանակաշրջանին, երբ հրեաները դեռ ջանում էին ապրել Մովսեսի օրենքներով։ ***«Օրենսդրության շրջանին բնորոշ չեն վերացական, տեսական դատողությունները՝ հատկապես այնպիսիք, որոնց հանդիպում ենք Հոբի գրքում»***[33]։

Այս գիրքն, ընդհանրապես, իր կերպով շատ յուրահատուկ է և շատ տարբեր՝ Հին Կտակարանի մյուս գրքերից. ***«Հոբի գիրքն առանձին է և իր բովանդակությամբ կապված չէ Աստվածաշունչ մատյանի գրքերից որևէ մեկի հետ. ուստի այն կարելի է համարել միակը՝ իր կերպի մեջ»***[34]։

Նման կարծիքի հանդիպում ենք նաև այլ մեկնիչների աշխատություններում, որով և հիմնավորվում է այդ գրքի ժամանակագրական հնությունը Հին Կտակարանի մյուս գրքերի համեմատ։ ***«Մի խոսքով, կրոնական և բարոյական զարգացման ու գիտակցման գործում Հոբի գիրքն անվիճելի առաջընթաց քայլ է Հնգամատյանի համեմատ։ Նույն ժամանակաշրջանում նրանց հայտնվելն անհնարին բան էր։ Երկրորդ կարծիք լինել չի կարող»***[35]։

Այս ամենից ելնելով էլ՝ աստվածաշնչյան բազմաթիվ գրքերի մեկնիչ սուրբ Հովհան Ոսկեբերան հայրապետը, ի վերջո, եկել է այսպիսի եզրահանգման. ***«Ոսկեբերանն ասում էր՝ «Հոբի գիրքը կարող է՝ Մովսեսը գրած լինի, կարող է՝ Սողոմոնը. ես չգիտեմ»***[36]։

Այս հիմքով կարող ենք համոզված լինել, որ Հոբն՝ ապրել, և իր մասին գիրքն էլ գրվել է Մովսեսից առաջ, երբ դեռ չկար Հին Կտակարանը։

Իսկ թե ինչո՞ւ են կարծիքներն այդքան տարբեր, ինչո՞ւ չկա համընդհանուր, միասնական մոտեցում, կրկին նշենք՝ դրա պատճառն այն է,

---

31 Matthew Henry's, Commentary, In One Volume Genesis to Revelation, Grand Rapids, Michigan, USA 1960, page 514.

32 А. П. Лопухин, Толковая Библия, Петербургъ 1907 г., ст. 11.

33 А. П. Лопухин, Толковая Библия, Петербургъ 1907 г., ст. 11.

34 Matthew Henry's, Commentary, In One Volume Genesis to Revelation, Grand Rapids, Michigan, USA 1960, page 514.

35 А. П. Лопухин, Толковая Библия, Петербургъ 1907 г., ст. 11.

36 П. Юнгеровъ, Частное историко-критическое введение въ священныя Ветхозавътныя книги. Книги законоположительныя, историческия и учительныя. Казан 1907 г., ст. 289.

որ այդ հնագույն ժամանակների մասին պատմական տեղեկությունները շատ սակավ էին, իսկ մեր ժամանակներում վերելք ապրող հնագիտությունը շատ ավելի է հարստացրել պատմությունը (հատկապես Հայաստանի պատմությունը), ինչն էլ հնարավորություն է ընձեռել՝ նոր լույսի ներքո ուսումնասիրելու դժվար մեկնելի պատմական և աստվածաշնչյան տեղեկությունները, որ մինչ օրս մնացել են քողարկված։

Հայկական գործոնը հին աշխարհի լայնածավալ տարածքներում

«Հիշե՛ք. հայերը պետականորեն կազմավորված
ամենահին ժողովուրդն են երկրի վրա, իսկ Հայաստանի տա-
րածքը այն հնագույն տարածքն է, որը միանգամայն
պարզորոշ կապվում է այդ ժողովրդի հետ։
Այսինքն՝ հայերն ու Հայաստանը փոխկապակցված միակ ազգը
և միակ տարածքն են, որ շատ հստակ նշված են»[37]։

Ինչպես նկատեցինք, մեկնիչները Հոբի վերաբերյալ տարբեր կարծիքներ են հայտնել. որ նա կա՛մ եղել է Եսավի սերնդից (այսինքն՝ եդոմացի), կա՛մ՝ Նաքորի սերնդից (այսինքն՝ քաղդեացի) և կամ՝ արաբ (այսինքն՝ Իսմայիլի սերնդից)։ Սակայն դրանք բոլորն էլ անհավանական են, քանի որ Հոբի՝ այսպիսի նախնիներն իրենց կյանքով, բարքով և հավատալիքներով ոչ մի կերպ չեն համապատասխանում Հոբի և նրա ընկերների կերպարներին։

Ուրեմն, կարող է հարց առաջանալ, թե տվյալ ժամանակներում արդյոք կային այնպիսի անձինք, որոնց առանձնահատկությունները, ըստ սուրբգրային տեղեկությունների, կարող էին համընկնել Հոբի կերպարին։ Հարկավ, կային, և դա հստակ ցույց է տալիս Աստվածաշունչ մատյանը։

Թերևս, ավելորդ է ասել, որ կային ոչ միայն որոշ անձինք, այլ՝ մի ամբողջ թագավորություն, որտեղ տիրում էին նույն բարքերը, և որտեղ հավատում էին այն նույն Աստծուն, Ում հավատում էին Հոբը, իր ընկերները և, վստահաբար նաև՝ նրանց ենթակա և հպատակ ժողովուրդները։ Ակնարկը Սաղեմի Հայոց թագավորության մասին է։ Եթե հետազոտողները կարող էին Հոբին համարել սերված պիղծ ու անօրեն Եսավից կամ կռապաշտ Նաքորից կամ էլ բարեպաշտական հետք չթողած Իսմայիլի սերնդից, ապա ինչո՞ւ նրա ծագումը չդրոնել հենց սաղեմացիների մեջ,

[37] Անդրեյ Գեորգևիչ Կուպցով, ռուս գրող։

որոնց բարեպաշտության մասին հստակ տեղեկություն է տալիս Սուրբ Գիրքը: Իսկ սա ամենահավանական տարբերակն է և ի զորու է տալ բոլոր խնդրահարույց հարցերի պատասխանը:

Իսկապես զարմանալի է, որ մեկնիչները հայացքները չեն ուղղել Սաղեմի թագավորության կողմը՝ մի ամբողջ բարեպաշտ թագավորության, որի գլուխն էր Սաղեմի թագավոր և բարձրյալ Աստծո քահանա Մելքիսեդեկը, և նրանից հետո էլ, բնականաբար, նրա բարեպաշտ հետնորդները:

Մեկնիչները համարյա ոչինչ չեն գրում այն մասին, թե ովքե՛ր կարող էին լինել սաղեմացիները, ինչպիսի՛ կենցաղավարություն կարող էին ունենալ, որքա՜ն տևեց այդ թագավորության ժամանակաշրջանը, ինչպիսի՛ ճակատագրի արժանացան նրա բնակիչները: Այդ լռությունն ակամա բերում է այն մտքին, որ Սուրբ Գրքում Սաղեմի մասին ընդգրկուն տեղեկությունները, կարծես, հատուկ քողարկված էին և վերապահված՝ քողազերծվելու միայն այս՝ Վերջին կոչվող մեր օրերին:

*Դրան սկսեցինք հաղորդ լինել՝ սկսած առաջին հատորից: Իհարկե, այնպես չէ, թե Մելքիսեդեկը և նրա թագավորությունը լիովին մոռացության են մատնվել ուսումնասիրողներից: Ամեն դեպքում, երբեմն հպանցիկ հիշել են՝ չուրանալով, որ մինչ հրեաների նահապետ Աբրահամը՝ արդեն իսկ գոյություն ուներ աստվածաճանաչ ժողովուրդ. **«Աստծո նախախնամական գործունեությունը, հավասարապես և ճշմարիտ կրոնն ու բարեպաշտությունը, համենայն դեպս, չեն սահմանափակվել միայն ընտրյալ ժողովրդի նեղ շրջանակներում: Առանձին արդարներ և արդարների ամբողջ ընտանիքներ ապրել են նաև այլ վայրերում՝ «քայլելով Աստծո առջև»: Որպես այսպիսին՝ բացի Մելքիսեդեկից, հանդես էր գալիս նաև Հոբը»**[38]:*

*Տվյալ մեկնիչի մոտ, եթե Հոբն իր հավատքով հիշատակվում է Մելքիսեդեկի կողքին, ապա սա հուշող հանգամանք է Հոբի ծագումնաբանության հենց Մելքիսեդեկի հետ կապելու համար. հատկապես որ, ինչպես Մելքիսեդեկին, այդպես և Հոբին համարել են Քրիստոսի նախատիպ. **«Գիտնական եպիսկոպոս Պատրիկը վկայակոչում է Հերոնիմոսին, ով բազմիցս խոսել է Հոբի մասին՝ որպես Քրիստոսի նախատիպի»**[39]:*

Սակայն Հոբի թեման, միևնույն է, մնում է ուսումնասիրությունների ծիրից դուրս, և քայլ չի արվում՝ նրա ծագումը փնտրել ոչ թե անօրեն կռապաշտների, այլ՝ Սաղեմի Հայոց բարեպաշտ թագավորության մեջ: Իսկ մենք մեր հետազոտումների ուղեցույց կդարձնենք հենց այդ հանգամանքը:

Հոբի՝ ով լինելու հարցը պարզաբանելու համար նորից հիշենք, թե

---

38 А. П. Лопухин, Библейская История Ветхого Завета, Монреаль, 1986 г., ст. 75.

39 Matthew Henry's, Commentary, In One Volume Genesis to Revelation, Grand Rapids, Michigan, USA 1960, page 514.

այդ ժամանակներում (ն.Ք. շուրջ XVII դարում) ի՛նչ տարածքների էին տիրում հայերը: Մեծ և փոքր Հայքերի տարածքներից սկսելով իրենց մարտարշավները՝ նրանք իջել էին դեպի հարավ և գրավել Միջագետքը. սա պատմության մեջ հիշվել է՝ որպես Քասեցիների արշավանք: Այդ նույն շրջանում նրանք ասպատակել էին նաև արևելյան կողմերը՝ գրավելով Հնդկաստանի հյուսիսային տարածքները. այն անվանվել է Արիների արշավանք: Ապա նաև մեծ հարձակում էին սկսել դեպի արևմուտք՝ գրավելով Սիրիան, Քանանը (Պաղեստինը), նրանց հարող մյուս երկրները և, վերջապես, նաև Եգիպտոսը. խոսքն, իհարկե, հիքսոսների մարտարշավների մասին է: Իսկ ինչ վերաբերում է Հայաստանից դեպի հյուսիս ընկած տարածքներ արշավելուն, դրա անհրաժեշտությունը չկար, քանզի դեռ Հայկ նահապետի օրերից, ըստ վրաց պատմաբան Լեոնտի Մռովելիի, հյուսիսաբնակ այդ ժողովուրդներն արդեն իսկ ինքնակամ հպատակվել էին Հայոց արքունիքին:

Հայոց գերիշխանության տակ մտած այդ անծայրածիր տարածքներում, բնականաբար, պետք է բազմաթիվ մեծ և փոքր թագավորություններ գոյություն ունենային, որոնց գահերին, տրամաբանական է, որ իշխող ժողովրդի (այսինքն՝ հայերի) ներկայացուցիչներից նստած լինեին: Ուրեմն, շատ հավանական է, որ թե՛ Հոբը և թե՛ իր թագավոր բարեկամները հենց այդ հայազգի արքաներից են եղել:

Բայց Հոբի և իր ընկերների հայկական ծագման տարբերակի օգտին խոսում է ոչ միայն այն հանգամանքը, որ նրանք արքաներ էին հայոց գերիշխանության տակ գտնվող տարածքներում, այլև այն, որ հայերը դավանում և հավատում էին այն Աստծուն, Ում հավատում էին Հայաստանի բնակիչները՝ թե Ջրհեղեղից առաջ և թե՛ հետո: Այսինքն՝ հայերը հավատում էին Նոյ և Հայկ-Մելքիսեդեկ նահապետների Տեր Աստծուն, Ում և հավատում և պաշտում էին նաև Հոբը և իր բարեկամները:

Հոբի հետ կապված՝ այս երկու կարևոր հանգամանքներից բացի՝ կա ևս մեկը, որ մեծապես նպաստում է Հոբին հայկական ծագում վերագրելուն:

Արևելք

«Ճանապարհորդելով Հայաստանում՝ ես, ի վերջո, ինքս ինձ ասացի. «Խորանանք Հայաստանի պատմության մեջ, բայց թույլ չտանք, որ այն տիրապետի մեզ»: Հայաստանում հնությունները այնքան շատ են, որ նրանց տարիքն աստիճանաբար դադարում է զարմացնել երևակայությունդ»[40]:

Հոբի գրքի սկզբում, երբ ներկայացվում է, թե ով և ինչպիսին էր նա, հաղորդվում է նաև, որ Հոբը (ըստ հունարեն Յոթանասնից թարգմանության) արևելաբնակ էր. ***«Այդ մարդը բոլոր արևելաբնակներից ամենաազնվականն էր»***[41]*:*

Սակայն եբրայերեն բնագրում այս նախադասությունը որոշ չափով տարբերվում է հունականից. այդտեղ ոչ թե գրվում է, որ նա եղել է «արևելաբնակ», այլ՝ նա «Արևելքի որդիներից էր»:

Նկատելի է, որ եբրայերեն բնագրում ավելի դիպուկ է ասված այդ մասին, որին և մենք կանդրադառնանք: Այդ նախադասության մեջ մեզ հետաքրքրողը հենց «Արևելք» բառն է:

Եթե, հիմք ընդունելով Հոբի գրքի ասորական կցորդը՝ համարենք, որ Հոբն իսկապես ապրել է Քանանին կից տարածքներում, ուրեմն այդ տարածքները պետք է որ անվանվեին Արևելք: Բայց հարց է ծագում, թե ո՛ւմ համեմատ՝ արևելք: Արևելք հասկացությունը աշխարհագրական տեսանկյունից շատ հարաբերական է, քանի որ նախ հստակ չէ, թե որտե՛ղ է եղել այդ արևելքը, ո՛ր երկրի համեմատ է այն եղել արևելք. եթե Իսրայելի, ապա այն ժամանակ Իսրայելը՝ որպես երկիր, ընդհանրապես գոյություն չուներ: Արևելքին եթե զուտ աշխարհագրական տեսանկյունից նայենք, ապա դա շատ վերացական մոտեցում է տվյալ քննարկման համար: Իսկ եթե այն դիտարկենք ոչ աշխարհագրորեն, այլ ուղղակի՝ որպես տեղանուն, այդ դեպքում այն ավելի կիմաստավորվի: Այդ դեպքում «Արևելքի որդիներ» հասկացությունը պետք է մի ուրույն ժողովրդի մասին լինի, այլ ոչ թե՝ աշխարհագրական մի որոշակի տարածքում ապրող տարբեր ցեղերի:

Հիշենք, որ Հոբի պատմությունը մեզ է հասել զուտ Աստվածաշունչ մատյանի շնորհիվ, և հենց Աստվածաշնչում է, որ Հայաստանի տարածքն անվանվում է «Արևելք», ինչպես որ մենք այդ մասին հանգամանորեն արդեն իսկ տեղեկացրել ենք մեր ուսումնասիրության առաջին հատորում:

---

40 Յոթ գարունների երկրում. Լև Սլավին. Հայաստան, Հայաստան..., Երևան 1983 թ., էջ 32:

41 Յոբ 1:1–3:

*Այստեղ նորից չենք մանրամասնի թե ինչո՛ւ է հատկապես «Արևելք» անվանվել Հայկական լեռնաշխարհի տարածքը Սուրբ Գրքում, միայն հիշեցնենք, որ շումերներն էլ իրենցից հյուսիս գտնվող Հայաստանին անվանում էին **«Արևածագի երկիր»**:*

Ուրեմն, Հոբն ազգությամբ եղել է «Արևելքի» որդիներից, այսինքն՝ Հայկ նահապետի սերունդներից մեկը:

*Այդ ահռելի տարածքների բնիկների մոտ հայերը հայտնի էին՝ որպես «Արևելքի որդիներ», և նաև համարվում էին ազնվական ժողովուրդ: Իսկ տվյալ ժամանակաշրջանում նրանցից ամենաազնվականը հենց Հոբ երանելին էր. **«Այդ մարդը Արևելքի բոլոր որդիների մեջ ամենաազնվականն էր»**[42]:*

*Ուրեմն, Հոբի ընկերները նույնպես ազնվական հայեր էին, որ հայկական հսկողության տակ գտնվող այդ անծայրածիր տարածքներում տիրակալներ էին: Հավանաբար, մեկը եղել է հայ-քասեցիներից, որ եկել է Միջագետքից, մյուսը՝ հայ-արիներից, որ եկել էր Հնդկաստանից, իսկ երրորդը՝ հայ-հիքսոսներից, որ և եկել էր Եգիպտոսից: Հոբի պես հզոր, բարեպաշտ, իմաստուն և հարուստ մարդու մասին տեղյակ էին Արևելք - Հայաստանի բոլոր որդիները, քանզի նրանց մեջ նա, ինչպես ասվեց, «ամենաազնվականն» էր: **«Դա մեծագույն արդար մեկն էր և օրինակ՝ հավատքի ու համբերության... «եղել է անարատ, արդար և աստվածավախ, և հեռացել է չարից» և իր հարստությամբ «հայտնի է եղել Արևելքի բոլոր որդիների մեջ»»**[43]:*

Ուստի, երեք կարևոր և ուղղորդող պարագա նշենք. առաջին, նրանք հայկական իշխանության տակ գտնվող տարածքների արքաներ էին. երկրորդ, հայերի հետ նույն հավատքն ունեին. երրորդ, Հոբը և իր բարեկամները Հայաստանի սկզբնական անվամբ կոչվում էին «Արևելքի որդիներ»:

Սրանք հիմնավոր ապացույց են թե՛ Հոբի, թե՛ նրա բարեկամ թագավորների հայկական ծագման մասին:

Բայց եթե Հոբի այդ երեք բարեկամները Հնդկաստանի, Միջագետքի և Եգիպտոսի կողմերից էին եկել Հոբին այցելության, ապա հարց է առաջանում, թե Հոբը որտե՛ղ էր գտնվում՝ որտե՛ղ էր այն երկիրն, ուր տեղի էր ունենում Հոբի և իր բարեկամների զրույցը, ուր Աստված հայտնվեց Հոբին:

---

42 Յոբ 1:1–3:

43 А. П. Лопухин, Библейская История Ветхого Завета, Монреаль 1986 г., ст. 75.

Հոբը և Հայաստանը

«Վանքերից դուրս գալիս ինձ անմիջապես ողջունեց Արարատը՝ բարձրացնելով մինչ երկինք իր ձնեպսակ գլուխը։ Այս լեռան ապշեցնող վեհությունը և նրա սրբասուն հանրաճանաչությունը լիացրեց հոգիս՝ անբացատրելի ակնածանքով։ Ես տեսա Նոյի փրկության վայրը՝ մարդկության բնօրրանը»[44]։

Հոբը, բնակվելով հայկական տիրապետության տակ գտնվող տարածքներից մեկում, տրամաբանորեն, չէր կարող լինել այն երեք երկրներից՝ Հնդկաստանից, Միջագետքից և Եգիպտոսից մեկում, որտեղից իրեն այցի էին եկել բարեկամները։ Ուրեմն, որտե՞ղ փնտրել Հոբի բնակավայրը։ ***«Եթե Հոբը միանգամայն պատմական դեմք է, ապա առաջանում է բնական հարց նրա բնակության և կյանքի ժամանակահատվածի մասին։ Նա, ըստ Գրքի, ապրել է Հուս քաղաքում, «Ավստա երկրում», ինչպես որ այն անվանում են մեկնիչները։ Բայց որտե՞ղ է հատկապես գտնվում տվյալ տարածքը՝ ստույգ ասել չի կարելի»[45]։***

Ուրեմն, եթե Հոբի բնակավայրն այդ երեք երկրներում չի եղել, այդ դեպքում մնում է երկու տարբերակ՝ Հոբն ապրել է կամ Պաղեստինում, կամ էլ՝ Հայաստանում։

Եթե նրա բնակության վայրը լիներ Պաղեստինը, ապա նա՝ որպես բարեպաշտ հայորդի, կապրեր Սաղեմում, այլ ոչ՝ Հուս կամ Ավստա անվանվող քաղաքում։ Ուրեմն, Պաղեստինը պետք է բացառել, հատկապես որ հետազոտողներն էլ չեն ընդունում այդ տարբերակը. ***«Եկեք այժմ քննարկենք հետևյալ հարցը. ո՞վ էր գրքի գրողը, և ինչպե՞ս է գիրքը ստեղծվել։ Այս հարցի պատասխանին անդրադառնալով՝ հետազոտողներն առաջին հերթին ուշադրություն են դարձրել Հոբի բնակության վայրին։ Գրքի սկզբում նշվում է քիչ հայտնի Հուս երկրի անունը, հունարեն և սլավոներեն՝ Ավստա, որի մասին կարող ենք ասել, որ այն Պաղեստինում չի եղել»[46]։***

Իսկ եթե Հոբի բնակության վայրը Պաղեստինում չի եղել, ուրեմն մեզ մնում է մեր հայացքն ուղղել Հայաստանի կողմը։

Բայց արդյոք միայն մե՞ր ուսումնասիրություններն են նման կարծիք ձևավորում։ Մի՞թե մինչ այդ այլ տեսակետ չի եղել։ Պարզվում է, որ եղել

---

44 Н. Нефедьева, Взгляд на Армянсквую область, Санктпетербургъ 1839 г., ст. 5.

45 А. П. Лопухин, Толковая Библия, Том 4, Петербургъ 1907 г., ст. 6.

46 П. Юнгеровъ, Частное историко-критическое введение въ священныя Ветхозавътныя книги. Книги законоположительныя, историческия и учительныя. Казан 1907 г., ст. 301.

*է, այն էլ՝ մեկից ավելի. Հոբի բնակության վայրը՝ Հուսը, Հայաստանի հետ են նույնացրել հատկապես հրեական աղբյուրները. **«Հուս=Ուզ: Միայն հրեական գրական հուշարձաններում կարելի է հանդիպել Հայաստանի հետ այս երկրի նույնացմանը... Որոշ հրեական մեկնությունների մեջ էլ Հայաստանը համարվում է Հոբի «Հուս երկիրը». այդպես են կարծում Նախմանիդեսը և Յոզեֆ բեն Դավիդ իբն Յախյան: Հրեա մեկ այլ մեկնիչ՝ Աբրահամ Ֆարիսսոլը (1451-1525), ունի «Հուս-Հայաստան» արտահայտությունը»**[47]:*

Իսկ ինչո՞ւ է Հոբի բնակության վայրն անվանվել Հուս, և ինչո՞ւ են հրեա հետազոտողները Հուսն ու Հայաստանը նույնացրել: Կարծում ենք, որ շատ տրամաբանական է հրեա գիտնականների այդ նույնացումը: Քանզի, ինչպես որ Հուսը նմանություն ունի Հայքի հետ, այդպես և նման է Հիքսոս անվանը: Թե՛ Հուսը և թե՛ Հիքսոսը նույն Հայք-Հայաստան անվանման որոշ փոփոխություն կրած տարբերակներ են: Ասենք նաև, որ հայերի մեջ տարածված է եղել, և մինչ օրս էլ օգտագործվում է «Հուս - իկ» անվանումը:

*Հետաքրքիր է, որ հրեական ավանդությունները ոչ միայն համարում են, որ Հայաստանում է եղել Հոբի բնակավայրը, այլև հստակ ցույց են տալիս, թե Հայաստանի ո՛ր մասում է այն գտնվել. ավելի ստույգ՝ այն վայրը, որտեղ գտնվում էր Հոբն իր բարեկամների հետ: **«Հրեաների և հայերի փոխադարձ հարաբերության մասին պետք է կարդալ Ռիթթերի գործը՝** Erdkunde, **ժ հատոր, էջ 586-ից սկսած... Պետք չէ զարմանալ, երբ Տյուպայի գործի մեջ կարդում ենք, թե Արաքսի մոտ մի ծառ կա, որի մոտ, ասում են, թե պատսպարվել են Հոբը և իր երեք բարեկամները: Երբ հորիզոնը նեղանում է և ընդգրկում հայերի առանձին պատմությունը, ապա տեսնում ենք, թե իրենց պատմության սկզբնական քայլերի մեջ ովքեր են հաստատված եղել այս բարեբեր և լայնատարած դաշտավայրում»**[48]:*

Տեսնում ենք, որ Լինչն էլ կողմնակից է այս հրեա հեղինակին, և ինքն էլ է համարում է, որ Արաքսի այդ «բարեբեր և լայնատարած դաշտավայրում» է գտնվել Հոբի բնակավայրը: Իսկ մենք գիտենք, որ Արաքսը Եդեմական չորս գետերից մեկը՝ Գեհոնն է, որ սկիզբ է առնում Բյուրակնից, ոլորապտույտ հոսելով՝ հասնում Արարատյան դաշտավայր՝ ոռոգելով այդ բերրի տարածքը, որտեղ էլ, հավանաբար, Արարատ լեռան և Նոյան տապանի հովանու ներքո բնակվել է Հոբը:

Հայաստանը մի երկիր է, որտեղ գտնվող Եդեմի պարտեզում՝ Դրախտում, Աստված հայտնվեց Ադամին, Ջրհեղեղից հետո էլ Արարատ լեռան մոտ Տերը հայտնվեց Նոյին, այդպես և նույն այդ վայրում՝ Դրախտից

---

47 Շուշան Խաչատրյան, Աստվածաշունչը հայերի և Հայաստանի մասին: Համացանց:

48 Հ. Ֆ. Պ. Լինչ, Հայաստան ուղեւորութիւններ եւ ուսումնասիրութիւններ, հատոր Ա, Կ. Պոլիս 1913 թ., 266 էջ:

ելնող գետերից մեկի՝ Գեհոն-Արաքսի մոտ էլ Տերը հայտնվեց Հոբին և Իր շնորհով ու մղմամբ էլ այդտեղ գրվեցին Հոբի հետ տեղի ունեցած զարմանահրաշ դեպքերը։



*Այս կապակցությամբ կա նաև հնուց մեզ հասած մի հայկական ավանդություն, որն ավելի հստակ է մատնանշում Հոբի բնակության վայրը՝ Արաքս և Սև ջուր գետերի մոտակայքի բլրի վրա գտնվող Սև բերդ կոչված ամրոցի մերձակա տարածքը. «**... մի բլրի գագաթին, որ բարձրացած է դաշտավայրում՝ Սև ջրի ջրանցքի ափին, Արաքսից մոտիկ, բարձրանում է «Սև բերդը»... Հայկական ավանդությունն ասում է, որ սրա մոտերքում էր, որ Հոբը, նստած աղբանոցի վրա, խոսում էր իր երեք առակախոս բարեկամների հետ**»*[49]։

Հավանաբար այդ բերդի տեղում է եղել այն քաղաքը, որի մասին հիշատակում է Հոբը։

«Գերեզմանս թո լինի քաղաքն իմ, որի պարսպի վրա ճեմում էի»[50]։

Հոբի հայկական ծագման օգտին է խոսում նաև այն, որ Հայաստանը համարվում է հայրենիքը՝ բոլոր հիմնական մետաղների և, հատկապես, երկաթի, որի մշակումը, ինչպես արդեն գիտենք, մի քանի դար եղել է հայոց մենաշնորհը. այսինքն՝ միայն հայերն են տիրապետել դրա գաղտնիքին։ Նաև այն, որ Հայաստանը լեռնային երկիր է, հարուստ՝ քարատեսակներով, հայրենիքն է համարվում հացահատիկների, այստեղ են կառուցվել նաև առաջին ոռոգող համակարգերը։ Իսկ որ այս ամենը եղել է այն տարածքներում որտեղ ապրել է Հոբը, դա հաստատում է հենց ինքը.

«Հայտնի է տեղը արծաթի, որտեղից այն հանվում է, և տեղը ոսկու, ուր այն զտվում է։ Երկաթը հողից է դուրս գալիս, պղինձն էլ քարի պես տաշվում է...

Գալով այս հողին՝ ապա այնտեղից է ելնում հացը. իսկ իր ընդերքը շուռ-մուռ է տրված, ինչպես կրակից։ Նրա քարերը շափյուղա ունեն, իսկ հողը՝ ոսկի...

---

49 Էլիզէ Ռէկլիի, Ռուսական Հայաստան կամ Արաքսի ավազանը, Վաղարշապատ 1890 թ., էջ 66–67:

50 Յոբ 6:10:

Մարդը ձեռքն է գցել ապառաժներին, հիմքից սասանել բարձրաբերձ լեռներ։ Պատառոտել է գետի հորձանքներ։ Բոլոր պատվական այս բաները ես աչքովս եմ տեսել»[51]։

Հոբն ասում է, թե ձյունով լվացվեց, և դա ևս խոսում է այն մասին, որ նա ո՛չ Եգիպտոսի, ո՛չ Միջագետքի և ո՛չ էլ Հնդկաստանի կողմերի բնակիչ չէր կարող լինել, որտեղ ձյուն չի գալիս, այլ ապրել է Հայկական լեռնաշխարհում, որտեղ տարվա չորս եղանակներն էլ հավասարապես իրենց դերի մեջ են։ ***«Եթե ձյունով իսկ լվացվեի ու ձեռքերս էլ օշնանով մաքրեի, դարձյալ սաստիկ աղտեղությամբ կներկեիր ինձ՝ պատմուճանս իմ աչքերին զազրելի դարձնելով»***[52]։

Ճիշտ է, Հոբը խոսում է նաև այնպիսի կենդանիների-թռչունների մասին, որոնք Հայաստանի ազատ բնության մեջ չկան, ինչպես, օրինակ՝ ջայլամը։ Բայց պետք է հաշվի առնել, որ այդ դեպքերը տեղի են ունեցել մեզանից մոտ 3500 տարի առաջ, որի ընթացքում բազմաթիվ կենդանատեսակներ վերացել են Հայաստանի սահմաններից, ինչը հաստատում են բնագետները։ Ի դեպ, Հայաստանում վերջին տասնամյակներին կրկին զարգանում է ջայլամաբուծությունը, և գյուղատնտեսները նշում են, որ այս բարկացկոտ ու կամակոր թռչուններն մեր երկրում իրենց լիովին լավ են զգում։

Հիշենք նաև, որ ձիու բուծման և ընտելացման հայրենիքը նույնպես համարվում է Հայաստանը, և Հոբի գրքում էլ կա խոսք ձիու մասին։

«Մի հին և անանուն հույն հեղինակ, նկարագրելով ձիերին՝ ըստ երկրների, նախ հիշում է հայկական երիվարին և այն համարում է բավական հաղթանդամ և շատ ուժեղ, ողնալայն և պնդակող և Հոբի ձիու պես սաստիկ խրխնջացող»[53]։

Այսպիսով, տեսնում ենք՝ բոլոր հնարավոր տարբերակներից ամենատրամաբանականը և հիմնավորն է այն, որ Հոբի ծագումը հայկական էր, բնակության վայրը՝ հենց Հայկական լեռնաշխարհը։

Հետաքրքիր է, որ Գարեգին Սրվանձտյանցը, նկարագրելով Արևմտյան Հայաստանում գտնվող Սիփան սարը, այն համեմատում է Հոբի հետ։

«Պատկերացրու Հոբին, որ իր ցավերով օրեր շարունակ պառկած կողքի վրա... տառապում էր. և իր աչքերից արցունքներ էին թափվում. դրանք Սիփանի վտակներն են։ Որդերը գալարվում էին նրա անձի վրա. և դրանք հասանցի քրդերն են։ Իր գլխի մազերը թափվել էին, տրորվել էր գանգի մորթը, և երևում էր լերկ ոսկորները. և այդ Սիփանի ձյունապատ ու սառցե գագաթն էր։ Թշնամացել էին իր հացը ուտողները, հարևան-

---

51 Յոբ 28:1–10:

52 Յոբ 9:30:

53 Ղեւոնդ Ալիշան, «Յուշիկք հայրենեաց Հայոց», հատոր Ա, Ս. Ղազար Վենետիկ 1920 թ., էջ 60:


ները և բարեկամները. դրանք Լաթառի շեյխերն ու ավազակ ֆախիներն են: Նրա փորի և կողի վրա խոցեր էին հայտնվել. և դա նման էր Սիփանի սև-սև , կույտ-կույտ բլրակներին: Եվ այն մեծ Մանազկերտի դաշտը, որ քար ու քոռով, այսինքն՝ մանր ու մեծ ժայռերով լի է, անբույս, անմխիթար և տխուր. դա ասես լիներ Հոբի աղբանոցը և խեցիները, որոնցով իր վրայից քերում էր շարավը: Այս է այդ լերան համառոտ նկարագիրը»[54]:

Այսպիսով, Հոբին իր հայազգի բարեկամներն այցելել են Հայաստանից դեպի արևելք, հարավ և արևմուտք ընկած տարածքներից՝ գալով իրենց բուն հայրենիք՝ Հայաստան:

*Եվ պատահական չէ, որ գիտնականներից ոմանք Հոբի բարեկամներից մեկին՝ Սոփարին վերագրում են հայկական ծագում. **«Նորագույն ուսումնասիրությունը Հոբի բարեկամներից մեկին՝ մինացիների իմաստուն և երիտասարդ թագավորին չեն վարանում հայ համարել»**[55]:*

Իհարկե, կարծում ենք, որ այդ ուսումնասիրողները նրանց բոլորին էլ հայ կհամարեին, եթե իրենց ձեռքի տակ ունենային այն տեղեկությունները, որ այս վերջին օրերին են ի հայտ գալիս:

*Գրքի վերջին հատվածում պարզվում է նաև, որ Հոբի բարեկամների մեջ կա ևս մեկը՝ չորրորդը՝ Եղիուս անվամբ. նա համարվում է առեղծվածային անձնավորություն, բայց հետաքրքիր է, որ հայերեն թարգմանության մեջ գրված է, որ նա Արամի ազգականն է: Նշված Արամը, հավանաբար, հայոց Արամ Մեծն էր՝ Արա Գեղեցիկի հայրը: Եղիուսն էլ պետք է որ հայկական գերիշխանության տակ գտնվող այդ տարածքներից մեկից եկած լիներ. **«Հոբը դադարեց խոսելուց: Այնուհետև նրա երեք բարեկամներն էլ լռեցին ու չխոսեցին Հոբի դեմ, որովհետև Հոբն արդար էր նրանց աչքին: Բարկացավ Բարաքիելի որդի Եղիուս Բուզացին՝ Օստացիների աշխարհից, Արամի արյունակիցներից, սաստիկ զայրացավ Հոբի վրայ, քանի որ սա իրեն արդար էր ցույց տալիս Տիրոջ առաջ»**[56]:*



---

54 Գարեգին Սրվանձտյանց. Երկեր, Հատոր 1, Երևան 1978 թ., էջ 54:

55 Հ. Յ. Աւգեր, «Դասեր Հայոց եւ Հայաստանի հնագոյն պատմութեան», Բազմավեպ ամսագիր, հատոր Հ, դեկտեմբեր թիվ 12, Վենետիկ, Սուրբ Ղազար 1912 թ., էջ 530:

56 Յոբ. 32:1-2:

Հոբի Գիրքը և Հին Կտակարանը

«Երկիր և երկրորդ օրրան մարդկանց նորոգության։ Ես, հոգով թռչելով քեզ մոտ, ցանկանում եմ ապրել հիշողությամբդ։ Երբ երկիրը ծածկված էր ալեբախ պատժի ահեղ ջրերով, այնտեղ՝ գագաթին Արարատի, տապանն ավարտեց երթն իր հրաշալի։ Այնտեղ՝ հայկական երկնակամարում, կտակի առաջին ճառագայթն է փայլում, և ամպերը մթագնած՝ վանում։ Արարչի սերն Իր օրենքով պատվիրում է մարդկանց կյանքը պահպանել, և երկնքի հետ կապը չընդհատել»[57]։

Եթե Հոբն ապրել է Հայաստանում, և տեղի ունեցած դեպքերն էլ, գրի են առնվել Արարատ լեռան ստորոտում, ապա ինչպե՞ս է այդ գիրքը թարգմանվել եբրայերեն և տեղ գտել Հին Կտակարանում։ Այս հարցը շատերին է հետաքրքրել. ***«Յուրաքանչյուր աստվածաշնչագետի համար ակամա հարց է, թե ինչպե՞ս ոչ հրեական ծագման գիրքը կարող է ընդգրկվել հրեական կանոնի Աստվածաշնչյան գրվածքների մեջ։ Հետո, եթե գիրքը հրեական ծագում չունի, ապա ինչո՞ւ է այն հայտնի և պահպանվել է միայն եբրայերեն շարադրանքում. արդյոք ի սկզբանե այն գրվել է եբրայերե՞ն, թե՞ դա թարգմանություն է. ե՞րբ և ո՞ւմ կողմից է այն արված»***[58]։

Որպեսզի այդ գիրքը հայերենից եբրայերեն թարգմանվեր, պետք է հայերի և հրեաների միջև ինչ-որ ժամանակ կապ հաստատված լիներ, որպեսզի հրեաները կարողանային այդ գրքին ծանոթանալ։ Նման կապ եղել է, այն էլ՝ բավականին սերտ։ Եգիպտոսում հայ-հիքսոսների և հրեաների երկդարյա մտերմությունը լիովին կարող է պատասխանել պրոֆեսոր Յունգերովի այդ հարցերին։ Այո, հիքսոսների հետ շփման ժամանակ է, որ հրեաներն իրենց հովանավոր հայերից այդ պատմության մասին տեղեկացել և թարգմանելով եբրայերեն՝ ընդգրկել են Հին Կտակարանի գրքերի շարքում։

«Հրեաները, նույնիսկ չլինելով Հոբի բարեկամները (քանի որ նա եղել է իսրայելական հասարակությանը օտար), զգուշությամբ պահպանում էին իրենց վստահված Աստծո խոսքը, և միշտ ներդրել են այս գիրքն իրենց սուրբ կանոնի մեջ։ Այնտեղ նկարագրված պատմությունից հղում է անում առաքյալը (Հկ 5.11), իսկ մեկ այլ առաքյալ մեջբերում է անում

[57] Сергей Глинка, Гайк. Русские писатели об Армении. Ереван 1946 г., ст. 41.

[58] П. Юнгеровъ, Частное историко-критическое введение въ священныя Ветхозавътныя книги. Книги законоположительныя, историческия и учительныя. Казан 1907 г., ст. 304.

այդ գրքից (Հբ 5.13)»[59]*։*

Ինչպես տեսնում ենք, այս հարցերի պատասխանները կարող էին ի հայտ գալ միայն Հայաստանի պատմության՝ մինչ օրս լայն տարածում չգտած դրվագները լուսաբանելիս։

Հոբի գրքում կան դրվագներ, որտեղ խոսվում է այնպիսի կենդանիների մասին, որոնց բնակության վայրն Աֆրիկան է (կոկորդիլոս, գետաձի և այլն)։ Ոմանք հարցնում են, թե որտեղի՞ց պիտի Հոբը նրանց մասին իմանար, եթե նա աֆրիկացի չէր։ Բայց չէ՞ որ այդ ժամանակ Եգիպտոսում տիրում էին հայերը, և այդ տեղեկությունները կարող էին տարբեր ուղիներով հասնել Հայաստան։ Ջի բացառվում նաև, որ ինքը՝ Հոբն, իր 245 տարիների կյանքի ընթացքում այցելած լիներ հիքսոսյան Եգիպտոս։ Նաև այնպես չէ, որ աշխարհագրական և բնագիտական տեղեկությունները այդ ժամանակներում շատ սահմանափակ էին։

Հոբի Գրքի և Հին Կտակարանի ընդհանրությունները

«Աստծո սերն է այնտեղ՝ Հայաստանը,
Աստծո հետ սարերում խաչված...
Ուր լողում է Արարատը սպիտակափառ»[60]*։*

Կարծիք կա, որ հրեա թարգմանիչը խմբագրման է ենթարկել Հոբի գիրքը, ինչն էլ պատճառ է դարձել, որ այն իր կառուցվածքով նմանվի Հին Կտակարանի գրքերին. ***«Հոբի գիրքը, չնայած եբրայական ծագում չունի, սակայն Աստծո մասին այն ուսուցանում է մաքուր աստվածաշնչյան մոտեցում՝ աշխարհի ստեղծման, բարի և չար հոգիների մասին։ Եվ լեզուն էլ համապատասխանում է Հինկտակարանյան մյուս գրքերի լեզվին. դա ցույց է տալիս, որ Հոբի չարչարանքների պատմության սկզբնական գրվածքը հայտնի է դարձել մի ինչ-որ եբրայեցի հոգեշնորհ գրողի... Նա դա թարգմանել է եբրայերեն՝ խմբագրելիս այն նմանեցնելով Հինկտակարանյան աշխարհայացքին»***[61]*։*

Ըստ այս մեկնիչի՝ ստացվում է, որ Հոբի գիրքը գրել է ոչ թե իսրա-

---

59 Matthew Henry's, Commentary, In One Volume Genesis to Revelation, Grand Rapids, Michigan, USA 1960, page 514.

60 Чичибабин Б.А., «Псалом Армении».

61 А. П. Лопухин, Толковая Библия, Петербургъ 1907 г., ст. 12.

յելացի, այլ՝ օտարազգի մեկը, գրվածքն ի սկզբանե աղքատիկ մի ինչ-որ պատմություն է եղել, և միայն այն ժամանակ, երբ իսրայելացի մեկն է այն ձևավորել՝ ըստ հինկտակարանյան ոգու, գիրքն ստացել է ներկայիս կատարյալ տեսքը։

*Այսպիսի պատկերն արդյունք է այն մտայնության, որ մեկնիչներն այդ ժամանակներում որպես Աստվածաճանաչ ժողովուրդ՝ միայն հրեաներին էին տեսնում, իսկ շուրջբոլորն, ըստ նրանց, միայն հեթանոսներ էին. **«Եթե գիրքը գրել է ինքը՝ Հոբը, ապա որոշ հրեական գրողներ իրավացիորեն խոստովանում են նրան որպես մարգարե՝ հեթանոսների մեջ»**[62]։*

*Եվ նորից պետք է մեր զարմանքն արտահայտենք այս առումով և ընդգծենք. եթե Արարատյան երկիրը, որտեղ ապրել են Նոյ նահապետը և իր բարեպաշտ հետնորդները, մեկնիչների ուշադրությանը չի արժանացել, չեն դիտարկել, թե ի՞նչ կերպ են այստեղ ապրել և պաշտել Տիրոջը, ապա պետք էր, որ գոնե Սաղեմը և նրա բնակիչներին աչքի առջև ունենային՝ որպես հավանական թեկնածու այն նույն Աստվածպաշտության, ինչը որ կար հրեաների մոտ և հեռուներում չփնտրեին Հոբի և իր ընկերների պաշտամունքի կերպը։ Այդ ժամանակ պարզ կլիներ, որ մինչ հրեաները կձևավորվեին՝ որպես ազգ, արդեն վաղուց ձևավորված և պատմություն կերտած մի այլ ազգ Աստծուն պաշտում և փառաբանում էր. **«Եթե Հոբի գիրքը հրեական ծագում չունի, ապա ինչո՞վ են բացատրվում այն նմանությունները, որ այն ունի Հին Կտակարանի այլ գրքերի հետ»**[63]։*

Եթե մեկնիչներն ընդունեին, որ սաղեմաբնակները պաշտել էին այն Աստծուն, ում հետագայում սկսեցին պաշտել նաև հրեաները, ապա չէին զարմանա՝ նկատելով Հոբի գրքի և Մովսեսի Հնգամատյանի միջև եղած որոշ տարբերություններ և բազմաթիվ ընդհանրություններ, քանզի երկու գրքերն էլ գրվել են նույն՝ Աստվածային շնորհի ներգործությամբ։

***«Ի մի բերելով Հոբի գրքի մասին բոլոր ներկայացված տեսությունները՝ մեջբերենք Գրիգոր Երկխոսի խոսքը. «Ո՞վ է գրել Հոբի գիրքը՝ մենք չենք կարող իմանալ. միայն գիտենք, որ Սուրբ Հոգին է այն թելադրել, և Նա է դրա ճշմարիտ Հեղինակը»։ (**Moral in Iob. Praef. I c.**)»**[64]։*

---

62 Matthew Henry's, Commentary, In One Volume Genesis to Revelation, Grand Rapids, Michigan, USA 1960, page 514.

63 П. Юнгеровъ, Частное историко–критическое введение въ священныя Ветхозавътныя книги. Книги законоположительныя, историческия и учительныя. Казан 1907 г., ст. 304.

64 П. Юнгеровъ, Частное историко–критическое введение въ священныя Ветхозавътныя книги. Книги законоположительныя, историческия и учительныя. Казан 1907 г., ст. 305.

Սուրբ Գիրք՝ մինչ Հին Կտակարանը

«Երբեմն արտահայտություններ են հանդիպում հայ ժողովրդի ընտրյալության մասին: Անխոս, Աստվածաշնչում այդ մասին ուղիղ շարադրանք մենք չենք գտնի: Բայց, այնուամենայնիվ, Եդեմը՝ դրախտային այգին՝ մարդկության բնակության սկզբնավայրը, գտնվել է հենց Հայկական լեռնաշխարհի տարածքում: Ուրեմն, ստացվում է, որ իսկապե՛ս ընտրված է հայկական հողը, հետևաբար՝ նաև ժողովուրդը»[65]:

*Համարվում է, որ Աստծո մասին պատմող առաջին գիրքը Հին Կտակարանն է, ավելի ստույգ՝ նրա առաջին հինգ գրքերը՝ Հնգամատյանը, որը Սինայի անապատում գրել է Մովսեսը: Ըստ ընդունված տեսակետի՝ առաջինն այդ գիրքն է Աստծո մասին ճշմարիտ պատկերացում տվել: Սակայն այժմ պարզվում է, որ մինչ Հին Կտակարանի՝ ի հայտ գալը կար հոգևոր մեկ այլ գիրք, որը ևս ճշմարիտ պատկերացումներ էր տալիս Աստվածայինի մասին. և այն թե՛ իր ծագմամբ, թե՛ ժամանակագրական և թե՛ ոճական առումով արժանացել է այնպիսի բարձր գնահատականների, որ ամեն գրքի չեն տրվում: Դա Հայաստանում գրված Հոբի գիրքն է: Լապուխինն այդ գրքի մասին ասում է. **«Բայց գրերի ծագման ակզբնական շրջանում նման ստեղծագործության ի հայտ գալը կրոնի արտացոլման գագաթնակետ է, իսկ ձևով՝ ողջ աշխարհի մեծագույն բանաստեղծական ստեղծագործություններից մեկը. վիպերգ՝ կատարյալ կառուցվածքով և փառահեղ կատարմամբ»**[66]:*

Հիշենք, որ մինչ Ջրհեղեղը Հայաստանի տարածքում էին ապրում Սեթից սերված բարեպաշտ մարդիկ, որ կոչվում էին «Աստծո որդիներ»: Նրանց մեջ էր նաև Ենովքը, որ բարեպաշտ և աստվածահաճո կյանքով ապրելով՝ մարմնով հափշտակվեց երկինք: Բայց մինչ հափշտակվելը նա մարգարեական հոգով մի գիրք գրեց, որ համարվում է աշխարհում գրված առաջին գիրքը, ինչի մասին հիշատակում կա առաքելական ուղերձներում[67]:

*Ուրեմն, մինչ Ջրհեղեղը Հայաստանի տարածքում Ենովքի ձեռքով գրվել է աշխարհում մարգարեական առաջին գիրքը: Իսկ Ջրհեղեղից հետո, կրկին, առաջինը հիշատակված գիրքը գրվել է Հայաստանում: Դա Հոբի գիրքն է, որ դարձյալ գրվել է Աստվածային շնորհով. **«Մենք համոզ-***

---

65 Юлия Степанова, журналистка Москва, «Армения русскими глазами».

66 А. П. Лопухин, Толковая Библия, Петербургъ 1907 г., ст. 11.

67 Յուդա 1:14:

ված ենք, որ այն գրված է՝ Աստծո կողմից ոգեշնչմամբ: Սակայն մենք չենք կարող միանշանակ ասել, թե ով էր դրա հեղինակը»[68]:



Ուրեմն, կարող ենք հետևություն անել, որ մինչ Հին Կտակարանի ի հայտ գալը Հայաստանում արդեն իսկ եղել է Սուրբ Գիրք, որը գրի է առնվել հենց Հայաստանի սահմաններում: Նրանում պետք է որ լինեին Հայկական լեռնաշխարհում եղած մինչջրհեղեղյան պատմություններ և պատվիրանները, որ Տիրոջ կողմից տրվեցին Ադամին, պիտի լիներ այդտեղ ապրող և այստեղից էլ երկինք հափշտակվող Ենովքի մարգարեական գիրքը, նաև՝ Ջրհեղեղի ու Նոյի պատմությունը, Նոյին տրված երկնառաք պատվիրանները, ի վերջո՝ նաև Հոբի գիրքը. ***«Ուշադրություն դարձրու, թե ինչպես ամենուր հայտնի է Աստծո մասին ճանաչողությունը. տեսնում ես, որ նրա ընկերներն էլ գաղափար ունեն Աստծո մասին: Ո՞վ է նրանց սովորեցրել: Ո՞վ է հայտնել: Ինձ թվում է՝ նրանք ապրել են Մովսեսից առաջ: Այստեղից երևում է (և կարելի է համարել ճշմարտանման), որ այս առաջին գիրքը եղել է ուսուցիչը՝ Աստծո մասին ուսմունքի առաջին տեղեկատուն»***[69]:

Հոբի գրքից եզրակացություններ՝ հայերի մասին

«Հայաստան՝ ղողանջ արյամբ ու կրակով: Հայաստան, ուզում եմ քեզ սիրել: Ես գլուխս խոնարհում եմ հնամենիությանդ առջև... Երկիր-կարծրաքար, երկիր-ադամանդ, երկիր-երազանք»[70]:

Բացահայտեցինք, որ Հոբն ու իր ընկերներն ունեցել են հայկական ծագում: Իսկ Հոբի գրքում նրանց մասին տեղեկություններից էլ կարող ենք պատկերացում կազմել, թե Հայաստանում և հայոց Սաղեմում ինչ-

---

68 Matthew Henry's, Commentary, In One Volume Genesis to Revelation, Grand Rapids, Michigan, USA 1960, page 514.

69 Полное собрание творений святителя Иоанна Златоуста в 12–ти томах, том 10–12, Минск 2005 г., ст. 1442.

70 С. М. Городецкий, "Армении".


պիսին են եղել գործող բարքերը և կրոնական դիրքորոշումներն այդ ժամանակաշրջանում։ ***«...Աստվածաշնչյան բնույթ՝ մաքուր Աստվածաշնչյան ուսուցումներ Աստծո մասին, աշխարհի արարման, հրեշտակների և սատանայի մասին. նաև գրքի լեզուն է նման Հին Կտակարանի մյուս գրքերին և խորթ՝ հնագույն հեթանոս ժողովուրդների համար»***[71]*։*

Փաստորեն, մինչ հրեաների ձևավորվելը՝ որպես ազգ, Ճշմարիտ Աստծո մասին պատկերացումները և պաշտամունքն էր գործում Հայաստանում և հայոց Սաղեմում։

Այստեղից պետք է եզրակացնել, որ ոչ թե Հոբի գիրքն է նման հինկտակարանյան գրքերի ոգուն, այլ ընդհակառակը՝ Հին Կտակարանում ավելի ուշ գրվածներն են նման Հայաստանում ավելի վաղ գրվածին՝ Հոբի գրքին։

Տեսնելով Հոբի և իր բարեկամների խորը հավատքն առ Աստված, որոնք լինելով արքաներ՝ միաժամանակ աստվածաբաններ էին՝ կարող ենք պատկերացնել, թե ինչպիսի լուսավոր երկիր է եղել Հայաստանը՝ իրեն շրջապատող հեթանոսության խավարում։

Եզրակացությունը մեկն է. հետևելով Հոբի և իր բարեկամների զրույցներին՝ կարող ենք գալ այն համոզման, որ հայերն այդ ժամանակ ունեին Ճշմարիտ հավատք՝ առ Աստված, ապրում էին հավատքով, հույսով և սիրով, երկյուղածությամբ, պարկեշտությամբ, խոնարհությամբ, համբերատարությամբ, զգաստությամբ, ժուժկալությամբ, ողջախոհությամբ, գթասրտությամբ, երկայնամտությամբ և այլ առաքինություններով՝ ի հաճույս մարդասեր Աստծուն, ինչպես որ իր մասին ասում Հոբը. ***«Դաշինք կնքեցի աչքերիս հետ ես, ու չնայեցին նրանք մի կույսի... Թե ծաղրողի հետ գնացած լինեմ, թե իմ ոտքերը նենգության ճամփով շտապած լինեն (բայց կշռվել եմ արդար կշեռքով, և գիտե Տերն իմ անմեղությունը), թե շեղված լինի ոտքս ճիշտ ուղուց, սիրտս՝ ընթացած աչքիս հետևից, թե կպած լինեմ ձեռքով՝ կաշառքի, ապա թող որ ես սերմանեմ, սակայն ուրիշներն ուտեն, ու ես անարմատ լինեմ երկրի վրայ։ Թե գնացել է սիրտս ուրիշի կնոջ հետևից, թե դարանակալ եմ եղել իր տան դարպասների մոտ, ապա թող***



[71] П. Юнгеровъ, Частное историко-критическое введение въ священныя Ветхозавътныя книги. Книги законоположительныя, историческия и учительныя. Казан 1907 г., ст. 304.

կինս նույնպես հաճելի լինի ուրիշի, ու թող տառապեն իմ մանուկները»[72]։

Այս պատճառով էլ Տերն օրհնելով օրհնում էր նրանց, ինչի հետևանքով էլ այն հին ժամանակների չափանիշներով կարելի է ասել, որ նրանք տիրեցին ամբողջ աշխարհին՝ և իմանալի Աստվածային Լույսին հաղորդ դարձրին նաև տեղաբնակ ազգերին։

Իհարկե, պետք է հաշվի առնել, որ ինչքան էլ Հայաստանում հետևում էին բարեպաշտությանը, այնուամենայնիվ, դա չի նշանակում, որ այնտեղ չկային մեղսասեր մարդիկ. Ադամի պատճառով նզովված այս աշխարհում դա ուղղակի անհնարին է։

Վերջաբան

«Հայաստանը զարմանալի երկիր է. այն հեքիաթ է»[73]։

Տեսնում ենք, որ Հայաստանը եղել է ճշմարիտ Աստծուն պաշտող առաջին երկիրը՝ թե՛ Ջրհեղեղից առաջ և թե՛ Ջրհեղեղից հետո։ Նաև խոսեցինք հիքսոսների առեղծվածի ու հայոց Սաղեմի մասին, նշեցինք, որ այնտեղ տիրում էր ճշմարիտ Աստվածպաշտությունը, սակայն թե ինչպիսին է այն եղել, մանրամասնվեց Հոբի անձին և իր գրքին անդրադառնալիս։ Ի ցույց դրվեց, որ հայերը դեռ իսրայելացիներից առաջ էին պաշտում այն Աստծուն, Որին նրանք սկսեցին հավատալ դարեր հետո։ Եվ մինչ կգրվեր Հնգամատյանը, Հայաստանում արդեն իսկ գոյություն ուներ Սուրբ Գիրք, որով և առաջնորդվում էին Հայկի բարեպաշտ սերունդները։

*Հիշենք ուսումնասիրողներից Ջովանի Գուայթը խոսքը. **«Աստվածաշնչում մի անգամ չէ, որ հիշատակվում են «Արարատյան լեռները» և «Արարատյան երկիրը»։ Այսպիսով, ակնհայտ է, որ Հայաստանը և նրա ժողովուրդը քրիստոնեություն ընդունելուց դեռ շատ առաջ կապ են ունեցել Փրկության պատմության բուն սկզբի հետ»***[74]։

Ինչպես որ քողազերծվեց Մելքիսեդեկի՝ ով լինելը՝ այն, որ նա հայոց մեծ նահապետ Հայկն էր, այդպես և Տիրոջ շնորհով և մարդասիրությամբ, կարծում ենք, որ քողազերծվեց նաև Հոբի՝ ով լինելու առեղծվածը։

*Հետաքրքիր է, որ Աստվածաշնչի հայերեն թարգմանության մեջ միայն Հոբի գրքում է հիշատակվում Հայկի անունը՝ կապված նրա անվան համաստեղության հետ, երբ Տերը հարցեր է տալիս Հոբին. **«բացե՞լ***

---

72 Յոբ 31:1–10:

73 Կիմ Բակշի, Ռուսաստան:

74 Джовани Гуайт. 1700 лет вернвсти. Москва 2005 г., ст. 16.

ես քողը Հայկ համաստեղության»[75]*։*

Այսպիսով, բացվեց քողը թե՛ Հայկի և թե՛ Հոբի անձերի վրայից՝ ի փառս Աստծո և ի պիտանելիություն՝ նրանց ժառանգների։

Միտանի

«Հայոց ազգը հնագույն ազգերից մեկն են համարել հունական (Եկագ. Երոտ. Եփոր), քաղդեական (Բերոսոս, Աբուդենոս) և հրեական (Տովբիթ, Երեմիա) առաջին պատմիչները և աշխարհագիրները. այն ճանաչված է՝ որպես հնագույն քաղաքակրթության մի մաս և առաջին մարդաբնակ երկիր՝ վկայությամբ հնագույն և ճշմարտագույն Գրքի և հավանությամբ բոլոր ողջախոհ բանասերների»*[76]*։

Այժմ, վերադառնանք եգիպտական բանակի կողմից հալածվող հիքսոսների ճակատագրին և տեսնենք, թե ինչ կարգավիճակում հայտնվեցին նրանք։

Հզորացած Եգիպտոսի բանակի մեջ ընդգրկվել էին ռազմիկներ աֆրիկյան տարբեր հպատակ ցեղերից. նրանց մեջ աչքի էին ընկնում համեմատաբար ավելի զորեղ նուբիացիները։ Փարավոնի զորքին էին միացել նաև քանանաբնակ ցեղերի և հարակից այլ երկրների զորքերը։ Նրանք արդեն զինված էին այն ժամանակվա նույն զենքերով, ինչով՝ հիքսոսները։ Այդ պատճառով սրանք իրենցից մեծ վտանգ էին ներկայացնում ոչ միայն հիքսոսների, այլև՝ Հայաստանի և Միջագետքի համար։

Իսկ հիքսոսներն, այդ հզոր բանակի ճնշումներին տեղի տալով, թողել էին Սիրիայի հարավային տարածքները և նահանջելով՝ դիրքավորվել էին Սիրիայի և Միջագետքի հյուսիսային տարածքներում։

Այդ վտանգը տեսնելով՝ հայկական տիրապետության տակ եղող տարբեր տերություններից ներկայացուցիչներ հավաքվեցին Հայաստանում՝ խորհրդակցելու, թե ինչպես արգելեն եգիպտական հզոր բանակի առաջխաղացումը։

Խորհրդին մասնակցում էին եգիպտահայ հիքսոսների առաջնորդը, Միջագետքի քասեցիական հայ առաջնորդը, և Հնդկաստանից ժամանած հայ-արիների առաջնորդը։ Խորհուրդը ղեկավարում էր Մեծ Հայքի արքան։

---

75 Յոբ 38:31:

76 Ղեւոնդ Ալիշան, «Հայաստան յառաջ քան զլինելն Հայաստան», Վենետիկ, Սուրբ Ղազար, 1904 թ., էջ 3:

Մեծ Հայքի տարածքից այդ երեք ուղղություններով՝ Միջագետք, Հնդկաստան և Եգիպտոս մարտարշավներից հետո անցել էր արդեն բավականին երկար ժամանակ՝ մոտ 200 տարի, իսկ այդ ընթացքում Հայաստանում Պարետից հետո հայոց գահին նստել էին արդեն ուրիշ արքաներ: Ըստ Մովսես Խորենացու՝ նրանից հետո գահակալեց Արբակը, նրան փոխարինեց Զավանը, որի ժամանակ հիմնադրվեց աթենացիների միապետությունը: Նրանից հետո նստեց Փառնակը, Փառնակին փոխարինեց Սուրը. ըստ Միքայել Չամչյանի՝ Սուրը հզոր պատերազմող էր և սիրելի իր հպատակներին[77]*:*

Հավանաբար, հենց Սուրի ժամանակ էլ տեղի ունեցավ հայկական տիրապետության տակ գտնվող երկրների հայազգի կառավարիչների և արքաների հավաքը Մեծ Հայքում՝ հայոց արքա Սուրի գլխավորությամբ:

Խորհրդակցությունների արդյունքում հայազգի այդ արքաները եկան եզրահանգման, որ բոլորն էլ զորագնդեր ուղարկեն Հյուսիսային Սիրիայի տարածք՝ եգիպտահայերին աջակցելու և եգիպտացիների հարձակումը կասեցնելու համար: Սակայն եթե նույնիսկ եգիպտական այդ մարտարշավն այդտեղ արգելքի հանդիպեր, միևնույն է, դրանով վտանգը չէր վերանա, քանզի փարավոնը նախ ցանկանում էր իսպառ ոչնչացնել կամ հնարավորինս ավելի հեռու վանել հիքսոսներին, իսկ հետո իրականացնել Եփրատ գետից այն կողմ գտնվող տարածքների նվաճումը:

Դրա համար էլ եզրակացրին, որ պետք է ոչ միայն որոշիչ մի ճակատամարտ տալով՝ ետ մղեն եգիպտացիներին և դրանով բավարարվեն, այլև՝ եգիպտոսին այդ տարածքները գրավելու մտադրությունից իսպառ զրկեն: Որոշում կայացրեցին, որ հիքսոսներն այլևս ուրիշ տարածք չփնտրեն բնակության համար, այլ մնան այդտեղ, և տարբեր երկրներից եկած հայկական գնդերը նույնպես այդ վայրում մշտական բնակություն հաստատեն:

Եվ այսպես, տարբեր աշխարհագրական դիրքերում գտնվող հայկական գնդերը ժամանեցին Հյուսիսային Սիրիայի տարածք: Առաջին զորքը հյուսիսի կողմից՝ Հայաստանից ժամանեց, քանզի այդ տարածքներն անմիջապես սահմանակից էին Հայաստանի հարավարևմտյան սահմաններին: Միջագետքի հարավից պայմանավորված վայրը եկան հայ-քասեցիական գնդերը, իսկ ավելի ուշ արևելքի կողմից՝ հեռավոր Հնդկաստանից տեղ հասավ հայ-արիների բանակը, որ միանալով հիքսոսներին՝ կազմեց մեծ և հզոր բանակ, որ կարող էր ոչ միայն դիմակայել արտաքին թշնամուն, այլև հարկ եղած դեպքում նաև հակահարված հասցնելով՝ ներխուժել թշնամու տարածքը: Ստեղծվեց մի մեծ և հզոր ռազմական միություն համընդհանուր վտանգի դեմն առնելու համար:

Իհարկե, այս պատկերը կարելի էր համարել երևակայության արդյունք, եթե դրա համար չլինեին համապատասխան հիմնավորումներ գիտ-

[77] Միքայէլ Չամչյանց, Խրախճան պատմութեան Հայոց, ի Վէնէտիկ 1811 թ., էջ 13:

նականների աշխատությունների, որոնց կանդրադառնանք ստորև։

Հայկական միասնական ուժերը ճակատ կազմեցին Թշնամու դեմ, և կանգնեցվեց եգիպտական զորքերի առաջխաղացումը։ Սակայն եգիպտացիք չնահանջեցին, քանի որ նրանք էլ իրենց հերթին արդեն սկսեցին վտանգ տեսնել այդ միասնական զորքից՝ մտավախություն ունենալով, որ հանկարծ նորից չկրկնվի այն նույն վիճակը, որ եղավ հիքսոսների ներխուժման ժամանակ։ Դրանից ելնելով՝ եգիպտացիք, չնայած ավելի առաջ գնալու հույսը կորցրեցին, սակայն իրենց գրաված դիրքերից չնահանջեցին։ Դա էր պատճառը, որ այդ սահմանում հակամարտությունը շարունակվեց երկար ժամանակ՝ փոփոխական հաջողություններով։ Եվ հենց դրա համար է, որ հայկական միացյալ զորքերը պարտադրված էին մնալ և մշտական բնակություն հաստատել այդ տարածքներում։

Սակայն հիքսոսները, քասեցիները և արիները արդեն մոտ 150-200 տարի առաջ հեռացել էին իրենց հայրենիքից՝ Հայաստանից, ինչի հետևանքով էլ նրանց վրա հետք էին թողել այլ երկրների բնիկների հետ շփումները՝ հատկապես լեզվական և մշակութային այլ առումներով։ Եվ քանի որ նրանք անորոշ ժամանակով պետք է մնային այդ տարածքներում, պետք էր, որ իրենց կարգավիճակը ճշտեին։ Եգիպտացիների դեմն առնելու պարագայում նրանք միասնական էին, սակայն ներքին կառավարման հարցերում արդեն ծագում էին տարաձայնություններ և այլ լուրջ խնդիրներ, ինչն էլ հղի էր ներքին պատերազմական գործողությունների վտանգով։ Իսկ դրա հետևանքով կարող էր փլուզվել այդ նորաստեղծ միությունը, ինչը կարող էր ձեռնտու լինել միայն եգիպտացիներին։

Դրա համար էլ հավաքվելով և խորհրդակցելով՝ եզրակացրին, որ պետք է ընտրվեր մի կառավարիչ կամ թագավոր, որ կիշխեր բոլորի վրա. հակառակ դեպքում այդ տարածքում կարող էր տիրել քաոս։

Նրանք գիտակցում էին, որ թեև տարբեր երկրներից են հավաքվել այդտեղ, սակայն բոլորն էլ «մի տանից են», այսինքն՝ Հայկական լեռնաշխարհի նույն Հայկ-Մելքիսեդեկ նահապետի զարմից։ Եվ այդ խոսքը՝ «մի տանից», դարձրին կարգախոսի պես մի բան, ինչը հաճախ կրկնում էին, որպեսզի տարբերություն չդնեն միմյանց մեջ։

Որոշ ժամանակ անց այդ տարածքը դարձավ նոր ձևավորվող մի այլ հայկական թագավորություն, և այն հենց այդպես էլ անվանեցին՝ «Միտանից», ինչը տվյալ ժամանակի խոսակցական հայերենով հնչում էր «Միտանի»։ ***«Մենք շատ քիչ բան գիտենք Միտանիի ներքին քաղաքական և սոցիալական կառուցվածքի մասին. միայն կարելի է ասել, որ դա չի եղել մոնոլիտ կայսրություն, այլ՝ քոչվորների փխրուն միություն»***[78]*։*

Այո, ի սկզբանե դա փխրուն միություն էր, և դա բնական էր սկզբի

---

[78] Н. Б. Яанковская, Ашшур, Митании, Аррапхе, в книге – История Древнего мира, Москва 1989 г., ст. 189.

համար: Իսկ ինչ վերաբերում է նրան, թե դա «քոչվորների» միություն էր, ապա հիշենք, որ այդ նույն որակումն էին տալիս հնագույն շրջանի Հայկական լեռնաշխարհի հայերին, ապա կուտիներին, քասեցիներին և հիքսոսներին, մինչդեռ տեսանք, որ նրանք բոլորն էլ եղել են ամենաբարձր մշակույթ կրողներ:



Եվ այսպես, նորաստեղծ այդ երկրում սկզբնական շրջանի ներքին հեղհեղուկ քաղաքական վիճակն սկսեց հետզհետե կայունանալ:

Վերացան Նեղոսի հովտում եգիպտահայերի երկդարյա և Քանանում մոտ երեք դար գոյատևած Սաղեմի հայոց թագավորությունները: Իսկ այդ երկու թագավորությունների ժողովրդի, նաև Միջագետքից և Հնդկաստանից ու հատկապես Հայաստանից եկած ժողովրդի և նրանց նյութատեխնիկական բազայի հիման վրա պատմության ասպարեզ մտավ նոր ձևավորվող հայկական այդ հզոր թագավորությունը՝ Միտանին:

«Նրանք Արարատ լեռան շրջանից եղող եկվորներ էին, որ մոտավորապես մ.թ.ա. 1500 թ. գաղթել էին Հյուսիսային Միջագետքի բերրի հարթավայրերը: Նրանք այնտեղ կառուցեցին Միտանիի հզոր թագավորությունը»[79]:

Ըստ Դեվիդ Ռոլի՝ ովքեր եգիպտոսում հիմնեցին հիքսոսների արքայական դինաստիան, հենց նրանք էլ ստեղծեցին Միտանի միապետությունը: Իսկ որ Ավարիսը հիքսոսների մայրաքաղաքն էր եգիպտոսում, և որ նրանք ծագումով հայեր էին, դա փաստ է. ըստ այդմ էլ՝ պարզ է, որ Միտանին եղել է հայկական պետություն. ***«Այդ հնդեվրոպական տիրակալները հիմնեցին ինչպես «մեծ հիքսոսների» դինաստիան Ավարիսում, այդպես և Եփրատի այն կողմը գտնվող Միտանիի Թագավորությունը»***[80]:

Եվ քանի որ եգիպտոսն այդ նորաստեղծ հայկական պետության՝ Միտանիի մեջ առաջնահերթ տեսնում էր իր երդվյալ թշնամիներին՝ հիքսոսներին, նա հետ չէր կանգնում իր վրեժը վերջնականապես լուծելու մտադրությունից: Քանի որ այդ նպատակն իրականացնելու ճանապար-

---

79 Эдриан Джилберт, Тайны волхов, Москва 1998 г., ст. 393.

80 Дэвид Рол, Утраченный завет, Москва 2005 г., ст. 301.

հին իրենց համար թիրախ ընտրեցին հենց Միտանին, դա ևս խոսում է հիքսոսների՝ այդ պետությունում հաստատված լինելու մասին։ ***«... հիքսոսների լծից ազատագրված Եգիպտոսը վրիժառու պատերազմ սկսեց նրանց դեմ՝ հարվածն ուղղելով Միտանի պետության դեմ»***[81]։

Միտանիի մասին տեղեկություններից հայտնի է, որ չնայած այնտեղ բնակվել են տարբեր ժողովուրդներ, սակայն հիմնականում գերիշխել են «խուրիները»։ Իսկ եթե դա հայկական պետություն էր, ապա հարց է ծագում, թե ի՞նչ պետք է հասկանալ այդ անվան տակ։

Խուրիներ

«Երկրագնդի վրա գոյություն չունի Հայաստանից ավելի հաճելի, հոգևոր, ոգեշնչող, խորհրդավոր և հետաքրքիր երկիր, որ կարելի է մատնանշել... այնտեղ, ուր էլ որ ուղղում ենք մեր քայլերը՝ դեպի հյուսիս, հարավ, արևելք կամ արևմուտք, հողը սուրբ է, իսկ աշխարհի պատմությունը՝ շերտավորված»[82]։

Բազմիցս նշվել է, որ Հայկական լեռնաշխարհը մոտ ութհազարամյա իր պատմության ընթացքում շրջակա ազգերի կողմից տարբեր անուններով է կոչվել։

Առաջին հատորում ասվեց, որ առաջինն «Արևելքն» էր։ Հայաստանն անվանել են «Արևելք»՝ անկախ նրանից, թե աշխարհագրական ինչ դիրք են գրավել Հայաստանի հանդեպ։ Հարավում գտնվող շումերներն իրենցից հյուսիս գտնվող Հայաստանն անվանում էին «Արևածագի երկիր», հարևան խեթերը՝ նմանապես, իսկ հրեաներն՝ ուղղակի «Արևելք»։ Հայերը նույնպես ժամանակին իրենց երկիրն անվանել են «Արևելք»։

Գիտեք, որ Դրախտը, ըստ Աստվածաշունչ մատյանի, ստեղծվել է Արևելքում, և Արարատ լեռն էլ գտնվում է այդ նույն Արևելքում՝ Հայաստանում. ***«Ադամն ու Եվան ապրել են Դրախտում, այսինքն՝ Հայաստանում։ Եվ կայացավ մարդկային ցեղի փրկությունը, երբ Տապանը անվտանգ հանգրվանեց Արարատի գագաթին՝ Հայաստանում, երբ ջրհեղեղի ջրերը կամաց-կամաց ցամաքեցին»***[83]։ *Հիշեցնենք, որ դա ոչ թե ուղղակի արևելյան կողմ էր որևէ երկրի համար, այլ համընդհանուր, «Աստվածաշնչյան*

---

81 Արտակ Մովսիսյան, Հայոց պատմության աշխարհակալությունները, Երևան 2008 թ., էջ 26:

82 Է. Հ. Բ. Լանին, Անգլիա:

83 Էվին Պատման, տես Սև Գիրք, Երևան 2011 թ., էջ 567:

արևելք»՝ երկիր մոլորակի վրա առաջին արևածագի վայրը։

*Ուրեմն, նույնկերպ հայերին անվանել են նաև «արևելցիներ»։ Եվ այսպես, Միտանիի բնակչությանն էլ սկսեցին անվանել «արևելցիներ», քանի որ բոլորն էլ հայեր էին։ Հին արձանագրություններում նրանց կոչել են «խուրիներ». **«Մ.թ.ա. III-II հազարամյակին հյուսիսից այդտեղ ներխուժեց խուրրիների ցեղը (խուրրի(ներ) անվանումը նշանակում է «արևելցիներ»»**[84]։*

*Մասնագետներից շատերը համարում են, որ խուրիները, այսինքն՝ արևելցիները Անդրկովկասից են իջել Միտանիի կողմերը, ինչը նորից մատնանշում է Մեծ Հայքի տարածքը. **«Մենք հստակ չգիտենք՝ երբ է սկսվել խուրիալեզու ցեղերի շարժը դեպի հարավ և հարավ-արևելք՝ իրենց ենթադրյալ նախահայրենիքի՝ հյուսիս-արևելյան Անդրկովկասի մասից (բուն անվանումը՝ «խուրիներ», նշանակում է «արևելցիներ» կամ «հյուսիս-արևելցիներ»)»**[85]։*

Քանի որ Միտանիում, այդ եկվորները հայկական ծագում ունեին, նրանք բոլորն էլ հենց այդպես՝ մի ընդհանուր անվամբ, կոչվում էին «արևելցիներ», այսինքն՝ «խուրիներ»։ Իհարկե, այդ տարածքներում եղել են նաև որոշ տեղաբնակ ցեղեր, բայց նրանք մեծ դերակատարում չեն ունեցել այդ նորաստեղծ պետության կազմավորման և կառավարման մեջ և գտնվել են երկրորդական կարգավիճակում։

*Քիչ չեն պատմաբանների և հնագետների պնդումներն այն մասին, որ խուրիների անվան տակ պետք է նկատի ունենալ հայերին. **«Հնարավոր է, որ իրենց ծագումնաբանությամբ նրանք մոտ են հայերին. խուրիներն իսկապես կապվում են քուռ-արաքսյան մշակույթի էնեոլիթ և գենետիկ ցեղային կապով։ Նրանց տարածման կենտրոնը մոտավորապես գտնվում էր Անդրկովկասում։ Մ. թ. ա. 1-ին հազարամյակում խուրիներն ապրում էին Հայկական լեռնաշխարհի հարավային և արևելյան շրջաններում»**[86]։*

*Հայ գիտնականներից շատերն էլ ոչ թե ենթադրում, այլ հաստատ համոզմունք են հայտնում, որ խուրիները, որոնց հետ նույնացնում են նաև «սուբարի» անվանումը, եղել են հենց հայերի նախնիները։ **«Հայաստանի (Շենգավիթի) պղնձի դարի մշակույթը կապվում է Հայկական լեռնաշխարհի բնիկ ցեղերի՝ հայերի նախնիներ սուբարի - խուրրիական էթնոսի կազմավորման հետ։ Խուրիական բնակչության տարածումը Հայկական լեռնաշխարհում և հարևան երկրներում՝ մ.թ.ա. IV-II հազարամյակներում, կապված է հնագիտական որոշ մշակույթի՝ սև, փայլեցված, փորագրական նախշերով խեցու հետ։ Հենց այդ ժամանակներից էլ սկսում***

---

84 Мария Павловна Згурская, Древний Египет, Харьков 2008 г., ст. 345.

85 Н. Б. Яанковская, Ашшур, Митании, Аррапхе, в книге – История Древнего мира, Москва 1989 г., ст. 184.

86 Эммануэль Анати, “Палестина до древних евреев”, Москва 2007 г., ст. 344–345.

են զարգանալ մշակութային փոխհարաբերությունները նաև Հայկական լեռնաշխարհի և Առաջավոր Ասիայի հարևան շրջանների ցեղերի միջև»[87]:

Վերևում ասվեց, որ հայկական գնդերը տարբեր տեղերից ժամանեցին հյուսիսային Սիրիայի տարածք: Մասնագետներն էլ իրենց հերթին գտնում են, որ խուրիների տարբեր ճյուղավորումները նույնպես տարբեր տեղերից են եկել և միավորվել այդ տարածքում. ***«...խուրիական ցեղերը շարժվում էին դեպի Վերին Միջագետքի և Սիրիայի կողմերը՝ տարբեր ալիքներով, նրանց օրինակելի հաջորդականությունը կարելի պարզել բարբառների հատկանիշներով... շատ ընդհանրություններ են պահպանել Հայկական լեռնաշխարհից դուրս չեկած ուրարտացիների հարազատ լեզուներից»***[88]: *Տեսնում ենք, որ լեզվական առումով էլ ընդհանրությունները բավականին շատ են խուրիների և ուրարտացիների միջև:*

Ոմանք էլ խուրիներին տեղադրում են եթե ոչ Հայաստանում, ապա Հայաստանի մոտակայքում: Սակայն դրանք ավելի մասնավոր կարծիքներ են. ***«Ամբողջ Բարեբեր Մահիկի տարածքն այժմ անօգնական ընկած էր նոր բանակի թնդացող սմբակների տակ: Առաջին ձիավորներն իրենց մեջ ներառում էին ցեղեր, որոնք մեզ հայտնի խուրիներն են: Նրանք իջել էին Բարեբեր Մահիկի հյուսնայիև կորության կողմը Կովկասի հովիտներից...***

Նրանք դանդաղ էին մոտենում միմյանց, և միայն 1500 թ. մ.թ.ա. ստեղծեցին միացյալ թագավորություն՝ Միտանի անվամբ, որ տարածվել էր վերին Եփրատի կողմերից մինչ Տիգրիսի վերին տարածքները»[89]:

Վերջին տարիներին է, որ Հայոց հնագույն պատմության ավելի խորն ուսումնասիրություններ սկսեցին կատարվել, քանզի վերացան Խորհրդային ռեժիմի արգելքները: Կարծես, երկար տարիներով լեցուն ջրամբարի ելքը միանգամից բացվեց, և այնտեղ դարեր շարունակ պահեստավորած ջուրը սկսեց հորդահոսել: Դա է պատճառը, որ 8000 տարվա պատմության ընթացքում Հայոց մասին բազմաթիվ տեղեկությունները ոչ թե աստիճանաբար, այլ միանգամից սկսեցին ի հայտ գալ՝ հատկապես հայոց անվանումների բազմազանության և քանակության շուրջ:

Այդպես, «խուրի» անվանումը, որ այսօր նույնացվում է հայոց հետ, բնականաբար, նույնացվում է նաև հիքսոսների հետ, քանի որ դրանք հոմանիշ անվանումներ են. ***«Մ.թ.ա. 2-րդ հազարամյակի 1-ին կեսին երկրում աճում է դժգոհությունը՝ 13-րդ դինաստիայի փարավոնների դեմ: Հավանաբար, ոչ պատահական, հենց այդ ժամանակ՝ մոտ մ.թ.ա. 1700 թ. հյուսիս-արևելքից՝ Խուրիի երկրից, Եգիպտոս են ներխուժում անխոցելի զրահներով և սուր, հատու սրերով զինված, մարտակառքեր վարող***

---

87 Սանդրո Սարդարյան, Հայաստանը քաղաքակրթության բնօրրան, Երևան 2004 թ., էջ 396:

88 Н. Б. Яанковская, Ашшур, Митании, Аррапхе, в книге – История Древнего мира, Москва 1989 г., ст. 186.

89 Айзек Азимов, Ближний восток. История десяти тысячелетий. Москва 2002 г., ст. 39.

լեռնական քաջ ռազմիկներից բաղկացած ջոկատներ, որոնց առաջնորդում էին Հիան, Անատեր, Յակոբեր անունով զորավարներ: Եգիպտացի պատմիչ Մանեթոնը (մ.թ.ա. 4-3րդ դդ.) դառնությամբ գրում է, որ այս ռազմիկները, որոնց կոչում էին հաքսոսներ կամ հիքսոսներ, դյուրությամբ տիրեցին մեր աշխարհին»[90]:

*Եվ ուրեմն, այն, որ հիքսոսները հաստատվեցին այդ նորաստեղծ պետությունում՝ Միտանիում, դա խնդրահարույց կարծիք չէ. **«...եգիպտացիները պատերազմ սկսեցին Խուրիի-Միտանիի դեմ՝ այդ երկիրը համարելով իրենց դժբախտության պատճառը»**[91]:*

*Ստրուվեի դիտարկմամբ էլ՝ խուրիների և հիքսոսների միջև սերտ կապ է եղել, և այդ կապով է արտահայտվում հիքսոսների արշավը դեպի Եգիպտոս: **«Հնարավոր է, որ խուրիներն իրենց շարժմամբ հիքսոսներին մղել են՝ ներխուժել Եգիպտոս»**[92]:*

*Այսպիսով, կարող ենք ասել, որ Միտանի պետության կազմում տարբեր երկրներից հավաքված ժողովուրդները միևնույն ազգի ներկայացուցիչներ են եղել: **«Գլոտսեն այն կարծիքի կողմնակիցն է, համաձայն որի՝ խուրիները, միտանիները և ուրարտացիները միևնույն ժողովուրդն են, ուղղակի տարբեր պետական կազմավորումների ներկայացուցիչներ են»**[93]:*

Միտանի – արիներ

*Ասվեց, որ Հայաստանից, Միջագետքից ու հեռավոր Հնդկաստանից հայկական գնդերը հիքսոսներին օգնության եկան և միասնական ուժերով ստեղծեցին Միտանիի թագավորությունը: **«Մասնագետները համարում են, որ մ.թ.ա. XVIII դ. կամ քիչ ավելի ուշ հյուսիսից կամ հյուսիսարևելքից դեպի Հյուսիսային Միջագետք տեղի է ունեցել խուրիական նոր միգրացիա, ընդ որում՝ այս անգամ նրանց հետ էին արիացիները (կամ հնդարիացիները), որը շուտով՝ մ.թ.ա. XVI դ. հանգեցրեց Միտանիի կազմավորմանը»**[94]:*

Դիտարկմանը, որ խուրիներին միացել են Հնդկաստանից եկած

---

90 Անժելա Տերյան, Հայաստանը արարչագործության և քաղաքակրթության բնօրրան, Երևան 2002 թ., էջ 181:

91 Անժելա Տերյան, Հայաստանը արարչագործության և քաղաքակրթության բնօրրան, Երևան 2002 թ., էջ 181–182:

92 В. В. Струве, История Древнего Востока, Ленинград 1941 г., ст. 257.

93 Б.Б. Пиотровский, Ванское царство (Урарату), Москва 1959 г., ст. 49.

94 Հովհաննես Ահրամանյան «Հայ Արիներ» Թիվ 85, 86, 87, մայիս, հունիս, հուլիս, 2007 թ., էջ 26:

գնդեր, հանդիպում ենք նաև տարբեր գիտական աշխատություններում. ***«Գիտության մեջ գոյություն ունի կարծիք, որ II հազարամյակի սկզբնեերին խուրիներին միացան հնդկական ցեղերի տարրեր»***[95]*:*

Իհարկե, գիտական աշխարհը, հիմնականում հեռու լինելով հայկական գործոնից, չէր կարող նաև պատկերացում կազմել հայ-արիների մասին, որ Հայաստանից իջել էին Հնդկաստան, և ապա որոշ գնդեր հետ էին վերադարձել՝ միանալու հայկական ընդհանուր բանակին: Դրանից ելնելով էլ՝ խոսում են «հնդկական ցեղերի» տարրերի մասին, այլ ոչ՝ հայ-արիների:

Սակայն գիտության մեջ կան նաև տեսակետներ, որ որպես միևնույն ժողովուրդ են ներկայացնում հիքսոսներին, խուրիներին և արիներին, որոնք տիրապետում էր այդ ժամանակների համար մեծ զարգացման հասած միևնույն մշակույթին. ***«Հիքսոսյան դարաշրջանի դամբարանների (Եգիպտոսում, Պաղեստինում և Սիրիայում) նյութերի կարևոր առանձնահատկությունը տարբեր զինատեսակների առկայությունն է՝ ձիեր, մարտակառքեր, շքեղ դաշույններ և սրեր, որ արդեն ուշ բրոնզեդարում սկսում են գերիշխել նշված տարածաշրջանում (***Van Seters, *1966: 56*f.; Bietak, *1968: 106*ff.)*: Անհնար է այս առնչությամբ շրջանցել վերը նշված մշակութային երևույթների ակնհայտ առնչակցությունը Հայկական լեռնաշխարհի նմանօրինակ իրերին (տե՛ս Գլուխ Առաջին), նաև հատկապես՝ մարտակառքերի և ձիերի հարցում, որոնք մասնագետների մեծ մասի կողմից իրավացիորեն դիտվում են որպես խուրրի-արիական գերակայություն (տե՛ս վերը՝ «Արիացիները Առաջավոր Ասիայում» ենթագլուխը): Չափազանց դժվար է այս երևույթները համարել Լևանտի (Սիրիա, Պաղեստին) ժողովուրդների նյութական մշակույթի ինքնուրույն զարգացման արդյունք»***[96]*:*

Գիտնականներից ոմանք համարում են, որ երբ արիներն իջան դեպի Հնդկաստան, նրանց մի ճյուղը, ետ մնալով ընդհանուր հոսքից, իր բնակությունը հաստատեց Հայկական լեռնաշխարհում: Սակայն իրականությունն այլ է. դրանք ոչ թե ետ էին մնացել, այլ՝ հայ-արիների այդ մասը վերադարձել էր Հնդկաստանից, որպեսզի Միտանիում միանա հայկական մյուս զորագնդերին. ***«Ճանապարհին որոշ հնդարիներ ետ մնացին հիմնական հոսանքից: Նրանցից մասամբ մեկն այդ ժամանակ ընկավ Հայկական լեռնաշխարհ և բնակություն հաստատեց Վերին Եփրատում, Վերին Միջագետքի սահմաններում: Առաջավոր Ասիայի* XVIII–XVII *դ. մ.թ.ա. աղբյուրները նրան անվանում էին «Մանդայի զինվորներ» (գիտության մեջ նրանք անվանվում են առաջավորասիական արիներ): Այստեղից էլ***

---

95 В. В. Струве, История Древнего Востока, Ленинград 1941 г., ст. 257.

96 Հովհաննես Ահրամանյան «Հայ Արիներ» Թիվ 85, 86, 87, մայիս, հունիս, հուլիս, 2007 թ., էջ 26:

արի-«մանդա». տարրալուծվելով խուրիների հետ՝ նրանք ներթափանցեցին խուրիական աշխարհ: Նրանց միջավայրից XVIII–XVII դ. մ.թ.ա. դուրս եկան Միտանիի դինաստիաները»[97]:

Հետաքրքիր է, որ ըստ գիտական աղբյուրների՝ այդ հնդարիական ճյուղից է ծագել հայոց Մանդակունիների իշխանական տոհմը. ***«Վերին Եփրատի շրջանի արիները պահպանել են «Մանդա» անվանումը, և շատ դարեր անց այդ իշխող հայկական իշխանական տան տոհմը ըստ այդմ անվանվում էր Մանդակունի»***[98]:

Բորիս Մոյշեզոնն, ընդունելով, որ հնդարիները եղել են հայոց Մանդակունիների նախապապերը, համարում է, որ խուրիները հենց հայերն են, որ հիմնադրեցին Միտանին. ***«Երկրորդ ալիքի «Մանդան» հիմնականում նույնական է հնդարիական ցեղային խմբերի հետ, որոնց միջավայրից են ելել խուրիական (հին հայկական) տոհմի Միտանիի պետության հիմնադիրները և Մանդակունիների հին հայկական իշխանական տունը, որը բնակություն հաստատեց Սիրիայի հյուսիս-արևելյան սահմաններում»***[99]:

Տարբեր երկրներում մոտ 200 տարի տիրած հայկական ծագման ժողովուրդների վրա անխուսափելիորեն իր հետքն էր թողել տեղական մշակույթը: Այդ մասին են վկայում նաև Հնդկաստանից եկած Միտանիի հայ-արիական որոշ թագավորների անվանումները: ***«Խուրիական լեզվում, որով խոսում էին միտանցիները, հնարավոր է՝ շարունակում էին գործածվել հնդկական ծագման բառեր: Դա երևում է իշխող թագավորների անվանումներից (օրինակ՝ Տուշրատտա, Արտատամա և այլն), կան նաև որոշ տերմիններ՝ կապված ձիաբուծության հետ»***[100]:

Միտանիի լեզուն լավ ուսումնասիրված չէ, և վերջնական պատասխան դեռ չկա նրա լեզվախմբի մասին, սակայն եղած տվյալներից ռուս պատմաբան Ստրուվեն եզրակացնում է, որ այդ լեզուն գործածության մեջ է եղել նաև Հայկական լեռնաշխարհում. ***«Խուրիական լեզվում կարելի է տեսնել հատկանիշներ, որ բնորոշ են հաբեթական լեզվին: Այդ լեզուն տարածված է եղել Միտանիի տարածքներից դուրս. մենք այն հանդիպում ենք Փոքր Ասիայում, Բողազքոեի փաստաթղթերում, նաև Ուրարտուի թագավորության և Վանա լճի շրջակայքում»***[101]:

Թեպետ Միտանիում տարբեր երկրներից հավաքվել էին հայկական

---

97 История Древнего Востока, авторы М. Д. Бухарин, И. А. Ладынин, Б. С. Ляпустин, А. А. Немировский, Москва 2002 г., ст. 673.

98 История Древнего Востока, авторы М. Д. Бухарин, И. А. Ладынин, Б. С. Ляпустин, А. А. Немировский, Москва 2002 г., ст. 673.

99 Мойшезон Борис Гершевич, Арменоиды – аристократия древности, журнал «Ной» №19, Москва 1996 г.

100 В. В. Струве, История Древнего Востока, Ленинград 1941 г., ст. 257.

101 Նույն տեղում:

ծագման ազգային միավորումներ, սակայն նրանց միջից, հավանաբար, առաջնային դիրքում հայտնվեցին Հնդկաստանից եկածները, ինչ մասին խոսում են ոչ միայն որոշ թագավորների, այլև մի քանի քաղաքների անվանումները՝ ավելի նման հնդկերենին:

Այսպիսով, թեև հայկական գործոնը Հայաստանից դուրս դադարեց գործել Եգիպտոսում և Պաղեստինում, սակայն Միջագետքում և Հնդկաստանի հյուսիսային մասերում պահպանվեց, և ահա ն. Ք. XVI դ. նրանց ավելացավ օրեցօր հզորացող Միտանի հայկական թագավորությունը:

Նկատում ենք, որ Միտանի պետության ստեղծման հիմքում եղել են հիքսոսների, արիների և քասեցիների միասնականությունը, որոնք բոլորն էլ նույն՝ հայկական ծագումն ունեին, և ընդհանուր անվանվում էին խուրիներ. ***«Մ.թ.ա. XV-XIII դդ. ընթացքում Առաջավոր Ասիայի արիացիները և խուրիները ամենուրեք հանդես են գալիս միասնաբար. ինչ վերաբերում է Միտաննիի և կասսիտական Բաբելոնիայի փոխհարաբերություններին, ապա դրանք առնվազն թշնամական չեն եղել»***[102]*:*

Բաբելոնյան հայ քասեցիները ոչ միայն բարի-դրացիական հարաբերություններ են ունեցել Միտանիի թագավորության հետ, այլև, ինչպես ասվեց, այն ստեղծելու մեջ ունեցել են իրենց անմիջական մասնակցությունը. ***«Տեղաբնակ խուրիները միացրեցին ուժերը հնդիրանական քասեցիների զորքերի հետ և ստեղծեցին հզոր թագավորություն, որ հասավ ամենաբարձր ծաղկման՝ XV և XIV դարերում մ.թ.ա: Այդ իսկական խուրիական միապետության թագավորությունները հաստատվեցին Դիարբեքիր շրջանում՝ Հարավարևելյան Անատոլիայում և Հյուսիսային Միջագետքում՝ Միտանիի թագավորությունում»***[103]*:*



Լենգը քասեցիներին էլ հնդիրանական է համարում, սակայն դա նորից հայոց մասին տեղեկությունների պակասի արդյունք է. այն պետք է համարվեր հնդեվրոպական: ***«Փաստորեն, Փոքր Ասիայում, Հայկական լեռնաշխարհում, Միջագետքում և արևելամիջերկրածովյան ավազանում՝ Առաջավոր Ասիայի մեծագույն մասում, հաստատվում է հնդեվրոպացիների իշխանությունը, որում կարևոր***

---

102 Հովհաննես Ահրամանյան «Հայ Արիներ» Թիվ 85, 86, 87, մայիս, հունիս, հուլիս, 2007 թ., էջ 26:

103 Дэвид Лэнг, Армяне. Народ–созидатель, Москва 2004 г., ст. 82.

դերակատարում ուներ Միտաննի թագավորությունը»[104]*։*

Միտանիի ներքին կառուցվացքը և հարևան երկրների հետ նրա հարաբերությունները

«Հայաստանը մարդկային քաղաքակրթության հնագույն հայրենիքն է»[105]*։*

Միտանի նորաստեղծ թագավորությունը կազմավորվելուց հետո սկսեց հետզհետե մեծ զարգացում ապրել թե՛ տնտեսական և թե՛ քաղաքական ոլորտներում։ Այս երկիրը շատ նպաստավոր աշխարհագրական դիրք էր գրավում. բազմաթիվ կարևորագույն առևտրական ճանապարհներ խաչվում էին հենց այդ տարածքներում, ինչը շատ էր նպաստում առևտրի զարգացմանը։ Միտանիի բնակիչները հիմնականում միևնույն՝ քուռարաքսյան մշակույթի կրողներ էին, դա նպաստեց, որ ձիաբուծությունը և մարտակառքերի պատրաստումը դառնար այդ երկրի տնտեսության գլխավոր ճյուղերից մեկը. ***«Միտանիի ժողովուրդը վարպետորեն զբաղվում էր ձիաբուծությամբ»***[106]*։*



Գիտենք, որ Հայաստանն է համարվում ձիաբուծության հայրենիք։ Իսկ որ այդ ճյուղը զարգացած է եղել նաև Միտանիում, դա էլ է հուշում Միտանիի բնակիչների հայկական ծագման մասին։ ***«Հնարավոր է, որ Միտանին նույնիսկ եղել է ձիաբուծության կենտրոն»***[107]*։*

---

104 Արտակ Մովսիսյան, Հայոց պատմության աշխարհակալությունները, Երևան 2008 թ., էջ 30:

105 Александр Гумбольд, немецкий натуралист, путешественник.

106 Дэвид Лэнг, Армяне. Народ–созидатель, Москва 2004 г., ст. 87.

107 Дьяконов И. М., История Мидии, Ленинград 1956 г., ст. 124.

*Եթե նրանք հայկական ծագում ունեին, ուրեմն պետք է նաև տիրապետեին մարտակառքերի պատրաստման և օգտագործման հմտությանը. **«Խուրիական Միտանի պետությունում լայն տարածում են գտել մարտակառքերն ու դրանց լծված ձին, որոնք մ.թ.ա. II հազարամյակում ընդգրկում էին Հյուսիսային Միջագետքը, այդպես և Հայկական Լեռնաշխարհի հարավային մասերը, Սիրիայի մի մասը՝ Տիգրիս գետից դեպի արևելք»**[108]:*

*Մարտակառքերն այդ վաղնջական ժամանակների ռազմական ուժի ամենաահարկու և հզոր զինամիջոցն էին. **«Միտանիցիները մեծարվում էին՝ որպես մարտակառքերը վարպետորեն վարողներ. դա նրանցից պատրաստակամորեն ընդօրինակում էին խեթերը և ասորեստանցիները»**[109]:*

Անվաճաղերով անիվը, ինչպես նշվել է, առաջին անգամ մտահղացվել ու պատրաստվել է Հայաստանում: Ու թեև Միտանիում սկսեցին նման անիվներով մարտակառքեր պատրաստել, սակայն դա եղավ մի քանի դար հետո, երբ նման մարտակառքերն արդեն գործածության մեջ էին Հայաստանում և այն վայրերում, դեպի ուր Հայկական լեռնաշխարհից տարածվեցին և ասպատակեցին այդ ժամանակների «տանկերով»:

*Միտանի թագավորությունն այդքան ուշ սկսեց դրանով զբաղվել զուտ այն պատճառով, որ մինչ այդ տվյալ պետությունն ուղղակի գոյություն չուներ. **«Չնայած հնարավոր է, որ Միտանիի, խեթական պետության և Բարեբեր Մահիկի երկրների ատաղձագործներն ու անվագործները հավասարապես վարպետացած էին, սակայն առավել հավանական է, որ նրանք առնվազն երկրորդ հազարամյակի առաջին կեսին դեռ այդ վարպետությանը չէին տիրապետում: Ինչպես տեսանք, երբ անվաճաղովներն առաջին անգամ հայտնվում են Մերձավոր Արևելքում, նրանք հայտնվում են Մերձավոր Արևելյան այն առաջադեմ քաղաքակրթություններում՝ Կյուլտեպե (Kultepe) և Ջագար Բազար, որոնք ամենամոտն են Հայաստանին»**[110]:*

Բնական ռեսուրսներն ու բարենպաստ պայմաններն էլ նպաստում էին, որպեսզի գյուղատնտեսությունը՝ հողագործությունն ու անասնապահությունը, բարգավաճեր այդ երկրում: Բայց ավելի զարգացած էր ռազմական ոլորտը՝ թե՛ զենք ու զինամթերքի արտադրության և թե՛ մարտունակության առումով:

---

108 Дьяконов И. М., История Мидии, Ленинград 1956 г., ст. 124.

109 История древнего востока, под ред. В.И. Кузищина, Москва 1979 г., ст. 139.

110 Robert Drews, "The Coming of the Greeks," PRINCETON UNIVERSITY PRESS Princeton, New Jersey 1988, page 118.

Ռազմական ոլորտ

Ասորեստանն այդ ժամանակաշրջանում ջանում էր դուրս գալ քասեցիների իշխանության տակից՝ հրաժարվելով հարկեր մուծել: Իսկ քասեցիների հայկական դինաստիան, հավանաբար, չուզենալով պատերազմական գործողություններ սկսել ասորեստանցիների դեմ, ամրապնդվում էր Բաբելոնում՝ Ասորեստանի հանդեպ ունեցած իր իրավունքները զիջելով օրեցօր հզորացող իր ազգակիցներին՝ միտանիցիներին. ***«Հայկական լեռնաշխարհից արշաված քասեցիները նորանվաճ տերությունը կոչում են իրենց երկրի անունով՝ Քարդունիաշ... Ք.ա. XVI դ. վերջին նրանք հյուսիսային Միջագետքը զիջում են Միտաննիի իրենց ազգակիցներին»***[111]*:*

Միտանիցիները, վերջին շրջանում մասնակցած լինելով պատերազմական գործողություններին, ավելի մարտական էին տրամադրված, քան քասեցիները: Ըստ այդմ՝ նրանք պատրաստակամությամբ սկսեցին մարտական գործողություններ ծավալել Ասորեստանի դեմ: Իսկ Ասորեստանը, շրջափակված լինելով այնպիսի տերություններով, որոնց իշխող վերնախավը հայկական դինաստիաներն էին, և չունենալով որևէ դաշնակից, չդիմացավ Միտանիի ճնշմանը և դարձավ նրան հարկատու. ***«Ասորեստանյան թագավորության զգալի մասը գրավվել է Միտանիի կողմից, նրանց ձեռքում են գտնվել նույնիսկ Նինվեն և Աշշուրը»***[112]*:*

Հնարավոր է, որ Ասորեստանի ինչ-որ մաս կարողացել էր անկախ մնալ, սակայն ամենամեծ և կարևոր քաղաքները, ինչիպիսիք էին Աշուրն ու Նինվեն՝ իրենց շրջակայքով, ընկան Միտանիի տիրապետության տակ. ***«Մ.թ.ա. XVI—XV դարերը Միտանիական պետության ծաղկման և հզոր տերության ստեղծման շրջանն են. պետության, որը տարածել էր իր իշխանությունը Ասորեստանի զգալի մասի վրա՝ ներառյալ Աշշուրը և Նինվեն»***[113]*:*

Իրեն թագավորություն հռչակելուց հետո՝ մի առ ժամանակ անց, Միտանին իր բարձր տնտեսական, քաղաքական և ռազմական զարգացմամբ ճանաչվեց՝ որպես աշխարհի ամենահզոր երկրներից մեկը. ***«Ասորեստանի բուն սրտում՝ Աշշուր քաղաքի շուրջը, պահպանվել էր հին դինաստիայի ղեկավարությունը, սակայն ասորեստանցիները դարձան Միտանիի հարկատուներ, որն էլ արդեն դարձել էր քաղաքակիրթ աշխարհի ամենահզոր տերություններից մեկը»***[114]*:*

---

111 Արտակ Մովսիսյան, Հայոց պատմության աշխարհակալությունները, Երևան 2008 թ., էջ 23:

112 В. В. Струве, История Древнего Востока, Ленинград 1941 г., ст. 258.

113 История древнего востока, под ред. В.И. Кузищина, Москва 1979 г., ст. 139.

114 Айзек Азимов, Ближний восток. История десяти тысячелетий. Москва 2002 г., ст. 39–40.

Ասորեստանին հպատակեցնելուց հետո Միտանիի բանակն սկսեց նոր արշավ՝ դեպի հյուսիս և ներխուժեց խեթերի երկիր, որն այդ ժամանակ իր իշխանությանն էր ենթարկել տարբեր երկրներ, և համարվում էր կայսրություն: Այդ կայսրությունը շատ երկար կյանք չունեցավ, քանզի Միտանիի զորքը քարուքանդ արեց այդ պետությունը. ***«Մ.թ.ա. մոտ XII դարում միտանիցիները հաղթեցին խեթերին և կործանեցին նրանց կայսրությունը... խեթերի հանդեպ հաղթանակ տանելուց հետո միտանիները հանգրվանեցին Կապադովկիայում, որը մինչ այդ պատկանում էր այնտեղ իշխող խեթերին»***[115]*:*

Այսպիսով Միտանին, հետզհետե սկսեց վերածվել կայսրության՝ ներառելով իր գրաված տարածքների մեջ այլ երկրներ ևս. ***«Միտանիի համար հաջող ստացվեց ընդհարումը խեթերի հետ, իսկ միտանիական ազդեցությունն սկսեց թափանցել Փոքր Ասիա, Սիրիա, Փյունիկիա և նույնիսկ Պաղեստին»***[116]*:*

Սակայն այդ հզորացման ընթացքում Միտանին, նման մեծ արդյունքների հասնելով քաղաքական ասպարեզում, սկսեց խնդիրներ հարուցել նաև իր դաշնակից և ազգակից հայկական մյուս պետությունների համար, ինչի հետևանքով Հայաստանին սահմանակից որոշ տարածքներ ևս անցան Միտանիին. ***«Ք.ա. XVI դարի վերջերին Հայաստանի հարավային և Միջագետքի հյուսիսային շրջաններն անցնում են Միտաննիի իշխանության տակ»***[117]*:*

Կա նաև կարծիք, որ Միտանին թե՛ քաղաքական բանակցություններիր, թե՛ այլ միջոցներով իր իշխանությանն է ենթարկել նույնիսկ ամբողջ Հայաստանը, ինչն էլ, հավանաբար, եղել է նրա անկման սկիզբը: ***«Դժվար է ասել, թե մինչև ուր է տարածվել Միտաննիի ազդեցությունը և իշխանությունը Հայկական լեռնաշխարհի հյուսիսային և արևելյան շրջաններում: Հայտնի արևելագետ է. Վայդները, նկատի ունենալով Միտանիի արքա Տուշրատտայի (Ք.ա. XIV դարի կեսեր) մի արձանագրությունը՝ եզրակացնում է, որ Միտաննիի կառավարման համակարգի մեջ մտել են Հյուսիսային Միջագետքը ու Հայաստանն՝ ամբողջությամբ***[118]***»***[119]*:***

---

115 С. К. Дикшит, Введение в археологию, Москва 1960 г., ст. 437.

116 Նույն տեղում:

117 Արտակ Մովսիսյան, Հայոց պատմության աշխարհակալությունները, Երևան 2008 թ., էջ 30:

118 Weibner, 1929, էջ 93-ից:

119 Արտակ Մովսիսյան, Հայոց պատմության աշխարհակալությունները, Երևան 2008 թ., էջ 31:

Միտանի – Եգիպտոս

*Միտանին որքան էլ հզորացավ, միևնույն է՝ դա չստիպեց եգիպտացիներին՝ իրենց վաղեմի թշնամիներին հանգիստ թողնել: Եգիպտոսը, երկար ժամանակ մնալով հիքսոսների տիրապետության տակ, արդեն ինքն էր ձգտում տիրել այլ երկրներին՝ հատկապես Միտանիին. **«Միտանիի ելնելը Առաջավոր Ասիայի քաղաքական ասպարեզ (մ.թ.ա. XVI դ.) հանգեցրեց արևելամիջերկրական ափերով ակտիվորեն առաջ խաղացող Եգիպտոսի հետ ընդհարման: Նրանց միջև Առաջավոր Ասիայում գերիշխանության հասնելու համար կատաղի պայքար ծավալվեց: Դեռ Թութմոս I–ը հասավ Եփրատ և այնտեղ կանգնեցրեց հաղթական հուշակոթող՝ միտանիական սահմանի վրա»**[120]:*

Միտանիի սահմանի մոտ հուշակոթող դնելը Եգիպտոսն իր համար արդեն մեծ գործ էր համարում, քանզի սահմանամերձ տարածքները մինչ այդ ենթարկվում էին միտանիցիներին:

*Սակայն միաժամանակ անց Եգիպտոսն, ավելի հզոր հարձակում գործելով, որոշ առաջխաղացում ունեցավ՝ արդեն մտնելով հենց բուն Միտանիի տարածք. **«Եգիպտական սպարապետները գերադասեցին իրենց պատերազմները մղել հեռավոր հյուսիսում. սկզբից նրանք Սիրիայում հարձակվեցին արբանյակ պետությունների վրա, որ բնակեցված էին հնդեվրոպացիներով, իսկ արդյունքում ներխուժեցին Եփրատից այն կողմ՝ Միտանիի թագավորություն, որտեղից առաջացել են խուրիները՝ հիքսոսների դաշնակիցները»**[121]:*

*Այդ հակամարտությունը հաջողություն չէր բերում ո՛չ մեկին, ո՛չ մյուսին, ինչից հետո եգիպտացիները հետ կանգնեցին իրենց վրեժխնդրության մտադրությունից և փորձեցին դիվանագիտական միջոցներով հարցին լուծում տալ: **«Ամենհոթեպ II–ը բազմաթիվ արշավանքներ ձեռնարկեց Միտանիի դեմ, որոնք, ըստ էության, փոփոխություն չմտցրեցին ստեղծված աշխարհաքաղաքական իրադրության մեջ: Ի վերջո, նրա որդուն և հաջորդին՝ Թութմոս IV-ին (Ք.ա. 1400-1390 թթ.), այլ բան չէր մնում, քան հաշտություն առաջարկել Միտանիի արքա Արտատամային: Կնքվեց հաշտություն, որն ամրապնդվեց խնամիական ամուսնություններով, մի քանի սերունդ Միտաննիի արքայադուստրերը դառնում էին Եգիպտական փարավոնների առաջին տիկնայք, որոնցից ամենանշանավորը Նեֆերտիտին էր»**[122]:*

---

120 История древнего востока, под ред. В.И. Кузищина, Москва 1979 г., ст. 139.

121 Дэвид Рол, Утраченный завет, Москва 2005 г., ст. 309.

122 Արտակ Մովսիսյան, Հայոց պատմության աշխարհակալությունները, Երևան 2008 թ., էջ 34:

Միտանիի միապետությունից մի քանի արքայադուստրեր դարձել են եգիպտոսի թագուհիներ՝ Մուտեմուեն, Գիլու Հեպայը, Թիան և Տադու Հեպան, որն իր յուրահատուկ գեղեցկության և իմաստության պատճառով եգիպտոսում անվանվեց Նեֆերտիտի, որ նշանակում է «գեղեցկուհին եկավ»։ ***«Հայոց աշխարհի արքայադուստրերը մեծ համբավ են ունեցել եգիպտական արքունիքում։ Նրանք աչքի են ընկել իրենց բացառիկ խելքով, հմայիչ գեղեցկությամբ և խելացի խորհրդատուներ ու օգնականներ են եղել իրենց ամուսին փարավոնների համար»***[123]***։***



Այսպիսով, Միտանին ու եգիպտոսը դարձան դաշնակիցներ, տարածքային հարցերն էլ սկսեցին բանակցություններով, խաղաղությամբ լուծել. ***«Միջերկրածովյան արևելյան ավազանի հարավն անցավ եգիպտոսի Նոր թագավորության տիրակալներին, իսկ հյուսիսը՝ Հայաստանի հարավում և Հյուսիսային Միջագետքում բարձրացած Միտանիի հնդեվրոպական թագավորությանը, որի տիրակալները հայոց ազգային պատմագրական ավանդույթում համարվում են Հայկազուններ»***[124]***։***

Եգիպտոսում հիքսոսների ժամանակ հետևում էին միաստվածության դավանությանը, բայց նրանց՝ եգիպտոսից ելնելուց հետո այնտեղ նորից կռապաշտությունը գլուխ բարձրացրեց։ Սակայն հայազգի թագուհիները, գնալով եգիպտոս, իրենց հետ նորից տարան միաստվածության հավատքը, միայն թե այն, ըստ մասնագետների, որոշ չափով աղավաղված սկսեց գործել. իրական աստվածապաշտությունը նմանվեց արևապաշտության։ ***«Էխնաթոնի «միաստվածությունը» ավելի շուտ՝ չկայացած պատճեն էր հրեական միաստվածության։ Մինչդեռ «Աթոն»-ը շատ է հիշեցնում հին եբրայական Ադոնին (Տեր). այս խոսքով Սուրբ Գրքում նշվում է Միակ Աստված (Ադոնիա)»***[125]***։***

Նեֆերտիտիի ամուսնու՝ եգիպտոսի փարավոն էխնաթոնի մահվանից հետո նորից եգիպտական կուռքերը դարձան պաշտամունքի առարկա։ Նեֆերտիտին էլ երկար չապրեց ամուսնու մահվանից հետո. նա մա-

123 Անժելա Տերյան, Հայաստանը արարչագործության և քաղաքակրթության բնօրրան, Երևան, 2002 թ., էջ 179:

124 Արտակ Մովսիսյան, Հայոց պատմության աշխարհակալությունները, Երևան 2008 թ., էջ 34:

125 Мария Павловна Згурская, Древний Египет, Харьков 2008 г., ст. 370.

հացավ 37 տարեկանում: Այդ ժամանակ նաև Միտանիի և Եգիպտոսի միջև հարաբերություններն սկսեցին սառչել: Միտանին էլ այդ շրջանում քաղաքականապես սկսեց անկում ապրել, և նրանից՝ որպես դաշնակցի, ետ կանգնեց Եգիպտոսը:

Միտանիի անկումը

«Հայաստանը տխուր և երջանիկ երկիր է»[126]:

Եգիպտոսի բռնած դիրքից ոգևորված՝ Ասորեստանն էլ սկսեց ակտիվանալ, հատկապես, երբ գահին նստեց մի նոր եռանդուն արքա: Եվ մոտ 150 տարի հարկատու լինելուց հետո այդ արքայի՝ Աշշուրուբալիտի գլխավորությամբ ասորեստանցիները ապստամբեցին Միտանիի դեմ և լիովին անկախացան՝ դադարելով հարկեր տալ: ***«Վեճերի մեջ խճճված Միտանիից արևելք էր ընկած վերածնված Ասորեստանը: 1375 թ. գահ բարձրացավ ընդունակ միապետ Աշշուրուբալիտը, և նրա ղեկավարությամբ երկիրը լիովին վերականգնեց Միտանիից անկախությունը»[127]:***

Ասորեստանի անկախանալու գործընթացին նպաստեց այն, որ Հայաստանը էլ չէր աջակցում Միտանիի արքաներին, իսկ արիները հեռավոր Հնդկաստանում իրենց խնդիրներով էին տարված: Սակայն Ասորեստանը, անկախանալով հանդերձ, իրեն միայնակ էր զգում, ինչից ելնելով՝ դաշինք կնքեց Եգիպտոսի հետ: Իսկ Միտանին, կորցնելով դաշնակիցներից շատերի վստահությունը, իր հարաբերություններն ավելի ջերմացրեց քասեցիական Բաբելոնի հետ: ***«Արդյունքում ձևավորվում են երկու թշնամական դաշնություն. Միտանին և Բաբելոնը՝ Եգիպտոսի և Ասորեստանի դեմ»[128]:***

Սակայն Միտանիի գլխին կուտակող կարկտաբեր ամպերն ավելի խտացան, երբ խեթերն էլ, նորից հզորանալով, հյուսիսի կողմից նոր սպառնալիք դարձան. ***«Այդ իրավիճակից օգտվեց ամրապնդված խեթական պետությունը: Նախկին պարտությունների համար Միտանիի հանդեպ վրեժխնդրության մոլուցքով տարված՝ խեթերը միտանիական թագավոր Տուշրատտային կործանարար պարտության մատնեցին»[129]:***

Խեթերն իրենց ընտրյալին դրեցին Միտանիի գահին և այն դարձրեցին իրենց հարկատու: Իսկ այդ ժամանակ Ասորեստանն Աշշուրուբալի-

---

126 Վ. Երմիլով:

127 Айзек Азимов, Ближний восток. История десяти тысячелетий. Москва 2002 г., ст. 41.

128 История древнего востока, под ред. В.И. Кузищина, Москва 1979 г., ст. 140.

129 Նույն տեղում:

տի գլխավորությամբ է՛լ ավելի էր հզորանում։ ***«Աշշուր-ուբալիտ (մ.թ.ա. 1365-1330 թ.)։ Այս ասորեստանյան թագավորի կառավարման ժամանակ Միտանիական թագավորությունը փլուզվում էր երկրի ներսում ընթացող քաղաքացիական պատերազմների, իսկ արտաքինից էլ՝ խեթերի ճնշումների պատճառով»***[130]*։*

Սակայն, նման ծանր վիճակում հայտնվելով՝ միտանիցիները ջանացին մի վերջին ճիգ գործադրել, որպեսզի իրենց թագավորությունը նորից նախկին բարձունքին հասցնեն։ Միտանին որոշեց խեթերի աջակցությամբ Ասորեստանին նորից իր իշխանությանը ենթարկել։ Մարտարշավի ելավ նրանց դեմ, սակայն անհաջողություն կրեց. ***«Մ.թ.ա XIII դարը Միտանիի համար կործանարար եղավ։ 70-ական թվականներին հիմնվելով խեթերի աջակցության վրա՝ Միտանին Ասորեստանի դեմ ելնում է պատերազմի, սակայն լիակատար պարտություն է կրում։ Ասորեստանցիները կրակով ու սրով անցնում են երկրի ամբողջ տարածքով՝ գերի վերցնելով 15 000 զինվորի»***[131]*։*



Ասորիները, Միտանին գրավելով, չեն բավարարվում, այլ որոշ ժամանակ անց այն ուղղակի վերացնում են աշխարհի երեսից. ***«Աշշուրուբալիտի ժառանգները իրենց բանակներն ուղարկեցին արևմուտք՝ դեպի Եփրատ և 1300 թ. կողոպտեցին Միտանիի մայրաքաղաքը։ Ասորեստանյան հաջորդ արքաները ավարտին հասցրեցին աշխատանքը. 1270 թ. ճզմեցին այն ամենը, ինչը որ մնացել էր Միտանիից, և այդ թագավորությունն անհետացավ աշխարհի երեսից»***[132]*։*

Այդ ժամանակաշրջանում Ասորեստանը, Եգիպտոսին ունենալով որպես դաշնակից, սկսեց դառնալ տարածաշրջանի ամենահզոր պետությունը։

Հայկական գործոնն սկսեց խիստ թուլանալ ամբողջ տարածաշրջանում, ինչից օգտվելով՝ քասեցիական Բաբելոնի արևելյան հարևան էլամացիներն սկսեցին հարձակումներ գործել և, ի վերջո, հասան իրենց նպատակին՝ ամբողջովին գրավելով Բաբելոնը. ***«Քասեցիական Բաբելոնին անսպասելի և մահացու հարված հասցրեցին էլամացիները։ Մ.թ.ա.***

130 Стивен Бертман, Месопотамия, Москва 2007 г., ст. 98.


131 История древнего востока, под ред. В.И. Кузищина, Москва 1979 г., ст. 140.

132 Айзек Азимов, Ближний восток. История десяти тысячелетий. Москва 2002 г., ст. 41.

XII դարի երկրորդ քառորդում նրանք մի քանի ավերիչ արշավ գործեցին Միջագետքի վրա՝ լիովին օկուպացնելով Բաբելոնը: Մոտ 1150 թ. մ.թ.ա. նրանք գահընկեց արեցին վերջին թագավորին՝ Դանդաշի տանից (Կարահնդաշին), և քասեցիական դինաստիայի գոյությունը դադարեց: Միջագետքյան քասեցիներն այդ ընթացքում լիովին ձուլվեցին բաբելացիներին»[133]*:*

Այսպիսով, իր ստեղծումից մոտ չորս դար անց, Սաղեմի հայոց թագավորության գոյությունը դադարեց, վերացավ նաև Եգիպտոսի հայ-հիքսոսյան երկդարյա տիրապետությունը: Դրան հաջորդեց հայոց միտանիական թագավորության համարյա երեքդարյա գոյության ավարտը: Ապա պատմության գիրկն անցավ Բաբելոնի հայ-քասեցիական հինգ դար տևած իշխանությունը: Իսկ Հնդկաստանի հայ-արիներն էլ ժամանակի ընթացքում, հավանաբար, մոռացության մատնեցին իրենց արմատները՝ տարրալուծվելով հնդկական ցեղախմբերի մեջ:

Այսպիսով, միայն Հայաստանը՝ նրանց բոլորի նախահայրենիքը, ինչպես միշտ, կանգուն մնաց՝ թեև շրջապատված լինելով թշնամաբար տրամադրված երկրներով, որոնցից ավելի անբարյացակամներից էին հարավային հարևան Ասորեստանը և արևմտյան կողմի խեթերը:



«Հնագույն ժամանակներում Հայաստանի հարևաններից շատերն անհետացան աշխարհի քարտեզից: Ոմանք ցրվեցին, ինչպես օրինակ՝ կովկասյան ալբանացիները կամ խեթերը, նաև՝ Միտանին, որի թագավորությունը երբեմն իր հզորությամբ մրցում էր եգիպտական փարավոնների հետ: Մյուսները, ինչպես քրդերը՝ մարերի հպարտ հետնորդները, սայթաքելով ընկան բարբարոսության մեջ. կամ ինչպես ասորիները, որ մատնվեցին մոռացության: Միայն հայերը... կռեցին ազգային և մշակութային միաբանություն, որը դարեր շարունակ կարողացավ դիմակայել օտարերկրյա տիրակալություններին: Այս միասնությունը հիմնված է ընդհանուր լեզվի, մշակութային ավանդույթների և կրոնական համոզմունքների վրա, ամրապնդված՝ անսովոր անձնական խիզախությամբ և հաստատակամությամբ: Դա օգնեց հայե-

133 История древнего востока, под ред. В.И. Кузищина, Москва 2005 г., ст. 135.

րին՝ դիմակայել դաժանագույն հետապնդումներին, որ ազգի ամբողջական ոչնչացման նպատակ էին հետապնդում»[134]*։*

Ինչպես ասվեց, Միտանիի ստեղծման սկզբում Հայաստանում գահին նստեց Սուրը, որին էլ հաջորդաբար փոխարինեցին Հավանակը, Վաշտակը, Հայկակը, Ամպակը, Առնակը, Շավարշը և ապա Նորայրը, ում ժամանակ էլ, ըստ երևույթին, կործանվեց Միտանին։

Իհարկե, այդ հնագույն ժամանակներում ժամանակագրությունը խիստ մոտավոր է։

Մինչ կանցնենք այդ ժամանակաշրջանին հաջորդող օրերում Հայաստանի կարգավիճակին, կաշխատենք քննել և տեսնել, թե ինչ պատահեց Սաղեմի հայկական թագավորությունից մնացած հայկական այն համայնքներին, որ մնացին Պաղեստինի տարածքում՝ ցրվելով տարբեր քանանաբնակ ազգերին պատկանող երկրներում։

---

134 Дэвид Лэнг, Армяне. Народ–созидатель, Москва 2004 г., ст. 26.

ԳԻՐՔ – IV

ԽՈՐՀՈՒՐԴ ՄԵԾ ԵՎ ՍՔԱՆՉԵԼԻ

Ելք Եգիպտոսից

«Հայերն ամենահին ժողովուրդներից մեկն են երկրի վրա, ամենա «պատմական», ամենա «խորհրդանշային», քանզի նրանց ճակատագիրը վերաբերում է նաև բոլոր ոչ հայերին, որոնց թվին պատկանում է և այս գրքի հեղինակը: Եվ մենք ցույց կտանք՝ ինչ առումով և ինչի համար այդ ժողովուրդը չի կարող ոչ ոքի թողնել անտարբեր»[1]:

Այս՝ II հատորի տվյալ ենթագիրքը նման անվանում է ստացել, քանի որ այն ընդգրկում է մեծ և զարմանալի եղելություններ, որոնք մինչ օրս նույնպես մնացել են անհայտության քողի տակ ծածկված: Այս խորհուրդն էլ սուրբգրային և համաշխարհային կարևորության գաղտնիք է, ինչպես Մելքիսեդեկինն էր. և նորից այն սերտորեն կապված է հայ ժողովրդի պատմության հետ:

Կարծում ենք՝ ինչպես Մելքիսեդեկ քահանայի՝ հազարավոր տարիներ ծածուկ մնացած, խորհրդավոր ինքնության՝ ով լինելու գաղտնազերծումն էր վերապահված մեր այս օրերին, այդպես էլ այս առեղծվածային նյութի պարագայում է:

Որպեսզի անդրադառնանք բուն նյութին, տեղափոխվենք Եգիպտոս և ապա՝ Քանանի երկիր՝ Պաղեստին:

Հիշենք, որ մոտ երկու դար հայոց հիքսոսյան դինաստիան տիրեց Եգիպտոսի փարավոնների գահին: Դա մեծ խորհուրդ՝ մեսիական առաքելություն էր կրում իր մեջ և պայմանավորված էր Տիրոջ՝ աշխարհ գալու համար ուղի հարթելով: Հայերի հովանավորությամբ իսրայելացիները բնակություն հաստատեցին Նեղոսի դելտայում գտնվող Գեսեմի բերրի տարածքներում, ինչն էլ նպաստեց, որ այդ փոքրաքանակ մարդիկ բարգավաճելով դառնան մեծ ժողովուրդ: Սակայն երբ բնիկ եգիպտացիք

[1] Жан-Пьер Ришардо, Армяне чего бы это ни стоило, смотри – Армяне [сборник], Ереван 1991 г., ст. 257.

ապստամբելով հիքսոսներին վտարեցին իրենց երկրից, այդ ժամանակներից իսրայելացիների համար սկսվեց ծանր շրջան, քանի որ նրանք համարվում էին հայերի բարեկամներ, որոնց լծի տակ եգիպտացիք մնացել էին երկու դար: Բնականաբար, եգիպտացիք բարի աչքով չէին նայի իրենց ճնշողների բարեկամներին: Եվ իսկապես, այդ ժամանակներից մեծ հալածանքներ սկսվեցին իսրայելացիների դեմ:

«Եբրայեցիների բազմանալու շրջանը համընկնում է նրանց հասարակական դիրքի փոփոխության հետ: Դրա մեղավորը դառնում է «նոր թագավորը»: Ինչո՞ւ է նա նման անվամբ կոչվում՝ եբրայեցիների հանդեպ նո՞ր հարաբերության պատճառով, թե՞ իր ծագման, որ նախկինի հետ համեմատած՝ նոր դինաստիայից էր, բավականին դժվար է ասել: Մասնագետներից շատերն այն կարծիքին են, որ հալածող փարավոնը (Թութմոս III-ը) ծագել է բնիկ եգիպտական դինաստիայից, որ կոտրեց լուծը հիքսոս – հովիվների, որոնց տիրապետության ժամանակ Հակոբը մտավ Եգիպտոս: Իր ատելությունը նախկին բռնակալների նկատմամբ, սա շրջեց նրանց բարեկամ եբրայեցիների կողմը»[2]:

*Այդ ընթացքում եբրայեցիները բավականին բազմացել էին և հարստացել: Իսկ նոր փարավոնը ջանաց նրանց ուժերը ջլատել՝ թե՛ նրանց ծանր աշխատանքների լծելով, և թե՛ արհեստականորեն նրանց թիվը կրճատելով. **«Դահ բարձրացավ մի ուրիշ թագավոր, որը Հովսեփին չէր ճանաչում: Նա իր ժողովրդին ասաց. «Իսրայելի որդիների սերունդը մեծ է զորությամբ և զորանում է մեզնից ավելի: Արդ, եկեք ինչ-որ բան հնարենք նրանց դեմ. գուցե ավելի բազմանան, և երբ պատերազմ ծագի, նրանք միանան թշնամիներին ու մեր դեմ կռվելով՝ դուրս ելնեն այս երկրից»: Եվ նա վերակացուներ կարգեց նրանց վրայ, որ գործի լծելով՝ չարչարեն նրանց: Նրանք փարավոնի համար կառուցեցին Փիդոն, Ռամեսե և Ովն անառիկ քաղաքները: Ովնը Արեգ քաղաքն է: Բայց որքան ճնշում էին նրանց, նրանք այնքան ավելի էին բազմանում ու անչափ հզորանում: Եգիպտացիները զզվեցնում էին Իսրայելի որդիներին, բռնություն գործադրելով՝ նեղում էին նրանց, տաժանակիր աշխատանքի էին լծում, նրանց կյանքը մաշում կավի, աղյուսաշինության ու դաշտային բոլոր գործերի մեջ՝ բռնությամբ ստիպելով նրանց, որ ծառայեն»[3]:***

Սակայն Տերն օրհնում էր իսրայելացիներին, և նրանք՝ անկախ այդ տաժանակիր աշխատանքների ծանրությունից, է՛լ ավելի էին բազմանում և հզորանում: Տեսնելով, որ այդ միջոցն էլ օգուտ չի տալիս՝ փարավոնը հրամայում է, որ իսրայելացիների նորածին արու զավակներին մահվան մատնեն՝ մտածելով, որ գոնե նման կերպ կարող է նրանց աճը կանգնեց-

---

[2] А. П. Лопухин, Толковая Библия, комментарий на все книги св. Писания, Петербург 1904 г., ст. 276.

[3] Ելք 1:8–13:

նել։ ***«Փարավոնն, իր ամբողջ ժողովրդին հրամայելով, ասաց. «Եբրայեցիներից ծնված բոլոր արու զավակներին գե՛տը նետեցեք, իսկ բոլոր աղջիկ զավակներին ո՛ղջ թողեք»***[4]*։*

Փարավոնի հրամանը գործադրվում է ամենայն խստությամբ, և նորածին մանուկների մեծ կոտորած է սկսվում իսրայելացիների մեջ։ Այդ ընթացքում Իսրայելի տասներկու ցեղերից Ղևիի զավակների մի ընտանիքում տղա երեխա է ծնվում։ Ծնողները ջանում են գաղտնի պահել տղային, սակայն երեք ամիս անց, տեսնելով, որ էլ ի զորու չեն թաքցնել, մանկանը դնում են մի զամբյուղի մեջ և բաց թողնում Նեղոս գետի հոսանքն ի վար։

Այդ փոքրիկ տապանին հետևում է տղայի քույրը և տեսնում, որ այն լողալով մոտենում է մի ափի, որտեղ Նեղոսի ջրերում զվարճանում էր փարավոնի դուստրն՝ իր նաժիշտների հետ։ Տեսնելով այդ զամբյուղը՝ արքայադուստրը կարգադրում է ափ հանել։ Նա հասկանում է, որ երեխան եբրայեցիներից է, և տեսնելով նրան լաց լինելիս՝ խղճում է և որոշում հոգ տանել նրա համար, մանկանն անվանելով Մովսես՝ այսինքն «ջրից հանված»։ Իսկ այդ պահին նրանց մոտեցող մանկան քույրն առաջարկում է՝ երեխայի համար դայակ գտնել եբրայեցիներից, ինչին համաձայնում է փարավոնի դուստրը։ Այդպես՝ այդ մանուկը սնվում ու մեծանում է իր իսկ ընտանիքում։

«Երբ մանուկը մեծացավ, կինը նրան բերեց փարավոնի դստեր մոտ, և մանուկը նրան որդեգիր դարձավ։ Նա նրան Մովսես կոչեց՝ ասելով՝ ջրից եմ հանել նրան»[5]*։ Մեծանալով արքունիքում՝ նա բարձր կրթություն, իշխանավայել դիրք ու վայելուչ կեցվածք ստացավ՝ դառնալով Եգիպտոսի արքայազուններից մեկը։* ***«Մովսեսը եգիպտացիների ամբողջ իմաստությամբ կրթվեց և զորավոր էր իր խոսքերով և գործերով»***[6]*։*

Բայց նա կրթվեց ոչ միայն եգիպտական գիտության չափանիշներով, այլև իր ազգակիցների՝ եբրայեցիների գիտությամբ։ Մովսեսը մեծ նախանձախնդրություն ուներ իր ազգակիցների հանդեպ։ Նա տեղյակ էր նրանց պատմությանը, հավատքին, և, որ ամենակարևորն է, նրանց ապագային վերաբերող մարգարեությանը, ըստ որի՝ իսրայելացիները ժամանակին պետք է դուրս գային Եգիպտոսից՝ իրենց հետ վերցնելով Հովսեփի մասունքները։

Մովսեսը գիտեր, որ ինքը բազմաթիվ առավելություններ ունի իր ազգակիցների համեմատ, քանզի նա ոչ միայն եգիպտոսի իշխաններից մեկն էր, այլև՝ Տիրոջ ընտրյալը։ ***«Այդ ժամանակում ծնվեց նաև Մովսեսը, որն***

---

4 Ելք 1:22։

5 Ելք 2:9–10։

6 Գործք. 7:22։

Աստծու առաջ վայելուչ էր»[7]: *Մովսեսը ոչ մի կասկած չուներ, որ ինքն էր այն ընտրյալը, ով պետք է ազատագրեր իր ազգակիցներին՝ եգիպտական գերությունից: Եվ այդ վստահությամբ, երբ տեսնում է, որ մի եգիպտացի ծեծում է իր եբրայեցի եղբայրներից մեկին, Մովսեսը սպանում է եգիպտացուն և ծածուկ թաղում նրան:*

Մի օր էլ նա նկատում է, որ իր ազգակիցներից երկուսը վիճում են, փորձում է նրանց սթափեցնել: Սակայն նրանցից մեկը բացահայտ հիշեցնում է Մովսեսին իր գործած մարդասպանության մասին: Լուրը հասնում է փարավոնին, և սա հրամայում է բռնել նրան:

Քառասունամյա Մովսեսը, ստիպված թողնելով ամեն ինչ, փախչում է Սինա անապատի կողմը: Պանդխտելով Մադիամի երկրում՝ նա ամուսնանում է տեղի քրմապետի դստեր հետ, և արածեցնում նրանց հոտերը: Քառասուն տարի այսպես անցկացնելով Մադիամի երկրում՝ նա արքայազնից լիովին վերածվում է հասարակ հովվի:

Արդեն ութսուն տարին բոլորած Մովսեսն այլևս որևէ ակնկալիք չուներ իր՝ ընտրյալ լինելու հարցում: Եվ հենց այն ժամանակ, երբ արդեն ո՛չ իշխանություն ուներ, ո՛չ երիտասարդական ուժ, ո՛չ էլ արդեն պիտանի էին փարավոնի պալատում ստացած գիտելիքները, նա Աստծո կողմից կանչվում է՝ Իսրայելի ժողովրդին եգիպտոսի լծից ազատելու և Ավետյաց երկիր՝ Պաղեստին առաջնորդելու համար:

Մովսեսն, իհարկե, խիստ զարմանում է և առարկում՝ մտածելով, թե ինչպե՞ս կարող էր դա անել, քանզի նախկինում, երբ դեռ ամեն ինչ ուներ, ոչինչ չստացվեց: Իսկ այժմ, լիովին անանկ մի հովիվ, ինչպե՞ս պիտի դա իրականացներ:

Բայց հարցն այն է, որ այն ժամանակ նա ամեն ինչ ուներ, բայց Աստծուն չուներ իրեն ապավեն: Իսկ այժմ ոչինչ չուներ, սակայն Տերն արդեն իր հետ էր:

Ի վերջո, Մովսեսը, հնազանդվելով Աստծուն, գնում է եգիպտոս և կանգնելով փարավոնի առջև՝ ասում է, որ Տերը պատվիրել է իսրայելացիներին ազատ արձակել: Փարավոնը հրաժարվում է: Դրան հետևում են Աստծո պատիժները:

Եվ այդպես՝ տասն անգամ:

Ի վերջո, երբ ամբողջ եգիպտոսը քարուքանդ էր լինում, փարավոնն արձակում է նրանց:

Եբրայեցիները Տիրոջ հրաշքով անցնում են երկու մասի ճեղքված ծովի միջով, իսկ նրանց հետապնդող փարավոնի զորքն ամբողջովին խեղդվում է ծովում:

Մովսեսի առաջնորդությամբ Իսրայելի ժողովուրդը մեծ ուրախությամբ և ցնծությամբ շարժվում է Սինայի անապատով դեպի Ավետյաց

[7] Գործք. 7:20:

երկիր՝ Պաղեստին։ Անապատում նրանք ստանում են «տասը պատվիրանները»։ Մովսեսն Աստծո շնորհով գրում է Աստվածաշունչ մատյանի առաջին հինգ գրքերը՝ Հնգամատյանը։

Ամաղեկ

«Կ. Պոլսի հայերից մեկը՝ Միխայել Կանիխան, 1786 թ. Վենետիկում հրատարակեց իր պատմությունը՝ հաստատելով հին հայկական պատմաբանների ասածը, թե հայերը հայկյաններ են կոչվում իրենց առաջին նախահոր անվամբ, իսկ նրա անունը նշանակում է. «մարդկային առանձնահատուկ սերնդի նախահայր»»[8]։

Երբ իսրայելացիները մոտենում են Պաղեստինի մատույցներին, նրանց դեմ պատերազմի են ելնում ամաղեկացիները. ***«Ամաղեկացիները եկան ու Ռափիդիմում պատերազմեցին իսրայելացիների դեմ։ Մովսեսն ասաց Հեսուին. «Ուժեղ տղամարդիկ ընտրի՛ր և առավոտյան վեր կենալով՝ պատերազմի՛ր ամաղեկացիների դեմ։ Ես կգամ ու կկանգնեմ բլրի գագաթին, և Աստծո գավազանը կլինի իմ ձեռքին»։ Հեսուն արեց այնպես, ինչպես իրեն ասել էր Մովսեսը. նա պատերազմեց ամաղեկացիների դեմ։ Մովսեսը, Ահարոնն ու Ովրը բարձրացան բլրի գագաթը։ Երբ Մովսեսը բարձր էր պահում ձեռքերը, առավելություն էին հասնում իսրայելացիները, իսկ երբ իջեցնում էր ձեռքերը, առավելություն էին հասնում ամաղեկացիները։ Եվ քանի որ Մովսեսի ձեռքերը հոգնելուց ծանրանում էին, Ահարոնն ու Ովրը մի քար առան և նրա տակը դրեցին։ Մովսէսը նստեց դրա վրայ, իսկ Ահարոնն ու Ովրը՝ մեկն այս կողմից, մյուսն այն կողմից, նրա ձեռքերը բռնած բարձր էին պահում։ Այսպիսով, Մովսեսի ձեռքերը մինչև արևի մայր մտնելը, բարձրացած մնացին։ Հեսուն սրակոտոր արեց ամաղեկացիներին ու նրանց ողջ զորքը։ Տերն ասաց Մովսեսին. «Այս դեպքը որպես հիշատակ՝ գրի՛ առ։ Հաղորդի՛ր Հեսուին, որ ամաղեկացիների հիշատակը ջնջելու եմ երկրի վրայ՝ երկնքի ներքո»։ Մովսէսը Տիրոջ համար զոհասեղան շինեց և դրա անունը դրեց՝ «Տերն իմ ապավենն է»։ Նա ասաց. «Այսպես կոչեցի, քանի որ Տերն իր անտեսանելի ձեռքով պատերազմում է ամաղեկացիների դեմ՝ սերնդից սերունդ»»**[9]։

Կարող էինք ավելի համառոտ ներկայացնել իսրայելացիների ելքի

[8] Сергей Глинка, “Обозрение истории Армянского народа”, Москва 1832 г., ст. 39–40.

[9] Ելք 17:8–16:

պատմությունը և անցնել նրանց՝ Ավետյաց երկիր՝ Պաղեստին մտնելուն: Սակայն ամաղեկացիների՝ ով լինելու մասին պետք է որոշ պարզաբանումներ անել:

Թյուր կարծիք կա որոշ գիտական շրջանակներում, թե իբր ամաղեկացիների անօրեն ցեղը հայերի նախնիներն են:

Ավետյաց երկիր մտնելու ճանապարհին իսրայելացիների համար առաջին խոչընդոտն եղան ամաղեկացիները: Նրանք տեղյակ էին, որ Տերն է իսրայելացիներին մեծ և ահավոր հրաշքներով հանել Եգիպտոսից, սակայն չվախեցան Աստծուց և երկար ճանապարհ կտրելով՝ եկան և պատերազմով ելան նրանց դեմ:

*Եվ դա ամաղեկացիների համար ճակատագրական եղավ. նրանց ողջ բանակը կոտորվեց պատերազմի դաշտում: Հանդուգն և անբարիշտ արարքի համար Տերը հետևյալ պատվերը տվեց իսրայելացիներին. **«Հիշի՛ր, թէ ինչ արեց քեզ Ամաղեկը, երբ Եգիպտոսից դուրս գալու համար ճանապարհ էիր ընկել. թե ինչպես ճանապարհին ելավ քո դեմ, կոտորեց քո բանակի վերջապահներին ու հոգնելու պատճառով հետ ընկածներին, երբ դու քաղցած ու հոգնած էիր. չվախենալով Աստծուց: Եվ երբ քո Տեր Աստվածը քեզ ազատի քո շրջապատում գտնվող քո բոլոր թշնամիներից այն երկրում, որ քո Տեր Աստվածը վիճակով քեզ է տալու՝ իբրև ժառանգություն, Ամաղեկի անունը կջնջես երկրի երեսից: Տե՛ս, որ չմոռանաս սա»**[10]:*

*Սակայն դեռ մինչ այդ էլ մի մարգարեություն էր արվել ամաղեկացիների մասին՝ Բաղաամ տեսանողի կողմից. **«Ամաղեկացիները ազգերի գլուխն են, բայց կորստյան պիտի մատնվի նրանց սերունդը»**[11]:*

Ազգերի գլուխ հասկացողությունը պետք է ընդունել այն աշխարհագրական դիրքի համար, որտեղ ապրում էին ամաղեկացիները. խոսքը Քանանի երկրի և նրան հարող որոշ տարածքներում բնակվող ազգերի մասին է, որոնց մեջ ամաղեկացիները ամենաբարձր դիրքն էին գրավել:

*Ամաղեկացիների ծննդաբանության մասին Սուրբ Գրքում գրված է, որ Ամաղեկը Իսրայելի նահապետ Հակոբի եղբայր Եսավի թոռն էր.. **«Սրանք են Եսավի որդիների անունները. Ելիփազ՝ Եսավի կին Ադդայի որդին... Թամարը Ելիփազի՝ Եսավի որդու հարճն էր և Ելիփազի համար ծնեց Ամաղեկին»**[12]: Սակայն այստեղ առաջին հայացքից տարակուսանք կա, և ահա թե՝ ինչու, խնդիրն այն է, որ Սուրբ Գրքում մի այլ տեղ էլ Ամաղեկի մասին հիշատակություն կա: Իսկ դա այն ժամանակներում էր, երբ դեռ Եսավի թոռ Ամաղեկը լույս աշխարհ չէր եկել: Ամաղեկի ծննդից առաջ, երբ էլամացիները և նրանց դաշնակից մյուս թագավորները հար-*

---

10 Բ. Օր. 25:17–19:

11 Թուեր. 24:20:

12 Ծննդ. 36:9–12:

*ձակվեցին Սոդոմի, Գոմորի և հարևանությամբ գտնվող մյուս թագավորների վրա, հիշատակվում է նաև Ամաղեկը. **«Նրանք վերադարձան Դատաստանի աղբյուրը, այսինքն՝ Կադէս, և կոտորեցին Ամաղեկի բոլոր իշխաններին»**[13]։*

*Սակայն, Մովսեսը երբ գրում էր Ամաղեկի ծննդից առաջ կատարվող այդ դեպքերի մասին, նա տվյալ տարածքները մոտավորապես նշելու համար է օգտագործել տվյալ ժամանակներում գործող անվանումը, ինչպես որ այդ մասին գրված է Բրոկհաուզի Հանրագիտարանում. **«Ամաղեկը Եսավի որդի Ելիփազի որդին է, համարվում է ամաղեկացիների նահապետը։ Եթե Աստվածաշնչում հիշվում է «ամաղեկացիների տարածքը դեռ Աբրահամի ժամանակաշրջանում (Ծն 14։7), ապա պետք է համարել, որ Ծննդոցի հեղինակը դրանով նշել է այն երկիրը, որը տվյալ (ներկա) ժամանակ բնակեցված էր ամաղեկացիներով»**[14]։*

Այս մասին մեկնիչների մոտ կան այլ կարծիքներ ևս. սակայն բոլորն էլ եկել են միևնույն եզրահանգման, որ Եսավի թոռ Ամաղեկն է, իսկապես, եղել ամաղեկացիների նախահայրը։

Ինչպես տեսնում ենք, հայերի և ամաղեկացիների միջև որևէ՝ նույնիսկ հեռավոր ազգակցական կապ չկա և չէր էլ կարող լինել։ Հայերը հնդեվրոպացիներ են և սերվել են Հաբեթից՝ նրա որդի Թորգոմի որդի Հայկից։ Իսկ ամաղեկացիները սերվել են Սեմի ճյուղից՝ Աբրահամի թոռ Եսավից։ Եվ եթե հայերն ու ամաղեկացիները միևնույն ժողովուրդը լինեին, ուրեմն կա՛մ հայերն են սեմիտներ՝ սերված Աբրահամի թոռ Եսավի սերնդից (ինչն անհեթեթություն է) կամ էլ ամաղեկացիներն են սերվել Թորգոմի որդի Հայկից, ինչն առավել մեծ անհեթեթություն է։

*Իսկ որտեղի՞ց է նման անհիմն տեղեկությունը հայերի և ամաղեկացիների նույնության մասին։ Պարզվում է, որ այդ «հանճարեղ» կարծիքն առաջին անգամ հայտնել է մի հրեա ռաբբի՝ Ք.հ. X դարում[15]։ Սակայն այդ տեղեկությունը բնավ կապ չի ունեցել որևէ ազգաբանության հետ. հրեաներն «ամաղեկացի» են անվանել այն անձին կամ ազգին, որոնց տվյալ ժամանակաշրջանում համարել են իրենց թշնամի։ Այսինքն, ամաղեկացիները հազարամյակներ առաջ, որպես ազգ, ոչնչացել են, սակայն մնացել է նրանց անվանումը՝ ուղղակի որպես թշնամու խորհրդանիշ։ Ուստի, «ամաղեկ» ասելով՝ նկատի չի առնվել ազգություն, այլ բառն օգտագործվել է՝ որպես «թշնամի» բառի հոմանիշ։ Այդ մասին ասում է մի այլ ռաբբի՝ Մոշե Յուրիելին. **«Ամաղեկը Իսրայելի բոլոր թշնամիների ընդհանուր անվանումն է»**։*

Եվ իսկապես՝ տարբեր ժամանակներում իսրայելացիները ամաղե-

---

13 Ծննդ. 14:7:

14 Энциклопедический Словарь, Брокгауза и Ефрона, Том I, С–Петербургъ 1890 г., ст. 603.

15 Յոսիփփոն ժամանակագրություն (X դ.), գլ. 64;

*կացի են համարել տարբեր ազգերի և անձերի, ինչպես՝ հռոմեացիներին, պաղեստինցիներին, գերմանացիներին, Հիտլերին և այլոց. **«Եբրայեցիների և ամաղեկացիների միջև տիրող դարավոր թշնամության հետևանքով Ամաղեկ անվանումը ուշ շրջանի կաբալիստների մոտ դարձավ որպես սկզբնաչարի և պիղծ ուժերի հոմանիշ»**[16]:*

Եվ չնայած հրեական որոշ ծայրահեղ կրոնական շրջանակներում դեռ հայերին ամաղեկացի են համարում, սակայն հիմնականում հրեա ուսումնասիրողների աշխատություններում, երբ խոսվում է ամաղեկացիների՝ ով լինելու մասին, ոչինչ չի նշվում հայերի մասին:

*Մի այլ առթիվ՝ էլիշա Ավիները, գրում է. **«Ամաղեկն աշխարհում ընդունված է համարել՝ որպես հակասեմիտիզմի խորհրդանիշ: Դրա հիման վրա, ըստ ռաբբի Հովսեփ-Դովա Սոլովեյչիկի մեկնության, Ամաղեկ կարելի է անվանել յուրաքանչյուր ազգի, որ ջանում է վնաս հասցնել Իսրայելի ժողովրդին կամ ոչնչացնել նրան»:***

Իսկ թե ինչո՞ւ են հայերը X դարում այդ ռաբբիի կողմից հորջորջվել՝ որպես ամաղեկացի, այդ մասին մասնագետների[17] կարծիքն այն է, որ հայերն այդ ժամանակաշրջանում Բյուզանդիայում շատ բարձր պաշտոններ էին զբաղեցնում, և առևտուրն ու այլ դրամական ոլորտները հիմնականում գտնվել են հայերի ձեռքում, ինչից էլ դժգոհ գործարար հրեաները հայերին դիտել են՝ իբրև թշնամի և իրենց վաճառաշահության հետ՝ անհամատեղելի՝ «ամաղեկացի»:

Իսկ վերջին շրջանում հայերին այդպես անվանել է նոբելյան մրցանակակիր Շմուել Ագնոն՝ XX դարում, հավանաբար, իրենից մոտ մեկ հազարամյակ առաջ ապրած այդ ռաբբիի աշխատությանը ծանոթանալուց հետո:

Հին Կտակարանում Աստված մեկ անգամ չէ, որ պատվիրում է՝ աշխարհի երեսից իսպառ վերացնել ամաղեկացիների ցեղը: Վերջին անգամ նման պատվեր է տալիս մոտ 3000 տարի առաջ՝ Իսրայելի Սավուղ թագավորին, քանզի ամաղեկացիները եղել են պիղծ և անօրեն կռապաշտներ՝ իրենց վարքով նման լինելով սոդոմացիներին և գոմորացիներին: Այդ պատճառով Սամուել մարգարեի միջոցով Տերը Սավուղ թագավորին պատվիրեց ոչ միայն իսպառ ոչնչացնել ամաղեկացիներին, այլև նրանցից ավար չվերցնել, այլ ամեն բան կրակի մատնել, քանի որ նրանց ամեն ինչը պղծված էր:

*Հին Կտակարանի «Մնացորդաց» գրքերից հետո այլևս երբեք չեն հիշատակվում ամաղեկացիները՝ որպես ազգ: Դրանից հետևում է, որ այդ անօրեն ժողովուրդն արդեն սկսել էր իսպառ անցնել պատմության գիրկը. **«Ամաղեկացիները հզոր ժողովուրդ էին... Նրանք իսրայելացիների որդի-***

---

16 Энциклопедический Словарь, Брокгауза и Ефрона, Том I, С–Петербургъ 1890 г., ст. 603.

17 Շուշան Խաչատրյան, Աստվածաշունչը հայերի և Հայաստանի մասին (Համացանաց):

ների հետ պատերազմում ծանր պարտություն կրեցին Ռափիդիմում, և իրենց մեղքի համար, որ ընդդիմացան Աստծո ժողովրդի բարեկեցությանը, մատնվեցին ահավոր դատաստանի: Արդյունքում՝ նրանք պարտվեցին և ջախջախվեցին Գեդեոնի (Դտ. 8:12-25), Սավուղի (Ա Թգ 15) և Դավթի (Ա Թգ 30) կողմից: Ի վերջո, նրանց վրա ի կատար ածվեց Տերունական խոսքը, և նրանց անունը չքվեց երկրի երեսից (Ա Թգ 30:17, Ա Մն 4:43)»[18]:

Իսկ մի՞թե Տերը չնչեց հայերի հիշատակը. չէ՞ որ շատերը ջանացին իսպառ վերացնել հայերին աշխարհի երեսից, բայց Տիրոջ կամոք՝ հայոց ազգը կա և կլինի: Այնինչ՝ հին ազգերից շատերը, որոնք բռնությամբ են վարվել հայերի հետ, վաղուց դադարել են գոյություն ունենալ: Ուրեմն, եթե հայերը լինեին ամաղեկացիներ, ապա ըստ Աստծո խոսքի ու հրամանի՝ նրանք հազարամյակներ առաջ պիտի ոչնչացված լինեին: Սակայն հայերը Տիրոջ կամոք և օրհնությամբ արժանացել են՝ դառնալու աշխարհում առաջին քրիստոնյա պետությունը: Դա հատուկ է ընտրյալ ազգին, այլ ոչ՝ Աստծո առաջ պիղծ ու անօրեն որևէ ժողովրդի:

Հին Կտակարանում ավելի ուշ շրջանում Ամաղեկն արդեն չի հիշվում: Սակայն հատակ հիշատակություններ կան Հայաստանի մասին՝ որպես «Արարատյան երկիր» և «Թորգոմա տուն»:

Տարօրինակ ու ցավալի է այն, որ հայազգի ուսումնասիրողներից ոմանք, չգիտես ինչու, դարձել են X դարի այն հրեա ռաբբիի կողմնակիցներ, նրա անմտության սպասարկուներ՝ ընդունելով որ իրենք «ամաղեկացի» են, և, «ողբում են», թե իբր իրենց նախնիներին մոտ 3200 տարի առաջ հրեաները կոտորել են:

Իսկ ահա թե ինչպիսին են ամաղեկացիները մեր սուրբ հայր Գրիգոր Նարեկացու նկարագրությամբ.

«Խաչիդ նշանով խափանվում են խոլ
Հարձակումները ընդդիմամարտների,
Փակվում են ինոտ ամաղեկացիք ստորին բանտում,
Անլուծանելի հանգուցումներով
Կապվում են խմբերն հակառակորդի»[19]:

---

[18] Библейская Энциклопедия архимандрита Никифора, Москва 1990 г., ст. 38.

[19] Գրիգոր Նարեկացի, «Մատյան ողբերգության», Երևան 1979 թ., էջ 541:

Հիքսոս – Ամաղեկ

Ոմանք ենթադրում են, թե ամաղեկացիները հիքսոսներն են: Սակայն արդեն գիտենք, որ հիքսոսները եղել են հնդեվրոպացիներ, այլ ոչ՝ սեմիտներ, ինչպես՝ ամաղեկացիները: Նաև հարց է. եթե հիքսոսները դարեդար «Հիքսոս» կամ «Հաքսոս» են անվանվել, այդ ինչպե՞ս հանկարծ վերածվեցին «Ամաղեկի»:

*Արդեն նշել ենք, որ հիքսոսները վաղուց լքել էին այդ տարածքները և ոչ մի կերպ չէին կարող հայտնվել այնտեղ, քանզի Եգիպտոսի փարավոն Յահմոսը հիքսոսներին հեռացրեց ոչ միայն Պաղեստինից, այլև Հարավային Սիրիայից՝ այդ դեպքերից դեռ մոտ 200 տարի առաջ. **«Շնորհիվ հիքսոսների կողմից կարգված հզոր կենտրոնացված իշխանության՝ քոչվոր և կիսաքոչվոր ցեղերը դադարեցին կարևոր դեր ունենալ Պաղեստինի պատմության մեջ: Սակայն երբ հիքսոսները սկսեցին հանձնել իրենց դիրքերը, այդ ժողովուրդները վերականգնեցին իրենց նշանակությունը և վերածվեցին բավականին հզոր քաղաքական ուժի»**[20]:*

*Հիքսոսները հաստատապես դուրս եկան Պաղեստինից, իսկ տեղաբնակ ցեղերը, հատկապես ամաղեկացիները, ազատվելով հիքսոսական լծից, սկսեցին հզորանալ. **«Ամաղեկացիները քոչվոր ժողովուրդ էին՝ հին Պաղեստինի հարավում»**[21]:*

*Այդ շրջանում էր, որ Ամաղեկը համարվեց քանանաբնակ ազգերի գլուխ, ինչն էլ նրան ինքնավստահություն ներշնչեց՝ առաջինը ելնել իսրայելացիների դեմ պատերազմի: Ուրեմն, այդ ժամանակաշրջանում հիքսոսների ներկայությունը Քանանում և նրա մերձակա տարածքներում՝ լիովին բացառվում է, որը լրացուցիչ ապացույց է, որ հիքսոսները և ամաղեկացիները չէին կարող նույն ժողովուրդը լինել. **«Ասում են, որ հիքսոսները կարող էին սինայական-հարավպաղեստինյան քոչվոր-ամաղեկյան ցեղը լինել, որը գրավել է Եգիպտոսը և այնտեղ թագավորներ կարգել, մինչև որ իշխանությունը նորից անցել է տեղացի իշխողներին... Սակայն Ա. Նեմիրովսկին պնդում է, որ իբր դա սկզբունքորեն անհնարին է, «...ո՛չ հրեական, ո՛չ ղպտի քրիստոնեական ավանդություններում ամաղեկ թագավորը չէր կարող հովանավորել եբրայեցի Հովսեփին. դա լիովին կհակասեր Հին Կտակարանի խիստ մոտեցմանն ամաղեկացիներին, որոնք հայտնվում են հին եբրայական հորիզոնում՝ միայն Ելքի ժամանակ և սկզբից մինչև վերջ հայտարարվում՝ որպես եբրայեցիների վատթարագույն թշնամին՝ առանց որևէ հնարավոր բացառության»**[22]:*

---

20 Эммануэль Анати, Палестина до древних евреев, Москва 2007 г., ст. 353.

21 Энциклопедический Словарь, Брокгауза и Ефрона, Москва 2003 г., ст. 25.

22 Владимир Борисович Миронов, Москва 2006 г., ст. 412.

Պատմաբաններից ոմանց մոտ կա այն կարծիքը, որ ամաղեկացիները, լինելով Եսավի սերնդից, հակակրանք են ունեցել Հակոբի սերնդի հանդեպ, և եթե ամաղեկացիները հիքսոսներ լինեին, ապա տիրապետելով Եգիպտոսին՝ նրանք ոչ մի կերպ չէին հովանավորի իսրայելացիներին:

Հայ-հիքսոսները, ինչպես ասվեց, Տիրոջ կամոք էին եկել Եգիպտոս՝ մի շատ կարևոր առաքելությամբ. որպեսզի հովանավորելով և աջակցելով իսրայելացիներին՝ ընդունեին և տեղավորեին նրանց Եգիպտոսում: Դա Մեսիական ծրագրի իրականացման մաս էր: Իսկ եթե հիքսոսներն այդ ժամանակ հարձակվեին իսրայելացիների վրա, կնշանակեր հակառակը՝ թե ջանում էին խափանել Մեսիական ծրագիրը:

Եվ նման պարագայում, կստացվեր, թե ովքեր մոտ երկու դար Եգիպտոսում հովանավորեցին և բարեկամական հարաբերություններ հաստատեցին իսրայելացիների հետ, հենց նրանք էլ առաջինը նրանց դեմ ելան պատերազմի: Իսկ դա ոչ մի քննության չի դիմանում. անտրամաբանական է և անհեթեթ:

Քանանի մատույցներում

«Այս հայերը, խոստովանում եմ, ինձ գերեցին:
Ջարմանալի ժողովուրդ, որի հոգու խորքում
պահպանվում է դարերի խորքից եկող սեփական
արժանապատվության և ազնվության զգացումը»[23]:

Պատերազմում Ամաղեկին հաղթելուց հետո՝ մի առ ժամանակ անց, տարբեր փորձությունների միջով անցնելով՝ իսրայելացիներն ընդհուպ մոտեցան Ավետյաց երկրին: Տերը Մովսեսին պատվիրեց՝ Իսրայելի ամեն ցեղից ընտրել մի հոգի, որ գնան և հետախուզեն այդ տարածքները: Հետախույզների մեջ էին Քաղեբը և Հեսուն, որ մեծ նախանձախնդրությամբ էին հետևում Աստծո պատվիրաններին:

*Երբ հետախույզները գնացին, տեսան, որ երկիրն իսկապես շատ բերրի է, լի և առատ՝ ամենատարբեր բարիքներով: Նրանք այդ տարածքների բարիքներից բերեցին՝ ի ցույց իրենց եղբայրների: Սակայն լավ լուրերի հետ նրանք նաև խիստ տրտմեցրին իսրայելացիներին՝ Մովսեսին ասելով. **«Մենք գնացինք այն երկիրը, ուր ուղարկեցիր մեզ. մի երկիր, ուր կաթ ու մեղր է հոսում: Ահա՝ սրանք են նրա բարիքները: Այնտեղ բնակվող***

[23] Луиджи Малербы, из статей «Гракан терт», 9 октября 1987 г.

ժողովուրդը, սակայն, հզոր է, քաղաքները շատ ամուր են, պարսպապատ ու շատ մեծ»[24]*։*

Այդ խոսքերով նրանք սարսափի մատնեցին ժողովրդին, և իսրայելացիները խիստ տրտմեցին։ Բայց Հեսուն ու Քաղեբը ջանացին ժողովրդին հորդորել, որ չվհատվեն, քանզի Տերն իրենց հետ է, և նրանք չպետք է վախենան, այլ վստահաբար հարձակվեն և գրավեն այդ լավ երկրի տարածքները։ Սակայն իսրայելացիները լաց ու կոծ դրեցին և նույնիսկ որոշեցին՝ ետ դառնալ Եգիպտոս ու նորից ստրկության լծի տակ մտնել։ Իսկ Հեսուին ու Քաղեբին որոշեցին քարկոծել, որ համոզում էին՝ չտրտնջալ Տիրոջ առաջ, այլ վստահեն ու հավատան։ Եվ ժողովրդի վրա իջավ Տիրոջ բարկությունը. Մովսեսի միջոցով Աստված ասաց իսրայելացիներին, որ նրանցից քսան տարեկանից բարձր եղող բոլոր տղամարդիկ չպիտի մտնեն այդ երկիրը, այլ պիտի մահանան անապատում՝ բացի Հեսուից և Քաղեբից, ովքեր պետք է արժանանային Ավետյաց երկրին։

Եվ, որպես պատիժ, Աստված պարտադրեց նրանց՝ քառասուն տարի դեգերել Սինայի անապատում։ Եվ միայն քառասուն տարվա ավարտին նրանք նորից մոտեցան խոստացված «կաթ և մեղր բխող» երկրի սահմաններին։

Բայց այդ անցումը՝ անապատից Պաղեստին, նորից դյուրին չէր լինելու. դեռ Հորդանանը չանցած՝ նրանք պետք է պատրաստվեին պատերազմի։

Նրանց դեմ պատերազմելու ելան Եսեբոնի արքա Սեհոնը, և Բասանի թագավոր Օգը, որոնց իսրայելացիները պարտության մատնեցին և գրավեցին նրանց քաղաքները։ Գրաված տարածքներում բնակություն հաստատեց իսրայելացիների մի մասը, իսկ հիմնական ժողովուրդը պետք է անցներ Հորդանան գետով և այնտեղի տարածքները բնակեցներ՝ դրանք գրավելով կռապաշտության մեջ թաղված ազգերից, որոնք դիվապաշտ լինելով՝ իրենց մանուկներին զոհում էին զազրելի կուռքերին, և իրենց կյանքն էլ լի էր տարատեսակ պղծություններով։

Աստված երկար ժամանակ համբերատար եղավ նրանց հանդեպ, սակայն նրանք ապաշխարելու փոխարեն՝ էլ ավելի ընկղմվեցին իրենց ամբրշտության մեջ և ի վերջո արժանացան Սոդոմի ու Գոմորի վիճակին։

Իսկ Իսրայելի բանակը մոտեցավ Հորդանան գետին։

Մովսես մարգարեին Տերն արգելե՛ց անցնել Հորդանանը։ Որպես իրեն հաջորդող Իսրայելի առաջնորդ հաստատվեց Նավեի որդի Հեսուն։ Մովսեսը չմտավ Ավետյաց երկիր. հեռվից միայն տեսավ և մահացավ լեռան վրա ու ծածկվեց հողում՝ Աստծո ձեռամբ։

Այժմ անդրադառնանք այս վերնագրի բուն էությանը։ Սակայն մինչ այդ՝ հիշենք, որ երբ հիքսոսները եգիպտացիների ճնշման տակ թողեցին

[24] Թուեր. 13:28–29:

Պաղեստինն ու հեռացան, այնտեղ նրանցից և հատկապես սաղեմաբնակ հայերից դեռ մնացին այս ու այ կողմ ցրված համայնքներ.

«Իսկ ի՞նչ տեղի ունեցավ հիքսոսների հետնորդների հետ»[25]*,- հարցադրում է ուսումնասիրողը:*

Իսկ նրանց տեղի ունեցավ հետևյալը. Սաղեմի հայերից ովքեր եգիպտահայ հիքսոսների հետ չկարողացան հեռանալ Քանանի տարածքից, ապաստան գտան Քանանում բնակվող տարբեր ցեղերի մոտ:

Մի ընտանիք էլ կարողացավ տեղավորվել Երիքով քաղաքում, քաղաք, որ պատրաստվում էին գրավել իսրայելացիները:

Իսրայելի մուտքն Ավետյաց Երկիր

***«Հայաստանը, ինչպես տիեզերքը, անսահման է և համընդգրկուն՝ իր «սև անցքերով» և գալակտիկաներով, թերևս, ի տարբերություն տիեզերական տարածության, նրանում չկա վակուում: Ընդհակառակը, այն լցված է բուրմունքներով, համով, պատկերներով... Եվ ինչպես տիեզերքում գոյություն չունի երկու միանման աստղ, նույնպես երկու միանման հայ չես գտնի: Եվ այդ անհատականությունն ու իռացիոնալությունը հայ ժողովրդին դարձնում է ամենաարտահայտիչներից մեկը, քանզի, ինչպես ոչ մի այլ ժողովուրդ, հայերը, շատ հաճախ գտնվելով «սահմանային» իրավիճակներում, բազմադարյա պատմության ընթացքում ոչ միայն չեն խառնվել պատմության բերրի շերտերին, այլև, հարմարեցնելով նրանց իրենց էության հանճարին, այնքան արագ օգտակար են դարձել, որ նույնիսկ տխրահռչակ «սելեկցիոներները» հնարավորություն չունեն վերջնականապես արմատախիլ անել այդ մշակույթը»**[26]:

Հորդանան գետն անցնելու համար Հեսու Նավեն սկսեց նախապատրաստել ժողովրդին: Աստված Հեսուի միջոցով հրահանգեց, և քահանաներն, Ուխտի Տապանակը վերցնելով, մտան վարարած Հորդանանը. գետի հոսքը դադարեց, և ամբողջ ժողովուրդն անցավ մյուս ափը: Հետո գետը, նորից վարարելով, շարունակեց իր ընթացքը:

---

25 Maximillien de Lafayette “Civilization and Arts of Armenia from Pre–History to the Present Day: Its Culture, Society, Stars, Artists and Celebrities”, USA San Bernardino, CA 25 May 2015 p., Volume 1 p. 36.

26 Виктор Коноплев, Армения, как состояние любви, статья.



Առջևում Երիքով քաղաքն էր՝ հզոր պարիսպներով ու անառիկ: Մինչ Հորդանանն անցնելը Հեսուն երկու լրտեսների է ուղարկում Երիքով, որպեսզի հետախուզեն այդ պարսպապատ քաղաքը:

Հետախույզները ճանապարհ են ընկնում և հասնելով Երիքով՝ այնպես է ստացվում, որ մտնում են այդտեղ բնակվող սաղեմահայ մի կնոջ տուն:

Այդ հայուհին զարմանալի խորհրդավորություն ունի թե՛ Հին և թե՛ Նոր Կտակարաններում: Նրա կերպարը, ինչպես իր սուրբ նախնի Հայկ-Մելքիսեդեկ նահապետի ինքնությունը, մինչ օրս ծածկված է գաղտնիքի շղարշով, ինչն էլ Աստծո ողորմածությանը հուսալով՝ կջանանք վերցնել տեսնելու համար, թե իրականում ո՛վ էր նա: Իսկապես, շատ խորհրդավոր է այդ կնոջ կերպարը: Նրան մե՛կ տեսնում ենք Երիքովի հասարակության մեջ՝ ամենաստորին ու անարգ դիրքում, և մե՛կ էլ՝ Աստվածաշնչի զարմանալի և գլխապտույտ բարձունքներում:

*Այդ կինը Երիքովցի Ռահաբն էր, ով հայտնի էր «Ռահաբ պոռնիկ» անվամբ: Երբ դեռ նոր էին Հեսուի հետախույզները մտել Ռահաբի տունը, Երիքովի թագավորին լուր հասավ, որ իսրայելացի հետախույզներ են մտել քաղաք և հանգրվանել են Ռահաբի մոտ: Սուրբ Գիրքը տեղեկացնում է. **«Երիքովի թագավորը մարդ ուղարկեց, որ Ռահաբին ասի. «Գիշերը քեզ մոտ եկած և տունդ մտած մարդկանց դո՛ւրս հանիր, որովհետև եկել են այս ամբողջ երկիրը լրտեսելու»: Իսկ կինը վերցրեց այդ երկու մարդկանց, թաքցրեց, խոսեց նրանց հետ և ասաց. «Ինձ մոտ մարդիկ մտան, բայց ես չգիտեի, թե որտեղից են: Աղջամուղջին՝ դարպասները փակվելու ժամանակ, այդ մարդիկ դուրս եկան, և չգիտեմ, թէ ո՛ւր գնացին: Շուտ հետապնդեցե՛ք նրանց, գուցե հասնեք»: Իսկ ինքը նրանց հանեց կտուրը և թաքցրեց վուշի խուրձերի տակ, որ դիզել էր կտուրի վրայ: Մարդիկ Հորդանան գետի հունով մինչև գետանցը նրանց ետևից ընկան, և դարպասը փակվեց, երբ հետապնդողներն ընկան նրանց ետևից: Նրանք դեռ չէին քնել, որ կինը նրանց մոտ՝ կտուրը ելավ և ասաց. «Գիտեմ, որ Տերն այս երկիրը ձեզ է տվել, որովհետև ձեր ահն ընկել է մեզ վրա, և ձեր պատճառով այս երկրի բոլոր բնակիչները հալումաշ են եղել, քանի որ մենք լսել ենք, թէ ինչպե՛ս Տերը կարմիր ծովը ցամաքեցրեց ձեր առաջ,***

երբ դուրս էիք գալիս Եգիպտոսից, և թէ ինչ արեցիք դուք ամորհացիների երկու թագավորներին՝ Հորդանան գետի այն կողմում գտնուող Սեհոնին և Օգին, որոնց սպանեցիք։ Երբ մենք լսեցինք, զարհուրեցին մեր սրտերը, և մեզնից ոչ մեկի մէջ շունչ չի մնացել ձեր պատճառով, որովհետև ձեր Տեր Աստվածն Աստված է երկնքում՝ վերևում և երկրի վրայ՝ ներքևում։ Հիմա երդվեցե՛ք ինձ Տեր Աստծով, որ ինչպես ես եմ ձեզ ողորմութիւն անում, այդպես էլ դուք ողորմութիւն կանեք իմ հոր տան նկատմամբ։ Ինձ մի ճշմարիտ նշան տվե՛ք, որ ողջ կթողնեք իմ հոր ընտանիքը՝ իմ մորը, իմ եղբայրներին և քույրերին ու այն ամենը, ինչ ունեն նրանք, և կազատեք ինձ մահից»։

Այդ մարդիկ նրան ասացին. «Մենք ձեր փոխարեն թող մեռնենք, միայն թէ մեր մասին այս բաները չպատմեք»։ Եվ կինն ասաց. «Երբ Տերն այս քաղաքը ձեր ձեռքը հանձնի, ինձ ողորմութիւն արե՛ք և ինձ հետ արդա՛ր վարվեցեք»։ Եվ պարանով կախեց-իջեցրեց նրանց պատուհանից, որովհետև նրա տունը պարսպի մէջ էր, և ինքն էլ բնակվում էր պարսպի մէջ։ Նա ասաց նրանց. «Լեռների վրայով գնացե՛ք, որպեսզի խուսափեք ձեզ փնտրողներից։ Երեք օր թաքնվեցե՛ք այնտեղ, մինչև, որ ձեզ փնտրողները ետ դառնան, և հետո գնացե՛ք ձեր ճանապարհով»։

Այդ մարդիկ նրան ասացին. «Մենք ազատ կլինենք այդ երդումից, որով մեզ երդվեցրիր. երբ մենք մտնենք քաղաքը, դու այս կարմիր պարանը որպես նշան կդնես և կկապես այն պատուհանից, որից մեզ իջեցրիր, և քո հորը, մորը, եղբայրներին և քո հոր ամբողջ ընտանիքը կհավաքես քեզ մոտ՝ այս տանը։ Ով որ քո տնից դուրս գայ, ինքը թող իր համար պատասխանատու լինի. մենք ազատ կլինենք քեզ տված մեր երդումից։ Ով քեզ հետ քո տանը լինի, մենք պատասխանատու կլինենք, եթե մեկի ձեռքը դիպչի նրան։ Իսկ եթե մեկը վնասի մեզ, կամ հայտնես մեր այս գործը, մենք ազատ կլինենք քեզ տված մեր երդումից»։

Եվ կինն ասաց. «Թող լինի ձեր ասածի պես՝ թող այդպես լինի»։

Արձակեց նրանց, և նրանք գնացին։

Եվ նա կարմիր նշանը կապեց պատուհանին։

Նրանք գնացին և եկան լեռնակողմը և այնտեղ մնացին երեք օր, մինչև որ փնտրողները ետ դարձան։ Փնտրողները հետախուզեցին ամբողջ ճանապարհը, բայց չգտան նրանց։ Երկու երիտասարդները ետ դարձան, իջան սարից՝ անցնելով այն կողմ, հասան Նավեի որդի Հեսուի մոտ և պատմեցին իրենց հետ պատահած բոլոր դեպքերը։ Նրանք ասացին Հեսուին, թէ՝ «Տեր Աստվածը այդ ամբողջ երկիրը մատնել է մեր ձեռքը, և այդ երկրի բոլոր բնակիչները զարհուրած են մեզնից»»[27]։

Հետախույզների բերած լուրը ողջ իսրայելացիներին ոգևորվում է։ Համարձակություն ստանալով՝ նրանք պատրաստվում են պատերազմի՝

[27] Յեսու. 2:3-24:

չվախենալով Երիքովի անառիկ պարիսպներից։

Ըստ Տերունական պատվերի՝ Հեսուի հրահանգով վեց օրում՝ օրը մեկ անգամ ամբողջ զորքը լուռումունջ պտտվում է Երիքովի շուրջը։

Ապա յոթերորդ օրը յոթ անգամ պտտվելով՝ վերջում հնչեցնում են շեփորները, և ամբողջ բանակն աղաղակ է բարձրացնում։ Այդ ժամանակ, ինչպես Տերը նախապես հայտնել էր Հեսուին, Երիքովի պարիսպները կործանվում են, և Իսրայելի զորքը ներխուժում է Երիքով։

Երիքովցիները խիստ պղծաբարո ժողովուրդ էին՝ ամաղեկացիների նման։ Դրա համար էլ հրաման տրվեց սրի քաշել ոչ միայն բոլոր մարդկանց, այլև կրակի մատնել նրանց ամեն ինչը. ոչ մի ավար չվերցնելով՝ ոչնչացվեցին նույնիսկ բոլոր ընտանի կենդանիները։

*Այդ թոհուբուհի մեջ լրտեսները չմոռացան Ռահաբին տված իրենց խոստումը և Հեսուի հրամանով գնացին նրա տան կողմը. **«Երկիրը լրտեսող երկու երիտասարդներին Հեսուն ասաց. «Մտե՛ք այն պոռնիկ կնոջ տունը և, ինչպես որ երդվել էք, հանեք այնտեղից նրան ու այն ամենը, ինչ որ նա ունի»։ Եվ երկու երիտասարդները, որոնք լրտեսել էին քաղաքը, մտան այն կնոջ տունը, հանեցին պոռնիկ Ռահաբին, ինչպես նաև նրա հորը, մորը, եղբայրներին, նրա ամբողջ ունեցվածքն ու նրա ամբողջ ազգատոհմին և կանգնեցրին նրանց Իսրայելի բանակատեղիից դուրս։ Քաղաքն ու նրա մեջ եղած ամեն ինչ այրվեց հրով՝ բացի ոսկուց, արծաթից, պղնձից և երկաթից, որ Տիրոջ գանձարանը մտցրին։ Պոռնիկ Ռահաբին, նրա հորենական տունը և նրա ամբողջ ունեցվածքը փրկեց Հեսուն։ Ռահաբը բնակվում է Իսրայելի մեջ մինչև այսօր, որովհետև թաքցրեց այն լրտեսներին, որոնց Հեսուն այն օրն ուղարկել էր Երիքովը լրտեսելու»*[28]։

Սա է Երիքովցի Ռահաբի հետ կապված ողջ պատմությունը, ինչը դարեր շարունակ քննվել է տարբեր մեկնիչների և ուսումնասիրողների կողմից, քանզի այստեղ շատ խնդրահարույց և խրթին հարցեր կան։

Իհարկե, Աստվածաշունչ մատյանին քիչ ծանոթ անձինք կարող են տարակուսել, թե ի՞նչ մի արտառոց անձ էր այդ Ռահաբը, այն էլ, «պոռնիկ», որ այդքան մեկնիչներ են անդրադարձել նրա կերպարին. նա ընդամենը թաքցրել է երկու եբրայեցի հետախույզների, որոնք, որպես փոխհատուցում՝ փրկել են նրան։ Իհարկե, եթե այսքանով ամեն բան սահմանափակվեր, բնական է, որ այս միջադեպն ուղղակի պետք է անտեսեին մեկնիչները։ Սակայն արդեն Նոր Կտակարանում հանդիպում ենք Ռահաբի մասին այնպիսի տեղեկությունների, որոնք դարձնում են նրա անձը խիստ խորհրդավոր և հակասական։

Ռահաբի մասին Նոր Կտակարանում հիշատակվում է երեք տեղ՝ Մատթեոսի Ավետարանում, Պողոս և Հակոբոս առաքյալների թղթերում։

Հին Կտակարանի սաղմոսներում և Եսայի մարգարեի մոտ էլ հանդի-

[28] Յեսու. 6:22–25:

պում ենք «Ռահաբ» անվանը: Սակայն, ըստ որոշ հետազոտողների՝ դրանք երիքովցի Ռահաբի հետ առնչություն չունեն, այլ այդ անվան տակ, ըստ նրանց, պետք հասկանալ ոչ թե որևէ անձնավորություն, այլ՝ Եգիպտոս երկիրը: Նաև նշենք, որ Նոր Կտակարանում Ռահաբի անունը որոշ փոփոխություն է կրել. այնտեղ գրված է ոչ թե «Ռահաբ» այլ՝ «Ռաքաբ», սակայն մեկնիչներից ոչ մեկի մոտ կասկած չկա, որ այդ երկու անվանումներն էլ պատկանում են միևնույն կնոջը:

Ռահաբի մասին Մատթեոսի Ավետարանում նշվում է Աստծո Որդու՝ մեր Տեր Հիսուս Քրիստոսի ազգաբանության մեջ:

Ուստի, հարց է ծագում. ինչո՞ւ և ինչպե՞ս երիքովցի պոռնիկը՝ Ռահաբը, հայտնվեց Աստծո Որդու ազգաբանության մեջ՝ Նրա նախամայրերի շարքում:

Սա տարակուսանքների առիթ է եղել մեկնիչների համար դարեր շարունակ: Թե՛ քրիստոնյա և թե՛ այլադավան մեկնիչներն ընդունում են, որ Ռահաբն ազգությամբ եբրայեցի չի եղել, կրոնով եղել է կռապաշտ, իսկ վարքով՝ պոռնիկ: Նրա կերպարին այլ կերպ չէին էլ կարող անդրադառնալ, քանզի Սուրբ Գիրքը բառացի հենց այդպիսին է ի ցույց դնում Ռահաբին: Սակայն երբ մենք մեկտեղում ենք Հայաստանի հնագույն պատմությունը Սուրբ Գրքի տեղեկությունների հետ, այդժամ մեր առջև միանգամայն այլ պատկեր է ձևավորվում, ինչպես եղավ հայոց Հայկ–Մելքիսեդեկ նահապետի պարագայում:

Այժմ աշխատենք որոշ պարզաբանումներ մտցնել այս խրթին հարցերի մեջ: Նախ՝ քննենք, թե ինչո՞ւ այդ երկու եբրայեցի հետախույզները, մտնելով Երիքով, հանգրվանեցին հենց Ռահաբի տանը:

Եթե Ռահաբը պոռնիկ էր, ապա նրա այցելուները, պարզ է, թե ինչ նպատակով պետք է թակեին նրա դուռը: Կան կարծիքներ, թե հետախույզները կասկած չհարուցելու նպատակով են մտել հենց Ռահաբի մոտ՝ իբրև հասարակաց տան սովորական այցելու: Սակայն եթե այցելում էին՝ որպես այդպիսի տուն, նրանք այնտեղ չէին կարող ասել, թե եկել են ոչ թե շնանալու, այլ՝ հետախուզելու Երիքովի պաշտպանական միջոցները: Իսկ Երիքովում պատերազմական վիճակ էր հայտարարված, և բոլորը աչալուրջ սպասում էի թշնամական բանակի մոտենալուն: Եվ եթե հետախույզները նման կասկածելի հարցեր տային, իսկույն կմատնեին իրենց ով լինելը:

Ուրեմն, նրանք պետք է իրենց ներկայացնեին, իբրև թե մտել են այդ տուն կնոջը մերձենալու միտումով՝ հուսալով այդ ժամանակ ինչ-որ կերպ տեղեկություններ ստանալ: Սակայն նման անօրեն հարաբերությունն էլ ինքնին մեծ մեղք էր համարվում՝ ըստ մովսեսական օրենքի, այն էլ այդպիսի խառնակության համար, որի պատճառով ժամանակին Փենեհեսը իր ազգակցին և կռապաշտ, անբարո օտարազգի կնոջը նիզակով սպանեց:

Ուրեմն, թե՛ ուղղակիորեն Ռահաբին հարցեր տալը, և թե՛ անբարո կապի մեջ մտնելը տվյալ դեպքում բացառվում էր։ ***«Եթե Առաքյալը հիշատակում է լրտեսներին, որոնք ընդունվեցին նրա կողմից խաղաղությամբ***[29]***, դրանով ցանկանում էր ցույց տալ, որ մաքրությամբ և անարատությամբ դուրս եկան նրա մոտից, քանի որ անառակության համար չէ, որ մտել էին նրա մոտ»***[30]*։*

Ահա, տեսնում ենք, որ ըստ Եփրեմ Ասորու, նրանք, իսկապես՝ ինչպիսի մաքրությամբ մտել էին Ռահաբի մոտ, նույն մաքրությամբ էլ դուրս էին եկել այնտեղից։

Այդ դեպքում ինչպե՞ս են լեզու գտել այդ օտար և անբարո կնոջ հետ. չէ՞ որ եթե Ռահաբը իսկապես այդպիսի մեկն էր, ապա նա իսկույն կմատներ լրտեսներին, որով թե՛ թագավորի կողմից կգովվեր ու կպարգևատրվեր և թե՛ կնպաստեր Երիքովի պաշտպանությանը, որի կործանման դեպքում առաջինը հենց պարսպի մեջ գտնվող իր բնակարանը պիտի տուժեր՝ բնակիչներով հանդերձ։

Եվ, ուրեմն, հետախույզները գիտեին, թե ուր են գնում, ում են այցելում։ Քանզի երբ նայում ենք հիքսոսների պատմությանը, Եգիպտոսում հրեաների հետ նրանց սերտ բարեկամությանը, եզրակացնում ենք, որ եբրայեցիները քաջատեղյակ էին, թե ինչ պատահեց իրենց հովանավորներին՝ Եգիպտոսից դուրս գալուց հետո, և որ Քանանում դեռ մնացել էին ցրված հայկական փոքր համայնքներ։

Այս ամենն իմանալով՝ նրանք, անշուշտ, ինչ-որ աղբյուրներից տեղեկացել էին Ռահաբի մասին. այն, որ Երիքովում կան իրենց հավատակից հայ-հիքսոս բնակիչներ։ Եվ քանի որ Ռահաբի տունը գտնվում էր դարպասների մոտի պարսպի մեջ, ամենադյուրինը հենց նրան գտնելն էր, ինչն էլ արեցին հետախույզները։ Եվ սա պատահականություն չէր. ամեն բան ուղղորդվում էր Նախախնամության կամքով։

Ուրեմն, նրանց կողմից Երիքովում Ռահաբին գտնելը նույնպես Տիրոջ կամոք էր. ***«Ինչո՞ւ նրանք ապաստան գտան Ռահաբի տանը, դա մոտավորապես բացատրվում է նրանով, որ գտնվելով այնտեղ՝ նրանք հույս ունեին՝ իրենց գալով հնարավորինս քիչ կասկած հարուցել, իսկ Ռահաբի բնակության վայրը գտնվում էր քաղաքային պարսպի մոտ, ինչի մասին հետախույզները կարող էին նախապես կամ, ինչպես որ կարծում են ոմանք, հենց իրենից իմանալ՝ հանդիպելով նրան քաղաքից դուրս, քանզի նրա տունը առավել հարմար էր քաղաքի պարիսպներն ուսումնասիրելու և շրջապատ զննելու համար»*** [31]*։*

Սակայն երիքովցիները զգոնությամբ հետևում էին իսրայելացիներ-

---

29 Եբր. 11:31:

30 Святой Ефремь Сиринь, Творения, том 7, Москва 1995 г., ст. 303.

31 А. П. Лопухин, Толковая Библия, том II, Петербургъ 1905 г., ст. 10.

րի առաջխաղացմանը և շատ աչալուրջ էին։ Որովհետև հրեաներն աջուձախ կոտորելով կռապաշտ մյուս ազգերին՝ ընդհուպ մոտեցել էին իրենց։ Բնական էր, որ երիքովում ռազմական դրություն պիտի հայտարարված լիներ, և զգոնությամբ պետք է հսկվեին պարիսպները։ Նրանք գիտեին նաև, որ հրեաներն Աստծուց պատգամ ունեին, ըստ որի՝ նրանք պիտի կոտորեին բոլոր երիքովցիներին՝ մանուկներից մինչև զառամյալ ծերեր՝ որպես նզովվածների։ Դրանից սարսափած՝ երիքովցիները հույս չունեին, որ կարող են գոնե գերի ընկնել՝ իրենց կյանքը փրկելու համար։ Ոչ էլ փրկագինը կարող էր նրանց օգնել, քանզի փրկագինն էլ նզովված էր։ Երիքովցիներին մնում էր միայն մինչև վերջին շունչը պատերազմել։ Լրտեսներն էլ գիտեին, որ երիքովցիներն, այլ տարբերակ չունենալով, չափազանց զգոն են, և բռնվելու դեպքում՝ իրենք չեն փրկվի։

Այսպիսով տեսնում ենք, որ իսրայելացի հետախույզները նպատակաուղղված եկան իրենց հավատակից հայ-հիքսոս կնոջ բնակարանը՝ վստահ լինելով, որ ամենաապահով վայրն այդ անօրեն քաղաքում իրենց համար միայն դա կարող էր լինել։

Սուրբ Գիրքը չի տեղեկացնում, թե ինչպե՛ս հետախույզները գտան Ռահաբի տունը, ինչպե՛ս ողջունեցին միմյանց, մինչ իրենց թաքստոցից ելնելն՝ ինչի՛ մասին խոսեցին։ Միայն գիտենք, որ նրանք խաղաղությամբ ընդունվեցին Ռահաբի կողմից։ ***«Հավատո՛վ է, որ անհավատների հետ կորստյան չմատնվեց պոռնիկ Ռախաբը, որ խաղաղությամբ ընդունել էր լրտեսներին»***[32]*։*

Իսկ խաղաղությամբ ընդունում են բարեկամներին։ Եվ ուրեմն, ո՛չ նզովված երիքովցին կարող էր եբրայեցուն բարեկամ լինել, և ո՛չ էլ երիքովն իսպառ բնաջինջ անելու պատրաստ եբրայեցիները կարող էին երիքովցի մեկին բարեկամ լինել, այն էլ՝ այնպիսինին, ում վարքը ամենավատթար էր այդ քաղաքում։

Ուրեմն, հանդիպել էին՝ թեև ազգությամբ օտար, սակայն նույն հավատը դավանող անձինք՝ նույն Աստծուն պաշտող մարդիկ, որոնց նախնիները ժամանակին եղել էին նաև բարեկամական հարաբերությունների մեջ։

Իսկ թե ինչո՞ւ է նման բարեպաշտի անվանը կցվել «պոռնիկ» բառը, դրան մենք կանդրադառնանք ամենայն մանրամասնությամբ՝ իր ժամանակին։

Իսկ այսպիսի բարեկամները, միմյանց ողջունելով, պետք մանրամասնեին իրենց հանդիպման նպատակը։ Սակայն մինչ այդ նրանք Ռահաբի մոտ փոքր-ինչ հանգստանալուց և սնվելուց հետո, հավանաբար, հիշել են այն ավանդությունները, որոնք պահպանվել էին այդ երկու ազգերի՝ հայերի և հրեաների մոտ՝ Եգիպտոսում միասին ապրած երկար տարիների

[32] Եբր. 11:31:

բարվոք կյանքի մասին: Խոսակցություն պետք է գնար նաև այն մասին, թե ինչպես հայոց մեծ նահապետ Հայկ-Մելքիսեդեկն օրհնեց իսրայելացիների մեծ նահապետ Աբրահամին: Եվ մինչ նման ջերմագին զրույցներով էին տարված, հավանաբար, այդ ժամանակ էլ լուր հասավ, որ Երիքովի արքան տեղեկացել է, թե եբրայեցի հետախույզներ են մտել քաղաք և ապաստանել են Ռահաբի մոտ:

*Այդ պահին էր, որ Ռահաբը վուշի խրձերի տակ թաքցրեց երկու լրտեսներին, իսկ Երիքովի զինվորներին շեղեց՝ ասելով, թե այդ մարդիկ իր մոտ եղել են, սակայն շատ արագ էլ հեռացել են. **«Թագավորը հրամայում է, որպեսզի իսկույնևէթ բռնեն և բերեն նրանց, որպեսզի կտտանքների միջոցով նրանց գալու նպատակն ի հայտ բերի: Երբ Ռահաբը տեսավ թագավորի մարդկանց, որ գալիս էին իր տան կողմ (իսկ նա այդ ժամանակ տանիքում վուշ էր չորացնում), նա իսկույն վուշի կապոցների տակ թաքցրեց լրտեսներին, իսկ թագավորի կամակատարներին ասաց, որ մի ինչ-որ օտարականներ իսկապես իր մոտ ճաշել են, սակայն հետո մայրամուտից քիչ առաջ հեռացել, և եթե կարծում են, որ այդ օտարականներն իրենցից վտանգ են ներկայացնում քաղաքի կամ թագավորի համար, ապա նրանց հասնելը և ձերբակալելը դժվար չի լինի: Այդ կնոջ խորամանկությունից խաբվելով՝ թագավորի ծառաները հավատացին նրան, և նույնիսկ չմտածեցին այդ պանդոկը խուզարկել»**[33]:*

Ռահաբին մեկնիչներից շատերը ներկայացնում են որպես բացառիկ հոգևոր, աստվածապաշտ անձնավորության՝ զարդարված երկնառաք շնորհներով, բայց և ինչ-որ կերպ էլ ջանում են այդ ամենը նրան կցված «պոռնիկ» բառի հետ համակերպել, ինչն էլ բարդություններ է առաջացնում և նման է կրակը ջրի հետ կամ լույսը խավարի հետ հաշտեցնելուն:

Այդ խնդիրը մեղմելու միակ տարբերակը մեկնիչները համարում են այն, որ պետք է ընդունել, որ Ռահաբն իսկապես այդ պիղծ քաղաքում եղել է պոռնիկ: Ապա հասկացել է, որ իսրայելացիների Աստվածը մնացած բոլոր աստվածներից շատ ավելի հզոր Աստված է, սկսել է ինքն էլ հավատալ Նրան՝ դառնալով Քրիստոսի Եկեղեցու խորհրդանիշ: Որովհետև Եկեղեցին ընդունում է բոլոր ապաշխարողներին՝ անկախ նրանից, թե ինչ կյանքով ու վարքով են նրանք ապրել ժամանակին և ինչ հավատալիքի հետևորդ են եղել:

Իսկ մենք այս ամենին կանդրադառնանք, ինչպես ասվեց, ամենայն մանրամասնությամբ՝ առաջարկելով մի այլ տարբերակ, որն այդ խճճված կծիկը կարող է շրջանցել և առավել հավանական մոտեցմամբ ներկայացնել Ռահաբին:

Հետախույզները, հավանաբար, արդեն հաշտվել էին այն մտքի հետ,

---

[33] Иосиф Флавий, “Иудейские древности, том 1, “Феникс” Ростов–на–Дону, 2000 г., ст. 276–277.

որ տունը կխուզարկեն և իրենց էլ գտնելով՝ մահվան կդատապարտեն։ Դրա համար էլ պատրաստ էին՝ մինչ ի մահ դիմադրել։ Սակայն մեծ էր նրանց զարմանքը, որ թագավորի կողմից ուղարկված մարդիկ հավատացին Ռահաբին, չխուզարկեցին նրա բնակարանը և հեռացան։

Իսկ թե ինչու երիքովցիներն այդպես հեշտությամբ հավատացին Ռահաբին և չխուզարկեցին նրա տունը, դրան ևս կանդրադառնաք։

Ռահաբը՝ որպես բարեպաշտության և հավատքի ուսուցիչ

«Հայաստանը բանալի է՝
վերածնելու և հասկանալու համար
հին քաղաքակրթությունների գաղտնիքները»[34]։

Այժմ նորից քննարկենք այն խոսակցությունը, որ տեղի ունեցավ Ռահաբի և հետախույզների միջև՝ թաքստոցից դուրս գալուց հետո։

Ռահաբը, նրանց թաքստոցից դուրս հանելով, ասաց. ***«Գիտեմ, որ Տերն այս երկիրը ձեզ է տվել, որովհետև ձեր ահն ընկել է մեզ վրա, և ձեր պատճառով այս երկրի բոլոր բնակիչները հալումաշ են եղել, քանի որ մենք լսել ենք, թէ ինչպես Տերը կարմիր ծովը ցամաքեցրեց ձեր առաջ, երբ դուրս էիք գալիս Եգիպտոսից, և թէ ինչ արեցիք դուք ամորհացիների երկու թագավորներին՝ Հորդանան գետի այն կողմում գտնուող Սեհոնին և Օգին, որոնց սպանեցիք։ Երբ մենք լսեցինք, զարհուրեցին մեր սրտերը, և մեզնից ոչ մեկի մէջ շունչ չի մնացել ձեր պատճառով, որովհետև ձեր Տեր Աստվածն Աստված է երկնքում՝ վերևում, և երկրի վրայ՝ ներքևում»[35]։***

Ռահաբն այսպես է դիմում երկու իսրայելացի լրտեսներին. այս խոսքը մեկնիչները համարում են հավատքի քարոզխոսություն։ Տեսնում ենք, որ Ռահաբը քաջատեղյակ էր իսրայելացիների պատմությանը, նաև հասկանում է, որ նրա խոսքերի մեջ կա մարգարեական մոտեցում. ***«(Ռահաբը) իր հավատքի խոստովանությամբ... Իսրայելի պատմության իմաստը կարդալու և նրանում Աստծո ակտիվ ներկայությունը զգալու ընդունակություն է ցուցաբերում։ Այսպիսով՝ Ռահաբն ամբիոն է բարձրանում. քանանացի պոռնիկը հավատքի դասախոսություն է կարդում»[36]։***

---

34 Грэм Хэнкок. http://discovernewarmenia.com/ru/article/all/?page=2

35 Յեսու. 2:9–11:

36 Russotto M. Giosue, Finalmente la terra! Milano, 1998, p. 33.

Ռահաբը պատմում է նրանց, թե ինչպես են նրանք Աստծո շնորհով արժանացել աննախադեպ հրաշքի. կարմիր ծովը ճեղքվել է՝ ճանապարհ բացելով նրանց համար: Այս խոսքերով նա հիշեցնում է իր հյուրերին, որ Աստվա՛ծ է նրանց համար պատերազմում. այնպես որ, պետք է փոքրոգություն չանեն և չվախենան Երիքովի անառիկ պարիսպներից, որ կարող են ճեղքվել, ինչպես կարմիր ծովը:

Եվ այդպես էլ եղավ:

Ռահաբն իր հավատակիցներին նաև հիշեցնում է, թե ինչպես նրանք երկու թագավորներին սրի քաշեցին: Ռահաբը ջանում էր նրանց այդկերպ ոգևորել, որ վերադառնալով բանակ՝ նրանք էլ իրենց հերթին ոգևորեին իրենց զինակիցներին: Հակառակ դեպքում կկրկնվեր նախկին պատմությունը, երբ տասներկու հետախույզներից տասը խուճապ առաջացրեց իսրայելացիների մեջ, ինչի հետևանքով իսրայելացիները հրաժարվեցին պատերազմելուց:

*Իսկ Հեսու Նավեն, զգուշանալով այդ՝ 40 տարի առաջ տեղի ունեցածի կրկնվելուց, հոգ էր տարել, որ այս լրտեսներն այնպես գնան, որ նույնիսկ Իսրայելում չիմանան՝ զգուշանալով, որ եթե վատ լուր բերեն, դա չտարածվի իսրայելացիների մեջ. **«Նրանք ուղարկվեցին ո՛չ Աստվածային պատվերի համեմատ, և ո՛չ ժողովրդի իմացությամբ, այլ՝ գաղտնի, զգուշավորությամբ. այնպես որ, կարելի է մտածել՝ խուսափելու համար ծանր հետևանքներից, որ եղել էին նախկին լրտեսներին ուղարկելու ժամանակ»**[37]:*

Այդպես, Ռահաբն իր զորեղ հավատով մեծապես նպաստեց, որ լրտեսները ոգևորված վերադառնան և չնմանվեն նախկին վախկոտ և թերահավատ լրտեսներին:

Իսկ ո՞րտեղից Ռահաբին նման տեղեկություններ մոտ 40 տարի առաջ եղած դեպքերի մասին: Նախ, Քանանի տարածքով մեկ ցրված հիքսոսների խմբերը շատ հետաքրքրված էին իրենց վաղեմի բարեկամների տեղաշարժերով: Նաև, Ռահաբը, թերևս, օժտված էր մարգարեական շնորհով:

*Ահա, Ռահաբն ասում է. **«Ձեր Տեր Աստվածն Աստված է երկնքում՝ վերևում, և երկրի վրայ՝ ներքևում»**[38]: Սրանով նա բոլոր մյուս աստվածություններին առ ոչինչ է համարում՝ դավանելով միակ ճշմարիտ Աստծուն, Ում մասին էլ ջերմեռանդությամբ քարոզում էր իսրայելացիներին: Եվ ամենազարմանալին այն է, որ Ռահաբի այդ խոսքերը կրկնողությունն են Մովսես մարգարեի խոսքերի, որ ասվել էին Սինայի անապատում. **«Քո Տեր Աստվածը Աստված է վերևում՝ երկնքում, և ներքևում՝ երկրի վրա, և նրանից բացի՝ այլ Աստված չկա»**[39]:*

---

37 А. П. Лопухин, Толковая Библия, том II, Петербургъ 1905 г., ст. 10.

38 Յեսու. 2:11:

39 Բ. Օր. 4:39:

Ինչ ասել էր Մովսես մարգարեն, համարյա բառացի կրկնում է Ռահաբը՝ պոռնիկ կոչվածը: Մի՞թե սա առեղծված չէ. երբևէ իրար չհանդիպած մարդիկ նույն բանն են ասում միևնույն ժողովրդին՝ իսրայելացիներին՝ Տիրոջ հանդեպ ունեցած նրանց հավատն ամրապնդելու համար: Այստեղ տեսնում ենք Մովսես մարգարին և Ռահաբ մարգարեուհուն նույն հարթակի վրա. երկուսն էլ իսրայելացիներին ուսուցանում են՝ հավատարիմ մնալ Աստծուն:

Իսկ երբ Ռահաբն ասում էր՝ ***«Ձեր Տեր Աստվածը»****, այլ ոչ՝ «մեր», դա չէր նշանակում, որ ինքը նույն Աստծուն չէր պաշտում. դա ուղղակի ընդունված կերպ է քարոզխոսության մեջ, ինչպես որ Մովսեսը, բազմիցս դիմելով իսրայելացիներին, չէր ասում «մեր Աստվածը», այլ՝ «ձեր Աստվածը». օրինակ՝* ***«Ձեր Աստծու առջև մաքուր կլինեք»***[40]*:*

Հեսուն ևս այդպես է դիմում ժողովրդին. ***«Ձեր Տեր Աստվածը տեղավորեց ձեզ և տվեց ձեզ այս երկիրը»***[41]*, նաև՝* ***«մինչև այսօր պահեցիք ձեր Տեր Աստծու պատվիրանները»***[42]*,* ***«Շա՛տ զգույշ եղեք ձեր նկատմամբ, որ սիրեք ձեր Տեր Աստծուն»***[43]*:*

Իսկ Ռահաբը, շարունակելով իր քարոզխոսությունը, ավելացնում է՝ ասելով. ***«Գիտեմ, որ Տերն այս երկիրը ձեզ է տվել, որովհետև ձեր ահն ընկել է մեզ վրա, և ձեր պատճառով այս երկրի բոլոր բնակիչները հալումաշ են եղել... Երբ մենք լսեցինք, զարհուրեցին մեր սրտերը, և մեզնից ոչ մեկի մէջ շունչ չի մնացել ձեր պատճառով»***[44]*:*

Այս ասելով՝ Ռահաբը բացահայտում է Երիքովի ամենաթույլ տեղը. դա այն մեծ վախն էր, որ նրանց նկուն է դարձնում պատերազմի մեջ:

Նման վախով բռնված ժողովրդին հաղթելը բավականին դյուրին գործ է:

Իսկ երբ Ռահաբն ընդհանրացնում է այդ վախը՝ ասելով «մեզ վրա» այլ ոչ՝ երիքովցիների, դրանով նախ ցանկանում է՝ մեծ տպավորություն գործել լրտեսների վրա, որպեսզի իրենց բանակին պատմեն, թե ինչ վճակ է տիրում Երիքովում:

Ինչու ոչ, նաև տեղաբնակ հիքսոսներն էին վախի մեջ, քանզի ի՛նչ իմանային, թե այդ պատերազմական թոհուբոհի մեջ իրենց ի՛նչ կարող էր պատահել:

Ռահաբն ակնհայտորեն հավատք և աստվածաբանություն էր ուսուցանում իսրայելացի լրտեսներին: Իսկ դա ոչ մի կերպ չի կարող համընկնել երիքովյան ինչ-որ պոռնիկի կերպարին, այլ միայն բարեպաշտ սա-

---

40 Թուեր. 15:40:

41 Յեսու. 1:13:


42 Յեսու. 22:3

43 Յեսու. 23:11:

44 Յեսու. 2:9–11:

ղեմուհուն, ով կարող էր այդպես խոսել։ Ռահաբն իր հավատով ավելի բարձր մեկն էր, քան իսրայելացիները, և դա հաստատում են աստվածաբանները՝ համեմատականներ տանելով Ռահաբի և իսրայելացիների միջև. «Ռահաբի մասին գրված է. «Հիմա երդվեցեք ինձ Տեր Աստծով, որ ինչպես ես եմ ձեզ ողորմություն անում...» (Նավե. 2։12)։ Իսկ Իսրայելի մասին գրված է. «սուտ երդված կլինեն» (Երեմ. 5։2)։

Ռահաբի մասին գրված է. «... որ ողջ կթողնեք իմ հոր ընտանիքը՝ իմ մորը» (Նավե 2։13)։ Իսկ Իսրայելի մասին գրված է. «Քո մեջ հորն ու մորն էին անարգում» (Եզեկ. 22։7)։



Ռահաբի մասին գրված է. «իսկ ինքը նրանց հանեց կտուր» (Նավե 2։6)։ Իսկ Իսրայելի մասին գրված է. «տանիքի վրա երկրպագում էին երկնքի զորություններին» (այսինքն կուռքերին) (Սոփ. 1։5)։

Ռահաբի մասին գրված է. «թաքցրեց վուշի խուրձերի տակ» (Նավե 2։6)։ Իսկ Իսրայելի մասին գրված է. «փայտին (կուռքին) ասացին, թե՝ «Իմ հայրն ես դու»» (Երեմ. 2։27)։

Ռահաբի մասին գրված է. «Ասաց նրանց. «Լեռների վրայով գնացեք»» (Նավե 2։16)։ Իսկ Իսրայելի մասին գրված է. «Լեռների գլխին զոհ էին մատուցում» (կուռքերին) (Օսէ. 4։13)։

Ռահաբի մասին գրված է. «Ինձ մի ճշմարիտ նշան տվեք» (Նավե 2։13)։ Իսրայելի մասին գրված է. «Յուրաքանչյուրն այպանում է իր բարեկամին» (Երեմ. 9։5)։

Ահա՛ թե ինչ է գրված Իսրայելին անպատվելու և Ռահաբին՝ գովաբանելու մասին»[45]*։*

Նկատում ենք, որ այս մեկնիչը Ռահաբին համեմատում է ոչ թե կռապաշտ երիքովցիների, այլ՝ հենց բարեպաշտ իսրայելացիների հետ և ի ցույց է դնում Ռահաբի մեծ հավատքն ու առաքինությունը՝ հակադրելով շատ հաճախ Տիրոջ հանդեպ թերահավատություն և անհավատարմություն ցուցաբերող իսրայելացիներին, որոնք հաճախ հարեցին կուռքերի պաշտամունքին։

*Այո, բարեպաշտ Ռահաբը և իր մերձավորները վախ ունեին, որ իրենք էլ կարող են երիքովցիների հետ սրի քաշվել։ Բայց Նախախնամության կամոք լրտեսների և Ռահաբի հանդիպումով այդ հարցը լուծում գտավ. **«Հիմա երդվեցե՛ք ինձ Տեր Աստծով, որ ինչպես ես եմ ձեզ ողորմություն անում, այդպես էլ դուք ողորմություն կանեք իմ հոր տան նկատմամբ։ Ինձ***

[45] Pesiqta Rav Kahana, 13, 4. մեջբերում. Stemberger G. Il Midrash. Uso rabbinico della Bibbia. Boligna, 1992, p. 212–213.

մի ճշմարիտ նշան տվե՛ք, որ ողջ կթողնեք իմ հոր ընտանիքը՝ իմ մորը, իմ եղբայրներին և քույրերին ու այն ամենը, ինչ ունեն նրանք, և կազատեք ինձ մահից»։ Այդ մարդիկ նրան ասացին. «Մենք ձեր փոխարեն թող մեռնենք, միայն թէ մեր մասին այս բաները չպատմեք»։ Եվ կինն ասաց. «Երբ Տերն այս քաղաքը ձեր ձեռքը հանձնի, ինձ ողորմութիւն արե՛ք և ինձ հետ արդա՛ր վարվեցեք»»[46]։

Այստեղ Ռահաբն այլևս նրանց չի դիմում՝ ասելով «ձեր Տեր Աստվածը», այլ ասում է. ***«Հիմա երդվեցե՛ք ինձ Տեր Աստծով»*** *նաև* ***«Երբ Տերն այս քաղաքը ձեր ձեռքը հանձնի»։*** *Ահա, նա բացահայտ դավանում է Տիրոջն այնպես, որ երևում է իր և յուրայինների իսկական պաշտամունքը Տեր Աստծու հանդեպ։ Ի պատասխան Ռահաբի անհանգստութեան, որպեսզի հրեաները նրանց ևս պիղծ երիքովցիների հետ չշփոթեն, լրտեսները Ռահաբին առաջարկում են իր մերձավորների հետ այդ բնակարանում փակվել և պատուհանից մի նշան կախել, որպեսզի դա տեսնելով՝ հրեաները վնաս չտան նրանց։ Իսկ եթե որևէ մեկը դրսում մնար, նրա կյանքի համար պատասխանատու չէին լինի.* ***«Իսկ եթե մեկը վնասի մեզ, կամ հայտնես մեր այս գործը, մենք ազատ կլինենք քեզ տված մեր երդումից»։ Եվ կինն ասաց. «Թող լինի ձեր ասածի պես՝ թող այդպես լինի»։ Արձակեց նրանց, և նրանք գնացին։ Եվ նա կարմիր նշանը կապեց պատուհանին»***[47]։

Իսկ երբ լրտեսներն ասացին՝ ***«Իսկ եթե մեկը վնասի մեզ կամ հայտնես մեր այս գործը»,*** *նկատի ունեին, որ եթե գան Ռահաբին հարցաքննելու և տանջելով ստիպեն մատնել, որ իրենք թաքնվել են լեռներում, ապա իրենց երդումն ուժը կկորցնի, գուցե իրենք էլ զոհվեն։ Սակայն եթե Ռահաբը մատնիչ լիներ, հենց սկզբում կմատներ։*

Շատերն են համարում, որ երիքովցի այս հիքսոսուհին մարգարեական շնորհ ուներ։ Իսկ նման շնորհը հենց այնպես՝ պատահական մարդու չի տրվում. այլ դրան արժանացնում է Ինքն՝ Աստված. ***«Եթե ձեզանից որևէ մեկը Տիրոջ մարգարե դառնա, Ես տեսիլքով կերևամ նրան և երազի մեջ կխոսեմ նրա հետ»***[48]։


Ուրեմն, ինչպես որ Մովսես մարգարեն էր Տիրոջ հետ խոսում անապատում, այդպես և հայազգի մարգարեուհի Ռահաբն էր խոսում Աստծո հետ երիքովում՝ այդ հոգևոր անապատում, ինչի մասին հիշատակում կա նաև Հովսեփոս Փլավիոսի մոտ. ***«Այնուհետև նա նրանցից երդում վերցրեց առ այն, որ նրանք կխնայեն իրեն և իր բոլոր ազգականներին, երբ քաղաքը գրավելուց հետո սկսեն ոչնչացնել ողջ բնակչութեանը՝ Մովսեսի օրենքի համաձայն։ Իսկ որ նրանք գրավելու են քաղաքը, դա նրան, անկասկած,***

---

46 Յեսու. 2:12–14:

47 Յեսու. 2:20–21:

48 Թուեր. 12:6:



հայտնի էր՝ որոշ տվյալների հիման վրա, որ ստացել էր Տեր Աստծուց»[49]*։*

Ռահաբի պատուհանից կախված կարմիր պարանը մեծագույն մարգարեական խորհուրդ էր կրում իր մեջ. այն է՝ այդ ժամանակներից մոտ 1200 տարի անց պիտի գար աշխարհի Փրկիչը՝ Տեր Հիսուս Քրիստոս և Իր քավչարար արյամբ փրկության դուռ բացեր մարդկության համար։ ***«Նա կախում է կարմիր պարանն իր տանը, ինչի շնորհիվ պետք է փրկվեր քաղաքի ավերման ժամանակ։ Նա ոչ մի այլ նշան չստացավ՝ բացի այդ կարմիր պարանից, ինչն արյան տեսք ուներ։ Իսկապես՝ նա գիտեր, որ ոչ մեկի համար փրկություն չկա՝ բացի միայն Քրիստոսի արյամբ»***[50]*։*

Որոգինես մեկնիչը ցույց է տալիս, որ Ռահաբն արդեն տեղեկություն ուներ Փրկչի ապագա գալստյան մասին, Որի առջև ճանապարհ էին հարթել իր նախնիները, և հիմա ի՛նքն էլ այդ ուղին հարթող իր բարեպաշտ հայրերի շարքերում հայտնվեց։

Ռահաբին՝ որպես մարգարեուհու և նրա կախած կարմիր պարանի մեծագույն խորհրդին անդրադարձել են շատերը, որոնցից է նաև Կղեմես Հռոմեացին. ***«Եվ ավելացրին, որ նա նշան տա՝ իր պատուհանից կարմիր պարան կախելով. դրանով նրանք ցույց տվեցին, որ բոլոր նրանց, ովքեր հավատում և ապավինում են Աստծուն, քավություն է լինելու Տիրոջ արյամբ։ Տեսնում եք, սիրելիներ, այս կնոջ մեջ եղել է ոչ միայն հավատք, այլև՝ մարգարեություն»***[51]

Որոգինեսը, լուսամուտից կապված այդ պարանը ներկայացնում է նաև՝ որպես Աստծո մարմնացման խորհրդի կանխատեսում, որի նշան է համարում Ռահաբի պատուհանը. ***«Չնայած Փրկչի մարմնավորումը մեզ դեռ չի տալիս Աստվածության մաքուր և ամբողջական տեսություն, սակայն Նա Իր մարմնավորման միջոցով մեզ տեսնել տվեց Աստվածային լույսը՝ կարծես մի ինչ-որ պատուհանի միջով։ Հենց դրա համար էլ, ինձ թվում է, փրկության նշանը տրվեց պատուհանից»***[52]*։*

---

49 Иосиф Флавий, “Иудейские древности, том 1, “Феникс” Ростов–на–Дону, 2000г., ст. 277.


50 Origene. Omelie su Giosuè, III, 5. Ibid. P. 80.

51 Կղեմեսի առաջին նամակը Կորնթացիներին, Գլուխ ԺԲ, տես–Գանձասար Աստվածաբանական հանդես, Ե, Երևան 1994 թ., էջ 123:

52 Origene. Omelie su Giosuè, III, 5. Ibid. P. 81. О человечестве Христа как “окне” в христологии Оригена см., напр.: Scognamiglio R. “Anthropos apodemon” (Mt. 25, 14). Problema e stimoli per la Cristologia di Origene. In: Origeniana Quarta. Roma, 1980. P. 194–200.

Հայոց նահապետ Հայկ-Մելքիսեդեկը հաց ու գինի տվեց Աբրահամ նահապետին, ինչը Տիրոջ զոհաբերության, Նրա քավչարար արյան խորհուրդն ուներ, իսկ նրա դուստր Ռահաբը, կարմիր պարանը կախելով պատուհանից, փրկեց Աբրահամի՝ այդ հետախույզ ժառանգներին, ինչն էլ հացի ու գինու պես Տիրոջ քավչարար արյան խորհուրդն ուներ:

Իսրայելացիների համար ևս այդ՝ լուսամուտից կախված կարմիր պարանը օտարոտի մի բան չպետք է լիներ, քանզի նրանց հիշողության մեջ էլ դեռ թարմ պետք է լինեին այն դեպքերը, երբ իրենց նախնիները Մովսեսի պատվերով եգիպտոսում դռների վրա գառան կարմիր արյունը քսեցին՝ որպես նշան. որ երբ մահաբեր հրեշտակն անցներ եգիպտոսով՝ նրանց առաջնեկներին կոտորելու, եբրայեցիները չվնասվեին: Եվ միայն նրանք չէին վնասվի, ովքեր տանը կմնային՝ զոհաբերված գառան արյան պաշտպանության տակ: Դա նորից Աստծո Գառան զոհաբերման և քավչարար արյան խորհուրդն ուներ: Իսկ ով դրսում գտնվեր, եգիպտացիների պես կկորչեր: Այդպես և Ռահաբի տանից ելնողները կկորչեին:



*Եվ ուրեմն, Ռահաբը այդ զազրելի քաղաքի և նրա առավել ստորին, անբարո խավից լինելով հանդերձ, ուներ այնպիսի իմաստության, բարեպաշտության և մարգարեության շնորհներ, որ մինչ օրս զարմացնում է մեկնիչներին: Իսկ նման հակասությունը կարելի է պարզաբանել՝ դա զննելով միայն Հայոց պատմության լույսի տակ: **«Այսպիսով՝ պոռնիկ Ռահաբը թաքցրեց Հեսուի հետախույզներին իր տան տանիքում՝ բարձր տեղերում, պահպանեց սրտի ներքին սիրով, լուսավորված՝ հոգևոր նշանով, որպեսզի ճշմարտությամբ երգի մարգարեական խոսքը՝ «Քո խոսքերը սրտումս թաքցրի, որ չմեղանչեմ Քո դեմ»**[53]» [54]:*

*Իսրայելացի լրտեսները Ռահաբի խորհրդով երեք օր լեռներում թաքնվելուց հետո միայն վերադառնում են իրենց բանակը և ուրախությամբ Հեսուին պատմում ամեն բան: Հեսուն երախտագիտությամբ է լցվում Ռահաբի հանդեպ և հոգ տանում նրա փրկության համար. **«Լրտեսները ոչ միայն ի սրտե շնորհակալություն հայտնեցին նրան իր մատուցած ծառայության համար, այլև խոստացան գործով՝ բարիով հատուցել նրա բարությանը: Այնուհետև Հեսուն քահանայապետ Եղիազարին և ծերակույտին հաղորդեց այն երդման մասին, որ լրտեսները տվել էին Ռահա-***

---

53 Սաղմ. 118:11:

54 Fulgenzio di Ruspe. Le condizioni della penitenza e della fede. Ibid. P. 50.

բին, և նրանք այդ երդումը պարտավորվածություն համարեցին»[55]***:***

Այնուհետ իսրայելացիները, հետախույզների բերած լուրից ոգևորված, Հեսուի առաջնորդությամբ պատրաստվեցին պատերազմի: Գրված է. ***«Երբ ժողովուրդը լսեց փողի ձայնը, բոլորն աղաղակեցին մեծ և ուժգին աղաղակով, պարիսպն ընկավ շուրջանակի»***[56]***:*

Իսրայելացիների բանակը ներխուժեց Երիքով, բոլորին սրի քաշեց ու ամեն ինչ կրակի մատնեց: Ոչ մեկը կենդանի չմնաց՝ ո՛չ մարդկանցից, ո՛չ կենդանիներից: Նրանց ունեցվածքը՝ ամեն բան, որպես ամբողջովին պղծված, այրեցին՝ բացի արժեքավոր մետաղներից:

Երիքովի պարիսպները հիմնահատակ և շուրջանակի ավերվեցին, և քաղաքը կործանվեց:



Իսկ ի՞նչ պատահեց Ռահաբի բնակարանին, որը գտնվում էր պարսպի մեջ: Փաստորեն, ամբողջ քաղաքի պարսպից միայն այն մասն էր կանգուն մնացել, որտեղ Ռահաբի բնակարանն էր, որի լուսամուտից էլ կախված էր փրկության նշանը՝ կարմիր պարանը: ***«Հրաշալի ցնցումը քաղաքը միանգամայն անպաշտպան դարձրեց իսրայելացիների առաջ: Բոլոր բնակիչները՝ բացի Ռահաբից և նրա ազգականներից, ոչնչացվեցին, քաղաքն ամբողջությամբ քանդվեց»***[57]***:***

Իհարկե, կասկած անգամ չկա, որ հսկայական պարսպից միայն այդ փոքր հատվածը կանգուն մնաց: Եվ դա՝ ոչ թե իսրայելացիների ջանքերի շնորհիվ, այլ, անշուշտ, միայն Նախախնամության կամոք:

Տերը պահպանեց իր բարեպաշտ աղախին Ռահաբին՝ Իր խոսքի համեմատ. ***«Տերը գիտե աստվածապաշտներին փրկել փորձությունից, իսկ անիրավներին պահել դատաստանի օրվա համար՝ տանջանքների մատնելու նրանց, մանավանդ մարմնի պիղծ ցանկությունների հետևից գնացողներին, Աստծու իշխանությունն արհամարհողներին, ինքնահավաններին,***

---

55 Иосиф Флавий, “Иудейские древности, том 1, “Феникс” Ростов–на–Дону, 2000 г., ст. 277.

56 Յեսու. 6:20:

57 Лопухин А. П., Библейская история Ветхого и Нового Заветов. Полное издание в одном томе, Москва 2009 г., ст. 281.



հանդուգններին»[58]*, ինչպիսիք երիքովցիներն էին։*

Իսրայելացիները, հավանաբար, այնքան չէին զարմացել Երիքովի պարիսպների շուրջանակի փլուզմամբ, որքան պարսպի այն փոքր հատվածի կանգուն մնալու, որտեղ Ռահաբի բնակարանն էր, ուր պատսպարվել էին երիքովցի սաղեմահայերը՝ Ռահաբի շնորհիվ։

Ուրեմն, եթե Ռահաբի տնից որևէ մեկը դուրս գար, նա արդեն իսկ կմահանար պարիսպների փլուզումից՝ դեռ պատերազմը չսկսված։

Պատերազմական թոհ ու բոհի մեջ պարսպի այդ կանգուն հատվածը՝ Ռահաբի բնակարանով և այնտեղից կախված կարմիր պարանով, հիշեցնում էր Նոյան տապանը, որտեղ կործանարար Ջրհեղեղից պատսպարվել էր Նոյն՝ իր ընտանիքով։

Եվ ուրեմն, այդ քարե «տապանում» էլ ալեկոծ պատերազմի թոհուբոհից պատսպարվել էր արդար Ռահա՛բն՝ իր մերձավորներով։

Այդ քարե պատսպարանը նկատվում է նաև՝ որպես Քրիստոսի Եկեղեցու նախատիպ, իսկ փրկարար կարմիր պարանն էլ խորհրդանշում էր Տերունական արյամբ ներկված Սուրբ Խաչը։

Ինչպես նկատում ենք, Ռահաբը համեմատելի է արդար Նոյ նահապետի, Բարձրյալ Աստծո քահանա, Սաղեմի արքա հայոց նահապետ Հայկ-Մելքիսեդեկի և աստվածատես Մովսես մեծ մարգարեի հետ, իսկ նրա կանգուն մնացած բնակարանը Նոյան տապանի և Քրիստոսի սուրբ և փրկարար Եկեղեցու հետ։

Եվ ուրեմն, այս ամենից հարկ է եզրակացնել, որ Ռահաբը ճշմարիտ աստվածապաշտ էր՝ հակառակ Երիքովի կռապաշտ և անօրեն բնիկների, որոնք կործանվեցին։ Մինչդեռ նա և իր մերձավորները շնորհով փրկություն գտան։ ***«Հավատո՛վ ընկան Երիքովի պարիսպները, երբ նրանք յոթը օր շրջեցին նրանց շուրջը։ Հավատո՛վ է, որ անհավատների հետ կորստյան չմատնվեց պոռնիկ Ռահաբը, որ խաղաղությամբ ընդունել էր լրտեսներին»***[59]*։*

Ռահաբի տան և Նոյան տապանի համեմատության դեպքում տեսնում

---

58 Բ. Պետր. 2:9–10:

59 Եբր. 11:30–31:



ենք, որ տապան մտան հավատավոր արդարները՝ Նոյը և իր ընտանիքը, իսկ դրսում մնացին մեղավորները։

Այդպես և Ռահաբի տունը, որ տապանի խորհուրդն ուներ և ըստ այդ տրամաբանության՝ այնտեղ էլ պետք է մտած լինեին ոչ թե երիքովցի մեղավորներ, այլ՝ բարեպաշտներ։

Նոյան տապանը երկրի վրա ամենամաքուր վայրն էր՝ հոգևոր իմաստով։ Ռահաբի տունը ևս պետք է, որ մաքրամաքուր լիներ, այլ ոչ՝ հասարակաց տուն։ Մի՞թե հասարակաց տունը կարող էր տապանի և Եկեղեցու խորհրդանիշ լինել։ Ո՛չ. քանզի ինչպես Նոյան տապանն էր դրսից ու ներսից կուպրով ծեփված, այդպես պետք է լիներ նաև Ռահաբի բնակարանը՝ ներքուստ և արտաքուստ Երիքովի ապականություններից զերծ։

Մի՞թե ամբողջ Երիքովից միայն հասարակաց տան մեջ բնակվողները փրկություն գտան։ Իսկ կարմիր պարանը, որ խորհրդանիշն է փրկարար Տերունական Խաչի, որը Եկեղեցու գմբեթին է ամրացվում՝ որպես փրկության նշան, մի՞թե տվյալ դեպքում մեղսալի տան վրա կզետեղվեր։

Ռահաբը և նրա տունը համարվում են Եկեղեցու նախատիպ։ Այդ մասին գրել են շատերը, այդ թվում և՝ սբ. Կիպրիանոս Կարթագենացին. ***«Ռահաբը եղել է Եկեղեցու նախակերպարը, որին պատվիրվել է իր տան մեջ հավաքել իր հորը և մորը, իր եղբայրներին, իր հոր ամբողջ ընտանիքը։ Եվ եթե որևէ մեկը դուրս գար իր տան դռներից, թող նրա արյունը իր գլխին լիներ։ Այդ Աստվածային պատվիրանով պարզվում է, որ միասնական տանը՝ այսինքն Եկեղեցում, պարտավոր են հավաքվել նրանք, ովքեր պետք է կենդանի մնան՝ խուսափելով աշխարհի կործանումից։ Այդ ժամանակ երբ նրանցից ոմանք, ով դուրս կելնեն, այսինքն՝ նա, ով հաղորդակից լինելով Եկեղեցու շնորհին՝ կթողնի և դուրս կգա այնտեղից, ինքը մեղավոր կլինի, ինքն իրեն պետք է մեղադրի իր կորստյան համար»*[60]։

Մեկնիչ Որոգինեսը ոչ թե տունը, այլ հենց Ռահաբին է տեսնում՝ որպես Եկեղեցու նախակերպար։ ***«Նա անվանվում էր Ռահաբ, իսկ «ռահաբ» նշանակում է «լայնածավալ»։ իսկ ի՞նչն է լայնածավալ, եթե ոչ՝ Քրիստոսի***

[60] Cipriano di Cartagine. Lettera 69, al Figlio Magnio. In: La Chiesa. Lettere scelte. Milano, 1997. P. 368–369.

եկեղեցին» [61]։

*Սակայն մի այլ տեղ Որոգինեսն այս անգամ արդեն հենց նրա տունն է ներկայացնում որպես եկեղեցի՝ նույնկերպ շեշտելով, որ առանց եկեղեցու՝ փրկություն չկա. **«Ոչ ոք թող չմոլորվի, ոչ ոք թող չխաբվի. այս <u>տանից</u>, այսինքն՝ եկեղեցուց դուրս, փրկություն չկա»*** [62]։



*Այդպես և Հովհան Ոսկեբերան հայրապետն է գովաբանում և եկեղեցու նախակերպար համարում Ռահաբին՝ նրան ամբողջ իսրայելացիների համար որպես բարի օրինակ դնելով։ **«Գիտեմ, ասում է, որ ձեր Տեր Աստվածն Աստված է երկնքում՝ վերևում, և երկրի վրայ՝ ներքևում, և Նրանից բացի՝ չկա Աստված։ Դա ընդունեցին հրեաները և չպահեցին, դա լսեց եկեղեցին և հավատարմորեն պահեց։ Այսպիսով՝ ամեն տեսակի գովեստների է արժանի Ռահաբը, ով իրենով եկեղեցու նախակերպարը եղավ»*** [63]։

*Մեկնիչներից մեկն էլ, Ռահաբի տունը ներկայացնելով՝ որպես եկեղեցի, համարում է, որ այնտեղ թաքցված երկու հետախույզներն էլ երկու կտակարանների՝ Հնի և Նորի և սիրո խուրհուրդն ունեին. **«Ես ենթադրում եմ, որ նրանով մատնանշվում է Ընդհանրական եկեղեցին ժողովուրդների մեջ՝ ազատված հին անմաքրությունից, որը պահեց Հեսուի երկու հետախույզներին, այսինքն՝ մաքուր իմացությունը երկու Կտակարանների, այդպես և սերը Աստծո և մերձավորի հանդեպ»*** [64]։

*Այդպես և Թեոդորիտոս Կիրսացին է Ռահաբին համարում եկեղեցու խորհրդանիշ՝ համարելով, որ նա լիովին արժանի է նման պատվի. **«Ով ուրեմն, ոչ մեկը թող չմտածի, որ Ռահաբը արժանի չէ՝ լինել եկեղեցու նախակերպարը»*** [65]։

---

61 Origene. Omelie su Giosuè, III, 4. Ibid. P. 77.

62 Origene. Omelie su Giosuè, III, 5. Ibid. P. 80.

63 Иоанн Златоуст, свят. Беседы о покаянии, VII, 5. Ibid. P. 371.

64 Fulgenzio di Ruspe. Le condizioni della penitenza e della fede. Ibid. P. 49.

65 Феодорит Кирский, блаж. Изъяснение трудных мест Божественнаго Писания. Толкование на книгу Иисуса Навина. Творения. Т. I. Москва 1855 г., с. 272.

Ռահաբի և իր ընտանիքի ազատագրումը

«Հայաստանն այն երկիրն է, որը վերափոխում է ցանկացած մարդու՝ հնագույն մշակույթի համադրությամբ՝ հոգևոր նոր արժեքներ ստեղծելու մեծ ձեռքբերումներով»[66]:

*Ինչպես որ Տերը հիշեց Նոյ նահապետին Ջրհեղեղի ժամանակ, երբ Տապանը կանգնեց Արարատ լեռան գագաթին, այդպես և Հեսուն (որի անունը թարգմանվում է Փրկիչ) հիշեց Ռահաբին, որի տունը, ինչպես Նոյան տապանը, հաստատուն կանգնած էր մնացել կործանված պարսպի այդ հատվածում. **«Երկիրը լրտեսող երկու երիտասարդներին Հեսուն ասաց. «Մտե՛ք այն պոռնիկ կնոջ տունը և ինչպես որ երդվել էք, հանեք այնտեղից նրան ու այն ամենը, ինչը որ նա ունի»: Եվ երկու երիտասարդները, որոնք լրտեսել էին քաղաքը, մտան այն կնոջ տունը, հանեցին պոռնիկ Ռահաբին, ինչպես նաև նրա հորը, մորը, եղբայրներին, նրա ամբողջ ունեցվածքն ու նրա ամբողջ ազգատոհմին և կանգնեցրին նրանց Իսրայելի բանակատեղիից դուրս»**[67]:*

Հետաքրքիր է, որ Սուրբ Գրքի այս հատվածում նշվում են ոչ միայն Ռահաբը, նրա հայրը, մայրը և եղբայրները, այլև՝ «նրա ամբողջ ազգատոհմը»: Հենց դրանից էլ պետք է հետևություն անել, որ նրանք երիքովցիներ չէին, այլ օտարազգի եկվորներ՝ հայ-հիքսոսներ, ավելի հստակ՝ սաղեմահայեր: Եվ ուրեմն, Ռահաբի տանը ոչ միայն նրա ընտանիքն էր տեղավորվել, այլև Երիքովում բնակվող նրա փոքրաթիվ ազգակիցները՝ Երիքովի հայկական համայնքի անդամները:

*Այսպիսով այդ առեղծվածային հայուհին՝ Ռահաբը, ընդունվեց իսրայելացիների կողմից, և տարբերություն չդրվեց նրանց՝ իսրայելացիների և սաղեմահայերի այդ փոքր գաղութի միջև: **«Ռահաբը բնակվում է Իսրայելի մէջ՝ մինչև այսօր, որովհետև թաքցրեց այն լրտեսներին, որոնց Հեսուն այն օրն ուղարկել էր Երիքովը լրտեսելու»**[68]:*

Բայց սրանով Ռահաբի պատմությունը չի ավարտվում: Ընդհակառակը, էլ ավելի նոր և խորհրդավոր բնույթ է ստանում՝ չնայած Հին Կտակարանը նրա մասին այլևս ոչինչ չի հայտնում:

Սակայն թե ինչեր տեղի ունեցան Ռահաբի հետ, նշել ենք, որ այդ մա-

---

66 Илия Эренбуург, Росия.

67 Յեսու. 6:22–23:

68 Յեսու. 6:25:

սին հայտնում է արդեն Մատթեոսի Ավետարանը, որը գրվել է Ռահաբի օրերից մոտ հազար երկու հարյուր տարի անց։

Ռահաբ և Սաղմոն

«Բոլոր ուսումնասիրությունները փաստում են, որ հայ ժողովուրդն ընտրված է Աստծո կամոք... Հայերին կարելի է դիտարկել՝ որպես թթխմոր, գլխավոր բաղադրիչն ասիական խմորի, որը կոչված է վերակենդանացնել մահացած հոգևոր կյանքն այս տարածաշրջանում... Ինձ թվում է՝ սրա պատճառը թաքնված է հայերի բուն առաքելության մեջ՝ որպես բարձր մշակույթի ժողովուրդ, որը դարձավ Եվրոպան և Ասիան իրար կապող օղակ և կենտրոն»[69]։

Այսքանով Ռահաբի պատմությունը Հին Կտակարանում վերջանում է։ Սակայն Նոր Կտակարանում այլ ասպարեզ է բացվում նրա հետագա կյանքի ուսումնասիրման համար։

Հեսուն ամբողջ Իսրայելի առջև իր գոհունակությունը հայտնեց Ռահաբին և որպես երախտագիտություն՝ նրան իր ցեղակիցների հետ բնակության տեղ տրամադրեց իր գրաված տարածքներում։ ***«Այնուհետև հրեաներն այրեցին քաղաքը և մոտակա բնակավայրերը։ Իսկ Ռահաբին, որ իր ազգականների հետ թաքնվել էր իր իջևանատանը, հետախույզները փրկեցին, այնուհետև Հեսուն պատվիրեց բերել նրան, շնորհակալություն հայտնեց նրան՝ իր լրտեսներին փրկելու համար և շեշտեց, որ ինքն այդ բանի համար նրան կպատասխանի երախտագիտությամբ։ Այնուհետև նա անմիջապես նրան նվիրեց մի բերրի հողակտոր և ընդհանրապես նրան արտակարգ պատվի արժանացրեց»***[70]։

Իսկ թե դա ի՛նչ «արտակարգ պատիվ» էր, այդ մասին ոչինչ չկա Հին Կտակարանում։ Այդ առեղծվածի վրա լույս է սփռում Նոր Կտակարանը. Ռահաբը ոչ միայն ընդունվեց իսրայելացիների կողմից, այլև նրան կնության առավ Իսրայելի տասներկու ցեղերից՝ Հուդայի սերնդից Սաղմոն իշխանը։

«Միայն Ռահաբի տունը փրկվեց այս կոտորածից, քանզի շնորհիվ այն ողորմության, որ արեց երկու երիտասարդ լրտեսներին... այնքան

---

69 Граф Август фон Хакстхаузен.

70 Иосиф Флавий, “Иудейские древности, том 1, “Феникс” Ростов–на–Дону, 2000 г., ст. 281.

մտավ Իսրայելի զորքի աչքը, որ Սաղմոնը նրան կնության առավ»[71]*:*

«Այս ամենից հետո Ռահաբն ամուսնացավ իշխան Սաղմոնի հետ»[72]*:*

Այսպիսով, Ռահաբն իր ազգակիցների հետ ընդունվեց իսրայելացիների մեջ՝ որպես յուրային: Դա բացառիկ երևույթ էր, քանզի ոչ մի օտար ժողովրդի նրանք չէին հանդուրժում իրենց մեջ. միայն գաբաւոնացիներին էր դա հաջողվել, սակայն նրանք ուղղակի խաբել էին Հեսուին՝ ասելով, որ այդ կողմի բնակիչներից չեն՝ Հեսուից երդում վերցնելով Տիրոջ անունով, որ իրենց վնաս չի հասցնի: Եվ երբ խաբեությունը բացահայտվեց, երդումը չանտեսելու համար Հեսուն նրանց ողջ թողեց, և նրանք իսրայելացիների մեջ մնացին՝ որպես փայտահատներ և ջրկիրներ:

Ինչպես Եգիպտոսում հայազգի փարավոնը եբրայեցի Հովսեփին կնության տվեց հայուհի Ասանեթին, այդպես էլ նրանք՝ իսրայելացիները, Հեսուի հետ միասին համաձայնություն տվեցին եբրայեցի Սաղմոնի և հայազգի Ռահաբի ամուսնությանը. հատկապես, որ Աստծո մարդ Հեսու Նավեի նախամայրը Հովսեփի հայուհի կին Ասանեթն էր, որոնց կրտսեր որդու՝ Եփրեմի սերնդից էր Հեսուն:

Հեսուն, իր խոստման համաձայն, ընդունեց ոչ միայն Ռահաբի ընտանիքին, այլև երիքովում ապաստանած բոլոր սաղեմահայերին, քանզի պարտավորված էր զգում ոչ միայն Ռահաբի սխրանքի համար, այլև՝ որ ժամանակին եգիպտոսի ամենաբերրի Գեսեմը, հայերը տրամադրել էին իրենց իսրայելացի նախնիներին: ***«Հեսուն արժանավորապես Ռահաբին հատուցեց. նրա ընտանիքն այդ ժամանակվանից սկսեց ապրել Իսրայելացիների մեջ»***[73]*:*

Այնուհետ սաղեմահայերն Իսրայելում ապրում էին հրեաների հետ միանգամայն հավասար պայմաններում՝ թե՛ որպես հավատակիցներ և թե՛ որպես համախոհ բարեկամներ:

Ռահաբն էլ գոհաբանության աղոթք առաքեց առ Աստված՝ իր և ազգակիցների հրաշալի փրկության համար, որ Տերը նրանց նույն Աստծուն դավանող Իսրայելի հետ բնակեցրեց:

Ճիշտ է, Հեսուն մեծ պատիվ ցուցաբերեց Ռահաբին՝ կնության տալով իսրայելացի իշխանին, սակայն Աստված առավել մեծարեց և իսկապես արտակարգ շնորհի արժանացրեց այդ զարմանալի կնոջը՝ Ռահաբին՝ նրան Աստծո Որդու ազգաբանության մեջ ընդգրկելով. ***«Ռահաբը եղել է Քրիստոսի նախամայրը. նա Մարմնացյալ Բանի նախնիների շարքում***

---

71 Տեսութիւն պատմութեանց Աստուածաունչ Սուրբ Գրոց, բացաքննեալ երկասիրութեամբ տեառն տեառն Ստեփաննոսի վարդապետի՝ Ագնոց արքեպիսկոպոսի և ընդհանրական Աբբայի Մխիթարեանց: Վենետիկ, հատոր Ա, 1819, էջ 391:

72 Энциклопедия Библейская, труд и издание архимандрита Никифора, Москва 2005 г., ст. 590.

73 К. Л. Кустодиев (протоирей), Опытъ истории Библейской женшины, Санктпетербургъ 1870 г., ст. 107.

դասվելուն արժանացավ. այդ կինը մասնակից դարձավ փրկությանը, ինչն Իսրայելում մարգարեացվել էր, որ Քրիստոսը պետք է իրականացներ և տարածեր համայն մարդկության վրա»[74]*:*

*Եվ այսպես Ռահաբը Տիրոջ ազգաբանության մեջ արժանացավ ուշագրավ դիրքի. **«Գիրք ազգաբանության Հիսուս Քրիստոսի՝ Դավթի որդու, Աբրահամի որդու: Աբրահամը ծնեց Իսահակին. Իսահակը՝ Հակոբին. Հակոբը ծնեց Հուդային և նրա եղբայրներին. Հուդան ծնեց Փարեսին և Զարային՝ Թամարից. Փարեսը ծնեց Եզրոնին. Եզրոնը ծնեց Արամին. Արամը ծնեց Ամինադաբին. Ամինադաբը ծնեց Նաասոնին. Նաասոնը ծնեց Սաղմոնին. Սաղմոնը ծնեց Բոոսին՝ Ռաքաբից»***[75]*.- և այսպես շարունակվում է, մինչև Քրիստոս:*

Կարծես, այսքանով կարելի էր Ռահաբի պատմությունը համարել ավարտված: Սակայն դեռ բաց է մնում ամենահակասական և առեղծվածային հարցադրումը. ինչո՞ւ «պոռնիկ»:

Անհավանական իրողություններ

Տեսնում ենք, որ Ռահաբը թե՛ մեծ ընդունելության արժանացավ իսրայելացիների կողմից և թե՛ հրաշափառ պատվի արժանացավ Աստծո կողմից: Սակայն երբ ուղղակիորեն նայենք այդ դեպքերին՝ մի պահ համարելով, որ Ռահաբը չի եղել սաղեմահայ, այլ ուղղակի՝ բուն երիքովցի կռապաշտ և իսկապես պոռնիկ, թեկուզ և նախկին, այդ դեպքում բացարձակ անհավանական կլինի այն ամենը, ինչ որ տեղի ունեցավ Ռահաբի հետ:

Նման իրավիճակում երիքովցի մի ընտանիքի խնայելը դեռ կարելի էր հասկանալ: Բայց միայն այն, որ օտարազգի, կռապաշտ, երիքովցի, պոռնիկ կինը ամուսնանում է Հուդայի սերնդից իշխանի՝ Սաղմոնի հետ, դա երևակայելն իսկ դժվար է, հատկապես Հեսու Նավեի ժամանակներում, երբ դեռ իսրայելացիները մեծ երկյուղածությամբ էին պահում Մովսեսի օրենքները, ինչը կտրականապես արգելում էր նման երևույթները, և օտար կամ անբարո մեկի հետ ամուսնանալու համար Սաղմոնին, ըստ օրենքի, ամենաքիչը քարկոծելով կսպանեին:

Կարգադրված էր, որ երիքովից ոչինչ չվերցնեն, քանզի ամեն բան նզովված էր: Եվ Աքար անունով մեկը (նույն Հուդայի ցեղից), երբ վերցրեց նզովվածից որոշ իրեր, ոչ միայն ինքը, այլև իր ողջ ընտանիքն ու ամեն

---

74 К. Л. Кустодиев (протоирей), Опытъ истории Библейской женшины, Санктпетербургъ 1870 г., ст. 107–108.

75 Մատթ. 1:1-6:

ինչը քարկոծվելով բնաջնջվեց[76]*։*

Իսկ ի՞նչը կարող էր ավելի ծանր մեղք համարվել. նզովված ազգի իրերից ինչ-որ բան յուրացնե՞լը, թե՞ այդ պիղծ ազգի պոռնիկ կնոջ հետ ամուսնանալը։ Եվ եթե Աքարը գիտեր, որ իր արարքն իրեն չի ներվի, և այդ զանցանքը գործեց գաղտնի, ապա ինչպե՞ս ավելի վատթար արարքը Հուդայի իշխան Սաղմոնը գործեց, այն էլ՝ հայտնապես, և ոչ միայն հրապարակայնորեն չքարկոծվեց, այլև ոչ մի կշտամբանքի չարժանացավ։

Ուրեմն, այստեղ մի այլ խորհուրդ կար, ինչի պատճառով էլ ամբողջ իսրայելը՝ Հեսուի գլխավորությամբ, ոչ միայն չընդդիմացավ, այլև գոհունակությամբ ընդունեց Ռահաբին ու նրա յուրայիններին։

Ինչ պետք է հասկանալ «կոպպաշտություն» հասկացության տակ

Հեթանոսության կոպպաշտական ծեսերը Քանանում դրսևորվում էին ամենավատ կերպերով։

Երբ նրանք չարաշահեցին Աստծո համբերությունը, Նա պատվիրեց իսրայելացիներին բնաջնջել նրանց։ Նման բան տեղի ունեցավ Նոյի ժամանակ՝ ջրհեղեղով, Աբրահամի ժամանակ՝ Սոդոմ և Գոմոր պիղծ քաղաքների կործանումով՝ երկնքից թափված կրակով։ Ոմանք տարակուսանքով են վերաբերվում Երիքովի ու նման քաղաքների կործանմանը՝ համարելով դա անընդունելի արարք։ Սակայն միայն նրանց կենցաղին ծանոթը կարող է ուղիղ դատողություններ անել. ***«Աստվածուհի Աստարովթը պղծության մարմնավորումն էր։ Եբրայեցիների կողմից քանանացիների դաժան սպանդը ներվում է հատկապես այն պատճառով, որ քանանացի բոլոր ցեղերը խորապես այլասերվածության մեջ էին»***[77]*։*

Իսկ Հեսու Նավեն նույնիսկ այդ ապականված վայրը՝ Երիքովի ավերակները վերականգնել ցանկացողներին նզովքի մատնեց. ***«Հեսուն այդ օրը նզովեց Երիքովը և ասաց. «Տիրոջ առաջ անիծեալ լինի այն մարդը, որ կվերականգնի և կշինի Երիքով քաղաքը, իր անդրանիկ որդու վրայ նրա հիմքերը կդնի՝ ի գին իր անդրանիկ որդու, և նրա պարսպի դարպասները կկանգնեցնի՝ ի գին իր կրտսեր որդու։ Այդպես էլ արեց Ազան Բեթելացին.***

---

[76] Յեսու. 7:16:25:

[77] Кустодиев К. Л., прот.. Опыт истории библейский женщины, Санкт–Петербург 1870 г, ст. 104.

իր անդրանկի՝ Աբիրոնի վրա դրեց նրա հիմքերը և Ազատվածի՝ կրտսերի վրայ կանգնեցրեց նրա դարպասները»[78]։

Եվ որպեսզի ինչ-որ չափով հասկանանք, թե այդ ժամանակաշրջանում կրոնական ասպարեզում ինչ էր տեղի ունենում Քանանում և, հատկապես, Երիքովում, դիմենք մասնագետների ուսումնասիրությանը։ «Ինչպես փյունիկեցիները, այնպես էլ մյուս քանանական ցեղերը աստվածացնում էին բնության ուժերը, որ մարմնավորում էին աստվածային պատիվը՝ Բահաղ և Աստարովթ անուններով։ Բահաղը մարմնավորում էր արևը, իսկ Աստարովթը՝ լուսինը, բայց ոչ թե որպես զուտ երկնային լուսատուներ, այլ որպես բնության ներգործող ուժեր, որքանով որ նրանք նպաստում էին հողի, կենդանիների և մարդկանց արգասաբերության։ Բացի դրանից, քանանացիները պաշտում էին նաև յոթ ավելի ցածր աստվածների, որ մարմնավորում էին այդ ժամանակվա հայտնի յոթ մոլորակները և դրանց հետ մեկտեղ նաև ութերորդ հատուկ աստծուն՝ Ասմունին, որ մարմնավորվում էր օձի կերպարանքով և համարվում էր բժշկության աստված։ Այս աստծո պաշտամունքն առանձնանում էր կոպիտ զգացմունքայնությամբ։ Ի դեպ, գլխավոր դերը խաղում էին կանայք։ Ջոհասեղաններն ու մեհյանները կառուցվում էին լեռների գագաթներին, ծառերի ներքո և նվիրվում էին Բահաղին ու Աստարովթին։ Աշնան վերջում կատարվում էր տխրության տոնակատարությունը, որը վերջանում էր ամենաբիրտ անառակությամբ։ Կանայք ողբի այդ յոթ օրվա շրջանում փնտրում էին անհետացած Բահաղին, այսինքն՝ նրա փայտե կամ քարե պատկերը, այդ մոլեգին ողբի մեջ նրանք պոկում էին իրենց մազերը և հարվածում իրենց կրծքին։ Քրմերն այդ վհատեցնող երաժշտության տակ կտրատում էին իրենց ձեռքերը և մարմինը՝ դանակներով և խոցոտում էին նիզակներով։

Եվ ահա, տխրության տոնակատարության վերջում բոլորը մոլեգնորեն աղաղակում էին. «կենդանի է Բահաղը»,- և այդ մոլեգին ուրախության ժամանակ աղջիկները անամոթաբար զոհաբերում էին իրենց պատիվը՝ փողով, որը սահմանված էր Աստարովթին զոհ մատուցելու համար։ Տաճարներում կային հատուկ տաճարային պոռնիկներ, որոնք ամբողջ տարվա ընթացքում պոռնկություն էին անում ինչպես տաճարի ներսում, այնպես էլ փողոցներում և կոչվում էին «ընծայված» (կեդեշոտ)։ Աստարովթի պատվին տղամարդիկ և պատանիները ներքինացնում էին իրենց և կանացի հագուստներ էին հագնում, որպեսզի դրանով նմանվեին աստծուն, որը միաժամանակ և՛ Բահաղն էր, և՛ Աստարովթը, տղամարդկանց և կանանց սկիզբը։ Այս մոլեռանդ ներքինացվածները, որ զբաղվում էին մեհյանների համար ողորմություն խնդրելով, նույնպես կոչվում էին «ընծայվածներ»։ Հասկանալի է, որ այսպիսի կրոնն այդ ազգերի ամբողջ կյանքը դարձրել էր պիղծ և նողկալի՝ արդեն իսկ իրենց վրա հարուցելով

[78] Յեսու. 6:26:

Աստծո սարսափելի զայրույթը՝ ի դեմս Սոդոմ-Գոմորի պատժի։

Սրա հետևանքով Մովսեսը վճռականորեն արգելեց իսրայելացիներին միաբանվել քանանացի ազգերի հետ։ Որպեսզի ազատեն և մաքրեն խոստացված երկիրը այսպիսի պղծություններից, նրանք պարտավոր էին՝ վերջնականապես ոչնչացնել և վտարել նրանց՝ որպես մի ցեղի, որն իր վրա էր բերել Աստծո արդար դատաստանն այն բանի համար, որ իրենց կողմից զբաղեցված այդ բարեբեր երկրի օրհնյալ պտուղների համար ոչ միայն չփառաբանեցին ճշմարիտ Աստծուն, այլև ընդհակառակը՝ այնտեղ գտան նողկալի կռապաշտության և պղծության աղբյուրներ»[79]։

Հիշենք, որ ամենազազրելի այդ չաստվածությունների կռապաշտական պանթեոնում գլխավորը՝ «Բահաղը», հենց «Բելն» է, որին սատակեցրեց Հայոց մեծ նահապետ Հայկ-Մելքիսեդեկը։

Եվ ահա՝ նման պիղծ ու անօրեն քաղաքներից մեկում, ինչպիսին երիքովն էր, ապրում էր Ռահաբը, ով ճանաչվում էր՝ որպես պոռնիկ։ Իսկ եթե այդ պղծությունները համընդհանուր բնույթ էին կրում երիքովում, ապա ինչպիսի՞ն պետք է լիներ նա, ով այդ վայրում դեռ մի բան էլ պոռնիկի համբավ ուներ։

Այս չափազանց հակասական իրավիճակը մտածելու առիթ է տվել և տալիս է շատերին՝ դարեր շարունակ։ Քանզի նման կտրուկ փոփոխությունը, այսինքն՝ այդպիսի անձի Փրկչի ազգաբանության մեջ տեսնելը և դրա հետ համակերպվելը, այնուամենայնիվ, դյուրին չէ։

*Դրանից ելնելով՝ մեկնիչներից ոմանք ցանկացել են ինչ-որ կերպ մեղմել այդ երևույթը՝ առաջարկելով Ռահաբին կցված «պոռնիկ» բառն իր բուն իմաստով չհասկանալ. կարծիք կա, որ եբրայերենով տվյալ բառն ընթերցվում է «զոնախ», իսկ դա կարելի է տարբեր կերպ հասկանալ. **«Եվ նրանք հասան մի կնոջ տան մոտ, որի անունը Ռահաբ էր, որին Սուրբ Գիրքը պոռնիկ է անվանում, քանզի եբրայական անունը Զոնախ է, որը թեև սովորաբար օգտագործվում է պոռնիկ բառի փոխարեն, բայց նշանակում է պանդոկատեր, որն օթևան է տալիս օտարներին և կերակուր է վաճառում արծաթով, այդ պատճառով էլ շատերը սա մեկնում են՝ ըստ վերոնշյալ անվան»**[80]։*

*Այն, որ իսկապես Ռահաբը կարող էր հյուրանոց ունենալ, դա տրամաբանական է նաև այն առումով, որ նրա բնակարանը պարսպի մեջ էր՝ դարպասների մոտ, ինչը ճամփորդների համար շատ հարմար էր, քանի որ շատ չխորանալով քաղաքի մեջ՝ դարպասներից ոչ շատ հեռու, կարող էին ապաստան գտնել հյուրանոցում։ **«Ռահաբ կամ Ռաքաբ... երիքովյան***

---

79 А. П. Лопухин, Библейская История Ветхого и Нового Заветов, Москва 2009 г., ст. 273–274.

80 Տեսութիւն պատմութեանց Աստուածաշունչ Սուրբ Գրոց, բացաքննեալ երկասիրութեամբ տեառն Ստեփաննոսի վարդապետի Ագնոց արքեպիսկոպոսի և ընդհանրական Աբբայի Մխիթարեանց, Վենետիկ, հատոր Ա, 1819 թ., էջ 389–390:

բնակչուհիներից մեկը, սովորաբար անվանվում է Ռահաբ-պոռնիկ։ Ոմանք ցանկանում են մեղմել այդ վիրավորական անվանումը և նրան անվանում են հյուրանոցի տիրուհի»[81]։

Ռահաբին պոռնկության կարգավիճակից հեռացնելու համար ոմանք էլ կարծիք են հայտում, թե Ռահաբի այդ պանդոկն այնքան թափթփված և կեղտոտ էր, որ դա է ընդամենը եղել է պատճառ, որ Ռահաբին «պոռնիկ» անվանեն. ***«Որպեսզի կասկած չհարուցեն իրենց դեմ, հետախույզները գաղտնաբար մտան քաղաք... և ապաստան գտան ոմն Ռահաբի մոտ, ով ուներ... հյուրանոցի պես մի բան, սակայն այնքան կեղտոտ և կասկածելի, որ ինքը՝ տիրուհին, քաղաքում կրում էր պոռնիկի վատահամբավ անվանումը»***[82]։

Նման կարծիքն էլ առանձնապես չի մեղմում Ռահաբին վերագրվող անարգանքը։ Սակայն դա էլ փորձ է՝ խարանը Ռահաբի վրայից ջնջելու։

Ղովտ – Ռահաբ, Սոդոմ – Երիքով

«Հայերի պատմությունը չընդհատվող
մշակութային կոթող է»[83]։

Ռահաբի՝ ով և ինչպիսին լինելու առեղծվածի բացահայտման թեման շարունակելով՝ այժմ որոշ զուգահեռներ տանենք Ղովտի և Ռահաբի միջև։ Հիշենք, որ բարեպաշտ Ղովտն ապրում էր Աբրահամի հետ, և երկուսն էլ ունեին ոչխարների մեծաքանակ հոտեր։ Եվ երբ նրանց հովիվների միջև վեճ ծագեց, նրանք որոշեցին բաժանվել, և Ղովտն իր ընտանիքով գերադասեց հեռանալ և բնակվել պախարակելի վարքով հայտնի Սոդոմ քաղաքում։

Երբ սոդոմացիների մեղքերն անցան ամեն չափ ու սահման, այդժամ էլ լցվեց Աստծո համբերության բաժակը, և Նա ուղարկեց Իր հրեշտակներից երկուսին, որպեսզի տեղում քննեն իրավիճակը։

Եվ ճշտելով, որ քաղաքները լիովին ապականվել էին, Աստված վճռեց դրանք ի սպառ բնաջնջել երկրի երեսից։ Միայն թե այդ երկու հրեշտակները պետք է մինչ Սոդոմի կործանումը փրկեին բոլոր նրանց, ովքեր չէին ապականվել սոդոմական մեղքերով։

Ինչպես Աստծո կողմից Սոդոմ ուղարկված հրեշտակները հետազոտեցին այդ քաղաքը, այդպես էլ Հեսուի կողմից ուղարկված երկու լրտես-

---

81 Библейская энциклопедия Архимандрита Никифора, Москва 1891 г., ст. 590.

82 Лопухин А. П., Библейская история Ветхого, Монреаль 1986 г., ст. 174.

83 Франк Вивиано, выдающийся американский журналист.

ները եկան հետախուզելու Երիքովը։

Սոդոմի և Գոմորի օրերին Հրեշտակները քաղաքի հրապարակում էին, երբ օրն սկսեց մթնել, և բարեպաշտ Ղովտը, տեսնելով նրանց, հասկացավ, որ նրանք տեղացիներ չէին և առաքինի անձինք էին։ Ուստի նրանց սիրով հրավիրեց՝ իր տանը գիշերելու։

Այդպես և բարեպաշտ Ռահաբը, տեսնելով երկու հետախույզներին, նույնպես հասկացավ, որ սրանք պիղծ երիքովցի չեն։ Եվ քանի որ օրը տարաժամ էր, նրանց հրավիրեց իր տուն՝ հասկացնելով, որ ինքն ազգությամբ ոչ մի առնչություն չունի երիքովցիների հետ, և որ գիշերով երիքովի հրապարակում մնալը վտանգավոր է։

*Հիշենք, որ Փլավիոսն ասում է՝ Աստված խոսում էր Ռահաբի հետ, և շատ հավանական է, որ այդ մարգարեական հոգով օժտված կնոջը հենց Տերն էր ուղարկել լրտեսներին ընդառաջ. **«Ինչպես էլ եղած լինի, Երիքովում կանգառի համար հետախույզների կողմից արված ընտրությունն առանց աստվածային թույլատու կամքի չէ, որ եղավ»**[84]։*

Եթե Ղովտը կամավոր էր ընտրել Սոդոմը՝ որպես բարվոք բնակավայր, ապա Ռահաբի նախնիներն իրենց բնակության վայրից՝ Սաղեմից, փախել էին և ստիպված էին հայտնվել Երիքովում։

*Սոդոմում երբ նոր էին հրեշտակները մտել Ղովտի տուն, սոդոմացիները, իմանալով, որ Ղովտը նրանց իր տանն է հյուրընկալել, եկան և պահանջեցին, որ նրանց դուրս հանի իրենց մոտ, որպեսզի իրենց մոլի կրքերին հագուրդ տան. **«Ղովտին դուրս կանչեցին ու հարցրին նրան. «Ո՞ւր են այն տղամարդիկ, որ գիշերը քեզ մոտ եկան։ Նրանց բե՛ր մեզ մոտ, որ կենակցենք նրանց հետ»»**[85]։*

Սակայն ոչ թե Ղովտն այդ եկվորներին՝ հրեշտակներին պաշտպանեց, այլ հրեշտակները պաշտպանեցին Ղովտին՝ կուրացնելով սոդոմացիներին. և նրանք դեսուդեն ընկնելով՝ չէին կարողանում գտնել Ղովտի տան դուռը։

Այդպես և Երիքովում տեղեկացան, որ երկու իսրայելացիներ հանգրվան են գտել Ռահաբի մոտ և սոդոմացիների պես պահանջեցին, որ նրանք դուրս բերվեն։ Սակայն Երիքովում, ի տարբերություն Սոդոմում կատարված դեպքերի, Ռահաբն էր ջանում երիքովցիների ձեռքից փրկել երկու վախվորած հետախույզներին։ Եվ ինչպես հրեշտակները կուրացրին Ղովտի բակում հավաքված սոդոմացիներին, այդպես էլ հնարամիտ Ռահաբն իր խոսքով ու պահվածքով կուրացրեց երիքովցիներին, որոնք այլևս չմտան և չխուզարկեցին նրա տունը, այլ դուրս ելան քաղաքից, դեսուդեն ընկան հետախույզներին բռնելու համար։

Ղովտի տանը խոսակցություն սկսվեց երկու հրեշտակների և Ղովտի

---

84 А. П. Лопухин, Толковая Библиа, том II, Петербургъ 1905 г., ст. 10.

85 Ծննդ. 19:5:

միջև: Նրանք տեղեկացրին Ղովտին, թե ինչ է սպասվում սոդոմացիներին և համոզում էին, որպեսզի նա շուտափույթ վերցնի իր ընտանիքի անդամներին և դուրս գա Սոդոմից, որպեսզի նրանց հետ կորստի չմատնվեն: Իսկ Ղովտը, չնայած զզվել էր սոդոմացիների վարքից և դեմ չէր այդտեղից ելնելուն (հատկապես երբ տեղեկացավ, որ այն դատապարտված էր անխուսափելի բնաջնջման), սակայն հապաղեց որոշ կենցաղային հարցերի պատճառով: Հրեշտակները, տեսնելով Ղովտի և նրա ընտանիքի դանդաղելը, նրանց ուժով դուրս հանեցին քաղաքից:

Նրանք պատվիրեցին առանց ետ դառնալու փախչել և պատսպարվել լեռներում: Ով ետ նայեր, աղի արձան պիտի դառնար:

Այդպես և Երիքովում խոսակցություն սկսվեց Ռահաբի և երկու հետախույզների միջև: Եթե Ղովտին հրեշտակներն էին պատմում Աստծո կողմից Սոդոմի բնաջնջման մասին և համոզում, որ նրանք թողնեն-հեռանան Սոդոմից, Երիքովում Ռահաբն էր երկու հետախույզներին հավաստիացնում, որ Երիքովը պետք է կորստյան մատնվի, և քաջալերում էր նրանց, որ չվհատվեն՝ տեսնելով Երիքովի զորքն ու անառիկ պարիսպները:

Եվ ինչպես հրեշտակները Ղովտին ասացին, որ որոշ ժամանակ պատսպարվեն լեռներում, այդպես և Ռահաբը երկու հետախույզներին պատվիրեց մի քանի օր թաքնվել լեռներում: Ըստ Ռահաբի և Աստծո հրեշտակների միջև առկա այս զուգահեռների՝ նրանք երկուսն էլ նույն էին անում, սակայն տարբեր իրավիճակներում:

Ղովտի կինը ետ նայեց և վերածվեց աղե արձանի. նա ետ նայեց, քանզի սրտի մեծ ցավով էր տանում իր տան և ունեցվածքի կորուստը և իր աղջիկների փեսացուների մահը:

Իսկ ամբողջ Երիքովում Ռահաբի համար մի թանկարժեք բան կար, որից կախված էր ոչ միայն իր, այլև իր մերձավորների կյանքը. դա լուսամուտից կախված փրկարար կարմիր պարանն էր:

Եթե Սոդոմից հեռացած բարեպաշտ Ղովտը կորցրեց կնոջը և անգիտակից վիճակում ապականության մեջ ընկավ իր հարազատ աղջիկների հետ, և այդ արյունապղծությունից սերվեցին անօրեն մովաբացիներն ու ամոնացիները, ապա Ռահաբի ողջ տունը և ազգատոհմը փրկվեց և պատվով ընդունվեց իսրայելացիների կողմից: Եվ Ռահաբն, ամուսնանալով Հուդայի պատվական իշխան Սաղմոնի հետ, օրինավոր միությամբ ծնեց բարեպաշտ Բոոսին, ում թոռն էր Դավիթ թագավորը, որի շառավղից էլ մարմնանալով՝ աշխարհ պիտի գար աշխարհի Փրկիչը:

Զուգահեռների ամփոփում

*Ղովտն օտարական էր Սոդոմում և միակն էր, որ հավատում էր Աստծուն և չէր խոնարհվում կուռքերի առաջ՝ գարշելով սրանց պաշտողների անառակ ընթացքից, որի համար Տերը նրան փրկեց. **«Նա փրկեց արդար Ղովտին, որ ձանձրացել էր նրանց անառակ, անկարգ ընթացքից, որովհետև արդարը, բնակվելով նրանց մեջ, ականատես և ականջալուր էր լինում նրանց անօրեն ընթացքին՝ ամեն օր տանջելով իր արդար հոգին։ Տերը գիտե աստվածապաշտներին փրկել փորձությունից, իսկ անիրավներին պահել դատաստանի օրվա համար՝ տանջանքի մատնելու նրանց՝ մարմնի պիղծ ցանկությունների ետևից գնացողներին, Աստծո իշխանությունն արհամարհողներին»**[86]։*

*Ուստի, Ռահաբի և Ղովտի միջև այս զուգահեռներից ելնելով՝ մեղանչած չենք լինի, եթե նույն բնորոշումը տանք նաև Ռահաբին. **«Նա փրկեց արդար Ռահաբին, որ ձանձրացել էր նրանց անառակ, անկարգ ընթացքից, որովհետև արդարը, բնակվելով նրանց մեջ, ականատես և ականջալուր էր լինում նրանց անօրեն ընթացքին՝ ամեն օր տանջելով իր արդար հոգին»։***

*Իսկ քանի որ Տերը փրկում է **«աստվածապաշտներին»**, ուրեմն Ռահաբն էլ, լինելով այնպիսի աստվածապաշտ, ինչպիսին Ղովտն էր, արժանացավ փրկության։ Ապա թե ոչ՝ սոդոմացիների և երիքովցիների նման, որ **«պիղծ ցանկությունների ետևից գնացողներ էին, և Աստծո իշխանությունն արհամարհողներ»** նա էլ կդատապարտվեր կործանման։*

*Տերը հրաշալի փրկություն պարգևեց աստվածապաշտ Ռահաբին։ Իսկ եթե նա պիղծ և անիծյալ երիքովում պոռնիկ լիներ, ապա նա պիղծերի մեջ ամենապիղծը կլիներ, ով գնում է **«մարմնի պիղծ ցանկությունները կատարելու հետևից»**։ Իսկ նման մարդուն, ինչպես Առաքյալն է ասում, Աստված ոչ թե ազատում, այլ **«պահում է դատաստանի օրվա համար»**։*

*Պողոս առաքյալը գրում է. **«հավատով Ռահաբը չկորսվեց անհավատների հետ»**[87]։ Ղովտի և Սոդոմի օրինակը մեր առջև ունենալով՝ նորից եզրակացնում ենք, որ **«հավատով»** բառը ենթադրում է ոչ թե հանկարծ առանց որևէ հիմքի և պատճառի երիքովում մի պոռնիկի զարմանալի կերպարանափոխություն, այլ՝ Ղովտի նման շատ վաղուց ջերմ հավատք ունենալն առ Աստված. մարդ, որ այդ հավատքն ունենալով էր որպես օտարական՝ բնակություն հաստատել երիքովում։*

Ղովտի և Ռահաբի այս համեմատությունն ի ցույց ենք դնում, որպեսզի հստակ երևա, որ Սոդոմի բնիկների մեջ չկար և ոչ մի բարեպաշտ

---

86 Բ. Պետր. 2:7–10:

87 Եբր. 11:31:

անձ: Այնինչ, ըստ Աբրահամ նահապետին տված խոստման, եթե Սոդոմում գոնե տասն արդար մարդ գտնվեր, Տերը կխնայեր բոլոր մեղսասեր սոդոմացիներին: Սակայն տեսնում ենք, որ բնիկ սոդոմացիներից նույնիսկ մեկն էլ չգտնվեց:

Քանի որ Սոդոմում միակ արդարն օտարական Ղովտն էր, ուրեմն օրինաչափ է, որ պետք է երիքովում էլ Ռահաբը լիներ օտարական, որ ցույց տվեց զարմանալի հավատք առ Աստված: Ակնհայտորեն, Ռահաբի հավատը պակաս չէր Ղովտի հավատից, եթե չասենք՝ ավելին էր: Ղովտը մեծացել և ուսանել էր բարեպաշտ հայր Աբրահամի ոտների մոտ:

Եվ ինչպես Ղովտը՝ Աբրահամի, այնպես էլ Ռահաբը մեծ նահապետ Հայկ-Մելքիսեդեկի հավատքի ու բարեպաշտության ժառանգորդն էր, և ոչ թե մի ինչ-որ անհավանական հրաշքի արգասիք ու արդյունք: Ուրեմն, առանց պատճառի չէր կարող՝ որևէ բարի բան լիներ ո՛չ Սոդոմում և ո՛չ էլ, անշուշտ, Երիքովում:

Ջրհեղեղից առաջ էլ Կայենի սերնդից մի բարեպաշտ մարդ իսկ դուրս չեկավ, այլ միայն՝ մեղսասեր մարդասպաններ, չարահավաններ...

Իսկ Սեթից սկիզբ առավ ամբողջ մի առողջ սերունդ. որոնք կոչվում էին Աստծո որդիներ իրենց բարեպաշտ ընթացքի համար: Նրանց մեջ հատուկ փայլեցին Ենովսը, Ենովքն ու Նոյը: Իսկ Կայենի սերունդները ոչ միայն որևէ լավ բան չտվեցին, այլև ապականեցին նույնիսկ Սեթի բարեպաշտ սերունդներին: Նմանապես, երիքովցիների մեջ ոչ միայն չգտնվեց որևէ բարեպաշտ մեկը, այլև, մյուս սաղեմահայերին էլ՝ բացի Ռահաբից, ներքաշեցին կռապաշտության մեջ:

*Կայենի սերնդից որևէ լավ բան սպասել չէր կարելի, այդպես և՝ երիքովցիներից: Եվ եթե միայն Սեթի սերունդն ընդունակ էր բարեպաշտության պտուղներ բերել, այդպես՝ միայն Հայկ-Մելքիսեդեկի սերունդներից եղող սաղեմահայուհին կարող էր պտղաբերել, այլ ոչ թե պիղծ ու անօրեն երիքովցին, քանզի գրված է. **«Փշերից թուզ չեն քաղում և ոչ էլ մորենուց՝ խաղող»**[88]: Եվ այսպես, չէր կարող փուշ-երիքովցիներից քաղվել այնպիսի բարի պտուղ, ինչպիսին Ռահաբն էր:*

Ադամի մեղքի պատճառով նզովված մոլորակի վրա որևէ բարի բան ստանալու եղանակը միայն, ըստ Տերունական հրամանի, ճակատի քրտինքով աշխատել ու վաստակելն է. բավական է մի փոքր անհոգ լինել, և մոլախոտերն ամբողջ այգիներն ու արտերը կապականեն:

Որևէ բարի բան ստանալու համար անպայման հարկ է ջանալ, աշխատել, հողը փխրեցնել, սերմերը ցանել, քաղհանել, ջրել, բուժել, հետևել դրանց աճին և նոր միայն հուսալ, որ հնարավոր է բերք ստանալ: Չէ՞ որ, երբ դեռ նզովքը չէր մտել աշխարհ՝ նույնիսկ այդ ժամանակ, Դրախտում Ադամը պետք է մշակեր եդեմական այգին:

---

88 Ղուկ. 6:44:

Այդպես և՝ հնարավոր չէր, որ նզովված «մոլախոտ» աճեցնող երիքովում ինքնին առաջանար մի բարի բան, ինչպիսին Ռահաբն էր։

Իսկ եթե Ռահաբն իսկապես պոռնիկ լիներ, ինչպե՞ս հանկարծ՝ առանց ջանքի, առանց մշակման, առանց որևէ պատճառի, կդառնար խաղողի վազ։ Նման կտրուկ փոփոխության օրինակ ո՛չ Սուրբ Գրքում կա, ո՛չ սուրբ Հայրերի վարքերում։

Մարիամ եգիպտացին նույնպես ուներ մարգարեական և բազում այլ շնորհներ և այնպիսին, որ նույնիսկ մեծ սրբության հասած աբբա Զոսիմոս Պաղեստինցին ապշահար էր եղել։ Իսկ Մարիամ եգիպտացին ժամանակին եղել էր աննկարագրելի պոռնիկ, սակայն երբ հավատքի եկավ և զղջաց իր անցած կյանքի համար, միանգամից չդարձավ մեծ սրբուհի, այլ տասնյակ տարիներ մեն-մենակ անապատի խորքերում տքնելով սրբացավ։

*Ուրեմն, Ռահաբն էլ, որ մարգարեուհի էր, պետք է որ մանկուց աստվածպաշտությանը վարժված մեկը լիներ, ինչի արդյունքում էլ նման շնորհի էր արժանացել, այլ ոչ՝ այդպես հանկարծահաս այլակերպումով. **«Այդ պոռնիկը, որ ընդունեց նրանց, պոռնիկից դարձավ մարգարեուհի։ Նա ասում է. «Գիտեմ, որ Տերն այս երկիրը ձեզ է տվել» (Նավե 2։9), տես, թե ինչպես նա, ով մի ժամանակ պոռնիկ էր, անաստված և անմաքուր, դառնում է Սուրբ Հոգով լեցուն. վկայում է անցյալի մասին, հավատում ներկային, մարգարեանում ապագայի մասին»**[89]։*

Քանի որ Որոգինեսը և մյուսները տեղյակ չէին Հայոց պատմության յուրահատկություններին, ըստ այդմ՝ ոչ մի այլ բացատրություն չգտնելով՝ նրանք ստիպված ընդունում են այդ վերափոխումը, որ իբր պոռնիկը միանգամից վերածվեց Սուրբ Հոգու տաճարի՝ դառնալով մարգարեուհի։

Եվ ուրեմն, Ռահաբի շնորհազարդությանն էլ պետք է վերաբերել՝ որպես տարիների ընթացքում ձեռք բերած երևույթի, այլ ոչ՝ հանկարծահաս հրաշքի։

*Ուրեմն, բացառվում է, որ նման մեկը հանկարծ այդպես անբնական կերպով հավատքի գար և երիքովի պղծության խորխորատներից վեր ելնելով՝ միանգամից հասներ հավատքի և սրբության զարմանալի բարձունքների. **«Կասես՝ ի՞նչ արեց Ռահաբը, որի շնորհիվ փրկություն գտավ։ Մի՞թե նրա համար, որ լրտեսներին ընդունեց խաղաղությամբ։ Այդպես է վարվում յուրաքանչյուր պանդոկատեր։ Ոչ միայն խոսքով է նա փրկություն ձեռք բերում, այլև՝ Աստծո հանդեպ ունեցած սիրով և հավատքով։ Եվ որպեսզի իմանաս նրա հավատքի բարձրությունը, լսիր, թե ինչպես է Սուրբ Գիրքը պատմում և վկայում նրա կատարած բարի գործերի մասին։ Նա ապրում էր հասարակաց տան մեջ որպես թանկագին քար՝ թավալված աղբակույտի մեջ, ինչպես ոսկին՝ ընկղմված տիղմի մեջ, ինչպես***

[89] Origene, Omelie su Ciosue, III, 5, Roma, 1993, P. 78.

բարեպաշտության ծաղիկ՝ խեղդված տատասկներով. բարեպաշտ հոգին փակված էր չարության հանգրվանում»[90]*։*

Եթե Ռահաբն իսկապես թանկարժեք քար էր, ապա ի՞նչ գործ ուներ այդ տիղմի մեջ։ Ուրեմն, մի այլ տեղից էր այն բերվել իր համար խորթ միջավայր. եթե անուշաբույր ծաղիկ էր, ինչպե՞ս հանկարծ ծիլ տվեց և աճեց նման աղբանոցում։ Ուրեմն, նա չէր կարող տվյալ միջավայրի ծնունդ լինել։ Ինչո՞ւ Սոդոմում՝ բուն սոդոմացիների մեջ չգտնվեց նման թանկարժեք քար կամ անուշաբույր ծաղիկ, այլ՝ միայն դրսից ներմուծված, այսինքն՝ Ղովտը։

Եթե ոմանք տեղյակ չլինեին Ղովտի պատմության մանրամասներին և իմանային, որ Սոդոմ-Գոմորում ընդամենը մի սոդոմացի կար, որ հզոր հավատք ուներ, և միայն նա էր բարեպաշտ ու փրկվեց իր հավատքի շնորհիվ, կզարմանային, թե այդ մեղքի որջում ինչպե՞ս հանկարծ բարեպաշտ մեկն ի հայտ եկավ՝ առանց դրա համար որևէ նպաստավոր հանգամանքների։ Ամեն երևույթ իր պատճառը պետք է ունենա. Ղովտի պատճառը սոդոմացի չլինելն էր, այլ՝ բարեպաշտ Աբրահամի զարմիկը, ով որևէ կապ չուներ սոդոմացիների հետ՝ չասած որ հենց բարեպաշտ Ղովտն էլ մեծ վնասներ կրեց՝ նրանց մեջ ապրելով. կինը մահացավ՝ դառնալով աղե արձան, իսկ երկու աղջիկներն իրենց հարազատ հոր հետ խառնակվեցին։

Հետաքրքիր է, որ Ռահաբին Պողոս առաքյալը դասում է Հին Կտակարանի սուրբերի հետ, և առաքյալի թվարկածների մեջ չկա մեկը, որ կռապաշտությունից է ճշմարիտ հավատքի եկել, այլ բոլորն էլ եղել են ի սկզբանե բարեպաշտներ։

***«Այսպիսով, Ռահաբն արժանի է բազմաթիվ գովեստների՝ խորհրդանշելով Եկեղեցին։ Որովհետև անձնուրաց Պողոսն էլ, հասկանալով նրա հավատքի մեծությունը և նրան նայելով ոչ թե որպես մերժված մեկի՝ իր նախկին վիճակի համար, այլ որպես Աստծուն հաճելի մեկի՝ իր բարեպաշտ գործի համար, նրան դասում է բոլոր սրբերի հետ և ասում. «Հավատո՛վ էր, որ Աբելը Աստծուն ավելի լավ զոհ մատուցեց»**[91]**, հավատքով Աբրահամը այս-այս գործերն արեց, հավատքով Նոյը տապան կառուցեց, հավատքով Մովսեսը այսպիսի-այսպիսի գործեր կատարեց և հերթով բազմաթիվ սրբերի հիշատակելով, վերջապես ավելացնում է. «Հավատո՛վ է, որ անհավատների հետ կորստյան չմատնվեց պոռնիկ Ռախաբը, որ խաղաղությամբ ընդունել էր լրտեսներին»**[92]**»**[93]*։

Ահա թե ինչպիսի զորեղ հավատքի տեր մարդկանց հետ է դասվում Ռահաբը. մարդիկ, որ հավատի մեծ փորձառություն ունեին, ինչը միան-

---

90 Святитель Иоанн Златоуст, Беседы о покаянии, Москва 2009 г., ст.167.

91 Եբր. 11:4:

92 Եբր. 11:31:

93 Святитель Иоанн Златоуст, Беседы о покаянии, Москва 2009 г., ст.170–171.

շանակ և անժխտելիորեն բերում է այն համոզման, որ Ռահաբը նույնպես, մինչ Իսրայելացիների գալն արդեն իսկ մեծ հավատքի տեր էր, և նրա հավատքի պտուղն առավել ցայտուն երևաց, երբ նա իր մարգարեական խոսքով զորացրեց և փրկեց լրտեսներին, դրանով փաստորեն հաղթանակ ապահովելով ամբողջ Իսրայելի համար։

Այդպես և՝ ժամանակին Աբելը մեծ հավատի տեր էր, երբ նահատակվեց։

Այդպես՝ Ենովքն էլ մի քանի հարյուրամյակ հավատքի մեջ էր հարատևել, երբ Աստծո մոտ հափշտակվեց։ Նաև Աբրահամը հարյուր տարին անց էր, երբ մեծ հավատքի դրսևորմամբ պիտի զոհեր իր Իսահակ որդուն, և այլ դեպքեր։ Հավատքի մեջ այդպիսի փորձառություն ունեցող և գործով իրենց հավատքն ապացուցող անձանց հետ է դասվում Ռահաբը, ով նույնպես գործով հաստատեց իր հավատքն առ Աստված։

«Ո՛վ փուչ մարդ, ուզո՞ւմ ես իմանալ. հավատը դատարկ բան է՝ առանց գործերի։

Աբրահամը՝ մեր հայրը, չէ՞ որ գործերով արդարացավ՝ սեղանի վրայ հանելով իր որդուն՝ Իսահակին, որպես զոհ։

Տեսնո՞ւմ ես, որ հավատը գործակից եղավ նրա գործերին, և գործերով էլ հավատը կատարյալ դարձավ։ Եվ կատարվեց գրվածը, որն ասում է. Աբրահամը հավատաց Աստծուն, և այդ նրան որպես արդարություն համարվեց, և նա Աստծո բարեկամ կոչվեց։ Տեսնո՞ւմ էք, որ գործերով է արդարանում մարդ և ոչ թե միայն հավատով։

Այդպես էլ պոռնիկ Ռախաբը գործերով չարդարացա՞վ, երբ ընդունեց լրտեսներին և արձակեց նրանց այլ ճանապարհով։

Ինչպես որ մեռած է մարմինը՝ առանց հոգու, այնպես էլ մեռած է հավատը՝ առանց գործերի»[94]։

Ռահաբի հավատը ներկայացվում է՝ որպես նորադարձի հավատ, որն առանց որևէ մեկից Աստծո խոսքը լսելու՝ հանկարծ կուռքերից դարձել է Աստծուն։ Իհարկե, դա ևս չի բացառվում։ Սակայն այդ կարճ ժամանակամիջոցում հանկարծ դառնալ համարյա «աստվածաբան», դա, իհարկե, վիճելի է։ Մի՞թե կռապաշտությունից ճշմարիտ հավատքի նոր եկած երիքովյան ամենաստորին դասի կինը հանկարծ պիտի ուսուցանի իրենց ծննդյան օրվանից Ճշմարիտ Աստծուն պաշտող ժողովրդի մեջ մեծացած և կրթված իսրայելացիներին։

*Այդ մասին զարմանքով գրում է Հովհան Ոսկեբերան հայրապետը՝ Ռահաբին համարելով ոչ միայն այդ երկու հետախուզներից, այլև՝ ամբողջ իսրայելացիներից ավելի հավատքով և իմաստուն մեկը, քանզի ինչ որ արեց Ռահաբը, չարեց ողջ Իսրայելի ժողովուրդը. **«Ուշադրություն դարձրեք իմ խոսքերին։ Նա ընդունեց լրտեսներին, և. Իսրայելն Ումից***

[94] Յակ.2. 20–26:

հրաժարվեց անապատում, Ռահաբը Նրան (Աստծուն) քարոզեց հասարակաց տանը... Նա ասում է լրտեսներին. «Մենք գիտենք, թե ձեր Աստվածն ինչ արեց եգիպտացիների հետ»,- իսկ հրեան ասում է. «Սրանք են քո աստվածները, Իսրայե՛լ (ձուլածո հորթը), որ քեզ դուրս բերեցին եգիպտացիների երկրից»: - Իսկ պոռնիկ կինը փրկությունը վերագրում է ոչ թե աստվածներին, այլ՝ Աստծուն: -Մենք իմացանք,- ասում է նա, - թե ձեր Աստվածն ինչ հրաշքներ է գործել անապատում, լսեցինք և զարհուրեցին մեր սրտերը, և մեզնից ոչ մեկի մեջ շունչ չի մնացել[95]: Իմացանք, թե ձեր Աստվածն ինչեր գործեց»:- Տեսնո՞ւմ ես, թե ինչպես է նա հավատքով ընդունում Օրենսդրի խոսքերը: - Գիտեմ, - ասում է նա, - որովհետև ձեր Տեր Աստվածն Աստված է երկնքում՝ վերևում և երկրի վրա՝ ներքևում»[96], և Նրանից բացի՝ ուրիշ Աստված չկա»[97]:

Հովհան Ոսկեբերան հայրապետը գովաբանում է նույնիսկ Ռահաբի սուտը, որով մոլորեցրեց երիքովցիներին, ու նրանց ձեռքից փրկեց հետախույզներին: «Եվ տես, թե ինչպիսի մեծ իմաստությամբ է նա միավորում իր բարի զգացումները: Երբ թագավորի ուղարկած մարդիկ գալիս են լրտեսներին փնտրելու և նրան հարցնում են. «Քեզ մոտ մարդիկ չե՞ն եկել», - նա պատասխանում է նրանց.- «եկել են»: Սկզբում նա հաստատում է ճշմարտությունը, որպեսզի այնուհետև միացնի սուտը, քանի որ միայն սուտը երբեք վստահություն չի առաջացնում, եթե իր առջև ճշմարտություն չունի: Այդ պատճառով էլ նա, ով ցանկանում է համոզիչ սուտ ասել, սկզբում ճշմարտությունն է ասում, այն էլ, ինչը հայտնի է բոլորին, այնուհետև նոր միավորում է սուտն ու կասկածելին: «Քեզ մոտ լրտեսներ չե՞ն եկել»: «Այո, եկել են»,- ասում է նա: Եթե նա սկզբում ասեր՝ ոչ, ապա առիթ կտար, որ նրանք հետախուզեին: Բայց նա ասում է, թե եկան, բայց նորից գնացին այս ճանապարհով. «Շուտ հետապնդե՛ք նրանց, գուցե հասնեք»[98]: Օ՛հ, գեղեցիկ սուտ, օ՛հ, գեղեցիկ խաբեություն, որով չի անարգվում Աստվածայինը, այլ պահպանվում է բարեպաշտությունը»[99]:

Այստեղ գովվում է Ռահաբի սուտը: Սակայն եթե նա անբարո մեկը լիներ այդ զազրելի քաղաքում, ինչո՞ւ պետք է զարմացմամբ գովաբանվեր այդ արարքը, չէ որ սուտը նման անձնավորության համար ամենամեծ մեղքը չէ, որ կարող էր լինել: Ուրեմն պետք է եզրակացնել, որ Ռահաբը երիքովում ճշմարտախոսի համբավ է ունեցել, դրա համար էլ լրտեսներին հետապնդող երիքովցիներն անվարան հավատացել են նրան:

Եղել են, իհարկե, բարեպաշտ անձինք, ովքեր ևս իրենց թույլ են տվել

---

95 Յեսու. 2:9, 11:

96 Յեսու. 2:11:

97 Святитель Иоанн Златоуст, Беседы о покаянии, Москва 2009 г., ст. 167–170.

98 Յեսու. 2:5:

99 Св. Иоанн Златоуст, Творения. Т. 2, Беседы о покаянии 5. Санкт–Петедбург 1896 г., ст. 368.

բացառիկ դեպքերում սուտ ասել՝ մարդկային տկարությունից կամ բարի մղումներից, ինչպես օրինակ՝ Աբրահամը (Ծննդ. 12:11-19. 20:2), Սառան (Ծննդ. 18:15), Հակոբը (Ծննդ. 27:24), Հովսեփը (Ծննդ. 42:7), Դավիթը (1Թագ. 21:2) և էլի ուրիշներ:

Բայց և չխոստովանված սուտն ինքնին մեծ մեղք է, և դատապարտության արժանի (Հայտ. 21:8,27): ***«Մենք համարում ենք, որ սուրբ և աստվածահաճո այրերը անդատապարտելի օգտագործել են սուտը, ինչպես, օրինակ, Ռահաբը, ում Սուրբ Գիրքը ոչ միայն ոչ մի առաքինություն չի վերագրում, այլև հիշատակում է նրա՝ պոռնիկ լինելը. այդպիսի ստի միջոցով, որով նա ավելի ցանկացավ թաքցնել լրտեսներին, քան մատնել, նա արժանացավ դասվելու Աստծո ժողովրդի հետ հավիտենական օրհնությամբ»***[100]*:*

Ռահաբը կա՛մ պիտի մատներ և կամ՝ ստեր: Պարզ է, որ կորստաբեր մատնության դիմաց նրա սուտը և՛ ներելի էր, և՛ գովելի:

Այսպիսով, Ռահաբին շատերն են ընդգծված ներկայացրել՝ որպես հավատքի հերոս: Սակայն նրա հավատի իրական մեծությունն այն չէր, որ հավատաց, որ Աստված հրեաների հետ է և թաքցրեց հետախույզներին, այլ այն, որ նա, ապրելով պիղծ քաղաքում, պիղծ մարդկանց մեջ, որոնք երկրպագում էին Բահաղ և Աստարովթ կուռքերին, հեռու մնաց սրանց ապականությունից և երբեք զոհ չմատուցեց այդ կուռքերին, այլ հավատարմություն ցուցաբերեց միայն իր հայրերի, այսինքն՝ Հայկ-Մելքիսեդեկի Աստծուն և այդ պղծության որջում հանդգնեց ապրել Աստվածապաշտ հոգով:

Այդ կերպ պետք է նայենք Ռահաբի կերպարին. այսինքն՝ նա՛ էլ Ղովտի նման դրսից եկած թանկարժեք քար էր: Իսկ ինչո՞ւ է այդ թանկարժեք քարին վերագրվել «պոռնիկ» անվանումը, դա կպարզաբանենք հաջորդիվ:

---

[100] Иоанн Кассиан Римлянин. Писания, Москва 1892 г., с. 477.

Ի վերջո, ո՞վ էր Ռահաբը. եթե՝ բարեպաշտ, ապա ինչո՞ւ՝ պոռնիկ

«Հնարավոր չէ ժխտել, որ Հայաստանը հնագույն մշակույթի, դրամատիկ և ֆանտաստիկ պատմության երկիր է»[101]:

Ռահաբի անվանը համարյա մշտապես կից է եղել «պոռնիկ» խարանը. ***«Ռահաբն էլ պոռնիկ էր, սակայն հետո, երբ հավատաց Աստծուն, փրկություն գտավ»*** [102]*:*

Ինչպես տեսանք, պոռնիկ բառն ուղիղ ընկալմամբ ոչ մի կերպ չի հարմարվում Ռահաբի կերպարին: Քանի որ միայն Սուրբ Գրքից ենք տեղեկանում Ռահաբի մասին, ուրեմն հարկ է քննել, թե «պոռնիկ» բառն Աստվածաշունչ մատյանում, արդյոք այլ իմաստով չի գործածվում:

Եվ երբ քննում ենք Սուրբ Գիրքը, տեսնում ենք, որ «պոռնիկ» բառը օգտագործվում է երկու տարբեր իմաստներով: Մեկը ուղիղ իմաստով, իսկ մյուսը հոգևոր:

Երբ Աստված Աբրահամից սերված իսրայելացիներին ընտրեց, որպեսզի նրանց միջոցով կատարվեն մեսիական մարգարեությունները, Նա օրհնելով օրհնեց այդ ժողովրդին՝ շնորհելով նրանց խոստացված կաթ և մեղր բխող Ավետյաց երկիրը: Եվ այդ ամենն այդպես էլ կշարունակվեր, եթե Իսրայելը հավատարիմ մնար Աստծուն՝ Նրա պատվիրանները զգուշությամբ պահելով: Բայց երբ հետևում ենք Իսրայելի պատմությանը, տեսնում ենք, որ ընդհանուր առմամբ հրեաներն առավել հաճախ անհավատարիմ են եղել Աստծուն: Իսկ անհավատարմությունը Տիրոջ հանդեպ այն էր, որ նրանք մեջքով շրջվում էին Աստծուն և ձեռքերը պարզում էին դեպի կուռքերը: Աստծո տաճարում կուռքեր էին կանգնեցնում և խնկարկում ու զոհեր էին մատուցում դրանց: Եվ նույնիսկ այնպես էին մոլեգնում դիվական ազդեցություններից, որ իրենց զավակներին էլ էին զոհում կուռքերին: Եվ հենց այս անհավատարմությունն անվանվում է «հոգևոր պոռնկություն», ինչի մասին մեկ անգամ չէ, որ ասվել է մարգարեների կողմից՝ սկսած դեռ Սինայի անապատում իսրայելացիների դեգերելու շրջանից: ***«Ձեր ոսկորները ցրիվ կգան այս անապատում, իսկ ձեր զավակները քառասուն տարի խոտ կճարակեն այս անապատում և կհատուցեն ձեր հոգու պոռնկության դիմաց, մինչև որ ձեր ոսկորները***

[101] Алек Макелман, Тайна копья Лонгина, Москва 2006 г., ст. 206.

[102] Амвросий Медиоланский, св. О девственницах, 24. В кн.: Творения святителя Амвросия, епископа Медиоланского по вопросу о девстве и браке. Казань 1901 г., ст. 52.

փտեն այս անապատում»[103]*։*

Ահա՝ տեսնում ենք, որ տվյալ դեպքում խոսքն ակնհայտորեն «հոգևոր պոռնկության» մասին է։

*Իսկ երբ արդեն այդ քառասուն տարին անցավ, և նրանք մոտեցան Ավետյաց Երկրի սահմաններին, իսրայելացիների հոգևոր վիճակն իմանալով՝ Տերն ասաց Մովսեսին, որ այդ ժողովուրդը մի առ ժամանակ անց նորից կհետևի իր հայրերի անօրենություններին՝ խոնարհվելով կուռքերի առաջ. **«Տերն ասաց Մովսեսին. «Ահա՝ դու պիտի մահանաս ու գնաս քո նախնիների մոտ. այս ժողովուրդը պիտի ելնի ու պոռնկանա՝ հետևելով օտար աստվածներին այն երկրի, որոնց բնակիչների մէջ պիտի մտնի։ Նա պիտի լքի Ինձ ու պիտի խախտի իր հետ կնքած Իմ ուխտը»***[104]*։*

*Եվ իսկապես, այդպես էլ եղավ. հաճախ՝ տարբեր ժամանակաշրջաններում Իսրայելը հետևեց ոչ թե իր բարեպաշտ նախնիների օրինակին, այլ ավելի նրանց օրինակին, որ հոգևոր պոռնկության հետևեցին և ուրացան Աստծուն. **«Դրա համար էլ ասա՛ Իսրայէլի տանը. «Այսպէս է ասում Տէր Աստուածը. Ձեր հայրերի անօրենութեամբ ապականվում էք, նրանց գարշելի կուռքերի հետ պոռնկանում, նվերներ մատուցում, Ձեր որդիներին ընծայաբերում էք աստվածներին՝ կրակի միջով անցկացնելով նրանց։ Մինչև օրս պղծվում էք Ձեր բոլոր մտածումների մէջ»***[105]*։*

Բնական է, որ նման դավաճանություններ չէին կարող անհետևանք մնալ. դրանց հետևում էր Աստծո պատիժը։

*Այդ մասին Եզեկիել մարգարեն ասում է. **«Ուստի այսպես է ասում Ամենակալ Տերը. «Այն բանի համար, որ Ինձ մոռացար, հետևդ գցեցիր, դո՛ւ էլ կրիր ամբարշտութեանդ ու պոռնկութեանդ պատիժը»»***[106]*։* *Պատիժն այն էր, որ Տիրոջ կամոք քաղդեացիները եկան և ավերեցին ամբողջ երկիրը և ողջ մնացած ժողովրդի մեծամասնությանը քշեցին գերության։*

*Օսեե մարգարեն էլ անդրադարձել է Իսրայելի հոգևոր պոռնկությանը՝ ասելով, որ չար ոգու ազդեցությամբ են նրանք ուրացել Աստծուն և գլուխ խոնարհել դևերի առաջ՝ մեհյաններում կանգնեցված կուռքերին. **««Ես եմ Ձեր ուղղիչը. ես ճանաչեցի Եփրեմին, և Իսրայելը հեռու չէ Ինձնից, քանի որ այժմ Եփրեմը պոռնկացավ, և Իսրայելը պղծվեց»։ Նրանք չմտածեցին վերադառնալ իրենց Աստծուն, որովհետև պոռնկության չար ոգին նրանց մեջ է, և Տիրոջը չճանաչեցին»***[107]*։*

Սողոմոն թագավորից հետո Իսրայելը բաժանվեց երկու մասի՝ Իսրայելի և Հուդայի թագավորության։ Այդ ընթացքում մերթ մի թագավորութ-

---

103 Թուեր. 14:32–33:

104 Բ. Օր. 31:16:

105 Եզեկ. 20:30–31:

106 Եզեկ. 23:35:

107 Օսէէ 5:3–4:

յունն էր ընկնում կռապաշտության մեջ, մերթ՝ մյուսը։ Սակայն ավելի հաճախ երկուսն էլ միասին պղծվում էին հոգևոր կոչվող պոռնկությամբ. ***«Օսիա արքայի օրոք Տերն ինձ ասաց. «Տեսա՞ր, թե ինչ արեց Իսրայելի այդ բնակչությունը. գաղտնի գնաց և այնտեղ՝ բոլոր բարձր լեռների վրայ ու բոլոր սաղարթախիտ ծառերի տակ պոռնկացավ։ Այդքան պոռնկանալուց հետոյ ես նրան ասացի՝ «Ինձ մո՛տ դարձիր», բայց չդարձավ։ Նրա ցոփությանն ականատես եղավ ուխտադրուժ Հուդայի երկիրը։ Երբ Իսրայելի բնակչությունն ամբողջովին տարվեց շնությեամբ և բռնվեց դրա մեջ, արձակեցի նրան, ապահարզանի թուղթ տվի ձեռքը, ու ես տեսա, որ նրա ուխտադրուժ քույրը՝ Հուդան, չզարհուրեց, այլ գնաց ու ինքն էլ պոռնկացավ։ Նա իր պոռնկությամբ, որ չնչին բան էր համարում, երկիրը պղծեց՝ քարի ու փայտի հետ շնանալով»***[108]։

Սուրբ Գրքում շատ այլ հանդիմանական խոսքեր էլ կան՝ ուղղված հոգևոր անհավատարմություն ցուցաբերած իսրայելացիներին. ***«Մի՛ խնդար, Իսրայե՛լ, և մի՛ ուրախացիր, ինչպես երկրի ժողովուրդները, որովհետև պոռնկացար քո Աստծու դեմ»***[109]։ ***«Ինչպե՛ս պոռնիկ դարձավ հավատարիմ քաղաք Սիոնը, որը լի էր հավատով, ուր արդարություն էր բնակվում, իսկ այժմ՝ մարդասպանները»***[110]։

Ահա՝ Աստվածաշունչ մատյանում «պոռնիկ» բառը կիրառվում է նաև հոգևոր իմաստով, երբ Աստծուն նվիրված ժողովուրդը կամ անձը ետ է դառնում Տիրոջից և սկսում է դավանել կուռքերին։ Այս հարցին անդրադարձել են նաև Սուրբ Գրքի մեկնիչները։

Սբ. Եփրեմ Ասորին եզեկիել մարգարեի գրքի մեկնության մեջ բացատրում է հոգևոր պոռնկության երևույթը. ***««Արծաթից ու ոսկուց զարդեղենը, որ քեզ էի տվել, առար ու դրանից տղամարդու արձաններ պատրաստեցիր և պոռնկացար դրանց հետ»***[111]։ ***Աստված պոռնկություն է համարում այն, որ սինագոգը կարծես թե նշանվել է հեթանոսական կուռքերի հետ, դրանց ընտրել է իր համար՝ որպես ամուսիններ, տերեր, խնամատարներ և փրկիչներ, և երկրպագում է նրանց՝ տրվելով կռապաշտության գարշանքին։ Հրեաները խորհում էին կեղծ աստվածների մասին այսպես. «Մի աստվածը սիրում է մեկին, մեկ ուրիշը հաճույք է ստանում այլ գործից, իսկ երրորդին հաճելի են զոհերը»։ Այս ամենում պոռնկացել է սինագոգը, իսկ Աստծուն, որ սիրում է ողջախոհություն և արբություն, լքել է»...***

«Եվ վերցրիր տղաներիդ ու դուստրերիդ, որոնց դու ինձ համար էիր

---

108 Երեմ. 3:6–9:

109 Օսէէ. 9:1

110 Եսայի. 1:21:

111 Եզեկ 16:17:

ծնել, սպանեցիր ու զոհ մատուցեցիր կուռքերին»[112]***, երբ պոռնկանալով տրվեցիր նրանց: Այն որդիներին և դուստրերին, որոնց ես տվեցի քեզ, երբ դեռ դու Ինձ համարում էիր որպես գլուխ և հայր, և երբ դեռ չէիր սկսել անառականանալ և չէիր դիմել կուռքերին, դու այդ որդիներին և դուստրերին անխղճորեն ոչնչացրեցիր կուռքերիդ համար և առաջարկեցիր նրանց՝ որպես այդ աստվածների հանդեպ քո անմաքուր սիրո արգասիք»***[113]***:***

*Երեմիայի մարգարեության մեջ էլ խոսվում է այդ նույն իրավիճակի մասին, ինչը մեկնվում է հետևյալ կերպ. **««Նա իր պոռնկությամբ, որ չնչին բան էր համարում, երկիրը պղծեց՝ քարի ու փայտի հետ շնանալով»***[114]***: Ի՞նչ պոռնկություն էին գործել Իսրայելը և Հուդան՝ քարի և փայտի հետ: Դա երկրպագելն էր քարե և փայտե կուռքերին: Սակայն մինչ այդ մեղքը՝ նրանք գործել էին մի այլ մեղք ևս. այսինքն՝ հրաժարվել էին պաշտել Ճշմարիտ Աստծուն՝ Կենդանի և Միակ Աստծուն, և հետո դավաճանելով այդ սիրուն՝ սրտով տրվեցին քարից և փայտից պատրաստված օտար կուռքերին: Դրա համար էլ Տերը նրանց անվանում է կռապաշտ պոռնիկներ»***[115]***:***

Կրկին համոզվում ենք՝ Սուրբ Գրքում «պոռնիկ» եզրը հիմնականում գործածվում է հոգևոր իմաստով. այսինքն, թողնելով Աստծուն՝ դարձել են կռապաշտ:

Այդ հնագույն ժամանակներում ընդհանրապես որևէ հավատալիք ուրանալը, հավանաբար, հենց այդպես էլ համարվում էր՝ «հոգևոր պոռնկություն»:

Երիքովում ապաստանած սաղեմահայության փոքր համայնքը, ճնշվելով տեղացիների կողմից և չդիմանալով հալածանքներին ու սպառնալիքներին, նույնպես սկսել էր գլուխ խոնարհել տեղի հեթանոսական կուռքերի առաջ, և միայն Ռահաբը, անկախ հալածանքներից, հավատարիմ էր մնացել իր հայրերի՝ Նոյ և Հայկ նահապետների պաշտած Աստծուն և ո՛չ խունկ էր ծխեցրել, ո՛չ զոհ մատուցել կուռքերին՝ ի տարբերություն իր ազգականների և հարազատների, որ, հավանաբար, թեկուզ և առերես, սակայն հալածանքներից խուսափելով՝ գլուխ էին խոնարհել դիվական բագինների առջև:

Այսպիսով, ողջ Երիքովում միայն Ռահաբն էր մնացել անարատ, իսկ տեղի քուրմերը չէին կարող դա հանդուրժել: Եվ ահա, այստեղ տեղի ունեցավ այն, ինչը որ Իսրայելում էր, սակայն արդեն՝ ճիշտ հակառակ ուղղությամբ՝ կռապաշտության տեսանկյունից. քուրմերը Ռահաբին մե-

---

112 Եզեկ 16:20:

113 Ефрем Сирин. Тварение т. 6, толкование на книгу пророчества Иезекииля, Москва 1995 г., ст. 22–23:

114 Երեմ. 3:9:

115 Поучения святителя Николая Сербского на каждый день года (из «Охридского пролога»), Минск 2014 г., ст. 278–279.

ղադրեցին «հոգևոր պոռնկության» մեջ, որ չխոնարհվելով իրենց կուռքերի առջև՝ դավանում և պաշտում էր իրենց համար օտար Աստծուն, և ուրեմն, տվյալ պարագայում Ռահաբին կցված «պոռնիկ» անունը կրոնական բնույթ ուներ:

Երիքովցիներն այդ սրբակենցաղ կնոջը պոռնիկ էին անվանում, իսկ իրենց կուռքերին ծառայող հոգևոր ու մարմնավոր պոռնիկ քրմուհիներին համարում էին սրբուհիներ:

Երիքովում այդպես ամեն բան գլխի վրա էր շրջված և քանի որ գրված է՝ ***«Վա՛յ նրանց, որոնք չարը բարի կանվանեն և բարին՝ չար, որոնք լույսը խավար կհամարեն և խավարը՝ լույս, որոնք դառը քաղցր կհամարեն և քաղցրը՝ դառը»***[116]*, ուրեմն սրանք իրենց պիղծ կուռքերին բարի էին համարում, իսկ Ռահաբի պաշտամունքը՝ չար. այդ լուսավոր կնոջը համարում էին խավար, իսկ իրենց զազրելի քրմուհիներին՝ լույս. իրենց ցոփ ու անառակ կենցաղը համարում էին քաղցր, իսկ Ռահաբի ժուժկալ և սրբակենցաղ վարքը՝ դառը: Իսկ նման դիրք գրավողների համար, ինչպես որ գրված է, մնում են միայն «վա՛յ»-երը, ինչը և իրականացավ երիքովցիների պարագայում:*

Ա՛յդ էր պատճառը, որ նրանք խոպան բնաջինջ եղան:

Ռահաբը՝ որպես կենդանի նահատակ

«Հայաստանում սուրբ են լեռները,
Աստվածաշնչյան էջերից Արարատը
Պահպանում է ոսկե քո օրերը,
Որտեղ տարածվել է դրախտային այգին»[117]*:*

Ռահաբը, նողկանք ապրելով երիքովցիների անօրեն և պիղծ բարքերից, ջանում էր զերծ մնալ նրանց հետ որևէ շփումից. իհարկե, որքանով դա հնարավոր էր, և պատսպարվելով պարսպի միջի բնակարանում՝ աղոթում և Տիրոջից խնդրում էր համբերություն և ուժ, որպեսզի դիմանա այն հալածանքներին, որոնց ենթարկվում էր երիքովցիների կողմից:

Ռահաբը միակն էր Երիքովում, որ պաշտում էր ճշմարիտ Աստծուն, ինչի համար էլ Ռահաբին տեղացիներն անվանում էին «պոռնիկ»՝ որպես իրենց կուռքերին ուրացող: Իսկ երբ Պողոս և Հակոբոս առաքյալներն էին նրա անվան հետ հիշատակում այդ «պոռնիկ» բառը, դա արդեն նա-

[116] Եսայի 5:20–21:

[117] Ксения Баранова. Стихи, Армения.

հատակության խորհուրդ ուներ: Ահեղ Դատաստանի օրը շատերը պիտի կանգնեն Տիրոջ առաջ ու ցույց տան, թե ով ինչ հալածանք է կրել՝ հանուն Նրա: Մեկն ի ցույց կդնի այն գործիքը, որով նրան տանջել են, մեկը սուրը ցույց կտա, որով խոցվել է, մյուսները՝ նիզակն ու սղոցը, որով սպանվել են, հաջորդները՝ խաչը, որով նահատակության պսակի են արժանացել և այլն, Ռահաբն էլ «պոռնիկ» պիտակը ի ցույց կդնի, որ հանիրավի կրել է հանուն Տիրոջ:

Նմանատիպ բաներ պատմության մեջ քիչ չեն եղել. երբ նախատինք ու անարգանք են կրել, բայց ոչ թե՝ չարագործության, այլ հենց բարեպաշտության համար: Օրինակ, երբ Հայոց եզր կաթողիկոսը ընդունեց Քաղկեդոնի ժողովի որոշումները, և նրան ընդդիմացավ Հովհան Մայրավանեցի վարդապետը (570–652թ.), բարկացած կաթողիկոսը նրան ասաց. «Դու ոչ թե Մայրավանեցի ես, այլ՝ Մայրագոմեցի»: Իսկ Հովհաննն ասաց, որ նման կաթողիկոսից այդպիսի անարգանք ստանալն իր համար շնորհ է և ոչ անարգանք: Եվ որպես նահատակության նշան՝ նա կամավորապես այդ անվանումը իր վրա վերցրեց և պատմության մեջ հիշվում է Հովհան Մայրագոմեցի անվամբ:

*Իսկ իններորդ դարում, երբ Բյուզանդիայում գլուխ էր բարձրացրել պատկերամարտության հերձվածը, այդ ժամանակ տվյալ հերձվածի դեմ ըմբոստացող երկու վանականների՝ Թեոդորոսին և Թեոփիլոսին ստիպեցին, որ իրենք էլ հնազանդվեն կայսեր հրամանին: Սակայն նրանք հրաժարվեցին, ինչի պատճառով էլ նրանց տանջանքների ենթարկեցին՝ ճակատներին դաջելով գրություն. «Սա հերձվածող է Ուղղափառ Եկեղեցու մեջ»: Բնական է, որ ամեն մի հավատավոր մարդ պետք է խորշեր նրանցից՝ կարծելով, թե նրանք եկեղեցու թշնամիներ են: Սակայն իրականությունը միանգամայն այլ էր. սրանք կենդանի նահատակներ էին և ոչ թե ցավ էին ապրում իրենց այդ վիճակից, այլ նույնիսկ ուրախանում էին՝ ասելով. **«Իմացեք, որ մեր ճակատներին դաջված այդ գրությունը տեսնելով՝ Դրախտի դարպասները հսկող քերովբեները կիջեցնեն իրենց հրավառ սրերը՝ բացելով մեր առջև Դրախտի դարպասները»**[118]:*

Ինչպես նրանք, այդպես և Ռահաբը հանիրավի են կրել խարաններ, որոնք իրենց համար եղել են նահատակության նշան, այլ ոչ՝ նախատինքի:

Ուրեմն, ամբողջ երիքովում Ռահաբին համարում էին մեկը, որ իր բարեպաշտ կյանքով իսկ արդեն հանդիմանություն էր մեղսասեր երիքովցիների համար, ինչից ելնելով էլ՝ սրանք ամեն կերպ ջանում էին նվաստացնել և հալածել Ռահաբին:

*Նմանօրինակ իրավիճակը շատ տպավորիչ պատկերված է Սողոմոնի Իմաստության գրքում. **«Մանր է մեզ համար նաև նրան տեսնե-***

[118] https://newphoenix.ru/clubs/89_zhitie-prepodobnogo-feodora-nachertannog.html

լը, որովհետև նրա կյանքը նման չէ ուրիշների կյանքին, և այլազան են նրա վարքի շավիղները։ Նա մեզ գարշանք է համարում և խորշում է մեր ճանապարհներից, ինչպես պղծությունից. երանի է տալիս արդարների վախճանին և հպարտանալով Աստծուն հայր է կոչում։ Տեսնենք՝ արդյոք ճշմարի՞տ են նրա խոսքերը և փորձենք իմանալ, թէ ի՛նչ է լինելու նրա վախճանը։ Եթե, արդարև, Աստծու որդի է, ապա թող Աստված պաշտպանի և ազատի նրան հակառակորդների ձեռքից։ Թշնամանքով և ծեծով խոշտանգենք նրան, որպեսզի տեսնենք նրա հեզության չափը և խելամուտ լինենք նրա համբերատարության։ Խայտառակ մահվան դատապարտենք նրան. արդյոք Աստված օգնական կլինի՞ նրան»։ Այսպես խորհեցին և խաբվեցին ամբարիշտները, որովհետև նրանց կուրացրել էր իրենց չարությունը։ Չճանաչեցին Աստծո խորհուրդները և չակնկալեցին ո՛չ սրբության վարձը և ո՛չ էլ ընտրեցին անարատ հոգիների պատիվը»[119]։

Ակնհայտորեն, երիքովցիները Ռահաբին այսպես էին նայել և երկար ժամանակ նման հալածանքների ենթարկել։

Երբ եկավ ժամանակը, նրանք գլխիկոր մնացին, իսկ Ռահաբն արժանացավ մեծ պատվի և մխիթարանքների. «Այն ժամանակ արդարը շատ համարձակ պիտի կանգնի իրեն նեղողների հանդեպ, և նրանք, ովքեր արհամարհում էին նրա վաստակը, տեսնելով նրան՝ պիտի խռովվեն սաստիկ երկյուղից և պիտի զարհուրեն նրա սքանչելի փրկության համար։

Նրանք պիտի զղջան իրենց մտքում և հոգու նեղությունից ճնշված՝ պիտի հառաչեն ու ասեն. «Սա այն մարդն է, որին մենք ծաղրում էինք մի ժամանակ և նախատինք էինք տալիս։ Մենք՝ անմիտներս, նրա վարքը մոլորություն էինք համարում, իսկ նրա վախճանը՝ անարգանք։ Բայց նա ինչպե՞ս դասվեց Աստծո որդիների շարքը՝ դառնալով սրբերին վիճակակից»[120]։

Հանուն Աստծո՝ որքա՜ն մեծ անարգանքներ, արհամարհանք և վշտեր կրեց Ռահաբը Երիքովում և դրան հակառակ՝ որքա՜ն մեծ պատվի և օրհնության արժանացավ Իսրայելում. դարձավ նախամայր՝ Դավիթ արքայի և Տեր Հիսուս Քրիստոսի։

Ռահաբը, ում համարում էին երիքովցի պոռնիկ, իր մեծ առաքինություններով զարմացրել է Սուրբ Գրքի մեկնիչներին, որոնք նրան համարում էին նաև Եկեղեցու նախակերպար, այսինքն՝ ամեն տեսակ զղջացող, ապաշխարող և իրենց չար և մեղավոր ընթացքից հրաժարվող մեղավորների, բնականաբար և՝ պոռնիկների փրկարար տապան։ Սուրբ Գրքի մեկնիչների շրջանում դա միակ՝ համեմատաբար տրամաբանական տարբերակն էր Ռահաբի կերպարի բնութագրման հարցում։ Սակայն խնդիրն այն է, որ այսպիսի մոտեցման դեպքում բազմաթիվ հակասություններ են ի հայտ գալիս։

---

119 Իմաստ. 2:15–22:

120 Իմաստ. 5:1–5:

Իհարկե, քավ լիցի, չենք հանդգնի ինքնանպատակ հակաճառել եկեղեցու սուրբ Հայրերին: Սակայն հնագիտությունը՝ որպես գիտության ճյուղ, այն ժամանակներում ուղղակի գոյություն չուներ, և հիմա այդ գիտության և հայոց պատմության առկայությունը մեզ ստիպում է՝ այդ խրթին հարցերը քննարկել նաև նոր լույսի տակ:

Ռահաբի պատմության մեջ «պոռնիկ» բառը մի վարագույր էր, որի բացվելով՝ ի հայտ եկավ Ռահաբի իրական կերպարը:

Այժմ լիովին տրամաբանական է, որ Հուդայի բարեպաշտ իշխան Սաղմոնն ամուսնացավ ոչ թե երիքովցի պոռնիկի, այլ՝ բարեպաշտ սաղեմուհու՝ Ռահաբի հետ:

Ուրեմն, Ռահաբը նույնիսկ ամուսնացած չի եղել. չի ցանկացել կապաշտներից որևէ մեկի հետ ամուսնանալ, եթե այն եղել է նույնիսկ իշխան կամ թագավոր: Իսկ այդ բոլորին գումարվել է և այն, որ նա արտաքնապես էլ բարետես է եղել, ինչն էլ իր հերթին է նպաստել, որ Սաղմոնը նրան ամուսնության առաջարկ աներ:

*Կան մեկնիչներ, որ նույնպես դժվարացել են պատկերացնել նշված կերպարի՝ Ռահաբի ամուսնությունը Սաղմոնի հետ. նրանք առաջարկում են մի այլ՝ առանձնահատուկ տարբերակ, ըստ որի՝ Ռահաբի կուսությունը վերականգնվում է, **«անսահման շնորհի հրաշքով»**[121], այսինքն՝ Աստված պոռնիկ Ռահաբին վերափոխում է՝ դարձնելով բարեպաշտ կույս, ինչպես որ այդ մասին գրում է Կեսար Արլսկին (†542 թ.):*

*Ըստ այս մոտեցման՝ Սաղմոնի հետ ամուսնանում է արդեն հրաշքով վերափոխված սրբուհին, այլ ոչ՝ երիքովյան պոռնիկը. **«Անառակ կինը վերացավ, և հայտնվեց հերոսուհին»**[122]:*

***«Արդեն մաքրված, սուրբ կույս է՝ մի ամուսնու միակ ընկերուհին, միակ աղավնին, անարատ և կատարյալ»**[123]:*

Սակայն նման հրաշալի վերափոխման տեսակետի կարիքը բնավ չկա, քանզի Ռահաբը եղել է բարեպաշտ կույս, այլ ոչ՝ պոռնիկ:

Եվ այսպես, հրեաների բարեպաշտ իշխան Սաղմոնն ամուսնացավ առաքինի սաղեմահայուհի Ռահաբի հետ:

*Ծանր հալածանքներ ու նեղություններ կրելուց հետո Ռահաբը ոչ միայն իշխանուհի դարձավ Իսրայելի մեջ, այլև տեղի ունեցավ առավել զարմանալին. **«... և սա է Ռահաբը կամ Հռեքաբը՝ Բոոսի մայրը, որ ար-***

---

121 Serm. 116, 3. Scognamiglio R. Giosuè nell'esegesi dei Padri. "Parole di Vita", №6, 1986. P. 44–52.

122 Кустодиев К. Л., прот.. Опыт истории библейский женщины, Санкт–Петербург 1870 г., ст. 105.

123 De op. Trin. In. Jos., 10. In: Scognamiglio R..Giosuè nell'esegesi dei Padri. "Parole di Vita", №6 (1986). P. 44–52.

ժանի դարձավ հիշատակվել Քրիստոսի ծննդաբանության մեջ»[124]*։*

*Իշխան Սաղմոնն ու իր խոնարհ և բարեպաշտ կինը՝ հայուհի Ռահաբը, Հուդայի բաժին հասած իրենց տարածքներում մի նոր քաղաք կառուցեցին՝ այն անվանելով Բեթղեհեմ. **«Երբ Հեսուն կործանեց Երիքովը, Ռահաբ պոռնիկին փրկելով՝ կնության տվեց Սաղմոնին, իսկ սա իր համար Բեթղեհեմ քաղաքն էր կառուցում Հուդայի հողում. և նրանից (այսինքն՝ Ռահաբից) ծնեց Բոոսին»*** [125]*։*

Սաղեմը, որը Երուսաղեմն է, կառուցեցին հայերը՝ իրենց նահապետ Հայկ-Մելքիսեդեկի գլխավորությամբ։ Իսկ հրեա և հայ ամուսինները՝ Սաղմոնը և Ռահաբը Բեթղեհեմը կառուցեցին, և դրա աշխատանքների մեջ իրենց մասնակցությունն ունեցավ, բնականաբար, նաև այն փոքր հայկական համայնքը, որ Ռահաբի շնորհիվ փրկվեց, որին էլ պետք է



որ Սաղմոնը տեղ հատկացներ Բեթղեհեմում, քանզի այդ խմբի մեջ էին նաև Սաղմոնին արդեն բարեկամ դարձած Ռահաբի հայրը, մայրը, եղբայրները, քույրերը և նրանց ազգակից սաղեմահայերի փոքր համայնքը։

Եվ պատահականության արդյունք չէ, որ թե՛ Երուսաղեմում և թե՛ Բեթղեհեմում հայերը, ի տարբերություն քրիստոնյա բազմաթիվ այլ ազգերի, մինչ օրս՝ ավելի քան երկու հազար տարի, ունեն իրենց Տերունական սրբատեղիները և համայնքները։

---

124 Տեսութիւն պատմութեանց Աստուածաշունչ Սուրբ Գրոց, բացաքննեալ երկասիրութեամբ տեառն տեառն Ստեփաննոսի վարդապետի Ագնոց արքեպիսկոպոսի և ընդհանրական Աբբայի Մխիթարեանց, Վենետիկ, հատոր Ա, 1819 թ., էջ 391:

125 Սբ. Մովսես Խորենացի, «Աստվածաբանական երկեր», Ս. Էջմիածին 2007 թ., էջ 14:

Հռութ

«Հայաստանն ուսումնասիրելու ժամանակ ես գտա բարձր, հոգևոր խնդութ֊յունների անհատնում աղբյուրներ» [126]*։*

Ինչպես արդեն տեղեկացանք, աստվածային շնորհներով զարդարված հայազգի Ռահաբն ամուսնացավ Հուդայի իշխան Սաղմոնի հետ, նրանք հաստատվեցին Հուդայի ցեղին բաժին հասած Բեթղեհեմ քաղաքում, և այդ ամուսնութ֊յունից աշխարհ եկավ նրանց անդրանիկ որդին՝ Բոոսը։

Այդ օրերից անցան տասնյակ տարիներ, Սաղմոնը և Ռահաբը երկար տարիներ այս երկրավոր կյանքի պանդխտութ֊յան շրջանը համերաշխ և երջանիկ ապրելով՝ հասան խորը ծերութ֊յան, իսկ Բոոսը ժառանգեց թե՛ նրանց հոգևոր և թե՛ նյութական ժառանգութ֊յունը։

Բոոսն Աստծո երկյուղն իր մեջ կրող բարեպաշտ անձնավորութ֊յուն էր և մեծ հարստութ֊յան տեր իշխան։ Սուրբ Գիրքը չի ասում՝ նա ընտանիք ուներ, թե ոչ, բայց արդեն բավականին առաջացած տարիքում էր, երբ այդ տարածաշրջանը սովը ճարակեց։

Ովքեր հարուստ էին, կարող էին դիմակայել սովին, իսկ աղքատները պետք է մի կերպ իրենց գլուխը պահեին։

Շատերը գաղթեցին հարևան երկրներ, որտեղ սովն այնքան սաստիկ չէր։ Եվ Բեթղեհեմից մի ընտանիք ևս որոշեց լքել երկիրը, որպեսզի հանգրվան գտնի մովաբացիների երկրում։ ***«Դատավորների կառավարման օրերին սով եղավ երկրում։ Հուդայի Բեթղեհեմ քաղաքից մի մարդ իր կնոջ և երկու որդիների հետ գնաց՝ բնակվելու Մովաբի դաշտում։ Այդ մարդու անունը Ելիմելեք էր, նրա կնոջ անունը՝ Նոոմին, իսկ նրա երկու որդիների անունները՝ Մաալոն և Քեղլոն»***[127]*։*

Այդ օտար երկրում բնակութ֊յուն հաստատելուց դեռ երկար չանցած՝ Ելիմելեքը մահացավ։ Նոոմինն այդ օտար երկրում մնաց միայնակ. մեծ դժվարութ֊յամբ խնամելով իր երկու որդիներին և ամուսնու մահից որոշ ժամանակ անց նրանց ամուսնացրեց։ ***«Ելիմելեքը մահանում է Մովաբացիների երկրում, հավանաբար, այնտեղ գալուց հետո, իսկ որդիների ամուսնութ֊յունը տեղի ունեցավ նրա մահվանից հետո»***[128]*։*

Նոոմինի որդիներն իրենց համար կին առան այդ օտար երկրում. ***«Նրանք մովաբացի կանայք առան. սրանցից մեկի անունը Օրփա էր,***

---

126 Валерий Брюсов, в книге «Русские писатели об Армении», Ереван 1946 г., ст. 84.

127 Հռութ. 1:1–2:

128 А. П. Лопухин, Толкова Библия, Т 2, Петербургъ 1905 г., ст. 212.

մյուսինը՝ Հռութ»[129]*։*

Նոոմինը, սակայն ամուսնու մահվանից հետո դեռ նոր էր մխիթարվել իր որդիների ընտանեկան երջանկությամբ, երբ նրան ավելի ծանր դժբախտություններ պատուհասեցին. երկու որդիները՝ մեկը մյուսի հետևից մահացան։

Նոոմինը, բնականաբար, շատ ծանր տարավ այդ ամենը, բայց քանի որ բարեպաշտ կին էր, չհուսահատվեց, թեպետ միայնակ էր օտար երկրում։ Եվ հույսն առ Աստված՝ դիմակայեց անփարատելի վշտերին։

Այդ ժամանակ էլ լուր հասավ նրան, որ սովը դադարել է Բեթղեհեմում, և շատերը, որ լքել էին երկիրը, նորից վերադառնում են իրենց տները։

Տրտմած ու վշտահար Նոոմինը, տեսնելով, որ իրեն այլևս ոչինչ չի մնում Մովաբում, որոշեց վերադառնալ Իսրայել։

Երբ Նոոմինը պատրաստվում էր ճանապարհ ընկնել դեպի Բեթղեհեմ, նրա երկու հարսները՝ Հռութը և Օրփին, որ շատ էին կապված իրենց բարեպաշտ սկեսրոջ հետ, չէին ուզում լքել նրան և երկար ժամանակ ուղեկցում էին։ Սակայն Նոոմինը նրանց հորդորեց վերադառնալ իրենց երկիրը, քանզի իրեն՝ Նոոմինին, Բեթղեհեմում միայն անորոշություն էր սպասվում։ Նա էլ ոչինչ չուներ հարսներին տալու, քանզի նրա տունն ու հողամասը բարձիթողի վիճակում էին մնացել այդ տարիների ընթացքում։ Իսկ նման պարագայում երկու երիտասարդ կանանց համար ապագան օտար երկրում խոստումնալից չէր կարող լինել։

***«Նոոմինն իր երկու հարսներին ասաց. «Գնացե՛ք, վերադարձե՛ք ամեն մեկդ ձեր հոր տունը. Տերը թող ձեզ ողորմություն անի, ինչպես որ դուք այն մեռյալներին և ինձ էք արել։ Աստված տա, որ ամեն մեկդ հանգիստ գտնեք ձեր հոր տանը»։ Եվ համբուրեց նրանց։ Նրանք բարձրացրին իրենց ձայնը, լաց եղան և ասացին նրան. «Այդպես չի լինի, մենք քեզ հետ կը վերադառնանք դեպի քո ժողովուրդը»։ Նոոմինն ասաց. «Ե՛տ դարձեք, աղջիկնե՛րս, ինչո՞ւ գաք ինձ հետ, միթե դարձյալ իմ որովայնում որդինե՞ր կան, և նրանք ձեզ համար ամուսի՞ն կլինեն։ Վերադարձե՛ք, աղջիկնե՛րս, և գնացե՛ք, որովհետև ես պառավել եմ, էլ մարդու չեմ գնալու. եթե ասեի էլ, թէ հույս ունեմ և կամուսնանամ ու որդիներ կծնեմ, դուք նրանց պիտի սպասեի՞ք, մինչև որ մեծանան և նրանցով գրավվելով՝ պիտի զրկվեի՞ք ամուսնանալուց։ Ո՛չ, աղջիկնե՛րս, ես ձեզանից ավելի եմ դառնացած, որովհետև Տիրոջ ձեռքը ծանրացավ ինձ վրայ»։ Նրանք նորից բարձրացրին իրենց ձայնը և լաց եղան»**[130]*։*

Օրփան, լսելով Նոոմինի հորդորը, թեկուզ և դժվարությամբ, հրաժեշտ տվեց և հեռացավ։ Սակայն Հռութը համառեց և չցանկացավ մենակ թողնել նրան։

---

[129] Հռութ 1:4:

[130] Հռութ 1:4:

Իսկ թե ի՛նչ ավարտ ունեցավ նրանց վեճը, դրան դեռ կանդրադառնանք։

Իսկ ինչո՞ւ ենք արդեն ուսումնասիրության թիրախ դարձնում այս պատմությանը. ի՞նչ կապ կարող է ունենալ սուրբգրային այս դրվագը մեզ հետաքրքրող նյութերի՝ Հայոց պատմության չգրված էջերի հետ։

Նախ ասենք, որ սա բազմաթիվ նմանություններ ունի Ռահաբի և Բոոսի պատմության հետ։ Իսկ թե ինչպես են զարգանում այս դեպքերը, կտեսնենք ստորև։

Բեթղեհեմից Մովաբ գաղթած այս ընտանիքում երկու երիտասարդ տղա կար. նրանք պետք է ընտանիք կազմեին։ Իսկ Մովաբը՝ չնայած հրեաներին գոյատևելու հնարավորություն էր տալիս, սակայն իրենց միջև քաղաքական և հոգևոր բավականին խորը անջրպետներ կային։

Թե ովքե՛ր էին հրեաները և ի՛նչ հավատք ունեին, արդեն գիտենք։ Իսկ թե ովքե՛ր էին մովաբացիները, և ի՛նչ հակասություններ կային նրանց և հրեաների միջև, այդ մասին անդրադարձ կա թե՛ Սուրբ Գրքում և թե՛ մեկնիչների մոտ։

Մովաբացի՝ ազգ, գոյություն չուներ Աբրահամ նահապետի ժամանակներում։ Այդ ազգը և ամոնացիները սկսեցին ձևավորվել այն ժամանակներից, երբ թե՛ Աբրահամը, թե՛ նրա եղբորորդի Ղովտն արդեն մահացել էին։

*Ղովտի դերը շատ մեծ էր այդ ազգերի ծագման մեջ. երբ Ղովտն իր ընտանիքով փախչում էր Սոդոմից, նրա կինը, խախտելով հրեշտակների տված պատվերը, հետ նայեց Սոդոմի կողմը և աղի արձանի վերածվեց։ Ղովտը մենակ մնաց իր երկու աղջիկների հետ. իսկ նրանք Սոդոմի կործանումից առաջ այնտեղ փեսացուներ ունեին, պատրաստվում էին ամուսնանալ։ Եվ հիմա, զրկված փեսացուներից, տնից և ունեցվածքից, հույսները կտրած՝ աղջիկները դիմեցին պիղծ քայլի. **«Ղովտը ելավ Սեգորից և լեռը բարձրացավ, որովհետև վախենում էր մնալ Սեգորում։ Նրա հետ էին նաև իր երկու դուստրերը։ Ինքն ու իր երկու դուստրերը միասին բնակվեցին այդ լեռան մի քարայրում։ Ավագ դուստրն ասաց կրտսերին. «Մեր հայրը ծերացել է, և երկրում չկա մեկը, որ մեզ հետ պառկի, ինչպես ողջ աշխարհի կարգն է։ Արի՝ գինի խմեցնենք մեր հորը, պառկենք նրա հետ ու մեր հորից զավակ ունենանք»։ Նրանք իրենց հորը գինի խմեցրին այդ գիշեր։ Ավագ դուստրն այդ գիշեր պառկեց իր հոր հետ, իսկ Ղովտը չիմացավ նրա պառկելն ու վեր կենալը։ Առավոտյան ավագն ասաց կրտսերին. «Ես երեկ պառկեցի իմ հոր հետ։ Նրան այս գիշեր էլ գինի խմեցնենք, և դու մտի՛ր, պառկի՛ր նրա հետ, որ զավակ ունենանք մեր հորից»։ Այդ գիշեր էլ գինի խմեցրին իրենց հորը, և կրտսերը պառկեց իր հոր հետ։ Ղովտը չիմացավ նրա պառկելն ու վեր կենալը։ Ղովտի երկու դուստրերն էլ հղիացան իրենց հորից։ Ավագը ծնեց որդի և նրա անունը**

դրեց Մովաբ, որ նշանակում է «Իմ հորից»։ Նա է մովաբացիների նախահայրը մինչև այսօր։ Կրտսերը նույնպես ծնեց որդի և նրա անունը դրեց Ամման, որ նշանակում է «Իմ ազգատոհմի որդի»։ Նա է ամոնացիների նախահայրը՝ մինչև այսօր»[131]։

Այսպիսի անօրեն կապից ձևավորվեցին մովաբացիները՝ որպես ազգ։ Սրանց սերունդները չհետևեցին Ղովտի հավատքին, այլ ամբողջովին տրվեցին անօրեն կռապաշտության, ինչպես՝ երիքովցիները։

Ահա, նման ազգի մեջ էր բնակություն հաստատել Նոոմինն՝ իր բարեպաշտ ընտանիքով։ Եվ նա բավական զգուշավոր էր, որպեսզի դրանց անօրենություններից չվարակվեին նաև իր երիտասարդ զավակները։

Բայց տեսնում ենք, որ Նոոմինն իր որդիներին ամուսնացնում է մովաբացի կանանց հետ, ինչը կարող է նշանակել, որ Նոոմինն անտեսել էր Մովսեսի տված օրենքները և իր հայրերի Տեր Աստծո պատվիրանները։ Այդուհանդերձ, դեռ կտեսնենք, որ նա իրականում մնացել էր Աստծո հավատարիմ աղախին։

Այդ ժամանակներում շուրջբոլորը բազմաթիվ կռապաշտ ազգեր կային, որոնցից ոչ մեկի դստեր հետ հրեաները, ըստ օրենքի, չէին կարող ամուսնանալ։ Բայց այդ ազգերից ոչ բոլորն էին համարվում թշնամի։ Հրեաների համար թշնամական և ատելի էին ամաղեկացիները, առավել ևս ատելի էին մովաբացիները։ ***«Հռութը նույնիսկ եբրայեցի չի եղել, այլ՝ մովաբացի։ Իսկ մի՞թե չի ասվել օրենքում. «Ամոնացին ու մովաբացին իրավունք չունեն Տիրոջ ժողովարանը մտնելու, նրանց մինչև տասներորդ սերունդը թող հավիտեան Տիրոջ ժողովարանը չմտնի»[132]։ (Երկրորդ օր 23։3)։ Հռութը եղել է թշնամական և ատելի ժողովրդից»***[133]։

Ակնհայտորեն, իսրայելացիների համար մովաբացիները համարվել են թշնամի և ատելի ժողովուրդ։

Իսկ որտեղի՞ց այդ ատելությունը։ Երբ իսրայելացիները մոտենում էին Քանանի երկրին, Մովաբի թագավոր Բաղակը, տեսնելով, որ չի կարող նրանց դեմն առնել, որոշեց մեղքի մեջ ներքաշել իսրայելացիներին՝ հուսալով, որ նրանց մեջ պառակտում կգցի, եթե նրանցից ոմանք խախտեն երկնառաք օրենքները։

Բաղակը մովաբացի կանանց հրամայեց, որպեսզի գայթակղիչ հագուստներով մտնեն Իսրայելի բանակի մեջ՝ իրենց հետ վերցնելով կուռքերի արձանիկները և խունկ։ Եվ իսրայելացիներից ով ցանկանար նրանց հետ խառնակվել, պետք է նախ խնկարկեր այդ կուռքերին և զոհ մատուցեր դրանց։ Այդպես էլ եղավ. և շատերն ընկան շնության ու կռապաշ-

---

131 Ծննդ. 19:30–38:

132 Բ. Օր. 23:3:

133 Протоиерей Олег Стеняев, Беседы на Ежангелия от Матфея, т. I, Мсква 2013 г., ст. 20–21.

*տության մեղքի մեջ. «**Իսրայելացիները բանակատեղի դրեցին Սատիմում և պղծուեցին այնտեղ՝ մովաբացիների դուստրերի հետ պոռնկանալով։ Մովաբացի կանայք իսրայէլացիներին հրավիրեցին իրենց կուռքերի պատվին զոհ մատուցելու ծեսին։ Իսրայէլացիները կերան մովաբացիների մատուցած զոհերից ու երկրպագեցին նրանց կուռքերին։ Իսրայելացիները հարեցին Բելփեգորին, որի համար Տերը խիստ բարկացավ իսրայելացիների վրա**»[134]։*

Եվ իսկապես, այնպիսի պառակտում ընկավ իսրայելացիների մեջ, որ թողնելով թշնամուն՝ նրանք, սկսեցին միմյանց կոտորել, և քսանչորս հազար իսրայելացի սրախողխող ընկավ իր իսկ ազգակիցների կողմից։

Հետևապես, իսրայելացիները մովաբացիներին ատելու պատճառ իսկապե՛ս ունեին, հատկապես, որ նրանք պատվեր ունեին՝ մովաբացիներին չվնասել,[135] եթե իհարկե՝ նրանք չփակեին իսրայելացիների ճանապարհը[136]։

Նոոմինն էլ քաջատեղյակ էր, որ իրենց զավակներին, ըստ օրենքի, իրավունք չուներ ամուսնացնելու օտարազգի կռապաշտների հետ։ Քանզի հենց նման ամուսնությունների պատճառով էր, որ բարեպաշտ անձինք հեռանում էին Աստծուց՝ ընկնելով կռապաշտության մեղքի մեջ։ Մինչ Ջրհեղեղը՝ Սեթի բարեպաշտ սերունդը, հրապուրվելով կայենի անպարկեշտ կանանց գայթակղիչ տեսքից, խառնակվեց նրանց հետ, ինչի հետևանքով էլ ոչ թե այդ կանայք դարձան իրենց պես բարեպաշտ, այլ, ընդհակառակը, իրենք հեռացան Աստծուց, և Սեթի բարեպաշտ սերունդը ապականվեց։ Որպես արդյունք՝ հետևեց աշխարհակործան Ջրհեղեղը։

Սողոմոն թագավորն էլ, որ աստվածապաշտ էր և իմաստուն, որի կողմից գրված գրքերից մինչ օրս օգտվում են բարեպաշտության հետամուտ անձինք, նա բազմաթիվ կանանց առավ կնության, որոնցից շատերն՝ օտարազգի և կռապաշտության հետևորդ։ Նրանք այդ մեծ իմաստունին այնպես հրապուրեցին և մոլորեցրին, որ նա կատարեց իր կյանքի ամենաանմիտ քայլը. Աստվածապաշտության լուսավոր բարձրունքից գլորվելով՝ խոնարհվեց անարգ և ճղճիմ կուռքերի առջև... Հետո՛ միայն մեծ զղջմամբ և ապաշխարությամբ թողություն գտավ այդ ծանր մեղքի համար։

Նման դեպքեր շատ են տեղի ունեցել Իսրայելում։ Իսկ ամենացայտունը, հավանաբար, այն էր, որ Նոոմինի օրերից մոտ 700 տարի անց՝ իսրայելացիների մեծամասնությունը գերեվարվելով քաղդեացիների կողմից՝ Նաբուգոդոնոսոր արքայի հրամանով քշվեց Բաբելոն։ Իսկ տասնյակ տարիներ անց, երբ Արևելքում թագավոր էր արդեն Արտաշեսը, գերեվարվածներից մի իշխան՝ Նեեմին, Արտաշեսից իշխանություն ստացավ՝ ավերված Երուսաղեմը վերակառուցելու։ Երբ նա եկավ և գործի անցավ,

---

134 Թուեր 25:1–3:

135 Բ. Օր. 2:9:

136 Բ. Օր. 23:4

պարզվեց, որ տեղաբնակ հրեաները լրիվ անտեսել էին Մովսեսի տված օրենքները, և շատերն ամուսնացել էին օտարազգի կանանց հետ, այդ թվում՝ նաև մովաբացի, ինչը մեծ տրտմություն պատճառեց Նեեմիին. ***«Այդ օրերին էր դարձյալ, որ ես տեսա հրեաների, որոնք ազոտացի, ամոնացի և մովաբացի կանայք էին առել։ Նրանց որդիներն ու կանանցից ոմանք խոսում էին ազոտերեն, իսկ հրեերեն խոսել չգիտեին։ Ես նրանց նախատեցի, նզովեցի ու նրանցից շատերին ծեծեցի։ Աստծու անունով նրանց երդվեցրի, որ իրենց դուստրերին կնություն չտան նրանց որդիներին և նրանց դուստրերին էլ չբերեն իրենց որդիների համար։ Նրանց ասացի. «Միթե այդ պատճառով չէ՞ր, որ մեղանչեց Սողոմոն թագավորը։ Մեր բոլոր թագավորներից ո՞վ էր նրա նման իմաստուն. նա սիրելի էր Աստծուն, և Աստված նրան դրեց թագավոր՝ ամբողջ Իսրայելի վրայ։ Բայց Աստծուն սիրելի և իմաստուն այսպիսի մեծ թագավորին այլազգի կանայք խոտորեցրին ու գցեցին մեղքի մեջ։ Արդ, չլսե՛մ, թէ ձեզանից մեկն այսպիսի մեծ չարիք գործի՝ Աստծու առջև մեղանչի և այլազգի կին առնի»***[137]։ Այսպես խիստ էր օրենքն Իսրայելում։

Իսրայելացիները նույնիսկ մահապատժի սպառնալիքով իրավունք չունեին իրենց որդիներին թույլ տալ կռապաշտ մեկի մոտ աշխատանքի անցնել, քանզի դա արդեն իսկ համարվում էր պոռնկություն։ Էլ ո՞ւր մնաց՝ նրանց հետ ամուսնությունը. ***«Տերը խոսեց Մովսեսի հետ ու ասաց. «Խոսիր Իսրայելի որդիների հետ ու նրանց ասա՛. «Եթե որևէ իսրայելացի կամ իսրայելացիների մեջ բնակություն հաստատած որևէ պանդուխտ իր զավակներից որևէ մեկին ծառայության տա կռապաշտ իշխանի, նա պետք է մահապատժի ենթարկվի։ Այդ երկրի մարդիկ թող քարկոծեն նրան։ Ես իմ հայացքը կսևեռեմ նրա վրա և նրան կվերացնեմ իմ ժողովրդի միջից, քանի որ նա իր զավակներից մեկին կռապաշտ իշխանի ծառայությանը հանձնելով՝ պղծել է իմ սրբարանը և անարգել իմ սուրբ անունը։ Եթե տեղացի բնակիչները անուշադրության մատնեն իր զավակներից որևէ մեկին կռապաշտ իշխանի ծառայությանը հանձնած մարդու արարքն ու չսպանեն նրան, ապա Ես իմ հայացքը կսևեռեմ այդ մարդու և նրա ցեղի վրա, իր ժողովրդի միջից կվերացնեմ նրան ու նրա հետ բոլոր միաբանվածներին, ովքեր կռապաշտ իշխանի հետ պոռնկանալու պատճառ դարձան»***[138]։

Ուրեմն, ի՞նչ պատահեց, ինչպե՞ս բարեպաշտ և առաքինի Նոոմինն իր զավակների հետ գնաց այդ անօրեն քայլին։

Ստորև կտեսնենք, որ տվյալ հարցի պատասխանը կարող ենք ստանալ, եթե հարցը քննարկենք այն դաշտում, որտեղ իր պարզաբանումը ստացավ Ռահաբի պարագան։

---

137 Նէեմի. 13:23–27:

138 Ղեւտ. 20:1–5:

Եվ ուրեմն, ինչպես որ Ռահաբն էր իր ցեղակիցներով հաստատվել Երիքովում, այդպես և Մովաբում՝ Սաղեմի անկումից հետո հաստատվել էր սաղեմահայերի մի այլ գաղութ, որի ներկայացուցիչների հետ էլ Նոոմինը Մովաբում խնամիական կապ հաստատեց։

Նոոմինի պես բարեպաշտ կինն այդպես հեշտությամբ չէր խախտի Մովսեսի պատվիրանը և կռապաշտ հարսներ չէր բերի, այն էլ՝ Մովաբի թշնամական, պիղծ ու անօրեն ազգից։ Դրա համար էլ սաղեմահայերից կին բերեց իր զավակների համար՝ խրախուսվելով Ռահաբի և Սաղմոնի օրինակից, որոնց պատմությանը քաջածանոթ էր, քանզի, ինչպես նրանք, Նոոմինն ինքը ևս նույն Բեթղեհեմ քաղաքից էր։

Շատ բան է ասում այն դրվագը, որ Նոոմինը համոզում է իր հարսներին՝ իրեն չուղեկցել։ Հիշենք, որ Օրփան ետ է դառնում Մովաբ, իսկ Հռութը Նոոմինից չի բաժանվում։ ***«Նոոմինն ասաց Հռութին. «Ահա քո տագերակինը վերադարձավ իր ժողովրդի և իր աստվածների մոտ, դու էլ ե՛տ դարձիր քո տագերակնոջ հետևից»»***[139]*։ Նրանց խոսակցությունն ի հայտ է բերում որոշ ընդհանրություններ Ռահաբի և Հռութի միջև։*

Ինչպես Երիքովում, այդպես և Մովաբում սաղեմահայերի փոքրաթիվ համայնքը միայնակ մնալով օտար և կռապաշտ ժողովրդի մեջ, սկսել էր համակերպվել նրանց կենցաղին և նախանձախնդրություն չէին ցուցաբերում իրենց ազգային պատկանելությունը պահպանելու և հատկապես՝ իրենց հայրերի սուրբ հավատքը դավանելու համար։

Եվ ինչպես միայն Ռահաբն էր Երիքովի սաղեմահայության մեջ ամուր պահում Տիրոջը պաշտելը՝ Նրան դավանելը, այդպես Հռութը՝ Մովաբի սաղեմահայ գաղութի մեջ։

Հռութն իրեն միայնակ էր զգում թե՛ մովաբացիների և թե՛ անհոգության մատնված իր հարազատների մեջ։ Եվ միայն իր ազգակից ու բախտակից Օրփայի ընկերակցությամբ էր մխիթարվում այն պատմություններով, երբ Սաղեմը դեռ պատկանում էր իրենց նախնիներին, որտեղ տիրում էր բարեպաշտությունը, փառավորում և պաշտում էին այն Աստծուն, որ արարել էր երկինքն ու երկիրը։ Իսկ այդ պատմությունները պետք է որ Հռութի մեջ ամրապնդված լինեին՝ իր տատ ու պապերի շնորհիվ, որ, թերևս, մանկուց նրան կրթել էին՝ ըստ Սաղեմի կենցաղավարության։

Իսկ Օրփան, Հռութին ազգակից լինելով հանդերձ և նրանից լսելով նրա հորդորները՝ պահել հայրենական ավանդույթները, չուներ նրա ամուր հավատքը։ Նրանք ջանում էին իրենց հեռու պահել Մովաբի պղծաբարո երիտասարդությունից, ինչի պատճառով գուցե երբեք ընտանիք չկազմեին։

Հենց այդ անորոշության օրերին Բեթղեհեմից Մովաբ եկավ Նոոմինի ընտանիքը։ Դեռատի աղջիկները, տեսնելով, որ նրանք էլ դավանում

[139] Հռութ. 1:15:

են նույն Աստծուն, ուրախացան, և մտերմանալով նրանց հետ, ի վերջո, ամուսնության ուխտ կնքեցին իրենց հավատակիցների հետ:

Նոոմինի հորդորով Օրփան հեռացավ: Նա Մովաբում չուներ համախոհ: Մնում էին միայն սաղեմահաս, սակայն ինչոր չափով կռապաշտությանը հարած հարազատները: Այս գիտենալով՝ Նոոմինն ասաց Հռութին. ***«Ահա՝ քո տագերակինը վերադարձավ իր ժողովրդի և իր աստվածների մոտ, դու էլ ե՛տ դարձիր քո տագերակնոջ հետևից»:***

Սակայն Հռութի պատասխանի մեջ զարմանք է նշմարվում, թե ինչպե՞ս է իրեն համեմատում Օրփայի հետ. մի՞թե ինքը նրա պես անհաստատ է Տիրոջ ճանապարհների մեջ. ***«Հռութն ասաց. «Ես չեմ թողնի քեզ և չեմ հեռանա քեզնից. ուր էլ որ դու գնաս, ես էլ կգնամ, որտեղ էլ որ մնաս, ես էլ կմնամ: Քո ժողովուրդն իմ ժողովուրդն է, և քո Աստվածն իմ Աստվածն է: Որտեղ որ դու մեռնես, այնտեղ էլ ես կմեռնեմ և կթաղվեմ. թող Տերը այսպես և սրանից ավելին անի ինձ. միայն մահը կբաժանի ինձ քեզանից»*** [140]:



Այստեղ Հռութը հստակ ասում է, որ Նոոմինի պաշտած նույն Աստծուն է ինքը՝ Հռութը պաշտում և աներկբա երդվում է հենց Տիրոջով, Որին դավանում էին երկուսն էլ՝ ի տարբերություն Բահաղ, Աստարովթ և այլ կուռքերի պաշտող քանանաբնակ ազգերի:

Իսկ երբ Հռութն ասաց նաև՝ ***«քո ժողովուրդն իմ ժողովուրդն է»***, դրա պարզաբանման համար ստորև շատ հետաքրքիր բացահայտում կա:

Պետք է ասել, որ Աստվածաշունչ մատյանի հայերեն թարգմանությունում, նաև հին հունական, լատինական (վուլգատա), սլավոնական և այլ հին թարգմանություններում Հռութի խոսքը հստակ գրված է ***«Քո ժողովուրդն իմ ժողովուրդն է, և քո Աստվածն իմ Աստվածն է»***: Իսկ արդեն ժամանակակից ռուսերեն սինոդալ և բողոքական թարգմանություններում գրված է. ***«Քո ժողովուրդն իմ ժողովուրդը կլինի, և քո Աստվածը՝ իմ Աստվածը»:***

Իսկ ինչո՞ւ են այսպես շեղվել բնագրից: Որովհետև կարծել են, թե միտքը ճիշտ չի արտահայտված և ցանկացել են խմբագրել այն, քանզի մտածել են, թե ինչպե՞ս կարող է կռապաշտ մովաբուհու աստվածը լինի բարեպաշտ հրեուհու Աստվածը: Սուրբ Գրքում քիչ չեն այնպիսի համարները, որոնք տարակուսանքի են մատնել մեկնիչներին, քանզի նման համարներից որոշների բացահայտումը, ինչպես տեսանք, հնարավոր է

[140] Հռութ 1:16–18:

դառնում միայն Հայոց հնագույն պատմության և հնագիտության տեղեկություններից օգտվելու դեպքում: Այդպես է նաև Աստվածաշնչյան այս համարի հարցը:

Հութ և Բոnu

«Հայը միշտ առավել լրջությամբ է վերաբերվում սեփական հավատքի ու ազգի հարցերին»[141]:

Նոոմինն ու Հռութը, ի վերջո, գալիս են Բեթղեհեմ: Իրավիճակն այստեղ առանձնապես մխիթարական չէր. Նոոմինի հողամասն անմշակ էր մնացել, բնակարանն էլ խարխլվել էր:

Սակայն Բեթղեհեմում Նոոմինի ամուսնու՝ Ելիմելեքի ազգականներից մեծահարուստ մեկը, լսելով նրանց վերադարձի և գլխով անցածների մասին, պատվիրում է իր ծառաներին, որ հոգատար լինեն նրանց հանդեպ:

Գլխավերևում ծածկ ունենալուց բացի՝ նրանք պետք է նաև իրենց ապրուստը հոգային: Հնձի ժամանակն էր, և Հռութը որոշում է գնալ արտերը, հասկ հավաքել:

*Նա այս դրվագում նմանվում է Մովսես մարգարեին: Ինչպես Մովսեսն արհամարհեց աշխարհային փառքն ու հարստությունը, այդպես և Հռութը մերժեց Մովաբի նյութական բարիքները՝ նախընտրելով չարքաշ կյանքը, միայն թե ապրեր Աստծուն պաշտող ժողովրդի հետ. **«Հավատո՛վ է, որ Մովսեսը, երբ մեծացավ, մերժեց Փարավոնի դստեր որդի կոչվել. նախընտրեց չարչարվել Աստծու ժողովրդի հետ, քան միառժամանակ մեղապարտ հաճույքներ վայելել»[142]:***

*Այնպես ստացվեց, որ Հռութն այն արտի մեջ սկսեց հավաքել հասկերը, որը պատկանում էր Ելիմելեքի հարուստ ազգականին: Իմանալով, որ նա Նոոմինի հարսն է, այդ հարուստ ազգականը պատվիրում է իր հնձվորներին, որ նրան չնեղացնեն, և մոտենալով Հռութին՝ հորդորում է, որ ուրիշ արտ չգնա, այլ իր արտից օգտվի և կերակրվի իր աշխատողների հետ: Եվ ավելացնում է. **«Ինձ պատմել են այն ամենը, ինչ որ արել ես դու քո սկեսրոջ համար ամուսնուդ մահվանից հետո. թէ ինչպես թողել ես քո հորն ու մորը, քո ծննդավայրը և եկել ես այն ժողովրդի մոտ, որին առաջ չէիր ճանաչում: Քո արածի համար թող Տերը հատուցի քեզ, թող քո վարձն անպակաս լինի Իսրայելի Տեր Աստծու կողմից, Որին դու դիմել***

[141] Франц Николаус Финк.

[142] Եբր. 11:24–25:

ես Նրա թևերի տակ ապաստան գտնելու համար»[143]***։***



Հետաքրքիր է, որ այդ հրեա իշխանը, տեղյակ լինելով նրանց պատմությանը, հատուկ շեշտում է, որ Հռութի սխրանքը ոչ միայն Նոոմինին մենակ չթողնելու մեջ էր, այլ՝ որ նա հանուն Աստծո՝ թողել էր բարվոք կյանքով ապրող, սակայն աստվածպաշտության մեջ անտարբեր դարձած իր սաղեմահայ ընտանիքը։

Հռութը, տուն գալով, պատմում է արտի տիրոջ լավ վերաբերմունքի մասին, Նոոմինը հետաքրքրվում և իմանում է, որ նա այն Բոոսն է, որի հայրը Հուդայի ցեղի իշխան Սաղմոնն էր, իսկ մայրը՝ սաղեմահայուհի Ռահաբը։ Նման հանդիպումը, իհարկե, կարող էր լինել միայն Նախախնամության կամոք։ ***«Նոոմինի ամուսինը մի ազգական ուներ՝ մեծ կարողության տեր մի մարդ՝ Ելիմելեքի ազգից։ Նրա անունը Բոոս էր։ Նա այրի Նոոմինին տուն տվեց, որ բնակվի նրա մեջ։ Մովաբացի Հռութն ասաց Նոոմինին. «Գնամ արտը և ում մոտ բարեհաճություն գտնեմ, նրա հետևից հասկեր հավաքեմ»։ Նա ասաց նրան. «Գնա՛, աղջի՛կս»։ Նա գնաց և մտնելով արտի մեջ՝ հասկ էր հավաքում հնձողների հետևից. և այնպես պատահեց, որ նա ընկնի արտի այն մասը, որը Ելիմելեքի ազգական Բոոսինն էր»***[144]***։***

Տեսնում ենք, որ այդ արտում հանդիպեցին Հայկ նահապետի արյունն իրենց մեջ կրող երկու անձինք։

Իսկ եթե Նոոմինի ամուսին Ելիմելեքը Բոոսի ազգականն էր, շատ հավանական է, որ նա ոչ թե Սաղմոնի ազգական էր այլ հենց Բոոսի մոր՝ Ռահաբի։ Այսինքն, նա էլ այն սաղեմահայերից էր, որ բնակություն էին հաստատել Բեթղեհեմում։

Ուրեմն, Ելիմելեքը սովից խուսափելու համար գնաց Մովաբ՝ այնտեղ բնակվող իր ազգակից սաղեմահայերից լուր ստանալով, որ Մովաբում վիճակը լավ է, և որ իրենք կարող են գնալ և սովի տարիները հաղթահարել իրենց ազգակից սաղեմահայերի աջակցությամբ։ Ուրեմն, Քանանի տարբեր վայրերում ապաստան գտած սաղեմահայ համայնքների միջև հաղորդակցական կապ է եղել, ինչից էլ ավելի տրամաբանական է դառնում այն, որ Ելիմելեքի և Նոոմինի զավակները կին առան հենց իրենց ցեղակիցներից, այլ ոչ թե՝ բնիկ մովաբացիներից, ինչի համար էլ Հռութն

---

143 Հռութ. 2:11–12:

144 Հռութ. 2:2–3:

*ասաց **«Քո ժողովուրդն իմ ժողովուրդն է»**։ Եվ քանի որ իրենց նույն նախահոր՝ Հայկ-Մելքիսեդեկի Աստծուն էին պաշտում, դրա համար ավելացրեց նաև **«և քո Աստվածն իմ Աստվածն է»**։*

Այդպես, մինչ հնձի ավարտը, Հռութն աշխատեց Բոոսի արտերում։ Նոոմինը Հռութին պատմեց Իսրայելում գործող մի սովորույթի մասին՝ ըստ որի, եթե մեկը մահանում էր և ժառանգ չէր թողնում, նրա ամենամերձ ազգականը պետք է ամուսնանար այդ այրի կնոջ հետ, որպեսզի ժառանգ հաներ այդ ազգականի համար։ Իսկ քանի որ Բոոսն իրենց ազգականն էր, ապա նա՛ էլ, եթե ցանկանար, այդ պարտավորությունը կարող էր ի կատար ածեր, եթե իրենից ավելի մերձ ազգական չգտնվեր։

*Իսկ այդ ժամանակ Սաղմոնը և Ռահաբը, հավանաբար, կա՛մ խորը ծերության էին հասել, կամ էլ՝ արդեն կնքել էին իրենց մահկանացուն, քանզի նրանց առաջնեկը՝ Բոոսը վաղուց արդեն երիտասարդ չէր. նա, հավանաբար, եղել է ավելի քան 60 տարեկան։ **«Նոոմինն, ուրախանալով այս ամենով և այստեղ տեսնելով Տիրոջ հատուկ նախախնամությունը, Հռութին բացատրեց, որ նա իրավունք ունի ամուսնանալ Բոոսի հետ, քանի որ նա իր ամուսնու մերձավոր բարեկամն է»**[145]։*

*Լսելով Նոոմինի խորհուրդը՝ Հռութը խոնարհաբար ընդունում է այդ առաջարկը և ըստ նրա պատվերի՝ գիշերով հունձքի վայրում մոտենում է քնած Բոոսին և պառկում նրա ոտքերի մոտ. **«Կես գիշերվա մոտ մարդը վախեցավ, շփոթվեց և տեսավ, որ իր ոտքերի մոտ մի կին է պառկել։ Ասաց. «Ո՞վ ես դու»։ Նա ասաց. «Ես քո աղախին Հռութն եմ։ Քո քղանցքը տարածի՛ր քո աղախնի վրայ, որովհետև դու իմ ազգականն ես»։ Բոոսն ասաց. «Օրհնեալ լինես դու Տեր Աստծուց, աղջի՛կս, որովհետև քո այս վերջին բարեգթությունն ավելին է, քան առաջինը, քանի որ աղքատ կամ հարուստ երիտասարդների հետևից չգնացիր։ Հիմա, աղջի՛կս, մի՛ վախեցիր, ինչ որ ասես ինձ, բոլորը կանեմ քեզ համար, որովհետև իմ ժողովրդի բոլոր ցեղերը գիտեն, որ դու զորավոր կին ես»**[146]։*

*Եվ քանի որ կար Նոոմինին ազգակցական կապով ավելի մոտ մի մարդ, Բոոսը խոսեց նրա հետ և ստացավ նրա՝ Հռութի հետ ամուսնանալուց հրաժարվելու հրապարակային խոսքը. և երբ այդ հարցը ևս լուծված էր, Բոոսը Հռութին կնության առավ. **«Հաջորդ առավոտ նա կանչեց քաղաքի ծերերին և նրանց առաջ հայտարարեց, որ ինքը՝ որպես Հռութի մահացած ամուսնու ազգական, մտադիր է կատարել տեգրության օրենքը... Ամուսնությունը հաստատվեց քաղաքի ծերակույտի կողմից, որ օրհնեց նրան»**[147]։*

Այսպիսով, Բոոսը և Հռութն իրենց ընտանեկան կյանքն սկսեցին

---

145 А. П. Лопухин, “Библейская История Бетхого Завета”, Монреаль 1986 г., ст. 203.

146 Հռութ. 3:8:11:

147 А. П. Лопухин, “Библейская История Бетхого Завета”, Монреаль 1986 г., ст. 203–204.

*Սաղմոնի և Ռահաբի կողմից կառուցած իշխանական տանը, այդտեղ բնակություն հաստատեց նաև Նոոմինը. **«Բոոսը դարձավ Հռութի ամուսինը և Ելիմելեքի ժառանգության օրինական տերը: Ամուսիններն իրենց տանը օթևան տվեցին պառավ Նոոմինին և միասին ապրեցին շատ երջանիկ»**[148]:*

Անհամատեղելիություն

Եթե Հռութն իսկապես մովաբացի կռապաշտ մեկը լիներ, և նա՝ որպես այդպիսին, իսկապես ամուսնացած լիներ Մովաբում ապրող հրեա երիտասարդի հետ, դա դեռ ինչ- որ տեղ կարելի է պատկերացնել: Բայց նման բանն արդեն բացարձակ անհնար է դառնում այս պարագայում, երբ նման կինը ամուսնանում է արդեն բուն Հրեաստանի Բեթղեհեմ քաղաքում ապրող հրեա մի իշխանի հետ:

Նախ ասենք, որ նման կնոջ հետ Հրեաստան գալն արդեն իսկ լրիվ անթույլատրելի բան էր, քանզի բոլոր բեթղեհեմացիները կխորշեին նրանից և հատկապես Նոոմինին կարհամարհեին, այլ ոչ թե կկարեկցեին:

*Որոշ հրեական մեկնիչներ նույնիսկ համարում են, որ հենց կռապաշտ մովաբուհիների հետ ամուսնանալու պատճառով է, որ Նոոմինի երկու որդիները պատժվեցին. **«Ամուսնությունը այլազգի և կռապաշտ կանանց հետ՝ արգելված էր օրենքով (Ելք 36:16, Բ Օր 7:3), հատկապես մովաբացիների հետ, (Բ Օր 23:3, և Դատ. 10:6), թարգումը և ընդհանրապես հրեական ավանդությունը դա է համարում Մաալոնի և Քելլոնի վաղաժամ և անզավակ մահվան պատճառը»**[149]:*

*Սակայն եթե նման բան լիներ, այսինքն՝ իր զավակներին ամուսնացրած լիներ մովաբուհիների հետ, Նոոմինը կընդուներ իր սխալը և մեղա կգար՝ իրեն համարելով այդ ամենի պատճառը՝ այսինքն մեղանչումը Մովսեսի օրենքի դեմ: Սակայն մենք տեսնում են, որ Նոոմինը տարակուսանքի մեջ էր և չէր կարողանում հասկանալ, թե ինչու Տերը թույլ տվեց, որ իր երկու որդիները վաղաժամ մահանան: Քանզի երբ եկավ Բեթղեհեմ, բոլորն ուրախացան, որ Նոոմինը վերադարձավ: Իսկ Նոոմինը նրանց ասաց. **«Ինձ Նոոմին մի՛ կոչեք, այլ կոչեցե՛ք Դառնացած, որովհետև Ամենակարողը խիստ դառնացրեց ինձ: Լիքը գնացի, բայց Տերը դատարկ վերադարձրեց ինձ. հիմա ինչո՞ւ էք ինձ Նոոմին կոչում: Տերն ինձ նկուն դարձրեց, և Ամենակարողը չարչարեց ինձ»**[150]:*

---

148 Ջ. Կոսիդովսկի, «Բիբլիական ավանդապատումներ», Երևան 1980 թ., էջ 273:

149 Лопухин А. П., Толкова Библия, Т 2, Петербургъ 1905 г., ст. 213.

150 Հռութ 1:20–21:

*Տեսնում ենք, որ Տիրոջ անունը Նոոմինի շուրթերին է, քանի որ նա Տիրոջ հավատարիմ աղախին էր: Դրա համար էլ տարակուսանքի մեջ էր, քանզի ոչ մի մեղք գործած չլինելով՝ նա նման դժբախտությունների արժանացավ: Սակայն հիշենք, որ նման դեպքերը Սուրբ Գրքում եզակի չեն, որի ամենաակնառու օրինակը Հոբ Երանելու դեպքն էր. երբ այդ տառապանքների ամենաաստվածապաշտ և հավատարիմ մարդը՝ Հոբը, Աստծո թույլատու կամոք ահավոր պատուհասների և դժբախտությունների կրող դարձավ, որպեսզի փորձություններ կրի, որպեսզի երևա, թե որքան է նրա հավատարմությունն ու համբերությունը: Հոբը կորցրեց ոչ միայն իր մեծ հարստությունը և առողջությունը, այլև իր տասը զավակներին: Սակայն նա կարողացավ մնալ հավատարիմ և չտրտնջաց Երկնքի դեմ, այլ իր բոլոր կորուստների համար ասաց. **«Իմ մոր որովայնից ես մերկ դուրս եկա, մերկ էլ կվերադառնամ: Տերը տվեց, Տերն էլ հետ առավ: Ինչպես որ հաճելի էր Տիրոջը, այնպես էլ եղավ: Թող օրհնեալ լինի Տիրոջ անունը»**[151]:*

Բայց այդ փորձությունների վերջում Հոբն ավելի մեծ օրհնությունների արժանացավ Տիրոջ կողմից՝ հավիտենական օրինակ դառնալով Աստծո ճանապարհով քայլող բարեպաշտ անձանց համար՝ ըստ այնմ, որ փորձությունները համբերությամբ և հավատարմությամբ կրողները վերջում արժանանում են մեծագույն շնորհների, ինչը և եղավ շատերի, մասնավորապես՝ նաև Նոոմինի հետ:

*Եվ ուրեմն, բացառվում էր, որ բարեպաշտ Բոոսը կնության առներ այնպիսի մի կնոջ, որի պատճառով տարաժամ կյանքից հեռացած լիներ նրա ամուսինը. մի կնոջ, որ ոչ միայն ինքն, այլև նրանից սերված տասը սերունդ իրավունք չունեին Աստծո ժողովարանը մտնել: Իսկ որ քաղաքի բարեպաշտ ծերերը օրհնում են նման ամուսնությունը, դա ևս մեկ անգամ ապացուցում է, որ այդ ամուսնությամբ չեն խախտվել բարեպաշտության օրենքները, քանզի Բոոսն ամուսնացավ ոչ թե կասկածելի անցյալ ունեցող մովաբուհու հետ, այլ իր մոր՝ սաղեմահայ Ռահաբի բարեպաշտ ազգակցի. **«Ամուսնությունը հաստատվեց ծերերի կողմից, որոնք օրհնեցին նրան, նորապսակներին մաղթեցին երջանկություն և բարգավաճ կյանք: Այդ ամուսնությունը օրհնված էր Աստծո կողմից»**[152]:*

Մեր Տեր Հիսուս Քրիստոսը ծնվեց հենց այս նույն քաղաքում՝ Բեթղեհեմում: Սակայն սուրբ ընտանիքը այստեղ մնաց շատ կարճ ժամանակ, քանզի հայտնի պատճառներով Նրանք հեռացան Եգիպտոս, իսկ այնտեղից վերադառնալով՝ բնակություն հաստատեցին Նազարեթ քաղաքում: Այդ պատճառով էլ Տիրոջն անվանում էին Նազովրեցի:

Երբ Նաթանայելին՝ հայոց Բարդուղիմեոս առաքյալին, Փիլիպպոսն

---

151 Յոբ. 1:20–23:

152 Лопухин А. П. Библейская история Ветхого и Нового Заветов. Полное издание в одном томе, Москва 2009 г., ст. 325–326.

ասաց, որ գտել են Քրիստոսին, ով Նազարեթ քաղաքից է, զարմացած Նաթանայելն ասաց. **«Իսկ կարելի՞ է, որ Նազարեթից մի որևիցե լավ բան դուրս գա»**[153]։

Փարիսեցիները և քահանայապետներն էլ երբ ցանկանում էին հակառակվել Տիրոջ կողմնակիցներին, ասում էին՝ եթե քննեն, կտեսնեն, թե հնարավոր չէ, որ Նազարեթից գա Օծյալ Փրկիչը, քանզի գրված էր, որ Նա պետք է լինի Բեթղեհեմից։ Հրեաները չգիտեին, որ Տերը Նազարեթում եկվոր էր, և որ Նրա ծննդավայրը Բեթղեհեմն էր։

Այդպես է նաև Ռահաբի ու Հռութի դեպքում. նրանք էլ եկվոր էին այդ քաղաքներում, ինչի համար էլ երբ նրանց անվանում էին երիքովցի կամ մովաբացի, դա չէր նշանակում, թե նրանք այդ ազգերից էին սերված, ինչպես որ Ղովտի պարագայում էր։ Քանզի լինելով Սոդոմից՝ նա որևէ արյունակցական կապ չուներ նրանց հետ. Ղովտը ծնունդով քաղդեացիների Ուր քաղաքից էր։ Հռութն ու Ռահաբն էլ, ծագումով լինելով սաղեմահայ, դեպքերի բերումով հայտնվել էին կռապաշտության մեջ խրված ցեղերի մեջ, ինչի համար էլ մեկնիչները զարմանք են հայտնում՝ նրանց տեսնելով Աստծո Որդու ազգաբանության մեջ. **«Քրիստոնեական պատմաբան Ուիլյամ Բարկլին գրել է «Ամենաապշեցուցիչն ազգաբանության մեջ՝ կանանց անվանումներն են։ Հրեական ազգաբանություններ մեջ ծայրահեղ հազվադեպ են հանդիպում կանանց անվանումներ։ Կանայք չեն ունեցել իրավաբանական իրավունք։ Նրանց նայել են՝ ոչ որպես մարդու, այլ՝ որպես առարկայի։ Կինը եղել է հոր կամ ամուսնու սեփականությունը. նրանք կարող էին վարվել նրա հետ, ինչպես կամենային։ Ամենօրյա առավոտյան աղոթքներում հրեան գոհություն էր հայտնում Աստծուն, որ Նա իրեն չէր ստեղծել հեթանոս, ստրուկ կամ կին։ Ընդհանրապես, արդեն այդ անվանումների գոյությունն իսկ ազգաբանության մեջ իրենից ներկայացնում է արտակարգ զարմանալի և անսովոր ֆենոմեն։ Սակայն եթե նայենք այդ կանանց՝ թե ովքեր են եղել և ինչ են նրանք արել, ստիպված պետք է լինենք՝ ավելի շատ զարմանալ»**[154]։



Եթե այս և մյուս մեկնիչներն իմանային, որ Ռահաբը և Հռութն ազգությամբ եղել են սաղեմահայ բարեպաշտներ, գոնե նրանց հարցում զարմանալու պատճառ առանձնապես չէին ունենա. **«Որովհետև չկա բարի ծառ, որ չար պտուղ տա. և դարձյալ՝ չկա չար ծառ, որ բարի պտուղ տա.**

153 Յովհ. 1:46:

154 Протоиерей Олег Стеняев, Беседы на Евангелия от Матфея, т. I, Москва 2013 г., ст. 20.

որովհետև յուրաքանչյուր ծառ իր պտղից է ճանաչվում»[155]*։*

Եվ ուրեմն, չէր կարող չար Երիքովը Ռահաբի, իսկ պիղծ Մովաբը Հռութի նման բարի պտուղներ տալ։

Ռահաբը կամ Հռութը, եթե կռապաշտ ու անօրեն ազգերից սերված լինեին, չէին կարող ամուսնանալ հրեա իշխանների հետ թե՛ տեսականորեն և թե՛ գործնականում. դա միանգամայն բացառվում է։

Բայց տեսնում ենք, որ Հռութն էլ ինչպես Ռահաբը ամուսնանալով հրեա իշխանի հետ, Նախախնամության կամոք արժանացավ մտնելու Տիրոջ ազգաբանության մեջ։ ***«Մովաբացի Հռութը դառնում է այն ընձյուղը, որը պատվաստելով Հուդայի տոհմածառին՝ պետք է առաջացներ ընտրյալ ժողովրդի արքայական տոհմի այն ճյուղը, որից մարմնացավ Աստծո Խոսքը, մարդկության Քավիչը»***[156]*։*

Խորհուրդ մեծ և սքանչելի

«Եթե քրիստոնեական ավանդություններում կարելի լիներ սուրբերի դասին կարգել ոչ միայն մարդկանց, այլև՝ երկրները, ապա առաջին այդպիսի երկիր կդառնար Հայաստանը։ Հենց այդպե՛ս։ Եթե աշխարհում կա սուրբ երկիր, ապա դա Նոյի երկիրն է, առաջին քրիստոնեության երկիրը. երկիրն՝ անվերջանալի տաճարների և վանքերի. Հայաստանը»[157]*։*

Այժմ այս ենթագրքի նյութերն ի մի բերելով՝ տեսնենք այն հրաշափառ արդյունքը, ինչը հազարավոր տարիներ ծածկված է եղել խորհրդավորության շղարշի տակ, ինչպես առաջին գրքում Հայկ-Մելքիսեդեկ նահապետի պարագայում էր։

Նախ հիշենք, որ բարեպաշտ հայուհի Ռահաբն, ամուսնանալով հրեա իշխան Սաղմոնի հետ, մտավ Փրկչի ազգաբանության մեջ. ***«Իսկ ինքը՝ Ռահաբը, ամուսնացավ Հուդայի իշխան Սաղմոնի՝ Հիսուս Քրիստոսի մարմնապես նախահոր հետ»***[158]*։*

Հենց այս պատճառով էլ Ռահաբին սկսեցին համարել Փրկչի նախամայր. ***«Ռահաբը դարձավ Սաղմոնի կինը և նախամայրը՝ Հիսուս Քրիս-***

---

155 Ղուկ. 6:43–44:

156 К. Л. Кустодиев (протоирей), Опытъ истории Библейской женщины, Санктпетербургъ 1870 г., ст. 138.

157 Էմիր Կուստուրիցա, հարավսլավական և սերբական կինոռեժիսոր.

158 К. Л. Кустодиев (протоирей), Опытъ истории Библейской женщины, Санктпетербургъ 1870 г., ст. 107.



տոսի»[159]*։*

Իսկ Ռահաբի և Սաղմոնի որդին՝ մայրական կողմից հայ բարեպաշտ Բոոսն ամուսնացավ բարեպաշտ հայուհի Հռութի հետ։

Այդպիսով, սաղեմահայ Հռութը դարձավ սաղեմահայ Ռահաբի հարսը՝ նրա պես մտնելով Տերունական ազգաբանության մեջ։ ***«Եվ Հռութից սերվեց Դավթի տան ազգը, և նրա զավակից ծնվեց Քրիստոս Արքան»***[160]*։*

Եվ ուրեմն, այս երկու զարմանալի հայուհիները՝ Հայկ նահապետի բարեպաշտ և ընտրյալ դուստրերն, արժանացան մեծագույն պատվի՝ հիշվելով որպես Աստծո Որդու նախամայրեր։

Պարզաբանելով Ռահաբի և Հռութի՝ ով և ինչպիսին լինելը՝ Տիրոջ շնորհին ապավինած՝ անցնենք առաջ։

Հռութի և Բոոսի ամուսնությունից ծնվեց իրենց անդրանիկ զավակը՝ Օբեդը։ Եվ քանի որ Օբեդը, Հռութի որդին էր և հայուհի Ռահաբի թոռը, ստացվում է, որ Օբեդն ավելի հայ էր, քան հրեա. քանզի նրա հայրը կես հրեա և կես հայ Բոոսն էր, իսկ մայրը՝ զտարյուն հայուհի Հռութը։ Ուրեմն Օբեդի մեջ հայկական արյունը շատ ավելի գերակշռում էր հրեականին, և նա էլ Տերունական ազգաբանության մեջ, բնականաբար, իր պատվավոր տեղն ունեցավ։

Օբեդը մի որդի ունեցավ, ում անվանեցին Հեսսե, Հեսսեն էլ իր հերթին որդիներ ունեցավ, որոնցից կրտսերին անվանեց Դավիթ, ով դարձավ Իսրայելի փառապանծ արքան։ ***«Եվ Բոոսը կին առավ մովաբացի Հռութին և նրանից ծնեց Օբեդին, և Օբեդը ծնում է Հեսսեին, Հեսսեն ծնում է Դավթին»***[161]*։*

Եվ ուրեմն, Օբեդի թոռ՝ սաղմոսերգու Դավիթ արքան իր մեջ կրում էր թե՛ հայկական և թե՛ հրեական արյուն. ***«Ռահաբն ամենակարող ճշմարիտ Աստծո հանդեպ ունեցած իր հավատքի շնորհիվ պարգևատրվեց՝ ընտրյալ ժողովրդի համայնքում ընդունվելով... Ամուսնանալով Սաղմոնի հետ՝ նա դարձավ Բոոսի՝ Դավթի նախապապի մայրը»***[162]*։*

«Բոոսն ամուսնացավ նրա (Հռութի) հետ, և նրանից ծնվեց Օբեդը՝ Հեսսեի հայրը, որից էլ ծնվեց Դավիթը։ Այսպիսով՝ մովաբացի Հռութը

---

159 “Библейский Словар”, Доктор Эрик Нюстрем 19-й в. ст. 367, изд. 1989 Cov.

160 Սբ. Մովսես Խորենացի, «Աստվածաբանական երկեր», Ս. Էջմիածին, 2007 թ., էջ 16:

161 Սբ. Մովսես Խորենացի, «Աստվածաբանական երկեր», Ս. Էջմիածին, 2007 թ., էջ 14:

162 Лопухин А. П., Библейская история Ветхого и Нового Заветов. Полное издание в одном томе, Москва 2009 г., ст. 281.

դարձավ Քրիստոսի նախամայրը»[163]*։*



Դավիթն, ինչպես տեսանք, ուներ նաև հայկական արմատներ, Աստծո ընտրյալն էր և սիրելին, հզոր թագավոր և Աստվածապաշտ. նա իր ամբողջ սրտով և հոգով նվիրված էր իր սուրբ նախապապերի՝ մեծ նահապետներ Հայկ-Մելքիսեդեկի և Աբրահամի պաշտած Աստծուն։

*Եվ Դավիթն էլ իր լուսավոր տեղն ունեցավ Աստվածորդու ազգաբանության մեջ. **«Մննդաբանության գրքի մեջ ասվում է (4։17-22), որ Հռութից ծնվել է Օբեդը, Օբեդից ծնվել է Հեսսեն, իսկ Հեսսեից՝ Դավիթը։ Հռութի գրքի և ամբողջ Հին Կտակարանի հիմնական նպատակն այն է, որ ցույց տա Քրիստոսի սերումը Դավթի տնից՝ որպես աշխարհի Փրկչի, թագավորների Թագավորի և տերերի Տիրոջ»***[164]*։*

Դավիթը հեղինակն է Աստվածաշնչյան սաղմոսների, որ շուրջ 3000 տարի երգվում և ընթերցվում են համայն քրիստոնյա եկեղեցիներում՝ մինչ օրս։ Նա իր սաղմոսագրքում ունի նաև Մեսիական բնույթի սաղմոսներ, որ դեռ Դավթի օրերից մարգարեաբար պատմում էին Տիրոջ՝ մեր Տեր Հիսուս Քրիստոսի գալստյան մասին, Ով մարմնով լինելու էր Դավթի օրհնյալ ճյուղից։

Տերը Դավթի օրերից մոտ 1000 տարի հետո մարդացավ՝ գալով աշխարհ։ Եվ Նրան՝ Քրիստոսին, հաճախ անվանում էին Դավթի Որդի[165]*, քանզի մարգարեություններն արդեն իսկ տեղեկացրել էին, որ Փրկիչը պետք է գա Դավթի տանից։*

*Իհարկե, մենք աներկբա պետք է ընդունեք, որ Տերն՝ անսկիզբ և անվախճան Աստվածը, մեր փրկության համար իջնելով աստվածային անմերձենալի փառքերից՝ մարմին առավ Սուրբ Կույս Մարիամից, ով ազգաբանությամբ Դավթի տնից էր, ինչի համար էլ, երբ Գաբրիել հրեշտակապետը, որ շնորհընտիր կույսին ավետում էր այդ լուրը, ասաց. **«Եվ ահա՛ դու կհղիանաս և կծնես մի Որդի, ու նրա անունը Հիսուս կդնես։ Նա մեծ կլինի և Բարձրյալի Որդի կկոչվի։ Եվ Տեր Աստված նրան կտա նրա հոր՝ Դավթի աթոռը»***[166]*։*

Բայց Տիրոջ մարմնավոր՝ մարդկային ծագման հարցում հիշատակ-

---

163 Библейский Словарь, Доктор Эрик Нюстрем 19-й в. ст. 377, изд. 1989 Cov.

164 Генри Г. Геллей, Краткий библейский толкователь, Торонто – Канада, 1989 г., ст. 183.

165 Մատթ. 20:30:

166 Ղուկ. 1:31–32:

*վում է ոչ միայն Դավիթը, այլև նրա հայրը՝ Հեսսեն. **«Այն օրը հեթանոսներն իրենց հույսը դնելու են Հեսսեի արմատի վրա, որն իշխան է կանգնելու հեթանոսներին, և նրա հանգիստը փառահեղ է լինելու»**[167]։*

*Սակայն հետաքրքիրն այն է, որ խոսքը ոչ թե հենց Հեսսեի, այլ նրա արմատի մասին է. **«Հեսսեի արմատից գավազան պիտի ընձյուղվի, ծաղիկ պիտի բուսնի այդ արմատից։ Նրա վրա պիտի իջնի Աստծո Հոգին, իմաստության և հանճարի Հոգին, խորհրդի ու զորության Հոգին, գիտության և աստվածպաշտության Հոգին. Աստծո երկյուղի Հոգին պիտի լցնի այն»**[168]։*

Սրանից պետք է եզրակացնել, որ Հեսսեի արմատը պետք է լինի հենց իր հայրը՝ Օբեդը, իսկ արմատի վրա ծառի բունը՝ Հեսսեն, ճյուղը՝ Դավիթը, իսկ ծաղիկն՝ արդեն Քրիստոս։ Ուրեմն, հայկական արմատներ ունեցող Օբեդն իր նախնի Հայկ-Մելքիսեդեկի նման նախակերպարն է Քրիստոսի՝ Աստծո Որդու։

Եվ ահա, տեսնում ենք, որ Հեսսեի արմատ Օբեդը, որ գենետիկորեն 75% հայկական արյուն էր կրում իր մեջ և միայն 25%-ը հրեական, շեշտվում է Սուրբ Գրքում՝ որպես մեկը, ով խորհրդանշաբար այն «արմատն» է, որից սկիզբ է առնում Տերունական ազգաբանության ծառը։

Տեսնում ենք, որ Օբեդի մեջ Մելքիսեդեկի արյունը գերակշռում էր Աբրահամի արյանը՝ հիշեցնելով Պողոս առաքյալի և շատ մեկնիչների այն խոսքը, որ Մելքիսեդեկը մեծ էր Աբրահամից, ինչպես որ հայ-հիքսոս փարավոնն էլ մեծ էր Հովսեփից։

*Այսպիսով Տերունական ազգաբանության շղթայի այդ խորհրդավոր օղակը Ռահաբը, Բոոսը, Հռութը, Օբեդը, Հեսսեն և Դավիթը անհատներ էին, որոնք բոլորն էլ իրենց մեջ կրում էին Հայկ-Մելքիսեդեկի արյունը, ոմանք՝ ամբողջությամբ, ոմանք էլ՝ մասամբ. **«Այս ազգը մի ավելի խորին հանելուկ է պատմության համար, քան թե հրեաները... Չնայած սրանց բազմադարյան պատմությանը, հազարավոր արկածներին, որոնց ենթարկվել է այս ազգը, հայոց տիպը ներկայացնում է, այնուամենայնիվ, ավելի հաստատ տոկունություն, քան թե Փոքր Ասիայի ազգերից որևիցե ուրիշ տիպ. այնպես որ, ամենամաքուր արյուն պարունակող ազգերի թվին կարելի է դասել հայերին, որ միևնույն ժամանակ եղել են նաև տիպիկ մաքրության կրող՝ այն չափով, ինչ չափով նրանք ժառանգել են իրենց հայրերից և պապերից»**[169]։*

Պարզեցինք, որ Բեթղեհեմում բնակվեց Երիքովից ելած սաղեմահայության փոքրիկ համայնքը։

Նաև Բոոսի նման հեղինակավոր և հարուստ իշխանի հետ Հռութի

---

167 Եսայի. 11:1–3, 10:

168 Եսայի. 11:1–3, 10:

169 Ալեքսանդր Ելիսեև: Տես Երկիր Դրախտավայր. Օտարերկրացիները Հայաստանի և հայերի մասին..., Երևան 2014 թ., էջ 395:

ամուսնանալը թերևս կարող էր պատճառ լինել, որպեսզի Հռութի սաղեմահայ ազգականներից շատերն էլ Մովաբից տեղափոխվեին Բեթղեհեմ բնակություն հաստատելու համար, որտեղ կարող էին մովաբացիների կողմից պարտադրված կռապաշտությունը թողնելով նորից պաշտել իրենց հայրերի Տեր Աստծուն, նաև Բոոսի և տեղաբնակ սաղեմահայերի աջակցությամբ կարգավորել իրենց տնտեսական հարցերը։

Բնականաբար Երիքովից ու Մովաբից Բեթղեհեմում բնակություն հաստատած հայկական համայնքի անդամները պետք է սերտ հարաբերություններ մեջ լինեին միմյանց հետ, աճելով և բազմանալով այդ բարենպաստ պայմաններում։

Իսկ սրանից էլ կարելի է հետևություն անել, որ կիսով հայ Բոոսն ու հայուհի Հռութն իրենց որդի Օբեդի համար կարող էին կին ընտրել հենց Բեթղեհեմում բնակվող սաղեմահայերի դուստրերից, և այդպես շարունակ՝ մինչև Հեսսեն և Դավիթը, որոնք նման պարագայում կարող էին արդեն զուտ հայկական արյուն կրել, ինչը կարծում ենք, որ տեսականորեն շատ հավանական է։

Այն խորհրդավոր հացն ու գինին, որ Մելքիսեդեկը փոխանցեց Աբրահամին, նշանակում էր, որ Աբրահամից պիտի գար աշխարհի Փրկիչը՝ Քրիստոս, բայց և Հայկ-Մելքիսեդեկ մեծ նահապետի սերունդներն էլ անմասն չպիտի մնային այդ աքանչելափառ մեծ պատվից՝ իրենց լուսաշող և խորհրդավոր մասն ունենալով Տիրոջ ազգաբանության մեջ։

Տեսնում ենք, ինչպես Մելքիսեդեկ նահապետի՝ ով լինելու առեղծվածը, այդպես և Տերունական ազգաբանության շղթայի այս խորհրդավոր հատվածի բացահայտումը վերապահված էր մեր այս օրերին։

Ոմանք կարող են հակաճառել, որ դարեր շարունակ Ռահաբի և Հռութի կերպարներն այլ մեկնություններ են ունեցել, իսկ այժմ, ահա, առաջարկվում է միանգամայն այլ տարբերակ, որ նրանք ոչ թե՝ կռապաշտ քանանացիներ, այլ սրբակենցաղ սաղեմահայուհիներ են եղել։

Կարող են հարցնել. մի՞թե Տիրոջ ազգաբանության մեջ նման նորամուծությունը մեղադրելի չէ։ Իսկ Տերունական ազգաբանության մեջ Ռահաբի՝ երիքովցի պոռնիկ լինելը և Հռութի՝ կռապաշտ թշնամական Մովաբի ազգից լինելը արդյո՞ք ավելի դյուրին է ընդունել։ Չէ՞ որ Ռահաբի՝ ոչ միայն պոռնիկ-մարգարեուհի լինելն է անհամատեղելի ու տարօրինակ, այլև այն, որ հրեաների իշխան Սաղմոնն ամուսնանում է հիմնիվեր պիղծ երիքովյան պոռնիկի հետ, այն էլ՝ բարեպաշտ Հեսուի, Քաղեբի և Փենեհեսի նման օրենքի տառին նախանձախնդիր առաջնորդների ղեկավարության շրջանում և նրանց գիտությամբ։ Իսկ բարեպաշտ Բոոսն էլ իր հերթին աստվածամերժ մովաբացիների դստերը՝ Հռութին է կնության առնում խախտելով բոլոր օրենքները։ Իսկ այդ դեպքում ստացվում է, որ նա չի վախենում և հաշվի չի առնում նաև, որ Հռութի որդիների մահը

համարվում էր որպես երկնառաք պատիժ՝ տրված այդ մովաբուհիների հետ ամուսնանալու համար: Եվ եթե այս Սուրբգրային տեղեկություններ ընդունենք բառացի, չներթափանցելով նրա խորհրդավորության մեջ, ապա դուրս կգար, որ Օբեդը՝ Դավթի պապը իր երակներում հիմնականում կրել է երիքովա-մովաբական արյան պիղծ խառնուրդ, այնինչ երբ հայկականությունը ընդունում ենք որպես բանալի տվյալ խնդրի լուծման համար ամեն ինչ իր տեղն է ընկնում:





Այս առանձնաշնորհյալ կանանց նկարագրից համոզվում ենք, որ բարեպաշտությունը հանձն առած սաղեմահայությանը չհանդուրժեցին կռապաշտության խավարում ընկղմված քանանական ցեղերը, որոնք մարդկային ցեղի աներևույթ թշնամու դրդմամբ (ում սրանք պաշտում և երկրպագում էին) հարձակվեցին հայոց Սաղեմի վրա և գրավեցին այն, իսկ քաղաքի բուն տերերին՝ սաղեմահայերին, կոտորեցին, կողոպտեցին, մնացածներին էլ փախստական դարձրին:

Սակայն Տերն անտես չարեց Սաղեմը կառուցող Իր հավատարիմ ծառա Հայկ-Մելքիսեդեկի ժառանգներին, քանզի Քանանի տարբեր մասերում ծվարած հայկական փոքրաթիվ համայնքների միջից Նա հանեց այն մարդկանց, որոնք Տիրոջ ազգաբանության մեջ տեղ գտնելով՝ Հայոց մեծ նահապետ, Սաղեմի արքա և բարձրյալ Աստծո քահանա Հայկ-Մելքիսեդեկի արյունը խառնեցին Աբրահամ մեծ նահապետի արյանը: Իսկ այդ հրաշալի միավորումն իր երակներում կրեց և հավիտենապես պիտի կրի Աստվածորդին՝ մեր Տեր Հիսուս Քրիստոս՝ Իր անսկիզբ Աստվածությամբ և սկզբնավոր մարդեղությամբ լինելով հավերժ Աստվածամարդ:

*Եվ ահա սա է այդ հրաշալի խորհուրդն, որ մեծ է և սքանչելի. **«Իսկ դու գիտե՞ս, թե ինչպիսին է հայ ժողովուրդը: Դա ժողովուրդ է, որ ամբողջ մարդկության մեջ ունի ամենախորհրդավոր պատմությունը»**[170]:*


*Իսկ եթե Տերն իր արյան մեջ կրում է նաև հայկական մաս, ուրեմն այն վերցրել է Սուրբ Մարիամ Աստվածածնից, որին և այսպես է օրհնաբանում շարականագիրը. **«Աստվածային դրախտի անապական Բողբոջը քո որովայնում տնկվեց, և կուսական ծննդյամբ բխեցրիր վայելուչ Ծաղիկ՝***

[170] Լեոն Բլուա, ֆրանսիացի գրող. http://www.netslova.ru/gb/gudava/arch1.html

Հեսսեի արմատից, ինչի համար մենք քեզ միշտ մեծարում ենք»[171]:

*Եվ ուրեմն, Հայկ-Մելքիսեդեկի արյունն իր մեջ ունենալով՝ Սուրբ Մարիամ Աստվածածինն ինչպես Աբրահամին, այդպես և Հայկին ունի՝ որպես նախապապ: Իսկ, այն որ, Երկնքի Թագուհին նմանություն՝ ազգակցական կապ ունի Հայկ նահապետի հետ, այդ մասին գրել է սբ. Գրիգոր Նարեկացին. **«Թերևս, Հայկի վայելչությունն էլ, իրեն նվիրված աստղի հետ խառնելով միայն, կարելի է այնպիսի անվախ հանդգնություն անել՝ ամենաշնորհ Աստվածածնին իսկ կոչելով Հայկանման՝ Հայկի պատրվակով խորհրդաբանելով սուրբ և Քրիստոսածին որովայնը. «Գաբրիելն ավետիս տվեց Հայկանման Կույսին՝ երջանիկ և երանելի Տիրուհուն. Հրեղեն թևերով սավառնելով, ուրախ լուրից բերկրելով՝ Տերը քեզ հետ է... և ուրեմն՝ Հայկի պես գեղեցիկ փայլելով՝ Աստծուն ընդունեք»**[172]»*[173]:

Պատահական չէ, որ Երուսաղեմում Սուրբ Աստվածածնի ուշաթափման սրբատեղին պատկանում է Հայ Առաքելական Եկեղեցուն, իսկ Տիրամոր սուրբ գերեզմանը հայ Եկեղեցին կիսում է միայն հույների հետ:



Երբ Սուրբ Ընտանիքը մարդահամարի նպատակով Նազարեթից եկավ Բեթղեհեմ, այդ ժամանակ արդեն Սուրբ Տիրուհու ծննդաբերելու ժամը հասավ, սակայն հյուրատներում տեղ չգտնվեց Նրանց համար: Նրանք ստիպված եղան Բեթղեհեմում մի մսուրի մեջ ապաստանել, որտեղ էլ ծնվեց աշխարհի Փրկիչը, ինչը հետագայում դարձավ մեծ և հրաշակերտ տաճար:

Ըստ ավանդության՝ այս մսուրի տեղը դարեր առաջ եղել է իշխանական տուն, որն ինչ-ինչ պատճառներով ժամանակի ընթացքում՝ մոտ 1000 տարի անց, վերածվել է մսուրի: Իսկ այդ իշխանական տունը եղել է հենց Սաղմոնի և Ռահաբի կառուցած տունը, որտեղ էլ ծնվել էլ Բոոսը, ով Հռութից ունեցավ Օբեդին՝ այդ նույն վայրում. նաև այդտե՛ղ լույս աշխարհ եկան Հեսսեն և նրա որդի Դավիթ արքան:

Այդտեղ էլ դարեր անց պետք է ծնվեր աշխարհի Փրկիչը՝ մեր Տեր

171 Շարական, Վաղարշապատ 1888 թ., էջ 132:

172 Մեկնութիւն «Ով է Դա»-ի՝ ասացեալ սրբոյն Գրիգորի Նարեկացւոյ, Մատենագիրք Հայոց, հատոր ԺԲ, Երևան 2011 թ., էջ 892, 908:

173 Ղեւոնդ Ալիշան, Հայաստան յառաջ քան զլինելն Հայաստան, Վենետիկ-Ս. Ղազար 1904 թ., էջ 154:

Հիսուս Քրիստոս՝ այն տան տեղում, որը պատկանել էր հրեա-հայկական ընտանիքին՝ իր մարմնավոր նախնիներին։ ***«Բեթղեհեմում Քրիստոսի Ծննդյան եկեղեցու տակ մի սենյակ կա, որտեղ, ըստ ավանդության, ծնվել է Քրիստոսը։ Ավանդությունն ասում է, որ այդ սենյակը և այդ վայրը եղել է Դավթի ժառանգական տունը, իսկ Դավթից առաջ՝ Բոոսի և Հռութի։ Այսպիսով, ըստ այս ավանդության, Բոոսն ու Հռութն սկսել են ապրել այս վայրում, ուր 1100 տարի հետո ծնվել է Հիսուս Քրիստոսը»***[174]։

Եվ հենց այստեղ էլ՝ Փրկչի ծննդյան ժամանակ, Աստվածաշնչյան Արևելքից՝ այսինքն բուն Հայաստանից՝ Արարատ լեռան ստորոտից հրաշափառ աստղի ուղեկցությամբ մոգերը ճանապարհ ընկան և հասնելով Բեթղեհեմի այդ մսուրը՝ երկրպագեցին Աստծո Որդուն։

Իսկ Սուրբ Ծննդյան մսուրի տեղում՝ ներկայումս Բեթղեհեմի Սուրբ Ծննդյան տաճարում իր մնայուն մասն ունի Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին։

Ինչպես նշվել է, Սաղեմը, որը Երուսաղեմն է, կառուցեցին բարեպաշտ հայերը՝ օրհնյալ Հայկ Նահապետի գլխավորությամբ։ Եվ ահա՝ Բեթղեհեմի կառուցման մեջ էլ, ինչպես արդեն ասվեց, անմասն չմնացին հայերը, քանի որ այդ քաղաքի հիմքը դրեցին և կառուցեցին հրեա և հայազգի ամուսինները՝ Սաղմոնն ու Ռահաբը, այն ավելի բարեզարդեցին Բոոսն ու Հռութը, հետո էլ՝ նրանց որդի Օբեդը։

---

174 Генри Г. Геллей, Краткий библейский толкователь, Торонто – Канада, 1989 г., ст. 183.

Դավիթը տեր է կանգնում իր պապենական ժառանգությանը

«Որքան խորացել եմ Հայկական այդ Ատլանտիդայի մեջ, այնքան ավելի արագ է խփել իմ սիրտը։ Եվ, իհարկե, բերկրանքից... Ես այնտեղ մարդկային ստեղծարար գործունեության այնպիսի շերտեր եմ գտել, որ շունչս բռնվել է։ Ամենափորձառու «հանքափորի» համար նույնիսկ դյուրին չէ պեղել պատմության, գրչության, մտքի, պոեզիայի, ծեսերի, ճարտարապետության և ընդհանրապես այն ամենի հզոր շերտերը, որ կոչվում են Գեղեցիկ»[175]։

Հատկանշական է, որ երբ Հեսուի առաջնորդությամբ հրեաները մտան Պաղեստին և գրավեցին ամբողջ երկիրը, նրանք, չգիտես ինչու, Սաղեմը թողեցին կռապաշտ հեբուսացիների տիրապետության տակ, և միայն շատ տարիներ անց Դավիթ թագավորն ազատագրեց այն այդտեղ բնակվող հեբուսացիներից։

Իսկ ինչո՞ւ հենց Դավիթը նախանձախնդրություն ցուցաբերեց այդ հարցում։ Հավանաբար, նա իր պապից՝ Օբեդից և հորից՝ Հեսսեից, լսել էր, որ ժամանակին այդ քաղաքը պատկանել է իրենց սաղեմահայ նախնիներին, և դա դեռ մանկուց տպավորվել էր իր մեջ։

*Եվ երբ օրը հասավ, Դավիթը չհապաղեց իր նախապապ Հայկ-Մելքիսեդեկի կառուցած քաղաքը ետ գրավել կռապաշտ հեբուսացիներից. **«Հեբուսացիները՝ քանանական ցեղախմբի ժողովուրդները, որ այդ ժամանակ բնակվում էին այդ քաղաքում, դարպասի դռները փակեցին Դավթի առաջ և իրենց պարիսպների առաջ կանգնեցրին իրենց բոլոր կույրերին, կաղերին և հաշմանդամներին՝ Դավթին ծաղրելու համար՝ ասելով, որ անգամ հաշմանդամ մարդիկ կարող են թույլ չտալ, որ նա քաղաք մտնի (իրենց այդ արարքը բացատրվում էր իրենց պարիսպների ամրության նկատմամբ վստահությամբ)։ Դրանից Դավիթը զայրացավ և սկսեց Երուսաղեմի շրջափակումը։ Միաժամանակ նա կենտրոնացրեց իր ողջ ջանքն ու եռանդը, որպեսզի քաղաքի արագ գրավմամբ ցույց տա իր կարողությունը և ահ ու երկյուղ գցի բոլոր նրանց մեջ, ովքեր որոշել էին իր հետ նման (ստոր) ձևով վարվել, ինչպես որ վարվեցին հեբուսացիները։***

Դավիթը հակառակորդի կայազորը դուրս վռնդեց ամրությունից և

---

175 Էդուարդաս Մեժելայտիս, Տե՛ս Երկիր Դրախտավայր. Օտարերկրացիները Հայաստանի և հայերի մասին.... Երևան 2014 թ., էջ 614:

վերակառուցելով Երուսաղեմ քաղաքը, այն կոչեց Դավթի քաղաք և հաստատվեց այնտեղ՝ իր թագավորության մնացած ամբողջ ժամանակը անցկացնելով այդ քաղաքում։

Այսպիսով, Դավիթը, հեբուսացիներին վտարելով Երուսաղեմից, առաջին անգամ այդ քաղաքն իր անունով կոչեց, որովհետև մեր նախահոր՝ Աբրահամի ժամանակ այն Սաղեմ անունն էր կրում։ Իրեն հասած հայտարարություններից ելնելով՝ Հոմերոսն էլ քաղաքն անվանում էր Սաղեմ... Այն ժամանակներից զորավար Հեսուն ելավ՝ պատերազմելու քանանացիների դեմ և հաղթելով նրանց՝ բաժանեց նրանց ունեցվածքը հրեաների միջև։ Բայց իսրայելացիներին, համենայն դեպս, չհաջողվեց՝ քանանացիներին քշել Երուսաղեմից։ Վերջնականապես այն նվաճվեց Դավթի կողմից՝ 515 տարի հետո»[176]։

Դավթին էր վիճակված՝ ազատագրելու Երուսաղեմը, քանզի հենց նա պետք է իր ցեղակիցների՝ սաղեմահայերի համար վրեժխնդիր լիներ՝ քաղաքն ազատագրելով կռապաշտ հեբուսացիներից, որ նվաճել էին այն իրենց բուն տերերից՝ հայերից։

Այդ ժամանակներից Երուսաղեմը ճանաչվեց որպես Դավթի քաղաք՝ ըստ ժառանգության, քանզի այն, ժամանակին իր մեծ նախնիներից մեկի՝ Հայկ-Մելքիսեդեկի քաղաքն էր և հիմա էլ արդեն դարձավ նրա արյունից իր մեջ մաս կրող Դավիթ թագավորի քաղաքը[177]։



Սրանում էլ մեծ խորհուրդ կար, Դավթի մեջ խոսում էր իր մեծ նախահոր՝ Հայկ-Մելքիսեդեկի արյունը, ով կառուցել էր Սաղեմը, որտեղ դարեր շարունակ ապրել և գործել էին նրա սերունդները՝ հայերը։ Իսկ Դավթի ժամանակներից Երուսաղեմում արդեն պիտի բնակվեին նրա մյուս մեծ նախահոր՝ Աբրահամի սերունդները՝ հրեաները՝ մոտ 1000 տարի՝ մինչ Տիտոս կայսեր կողմից նրանց վտարվելը Երուսաղեմից և ընդհանրապես Իսրայելից։

Խորհրդանշական է և այն, որ Երուսաղեմից հրեաների վտարումից միաժամանակ անց՝ նորից Երուսաղեմում բնակություն հաստատեցին Հայկի սերունդները՝ հայերը, և մինչ

---

176 Иосиф Флавий, “Иудейские древности”, том 1, “Феникс” Ростов-на-Дону, 2000 г., ст. 423-425.

177 Տես Ա Մնաց. 11:4–9:

օրս նորից կոչվում են «սաղեմահայեր». նրանք բնակվում են Երուսաղեմի՝ իրենց անվամբ կոչվող «Հայկական Թաղամասում», որը ներկայիս Երուսաղեմի չորս թաղամասերից մեկն է:

Հետաքրքիր է, որ Սաղեմում, երբ այն կառուցվեց Հայկ-Մելքիսեդեկ նահապետի կողմից, ի սկզբանե հաստատվեց ճշմարիտ աստվածպաշտությունը: Դարեր անց, երբ այն գրավեցին հեբուսացիները, այնտեղ դադարեց բարձրյալ Աստծո պաշտամունքն ու փառաբանությունը, և հաստատվեց դիվապաշտությունը, կառուցվեցին մեհյաններ, և սկսեցին խնկարկել ու զոհեր մատուցել անարգ կուռքերին: Սակայն, երբ Դավիթը գրավեց քաղաքը, նորից հաստատեց երկնքի և երկրի, երևելիների և աներևույթների Արարչի պաշտամունքը:

Երկիր մոլորակի վրա, առաջին սրբակենցաղ անձինք՝ Ադամից մինչև Նոյ նահապետ, ապրել են Հայկական լեռնաշխարհի տարածքում և անվանվել են «Աստծո որդիներ»: Ջրհեղեղից անմիջապես հետո էլ՝ սկսած Նոյից, բոլոր բարեպաշտ անձինք ապրել են այդ նույն վայրում՝ Արարատյան դաշտավայրում: Նմանապես լեզուների խառնակումից հետո էլ Հայաստանը եղավ այն կենտրոնը, որը զերծ մնաց համատարած կռապաշտությունից: Այնտեղ Հայկ նահապետի գլխավորությամբ նորից տիրում էր ճշմարիտ աստվածպաշտությունը:

Այդ հնագույն ժամանակներում հայազգի սուրբերը կարևոր դիրք ունեին նաև Քանանում. նրանցից էին՝ նորից Հայկ-Մելքիսեդեկ նահապետը, այնուհետ՝ նրա օրհնյալ ժառանգորդներ Ռահաբը և Հռութը, ապա նաև նրանցից սերված Բոոսը, Օբեդը, Հեսսեն և վերջապես՝ Դավիթ թագավորը: ***«Բայց դուք ընտրյալ ցեղ եք, թագավորություն, քահանայություն, սուրբ ազգ, Աստծո սեփական ժողովուրդ»***[178]*:*

[178] Ա Պետր. 2:9:

Վերջաբան

«Հայաստանը դժվար կանխորոշելի է վայրէջքային վիճակների համատեքստում: Այն գոյություն ունի զգացմունքների մակարդակով: Որպես հոգու վիճակ՝ այնքան պոռթկուն է և զգացմունքային, որ նրա էներգիան անցնում, ներթափանցում է ամբողջությամբ՝ հեռացնելով առօրեականից: Նա նման է ջութակի, որ կարող է իր հնչյուններով առաջացնել սիրո մակընթացություններ և տեղատվություններ, վրդովմունքների փոթորիկ, կարոտախտի հոսանքներ, կրքերի հրդեհներ և հայտնությունների բռնկումներ: Հավանաբար, ինքը՝ Տիրոջ հրեշտակն է նվագում է այդ ջութակը՝ պահպանելով այն: Եվ քանի դեռ հնչում է այդ դյութիչ մեղեդին, չեն անցնի հայության ժամանակները: Իսկ դա նշանակում է, որ չի անցնի, նաև այս ցնցող սիրո վիճակն իմ հոգում»[179]:

Ավարտելով «Հայաստան. արարչագործությունից մինչ Երկրորդ Գալուստ» գրքի այս երկրորդ հատորի չորրորդ ենթագիրքը՝ ի մի բերենք այն:

Առաջին հատորի նյութերը վերհիշելով և Հայոց պատմության այս նորահայտ տեղեկություններին ծանոթանալով՝ նորից զարմանք ենք ապրում Արարչի կողմից հայոց ազգին շնորհված աննախադեպ և զարմանահրաշ առանձնաշնորհների լիությամբ: ***«Երկրագնդի վրա չկա մեկ ուրիշ երկիր, որն այնքան հագեցած լինի հրաշքներով, որքան՝ հայերի երկիրը»***[180]:

Բացահայտվեց, որ Քանանի տարբեր ցեղերի մոտ ծվարած Հայկ Նահապետի ժառանգներին, Տերն անտես չարեց, այլ Իր ողորմությանն արժանացրեց՝ մեծագույն ու հավերժական շնորհներ պարգևելով:

Ենթագրքում բացվեց երեք հազար տարուց ի վեր փակված վարագույրը, որի հետևում ծածկված էր Ռահաբի և Հռութի առեղծվածը:

Հավաստիացանք, որ Նախախնամության կամոք բազմաթիվ յուրահատուկ առանձնաշնորհներով է զարդարվել Հայաստան աշխարհը, որոնցից են Դրախտը՝ եդեմաբուխ չորս գետերով, Արարատ լեռը՝ Նոյան տապանով, Հայկ Նահապետը, որ առաջին նեռ Բելին՝ Նեբրովթին գետին տապալեց Հայաստանում, և նույն ինքը՝ հայոց Նահապետ Հայկ-Մելքիսեդեկը, որ կառուցեց Երուսաղեմը: Հստակեցրինք նաև, որ Հայոց լեզուն առաջին անխառն՝ ադամական լեզուն է: Փաստարկեցինք, որ տնտե-

---

179 Виктор Коноплев. Общественный деятель по установлению и укреплению российско–армянских связей.

180 Ջորջ Բայրոն:

սության և գիտության բազմաթիվ ոլորտների հայրենիքը Հայաստանն է: Առանձնաշնորհներ են նաև Կուտինների, Քասեցիների, Արինների և Հիքսոսների՝ բնիկ հայ լինելը:

Եվ այս ամենին ավելացավ նաև Տեր Հիսուս Քրիստոսի մարդեղացման ազգաբանության մեջ հայ անհատականությունների մասնակցությունը, որ կարելի է համարել մեծ ու հրաշալի շնորհ:

*Իսկ այդ շնորհներից մեծագույնն էլ այն էր (որ տրվել էր հայոց ազգին), որ մարդեղացած Աստծո Որդին՝ Տեր Հիսուս Քրիստոսն, երկնքի և երկրի Արարիչը կրում է նաև հայկական արյուն: **«Հայերն ունեն առաքելություն: Դուք Արարատի պահապաններն եք, պահապանները՝ Նոյան տապանի... Ինձ թվում է, որ քանի դեռ կա աշխարհը, կլինեն և հայերը, քանի որ դա Աստծո ժողովուրդն է»**[181]:*

Այս ամենը պետք է մեր սրտերում տեղ գտնի, որպեսզի ոչ թե տրտնջանք այսօր տիրող հոգևոր և նյութական նեղություններից, այլ, ընդհակառակը, գովաբանենք և փառավորենք մեր Տեր Աստծուն այս առանձնաշնորհների համար՝ հատկապես, որ շատ շուտով Հայոց աշխարհին սպասվում են փառահեղ օրեր, Մեծ Հայքի տարածքի հաստատմամբ և հզոր միապետության ձևավորմամբ, որն էլ համարվելու է ևս մեկ մեծ առանձնաշնորհ, ինչի մասին տեղեկությունները հուսով ենք, որ Տիրոջ կամոք կներկայացվեն վերջին՝ չորորդ հատորի նախավերջին ենթագրքում:

---

181 Леонид Решетников, генерал–лейтенан, советский и российский историк, директор Российского института стратегических исследований.

ԳԻՐՔ – V

ՀԱՅԱՍՏԱՆ. ԱՆԿՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՆՈՐ ՎԵՐԵԼՔՆԵՐԻ ՇՐՋԱՆ

Հայ-խեթական հարաբերություններ

«Գլուխդ պտտվում է դարերի շուրջպարի մեջ, որտեղ Ն. Ք. 20 դարը խաչաձևված է Ք. ծ. հ. 20 դարի հետ: Դա զգացվում է Հայաստանում, որտեղ մնացինք ընդամենը մեկ շաբաթ, բայց խելագարվելու չափ հոգնեցինք 40 հարյուրամյակներից: Հայաստանը հոգնեցնելով մեզ նվիրեց պայծառագույն պահեր... բայց այդ մասին անհնար է երկու խոսքով պատմել»[1]:

Այժմ նորից անցնելով պատմաքաղաքական ոլորտին՝ հիշենք, որ դարեր շարունակ՝ ավելի հստակ, Ն.Ք. XVIII – XIII դարերում հայկական գործոնը մեծ ակտիվությամբ է տարածվել Հայաստանից մինչ Հնդկաստան, Միջագետք, Սիրիա, Պաղեստին, Եգիպտոս, Հյուսիս-միջագետք (Միտանի), Անդրկովկաս, Կովկաս, Փոքր Ասիա և ունեցել է որոշիչ դեր՝ քաղաքական, տնտեսական և ռազմական ոլորտներում: Եվ այդ ամենը եղավ, քանզի հայերը չանացին հավատարիմ մնալ իրենց հայրերի Տեր Աստծուն. ***«Եթե... սիրեք ձեր Տեր Աստծուն, գնաք նրա ճանապարհով ու հարեք նրան, ապա Տերը ձեր առջևից կհեռացնի այդ բոլոր ազգերին, և դուք կնվաճեք ձեզանից մեծ ու հզոր ազգերին: Բոլոր այն վայրերը, ուր կկոխեն ձեր ոտքերը, ձերը կլինեն... Ոչ ոք ձեզ չի դիմադրի, ձեր ահն ու սարսափը ձեր Տեր Աստվածը կսփռի ամբողջ երկրի վրայ, ուր ոտք կդնեք դուք»***[2]:

Սակայն Ն.Ք. XIII – XII դարերում հայերը, կորցնելով իրենց իշխանությունն այդ բոլոր տարածքներում, նորից սահմանափակվեցին Հայոց լեռնաշխարհի՝ իրենց բուն հայրենիքի սահմաններում:

---

[1] Անդրեյ Բելի, Հայաստան, տես Յոթ գարունների երկրում.. Երևան 1983 թ., էջ 297:

[2] Բ. Օր. 11:22–25:

Քանի որ հայոց գերիշխանությունն այդ ահռելի տարածքներում դադարեց, հայերից ոմանք, հավանաբար, վերադարձան Հայաստան, ոմանք ձուլվեցին այդ երկրների բնիկների հետ, ոմանք էլ գաղթեցին այլ երկրներ՝ իրենց հետ տանելով Քուռարաքսյան մշակույթի բարիքները՝ դրանց հաղորդ դարձնելով հեռավոր հյուսիսի եվրոպական և այլ երկրների բնակիչներին։

Իսկ ի՞նչն էր պատճառ դարձել, որ Նախախնամության շնորհները հեռանային՝ որ հայերը կորցնեին ոչ միայն այն իշխանությունը, որ ունեին այդ անծայրածիր տարածքներում, այլև իրենց սեփական երկրում հարևան երկրների կողմից կրեին հալածանքներ։

Սուրբ Գրքում գրված է, որ եթե ազգը քայլում է Աստծո ճանապարհներով, ապա վայելում է Նրա օրհնությունները։ Իսկ եթե հեռանում և մեջքով շրջվում է Արարչին, ապա զրկվելով երբեմնի օրհնություններից՝ ինքն իր ձեռքով իր կողմ է քաշում անեծքն ու նզովքը։

Այդպես այդ ժամանակներում տեղի ունեցավ հայերի հետ, քանզի նրանք հեռանալով իրենց Տեր Աստծուց՝ ընկան հեթանոսական մոլորության մեջ, և երկրպագությամբ խունկ ծխեցին անարգ կուռքերին։

*Աստված բոլոր օրերի համար հատուկ զգուշացնում է. **«Ես այսօր, ահա, ձեր առջև դնում եմ օրհնություններ ու անեծքներ։ Օրհնություն կստանաք, եթե լսեք ձեր Տեր Աստծու պատվիրանները... և անեծքներ՝ եթե չլսեք ձեր Տեր Աստծու պատվիրանները... գնաք պաշտեք ձեզ անծանոթ օտար աստվածներ»**[3]։*

Այժմ այս նոր հոգևոր և քաղաքական անկումային իրավիճակում Հայաստանը պատրաստվում էր իր հարևանների՝ ասորիների և խեթերի հետ հարաբերություններ ճշտել բանակցությունների կամ պատերազմական գործողությունների միջոցով։

Վերևում ասվել է, որ Միտանիի ստեղծման սկզբում Հայաստանում հայոց գահին նստեց Սուրը, որին հաջորդաբար փոխարինեցին Հավանակը, Վաշտակը, Հայկակը, որ խրոխտ և պատերազմասեր մարդ էր։ Նրան փոխարինեց Ամպակը, սրան՝ Առնակը և սրան՝ Շավարշը, որ կառուցեց Շավարշավան քաղաքը, և ապա՝ Նորայրը, ում ժամանակ էլ, ըստ երևույթին, կործանվեց Միտանին։

Միքայել Չամչյանը նշում է բոլոր այս արքաների կառավարելու տարեթվերը, սակայն այդ հնագույն ժամանակներում ժամանակագրության հետ կապված խնդիրները կարող են որոշ տարուբերումներ ունենալ[4]։

Եթե այդ շրջանում Նորայրն էր հայոց արքան, նա պետք է այդ ոչ դյուրին քաղաքական վիճակում երկիրը կարողանար պահել նպաստավոր պայմաններում։ Ինչ վերաբերում է արևմտյան հարևանի՝ խեթերի հետ

---

[3] Բ. Օր. 11:26–28

[4] Միքայել Չամչյանց, Խրախճան պատմութեան Հայոց, ի Վէնէտիկ 1811 թ., էջ 15:

հարաբերությանը, նրանք, Հայաստանին սահմանակից ժողովուրդ լինելով, սերտ հարաբերություններ մեջ էին գտնվում հայերի հետ։

Խեթական տերությունը համարվում է հնագույններից մեկը, սակայն նրա՝ որպես պետություն ձևավորվելու պարագան, հայոց թագավորության համեմատ, շատ ավելի ուշ շրջանում է տեղի ունեցել։

Հիշենք, որ խեթական թագավորությունը պատմության ասպարեզում սկսեց ձևավորվել հենց հայոց Արամ Մեծ արքայի թագավորության ժամանակաշրջանում (ն.Ք. XVIII)։ Խեթերն սկսեցին յուրացնել քուռարաքսյան մշակույթը՝ մետաղագործությունը, ձիաբուծությունը, մարտակառքերի պատրաստումն ու գործածումը և այլն։ Տասնյակ տարիներ նրանք հնազանդ եղան Հայոց թագավորությանը, և դա հենց այն ժամանակաշրջանն էր, որ հայերն սկսեցին ասպատակել Աշխարհի չորս կողմերը։ Սակայն խեթերն, օրեցօր հզորանալով, հատկապես Հայոց Միտանի պետության վերջին շրջանում, դարձան անկախ և հզոր թագավորություն։ Հիշենք, որ Միտանիի անկումային շրջանում հենց խեթե՛րը այն գրավեցին՝ հպատակեցնելով իրենց։ Եվ ոչ միայն Միտանին, այլև շատ այլ երկրներ դարձրեցին իրենց հարկատու։

Այդ վաղնջական ժամանակաշրջանում մենք գիտենք, որ Հայաստանը տարբեր անվանումներով էր հիշատակվում տարբեր երկրների կողմից. ինչպես՝ Արևելք, Արարատ, Ուրարտու, Արմենիա և այլն։ Իսկ երբ XX դարի սկզբին խեթական տարածքների պեղումների արդյունքում ի հայտ եկավ նրանց արքայական գրադարանը, այդտեղ գտնվող բազմաթիվ գրառումների մեջ գտնվեցին այնպիսիները, որոնք պատմում էին խեթերի՝ արևելյան հարևանի հետ ունեցած հարաբերությունների մասին։ Իսկ որ արևելյան հարևանը Հայաստանն էր, դա փաստ է։ Հետաքրքիր է, որ այդ գրառումներում Հայաստանն անվանվում էր համարյա թե հենց այդ նույն անվամբ «Հայասա»։ ***«Գիտնական է. Ֆորրերը, նրա հետ միասին և Ուգանդը խեթական գրառումների Հայասա-ազգի երկիրը տեսնում էին վերին Հայքում»***[5]*։*

Գիտնականներից շատերը կասկած չունեն այն հարցում, որ Հայասան իսկապես նույն Հայաստանն է.

«Այս ժամանակահատվածում Փոքր Ասիայում գերիշխող քաղաքական ուժ էր խեթերի թագավորությունը... Խեթական տարեգրություններըը մեզ որոշ հետաքրքիր տեղեկություններ են տալիս վերին Եփրատում գտնվող ներկայիս էրզինդջան շրջանում ապրող Հայասա ժողովրդի մասին։ «Հայասա» անունը չի կարող չգրավել մեր հատուկ ուշադրությունը, քանի որ այն շատ նման է այն անվանը, որով հայերը անվանում են իրենց ու ժողովրդին՝ հայեր, իսկ երկիրը՝ Հայաստան։ Չնայած որոշ գիտնականների կասկածների՝ այստեղ կան բոլոր պատճառները՝ Հայաստանը

[5] Гр. Капанцян, Хайаса–Колыбел армян, Ереван 1947 г., ст. 9.

նույնացնելու համար հին Հայասայի հետ»[6]***:***

Ըստ հետազոտողների՝ Հայկական լեռնաշխարհում բացահայտված բարձր մշակութային արժեքների հետքերն արդեն իսկ հաստատում են, որ խեթերից արևելք ընկած տարածքներում գտնվող Հայասա երկիրը հայերի բնօրրան Հայաստան աշխարհն է եղել:

«Մեծամորի և այնտեղ հայտնաբերված հնագույն հանքամետաղագործական կառույցների մասին շատ է գրվել, Մեծամորն անտարակուսելիորեն ցույց տվեց, որ մ.թ.ա. II ***հազարամյակի սկզբում Հայք-Հայաստանի տարածքում, իրոք, գոյություն է ունեցել պետականություն, ինչպես նշել է Խորենացին, և իրավացի էր Գ. Ղափանցյանը, երբ Հայասայի մասին գրելիս՝ այն անվանվում էր հայերի բնօրրան»***[7]***:***

Այսպիսով, Հայաստանը տարբեր անվանումներով ճանաչած երկրների շարքում խեթերի կողմից տրված անվանումը՝ Հայասան, ամենանմանն է այսօրվա Հայաստան անվանմանը: Իսկ դա արդյունքն է նրա, որ հայոց արքա Արամ Մեծը ժամանակին պարտադրել էր խեթերին հայերեն սովորել, ինչի հետևանքով էլ նրանք Հայաստանն անվանում էին այնպես, ինչպես հենց հայերը՝ Հայաստան կամ Հայք:

Հետաքրքիր է, որ լուվիական գրառումներում էլ հիշատակություն կա «Հախա» երկրի մասին, ինչը նույնպես նույնացվում է Հայաստանի հետ: ***«Պատմական Հայաստանի տարածքում՝ լուվիական հիերոգլիֆներով գրված արձանագրություններում, հիշվում է*** Haya ***երկրի մարդու մասին, իսկ խեթական սեպագիր տեքստերում խոսվում է*** Hayasa ***լեռնային երկրի մասին»***[8]***:***

Տեսնում ենք, որ «Հայաստան» անվանումը հնագույն ժամանակներից գործածության մեջ է եղել տարբեր ժողովուրդների խոսակցական լեզվում՝ եգիպտերենում (Հիքսոս), խեթերենում (Հայասա), լուվիերենում (Հայա) և ունեցել է համարյա նույն հնչողությունը՝ «Հայք-Հայաստան»՝ որոշ աննշան տարբերություններով (Հայա-Հայասա-Հաքսոս կամ Հիքսոս):

«Ք. ա. XV ***դարի վերջից Հայկական լեռնաշխարհի՝ Հայկական Տավրոսից հյուսիս և Արևմտյան Եփրատից արևելք ընկած տարածքներում հիշատակվում է Հայասա (Ք. ա.*** XV-XIII ***դարեր) վաղնջահայկական թագավորությունը»***[9]***:***

---

6 Дэвид Ленг, «Армяне народ-созидатель», Москва 2004 г., ст. 82–83.

7 Ս. Մ. Այվազյան, Հնագույն Հայաստանի մշակույթի պատմությունից, Երևան 1986 թ., էջ 72:

8 Սանդրո Սարդարյան, Հայաստանը քաղաքակրթության բնօրրան, Երևան 2004 թ., էջ 432:

9 Արտակ Մովսիսյան, Հայոց պատմության աշխարհիկալությունները, Երևան 2008 թ. էջ 30:

Հայասան և հայերի «եկվորության» խնդիրը

Ճիշտ է, Հայասայի մասին տեղեկություններն սկսեցին գիտնականների մոտ հետաքրքրություն առաջացնել, սակայն միտքը, որ դա կարող էր իսկապես հենց Հայաստանի անվանումը լինել, որոշ պատմաբանների մոտ անհարմար վիճակ ստեղծեց: Իսկ այդ գիտնականները հայերին Հայկական լեռնաշխարհում որպես եկվորներ ընդունող անձինք են, քանի որ ի հայտ է եկել ևս մի այնպիսի փաստ, որ աներկբա խոսում է Հայաստանի տարածքում հայերի՝ բնիկ լինելու մասին, և նրանք պետք է կողմնորոշվեին, թե ինչպե՞ս պետք է վերաբերեին տվյալ ակնառու փաստին: ***«Հայաստան աշխարհում գոյություն է ունեցել Հայասա հզոր պետությունը, անհնար է ժխտել, որ գոյություն է ունեցել հայոց լեզուն, գոյություն են ունեցել հայեր»***[10]*:*



Այդ գիտնականներից մեկն էր ռուս պատմաբան Դիակոնովը, որ անտես արեց այդ ապացույցը, ինչն էլ կախված էր առավել սովետական ռեժիմի բարձրաստիճան պաշտոնյաներին հաճոյանալու միտումից: ***«Երբ ձևավորվեց հայերի եկվորության վարկածը, Հայասա-Ազզիի մասին ոչ մի տեղեկություն չկար, խեթական արխիվը դեռ չէր հայտնաբերվել: Բայց չէ՞ որ Հայասայի մասին Դեակոնովն արդեն գիտեր իր գիրքը գրելու ժամանակ: Ինչպե՞ս է նա անտեսում այդ փաստը. չէ՞ որ մուշկերի արշավանքներից շատ առաջ գոյություն ունեին Հայասան և հայոց լեզուն, հայի պետականությունը: Կարծում ենք՝ բերված փաստերը բավարար են՝ ապացուցելու, որ հայ էթնոսի եկվորության վարկածը շինծու է և ոչ մի քննադատության չի դիմանում: Մեր ասածը եզրափակենք** “Народы мира” *սերիայի* “Народы Кавказа” *գրքից մի քաղվածքով. «Նեոլիթի ժամանակ կազմավորվել է մարդու արմենոիդ տիպը՝ առաջավորասիական ռասան, որ ծնվել է Հայկական լեռնաշխարհում և տարածվել է այ-***

[10] Գաբրիելյան Հ. Կ., «Հայերի բնօրրանը՝ Հայկական լեռնաշխարհը», Հանդես ամսօրյա, Երևան 1998 թ., էջ 420:

նուհետև Առաջավոր Ասիայի երկրներում»[11]***»***[12]*:*

*Տեսնում ենք, որ անաչառությունը մեր ժամանակներում այնքան էլ դյուրին գործ չէ, սակայն ճշմարտությունը չի կարող երկար ժամանակ մնալ քողարկված. վաղ թե ուշ՝ այն ավելի մեծ ընդունելության պետք է արժանանա: **«Մ.թ.ա. 12-րդ դ. խեթական արձանագրություններում հիշատակված է մի երկիր, որ եղել է խեթական թագավորության արևելյան հարևանը, և որի անունը՝ Հայասա-ն, գրեթե նույնությամբ համընկնում է հայերի ինքնանվանման հետ: Եթե Հայաստանը եղել է հայերի բնօրրանը, ապա հայերն Առաջավոր Ասիայում ապրել են մ.թ.ա. 12-րդ դարից ավելի վաղ՝ 14-13-րդ դդ.»***[13]*:*

*Հայաստանի և խեթերի միջև ժամանակի ընթացքում, իհարկե, եղել են տարբեր հարաբերություններ, ինչպես ասվեց, նորաստեղծ խեթական պետությունն ընկավ Հայաստանի իշխանության տակ, տարիներ անց՝ այն անկախացավ և դարձավ հայերի դաշնակիցը, և միասին ասպատակեցին Միջագետքը (քասեցիների արշավանքը): Իսկ երբ Հայաստանը կորցրեց իր իշխանությունն այդ բազմաթիվ երկրների վրա և պարփակվեց իր սահմանների մեջ, դրանից ոգևորված՝ խեթերն սկսեցին նաև ոտնձգություններ անել Հայոց սահմաններից ներս՝ ժամանակ առ ժամանակ պատերազմական գործողություններ սկսելով Հայաստանի դեմ. **«Հյուսիսարևմտյան Հայաստանում՝ Վերին Եփրատի հովտից մինչև Կարնո շրջակայքը, մ.թ.ա. 2-րդ հազարամյակի կեսերից կազմավորվել էին Հայասա ազգի ցեղային հզոր միությունը, որը երկու դար անընդհատ (15-12) մաքառում էր խեթերի աշխարհակալ տիրակալության դեմ»***[14]*:*

Հավելենք, որ խեթական գրառումներում Հայասայի հետ երբեմն հիշատակվում է «ազի» անվանումը, որը ոմանք համարում են որպես մի երկրում նույն ժողովրդից բաղկացած երկու տարբեր թագավորություններ:

Պատմաբան Հարություն Մարտիրոսյանը դա անվանում է ցեղային միություն՝ հավանաբար, այդ ժամանակ ընդունված կարծիքներին առանձնապես չհակադրվելու համար:

*Խեթ արքաներն իրենց թողած գրառումներում հպարտանում էին Հայասայի դեմ տարած հաղթանակներով, քանզի Հայաստանի հեղինակությունը մինչ այդ շատ բարձր էր, և հայերն իրենք էին աջ ու ձախ հաղթանակներ տարել. **«Խեթական թագավոր Մուրսիլիս 2-րդը (Ք. ա. 1340-1320թթ) գրել է. «Թուխխալիասը՝ իմ պապը, Հայասա երկրի հետիոտն զինվորներին և կառամարտիկներին հաղթեց...»***[15]*:*

---

[11] “Народы Кавказа”, том 2, 1962 г.

[12] Գաբրիելյան Հ. Կ., «Հայերի բնօրրանը՝ Հայկական լեռնաշխարհը», Հանդես ամսօրյա, 1998 թ., էջ 425-426:

[13] Գ. Բ. Ջահուկյան, Ջրույցներ հայոց լեզվի մասին, Երևան 1992 թ., էջ 32:

[14] Հարություն Մարտիրոսյան, Քարի դարից Ուրարտու, Երևան 1971 թ., էջ 85:

[15] Սամվել Դիլանյան, «Մանկական հանրագիտարան», Երևան 2001 թ., էջ 107:

*Սակայն Հայաստանը, կորցնելով իր նվաճած տարածքները, միևնույն է, այնքան չէր թուլացել, որ խեթերի հարձակումներն այդպես դյուրին հաղթանակներով պսակվեին: Երբեմն էլ հենց հայերն էին ասպատակում այդ արևմտյան տարածքները, և այդ երկկողմանի հակամարտություններն էին պատճառ՝ երկու երկրների տկարացման՝ հուրախություն երրորդ երկրի՝ Ասորեստանի՝ ինչից ելնելով էլ ձեռնարկվեցին միջոցառումներ՝ այդ հակամարտություններին վերջ տալու համար. **«Խեթական հաջորդ թագավորը՝ Սուպպիլուլիուման (1375-1335թ մթա) ամենասերտ բարեկամական հարաբերություններ է ունեցել Հայասայի նոր տիրակալի՝ Հուկվանայի հետ: Ավելին, խեթական թագավորական դինաստիան ամուսնական միություն էր հաստատում հայասական արիստոկրատիայի հետ»**[16]:*

*Ամուսնական կապերը խաղաղություն հաստատեցին երկու պետությունների միջև և ավելի ամրապնդեցին իրենց տնտեսական և ռազմական ոլորտները. **«Իր դստերը կնության տալով Հայասայի թագավորին՝ Սուպպիլուլիուման ամրապնդվեց Արևելապոնտական լեռների հարավային լանջերին՝ մուտքի իրավունք ստանալով այն լեռնային շրջաններում, որ հարուստ էին մետաղներով, այդ թվում՝ նաև երկաթով»**[17]:*

Խեթերը, համեմատաբար բարի դրացիական հարաբերություններ ստեղծելով Հայաստանի հետ և դրանով արևելքի կողմից իրենց ապահով զգալով, սկսեցին մեծ արշավանքներ ձեռնարկել և գրավել ու իրենց ենթարկել այլ պետություններ:

Նման ագրեսիվ քաղաքականություն էր վարում նաև արդեն բավականին մեծ հզորության հասած Ասորեստանը, և այդ երկու հզոր պետությունների քաղաքական շահերը հաճախակի բախվում էին ու պատերազմական գործողությունների վերածվում, ինչն էլ, ի վերջո, հանգեցրեց նրան, որ խեթերը կորցրեցին իրենց հպատակ երկրների վրա ունեցած իշխանությունը:

Իսկ այդ ժամանակ ասպարեզ էլան նաև այսպես կոչված «Ծովի ժողովուրդները», որոնք աջ ու ձախ հարձակումներ գործելով՝ կողոպուտ ու ավեր էին բերում իրենց հետ:

*Նրանց հարձակումներից զերծ չմնացին նաև երկու կողմերից ծովով շրջապատված խեթերը: Դա հանգեցրեց նրան, որ Խեթերը՝ որպես պետություն, իսպառ վերացան պատմության ասպարեզից. **«Օգտվելով նրանից, որ հույները կործանեցին Տրոյական թագավորությունը (մ.թ.ա. XIII երկրորդ կեսին)՝ խեթերը գրավեցին Տրոյադան և Սարդիսը: Բայց այդ հաջողությունը, ինչպես պարզվեց, դարձավ խեթական հզորության վերջին դրսևորումը: Մ.թ.ա. XIII դարի վերջում ստեղծվեց, այսպես կոչված, «Ծովի ժողովուրդների» հզոր կոալիցիան (բաղկացած՝ էգեյան ծովի***

---

16 Дэвид Ленг, «Армяне народ-созидатель», Москва 2004 г., ст. 83.

17 История древнего востока, под ред. В.И. Кузищина, Москва 1979 г., ст. 201.

մերձափնյա և կղզիների ցեղերից), որ առանձնանում էին խայտաբղետ էթնիկ կազմով, բայց խոսում էին հնդեվրոպական լեզվով: Ինչպես մրրիկ, նրանք հարվածեցին Մերձավոր Արևելքի երկրներին: Եգիպտոսին մեծ դժվարությամբ հաջողվեց հետ մղել նրանց հարձակումը: Սակայն խեթական թագավորությունը չկարողացավ կանգուն մնալ: «Ծովի ժողովուրդները» ջախջախեցին խեթերի բանակը, չօգնեցին նաև հայտնի խեթական մարտակառքերը: Մայրաքաղաք Խաթթուսասը վերցվեց գրոհով և ամբողջովին ավերվեց, իսկ խեթական տերությունը հավետ դադարեցրեց իր գոյությունը (մոտ մ.թ.ա. 1190 թ.)»[18]:

Եվ այսպես, մի հզոր երկիր ևս վերացավ աշխարհի երեսից: Իսկ Հայաստանը, անկախ նրանից, որ հոգևոր առումով մեծ անկում ապրեց, Աստծո կամոք՝ մնաց պատմության թատերաբեմում, քանզի նրա համար նախասահմանված էին այլ բազմաթիվ առաքելություններ՝ որպես Տիրոջ ընտրյալ ժողովուրդ և երկիր:

Հայ – ասուրական հարաբերություններ

Նինոսի ու Շամիրամի որդի Նինվասից հետո Ասորեստանը՝ որպես կայսրություն, սկսեց անկում ապրել՝ դուրս մղվելով տարածաշրջանում ընթացող քաղաքական գործընթացներից: Բայց Միտանիի անկումից հետո Ասորեստանի արքա Աշշուրուբալլիտի ջանքերով երկիրն, աստիճանաբար զարգանալով, սկսեց առաջխաղացում ապրել տնտեսական, քաղաքական և ռազմական ասպարեզներում:

Աշշուրուբալլիտի հետնորդներն, արդեն ամրապնդված ասորական թագավորության գլուխ անցնելով, սկսեցին պատերազմական գործողություններ ծավալել՝ արտաքին թշնամիներից ազատելով այն ճանապարհները, որոնք կարող էին նպաստել առևտրի զարգացմանը: Այդ նպատակով Ադադ-Նիրրարի I-ն, արշավելով արևմտյան կողմերը, մեծ տարածքներ գրավեց:

*Ասորեստանն արդեն բավականին հզոր տերություն էր դարձել, երբ նրա գահին նստեց Սալմանասարը: Սա էլ ասպատակեց արևելքի կողմերը, իսկ հետո արշավեց դեպի հարավ՝ պատերազմ սկսելով Բաբելոնի դեմ: Այդ հաղթանակներից ոգևորված՝ Սալմանասարը որոշեց նաև հարձակվել իր հյուսիսային հարևանի՝ Հայաստանի վրա. **«Մեծ ռազմական հաջողությունների հասավ Սալմանասարը մ.թ.ա. XIII դարի առաջին կեսին: Նա սկսեց պարբերաբար հարձակումներ գործել Ուրուատրիի երկրի***

[18] История древнего востока, под ред. В.И. Кузищина, Москва 1979 г., ст. 202–203

(ուշ՝ Ուրարտու) հյուսիսային ցեղերի վրա՝ երկրի լեռնային մասերում հաստատելով մի շարք ասորական ճամբարներ՝ այնտեղ ասորական ազդեցությունը ամրացնելու նպատակով»[19]*։*

Ասորեստանին հմայում էին Հայաստանի բնական հարստություննե-րը՝ հատկապես, տարբեր մետաղներով հարուստ հանքավայրերը։ Այնտեղով էին անցնում նաև շատ կարևոր առևտրական ուղիներ, որ մեծ օգուտ կարող էին բերել Ասորեստանին, եթե, իհարկե, ասորիները կարողանային իրենց ենթարկել Հայաստանը։

Իսկ այդ ժամանակներում, ինչպես նշել ենք, Հայաստանը կորցրել էր իր նախկին հզորությունը, և երկրում արդեն պառակտումներ կային։ Նման վիճակը շատ նպաստավոր էր ասորիների նկրտումների իրագործման համար։

Ասորիներն, այդպիսի նպաստավոր պայմանները չանտեսելով, հարձակումներ սկսեցին Հայաստանի վրա և կարողացան իրենց ենթարկել և հարկատու դարձնել։

Այդ ժամանակներում է սկսվել նաև Տրոյայի մեծ պատերազմը։ Տարբեր գիտնականներ տվյալ պատերազմի տարեթվի շուրջ ունեն որոշ տարաձայնություններ, և դրանց դիտարկմամբ՝ ստացվում է ոչ փոքր միջակայք՝ ն.Ք. 1240 – 1180 թվականների միջև է տեղի ունեցել այդ պատերազմը։ Սակայն հիմա մասնագետների մեծամասնությունն ավելի է հստակեցնում այդ ժամանակահատվածը՝ համարելով, որ դա տեղի է ունեցել ն.Ք. 1190-1180թթ։



Մինչ այդ պատերազմը հայկական արքունական գահին Նորայրից հետո միմյանց փոխարինելով՝ նստել են Վատամը, Կարը, Գոռակը, Հրանտը, Ընձաքը, Գզակը, Հորոն և արդեն Տրոյական պատերազմի ժամանակ Հայոց գահակալն էր Զարմայրը, ով ևս մասնակցել է այդ պատերազմին։

Հայոց արքա Զարմայրը, ըստ Խորենացու, իր փոքրաթիվ զորքով եթովպացիների[20] *զորքի հետ օգնության է գնացել Տրոյայի արքա Պրիամոսին, ում ըստ Մովսես Խորենացու՝ այդ քայլին է մղել*

---

19 Авдиев В. И. История Древнего Востока, Ленинград 1948 г., ст. 370.

20 Եթովպացի ասելով՝ իհարկե, պետք է հասկանալ, որ խոսքն այդ կողմերում բնակվող թխամորթ ցեղերի մասին է, այլ ոչ՝ այսօրվա եթովպացիների:

Ասորեստանի արքան[21]*։*

Մխիթար Այրիվանեցին ասում է, որ Զարմայրն իշխեց այն ժամանակ, երբ ***«հռոմեացիների վրա թագավորեց Էնեյոսը»***[22]*։ Իսկ դա մ.թ.ա. 1179-1176 թվականների միջակայքն է, որ համընկնում է Տրոյայի անկման ժամանակաշրջանին։*

Ըստ Միքայել Չամչյանի՝ այդ հռչակավոր պատերազմում Զարմայրը մենամարտի ժամանակ ընկել է Աքիլլեսի սրից. ***«Զարմայրը Հորոյից հետո նստեց մոտ 12 տարի, սա, շատերին հաղթելով, եղավ երևելի, նրա հզորությունից շատերն էին զարհուրում։ Նրա ժամանակ եղավ մեծ պատերազմ՝ տրոյացիների և հույների միջև։ Քանի որ նա տրոյացիների բարեկամն էր, գնաց նրանց օգնության և պատերազմի ժամանակ բազում քաջություն ցուցաբերեց, և սաստիկ քաջությամբ մենամարտելով Աքիլլեսի հետ՝ ընկավ մարտում»***[23]*։*



Որ Զարմայրն Աքիլլեսի հետ մենամարտում է զոհվել, դա ընդամենը վարկած է, սակայն ընդունվել է շատերի կողմից։ ***«Երբ մոտ էր Պրիամոսի կործանումը, հայերը Տրոյայի պարիսպների տակ, այդ արյունահեղ պատերազմում ահեղ մահվանից չվախենալով, պայքարում էին նեղության մեջ ընկածների համար։ Հեկտորի բարեկամ Զարմայրը հրաշալի Աքիլլեսի հետ էր մենամարտում, ում վրա զարմանում էր հին աշխարհը»***[24]*։*

---

21 «Բացառված չէ, որ ի դեմս «Տևտամոս»-ի մենք գործ ունենք Ասորեստանի հերթական արքա Նինուրտա-ապիլ-էկուլայի (մ.թ.ա. 1192–1180) հետ: Իրոք, եթե Մարական թագավորության արքա Ուվախշատրայի (մ.թ.ա. 625–585) անունը հույները մեզ են փոխանցում անճանաչելիության աստիճան աղաղվաղված տեսքով («Կիաքսար»), իսկ հայկական պատմական ավանդույթն էլ այս արքային գիտի՝ որպես «(Վ)Արբակես», ապա ինչու հանկարծ ակնհայտորեն «խոսող անուն» ունեցող Նինուրտա-ապիլ-էկուլան չի կարող դառնալ «Տևտամոս»»: Վիքիպեդիա

22 Մխիթարայ Այրիվանեցիոյ Պատմութիւն Հայոց, Մոսկվա 1860 թ., էջ 35:

23 Միքայէլ Չամչյանց, Խրախճան պատմութեան Հայոց, ի Վէնէտիկ 1811 թ., էջ 14:

24 Две Повести въ стихахъ, Сергея Глинки, Москва 1831 г., ст. 34.

Ուրարտու– Վանի թագավորություն. Արամե

««Արարատն» ի հայտ է գալիս Ասորեստանի թագավոր Սալմանասար առաջինի արձանագրության մեջ (մ.թ.ա. 1272-1243 թթ.)՝ որպես Ուրուատրի կամ Ուրատրի: Ավելի ուշ այն դառնում է Ուրարտու և անկախ թագավորություն՝ տարածված Վանա լճի շրջակայքում: Բիբլիական ժամանակաշրջանում հրեաներն այդ վայրը ճանաչում էին՝ որպես «Արարատյան երկիր» (Դ Թգ 19:37, Ես 37:38)»[25]:

Ն.Ք. XII-IX դարերում Հայաստանն ընկնում է ասորական ազդեցության տակ ոչ միայն քաղաքական, այլև՝ մշակութային առումով: Այդ՝ մոտ 300 տարիների ընթացքում, առանձնապես ակնառու իրադարձություններ չեն հիշատակվել՝ կապված Հայաստանի հետ: Ասորեստանից կախման մեջ լինելու հետևանքով ասորական մշակույթն սկսում է խորն ազդեցություն ունենալ հայոց վրա: Հայերի անվանումներն արձանագրություններում սկսում են ավելի որոշ ասորական հնչողություն ունենալ, սկսում են գործածության մեջ մտնել ասորական սեպագրերը և այլն:

Կարելի է կարծել, որ գտնվելով Ասորեստանից կախման մեջ՝ հայերը ո՛չ հարձակում են կրել այլ երկրների կողմից և ո՛չ էլ իրենք են ասպատակել այլ երկրներ, ապրել են միապաղաղ կյանքով՝ հարկեր վճարելով ասորիներին: Սակայն Արարատյան թագավորությունը պառակտվել էր՝ բաժանվելով մի քանի տերություններին: Արարատյան Երկիր անվանումը պահպանվել էր երկրի հյուսիսային կողմում, որն ավելի մեծ էր մյուսներից, և այնտեղ էր նստում հայոց արքան: Հարավում գոյացած իշխանությունն անվանվել էր Նաիրի, որը չուներ կենտրոնացված իշխանություն, այլ տարբեր իշխանական տների միություն էր: Իսկ արևմուտքում ձևավորվել էր Դիաուխի՝ Տայք պետությունը:

Իհարկե, երբեմն հայերը ըմբոստանում էին Ասորեստանի դեմ, սակայն պառակտված վիճակում նրանք միասնական ուժերով չէին ելնում պատերազմի, ինչի հետևանքով էլ կրում էին պարտություններ:

Ասորեստանցիներն այդ բոլոր տերությունների բնակչությանը վերաբերվում էին՝ որպես միևնույն ժողովրդի: Բայց քանի որ Ասորեստանին սահմանակից էր Նաիրին, նա ավելի հաճախ էր ճնշումների ենթարկվում: **«Ասորեստանցիները Երկիր Ուրուատրի կամ Նաիրի էին անվանում այդ**

[25] Роберт Грейвс, Мифы Древней Греции, книга 1, Москва 1999 г., ст. 163, 169–171:

շրջանը... Թուկուլտի Նինուրտա I-ին հաջողվեց ջախջախել Նաիրիի 43 իշխաններից կազմված միությունը»[26]:

Այդ ժամանակներում ասորիներն էլ մեծ հարձակումներ կրեցին սեմական քոչվոր ցեղերի կողմից, ինչի հետևանքով էլ բավականին տկարացան: Սակայն պառակտված Հայաստանին հարկատուի կարգավիճակում պահելու կարողություն, այնուամենայնիվ, ունեցան, հատկապես, որ միաժամանակ անց՝ նրանք կարողացան վերագտնել իրենց ուժերը: ***«Մ.թ.ա. XII դ. Ասորեստանն անընդմեջ պատերազմներում իր ուժերը վատնելով՝ սկսում է անկում ապրել: Սակայն մ.թ.ա. XII-XI դարերի սահմաններում Թիգլաթ-Պալասար I-ի (1115-1077 թթ. մ.թ.ա.) կառավարման ժամանակ նրան է վերադառնում նախկին հզորությունը»***[27]:

Նախկին վեհաշուք փառքն ու հզորությունը կորցրած Հայոց աշխարհը նույնպես օրեցօր սկսում էր վերագտնել իր նախկին վայելչությունը. ***«Չնայած Ասորեստանի արշավանքներին՝ նաիրյան-ուրարտական ցեղախմբերի զարգացումն անշեղորեն տանում էր դեպի պետության կազմավորումը:***

Եվ ահա՝ Արամե (Արամու) թագավորի գլխավորությամբ մ.թ.ա. 9-րդ դարի կեսերին նոր միայն կազմավորված ուրարտական պետությունը համառ դիմադրություն է ցույց տալիս վերստին հզորացած Ասորեստանի Սալմանասար 3-րդ թագավորի զորքերին»[28]:

Այսպիսով, Արարատյան երկրի գահին Ն.Ք. 860 թ. նստում է Արամը, որին անվանում էին նաև Արամե կամ Արամու: Նա, լինելով հայրենասեր, առաքինի, համարձակ և իմաստուն այր՝ մեծ ցավ է ապրում իր նախնիների հզոր երկրի պառակտված և Ասորեստանից կախման մեջ ընկած վիճակի համար: Եվ մինչ Ասորեստանի հետ հարաբերությունները պարզելու գործընթացին անցնելը նա հոգ է տանում երկրի ներքաղաքական վիճակի բարելավման համար, որպեսզի պառակտված երկիրը վերստին միավորի և դարձնի մեկ հզոր թագավորություն՝ իր նախնիների ժամանակվա հայոց փառքը վերահաստատելով:

«Առաջին ուրարտական պետական կազմավորումների համախմբումը մ.թ.ա. IX դ. կեսերին պայմանավորված է եղել ասորական ագրեսիայի դեմ պայքարի համար միավորման ջանքերի անհրաժեշտությամբ: Միացյալ Ուրարտուի առաջին տիրակալ դարձավ Արամե (մ.թ.ա. 864-845 թ.) թագավորը, որի տերության դեմ էին ուղղված Սալմանասար III-ի բանակի արշավները: Մենք տիրապետում ենք այդ արշավների մասին ասորեստանյան աղբյուրների տեղեկություններին, որոնք, բնականաբար, հակ-

---

26 История древнего востока, под ред. В.И. Кузищина, Москва 1979 г., ст. 202–203

27 Նույն տեղում:

28 Հարություն Մարտիրոսյան, Քարի դարից Ուրարտու, Երևան 1971 թ., էջ 103:

ված են եղել բոլոր դեպքերը մեկնաբանելու՝ ի նպաստ Ասորեստանի»[29]***:***

Արամի բարեփոխումները խափանելու նպատակով Ասորեստանը նոր արշավներ է ձեռնարկում դեպի Հայկական լեռնաշխարհ: Ըստ ասորական աղբյուրների՝ Արամը պարտություն է կրում: Սակայն մասնագետների կարծիքով՝ դրանք մասնակի ճակատամարտեր էին, որից երկիրն առանձնապես չի տուժում, իսկ ասորիները հասկանում են, որ սա այլևս այն պատակտված և հեշտությամբ ծնկի եկող երկիրը չէ: ***«Մ.թ.ա. 859 թվին հարձակման ենթարկվեցին Վանա ծովի հարավային տարածքները, մ.թ.ա. 856 թվին ասորեստանցիները երկրորդ անգամ պարտության մատնեցին Արամեին և գրավեցին «արքայական քաղաք» Արզաշկունը: Սակայն, այդ պատերազմական գործողությունները չառնչվեցին հիմնական շրջանների՝ Ուրարտուի և Մուսասիրի հետ և, հակառակ նինվեական տիրակալների, նոր պետությունը շարունակեց իր աճը և հզորացումը»***[30]***:***

Հայ պատմաբանները նշում են, որ Արամե Ուրարտացին 860-840 թվականների արձանագրություններում հիշատակվում է 3 անգամ: Նա, միացնելով Հայկական լեռնաշխարհի իշխանությունների մեծ մասը, սկսում է խորագիտորեն պայքարել ասորեստանցիների դեմ: Եվ այն, ինչն ասորիները համարել են հաղթանակ, իրականում եղել է Արամեի ռազմավարական մտահղացումը: Այսպես, ասորիները խորանում են հայկական տարածքներից ներս (որպեսզի ոչնչացնեն նոր ձևավորվող Հայոց միասնական բանակը), սակայն դիմադրության չեն հանդիպում, քանի որ Արամեն խելամտորեն բանակը ետ է քաշում դեպի լեռնային տարածքները: Ասորական բանակն էլ, չհամարձակվելով հետևել նրանց, ձախողված է վերադառնում Ասորեստան: Դրանով Արամեն պահպանում է նոր ձևավորվող հայոց միացյալ բանակը, որպեսզի այն ավելի հզորացնելով՝ հետագայում կարողանա ոչ միայն պաշտպանվել, այլև՝ անցնել հակահարձակման:

Այդ ռազմավարությունը հայ մասնագետները նմանեցնում են Միխայիլ Կուտուզովի կազմակերպած նահանջին՝ Մոսկվայից, որով նա կարողացավ պարտության մատնել Նապոլեոն Բոնապարտին:

Այդկերպ՝ հազարամյակներ առաջ Հայոց արքա Արամեն, հաջողությամբ դիմագրավելով Ասորեստանի հարձակումներին, մ.թ.ա. 9-րդ դարի 1-ին կեսին դնում է Արարատյան միասնական տերության հիմքը, և մոտ երեք հարյուր տարի պատակտված և թշնամու սրի տակ խոնարհված Արարատյան երկիրն սկսում է վերածնունդ ապրել: Սեպագրերում այն հիշատակվում է՝ որպես Ուրարտու: Իսկ թե ինչո՞ւ է այն նման կերպ անվանվել, դրան մենք կանդրադառնանք:

«Ուրարտական միացյալ թագավորության հիմնադիրը, հավանաբար,

---

[29] История древнего востока, под ред. В.И. Кузищина, Москва 1979 г., ст. 218.

[30] Նույն տեղում:

եղել է Արամ արքան կամ Արամուն, որ հիշատակված է Սալմանասար III-ին վերաբերող ասորեստանյան արձանագրություններում՝ 860, 858 և 846 թվերին՝ մինչ մեր թվարկությունը... Համաձայն հանգուցյալ Նիկողայոս Ադոնցի ժամանակագրության՝ Արամուի թագավորությունը թվագրվում է 880-844 մ.թ.ա: Արամուն եղել է առաջին տիրակալը, որին տիտղոսավորել են «էրիլի էրիլե». այսինքն՝ «թագավորների թագավոր, շահնշահ»[31]:

Հավանաբար, Արամը միավորել է պառակտված հայկական բազմաթիվ իշխանական տները՝ իշխելով նրանց բոլորի վրա, այդ պատճառով էլ կոչվել է «թագավորների թագավոր», այլ ոչ՝ այն պատճառով, որ օտար երկրներ է գրավել:

«Ք.ա. IX դարում միջազգային ասպարեզում իր հայտը ներկայացրեց Վանի թագավորությունը, որն ասուրերեն բնագրերում մշտապես կոչվում է Ուրարտու, տեղական արձանագրություններում՝ Նաիրի և Բիայնիլի, Աստվածաշնչում՝ Արարատ»[32]:

Այդ ժամանակներից մոտ 1000 տարի առաջ Հայաստանը՝ Արարատյան երկիրը, անկման վիհից վեր հանեց Արամ Մեծը, իսկ այնուհետ այդ նույն հայրենանվեր գործընթացը վերսկսեց նրա անվանակից Արամ Ուրարտացին: Եվ ուրեմն, ինչ ասվել է Արամ Մեծի մասին, նույնը կարելի էր ասել նաև Արամե Ուրարտացու մասին. ***«Արամը աշխարհապահ էր. այսինքն, իր հայրենյաց սահմաններն ազատող, շինող և պահող... աշխատասեր և չափազանց հայրենասեր»*** [33] :

Սակայն Արամ I-ը, մեծ հայրենասեր լինելով, նաև ճշմարիտ Աստծո հետևորդ էր: Իսկ Արամեն արդեն, ցավոք, բազմաստվածության էր հարում, ինչը, սակայն, Նախախնամության թույլատու կամոք էր:

«Վանի մոտ գտնվող ամբողջ երկիրն այժմ միասնական հզոր պետություն էր՝ Արամ արքայի իշխանությամբ, որի մայրաքաղաքն էր Արզաշկունը. վայր, որը Բեյլը տեղադրում է Ադելդժեվազի մոտ՝ Վանի արևմտյան ափին: Արամ թագավորն իր մասին թողել է հիշատակություններ ավանդություններում. հնարավոր է, որ Արմենիա = «Արմենա» = Արամի երկիր: Նրա դեմ Սալմանասար III-ը ձեռնարկեց մի քանի արշավ (860-857, 844): Չնայած ասորեստանյան արքան ասում է Սուգունի, Արզաշկուն և Արամալի ամրոցների գրավման մասին և այդ հերոսությունները պատկերում է իր հանրահայտ բալավաթյան դարպասների վրա, այնուամենայնիվ, նա չի կարողացել հաղթահարել ո՛չ Արամին, ո՛չ էլ նրան փոխարինող Սարդուրի I-ին»[34]:

---

31 Дэвид Ленг, «Армяне, народ – созидатель», Москва 2004 г., ст. 103.

32 Արտակ Մովսիսյան, Հայոց պատմության աշխարհակալությունները, Երևան 2008 թ., էջ 35:

33 Ղեւոնդ Ալիշան, Հայաստան յառաջ քան զլինելն Հայաստան, Վենետիկ, Սուրբ Ղազար, 1904 թ., էջ 176:

34 Тураев Б.А., История древного востока, том II, Ленинград 1936 г., ст. 33–34.

Սարդուրի I

«20-րդ դարասկզբին Փոքր Ասիայի Անատոլիայի բարձրավանդակում հայտնաբերվեց երկար ժամանակ մոռացված մի հոյակապ թագավորություն և քաղաքակրթության օրրան: 1936թ. մի ապարանքի կամ ամրոցի համակարգված և գիտական պեղումներն էին, որ բացահայտեցին այդ կորած քաղաքակրթությունը, և դա հնագույն Ուրարտուի թագավորությունն էր (այդ անունը տրված էր ասորեստանցիների կողմից), որը կենտրոնացված էր Վանա լճի շուրջ»[35]:

*Արամեից հետո Արարատյան երկրի գահին նստեց Սարդուրի I-ը, սակայն նա չէր սերում Արամից, այլ՝ ոմն Լուտիպրիից. **«Ուրարտական տիրակալ Սիդուրին (Սարդուր), հիշատակված է Սալամանասար III-ի տարեգրության մեջ. նրան հնարավոր է նույնացնել ուրարտական տիրակալ Սարդուրի Լուտիպրիի որդու հետ»**[36]:*

*Սարդուրին ևս Արամի նման անհոգ չգտնվեց երկրի բարգավաճման նկատմամբ և նրա նման ոչ թե գլուխ խոնարհեց արտաքին թշնամիների առջև, այլ դիմակայեց նրանց: Իսկ երկրի ներսում առավել ևս իր շուրջը կենտրոնացրեց իշխանությունը: Սա էլ իր նախորդ Արամի նման իրեն ներկայացնում էր մեծ տիտղոսներով, որով կարծես հայտարարում էր ոչ միայն Ասորեստանից որևէ կախում չունենալու մասին, այլև պահանջատերի կեցվածք էր որդեգրում: **«Ուրարտական տիրակալ Սարդուրի I-ը (835-825 մ.թ.ա.) արդեն պաշտոնապես ի ցույց է դնում իր կայսերական պահանջները: Նա ամբողջովին ընդունում է ասորական թագավորներից վերցված ճոխ տիտղոսը, որտեղ միայն Ասորեստան անվանումը փոխված է Ուրարտուով: Դա ուղիղ մարտահրավեր էր Հին Արևելքի հզոր տերություններին»** [37]:*

*Դրան ի պատասխան՝ Ասորեստանը, ցանկանալով Սարդուրիին իր տեղը ցույց տալ, մարտարշավով ելնում է նրա դեմ: Սակայն շատ շուտ համոզվում է, որ Սարդուրիի խոսքերը դատարկ պարծենկոտություն չէին. վեհաշուք տիտղոսները լիովին համապատասխանում էին նրա կերպարին: **«Ուրարտուի Սարդուրի թագավորը կարողացավ հակահարված տալ***

---

35 Maximillien de Lafayette, "Civilization and Arts of Armenia from Pre–History to the Present Day: Its Culture, Society, Stars, Artists and Celebrities" Volume 1, USA San Bernardino, CA 25 May 2015, p. 101.

36 В. В. Струве, История древнего Востока, Москва 1941 г., ст. 310.

37 История древнего востока, под ред. В.И. Кузищина, Москва 1979 г., ст. 218.

ասորական զորքերին... Ուրարտու պետությունը գլխավորող Սարդուրի Ի-ը հպարտորեն իրեն անվանում է «մեծ թագավոր, հզոր թագավոր, տիեզերքի թագավոր, Նաիրիի երկրի թագավոր, թագավորների թագավոր»»[38]*:*

Կա նաև կարծիք, որ Սարդուրին ասորիներին հաղթելուց հետո է իրեն նման տիտղոսներ վերագրել. ***«Տուշպա (Տոսպ, Վան) մայրաքաղաքի հիմնադրման արձանագրություններում Սարդուրի Ի-ը ներկայանում է ասորեստանյան արքաների տիտղոսաշարով՝ «մեծ արքա, հզոր արքա, տիեզերական արքա, արքաների արքա...» որը, հավանաբար, նրան էր անցել հաղթողի իրավունքով՝ Ասորեստանի նկատմամբ տարած հաղթանակի արդյունքում»***[39]*:*

Սարդուրին, թողնելով Արզաշկունը, հիմնում է նոր մայրաքաղաք՝ Տուշպան, որ անվանվում էր նաև Վան, ինչից ելնելով էլ՝ երկիրը կոչվում է նաև Վանի թագավորություն: ***«Ուրարտական պետության մայրաքաղաքը դառնում է Տուշպան, որի շուրջը վեր են բարձրանում քարե հզոր պարիսպներ: Տուշպայի տիրակալների հովանու ներքո միավորվում են փոքր տերությունները, միաձուլվելով դառնում մի պետական օրգանիզմ: Ի զուր չէ, որ Սարդուրին իրեն անվանում է «թագավորների թագավոր, ով բոլոր թագավորներից հարկ էր ստանում»»***[40]*:*

Եթե Արամը հիմք դրեց Արարատյան երկրի՝ Հայաստանի վերազարթոնքին, ապա նրանից հետո իշխանության եկած Սարդուրին այն կայացրեց՝ դարձնելով տարածաշրջանի հզոր երկրներից մեկը, որի հետ սկսեցին հաշվի նստել շուրջը եղած երկրները: Սարդուրին էլ արդեն քաղաքական հարաբերությունների մեջ մտավ մերձակա տերությունների հետ և առաջարկեց միասնական ուժերով ճնշել ասորեստանցիներին, ինչն էլ լիովին հաջողվեց: Ասորեստանն էլ հարձակվողի դերը թողնելով, անցավ խորը պաշտպանության, ինչը նրան միշտ չէր հաջողվում:

«Ուրարտուն իսկապես կարողացավ իր իշխանությունը սփռել ոչ միայն դեպի հարավ՝ այն տարածքներ, որ երբևէ գտնվել էին Ասորեստանի իշխանության տակ, այլև՝ դեպի արևմուտք: Այդ տարածքներում բնակիչներն իրենց ամրությունները կառուցում էին ամենաբարձր գագաթներին. նրանք լեռնաբնակներ էին և իրենց երջանիկ չէին զգա, եթե չկանգնեին բարձունքներում և չտեսնեին չորս բոլորը: Այժմ Ուրարտուի սահմաններն իրենց մեջ ներգրավեցին հին խեթական տարածքների մեծ մասը, իսկ Սարդուրի Ի-ը՝ Ուրարտուի արքան, դեսպաններ ուղարկեց դեպի արևելք, որպեսզի դաշինք կնքեն մադ և պարս ցեղերի հետ՝ ընդդեմ Ասորեստանի: Իր դեմ ունենալով նման ուժեր՝ Սալմանասար IV-ի թոռ

---

38 Авдиев В. И. История Древнего Востока, Ленинград 1948 г., ст. 406.

39 Արտակ Մովսիսյան, Հայոց պատմության աշխարհակալությունները, Երևան 2008 թ., էջ 35:

40 История древнего востока, под ред. В.И. Кузищина, Москва 1979 г., ст. 218.

Աշշուր-Նիրարի V-ը կարող էր միայն փորձել պահպանել բարձրավանդակի անվտանգությունը: Բայց նույնիսկ դրանում հաջողության չհասավ»[41]:

Իշպուինի

Սարդուրիին փոխարինեց Իշպուինին: Նա էլ ավելի ընդարձակեց Հայաստանի սահմանները, զարկ տվեց մշակութային և շինարարական աշխատանքներին: ***«Միասնական պետության ամրապնդման ակտիվ գործունեությամբ է նշանավորված ուրարտական թագավոր Իշպուինիի (825-810) կառավարումը: Եթե Սարդուրիի գրառումները գրվում էին ասուրերեն, ապա այժմ բոլոր պաշտոնական գրությունները կազմվում էին ուրարտական լեզվով, որի համար օգտագործվում էին մի փոքր ձևափոխված ասուրական սեպագրերը: Տուշպայի կառավարիչների տերության սահմաններն ընդարձակվում են մինչ Ուրմիա լիճը, և երկրորդ ուրարտական պետական գոյացություն Մուսասիրը դառնում է կախյալ տերություն: Այդ ժամանակ էլ բոլոր ուրարտական ցեղերը միանում են մի պետության մեջ... Միաժամանակ արդյունավետ շինարարական գործունեությունն ընդգրկում է պետության համարյա ողջ տարածքը: Այդ մասին տեղեկացնում են Իշպուինիի բազմաթիվ շինարարական գրառումները»***[42]:

Նորից ամբողջական էր դառնում Հայոց աշխարհը, ինչպիսին եղել էր նախկին՝ փառավոր ժամանակներում: Կենտրոնական միապետական կառավարման կերպով հոգածություն էր ցուցաբերվում ամբողջ երկրի հանդեպ, և ընդհանուր զարգացումը տարածվում էր բոլորի վրա: Ծավալուն շինարարական աշխատանքներ էին կատարվում ամբողջ երկրով մեկ, քանի որ ներքին հանածոներն այլևս հարկերի ձևով երկրից դուրս չէին ելնում, իսկ թշնամիները նորից սկսել էին երկյուղով նայել Հայաստանի կողմը. ***«Ուրարտական արքաները կառուցում էին քաղաքներ, ամրոցներ, տաճարներ, անցկացնում ոռոգման ջրուղիներ: Այդ լայնածավալ շինարարությունը Ուրարտուի նոր սկսվող ծաղկման արտացոլումն էր: Իշպուինին կառուցեց Վանից յոթ մղոն հեռավորության վրա մի տաճար, ինչպես որ այդ մասին ասվում է այուների վրա առկա գրառումներում»***[43]:

Հայոց Իշպուինի արքան ամրապնդեց երկրի քաղաքական և տնտեսական վիճակը, ապա սկսեց պատերազմական գործողություններ ծավալել և նախկինում իր երկրին վնասներ հասցրած երկրներին հատուցել

---

41 Сьюзен Уайс Бауэр, История Древнего мира. Москва 2018 г., ст. 446.

42 История древнего востока, под ред. В.И. Кузищина, Москва 1979 г., ст. 218.

43 Авдиев В. И. История Древнего Востока, Ленинград 1948 г., ст. 408.

ըստ արժանվույն։

Իշպուինին արդեն հասունացած և մարտարվեստին քաջատեղյակ իր որդուն՝ Մենուային, պատրաստեց՝ որպես իրեն փոխարինող՝ ոչ միայն պատերազմներում, այլև երկրի ներքին կառավարման խնդիրներում։

«Ուրարտացիները հաջողությամբ արշավներ էին իրականացնում Ուրմիայի հարավային ափերի մոտ։ Իշպուինին և Մենուան դեպի հյուսիս կատարվող արշավների ժամանակ անցան Արաքս գետը և ներխուժեցին հարավային Կովկասի տարածաշրջան։ Ընդամին, գրառումները նշում են թվակազմն ուրարտական բանակի, որ ուղարկված էր դեպի հյուսիս. այն կազմված էր 66 մարտակառքից, հազարից ավելի հեծելազորից, և 15760 հետևակներից»[44]*։*

Իշպուինին տեղեկացնում է նաև բազմաթիվ այլ մարտարշավների մասին։ Ուրմիա լճից դեպի հարավ-արևմուտք արշավելով՝ հայոց գնդերը գրավում են Մաննայի թագավորությունը և մեծ ավարով վերադառնում են Արարատյան երկիր, բայց և Իշպուինին հրամայում է, որ այդ գրավված երկիրը թողնեն հնարավորինս բարվոք վիճակում, որպեսզի այն դարձնի ամուր պատվար՝ Արարատյան երկրի հարավային թշնամիների դեմ։

Հայաստանին արդեն սպասվում էր մի նոր զարթոնք, քանզի այս վերջին արքաները ամուր հիմք դրեցին դրա համար՝ թե՛ ներքին և թե՛ արտաքին քաղաքականության մեջ։ ***«Ուրարտական արքաներ Իշպուինին և Մենուան, որ տիրում էին IX դարի վերջին և VIII դարի սկզբին, դրեցին Ուրարտուի արքայության ապագա հզորության հիմքերը։ Արքաներ Իշպուինին և Մենուան հարևան ցեղերի դեմ մղում են հաջող մարտեր և լայնացնում են պետության սահմանները»***[45]*։*

Իշպուինիի ժամանակ Ասորեստանում տիրում էր Շամշիադադ V-ը, իսկ նրա անվանակից Շամշիադադ I-ը, որ Նինոսն էր, ապրել է նրանից մոտ 1000 տարի առաջ։ ***«Սարդուրիի որդի Իշպուինին հիշատակվում է Շամիշիադադի տարեգրության մեջ՝ 824 թ.՝ դեպի Նաիրի արշավի նկարգրություններում»***[46]*։*

Արդեն հասակն առած Իշպուինին իր որդուն՝ Մենուային, կարգում է թագավոր և վախճանվելով՝ միանում իր նախնիներին։

---

44 В. В. Струве, История древнего Востока, Москва 1941 г., ст., 310.

45 Авдиев В. И. История Древнего Востока, Ленинград 1948 г., ст. 406.

46 Б.Б. Пиотровский, Ванское царство (Урарту), Москва 1959 г., ст 40.

Մենուա

«Այսօրվա Հայաստանը... Հիշողությանս մեջ են գալիս խիտ հոնքերով, արծվաքիթ և ամուր մարդիկ: Հիշողությանս մեջ ապրում է նրանց աչքերի արտահայտությունը, իսկ նրանց դեմքի առանձնահատկությունները տարալուծվում են հավերժական միացությամբ հնի, նորի և դեռ չծնվածի հետ»[47]:

*Սարդուրիի թոռ, Իշպուինիի որդի Մենուան արդեն նստում է մի այնպիսի երկրի գահին, որի հետ, ի դեմս Հայաստանի, ստիպված էին հաշվի նստել միջագետքյան և այլ հզոր տերությունները ևս: Մենուան իր նախորդների արժանի ժառանգն էր. նա անհոգություն չցուցաբերեց իր նախնիների կողմից իրեն վստահված հայոց փառապանծ երկիրը կառավարելու պատասխանատու գործի հանդեպ: Մենուան առավել մեծ թափով սկսեց քաղաքական և տնտեսական առաջխաղացման գործընթացներին զարկ տալը. **«Մենուայի միանձնյա կառավարման շրջանում (Ք.ա. 810-786 թթ.) Վանի թագավորությունը հասնում է աննախադեպ հզորության»**[48]:*

Երկրում կայուն խաղաղություն և բարգավաճում ապահովելու համար Մենուան նախ ջանում է հարևան երկրների հետ իր հարաբերությունները կարգի բերել, որպեսզի երկրի բարգավաճման աշխատանքներով տարված՝ անակնկալ հարձակման չենթարկվի նրանց կողմից: Իսկ Արարատյան երկիրը չորս կողմից շրջապատված էր երկրներով, որոնք բոլորն էլ, հնարավորության դեպքում, ձեռնպահ չէին մնա արշավել Հայոց աշխարհի վրա:

«Հայաստանի անկախությունն ապահովելու համար հայ ժողովրդի մղած մշտական պատերազմները, երկրի խիստ կլիմայի հետ մեկտեղ, հայերին դարձնում են ռազմիկ և կորովի ցեղ, դիմացկուն ու քաջ, նրանք ուժգնորեն կապված են իրենց հողին ու իրենց ազգային ազատությանը, ինչի համար շատ արյուն են թափել: Հայաստանի այս մասնավոր դիրքի մեջ պետք է փնտրել այս ջերմ հայրենասիրության ծագումը, որ ամեն հայի սիրտ բաբախել է տալիս: Այնտեղ պետք է փնտրել նաև Ուրարտուի թագավորության՝ դարերով պահելու պատճառները: Մինչդեռ արևելքի մյուս բոլոր տերությունները հերթականությամբ ընկել են Ասորեստանի հարվածների տակ: Այդ պատմության ընթացքում տեսնում ենք, որ

---

47 Никола Инджов. Высоты и подножья // Литературная Армения. 1988. № 3.

48 Արտակ Մովսիսյան, Հայոց պատմության աշխարհակալությունները, Երևան 2008 թ., էջ 35:



հայ ազգը շարունակ պայքարել է իր հողը, իր ազատությունը, իր ավանդությունները պահպանելու համար և միշտ հարձակումներ է կրել իր սահմաններ-ի չորս կողմերից այն պատճառով, որ ճակատագիրն իրեն դրել է ամբողջ Ասիայի ռազմագիտական ամենակարևոր դիրքում»[49]***։***

Այսպիսով, շարունակելով իրականցնել իր հոր՝ Իշպուինի նախաձեռնած գործերը՝ Մենուան առաջին հերթին սկսեց ռազմական ուժերի հզորացման ճանապարհով աշխատանքներ ծավալել. ***«Մենուան մեծ ուշադրություն է դարձնում բանակի կազմավորմանը։ Հիմքեր կան ենթադրելու, որ իր կառավարման շրջանում կենտրոնական իշխանությունն է ամբողջությամբ ստանձնել բանակին վերաբերող հոգսերը...***

Ուրարտական արքաները մշտական ջանքեր են գործադրում՝ զինված ուժերի հագեցվածության ապահովման և կատարելագործման համար։ Դրա հիմքում ընկած էր արհեստավարժ բանակը, որն ամբողջովին գտնվում էր արքայական հոգածության ներքո։ Ասորեստանցիներն ընդգծում էին ուրարտացիների վարպետությունը՝ հեծելազորի համար նախատեսված ձիերի վարժեցման գործում»[50]***։***

Բանակի հզորացման և կատարելագործման խնդիրները լուծելով՝ Մենուան սկսում է Հայոց սահմանամերձ երկրների վրա ի գործ դնել իր հզոր բանակի ունակությունները։ Մենուան, լինելով արքա, նաև մեծ զորավար էր և ռազմիկ, և անգամ փորձառու մարտիկները չէին կարողանում գերազանցել նրա ռազմական հմտությունները։ Պահպանվել են արձանագրություններ, որտեղ պատմվում են ռազմական վարժանքների ժամանակ նրա առանձնահատուկ հաջողությունների մասին։ Հատկապես ուշագրավ է այն արձանագրությունը, որտեղ պատմվում է Մենուայի՝ այդ ժամանակների համար աննախադեպ՝ նժույգով հեռացատակի մասին. ***«Գրառումներում բազմիցս տեղեկացվում է ուրարտական արքաների ձեռքբերումների մասին՝ նժույգներով ցատկելու և աղեղից նետարձակման մասին։ Պահպանվել է հուշաքար, որտեղ ասվում է. «Այստեղից***

---

[49] Ժագ Դը Մորգան, Հայ ժողովուրդի պատմութիւնը, Պոսթըն, 1947 թ., էջ 43:

[50] История древнего востока, под ред. В. И. Кузищина (изд. III, переработанное и дополненное), Москва 2005 г., ст 208–209.

Արծիբի անվամբ նժույգը, որին հեծել էր Մենուան, ցատկեց 11 մ. 20 սմ. (արդյունքը մոտ է ժամանակակից ձիացատկման ռեկորդներին)։ Իզուր չէ նժույգի անունը Արծիբի կոչվել. այն կարող է թարգմանվել՝ որպես «արծիվ»։ Բանակը եղել է նաև Ուրարտուի հզորությունը և բուն գոյության հիմքը»[51]։



*Իհարկե, հայերին սահմանակից երկրներից միայն մեկը չէր թշնամական տրամադրված, բայց ամենաոխերիմը Ասորեստանն էր, որ մի քանի դար Հայաստանին պահել էր հարկատուի վիճակում։ Եվ արդեն հասունացել էր հատուցման ժամը. **«Իշպուինիի որդի Մենուան իրեն ենթարկեց մաննևացիներին և նման կերպ ներխուժելով Ասորեստանի թիկունքը՝ սկսեց մեկը մյուսի ետևից նրանցից խլել տարածքները։ Ադադնիրարին փոխարինող Սալմանասար IV-ը (783-773) համարյա թե ամեն տարի արշավում էր Ուրարտուի դեմ, բայց հաջողության չէր հասնում։ Նրան հետևող Աշշուրդան II-ը (773-755) և Աշշուրնիրարի II-ը (754-745) եղել են թույլ արքաներ, նրանք չէին էլ կարող մտածել հյուսիսի դեմ լուրջ պայքար մղելու մասին, քանի որ Ասորեստանում մշտապես խառնակություններ էին տեղի ունենում։ Իսկ այդ ընթացքում Մենուան իրականացրեց մի շարք զավթողական արշավներ՝ արևմուտքում և արևելքում։ Նա իր հաղթական գրառումներում պարծենում է, որ իրեն է ենթարկել Ասորեստանի (Աշուրինիի) մի մասը՝ Դայաենի և Ուրմենի շրջանները, ջախջախել է խեթերին և իր թագավորությանը միացրել մինչև Մելիտենե ձգվող շրջանները»*[52]։

Այդպես, հարավային և արևմտյան հարևանների տարածքներ ներխուժելուց և դրանք բռնագրավելուց հետո Մենուան, զորքի գլուխն անցած, մարտարշավ է սկսում նաև հյուսիսային հարևանների դեմ՝ ճնշելով ռազմատենչ անդրկովկասյան երկրներին և հարկատու դարձնելով նրանց։ «Մենուան՝ Իշպունիի որդին (810-778) հաջողությամբ շարունակեց Վանի թագավորության սահմանների ընդլայնումը։ Մ.թ.ա. VIII դարում Վանի թագավորության մեջ էին մտնում Մուսասիրը և Մանան՝ Մերձուրմիայի շրջանում, այդպես և Նաիրին, որ գրավում էր Վանա լճի հարավային և հարավարևմտյան ափամերձ տարածքները։ Արևմուտքում ու-

---

51 История древнего востока, под ред. В.И. Кузищина (изд. III, переработанное и дополненное), Москва 2005 г., ст 209.

52 Тураев Б.А., История древнего востока, том II, Ленинград 1936 г., ст 34–35.



րարտացիները հասան մինչև Եփրատ գետը՝ Մալաթիայի մոտ... Արաքս գետի աջակողմյան ափին, ժամանակակից Թաշբուրուն գյուղի մոտ, Արարատի հյուսիսային լանջին ուրարտացիները կառուցեցին ամրոց, որ կրում էր արքայի անվանումը՝ «Մենուախինիլի», որ համարվում էր ուրարտական վարչական կենտրոնը՝ հյուսիսում: «Մենուախինիլի» ամրոցը հենակետ էր՝ Անդրկովկաս արշավելու համար»[53]:

Սահմանամերձ պետությունները գրավելիս՝ Մենուան նրանց ունեցվածքն ամբողջապես ավար չէր վերցնում կամ ոչնչացնում բնակավայրերը, եթե նրանք հանձնվում էին և վստահեցնում, որ կվճարեն հարկերը. ***«Մենուայի ռազմարշավները, որտեղ նա անձնապես է մասնակցություն ունեցել, ընթացել են երկու ուղղությամբ. հարավ-արևմուտք՝ Սիրիայի կողմը, որտեղ նրա զորքերը գրավել են Եփրատի ձախակողմյան ափը, և հյուսիս՝ դեպի Անդրկովկաս: Արշավների ժամանակ վերցվել են գերիներ, հարուստ ավար, հրդեհվել են թշնամական քաղաքները: Սակայն ուշագրավ է ուրիշ առանձնահատկություն. նկատվել է, որ նաև ավելի վաղ գրավված տերությունները նրանք ամբողջապես ավարի չեն մատնել, այլ հակառակը՝ պահպանել են՝ պայմանով, որ ճանաչեն Ուրարտուի գերիշխանությունը և հարկեր վճարեն»[54]:***

Մի այլ նկատառում էլ ուներ Մենուան, որ խնայում էր այդ ազգերին. նա դրանց և իրենց երկրները դարձրեց պատվար՝ Ուրարտուի նկատմամբ ոտնձգություն անել ցանկացող այլ ռազմատենչ ցեղերի դեմ:

Գիտական շրջանակներում «ուրարտական» կոչվող այս ժամանակաշրջանի մասին հիմնական տեղեկությունները ստանում ենք ասուրական և հայկական արձանագրություններից: Իսկ Մենուայի ժամանակներից սկսած՝ այդ արձանագրություններն ավելի առատացան Հայկական լեռնաշխարհում, և հենց նրանից հետո մյուս արքաները նույնպես սկսեցին իրենց մասին տեղեկություններ հայտնել՝ արձանագրությունների տեսքով. ***«Պաշտոնական տարեգրերը տարեցտարի նկարագրում են այդ նախա-***

---

53 В. В. Струве, История древнего Востока, Москва 1941 г., ст. 311.

54 История древнего востока, под ред. В.И. Кузищина (изд. III, переработанное и дополненное), Москва 2005 г., ст. 208.

ձեռնող տիրակալի գործունեությունը: Տարեգրերը նույնպես եղել են պետական նորամուծությունների մեկը, և այնուհետ բոլոր ուրարտական արքաները կազմել են իրենց թագավորելու ժամանակ եղած դեպքերը լուսաբանող նման պաշտոնական ժամանակագրություն»[55]:

Այդ արձանագրություններում հանդիպում են ոչ միայն պատերազմական գործողությունների մասին տեղեկություններ, այլև՝ շինարարական և այլ բնույթի. ***«Մենուայի գրառումների մեծ մասը վերաբերում է շինարարական աշխատանքներին և ուրարտացիների մարտական հաջողություններին»***[56]:

Մենուան բազմաթիվ ամրոցներ և բնակավայրեր կառուցեց, նա բնակելի դարձրեց երկրի անմարդաբնակ տարածքները. ***«Մենուան կառուցեց մի շարք ամրոցներ մայրաքաղաք Տուշպայի մատույցներում, ավարտին հասցրեց Վանի պարիսպների կառուցումը, երկրի հյուսիսային կողմում նույնպես հզոր ամրոցներ կառուցեց»***[57]:

Այդ ժամանակաշրջանում առավել կարևորվեցին հողագործությունն ու ոռոգման աշխատանքների իրականացումը. և վերջինն այնքան զարգացավ Հայաստանում, որ հետագայում Ասորեստանի արքա Սարգոն II–ն իր զարմանքն էր արտահայտել այդ շինություններն իրականացնողների մեծ վարպետության մասին. ***«Մենուա... Մեծ շինարար, որի ժամանակ Ուրարտուն դարձավ ամենամեծ պետությունն Արևմտյան Ասիայում, փառավորվեց իր ոռոգման ջրատարներով և ջրանցքների ցանցի աշխատանքներով:***

Այսուհետ ուրարտացիները ստիպված էին կենտրոնանալ Վանա լճի և դեպի հյուսիս՝ Արարատից այն կողմն ընկած իրենց մյուս հողերի վերամշակման և մշակաբույսերի վրա: Ուրարտացիները գերազանց նախագծող-ճարտարագետներ էին և ոռոգման կառույցների շինարարներ»[58]:

Սակայն Մենուայի անվան հետ կապված ամենանշանավոր կառույցն ավելի քան 70 մղոն երկարությամբ ձգվող ջրատարն էր, որ նպատակ ուներ՝ խմելու ջուր հասցնել Վան: ***«Ուրարտուի կենտրոնական մասում Մենուայի իրականացրած կառույցների թվին էր պատկանում ջրատարը, որ խմելու ջուր էր բերում Տուշպա քաղաքին. այն գործում է մինչ օրս: Այդ ջրատարը, որ տեղացիների կողմից անվանվում է «Շամիրամի ջրանցք», իր սկիզբն առնում է հորդաբուխ աղբյուրից և ունի շուրջ 80 կմ երկարություն»***[59]:

Այդ ջրատարը հայերն անվանել են Շամիրամի անունով այն պատ-

---

55 История древнего востока, под ред. В.И. Кузищина (изд. III, переработанное и дополненное), Москва 2005 г., ст 208.

56 В. В. Струве, История древнего Востока, Москва 1941 г., ст. 312.

57 Авдиев В. И. История Древнего Востока, Ленинград 1948 г., ст. 408.

58 Дэвид Ленг, «Армяне, народ – созидатель», Москва 2004 г., ст. 103.

59 В. В. Струве, История древнего Востока, Москва 1941 г., ст. 311.

ճառով, որ մոտ 1000 տարի առաջ Շամիրամն ինքն էր առաջին անգամ այդ ջրատարը հասցրել Վան: Սակայն այդ ժամանակ այն նպատակ ուներ ջուր մատակարարել Շամիրամի ամրոցին և, հավանաբար, իշխանական որոշ տների: Այսինքն, եղել է շատ նեղ չափերի և ժամանակի ընթացքում ընդհանրապես խարխլվել և օգտագործման համար դարձել է անպիտան:

Իսկ Մենուան այդ նույն ուղղությամբ կառուցեց շատ ավելի մեծ, հզոր և որակյալ ջրատար, որը խմելու ջուր հասցրեց ամբողջ քաղաքին և մերձակա բնակավայրերին, իսկ որակի առումով էլ այն շատ անգամ գերազանցեց Շամիրամի կառուցածին, քանզի այն իր գոյությունը պահպանել է մինչ օրս:

Հետաքրքիր է, որ Մենուայի ժամանակ Ասորեստանում թագուհի է եղել Շամմուրամատը, որին վերագրում էին բուն Շամիրամի կերպարը. ***«Ասորական աղբյուրները բոլորովին չեն հիշատակում Իշպուինիի որդի Մենուային՝ Վանի թագավորության ամենահզոր թագավորներից մեկին՝ ասորեստանյան թագուհի Շամմուրամատի (Շամիրամի) ժամանակակցին»***[60]*:*

Այս Շամմուրամատը երբեք չի անցել Արարատյան երկրի սահմաններից ներս և, բնականաբար, չէր էլ կարող նրա մայրաքաղաք Տուշպայի համար ջրատար կառուցել: Ուրեմն, այն հին ջրատարի կառուցողը եղել է Արա Գեղեցիկի ժամանակ Հայաստանը գրաված Շամիրամը՝ Նինոսի կինը:

Պատճառը, որ Մենուայի գործերի մասին չի հիշատակվում ասորական արձանագրություններում, այն է, որ ասորիները սովոր էին հիշատակել միայն իրենց հաղթական գործերը, այն էլ՝ ուռճացված տարբերակով, իսկ հակառակորդի հաջողությունների մասին լռում էին, քանի որ այդ հաջողությունները հետևանք էին իրենց լուրջ անհաջողությունների. ***«Մենուայի անունը բացարձակապես չի հիշվում ասորական գրառումներում, բայց հենց ինքն է եղել իրական կերտողն Ուրարտական հզորության»***[61]*:*

Մենուան մեծ գործեր արեց իր գահակալության շրջանում. արքայական գահը ժառանգաբար նա փոխանցեց իր թագաժառանգ որդուն՝ Արգիշտիին, և մահանալով՝ նույնպես խառնվեց իր նախնիներին:

---

60 Б.Б. Пиотровский, Ванское царство (Урарту), Москва 1959 г., ст 40.

61 История древнего востока, под ред. В.И. Кузищина, Москва 1979 г., ст. 219.

Արգիշտի I

«Ցուրաքանչյուր մարդ, ով գեթ մեկ անգամ եղել է Հայաստանում, չի կարող չսիրել այդ երկիրը, որովհետև այն չնաշխարհիկ է: Նրա քաղաքներում և գյուղերում, գետերում և սարերում, նրա լճերում և երկնքում ինչ-որ անկրկնելի, հիանալի բան կա: Ով գեթ մեկ անգամ առնչվել է Հայաստանի արվեստին, նա չի կարող չսիրել այն, չի կարող մոռանալ, հանել իր սրտից: Սակայն հայ արվեստը ծնունդ է առել ոչ միայն կիրճերի, ձյունածածկ գագաթների, Սևանի ներգործությամբ: Այն ստեղծվել է հայ ժողովրդի ողջ պատմությամբ, որ յուրաքանչյուր հայի արյան մեջ է: Դա պատմություն է, ուր ողբերգությունը, հերոսությունը, կենսունակությունը կազմել են մի անքակտելի հանգույց... որի անունը Հայաստան է»[62]:

Մենուայի ժամանակ օրեցօր բարգավաճող Արարատյան երկիրը բավականին հզորացավ, բայց Մեծ Հայքի նախկին տարածքներն ամբողջությամբ մի տերության մեջ դեռ լիովին չէին ընդգրկվել: Արաքս գետից այն կողմ գտնվող իշխանական տները չանում էին պահպանել իրենց անկախությունը՝ իրենք իրենց գլխի տերը լինելու միտումով, և ավելի համագործակցում էին հյուսիսային տերությունների հետ: Մենուան փորձեր արեց հյուսիսի իր ազգակիցների՝ հայերի ստեղծած ոչ մեծ տերությունները նույնպես միացնել արդեն ձևավորված մեծ թագավորությանը, սակայն դա նրան չհաջողվեց. նրանք մնացին՝ որպես դաշնակիցներ: Մենուայի գահի ժառանգորդ Արգիշտի I-ը ևս չանաց այդ բացը լրացնել բանակցությունների միջոցով: Բայց քանի որ նրա հորդորներն ապարդյուն անցան, հայոց արքան անցավ վճռական գործողությունների:

Արգիշտին, իր զորքով Վանից դուրս գալով, ճանապարհին նախ գրավեց Հյուսիսային Սիրիայի մի քանի քաղաք, ապա ճանապարհը շարունակելով՝ հասավ Էրզրում և անցավ Կարսի կողմերը, այդտեղից էլ ներխուժեց ներկայիս Շիրակի մարզ՝ գրավելով էրախ երկիրը և Իրդանուխի քաղաքը:

*Իսկ Արագած լեռան լանջերին գտնված սեպագրերը հայտնում են, որ այդ կողմերում էլ Արգիշտին գրավել է Կուլիանի և Դուրուբանի երկրները և ապա առաջ շարժվելով՝ ուղղություն է վերցրել դեպի Արարատյան հարթավայր. **«Արգիշտին շարունակեց հոր գործերը, նա անցավ Արաքսը և... Արմավիրյան բլրի վրա հիմնեց Արգիշտիխինիլի քաղաքը: Այստեղ***

62 Սերգեյ Օբրազցով, Ռուսաստան:



գտնված մի շարք սեպագիր գրառումներ և այլ մնացորդներ, կապված հայկական ավանդությունների հետ, վկայում են այս կետի կարևորության մասին: Այդտեղից Արգիշտին շարունակեց ճանապարհը բնագծերով՝ դեպի Փոքր Ասիայի լեռնային երկրները: Ճանապարհի մոտակա շրջանը Զանգու գետի համակարգն էր՝ էրիվան կենտրոնով: Քաղաքից մեկ կիլոմետր դեպի հյուսիս-արևելք գտնված սեպագիր արձանագրությունը վկայում է, որ Արգիշտին այս կողմերում ամրոց է կառուցել, որի մնացորդները պահպանվել են մոտակա բլրի վրա»[63]:

Արգիշտին, առաջանալով այդ ճանապարհով, իրեն է ենթարկում տեղական իշխաններին, որոնք փոքր տարածքների վրա իրենց թագավոր էին հռչակել. ***«Ուրարտական սեպագիր հուշարձանները նշում են, որ շարժվելով Արաքսից այն կողմ՝ դեպի հյուսիս, ուրարտացիները հանդիպեցին մեծաքանակ մանր «երկրների», որ չունեին ընդհանուր միասնություն»***[64]:

Ներկայիս Աբովյան քաղաքի տարածքում նա գրավում է Ուլուանի երկիրը, որ մասն էր ավելի մեծ տարածքների վրա սփռված Էտիունի երկրի, բայց և Էտիունին էլ շուտով ամբողջովին գրավվում է: Ապա հասնելով Սևանա լճի ավազան՝ Արգիշտին այդ տարածքներն էլ միացնում է Արարատյան երկրին՝ այդտեղ թողնելով արձանագրություն՝ Գիեղունի շրջանի գրավման մասին, որ ներկայիս Գեղարքունիքն է: Շարունակելով իր մարտարշավը՝ Արգիշտին գրավում է մինչև Քուռ գետը ձգվող տարածքները և վերահաստատում է Մեծ Հայքի սահմանները. ***«Արգիշտին կարևոր նշանակություն էր տալիս դեպի հյուսիս՝ Անդրկովկաս առաջխաղացմանը: Այստեղ ուրարտական զորքերը հասնում են Կոլխիդայի սահմաններին Արևմտյան Վրաստանում»***[65]:

Սակայն կարծիք կա, որ Արգիշտին, Քուռ գետն էլ անցնելով, ասպատակել է նաև այդ տարածքները՝ հասնելով մինչ Կովկասյան լեռնաշղթա: Սակայն դա արդեն եղել է ոչ թե այդ երկրներն Արարատյան երկրին միացնելու փորձ, այլ՝ նրանց հարկատու և դաշնակից դարձնելու գործընթաց: Այդ արշավների մասին արձանագրություններ չեն պահպանվել, սակայն մնացել են հնագիտական վկայություններ. ***«Արգիշտի I-ի ազդեցության***

---

63 Тураев Б.А., История древного востока, том II, Ленинград 1936 г., ст 35.

64 В. В. Струве, История древнего Востока, Москва 1941 г., ст. 313.

65 История древнего востока, под ред. В.И. Кузищина (изд. третье, переработанное и дополненное), Москва 2005, ст 209.



ոլորտների շատ ավելի մեծածավալ պատկեր է ուրվագծվում հնագիտական պեղումներից հայտնաբերված փաստերի ուսումնասիրության շնորհիվ: Դրանք մասամբ համընկնում են գրավոր աղբյուրների հետ, մասամբ՝ ուրվագծում նոր սահմաններ: Գրավոր աղբյուրների հետ չհամընկնող հնագիտական հայտնագործությունների մի շարք է ուրվագծվում հյուսիսային ուղղությամբ: Մասնավորապես՝ Արգիշտի Ի-ի անվամբ սեպագիր արձանագրությամբ սաղավարտ է գտնվել Հյուսիսային Կովկասից (Տերի մարգ, Վերին Ռուտկա ավան), որը ներկայումս պահվում է Բեռլինի Առաջավորասիական թանգարանում: Համանման սաղավարտներ են հայտնաբերվել նաև Աբխազիայից (Պրիմորսկոյե ավան), Օսեթիայից (Ֆասկաու ավան), Թուղքից (Գուգարաց աշխարհի ամենահյուսիսային գավառը՝ Ջավախքի հարևանությամբ), որոնք կարծես լրացնում են գրավոր աղբյուրներից հայտնի Արգիշտի Ի-ի ամենահյուսիսային նվաճումից (Ջավախք-Ջաբախա) մինչև Հյուսիսային Կովկաս տարածությունը:

Խորխոռյան տարեգրությունից կամ Արգիշտի Ի-ից մեզ հասած այլ արձանագրություններից մեզ հայտնի չեն այդպիսի մեծ հեռավորության հյուսիսային արշավանքների մասին տեղեկություններ: Կարելի է ենթադրել, որ այդպիսիք եղել են տարեգրության՝ մեզ չհասած հատվածներում կամ առանձին արձանագրություններում, որոնք նույնպես չեն պահպանվել: Ջի բացառվում նաև, որ հնագիտական այդ գտածոները վկայություններն են ոչ թե արքայական մեծ արշավանքների (որոնց մասին թողնվում էին կոթողային արձանագրություններ), այլ արքայի առանձին զորագնդերի կատարած ռազմերթերի, որոնք խնդիր են ունեցել՝ լուծելու ռազմավարատեգիական զանազան հանձնարարություններ: Բոլոր դեպքերում, հնագիտական փաստերը վկայում են Արգիշտի Ի-ի՝ մինչև Հյուսիսային Կովկաս տարածված ռազմաքաղաքական ազդեցության ոլորտի մասին»[66]:

Վերահաստատելով իր իշխանությունը Մեծ Հայքի տարածքում՝ Արգիշտին հյուսիսային հատվածում իր համար հիմնում է նստավայր՝ այնտեղ էլ սկսելով նոր ամրոցներ և քաղաքներ կառուցել, որոնցից առաջի-

[66] Արտակ Մովսիսյան, Հայոց պատմության աշխարհակալությունները, Երևան 2008 թ., էջ 38–39:


նը, ինչպես արդեն նշվել է, Արմավիրի տեղում իր անվամբ կառուցված Արգիշտիխինիլի քաղաքն էր (Ն.Ք. 776 թ.)։ ***«Արգիշտիի ժամանակ Անդրկովկասի հարավային մասերը միացվեցին Վանի թագավորությանը, և ուրարտական վարչական կենտրոնը տեղափոխվեց Արաքս գետից այն կողմ՝ Անդրկովկաս։ Ի դեպ, նոր կառուցված ամրոցն անվանվեց «Արգիշտիխինիլի»։ Այն գտնվում էր բլրի վրա՝ Արաքսի ձախակողմյան ափին, որ կրում էր Հայաստանի հին մայրաքաղաքի՝ Արմավիրի անվանումը։ Արմավիրյան բլրի շրջակայքից գտնվեցին 15 ուրարտական սեպագրեր, որոնցից 6-ը վերաբերում էին Արգիշտիին։ Դրանք վկայում էին մեծ շինարարական աշխատանքների՝ մասնավորապես ամրոցների և տաճարների, այգիների, որթատունկերի, նաև ջրատարների անցկացման մասին, որ իրականացվել էին ուրարտացիների կողմից՝ հարավային Անդրկովկասում։ Իսկ բուն Արմավիրյան բլրի վրա պահպանվել է ուրարտական ամրոցի պատը՝ շարված լավ մշակված բազալտի խոշոր կտորներով»***[67]։

Շինարարական աշխատանքները տարածվեցին նաև Արմավիրից դեպի արևելք ընկած տարածքներ՝ այնտեղ, ուր ժամանակին Նոյ և Հայկ նահապետներն էին հաստատել իրենց նստավայրը, այսինքն՝ Արարատյան դաշտավայրը։

Ռուս հնագետ Բորիս Պիոտրովսկու գլխավորությամբ պեղումներ են կատարվել այդ ժամանակաշրջանի հնավայրերի տարածքում՝ ի հայտ բերելով Արգիշտի արքայի կառուցած ամրոց-քաղաքի հետքերը։ Հայտնաբերված սեպագիր արձանագրություններից մեկը տեղեկացնում էր այդտեղ կառուցված կարևոր նշանակության քաղաք–ամրոցը կառուցողի և քաղաքի անվան մասին։

Այդ քաղաքի մնացորդները գտնվում են Արին–Բերդ բլրի վրա։ Հետաքրքիր է, որ ըստ մասնագետների՝ այդ հնավայրը, որ սեպագիր արձանագրություններում անվանվում էր Էրեբունի, ներկայիս Հայաստանի մայրաքաղաքն է՝ Երևանը, որ ժամանակին անվանվում էր նաև Էրևան և Էրիվան ձևով, ինչը շատ ավելի նման է Էրեբունի անվանը։ ***«Մինչ այժմ հնագետների ուշադրությունը հիմնականում կենտրոնացած էր ուրարտական թագավորության մայրաքաղաք Վանի, ինչպես որ այն նախկինում անվանվում էր՝ Տուշպայի, նաև մոտակա արքայական նստավայր Ալթըն Թեփեի վրա։ Ուրարտացիների ուսումնասիրման նոր գլուխն սկսվեց Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ և հետո, Բ.Բ. Պիոտրովսկու և Կ.Լ. Հովհաննիսյանի համակարգված պեղումների արդյունքում՝ Երևանի ծայրամասերի երկու հնավայրերում՝ Կարմիր-Բլուրում և Արին-Բերդում (Էրեբունի)։ Պարզվեց, որ այդ վերջին վայրը Երևանի սկզբնավայրն էր՝ հիմնված 782 թվականին՝ մինչ մեր թվագրությունը՝ Ուրարտական արքա Արգիշտիի (Մենուայի որդու) կողմից, ով հիմնադրել էր նաև Արգիշտիխի-***

[67] В. В. Струве, История древнего Востока, Москва 1941 г., ст. 312–313.



նիվին այնտեղ, ուր կանգնած է ժամանակակից Արմավիրը»[68]**:**

Արին-Բերդի տարածքում գտնվեց մի սեպագիր արձանագրություն, որը համարվում է Երևան քաղաքի ծննդականը, ինչից ելնելով՝ ամեն տարի մեծ շուքով նշվում է հնագույն այս քաղաքի ծննդյան տոնը: Երևանն իր տարիների քանակով ավելի հին է, քան հավերժ քաղաք համարվող Հռոմը: Արգիշտիի թողած այդ արձանագրությունը մասնագետների կողմից վերծանվեց այսպես.

«Խալդի աստծու մեծությամբ Արգիշտին՝
Մենուայի որդին,
Ի հզորություն Բիայնա երկրի
և ի սարսափ թշնամի երկրների՝
կառուցեց այս բերդը հզոր,
կոչեց Էրեբունի բաղաք:

Արգիշտին ասում է.
Երկիրն այս ամայի էր,
և ես այստեղ կատարեցի գործեր հզորազոր:

Խալդի աստծու մեծությամբ Արգիշտին՝
Մենուայի որդին.
Թագավո՛ր հզոր,
Թագավո՛ր Բիայնա երկրի,
Տե՛ր Տուշպա բաղաքի»:



Այսպիսով՝ հիմնական քաղաքները, որ կառուցվեցին Արաքսից դեպի հյուսիս գտնվող տարածքներում, սրանք են. Արմավիրում՝ Արգիշտիխինիլին, Երևանի տարածքում՝ Էրեբունին. ***«Հայաստանում գտնվում են մի***

[68] Дэвид Ленг, «Армяне, народ – созидатель», Москва 2004 г., ст. 96.

շարք լայն ճանաչում գտած քաղաքներ՝ հին և ժամանակակից: Նրանցից ամենահանրահայտը և մեծը Երևանն է՝ Հայաստանի Հանրապետության մայրաքաղաքը՝ հիմնված մեր թվարկությունից առաջ 782 թվին՝ ուրարտական արքա Արգիշտի I-ի կողմից, ով այն անվանեց էրեբունի: Ներկայումս Երևանը ծաղկող և ծավալվող քաղաք է»[69]:

Արգիշտին և Ասորեստանը

«Արգիշտի I-ի օրոք (Ք.ա. 786-764 թթ.) Վանի տերությունը հասավ աննախադեպ հաջողությունների»[70]:

Արգիշտի արքայի տիրակալության ժամանակ օրեցօր ծավալվում էր Ուրարտուի ազդեցությունը շրջակա երկրների վրա, ավելանում էին Արգիշտիի դաշնակիցները: Տարբեր երկրներից հարկերի և ստրուկների ներմուծումն էլ ավելի բարգավաճ էր դարձնում իր տնտեսությամբ հնուց ի վեր հին Արևելքում առանձնահատուկ տեղ գրավող Արարատյան երկիրը:

Արգիշտիի ժամանակ Արարատյան երկիրն առավել բարգավաճեց հատկապես ռազմական ոլորտներում, իսկ նման հզորության հասած երկիրը չէր կարող իր գոռոզ հարևան Ասորեստանին չմտահոգել: ***«Ուրարտական պետության ծաղկումը, բնականաբար, առաջացնում էր Վանի թագավորության մշտական հակառակորդ Ասորեստանի անհանգստությունը»***[71]:

Ասորեստանի մտահոգություններն անհիմն չէին, քանզի իր գործողությունները հյուսիսում և արևմուտքում ավարտին հասցնելով՝ Արգիշտին ողջ ուժերը կենտրոնացրեց հարավային կողմի վրա: Սա արդեն ուղիղ սպառնում էր Ասորեստանին՝ երկրի, որ սովոր էր՝ շուրջբոլորը կոտորած, ավեր ու կողոպուտ սփռել. ***«Մենուային փոխարինողը՝ նրա որդի Արգիշտին (մ.թ.ա. 778-750 թթ.), կառավարման առաջին տարիներին, համաձայն տարեգրությանը, զբաղված էր արշավներով դեպի հյուսիս՝ հիմնավորվելով Անդրկովկասի հարավային տարածքներում: Բացի անդրկովկասյան արշավներից՝ տարեգրությունը հիշատակում է դեպի արևմուտք կատարած արշավի մասին՝ Մալաթիա և ավելի հեռու՝ հյուսիսային Սիրիա:***

---

69 Девид Ленг, Армяне, народ – созидатель, Москва 2004 г., ст. 20.

70 Արտակ Մովսիսյան, Հայոց պատմության աշխարհակալությունները, Երևան 2008 թ., էջ 37:

71 В. В. Струве, История древнего Востока, Москва 1941 г., ст., 312.

Դրանից հետո Արգիշտին վեց տարվա ընթացքում զբաղված էր լարված պայքարով՝ Ասորեստանի մերձուրմիական շրջանները, հատկապես Ուրմիա լճի հարավային և հարավարևելյան առափնյա տարածքները տիրելու համար: Այդ արշավների ժամանակ ուրարտացիները հարուստ ավար ձեռք բերեցին»[72]:



Արգիշտին, հաջողությունների հասնելով նաև հարավի մերձուրմիական տարածքներում, այդտեղից շրջանցելով Ասորեստանը, խորանում է Միջագետքի տարածք և արշավում դեպի Բաբելոն: «Մենուայի որդի և փոխարինող Արգիշտիի (մ.թ.ա. 786-764 թթ.) ուրարտական տերությունն Ասորեստանի հետ անցավ վճռական գոտեմարտի՝ Առաջավոր Ասիայում առաջատարի դիրքի, Արևելա-Միջերկրածովյան ուղիներով անցնող առևտրական ուղիներում գերակայության համար: Արգիշտիի տիրապետության շրջանն Ուրարտական պետության հզորության գագաթնակետն էր: Հրաշալի զինված բանակը թույլ էր տալիս նրան հաջողությամբ իրականացնել բոլոր ռազմական գործողությունները: Իզուր չէ, որ ասորեստանյան գրառումների՝ ուրարտական թագավորին բնութագրող արտահայտություններում կա վատ քողարկված վախ. «Արգիշտի Ուրարտացին, ում անվանումը զարհուրելի է, ինչպես հզոր փոթորիկ, ում ուժերը լայնածավալ են...»: Նա նույնիսկ տեղեկացնում է իր հաղթանակների մասին՝ Ասորեստանի բանակի դեմ:

Հարավում մի շարք հաջորդական արշավների միջոցով և դաշնակիցներ ձեռք բերելով՝ ուրարտական արքան իրականացրեց Ասորեստանի ֆլանգերի լիակատար շրջափակում: Նրա զորքերը ներխուժեցին հյուսիսային Սիրիա, որտեղ տեղական տիրակալները հակված էին Ուրարտուի կողմը. նրանք կտրեցին կարևորագույն առևտրական ուղիները, որ տանում են արևմուտքից դեպի Ասորեստան: Հարավ-արևելքում ուրարտացիները կցեցին իրենց շրջանածրին Մաննեական թագավորությունը՝ հարթավայրերով իջնելով Դիյալի ավազան և մոտեցան Բաբելոնի սահմաններին: Արդյունքում Ասորեստանը երեք կողմերից արգելափակվում է Ուրարտուին պատկանող տարածքների և նրա դաշնակիցների կողմից»[73]:

Իր անկասելի բանակով Արգիշտին արշավում և ներխուժում է Բաբելոնի սահմաններից ներս՝ գրավելով այն երկիրը, որը մոտ 1000 տարի

---

72 В. В. Струве, История древнего Востока, Москва 1941 г., ст. 312.

73 История древнего востока, под ред. В.И. Кузищина (изд. III, переработанное и дополненное), Москва 2005 г., ст. 209.

առաջ գրավել էին իր նախնիները՝ մի քանի դար իշխելով այդտեղ (հիշենք քասեցիների արշավանքը)։ ***«Արգիշտի I-ի օրոք (Ք.ա. 786-764թթ.) Վանի տերությունը հասավ աննախադեպ հաջողությունների***[74]***։ Նրա կերտած բուն թագավորությունը ձգվում էր Ուրմիայի հարավային ափերից մինչև Ջավախքը ներառյալ, Սևանա լճի ավազանից և Կուր գետից մինչև անդրեփրատյան աջափնյա շրջաններ (ներառյալ Մելիտեա և Թաբալ երկրները), Մասիուս և Կորդվաց լեռներից մինչև Ճորոխի ավազան։ Նրա գերիշխանության սահմաններն ավելի լայնածավալ էին. դրանք ընդգրկում էր Փոքր Ասիայի արևելյան լուվիական պետությունները և Մերձուրմյան մի քանի երկրներ՝ արևելքում՝ մինչև Կասպից ծով, իսկ հարավում՝ մինչև Բաբելոնիան ներառյալ։***

Նրա հեռավոր արշավանքներից ամենանշանավորը, թերևս, Բաբելոնիայի (Բաբիլու երկրի) նվաճումն էր՝ Զագրոսյան լեռներով՝ դեպի հարավ հաղթարշավով։ Դրանով նա երեք կողմից՝ հյուսիսից, արևելքից և հարավից շրջափակման մեջ վերցրեց Ասորեստանը»[75]***։***

Այսպիսով, Արարատյան երկրի տիրակալ Արգիշտի արքան՝ հայկական հզոր բանակի և իր դաշնակիցների գլուխն անցած, համարյա թե շրջափակում է Ասորեստանը՝ կտրելով այն սնուցող առևտրական ուղիները, ինչը կարող էր լիովին հյուծել այդ հզոր երկիրը։ Ասորեստանի տիրակալները, տեսնելով, որ մութ ամպեր են կուտակվում իրենց երկրի գլխին, ստիպված են լինում դիմակայել հայոց հզոր արքային՝ քաջ գիտակցելով, որ իրենց ուժերն այլևս այն չեն, ինչ նախկին ասորական արքաների ժամանակում էր։ ***«Մենուային փոխարինող Արգիշտին իրականացրեց Ասորեստանի դեմ 14 հաղթական մարտարշավ, ինչի մասին տեղեկացնում է իր հսկայական տարեգրության մեջ խորխոռ ժայռի վրա՝ Վանի մոտ։ Այդ տարեգրերը կարող են համեմատվել Եգիպտոսում և Պարսկաստանում առկա նմանատիպ հուշարձանների հետ և գիտակցված վկայություններ են Վանի թագավորության՝ որպես մեծ տերության նշանակության մասին»***[76]***։***

Ասորեստանը, կորցնելով իր դիրքը տարածաշրջանում՝ հօգուտ Հայաստանի, կորցնում է նաև այն բոլոր երկրները, որոնք գրավելով՝ դարձրել էր հարկատու վասալներ։ ***«Ուրարտացիները գրավեցին համարյա թե ամեն ինչ, ինչի մասին գիտեին և կարդացել էին»***[77]***։***

Այդ ժամանակահատվածում Արարատյան թագավորությունն այնքան

---


74 Արգիշտի I-ի գահակալության տարիների մասին տես ՀԺՊ, հ. I, 1971, էջ 303–310; ՀԺՊՋ, հ. 1, 1981 թ., էջ 54–69; Գրեկյան, (տպագրության ընթացքում); Арутюнян, 2001 г., с. 155–227:

75 Արտակ Մովսիսյան, Հայոց պատմության աշխարհակալությունները, Երևան 2008 թ., էջ 37:

76 Тураев Б.А., История древного востока, том II, Ленинград 1936 г., ст 35.

77 Д. В. Деопик, История Древнего востока, Москва 2016 г., ст. 263.

*հզորացավ, որ Ասորեստանին ճնշելով՝ ի՛նքը դարձավ տարածաշրջանի ամենահզոր պետությունը. **«Ուրարտուն Արգիշտիի թագավորության վերջում գտնվում էր իր հզորության գագաթնակետում... Ասորեստանը չկարողացավ հակազդել Վանի հզորագույն թագավորության նվաճումներին և սկսեց կորցնել մարզը մարզի ետևից։ Ասորեստանը VIII դ. առաջին կեսում (Ադադնիրարի III, Սալմանասար IV, Աշուրդան III, Աշուրնիրարի IV առաջնորդների իշխանության ժամանակ) գտնվում էր տնտեսական և քաղաքական անկման վիճակում։ Այս ամենի հետևանքով Ասորեստանից Ուրարտուին անցավ Առաջավոր Ասիայում իշխող դիրքը»**[78]։***



*Արգիշտին ոչ միայն կտրեց Ասորեստանի բոլոր կենսական ուղիները, այլև ներխուժեց նրա սահմաններից ներս՝ հասնելով մինչև Նինվե. **«Հարավում ուրարտական բանակը Արգիշտի I-ի գլխավորությամբ մ.թ.ա. 776 թ. ներխուժեց Ասորեստան՝ հասնելով մինչև ասորական մայրաքաղաք Նինվեի արվարձանները»**[79]։*

*Ճիշտ է, Արգիշտին մարտարշավով հասավ մինչև Նինվեի մատույցները, Ասորեստանին էլ մղեց երկրորդ տեղ, սակայն դա չի նշանակում, որ ամբողջությամբ գրավեց Ասորեստանը։ **«Ուրարտուն մասամբ հասավ***

78 Б.Б. Пиотровский, Ванское царство (Урарту), Москва 1959 г., ст 74.

79 Девид Ленг, Армяне, народ – созидатель, Москва 2004 г., ст. 107.

մեծագույն փառքի ժամանակաշրջանի։ Սկսած 778-ից մինչ 750 թ. թագավորությունը գտնվել է Արգիշտի I-ի տիրապետության տակ, ով իր իշխանության տակ առավ ամբողջ հյուսիսային Միջագետքը և կռեց տերություն, որը միաժամանակ դարձավ այնքան ծավալուն և հզոր, ինչպես ժամանակավորապես թուլացած Ասորեստանը»[80]։

Լինելով անմիջական սահմանակից հարևաններ՝ Ասորեստանը և Արարատյան երկիրը գտնվել են մշտական հակամարտության մեջ. մերթ մեկն է հզորացել, մերթ՝ մյուսը։ Եվ այդպես գոյատևել են դարեր շարունակ՝ մինչև Ասորեստանի կործանումը և պատմության ասպարեզից հեռանալը. ***«Ուրարտուի վաղ քաղաքական պատմությունը ամենից լավ կարելի է ուսումնասիրել ասորեստանյան արձանագրություններում, որոնք մեզ տալիս են և՛ Վանի թագավորության բոլոր արքայական դինաստիաների անվանումները, և՛ տարեգրությունը։ Քանի որ Վանը (Տուշպան) գտնվել է Նինվեից 200 մղոնից (322կմ-ից) պակաս հեռավորության վրա, պետք է նշել արտասովորը՝ այն փաստը, որ երկու մեծ կայսրություններ կարող էին երկար գոյատևել կողք կողքի՝ հաճախակի պատերազմելով, սակայն երբեք միմյանց ամբողջովին չոչնչացնելով։ Ասորեստանի բուն առաջացումից նրա տարեգիրները ներկայացնում են տեղեկություններ իրենց հյուսիսային հարևանի դինաստիաների և նրանց տիրակալների կյանքի ժամանակի մասին՝ առանց որոնց Նինվեի թագավորները կդառնային Մերձավոր Արևելքի անվերապահ տիրակալները»***[81]։



Արգիշտի I-ի ժամանակ Հայաստանը մեծապես հզորացավ ոչ միայն քաղաքական, այլև տնտեսական ոլորտում։ Այդ ժամանակ երկիրը շատ ավելի բարգավաճեց. այլ երկրներից բերվող աշխատուժը, ներմուծվող հարկերն ու մեծաքանակ ավարը նպաստում էին այդ գործընթացին. ***«Միայն Արգիշտիի երեսնամյա կառավարման ժամանակ գերի է վերցվել 280 000 տղամարդ և կին։ Այդպիսով՝ զինվորական արշավները ոչ միայն մեծացնում էին տարածքային սահմանները և մեծացնում էին Ուրարտուի քաղաքական ազդեցությունը, այլև ծառայում էին՝ որպես ստրուկ-ռազմագերիների ներմուծման մշտական աղբյուր։***

Ուրարտու պետության ռազմական հաջողությունները սերտորեն կապված էին ուրարտական հասարակության ամբողջ սոցիալ-տնտեսա-

---

80 Азимов А. Ближний Восток. История десяти тысячелетий. Москва 2006 г., ст. 39.

81 Девид Ленг, Армяне, народ – созидатель, Москва 2004 г., ст. 98.

կան համակարգի գործունեության հետ, որը բացատրվում է մ.թ.ա. VIII դարում նրա բարգավաճմամբ»[82]:

Արգիշտին, Արարատյան երկրում մոտ 30 տարի թագավորելով, հայոց գահը փոխանցում է իր որդուն՝ Սարդուրիին և կնքում իր մահկանացուն:

«Ամփոփելով Արգիշտի I-ի աշխարհակալության մասին մեր ունեցած տեղեկությունները՝ տեսնում ենք, որ նրա գերիշխանությունը տարածվել է բուն թագավորության սահմաններից շատ հեռու՝ մինչև Փոքր Ասիա՝ Բաբելոնիան ներառյալ, իսկ քաղաքական ազդեցության և հետաքրքրությունների ոլորտները ձգվել են մինչև Հյուսիսային Կովկաս և Զագրոսի կենտրոնական շրջաններ:

Սա է իրական պատկերը Հայոց մեծ տիրակալի ստեղծած աշխարհակալության»[83]:

Սարդուրի II

«Այդ տարածքը նկարագրվում էր որպես գետերի միջև ընկած հարուստ երկիր և շումերական «Գիլգամեշ» էպոսում կոչվում էր «Արարատու»: Նույն էպոսում այդ երկիրը կոչվում էր մարդկության ծննդավայր և քաղաքակրթության օրրան»[84]:

Արգիշտիին փոխարինեց նրա որդին՝ թագաժառանգ Սարդուրին, որ հիշվում է Սարդուրի II անվամբ, քանզի կրում էր իր նախնի Սարդուրի արքայի անունը: Սարդուրի II-ն էլ իր քաջարի հոր՝ Արգիշտիի օրինակով, ամբողջովին տրվեց հայրենիքի հզորացման գործին՝ ամրացնելով երկրի սահմանները: Որպեսզի Արարատյան երկիրն ավելի հաստատուն և կայուն դիրք ունենա, Սարդուրին երկրի ներսում նոր կառուցվածքային փոփոխություններ իրականացրեց. ***«Վանի թագավորության հզորությունը շարունակվում է նաև Արգիշտի Ա-ի հաջորդի՝ Սարդուրի Բ-ի օրոք (Ք.ա. 764-735թթ.)***[85]: ***Նրա օրոք նկատվում է շատ կարևոր անցում տերության***

---

82 История древнего востока, под ред. В.И. Кузищина (изд. III, переработанное и дополненное), Москва 2005 г., ст 209.

83 Արտակ Մովսիսյան, Հայոց պատմության աշխարհակալությունները, Երևան 2008 թ., էջ 39–40:

84 Maximillien de Lafayette, "Civilization and Arts of Armenia from Pre–History to the Present Day: Its Culture, Society, Stars, Artists and Celebrities" Volume 1, USA San Bernardino, CA 25 May 2015, p. 101.

85 Սարդուրի Բ–ի տնտեսության մասին տես ՀԺՊ, հ, I, 1971 թ., էջ 310–318; ՀԺՊՔ, հ. I, 1981 թ.., էջ 70–82; Կարագյոզյան, 2005 թ., էջ 125–127, Գրեկյան, (տպագրության ընթացքում); Арутюнян, 2001 г., с. 227–288:

կառավարման շրջանում. նա սկսում է վերացնել կախյալ (գուցե «դաշնակից» համարվող) թագավորությունները՝ վերածելով պետության վարչական միավորների՝ դրանով իսկ համադաշնային կառավարման համակարգից անցում կատարելով գերկենտրոնացված պետություն»[86]*:*

Երկրի ներսում ներքին խնդիրներին լուծում տալով՝ Սարդուրին սկսում է զբաղվել նաև արտաքին հարցերով, և ինչպես Արգիշտին, այդպես և նա, ջանում է՝ հետագա հարձակումներից երկիրն ապահովելու համար հարևան երկրներին իր կարողությունն ի ցույց դնել. ***«Սարդուրի II-ը (մ.թ.ա. 760 - 730 թթ.) շարունակեց իր նախնու և իր հոր՝ Արգիշտիի հաղթական արշավները: Ութը տարվա ընթացքում իր կատարած ռազմարշավների մասին նա բավականին մանրամասն հաղորդում է իր տարեգրության մեջ»***[87]*:*

Նա, գնալով իր հոր ռազմարշավների ուղիով, նորից ասպատակում է հարավային և հյուսիսային տարածքները՝ նորից հպատակեցնելով անհնազանդներին: Այդ կողմերում կարգավորելով իրավիճակը՝ նա ուղղություն է վերցնում դեպի արևմուտք և հաջող ռազմարշավի հետևանքով հասնում է մինչև Միջերկրական ծով. ***«Մելիտենեի (Մալաթիա) և Կումմուխի (Կոմագենե) տիրակալներն Արևելյան Անատոլիայում հայտնվեցին վասալական կարգավիճակում: Այդպես՝ ուրարտացիներն ապահովեցին իրենց համար ազատ անցումը՝ դեպի Միջերկրական ծովի ափերը»***[88]*:*

Այն երկրները, որոնք դիմադրում էին Հայոց արքային, ծանր պարտություն կրելով, մեծապես տուժում էին, իսկ այդ երկրների տիրակալներից ոմանք էլ, տեսնելով Սարդուրիի հաղթարշավը, կամավորապես գալիս էին և հնազանդության ուխտ կնքում. ***«Առանձին շրջանների տիրակալները հաճախ տրվում էին. հանձնվում էին՝ հուսալով հաղթողի ողորմածությանը: Սարդուրիի տարեգրության մեջ հաճախակի հանդիպում են հիշատակումներ այն մասին, որ եկավ տեղական տիրակալը, «գրկեց Սարդուրիի ծնկները և գետնատարած ընկավ նրա առջև»: Այդ դեպքում պարտված տիրակալը հաճախ մնում էր իր տեղում, սակայն երբեմն նրան կցվում էր ուրարտական տեղապահ»***[89]*:*

Սարդուրին էլ, պատերազմական գործունեությունից հանգստանալով, տրվում էր երկրի ներքին բարգավաճման գործին՝ հատկապես շինարարությանը. ***«Նույն թագավորի մյուս գրառումները պատմում են Սարդուրիի շինարարական գործունեության մասին՝ ըստ երևույթին, Արմավիրի մոտ տաճարի կառուցման, նույն տարածքում ջրատարի անց-***

---

86 Արտակ Մովսիսյան, Հայոց պատմության աշխարհակալությունները, Երևան 2008 թ., էջ 40:

87 Авдиев В. И. История Древнего Востока, Ленинград 1948 г., ст. 408.


88 Девид Ленг, Армяне, народ – созидатель, Москва 2004 г., ст. 107

89 В. В. Струве, История древнего Востока, Москва 1941 г., ст., 312.

կացման և պալատի նորոգման մասին»[90]***:***

Տարածաշրջանում կողք կողքի՝ անմիջական հարևանությամբ գործում էր երկու հզոր կայսրություն՝ Հայաստանը և Ասորեստանը, և մեկ նրանցից մեկն էր հզորանում՝ նեղելով մյուսին, մեկ էլ մյուսն էր հզորանում և ճնշում հակառակորդին: Արգիշտիի ժամանակ Ասորեստանն ավելի ճնշված վիճակում էր, քանզի առաջատարի դիրքում Արարատյան երկիրն էր: Դա շարունակվեց Սարդուրիի ժամանակ ևս, սակայն նրա կառավարման երկրորդ կեսում Ասորեստանում ելավ նոր արքա՝ Թիգլաթ-Պալասարը, որ կարողացավ ասորական ուժերն ի մի բերելով՝ ռազմարշավի ելնել հյուսիսային հարևանի՝ Հայաստանի դեմ. ***«Արձագանքը հետևեց, երբ գահ բարձրացավ ասորական եռանդուն նվաճող Թիգլաթ-Պալասար III-ը (մ.թ.ա. 745–727 թթ.): Այդ թագավորն իր կառավարումը սկսեց Վանի թագավորության դեմ՝ մի շարք ռազմարշավներով: Շուտով ուրարտացիները պարտություն կրեցին Արպադում՝ Եփրատի մոտ, Սիրիայի հյուսիսում, դրա հետևանքով կորցրեցին հսկողությունը Կոմմագենական, Սոփենյան և հարակից տարածաշրջաններում»***[91]***:***

ՎԱՆԻ ՏԵՐՈՒԹՅՈՒՆԸ ՍԱՐԴՈՒՐԻ Բ-Ի ՕՐՈՔ



[90] Авдиев В. И. История Древнего Востока, Ленинград 1948 г., ст. 409.

[91] Девид Ленг, Армяне, народ – созидатель, Москва 2004 г., ст. 107

*Ոգևորվելով արևմտյան կողմում Արարատյան թագավորությանը հպատակված ժողովուրդների դեմ տարած հաղթանակներով՝ ասորական արքան որոշում է իր ռազմական ուժերն ուղղել դեպի հյուսիս: Ներխուժելով Արարատյան թագավորության սահմաններից ներս՝ նա հասնում է մինչև մայրաքաղաք Վան և պաշարում այն. **«Թիգլաթ-Պալասարը մ.թ.ա. 735 թ. իրականացնում է արշավ դեպի Ուրարտական տերության կենտրոնը՝ Վանա լճի շրջանը: Ասորական գրառումները հիացմունքով են նկարագրում իրենց զորքերի հաջողությունը: Անկասկած, ուրարտացիները ռազմական պարտություն կրեցին, և Ուրարտուի մի շարք կենտրոնական շրջաններ մատնվեցին սրի և հրի: Սակայն այդ ռազմարշավի կարևորությունը չպետք է չափազանցնել: Չնայած Տուշպա մայրաքաղաքի պաշարմանը՝ ասորեստանցիներն այդպես էլ չկարողացան գրավել նրա գերազանց ամրացված միջնաբերդը»**[92]:*

*Թիգլաթ-Պալասար III-ը, չկարողանալով գրավել Տուշպան, շուտափույթ ետ է քաշվում իր երկիրը՝ հավանաբար վախենալով Սարդուրի II-ին հյուսիսի կողմից օգնության հասնող ուժերից: Այդ մասին է վկայում այն, որ նա այդ ժամանակ Ուրարտուի հոգևոր կենտրոն հանդիսացող քաղաքը՝ Մուսասիրը գրավելու փորձ չարեց՝ չնայած այդ քաղաքն, ըստ էության, գտնվում էր ասորեստանցիների ճանապարհին: **«Անձեռնմխելի մնաց կարևոր ռազմավարական նշանակություն ունեցող շրջան Մուսասիրը, որ գտնվում էր Ասորեստանի արևելյան տարածքներում, էլ չասած՝ անդրկովկասյան շրջանների մասին, որտեղ դեռ Արգիշտին սկսել էր ստեղծել Ուրարտուի երկրորդ կարևոր տնտեսական կենտրոնը: Ասորեստանի հետ ռազմական առճակատման մեջ Ուրարտուն առաջին պարտությունը կրեց, սակայն առաջնության համար պայքարը դեռ ավարտված չէր»**[93]:*

Խաղաղ շրջանում Սարդուրին կարգադրեց ազատ արձակել զորքի մի մասը, որի քանակից մասնագետները կարողացել են մոտավոր կարծիք կազմել Ուրարտուի բնակչության թվի մասին:

***«Սարդուրի II-ի տարեգրքի համաձայն՝ Ուրարտու երկրում չեղյալ է համարվել 350 հազար զինվորական զորակոչային միավոր, որից կարելի է ենթադրել, որ Ուրարտուի բնակչությունը զգալիորեն գերազանցել է մեկ միլիոնը և կարող էր լինել նույնիսկ երկու կամ երեք միլիոն»**[94]:*

---

92 История древнего востока, под ред. В.И. Кузищина (изд. III, переработанное и дополненное), Москва 2005 г., ст. 209.

93 История древнего востока, под ред. В.И. Кузищина (изд. III, переработанное и дополненное), Москва 2005 г., ст. 209–210.

94 И.М. Дьяконов, Предыстория Армянского народа, Ереван 1968 г., ст. 230.

Ռուսա I

Սարդուրի I-ի տիրակալության վերջում ուժերը վերագտած Ասորեստանի արքա Թիգլաթ-Պալասարի հասցրած հարվածներն Արարատյան թագավորությանը բավականին վնաս հասցրեցին՝ թե՛ նյութական, թե՛ սեփական ուժերին վստահելու առումով։

*Այդ իրավիճակում Սարդուրի II–ին փոխարինեց նրա որդին՝ Ռուսա I-ը։ Տեսնելով Ասորեստանի կողմից կրած մի քանի տեղային պարտությունները և նոր արքայի՝ Ռուսա Առաջինի գահ բարձրանալը Սարդուրիի փոխարեն՝ Անդրկովկասի որոշ իշխանական տներ խռովություն բարձրացրին, ինչը, սակայն, Ռուսան ճնշեց և նոր ամրոցներ կառուցելով՝ իր իշխանությունն ավելի ամրապնդեց այդ կողմերում. **«Մայրահեղ բարդ վիճակ էր տիրում Ուրարտու պետությունում։ Ռուսա I-ը նստեց ուրարտական գահին այն ժամանակ, երբ ասորիների կողմից Սարդուրի II-ին հասած պարտությունից հետո կենտրոնական իշխանությունը սասանվեց, ինչն ինքնըստինքյան առաջացրեց Ուրարտուի առանձին շրջանների տեղապահների հուզումներ։ Ինչպես երևում է ասորական աղբյուրներից, դրանք բացահայտ պայքարի ելան արքայի դեմ՝ կազմակերպելով ապստամբություններ, որոնք Ռուսան հաջողությամբ ճնշեց»**[95]։*

Նման խռովություններ առաջացան նաև երկրի հարավային կողմերում՝ հատկապես Մանայում, Պարսում, Մուսասիրում և այլուր. դրանց նկատմամբ նույնպես Ռուսան ստիպված էր կիրառել պատժիչ միջոցներ։

Այդպիսով, նոր արքան, ըստ պահպանված արձանագրությունների, քսան երկրներ ենթարկում է իրեն, նաև նվաճում է մի քանի նոր երկիր։ Այդ նվաճված երկրներում նա կառուցում է քաղաք–ամրոցներ։

*Ներքին խռովությունները վերացնելով և կայունություն հաստատելով երկրում՝ Ռուսան զբաղվում է նաև տնտեսության կարգավորման խնդիրներով։ **«Նա Ուրմիա լճի մոտակայքում հզոր տնտեսական համալիր կյանքի կոչեց՝ կառուցելով բազմաթիվ ոռոգման ջրատարներ, կառուցվեցին արքայական ընտանիքին պատկանող քաղաք-ամրոցներ՝ հավանաբար, այդ շրջանում։ Այդ ժամանակ Ռուսա I-ը ստեղծեց ռազմատնտեսական բազա. հենակետ՝ աջակցելու համար Մաննայի թագավորությանը, զգուշանալով ասորեստանյան հզորության աճից։ Տերության կենտրոնում՝ Վանի արևելյան ափին, նա կառուցում է լայնածավալ ջրամբար, ստեղծում է խաղողի այգիներ և դաշտեր, վեր է խոյացնում արքայի անվամբ մի նոր քաղաք՝ Ռուսախինիլին»**[96]։*

---

[95] Б.Б. Пиотровский, Ванское царство (Урарту), Москва 1959 г., ст. 87.

[96] История древнего востока, под ред. В.И. Кузищина (изд. III, переработанное и дополненное), Москва 2005 г., ст. 210.

Սակայն Ռուսա I-ին վիճակված չէր խաղաղ կյանքով ապրել: Ջնայած ներքին խռովությունները երկրում նա կարողացավ չեզոքացնել, սակայն արտաքին թշնամական տրամադրվածությունները նրան հանգիստ չէին տալու:

Հյուսիսի կողմերից Արարատյան երկրի սահմաններն սկսեցին խախտել կիմերները, որոնց դեմն առնելու խնդիրն էր ծառացել Ռուսայի առջև: Երբ կիմերները նվաճեցին Արարատյան երկրին հպատակ պետություններից մեկը, Հայոց արքան ջանաց համապատասխան միջոցներ ձեռնարկել դրանց դեմն առնելու համար: Սակայն նրա զորավարներից երեքն ընկան կիմերների դեմ մղած մարտում, զորքն էլ, Ռուսայի գլխավորությամբ պարտություն կրելով, ստիպված վերադարձավ Հայաստան: Այդ պարտությունը պատճառ դարձավ, որպեսզի նորից հուզումներ առաջանան երկրի ներսում՝ հատկապես ծայրամասերում:

Կենտրոնական մասում թագավորի դեմ խռովություն է բարձրացնում բանակի հրամանատարներից մեկը: Ռուսան ծանր վիճակի մեջ է հայտնվում, քանի որ հարկ էր՝ թե՛ ծայրամասերում և թե՛ երկրի կենտրոնում նորից կարգ ու կանոն հաստատել, և այն էլ այն ժամանակ, երբ դեռ առկա էր կիմերների կողմից երկիր ներխուժման վտանգը:

Իսկ Ասորեստանում այդ ժամանակ գահին էր նստել Թիգլաթ-Պալասարին փոխարինող Սարգոն II-ը, որը շատ ավելի եռանդուն ու դաժան տիրակալ է համարվում ասորեստանյան տիրակալների մեջ: Սարգոնը գիտեր, որ չէր կարող շրջակա երկրները իրեն հպատակեցնել, քանի դեռ հզոր էր Հայոց երկիրը, քանզի շատերն այդ պետություններից Արարատյան երկրի դաշնակիցները և հպատակներն էին: Սարգոնը կարծես ձեռնպահ էր Հայաստանի՝ Ասորեստանին միակ հզոր հակառակորդի դեմ որևէ խարդավանք իրականացնելու մտադրության մեջ: Սակայն իրականում Սարգոնն այդ ընթացքում հզորացնում էր իր բանակը և ուշիուշով հետևում Ռուսայի քայլերին: Նրան շատ էին անհանգստացնում այն ներքաղաքական և տնտեսական գործողությունները, որ իրականացնում էր Ռուսան՝ հատկապես Ասորեստանի սահմանների մոտ: Սարգոնը լրտեսներ էր ուղարկում Հայաստան, որպեսզի հասկանա՝ ո՛ւմ հետ գործ ունի: Հայտնաբերված ասորեստանյան գրառումներում այդ մասին տեղեկություններ են պահպանվել:

Իմանալով կիմերների կողմից կրած պարտության և երկրում գլուխ բարձրացրած խռովությունների մասին՝ Սարգոնը համարում է, որ եկել է ժամանակը՝ հարված հասցնելու Ռուսա I-ի տերությանը: ***«Ասորեստանյան բանակը 714 թ. Սարգոնի գլխավորությամբ շարժվեց մի երկրի վրա, որ գտնվում էր Ուրմիա լճից արևելք, մասնավորապես՝ Զիկիրտու երկրի, որի տիրակալը Ռուսայի դաշնակիցն էր»***[97]*:*

[97] В. В. Струве, История древнего Востока, Москва 1941 г., ст. 316.

*Բնական է, որ Ռուսան չէր կարող անտարբեր մնալ Ասորեստանի այդ քայլի հանդեպ, և այդ ծանր ներքաղաքական իրավիճակում նա զորքերն ուղղում է դեպի հարավ՝ դաշնակցին օգնություն հասնելու համար: Սակայն Սարգոնի լրտեսները շատ լավ էին գործում և այդ լուրը հասցնում են Սարգոնին. **«Լավ տեղեկացված Սարգոնը, իմանալով, որ ուրարտական արքան՝ Ռուսան, իր գնդերով ժամանել է Ուրմիական տարածաշրջան, կտրուկ փոխում է իր ռազմարշավի ուղղությունը և միանգամայն անսպասելի՝ գիշերվա կեսին, հարձակվում է ուրարտական բանակի ճամբարի վրա և գլխովին ջախջախում այն: Ինքը՝ Ռուսան, փախչում է իր երկրի կենտրոնական կողմերը»**[98]:*

*Սարգոնը, տեսնելով Ռուսայի փախուստը և նրա բանակի ջախջախումը, ժամանակ չկորցնելով՝ առաջ է շարժվում՝ ներխուժելով Արարատյան երկրի սահմաններից ներս: Նա, հավանաբար, էլ երկյուղ չէր կրում հետագա հնարավոր ճակատամարտերի սպասումից, քանզի գիտեր, որ երկրի ներսում ևս Ռուսան մեծ խնդիրներ ուներ և դժվար թե կարողանար նոր զորահավաք անել: Իսկ երկրի ներսում մնացած հավատարիմ գնդերը չանում էին ապստամբների դեմն առնել. **«Տարած հաղթանակից հետո ասորեստանցիները, կարծես թե, կրկնեցին Թիգլաթ–Պալասար III–ի կանխարգելիչ ծրագիրը՝ թեկուզ և ուրիշ երթուղով: Ճանապարհին թալանելով, հրդեհելով և ոչնչացնելով ամեն ինչ՝ Սարգոն II-ը շարժվեց դեպի Ուրմիա լիճը և ավերեց այդտեղ Ռուսա I-ի ստեղծած տնտեսական համալիրը»**[99]:*

Հայոց արևելյան՝ Մանայի և հարավային՝ Կորդուքի կողմնակալ իշխանությունների դիմադրությունը կոտրելուց հետո Սարգոն II-ը Մեծ Զավ գետի Աղբակ վտակի հունով անարգել մտնում է Հայոց միջնաշխարհի հարավարևելյան Վասպուրականի տարածքը և Մեծ Աղբակ գավառից առաջ շարժվելով՝ գրավում է Կուղխանովիտ (Կադուլանիա կամ Կալանիա) գավառի Կուղխան բերդը ու շրջակայքը: Ենթարկում է ավարի, որից հետո խոշաբ գետի հունով իջնում է Վանա լճի հարավային ափամերձ տարածքները և ավերում է Ռշտունիք և Երեխարք (Ուայավ կամ Ուայախս) գավառները:

Հայոց միջնատարածքի հարավարևելյան տարածքները թալանելուց հետո Սարգոն II-ը մոտենում է Հայոց հարավարևմտյան (Աղձնիք) կողմնակալ իշխանությանը, որի գահերեց իշխան Հանգուռը (հավանաբար, հայկական տարբերակով՝ Ընձաքը) երկիրն ավերումից փրկելու համար նրան իր հպատակությունն է հայտնում և հարկեր տալիս[100]:

---

98 В. В. Струве, История древнего Востока, Москва 1941 г., ст., 317.

99 История древнего востока, под ред. В.И. Кузищина (изд. III, переработанное и дополненное), Москва 2005 г., ст. 210.

100 Վիքիպեդիա՝ Ազատ հանրագիտարան:

*Սակայն որքան էլ զարմանալի է, Սարգոնը չի խորանում դեպի Արարատյան երկրի կենտրոնական մասերը, որտեղ պատսպարվել էր Ռուսան: Այսինքն, չի մոտենում մայրաքաղաք Տուշպային՝ հավանաբար հիշելով իր նախորդի՝ Թիգլաթ-Պալասարի կողմից Տուշպայի անհաջող պաշարումը: **«Հետո ասորեստանցիները շրջվելով՝ անցան Վանա լիճը հյուսիսից, սակայն չհամարձակվեցին մոտենալ արևելյան ափերին՝ բուն ուրարտական տարածքներին, որտեղ Թիգլաթ-Պալասար III-ի կողմից ավելի վաղ անհաջող պաշարված մայրաքաղաք Տուշպան էր գտնվում»**[101]:*

*Հնարավոր է նաև, որ երկրի ներսում գործող ապստամբ ուժերը, տեսնելով երկրի գլխին կախված վտանգը, ետ են կանգնել իրենց մտադրություններից և միացել են թագավորին հավատարիմ մնացած զորքին, որպեսզի միասնական ուժերով Սարգոնի դեմն առնեն: Իսկ Սարգոնի հետախուզությունը շատ լավ էր գործում, և այդ լուրը շատ շուտ է հասել նրան. **«Պատճառները հայտնի չեն, թե ինչու Սարգոնը հրաժարվեց դեպի Ուրարտուի մայրաքաղաք Տուշպա ռազմարշավից: Կարելի է կարծել, որ նա, նկատի ունենալով լրտեսների կողմից ստացված տեղեկությունները, վախեցել է ընկնել ծուղակի մեջ»**[102]:*

Ասորեստանի արքայի արշավի կասեցման համար հատկապես լուրջ պատճառ էր նաև այն, որ հարավում գտնվող Մուսասիրի տիրակալը Ռուսային աջակցելու նպատակով իր զորքով ելնում է նրան օգնության, և դա ճակատագրական ելք է ունենում Մուսասիրի համար:

Մուսասիր

Արդինի-Մուսասիրը, որ գտնվել է Մոկաց աշխարհի Մոկք-Առանձնակ գավառում, այդ ժամանակաշրջանում եղել է Արարատյան երկրի հոգևոր կենտրոնը: Հեռանալով ճշմարիտ աստվածապաշտությունից՝ հայերն արդեն պաշտում էին բազմաթիվ չաստվածների՝ բնության ամեն մի երևույթ վերագրելով մի որևէ կուռքի: Այդ կռապաշտական պանթեոնի գլուխ է համարվել Խալդին, պատերազմի չաստվածը անվանվել է Թեյշեբաինի, և այդպես՝ տասնյակ անվանումներ: Մուսասիրը, իրեն պատկանող տարածքներով հանդերձ, հարկեր չէր մուծում՝ որպես հոգևոր կենտրոն: Մի բան էլ՝ նվիրաբերությունների տեսքով բազմաթիվ նյութական արժեքներ էր ստանում՝ սկսած թանկարժեք մետաղներից, քարերից և այլն: Այդ պատճառով էլ այն խիստ բարգավաճել էր: Մուսասիրի տաճարում էին

[101] История древнего востока, под ред. В.И. Кузищина (изд. III, переработанное и дополненное), Москва 2005 г., ст. 210.

[102] В. В. Струве, История древнего Востока, Москва 1941 г., ст. 317.

օծում Արարատյան երկրի թագավորներին և այլ առիթներով ծիսական արարողություններ էին անում: Մուսասիրի մայր տաճարի ճարտարապետական ոճը տեղական բնույթ է կրել և ապա, ինչպես նշում են մասնագետներ, Հայաստանից անցել է Փոքր Ասիա, Հունաստան, Հռոմ, որտեղից էլ տարածվել է ողջ աշխարհում: Այդ տաճարի նմուշներից է Գառնիի հեթանոսական տաճարը:

Իմանալով այդ ամենի մասին՝ ասորեստանցիները, երբ պատերազմով ներխուժում էին Հայոց սահմաններից ներս, մինչև Սարգոն II–ը միշտ շրջանցում էին Մուսասիրը՝ չնայած, որ այն նրանց համար սահմանամերձ տարածք էր: Իսկ պատճառն այս էր. որքան էլ ասորեստանցիների համար գայթակղիչ էր Մուսասիրի հարստությունները, նրանք երկյուղածությամբ էին վերաբերվում Մուսասիրին՝ որպես հոգևոր կենտրոնի:

Եվ ահա, այդ անձեռնմխելիությունը խախտեց Սարգոնը՝ համարելով, որ դրա համար բոլոր հիմքերն ուներ, քանզի Մուսասիրի քրմապետ Ուրզանան ի՛նքն էր նախահարձակ եղել՝ Ռուսային օգնության հասնելու համար:

*Մուսասիրի քրմապետին լուր հասավ, որ Սարգոնն անձամբ, հեծելազորի գլուխն անցած, մոտենում իր քաղաքին: Խուսափելով ընդհարումից՝ նա իր ժողովրդով քաշվեց լեռները՝ հավանաբար կարծելով, որ Սարգոնը չի համարձակվի մտնել տաճար՝ այն կողոպտելու միտումով: Սակայն Սարգոն II-ը հուսախաբ արեց Ուրզանա քրմապետին. **«Սարգոն II-ն իրականացրեց դա. դեպի Ասորեստան հետդարձի ճանապարհին. 1000 ձիավորի գլուխն անցած՝ սրընթաց անցավ լեռներով և հանկարծահաս հարվածով գրավեց ուրարտական մշակութային կենտրոն Մուսասիրը, որտեղ հաղթանակ տոնողներին բաժին հասան տաճարական գանձերը, որ կուտակվել էին ուրարտական թագավորների կողմից»**[103]:*




Սարգոնը գիտեր, որ իր նախորդ ասորեստանյան արքաներից ոչ մեկը չի համարձակվել Մուսասիրի վրա հարձակվել. ինքն էլ, միգուցե, ցանկանում էր միայն Մուսասիրի այդ զորագնդին պատժել: Սակայն տեսնելով տարիների ընթացքում կուտակված գանձերը՝ չդիմացավ գայթակղութ-

[103] История древнего востока, под ред. В.И. Кузищина (изд. III, переработанное и дополненное), Москва 2005 г., ст. 210.

յանը, խիղճը հանգստացրեց քրմապետի՝ նախահարձակ լինելու մասին մտքով, և սկսեց Մուսասիրի կողոպուտը. ***«Մուսասիրի պալատից և տաճարից Սարգոնի կողմից հափշտակվեց հարուստ ավար: Ուրզանայի գանձատներից առգրավվեց ահռելի քանակությամբ ոսկի, արծաթ, պղինձ, արճիճ, սերդոլիկ, լազուրիտ և այլ թանկարժեք քարեր: Այլ առանձին ապրանքների հետ նշվում են ոսկե թրեր և դաշույններ, փղոսկրից և փայտից պատրաստված գավազաններ՝ զարդարված ոսկով և արծաթով. արծաթե և պղնձե անոթներ, երկաթյա թրեր և գունավոր հագուստներ՝ բրդից և վուշից»***[104]*:*

Խալդիի տաճարից թալանվածը պատկերվել է Սարգոնի պալատի պատին, որի համաձայն՝ առգրավվել է մեծաքանակ ոսկի, 5000 կգ արծաթ և 109080 կգ պղինձ, վեց ոսկե և տասներկու արծաթե վահան. բացի դրանից՝ տաճարում եղել են մեծաքանակ բրոնզե վահաններ, նիզակներ ու թրեր, նաև՝ երեսուն արծաթե մարտակառք և այլ թանկարժեք իրեր:

Ճիշտ է, Սարգոն II-ը ձեռնպահ մնաց Տուշպան պաշարելու մտադրությունից և երկրի հյուսիսային տարածքների կողմն արշավելուց, բայց երկրի կենտրոնական մասը և հարավային շրջանները մեծապես ավերեց, կողոպուտի ու թալանի ենթարկեց: Բայց այդ ամենով հանդերձ՝ նա հեռացավ Արարատյան երկրից: Այսինքն, այդ մեծ հարվածը, որ հասցրեց Սարգոնը, պետության հիմքերը չխարխլեց. ***«Բայց և այնպես, ասորեստանցիները չկարողացան վերջնականապես ճնշել ուրարտական թագավորությանը: Ուրարտական ժողովուրդը պայքարում է ասորեստանյան նվաճողների դեմ: Չնայած նրան, որ Սարգոն II-ը ջախջախեց ուրարտական բանակը, ամբողջ երկիրը ավերեց, գրավեց և թալանեց ուրարտական հարուստ քաղաք Մուսասիրը՝ Ուրարտուն ամեն դեպքում պահպանեց իր ինքնուրույնությունը: Դեռ ավելին, ուրարտացիների դիմադրությունը, հավանաբար, եղել է Ասորեստանի թուլացման պատճառներից մեկը. 612 թ. ընկավ Ասորեստանի թագավորությունը՝ միացյալ թշնամիների հարվածի տակ: Ուրարտուն պահպանեց իր անկախությունը նաև Ասորեստանի կործանումից հետո»***[105]*:*



[104] В. В. Струве, История древнего Востока, Москва 1941 г., ст. 317.

[105] Авдиев В. И. История Древнего Востока, Ленинград 1953 г., ст. 478.

*Սարգոնը չկարողացավ լիովին ջախջախել Արարատյան պետությունը. երկիրը կանգուն մնաց, սակայն այն ստիպված էր պատերազմի հետևանքով երկրի խաթարված տնտեսության և ներքին այլ խնդիրների մասին հոգալ: Ասորեստանը նման կերպ իր ուզածին հասավ այն առումով, որ ստիպեց Արարատյան թագավորության տիրակալներին հրաժարվել արտաքին քաղաքականությամբ զբաղվելուց: **«Իսկապես, միջազգային հարաբերությունների տեսանկյունից մ.թ.ա. 714 թ. այդ ռազմարշավի նշանակությունը մեծ է եղել. Ուրարտու պետությունը վերջնականապես պարտություն կրեց Առաջավոր Ասիայում քաղաքական գերիշխանության համար պայքարում՝ զիջելով այդ դերը Ասորեստանին»**[106]:*

*Ճիշտ է, երկիրը մեծ հարված ստացավ, բայց իրավիճակն անհույս չէր, և Ռուսան նորից կարող էր երկիրը վերականգնել ու նախկին կարգավիճակին հասցնել, բայց նա խիստ տրտմել էր ոչ այնքան երկրի պարտության, որքան Մուսասիրի տաճարի ավերման ու կողոպուտի համար, որի արդյունքում էլ ինքնասպանություն գործեց. **«Սարգոն II-ի գրառումներում տեղեկացվում է, որ Ռուսա I-ը, իմանալով Մուսասիրի անկման մասին, վերջ տվեց կյանքին»**[107]:*

Նման ծայրահեղ քայլի գնաց Ռուսա I-ը, քանի որ Արամեից սկսած՝ տվյալ արքայական դինաստիայի և ոչ մի թագավորի օրոք այդ կրոնական կենտրոնը՝ Մուսասիրը, երբեք նման կործանարար հարձակման չէր ենթարկվել:

«Ռուսա I-ը՝ որդին Սարդուրի II-ի (մ.թ.ա. 730-714 թ.), ինքնասպանություն գործեց՝ Ասորեստանի կողմից Ուրարտական պետության դեմ տարած հաղթանակից հետո՝ մ.թ.ա. 714 թվին: Ուրարտուի պարտության գագաթնակետը եղավ Մուսասիրում Խալդի և Արդինի աստվածների տաճարի կողոպուտը»[108]:*

Արգիշտի II

Ռուսա I-ի մահվանից հետո Արարատյան երկրի գահին նստեց նրա որդին՝ Արգիշտի II-ը: Ճիշտ է, Սարգոնի կործանարար արշավանքից հետո կյանքի բնականոն ընթացքը խաթարվեց երկրում, սակայն Արգիշտի երկրորդը կարողացավ ներքին խնդիրները կարգավորել: Չնայած նա մտադրություն չուներ երկիրը նորից առաջատարի դիրքին հասցնել հա-

---

106 История древнего востока, под ред. В.И. Кузищина (изд. III, переработанное и дополненное), Москва 2005 г., ст. 210.

107 Նույն տեղում:

108 Девид Ленг, Армяне, народ – созидатель, Москва 2004 г., ст. 104.

*կահարված տալով Ասորեստանին, սակայն արտաքին քաղաքականությունից, ամբողջապես չհրաժարվեց. **«Հրաժարվելով պայքարից՝ Առաջավոր Ասիայում առաջատարի կարգավիճակից, ուրարտական արքաները շարունակեցին տանել հակաասորեստանյան քաղաքականություն՝ ինչ-որ չափով բուֆերային շրջաններում աջակցելով մանր տիրակալներին, որոնք ջանում էին հավասարակշիռ դիրք պահպանել երկու տերությունների միջև։***

Այդ պայմաններում Արգիշտի II-ը (մ.թ.ա. 713-685 թթ.) իր արշավներն ուղղում է դեպի արևելք՝ հասնելով Կասպից ծովի առափնյա տարածքները և շարունակում է ուրարտական արքաների ավանդական քաղաքականությունը գրավված տարածքներում՝ նրանց ենթարկելով իրեն և պարտադրելով, որ հարկեր մուծեն»[109]։

*Սակայն Սարգոնն էլ իր հերթին էր ճնշում շրջակա տերություններին՝ ենթարկեցնելով իրեն, և ովքեր ավելի Արգիշտի II-ի հովանավորությանն էին հակված, նրանց հանդեպ դաժան հաշվեհարդար էր տեսնում. **«Ասորեստանյան գրառումներից հայտնի է, որ Սարգոնը դաժանորեն պատժել է Կումմուխ երկրի կառավարչին, ով նվերներ էր բերում և տուրք վճարում Արգիշտիին՝ հույս դնելով նրա օգնության վրա»***[110]։

Տեսնում ենք, որ Արարատյան երկիրը Սարգոնի ասպատակությունից հետո որքան էլ տկարացավ, միևնույն է, դեռ բավականին հզոր էր, քանզի նրա հովանավորությանն էին դիմում շրջակա երկրներից ոմանք՝ Ասորեստանից պաշտպանվելու համար։ Բայց դա, ըստ երևույթին, միշտ չէ, որ արդարացնում էր իրեն։

*Արգիշտի II-ն էլ իր նախորդների նման սկսեց երկրի ներսում շինարարական աշխատանքներ ծավալել՝ հատկապես, որ Սարգոնի գործած ավերածություններից հետո դրա անհրաժեշտությունը մեծ էր. **«Սեպագիր հուշարձանները վկայում են մեզ՝ Արգիշտիի եռանդուն շինարարական աշխատանքների մասին, որ իրականացվում էր երկրի կենտրոնական մասում և մասամբ այն վայրերում, որտեղով անցել էին Սարգոնի զորքերը»***[111]։

*Արգիշտին, Ասորեստանի պես ռազմատենչ հարևան ունենալով, ջանում էր բանակը միշտ պատրաստ պահել։ Այդ նպատակով անցկացնում էր զորավարժություններ, իր նախնիների օրինակով ոգևորում էր զինվորներին։ Հիշենք, թե ինչպես էր նման վարժանքների ժամանակ Մենուան իր Արծիվ անվամբ ձիով անհնարին հեռացատակ կատարել. **«Ք.ա. 800 թ. Վանա լճից դեպի արևելք գտնված արձանագրությունը նշում է այն կետը, որտեղ Մենուային պատկանող Արծիբի երկարատոն ձին ակնհայտորեն***

---

109 История древнего востока, под ред. В.И. Кузищина, Москва 1979 г., ст. 227.

110 В. В. Струве, История древнего Востока, Москва 1941 г., ст. 318.

111 Б.Б. Пиотровский, Ванское царство (Урарту), Москва 1959 г., ст. 112.



թռչում է 37 ոտնաչափ»[112]:

Իր կողմից իրականացվող ռազմավարժանքերից մեկի ժամանակ էլ Արգիշտին է իր նետարձակումով է զարմանք պատճառել: ***«Մեզ հայտնի է, որ ուրարտացիները հրաշալի աղեղնավորներ էին: Վանի գրառումներից մեկը հաստատում է, որ Արգիշտի II-ն անձամբ ռեկորդ է սահմանել նետարձակման մեջ՝ նետն արձակելով 950 կուբիտ, այսինքն՝ 494 մետր հեռավորության վրա»***[113]:

Արգիշտի II-ի տիրակալության ժամանակ Ասորեստանի արքա Սարգոն II-ը սպանվում է անհայտ հանգամանքներում: Կա երկու կարծիք. կա՛մ պատերազմի ժամանակ ընկել է թշնամու սրից, կա՛մ դարձել է պալատական խարդավանքների զոհ:

Նրանից հետո Ասորեստանում գահակալում է նոր արքա՝ Սարգոնի որդի Սենեքերիմը, որն իր ռազմատենչ հոր նման՝ զորքի գլուխն անցած ասպատակում է շրջակա երկրները:

Արգիշտին, ամրապնդելով Հայոց սահմանները, ավելի զգոն քաղաքականություն է վարում, ինչից ելնելով՝ Սենեքերիմն իրեն որպես թիրախ է ընտրում հարավային և արևմտյան կողմն ընկած երկրները:

«Հավանաբար, Արգիշտին եղել է Ուրարտուի արքան Սենեքերիմի թագավորելու գրեթե ամբողջ ժամանակաշրջանում: Այդ ժամանակների ասորեստանյան աղբյուրները լռում են Ուրարտու երկրում տիրող դեպքերի մասին: Սենեքերիմը զբաղված էր Բաբելոնի, Սիրիայի, և Պաղեստինի հետ պատերազմներով, նաև պատրաստվում էր ռազմարշավի Եգիպտոսի դեմ և, համենայն դեպս, բացահայտ պայքար չէր տանում, իր հյուսիսային հարևանների հետ՝ չնայած որ Ուրարտուի սահմաններն այդ ժամանակ համեմատաբար մոտ էին Ասորեստանի կենտրոնին»[114]:

Քանի որ Արգիշտին որևէ սպառնալիք չէր կրում Ասորեստանից և զբաղված էր Արարատյան թագավորության ներքին հարցերով, մենք էլ միաժամանակ թողնելով Հայոց լեռնաշխարհի անցուդարձը՝ հետամուտ լինենք Սենեքերիմի ռազմարշավին:

---

112 Robert Drews, "The Coming of the Greeks," PRINCETON UNIVERSITY PRESS Princeton, New Jersey 1988, page 114.

113 Девид Ленг, Армяне, народ – созидатель, Москва 2004 г., ст. 113.

114 Б.Б. Пиотровский, Ванское царство (Урарту), Москва 1959 г., ст 112.

*Այդպես՝ աջ ու ձախ ասպատակելով և գրավելով իր ճանապարհին ընկած երկրները, ավերելով նրանց պարսպապատ քաղաքները, կրակի մատնելով պալատներն ու տաճարները՝ Սենեքերիմը հասավ Պաղեստին և պաշարեց Երուսաղեմ քաղաքը, որտեղ թագավորում էր Եզեկիա արքան. **«Եզեկիա արքայի թագավորության տասնչորսերորդ տարում Ասորեստանի Սենեքերիմ արքան հարձակվեց Հուդայի երկրի պարսպապատ քաղաքների վրա և գրավեց դրանք»**[115]։*

Եվս մեկ անգամ հիշենք, որ Երուսաղեմն այն քաղաքն էր, որի հիմքերը գցել և կառուցել էր հայոց մեծ նահապետ Հայկ-Մելքիսեդեկն՝ իր սերունդներով։ Սաղեմում Հայկը և հայոց ազգն այդ հնագույն ժամանակներում պաշտում և փառավորում էին Տեր Աստծուն դեռ այն ժամանակ, երբ հրեա ազգը նույնիսկ չէր էլ ձևավորվել։ Եվ Սենեքերիմի հարձակման ժամանակ էլ մեր սուրբ Նահապետ Հայկի կառուցած Սաղեմում չէր դադարել Աստվածպաշտությունը։ Սակայն այն արդեն ոչ թե հայերի, այլ՝ հրեաների դավանանքն էր։ Իսկ Հայկի սերունդները, ցավոք, մոլորվելով հեռացել էին իրենց հայրերի Տեր Աստծուց՝ ընկնելով հեթանոսական սնոտի պաշտամունքի մեջ։

Այդ ժամանակ ամբողջ աշխարհում միայն Երուսաղեմում կար ճշմարիտ Արարիչ Աստծո տաճար, իսկ ամբողջ աշխարհը կուլ էր գնացել կռապաշտության խավարին։ Եվ ահա, այդ քաղաքը պաշարվել էր Ասորեստանի արքա Սենեքերիմի զորքերով, ով էլ սպառնում էր այն հիմնահատակ ավերել, եթե Եզեկիան ասորական հրոսակների առջև չբացեր քաղաքի դարպասները։

Եզեկիան, տեսնելով, որ իր բոլոր պարսպապատ քաղաքները գրավված են թշնամու կողմից, և իր ուժերն էլ բավարար չեն երկարատև պաշարմանը դիմակայելու համար, իր հույսը դնում է Աստծո վրա և Երուսաղեմի դարպասները չի բացում ասորեստանցիների առջև։

*Սենեքերիմի զորապետ Ռափսակը, կանգնելով Երուսաղեմի պարիսպների մոտ, նրանց է հայտնում Սենեքերիմի սպառնագին խոսքերը՝ ասելով, որ իրենց ռազմարշավի ճանապարհին բոլոր երկրներն ու պարսպապատ քաղաքները գրավվել են, և որ նույնն է սպասվում Երուսաղեմին։ Եվ քանի որ մյուս երկրներին չկարողացան պաշտպանել իրենց կուռքերը, ապա Աստված էլ ի զորու չի լինի այդ անել՝ Երուսաղեմի համար. **«Ռափսակը ելավ, բարձր ձայնով բղավելով՝ եբրայերեն ասաց. «Լսեցե՛ք մեծ արքայի՝ Ասորեստանի արքայի պատգամը։ Այսպես է ասում արքան. թող Եզեկիան չմոլորեցնի ձեզ, քանզի նա չի կարող ձեզ իմ ձեռքից փրկել։ Եզեկիան ձեզ թող Տիրոջով չհուսադրի՝ ասելով, թե Տերը մեզ անպայման կփրկի և այս քաղաքը չի մատնի Ասորեստանի արքայի ձեռքը... Մի՛ լսեք Եզեկիային, որովհետև խաբում է ձեզ՝ ասելով, թե՝ Տերը մեզ կփրկի։ Մի՞-***

[115] Դ. Թագ. 18:13:

թե ազգերի աստվածներն Ասորեստանի արքայի ձեռքից փրկեցին նրանց երկրները։ Ո՞ւր է Եմաթի ու Արփաթի աստվածը, ո՞ւր է Սեփարուիմ քաղաքի աստվածը, Անայի ու Ավայի աստվածը։ Միթե նրանք փրկեցի՞ն Սամարիան իմ ձեռքից։ Երկրի բոլոր աստվածներից ո՞ր մեկը կարողացավ իր երկիրն իմ ձեռքից փրկել, որ Տերը Երուսաղեմը փրկի իմ ձեռքից»[116]։

Եզեկիան, հստակ տեսնելով անելանելի վիճակը, իր իշխաններին ուղարկում է Եսայի մարգարեի մոտ, իսկ ինքը, մտնելով տաճար, իր աղոթքն է ուղղում առ Աստված։

Այդ ժամանակներում Եսայի մարգարեն էր համարվում Աստծո մարդ, ում հետ խոսում էր Աստված։ Իսկ Եսային այն մարգարեն էր, որ Տեր Հիսուս Քրիստոսի մարմնանալուց դեռ յոթ դար առաջ մարգարեացել էր Նրա երկրային կյանքի, չարչարանքների և մեռելներից հարության մասին։ Դրա համար էլ նրան համարել են հինկտակարանյան ավետարանիչ։



«Երբ Եզեկիան լսեց արքայի պատգամը, պատառոտեց իր զգեստները, քուրձ հագավ ու մտավ Տիրոջ տունը։ Նա Եղիակիմ հազարապետին, Սոմնաս դպրապետին և քահանաներից ծերերին քրձեր հագած ուղարկեց Ամոսի որդի Եսայի մարգարեի մոտ, որոնք նրան ասացին. «Այսպես է ասում Եզեկիան. «Այս օրը նեղության, կշտամբանքների ու նախատինքի օր է, որովհետև երեխաների մայրերը երկունքի մեջ են, սակայն ուժ չունեն ծննդաբերելու։ Թերևս քո Աստվածը լսի Ռափսակի պատգամները, որին իր տերը՝ Ասորեստանի արքան է ուղարկել, որպեսզի անարգի կենդանի Աստծուն, քսու խոսքերով հայհոյի։ Այդ բոլորը լսեց քո Տեր Աստվածը։ Դու կենդանի մնացողներիս համար աղոթիր»։ Եզեկիա արքայի ծառաները եկան Եսայի մարգարեի մոտ. Եսային նրանց ասաց. «Այսպե՛ս ասացեք ձեր տիրոջը. այս է ասում Տերը. «Մի՛ վախեցիր այն խոսքերից, որոնցով Ասորեստանի արքայի ծառաները ինձ հայհոյեցին։ Ես նրան այնպիսի մի ոգի կներշնչեմ, որ նա, մի գույժ լսելով, իր երկիրը կվերադառնա, և Ես սրով նրան կոչնչացնեմ իր երկրում»[117]։

---

116 Դ. Թագ. 18:28–35:

117 Դ. Թագ. 19:1–7:

*Գիշերը վրա հասավ և մինչդեռ իրենց ուժերի վրա վստահ ասորեստանցիները հանգիստ քնել էին՝ սպասելով, թե ինչպես պետք է ցերեկով Երուսաղեմը ավարի մատնեն, Աստծո պատիժը հասավ նրանց վրա: Ասորեստանի բանակում 185 հազար զինվոր քնած տեղում մահացավ, իսկ հատուկենտ մնացածն էլ սարսափահար իրենց արքայի հետ շուտափույթ վերադարձան Ասորեստան. **«Եզեկիա արքան և Ամոսի որդի Եսայի մարգարեն աղոթք արեցին այս բանի համար և աղաղակեցին դեպի երկինք: Տերը հրեշտակ ուղարկեց և բնաջնջեց Ասորեստանի արքայի բանակում գտնվող բոլոր զորավոր մարդկանց և պատերազմիկներին, իշխաններին ու զորագլուխներին: Սենեքերիմն ամոթապարտ վերադարձավ իր երկիրը»**[118]:*

Ճիշտ է, մեծ կոտորած տեղի ունեցավ ասորեստանյան բանակում՝ Աստծո հրեշտակի ձեռքով, բայց դա դեռ ամենը չէր. Աստված խոստացել էր, որ Սենեքերիմն էլ իր ամբարտավանության համար անձամբ կյանքով պիտի հատուցի:

Հասնելով Նինվե՝ Սենեքերիմը մտավ մեհյան՝ իր կուռքերին երկրպագելու և գոհության աղոթք մատուցելու, հավանաբար, նրա համար, որ գոնե ինքը զերծ մնաց կոտորածից: Սակայն Տիրոջ պատժի գործիք դարձած Սենեքերիմի երկու որդիները, մտնելով մեհյան՝ հենց այդ կուռքի առջև, ում վրա էր հույսը դրել Ասորեստանի արքան, սպանեցին նրան և փախան Հայաստան:

*Այդ մասին էլ մեզ տեղեկացնում է Սուրբ Գիրքը. **«Ասորեստանի Սենեքերիմ արքան չվեց ու գնաց բնակվեց Նինվեում: Երբ նա երկրպագում էր իր Նեսրաք աստծու տանը, նրա որդիներ Ադրամելեքն ու Սարասարը նրան սրով հարվածեցին և Արարատի երկիրը փախան»**[119]:*

*Արարատի երկիր անվանումը սեպագրերում յուրովի ընթերցելով՝ այն հնչեցրել են որպես Ուրարտու, և դա բուն Հայաստանն է: Սուրբ Գրքում մի այլ տեղ Սենեքերիմի հետ տեղի ունեցածի մասին գրվում է ոչ թե Արարատի երկիր, այլ՝ հենց Հայաստան: **«Ապա Տիրոջ հրեշտակը ելավ և Ասորեստանի բանակից հարյուր ութսունհինգ հազարին սպանեց: Առավոտյան վեր կենալով՝ գտան բոլորի անշունչ դիակները: Եվ Ասորեստանի Սենեքերիմ արքան նորից դարձավ, գնաց ու բնակվեց Նինվեում: Եվ մինչ նա իր Նասրաք աստծու տաճարի մեջ երկրպագում էր իր կուռքին, նրա որդիները՝ Ադրամելեքը և Սանասարը, սրով սպանեցին նրան և իրենք փախստական գնացին Հայաստան»**[120]:*

Այս մասին գրում են նաև պատմական աղբյուրները. մասնավորապես, Մովսես Խորենացին իր Հայոց պատմության մեջ նշում է, որ Սենեքե-

---

118 Բ Մնաց. 32:20–21:

119 Դ. Թագ. 19:35–37:

120 Եսայի. 37:36–38:

րիմի որդիներն ապաստան գտան Հայաստանում։ ***«Մենք կարծես մոռացության տվինք Սենեքերիմին... նա, որ Երուսաղեմը պաշարեց հրեաների Եզեկիա առաջնորդի ժամանակ։ Նրա որդիները՝ Ադրամելիքը և Սարասարը, նրան սպանելով՝ փախան եկան մեզ մոտ»***[121]*։ Այս երկու ասորեստանցի արքայազներն իրենց ընտանիքներով եկան Հայաստան, քանզի գիտեին, որ Հայաստանն Ասորեստանի ամենահզոր հակառակորդն է, և հենց այդ երկիրը կարող է ամենաապահով վայրը լինել իրենց համար։*

Եվ նրանք չսխալվեցին։ Հայոց արքաներին հավատարմորեն ծառայելու համար նրանց սերունդները Հայաստանում կարգվեցին իշխաններ, և հետագայում հայերի հետ տարալուծվելով՝ նրանցից առաջացավ երկու նշանավոր տոհմ՝ Արծրունիներն ու Գնունիները[122]*։ Նրանք իրենց արտացոլումը գտան նաև հայոց Սասնա ծռեր վիպերգում.* ***«Հայկական ժողովրդական էպոսում նույնպես պահպանվել է Սենեքերիմի որդիների կողմից նրա սպանության մասին պատումը։ Սակայն այդտեղ ասորեստանյան արքան ներկայացվում է կռապաշտ բաղդադյան խալիֆի կերպարով, որին սպանում են նրա որդիները՝ Սանասարը և Բաղդասարը»***[123]*։*

Այսպիսով, տեսնում ենք, որ Եսայի մարգարեի խոսքերը լիովին իրականություն դարձան։

Այստեղ խորհրդավոր է այն, որ հայոց մեծ նահապետ Հայկ-Մելքիսեդեկի կողմից կառուցված Սաղեմ (Երուսաղեմ) քաղաքը պաշարողները կոտորվեցին ու փախուստի մատնվեցին, իսկ Սենեքերիմին սպանող նրա որդիներն էլ, փախչելով Ասորեստանից, ապաստան գտան հենց Հայկ Նահապետի բուն հայրենիքում՝ նրա անունը կրող երկրում՝ Հայքում (այսինքն՝ Հայաստանում)։

Ճիշտ է, հայերը հեռացան Աստծուց, բայց անտես չեղան Տիրոջ կողմից, քանի որ նրանք մնացին սիրելի՝ իրենց հայրերի՝ Հայկի և մյուս բարեպաշտ նահապետների պատճառով։

Իսկ Նինվեում սպանված Սենեքերիմին փոխարինեց նրա որդի Ասորդանը։ Այդ մասին ևս շեշտադրում է արվում Հին Կտակարանում. ***«Ապա, հիսուն օր չանցած, իր երկու որդիները սպանեցին նրան և փախան Հայոց լեռները։ Դրանից հետո թագավորեց իր որդի Ասորդանը»***[124]*։*

Հայաստանում Արգիշտիին փոխարինեց իր որդին, ում նա անվանեց իր հոր՝ Ռուսայի անվամբ, և գահն էլ ժառանգաբար փոխանցելով նրան՝ վախճանվեց. ***«Մեր տրամադրության տակ գտնվող աղբյուրները հնարավորություն չեն տալիս՝ սահմանել Արգիշտիի գահակալության ավարտի ժամանակը։ Ասորդանի գրառումներում (681-668 ԹԹ.) մենք հանդիպում***

---

121 Մովսես Խորենացի, Պատմություն Հայոց, Երևան 1968 թ., էջ 109–110:

122 Մովսես Խորենացի, Պատմություն Հայոց, Երևան 1968 թ., էջ 110:

123 Б.Б. Пиотровский, Ванское царство (Урарту), Москва 1959 г., ст. 112.

124 Տոբիթ. 1:24

ենք նաև ուրարտական նոր թագավորի անվանը՝ Ռուսայինի, Արգիշտիի որդուն»[125]:

Ռուսա II

Արարատյան թագավորությունն այնպիսի տեղանքում էր, որ ուղղակի հնարավոր չէր անհոգ կյանքով ապրել: Պետք էր մշտապես դիվանագիտական հարաբերություններ ունենալ տարբեր՝ հատկապես սահմանակից երկրների հետ: Մեկի հետ դաշնակցության ուխտ էր կնքվում, մյուսների հետ պատերազմական գործողությունների միջոցով էին հարցերը կարգավորվում:

Այդպես էր նաև Ռուսա II-ի ժամանակ: Արարատյան երկրի գահին նստած Ռուսա II արքան շարունակեց նույն գիծը. նախորդ արքաների նման նա ևս եռանդուն և հայրենասեր անձնավորություն էր: Նա թե՛ ներքին, թե՛ արտաքին քաղաքականության մեջ կարողանում էր լուծում տալ ծառացած խնդիրներին:

*Հիմնական հակառակորդը տարածաշրջանում, ինչպես միշտ, մնում էր Ասորեստանը, որի հետ նոր արքան, ի տարբերություն նախորդների, ջանում էր պահպանել բարիդրացիական հարաբերություններ, բայց և չէր պատրաստվում ինչ-որ բան զիջել: Նա երբեմն էլ, թագավորության շահերից ելնելով, ասպատակում էր այն երկրները, որ գտնվում էին Ասորեստանի հետ դաշնակցության մեջ: Դա վերաբերում էր հատկապես արևմտյան կողմերում ընկած երկրներին. **«Պահելով խաղաղությունն Ասորեստանի հետ՝ Ռուսա II-ն ամեն դեպքում շարունակեց պատերազմական գործողությունները արևմուտքում՝ Փոքր Ասիայի արևելյան կողմում և հյուսիսային Սիրիայում, Մազգերդում, Դերսիմյան լեռների հարավում՝ Վանա լճի արևմտյան ծայրամասում: Ուրարտական ամրոցում պահպանվել են Ռուսայի սեպագիր արձանագրությունները: Այդ արձանագրություններում, ինչպես և Ադիլջևազի գրառումներում պատմվում է ուրարտական ռազմարշավների մասին: Այդտեղ հիշատակվում է խեթերի և մուշկերի դեմ ռազմարշավի մասին: Մազգերդյան արձանագրությունը վկայում է նաև, որ Ուրարտուն այդ ժամանակ չի կորցրել իր իշխանությանը ենթակա արևմտյան տարածքները»**[126]:*

Այդ արևմտյան ուղղությամբ Ռուսան գրավեց հինգ երկիր: Դա կա՛մ Ասորեստանի հետ համաձայնեցված էր, կա՛մ էլ Ասորեստանն ինչ-որ

---

125 Б.Б. Пиотровский, Ванское царство (Урарту), Москва 1959 г., ст. 112.

126 Б.Б. Пиотровский, Ванское царство (Урарту), Москва 1959 г., ст. 114.

բանից ահաբեկված էր, որ չէր միջամտում Ռուսայի կողմից ծավալված ռազմական գործողություններին։ ***«Վանի տերությունը շարունակեց մնալ Առաջավոր Ասիայի երկու հզորագույն տերություններից մեկը մինչև Ք.ա. VII դարի կեսերը։ Այդ ընթացքում հատկապես նշանավոր էին Ռուսա Բ-ի գահակալության տարիները (Ք.ա. 680-650-ական թվականներ)***[127]***, որի արտաքին քաղաքականության մեջ ընդգծված էր հատկապես արևմտյան ուղղությունը. հայտնի են նրա հաղթարշավները դեպի արևմտյան հինգ երկրներ (Թաբլանի-Թաբալ, Կահնարու, Մուշկինի, Խալիտու (Խաղտիք) և Խաթե)»***[128]*։*



Ռուսայի ռազմարշավի կարևորությունը երկրի համար մեծ էր, քանզի դրանով նա ճանապարհ էր հարթում դեպի Միջերկրական ծով. ***«Նա պատերազմ մղեց նաև արևմուտքում՝ վերականգնելու համար ուրարտական պետության իշխանությունը դեպի Միջերկրական ծով տանող ճանապարհի վրա։ Ադիլջևազի գրառումներից մեկում՝ Վանա լճի հյուսիս-արևմտյան ափին, հիշատակվում են գերիները՝ գերեվարված Մուշկինի, Խաթե***


127 Ռուսա Բ-ի կառավարման տարիների մասին տես ՀԺՊ, հ. I, 1971 թ., էջ 332– 334; ՀԺՊՔ, հ. 1, 1981 թ., էջ 88–92: Գրեկյան, (տպագրության ընթացքում); Арутюнян, 2001, с. 330–359; Starr, 1990, N 18:

128 Արտակ Մովսիսյան, Հայոց պատմության աշխարհակալությունները, Երևան 2008 թ., էջ 41–42:

և Խալիտու երկրներից»[129]*։*

Իսկապես, Ասորեստանը երկյուղելու բան ուներ, որ չէր համարձակվում արևմտյան կողմերն Արարատյան երկրի իշխանության տակ գցելու՝ Ռուսայի գործընթացը կասեցնել։ Այդ ժամանակներում Անդրկովկասի հյուսիսի տարածքներից դեպի հարավ էին ներխուժում ռազմատենչ ցեղեր՝ կիմերները և սկյութացիները։ Ռուսային հաջողվել էր՝ նրանց հետ բարեկամական դաշինք կնքել։ ***«Ուրարտուն մ.թ.ա. VII դ. կեսերին, Սարգոնի կողմից կրած պարտությունից հետո, իր ուշադրությունը կենտրոնացրեց Անդրկովկասի վրա՝ ըստ երևույթին, կիմերների և սկյութների հետ դաշինքի մեջ մտնելով։ Այդ հանգամանքը շատ էր անհանգստացնում Ասորդանին»***[130]*։*

Ինչպես որ Արգիշտի I-ը կամեցավ հզորացնել երկրի հյուսիսային կողմերը՝ կառուցելով այդտեղ էրեբունի քաղաքը, այդպես և Ռուսա II–ը հոգ տարավ երկրի հյուսիսային տարածքներն ամրապնդելու համար։



Ռուսան ներկայիս Երևանի հարավարևմտյան ծայրամասում՝ կարմիր բլուր կոչվող բարձունքի վրա կառուցեց Թեյշեբաինի ամրոց-քաղաքը, քանզի հյուսիսի զարգացումները կարող էին անկանխատեսելի լինել՝ կապված կիմերների և սկյութացիների հետ։ Ջնայած նրանք դաշնակիցներ էին, սակայն ամեն բան կարող էր անակնկալ կերպով փոխվել։ ***«Կարմիր բլուրի պեղումները ցույց են տալիս, որ Թեյշեբաինին եղել է ուրարտական իշխանության ամենակարևոր պատվարներից մեկը։ Ուրարտացիների այդպիսի ամրություններն Անդրկովկասում՝ VII դարի կեսերին***

---

129 Б.Б. Пиотровский, Ванское царставо (Урарту), Москва 1959 г., ст. 113.

130 В. В. Струве, История древнего Востока, Москва 1941 г., ст. 318.

պատահական չէին։ Կարելի է ենթադրել, որ այդ ժամանակ ուրարտացիները դաշնակցության մեջ են մտել կիմերների և սկյութացիների հետ, որ ներխուժել էին Անդրկովկաս»[131]։

Ասորեստանի արքա Ասորդանի մտահոգությունը Ռուսայի և կիմերների միջև հաստատված դաշինքի պատճառով այնքան էր խորացել, որ նա իր խռովքը փարատելու նպատակով դիմում էր միստիկ միջոցների. ***«Հավանաբար, հենց այդ հանգամանքը տագնապի էր մատնում Ասորդանին, ով իր հարցումների մեջ Շամաշու աստծուն հարցնում էր Ռուսա Ուրարտացու և կիմերների մտադրությունների մասին։ Բայց մեզ հայտնի է, որ Ռուսան պատերազմի մեջ չի մտել Ասորեստանի հետ»***[132]։

Ռուսա II-ը դիվանագիտության և ռազմավարության մեջ էլ է իրեն ի ցույց դնում՝ որպես խորագետ արքա՝ ձեռնպահ մնալով դարավոր թշնամու՝ Ասորեստանի հետ պատերազմի մեջ մտնելուց, դրա փոխարեն ռազմատենչ կիմերների համա՛ր է ճանապարհ հարթում՝ դեպի Ասորեստան. ***«Հայկական լեռնաշխարհի հյուսիսային և հյուսիսարևելյան շրջաններում հաստատված կիմերները դեռևս Ք.ա. 715-714 թվականներից թշնամական արշավանքներ էին ձեռնարկել Վանի տերություն դեմ՝ դրանով, փաստորեն, աջակցելով Ասորեստանին։ Այսինքն՝ առկա էր հիսունամյա թշնամություն երկու ուժերի միջև։ Դժբախտաբար, մեզ հայտնի չէ, թե ինչպես, սակայն փաստ է, որ Ռուսա II-ին հաջողվեց բարեկամական և դաշնակցային հարաբերություններ հաստատել կիմերների հետ, նպաստել նրանց՝ Փոքր Ասիայի արևելք տեղափոխվելուն, ինչը սկսել էր դեռևս Ք.ա. VIII դարի վերջերին (նրանք հաստատվեցին Կապադովկիայի տարածքում, որը միջնադարյան հայկական աղբյուրներում նրանց անվամբ կոչվում է Գամրիք)։ Իսկ Փոքր Ասիայի տարածքից Ռուսա II-ը կարողացավ կիմերներին ուղղել Ասորեստանի դեմ։ Փաստորեն, դիվանագետ արքան կարողացավ ոչ միայն կանխել կիմերների հնարավոր հարձակումներն իր երկրի դեմ, այլև կեսդարյա թշնամուն դարձրեց իրեն դաշնակից, ապա ուղղեց իր թշնամու՝ Ասորեստանի դեմ։ Վանի տիրակալի այս բացառիկ քայլը, որը դիվանագիտության համաշխարհային պատմության մեջ ևս, ակնառու երևույթ է, մեզանում մնացել է քիչ նկատված ու գնահատված»***[133]։

---

131 Б.Б. Пиотровский, Ванское царство (Урарту), Москва 1959 г., ст. 114.

132 Նույն տեղում:

133 Արտակ Մովսիսյան, Հայոց պատմության աշխարհակալությունները, Երևան 2008 թ., էջ 42:

Շինարարությունը՝ Ռուսա II–ի օրոք

*Հանճարեղ դիվանագիտության շնորհիվ Ռուսայի կառավարման ժամանակաշրջանում Արարատյան թագավորությունում տիրում էր հարաբերական անդորր, ինչը հնարավորություն էր ստեղծում՝ երկրի ներսում կենտրոնանալ տնտեսության բարգավաճմանը նպաստող աշխատանքների ծավալման վրա. **«Մեզ հասած սեպագիր աղբյուրներում Արգիշտիի որդի Ռուսայի կառավարման շրջանը ներկայացվում է՝ որպես արդյունավետ շինարարության և Ուրարտուի հզորության ամրապնդման շրջան։ Դրա համար էլ որոշ պատմաբաններ Ռուսա II–ին անվանում են «Վանի թագավորության վերակերտող»... Ուրարտական գրառումները վկայում են Ռուսա II–ի կողմից ծավալուն շինարարական աշխատանքների մասին՝ իրականացված պետության հյուսիսային կողմում, մասնավորապես՝ Անդրկովկասում»**[134]։*

*Հյուսիսային տարածքներում Ռուսան իր նախնիների նման ուշադրությունը կենտրոնացնում էր հատկապես ոռոգման համակարգերի կառուցման վրա, ինչի շնորհիվ էլ կարողանում էին մեծ քանակով բերք ստանալ. **«Անդրկովկասում ուրարտացիներն ավելի շատ ուշադրություն էին դարձնում ոռոգման ցանցի ծավալման և կատարելագործման վրա։ Հացահատիկը, որ պեղումների ժամանակ ահռելի քանակով հայտնաբերվեց Կարմիր բլուրում (գարի, կորեկ, վիկ և այլն) վկայում է ոռոգվող հողագործության արտակարգ մեծ չափերի մասին։ Որոշ ջրուղիների, որ Զանգու գետից Կարմիր բլուրի մոտով են անցնում, վստահաբար կարելի է վերագրել խորը հնություն»**[135]։*

*Ներկայիս Երևանի Կարմիր բլուրի տարածքում հայտնաբերված ամրոց-քաղաք Թեյշեբաինին Ուրարտու պետության հյուսիսային կողմի վարչական կենտրոնն էր։ **«Կարմիր բլուրում (որտեղ հնում գտնվում էր Թեյշեբաինի ուրարտական քաղաքի միջնաբերդը) տասնյոթ տարվա համակարգված պեղումների ընթացքում հավաքվել է ուրարտական մշակույթը և Անդրկովկասի հետ կապերը բնութագրող մեծաքանակ հնագիտական նյութ։ Այդ քաղաքը եղել է խոշոր վարչական կենտրոն Անդրկովկասում։ Միջնաբերդում ապրում էին ուրարտական տեղապահները, այնտեղ էր կուտակվում մերձակա շրջաններից և երկրներից հավաքված հարկը։ Մեծաքանակ ապրանքները պահպանվում էին միջնաբերդի ծավալուն պահեստներում և վերամշակվում էին արհեստանոցներում։ Այնտեղ գտնվում էին ոչ միայն բանջարաբոստանային և այգեգործական ապրանքներ, այլև՝ արհեստագործությանը վերաբերվող բազմաթիվ առարկաներ, եր-***

[134] Б.Б. Пиотровский, Ванское царство (Урарту), Москва 1959 г., ст. 113.

[135] В. В. Струве, История древнего Востока, Москва 1941 г., ст. 319.

կաթե և բրոնզե գործիքներ ու զենքեր, բրոնզի ձուլակտորներ, փայտյա իրեր, կտորներ և մանվածքներ...

Պեղումներն ի հայտ բերեցին Արևելքի մյուս երկրների հետ Թեյշեբանիի լայն կապերը: Գտնվել են ասորական կնիքներ, բրոնզե գավաթներ, ուլունքներ, եգիպտական թալիսմաններ, հախճապակե արձանիկներ, սիրիական և միջերկրական ոսկե ականջօղեր, արծաթե տարա, նաև՝ առանձին հնդկական ականջօղեր: Մյուս կողմից՝ կարմիր բլուրի հնագիտական նյութերն օգնում են՝ վերականգնելու ուրարտական կենտրոնի կապը ոչ միայն Հյուսիսկովկասյան սկյութների, այլև Մերձդնեպրի հետ»[136]:

Կարմիր բլուրում հայտնաբերված բազմաթիվ տարատեսակ և արժեքավոր գտածոները վկայում են այն մասին, որ Հայաստանից մեծ հեռավորության վրա գտնված նմանատիպ առարկաներից շատերի տարածման կենտրոնը եղել է հենց Հայաստանը: ***«Որոշ հեղինակավոր գիտնականներ կարող են այդ կենտրոնը տեսնել Հայաստանում. այնտեղ են տեսել ոճի ծնունդը, որտեղից էլ նման աշխատանքները տարածվել են ամենուր»***[137]:

Սարդուրի III

Ռուսա II-ին հաջորդեց նրա որդին՝ Սարդուրի III-ը (մ.թ.ա. 645-625 թթ.). ***«Ռուսա II-ի փոխարինողի՝ ուրարտական արքա Սարդուրիի մասին շատ քիչ բան է հայտնի՝ այդ ժամանակվա հուշարձաններից. այդ շրջանի հուշարձաններ մեզ չեն հասել, նրա անվանումը հանդիպում է միայն Աշուրբանիպալի տարեգրություններում»***[138]:

Այս Սարդուրիի ժամանակ Ասորեստանում դեռ թագավորում էր Ասարդոնը, որը տեսնելով Ռուսայի ռազմավարությունը կիմմերների հետ՝ սկսեց սկյութացիների հետ բանակցություններ վարել, ինչի արդյունքում նրանք դարձան դաշնակիցներ: Ասորեստանի և Արարատյան երկրի ուժերը հավասարազոր վիճակում էին: Ռուսա II-ի դաշնակիցները կիմմերներն էին, իսկ Ասորեստանինը՝ սկյութացիները: Սակայն երբ Սարդուրին նստեց Արարատյան երկրի գահին, նրա հոր՝ Ռուսայի հետ կնքած դաշնության պայմանագիրը կիմմերների հետ, կարծես, կորցրեց իր ուժը, և նրանք եթե թշնամաբար չէին վերաբերվում Սարդուրիին, սակայն արդեն որպես դաշնակից էլ չէին դիտարկում: Իսկ այդ ընթացքում սկյութացիները հյուսիս-արևմուտքից հարձակվում և ներխուժում են երկ-

---

136 Б.Б. Питровский, Ванское царство (Урарту), Москва 1959 г., ст. 22.

137 Девид Ленг, Армяне, народ – созидатель, Москва 2004 г., ст. 115.

138 В. В. Струве, История древнего Востока, Москва 1941 г., ст. 319.

*րի սահմաններից՝ ավերի և կողոպուտի մատնելով սահմանամերձ տարածքները. **«Սակայն Ուրարտական պետության իրական սպառնալիքը ոչ թե Ասորեստանյան պետությունն էր, այլ՝ սկյութական քոչվոր ցեղերը, որ ներխուժել էին Առաջավոր Ասիա՝ կիմերների ետևից: Նրանք Հյուսիսարևմտյան Իրանում մ.թ.ա. VII դ. 70-ական թվականներին ստեղծել էին սեփական թագավորություն: Նրանց հարվածներն առավել վտանգավոր էին, քանի որ նրանք ներթափանցում էին Ուրարտուի խորը թիկունքը, որ ասորեստանյան հարձակումների համար անձեռնմխելի էր մնացել: Ստիպված լինելով հիմնական ուժերը կենտրոնացնել պաշտպանության վրա՝ Ուրարտուն աստիճանաբար զիջում էր իր դիրքերը՝ միջազգային թատերաբեմում»**[139]:*

Ասորեստանում Ասորդանին փոխարինեց Աշուրբանիպալը, որը շատ խորագետ և համարձակ անձ էր: Նա կարողացավ ավելի հզորացնել Ասորեստանը՝ տարբեր երկրների հետ պատերազմներում հաղթանակներ տանելով և իրեն ենթարկելով: Նա մեծ հաղթանակներ տարավ Էլամում, Բաբելոնում, Սիրիայում և Պաղեստինում: Այդ հաղթարշավը հասավ նույնիսկ մինչև Եգիպտոս: Այդ ահռելի տարածքները դարձան Ասորեստանի ենթակաները՝ պարտավորվելով հարկեր մուծել:

Սարդուրի III-ը շատ մտահոգ էր երկրի համար, քանզի հյուսիսարևելքում ռազմատենչ քոչվոր սկյութացիներն էին, հարավ-արևելքից սպառնում էին օրեցօր հզորացող մեդացիները, արևմուտքում արդեն անբարյացակամ դարձած կիմերները, իսկ հարավում՝ ավանդական թշնամի Ասորեստանը: Սարդուրիին այդ իրավիճակում հարկավոր էր՝ դիվանագիտական որևէ քայլ ձեռնարկել, քանի դեռ այդ թշնամաբար տրամադրված երկրները ամեն կողմից չէին հարձակվել իր թագավորության վրա:

*Եվ տեսնելով Աշուրբանիպալի հաղթարշավը՝ որոշեց հենց նրա հետ էլ հարաբերությունները կարգավորել. **«Մեզ հայտնի չեն Արգիշտիի որդու՝ Ռուսայի թագավորության վախճանի հանգամանքները և ժամանակը, սակայն Աշուրբանիպալի տարեգրությունները նշում են մոտ 639 թ. նոր ուրարտական թագավոր Սարդուրի III-ի դեսպանների ժամանման մասին: «Սարդուրին, լսելով իմ հզորության և սխրանքների մասին, որին ինձ արժանացրել են մեծ աստվածները, ողջունեց իմ մեծությունը, ինչպես որդին՝ հորը, և սրան համապատասխան՝ գրեց. «Ողջույն թագավորին՝ իմ տիրոջը»: Հարգանքով և խոնարհումով՝ իր առատ նվերները նա ուղարկեց ինձ»»**[140]:*

Այսպիսով, Սադուրի III-ի ժամանակ Արարատյան թագավորությունը քոչվոր ցեղերից պաշտպանվելու նպատակով կախման մեջ ընկավ Աս-

---

[139] История древнего востока, под ред. В.И. Кузищина (изд. III, переработанное и дополненное), Москва 2005 г., ст. 214.

[140] Б.Б. Пиотровский, Ванское царство (Урарту), Москва 1959 г., ст. 114–115.

*րեստանից. «**Նրա թագավորելու շրջանում Ուրարտուն դարձավ Ասորեստանի արբանյակը**»[141]։*

*Սակայն Արարատյան թագավորությունը, ի տարբերություն մյուս երկրների, որ ընկել էին Աշուրբանիպալի իշխանության տակ, ամեն կերպ ջանում էր պահպանել իր անկախությունն Ասորեստանից. «**Ասորեստանյան արքաներին չհաջողվեց լիովին իրենց ենթարկել Ուրարտուն**»[142]։*

Ասորեստանի վախճանը

«Դո՛ւ, ներհուն հայ, որ խորհում ես նփրատի վտակների մոտ, դո՛ւ որ զննում ես Նինվեի ավերակները, բարձրանում ես լա՛ռն Արարատ... ողջո՛ւյն»[143]։

Ասորեստանի համար այդ ահռելի տարածքները հսկելը մեծ լարվածություն էր, քանզի կայսրության տարբեր ծայրերում հաճախ ապստամբություններ էին ծագում, որ պետք էր ճնշել։ Այդ լարվածության հետևանքով Ասորեստանի ուժերն սկսեցին տեղի տալ։

Սարդուրի III–ը, տարածաշրջանի ամենահզոր երկրի հետ դաշինք կնքելով, հավանաբար, ցանկանում էր ապահով կյանք վարել։ Սակայն այնպիսի իրավիճակ ստեղծվեց, որ Աշուրբանիպալի մահվանից հետո (մ.թ.ա. 625 թ.) Ասորեստանն ինքն արդեն կարիք ուներ իր գոյությունը պաշտպանել։ Դրա համար նա խորը մտահոգություններ մեջ էր ընկնել։

Առաջին հայացքից զարմանալի է, թե ինչո՞ւ պետք է նման հզորության հասած կայսրությունը կործանման վտանգի առաջ կանգներ։ Չէ՞ որ ամեն կողմից երկիր էին մտնում տարբեր տեսակի հարկեր՝ ավելի ու ավելի հզորացնելով երկիրը։

Սակայն Ասորեստանի ճակատագիրը կանխորոշված էր ի վերուստ։ Պատմաբանները Ասորեստանի կործանումը կապում են մի քանի պատճառների հետ։

Առաջին. գրավված երկրներում ապստամբություններ սկսվեցին։

Երկրորդ. Աշուրբանիպալից հետո, երբ նրան փոխարինեց Նաբուպալասարը, կարգ ու կանոնը երկրում խաթարվեց. ներմուծվող հարկերը գնում էին ոչ թե պետական գանձատուն, այլ՝ պաշտոնյաների գրպանները։

---

141 Девид Ленг, Армяне, народ – созидатель, Москва 2004 г., ст. 104..

142 Авдиев В. И. История Древнего Востока, Ленинград 1948 г., ст. 454.

143 Ուոյթ Ուիթմեն: Տե՛ս Երկիր Դրախտավայր. Օտարերկրացիները Հայաստանի և հայերի մասին..., Երևան 2014 թ., էջ 226:

Երրորդ. Ասորեստանի՝ այդ վիճակն ազդեց նաև բանակի վրա, և վարձու զինվորները, դժգոհելով իրենց հանդեպ նախկին ուշադրության բացակայությունից, սկսեցին հեռանալ բանակից:

Նաբուպալասարը խախտեց նաև Արարատյան երկրի հետ Աշուրբանիպալի կնքած խաղաղության պայմանագիրը. ***«Բաբելոնական ժամանակագրությունը նկարագրող դեպքերը 616-609 թվերից նշում են Նաբուպալասարի (609) արշավանքն Ուրարտուի վրա, սակայն արդյունքները մնում են անհայտ, քանի որ այդ մասին գրառումը կտրված է»***[144]*:*

Նման հոգեբարոյական վիճակով Արարատյան երկրի վրա Ասորեստանի արշավանքը հավանաբար պետք է ավարտված լիներ Նաբուպալասարի պարտությամբ: Այդ ամենից օգտվելով՝ հզորացած Բաբելոնը և Էլամը միասնական ուժերով իրենց հերթին հարձակվեցին Ասորեստանի վրա:

Այդ ռազմարշավի հետևանքով Ասորեստանի վերջին թագավոր Աշուրուբալիտի օրոք կործանվեց և պատմության ասպարեզից իսպառ չքվեց այդ պետությունը.

«Միությունը Եգիպտոսի հետ չփրկեց Ասորեստանին. 614 թ. մարերը գրավեցին և ավերեցին Աշուրը, 612 թ. բաբելացիների, մարերի և սկյութացիների կողմից Նինվեի երկարաժամկետ պաշարումից հետո ընկավ երկրորդ մայրաքաղաքը: Վերջին ասորեստանյան թագավոր Աշուրուբալիտը պետք է, որ նահանջեր Խառան, որտեղ նա կարող էր դիմանալ՝ մինչև 610 թ., և 605 թ.: Կարքեմիշի անկումից հետո Ասորեստանյան պետությունը դադարեց գոյություն ունենալ»[145]*:*

Ասորեստանի կործանման իրական պատճառը, սակայն, նրա՝ օրեցօր աճող ամբարտավանության մեջ էր, նրա դաժանության և գոռոզամտության մեջ. նրանք անխղճաբար ավերում, թալանում և հրդեհի էին մատնում գրավված երկրները, գերի ընկած արքաներին, իշխանավորներին ծաղրում էին, մերկացնելով՝ շղթայակապ տանում էին գերության, շատերին ցից էին հանում, իսկ պարտված զինվորների գլուխներից մեծ բլուրներ էին սարքում: Դրանք, բնականաբար, չէին կարող անարձագանք մնալ երկնքում:

Աստծո մարգարեները մի անգամ չէ, որ զգուշացրել են Ասորեստանին, որ նման ընթացքի վախճանը երկրի կործանումը կլինի:

Հեթանոս-կռապաշտ երկրները պաշտում էին իրենց մտացածին չաստվածներին, որոնք իրականում դևեր էին, և կարծում էին, թե դրանցից է կախված ամեն ինչ: Սակայն իրականում կա միայն մի Արարիչ՝ Ճշմարիտ Աստված, որ տիրում է բոլոր ազգերին՝ անկախ նրանից, որ նրանցից շատ շատերը Նրան չեն ճանաչում:

---

144 В. В. Струве, История древнего Востока, Москва 1941 г., ст. 320.

145 Б.Б. Пиотровский, Ванское царство (Урарту), Москва 1959 г., ст. 116.



*Երուսաղեմաբնակ Եսայի մարգարեն դեռ մ.թ.ա. VIII դ կեսերին տարբեր երկրների մասին մարգարեություն անելիս՝ նաև Տիրոջից ստացած սպառնագին խոսքերն էր գրի առել՝ Ասորեստանի մասին. **«Ասորեստանցիները պիտի ընկճվեն Տիրոջ ձայնից և այն հարվածներից, որ Նա հասցնելու է նրանց։ Եվ իրենց օգնականները, որոնց վրա հույս էին դրել, ամեն կողմից շրջապատման մէջ են առնելու նրան. փողերով ու թմբուկով նրանք շատ անգամ փոխնիփոխ պիտի կռվեն նրանց դեմ ու ոչ թե վաղօրոք, այլ՝ հենց ժամանակին վրեժխնդիր պիտի լինեն նրանցից»**[146]։*

*Արդեն VII դարի կեսերին Նավում մարգարեն է գրի առնում Տերունական խոսքերը՝ Ասորեստանի ապագա կործանման մասին։ Ըստ երկնառաք մարգարեական խոսքերի՝ գոռոզ և հպարտ, ամբարտավան ու փառամոլ Ասորեստանին սպասվում է ամենախայտառակ կործանում. **«Ահա՝ ես քեզ դեմ եմ, - ասում է Ամենակալ Տէր Աստվածը, - պիտի բացեմ քո հետնամասը, քող պիտի գցեմ քո դեմքին, ազգերին ցույց պիտի տամ քո ամօթը և թագավորություններին՝ քո անարգանքը։ Քեզ վրա պիտի նետեմ քո պղծություններն ու աղտեղությունները և խայտառակ պիտի անեմ քեզ։ Եվ այնպես պիտի լինի, որ ով տեսնի քեզ, պիտի իջնի և ասի. «Խե՜ղճ Նինվե, ո՞վ կլինի, որ հեծեծի քեզ համար, որտեղի՞ց մխիթարություն փնտրենք քեզ համար»»**[147]։*

*Այդ մարգարեության խոսքերը նաև դաստիարակչական բնույթ էին կրում, որպեսզի դրանք, Երուսաղեմից հասցվելով ասորեստանցիներին, նրանց ապաշխարության մղեն, որպեսզի խելքի գալով՝ խուսափեն գալիք սպառնալիքներից։ Բայց, քանի որ նրանք կարծրացել էին մեղքի ու անօրինության մեջ, անտես էին անում այդ սպառնալիքները։ Որպեսզի նրանց անզիղջ սիրտը տեսնելով՝ Տեր Աստված իսպառ չկործանի այդ երկիրը, արդեն ոչ թե մարգարեի միջոցով ուղերձ է ուղարկում, այլ հենց մարգարեներից մեկին՝ Հովնանին է Տերն անձնապես ուղարկում. **«Տերը խոսեց Ամաթի որդի Հովնանի հետ և ասաց. «Ելի՛ր եւ գնա՛ Նինվե մեծ քաղաքը***

---

146 Եսայի. 30:31–32

147 Նաւում. 3:5–7

և քարոզի՛ր այնտեղ, քանի որ նրա չարության համբավը հասավ ինձ»[148]***։***

Սա այն հանրահայտ մարգարեն է, որ չցանկացավ Տիրոջ պատվիրանը կատարել. մտածեց՝ նավ մտնելով փախչել երկրից։ Կարծեց, թե նման կերպով կխուսափի իր համար ատելի Նինվե գնալուց։ Բայց տեղի ունեցած ծանր փորձությունից հետո ստիպված եղավ՝ շտապել Ասորեստան։ Նա ամբողջ Նինվեում քարոզեց՝ ասելով, որ երեք օրից Տերը կկործանի 120 000 բնակիչ ունեցող Նինվե քաղաքը։

Եվ ահա, թագավորից սկսած, բոլորը մեծ ահ ու դողի մեջ ընկան, և հրաման եղավ, որ երեք օր ու գիշեր ոչ մի մարդ և կենդանի ո՛չ ուտի, ո՛չ էլ խմի, այլ՝ քուրձ հագած զղջան ու ապաշխարեն իրենց գործած չարիքների համար։ Քանի որ մեծ էր նրանց զղջումը, Տերն էլ այդ պատիժը հետաձգեց, քանզի որոշ ժամանակ անց նրանք կամ նրանց զավակները նորից պետք է անցնեին իրենց անօրեն վարքին ու բարքին։

Ասորեստան գերեվարված և երկար տարիներ այնտեղ ապրող հրեա Տովբիթը, հասնելով խորը ծերության, իր որդուն ասում է. ***«Որդեա՛կ, դու վերցրո՛ւ քո որդիներին, որովհետև ես ահա ծերացել եմ և մոտ եմ մեռնելու. այժմ դու գնա՛ Մարաց երկիր, որդեա՛կ իմ, որովհետև ես հավատում եմ, որ ինչպես Հովնան մարգարեն է ասել, Նինվեն պիտի կործանվի, իսկ Մարաց երկրում միառժամանակ խաղաղություն պիտի լինի»***[149]***։***

Եվ ահա բազմաթիվ զգուշացումներին չանսալու հետևանքով ի կատար ածվեց սպառնալիքը, և Ասորեստանն իր Նինվե մայրաքաղաքով բնաջինջ եղավ։

Այդ մասին մարգարեացել էր նաև Սոփոնիա մարգարեն՝ հայտնելով Տերունական դատավճիռը։ ***«Իմ ձեռքը կերկարեմ հյուսիսի վրա և կբնաջնջեմ ասորեստանցուն, Նինվեն ապականության կենթարկեմ՝ անապատի պես անջրդի կդարձնեմ, կարածեն նրա մեջ հոտերն ու երկրի բոլոր գազանները, գետնաշուծներն ու ոզնիները կապրեն նրա տներում, գազանները կոռնան նրա նկուղներում, և հավալուսինները՝ նրա դռների մեջ, քանի որ նրա գոռոզությունը մայրի ծառի պես բարձր է»։ Այսպես է լինելու վրիժագործ քաղաքը, որ ապրում էր հույսով, որ ասում էր իր մտքում. «Ես եմ, և ոչ ոք չի լինի ինձնից հետո»։ Ինչո՞ւ գազանների ճարակ դարձավ այն և ապականվեց։ Յուրաքանչյուր ոք, որ պիտի անցնի նրա միջով, պիտի սուլի և իր գլուխը շարժի»***[150]***։***

Աստծո խոսքն անբեկանելի իրականացվեց, և այդ հինավուրց օրերից մինչ օրս՝ Նինվեն մնաց այդպես անմարդաբնակ, և այսօր էլ նրա ավերակների մեջ բնակվում են այն կենդանիները, որոնց մասին գրել էր մարգարեն։

---

148 Յովն. 1:2–3

149 Տոբիթ. 14:4–6

150 Սոփ. 2:13–15:

Տեսնում ենք, որ հզորագույն Ասորեստանը, որի վրա հույս էր դրել Սարդուրի III–ը, գահավիժելով իր գլխապտույտ բարձունքներից՝ իսպառ կործանվեց: Նրա ավերակները դարեր շարունակ մնացին անհայտության փոշու տակ, մինչ որ XIX դ. կեսերին անգլիացի հնագետ Լեարդի կողմից արված պեղումների շնորհիվ ի հայտ եկան նրա վերջին մայրաքաղաք Նինվեի ավերակները՝ վկայելով պատմական իրողությունների մասին. ***«Ասորեստանը, սկսած 745 թվականից, այսինքն՝ Թիգլաթպալասար III–ի թագավորելուց մինչև 645 թիվը՝ հարյուր տարվա ընթացքում չի տեսել ոչ մի պարտություն, իսկ Աշուրբանիպալ արքայի օրոք հասավ իր ամենամեծ հզորությանը: Եվ ահա, այդ պետությունը, որը դեռ 645 թվականին կանգնած էր իր հզորության գագաթնակետին, մի ինչ-որ քառասուն տարի հետո դադարեց գոյություն ունենալ»***[151]:

Իսկ Արարատյան երկիրը, Նախախնամության կամոք, այդ թոհուբոհի մեջ մնաց կանգուն՝ տեսնելով իր դարավոր թշնամու՝ Ասորեստանի կործանումը: Հայերի հոգում դեռ մնացել էր այն նշույլը՝ իրենց հոգեշնորհ հայրերի՝ Նոյի, Հայկի, Արամի և այլոց շնորհիվ: Քանզի պահելով իրենց ռազմական հզորությունը՝ նրանք հնարավորինս մեղմ էին վերաբերվում գրավված երկրների հետ՝ հակառակ Ասորեստանի անգթությանը և վայրագություններին, ինչն ավելի լավ արտացոլվում է պատմաբան Նիկողայոս Ադոնցի մոտ. ***«Ուրարտուն կատարել է այնպիսի առաքելություն, որը պետք է գնահատել՝ ըստ արժանվույն. նա փակել է սեմականաթյան ծավալման ճանապարհը՝ դեպի Հայաստանի լեռնաշխարհը և Փոքր Ասիա: Ինչպիսին էլ, որ լինեն ասորեստանյան քաղաքակրթության արժանիքները, չպետք է թաքցնել, որ Ասորեստանը զուրկ էր մարդու ունեցած արժեքի գիտակցությունից, որ այնքան էական է քաղաքակրթության համար: Աշշուրի տիրակալների անգթությունն առասպելական էր:***

Նրանք նույնիսկ իրենք իրենց հաշիվ չէին տալիս այն հրեշավոր հայտարարությունների համար, որ անում էին՝ առանց նեղվելու և հպարտությամբ՝ ասելով, թե «կատաղած շան և վայրի ցուլի նման» իրենք նետվում են թշնամի երկրների վրա: Հիվանդագին կրքոտությամբ նրանք նկարագրում են, թե ինչ սարսափելի գործեր են կատարել հարձակման ենթարկված երկրներում՝ ավերել, հրկիզել քաղաքներն ու դաշտերը, կոտորել բնակչությանը, կենդանի այրել երիտասարդ տղաներին ու երիտասարդ աղջիկներին, կտրել ձեռքերը, մատները, ականջները, մորթել և կաշիները փռել պարիսպների վրա, կտրված գլուխներով բուրգեր բարձրացրել և նրանց շուրջը շարել ցցահանված դժբախտներին, գյուղերում դադարեցրել աշխատավորների ուրախ ձայնը և թողել, որ այնտեղ հաստատվեն վայրի էշերն ու վայրի գազանները և այլն... Կատարելապես հասկանալի է բիբլիական մարգարեի արձակած թեթևացման ճիչը՝ Աս-

[151] В. В. Струве, История древнего Востока, Москва 1941 г., ст. 340.

ռեստանի անկման առթիվ. «Նինվե՛ն, արյան, նենգության ու բռնության քաղաքը, կործանվել է: Ո՞վ կափսոսա նրան: Բոլոր իմացողները երկու ձեռքով ծափ կտան, որովհետև ո՞վ չի տանջվել նրա չարությունից»: Ուսանելի է, որ մեկ ուրիշ մարգարե կոչ է անում «Արարատի թագավորներին», այսինքն՝ Ուրարտուին՝ Ասորեստանի վրա հարձակվել:

Ռուս ասուրագետ Նիկոլսկին, որն Ուրարտուի անցյալի առաջին հետազոտողներից մեկն է, շատ լավ նկատել ու ընդգծել է ասորական վայրենի ոգու և Ուրարտուի շատ ավելի մեղմ ու մարդկային ոգու միջև եղած հակադրությունը: Սանձահարել Ասորեստանի մոլեգնությանը և արգելել նրան՝ ներխուժելու նահիրյան երկրները, ահա մի էապես ազնիվ առաքելություն, որը բաժին էր ընկել Ուրարտուին: Նա շատ արժեքավոր ծառայություն մատուցեց՝ իր ավանդը ներմուծելով մարդասիրական գաղափարների մեջ»[152]:

Սարդուրի III-ից հետո Արարատյան երկրի գահին նստեց երեք արքա՝ Էրիմենը, Էրիմենի որդի Ռուսա III-ը և Ռուսա IV-ը: Սակայն այս երեք արքաների հետ կապված շատ անորոշություններ կան: Կարծիք կա, որ Էրիմեն անվամբ արքա ընդհանրապես գոյություն չի ունեցել, իսկ Էրիմենն ուղղակի Արմենն է, և ուրեմն դա պետք է հասկանալ ոչ թե Էրիմենի որդի Ռուսա, այլ՝ Արմեն Ռուսա կամ Հայ Ռուսա:

Իսկ թե ո՞վ է այդ առեղծվածային Արմեն-Ռուսան և թե ինչե՞ր են տեղի ունեցել նրա ժամանակ, դրան ավելի մանրամասն կանդրադառնանք ավելի ուշ:

Իսկ Ռուսա IV արքան շատ հազվադեպ է հիշատակվում պատմաբանների մոտ, քանզի նման անվամբ արքայից ոչինչ չի պահպանվել. միայն՝ անվանումը: Այն էլ հարց է, թե վերաբերո՞ւմ է իրեն, թե՝ վերը հիշատակված մի այլ Ռուսայի՝ ինչից ելնելով նրա գոյության փաստը համարելով անվավեր՝ շատերը նման արքայի անուն չեն էլ տեղադրում ուրարտական արքաների անվանացանկերում:

---

[152] Նիկողայոս Ադոնց, Հայաստանի պատմություն: Ակունքները X–VI դդ. մ.թ.ա.: Հայերի ծագումը: Հոդվածներ, Երևան 1972 թ., էջ 365–366:

Վանի թագավորության մշակույթը

«Չնայած նրան, որ քիչ բան է հայտնի Հայաստանի մասին, Եվրոպան, մշակութային ժառանգության տեսանկյունից, մեծ պարտք ունի Հայաստանի հանդեպ: Պատմության արշալույսին Հայաստանը քաղաքակրթության օրրաններից մեկն էր ... Մ. թ. ա. առաջին հազարամյակում Հայաստանի տնտեսությունը, արվեստն ու ավանդույթներն այնքան զարգացած էին, որ նրա մշակույթի ազդեցությունը տարածվել է Եգիպտոսում, Հունաստանում ու Հռոմում ինչպես՝ նյութական, այնպես էլ հոգևոր առումով»[153]:

Այս աշխատության՝ ինչպես առաջին, այնպես էլ այս հատորում ցույց տրվեց, որ Հայաստանը եղել է մետաղագործության, ձիաբուծության, մարտակառքերի և տնտեսության տարբեր ոլորտների հայրենիքը: Այսինքն, մոտ Ն.Ք. 2500 թվականից մինչ Ն.Ք. 1000 թթ. տնտեսության բոլոր ոլորտներում Հայաստանն ունեցել է առաջնային դիրք:

Այստեղ մենք կտեսնենք, որ Ուրարտուի մշակույթը չի տարբերվում իրենից առաջ՝ մոտ 1500 տարի շարունակ այդտեղ ապրած ժողովրդի մշակույթից: Դա վկայում է այն մասին, որ իրականում Ուրարտուն նույն ինքը Արարատյան երկիրն է, բնակիչներն էլ նույն Հայկ Նահապետի ժառանգները՝ հայ ժողովուրդը:

«Ասորեստանի թագավորներ Սալմանասար առաջինի, Թուկուլթի-Նինուրտա Առաջինի, Թիգլաթ-Պալասար Առաջինի և Սալմանասար Երրորդի՝ Ուրարտու կատարած արշավանքների արձանագրություններում հստակ նշվում է, թե որքա՜ն զարգացած էին ուրարտացիները մետաղամշակության, արվեստի, ճարտարապետության, քանդակագործության, արծաթագործության և ռազմական արհեստի մեջ, և հատկապես որքան զորեղ էին ուրարտացիները՝ պաշտպանության և ռազմական մարտավարության մեջ»[154]:

Այժմ հանգամանորե՛ն անցնենք Վանի թագավորության կամ, այսպես կոչված, Ուրարտուի մշակույթին և տեսնենք, թե ինչ են ասում այդ մասին պատմաբանները:

Արարատյան երկիրը, բացի իր սեփական տնտեսության տարբեր ճյուղերը զարգացնելուց, ապրանքներ էր արտահանում նաև Միջագետք-

153 Элизабет Бауэр, австрийский историк, арменовед:

154 Maximillien de Lafayette, “Civilization and Arts of Armenia from Pre–History to the Present Day: Its Culture, Society, Stars, Artists and Celebrities” Volume 1, USA San Bernardino, CA 25 May 2015 p. 101.

*յան և շրջակա այլ երկրներ: Նաև ինքն էլ, հեռավոր երկրներից ստանալով տարատեսակ ապրանքներ, վաճառում էր այլ երկրներին: **«Ի հավելումն ռազմական և քաղաքական նպատակների՝ Ուրարտուն լուծեց միանգամայն որոշակի տնտեսական խնդիրներ, որոնցից գլխավորը եղել է Տավրոսի շրջանի ոսկու, արծաթի և երկաթի հանքերի տիրապետումը, նաև Փյունիկիայի, Սիրիայի և Փոքր Ասիայի միջև ապրանքափոխարինման, ապա նաև՝ Արևելքի և Արևմուտքի միջև հիմնական առևտրային ուղիների վերահսկումը»** [155]:*

*Երկիր ապրանք էր մտնում Հնդկաստանից, Չինաստանից, Եգիպտոսից և այլ վայրերից: Հատկապես հետաքրքիր է, որ դեռ այդ ժամանակներում հայերը մետաքսը Չինաստանից ստացել և վերավաճառել են, ինչից երևում է, որ մետաքսի ճանապարհը գործել է դեռ այդ հնագույն ժամանակներից և սկիզբ առնելով Չինաստանից՝ իր վերջնակետը գտել Հայկական լեռնաշխարհում: **«Ուրարտուն եղել է որդան կարմիր ներկի մատակարարը դեպի «Բարգավաճ Կիսալուսնի» երկրներ, մատակարարում էր նրանց նաև մետաղական հումք և մետաղներից պատրաստած ապրանքներ: Նա եղել է հնդկական համեմունքների և չինական մետաքսի վաճառքի միջնորդ: Վանի մոտ հայտնաբերված մետաքսե գործվածքների մնացորդները թվագրվում են մ.թ.ա. 750-ական թվականներով և համարվում են մետաքսի արևելյան առևտրի հնագույն վկայությունը: Նույն շրջանում հայտնաբերվել են եգիպտական հիասքանչ թալիսմաններ՝ բզեզի տեսքով, նաև թալիսմաններ՝ հիերոգլիֆներով, ասորական գլանաձև կնիքներ և ուլունքներ, Փյունիկեի արծաթե սափորներ և ոսկյա ականջօղեր՝ մարգարիտներով: Այս ամենը, որ հայտնաբերվել են Կարմիր բլուրում՝ Երևան քաղաքի մոտ, բազմակողմանիորեն ապացուցում են, որ Ուրարտուի առևտրային հարաբերությունները ձգվել են Նեղոսի հովտից և դրանից դուրս»** [156]:*

*Տարբեր պատմաբաններ են ուսումնասիրել Վանի թագավորությանը վերաբերող մշակութային կոթողները և հայտնաբերված ամենատարբեր ոլորտներին պատկանող գտածոներից եկել են այն եզրակացության, որ այդ մշակույթը պատկանել է բարձր քաղաքակրթության տեր ժողովրդի, սակայն և խոստովանում են, որ այն դեռ թերի է ուսումնասիրված: **«Ուրարտական մշակույթը դեռ քիչ է ուսումնասիրված: Սակայն արդեն իսկ միանգամայն պարզ է, որ ուրարտացիներն ստեղծել են բարձր մշակույթ՝ սերտ կապված Առաջավոր Ասիայի այլ ժողովուրդների ստեղծագործական մշակույթի հետ, ինչով էլ արժեքավոր ներդրում են արել համաշխարհային մշակույթի գանձարանում: Ուրարտական մշակույթի շատ հատկանիշներ առանձնանում են մեծ ինքնությամբ: Ուրարտացիներն ունեցել են***

---

155 Дэвид Лэнг, «Армяне, народ–созидатель», Москва 2004 г., ст. 106.

156 Նույն տեղում:

իրենց սեփական հին հիերոգլիֆիկ գրերը, որոշ պատկերային նշաններ, որոշները հայտնաբերվել են առանձին առարկաների և մի կավե տախտակի վրա: Ճարտարապետությունը և մետալուրգիան նրանց մոտ հասել են բարձր կարգի վարպետության»[157]:

*Սակայն անցնենք Արարատյան երկրի ներքին ռեսուրսներին և տեսնենք, թե այն ի՞նչ առանձնահատկություններ ուներ իր տնտեսության մեջ, որ գալիս էր դեռ հնագույն ժամանակներից՝ քուռարաքսյան մշակույթի ակունքներից. **«Հայկական լեռնաշխարհում և Անդրկովկասում մ.թ.ա. III հազարամյակում տարածվում է վաղբրոնզե դարի մշակույթը, որ անվանվել է Քուռարաքսյան»**[158]:*

Իհարկե, կանդրադառնանք այդ ոլորտներին ոչ այն մանրամասնությամբ ինչն արվեց առաջին հատորում: Սեղմ կնշենք. որ Վանի թագավորության մշակույթը նույն Քուռարաքսյան մշակույթի շարունակությունն է:

Մետաղագործություն

***«Հին փյունիկիացիները Թայրում-**Tyre **(այսօր ժամանակակից Լիբանանի Սուր-**Sour **քաղաքն է) և Սիդոնում-**Sidon
(այսօր ժամանակակից Լիբանանի Սայդա-Saida **քաղաքն է)
ինչպես նաև եբրայեցիները գիտեին Ուրարտու երկիրը
և նրանց հետ առևտուր էին անում»:***[159]

*Հայտնի է, որ Հայկական լեռնաշխարհը եղել է մետաղագործության հայրենիքը. այստեղ են առաջինն ի հայտ եկել պղինձը, բրոնզը և երկաթը: **«Հենց ասորեստանցիներն էլ հիանում էին ուրարտացիներով՝ համարելով նրանց աննախադեպ վարպետություն ունեցող մետաղագործներ»**[160]:*

*Այդ ոլորտի զարգացմանը նպաստել են ոչ միայն մարդկային հմտությունները, այլև Արարատյան երկրի բնական պաշարները. **«Պղնձի մշակումը հայտնի էր Խնուսի շրջանում՝ էրզրումից հարավ-արևելք՝ Տիգրիսի ակունքների մոտ... Արճիճ և անագ նույնպես եղել է Ուրարտուում»**[161]:*

---

157 Авдиев В. И. История Древнего Востока, Ленинград 1948 г., ст. 410–411.

158 История древнего востока, под ред. В.И. Кузищина (изд. III, переработанное и дополненное), Москва 2005 г., ст. 2006.

159 Maximillien de Lafayette, “Civilization and Arts of Armenia from Pre–History to the Present Day: Its Culture, Society, Stars, Artists and Celebrities” Volume 1, USA San Bernardino, CA 25 May 2015 p. 101.

160 Малая история искусств, Москва 1976 г., ст. 145.

161 Б.Б. Пиотровский, Ванское царство (Урарту), Москва 1959 г., ст. 164.

Պղնձի և բրոնզի դյուտն այստեղից տարածվեց աշխարհով մեկ, բայց երկաթը դեռ երկար ժամանակ մնաց՝ որպես այս լեռնաշխարհում բարձր մշակույթի ստեղծած բնիկների մենաշնորհը։

«Այսպիսով, մենք մոտեցանք Հայաստանում երկաթի դարի սկզբին, որը նշանավորում է նոր դարաշրջան, դարաշրջան՝ ժամանակակից տեխնոլոգիաների»[162]։

«Առաջավոր Ասիայի խնդիրներից մեկը հնագույն ժամանակներում նրա մետալուրգիայի ուսումնասիրությունն է, որի զարգացման բարձր աստիճանի մասին նշվում է հին աղբյուրներում։ Հատուկ դիրք է գրավում այդ հարցում Ուրարտուն, որտեղ ըստ բազմաթիվ հետազոտողների կարծիքների՝ բրոնզի գոյությամբ հանդերձ, ավելի վաղ, քան մյուս վայրերում ի հայտ եկավ և մտավ լայն օգտագործման մեջ՝ երկաթը»[163]։

«Արհեստագործական արտադրության զարգացման համար հսկայական նշանակություն է ունեցել մետաղագործությունը։ Անդրկովկասը Հյուսիսային Միջագետքի և Փոքր Ասիայի հետ միասին՝ կազմում է զարգացած մետալուրգիայի հնագույն շրջաններից մեկը, որտեղ հատկապես վաղ է ի հայտ եկել և շատ լայն տարածում է ստացել երկաթը։ Մասնավորապես, մետաղագործությունը մեծ ծաղկում է ապրել Ուրարտու երկրում։ Պեղումները Թոփրաք Քալեում և Կարմիր բլուրում ցույց են տվել, որ ուրարտացիները զենքերի և զինամթերքի պատրաստման համար օգտվել են գլխավորապես երկաթից։ Սակայն ուրարտացիներն իրենց տրամադրության տակ ունեցել են նաև կապար ու անագ և կարողանում էին ստանալ բրոնզե համաձուլվածք և բրոնզից պատրաստել են տարբեր առարկաներ»[164]։

Թե՛ բրոնզի համաձուլվածքը և թե՛ երկաթը, ինչպես արդեն գիտենք, աշխարհում իրենց հայտնվելու համար պարտական են քուռարաքսյան մշակույթի ներկայացուցիչներին, այսինքն՝ հայ մետաղագործների պրպտուն մտքին ու աշխատանքներին։

Վանի թագավորությունում էլ ժառանգելով այդ արհեստն իրենց նախնիներից՝ այն ի գործ դրեցին թե՛ երկրի ներքին կարիքների և թե՛ առևտրական արտաքին գործունեության համար։ ***«Արհեստների մեջ ավելի մեծ զարգացում ստացավ մետալուրգիան՝ տեղական հանքանյութերի օգտագործմամբ։ Վանի թագավորությունը շատ հարուստ էր երկաթի հանքերով։ Պեղումների ժամանակ հանդիպում են մեծ քանակությամբ երկաթյա առարկաներ, և հավանաբար, Վանի թագավորությունում ավելի վաղ, քան Առաջավոր Ասիայի մյուս շրջաններում, երկաթը մտավ լայն օգտագործման մեջ։***

---

162 Дэвид Лэнг, «Армяне, народ–созидатель», Москва 2004 г., ст. 88.

163 Б.Б. Пиотровский, Ванское царство (Урарту), Москва 1959 г., ст 161.

164 Авдиев В. И. История Древнего Востока, Ленинград 1948 г., ст. 404–405.

Երկաթե առարկաների հետ միասին (զենքեր և գործիքներ), Ուրարտուում հանդիպում են մեծ քանակությամբ բրոնզե առարկաներ, հատուկ՝ իրենց գեղարվեստականությամբ և պատրաստման տեխնիկայով...

Ուրարտուի մետաղական առարկաները լայնորեն տարածվել են ամբողջ Առաջավոր Ասիայով: Հանդիպում են նաև նրա սահմաններից դուրս ևս. մասնավորապես՝ հին հունական տաճարներում:

Այդպես կաթսաների զարդերը, կանացի մարմնով թևավոր ֆիգուր հանդիպում է Իրանում, Նինվեում, Հռոդոսում, Դելփիում և Օլիմպոսում»[165]***:***

Ոչ միայն՝ արևմուտքի և հարավի, այլև հյուսիսի կողմերն էլ են հասել այս բարեբեր լեռնաշխարհում տարբեր նպատակների համար պատրաստված իրերը: ***«Ուրարտացիների մետաղական աշխատանքները, ըստ Շախերմեյերի***[166]***, արտահանվել են դեպի հյուսիսի (Մայկոպ, Կելերմես), Սիրիա և Միջագետք (Կարքեմիշ, Ասորեստան), նաև Մարաստան, Իրան և դեպի արևմուտք՝ մինչև էգեյան ծով»***[167]***:***

Բնական է, որ երկաթից պատրաստված բարձորակ իրերը նախ մեծ տարածում պետք է գտնեին հենց Հայաստանի տարածքում՝ հատկապես զինագործության ասպարեզում: ***«Հասավ ժամանակը երկաթե զենքերի: Թրերի առաջին պատրաստողներն եղան Հայաստանի լեռնաբնակները՝ ուրարտացիները»***[168]***:***

Տեսնում ենք, որ Հայկական լեռնաշխարհը նորից փայլեց՝ շրջակա քաղաքակիրթ երկրներին մի նոր՝ ավելի բարձր աստիճանի հասցնելով. նրանց ծանոթացրեց երկաթի գյուտին: ***«Կարելի է համարել, որ ուրարտացիները որոշակի ազդեցություն ունեցան հարևան ժողովուրդների մշակույթի վրա, մասնավորապես՝ ասորեստանցիների: Ուրարտական մշակույթն անվիճելի ազդեցություն ունեցավ ասորեստանյան մետալուրգիայի և ասորեստանյան արվեստի զարգացման վրա»***[169]***:***

---

165 В. В. Струве, История древнего Востока, Москва 1941 г., ст., 321.

166 F. Schachermeyer, Tuschpa («Reallexikon der Vorgeschiehte», XII, Berlin, 1929).

167 Б.Б. Пиотровский, Ванское царство (Урарту), Москва 1959 г., ст. 163.

168 С. А. Нефедов, Иллюстрированная история древнего мира, Екатеринбург 1994 г., ст. 89.

169 Авдиев В. И. История Древнего Востока, Ленинград 1948 г., ст. 412.

Խեցեգործություն

Խեցեգործությունը Հայկ Նահապետի ժամանակներից Հայաստանում զարգացրել է առանձնահատուկ աշխատանքի եղանակ, ինչով էլ այն տարբերվել է այլ երկրների խեցեղենից՝ թե՛ արտաքնապես և թե՛ որակական հատկանիշներով: Այդ խեցեղենի յուրահատկությամբ է պայմանավորված, որ հնագետները կարողացել են ժամանակագրորեն որոշել, թե Հայկական լեռնաշխարհի այդ մշակույթը կրող ժողովրդի ներկայացուցիչները ե՞րբ են ժամանել որևէ այլ երկիր, երբ այնտեղ հայտնաբերվել է նման խեցեղեն: Այդպես եղավ նաև Պաղեստինի պարագայում, երբ այնտեղ հայտնաբերվեց Հայկական լեռնաշխարհին հատուկ խեցեղեն:

Վանի թագավորության շրջանում էլ խեցեղենը բարձր զարգացման էր հասել, քանզի ժառանգելով հնագույն խեցեղենի պատրաստման այդ եղանակը՝ ժամանակի ընթացքում այն ավելի էր կատարելագործվել: ***«Ուրարտական խեցեղենները բազմաթիվ են և բազմազան: Պեղումներն, ինչպես Վանի թագավորության կենտրոնական մասում, այնպես էլ նրա ծայրամասում տվել են բազմաթիվ խեցե տարաներ և նրանցից մնացած բեկորներ: Կարմիր Բլուրի պեղումների ժամանակ բացվեց երկու պահեստ՝ կավե արտադրանքներով, նրանցից մեկում, որ պեղվել է 1951 թ., հայտնաբերվել է 1036 սափոր, իսկ մյուսում՝ մոտ 120 տարբեր տարա: Ուրարտական վարպետների խեցեղենի բազմազանությունն առանձնանում էր ոչ միայն ձևով և չափսերով (1200 լիտր տարողությամբ մեծ կարասներից սկսած՝ մինչև փոքրիկ անոթիկները՝ 2 սմ. բարձրությամբ), այլ նաև՝ պատրաստման վարպետությամբ»***[170]:

Զարդեր

Արարատյան թագավորությունում մեծ վարպետությամբ պատրաստել են նաև բազմազան զարդեր և պչրանքի առարկաներ՝ տարբեր թանկարժեք մետաղներից ու քարերից: ***«Ուրարտական արվեստում, հավանաբար, հաճախ են օգտագործվել ոսկե զարդեր՝ թանկարժեք քարերով ագուցված»***[171]:

Հնագետների ուշադրությանն են արժանացել հատկապես ամուր կիսաթանկարժեք քարերից պատրաստված ուլունքները, որ ի հայտ են

[170] Б.Б. Пиотровский, Ванское царство (Урарту), Москва 1959 г., ст 189.

[171] Б.Б. Пиотровский, Ванское царство (Урарту), Москва 1959 г., ст 174.

*եկել պեղումների ժամանակ: Նրանք նշում են. **«Պետք է նաև հիշատակել բազմաթիվ ուլունքները՝ պատրաստված կիսաթանկարժեք քարերից: Հատկապես սիրել են կրել գնդաձև ուլունքներ՝ կարմիր և վարդագույն սարդիոնից: Դրանց պատրաստման եղանակը խոսում է քարի մշակման բարձր վարպետության մասին (տարբեր եղանակներով անցք բացելը և դրանց փայլեցումը)»**[172]:*

Ձիաբուծություն

*Ձիաբուծությունն էլ Վանի թագավորությունում ուներ նույն պատկերն, ինչը որ եղել է մինչ նրա կազմավորվումը. երբ Արարատյան երկրից հիքսոսներն իրենց մարտակառքերով ասպատակեցին Եգիպտոսը: **«Ձին Ուրարտուում, ամենայն հավանականությամբ, եղել է ամենատարածված տնային կենդանին... հավանական է՝ նույնիսկ պարծենում էին իրենց ձիաբուծությամբ: Այդպես, դատելով Լուվրի սալիկներից (169—170)՝ Ուրմիա լճի արևելյան ափին, հատուկ բուծել են երիվարներ և այդտեղից նժույգները հասցվել են ուրարտական հեծելազորին: «Մարդիկ, որ ապրում են այդ գավառում,- գրված է տեքստում,- ամբողջ Ուրարտուում հեծելազորի համար ձիեր վարժեցնելու գործում չունեն իրենց հավասարը»: Նույն շարադրանքում Ուլուխ քաղաքի նկարագրության ժամանակ պատմվում է, որ ուրարտական արքա Ռուսան քաղաքի շուրջը ձիերի համար պատրաստեց ճոխ արոտավայրեր:***

***Սիգկեխ տեղանքում՝ Վանից դեպի հյուսիս-արևելք, որտեղ միջին դարերում տեղակայված էր հայկական իշխանների ձիարշավարանը, գտնվել է մի քար՝ սեպագիր տեքստով. «Մենուան՝ որդին Իշպուինիի, ասում է՝ այս տեղից Արցիբի (Արծիվ) անվամբ նժույգը Մենուայի տակ ցատկեց 22 թիզ (դաստակ)»: Նման կերպ տեքստում նշվում է ուրարտական արքայի «բացառիկ մարզական նվաճումը» ձիասպորտի մեջ: Նժույգը նրա տակ ցատկեց 22 թիզ, այսինքն մոտ 11,4 մետր»**[173]:*

*Մարտակառքերը նույնպես սկիզբ են առել Հայկական լեռնաշխարհում: Վանի թագավորությունում էլ ավանդաբար պատրաստում և օգտագործում էին մարտակառքեր: **«Արդեն ամենավաղ ուրարտական գրառումներում (IX դ. վերջ) նշվում է ուրարտական բանակում, ինչպես հեծելազորի, այդպես և մարտակառքերի առկայության մասին»**[174]:*

---

172 Б.Б. Пиотровский, Ванское царство (Урарту), Москва 1959 г., ст. 189.

173 Б.Б. Пиотровский, Ванское царство (Урарту), Москва 1959 г., ст. 115.

174 Նույն տեղում:

Շինարարություն

«Հայաստանը՝ ինքնատիպ գեղեցկության այդ երկիրը,
ճարտարապետական զմայլելի հուշարձանների այդ երկիրը,
այն ժողովրդի երկիրը, որի դարավոր տառապանքներն
անօրինակ են և անսահման, իսկ տոկունությունն ու
արիությունը սրտահույզ հիացմունք են հարուցում.
Հայաստանն իրավունք ունի հպարտանալու
տառապանքների միջով տարած իր մշակույթով»[175]:

Վանի թագավորությունում շինարարությունը ևս մյուս ոլորտների նման բարձր մակարդակի վրա էր: ***«Հին Ուրարտացիները հմուտ շինարարներ էին: Նրանք իրենց շենքերը կառուցել են կա՛մ կավե աղյուսից, կա՛մ հսկայական ժայռաբեկորներով (բլոկներից՝ կիկլոպյան մեգալիտ շարվածքով): Հատկապես խնամքով կառուցվում էին ամրոցները, որոնց պատերը ստորին մասում շարված էին մեծ ժայռաբեկորներից, որ հասնում էին մեկ մետր հաստության: Խոշոր ամրոցային կառույցները գտնվել են Վանա լճի ափին, որտեղ ուրարտական մայրաքաղաք Տուշպան էր: Պեղումներն այստեղ հայտնաբերել են ամրոցի պատեր, որ տեղ-տեղ հասնում էին մինչև 20 մ բարձրության»[176]:***

Պեղումների արդյունքում հայտնաբերվել են հիմնականում այնպիսի կառույցներ, որ ավելի մասշտաբային ու հզոր են եղել. ինչ-որ չափով պահպանվել են ամրոցներ, պարիսպներ, մառաններ, տաճարների հիմքեր: Պահպանվել են նաև այնպիսի կառույցներ, որոնք աչքի չեն ընկել՝ թշնամիների աչքը չեն մտել, և առանձնապես չի ազդել դրանց քայքայման վրա նաև բնությունը՝ օրինակ, ստորգետնյա ոռոգման ջրատարները և այլն:

«Ուրարտական ճարտարապետության մասին կարելի է դատել լայն տարածում գտած հզոր ամրոցներով և բարվոք քաղաքներով: Ամրոցների մեծ մասը, որ միաժամանակ նաև քաղաքային բնակավայրերի միջնաբերդեր էին, գտնվել են բնական բարձրադիր ժայռերի վրա:

Նրանց պարիսպները և աշտարակները, շարված հսկայական և ջանասիրությամբ հղկված քարի բեկորներից, վկայում են ուրարտական շինարարների մեծ վարպետության և ռազմական մասնագետների մասին: Հզոր ամրոցները եղել են ուրարտական թագավորների ուժի խորհրդանիշը» [177]:

---

175 Մաքսիմ Ռիլսկի, Կամուրջներ, Երևան 1973 թ., էջ 5-6:

176 Авдиев В. И., История Древнего Востока, Ленинград 1948 г., ст. 398.

177 История древнего востока, под ред. В. И. Кузищина (изд. III, переработанное и дополненное), Москва 2005 г., ст. 213.



*Վանի թագավորության ժամանակաշրջանի շինություններից ամենահայտնիներն են մայրաքաղաք Տուշպան, Ռուսահինիլին, Մուսասիրն, Ուլխուն, Արգիշտիխինիլին, էրեբունին, Թեյշեբաինին: Բացի այդ գլխավոր քաղաքներից՝ Արարատյան երկրի տարածքում գտնվել են բազմաթիվ այլ ամրոցներ ևս: **«Ամբողջ լայնածավալ Հայկական լեռնաշխարհով ցրված են ուրարտական ամրոցների ավերակները՝ Վանի թագավորության երբեմնի հզորության լուռ վկաները»** [178]:*

Վերջերս Արևմտյան Հայաստանի տարածքում՝ Վանի գավառում, հնագետները հայտնաբերել են Վանի թագավորությանը պատկանող քաղաքային շինության մի ճարտարագիտական կառույց, ինչը գիտնականներն անվանել են «Ինժեներական հրաշք»: Դա քաղաքի ջրահեռացման համակարգ է, ինչն այդ ժամանակների համար բացառիկ երևույթ էր. այն ստորգետնյա կառույց է, որը պատրաստվել է շատ վարպետորեն հղկված քարերից:

*Վանի թագավորության ճարտարապետության մեջ իր յուրահատկությամբ հատկապես առանձնանում է Արդինիի Մուսասիրի տաճարը: Կառույցն ավելի հիշեցնում է հին հունական տաճարների ճարտարապետությունը, քան Արարատյան երկրի շրջակայքում գտնվող այլ երկրների կառույցները: **«Խալդի աստծո տաճարի ճարտարապետական ձևերը Մուսասիրում բացառիկ հետաքրքրություն են առաջացնում: Նրանք բոլորովին տարբերվում են Միջագետքի՝ մեզ հայտնի ասորական և բաբելոնյան տաճարների ձևերից»** [179]:*


Սակայն, ըստ Ավդիևի՝ Մուսասիրի տաճարը որևէ կապ չի ունեցել հունական տաճարների հետ: Այն կառուցվել է հենց Հայկական լեռնաշխարհում՝ առանց որևէ մեկից օրինակ վերցնելու: Դրանից կարելի է եզրակացնել, որ այն պետք է լիներ նախատիպը բոլոր հունա-հռոմեական տաճարների, քանզի ոչ միայն իր ճարտարապետական լուծումներով, այլև հնությամբ ավելի առաջնային դիրքում է եղել: Այդ տաճարը հունական ամենահին տաճարից մեծ է 250 տարով: Իսկ դա վկայում է, որ Մուսասիրի տաճարն է օրինակ եղել հույների համար:

---

178 Б.Б. Пиотровский, Ванское царство (Урарту), Москва 1959 г., ст 197.

179 Б.Б. Пиотровский, Ванское царство (Урарту), Москва 1959 г., ст 201.

«Գեղարվեստական տեսանկյունից՝ առանձնահատուկ հետաքրքրություն է ներկայացնում մուսասիրյան տաճարի պատկերը՝ պահպանված Սարգոնի պալատի պատերին: Այս տաճարը կառուցվել է մ.թ.ա. IX–VIII դդ. բարձր հարթակի վրա: Ճակատում իր երկթեք տանիքով և վեցը սյուներով, որ զարդարում են ճակատային մասը՝ այն շատ է հիշեցնում իրոնիկական շրջանի հին հունական շինությունները. այն եղել է նրանց առաջավորասիական նախատիպը»[180]:



Այս կարծիքը, որ Մուսասիրի տաճարը տեղական ճարտարապետական մտքի ծնունդ է, եզակի չէ գիտական աշխարհում. ***«Մուսասիրյան տաճարը բարձր հարթակի վրա էր, որտեղ ըստ երևույթին՝ տանում էին աստիճանները. ուներ երկթեք տանիք՝ բարձր ճակատով... Հավանաբար, այստեղ մենք գործ ունենք կայուն, զարգացմամբ և վերամշակմամբ առավել հին՝ տեղական ավանդույթի հետ, որը հնարավոր է, հետագայում յուրացվել է նաև Հունաստանի կողմից: Հունաստանի մ.թ.ա. VIII դարի ուշ հոմերական արվեստը, ինչպես որ ցույց են տալիս բազմաթիվ հուշարձանները, կրել է արևելյան արվեստի ազդեցություն»***[181]:

Ինչպես որ քուռարաքսյան մշակույթի կրողներից հայերի օրինական ժառանգներն են Վանի թագավորության ժողովուրդը, այսինքն՝ նորից հայերը, այդպես էլ՝ Ուրարտուի օրինական ժառանգն է նույն հայ ժողովուրդը՝ արդեն այլ դինաստիայի թագավորների օրոք, ինչն արտահայտվում է նաև մշակույթի տարբեր ոլորտներում, մասնավորապես՝ ճարտարապետության մեջ: ***«Հատկապես արժեքավոր են Ա.Ս.Սիվկովի դիտարկումների արդյունքները, որ բացահայտեցին, որ հիմնական գծային չափերից մեկը հին հայկական ճարտարապետական հուշարձաններում շատ մոտ է ուրարտականին. 0,518—0,525 մ.: Սրանով լավագույնս հաստատվում է Հայաստանի և Ուրարտուի միջև առկա մշակութային ժառանգական կապը»*** [182]:

---

180 Авдиев Авдиев В. И. История Древнего Востока, Ленинград 1948 г., ст. 398.

181 Малая история искусств, Москва 1976 г., ст. 139.

182 Б.Б. Пиотровский, Ванское царство (Урарту), Москва 1959 г., ст 206.

Գյուղատնտեսություն

*Գյուղատնտեսության մեջ հողագործությունը ևս մեծ զարգացում է ապրել Հայոց աշխարհում Հայկ Նահապետի ժամանակներից սկսած և շարունակվել է Վանի թագավորության շրջանում. **«Ուրարտական հողագործության բարձր մակարդակի մասին վկայում են ինչպես սեպագրային աղբյուրները, այդպես էլ՝ հնագիտական հետազոտությունների տվյալները։ Հայկական լեռնաշխարհում, որտեղ կան բարենպաստ պայմաններ, հողագործությունն ի հայտ է գալիս նեոլիթի շրջանից»**[183]։*

*Հացաբույսերի տարբեր տեսակներով հարուստ է եղել հատկապես Հայկական լեռնաշխարհը։ Առաջին հատորում տեղեկացրել ենք, որ բուսաբաններից և հնագետներից շատերն այդ բույսերի հայրենիքը հենց Հայկական լեռնաշխարհն են համարում։ **«Հայաստանն առանձնանում է մշակովի ցորենի բազմազանությամբ և հարուստ տեսականիով, վայրի ընդեղենի մի քանի տեսակներով։ Բարձր լեռնային գոտիներում լայն տարածում է գտել աշորան։ Հայաստանի տարածքում գտնվող հնագույն բնակավայրերը, որոնք վերաբերում են մ.թ.ա. III հազարամյակին, թույլ են տալիս վերականգնել հողագործական մշակույթի զարգացման պատկերը»**[184]։*

Կլիմայի փոփոխման հետ կապված՝ փոփոխություններ են եղել նաև բուսական աշխարհում, ինչը նույնպես լավ արտապատկերված է պեղումներից ստացված նյութերում։

«Շենգավիթյան բնակավայրի էնեոլիթյան շրջանի նյութերի համեմատությունը Կարմիր բլուրի նյութերի, ինչպես նաև՝ միջնադարյանի հետ, հստակ պատկերում է Հայաստանում կլիմայի փոփոխության գործընթացը՝ խոնավից դեպի ավելի չոր։

***Բուսաբանական հետազոտությունները պարզել են, որ Հայաստանում ուրարտական ժամանակաշրջանում տեղի է ունեցել մշակովի ցորենի և գարու վերջնական տրոհումը... Հայկական լեռնաշխարհի հին հողագործության մասին (մ.թ.ա. IX դ.) պատմվում է ասորեստանյան աղբյուրներում»**[185]։*

*Արարատյան թագավորությունում մեծ զարգացում ապրող մետաղագործությունը շատ էր նպաստում նաև հողագործություն զարգացմանը։ Պեղումների արդյունքում պարզ է դարձել, որ հողագործության համար օգտագործվել են երկաթե գործիքներ՝ եռաժանի, խոփ, գութան, բրիչ, քլունգ, մանգաղ և այլն։ **«Հին ուրարտացիների տնտեսության մեջ մեծ***

---

183 Б.Б. Пиотровский, Ванское царство (Урарту), Москва 1959 г., ст. 133.

184 Նույն տեղում:

185 Б.Б. Пиотровский, Ванское царство (Урарту), Москва 1959 г., ст. 134.

նշանակություն ուներ հողագործությունը: Հնագույն ժամանակներից՝ հին Հայաստանի տարածքում եղանակային պայմաններին հարմարվեցին ցորենի տարբեր տեսակներ:

Հողի մշակման համար օգտագործվել են ծանր գութան, որին լծել են երկու եզ: Այդ գութանի երկաթե խոփերը հայտնաբերվել են Թոփրակ-Կալեում՝ բրիչներ հիշեցնող տեսքով: Երկաթե մանգաղների հետ միասին օգտագործվում էին նաև պարզունակ փայտե կամ ոսկրե մանգաղներ՝ օբսիդիանի ներդիրներով»[186]:

Հացահատիկի համար նախատեսված պահեստները, որ հայտնաբերվել են քաղաքների պեղումներից, վկայում են, որ Արարատյան թագավորությունում հաց ունեցել են լիուլի:

Զարգացմամբ հետ չէր մնում նաև այգեգործությունը. հատկապես աչքի են ընկել խաղողի, խնձորի, նռան և այլ մրգատեսակների այգիները, որոնց մասին վկայում են ոչ միայն գրավոր աղբյուրները, այլև՝ պեղումների արդյունքները:

«Այդ պահակակետային բերդաքաղաքներում, որ գտնվում էին Երևան քաղաքի հարևանությամբ, տնտեսող և եռանդուն ուրարտացիները կուտակել են հացահատիկի, խաղողի և մրգերի մեծ պաշարներ: Խորհրդային հնագետների պեղումները հայտնաբերել են կոպիտ աղացած ալյուր, խնձորի, սալորի, նռան և ձմերուկի սերմերի մնացորդներ: Կտրտված խնձորի և չորացրած խաղողի մնացորդները վկայում են այն մասին, որ նույնիսկ արդեն այն ժամանակ կարողանում էին մրգերը պահպանել, (դա Հայաստանում արվում է նաև ներկայումս)»[187]:

---

186 В. И. Авдиев, История Древнего Востока, Ленинград 1948 г., ст. 403.

187 Дэвид Лэнг, «Армяне, народ-созидатель», Москва 2004 г., ст. 111–112.

Գինեգործություն

«Հայերը աշխարհի լավագույն մարդիկ են»[188]։

Բոլորին է հայտնի, որ գինու մասին ամենահին տեղեկությունը Նոյ նահապետի հետ կապված սուրբգրային պատմությունն է։ Այդ դեպքը տեղի է ունեցել Արարատ լեռան ստորոտում, ինչից էլ եզրակացվում է, որ Հայաստանն է գինու հայրենիքը։ Առաջին հատորում նշվել է, որ Հայաստանում հայտնաբերվել են նաև գինու արտադրման համար օգտագործված մեծ, բնական քարանձավներ, որտեղ գտնված պարագաներից հնագետները եզրակացրել են, որ գինու արտադրությունը մոտ 6000 տարվա պատմություն ունի։ Գինու արտադրությունն Արարատյան երկրում շարունակական է եղել, ինչի մասին նորից վկայում են հենց պեղումները. ***«Վանի թագավորությունում գինեգործությունը լայն տարածում էր գտել և ուներ բազմադարյան զարգացում, քանի որ Հայկական լեռնաշխարհն այն վայրերից է, որտեղ մշակվել է խաղողի որթը։ Նույնիսկ փորձեր են արվել՝ Հայաստանում փնտրել խաղողի նախահայրենիքը։***

Հնում հատկապես գնահատվում էր Առաջավոր Ասիայի լեռնային շրջանների գինին։ Իզուր չէ, որ Հերոդոտոսի ժամանակ մեծ համբավ ուներ «Արմենների երկրի» գինին։ Այն արտահանվում էր նաև Հյուսիսային Միջագետք՝ չնայած որթատունկն այնտեղ մշակվել է հնագույն ժամանակներից։ Հարավային Միջագետքում անբարենպաստ եղանակային պայմանների հետևանքով խաղողագործությունը թույլ էր զարգացած...

Կարմիր բլուրից ստացված նյութերի շնորհիվ պարզ է դառնում, որ ուրարտացիների կողմից Անդրկովկասում մշակած խաղողի տեսակները մեզ լավ հայտնի են։ Պեղումները տվեցին մեծ թվով որթատունկի ածուխ և խաղողի սերմեր, որոնք վկայում են խաղողի բազմազան տեսակների մշակման մասին։

Հայտնաբերվել են ոչ միայն Ոսկեհատ (խարջի) խաղողի սերմեր, այլև Մսխալի, Արարատ (խաչաբաշ), Քիշմիշ (նազելի, երևանյան), նաև սև խաղողի որոշ տեսակներ։ Մի փայտե տարայում գտնվել են չամիչի մնացորդներ՝ քիշմիշ տեսակի խաղողից։ Այդ չամիչը պահպանվել է սեղմված վիճակում։

Վանի թագավորությունում խաղողի այգիները գտնվել են ինչպես սեփական, այդպես և պետական կարգավիճակում. գոյություն են ունեցել նաև խաղողի այգիներ, որ պատկանել են արքայական ընտանիքին»[189]։

---

188 Պիտտոն դը Տուրնեֆոր, Relation d'un voyage, t. 1–2, Փարիզ 1717 թ., էջ 389:

189 Б.Б. Пиотровский, Ванское царство (Урарту), Москва 1959 г., ст. 143.

*Կարմիր բլուրում արված պեղումներից հայտնի դարձավ, որ առկա էին գյուղատնտեսության բազմաթիվ ճյուղեր: Սակայն ամենաակնառու վկայությունները վերաբերում են հենց գինու արտադրությանը: Կրկին հիշենք մեջբերումը. **«Թեյշեբաինիի գինու երեք հսկայական նկուղում հայտնաբերվել են զուգահեռ շարքերով՝ մինչև կոկորդը հողե հատակի մեջ թաղված հսկայական սափորներ (կարասներ)՝ յուրաքանչյուրը մոտ 1000 լիտր տարողությամբ: Առաջին մառանում գտնվում էր 82 նման անոթ, երկրորդում՝ 70, իսկ երրորդում՝ 20: Բոլոր անոթների վրա կային հիերոգլիֆ և սեպագիր արձանագրություններ, որ տեղեկացնում են յուրաքանչյուրի տարողության չափը: Երբեմն տեղեկություն է տրվում նրանց մեջ պարունակվող գինիների որակի և տարիքի մասին:***

Միայն Թեյշեբաինիի երեք հիմնական նկուղում պահվել է ավելի քան 170 հազար լիտր գինի, ինչը բավարար էր հազար մարդու համար՝ մեկ տարավ ընթացքում՝ օրական կես լիտր քանակությամբ»[190]:

*Բացի գինուց՝ Արարատյան երկրում արտադրվել է նաև գարեջուր: Եվ ինչպես գինին, այդպես էլ գարեջուրը պատրաստվել է տարբեր հումքերից, ինչն ապահովել է տարբեր համի և որակի գարեջրերի տեսականի: **«Գինու հետ միասին՝ Առաջավոր Ասիայում սիրված ըմպելիք է եղել գարեջուրը. այն սովորաբար պատրաստվում էր գարուց, բայց գոյություն է ունեցել գարեջուր՝ պատրաստված հաճարից կամ կորեկից: Ըստ հին առաջավորասիական սեպագիր տեքստերի՝ հայտնի են գարեջրի տարբեր տեսակների մեծ թվով անվանումներ: Մեզ են հասել նաև նրանց բաղադրատոմսերը և պատրաստման եղանակը: Կարմիր բլուրի պեղումների ժամանակ հայտնաբերվել են անոթներ՝ գարին թրջելու համար, և երկու մեծ երկարավուն անոթ, որոնց մեջ պատրաստվել էր գարեջուր. դրանցից մեկի մեջ ածիկ գարի էր, իսկ մյուսի մեջ՝ կորեկ»***[191]:

Ոռոգում

Գյուղատնտեսության զարգացումն առանց լուրջ ոռոգման համակարգի՝ մեծ առաջընթաց չի կարող ապրել: Իսկ եթե Արարատյան երկրում հողագործությունն ու այգեգործությունն իսկապես մեծ բարգավաճում են ապրել, դրանից պետք է հետևություն անել, որ ոռոգման խնդիրներն էլ պետք է որ լուծում գտած լինեին:

Ինչ վերաբերում է ջրային պաշարներին, Հայկական լեռնաշխարհը

---

190 Дэвид Лэнг, «Армяне, народ–созидатель», Москва 2004 г., ст. 112.

191 Б.Б. Пиотровский, Ванское царство (Урарту), Москва 1959 г., ст 147.

փաստացի սակավաջուր տարածք չի կարելի համարել, քանզի այնտեղից բխում և տարբեր կողմեր էին հոսում բազմաթիվ գետեր, որոնցից ամենաճանաչվածներն են Եդեմից բխող չորս գետերը՝ Փիսոն-Ճորոխը, Գեհոնը-Արաքսը, Տիգրիսն ու Եփրատը. ***«Հայկական լեռնաշխարհից են սկիզբ առնում Առաջավոր Ասիայի ամենամեծ գետերը՝ Եփրատն ու Տիգրիսը»***[192]*:*

Երկիրը հարուստ էր նաև լճերով, իսկ Վանի թագավորության շրջանում ոռոգման բազմաթիվ ջրատարներից զատ՝ պատրաստվել են նաև արհեստական ջրամբարներ՝ ոռոգման նպատակներով: ***«Հին ուրարտական ջրատարների մնացորդները պահպանվել են ինչպես Ուրարտուի կենտրոնում, այնպես էլ նրա ծայրամասերում. ի դեպ, դրանցից մի քանիսը մեր օրերում էլ դեռ ոռոգում են դաշտերը: Նրանց հունները փորվել են գետնի մակերեսին, ժայռերի մեջ, երբեմն էլ ջրանցքները անցնում են արհեստական թունելներով... Վանի թագավորությունից մեզ հասած ոռոգման կառույցների մնացորդները հրաշալի են և բազմաթիվ: Բացի ջրանցքների մի ամբողջ ցանցից՝ կան նաև արհեստական լճեր, որ ծառայում են որպես ջրամբարներ...***

Վանի թագավորության բոլոր ոռոգման կառույցներից հատկապես մեծ համբավ ունի Իշպուինիի որդի Մենուայի կառուցած ջրանցքը՝ 70 կմ երկարությամբ: Այս ջրանցքը, որը գոյություն ունի մինչ օրս և կրում է լեգենդար թագուհի Շամիրամի անունը, ջուրը հասցնում էր մինչև ուրարտական մայրաքաղաք՝ Տուշպա»[193]*:*

Վանի թագավորության բարգավաճ տնտեսության տարբեր ճյուղերի, հատկապես գյուղատնտեսության մասին տեղեկությունները տարածվում էին շրջակա երկրներում, առևտրականների, ճանապարհորդների, երբեմն էլ երկիր ներխուժող թշնամի բանակների կողմից: ***«Ուրարտուի իշխանների և իրենց ժողովրդի շահերի համար ստեղծված կառույցների համբավը տարածվեց ամբողջ Մերձավոր Արևելքում: Ասորեստանի արքա Սարգոնի մ.թ.ա. 714 թ. արշավանքի մասին պատումը մեզ տեղեկացնում է Վանա լճի հարավում գտնվող Այադուի հարուստ դաշտերի և խաղողի այգիների մասին: Դրանք նախանձ գրգռեցին Սարգոնի մեջ»***[194]*:*

Ամենից շատ Սարգոնը հրապուրվեց Վանի թագավորությունում գործող ջրատարներով: Նրան հատկապես զարմացրին և հետաքրքրեցին ստորգետնյա ջրատարները, որոնք ջուրը շատ ավելի մեծ քանակությամբ էին տեղ հասցնում՝ առանց կորուստների: ***«Կարելի է նաև ավելացնել, որ ուրարտացիները կառուցել են նաև ստորգետնյա ջրուղիներ, որոնք... ունեին այն առավելությունը, որ քանի դեռ ջուրը գտնվում էր երկրի մակերևույթի տակ, դրա գոլորշացումն աննշան էր. այդպես՝ ջուրը շարունակում***

---

192 Б.Б. Пиотровский, Ванское царство (Урарту), Москва 1959 г., ст 132.

193 Б.Б. Пиотровский, Ванское царство (Урарту), Москва 1959 г., ст 138.

194 Дэвид Лэнг, «Армяне, народ-созидатель», Москва 2004 г., ст. 108.

էր հոսել՝ մինչև օգտագործման վայրը և դրա մոտ նոր դուրս էր ելնում»[195]*։*

Պատմաբանների համար խնդրահարույց է եղել այդ ջրատարների կառուցման առեղծվածը։ Նման ստորգետնյա ջրատարները եղել են միայն Հայոց մենաշնորհը, իսկ հին աշխարհի մյուս երկրներն այդ կենսաբեր ջրատարների մասին տեղեկացել և սկսել են կառուցել իրենց տարածքներում միայն այն ժամանակներից, երբ Սարգոն II-ը, ներխուժելով Արարատյան երկիր, այդ ստորգետնյա ջրատարների կառուցման գաղտնիքները բացահայտեց։

«Այս բոլոր հուսահատեցնող հարցերը ցույց են տալիս, թե ինչո՞ւ են ստորգետնյա ջրային խողովակաշարերն ու ստորգետնյա ջրատարները ստեղծման համար երկար ժամանակ պահանջել։ Վերոհիշյալ հարցերի լուծումը տրվեց մ.թ.ա. VIII դ. ասորեստանյան արքա Սարգոն II-ի կողմից Հայաստանը՝ Ուրարտուն (ինչպես որ հնում անվանվում էր) գրավելու արդյունքում։ Ուրարտուում զարգացած է եղել հանքարդյունաբերությունը, և Ուրարտուի հանքագործները գտել են մեր բոլոր հարցերի պատասխանները։ Երբ Սարգոն II-ն էլ իմացավ այդ մասին, նա պատժեց Ուրարտուի բնակիչներին՝ ոչնչացնելով նրանց բոլոր ջրանցույցները, իսկ հետո հաղթականորեն վերադառնալով Ասորեստան՝ կառուցեց իր սեփականը։ Ավելի ուշ այդ գաղտնիքներն իմացան պարսիկները, և հետագա հարյուրամյակներում այդ գիտելիքները տարածվեցին ամբողջ Մերձավոր Արևելքում, որտեղ դրանք օգտագործվում են մինչև մեր օրերը»[196]*։*

Արարատյան երկրում գործող ոռոգման համակարգի՝ հատկապես ստորգետնյա ջրուղիների գաղտնիքը տարածվեց ոչ միայն Մերձավոր Արևելքում, այլև՝ ամբողջ աշխարհում։ Դա էլ Հայոց աշխարհի բազմաթիվ մենաշնորհներից մեկն էր, որ մյուսների հետ միասին՝ նպաստեց համայն մարդկության համար ավելի բարգավաճ կյանք ապահովելուն։ ***«Ուրարտական ոռոգման համակարգը ներառում է ստորգետնյա առուներ, որոնք ջուրը տեղափոխում էին՝ գոլորշացմամբ շատ քիչ կորուստ տալով։ Համակարգը Սարգոն II-ն ավերեց, սակայն սկզբունքը նա հավանեց և տարավ իր հետ Ասորեստան, որտեղից էլ համակարգը տարածվեց ամբողջ Հին աշխարհով մեկ»***[197]*։*

Հայկական լեռնաշխարհին անծանոթ աշխարհագրագետներն ու այլ հետազոտողներն առաջին հայացքից մարդկային գործոնի հետ կապված առանձնապես հետաքրքրական նյութեր չեն տեսնում, սակայն խորը ուսումնասիրությունները նրանց մոտ մեծ զարմանք են առաջացնում. ***«Ես մի քանի անգամ արդեն առիթ ունեցել եմ նկատել, թե որքան աննշան***

---

195 Дэвид Лэнг, «Армяне, народ–созидатель», Москва 2004 г., ст. 109.

196 Стивен Бертман, Месопотамия. Энциклопедический справочник, Москва 2007 г., ст. 242.

197 Айзек Азимов, «Ближний Восток. История десяти тысячелетий», Москва 2006 г., ст. 42–43.

է մարդկային տարրը հայկական այս լանդշաֆտներում։ Վանում առաջին անգամ մենք ուրիշ տպավորություն ստացանք... այստեղ ջրատարի զանգվածեղ հիմքն է, այնտեղ կիկլոպյան պատի մնացորդներ կան, որոնք մեզ պատմում են բնության հանդեպ մարդու գերակայության մասին, և ակամայից վերակենդանացնում են մեր երևակայության մեջ մեծ ճանապարհներով խաչաձևված հարթավայրը, գետեր, որոնց վրայով անցնում են կամուրջները, ջրատարները, որոնք հեռուներից բերում են կենսաբեր ջուրը»[198]։

Անասնաբուծություն

Բնականաբար, Վանի թագավորությունում մեծ զարգացում է ապրել նաև անասնաբուծությունը։ Հայկական լեռնաշխարհի լանդշաֆտը շատ բարենպաստ է գյուղատնտեսության այդ ճյուղի բարգավաճման համար, քանզի արոտավայրեր կան թե՛ լեռնային և թե՛ դաշտավայրային շրջաններում։ Անասնաբուծությունը, բնականաբար, ենթադրում է նաև կաթնամթերքի, մսամթերքի և կաշվի արտադրությունների, զարգացում։ Դրանց գոյության մասին նորից իրենց համոզիչ փաստերն են բերել հնագիտական հետազոտությունները։

«Հայկական լեռնաշխարհում մարդիկ անասնապահությամբ զբաղվել են դեռևս նեոլիթի դարաշրջանում։ Երկրի բնական պայմաններն էական ազդեցություն են ունեցել տնտեսության այդ ոլորտի զարգացման ողջ ընթացքի վրա։ Ուրարտական պետության առաջացումից դեռ շատ առաջ անասնաբուծությունը հողագործության հետ մեկտեղ՝ դարձել է տնտեսության հիմնական տեսակը... Անասնապահությունը ձեռք է բերել կիսաքոչվորային բնույթ, որ միաժամանակ սահմանել է աշխատանքի բաժանում՝ Հայկական լեռնաշխարհի լեռնային և հարթավայրային շրջանների միջև»[199]։

---

198 Х. Ф. Б. Линч, Армения, II, Тифлис, 1910 г., ст. 68—69.

199 Б.Б. Пиотровский, Ванское царство (Урарту), Москва 1959 г., ст 148.

Ամփոփում

«Հիրավի, բացառիկ երևույթ, որն ստիպում է մտածել այն մասին, թե իրո՞ք ուրարտացիներն այլ ժողովուրդ են եղել, իսկ հայերն՝ այլ: Եթե այո՛, հապա ինչպե՞ս է ուրարտական և նախաուրարտական կոչված մշակույթը համարյա իր բոլոր ճյուղերով ազգային հարազատությամբ շարունակել իր զարգացումը հայ ժողովրդի կողմից, մի բան, որը հնարավոր չէր կարող լինել»[200]:

Տեսնում ենք, որ Հայկական լեռնաշխարհում դեռ Հայկ Նահապետի ժամանակներից ի հայտ եկած մշակույթը (քուռարաքսյան) նույնն է, ինչ Ն.Ք. 1700-ական թվերին՝ հիքսոսների ժամանակ, Հայկական լեռնաշխարհի մշակույթը. այդպես և Ուրարտուի շրջանի մշակույթը դրանց անխախտ շարունակությունն է: Այս միանման մշակույթները փաստում են, որ դրանք բոլորն էլ նույն լեռնաշխարհում, նույն երկրում և նույն ժողովրդի կողմից կերտվող մշակույթ են եղել, այլ ոչ թե միմյանցից օտար, տարբեր ցեղախմբերի կողմից է այն կերտվել և փոխանցվել միմյանց՝ ըստ շրջանառվող որոշ կարծիքների:

«Պատմաբան, հայ հին մշակույթի մասնագետ Ա. Մնացականյանը ցույց է տվել, որ Հայկական լեռնաշխարհի մշակույթը հնագույն ժամանակներից սկսած՝ մշակութային միևնույն տարրի անընդմեջ զարգացման ամբողջություն է, որ դա հենց հայկական մշակութային տարրի պատմական առանձին փուլերի արտահայտությունն է»[201]:

Հետևաբար, ակներև է, որ Ուրարտուի մշակույթը հիմնականում չի տարբերվում Վանի թագավորության առաջին արքա Արամեից առաջ Հայկական լեռնաշխարհի նախկին բնակիչների մշակույթից:

Այդ նույն մշակույթը հետագայում շարունակաբար տեղ գտնում Ն.Ք. VI դարից հետո՝ երվանդունիների ժամանակ, և նրանցից հետո էլ, որ ևս ապացույց է, որ հազարամյակներ շարունակ այդ մշակույթի կերտողը հենց նույն հայ ժողովուրդն է եղել:

Այսպիսով, ուրարտական շրջանի մշակույթը համառոտ ներկայացնելով՝ անցնենք առաջ:

---

200 Ա. Շ. Մնացականյան Հայ-ուրարտական առնչությունների հարցի շուրջը: Գարուն, հ. 9, 1969 թ., էջ 49:

201 Ռ.Ա. Իշխանյան, Հայ ժողովրդի ծագման ու հնագույն պատմության հարցեր, Երևան 1988 թ., էջ 34:

Ուրարտու պետությունը եղել է Հայկական լեռնաշխարհի տարածքում

«Անկասկած, Ուրարտուն հին անվանումն է այն երկրի, որը մենք այսօր անվանում ենք Արմենիա: 19-րդ դարում, երբ դեռ նոր էր սկսվել Ասորեստանի պատմության ուսումնասիրությունը զարգանալ՝ որպես գիտություն, սեպագրության առաջին վերծանողները եկան այն եզրակացության, որ Ուրարտուն նույն բիբլիական Արարատի անվանումն էր: Իհարկե, Արարատը հայտնի է դեռ շատ հնուց՝ Հին Կտակարանի ժամանակներից՝ որպես տեղանք, որտեղ, ըստ մեծ Ջրհեղեղյան լեգենդի, կանգ է առել Նոյան տապանը»[202]:

Բազմաթիվ են հիմնավորումները, ըստ որոնց՝ կարելի է համարել, որ հայերը և ուրարտացիները նույն ժողովուրդն են: Այս հարցում բացի մշակութային նույնությունից՝ առկա է նաև տարածքայինը. Ուրարտու պետության տարածքը գտնվել է բուն Հայկական լեռնաշխարհի սահմաններում.

«Ուրարտու պետությունն ընդգրկել է ամբողջ Հայկական լեռնաշխարհը, որ տեղակայված է Փոքր Ասիայի հյուսիսարևմտյան Իրանի և հյուսիսային Միջագետքի միջև»[203]:

«Վանա լճի շրջանում և ամբողջ Հայկական լեռնաշխարհով տարածվում էր Ուրարտու պետությունը... Ահեղ հակառակորդը և մշտական մրցակիցն Ասորեստանի»[204]:

«Վանի թագավորությունը զբաղեցնում էր բարձր լեռնային զանգվածն Առաջավոր Ասիայի հյուսիսային մասում՝ այսպես կոչված, Հայկական լեռնաշխարհում»[205]:

*Եթե ներկայիս ազգերից որևէ մեկը պետք է համարվի ուրարտացիների սերունդ, ժառանգ, բնական է, որ դրա հավակնորդը պետք է լինի հենց հայ ժողովուրդը, քանի որ բացի երկրի անվանումների նույնությունից՝ նաև տարածքային առումով էլ ունի առավելություն՝ մյուս հավակնորդ ժողովուրդների նկատմամբ (իհարկե, եթե այդպիսիններ ներկայում հայտնվեն). **«Ասորեստանի ամենավտանգավոր թշնամին, նրա հզորության աճը և արևմուտքում նրա ամրանալը զգալիորեն կասեցնողը եղել են նրա հյուսիսային հարևանները: Ասորեստանցիները նրանց անվանում էին ընդհանուր անվամբ «Նաիրի» (գետային շրջան), հետո՝ «Ուրարտու»***

---

202 Դոկտոր Իրվինգ Լ. Ֆինկել, Բրիտանական թանգարան (Լոնդոն):

203 Авдиев В. И. История Древнего Востока, Ленинград 1948 г., ст. 397.

204 Малая история искусств, Москва 1976 г., ст. 135.

205 В. В. Струве, История древнего Востока, Москва 1941 г., ст. 309.

(Աստվածաշնչյան Արարատ), դրանք այն երկրներ էին, որոնք ընկած էին վերին Տիգրիսից և Եփրատից դեպի հյուսիս, որ համապատասխանում է ներկայիս Հայաստանին»[206]:

Գիտնականներից ոմանք էլ ոչ միայն որևէ կասկած չունեն, որ Ուրարտուն գտնվել է Հայկական լեռնաշխարհում, այլև չեն կասկածում, որ հենց հայերն են եղել այդ երկրի տերերը՝ ինչպես դրանից առաջ և հետո եղող ժամանակաշրջաններում (այլ ո՛չ թե մինչ օրս դեռ չպարզաբանված մի ինչ-որ անհայտ ժողովուրդ՝ «ուրարտացիներ» անվամբ):

«Հայաստանի անկախությունն ապահովելու համար հայ ժողովրդի մղած մշտական պատերազմները, երկրի խիստ կլիմայի հետ մեկտեղ, հայերին դարձնում են ռազմիկ և կորովի ցեղ, դիմացկուն ու քաջ, նրանք ուժգնորեն կապված են իրենց հողին ու իրենց ազգային ազատությանը, ինչի համար շատ արյուն են թափել: Հայաստանի այս մասնավոր դիրքի մեջ պետք է փնտրել այս ջերմ հայրենասիրության ծագումը, որ ամեն հայի սիրտ բաբախել է տալիս: Այնտեղ պետք է փնտրել նաև Ուրարտուի թագավորության՝ դարերով գոյություն ունենալու պատճառները: Մինչդեռ՝ արևելքի մյուս բոլոր տերությունները հերթականությամբ ընկել են Ասորեստանի հարվածների տակ: Այդ պատմության ընթացքում տեսնում ենք, որ հայ ազգը շարունակ պայքարել է իր հողը, իր ազատությունը, իր ավանդությունները պահելու համար և միշտ հարձակումներ է կրել իր սահմանների չորս կողմերից այն պատճառով, որ ճակատագիրն իրեն դրել է ամբողջ Ասիայի ռազմագիտական ամենակարևոր դիրքում»[207]:

Հայաստանի նույնանիշ անվանումները

«Արարատը լեռնային երկիր է, որտեղ կանգ առավ
Նոյան տապանը, երբ հեղեղի ջրերը սկսեցին ցամաքել:
Ասորեստանյան արձանագրություններում այն կոչվում է
Ուրարտու, որն արդի Հայաստանն է»[208]:

Անվիճելի է, որ Արարատ և Ուրարտու անվանումները միևնույն անվանումներն են, և վերաբերում են միևնույն երկրին՝ Հայաստանին:

Բեհիսթունի արձանագրությունում Հայաստանի անվանումներից մեկը նշվում է՝ որպես Ուրարտու (Ուրաշտու): Պատմաբաններից շատերն են

---

206 Тураев Б.А., История древного востока, том II, Ленинград 1936 г., ст. 32.

207 Ժագ Դը Մորգան, Հայ ժողովուրդի պատմութիւնը, Պոսթըն 1947 թ., էջ 43:

208 Փեթ Ալեքսանդր, Աստվածաշնչի հանրագիտարան, Երևան 1999 թ., էջ 255:

*նշում, որ Ուրարտուն հենց նույն Արարատն է՝ ըստ միջագետքյան ժողովուրդների լեզվական առանձնահատկությունների: Իսկ ինչպես գիտենք, Ուրարտուի շրջանից դեռ շատ դարեր առաջ՝ Հայաստանն ունեցել է նաև Արարատ անվանումը: **«Իսկապես, Աստվածաշունչը գիտի Արարատյան ամբողջ երկրի մասին, որը նույնացնում է Հայաստանի հետ. դա ակնհայտ է դառնում Դ Թագավորաց 19:37 և Եսայի 37:38 համարները համադրելու ժամանակ»**[209]:*

*Քրիստոնեության մեծ վարդապետներն էլ համարում էին, որ Արարատ և Հայաստան անվանումները նույնանիշներ են, և Աստվածաշնչյան որոշ թարգմանություններում Արարատի փոխարեն գրել են Հայաստան: **«Եվսեբիոս Կեսարացին իր՝ Եսայու մեկնության 37-րդ գլխի 28-րդ համարում ասում է. «Իսկ նրանք փախան Հայաստան»... Հերոնիմոսը Ծննդոցի 8:4-ի Արարատը նույնպես թարգմանում է Հայաստան, իսկ Եր. 51:27-ում, ինչպես նաև Ես. 37:38-ում, թեև Արարատ անվանումը պահպանում է, սակայն վերջում ասում է. «Նրանք (այսինքն՝ Ադրամելեքը և Սարասարը), փախչում են դեպի Արարատի երկիր, որը ճանաչվում է՝ որպես Հայաստան»**[210]:*

Տեսնում ենք՝ գիտնականները ևս ընդունում են, որ Հայաստան և Արարատ անվանումները պատկանում են միևնույն երկրին: Նաև նկատում են, որ Արարատը և Ուրարտուն նույնպես միևնույն երկրի անվանումներն են՝ ասված տարբեր ազգերի կողմից: Եվ ուրեմն, եթե Արարատը Հայաստանի անվանումն է, իսկ Արարատը նույն Ուրարտուն է, ինքնըստինքյան պարզ է դառնում, որ Հայաստանն ու Ուրարտուն միևնույն երկրի անվանումներն են:

***««Ուրարտու» անվանումն «Ուրաշտու» ձևով հանդիպում է Դարեհի բաբելոնյան մ.թ.ա. 520 թ. գրառումներում, ընդ որում, Բեհիսթունի զուգահեռ պարսկերեն շարադրանքում արդեն օգտագործվում է «Արմինա» տերմինը: «Ուրաշտու» էթնիկական հասկացությունը հանդիպում է մ.թ.ա. 5-րդ դարի սկզբին Քսերքսեսի արձանագրություններում և նորից այն տարածքի վերաբերյալ, որը մեզ հայտնի է՝ որպես Հայաստան»**[211]:*

***«Հայաստանը նման անվամբ՝** Urarda **կամ** Urtu **է անվանվում Ասորեստանի թագավորների սեպագիր հուշարձաններում: Նոյը տապանը կանգնեցրեց այս Հայաստանի լեռներից մեկի վրա»**[212]:*

*Այլ ուսումնասիրողներ գրում են. **«...Ուրարտու, ինչպես հնում անվանվում էր Հայաստանը»**[213]:*

«Ուրարտու երկրի անվանումը, որ հանդիպում է ասուրական սեպագ-

---

209 А. П. Лопухина, Толкования Библия, том I, Петербургъ 1904 г., ст. 54:

210 Դկտ. Հ. Վահան Վ. Խզլիզեան, «Հայաստան Սուրբ Գրքի մէջ», Վիեննա, 1947 թ., էջ 11–12:

211 Дэвид Ленг, «Армяне, народ – созидатель», Москва 2004 г., ст. 127.

212 Лопухин А. П., Толковая Библия, Петербургъ 1904 г., ст. 54.

213 С. Бертман. Месопотамия, Москва 2007 г., ст. 242.

ըերում, համապատասխանում է եբրայական տերմինին՝ «երկիր Արարատ», որից իրենց անվանումն են ստացել Արարատ լեռը և Այրարատ նահանգը՝ Հայաստանում»[214]*:*

Իսկ ժամանակակից հնագետներից Դևիդ Ռոլն էլ իր հերթին՝ շումերական Արատտան է նույնացնում Ուրարտուի հետ: «Ուրարտու անվանումը վերաբերում է ոչ թե առանձին ցեղերի և ժողովրդի, այլ շատ ավելի հին երկրի, որ կրում էր Արատտա անվանումը»[215]*:*

Իր մի այլ աշխատությունում Ռոլն Արատտան և Արարատն է նույնացնում: «Նիմրոդի և Ուրուկի առաջին դինաստիայի ժամանակ Զագրոսի լեռներից այն կողմ գոյություն ուներ հեքիաթային մի երկիր: Շումերացիներն այն ճանաչում էին որպես Արատտայի թագավորություն. անուն, որ մեզ հասել է Աստվածաշնչից՝ «Արարատյան լեռներ» ձևով (Մն. 8: 4)»[216]*:*

Ուրեմն, Արատտա, Արարատ և Ուրարտու անունները միևնույն անվանումներն են՝ տարբեր լեզուներով, և վերաբերում են Հայաստանին: «Արատտա անունը հետագա դարերում և՛ Արարատ, և՛ Ուրարտու տարբերակներով շարունակվում է կիրառվել Հայաստանի նկատմամբ»[217]*:*

«Երբ ես առաջին անգամ սկսեցի ուսումնասիրել շումերական էպիկական ավանդությունն Էնմերկարի և Լուգալբանդայի մասին, ինձ տառացիորեն անմիջապես ապշեցրեց նմանությունն անունների այն տարածքի, որ հին շումերների մոտ հայտնի է եղել՝ որպես լեգենդար մոգական թագավորություն՝ ընկած մի ինչ-որ տեղ Զագրոսի լեռնաշղթայից այն կողմ, որի անվանումը ասորեստանցիները մ.թ.ա. I դարում տվել են Հայաստանին... այն կոչվել է Արատտա այն դեպքում, երբ ասուրական տարեգիրները մ.թ.ա. XIII-VII դդ. հիշատակում են «Ուրարտու» երկրի մասին, որը ինչպես ես արդեն ասացի, հնարավոր է՝ նույնացվել է Աստվածաշնչյան Արարատի հետ: Բացի դրանից՝ ինձ ապշեցրեց նաև այն փաստը, որ դեռևս ոչ ոք (որքանով որ ինձ է հայտնի) վարկած չի հայտնել, որ Արատտան և Արարատ-Ուրարտուն մեկ և միևնույն աշխարհագրական տարածքն են: Այնինչ, դա ինձ լիովին ակնհայտ էր թվում»[218]*:*

«Եզրահանգում. «Արատտա, Ուրարտու, Արարատ(դ) և Կարդու տեղանուններն իրենց տարբերակներով տրվել են միևնույն երկրամասին, այն է՝ Հայաստան լեռնաշխարհին: Այդ երկրանունները հիմքում ունեն հնդեվրոպական միևնույն արմատը, և նշանակել են «սուրբ օրենքների երկիր»»[219]*:*

---

214 В. В. Струве, История древнего Востока, Москва 1941 г., ст. 309.

215 Дэвид Рол, "Генезис цивилизации откуда мы произошли...", Москва 2005 г., ст. 91

216 Дэвид Рол, Утраченный завет, Москва 2005 г., ст. 69.

217 Արտակ Մովսիսյան, «Սրբազան Լեռնաշխարհ», Հայաստանը Առաջավոր Ասիայի հնագույն հոգևոր ընկալումներում, Երևան, 2000 թ. էջ 46:

218 Дэвид Рол, "Генезис цивилизации откуда мы произошли . . .", Москва 2005 г., ст. 89.

219 Արտակ Մովսիսյան «Հնագույն պետությունը Հայաստանում՝ Արատտա», Երևան 1992 թ., էջ 32:

Բեհիսթունի արձանագրություններում Դարեհ I-ի կողմից Հայաստանի մասին գրվել է երեք տարբեր լեզուներով. հին պարսկերենով՝ որպես Արմինա, էլամերենով՝ Հարմինուեա, և ասուրա-բաբելականով՝ Ուրարտու (Ուրաշտու), ինչն միանշանակ խոսում է այն մասին, որ այդ երեք անվանումներն էլ պատկանել են միևնույն երկրին և ժողովրդին:

«Մեզ են հասել պարսից Աքեմենյան թագավորների մի շարք եռալեզվյան արձանագրություններ՝ գրված մ.թ.ա. VI-IV դարերում: Այդ արձանագրություններում հիշատակվում են այն երկրները, որոնց դեմ պատերազմել են պարսից թագավորները կամ որոնք ինչ-որ ժամանակ գտնվել են Պարսկաստանի գերիշխանության տակ: Բոլոր արձանագրությունները սեպագիր են՝ ամեն մեկում նույն բանը գրված է երեք տարբեր լեզուներով՝ էլամերեն, աքքադերեն, հին պարսկերեն...

Աքեմենյան արձանագրություններից շատերում է հիշվում Հայաստանը. Հին պարսկերենով այն ամենուրեք կոչվում է Արմինա (կամ Արմինիա), էլամերեն՝ Հարմինուիա, աքքադերեն՝ Ուրաշտու (ասուրական Ուրարտու-ի բաբելական տարբերակը): Այդպես է աքեմենյան բոլոր մեզ ծանոթ այլ արձանագրություններում ևս՝ առանց բացառության. դրանք են Բեհիսթունի (Բիսիթունի), Նախշի Ռուստամի, Պերսեպոլիսի և մի քանի ուրիշ արձանագրություններ»[220]:

Հայաստանի Արմենիա անվանման կերպը հայտնի է եղել նաև Միջագետքում՝ դեռ ն.Ք. 2200 թ., աքքադացիների կողմից Նարամ-Սուենի ժամանակ, այն հնչել է՝ որպես Արմանում: ***«Եվ այսպես, հիմք կա ասելու, որ Նարամ-Սուենի արձանագրություններում՝ մ.թ.ա. III հազարամյակի II կեսում, մեզանից շուրջ 4200 տարի առաջ առաջին անգամ հիշատակվել է Հայաստանը՝ Արմանի անունով»[221]:***

Ուրեմն, Հայաստանը հին աքքադերենով, Նարամ-Սուենի ժամանակ, անվանվել է Արմանում, պարսկերեն Արմինա, էլամերեն Հարմինուեա, իսկ հունարեն՝ Արմենիա:

Իսկ Հայաստան, Հայք, հայեր անվանումների հետ կապված հիշատակում կա նաև հնագիտական աղբյուրներում՝ ն. Ք. 16-րդ դարից մինչ ն. Ք. 13-րդ դարի խեթական արձանագրություններում, որտեղ հիշատակվում է Հայասա երկիրը, որ գտնվել է խեթերից արևելք ընկած տարածքում, այսինքն՝ բուն Հայկական լեռնաշխարհում:

«Հայերի «հայ» էթնիկական տերմինն առկա է երկրի անվան մեջ՝ Հայք-Հայաստան: Այդ տերմինն առկա է նաև մեկ այլ՝ Հայասա անվանման մեջ, որով խեթերն անվանակոչել են հայերի երկիրը (խեթերենում՝ «ասա»

---

220 Ռ.Ա. Իշխանյան, Հայ ժողովրդի ծագման ու հնագույն պատմության հարցեր, Երևան 1988 թ., էջ 68-69:

221 Ռ.Ա. Իշխանյան, Հայ ժողովրդի ծագման ու հնագույն պատմության հարցեր, Երևան 1988 թ., էջ 47:

ածանցը նույնն է, ինչ հայերենում՝«ք» և «ստան» ածանցները)։ Հայասա անվանումը բավականաչափ մոտ է հայերենի Հայաստան անվանմանը, և եթե հաշվի առնենք, որ այն հիշվում է մ.թ.ա. II հազարամյակի առաջին կեսի խեթական արձանագրություններում, ապա պարզ կդառնա, որ ծայրահեղ դեպքում, այդ դարաշրջանից սկսած, կարելի է հաստատապես խոսել հայկական պետության՝ որպես առանձնահատուկ էթնիկ-մշակութային աշխարհի գոյության մասին»[222]։

Սրանից հետևություն, որ Արատտա – Արարատ – Ուրարտու, ապա և Արմանում - Արմենիա – Արմանի – Հարմիունեա, նաև Հայք – Հայասա – Հայաստան անվանումներն ընդամենը նույնանիշ անուններն են միևնույն՝ Հայաստան երկրի։



Իհարկե, Հայաստանը հազարամյակներ ձգվող իր պատմության մեջ ուրիշ անվանումներով է ճանաչվել աշխարհի տարբեր ազգերի կողմից, ինչպես որ Սուբուր, Սոմխեթի և այլն։

«Կատարված համառոտ քննությունը ցույց է տալիս, որ Արատտան, Սուբուր (Սուբարատուն) և Արման(ի\ում) ը նույն երկրի տարբեր անվանումներն են՝ Ք. ա. 3-րդ հազարամյակում»[223]։

Անկախ անունների տարբերությունից՝ Հայաստանի այդ բոլոր անվանումներն էլ եղել են երկնային, լուսավորը խորհրդանշող անվանումներ։

«Արատտա անունը խորհրդանշել է արդարություն, բարեպաշտություն, սուրբ կարգ ու օրենք, Սուբուրը՝ սրբություն և նվիրականություն, Արման(ի/ում)-ը՝ տոհմիկ ազնվազարմություն. մեծ խորհուրդներ, որոնք մեր նախնիները դրել են հայրենի երկրի անվանումներում»[224]։

---

222 Ս. Մ. Այվազյան, Հնագույն Հայաստանի Աշակույթի պատմությունից, Երևան 1986 թ., էջ 24–25:

223 Արտակ Մովսիսյան, «Սրբազան Լեռնաշխարհը», Հայաստանը Առաջավոր Ասիայի հնագույն հոգևոր ընկալումներում, Երևան, 2000 թ.. էջ 46:

224 Նույն տեղում:

Ծագումնաբանություն. Հայ՞ք, թե՝ ուրարտացիներ

«Ես ուզում եմ, որ գա ժամանակ, երբ հայ ժողովուրդը հավաքվի իր հողի վրա և աշխարհին հայտնի դարձնի իր գեղեցկությունն ու մեծությունը, ինչպիսին, որ եղել է Ուրարտուի ժամանակներից, իզուր չէ, որ Տապանը հանգրվանել է Արարատի վրա, դրանում եղել է Արարչի կամքը...այս հողից է, որ վերստին սկսվեց մարդկային ցեղը»[225]:

Այն ուրարտագետները, որ չեն ընդունում հայերի ծագումը Հայկ Նահապետից Ն.Ք. III հազարամյակում, այդ խնդրի պարզաբանման հարցում բաժանվել են տարբեր խմբերի: Մի մասը համարում է, որ հայերը բալկաններից են եկել Հայկական լեռնաշխարհի տարածք՝ Ն.Ք. VI-V դարերում և գրավել տկարացած Ուրարտու պետությունը: Մյուսները ենթադրում են, որ չնայած հայերը եղել են տեղաբնակներ, սակայն Ն.Ք. XII–X դարերում մի քանի այլ ցեղերի միավորմամբ նոր սկսել են ձևավորվել՝ որպես ազգ: Իսկ մեկ ուրիշ տարբերակով, բացի ուրարտացիներից՝ դեռ հնուց երկու այլ ցեղ ևս գոյություն է ունեցել Հայկական լեռնաշխարհում՝ արմեններն ու հայերը, և այդ երկու ցեղերի միավորման հետևանքով առաջացել է բուն հայ ժողովուրդը: Այս տարբեր մոտեցումները հանգեցրել են նրան, որ այդ պատմաբաններն այդպես էլ վերջնական կարծիք չեն կարողացել ձևավորել. ***«Ծագմամբ և ռասսայական առանձնահատկությամբ Հայաստանը մնում է հանելուկային»***[226]:

Այն, որ հայերը իբր Բալկաններից են եկել Հայկական լեռնաշխարհ, այդ կարծիքի ջատագովները հիմնականում արևմտյան այն պատմաբաններն են, որ համարում են, թե հնդեվրոպական լեզվի հայրենիքը եղել է կենտրոնական Եվրոպայում: Սակայն եկվորության մասին այդ կարծիքները երկար կյանք չունեցան. ***«Սովետական գիտնականներն իրենց հետազոտություններով համոզիչ ապացուցեցին, որ հայերը ուրարտական ցեղերի ժառանգորդներն են՝ վճռականորեն մերժելով հնդեվրոպական դպրոցի գիտնականների պնդումները, որ անհիմն փորձում էին ապացուցել հայերի գալուստը Անդրկովկաս՝ Արևմտյան Եվրոպայից»***[227]:

Ժամանակի ընթացքում եվրոպական գիտնականներից շատերն, ընդունելով Խորհրդային շրջանի պատմաբանների ուսումնասիրության

[225] Վալերի Զելենոգորսկի, գրող, Ռուսաստան:

[226] Дэвид Ленг, Армяне народ-созидатель, Москва 2004 г., ст. 23:

[227] В. И. Авдиев, История Древнего Востока, Ленинград 1948 г., ст. 398.

արդյունքները, հրաժարվեցին հայերի եկվորության մասին պնդումից։ ***«Մի ժամանակ համարվում էր, որ նրանք ամբողջ ցեղով եկել էին էգեյան տարածաշրջանից և Բալկաններից՝ մ.թ.ա. մոտ հազար տարի առաջ։ Սակայն վերջին հետազոտությունները ցույց են տալիս, որ ժամանակակից հայ ազգը էթնիկական խառնուրդի գործընթացի արդյունք է, որը շարունակվել է մի քանի հազար տարի Անդրկովկասում, ինչպես նաև Արարատ-Վանի տարածաշրջանի լեռներում և հովիտներում»***[228]։

Տեսնում ենք, որ պատմաբանները հիմնականում մերժել են հայերի եկվորության մասին կարծիքները, սակայն դրա փոխարեն ընդունել են մի այլ սխալ վարկած, ըստ որի՝ հայերը, որպես ազգ, ձևավորվել են հենց Հայկական լեռնաշխարհում՝ որպես արդյունք հնագույն ժամանակներից այդտեղ ապրող այլ ազգերի միաձուլման։ Նման կարծիքի ջատագովներից է նաև ռուս պատմաբան Դյակոնովը. ***«Ես միանգամայն և կտրականապես պետք է հայտարարեմ, որ հայերին չեմ համարում՝ որպես Հայկական լեռնաշխարհում եկվոր ժողովուրդ, այլ ընդհակառակը՝ նրանց համարում եմ որպես այդ տարածաշրջանի հնագույն մեծ մշակույթ կերտողների անմիջական շարունակողներ, կենսաբանական ուղիղ հետևորդներ և լեռնաշխարհի բնիկներ»***[229]։

Դյակոնովը՝ որպես տարածաշրջանի մեծ մշակույթ կերտողներ, դիտարկում է խուռիերին, ուրարտացիներին, լուվիացիներին։ Իբրև թե, այս ժողովուրդների միավորմամբ ինչ-որ առեղծվածային կերպով առաջացան հայերը։ ***«Ես պնդում էի, որ հայերի կենսաբանական և մշակութային նախնիները, որ ստեղծել են հնագույն խուռիական և ուրարտական մեծ քաղաքակրթությունները, դեռ հայերեն չէին խոսում, և որ խուրիական, ուրարտական, արևելալուվիական և նախահայկական ժողովուրդների միությունից ձևավորվեց միասնական հայ ժողովուրդ, որն ընդունեց ընդհանուր հայկական, անխառը հնդեվրոպական լեզու և ժառանգված մշակույթ»***[230]։

Սակայն հայազգի գիտնականներից շատերն ընդվզեցին ոչ միայն եկվորության դեմ, այլև այն կարծիքի, թե իբր հայերեն լեզուն տարբեր ազգերի լեզուների միությունից առաջացած լեզու է։ Մերժելով տարբեր լեզուների խառնակումից հայերենի ծագումը՝ մերժեցին նաև հավանականությունը, թե, ենթադրաբար, տարբեր ազգերի խառնակումից մի նոր՝ հայ ազգ կարող էր ծագել։

Անընդունելի էր նաև Պիոտրովսկու այն տեսությունը, թե ուրարտացիների հետ նույն տարածքում զուգահեռաբար ապրել է ևս երկու ժողովուրդ՝ «արմեննները» և «հայեր», և այդ երկու իբր տարբեր ժողովուրդնե-

---

228 Девид Ленг, Армяне, народ – созидатель, Москва 2004 г., ст. 23.

229 И. М. Дьяконов, «К праистории армянского языка», ИФЖ, 4, Ленинград 1985 г., ст. 167.

230 И. М. Дьяконов, «К праистории армянского языка», ИФЖ, 4, Ленинград 1985 г., ст. 177.

րից ձևավորվել է ներկայիս հայ ազգը։

«VI դ. սկզբին Ուրարտական պետությունը դադարեց գոյություն ունենալուց, և սկսվեց նոր միության կազմավորման գործընթացն այն ցեղերի, որոնք ավելի վաղ գտնվում էին Վանի թագավորության կազմում, և այդ նոր գոյացության հիմքի վրա ստեղծվեց նոր պետություն։

Սկզբից այդ միությունը գլխավորում էր արմենների ցեղը, որ ապրում էր Վանի թագավորության հարավարևմտյան մասում, իսկ հետո իրադրության գլուխն անցավ հայերի ցեղը, ինչը հիշատակվում է անտիկ աղբյուրներում, սակայն հարևան ազգերը դեռ շարունակում էին նրանց կոչել նախկին անվամբ՝ Արմինա (Արմենիա), այլ ոչ՝ Հայք կամ Հայաստան, ինչպես որ իրենց երկիրն անվանում են հայերը։

Հայկական պետությունն աճեց Ուրարտուի կազմի մեջ մտնող ցեղերի միության հիման վրա։ Այդ առանձին ցեղերի պատմությունը գնում է դեպի հին դարերի խորքերը»[231]։

Այս տեսակետը, չնայած նույնպես դեմ է եկվորության մերժելի տարբերակին և ընդունում է, որ հայերն այս տարածքների հինավուրց բնակիչներից են, սակայն լիարժեք մոտեցում չունի այս հարցին։ Քանզի ըստ Պիոտրովսկու՝ իբր այդ երկու առանձին ժողովուրդների՝ «արմենների» և «հայերի» միության արդյունքում ձևավորվեց հայ ժողովուրդը և դուրս մղեց ուրարտացիներին իրենց տարածքներից։ Բայց հարց է առաջանում՝ մինչ այդ միությունը՝ հայերն ովքե՞ր էին, միգուցե ինչ-որ ոչ-լիարժեք հայե՞ր, որ արմենների հետ միանալով՝ ստեղծեցին լիարժեք հայությունն։

«Ըստ Պիոտրովսկու՝ ստացվում է, որ «հայ» անվանումն արմենների նկատմամբ հայերի տարած հաղթանակի արդյունքն է։ Հայերը տարածել են իրենց ցեղանունն այլ ցեղերի վրա, «մինչդեռ, հարևան ժողովուրդները, - ասում է Պիոտրովսկին,- շարունակում էին անվանել արմեններին իրենց հին ցեղային միավորման անունով»։

Ստացվում է, որ այդ պատճառով են հայերն իրենց երկիրն անվանում Հայաստան, իսկ հարևան ժողովուրդները՝ Արմենիա...

Բայց հետո,- շարունակում է Պիոտրովսկին,- հայերի և արմենների միջև ընթանում է վերոհիշյալ պայքարը։ Հայերի հաղթանակն այդ պայքարում փոփոխություն է մտցնում երկրի անվան մեջ. այն կոչվում է Հայք կամ Հայաստան։

Պարզվում է, որ սկզբում երկիրն անվանվել է «Արմենիա» (արմենների հաղթանակից հետո), իսկ հետագայում՝ Հայաստան (հայերի հաղթանակից հետո)։ Նա անտեսում է, որ հեթիթները դրանից ավելի քան հազար տարի առաջ արդեն կոչել են այդ երկիրը «Հայասա», բայց ոչ երբեք՝ «Արմենիա»։

Ըստ Պիոտրովսկու՝ հայերի հաղթանակից հետո մեր երկիրն սկսեց

[231] Б.Б. Пиотровский, Ванское царство (Урарту), Москва 1959 г., ст. 257.

կոչվել Հայաստան, բայց այս անգամ արդեն, ինչպես պարզվում է, այդ փոփոխությունը «չնկատեց» ոչ ոք, այդ թվում և՝ պարսիկները, որ շարունակում էին կոչել երկիրը հին ձևով՝ Արմինա (Արմենիա)»[232]*:*

Այսպիսով՝ Պիոտրովսկու սխալն այն էր, որ նրա պատկերացմամբ՝ Հայկական լեռնաշխարհի տարածքում տվյալ ժամանակաշրջանում գոյություն է ունեցել երեք տարբեր հնագույն ազգ՝ ուրարտներ, արմեններ և հայեր, իհարկե, եթե հաշվի չառնենք խուրիներին և լուվիացիներին: Ի դեպ, հայ ազգի գիտնականներից ոմանք ևս նման կարծիք են արտահայտել. ***«Բուն Հայկական լեռնաշխարհում Ուրարտուից անջատվեցին հայասներն ու արմենները»***[233]*:*

Տվյալ հարցին նման մոտեցումները կարելի է դիտարկել՝ որպես գիտնականների վրա քաղաքական ճնշման հետևանք. նրանք արտահայտել են այնպիսի կարծիքներ, որ հաճո լինեն քաղաքական լիդերներին, սակայն իրենք, հավանաբար, ուրիշ կարծիք են ունեցել:

Եթե դա իսկապես այդպես է, ուրեմն Պիոտրովսկին և ուրիշներ այս կերպ ցանկացել են ապագա ուսումնասիրողներին ակնարկել, որ իրենք էլ ընդունում են, որ իրականում խոսքը միևնույն ժողովրդի մասին է, որ սերվել է Հայկ Նահապետից, սակայն իրավիճակներից ելնելով՝ ստիպված այլ մոտեցում են ցուցադրում: ***«Ուշադրության է արժանի Մովսես Խորենացու պատմությունը հայ ժողովրդի նահապետների՝ Հայկի, Արմենակի և Արամի մասին, ի դեպ, նրանց ազգաբանության մեջ մենք հանդիպում ենք Գոմերի և Թորգոմի անվանումներին, որ կապված են Աստվածաշնչում հիշատակված ժողովուրդների անվանումների հետ: Պետք է հաշվի առնել, որ Մովսես Խորենացին Հայկի մասին պատմությունը տեղադրել է պատմության սկզբում, Արմենակի և Արամի մասին պատմություններից առաջ, քանի որ նրա ժամանակ առաջնությունը պատկանում էր հայերին»***[234]*:*

Չնայած Պիոտրովսկին այստեղ էլ տարբերություն է դնում հայ նահապետների միջև՝ համարելով, որ Հայկից սերվել են հայերը, իսկ Արմենակից ու Արամից՝ արմենները, սակայն կարևորն այս պարագայում այն է, որ Պիոտրովսկին, կարծես, ընդունում է, որ հայերը սկիզբ են առել Հայկ նահապետից, իսկ դա իրականում եղել է Ուրարտուի շրջանից 1500 տարի առաջ: Նման մոտեցմամբ այնպես է ստացվում, որ այս պատմաբանը կամա-ակամա ընդունում է, որ հայերը շուրջ 4500 տարի է, որ անընդմեջ բնակվում են Հայկական լեռնաշխարհում՝ որպես այս լեռնաշխարհի բնիկներ:

«Դեռևս 1945 թվականին Բ. Պիոտրովսկին գրում էր. «Չպետք է

---

232 Ս. Մ. Այվազյան, Հնագույն Հայաստանի Աշակույթի պատմությունից, Երևան 1986 թ., էջ 39–40:

233 Հարություն Մարտիրոսյան, Քարի դարից Ուրարտու, Երևան 1971 թ., էջ 127:

234 Б.Б. Пиотровский, Ванское царство (Урарту), Москва 1959 г., ст. 257–258.

հետևել հնդեվրոպական տեսության վրա խրախուսված անտիկ տրադիցիայի վրա, երբեք չպետք է անտեսել տեղական տրադիցիան, որի համաձայն հայերը տեղաբնիկ են»[235]:

Եթե այս պատմաբաններն ուղղակիորեն ասեին, որ հայերը իսկապե՛ս սերվել են Հայկ Նահապետից և որպես ազգ՝ ձևավորվել են մոտ 4500 տարի առաջ, դա կխոսեր այն մասին, որ նրանք ընդունում են Աստվածաշնչյան ճշմարտությունները և Սուրբ Գրքի վրա հիմնված պատմական տեղեկությունները: Բայց մարտնչող աթեիզմի շրջանում նման կարծիքներ հայտնելը կհամարվեր հակագիտական և հակառակ՝ խորհրդային աթեիստական գաղափարախոսությանը: Դրա համար էլ տպավորություն է ստեղծվում, թե նման թեմաներին հարող աշխատությունները կարծես գրվել և շարադրվել են ծածկագրի եղանակով:

«Եթե խոսվում է նրա մասին, թե արդյո՞ք հայերը ուշ նեոլիթից՝ վաղ բրոնզեդարյան ժամանակներից Հայկական լեռնաշխարհում բնակված բնակչության անմիջական կենսաբանական հետնորդներն են, ապա դրան կարելի է պատասխանել միանշանակ միայն՝ այո, իհարկե, ե՛ն: Եթե քննարկման առարկան այն է, թե արդյո՞ք հայերը կրողներն ու շարունակողներն են այն մեծ քաղաքակրթությունների մշակութային ավանդույթների, որոնք ստեղծվել են այստեղ՝ միջին և ուշ բրոնզից մինչև հնագույն դարաշրջանի ավարտը, այստեղ էլ բանավիճելու հարկ չկա. այս հարցն, անշուշտ, դրական լուծում է ստանում»[236]:

Եվ ուրեմն, ըստ այս պատմաբանների, կարելի է նաև գալ այն եզրակացության, որ հայերը ուրարտացիներից ժառանգել են ոչ միայն տարածքները և մշակույթը, այլև՝ գենետիկ առանձնահատկությունները: ***«Հայերը թե՛ քաղաքականորեն (տերիտորիալ-վարչական), թե՛ էթնիկապես (արյան գծով) և թե՛ մշակույթով եղան... ուրարտացիների ուղղակի ժառանգորդները»***[237]:

Խորհրդային Միության շրջանի պատմաբաններից Բ. Տուրաևը ուրարտացիներին անվանում է նաև խալդեր՝ նկատի ունենալով, որ նրանց դիցարանի գերագույն աստվածը Խալդն էր. և նա հայերին էլ է համարում այդ արյունը կրող ժողովուրդ: ***«Անկասկած, արիական լեզվով ժամանակակից հայերի երակներում քիչ չէ հին խալդյան արյունը»***[238]:

Եթե ուրարտացիները և հայերը կրում են նույն արյունը և գենը, ուրեմն նրանք արտաքնապես էլ պետք է որ նմանություններ ունենան:

---

235 Գաբրիելյան Հ. Կ., «Հայերի բնօրրանը՝ Հայկական լեռնաշխարհը», Հանդես ամսօրյա, Երևան 1998 թ., էջ 420:

236 И. М. Дьяконов, «К праистории армянского языка», ИФЖ, 4, Ленинград 1985 г., ст. 149.

237 Ս. Ա. Սարդարյան, Հայաստանի նախնադարյան հասարակությունը, Երևան 1967 թ., էջ 260:

238 Тураев Б.А., История древного востока, том II, Ленинград 1936 г., ст. 37.

*եվ իսկապես. հետազոտությունները ցույց են տվել, որ այդ երկու ժողովուրդները բացարձակապես ոչնչով չեն տարբերվել իրարից։ «**Ներկայիս հայերը սովորաբար ունեն ամուր և պնդակազմ մարմին, հասակը միջինից բարձր չէ, հաճախ տարբերվում են գլխի անսովոր կառուցվածքով՝ ուղիղ ծոծրակով և տափակ գագաթով։ Հարթ ծոծրակը հաճախ համակցված է նշանավոր կեռ կամ սապատավոր, երբեմն էլ՝ կախված քթով։***

***Անկասկած, հայերն արտաքնապես ավելի նման են Փոքր Ասիայի հնագույն բնակիչներին, որ պատկերված են հին խեթական և ուրարտական բարելիեֆային որմնանկարներում, քան Հարավային Ռուսաստանի սկյութներին կամ այլ հնդեվրոպական տափաստանային քոչվոր ցեղերի»*[239]։

Ասորեստանի, Բաբելոնի, Պարսկաստանի և Ուրարտուի տաճարների և պալատների պատերին պահպանվել և մինչ մեր օրերն են հասել 3000-ից մինչև 2500 տարիներ առաջ պատկերված հարթաքանդակներ։ Այդ հարթաքանդակներից մի մասի վրա պատկերված են ուրարտացիներ, իսկ մյուսի վրա՝ հայեր, ինչն ի ցույց է դնում այն, որ ուրարտացիները և հայերը իսկապես արտաքնապես էլ իրարից ոչնչով չեն տարբերվել։

***«Ուրարտուի արվեստի մասին իր ուսումնասիրության մեջ Բ. Պիոտրովսկին համեմատում է ասորեստանյան արքա Աշուրբանիպալի պալատեկած ուրարտական դեսպանների արտաքինը և ոճը՝ Քսերքսեսի հարթաքանդակներում՝ նրանից երկու դարով ավելի ուշ Պերսեպոլիսում ապրող հայերի պատկերների հետ։ Մ.թ.ա. 654 թ.-ին, էլամացիների դեմ Աշուրբանիպալի տարած հաղթանակից հետո, Ուրարտուի թագավոր Ռուսա II-ը դիվանագետներին ուղարկում է Արբել՝ շնորհավորելու Ասորեստանի տիրակալին։ Ուրարտուի դեսպանների ընդունելությունը պատկերված է Նինվեի թագավորական պալատի հարթաքանդակում։ Ուրարտացիները պատկերված են այնտեղ ցածրահասակ, երկար ժապավեններով երիզված հագուստներով, վրայից կրում են թիկնոցներ։ Իրենց ոտքերին ունեն կապիչներով երկարաճիտ կոշիկներ։ (Նման կոշիկների դետալներ տեսանելի են 1959 թ. Կարմիր բլուրում հայտնաբերված կավե սափորների վրա)։ Ուրարտուի դեսպանների գլխին կան փափուկ թաղիքից գլխարկներ, որոնք հիշեցնում են Պերսեպոլիսում եղող Քսերքսեսի հարթաքանդակում պատկերված հայերի գլխարկները։ Ուշագրավ է նշել, որ ուրարտացիները ցուցադրված են որպես ամրակազմ և ցածրահասակ՝ այնտեղ ներկայացված այլ ժողովուրդների համեմատ։ Այսօրվա հայերից շատերն էլ ունեն այդ նույն ֆիզիկական հատկանիշները»*[240]։

Մինչ գենետիկական ուսումնասիրությունների առաջ գալը ներկայիս հայերի նույնությունը այս տարածքում հազարամյակներ առաջ ապրած

---

239 Дэвид Ленг, Армяне народ-созидатель, Москва, 2004 г., ст. 23.

240 Дэвид Ленг, Армяне народ-созидатель, Москва, 2004 г., ст. 128.

մարդկանց հետ կարելի էր ապացուցել մարդաբանական տվյալներով՝ նրանց գանգերի նմանությամբ։

«Որոշ պատմաբաններ մարդաբանական նյութերի (գլխավորապես՝ գանգերի) ուսումնասիրությամբ հանգել են այն եզրակացության, որ հայկական մարդաբանական տեսակը Հայոց լեռնաշխարհում բնակվել է առնվազն մ.թ.ա. IV հազարամյակից»[241]*։*

Իսկ այժմ ժամանակակից գենետիկական հետազոտություններն էլ արդեն սկսել են վկայել, այդ մասին։ Դանիայի, Ռուսաստանի և Հայաստանի գիտնականների միջազգային խումբը, ուսումնասիրելով Հարավային Կովկասում հազարավոր տարիներ առաջ ապրած մարդկանց միտոքոնդրիալ ԴՆԹ-ն, եկավ այն եզրակացության, որ վերջին ութ հազարամյակի ընթացքում հայերի, առավելապես՝ կանանց ԴՆԹ-ն համարյա թե փոփոխություն չի կրել։

*Այն փաստը, որ ութ հազար տարի փոփոխություն չի կրել հայկական գենը, խոսում է այն մասին, որ այսպես կոչված, ուրարտական շրջանից դեռ շատ առաջ էլ հայերը բնակվել են իրենց անունը կրող լեռնաշխարհում և չէին կարող մի ինչ-որ 300 տարի ընդհատել իրենց բնակությունը՝ այդ տարածքները զիջելով ինչ-որ առեղծվածային ուրարտացիների, ապա նորից վերադառնալով՝ շարունակելու այդտեղ ապրել։ Ըստ ՀՀ ԳԱԱ Մոլեկուլային կենսաբանության ինստիտուտի էթնոգենոմիկայի լաբորատորիայի վարիչ Լևոն Եպիսկոպոսյանի՝ **«Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվող բրոնզե դարի նյութերն ունեն այնպիսի գենետիկական պատկեր, որը համարյա թե ոչնչով չի տարբերվում այսօրվա ժամանակակից պատկերից, դա առաջին հերթին խոսում է այն մասին, որ մենք ունենք շարունակականություն, այսինքն՝ անընդհատ այստեղ բնակվել է ժողովուրդ, որն ունի բավականին խորն արմատներ և այսօր մենք՝ այսինքն այդ ժողովուրդը, ներկա ենք այստեղ՝ մեր հողի վրա»**[242]։*

Այսպիսով, մենք կարող ենք գալ եզրակացության որ ոչ մի ուրարտացի անունով առանձին ժողովուրդ երբեք գոյություն չի ունեցել, այլ՝ Հայկական լեռնաշխարհում մշտապես ապրել են հայեր։

Հայկ Նահապետի ժամանակներից սկսած՝ մինչ Քրիստոսի երկրավոր ծնունդն ընկած ժամանակաշրջանում հայերին հազարավոր տարիներ ցանկացել են ոչնչացնել և վերացնել Հայկական լեռնաշխարհից՝ թե՛ բաբելացիները՝ Բելի գլխավորությամբ, թե՛ աքադացիները՝ Նարամ-Սուենի, թե՛ ասորիները՝ Նինոսի, իսկ ավելի ուշ՝ Սարգոն II–ի և մյուս ասուրական արքաների գլխավորությամբ։ Հետ չեն մնացել նրանցից նաև մարերն ու պարսիկները, հյուսիսային քոչվոր ցեղերը՝ սկյութացիներն ու կիմերացի-

---

241 Ռ.Ա. Իշխանյան, Հայ ժողովրդի ծագման ու հնագույն պատմության հարցեր, Երևան 1988 թ., էջ 34:

242 Համացանց, http://times.am/?p=129173&l=am

ները և այլն: Իհարկե, Քրիստոսից հետո էլ արդեն բազմաթիվ այլ ազգեր մինչ օրս չեն թողնում՝ հայերին իրենց բնօրրանից վերացնելու բաղձանքը: Սակայն ինչպես դա չիրականացավ հազարավոր տարիներ շարունակ, այդպես էլ կմնա ոչ միայն չիրականացած երազանք, այլև՝ ընդհակառակը, շատ շուտով Հայաստանը, կամոքն Աստծո, կապրի մեծ զարթոնքի ժամանակաշրջան: Սակայն, ոչ միայն այդ ռազմատենչ, ունայնամիտ ազգերն են այդ սին ջանքերի մեջ եռանդուն, այլև՝ որոշ գիտնականներ, որոնք ոչ թե՝ զենքի, այլ գրչի միջոցով են ցանկացել և ցանկանում պայքարել Հայոց՝ հազարամյակներ ձգվող պատմության դեմ: Սրանք, Ուրարտական պետությունը համարելով ոչ հայկական, երվանդունիներից առաջ եղած մոտ 2000 տարվա հայոց պատմությունը ցանկանում են ի չիք դարձնել, բայց ինչ չի հաջողվել զենքի և քաղաքական խարդավանքների միջոցով, չի հաջողվի նաև այդ պատմաբանների գրչի միջոցով:

«Հայկական լեռնաշխարհը հայրենիքն է մի յուրօրինակ մշակույթի: Հազարամյակների ընթացքում այստեղ կայուն է մնացել հնդեվրոպական արմենոիդ առաջավորասիական ցեղը: Հնդեվրոպացի արմենոիդների վերջին մնացորդները երկրի անմատչելի հատվածներում դարեր ի վեր կենաց ու մահու պայքար են մղել սեմական (բաբելական, արաբական), սելջուկ-թուրքական ու մոնղոլ-թաթարական ժողովուրդների ներխուժումների դեմ, ժողովուրդներ, որոնք կասեցրին երկրի առաջընթացը, խանգարեցին Առաջավոր Ասիայի հնդեվրոպացի նախաբնիկ ժողովուրդներին՝ զարգացնելու և կատարելության հասցնելու իրենց տեղական բարձր քաղաքակրթությունը: Այդ իմաստով Հայկական լեռնաշխարհը Հին և Նոր աշխարհի ճակատագրական անկյունն է: Արմենոիդ մարդաբանական տիպին և հնդեվրոպական բնիկ ժողովրդին իր մարդաբանական տիպով, քաղաքակրթությամբ և լեզվական մնացորդներով կարող ենք հետևել անընդմեջ բոլոր դարերում, հասնելով մինչև մեր օրերը»[243]*:*

Տեսնում ենք, որ մի քանի հիմնական կարծիքներ են շրջանառվել հայ -ուրարտական խնդրի շուրջ:

Առաջինը հայերի եկվորության մասին անընդունելի տեսությունն է, երկրորդն ինչ-որ չափով ավելի մոտ է ճշմարտությանը. այն, որ հայերը ոչ թե եկվոր են, այլ՝ բնիկներ, սակայն, իբր թե որպես ազգ ձևավորվել են այստեղ ավելի վաղ շրջանից ապրող ազգերի՝ խուրիների, լուվիացիների և ուրարտացիների միավորման արդյունքում:

Երրորդ կարծիքը մի քայլ ավելի առաջ է երկրորդից. ընդունում է, որ Հայկական լեռնաշխարհում դեռ հնագույն ժամանակներից ապրել են հայերը և արմենները և նրանց միավորմամբ է ձևավորվել հայ ազգը:

Նկատում ենք, որ այս կարծիքներն առաջ գնալով՝ աստիճանաբար

---

[243] Սանդրո Սարդարյան, Հայաստանը քաղաքակրթության բնօրրան, Երևան 2004 թ., 433 էջ:

ավելի են մոտենում իրականությանը, սակայն չեն հասնում բուն ճշմարտությանը. որ հայերը՝ որպես առանձին ազգ, ձևավորվել են 4500 տարի առաջ՝ սերելով Հայկ Նահապետից: Եվ եթե ներկա օրերի՝ 21-րդ դարի հետազոտողները լրջորեն հետ նայեն, կտեսնեն, որ հայերն այն եզակի ազգն են մարդկության պատմության մեջ, որ ապրելով Արարատյան սուրբ երկրում՝ ուղիղ գծով հասնում են մինչև նախաստեղծներին՝ Ադամին ու Եվային՝ մարդկության նախածնողներին: Այդ մոտեցմամբ, կարելի է ասել, որ հայերը Հայկական լեռնաշխարհում ապրել և ապրում են ի սկզբանե՝ մարդկության ստեղծման բուն ակունքից:

***«Ժամանակի ընթացքում Աստվածաշնչի հաղորդածների կապակցությամբ՝ սկզբնաղբյուրային տարբեր մոտեցումներով հայտնվել են կարծիքներ, որոնք, իրենց հերթին, երբեմն գիտության մեջ ծագած խնդրահարույց մեկնաբանությունների հետևանքով, ավելի են խճճել խնդրի լուծումը: Որոշ հետազոտողներ, չնայած խոսել են Արարատի (որպես տապանակիր լեռան) տեղադրության մասին, սակայն այդ անվանումը բխեցրել են դրա «ուրարտու»՝ ասորական անվանաձևից, այլ ոչ թե հակառակը, ինչի հետևանքով բնիկ հայկական Արարատ անվան ծագումը արհեստականորեն կտրվել է առնվազն Ն.Ք. 3-րդ հազարամյակից եկող իր արմատներից, իսկ հայերը համարվել են եկվոր ցեղեր: Այսպիսի մոտեցմամբ, որը հատկապես վերջին հարյուրամյակի ընթացքում պատվաստվում էր պատմագիտության մեջ, հոգեզրկվում էին հայոց պատմության ընկալման ակունքները: Հայոց էթնո-հոգևոր պատմությունը կտրվում էր Ն.Ք. 3-2-րդ հազարամյակներից և ավելի վաղ ժամանակներից եկող իր արմատներից: Հայ ազգի հոգևոր ակունքները, որոնք խորհրդապաշտված էին որպես դրախտ, տապանակիր լեռ, Հավիտենական Ուխտ և սեղան Աստծո, այսինքն՝ լույսի պաշտամունքի վկայություններ, արհեստականորեն ցամաքեցվում էին: Հայկազունիների ճշմարիտ աստվածապաշտությունը ժխտվում էր, վերաձևվում էր հայոց հնագույն պատմությունը՝ այլափոխելով հայի տոհմիկ կերպարը, ոգին, աշխարհընկալումը»*[244]:

[244] Էդուարդ Դանիելյան, Հայաստանն Աստվածաշնչում և Եղիշեի «Արարածոց մեկնութիւն» երկը, նայիր՝ Աստվածաշնչյան Հայաստան, Երևան 2005 թ., էջ 156:

Հայերէն, թէ ուրարտերէն

«Ուրարտու կոչված պետության պատմությունը ոչ մի ժողովրդի պատմության հետ այնքան սերտ, նույնիսկ առեղծվածային առնչություններ չունի, որքան՝ հայ ժողովրդի պատմության: Այդ պարագան մեզ պարտավորեցնում է հատուկ քննության առարկա դարձնել նրանց առնչություններն իրենց ամբողջությամբ»[245]:

Տեսանք, որ Հայկական լեռնաշխարհի տարածքում իրականում ո՛չ Ուրարտու անվամբ երկիր է գոյություն ունեցել, և ոչ է՛լ ուրարտացիներ՝ որպես առանձին երկիր ու ժողովուրդ, այլ մշտապես եղել է Հայաստան (Արարատ, Արմենիա) և հայ ազգ: Բնական է, որ հայերն իրենց բնօրրանում խոսել են իրենց մայրենիով՝ հայերեն լեզվով:

Շատերն են համակարծիք, որ հայերեն լեզվով Հայկական լեռնաշխարհում խոսել են ի սկզբանե, և որ հայերենն այն նույն լեզուն է, որով խոսում էին դեռ Ադամը և Եվան՝ Դրախտում, նաև Ջրհեղեղից հետո էլ համայն մարդկությունը՝ մինչ լեզուների խառնակումը: Դրանից հետո Հայաստանի տարածքո՛ւմ միայն պահպանվեց այդ ադամական լեզուն և մնաց մինչև օրս. ***«Հայերենը եղել է Նոյի և Ադամի լեզուն, այն ոչ մի հանկարծակի բռնի փոփոխության չի ենթարկվել, ինչպիսին որ կրեցին մնացած լեզուները՝ Բաբելոնյան աշտարակաշինության ժամանակ»***[246]:

Հիշենք, թե ինչպես Ն.Ք. դեռ 19-18 դարերում հայոց թագավոր Արամ I-ը հրամայեց, որ երկրի արևմտյան կողմում գտնվող օտար ժողովուրդներին սովորեցնեն խոսել հայերեն լեզվով:

Ուրեմն, եթե այդ ժամանակներից գործածության մեջ է եղել հայերենը, բնականաբար, այն պետք է գործածության մեջ լիներ նաև ուրարտական շրջանում: Սակայն ԽՍՀՄ-ի աթեիստական բռնատիրության ժամանակաշրջանի պատմաբանի համար որևէ արժեք և հիմք չէին կարող ծառայել ո՛չ սուրբգրային տեղեկությունները, ո՛չ էլ Աստվածաշունչ մատյանի ճշմարտացիությունն ընդունող վաղ շրջանի պատմաբանների աշխատությունները: Դրա համար էլ խիստ թերի են նման գիտնականների կարծիքները՝ նմանատիպ պարագաների պարզաբանման հարցերում: Նրանցից է և ռուս պատմաբան Դյակոնովը. ***«Արդեն մի քանի տարի է, ինչ Հայաստանի գիտահանրամատչելի և մասամբ գիտական մամուլում շա-***

[245] Ա. Շ. Մնացականյան Հայ-ուրարտական առնչությունների հարցի շուրջը: Գարուն, h. 9, 1969 թ., էջ 48:

[246] Soulevement national de l Armenie Chretienne... ecrit par Elisee Vartabed... traduit en francais par M. I Abbe Grejoire Karabed de I Academie armenienne de Venise. Paris, 1844.

րունակվում է բանավեճ հայկական ազգագրության մասին. ըստ էության, եթե բանավեճ համարենք «վիճելի հարցի քննարկումը տարբեր տեսակետները պարզելու համար»[247]***, ապա ոչ մի բանավեճ տեղի չի ունենում, նախ՝ առայժմ արտահայտվել են միայն մեկ տեսակետի կողմնակիցները. այն է, որ հայերը, որոնք խոսում էին հենց հայերեն լեզվով, ապրում էին Հայաստանում և խոսում էին դրանով «ի սկզբանե»: Եթե մի հեղինակը թվագրում է հայերեն լեզուն Հայաստանում մ.թ.ա. XXV դարով, իսկ մյուսը՝ մ.թ.ա. IV հազարամյակով, ապա դա չի կարելի անվանել տարբեր տեսանկյուններ. այս բոլորն իր մեջ պարունակում է հենց «ի սկզբանե» հասկացությունը, այսինքն՝ մինչև խուրիների, խեթ-լուվիացիների և ուրարտացիների մեծ քաղաքակրթությունները»***[248]***:***

*Տեսնում ենք, որ հայագրի պատմաբանները հայերեն լեզվի ծագումը հասցնում են մինչև Հայկ Նահապետի օրերը՝ մինչև ն.Ք. XXV դար, իսկ Դյակոնովը կարծում է, թե հայերեն լեզուն ի հայտ է եկել ավելի ուշ շրջանում. **«Մնում է եզրակացնել, որ պրոտոհայկական լեզուն ներառված է եղել Հայկական լեռնաշխարհում ավելի ուշ՝ մ.թ.ա. II հազարամյակի կեսից, և, իհարկե, մ.թ.ա. I հազարամյակի կեսից ավելի վաղ ժամանակահատվածում»***[249]***:***

*Անհասկանալի է, թե այդ ի՞նչ պրոտոհայկական լեզվի մասին է խոսում Դյակոնովը, որտեղի՞ց այն ներառվեց, և որքանո՞վ էր այն առնչվում հայերենի հետ, երբ հենց նույն Դյակոնովի տեսության համաձայն՝ հայերեն լեզուն այդ ժամանակ դեռ գոյություն չուներ, և շատ ավելի ուշ սկսեց սաղմնավորվել մի քանի տարբեր ազգերի պատկանող լեզուների խառնակումից: **«Հայերենի հնչյունաբանությունը զգալի չափով վերարտադրում է ուրարտական, ոչ թե հնդեվրոպական հնչյունակազմը: Այս երևույթներն, անշուշտ, խոսում են երկլեզվության երկարատև շրջանի մասին, երբ տեղի բնակչությունը, անցնելով հնագույն հայերենին, միաժամանակ շարունակել է օգտագործել նաև իր նախկին լեզուն՝ խոսելով հին հայերենով, սակայն մայրենի լեզվի առոգանությամբ՝ նրանից բազմաթիվ բառեր փոխանցելով հին հայերենին»***[250]***:***

Ըստ Դյակոնովի տրամաբանության՝ ուրարտացիները միանգամից երկու լեզվի են տիրապետել՝ ուրարտերեն և հայերեն, մինչև որ ուրարտերենը կուլ է գնացել իրենից ծնված հայերենին:

*Դյակոնովը հայերենի ծագումը պարզաբանելու նպատակով ավելի է խճճվում՝ այն արդեն կապելով ոչ թե՝ երկու, այլ միաժամանակ չորս տարբեր լեզուների հետ: Նա գրում է. **«Այլ կերպ ասած, հայերն ամեն ինչից***

247 См. Толковый словарь русского языка. Под ред. Д. Н. Ушакова. М., 1935, т. I.

248 И. М. Дьяконов, «К праистории армянского языка», ИФЖ, 4, Ленинград 1985 г., ст. 149.

249 И.М. Дьяконов, Предыстория Армянского народа, Ереван 1968 г., ст. 204.

250 И. М. Дьяконов, Предыстория Армянского народа, Ереван 1968 г., ст. 231.

առաջ, ուրարտացիների ժառանգներն են, որ ընդունել են հնդեվրոպական լեզուն, սակայն պահպանել են սեփական արտահայտչաձևը (առոգանությունը), բայց նաև խուրիների, լուվիացիների ժառանգներն են»[251]*:*

Դյակոնովի այս մոտեցումից կարելի է եզրակացնել, որ այդ ժամանակաշրջանում Հայկական լեռնաշխարհում միաձուլվել են ուրարտերեն, խուրիերեն, լուվիերեն լեզուները և այդ շիլաշփոթից էլ առաջացել է ժամանակակից հարուստ հայերենը:

*Պետք չէ առանձնապես խորաթափանց լինել տեսնելու համար, որ սա արհեստական՝ շինծու տեսակետ է. ինչպե՞ս կարող է մի քանի դարերի ընթացքում մի ժողովուրդ վերափոխվել մեկ այլ ժողովրդի՝ իր խոսակցական լեզվով հանդերձ: **«Հայ ժողովրդի հիմնական զանգվածն ինչ-որ պատմական պահի, կազմավորվել է հայերի ժառանգներից: Եթե ժառանգը խոսում էր հինավուրց հայերենով, ապա նրա հայրը, պապը և մեծ պապը ավելի հաճախ երկլեզու էին, իսկ նախապապը եղել է մաքուր խուրի կամ ուրարտացի: Այս պահն ըմբռնելը շատ դժվար է...»***[252]*:*

Իսկապես, այս պահն ըմբռնելը շատ դժվար է: Դյակոնովի տրամաբանությամբ՝ հայերի նախապապերից մեկը եղել է խուրի և խոսել այդ լեզվով, ըստ այդմ էլ մյուս նախապապն էլ պետք է ուրարտացի լիներ և խոսեր ուրարտերեն, իսկ նրանցից ծնված ծոռնորդը, չգիտես ինչպես, վերածվել է հայի և սկսել է խոսել հայերեն: Աշխարհում ոչ մի լուրջ գիտնական իրեն թույլ չի տա ժխտել, որ հայերը՝ որպես ազգ, գոնե 2500 տարվա պատմություն հաստա՛տ ունեն, ասենք՝ սկսված երվանդունիներից: Եվ, ուրեմն, ինչպես ստացվեց, այդ 2500 տարվա ընթացքում հայերը էվոլյուցիայի չենթարկվեցին՝ վերափոխվելով մի ուրիշ ազգի, իսկ «խեղճ» ուրարտացիները և խուրիները մի քանի դարերի ընթացքում վերափոխվեցին հայերի, նրանց լեզուն էլ վերածվեց հայերենի: Եթե սա վերաբերեր մի առանձին ընտանիքի, դա դեռ կարելի էր հասկանալ: Իսկ երբ այն վերաբերում է մի ամբողջ ազգի, սա արդեն անհեթեթություն է:

Ստացվում է, որ Հայկական լեռնաշխարհում ն.Ք. II հազարամյակի կեսից մինչ ն.Ք. I հազարամյակի սկիզբը՝ բնակվել է չորս ազգ՝ խուրիներ, ուրարտացիներ, լուվիացիներ և վերջապես, հայեր: Իսկ դա ենթադրում է, որ խոսել են չորս լեզվով. այսինքն՝ երեք նախապապերը և նրանց ծոռնորդի հայերը, որոնց լեզուն էլ՝ հայերենն էր, որը ի վերջո իր մեջ կլանելով այն երեք լեզուներին՝ հարստացել է այդ լեզուների բառապաշարով և նոր՝ «միահեծան» գործածության մեջ մտել Հայաստանի տարածքում:

Սակայն ըստ Ռաֆայել Իշխանյանի՝ տեղի է ունեցել հակառակ երևույթը՝ այլ լեզուներն են իրենց բառապաշարը հարստացրել հայերենի

---

[251] И. М. Дьяконов, «К праистории армянского языка», ИФЖ, 4, Ленинград 1985 г., ст. 153.

[252] И.М. Дьяконов, Предыстория Армянского народа, Ереван 1968 г., ст 243.

հաշվին. ***«Ուստի, նորխուրիերենի՝ մեր այժմյան իմացության մակարդակը թույլ է տալիս ասելու, որ լիովին անհիմն է տարածված այն պատկերացումը, ըստ որի՝ այդ լեզվի բառապաշարն առատորեն թափանցել է հայերենի մեջ: Իրականում հակառակն է տեղի ունեցել՝ հայերեն բառերն են առատորեն թափանցել այդ լեզվի մեջ: Իսկ դա պարզ նշան է այն բանի, որ Հայկական ամբողջ լեռնաշխարհում մ.թ.ա. I հազարամյակի սկզբում, ուստի և մինչև մ.թ.ա. VII դարը, բացարձակորեն գերիշխող լեզուն է եղել հայերենը»***[253]:

Ճիշտ է, Հայաստանում հազարամյակների ընթացքում օգտվել են տարբեր գրային համակարգերից, սակայն խոսակցական լեզուն միշտ եղել և մնացել է հայերենը. ***«Արտաշես թագավորի ժամանակ Հայաստանում արձանագրությունները գրվում էին արամեերեն, բայց դա խոսակցական լեզու չէր, խոսում էին հայերեն, քիչ անց՝ Հայաստանում արձանագրություններ են գրվել (և պահպանվել են) հունարեն, լատիներեն, բայց ժողովուրդը միշտ խոսել է հայերեն»***[254]:

Եվ ուրեմն՝ Հայկական լեռնաշխարհը եղել է հայերի բնօրրանը, որտեղ նրանք ապրել են հազարամյակներ շարունակ, որտեղ էլ մշտապես գործածության մեջ է եղել հայոց լեզուն: ***«Պատմական բոլոր փաստերը և պատմության տրամաբանությունն ասում են, որ այդ տարածքի ամբողջությունը եղել է լեզվացեղային, այսինքն՝ էթնիկական բնույթի. հնագույն ժամանակաշրջանից դա եղել է հայոց լեզվի, ուստի և հայկական ցեղերի տարածման հիմնական շրջանը, հայոց լեզվացեղային (էթնիկական) գլխավոր տարածքը (ըստ երևույթին՝ Փոքր Հայքի հետ միասին)»***[255]:

---

253 Ռ.Ա. Իշխանյան, Հայ ժողովրդի ծագման ու հնագույն պատմության հարցեր, Երևան 1988 թ., էջ 60:

254 Ռ.Ա. Իշխանյան, Հայ ժողովրդի ծագման ու հնագույն պատմության հարցեր, Երևան 1988 թ., էջ 63:

255 Ռ.Ա. Իշխանյան, Հայ ժողովրդի ծագման ու հնագույն պատմության հարցեր, Երևան 1988 թ., էջ 81:

Սեպագիր արձանագրություններ

«Հայաստանում ձեռքդ մեկնես՝ կհասնես հազարամյակների հնության։ Այստեղ դուք կարող եք ձեր մատներով շոշափել ուրարտական թագավորների սեպագիր արձանագրությունները, պոպոկ ջարդել տասհազարամյա հնության քարե կացնով»[256]։

Ակնհայտ է, որ թե՛ մշակութային, թե՛ տարածքային, թե՛ երկրի անվան, թե՛ պատմական և թե՛ մարդաբանական ուսումնասիրությունները վստահորեն բերում են եզրակացության, որ Ուրարտուն Հայաստանն է՝ Արարատյան երկիրը, ուրարտացիներ կոչվածներն էլ հենց հայ ժողովուրդն են, որ ի սկզբանե խոսել են հայերեն։

Իսկ եթե այդքան հիմնավորումներ կան, ապա հարց է առաջանում թե ինչի՞ց ելնելով է գիտնականների մի մասը պնդում, թե իբր Հայկական լեռնաշխարհում գոյություն է ունեցել այդ առեղծվածային «Ուրարտու» երկիրը, «ուրարտացի» կոչված ազգը և ուրարտերեն լեզուն։ Դրա միակ պատճառը սեպագիր գրառումներն են, որոնք հայտնաբերվել են Ասորեստանի և Մեծ Հայքի տարածքներում։

*Ընկնելով Ասորեստանի տիրապետության տակ՝ շատ բաներ Հայաստան սկսեցին ներմուծվել ասորական մշակույթից, որոնց թվում և՝ սեպագրերը, որոնց մասին արդեն ակնարկել ենք. **«Ուրարտական տիրակալների հնագույն գրառումները գրվել են ասորերեն լեզվով, իսկ ուրարտերեն տեքստերն ի հայտ են եկել մ.թ.ա. IX դարի վերջում։ Ուրարտացիներն իրենց գիրը վերցրել են ասորեստանցիներից. վերցնելով պատրաստի սխեման՝ նրանք հարմարացրին իրենց սեփական լեզվի առանձնահատկություններին։ Ուրարտացիները պակասեցրին ասորեստանյան սեպագիր նշանների քանակը և որոշ դեպքերում ավելի պարզեցրին ձևը։ Ուրարտական լեզվում, հավանաբար, չի հանդիպում բազմահնչունություն, այսինքն՝ մի նշանով հաղորդել մի քանի համալիր ձայներ, որ սովորական է ասորեստանյան լեզվում»**[257]։*

Այդպիսով, հայկական մշակույթից որոշ տարրեր իրենց տեղը զիջեցին ասուրականին, ինչն անդրադարձավ նաև տեղական գրային համակարգի վրա։

«Ուրարտացիներն սկսեցին պաշտոնապես ընդունել միջագետքյան սեպագրերը, որն արմատապես նպաստեց վաղ Հիքսոս-հայկական այբու-

---

256 Ռամիլ Հաքիմով, Յոթ գարունների երկրում, գիրք II, «Զրույց քարի հետ», Երևան 1983 թ., էջ 299:

257 В. В. Струве, История древнего Востока, Москва 1941 г., ст., 322.

բենի ամբողջական անկմանը»[258]*։*

Մասնագետներն Ասորեստանում եղող սեպագրերը կարողացան վերծանել, բայց երբ հերթը հասավ Հայաստանի տարածքի սեպագրերին, նրանք ուղղակի չանացին դրանք ընթերցել նույն ասուրական լեզվին բնորոշ եղանակով, ինչն էլ հանգեցրեց թյուրիմացություններին։

***«Հենց այդ ժամանակ՝ XIX դարում, Հայաստանի տարածքում հայտնաբերվեցին առաջին հայացքից ասորեստանյան արձանագրություններ։ Դրանց ընթերցումը, կարծես թե ոչ մի դժվարություն չէր հարուցում, քանի որ ասուրական սեպագրերն արդեն վերծանված էին։ Հայկական սեպագրերն սկսեցին կարդալ ճիշտ այնպես, ինչպես կարդում էին ասուրականը՝ սեպագիր բոլոր նշաններին տալով այն իմաստը, որ ունեին ասուրական սեպագրերը։ Արդյունքն այն եղավ, որ լույս աշխարհ եկավ նոր գիտություն՝ «ուրարտագիտություն», հայտնվեց նոր լեզու՝ «ուրարտերենը»։ Մինչդեռ հենց այդ ժամանակ անհրաժեշտ էր պարզել, թե Հայաստանի բնիկները սեպագիր այդ գրություններն ինչպե՞ս են օգտագործել, սեպագիր կոդեքսի այս կամ այն նշանն ինչպե՞ս էր արտասանվել, ասուրական սեպագրերը ինչպիսի՞ յուրօրինակ փոփոխություններ էին կրել Հայաստանում։ Հետազոտողները զարմանալիորեն շրջանցել են այս հարցերը։ Այստեղ հանդիպում ենք այն հազվադեպ, թերևս եզակի երևույթին, երբ խնդրի հեշտ լուծման ճանապարհի նախընտրությունը քողարկում է ակնհայտ փաստը, որից կառչելով՝ կարելի էր դուրս քաշել ճշմարտության ամբողջ շղթան»*[259]*։*

Իսկ ինչո՞ւ այդ լեզուն անվանեցին հենց «ուրարտերեն»։ Ասորեստանի տարածքում հայտնաբերված ասուրական սեպագրերում հարևան երկրի անվանումն ընթերցվում էր որպես Ուրարտու, իսկ ժողովուրդը՝ ուրարտացիներ։ Եթե երկրի անունը Ուրարտու էր, բնական է, որ լեզուն էլ պետք էր համարել ուրարտերեն՝ հաշվի չառնելով, որ ասուրերենով ընթերցվող Ուրարտուն հենց Արարատն է, և ըստ այդմ էլ՝ լեզուն պետք է լիներ արարատյան, այսինքն՝ հայերեն։

«Ձեզանից նրանք, ովքեր արդեն կարդացել են մեր նախորդ հետազոտությունները, ծանոթ են այն փաստարկներին, որոնք թույլ են տվել ինձ եզրակացնել, որ Ռամզես II-ը պատմական անձնավորություն է, ով կանգնած է Աստվածաշնչյան Շիշակ անվամբ հերոսի հետևում, ով էլ 925 թ. ավերեց Երուսաղեմի Տաճարը և պալատները։ Նրանից հետո, երբ ինձ հաջողվեց պարզել, որ Ռամզեսը նրա անվան կրճատ ձևն է, ես ապացուցեցի, որ հին եգիպտական «s-ն» հաճախ սեմական լեզուներում վերա-

---

258 Maximillien de Lafayette, “Civilization and Arts of Armenia from Pre–History to the Present Day: Its Culture, Society, Stars, Artists and Celebrities” Volume 1, USA San Bernardino, CA 25 May 2015, p. 36.

259 Ս. Մ. Այվազյան, Հնագույն Հայաստանի Աշակույթի պատմությունից, Երևան 1986 թ., էջ 22–23:

փոխվել է «շ»-ի (երբեմն - հին եբրայական (իվրիտ) Աստվածաշնչում, հատկապես ավելի հաճախ աքքադերենում)։ Այսպիսով՝ Ռամզես II–ի հին եգիպտական հիպոկորիստիկ՝ (փոփոխված) Սիսակ անվանումը վերափոխել է Աստվածաշնչյան «Շիշակի»։ Միջին Արևելքի լեզուներում կարելի է հանդիպել բազմաթիվ նմանատիպ վերափոխումների օրինակների. այսպես օրինակ՝ արաբական «սալամը» և հրեական «շալոմը», եգիպտական «Ասկալոնը» և հրեական «Աշկելոնը», եգիպտական Ռամեսսուն և աքքադական Ռիամաշեշան, աքքադական Աստարովթը և հրեական Աշտարովթը, և այլն։ Սակայն «ս»-ն բնավ էլ միակ ձայնանիշը չէ, որն արժանացել է նման պատվի։ Մասնավորապես, մենք հաճախ հանդիպում ենք նմանատիպ անցումների արտացոլմանը՝ տարբեր լեզուներում և բարբառներում «տ» և «դ», «կ» և «գ», «մ» և «ն», «բ» և «մ», «ր» և «լ», որոնք արտացոլում են նմանատիպ տեղաշարժ՝ տարբեր լեզուներում և բարբառներում։ Ինչպես մենք արդեն տեսանք երկրորդ գլխում, նույնն էլ տեղի է ունեցել վանկերում՝ ձայնավորների հետ։ Այդպես և Աստվածաշնչյան «Արարատը» դարձավ ասորական «Ուրարտու»»[260]։

Ահա՝ անվան նման աղավաղման հետևանքով հազարամյակներ ճանաչված Արարատյան երկիրը սեպագրագետների կողմից մատուցվեց որպես Ուրարտու, ինչն էլ իր հետևից թյուրիմացությունների նոր շարան բերեց. «Սեպագրերն աղավաղված կարդալու հետևանքով ի հայտ եկավ նոր լեզու, որը կոչվեց «ուրարտերեն». ասպարեզ եկավ նոր պետություն, որն անվանեցին «ուրարտական», տերմին, որը հանդիպում է միայն ասուրական սեպագրերում՝ որպես Հայկական լեռնաշխարհի պետության անվանում»[261]։

Այս թեմային է անդրադարձել նաև Ռ. Իշխանյանը, ով ասուրերենի փոխարեն օգտագործում է աքքադերենը՝ համարելով, որ ասորեստանցիները աքքադացիների ժառանգորդներն են. «Ուրարտու և ուրարտացի անվանումները շատ գիտնականների շփոթության մեջ գցեցին։ Իրոք, այդ ի՞նչ Ուրարտու է, որ մոտ երեք հարյուրամյակով ընդմիջում է հայոց պատմությունը, և որի մասին այդ անունով ոչինչ չեն ասում հունական, հրեական, հայկական հնագույն աղբյուրները։

Հանելուկը բարդացավ նրանով, որ Մեծ Հայքի տարածքում, XIX դարում և հետո գտնվեցին սեպագիր արձանագրություններ, որոնք գրված են մոտավորապես այն ժամանակաընթացքում, երբ աքքադացիները երկրի մի մասն, ապա ամբողջ երկիրն անվանում էին Ուրարտու, ժողովրդին՝ ուրարտացի։ Այդ արձանագրությունների մեծ մասի լեզուն գիտնականնե-

---

260 Дэвид Рол, “Генезис цивилизации откуда мы произошли ...”, Москва 2005 г., ст. 204–205.

261 Ս. Մ. Այվազյան, Հնագույն Հայաստանի Աշակույթի պատմությունից, Երևան 1986 թ., էջ 23:

րին անծանոթ էր, և ուսումնասիրողները հապճեպորեն որոշում հանեցին, թե դա հենց այդ հանելուկային «ուրարտացիների» լեզուն է: Գտնված արձանագրությունների մյուս մասի լեզուն աքքադերենն է (ասուրական տարբերակ), որ այդ ժամանակ գիտությանը լավ ծանոթ էր: Աքքադական սեպագրերը կարդացվում են ոչ թե տառերով՝ ըստ հնչյունների, այլ՝ ըստ վանկերի, ունեն նաև սեպագիր պայմանանշաններ ու գաղափարագրեր, որոնցից ամեն մեկը մի ամբողջ հասկացություն է նշանակում՝ երկիր, քաղաք, ջուր և այլն: Գիտնականները սեպագրերի աքքադական ընթերցման ձևով սկսեցին կարդալ նաև անհայտ լեզվով գրված արձանագրությունները: Եղավ ինչ-որ նոր լեզու՝ թեև շատ բան էլ արձանագրություններում մնաց չըմբռնված:

Գիտնականները սկզբում որոշեցին՝ այդ արձանագրությունների լեզուն պայմանականորեն կոչել Վանի կամ վանյան լեզու (քանի որ այն հին ժամանակ երկրի կենտրոնը Վանն էր) կամ խալդերեն (խալդյանների անունով) և կամ՝ ուրարտյան լեզու, ուրարտերեն: Այդ լեզվի խոշոր ուսումնասիրողներից Յոհան Ֆրիդրիխը հատկապես նշում էր, որ իր կողմից գործածված ուրարտերեն բառը խիստ պայմանական, ժամանակավոր մի անուն է: Բայց հետագա որոշ գիտնականներ մոռացան այդ զգուշացումը, երկիրն ու պետությունը սկսեցին անվերապահորեն կոչել Ուրարտու, նրա բնակիչներին՝ ուրարտացի, լեզուն՝ ուրարտերեն, մշակույթը՝ ուրարտական և այլն:

Խոսվում էր ինչ-որ մի երկրի ու ժողովրդի մասին, որ մինչ այդ իբր հայտնի չէին՝ թեև դա որևէ փաստական հիմք չուներ: Այդ երկրով ու ժողովրդով ու անհայտ լեզվով զբաղվող առարկան էլ անվանեցին «ուրարտագիտություն»»[262]*:*

Այսպիսով, տեսնում ենք, որ Հայկական լեռնաշխարհում եղած սեպագրերի վերծանման ոչ ճիշտ մոտեցման հետևանքով պատմագիտության մեջ առաջացավ կեղծ բաժին՝ «ուրարտագիտություն»: Շատերն էլ այդ հիմք ընդունելով՝ սկսեցին նոր աշխատություններ գրել այդ նորահայտ պետության, ժողովրդի և լեզվի վերաբերյալ և հաջողեցին, քանի որ նրանց մեջքին կանգնած էր քաղաքական վերնախավը: Իսկ այդ կամա-ակամա կեղծիքի դեմ պայքարող հայ պատմաբանները ստիպված էին դեմ գնալ գործող մեխանիզմին, որը կանգնեցնելը շատ դժվար էր: Սակայն ինչ-որ չափով ընթացքը կասեցնելը հնարավոր էր, քանզի սեղանի վրա էր դրված Հայաստանի պատմության մեծ մասի կորստի հարցը:

«Այսպիսով. փաստերի հեղեղը մեզ բերում և դեմ առ դեմ է կանգնեցնում այն սկզբնակետին, որտեղից ծագել է թյուրիմացությունը. այսինքն՝ հայոց աշխարհում գտնված սեպագիր արձանագրությունների ընթերց-

---

[262] Ռ.Ա. Իշխանյան, Հայ ժողովրդի ծագման ու հնագույն պատմության հարցեր, Երևան 1988 թ., էջ 51–52:

ման պատմության դեմ: Այս հարցում, ինչպես նշեցինք, ամենամեծ սխալն ու միակողմանի մոտեցումն այն է եղել, որ այդ արձանագրությունների լեզվով են չափվել տեղի բնակչության լեզուն և ազգային պատկանելությունը: Մանավանդ, որ չեն գտել մի ուրիշ լեզու, որին համապատասխաներ այդ արձանագրությունների լեզուն: Այդուամենայնիվ, մասնագետներն շտապել են այդ հարցում. և փաստերի համակողմանի քննությունը շրջանցելով՝ իսկույն հիմք դրել մի նոր ժողովրդի՝ «հայտնաբերմանը», և նրա պատմության հետազոտությանը՝ չիմանալով, որ դա իրականում կատարվում է՝ հայ ժողովրդի պատմության վաղ շրջանի ողջ պատմությունն օտարելու գնով:

Մեր շարադրած փաստերն ու դրանց մեկնաբանությունները, ինչպես և շատ ուրիշ պարագաներ, որոնց բոլորին դժվար է մի ամփոփ հոդվածի մեջ անդրադառնալ, լիովին համոզում են հայ-ուրարտական ողջ պատմությունն ու մշակույթը դիտել՝ որպես մի ամբողջական, անբաժանելի ու համահայկական երեւույթ»[263]:

Հայկական լեռնաշխարհում գործածության մեջ են եղել տարբեր գրային համակարգեր

Այն, որ Ուրարտուի, այսինքն՝ Արարատյան երկրի բնակիչները խոսել են հայերեն և եղել են հայեր, շատերն են դրան համամիտ, բայց ինչ վերաբերում է սեպագրերի լեզվին, այդտեղ տարակարծություն կա նաև այն գիտնականների միջև, որ ընդունում են, որ Ուրարտուն հայկական պետություն է եղել. ***«Ինչպես ասվեց, վանի հին տերության սեպագիր արձանագրությունները (մոտ 600) երկու լեզվով են գրված՝ աքքադերեն և մի այլ լեզվով, որ անհիմն կերպով կոչեցին «ուրարտերեն»: Այդ լեզվի գաղտնիքը դեռ լիովին պարզված չէ. նրա շատ բառերի, ձևերի վերաբերյալ հաճախ վիճել և այսօր էլ վիճում են»***[264]:

Պատմաբանները համարում են, որ գրավոր լեզվով տվյալ ժողովրդի ազգությունը պարզելը կարող է ապարդյուն լինել, քանի որ շատ ազգեր են եղել, որ չունենալով իրենց սեփական գրային համակարգը՝ օգտվել

---

263 Ա. Շ. Մնացականյան Հայ-ուրարտական առնչությունների հարցի շուրջը: Գարուն, հ. 9, 1969 թ., 54–55 էջ:

264 Ռ.Ա. Իշխանյան, Հայ ժողովրդի ծագման ու հնագույն պատմության հարցեր, Երևան 1988 թ., էջ 54:

են ուրիշ ժողովրդի պատկանող գրերից։

«Ժամանակակից խոշորագույն սեպագրագետ-ասուրագետ Լեո Օպենհայմը, խոսելով հին հարավարևմտյան Ասիայի, հատկապես՝ Միջագետքի ու նրա շրջակայքի բնակիչների մասին՝ գրում է, որ որևէ վայրում գտնված արձանագրությունների լեզուն բնավ պարտադիր չէ, որ այդ վայրի բնակիչների մայրենի, խոսակցական լեզուն եղած լինի։ Ուսումնասիրողներին նա զգուշացնում է. «Պետք է ուշադրության առնել այն, որ գրավոր բնագրերը չեն տալիս վստահելի վկայություն այն բանի, թե ինչ լեզվով է խոսել այն հասարակությունը, որի մեջ ստեղծվել են այդ վավերագրերը»[265]...

Շումերները իսպառ վերացել են մ.թ.ա. II հազարամյակի սկզբներին, բայց աքքադացիները, քաղդեացիները և այլ ժողովուրդներ շումերերենը օգտագործում էին գրավոր արձանագրություններում՝ խոսելով, անշուշտ, մայրենի լեզվով... Փոքր Ասիայի արևմուտքում մ.թ.ա. II հազարամյակում կար Արծավա երկիրը՝ հունական բնակչությամբ, արձանագրությունները խեթերեն են»[266]։

*Այս տրամաբանությամբ կարելի է համարել, որ Հայկական լեռնաշխարհում այդ ժամանակաշրջանում, չնայած՝ խոսակցական լեզուն եղել է հայերենը, սակայն գրավոր լեզուն եղել է օտար։ Փաստ է նաև այն, որ Հայաստանի տարածքում մի գրային համակարգ չէ, որ գործել է հազարամյակների ընթացքում. **«...նախամաշտոցյան Հայաստանում կիրառվել է տասներկու գրային համակարգ, կանգնեցվել են բազմահազար արձանագրություններ՝ մայրենի և օտար լեզուներով»**[267]։*

*Այսպիսով՝ ձևավորվում է կարծիք, որ Ն.Ք. IX-VII դարերում Հայաստանում հայերեն խոսելով հանդերձ օգտագործել են օտար ժողովրդի գրային համակարգ. **«Բայց ո՞վ ասաց, թե Հայաստանում գտնվող այդ սեպագիր արձանագրությունների լեզուն պիտի համապատասխաներ տեղի խոսակցական՝ իշխող լեզվին։ Ինչպես ցույց են տալիս փաստերը, Հայոց բարձրավանդակում և հայ ժողովրդի համար Մեսրոպ Մաշտոցի այբուբենից առաջ օրինաչափ իրողությունն այն է եղել, որ օգտագործված գիրն ու գրալեզուն օտար են եղել և կապ չեն ունեցել տեղի՝ հայոց լեզվի հետ։ Հիշենք որպես օրինակ՝ այդ արձանագրություններից հետո երևան եկող Արտաշես Առաջինի արամեերեն արձանագրությունները։ Ի՞նչ կստացվեր, եթե մասնագետներն սկսեին այդ արձանագրությունների լեզվով որոշել բնիկների ազգային պատկանելությունը։ Կստացվեր այնպես, որ «ուրարտացիներին» հաջորդել են արամեացիները, սիրիացիները։ Իսկ***

---

265 А. Л. Оппенхейм, Древняя Месопотамия Москва 1980 г., ст. 47:

266 Ռ.Ա. Իշխանյան, Հայ ժողովրդի ծագման ու հնագույն պատմության հարցեր, Երևան 1988 թ., էջ 63:

267 Արտակ Մովսիսյան, Նախամաշտոցյան Հայաստանի գրային համակարգերը, Երևան 2003 թ., էջ 230:

եթե դրանից հետո փորձեին մեհենական մատյանների և զանազան վավերագրերի հունարեն, պարսկերեն, ասորերեն, քաղդեերեն լեզուներով որոշել այդ «արամեացիների» հաջորդներին՝ Հայաստանում, այն ժամանակ պիտի ընդունեին, որ նրանց հաջորդել են հույները, պարսիկները, քաղդեացիները, ասորիները: Անհեթեթություններ մի ամբողջ շարք, որը պիտի ավարտվեր Հայաստանում սկզբնապես ընդունված Աստվածաշնչի ասորերեն և հունարեն լեզուների առաջադրած «նոր» ժողովուրդներով՝ մինչև մեսրոպյան այբուբենին հասնելը:

Միաժամանակ այնպես կստացվեր, որ այդ բոլոր տարբեր ցեղերը, ժողովուրդները, մեկը մյուսին հաջորդելով, մի սրբազան երկյուղածությամբ շարունակել են նույն արվեստն ու մշակույթը՝ որպես իրենց բոլոր նախորդների և իրենց սեփական մշակույթ՝ իրենք էլ մնալով միշտ որպես Հայկ նախնու սերունդներ՝ Հայաստանի բնիկներ: Իրականում, սակայն, նման հեքիաթներ չեն եղել: Այդ ժամանակակից շփոթության պատճառով է, որ նախամաշտոցյան ժամանակների Աստվածաշնչի ասորերեն, հունարեն լեզուն բացատրելով որպես սեփական գրի բացակայության արդյունք՝ միաժամանակ պահանջում է, որ դրանից շուրջ 1000-1500 տարի առաջ արված սեպագիր արձանագրությունների լեզուն լիներ հայերեն»[268]:

Այս կարծիքը կիսում են նաև այլ հայ պատմաբաններ՝ համարելով, որ տարածաշրջանում հայեր՝ բնիկ են և ազատ խոսում էին հայերեն, սակայն Հայաստանում այդ շրջանում օգտագործվում էր օտար գրային համակարգ:

«Հայոց թագավորներն իրենց մոնումենտալ գրությունների համար օգտագործել են հունարեն և արամեական լեզուներ, և եթե մենք հայ ժողովրդի մասին այլ տվյալներ չունենայինք, ապա այն ժամանակ կարելի էր պնդել, որ այստեղ հայեր չեն եղել: Եթե հազար տարի անց՝ գիտնականները պեղեն մեր հանրապետության պետպլանի արխիվը, ապա այդ արխիվի փաստաթղթերում ոչ մի հայկական տառ չեն գտնի, քանի որ ամբողջ փաստաթղթերն իրականացվում են ռուսերեն լեզվով: Հավանաբար, այն ժամանակ էլ, լեզվական նյութի հիման վրա, գիտական եզրակացություններ կանեն, որ Հայկական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունում հայեր չեն եղել»[269]:

Իսկապես, ՍՍՀՄ-ի շրջանում փաստաթղթերը գրվում էին ռուսերեն և ոչ միայն գրվում էին, այլև ռուսերեն լեզուն էլ համարվում էր առաջնային, և շատերը հայերեն լեզուն համարյա չէին օգտագործում, այլ պարծանքով օգտագործում էին ռուսերենը՝ որպես այդ ժամանակվա կայսերական լեզու: Եվ չնայած որ, կարծես, Թե՛ գիրը և Թե՛ լեզուն վերնախավում հիմնա-

---

268 Ա. Շ. Մնացականյան Հայ-ուրարտական առնչությունների հարցի շուրջը: Գարուն, հ. 9, Երևան 1969 թ., էջ 49:

269 Хачатурян В.А., Урарты или урартийцы – кто они?, Ереван 1991 г., ст. 55.

կանում ռուսերենն էր, այնուամենայնիվ, այդ ժամանակ էլ Հայաստանը Խորհրդային Միության 15 հանրապետությունների մեջ ամենամիատարրն էր՝ ազգության տեսանկյունից, քանզի մյուս հանրապետությունների համեմատ՝ օտար ազգի ներկայացուցիչների թիվը շատ փոքր էր Հայաստանի Հանրապետությունում. հիմնական բնակչությունը կազմում էին հայերը:

«Այս ամենը ցույց է տալիս, որ մինչև Մաշտոց՝ մինչ V դար, հայերն օգտվել են տարբեր լեզուներից, գրել են այլ լեզուներով՝ լուվիերեն, աքքադերեն, նորխուռիերեն, արամեերեն, հունարեն, լատիներեն և այլն, մինչև որ Մաշտոցը ստեղծեց հայ գիրը, և սկիզբ առավ Սահակ-Մեսրոպյան դպրությունը:

Այսպիսով, Հայաստանում, ինչպես և արևելյան մի շարք այլ երկրներում մ.թ.ա. տարբեր ժամանակներում գրված արձանագրությունների լեզուն բնավ պարտադիր չէ, որ ցույց տա երկրի բնակչության լեզվացեղային կազմը: Պարզ է արդեն, որ մ.թ.ա. IX-VII դարերում Հայաստանում գրված արձանագրությունների լեզուներով չի կարելի որոշել երկրի բնակչության լեզվացեղային կազմը»[270]:

Ահա՝ թե՛ մշակույթը և թե՛ մնացած ամեն ինչը խոսում են այն մասին, որ անկախ գրային համակարգից՝ Հայաստանում ապրել են Հայկ Նահապետի սերունդները՝ հայերը, և խոսել են իրենց մեծ Նահապետից ժառանգած լեզվով՝ հայերենով:

«Հանճարեղ պատմահայր Մովսես Խորենացին մեզնից ավելի քան 1500 տարի առաջ է տեսել և՛ մեհենական մատյանները, և՛ Արտաշիսյան արամեերենը, և՛ սեպագիր արձանագրությունները. նա մեզնից առաջ է խորհել ու մտորել՝ կանգնած նրանց առջև, բայց նա երբեք մտքով չի անցկացրել՝ ըստ նրանց լեզվի դատել տեղի բնակիչների լեզվի և ազգային պատկանելության մասին: Ընդհակառակը՝ նա քաջ իմացել է, որ մեր նախնիները չեն ունեցել սեփական գիր ու դպրություն և օգտվել են ուրիշներից: Հենց այդ պատճառով է, որ նա դժգոհել է մեր նախկին թագավորներից՝ որպես «անխմաստասեր» տերերից (1968 թ. էջ 70):

Այսպես, ուրեմն, մի կողմից հայ-ուրարտական մշակույթի անբաժանելի ամբողջությունը, իսկ մյուս կողմից՝ սեպագիր արձանագրությունների հարցում եղած թյուրիմացության վերացումը բավարար հիմք կտա՝ ասելու, որ ուրարտացիները, այսինքն՝ արարատցիները, այսինքն, Արարատյան պետության ժողովուրդը, ոչ թե ուրիշ ժողովուրդ էր, այլ եղել է ինքը՝ հայ ժողովուրդը»[271]:

---

270 Ռ.Ա. Իշխանյան, Հայ ժողովրդի ծագման ու հնագույն պատմության հարցեր, Երևան 1988 թ., էջ 64:

271 Ա. Շ. Մնացականյան Հայ-ուրարտական առնչությունների հարցի շուրջը: Գարուն, հ. 9, Երևան 1969 թ., 49 էջ:

Սեպագրերի լեզուն՝ խուրիերեն

Նման իրավիճակում կարող է հարց առաջանալ. եթե գրային լեզուն հայերեն չի եղել, ապա հայերն իրենց պատմության, այսպես կոչված, «ուրարտական» շրջանում ո՞ր ժողովրդի գրային համակարգից են օգտվել: Առաջնային տեսակետներից մեկն այն էր, որ այդ լեզուն եղել է խուռիերենը, սակայն այնպես չէ, որ դա միանշանակ ընդունվել է:

«XIX դարի վերջում բոլորը համոզված էին, որ Ուրարտուն Հայաստանն էր, XX դարի սկզբում էլ այդպես շարունակվում էր, նույնիսկ 30-40-ական թվականների գրքերում ասորագետները, աքքադագետներն աղբյուրներն անգլերեն թարգմանելիս՝ Ուրարտուի դիմաց գրում էին Արմենիա: Բայց 30-ականների վերջում արդեն Ֆաշիստական Գերմանիայում մի քանի հոդվածներ հրատարակվեցին, որոնք հիմնավորում էին, որ ուրարտերենը հայերի հետ կապ չի կարող ունենալ, որ այն ընդհանրապես հնդեվրոպական լեզու չէ: Հետագայում այն կցվեց խուռիերեն կոչված լեզվին, որի ինչ լինելը ևս հայտնի չէ: Ստացվում էր, որ այդ երկու լեզուները ոչ մի լեզվաընտանիքի մեջ չեն մտնում: Այդպիսի մի տեսակետ ստեղծվեց, որը դարձավ դոմինանտ և, ցավոք սրտի, ներմուծվեց նաև մեզ մոտ»*[272]*:

Հավանաբար, ազդվելով Դյակոնովի և այլոց աշխատություններից՝ հայ գիտնականներից ոմանք էլ հանգեցին այն տեսակետին, որ Մեծ Հայքի տարածքում եղած սեպագրերի լեզուն, շատ հավանական է, որ պատկանում է խուռիերենին:

«Խնդրի համար պատասխանի կարիք ունի մի հարց ևս: Հնարավո՞ր էր արդյոք, որ Հայաստանը I-ին հազարամյակում ընդուներ խուրիական արձանագրությունների լեզուն: Դա միանգամայն հնարավոր էր, եթե ոչ՝ պարտադիր: Ահա թե ինչու: Ի. Մ. Դյակոնովը, խոսելով այդ ժամանակվա խուրիների մասին, գրում է, որ նրանք կիսաաղեղի ձևով հարավից և արևմուտքից գրկում էին ուրարտական պետության սահմանները և տարածված էին վերին Եփրատի ու հավանաբար Ճորոխի հովիտներում, Սասունի լեռներում, Հյուսիսային Միջագետքում և Ուրմիա լճի հարավում... տեսնում ենք, որ, իրոք, խուրիները սերտ շփման մեջ են եղել հայոց աշխարհի հետ»*[273]*:

Այստեղ ասվում է, որ խուրիներն ապրել են Հայկական լեռնաշխարհի շուրջբոլորը և մասամբ հենց՝ լեռնաշխարհի ներսում, սակայն թե ի՞նչ

---

[272] Սարգիս Այվազյանի, «Ակնհայտ երևում է, որ ուրարտերենը հայերեն է». կայք «Ազատ նորություն» Երեքշաբթի, 26 մարտի 2019 թ.:

[273] Ա. Շ. Մնացականյան Հայ-ուրարտական առնչությունների հարցի շուրջը: Գարուն, հ. 9, Երևան 1969 թ., 59 էջ:

երկրներ և ազգեր են եղել Հայաստանի հարևանությամբ՝ հատկապես այդ ժամանակաշրջանում, գաղտնիք չէ. հարավում եղել են ասորեստանցիները, արևելքի կողմում՝ մեդացիները, արևմուտքում՝ խեթերը, հյուսիսի կողմերում՝ կովկասյան ազգերը, իսկ «խուրիներ» ազգի կամ նրանց պատկանող երկրի մասին ոչ մի տեղեկություն չկա։

Եվ ուրեմն, ովքե՞ր են խուրիները։ Մենք արդեն տեղեկացանք, որ հայկական տարրը դեռ դարեր առաջ տարածված էր ամբողջ Միջագետքով, Հյուսիսային Հնդկաստանով, Սիրիա-Պաղեստինով և վերջապես՝ Եգիպտոսով, և հենց այդ հայկական տարրն է, որ անվանվել է խուրիներ, այսինքն՝ «արևելյաններ»։

«Շուտով այդ լեզվի հանելուկը մասամբ լուծվեց. լեզվաբան արևելագետները ցույց տվեցին, որ այն սերտ ազգակից է խուռիերեն (խուռերեն) լեզվին կամ գուցե նրա մի տարբերակն է։[274] Խուռի (նաև հուռի, խուրրի, խուրիտ) կամ սուբարի (շուբարի) անվանվող ցեղերը, հավանաբար՝ ոչ միաէզու, բնակվել են ցրված՝ Միջագետքում, Պաղեստինում, Ասորիքում (Սիրիայում), գուցե Հայքի հարավում և՝ այլուր։ Այդ ցեղերից մի քանիսի լեզուն պահպանվել է սեպագիր արձանագրություններում՝ սկսած մ.թ.ա. III հազարամյակի վերջից (ամենավաղը՝ մ.թ.ա. 2200 թ.)։ Մ.թ.ա. XVII-XV դարերում, գլխավոր խուռիերենը գործածվել է Միջագետքի հնդիրանյան Միտանի պետությունում»[275]։

Քանի որ Միտանի պետությունն այդ տարբեր երկրներից մեկտեղ հավաքված հայերն են ստեղծել, ուրեմն նրանք խոսել են այնպիսի լեզվով, որտեղ բացի բուն հայերենից՝ եղել են նաև տարբեր հայկական բարբառների մեկտեղում՝ հայ-հնդկական (արիներ), հայ-բաբելական (քասեցիներ), հայ-եգիպտական (հիքսոսներ) և հայ-քանանական (սաղեմահայեր)։ Հավանաբար, այդ է պատճառը, որ մասնագետների հետազոտությունները ցույց են տվել, որ խուռիերենը շատ նմանություններ ունի հայերենին։ ***«Հայերենի և նորխուռիերենի բառային համապատասխանությունները կարելի է բացատրել հետևյալով. երկու լեզուները դարավոր հարևաններ են եղել՝ հայերենի բացարձակ գերակշռությամբ... չի կարելի լիովին բացառել նաև ինչ-որ ազգակցական (ծագումնաբանական) առայժմ անհայտ ընդհանրություն՝ երկու լեզուների միջև»[276]։***

Այս «ինչ-որ ազգակցական (ծագումնաբանական) առայժմ անհայտ ընդհանրությունները», հավանաբար, կարելի է արդեն «անհայտ» չհամա-

---

274 Տե՛ս, օրինակ, Г. А. Меликишвили, Урартские клинообразные надписи, М. 1960 г., էջ 89–92, И. М. Дьяконов, Языки Древней Передней Азии, М., 1967 г., էջ118–120, նույնը. «Вестник древней истории», 1970 г., № 4, էջ 46:

275 Ռ.Ա. Իշխանյան, Հայ ժողովրդի ծագման ու հնագույն պատմության հարցեր, Երևան 1988 թ., էջ 55–56:

276 Ռ.Ա. Իշխանյան, Հայ ժողովրդի ծագման ու հնագույն պատմության հարցեր, Երևան 1988 թ., էջ 62:

րել և խոստովանել հայ-խուրիական նույնությունը, իսկ նույնությունը ոչ միայն ծագումնաբանական է, այլև՝ լեզվաբանական։

«Լեզվաբանությունը չի պարզել, թե ինչ լեզվաընտանիքի մեջ են մտնում խուռիերենն ու նորխուռիերենը։ Ուշադրություն են գրավում հայերենի բառային համապատասխանություններն այդ լեզվի հետ։ Մեր հաշվով՝ նոր խուռիերենից պահպանված է շուրջ 350 բառ-արմատ, որոնցից շուրջ 70-ն ընդհանուր է հայերենի հետ (20 տոկոս)»[277]։

Քանի որ ընդհանրությունները մեծ են հայերենի և խուռիերենի միջև, դրանից ելնելով՝ մասնագետները հարց են բարձրացնում, թե ո՞ր լեզվից են մյուսին անցել նույնանման բառերը։

«Այս բառերի մի մասը մեր համոզումով կա՛մ բնիկ հայերեն է, կա՛մ հայերենի մեջ կազմված. դրանցից են՝ Աստված, հովիտ, ավան, ծով։ Մյուսները, եթե հայերենում փոխառյալ էլ լինեն, միևնույն է, պետք է հայերենից անցած լինեն նորխուռիերենին. բանն այն է, որ դրանք նորխուռիերենում հայերենի համեմատ արտահայտվում են հնչյունական այն նույն տեսքով, որով այդ լեզվում արտահայտվում են նաև բնիկ հայերեն բառերը (հմմտ. բնիկ հայերեն ուղի>uli, ulu, պեղ>pil և փոխառյալ՝ ուղտ - ulti)։

Ամեն դեպքում, հայերենից ակնհայտորեն այս լեզվին անցած շուրջ 50 բնիկ հայերեն բառ-արմատների դիմաց միայն մեկ կամ երկու բառ կարելի է նշել (այն էլ հարցականով), որ այս լեզվից անցած լինեն հայերենին...

Այսօր նորխուռիերեն արձանագրությունների վերծանումը հաճախ կատարվում է հայերենի օգնությամբ։ Բառային համապատասխանությունները լրացվում են երկու լեզուների մեջ եղած տեղանունների համապատասխանությամբ, ինչպես՝ Վան–Biana, ***Տոսպ-***Tušpa, ***Էրևան-***Erebuni, ***Ծովեք-***Cup'ani ***և շատ ուրիշ։***

Կարելի է նշել հնչյունաբանական մի շարք օրինաչափություններ՝ բխեցված այն բանից, թե ինչպես են միևնույն բառերն արտահայտված հայերենում և նորխուռիերենում։ Խոսքն, իհարկե, վերաբերում է V դարի հայերենին, այն էլ՝ ուշ շրջանի արտասանությամբ, քանի որ V դարից են գալիս հայոց լեզվի գրավոր հուշարձանները, իսկ մ.թ.ա. IX-VII դարերից հայերեն գրավոր հուշարձաններ չկան (կամ չեն պահպանվել), և մենք ստույգ չգիտենք, թե հայերեն շատ բառեր, օրինակ՝ ուղի, ուղտ, ավան, ուտեմ, ծառ և այլն ինչպես են արտասանվել հայերենում՝ մ.թ.ա. IX-VII դարերում և դրանից առաջ»[278]։

---

277 Ռ.Ա. Իշխանյան, Հայ ժողովրդի ծագման ու հնագույն պատմության հարցեր, Երևան 1988 թ., էջ 57:

278 Ռ.Ա. Իշխանյան, Հայ ժողովրդի ծագման ու հնագույն պատմության հարցեր, Երևան 1988 թ., էջ 59–60:

Սեպագրերի լեզուն՝ հայերեն

«Հայերը՝ որպես պատմական իրողություն, կայացան այնքան, որքան կայացել է ինքը՝ մարդկության պատմությունը: Մենք հանդիպում ենք նրանց մասին հիշատակումներ ամենուր՝ Աստվածաշնչյան ավանդույթներում, սեպագիր ցուցանակների վրա կամ հիշատակարանների պատմվածքների մեջ»[279]:

*Ինչպես տեսանք, խուռիերենի և հայերենի միջև ընդհանրությունները քիչ չեն, ինչն էլ արտառոց չի դարձնում այն, որ գիտնականներից ոմանք, դարձան այն տեսակետի հետևորդ, որ այդ սեպագրերի լեզուն հենց հայերեն է: **«Մի շարք ուսումնասիրողներ (Ա. Մորդման, Հ. Սանդալջյան և ուրիշներ) փորձել են Վանի հին տերության այդ արձանագրությունները կարդալ հայերեն: Վերջին տասնամյակներում մի քանի հետաքրքրվողներ, օգտվելով սեպագրագետ գիտնականների ընթերցումների լատինական տառադարձություններից, ջանում են ապացուցել, որ գրվածը հայերեն է, ոմանք ասում են, թե դա մի հնագույն հայերեն է, ուրիշները՝ թե դա Վանի բարբառն է և այլն»**[280]:*

*Քանի որ այդ շրջանում Վանն է եղել երկրի մայրաքաղաքը, նույնիսկ այդ անվամբ հաճախ ճանաչվել է և ամբողջ երկիրը՝ որպես «Վանի թագավորություն», բնական է, որ հայերենի տվյալ բարբառը պետք է գերակշռեր արձանագրություններում, եթե իսկապես՝ այդ լեզուն հայերեն է եղել: **«Մինչ օրս Վան և Ուրմիա լճերի մոտ ապրող հայերի բարբառները պահպանել են ուրարտական լեզվի հնչյունաբանական կառուցվածքին որոշակի մոտիկություն»**[281]:*

*Ուրարտական անվանումների մեջ հատուկ են «նի» վերջածանցով անձնական և աշխարհագրական անվանումները. ինչպես՝ էրեբունի, Թեյշեբաինի և այլն: Իսկ Բ. Պիոտրովսկին, հատուկ ուշադրություն դարձնելով այդ վերջածանցով ուրարտական անվանումների վրա, ընդհանրություններ է տեսնում հին Հայկական տոհմանունների հետ: **«Հին հայկական և ուրարտական տերմինների միջև կապերը կարելի է դիտարկել ոչ միայն աշխարհագրական անվանումներում: Մեկ անգամ չէ, որ լիովին հիմնավորված ի ցույց է դրվել այն, որ հայոց իշխանավորների ամենահին տոհմական ազգանունները սկիզբ են առել ուրարտական ժամանակնե-***

---

279 В.В. Коноплев: Армения как состояние любви, статья, главный редактор сетевого СМИ «Наша Среда online».

280 Ռ.Ա. Իշխանյան, Հայ ժողովրդի ծագման ու հնագույն պատմության հարցեր, Երևան 1988 թ., էջ 55:

281 Авдиев В. И. История Древнего Востока, Ленинград 1948 г., ст. 398.

րից, քանի որ «նի» վերջածանցը առանձնապես բնորոշ է ուրարտական լեզվին: Սրանք են հայ իշխանների հնագույն ազգանունները՝ Ռշտունի, Բզնունի, Մանդակունի, Խորխորունի և այլն»[282]:

Որոշ գիտնականներ սկզբում կողմնակից լինելով այն կարծիքին, թե սեպագրերի լեզուն հայերենին չի պատկանում, հետագայում փոխել են իրենց կարծիքը. ***«2001-ին հայերենի և ուրարտերենի առնչությունների հարցին կրկին անդրադարձավ Գ. Ջահուկյանը: Նա, հետազոտելով ուրարտական արձանագրությունների ներածական բանաձևերը, կարծիք հայտնեց, թե չի բացառվում, որ ուրարտերենի հիմքում ընկած է հայերենը [ՊԲՀ, 2001, էջ 125-129]»***[283]:

Նման համոզմունք հանդիպում է ոչ միայն հայ, այլև օտար գիտնականների մոտ. նրանցից է նաև գերմանացի հայտնի լեզվաբան Հ. Իենսենը. ***«1893-1894 թթ. այդ աշխատանքին է լծվում պրոֆեսոր Իենսենը: Վերծանումից հետո Իենսենը հանգում է այն եզրակացության, որ Վանի սեպագրերը գրված են հին հայերենի բարբառով»***[284]:

Սեպագրերի վերծանման գործում մեծ աշխատանքներ է տարել Սուրեն Այվազյանը, ով նմանապես հանգել է այն եզրակացության, որ սեպագրերի լեզուն պետք է համարել հայերենը:

«Հայկական սեպագրերի վերծանումը ցույց տվեց, որ հայերենից զատ, հայերենից տարբերվող «ուրարտական» լեզու գոյություն չունի, որ հայկական սեպագրերի լեզուն հենց սեպագիր շրջանի Հնագույն Հայաստանի լեզուն է:

Ապագա հետազոտողներին հարկ կլինի հետևել լեզվի քերականական կառուցվածքի զարգացման ավելի քան հազարամյա ուղուն, որն ընդգրկում է մեր թվարկությունից առաջ VII դարից մինչև մեր թվարկություն V դարը: Այդ տեսակետից խիստ արժեքավոր նյութ են հայկական բարբառները, քանի որ հենց նրանք են պահպանում լեզվում երբեմնի իշխող հազվադեպ նմուշները»[285]:

Վերջին շրջանում այս ուղղությամբ մեծ աշխատանքներ է իրականացրել պատմաբան Սարգիս Այվազյանը՝ ավելի մանրակրկիտ կերպով հետազոտելով և ի ցույց դնելով սեպագրերի լեզվի և հայերենի միջև եղած ընդհանրությունները. ***«Ինքս փորձել եմ ուրարտերենը դիտարկել ամբողջության մեջ: Պետք է ասեմ՝ երբ խորանում ես, ակնհայտ երևում է, որ ուրարտերենը հայերեն է: Իհարկե, կան տարբերություններ և՛ արդի հայերենի, և՛ գրաբարի հետ համեմատած, ինչը բնական է: Բայց որ***

---

282 Б.Б. Пиотровский, Ванское царство (Урарту), Москва 1959 г., ст 124.

283 Սարգիս Այվազյան, Ուրարտերեն –հայերեն, Երևան 2008 թ., էջ 6:

284 С. Саркисян, Доктор философских наук, профессор, «Армяне Арцаха в антропологическом и геогрофическом отношении». https://vstrokax.net/avtorskaya-kolonka/armyane-artsaha/

285 Ս. Մ. Այվազյան, Հնագույն Հայաստանի Աշակույթի պատմությունից, Երևան 1986 թ., էջ 69:

լեզվի հիմքում հայերենն է՝ ակնհայտ է»[286]*:*

Այստեղ հարիր չէ նյութը ծանրաբեռնել տվյալ գիտնականների աշխատությունից բերված մեջբերումներով, քանի որ դրանք հիմնականում խիստ մասնագիտական են, իսկ հետաքրքրվողները կարող են ցանկության դեպքում օգտվել գրադարաններից, որտեղ այդ գրքերն առկա են:

*Տեսնում ենք, որ սեպագիր արձանագրությունների լեզուն նույնպես չի հերքում, որ Հայկական լեռնաշխարհում բնակվողները եղել են հայերը, այլ ոչ թե անհայտ ազգ՝ «ուրարտացիներ» անվամբ: Սակայն եթե նույնիսկ սեպագրերի լեզուն հայերենը չհամարողները պնդեն իրենց տեսակետը, միևնույն է՝ դա խոչընդոտ չի կարող լինել հայերին տարածաշրջանի բնիկներ տեսնելու հարցում, քանզի չափազանց շատ են այլ հիմնավորումները, որոնք հերքելու փորձերը դատապարտված են ձախողման: **«Չի կարելի միակողմանիորեն տարվել սեպագիր արձանագրությունների քարացած մեկնաբանություններով և անտարբեր մնալ կյանքից եկող այս բազմապիսի վկայությունների հանդեպ»**[287]**:***

Այսպիսով, համոզվում ենք, որ Ուրարտուն հենց Արարատյան երկիրն է, որը Հայաստանն է, բնակիչները՝ հայերը, խոսակցական լեզուն՝ հայերենը: Հակված ենք հավատալու, որ գրային լեզուն նույնպես հայերենն է, ինչի հաստատումը, կարծում ենք, մոտ ապագայում շատ ավելի հաստատուն հիմքերի վրա կդրվի:

Իսկ ինչ վերաբերում է «ուրարտական» արքաների անվանումների և Մովսես Խորենացու պատմության մեջ եղած հայոց արքաների անվանումների տարբերությանը, այդտեղ էլ կան օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներ:

Նախ՝ գիտնականներն անխտիր ընդունում են, որ ուրարտերենից բերված թարգմանությունները, անկատար են:

«Բանն այն է, որ գիտությունը դեռևս չի կարողացել ճշգրիտ ասել. հնչյունաբանորեն ճի՞շտ են կարդացվում «ուրարտերեն» բառերը, թե՞ ոչ: Մենք ուշադրություն դարձրինք լեզվաբանների հետևյալ խոստովանությանը. «առայժմ... մենք ի վիճակի չենք՝ պարզելու «ուրարտական» նշանների իսկական արտասանությունը և ստիպված ենք դրանց տալ նույն հնչյունային նշանակությունները, որպիսիք նրանք ունեին ասուրերենում» (Գ. Մելիքիշվիլի)»**[288]**:

Գիտնականներից ոմանք էլ, ինչպես տեսանք, որպես այդ անկատարությունը կարգավորելու միջոց՝ առաջարկում էին այդ սեպագրերը

---

286 Սարգիս Այվազյանի, «Ակնհայտ երևում է, որ ուրարտերենը հայերեն է». կայք «Անկախ նորություն» Երեքշաբթի, 26 մարտի 2019 թ.:

287 Ա. Շ. Մնացականյան Հայ-ուրարտական առնչությունների հարցի շուրջը: Գարուն, հ. 9, 1969 թ., էջ 51:

288 Ս. Մ. Այվազյան, Հնագույն Հայաստանի Աշակույթի պատմությունից, Երևան 1986 թ., էջ 56–57:

ընթերցել հայերեն, ինչն իրականացնելու համար մեծ աշխատանքներ պետք է տարվեն: Հնարավոր է, որ այդ ժամանակ էլ Արգիշտի անվանումն ընթերցվի՝ որպես Արա, Սարդուրին՝ Սկայորդի և այլն: Մենք նշեցինք նաև, որ մինչ Արամեի կողմից երկիրը միավորելը՝ պառակտված Հայաստանը գտնվում էր Ասորեստանի գերիշխանության տակ և ասուրական մշակույթն էլ ինչ-որ չափով ներթափանցել էր Հայաստան: Իսկ Միջագետքի և հարևան երկրների ժողովուրդների և պարսիկների մոտ սովորություն կար երկու անուն ունենալ, օրինակ՝ Դարեհ I-ին անվանել են նաև Հիստասպես, իսկ ըստ Մովսես Խորենացու՝ ասորիները Արշամ թագավորին կոչում էին նաև մի ուրիշ անվամբ. ***«Ասորիներից ոմանք այս Արշամին կոչեցին Մանովա, ինչպես շատերը սովորություն ունեն երկու անուն կրել, ինչպես Հերովդես Ագրիպաս, կամ Տիտես Անտոնիոս, կամ Տիտոս Հուստոս»***[289]*:*

Եթե Արշամին Մանովա էին կոչում, ուրեմն ուրարտական արքա Մենուան էլ, հավանաբար, կրել է մի անուն ևս, որն էլ արդեն պետք է լիներ հայկական. օրինակ՝ Բագուկ կամ Հուսակ, այդպես և՝ մյուս անվանումները: Այդ հինավուրց ժամանակների սեպագիր գրառումներում ոչ միայն անվանումների, այլև ուրարտական արքաների և Մովսես Խորենացու պատմության մեջ եղող հայ արքաների քանակության հարցում էլ որոշ անհամապատասխանություններ կան, բայց նման ոչ մեծ թերությունները համընդհանուր բնույթ են կրում նաև տարբեր շրջանների պատմաբանների մոտ:

«Առհասարակ, Խորենացու «Հայոց պատմության» վերաբերմամբ երկու ծայրահեղ մոտեցում է եղել և այժմ էլ կա: Դրանցից մեկը լիովին հակապատմական է, ուստի հակագիտական (Դաղբաշյան, Թումանով, Թոմսոն և ուրիշներ). ըստ այդմ՝ Խորենացու հաղորդած բոլոր տեղեկությունները անվստահելի են համարվում: Այս տեսությունը հեշտությամբ հերքվում է, և մի շարք պատմաբաններ արդեն իսկ հերքել են շատ փաստերով: Մյուս ծայրահեղ մոտեցումը, որին երբեմն հանգում են Խորենացուն գիտականորեն՝ ճիշտ գնահատող որոշ պատմաբաններ, այն է, որ իբր Խորենացու «Հայոց պատմության» մեջ, մասնավորապես՝ նրա Առաջին գրքում, ժամանակագրական ոչ մի՝ անգամ ամենափոքր անճշտություն կամ պատմական իրողություններին թեկուզ փոքր չափով չհամապատասխանող որևէ բան չկա: Իրականում հին աշխարհի պատմիչների մեջ, այդ թվում՝ հույն, լատին չկա մեկը, որ սխալներ, այն էլ՝ շատ լուրջ, թույլ տված չլինի. խոսքը վերաբերում է նաև հին աշխարհի այնպիսի խոշոր հեղինակների, ինչպիսիք են Հերոդոտը, Եվդոքսոսը, Ստրաբոնը, Պոլիբիոսը, Տակիտոսը, Պլուտարքոսը և ուրիշներ: Իրոք, անհնար էր այն ժամանակներում ամեն ինչ ստույգ ու ճշգրիտ գրել, մանավանդ, երբ խոսքը վերաբերում էր պատմիչի ապրած ժամանակաշրջանից հազար կամ

[289] Մովսես Խորենացի, Պատմություն հայոց, Երևան 1968 թ., էջ 155:

երկու ու երեք հազար տարի առաջ կատարված դեպքերին: Նույնիսկ այժմ նորագույն պատմության մասին գրելիս՝ պատմաբանները հաճախ տարբեր անճշտություններ են թույլ տալիս:

Խորենացին հայոց պատմությունն սկսում է մ.թ.ա. IV հազարամյակից, հասցնում մինչև իր օրերը, այսինքն՝ փորձում է ներկայացնել նաև իր ապրած օրերից հազար, ինչպես և երկու, երեք հազար տարի առաջ կատարված իրադարձություններ: Որքան էլ լավ աղբյուրներ ունենար Խորենացին, անհնար էր, որ անճշտություններ չսպրդեին նրա գրածի մեջ...

Բայց կարևոր է, որ Խորենացու հաղորդածի և հնադարյան արձանագրությունների ու մատյանների տվյալները բազմաթիվ դեպքերում համընկնում են:

Եբրայական աղբյուրների, մասնավորապես, Աստվածաշնչի համապատասխան մասերի և Խորենացու պատմության մեջ շատ ընդհանրություններ կան»[290]*:*

Արարատյան երկրի արքայական դինաստիաների մասին

«Հայերն աշխարհի հնագույն ժողովուրդներից մեկն են»[291]*:*

Այսպիսով, նորից անցնենք Հայաստանում Սարդուրի III-ի ժամանակ ստեղծված քաղաքական վիճակին: Այդ ժամանակ Արարատյան երկրում տիրող իրավիճակն օրեցօր ավելի անորոշ և վտանգավոր էր դառնում, քանզի դաշինք կնքելով Ասորեստանի արքա Աշուրբանիպալի հետ՝ Սարդուրի III-ն իրեն թշնամի դարձրեց բոլոր այն երկրների արքաներին, որոնք թշնամաբար էին տրամադրված Ասորեստանի հանդեպ:

Չնայած որ Աշուրբանիպալի ժամանակ Ասորեստանը հասել էր մեծ հզորության, և Սարդուրին, ունենալով նման հզոր դաշնակից, կարող էր չանհանգստանալ արտաքին վտանգների համար, սակայն Աշուրբանիպալի թագավորելու վերջին տարիներին կայսրությունն սկսեց աստիճանաբար անկում ապրել:

«Աշշուրբանիպալի կառավարման վերջին տարիները նշանավորվեցին ուժգնացող քաոսով, գրությունները դարձան մասնատված, ժամա-

---

290 Ռ.Ա. Իշխանյան, Հայ ժողովրդի ծագման ու հնագույն պատմության հարցեր, Երևան 1988 թ., էջ 74–75, 77:

291 В. Желиховской, Закавказье, С.–Петербургъ 1885 г., ст. 63.

նակագրությունները թերի էին: Բայց դատելով էմանի հանդեպ ունեցած նրա վերաբերմունքից՝ թագավորը դարձել էր ավելի անհոգ իր մարզերի կառավարման հարցերում: Գուցե նա հիվանդ էր կամ ծերացել էր, 630 թվից մինչեւ 627 թիվը՝ մինչ իր մահը, կայսրությունը նրա անունից նրա իսկ շահերից ելնելով՝ ղեկավարում էր նրա որդին՝ Աշշուր-էտիլ-իլանին: Իհարկե, հարևան պետություններն անում էին, ինչ որ կամենում էին, քանի որ այլևս չէին վախենում Ասորեստանի միջամտությունից»[292]:

Իսկ երբ Աշուրբանիպալը վախճանվեց, այդ ժամանակ Սարդուրի III-ի վիճակը վատթարացավ, քանզի Աշուրբանիպալին փոխարինող նրա որդիները չունեին իրենց հոր արքայական որակները: ***«Երբ Աշուրբանիպալը, ի վերջո, 627 թ. մահացավ, անկարգությունները տարածվեցին կայսրության գրեթե բոլոր մասերում»***[293]:

Ասորեստանյան տերության հպատակ երկրները, տեսնելով իրենց համար այդ բարենպաստ վիճակը, սկսեցին ապստամբության դրոշ բարձրացնել և դուրս գալ կայսրության կազմից: Իհարկե, որոշ անհաջող փորձեր արվեցին կայսրության փլուզումը կանխելու համար, բայց արդեն նախկին հզորությունը կորցրած ասուրական բարոյազուրկ և անկանոն բանակը էլ չկարողացավ ապստամբությունների դեմն առնել:

Ասորեստանի միակ դաշնակիցը մնաց Հայաստանը՝ Սարդուրիի գլխավորությամբ: Սակայն Արարատյան երկրի ներսում էլ սկսվեցին ապստամբական խմորումներ տեղի ունենալ, իշխանական տներից ոմանք դժգոհ էին Սարդուրիի քաղաքականությունից, քանզի նա բավական չէ, որ հարևան երկրներին իրենց թշնամի դարձրեց՝ դաշնակցելով Ասորեստանի հետ, այժմ էլ չէր ցանկանում խզել դաշինքը մի երկրի հետ, որ ամեն րոպե կարող էր փլուզվել և իր ավերակների տակ ճզմել նաև իր միակ դաշնակցին՝ Արարատյան թագավորությանը: Այդ ժամանակ էլ իշխանական տներից մեկն ապստամբություն բարձրացրեց Սարդուրիի դեմ. սկսվեց ներքին քաղաքացիական պատերազմ, և քանի որ դժգոհները շատ էին, նրանք էլ միացան ապստամբ իշխանին:

Իսկ այդ իշխանը, ըստ պատմաբանների, եղել է Մովսես Խորենացու պատմության մեջ հիշատակվող հայոց նախարարներից մեկը՝ Պարույրը: ***«Պարույրը՝ Սկայորդու որդին, եղել է Աշուրբանիպալի և վերջին ասորեստանյան արքաների ժամանակակիցը»***[294]:

---

292 Сьюзен Уайс Бауэр, История Древнего мира. Москва 2018 г., ст. 506.

293 Сьюзен Уайс Бауэр, История Древнего мира. Москва 2018 г., ст. 507.

294 Б.Б. Пиотровский, Ванское царство (Урарту), Москва 1959 г., ст. 12.



Սարդուրին օգնության խնդրեց Ասորեստանից, որն էլ արդեն կորցնելով իրեն ենթակա բոլոր երկրները՝ պարփակվել էր իր սահմաններում: Չուզենալով կորցնել իր վերջին դաշնակցին ևս՝ Ասորեստանի տիրակալն իր բանակն ուղարկեց Սարդուրիին օգնության:

«Բաբելոնյան ժամանակագրությունը (Բրիտանական թանգարանի թիվ 21 901 սեպագիր ցուցանակ), որը նկարագրում է 616-609 ԹԹ. իրադարձությունները, ըստ երևույթին, պատմում է Նաբուպալասարի 609 թ. արշավանքի մասին դեպի Ուրարտու, սակայն այդ արշավի արդյունքները մեզ անհայտ են մնում, քանի որ ժամանակագրության տեքստը կտրվում է»[295]*:*

Հավանաբար, հենց տեքստի կտրված լինելը թույլ չի տվել տեսնել, որ արշավանք՝ դեպի Ուրարտու, այդ ժամանակ իսկապես եղել է, սակայն ոչ թե Սարդուրիի դեմ, այլ նրան օգնելու համար՝ ընդդեմ նրա հակառակորդ Պարույրի:

Իսկ պատերազմը երկրի ներսում սաստկանում է. ապստամբները, չկարողանալով դիմակայել Սարդուրիին հավատարիմ մնացած զորքին և նրան միացած ասորեստանցիներին, ետ քաշվելով, դիրքավորվում են երկրի արևելյան կողմերում մեդացիների սահմանամերձ տարածքներում: ***«Վանա լճից արևմուտք գտնվող Արմինի-Շուպրիա ցեղախմբերի հայկական ընկերակցությունը ժամանակավորապես անցնում է մեդացիների կողմը»***[296]*:*

Սարդուրին նորից երկրի հիմնական մասն իր իշխանության տակ է առնում, սակայն ավելի արևելք չի համարձակվում շարժվել ապստամբներին հետապնդելու համար՝ վախենալով մեդացիների հետ ընդհարումից: Իրենց գործն ավարտած համարելով՝ ասուրական բանակը շուտափույթ հետ է վերադառնում Ասորեստան, քանի որ նրա թշնամիները՝ բաբելացիները և մեդացիները դաշինք էին կնքել, ինչը մեծ սպառնալիք էր Ասորեստանի համար:

Այսպիսով, ասորեստանցիների օգնությամբ Վանի թագավորությունը Սարդուրիի գլխավորությամբ կանգուն է մնում. ***«Վանի թագավորությունը շարունակել է գոյություն ունենալ նաև Նաբուպալասարի արշավանքից հետո»***[297]*:*

---

295 Б.Б. Пиотровский, Ванское царство (Урарту), Москва 1959 г., ст. 116

296 Дэвид Ленг, «Армяне, народ – созидатель», Москва 2004 г., ст. 131.

297 Б.Б. Пиотровский, Ванское царство (Урарту), Москва 1959 г., ст. 116.

Պիոտրովսկին փաստում է, որ Նաբուպալասարի այդ արշավանքից հետո էլ Ուրարտուն դեռ կանգուն է մնացել, սակայն Սարդուրիի տիրապետությունը Վանի թագավորությունում կանգուն է մնացել հենց Նաբուպալասարի շնորհիվ։

Իսկ ապստամբներին գլխավորող նախարար Պարույրն էլ, ստեղծված իրավիճակից ելնելով, դիմում է մեդացիների արքա Վարբակեսին՝ օգնություն խնդրելով նրանից Սարդուրիի դեմ ելնելու համար։ Սակայն Վարբակեսն այդ ժամանակ նախապատրաստական աշխատանքներ էր տանում Ասորեստանի դեմ պատերազմելու համար՝ բանակցելով սկյութների և բաբելացիների հետ, որպեսզի միասնական ուժերով կարողանան իրականացնել իրենց ծրագիրը։ Իսկ Սարդուրիին գահընկեց անելու համար ժամանակը բարենպաստ չէր, ինչի համար էլ Վարբակեսն առաջարկում է Պարույրին, որ նա իրեն հավատարիմ ապստամբ զորքերով միանա իր բանակին, և երբ միացյալ ուժերով գրավեն և կործանեն Ասորեստանը այդ ժամանակ էլ Սարդուրիին զրկելով իր միակ դաշնակից Ասորեստանից՝ կհարձակվեն և հեշտությամբ գահընկեց կանեն նրան։ Վարբակեսը նաև խոսք է տալիս, որ Պարույրին նեցուկ կդառնա, որպեսզի հենց նա նստի հայոց գահին։

***«Վարբակեսը... իր կողմն է գրավում նաև մեր քաջ նախարար Պարույրին՝ խոստանալով նրան թագավորության պատիվ և ձև»**[298]։*

Եվ ահա միասնական ուժերով մեդացիները, բաբելացիները, սկյութները և հայոց երկրի ապստամբ զորքերը հարձակվում են Ասորեստանի վրա։ Այդ ահռելի ուժի դեմ իր նախկին հզորությունը կորցրած Ասորեստանը էլ չի կարողանում դիմակայել։ Միացյալ զորքերը, քաղաք քաղաքի ետևից գրավելով, կործանում են երբեմնի հզորագույն երկիրը։

***«... Մեր Պարույրը եղավ Սարդանապալի ժամանակ։ Սա ոչ փոքր օգնություն է ցույց տվել մարացի Վարբակեսին՝ թագավորությունը Սարդանապալից վերցնելիս»**[299]։*

Իհարկե, ինչքան էլ որ տկարացած լիներ Ասորեստանը, ամեն դեպքում, կարողանում է դիմակայել թշնամական բանակին, և միայն մի քանի տարի հետո է հաջողվում իսպառ ջախջախել այդ աշխարհասասան կայսրությունը։

«Բաբելացիները և մեդացիները 612 թվականին գրավում են Նինվեն։ Սակայն Ասորեստանը դեռ չի հանձնվում։ Մի քանի ասուրական գնդեր անցնում են արևմուտք՝ հասնելով Եփրատի մոտ, և այնտեղ շարունակում դիմադրությունը, ինչը վերջացավ 605 թ. բաբելական և մեդական զորքերի կողմից Կերխեմիշի գրավումով։ Ասորեստանյան պետությունը դադարեց գոյություն ունենալ։ Այդպես ավարտվեց պետության պատ-

---

298 Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, Երևան 1990 թ., էջ 43։

299 Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, Երևան 1990 թ., էջ 40։

մությունը, որը համեմատաբար կարճ ժամանակում իրեն հնազանդեցրեց ամբողջ հին Արևելքը»[300]*:*

*Հետաքրքիր է, որ Արարատյան երկիրը (Ուրարտուն) և Ասորեստանը մոտ 300 տարվա ընթացքում միշտ հակամարտության մեջ են եղել, և միայն այդ վերջին շրջանում է, որ դարձել են դաշնակիցներ: Դրա մասին է ասում նաև այն, որ Ասորեստանի դեմ այդ վերջին պատերազմում մեդա-սկյութական միացյալ ուժերի հետ իրենց մասնակցությունը չէին բերել նաև Սարդուրիին հավատարիմ մնացած հայկական զինված ուժերը: **«Ըստ երևույթին, Ուրարտուն Ասորեստանի նման ապրում էր ծանր ժամանակներ և չի մասնակցել իր դարավոր թշնամու՝ Ասորեստանի դեմ մղված պատերազմին»***[301]*:*

*Տեսնում ենք որ Բ. Պիոտրովսկին իր զարմանքն է հայտնում՝ ուրարտական զորքին չտեսնելով Ասորեստանի դեմ պատերազմի ելած այդ բանակի կազմում: Սակայն նրանց բացակայության պատճառը միանգամայն այլ է. նրանք այս անգամ ոչ թե Ասորեստանի հակառակորդներն էին, այլ՝ դաշնակիցները: Բայց Սարդուրիի գնդերը բացակայում էին նաև արդեն դաշնակից դարձած ասուրական բանակի կողքին, իսկ դրա պատճառն էլ, ինչպես ասում է Պիոտրովսկին այն է, որ **«Ուրարտուն Ասորեստանի նման ապրում էր ծանր ժամանակներ»**, և այդ պատճառով էլ չի կարողացել օգնական ուժեր ուղարկել իր դաշնակցին նեցուկ լինելու համար:*

*Այսպիսով դադարեց այս բռնակալ տերության գոյությունը, և սա անցավ պատմության փոշու տակ ծածկված երկրների շարքը: Ասորեստանի վերջնական կործանման ժամանակ թագավորում էր արդեն Աշուրուբալիտը, ով էլ շրջափակված մեդացիների և նրա դաշնակից զորքերով հրդեհի է մատնում իր թագավորական պալատը իրեն և իր մերձավորներով և գանձերով հանդերձ: **«Ասորեստանի վերջին թագավորը, Աշուրուբալիտը, պետք է նահանջեր Խառան, որտեղ նա կարողացավ դիմանալ մինչև 610 թվականը, և 605 թվականին, Կարխեմիշի անկումից հետո, Ասորական պետությունը դադարեց գոյություն ունենալուց»***[302]*:*

Տեսնում ենք, որ այդ պատերազմը կայծակնային արագությամբ չէ, որ ավարտվել է այլ տևել է մոտ յոթ տարուց ավել: Իսկ հաղթանակից հետո էլ Վարբակեսը, դառնալով կայսրության տեր, այն կարգավորելու ջանքերով է տարվում, և միայն տարիներ անց է, որ հարմար է գտնում Պարույրին տրված խոստումը իրականացնել, այսինքն Սարդուրի III-ին գահընկեց անել, որպեսզի իր մտերիմ Պարույրին աջակցի նստել Հայոց գահին:

«Մ.թ.ա. VII դարի վերջերին Վանի թագավորական տան ներսում

---

300 В. В. Струве, История древнего Востока, Москва 1941 г., ст. 342.

301 Б.Б. Пиотровский, Ванское царство (Урарту), Москва 1959 г., ст. 127.

302 Б.Б. Пиотровский, Ванское царство (Урарту), Москва 1959 г., ст. 116.

գժտություններ են ծագում, ուժեղանում է ընդդիմական իշխանական մի այլ տուն... որոնք դաշնակցած մարերի ու սկյութների հետ՝ պայքարում են գահի համար»[303]:

Ի վերջո Վարբակեսը իր և դաշնակից սկյութացիների զորքերի գլուխն անցնելով միանում է Պարույրի գլխավորած հայկական գնդերին և միասնաբար ներխուժում Արարատյան երկրի սահմաններից ներս:

«Ասորեստանի հակառակորդները 609 թ. ելան արշավի Ուրարտուի դեմ: Այս մասին են պատմում Նաբուպալասարի ժամանակագրությունից պահպանված վերջին տողերը»[304]:

Պատերազմ

Սարդուրին, որ արդեն 35 տարի է, ինչ գահակալում էր Հայաստանում, իր ամբողջ ուժերը կենտրոնացնելով՝ ելնում է դիմակայելու մեդացիների և սկյութների հզոր բանակին, որոնց երկրի խորքերն էր առաջնորդում Պարույրը:

«Մ.թ.ա. 612 թ. սկյութա-մեդական և բաբելական միացյալ զորքերի հարվածների տակ կործանվեց Ասորեստանը... Ինչպես պարզվում է ուրարտական հնավայրերի և գրավոր աղբյուրների ուսումնասիրությունից, Ուրարտուի դեմ նույնպես գործում էին սկյութա-մեդական միացյալ զորքերը»[305]:

Սարդուրին հեշտությամբ տեղի չի տալիս թշնամական բանակին, սակայն դա ավելի վատ հետևանքներ է ունենում երկրի համար, քանի որ ամեն մի ամրոցի դիմակայությունը կոտրելու նպատակով այդ միասնական ուժերը ստիպված այրում և հողին էին հավասարեցնում այն:

«Մեդացիներն ու սկյութները սկսեցին ռազմական արշավներ իրականացնել Ուրարտուի դեմ՝ փակելով լեռնանցք լեռնանցքի ետևից, արգելափակելով մի բերդաքաղաքը մյուսի ետևից: Ուրարտուի միջնաբերդերի պարիսպներում, պեղված երկու հազար տարի անց, հայտնաբերվեցին սկյութական նետերի ծայրակալներ, որոնք մխրճվել էին նրանց մեջ ինչպես մուշկետի փամփուշտներ:

Ուրարտուի հյուսիսային սահմանին հայտնաբերվել են Թեյշեբաինի քաղաքի (այժմ՝ Կարմիր բլուր) փլված փայտե տանիքները, որոնք լեցուն էին մրոտած սկյութական նետերի ծայրակալներով: Այրվող նետերը,

---

303 Ռ.Ա. Իշխանյան, Հայ ժողովրդի ծագման ու հնագույն պատմության հարցեր, Երևան 1988 թ., էջ 93:

304 Б.Б. Пиотровский, Ванское царство (Урарту), Москва 1959 г., ст. 127.

305 Հարություն Մարտիրոսյան, Քարի դարից Ուրարտու, Երևան 1971, էջ 127:

որոնք ուղղված էին քաղաքի վրա, հրկիզել են այն»[306]*:*

Արգիշտիխիլինի և Թեյշեբաինի քաղաքները հիմնահատակ ավերվեցին և կրակի մատնվեցի, Սարդուրին քաղաք քաղաքի ետևից կորցնում էր: Երկիրը բաժանվել էր երկու մասի մի կողմը բռնել էր Սարդուրիի, իսկ մյուս կողմը Պարույրի կողմը, սակայն արդեն էլ չկար Սարդուրիի դաշնակից Ասորեստանը, իսկ Պարույրի մեջքին կանգնած մեդացիները և սկյութները մեծ ուժ էին ներկայացնում, ինչին դիմակայելը դառնում էր անհեռանկարային:

«Թեյշեբաինիի և Արգիշտիխինիլիի պեղումներով բացահայտվեց ուրարտական քաղաքների կործանման սարսափելի պատկերը: Ամենուրեք մոխրի, վառված գերանների, խորտակված տանիքների հզոր շերտեր, այրված, սևացած պատերի ու գերանների տակ սպանված, խորովված կանայք, աղջիկներ, տղամարդիկ, ջարդուփշուր արված կահկարասիներ, թալանված զամբյուղների, արկղերի, պարկերի մնացորդներ, խուճապի ժամանակ թողնված զենքեր, զրահներ և այլն»[307]*:*

Այսպիսով, այդ միասնական բանակը, կործանելով Սարդուրիին հավատարիմ մնացած քաղաքները, ի վերջո գրավում է ամբողջ երկիրը: Սարդուրին էլ, հավանաբար, այդ քաղաքներից մեկի ավերակների վրա կնքում է իր մահկանացուն: Հնարավոր է, որ նա ընկել է թշնամական հարվածներից հենց Կարմիր Բլուրի տեղում գտնված Թեյշեբանի բերդաքաղաքում: ***«Թեյշեբաինիի հնագիտական պեղումները բացահայտել են Անդրկովկասում Ուրարտուի վերջին հենակետերի կործանման վառ պատկերը. դրանք վերցվել են գրոհով, թալանվել ու հրկիզվել հաղթանակողների կողմից»***[308]*:*

Ինչպես որ Պարույրը չանք չէր խնայել Վարբակեսին օգնելու համար Ասորեստանի գրավման գործում, այդպես և Վարբակեսը նրան հատուցեց՝ ըստ պատշաճի: Իրենց գործը ավարտած համարելով՝ Վարբակեսը հրաման տվեց զորքին պատրաստություն տեսնել Հայոց երկիրը լքելու համար:

Տեսնում ենք, որ հարցին նման մոտեցումը մինչ այժմ չպարզաբանված շատ հարցերի պատասխան է տալիս: Օրինակ, եթե Պարույրն իր գնդերով չի մասնակցել Սարդուրիի դեմ եղած պատերազմին՝ որպես մեդացիների դաշնակից, ապա այդ դեպքում ստացվում է, որ Արարատյան երկրի վրա հարձակվելով՝ մեդա-սկյութական հզոր բանակը, գրավում է ամբողջ երկիրը, բայց դրանից անմիջապես հետո ոչ մի մեդացի կամ սկյութացի չի մնում իրենց գրաված երկրում, այլ՝ միայն հայերը: Եվ դա

---

306 Сьюзен Уайс Бауэр, История Древнего мира. Москва,э 2018 г., ст. 506.

307 Հարություն Սարտիրոսյան, Քարի դարից Ուրարտու, Երևան, «Հայաստան» հրատ. 1971 թ., էջ 128–129:

308 История древнего востока, под ред. В.И. Кузищина (изд. III, переработанное и дополненное), Москва 2005 г., ст. 209.

իսկապես այդպես է, սակայն պատճառն էր անհայտ այդ տարօրինակ վարքագծի, իսկ վերը կարծում ենք, դրա տրամաբանական և հիմնավոր պատասխանը տրվեց։

Ըստ որոշ պատմաբանների՝ Արարատյան երկրի կործանմանը մասնակցել են նաև հայեր, և պարզ չէ, թե ինչ հայեր էին, եթե երկիրը միշտ էլ բնակեցված է եղել հայերով, ուրեմն հստակ էր, որ դա եղել է Պարույրն իրեն հավատարիմ զորագնդով։

*Այս ամենի վերաբերյալ շատ խոսուն են Ռաֆայել Իշխանյանի մտորումները. **«Ասում են՝ 590 թ. մարերն ու սկյութները կործանեցին Ուրարտուն, և առաջացավ Հայաստան։ Սա է «ուրարտական» տեսություն-կաղապարի մի գլխավոր կետը։***

Իհարկե, շատերն էին կասկած հայտնում այդ զարմանալի տեսության նկատմամբ, այդ թվում հենց իրենք՝ դրա մասնագետները։ Օրինակ, անվանի սեպագրագետ Մարգարիտ Իսրայելյանը, որ ընդհանրապես պաշտպանում էր նշված պատկերացումը, գրեց. «Ստացվում է այսպես՝ արշավեցին սկյութացիք և մեդացիք, բայց երկրին տեր դարձան հայերը»[309]։ Իրոք, շատ զարմանալի էր. այդ ի՞նչ կախարդական արշավանք է եղել, որով ջնջվեց «Ուրարտուն» և «հայտնվեց» Հայաստանը։ Ուրեմն մարերը (մեդացիները) և սկյութները իրենց «հրաշք» արշավանքով ստեղծեցին Հայաստան ու հայեր։

Նույն հեղինակն ավելի վաղ՝ 1966 թ. գրել էր այսպես. «Ուրարտական պետության կազմավորումն էլ կատարվել է Հայկական լեռնաշխարհի տեղաբնիկ, այդ թվում նաև՝ լեզվաբանորեն հնդեվրոպական համարվող... բազմաթիվ հայկական ցեղախմբերի գործուն մասնակցությամբ»[310]։ Իսկ հետո ավելացրեց, որ «Ուրարտուի» կործանմանն էլ են մասնակցել հայերը։ Զևակերպումը հակասական է, բայց իր մեջ պարունակում է պատմական իրողություն, քանի որ, ինչպես կտեսնենք, մ.թ.ա. IX-VII դարերում Մեծ Հայքի տարածքում եղել է Վանի տերությունը, որն, իրոք, հիմնադրել է հայկական մի իշխանական տուն, որին տապալել է հայկական մի այլ իշխանական տուն»[311]։

Այսպիսով կարծում ենք, որ այս իրավիճակին նման տեսանկյունից նայելը լիովին պարզաբանում է այն խնդրահարույց հարցերը, որոնք մինչ օրս եղել են Հայոց պատմության տվյալ ժամանակահատվածում։

---

309 Մ. Իսրայելյան, Էրեբունի, Երևան 1971 թ., էջ 117:

310 «Հայրենիքի ձայն», 1966 թ., № 5:

311 Ռ.Ա. Իշխանյան, Հայ ժողովրդի ծագման ու հնագույն պատմության հարցեր, Երևան 1988 թ., էջ 52–53:

Թագադրում

Իսկ այժմ անցնենք առաջ և տեսնենք, թե ինչ տեղի ունեցավ Հայոց աշխարհում Պարույրի դաշնակիցների՝ երկրից հեռանալուց հետո։

Պարույրը հաղթանակեց. սակայն այդքանով հարցերն ամբողջովին դեռ լուծված չէին. ճիշտ է, ամբողջ երկիրը հպատակվեց նրան, սակայն Պարույրն ընդամենը նախարար էր և իշխան, բայց ոչ մինչ այս պատերազմը գործող արքաների շառավղից։ Իսկ լինելով միայն իշխան՝ Պարույրը չէր կարող նստել արքայական գահին, քանի որ նա հաջորդաբար չէր ժառանգել Արարատյան երկրի թագն ու գահը և համապատասխան ծեսը և արարողություններն էլ չէին կարող իրականացվել նրա վրա, քանզի իշխող դինաստիայի վերջին արքան՝ Սարդուրին սպանվել էր պատերազմում, և դրանով էլ այդ դինաստիայի գոյությունը դադարել։ Միակ ելքն այն էր, որ մի այլ արքայատոհմից նրան արքայական թագ շնորհվեր։ Իսկ նման արքա կարող էր լինել հենց մեդացի Վարբակեսը, ով արդեն իսկ խոսք էր տվել Պարույրին այդ թագը։

Այսպիսով, Վարբակեսը չզլացավ իր խոստումն իրականացնել՝ Պարույրին որպես Հայոց արքա ընդունելու։ Հասնելով իր երկիրը՝ մարերի արքա Վարբակեսը թագ է ուղարկում իր բարեկամ և դաշնակից Պարույրին, և սա էլ օրինական թագադրումով նստում է հայոց գահին։ ***«Վարբակեսը քաջ մարդկանցից առատաձեռնությամբ ավելացնում էր իր բարեկամների քանակը, նրանց հետ նաև մեր քաջ ու ճարպիկ Պարույրին իրեն միացնելով՝ թագավորության ձև ու շուք է տալիս նրան»***[312]*։*

Հայաստանում դադարեց գործող արքայական դինաստիայի ներկայացուցիչների գահակալումը, և Հայոց գահը ժառանգեց մի ուրիշ դինաստիա, որի ներկայացուցիչները՝ սկսած Պարույրից, սկսեցին թագավորել Արարատյան երկրում։ ***«Պարույրը՝ Սկայորդու որդին, ռազմական օգնություն ցույց տվեց մեդացիներին և բաբելացիներին Ասորեստանի կործանման գործում, և դրա համար էլ 612 թ. ստացավ ինքնուրույնություն և թագավորական պսակ»***[313]*։*

---

312 Հովհաննես Դրասխանակերտցի, Հայոց պատմություն, Երևան 1996 թ., էջ 22:

313 Б.Б. Пиотровский, Ванское царство (Урарту), Москва 1959 г., ст. 127.

Պարզաբանումներ

Ելնելով սեպագիր արձանագրությունների և Մովսես Խորենացու պատմության՝ մեզ հասած տեղեկություններից՝ աշխատեցինք ինչ-որ չափով պատկերել տվյալ դրամատիկ շրջանում տեղի ունեցած դեպքերը։

Իսկ այժմ աշխատենք պարզել, թե ով էր այդ ապստամբ իշխան Պարույրը, որ գրավեց հայոց գահը։ Նախ ինչպես ասվեց, նա տվյալ արքայական դինաստիային չէր պատկանում, և ոչ միայն այդ դինաստիային չէր պատկանում, այլև այդ դինաստիայի արքաների ազգակիցը չէր։ Իսկ նման դեպքում կարելի է եզրակացնել, որ կամ այդ դինաստիային պատկանող արքաները հայկական ծագում չունեին, կամ էլ այդ իշխանն է պատկանել ուրիշ ազգի։ Եվ իսկապես մի ինչ-որ ժամանակ հայկազյան դինաստիայի արքաներին փոխարինել են այլ ծագում ունեցող դինաստիայի ներկայացուցիչներ։

Այդ տեղեկությունը մեզ հասցրել է Մովսես Խորենացին՝ չնայած հստակություն չկա նրա խոսքում այն հարցում, թե երբ է այդ օտար դինաստիայի առաջին արքան նստել հայոց գահին։ Ոմանք կարծում են, որ դա Անուշավանն է եղել, սակայն Անուշավանը հայոց արքա Արա Գեղեցիկի թոռն էր, այնպես որ դա լիովին բացառվում է, իսկ մյուս կարծիքը վերաբերվում է Պարետին։

«Անուշավանի վախճանից հետո նստեց Պարետը, որ Անուշավանից չէր սերում «Նրա զավակներից և ցեղից ոչ ոք չի իշխում իր հայրենի երկրին, այլ ուրիշները տիրեցին, որոնք ոչ թե ազգականներ էին, այլ Թորգոմյան ազգի մեջ առաջադիմությամբ աչքի ընկնողներ, որոնց անունները սրանք են Պարետ... (աստեղ թվարկվում է ամբողջ արքայացանկը մինչ Սկայորդին)։ Այդ բոլորից հետո Հայկի ցեղից Պարույրը, այդ ժամանակ դուրս քշելով ոչ ազգականներին ու կրկին վերականգնելով իր հայրենի իշխանությունը, թագավորում է»[314]։

Սակայն Պարետը, որ Անուշավանից հետո նստեց Հայոց գահին, չնայած որ Հայկ նահապետից հետո թագավորած արքաների ուղիղ շառավղից չէր, սակայն սերվել էր մեր մեծ նահապետ Հայկի մյուս որդիներից։ Այսինքն հայկազուն էր, սակայն ոչ արքայական դինաստիայից։ Ըստ հավանականության Պարետից սկսված այդ արքայատոհմը շարունակվեց մինչ Արամեն, իսկ նրանից հետո գահին նստեցին արդեն ոչ հայկազուն արքաներ։

Ըստ այս տրամաբանության՝ հայկազուններից օտար դինաստիայի փոխվելը եղել է շատ ավելի ուշ, հենց «ուրարտական» շրջանում։ Թե հայկազուններից ուրիշ դինաստիայի անցնելը և թե այդ օտար դինաստիա-

[314] Հովհաննես Դրասխանակերտցի, Հայոց պատմություն, Երևան 1996 թ., էջ 22:

յից նորից հայկազուններին անցնելը, երկուսն էլ, կարծում ենք, որ եղել են «ուրարտական» շրջանում: Իսկ այդ կարծիքը հիմնավորելու համար մենք պետք է նորից ետ գնանք մինչև Արարատյան երկրի (Ուրարտուի) առաջին արքա Արամեի այսինքն՝ Արամ II-ի ժամանակները:

Հայկազուններից անցումն այլ դինաստիայի

Հիշենք, որ Հայաստանը գտնվում էր պառակտված վիճակում, երբ հայոց արքա Արամեի ջանքերով այն նորից միավորվելով դարձավ մի ամբողջական տերություն մի տիրակալի՝ Արամեի գլխավորությամբ: Ասորեստանի հետ ծանր պատերազմների մեջ հարատևելով՝ նա կարողացավ հասնել մեծ արդյունքի երկրի բարգավաճման գործում:

Ըստ գիտնականների՝ Ուրարտուում շատ խիստ էր դրված արքայական գահի՝ հորից որդուն ժառանգաբար փոխանցման կարգը, սակայն Արամեի պարագայում կարծես դա չի գործել, քանզի Արամեից հետո գահը ժառանգում է մի արքա, որի հայրը միանգամայն ուրիշ անվանում է կրում:

«Գ.Ա. Մելիքիշվիլին նշում է, որ ըստ ասուրական աղբյուրների՝ 845-թ. Ուրարտուի թագավորը եղել է Արամեն, իսկ տասներկու տարի հետո նույն աղբյուրներում ուրարտական տիրակալը կոչվում է Սարդուրի (Սիդուրի), որ ըստ Վանի նահանգի բերդաքարերի վրա եղող արձանագրությունների՝ եղել Լիտուպրիի որդին, այլ ոչ՝ Արամեի»[315]*:*

*Տեսնում ենք, որ Արամեին փոխարինեց ոչ իր՝ Արամեի որդին, այլ մի ինչ-որ Լիտուպրիի որդի Սարդուրի, և հենց այս պարագայից ելնելով էլ պատմաբանները եզրակացրել են, որ այդ ժամանակ դինաստիական փոփոխություն է տեղի ունեցել Հայաստանում: **«Մեզ նաև հայտնի չէ թե արդյոք Լիտուպրին Արամեի որդին էր, թե նա ներկայացուցիչն էր մի ուրիշ դինաստիայի»***[316]*:*

*Այս խնդիրը մտահոգել է ոչ միայն հայ պատմաբաններին, այլև Ուրարտուի պատմությամբ հետաքրքրվող այլ գիտնականներին նույնպես, որոնք ևս նոր դինաստիայի մասին են մտորել: **«Վերջինս (Սարդուրին) իրեն անվանում է Լուտիպրիի որդի (միգուցե, ծագել է ուրիշ դինաստիայից)»***[317]*:*

---

315 Б.Б. Пиотровский, Ванское царство (Урарту), Москва 1959 г., ст. 59.

316 Н. В. Арутюнян, «Биайнили» (Урарту), Ереван, 1970 г., ст. 120.

317 Б.А. Тураев, История древного востока, част II, С.–Петербургъ. 1913 г., ст. 47.

Այս պարագայից ելնելով՝ մենք կարող ենք համարել, որ Արամեն շարունակողն էր Հայկազյան արքայական դինաստիայի, իսկ այս դինաստիական փոփոխության արդյունքում հայոց գահին նստեց՝ ուրիշ ծագում ունեցող մեկը՝ այսինքն Լիտուպրիի որդի Սարդուրին, և նրանից հետո արդեն սկսվեց նորից խստությամբ պահպանվել գահը ժառանգաբար փոխանցելու կարգը։

«Գ.Ա. Մելիքիշվիլին ուշադրություն է դարձնում այն փաստի վրա, որ Սալմանասար III-ի իշխանության առաջին տարիներին Ուրարտուն դեռևս իրենից ամուր միություն չէր ներկայացնում, և կարծիք է հայտնում, որ Արամի ցեղի պարտությունից հետո ցեղերի դաշինքի առաջնությունը կարող էր փոխանցվել ուրիշ ուրարտական ցեղի, որի առաջնորդը եղել է Սարդուրին, Լուտուպրիի որդին»[318]*։*

Այսպիսով տեսնում ենք, որ Հայոց գահին հայկազուն Արամեից հետո նստում են օտար ծագմամբ արքաներ։ Իհարկե, այնպես չէ, որ մի ինչ-որ այլ ժողովուրդ գրավել է Հայաստանը և իր արքաներին նստեցրել Հայոց գահին. այդ մասին է ասում այն, որ ոչ մի ներխուժման մասին չի հիշատակվում արձանագրություններում։ Ուրեմն, հայոց իշխանական տներում եղել են նաև ոչ հայկական ծագում ունեցող ընտանիքներ, իսկ դա եղել է սովորական երևույթ, թե Հայաստանում և թե այլ երկրներում։ Օրինակ, բացի հայկազուններից հայոց գահին հետագայում նստել են թե պարթևներ, և թե Բագրատունիներ, իսկ իշխանական տներում էլ եղել են ճենական, ասուրական և այլ ծագմամբ տոհմեր։

*Բայց նրանք բոլորն էլ ամբողջովին տարրալուծվել են հայերի մեջ և հայացել, քանի որ նրանք Հայաստան են եկել իրենց փոքրաթիվ ընտանիքներով և ապա բարգավաճել՝ ամուսնական կապեր հաստատելով հայկազուն ընտանիքների հետ, որոնք միշտ եղել են Հայաստանում՝ որպես գերակշռող տարր։ Այդպես և Հայաստանում ապաստան գտած Ասորեստանի արքա Սենեքերիմի որդի Սանասարից առաջ եկան երկու հայտնի հայկական իշխանական տոհմեր. **«Սանասարը, ըստ Մովսես Խորենացու պատմածի, բնակություն է հաստատել Հայաստանի հարավ-արևելքում... նրանից սերվեցին Արծրունիների և Գնունիների տոհմերը»***[319]*։*

Այդպիսին էր և այդ ժամանակ Հայկազուն Արամեին փոխարինած ոչ հայկյան ծագում ունեցող իշխանական տունը։ Սրանք էլ եղել են քաջ և հայրենասեր մարդիկ, ինչպես որ Տրդատ արքան էր, որ ունենալով պարթևական ծագում, ջանադրաբար պահում էր Հայոց սահմանները թշնամական ներխուժումներից և հոգ տանում երկրի ներքին բարգավաճման համար, այդպես և՝ հայոց Աշոտ Ողորմած Բագրատունի արքան և ուրիշներ։

Իսկ թե ինչ ծագում ունեին այդ նոր դինաստիայի արքաները, դժվար

---

318 Б.Б. Пиотровский, Ванское царство (Урарту), Москва 1959 г., ст. 60.

319 Б.Б. Пиотровский, Ванское царство (Урарту), Москва 1959 г., ст. 112.

է ասել. կարծիք կա, որ Հայաստանում հայկազյան արքայատոհմին փոխարինել են պարթևները, նման կարծիք է հայտնել հայ գիտնականներից Վ. Ն. Խաչատրյանը, 1976 թ. տպագրված իր «Նաիրի և Արմինա» հոդվածում։

Այսպիսով հայոց գահին նստել էին ծագումով ոչ հայկազուն արքաներ, որոնք շատ հզորացրին երկիրը, քանզի համարյա 300 տարի Հայաստանը՝ որպես կայսրություն, Ասորեստանի միակ արժանի հակառակորդն էր։

Իսկ այժմ տեսնենք, թե ինչպես ավարտվեց արդեն այդ դինաստիային պատկանող արքաների տիրակալությունը, և ինչպես նրանց նորից փոխարինելու եկան հայկազուն արքաները։

Հայկազունների վերահաստատվելը հայոց գահին

«Բազմաթիվ, բազմատարր ու բազմաբնույթ ժողովուրդների շարքում է հնագույն, «առաջնաստեղծ» ցեղի հետաքրքրաշարժ մի մասունք, եթե կարելի է այսպես արտահայտվել՝ մարդկային ցեղի մի «ֆորմացիա», որ հայտնի է Արմենիայի ժողովուրդ անվամբ, կամ, ինչպես ինքն է իրեն կոչում, Հայկյան ժողովուրդ։ Այս ժողովուրդը, չնայած դարերի երկար, անհամար շարքերում իր ունեցած բազմաթիվ հեղաշրջումների, պահպանել և պահպանում է իր ազգային առանձնահատկությունը՝ համառ, միայն Արևելքին բնորոշ, հարատևությամբ»[320]։

Թագավորական դինաստիաների՝ մեկից մյուսին անցնելու հետ կապված պարզաբանումները հստակեցնելու և տեսնելու համար, թե ինչպես Արարատյան երկրի գահին նորից նստեցին հայկազուն արքաներ, այժմ անդրադառնանք վերջին երկու այն արքաներին, որոնց մասին ձեռնպահ մնացինք տեղեկություններ հայտնել ուրարտական արքաների վերաբերյալ ընդհանուր տեղեկություններ ներկայացնող բաժնում. այսինքն՝ Էրիմենին և Ռուսա III-ին։

Հարցը, թե ով նստեց Արարատյան երկրի գահին Սարդուրի III–ից հետո, որոշակի դժվարություններ է առաջացրել պատմաբանների մոտ,

---

320 Надеждинъ Николай Ивановичъ, Армяно–Григорианская Церков. Санкпетербургъ 1843 г., ст. 1.

քանզի խոսվում է երկու արքաների էրիմենի և Ռուսա III-ի մասին, սակայն այդտեղ որոշ թյուրըմբռնում կա: Հարցն այն է, որ էրիմենի մասին հիմնականում ոչ մի լուրջ տեղեկություն չի պահպանվել ո՛չ ասորական, ո՛չ էլ հայկական արձանագրություններում: Նրա մասին միակ տեղեկությունը, որ հասել է մեզ, ընդամենը վերջին արքա Ռուսա III-ի անվան հետ է կապված, այսինքն՝ Ռուսայի մասին գրելիս գրել են «էրիմենի որդի Ռուսան»:

Այսինքն, պահպանվել է այդ անվանումն ընդամենը՝ որպես Ռուսայի հայրանուն: Սակայն եթե էրիմենին իսկապես գոյություն է ունեցել և թագավորել, ապա նա պետք է որ Սարդուրի III-ի որդին լիներ, սակայն նման որևէ ակնարկ չկա: Ինչից ելնելով՝ գիտնականների մոտ կարծիք է առաջացել, որ նման՝ էրիմեն, անվամբ արքա ընդհանրապես գոյություն չի ունեցել:

Իսկ եթե նման անձնավորություն գոյություն չի ունեցել, ուրեմն Սարդուրի III-ին պետք է փոխարինած լիներ Ռուսա III-ը, այդ դեպքում ի՞նչ անել էրիմենի հետ: Պատմաբաններից ոմանք, այս ամենից ելնելով, եկել են այն եզրակացության, որ նախ «էրիմեն»-ը պետք է ընթերցել որպես «Արմեն» կամ «Արմենիա» և այդ գրառումն էլ պետք է կարդալ ոչ թե էրիմենի որդի Ռուսա, այլ ուղղակի էրիմենի, այսինքն՝ Արմենիայի Ռուսա կամ Հայաստանի Ռուսա:

«Հուշարձանների բացակայությունը, ինչպես՝ ուրարտական, այդպես և՝ ասորական, որոնք վստահաբար կարելի է վերաբերել էրիմենի կառավարման շրջանին, որոշ պատմաբանների համար հիմք է հանդիսացել հեռացնել նրան Ուրարտուի թագավորների ցուցակից, քանի որ նրանց կարծիքով չկա պատմություն առանց գրի առնված փաստերի: Առաջարկվել է մի այլ ենթադրություն ևս, որ էրիմենան ընդհանրապես գոյություն չի ունեցել և, որ վերջինի արքա Ռուսայի հայրանունը պետք է հասկանալ որպես էրիմեն (Արմենիա) երկրի Ռուսան»[321]:

Մի այլ տարբերակն էլ, որ առաջարկվել է՝ այդ առեղծվածային էրիմեն անվան հետ կապված, այն է, որ ոչ թե պետք է հասկանալ «Արմենիայի՝ Հայաստանի Ռուսա», այլ ուղղակի «Արմեն Ռուսա», այսինքն «Հայ Ռուսա»: ***«Արժե այստեղ բերել Ռիչարդ Բարնեթտի կարծիքը, ով համարում է, որ Ուրարտուի վերջին թագավոր Ռուսա III (մ.թ.ա. 605-590 թթ.) «էրիմենի որդին», իրականում եղել է հայազգի ուզուրպատոր, և «էրիմենայի որդի Ռուսայի» փոխարեն նրան պետք է տիտղոսավորել որպես «Ռուսա արմեն (Ռուսա հայ)»»***[322]:

Տեսնում ենք, որ ըստ պատմաբանների՝ Ռուսան եղել է ուզուրպատոր, այսինքն՝ ***«անձ, որն իր ձեռքն է վերցրել գերագույն իշխանությունը***

---

321 Б.Б. Пиотровский, Ванское царство (Урарту), Москва 1959 г., ст. 115.

322 Дэвид Ленг, «Армяне, народ – созидатель», Москва 2004 г., ст. 127.

ոչ թե իրավունքով, այլ՝ բռնության կամ ինտրիգների միջոցով»[323], *և ոչ միայն եղել է ուզուրպատոր, այլ հատկապես «հայազգի» ուզուրպատոր, ինչն էլ հստակ խոսում է այն մասին, որ տեղի է ունեցել իշխանափոխություն, մի դինաստիայից մեկ ուրիշի։*

Այստեղից էլ կարող ենք գալ եզրակացության, որ այն ապստամբ իշխանը իր ազգային ծագմամբ եղել է հայկազուն և ըմբոստության դրոշ բարձրացրել իշխող դինաստիայի վերջին ներկայացուցիչ՝ Սարդուրի III-ի դեմ, գահընկեց է արել նրան, գրավել գահը։

Իսկ թե ո՛վ գրավեց Հայոց գահը Սարդուրի III-ից, մենք արդեն տեղեկացանք՝ նա հենց Արարատյան երկրի նախարարներից մեկը՝ իշխան Պարույրն էր, որին այդ գահին նստեցրեց մարերի արքա Վարբակեսը։

Բայց և այդ ժամանակ Արարատյան երկրում, ըստ արձանագրությունների, Սարդուրի III-ին փոխարինել է Ռուսա III–ը, նա, որ անվանվում էր Արմեն՝ Հայ։ Այսպիսով, խոսքը միևնույն անձնավորության, այսինքն՝ Պարույրի մասին է։ Իսկ թե ինչո՞ւ՝ Ռուսա. հնարավոր է, որ նա երկու անուն էր կրում Պարույր և Ռուսա – Արմեն։ Քսենոֆոնի Կյուրոպեդիա գրքում, երբ Կյուրոսը խոսում է Հայոց արքայի հետ, նրան անվանում է Արմեն, սակայն հայտնի է, որ այդ արքայի անունը եղել է Երվանդ։ Ինչպես որ Կյուրոսը Երվանդին անվանում էր Արմեն, այդպես և Պարույրին անվանել են էրիմեն – Ռուսա, այսինքն՝ Հայ – Ռուսա։

Ասորեստանյան թագավորներն էլ տարբեր անվանումներով են հայտնի եղել, օրինակ Աշուրբանիպալին էլ անվանել են նաև Սարդանապալ։ ***«Խորենացին պատմում է հայ իշխան Պարույրի մասին, ով ապրել է Աշուրբանիպալի օրոք, որին նա, ինչպես և անտիկ գրողները, անվանում են Սարդանապալ»***[324]։

Նմանապես և Պարույրի դաշնակից Մարաստանի արքա Վարբակեսն ունեցել է ևս մեկ անվանում՝ Կիակսար։ ***«Ոմն հայոց թագավոր՝ Պարույրը, մ.թ.ա. 612 թ. մասնակցել է Նինվեի գրավմանը՝ ուս-ուսի կռվելով բաբելացիների և մեդացիների հետ՝ Կիակսար թագավորի գլխավորությամբ։ Որպես պարգև՝ Պարույրի թագավորական տիտղոսը հաստատվեց մեդացիների կողմից»***[325]։

Ուրեմն, ինչպես տեսնում ենք, տվյալ ժամանակներում երկու անվանում ունենալն ընդունված էր, չնայած, որ Պարույրը նստեց հայոց գահին՝ որպես նոր դինաստիայի թագավոր, և նրա մասին մեդացիների, պարսիկների, հույների մոտ եղած գրառումներում Պարույր անուն է օգտագործվել, բայց սեպագիր արձանագրություններում ավանդաբար իր

---

323 Словарь иностранных слов, вошедших в состав русского языка.– Павленков Ф., 1907 г.

324 Б.Б. Пиотровский, Ванское царство (Урарту), Москва 1959 г., ст. 126.

325 Дэвид Ленг, «Армяне, народ – созидатель», Москва 2004 г., ст. 131.

Ռուսա անվանումն է զետեղվել, և քանի որ նա այդ անվամբ արդեն երրորդ թագավորն էր, հիշվել է՝ որպես Ռուսա III։

Գիտնականները որոշ տարակուսանք ունեն այն կապակցությամբ, որ եթե Սարդուրիի ժամանակ կործանվել են այն քաղաքները, որ հիմնականում գտնվել են երկրի հյուսիսային մասերում, այսինքն՝ Արարատյան դաշտավայրի կողմերում, ուրեմն դրանք միանշանակ պետք է ընկնեին մեդացիների կամ սկյութների տիրապետության տակ, սակայն արձանագրություններն այլ բան են ասում։ ***«Եթե Անդրկովկասում Ուրարտական տիրապետության վերջը, որ եղավ Թեյշեբաինիի կործանմամբ, իրոք տեղի է ունեցել Սարդուրիի օրոք, ապա անհասկանալի է մնում Արարատյան հարթավայրում էրիմենի որդու՝ Ռուսայի գրությունները՝ հացահատիկային ամբարի կառուցման մասին։ Հնարավոր չէ, որ այդ ջախջախումից հետո Ուրարտուին հաջողվեր վերականգնել Հարավային Կովկասում իր գերիշխող դիրքը»***[326]։

Պիոտրովսկու զարմանքը տեղին կլիներ, եթե հարցին մոտենայինք՝ ըստ իր պատկերացումների. սակայն եթե նայում ենք՝ ըստ վերոբերյալ մոտեցման, ապա ամեն ինչ տեղն է ընկնում։ Այսինքն, Սարդուրիին պարտության մատնելուց հետո Պարույր – Ռուսան սկսում է վերականգնողական աշխատանքներ ծավալել՝ ջանալով վերացնել պատերազմի հետևանքով քայքայված տնտեսությունը, իսկ այդտեղ արդեն ոչ մի զարմանալի բան չկա։

Բայց և նորից շեշտենք, որ այդ հնագույն ժամանակների պատմության պարզաբանումը կապված է բավականին բարդությունների հետ, քանզի նույն դեպքերի հետ կապված պահպանվել են թե՛ սեպագիր արձանագրությունները և թե՛ հնագույն գրադարաններում պահպանված հին ձեռագրեր։ Ձեռագրերն ուսումնասիրվել են շատ վաղուց, իսկ սեպագրերը վերջին ուշ շրջաններում, իսկ դա, բնականաբար, կարող է որոշ տարուբերումների պատճառ լինել, որը ինչ-որ չափով նկատվում է նաև Խորենացու պատմության և սեպագիր արձանագրությունների միջև։

«Աքքադական և նորխուռիական արձանագրությունների տվյալների և Խորենացու վերոհիշյալ հաղորդումների միջև ժամանակագրական անհամապատասխանություններ կան, գահակալների հաջորդականության տարբերություններ, որոնք, ըստ երևույթին, ավելի շուտ Խորենացու օգտագործած աղբյուրների՝ գլխավորապես ժողովրդական զրույցների անստուգությունից են գալիս. ինչպես և՛ սեպագրերի, և՛ Խորենացու Պատմության այն լեզվական պատնեշի արդյունք են, որի մասին վերը խոսվեց։ Ամեն դեպքում, նշված և այլ կարգի աղերսները, նույնությունները լուրջ ու մանրակրկիտ քննության նյութ պետք է լինեն»[327]։

---

326 Б.Б. Пиотровский, Ванское царство (Урарту), Москва 1959 г., ст. 116.

327 Ռ.Ա. Իշխանյան, Հայ ժողովրդի ծագման ու հնագույն պատմության հարցեր, Երևան 1988 թ., էջ 79:

Այսպիսով, հիմնականում շատ բաներ թե՛ փաստացի, թե՛ տրամաբանորեն համապատասխանում են, իսկ որոշ անհամապատասխանություններն էլ, որ կան, կարծում ենք՝ ժամանակի ընթացքում կպարզաբանվեն։

Մշակույթի փոփոխություն

Այսպիսով, Հայոց արքայական գահին վերստին նստեց Հայկ Նահապետի շառավղից սերող արքա Պարույրը։ Քանի դեռ Արամեն չէր միավորել հայկական մասնատված պետությունները, Ասորեստանը հեշտությամբ իր իշխանության տակ էր կարողանում գցել նրանց և, հավանաբար, պարտադրում և իր մշակութային արժեքները, ինչի մասին է ասում նաև այն, որ սեպագրերի գրային համակարգը վերցվել էր ասորեստանցիներից. ճիշտ է, հետագայում որոշ փոփոխություններ արվեցին, բայց հիմքում մնաց նույն այդ համակարգը։ Եվ ոչ միայն՝ գրի հետ կապված, այլև մշակույթային այլ ճյուղերի վրա էլ իր ազդեցությունը թողել էր Ասորեստանը։ ***«Ընդունված է համարել, որ ուրարտական արվեստի վրա իր ուժեղ ազդեցությունն է թողել ասորեստանյանը»***[328]*։*

Արքունական կարգն ու ձևը, ռազմական ոլորտը նույնպես չխուսափեցին ասուրական ազդեցությունից։ ***«Ուրարտուի պալատական մշակույթը Ասորեստանից շատ բան է ընդունել՝ մեծարել թագավորին, արքայական զորքին, զորությանն ու ուժին՝ դրանց բոլոր դրսևորումներում»***[329]*։*

Բայց Ասորեստանի կործանումից հետո սեպագրային համակարգը կորցրեց իր արդիականությունը և Հայաստանում էլ արդեն Պարույրի թագավորական շրջանում աստիճանաբար սեպագրերից անցան այլ գրային համակարգերի։ Քանի դեռ մինչ Մեսրոպ Մաշտոցը Հայաստանում չկար սեփական գրային համակարգ, սկսեցին օգտվել հարևան երկրների գրերից։ ***«Շուրջ հազար տարի՝ մինչև մ.թ.ա. 5-րդ դարում հայոց այբուբենի գյուտը Սուրբ Մեսրոպ Մաշտոցի կողմից, հայերն իրենց պետական տարեգրությունները վարել են միջազգային առաջատար լեզուներով՝ իրաներեն, արամերեն և հունարեն»***[330]*։*

Տեսնում ենք, որ Արարատյան թագավորության արքայական դինաստիաների փոփոխության հետ նաև մշակույթային արժեքների փոփոխություններ էլ տեղի ունեցան։ Սակայն, դրանք ինչպիսին էլ որ լինեին, միևնույնն է, շատ մեծ ազդեցություն չեն թողել հայ ժողովրդի վրա,

328 Малая история искусств, Москва 1976 г., ст. 144.

329 История древнего востока, под ред. В.И. Кузищина (изд. III, переработанное и дополненное), Москва 2005 г., ст. 213.

330 Дэвид Ленг, «Армяне, народ – созидатель», Москва 2004 г., ст. 127

քանզի հիմնականում միշտ էլ գործել է բուն հայկական մշակույթը ինչն էլ նույնիսկ շատ առումներով դարձել է շրջակա երկրների համար բարգավաճման պատճառ. այնպես որ Հայաստանն անկախ որոշ օտար ազդեցություններից միշտ ունեցել է իր կայուն մշակույթը:

«Եվ այսպես. քանի որ Ուրարտու նշանակում է սոսկ Հայաստան, իսկ ուրարտացին էլ հայն է, ապա այն, ինչ ըստ աքքադերեն անվանման՝ մեր օրերում կոչվել է ուրարտական, ստույգ կլինի հայերեն անվանել հայկական, քանի որ ուրարտական միայն հայկական է նշանակում: Այսինքն՝ ուրարտական մշակույթը պետք է կոչել հայկական մշակույթ, ուրարտական ճարտարապետությունը՝ հայկական ճարտարապետություն և այլն:

Ինչ վերաբերում է մ.թ.ա. IX-VII դարերում Հայաստանին տրված տարբեր անուններին, ապա դարձյալ՝ այժմ ոչ մի հիմք չկա հայերենում աքքադական Ուրարտու ձևը գործածելու: Հայերեն խոսելիս կամ գրելիս, բնականաբար, պետք է գործածել Հայաստան-ը կամ Հայք-ը, իսկ եթե հարկ կա, Վանի հին տերությանը պատմական երանգավորում ունեցող անուն տալ, ապա՝ աքքադական Ուրարտու-ին համապատասխան աստվածաշնչային Արարատ անվանումը կա, որ արդեն իսկ իբրև Հայքի անվանում՝ հայերենում հնուց ի վեր գործածված է, և կարելի է գործածել նաև այժմ՝ Արարատ, Արարատի երկիր, Արարատի պետություն, Արարատյան թագավորություն և այլն»[331]:

Կրոնական առումով էլ փոփոխություններ եղան. Թեյշեբային, Շիվինին, Խալդին և բազմաթիվ այլ չաստվածների սկսեցին փոխարինել Արամազդը, Միհրը, Ահրիմանը, Անահիտը և այլ մեդա-հունական չաստվածություններ. նույնիսկ Հայոց ազգի առաջին թշնամի Բելի պաշտամունք էլ մի ինչ-որ ժամանակ ներմուծվեց այդ կռապաշտական պանթեոնի մեջ:

Իսկ Պարույրը հնարավորինս ջանաց վերականգնել պատերազմի հետևանքով ավերված քաղաքներն ու բնակավայրերը և, ընդհանրապես, երկրի բարգավաճման գործում չխնայեց ջանք և եռանդ: Նա ունեցավ մի որդի՝ շատ գրավիչ արտաքինով արքայազն Հրաչյային. ***«Պարույրն իր մահից հետո թողնում է իր որդի Հրաչեին, որը տեսքով ու անունով արժանի էր իր անվանը, քանի որ նա տեսնողներին միշտ զվարթաբար ու բոցեղեն աչքերով էր ընդառում»***[332]:

---

331 Ռ.Ա. Իշխանյան, Հայ ժողովրդի ծագման ու հնագույն պատմության հարցեր, Երևան 1988 թ., էջ 74:

332 Հովհաննես Դրասխանակերտցի, Հայոց պատմություն, Երևան 1996 թ., էջ 23:

Հրաչյա

Պարույրն արդեն միանգամայն օրինական կարգով իր արքայական գահը փոխանցեց որդուն՝ Հրաչյային: Հրաչյան մերձ հարաբերություններ մշակեց Բաբելոնի Նաբուգոդոնոսոր արքայի հետ:

Երբ Հրեաստանի արքա Հովաքիմը մեջքով կանգնեց Աստծուն՝ տրվելով կռապաշտությանը, և մոլորեցնելով իր ժողովրդին՝ նրանց էլ անարգ կուռքերի պաշտամունքին պարտադրեց, այդժամ Տերը՝ որպես պատիժ, հրեաների դեմ հանեց Բաբելոնի Նաբուգոդոնոսոր արքային:

***«Հովաքիմը չարիք գործեց Տիրոջ առջև՝ կրկնելով իր հոր արարքները: Այդ ժամանակ Երուսաղեմի դեմ ելավ Բաբելոնի Նաբուքոդոնոսոր արքան, եկավ ու պաշարեց քաղաքը: Բաբելացիների արքան Երուսաղեմ քաղաքը եկավ, երբ նրա զորականները պաշարված վիճակում էին պահում այն: Այն ժամանակ Հուդայի երկրի արքա Հովաքիմը, իր զորականները, մայրը, իշխանները, ներքինիները գնացին բաբելացիների արքայի մոտ, և բաբելացիների արքան իր թագավորության ութերորդ տարում գերեվարեց նրանց: Նա հանեց Տիրոջ տան բոլոր գանձերը, թագավորի տան գանձերը, ջարդեց այն բոլոր ոսկե անոթները, որ Իսրայելի Սողոմոն արքան պատրաստել էր տվել Տիրոջ տաճարի համար, ինչպես ասել էր Տերը: Ամբողջ Երուսաղեմը, բոլոր իշխաններին ու հզոր մարդկանց՝ տասը հազար հոգի, գերեվարեց, բոլոր հյուսներին ու դարբիններին տարավ: Երկրի աղքատներից, բացի ոչ ոք չմնաց: Նա Հովաքիմին, թագավորի մորը, նրա կանանց ու ներքինիներին, երկրի ուժեղ մարդկանց Երուսաղեմից տարավ Բաբելոն, գերութեան»**[333]:



Կարծիք կա, որ այդ մարտարշավին իր մասնակցությունն է բերել նաև Հրաչյան՝ իր դաշնակցական հավատարմությունը ցուցաբերելով Բաբելոնի Նաբուգոդոնոսոր արքային: ***«Պարույրին հաջորդեց իր որդին՝ Հրաչյան, որ Բաբելացիների Նաբուգոդոնոսոր թագավորին օգնության գնաց Հուդայի թագավորությունը կործանելու (600-588)»***[334]:

---

333 Դ. Թագ. 24:9–15

334 Ս. Պայասանյան, Պատմություն Հայոց. Սկզբից մինչև մեր օրերը, Թիֆլիզ 1890 թ., էջ 39:

Նաբուգոդոնոսորը հազարավոր հրեաների է գերում՝ բերելով Բաբելոն. ճիշտ է, այդ պատիժը Տիրոջը լքելու և դիվական պաշտամունքին հետևելու պատճառով էր, բայց և այնպես, գերիների մեջ կային նաև Տիրոջը հավատարիմ մնացած բարեպաշտ անձինք, որոնցից շատերն ազնվականներն էին: Նաբուգոդոնոսորը հրամայեց նրանց միջից շնորհալի մարդկանց ընտրեն: Այդ ընտրյալներից հատկապես աչքի էին կան Դանիելը, Միսակը, Սեդրակը և Հաբեթնակովը, Դանիելը նշանակվեց պալատում ծառայելու համար, իսկ մյուս երեքը երկրի տարբեր մասերում գործավարներ նշանակվեցին:

*Մինչ այդ նշանակումները, երբ նրանք դեռ սովորում էին պալատում իմաստունների մոտ, Նաբուգոդոնոսոր արքան իրեն անհանգստացնող մի երազ է տեսնում և հրամայում է տալիս, որ պատկան անձինք նախ իրեն պատմեն իր տեսած երազը և ապա մեկնեն այն, ապա թե ոչ՝ բոլորը մահապատժի կենթարկվեն: Այդ հրամանն ինքստինքյան խռովքի է մատնում գուշակներին. **«Երկրի վրա չկա մի մարդ, որ կարողանա հայտնել թագավորի ուզած բանը: Ոչ մի թագավոր և իշխան այդպիսի բան չի հարցնի իմաստունին, մոգին և աստղագուշակին, որովհետև այն բանը, որ թագավորն է հարցնում, ծանր բան է, և բացի աստվածներից, որոնք մարմնավորների մեջ չեն բնակվում, չկա ոչ մեկը, որ այն հայտնի թագավորի առաջ»:***

Այն ժամանակ թագավորը մեծ բարկությամբ ու զայրույթով հրամայեց կոտորել բաբելացի բոլոր իմաստուններին: Հրամանն արձակվեց, և իմաստունները կոտորվում էին: Փնտրում էին Դանիելին և նրա ընկերներին՝ սպանելու համար նրանց»[335]:


Քանի որ մահվան սպառնալիքը կախված էր նաև այդ բարեպաշտ հրեա երիտասարդների վրա, նրանցից գլխավորը՝ Դանիելը, ժամանակ խնդրեց երազը մեկնելու համար, և իր ընկերների հետ ծոմապահությամբ աղոթեց Աստծուն, որ Նա հայտնի իրենց այդ երազը և դրա նշանակությունը:

«Այն ժամանակ գաղտնիքը Դանիելին հայտնվեց գիշերային տեսիլքում: Դանիելն օրհնեց երկնքի Աստծուն և ասաց. «Թող օրհնեալ լինի Տիրոջ անունը հավիտյանս հավիտենից, որովհետև նրանն է իմաստությունը, հանճարը և զորությունը: Նա է, որ փոփոխում է ժամերն ու ժամանակները: Թագավորներ է կարգում և փոփոխում, իմաստուններին իմաստություն է տալիս և խելամիտներին՝ իմացություն, բացահայտում է խորին և ծածուկ բաները, գիտի, թէ ինչ կա խավարում, և լույսը նրա հետ է: Գոհություն Քեզ, մեր հայրերի՛ Աստված, օրհնում եմ Քեզ, որովհետև ուժ և իմաստություն տվեցիր ինձ և հայտնեցիր ինձ այն, ինչ որ մենք աղոթքներով խնդրեցինք քեզնից, և բացատրեցիր ինձ թագավորի տեսիլքը»[336]:

---

335 Դան. 2:10–13:

336 Դան. 2:19–23:



*Դանիելի խնդրանքով Արքայի ներքինին նրան բերում է Նաբուգոդոնոսորի մոտ: Դանիելը, խոնարհվելով արքայի առջև, ասում է. **«Այդ գաղտնիքը, որի մասին հարցնում է արքան, իմաստունները, մոգերը, հմայողներն ու բախտագուշակները արքային պատմել չեն կարող, այլ երկնքում կա Աստված, որ հայտնում է գաղտնիքները: Նա՛ ցույց տվեց Նաբուգոդոնոսոր արքային, թե ինչ պիտի լինի գալիք օրերում»**[337]:*

*Եվ մանրամասը պատմում է նրան տեսած երազը և հայտնում երազի մեկնությունը, ինչից Նաբուգոդոնոսորը ապշահար է լինում՝ հասկանալով, որ գործ ունի ոչ թե սուտ ու փուչ կուռքերի պաշտոնյաների հետ, այլ՝ Ճշմարիտ Աստծո ծառայի. **«Այն ժամանակ Նաբուգոդոնոսոր արքան երեսի վրա ընկավ և երկրպագեց Դանիելին, հրամայեց զոհեր ու անուշահոտ խնկեր մատուցել նրան: Թագավորն ասաց Դանիելին. «Արդարև, ձեր Աստվածը աստվածների Աստվածն է, տերերի Տերը և թագավորների Թագավորը, որ բացահայտում է գաղտնիքները, քանի որ դու կարողացար հայտնել այդ գաղտնիքը»: Եվ թագավորը մեծարեց Դանիելին, մեծամեծ ու բազում պարգևներ տվեց նրան»**[338]:*

Նաբուգոդոնոսորին շրջապատում էին բազմաթիվ բարձրաստիճան անձինք. թերևս, հայոց արքա Հրաչյան էլ դեռ Բաբելոնում էր այդ ժամանակ, և ներկա լինելով արքունիքում՝ ականջալուր էր և հիացած՝ Դանիելի Տեր Աստծո կարող զորությամբ: Դրանից հետո Հրաչյան, իր սրտի մեջ պահելով այդ զարմանալի հայտնությունը, վերադառնում է Հայաստան և զբաղվում երկրի բարեկարգման հարցերով:

Մի քանի տարի անց Նաբուգոդոնոսոր արքան մի մեծ կուռք է սարքել տալիս և հրամայում իր հպատակներին, որպեսզի բոլոր բարձրաստիճան անձինք անպայման ժամանեն այդ արձանի բացման արարողությանը:

«Իր թագավորության տասնութերորդ տարում Նաբուգոդոնոսոր արքան պատրաստեց մի ոսկյա արձան, որի բարձրությունը վաթսուն կանգուն էր, լայնությունը՝ վեց, և այն կանգնեցրեց բաբելացիների երկրում, Դեերա դաշտում: Նա հրամայեց հավաքել զորավարներին, զորագլուխներին և կուսակալներին, պետերին, իշխանավորներին, գործակալներին և

---

337 Դան. 2:27–28:

338 Դան. 2:46–48

գավառների բոլոր իշխաններին՝ գալու այն արձանի նավակատիքին, որ կանգնեցրել էր Նաբուգոդոնոսոր արքան։ Հավաքվեցին կուսակալները, զորավարներն ու զորագլուխները, պետերը, իշխանավորները, մեծամեծները, գործակալներն ու գավառների բոլոր իշխանները, եկան այն արձանի նավակատիքին, որ կանգնեցրել էր Նաբուգոդոնոսոր արքան»[339]։

Նաբուգոդոնոսորը հավանաբար հրավեր է ուղարկում նաև իր դաշնակից երկրների արքաներին այդ արարողությանը մասնակցելու համար. հրավիրվածների մեջ էր նաև հայոց արքա Հրաչյան։ Երբ բոլորը ժամանեցին, Նաբուգոդոնոսորը հպարտությամբ ցույց տվեց իր հրամանով կերտած ահռելի մեծության այդ արձանը, ինչն էլ այդ կռապաշտ համաժողովի հիացմունքին արժանացավ։

*Հատուկ արարողության մեջ ներառված էր այն, որ երբ հնչեին մեղեդիները տարբեր երաժշտական գործիքների, բոլորը պետք է երկրպագեին այդ կուռքին։ Նաբուգոդոնոսորը գիտեր, որ բոլոր հավաքվածները կուռքերի պաշտամունքի հետևողներ էին, այդպիսին էր նաև հայոց արքան։ Սակայն տարբեր երկրներից եկած բազմաթիվ ժողովուրդներից ոչ բոլորի կրոնական հայացքներին էր ծանոթ Բաբելոնի արքան, ինչից ելնելով էլ հրաման արձակեց, որպեսզի եթե որևէ մեկն այլ համոզմունք ունի, միևնույնն է, մահվան սպառնալիքի ներքո երկրպագի Նաբուգոդոնոսորի կուռքին։ Սակայն ի զարմանս Նաբուգոդոնոսորի և, ընդհանրապես, բոլոր ներկաների, գտնվեցին մարդիկ, որ չենթարկվեցին արքայի հրամանին. **«Այն ժամանակ մոտեցան քաղդեացի մարդիկ, Նաբուգոդոնոսորին, չարախոսեցին հրեաների մասին և ասացին. «Արքա՛, թող քո կյանքը հավիտյան լինի, դու հրամայեցիր, որ ամեն մարդ, երբ լսի փողի, սրնգի, քնարի, տավղի, նվագարանների ու բոլոր տեսակի գործիքների ձայնը, գետին ընկնի ու երկրպագի ոսկյա արձանին, իսկ նա, ով այդպես չի անի, պիտի նետվի բորբոքված կրակի հնոցը։ Արդ, այստեղ կան հրեա մարդիկ, որոնց դու նշանակեցիր Բաբելոնի գործերի վրայ՝ Սեդրակը, Միսաակը և Աբեդնագովը, որոնք չհնազանդվեցին քո հրամանին, արքա՛. նրանք չեն պաշտում քո աստվածները, չեն երկրպագում քո կանգնեցրած այդ ոսկե արձանին»***[340]։

Նաբուգոդոնոսորը չէր սպասում նման հանդգնության, աշխարհակալ արքան ամբողջ հրավիրվածների մոտ ամոթահար եղավ, հատկապես որ՝ իր իսկ պաշտոնյաների մեջ գտնվեցին մարդիկ, որ արհամարհեցին իր հրամանը։ Համարելով, որ դա, հավանաբար, թյուրիմացության արդյունք է, նա խստորեն պահանջեց, որ նրանք կատարեն իր հրամանը։ ***«Նաբուգոդոնոսորը բարկությամբ և ցասումով հրամայեց բերել Սեդրակին, Միսաակին և Աբեդնագովին։ Եվ նրանց բերեցին թագավորի առաջ։***

339 Դան. 3:1–3:

340 Դան. 3:8–12:

Նաբուգոդոնոսորը նրանց ասաց. «Սեդրա՛կ, Միսա՛կ և Աբեդնագո՛վ, իսկապե՞ս դուք իմ աստվածները չեք պաշտում և ոսկյա արձանին, որ ես կանգնեցրի, չեք երկրպագում. իսկ այժմ պատրա՛ստ եղեք, որ երբ լսեք փողի, սրնգի, թմբուկի, քնարի և ամեն տեսակ երաժիշտների ձայնակցությունը, գետին ընկեք և երկրպագեք արձանին, որ ես կանգնեցրի. իսկ եթե չերկրպագեք, նույն ժամին կնետվեք բորբոքված կրակի հնոցը: Ո՞վ է այն աստվածը, որ կը փրկի ձեզ իմ ձեռքից»[341]:

*Նաբուգոդոնոսոր արքան, հավանաբար, մոռացությյան էր մատնել, որ Միսակը, Սեդրակը, և Աբեդնակովը հենց այն Աստծո ծառաներն էին, Որի մարգարե Դանիելի առաջ մինչև գետին խոնարհվելով՝ երկրպագեց հենց ինքը բաբելացիների արքան, իսկ հիմա ասում է թե **«Ո՞վ է այն աստվածը, որ կը փրկի ձեզ իմ ձեռքից»:***

*Ճշմարիտ Աստծո ծառաներն անվարան դավանեցին Աստծուն՝ անտեսելով Նաբուգոդոնոսորի սպառնալիքները: **«Սեդրակը, Միսակը և Աբեդնագովը պատասխանեցին Նաբուգոդոնոսոր արքային և ասացին. «Հարկ չկա քեզ պատասխանել այդ բանի համար, արքա՛, որովհետև մեր Աստվածը, Որին մենք պաշտում ենք, երկնքում է, կարող է փրկել մեզ բորբոքված կրակի հնոցից և ազատել մեզ քո ձեռքից: Իսկ եթե ոչ, թող քեզ հայտնի լինի, արքա՛, որ քո աստվածները մենք չենք պաշտում և չենք երկրպագում քո կանգնեցրած այդ ոսկե արձանին»***[342]:

*Նաբուգոդոնոսորին ոչինչ չէր մնում, այլ միայն՝ սարսափելի մահվան մատնել այդ երիտասարդներին, և դրանով նախատինքն իր վրայից սրբել: **«Այն ժամանակ Նաբուգոդոնոսորը զայրույթով լցվեց, բարկացավ Սեդրակի, Միսակի և Աբեթնագովի վրա և ասաց. «Յոթնապատիկ վառեցե՛ք հնոցը, որպեսզի մինչև վերջ այրվեն սրանք: Հինգ ուժեղ մարդիկ թող կապեն Սեդրակին, Միսակին և Աբեդնագովին և նետեն բորբոքված կրակի հնոցը»: Այն ժամանակ այդ մարդկանց կապեցին իրենց պատմուճաններով, անդրավարտիքներով, գլխի ապարոշներով, զանկապաններով և նետեցին բորբոքված կրակի հնոցը, որովհետև թագավորի հրամանը ավելի ու ավելի էր սաստկանում, և հնոցը բորբոքվում էր յոթնապատիկ ավելի: Իսկ նրանք երեքը՝ Սեդրակը, Միսակը և Աբեդնագովը կապված ընկան հնոցի մեջ»***[343]:

*Բայց տեղի ունեցավ այն, ինչին ոչ ոք չէր սպասում, քանի որ այդ բորբոքված հնոցի մեջ ընկած երիտասարդները իսկույնևեթ մոխրանալու փոխարեն, կապանքազերծ ման էին գալիս այդ հնոցի մեջ և փառավորում երկնքի Աստծուն իրենց հրաշալի փրկության համար: **«Նրանք քայլում էին կրակի մեջ, օրհնում և գովում էին Տեր Աստծուն... «Օրհնեալ ես, Տե՛ր,***

---

341 Դան. 3:13–15:


342 Դան. 3:16–18:

343 Դան. 3:19–23:

մեր հայրերի՛ Աստված, հավիտյանս գովյալ և փառավորյալ է քո անունը...

Թող ամոթով մնան բոլոր նրանք, ովքեր չարիք են պատճառում քո ծառաներին. թող ամաչեն իրենց բոլոր բռնություններից, նրանց զորությունը թող խորտակվի, և թող ճանաչեն, որ դու ես միակ Տեր Աստվածը և փառավորյալը ողջ տիեզերքում»:

Եվ նրանք՝ թագավորի սպասավորները, որ հնոց էին նետել նրանց, չէին դադարում բորբոքել այն նավթով, ձեթով, վուշով և որթատունկի ճյուղերով: Բոցը ելնում-դիզվում էր հնոցից քառասուն և ինը կանգուն վեր, պտտվում պատում էր հնոցի շուրջը և այրում էր, ում որ գտնում էր քաղդեացիներից: Բայց Աստծու Հրեշտակը իջավ կանգնեց հնոցի մեջ... կրակի բոցը թոթափեց հնոցից և հնոցի մեջ դարձրեց այնպիսի հողմ, որ ցող է բերում, և կրակը ամենևին չէր մոտենում նրանց, չէր տանջում և չէր նեղում նրանց: Այն ժամանակ հնոցի մեջ երեքը, կարծես մեկ բերանով, օրհնում, գովում և փառավորում էին Աստծուն»[344]:



Արքան և բոլոր ներկաները, հատկապես արքայի մոտ կանգնածները, որոնց մեջ և հայոց արքա Հրաչյան, խիստ զարմացած հետևում էին այդ գերբնական երևույթին: Իսկ բաբելացիների ապշահար արքան՝ մեծ երկյուղով բռնված, խնդրում է, որ նրանք դուրս գան բորբոքված հնոցի միջից. «Նաբուգոդոնոսորը երբ լսեց նրանց օրհնությունը, զարմացավ. նա տագնապահար վեր կացավ և ասաց իր մեծամեծներին. «Միթե մենք կապված երեք մարդ չնետեցի՞նք կրակի մեջ»: Նրանք ասացին թագավորին. «Այո՛, ճիշտ ես ասում, արքա՛»: Թագավորն ասաց. «Բայց ես տեսնում եմ կապերից արձակված չորս մարդ, որոնք քայլում են կրակի մեջ, որևէ վնաս չեն կրել, իսկ չորրորդի տեսքն Աստծու որդու նման է»: Այն ժամանակ Նաբուգոդոնոսորը մոտեցավ հրաբորբոք հնոցի դռանը և ասաց. «Սեդրա՛կ, Միսա՛կ և Աբեդնագո՛վ, բարձրյալ Աստծու ծառանե՛ր, ելե՛ք և եկե՛ք»: Սեդրակը, Միսակն ու Աբեդնագովը դուրս ելան կրակի միջից»[345]:

Միսակը, Սեդրակը և Աբեդնագովը, դուրս գալով կրակների միջից, մոտեցան արքային, իսկ Նաբուգոդոնոսորը, ինչպես՝ Դանիելի, այդպես

[344] Դան. 3:24–51

[345] Դան. 3:94–96:

և այս երեք երիտասարդների առջև ընկնելով՝ երկրպագեց նրանց Տեր Աստծուն, այն Աստծուն, Որին մինչ հրեաների կողմից դավանելը դարեր շարունակ դավանել և պաշտել են Հայոց աշխարհում։

***«Հավաքվեցին նախարարները, կուսակալները, թագավորի զորավարներն ու զորագլուխներն, և տեսնում էին այն մարդկանց, որոնց մարմնին կրակը չէր վնասել, նրանց գլխի մազերը չէին խանձվել, նրանց անդրավարտիքները չէին գունաթափվել, և կրակի հոտ չկար նրանց վրայ։ Նաբուքոդոնոսոր թագավորը նրանց առաջ երկրպագեց Տիրոջը, պատասխանեց և ասաց. «Օրհնեալ է Սեդրակի, Միսակի և Աբեդնագովի Աստվածը, որ ուղարկեց իր Հրեշտակին և փրկեց իր ծառաներին, որովհետև նրանք հույս էին դրել նրա վրա, անարգել էին թագավորի խոսքը և մատնել իրենց մարմինը կրակին, որպեսզի չպաշտեն և չերկրպագեն բոլոր աստվածներին, այլ՝ միայն իրենց Աստծուն։ Արդ, ես հրաման եմ տալիս. բոլոր ազգերը, ժողովուրդներն ու լեզուները, որոնք կհայհոյեն Սեդրակի, Միսակի և Աբեդնագովի Աստծուն, կորստի պիտի մատնվեն, իսկ նրանց տները՝ հափշտակության, որովհետև չկա այլ Աստված, որ կարողանա այսպես փրկել»»*[346]*։*

*Այս ամենի վկան էր նաև, ինչպես արդեն ասվեց, հայոց արքա Հրաչյան, նա էլ՝ ինչպես Նաբուգոդոնոսորը և մյուս ներկաները, ականատես եղավ մարդու ձեռքով պատրաստված փուչ արձանի անարգանքին և ճշմարիտ Աստծո զորությանը։ Հրաչյան, որ ականջներով էր լսել Դանիելի կողմից երազի խորհրդավոր հայտնությունը և մեկնությունը, այժմ էլ իր սեփական աչքերով էլ տեսավ Միսակի, Սեդրակի և Աբեդնագովի հետ տեղի ունեցած հրաշքը։ Հրաչյայի մեջ սկսեց այդ բարեպաշտ անձանց հավատքի հանդեպ եղած համակրանքը փոխվել իրական հավատքի, այսինքն՝ Հրաչյան սկսեց հավատալ այն Աստծուն, ում հավատում էին իր հեռավոր նախնիները՝ Նոյը, Հայկը, Արամը և մյուսները։ Խանդավառված Հրաչյան էլ որոշեց, որ իր երկրում՝ Հայաստանում էլ այդ սուրբ հավատքը ճշմարիտ Աստծո հանդեպ տեղ գտնի, ինչից ելնելով էլ՝ խնդրանքով դիմեց Նաբուգոդոնոսորին, որ Բաբելոն գերեվարված հրեաների իշխանական տներից ոմանց թույլ տա իր հետ Հայաստան տանի, ինչին էլ բաբելացիների արքան սիրով հոժարեց։ **Իսկ Հրաչեն, խնդրելով Նաբուգոդոնոսորի կողմից գերված գլխավոր գերիներից մեկին՝ Շամբաթին, նրան մեծապատիվ շքեղությամբ բնակեցնում է մեր երկրում»**[347]*։*

Այդ Շամբաթը նույնպես բարեպաշտ անձանցից էր, ինչպես՝ Դանիելը և իր ընկերները, նա էլ ի սրտե պաշտում էր Տիրոջը։ Իսկ Հայոց աշխարհում այդ հրեա իշխանից հետագայում սերվեց Բագարատը, որից էլ առաջացավ հայոց Բագրատունիների թագադիր ասպետների տոհմը։

---

346 Դան. 3:94–96:

347 Հովհաննես Դրասխանակերտցի, Հայոց պատմություն, Երևան 1996 թ., էջ 23, 25:

«Հրաչյան Պաղեստինից մի փոքրիկ գաղթականություն բերեց, որի մեջ նշանավոր էր Շամբաթ անունով իշխանը. սրա տոհմից առաջ եկավ Բագրատունիների երևելի նախարարությունը»[348]*:*

Դեռ հնուց այնպիսի կարծիք է եղել, որ Բագրատունիները ոչ թե՝ հրեական, այլ հայկական ծագում են ունեցել, սակայն հայոց պատմահայրը կտրականապես դեմ է եղել այդ կարծիքին: Հիմնվելով իրենից առաջ եղող այլ պատմիչների աշխատությունների վրա՝ Մովսես Խորենացին պնդում է, որ Բագրատունիները իսկապես հրեա Շամբաթից են սերվել: ***«...մի քանի անվստահելի մարդիկ ասում են, ըստ իրենց ենթադրության, բայց ոչ՝ ճշմարտությամբ, իբր թե Բագրատունիների թագադիր ցեղը ծագում է Հայկից: Ուստի ես ասում եմ. այսպիսի հիմար խոսքերի մի հավատար, որովհետև ոչ մի հետք կամ ապացույց չկա այդ խոսքերում, որ ցույց տա նրանց ճշմարտությունը: Որովհետև Հայկի և նմանների մասին էլ կակազում են վայրիվերո և անկարգ կերպով: Բայց գիտցիր, որ Սմբատ անունը, որ Բագրատունիները հաճախ տալիս են պատանիներին, իսկապես Շամբաթն է նրանց հին՝ եբրայական լեզվով»***[349]*:*

Իսկ Հրաչյային հետագայում, մինչ Երվանդ Սակավակյացը, փոխարինում է մի քանի արքա. նրանք են՝ Փառնավազը, Պաճուճը, Կոռնակը, Փավոսը և Հայկակը[350]*:*

---

348 Ս. Պայասանյան, Պատմություն Հայոց. Սկզբից մինչև մեր օրերը, Թիֆլիզ 1890 թ., 39–40 էջ:

349 Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, Երևան 1990 թ., էջ 44:

350 Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, Երևան 1990 թ., էջ 45:

ԳԻՐՔ VI

ԵՐՎԱՆԴՈՒՆԻՆԵՐԻՑ՝ ՄԻՆՉ ԱՌԱՋԻՆ ԴԱՐ

Երվանդունիներ

«Աշխարհիս երեսին կա՞ արդյոք մի այլ երկիր, որի անունը մեզ ավելի հուզի, քան՝ Հայաստանի անունը: Մտածող մարդկությունը միշտ պիտի պահի ինքնաբուխ հարգանքի այն զգացումը, որը մեզ կտակ է թողել հնագույն Ասիան: Մեր հոգու աչքերի առջև միշտ պիտի վեհ հառնի Մասիսի՝ մեր պատմական և ավանդական Արարատի գերապանծ և այնքա՛ն հրաշալիորեն կանոնավոր պատկերը»[1]:

Հաջորդ արքան, որ նստեց Հայոց գահին, Երվանդ Սակավակյացն էր:

Երվանդից սկսած՝ մյուս արքաներն սկսեցին անվանվել Երվանդունիներ: Այս շրջանում հայերը կախման մեջ էին մեդացիներից և հարկեր էին վճարում նրանց: Սակայն երբ մեդացիների մոտ արտաքին քաղաքականությունն սկսեց թուլանալ, Երվանդն էլ դադարեց հարկեր վճարել՝ ջանալով լիովին անկախանալ:

Երվանդի որդին էր Տիգրանը, որին նույնպես Մեծ են անվանել պատմիչներից ոմանք՝ Մովսես Խորենացին, Հովհաննես Դրասխանակերտցին և այլք:

Բացի հայ պատմիչներից՝ հայ-մեդական այս իրադարձություններին անդրադարձել է նաև հույն պատմիչ Քսենոփոնը, որ ավելի է մանրամասնել Երվանդի հետ կապված դեպքերը:

Այդ ժամանակաշրջանում մարերի արքան էր Աժդահակը (Աստյուագեսը), իսկ պարսիկներինը՝ Կամբյուսես I-ը: Աժդահակի դուստր Մանդանան ամուսնանում է Կամբյուսեսի հետ, և ծնվում է Կյուրոսը, ով հիշատակվում է՝ որպես Կյուրոս Մեծ կամ Կյուրոս II:

---

[1] Էլիզե Ռեկլի, տես Սև Գիրք, Երևան 2011 թ., էջ 178:

Ըստ Քսենոփոնի՝ Կյուրոսը դաստիարակվում է պարսկական արքունիքում՝ խստաբարո ուսուցիչների մոտ: Հետագայում մի որոշ շրջանն անցկացնում է իր պապի՝ մարերի թագավոր Աժդահակի մոտ՝ դառնալով թե՛ պապի և թե՛ ամբողջ մեդական արքունիքի սիրելին՝ իր վարքի, արտաքինի և խիզախության շնորհիվ:

Բայց տարիներ անց հայրը՝ Կամբյուսեսը, նրան հետ է կանչում և որոշ ժամանակ անց (հիվանդության կամ մի այլ պատճառով) իր կենդանության օրոք պարսից գահը զիջում է որդուն:

Այսպիսով, Կյուրոսը Ք.ա.մոտ 559 թվականին դառնում է Պարսկաստանի արքա, և համարվում է Աքեմենյան հարստության հիմնադիր:

Կյուրոսի, Աժդահակի և Տիգրանի մասին գրել են տարբեր ժամանակաշրջանի պատմիչներ Հերոդոտոսը, Քսենոփոնը, Մովսես Խորենացին և այլք. նրանց աշխատություններում կան նաև որոշ տարբերություններ և հակասություններ:



Կյուրոսը հիշատակվում է որպես ժուժկալ և առաքինի անձնավորություն, հմուտ ռազմիկ և առաջնորդ: Նստելով Պարսկաստանի գահին՝ նա արդեն իսկ ծրագրում է սկսել մարտարշավներ՝ նպատակ ունենալով դառնալ մեծ կայսրության տեր:

Այն առաքինությունները, որ ուներ Կյուրոսը, վերագրվում են նաև հայոց արքայազն Տիգրան Երվանդյանին. նա Կյուրոսի մտերիմն էր և որսորդության ընկերը. ***«Կյուրոսն ու Տիգրանը բարեկամացել էին միմյանց հետ, ամեն ինչով նման էին միասիրտ՝ խելացի ու հույժ գովելի»***[2]*:*

Տիգրանի մասին մեծ խանդավառությամբ է գրում հատկապես հայոց պատմահայրը. ***«Անցնենք այսուհետև՝ գրելու Տիգրանի և նրա գործերի մասին, որովհետև սա մեր թագավորներից ամենահզորն ու ամենախոհեմն էր և նրանցից բոլորից քաջ... այս խարտյաշ և մազերի ծայրը գանգուր Երվանդյան Տիգրանը՝ գունեղ երեսով, քաղցր նայվածքով, ուժեղ սրունքներով, գեղեցիկ ոտքերով, վայելչակազմ և թիկնավետ, կերակուրների և ըմպելիքների մեջ պարկեշտ, ուրախությունների մեջ օրինավոր. որի մասին մեր հները, որոնք փանդիռներով երգում էին, ասում էին, թե մարմնի ցանկությունների մեջ էլ չափավոր է եղել, մեծիմաստ և պերճախոս և լի՝ բոլոր (հատկություններով), որ պիտանի են մարդուն: Եվ այս գրքում ի՞նչ կա ինձ ավելի սիրելի, քան սրա մասին եղած գովեստներն ու պատմությունը երկարել: Նա ամեն բանի մեջ արդարադատ և հավասարասեր կշեռք ունենալով՝ ամեն մեկի կյանքը կշռում էր իր մտքի լծա-***

[2] Թովմա Արծրունի և Անանուն, Պատմություն Արծրունյաց տան, Երևան 1978 թ., էջ 60:

կով. չէր նախանձում լավագույններին, չէր արհամարհում նվաստներին, այլ աշխատում էր ընդհանրապես ամենքի վրա տարածել իր խնամքի զգեստը»[3]:

Աժդահակը Կյուրոսին ուղարկում է Հայաստան, որպեսզի նա Երվանդին նորից հպատակության բերի: Կյուրոսն էլ, խորամանկությունը դրսևորելով, հանկարծակիի է բերում անպատրաստ Երվանդին՝ ծուղակի մեջ գցելով նրան: Կյուրոսը ոչ թե անցնում է հարձակման, այլ համոզում է Երվանդին, որին անվանում է «Արմեն», հանձնվել: Երվանդն էլ, որևէ այլընտրանք չունենալով, կանգնում է Կյուրոսի առջև, ինչպես մեղադրյալը՝ դատավորի: Կյուրոսը համարում է, որ նման ապստամբության համար մահապատժի է արժանի, ինչին համաձայնվում է և Երվանդը, և այդժամ տեղ է հասնում նաև Տիգրանը: ***«Այդ ընթացքում ճանապարհորդությունից վերադարձավ Արմենի ավագ որդի Տիգրանը, որը ժամանակին եղել է Կյուրոսի որսընկերը: Լսելով կատարվածը՝ նա իսկույն գնաց Կյուրոսի մոտ, ինչպես որ կար: Տեսնելով իր հորը, մորը, եղբայրներին և իր կնոջը՝ գերի վերցված, բնական է՝ արտասվեց: Իսկ Կյուրոսը, տեսնելով նրան, բարեկամական ոչինչ չարտահայտեց, այլ միայն ասաց. «Ճիշտ ժամանակին եկար, որպեսզի ներկա լինես և լսես հորդ դատը»»***[4]:

Տիգրանը դառնում է իր հոր՝ Երվանդի դատապաշտպանը և ապացուցում, որ եթե մահապատժի սպառնալիքը փոխվի ներման, ապա իր դատավճիռն ընդունած Երվանդը շատ ավելի լավ բարեկամ կարող է դառնալ Կյուրոսի համար, քան՝ որևէ այլ մեկը, որ կարող է նստել Հայոց գահին նրանից հետո: Իսկ Կյուրոսը հենց դրան էլ ձգտում էր, որ իր ներողամտությամբ շահի հայերի սերն ու հարգանքը: ***«Կյուրոսը խիստ ուրախացավ, քանզի... ենթադրում էր արմենների թագավորին ավելի լավ բարեկամ դարձնել»***[5]:

Եվ այդ երկու իմաստուն անձանց՝ Կյուրոսի և Տիգրանի երկխոսությունից հետո պատժի սպառնալիքն իսկապես փոխվում է ներման և հիմք դնում մեծ բարեկամության: Երվանդը, տեսնելով Կյուրոսի մեծահոգությունը և իմաստությունը, որոշում է ավելի մեծ քանակությամբ զորք և գումար տալ, քան պարտավորվել էր, սակայն առաքինազարդ Կյուրոսը հրաժարվում է:

Երվանդն իր տրամադրության տակ ուներ ութ հազարանոց հեծելազոր և քառասուն հազար հետևակ, որի մի մասը՝ Տիգրանի գլխավորությամբ, հանձնում է Կյուրոսին:

Հայաստանի հետ Կյուրոսի ստեղծած ջերմ հարաբերություններն սկսում են խիստ անհանգստացնել Կյուրոսի պապին՝ Աժդահակին, ով

---

3 Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, Երևան 1990 թ., էջ 46–47:

4 Քսենոփոն, Կյուրպեդիա, Երևան 2000 թ., էջ 96:

5 Քսենոփոն, Կյուրպեդիա, Երևան 2000 թ., էջ 103–104:

*տիրում էր Լիդիական սահմանից դեպի արևելք՝ Պարթևստանի և Պարսկաստանի տարածքներին: Նա որոշում է՝ այդ սպառնալիքը՝ ի դեմս Կյուրոսի և Տիգրանի, վերացնել: **«Նրա այս մտածմունքների առիթն էր մտերմական դաշնակցությունը, որ Կյուրոսն առաջարկեց Տիգրանին. և շատ անգամ, երբ Աժդահակն այս բանը հիշում էր, քունը փախչում էր նրանից, և անդադար նա խորհրդակիցներին այսպիսի հարց էր տալիս. «Ինչպիսի՞ հնարքներով մենք պիտի կարողանանք քանդել սիրո կապը պարսիկի և բազմաբյուրավոր հայի միջև»**[6]:*

*Ըստ Հերոդոտոսի՝ Աժդահակը ժամանակին մարգարեական երազ է տեսել իր աղջկա՝ Մանդանեի հետ կապված. որ նրանից պետք է ծնվի մեկը, որ կգրավի բազմաթիվ թագավորություններ: Դրանից ելնելով՝ նա իր աղջկան կնության է տալիս պարսից արքային՝ հնարավորինս հեռացնելով իր թագավորությունից: Սակայն երբ Մանդանեն արդեն հղիանում է, Աժդահակը մի նոր երազ է տեսնում, ըստ որի՝ նրանից ծնված որդին պետք է իր տիրապետությունը տարածի ոչ միայն այդ բոլոր երկրների վրա: **«Կամբյուսեսի հետ Մանդանեի ամուսնության առաջին իսկ տարին Աստյուագեսը մեկ ուրիշ երազ տեսավ: Նրան թվաց, թե իր դստեր արգանդից բուսել է որթատունկ, որը ծածկել է ամբողջ Ասիան: Տեսնելով այս երազը՝ նա դիմեց երազահաններին»**[7]: Ըստ երազահանների՝ այդ երկրների շարքում պետք է լիներ նաև մեդացիների երկիրը:*

Այդ երազներն Աժդահակը տեսել է դեռ Կյուրոսի ծնվելուց առաջ, սակայն արդեն իր առաջացած տարիքում մի այլ երազ-տեսիլք է տեսնում, ինչն այս անգամ վերաբերում էր Տիգրանի կողմից իրեն եկող մեծ սպառնալիքին:

*Այդ տեսիլքին մենք արդեն մի քանի անգամ մասնակի անդրադարձել ենք տարբեր առիթներով: Իսկ այժմ բուն նյութը ներկայացնենք ամբողջությամբ: **«Այդ օրերին, ասում է, ոչ փոքր վտանգ էր սպառնում մարացի Աժդահակին Կյուրոսի և Տիգրանի միաբանությունից: Ուստի և մտքերի սաստիկ ալեկոծությունից՝ գիշերը քնի մեջ տեսիլքով երևաց նրան այն, ինչ որ արթուն ժամանակ ոչ աչքով էր տեսել երբեք և ոչ՝ ականջով լսել: Ուստի քնից վեր թռչելով՝ չի սպասում խորհրդակցության ժամին սովորական կարգով, այլ իսկույն, մինչդեռ գիշերվան բավական ժամեր դեռ կային, կանչում է խորհրդակիցներին և տրտում երեսով, գետին նայելով՝ սրտի խորքերից հառաչանք է արձակում: Երբ խորհրդակիցները պատճառը հարցնում են, նա ժամերով ուշացնում է պատասխանը և վերջապես հեծկլտանքով սկսելով՝ բաց է անում սրտում ծածուկ պահած խորհուրդները ու կասկածը, նաև՝ սարսափելի տեսիլքը:***

«Ո՛վ սիրելիք, ասում է նա, (երազում թվում էր), թե ես մի անծանոթ

---

6 Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, Երևան 1990 թ., էջ 47:

7 Հերոդոտոս, Պատմություն ինը գրքից, Երևան 1986 թ., էջ 47:

երկրում եմ գտնվում, մի լեռան մոտ, որ երկրի վրա բարձրացած էր, և որի գագաթը թվում էր սաստիկ սառնամանիքով պատած, երկար նայում էի այդ լեռանը, մի ծիրանազգեստ կին երևաց ինձ երկնագույն քողով բարձր լեռան գագաթին նստած, խոշոր աչքերով, բարձրահասակ, կարմիր այտերով, որ բռնված էր ծննդի երկունքով։ Երբ ես երկար նայում էի այս երևույթին և հիացման մեջ էի, հանկարծ կինը երեք (զավակ) ծնեց՝ կատարյալ դյուցազուններ հասակով և բնությամբ։ Առաջինն՝ առյուծ հեծած, սլանում էր դեպի արևմուտք, երկրորդն՝ ինձ (ընձառյուծ) հեծած, դեպի հյուսիս էր դիմում, իսկ երրորդը՝ վիթխարի վիշապ սանձած, արշավակի մեր տերության վրա էր հարձակվում։



Այս խառը երազների մեջ մեկ էլ ինձ թվաց, թե կանգնած եմ իմ արքունի (ապարանքի) վրա. տեսնում էի նրա կտուրը, տեսնում էի բազմաթիվ գեղեցիկ շատրվաններով զարդարված, մեզ պսակող աստվածներին՝ հրաշալի տեսքով այնտեղ կանգնած, և ինձ՝ ձեզ հետ միասին՝ նրանց զոհերով ու խնկերով պատվելիս։ Երբ հանկարծ վեր նայեցի, տեսա, որ այն վիշապ հեծած մարդը, կարծես արծվի թևերով սլանալով՝ վրա հարձակվեց, և մոտենալով՝ ուզում էր աստվածներին կործանել։ Իսկ, ես՝ Աժդահակս, մեջ ընկնելով, այն հարձակումն ինձ վրա ընդունեցի՝ սքանչելի դյուցազնի հետ կռվի բռնվելով։ Նախ նիզակների տեգերով իրար մարմինները խոցոտելով՝ արյան վտակներ վար հոսեցրինք և ապարանքի արեգակի նման փայլող երեսը արյան ծով դարձրինք։ Հետո ուրիշ զենքերով (կռվեցինք) ոչ սակավ ժամեր։

Բայց ի՞նչ օգուտ խոսքս երկարացնել, որովհետև գործի վերջն իմ կործանումը եղավ։ Տագնապից սաստիկ քրտինք կոխեց, և քունս փախավ, և այլևս կենդանի չեմ թվում։ Որովհետև այս երևույթների երազն ուրիշ բան չի նշանակում, քան այն, որ Հայկազյան Տիգրանի կողմից բռնի հարձակում պիտի կատարվի մեզ վրա»[8]։

Ինչպես արդեն այդ մասին ժամանակին ասվեց, այդ երկիրը, որը տեսիլքում հայտնվել էր Աժդահակին, Հայաստանն էր, իսկ լեռ Մասիսը՝ Արարատ լեռը, լեռան գագաթի վեհաշուք կինը մայր Հայաստանի խորհուրդն ուներ, որ ժամանակ առ ժամանակ նման դյուցազուններ էր աշխարհ բերում։

---

[8] Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, Երևան 1990 թ., էջ 47–49:

Այս երազներից ազդված՝ Աժդահակը մտածում է հայ-պարսկական դաշինքի դեմ առճակատումից խուսափելու նպատակով՝ ինչ գնով էլ լինի, իրեն կնության առնի Տիգրանի քրոջը՝ Տիգրանուհուն, որպեսզի մերձենալով Տիգրանին (ով իր հոր՝ Երվանդ Սակավակյացի մահից հետո արդեն նստել էր հայոց գահին)՝ կարողանա դավաճանաբար սպանել նրան։



Աժդահակը կարողանում է խորամանկությամբ Տիգրանուհուն կնության առնել, իսկ միաժամանակ անց՝ որպես մերձավոր բարեկամ, Տիգրանին հորդորում է գալ հայ-մեդական սահմանի մոտ՝ իբր շտապ և կարևոր գործի շուրջ խորհրդակցելու։ Սակայն նա դավ էր նյութել. փորձում էր հանկարծակիի բերելով՝ սպանել Տիգրանին։ Այդ դավադրության մասին տեղեկանում է Տիգրանուհին և լուր ուղարկում Տիգրանին։ Տիգրանն էլ, անարգելով Աժդահակին, հայտնում է, որ տեղյակ է այդ դավադրության մասին։ Մարերի արքան, տեսնելով, որ իր նենգ մտահղացումը ձախողվել է, պատրաստվում է պատերազմի։

Տիգրանը չի շտապում նախահարձակ լինել, մինչև որ հաջողվում է Տիգրանուհուն դուրս բերել Մարաստանից։ Այդժամ, ըստ Մովսես Խորենացու, սկսվում է հայ-մեդական պատերազմը։ ***«Եվ հայոց թագավորը (զորք) է ժողովում Կապադովկիայի սահմաններից, Վրաց և Աղվանից ընտիրները՝ որոնք, որ կային, Մեծ ու Փոքր Հայքի բոլոր ընտիրները, և բոլոր զորությամբ դիմում է Մեդացվոց կողմերը։ Վտանգը հարկադրում է Աժդահակին Հայկազունի դեմ ելնել պատերազմով՝ ոչ փոքր բազմությամբ...***

Եվ ինչո՞ւ եմ խոսքս երկարացնում. կռվի ժամանակ (Տիգրանը), Աժդահակի երկաթե ամուր զրահը՝ ինչպես ջուր, ճեղքելով, Աժդահակին շամփրում է իր նիզակի ընդարձակ տեգին, և ձեռքը հետ քաշելիս՝ նրա թոքի կեսն էլ զենքի հետ դուրս է բերում»[9]*։*

Այդ պատերազմի մանրամասներին անդրադարձել են շատերը՝ թե՛ հայ, թե՛ օտար պատմաբաններից. ***«Այդ դաժան պատերազմում Տիգրանն անձամբ կորստի մատնեց մեդական արքային։ Հաղթանակողը վերադար-***

[9] Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, Երևան 1990 թ., էջ 51–52:

ձավ տուն՝ ծանրաբեռնված ռազմավարով»[10]*։*

«Մեդական արքա Աժդահակը ստիպված էր պատերազմ հայտարարել հայոց արքա Տիգրան Ի–ին այն պատճառով, որ իմացավ այն գաղտնի պայմանագրի մասին, որ նա կնքել էր իր թոռ Կյուրոսի հետ, ով ծրագրում էր Աժդահակին զրկել գահից։ Պատերազմի ամենաթեժ պահին Մարաստանի արքան սպանվեց՝ խոցվելով Տիգրանի նիզակից, իսկ գահն անցավ Կյուրոսին, ով դարձավ հիմնադիրը Պարսկական հզոր միապետության։ Իսկ Տիգրանին հասավ հարուստ ավար՝ արքայական գանձարանից, նրա կողմից գերեվարվեցին արքայի բոլոր ազգականները և 10 հազար մեդացիներ. նրանց նա բնակեցրեց Արարատ լեռան ստորոտին՝ շնորհելով ազատություն և հայերի հետ հավասար իրավունքներ»[11]*։*

Ռուս պատմաբան Սերգեյ Գլինկան Տիգրանին համեմատում է իր հռչակավոր նախնու՝ Հայկ Նահապետի հետ, ով կործանեց Բել Ներբովթին՝ մարդկության առաջին բռնակալին։ «Կատաղի պայքար էր մղում Աժդահակը, բայց, ի վերջո, խոցված ընկնում է Տիգրանի նիզակից։ Այսպիսով՝ երկրորդ անգամ Հայոց տիրակալի կողմից կործանվեց մարդկության տանջարարը։ Քանզի մենք արդեն տեսանք, որ առաջին նվաճողը սպանվեց Հայկի ձեռքով»[12]*։*

Սակայն, ըստ Հերոդոտոսի, այդ պատերազմում գլխավոր դերում եղել է Կյուրոսը, և ինքն է, որ դաշինք կնքելով Աժդահակի սպարապետի հետ՝ հարձակվել և գրավել է Եկբատանը՝ մեդացիների մայրաքաղաքը։ «Կյուրոսը կործանեց այդ Աստյուագեսին, որն իր մոր հայրն էր»[13]*։*

Չնայած որ բուն պատերազմը մղել է Տիգրանը, սակայն Կյուրոսն է եղել գլուխն այդ հակամարտության, ինչը երևում է նրանից, որ Մարաստանի գահն անցել է Կյուրոսին։ «Աստիագես թագավորը հաջորդեց իր հայրերին, և պարսից Կյուրոս թագավորն առավ նրա թագավորությունը»[14]*։*

Եվ ուրեմն, սա եղել է հայ-պարսկական դաշինք՝ ընդդեմ մեդացիների, որի ժամանակ ավարն ու գերիները բաժին ընկան Հայաստանին, իսկ տարածքը՝ պարսիկներին։ «Տիգրան Երվանդյանի օգնությամբ կործանված մարական նախկին թագավորության տարածքի ընդգրկմամբ՝ Կյուրոս II-ն Իրանում հիմնադրում է Աքեմենյանների գլխավորած պարսից պետությունը (մ.թ.ա. 550 թ.)։ Միջազգային ասպարեզում Հայաստանի և Պարսկաստանի քաղաքական հարաբերություններն ամրապնդվեցին»[15]*։*

---

10 Виктор Абаза, История Армении, С. Петербургъ, 1888 г., ст. 30.

11 Магда Нейман, Армяне, Ереван 1991 г., ст. 58:

12 Сергей Глинка, Обозрение истории Армянского народа, Москва 1832 г., ст. 104–105.

13 Հերոդոտոս, Պատմություն ինը գրքից, Երևան 1986 թ., էջ 33:

14 Դանիել (մարգարե) 12:14:

15 Է.Լ. Դանիելյան, Ա.Ա. Մելքոնյան, Հայոց պատմություն, Երևան 2008 թ., էջ 42:

Այսպիսով, հին աշխարհի հերթական հզոր պետությունը՝ Մարաստանը կամ Մեդիան, Ն.Ք. 550 թ. կործանվեց՝ որպես պետություն, քաղաքական միավոր, իսկ ժողովուրդը, հետագայում ձուլվելով պարսիկների հետ, ի չիք դարձավ[16]*։ Եվ ինչպես Ասորեստանի, այդպես և Մարաստանի կործանման մեջ փոքր չէր հայկական գործոնը։*



Իսկ առջևում արդեն Բաբելոնն էր, որ ևս պետք է արժանանար նույն ճակատագրին։ Սակայն մինչ Բաբելոնի վրա հարձակվելը Կյուրոսի կայսերական բանակը, որի մեջ մաս էր կազմում նաև հայոց այրուձին և հետևակը՝ Տիգրան Երվանդյանի գլխավորությամբ, գրավեց և իրեն ենթարկեցրեց տարբեր մեծ ու փոքր տերություններ, և պատրաստվում էր արշավել Լիդիայի վրա։ Այդ սպառնալիքը տեսնելով՝ Լիդիայի տիրակալ Կրեսոսն ինքն է նախահարձակ լինում և գրավում ու ավերում է Պետրա քաղաքը, որ գտնվում էր Աքեմենյան կայսրության տիրույթներում։

Կյուրոսի բանակը, սակայն, ի վերջո, հաղթում է լիդիացիներին, ապա՝ Ն.Ք. 542 թ., գրավում է նաև Կիլիկիան և Փյունիկիան։ Այս ամենից հետո հասնում է նաև Բաբելոնի հերթը։ ***«Մարաց թագավորության կործանումը միակ գործը չէ, որի մեջ Տիգրանը Կյուրոսին գործակից և դաշնակից եղավ։ Հայոց թագավորության բանակը միացավ Պարսից հետ՝ նախ Լիդիացիների Կրեսոս թագավորի և ապա՝ Բաբելացիների դեմ։***

Երեմիա մարգարեն հայտնապես հրավիրում է հայերին՝ այս վերջին արշավանքին մասնակից լինելու. «Դրո՛շ բարձրացրեք երկրի վրայ, փո՛ղ փչեցեք բոլոր ազգերի մեջ, զօրագնդե՛ր կանչեցեք նրա դեմ։ Իմ կողմից հրամա՛ն տվեք Այրարատյան թագավորություններին և ասքանազյան գնդին, նրա շուրջը նետաձիգ սարքե՛ր կանգնեցրեք, հարձակվեցե՛ք նրանց վրա։ Շարժվեց ու տանջվեց երկիրը, որովհետև Բաբելոնի վրա հասավ Տիրոջ խորհուրդը, և երիվարները հասան, ինչպես մորեխի բազմություն»[17]***»***[18]***։***

---

16 Ներկայումս կարծիքներ են հնչում, որ մեդացիների սերունդները իբր քրդերն են։

17 Երեմ. 51:27

18 Ս. Պալասանյան, Պատմություն Հայոց, Թիֆլիզ 1890 թ., էջ 43։

Մարտարշավ՝ դեպի Բաբելոն

«Հայաստանն իմ կյանքում միշտ էլ մեծ տեղ է ունեցել: Ես կարող եմ ասել, որ ուղղակի սիրահարված եմ Հայաստանին, նրա բանաստեղծությանը, նրա մշակույթին ու պատմությանը: Ինձ համար թանկ ու սիրելի է այն ամենը, ինչ ստեղծվել է հայ ժողովրդի ձեռքով՝ նրա դժվար պատմության ընթացքում»[19]:

Կյուրոսն, այդ բոլոր երկրները գրավելով, իր ամբողջ ուժերը կենտրոնացնում է Բաբելոնի վրա: Պարսկա-մեդական և հայկական բանակին միացել էին նաև տարբեր երկրների պատկանող նոր ու բազմաթիվ զորքեր: Բաբելոնի տարածքի քաղաքները (Օփիսը, Սիպարը) մեծամասամբ առանց պայքարի հանձնվեցին, և, ի վերջո, հերթը հասավ նաև բուն մայրաքաղաքին՝ Բաբելոնին, որ շատ հզոր պարիսպներով ամրապնդված էր: Բայց Աստված մատնել էր բաբելացիներին վհատության, և նրանք՝ համարձակությունը կորցրած՝ այլևս չէին կարողանում հարձակվող բանակին դիմակայել:

*Եվ շատ շուտով Բաբելոնն էլ ստիպված եղավ իր դարպասները բացել այդ հզոր բանակի առաջ: **«Մեդացիները և հայերը, ցնցեցին թե հսկա Ասորեստանյան տերությունը, և թե՝ Բաբելոնը, որոնք իրենց ահեղ ամրոցներից սպառնում էին համայն աշխարհին»**[20]:*

*Իսկ նման ամրոցների պարիսպները կործանելու համար հարկավոր էին համապատասխան մեքենաներ. դրանք պատրաստելուն գործամուխ եղան Կյուրոսն ու իր դաշնակիցները: **«Կյուրոսը խոստացավ ապահովել մեկ մեքենայի շինությունը և այն տրամադրել, մեկ ուրիշը խոստացան՝ Գադատասն ու Գոբրյուասը, մի երրորդը՝ Տիգրանը»**[21]:*

Ասորեստանի և Բաբելոնի գրավման դեպքերից առաջ եղել են մարգարեություններ առ այն, որ այդ երկու կայսրություններն էլ իրենց ամբարտավանության և դաժանության համար պետք է պատժվեին, և երկուսի պատիժների իրականացման գործում պիտի իրենց դերն ունենային նաև հայկական ուժերը: Ճիշտ է, հայերը շեղվել էին իրենց հայրերի Տեր Աստծուն պաշտելու վեհ բարձունքից և գահավիժել հեթանոսության մեջ, սակայն նրանք միշտ էլ եղել են Տերունական կամքն իրագործող ընտրյալ ժողովուրդ:

Աստվածաշնչյան՝ վերոնշյալ մարգարեությունը մեջբերելով՝ դիտարկ-

---

19 Միխայել Դուդին, «Գարուն» ամսագիր, թիվ 12, Երևան 1982 թ., էջ 14–15:

20 Сергей Глинка, Обозрение истории Армянского народа, Москва 1832 г., ст. 108.

21 Քսենոփոն, Կյուրպեդիա, Երևան 2000 թ., էջ 230:

վում է նաև, որ հրեաները հայերին են դիմել՝ իրենց թշնամիներին ճնշելու հարցում օգնություն ակնկալելով։ ***«Դեռ մինչ այս Երեմիա մարգարեն, որ այդ իրողությունների ժամանակակիցն էր, և կանխատեսել էր Հրեաստանին սպառնացող վտանգը բաբելացիների կողմից, հորդորեց իր ժողովրդին օգնության համար դիմել հայերին անհանգիստ հարևաններին պատժելու համար. «...Իմ (Աստծո) կողմից հրամա՛ն տվեք Այրարատյան թագավորություններին և ասքանազյան գնդին»***[22]*»*[23]*։*



Ասորեստանը, Մարաստանը և Բաբելոնը՝ որպես պետություն, կորցրեցին իրենց նշանակությունը, և նրանցից մնացին միայն մարդկային խմբեր, որոնց մեծ մասը տարրալուծվեց այլ ազգերի՝ հատկապես հաղթողների մեջ, իսկ մի մասն էլ ցրվեց աշխարհով մեկ։ Եվ այս երեք կայսրությունների կործանման գործընթացում հստակ երևում էր հայկական գործոնը։



Մեզ է հասել Բաբելոնում պատրաստված աշխարհի ամենահին քարտեզը, որտեղ նշված է նաև Հայաստանն՝ իր տարածքով. ***«Հայ ժողովուրդը Մերձավոր Արևելքի հնագույն ժողովուրդներից է։ Իր պետությունը հիշատակված է ամենահին աշխարհագրական քարտեզի վրա, որն այսօր պահպանվում է Բրիտանական թանգարանում։ Այդ քարտեզը պահպանվել է Բաբելոնում քսանհինգ դար առաջ։***



Այս ժողովուրդը, որ գտնվում է Արևելքի և Արևմուտքի խաչմերուկի հատվածում, ստիպված եղավ իր ազգային ոգին պաշտպանելու համար դարավոր պատերազմներ մղել Բաբելոնի, Ասորեստանի, Պարսկաստանի, Հռոմի... դեմ»[24]*։*

---

22 Երե. 51:27:

23 Магда Нейман, Армяне, Ереван 1991 г., ст. 58.

24 Լաուրո Մախնարդի, Տես Երկիր Դրախտավայր. Օտարերկրացիները Հայաստանի և հայերի մասին.... Երևան 2014 թ., էջ 583:

Կյուրոս և Տիգրան

«Առաջավոր Ասիայի հյուսիս-արևմտյան մասը բնակեցնող բազմաթիվ ժողովուրդներից պրակտիկորեն միայն հայերն են մինչ օրս պահպանել իրենց էթնիկ միատարրությունն ու լեզուն, ընդ որում ոչ թե հեշտությամբ, առանց տեսանելի ջանքերի, խաղաղ գոյության պայմաններում, այլ՝ ներքին ու արտաքին թշնամիների դեմ երկարատև ու հոգնեցուցիչ պայքարի արդյունքում, չնայած բազմաթիվ ճնշումներին ու հալածանքներին, որ հաճախ ավելի արյունահեղ ու դաժան են եղել, քան կարող է պատկերացնել Եվրոպան»[25]:

Կրկին անդրադառնանք Կյուրոսի կերպարին: Նա ծնվել էր Ն.Ք. VI դարում, մեծացել էր՝ կրթվելով մեդա-պարսկական մշակույթի և կրոնա-պաշտամունքային համակարգի շրջանակներում: Կյուրոսը հեթանոս էր և չէր ճանաչում միակ և ճշմարիտ Աստծուն: Նա իր հաջողությունները վերագրում էր բազմաստվածության պանթեոնի դիցերին, մասնավորապես՝ Զևսին: Կյուրոսը դեռ տեղյակ չէր, որ Տերն է միայն Աստված, և Նա՛ է տիրում բոլորին:

*Աստվածաշունչ մատյանը միակ գիրքն է, որ գրվել է Աստվածային ներշնչանքով և իր մեջ պարունակում է բազմաթիվ մարգարեություններ, որոնք բոլորն էլ իրենց ժամանակին իրականացել են: Այդպես՝ Սուրբ Գրքում դեռ Կյուրոսի ծննդից մոտ 200 տարի առաջ Եսայի մարգարեի կողմից գրվել էր հենց Կյուրոսի մասին. **«Այսպես է ասում Տեր Աստված իր օծյալ Կյուրոսին. «Ես բռնեցի քո աջ ձեռքը, որպեսզի ազգերին հնազանդեցնեմ քեզ, խորտակեմ թագավորների զորությունը, բացեմ քո առաջ դռները, և քաղաքները չփակվեն: Ես կընթանամ քո առջևից, կհարթեցնեմ լեռները, կխորտակեմ պղնձե դռները և կփշրեմ երկաթե նիգերը: Ես քեզ կտամ խավարի մէջ պահվող գանձերը և քեզ համար կբացեմ աներևույթ հարստությունները, որպեսզի իմանաս, որ ես եմ Տեր Աստվածը, Իսրայելի Աստվածը, որը կանչեց քո անունը: Իմ Հակոբի համար և իմ ընտրյալ Իսրայելի համար ես քո անունով կանչեցի քեզ և ընդունեցի, բայց դու ինձ չճանաչեցիր, որ ես եմ Տեր Աստվածը, և չկա մեկ ուրիշը: Թող իմանան արևելքից ու արևմուտքից, որ ինձնից բացի մեկ ուրիշը չկա: Ես եմ, որ հաստատեցի լույսը և ստեղծեցի խավարը, Ես եմ, որ խաղաղություն եմ անում և հաստատում չարը, Ես եմ Տեր Աստվածը, որ կատարում եմ այս ամենը: Երկինքը թող ուրախ լինի վերուստ, և ամպերը արդարություն***

[25] Генрих Хюбшман (1848–1908 гг) — немецкий филолог.

ցողեն, թող երկիրը ողորմություն բխեցնի, լիովին արդարություն թող բխեցնի։ Ես եմ Տերը, որ հաստատեցի քեզ՝ որպես մի լավ բան, ստեղծեցի քեզ իբրև բրուտի կավ»[26]։

Ուրեմն, այս ամենը կանխատեսված էր Կյուրոսի՝ լույս աշխարհ գալուց 200 տարի առաջ։ Թեև Աստված էր նրան ընտրել՝ դեռ իր ծննդից առաջ, և առաջնորդել հաջողությունների ճանապարհով, սակայն Կյուրոսն այդ մասին անտեղյակ էր։

Միայն Բաբելոնը գրավելուց հետո է նա սկսում ճանաչել Աստծուն և տեսնել ունայնությունն այն բոլոր հավատալիքների, որոնց նա անգիտությամբ պաշտում էր։

Բաբելոնում բնակվող Դանիել մարգարեի հետ ծանոթանալուց հետո Կյուրոսը տեսնում է նրանում գործող մեծ իմաստությունն և աստվածային շնորհները, որոնցով նա զարդարված էր։ Եվ լցվում է նրա հանդեպ ջերմ բարեկամական զգացումով։

Ինչպես Նաբուգոդոնոսորի ժամանակ, այդպես և՝ Կյուրոսի, Դանիելը մեծ պաշտոն ուներ արքունիքում, ինչը շատերի նախանձն էր բորբոքում։ Դանիելն արհամարհում էր բաբելացիների կուռքերը, որոնցից ամենամեծը համարվում էր Բելի կուռքը. դրան բաբելացիները չէին դադարում պաշտել՝ չնայած պետք է տեղյակ լինեին, որ հայոց Հայկ Նահապետն այդ սուտ աստծուն գամեց գետնին՝ իր հսկայական նետով։

Դանիելի հավատարմությունն իր Տեր Աստծուն դարձավ պատճառ, որ ինքը՝ Կյուրոսը, հրաժարվելով այդ կուռքերից, սկսեց դավանել այն Աստծուն, Ով դեռ դարեր առաջ ընտրել էր նրան և առաջնորդել իր պատերազմներում։ ***«Դանիելը թագավորի կյանքի ընկերն էր և ավելի փառք էր վայելում, քան նրա բոլոր բարեկամները։ Բաբելացիները Բել անունով մի կուռք ունեին, և օրական նրան բաժին էր ընկնում տասներկու արդու ընտիր ալյուր, քառասուն ոչխար և վեց մար գինի։ Թագավորը պաշտում էր նրան և միշտ գնում ու երկրպագում էր նրան։ Բայց Դանիելը իր Աստծուն էր երկրպագում։ Թագավորն ասաց նրան. «Դու ինչո՞ւ չես երկրպագում Բելին»։ Դանիելն ասաց. «Որովհետև ձեռակերտ կուռքեր չեմ պաշտում, այլ՝ կենդանի Աստծուն, երկնքի և երկրի Արարչին, որ իշխանություն ունի բոլոր մարմնավոր էակների վրա»։ Թագավորն ասաց նրան. «Իսկ Բելը քեզ կենդանի Աստված չի՞ թվում, չե՞ս տեսնում, թե ամեն օր որքան է ուտում և խմում»։ Դանիելն ասաց ծիծաղելով. «Մի՛ խաբվիր, արքա՛, որովհետև նա ներսից կավից է և դրսից պղնձից. նա երբեք ո՛չ կերել է, ո՛չ էլ՝ խմել»։ Եվ թագավորը բարկանալով՝ կանչեց նրա քրմերին և ասաց նրանց. «Եթե չասեք ինձ, թե ով է ուտում այս սեղանի ուտելիքները, մահով կմեռնեք, իսկ եթե ապացուցեք, թե Բելն է ուտում այդ բոլորը, ապա կմեռնի Դանիելը, քանի որ նա հայհոյեց Բելին»։ Դանիելն ասաց***

[26] Եսայի. 45:1–8:

թագավորին. «Թող լինի՝ ըստ քո ասածի»։ Բելի քրմերը յոթանասուն հոգի էին՝ չհաշված կանանց և մանուկներին։

Թագավորը Դանիելի հետ եկավ Բելի կռատունը։ Բելի քրմերն ասացին. «Ահավասիկ մենք դուրս ենք գալիս. իսկ դու, արքա՛, նրա առաջ դի՛ր այդ կերակուրները և այդ գինին. խառն կդնես. փակի՛ր դռներն ու կնքի՛ր քո մատանիով։ Եվ երբ առավոտյան գաս, եթե այդ բոլորը կերված չլինի Բելի կողմից, մենք կը մեռնենք, իսկ եթե ոչ՝ Դանիելը, որ սուտ խոսեց մեր մասին»։ Նրանք վստահ էին, քանի որ սեղանի տակ գաղտնի մուտք էին շինել և միշտ նրանով մտնում և ուտում էին կերակուրները։

Եվ երբ նրանք դուրս ելան, թագավորը կերակուրները դրեց Բելի առաջ։ Դանիելը հրամայեց իր սպասավորին, մոխիր բերին և ցանեցին ամբողջ մեհյանում միայն թագավորի ներկայությամբ և դուրս գալով՝ փակեցին դուռը, կնքեցին թագավորի մատանիով և գնացին։ Քրմերը, իրենց սովորության համաձայն, գիշերը ներս մտան իրենց կանանցով և երեխաներով, կերան ամեն ինչ, խմեցին և ոչինչ չթողեցին։ Թագավորը առավոտ կանուխ եկավ Դանիելի հետ և ասաց. «Կնիքներն անխա՞խտ են, Դանիե՛լ»։

Դանիելն ասաց. «Անխախտ են, արքա՛»։ Եվ երբ դռները բացեցին, թագավորը նայեց սեղանին, բարձրաձայն գոչեց և ասաց. «Մեծ ես, ո՛վ Բել, և ոչ մի նենգություն չկա քո մեջ»։ Դանիելը ծիծաղեց, բռնեց թագավորին, որ ներս չմտնի, և ասաց. «Լա՛վ նայիր այդ հատակին և տե՛ս՝ ո՞ւմ հետքերն են դրանք»։ Թագավորն ասաց. «Տեսնում եմ տղամարդկանց, կանանց և մանուկների հետքեր»։ Այն ժամանակ թագավորը, բարկանալով, բռնեց քրմերին, նրանց կանանց և որդիներին. նրան ցույց տվեցին գաղտնի դուռը, որով մտնում էին և ուտում-սպառում սեղանը։ Թագավորը կոտորեց նրանց, իսկ Բելին հանձնեց Դանիելի ձեռքը, որը կործանեց նրան և նրա մեհյանը։

Կար նաև մի մեծ վիշապ, և բաբելացիները պաշտում էին նրան։ Թագավորն ասաց Դանիելին. «Մի՞թե դրա մասին էլ կասես, թե պղնձից է. ահա դա կենդանի է, ուտում է և խմում, և չես կարող ասել, թե դա կենդանի Աստված չէ։ Արդ, արի երկրպագի՛ր դրան»։ Դանիելն ասաց նրան. «Ես իմ Տեր Աստծուն եմ երկրպագում, որովհետև նա է կենդանի Աստվածը, բայց դու, արքա՛, իրավո՛ւնք տուր ինձ, և ես առանց սրի ու գավազանի կսպանեմ այդ վիշապին»։ Թագավորն ասաց. «Թույլ եմ տալիս քեզ»։ Դանիելը վերցրեց յուղ, ձյութ, ճարպ և մազ, եփեց միասին, գնդեր շինեց և գցեց վիշապի բերանը։ Երբ վիշապը կերավ՝ պայթեց։ Դանիելն ասաց. «Տեսե՛ք, թե ո՞ւմ էք պաշտում»։ Եվ երբ բաբելացիները լսեցին այդ, շատ բարկացան, եկան հավաքվեցին թագավորի մոտ և ասացին. «Թագավորը հրեա է դարձել, կործանեց Բելին, սպանեց վիշապին, կոտորեց քրմերին»։

Եվ երբ նրանք եկան, ասացին թագավորին. «Դանիելին մեր ձե՛ռքը

տուր, ապա թե ոչ՝ կսպանենք քեզ և քո տոհմը»։ Երբ թագավորը տեսավ, թե շատ են տագնապեցնում իրեն, ստիպված Դանիելին տվեց նրանց ձեռքը։ Եվ նրանք նրան նետեցին առյուծների փոսը. Դանիելն այնտեղ մնաց վեց օր։ Փոսի մեջ յոթը առյուծ կար։ Ամեն օր նրանց երկու մարդ և երկու անասուն էին տալիս ուտելու, բայց այդ օրը նրանց առջև ոչինչ չգցեցին, որպեսզի առյուծներն անմիջապես ուտեն Դանիելին...



Թագավորը յոթերորդ օրը եկավ՝ ողբալու Դանիելի վրա. և երբ եկավ փոսի բերանի մոտ, նայեց և տեսավ, որ Դանիելը նստած էր. աղաղակեց բարձր ձայնով և ասաց. «Մեծ ես, Դանիելի Տե՛ր Աստված, և չկա այլ աստված քեզանից բացի»։ Նա Դանիելին դուրս հանեց, իսկ վնասարարներին, որ ուզել էին կորստի մատնել նրան, նետեցին փոսի մեջ, և իսկույն նրանք պատառոտվեցին թագավորի առաջ»[27]։

Բելին մեր Հայկ-Մելքիսեդեկ նահապետն սպանեց Հայաստանում, իսկ Բելի պաշտամունքը, կուռքն ու մեհյանն Բաբելոնում ավիրեց Դանիել մարգարեն։

*Իսկ Կյուրոսը համայն Բաբելոնում խոստովանեց իր դարձն առ Աստված՝ ասելով. **«Մեծ ես, Դանիելի Տե՛ր Աստված, և չկա այլ աստված՝ քեզանից բացի»։***

Եվ քանի որ հայոց արքա Տիգրանը նույնպես շատ մտերիմ էր Կյուրոսի հետ, ինչպես՝ Դանիելը, ուրեմն նա էլ տեղյակ էր Կյուրոսի՝ առ Աստված դարձին, և ինքն էլ պետք է համապատասխան հետևություններ աներ, հատկապես որ իրենից ոչ շատ առաջ Հրաչյան արդեն իսկ համոզվել էր, որ չկա այլ աստված՝ Տիրոջից բացի։ Նա, Բաբելոնի գերությունից հրեա Շամբաթին Հայաստան բերելով, աշխատել էր հնարավորինս սուրբ հավատքին հետևել, այնպես, որ Տիգրանը, եթե հավատք անգամ չունենար առ Աստված, համենայն դեպս՝ տեղյակ պետք է լիներ այդ հավատքի մասին։ Եվ երբ Կյուրոսն ի սրտե դավանեց Աստծուն, Տիգրանն էլ, լինելով Կյուրոսի նման առաքինի և իմաստուն արքա, պետք է որ ինքն էլ հավատար՝ փառավորելով իր նախնիների Աստծուն, Ում փառավորում էին Հայոց խորհրդավոր լեռնաշխարհում՝ ի սկզբանե և դարեր շարունակ։

Աժդահակի տեսած երազում էլ կար դրվագ, ուր ասվում էր այդ մասին. որ մարդկության և կենդանական աշխարհի երկրորդ օրրան Արա-

[27] Դան. 12:1–41:



*րատի գագաթից դեպի Մարաստան արշաված Տիգրանն առաջնահերթ ցանկանում էր ոչ թե Աժդահակին սպանել, այլ՝ կործանել այն կուռքերը, որոնց երկրպագում էր մեդացիների արքան: Եվ երբ Աժդահակը հանձն առավ պաշտպանել այդ կուռքերը, այդժամ էլ բարեպաշտ Տիգրանի ձեռքով սրախողխող եղավ. **«Այս խառն երազների մեջ մեկ էլ ինձ թվաց, թե կանգնած եմ իմ արքունի (ապարանքի) վրա. տեսնում էի նրա կտուրը, տեսնում էի բազմաթիվ գեղեցիկ շատրվաններով զարդարված, մեզ պսակող աստվածներին՝ հրաշալի տեսքով այնտեղ կանգնած, և ինձ՝ ձեզ հետ միասին նրանց զոհերով ու խնկերով պատվելիս: Երբ հանկարծ վեր նայեցի, տեսա որ այն վիշապ հեծած մարդը, կարծես արծվի թևերով սլանալով՝ վրա հարձակվեց և մոտենալով ուզում էր աստվածներին կործանել»**[28]:*

Այս մարգարեական երազը ևս խոսում է այն մասին, որ Տիգրանն էլ Կյուրոսի նման մերժել է անարգ կուռքերին երկրպագելը և սկսել է պաշտել իր բարեպաշտ հայրերի Տեր Աստծուն:

Կյուրոսը, դարձի գալով, նաև աջակցեց Բաբելոնում գերեվարված հրեաներին, որպեսզի նրանք, վերադառնալով իրենց հայրենիք, վերակառուցեին Երուսաղեմը և Աստծո տաճարը, որ կործանել էր Նաբուգոդոնոսոր արքան:

*Այդ հետդարձի ճանապարհն էլ, սակայն, հրեաների համար դյուրին չէր լինելու, ինչի համար էլ Կյուրոսը դիմեց Տիգրանի աջակցությանը. **«Իսկ երբ Կյուրոսը տիրեց պարսից թագավորությանը՝ գրավեց Բաբելոնը և ազատեց գերեվարված հրեաներին, Գալա տունը՝ գալաթացիների**[29] **ցեղը 12 բյուր զորքով շարժվեց նրա դեմ: Կյուրոսը գրեց Տիգրանին, որպեսզի օգնություն ցույց տա իրեն, որովհետև բարբարոս և խուժադուժ մի ցեղ գալիս էր՝ պատերազմելու և խլելու հրեից գերիներին: [Տիգրանը] բարեկամությունը պահպանելու նպատակով նույն Քսերքսեսին ու նրա որդի Արշեզին 40 հազարով ուղարկում է օգնության: Գնացին և Տավրոս լեռան***

---

28 Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, Երևան 1990 թ., էջ 48:

29 Գալաթացիներ (Գալաթներ), կելտական ցեղեր, որ մթա 278–277 թթ. ստեղծեցին պետություն՝ Գալաթիան, Անկյուրա (Անկարա) կենտրոնով: Իրենց լեզուն, բարքերը պահպանվեցին մինչև V դարը:

ստորոտում հանդիպեցին [Կյուրոսին]։ Ճանապարհին երկար ժամանակ անցկացնելուց հետո հասան մինչև Աղձնիքի Արզն [գավառը։ Գերեվարված հրեաների] եզր մարգարեն և Սաղաթիել թագավորը վախճանվել և թաղվել էին այնտեղ՝ Մաբակատինայում, մի բլրակի վրա։ Եվ ոչ պակաս քան մեկ ամիս պատերազմեցին։ Հայոց զորքը քիչ քաջություն չցուցաբերեց. նա շարժեց պարսից ամբողջ զորքի, այլև օտարների զարմանքը։ Գալաթացիների զորքը՝ մեծից մինչև փոքրը, ջարդվեց. նրանցից ոչ մեկը կենդանի չմնաց։ Իսկ Իսրայելի որդիները վերադարձան իրենց երկիրը։ Մինչև սուրբ քաղաք Երուսաղեմ նրանց առաջնորդեցին Քսերքսեսն ու Արշեզը, [ապա] հրեաների առաջնորդությունը վստահեցին Զորաբաբելին՝ Սաղաթիելի որդուն՝ Հուդայի ցեղից և ապա հաղթական վերադարձան Մեծի զորությամբ»[30]։

Վահագն Երվանդյան

Տիգրանը երեք որդի ունեցավ՝ Բաբը, Տիրանը և Վահագնը։ Նրանցից հիշատակություն մնացել է միայն Վահագնի (Ք.ա. 524-515 թթ.) մասին, ով, ըստ Մովսես Խորենացու, փոխարինել է Տիգրանին՝ նստելով Հայոց գահին։

Վահագնից շատ քիչ բան է պահպանվել՝ չնայած նա մեծ համբավ է ունեցել։ Վահագնը, հավանաբար, թե՛ արտաքնապես, թե՛ առաքինությամբ և թե՛ արիությամբ չի զիջել իր հորը՝ Տիգրանին։ Վահագնին ձոնել են առասպելական բնույթի հիմներ, որոնցից պահպանվել է միայն մեկը.

«Երկնում էր երկինք, երկնում էր երկիր,
Երկնում էր և ծովը ծիրանի.
Երկուսիը բռնել էր ծովում
Նաև կարմրիկ եղեգնիկն։

Եղեգնի փողով ծուխ էր ելնում,
Եղեգնի փողով բոց էր ելնում.
Եվ բոցից ելնում էր, վազում
Մի պատանեկիկ.

[30] Թովմա Արծրունի և Անանուն, Պատմություն Արծրունյաց տան, Երևան 1978 թ., էջ 62:

Վազում էր խարտյաշ մի պատանեկիկ՝
Նա ճուր մազեր ուներ, (ապա թե)՝
Բոց մուրում ուներ,
Եվ աչերն էին արգակներ»[31]:

Վահագնին համեմատել են հին հունական առասպելների հերոս Հերակլեսի հետ. ***«Տիգրանի որդի Վահագնը փառավորեց իրեն այնպիսի հերոսություններով, որ հայերը գովաբանում են նրան՝ ժողովրդական երգերում համեմատելով հունական աստվածային Հերակլեսի հետ»***[32]*:*

Վահագնին անվանում էին նաև «Վիշապաքաղ», ժողովրդական ավանդություններում համարում էին, որ նա կոտորել է վիշապներին՝ ազատելով ժողովրդին այն նեղություններից, որ դրանք պատճառել են մարդկանց:

Հետագայում այդ ավանդություններից դրդված՝ Վահագնին աստվածացրել են. ***«Բայց ասում են նաև, թե սա աստվածացրած է. վրաց աշխարհում սրա հասակով արձան կանգնեցնելով՝ պատվում էին զոհերով»***[33]*:*



Հեթանոսության շրջանում հեշտ էր առասպելական երգերի, ասույթների և ձոների ազդեցությունից ելնելով՝ մարդկանց աստվածացնել, բայց դրանք ընդամենը դատարկ անոտիապաշտություն էին:

Ինչ վերաբերում է Վահագնին Վիշապաքաղ անվանելուն, դրա բացատրություն էլ տալիս են պատմաբանները. մարաց թագավոր Աժդահակի անվանումը թարգմանվում է որպես «վիշապ», ազգակիցներն էլ անվանվել են «վիշապազուններ»: ***«Այս բաները ճշմարտապես պատմում են թվելյաց երգերը, որ, ինչպես լսում եմ ախորժելով՝ պահել են գինեվետ Գողթն գավառի կողմի մարդիկ... այլաբանաբար հիշելով և Աժդահակի սերունդներին, նրանց վիշապազուններ կոչելով: Որովհետև Աժդահակ մեր լեզվով նշանակում է վիշապ»***[34]*:*

Հիշենք, որ Տիգրանը 10 հազար մեդացիների բերեց և բնակեցրեց

---

31 Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, Երևան 1990 թ., էջ 54:

32 Виктор Абаза, История Армении, С. Петербургъ 1888 г., ст. 31.

33 Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, Երևան 1990 թ., էջ 54:

34 Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, Երևան 1990 թ., էջ 52–53:

Հայաստանում. նրանց մեջ էին նաև Աժդահակի որդիները, այսինքն՝ վիշապազունները: Հաստատվելով Հայաստանում՝ հետագայում նրանք, հավանաբար, իրենց ազգակիցներին էլ են հորդորել, որ Մարաստանից հեռանալով՝ տեղափոխվեն իրենց մոտ բնակվելու: Նրանք էլ եկել են և ապա բազմանալով՝ սկսել են ամբարտավանանալ և նեղել հայերին:

*Վահագնը այդ անշնորհակալ մեդացիներին սրի է քաշել՝ ազատելով հայ բնակչությանը դրանց ոտնձգություններից: Իսկ շնորհակալ հայ ժողովուրդն այդպիսի երգեր է ձոնել իր արքային, ով Աժդահակ – Վիշապի վիշապազուն սերունդներին է կոտորել, մնացածին էլ աքսորել է Հայոց աշխարհից: **«Վահագնը՝ Տիգրան Ա-ի կրտսեր որդին, իր քաջագործությունների համար երգվեց հայ վիպասաններից, որոնք Հերակլեսի հետ համեմատեցին նրան, վիշապների՝ գուցե մարերի գաղթականության հետ կռված ու հաղթած լինելու համար, ինչից ելնելով՝ Վիշապաքաղ անունը ստացավ: Հայերն, այս դյուցազունի մարդկային ծնունդը մոռանալով, գերբնական ծագում տվեցին նրան»**[35]:*

Մի գեղջկական ասք էլ է պահպանվել Վահագնի մասին. իբր նա, գողանալով իրենից մոտ 1200 տարի առաջ ապրած Ասորեստանի արքա Բարշամի հարդը, վեր է խոյացել երկնակամարով, իսկ ճանապարհին այդ հարդը սկսել է թափվել իր հետևից՝ հետք թողնելով, որից էլ իբր առաջացել է Հարդագողի ճանապարհը՝ Միր Կաթին համաստեղությունը:

Յավոք, այսօր էլ իրականությունից հեռացած որոշ հայորդիներ, հետևելով վիպասաններից մնացած առասպելներին, անտեսում են պատմական փաստերը և աստվածացնում են սովորական մարդուն՝ մեջքով շրջվելով Ճշմարտությանը՝ իրենց և մեր նախնիների Տեր Աստծուն՝ երկնքի և երկրի, երևելիների և աներևույթների Արարչին:

*Վահագնը՝ որպես սովորական մահկանացու, ունեցավ նաև ժառանգներ. **«Սրա սերունդներն են Վահունիները: Սրա կրտսեր որդուց՝ Առավանից, ծագել են Առավենյանները: Սրա որդին էր Առավանը, սրանը՝ Ներսեհը, սրանը՝ Զարեհը. սրա սերնդից են Զարեհավանյան կոչված ցեղերը: (Զարեհի) առաջին որդին էր Արմոգը, սրանը՝ Բագամը, սրանը՝ Վահանը, սրանը՝ Վահեն»**[36]:*

---

35 Ս. Պալասանյան, Պատմություն Հայոց, Թիֆլիզ 1890 թ., էջ 43-44:


36 Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, Երևան 1990 թ., էջ 54:

Հայաստանն Աքեմենյան Պարսկաստանի ժամանակաշրջանում

«Որքան ավելի էի խորանում Հայաստանի ուսումնասիրության մեջ, այնքան ավելի պարզ էին իմ առջև պատկերվում նրա պատմական՝ ճակատագրական իրողությունների ու մեծ մարդկանց կերպարների ուրվագծերը»[37]:

Կյուրոս Մեծին Աքեմենյան կայսրությունում փոխարինում է նրա որդի Կամբյուսես II-ը, որն ավելի է ընդարձակում կայսրության սահմանները և գրավելով Եգիպտոսը՝ ն.Ք. 525 թ. նստում է փարավոնի գահին: Երբ նա տեղեկանում է, որ ապստամբություն է բռնկվել իր դեմ, շտապում է հասնել Պարսկաստան, սակայն ճանապարհին վախճանվում է, իսկ նրա փոխարեն գահ է բարձրանում Դարեհ I-ը:

*Դարեհի՝ գահ բարձրանալուց քիչ անց նորից կայսրության կազմի երկրները սկսում են ապստամբել. «**Մ.թ.ա. 522-520 թթ. Դարեհը ձեռնամուխ է լինում ապստամբական շարժման ճնշմանը և տերության վերամիավորմանը: Նրա՝ այդ գործողությունների նկարագրությունն ու փառաբանումն են պարունակում հայտնի Բեհիստունյան արձանագրությունները»**[38]:*



*Քսանից ավելի երկիր էր մտնում պարսկական գերիշխանության կազմում: Հայաստանը նույնպես դարձել էր հարկատու՝ ներքին հարցերում հնարավորինս պահպանելով իր ինքնավարությունը: Եվ այդ ապստամբ երկրների շարքերն անցնելով՝ նա էլ է դադարում է հարկեր վճարել: Դարեհն էլ սկսում ապստամբ երկրների դեմ ռազմական գործողություններ կիրառել: Նա զորք է ուղարկում նաև Հայաստան: Դեպի Հայաստան ուղարկված զորքերից մեկի հրամանատարը հայազգի Դադարշիշն էր. **«Ահա, ապստամբած Արմենիայի, այսինքն՝ Հայաստանի դեմ Դարեհը երկու մեծ բանակ է ուղարկում***

---

37 Валерий Брюсов, Поэзия Армении, Москва 1916 г.

38 Հայ ժողովրդի պատմություն Երևան 1985 թ., էջ 34:

երկու թևերից հարվածելու համար։ Բանակներից մեկը վարում է հայ («արմիացի») Դադարշիշը, մյուսը՝ պարսիկ Վահումիսան»[39]։

Սկսվում է հայ-պարսկական հակամարտությունը։ Պարսկական այդ երկու զորագնդերը տարբեր կողմերից հարձակում են գործում, և ըստ Դարեհի թողած Բեհիսթունի արձանագրության՝ նրա բանակը հինգ անգամ անընդմեջ հաղթանակ է տանում։ «Դարեհ թագավորն ասում է. «Արդ, Արմենիա ուղարկեցի մի արմինացի, իմ՝ Դադարշիշ անունով ծառային, և այսպես պատվիրեցի. «Գնա և նվաճե այդ ապստամբ զորքը, որ ինձ չէ հպատակվում»։ Դադարշիշը գնաց՝ Արմինիան նվաճելու։ Երբ եկավ Արմինա, ապստամբները դուրս ելան Դադարշիշի դեմ ճակատամարտ տալու համար։ Դադարշիշը ճակատամարտն ընդունեց։ Արմինայի մեջ Զուզա անունով մի ավան կա. ճակատամարտը տեղի ունեցավ այնտեղ։ Արամազդն ինձ օգնեց։ Շնորհիվ Արամազդի՝ իմ բանակը շատ մարդ կոտորեց թշնամու բանակից։ Թուրավահարա ամսի 8-ն էր, երբ ճակատամարտը տեղի ունեցավ»»։ «Դարեհ թագավորն ասում է. «Ապստամբները երկրորդ անգամ հավաքեցին իրենց ուժերը և նորից դուրս ելան՝ Դադարշիշի դեմ պատերազմի։ Արմինայի մեջ Տիգրա անունով մի բերդ կա. Ճակատամարտը տեղի ունեցավ այնտեղ։ Արամազդն ինձ օգնեց։ Շնորհիվ Արամազդի՝ իմ բանակը թշնամու բանակը հալածեց։ Թուրահավարա ամսի 18-ին էր, երբ ճակատամարտը տեղի ունեցավ»»[40]։

Այդ արձանագրություններում շարունակվում են գրառումները նույն այս ոճով, և տեղեկացվում է պարսիկ զորապետի կողմից հաջորդ հաղթանակների մասին։ Սակայն ըստ մասնագետների՝ այդ ամենն այնքան էլ այդպես չի եղել, ինչպես ներկայացնում է Դարեհը։ «Հակառակ Դարեհի պարծենկոտ հայտարարություններին՝ առաջին երեք ճակատամարտերում հաղթող էին հանդիսացել ոչ թե պարսիկները, այլ՝ հայերը։ Հատկապես երրորդ ճակատամարտում, ինչպես երևում է արձանագրության հետագա վկայություններից, հայերը ոչ միայն գլխովին ջախջախել էին պարսկական բանակը և նրան դուրս քշել Հայաստանի սահմաններից, այլև, հետապնդելով թշնամուն՝ ներխուժել էին Ասորեստանի հյուսիսային շրջանները։

Պարսկական բանակի կրած անհաջողության պատճառով Դարեհը ստիպված է լինում փոխել իր զորահրամանատարին։ Վեց ամիս հետո նա նոր բանակ է ուղարկում Հայաստան՝ Վահումիսա անունով պարսիկ զորավարի ղեկավարությամբ։ Պարսկական բանակի և ապստամբների միջև մղվում է երկու նոր ճակատամարտ։

Չնայած արձանագրության միաձև ոճին և միակողմանի բնույթին՝ դժվար չէ նկատել, որ հայերը երկարատև, համառ ու հերոսական կռիվ-

---

39 Հայ ժողովրդի պատմություն, Երևան 1985 թ., էջ 35:

40 Հայ ժողովրդի պատմություն, հ. I, Երևան 1971 թ., էջ 448:

ներ են մղել պարսկական զավթիչների դեմ»[41]*։*

Բայց ի վերջո, հայկական բանակը տեղի է տվել կայսերական բանակին, և երկրի մի մասը հնազանդվել է Դարեհի կողմից կառավարվող Աքեմենյան Պարսկաստանին։

«Մ.թ.ա. 521 թ. ընթացքում Դարեհի զորավարները հակահարված էին ստացել հայկական զորքերից։ Այնուամենայնիվ, Հայաստանի հարավային և արևմտյան շրջանները՝ հարևան այլ հողերի հետ մեկտեղ, ընդգրկվեցին XIII և XVIII սատրապություններուի մեջ։ Պարսկաստանի տիրապետության տակ հայտնված հայկական երկրամասերն օգտվում էին ներքին ինքնավարությունից, իսկ Հայաստանի մեծագույն՝ արևելյան մասը պահպանել էր թագավորական իշխանությունը՝ Հայկազուն-Երվանդյանների գլխավորությամբ։ Երկրի կենտրոնները շարունակում էին մնալ Արմավիրը, Էրեբունին, Վանը»[42]*։*

Այդ անընդմեջ ապստամբությունների շրջանում Բաբելոնում էլ է ապստամբություն բռնկվում։ Որքան էլ զարմանալի է, այդ ապստամբության գլխին կանգնած էր հայազգի մի իշխան՝ ըստ Դարեհի արձանագրության, ով հայտարարում է, որ ինքը Բաբելոնի վերջին արքա Նաբոնիդի որդին է, և որ իրեն նույնպես անվանում են Նաբուգոդոնոսոր։

*Բեհիսթունի արձանագրությունների երրորդ սյունակում այսպես է գրված այդ մասին. **«Այսպես է ասում Դարեհ արքան. «Երբ ես դեռ գտնվում էի Պարսկաստանում և Մարաստանում, բաբելացիները ապստամբեցին իմ դեմ՝ երկրորդ անգամ։ Մի հայ մարդ, Արաքա անվամբ, որդին Խալդիտի, ապստամբեց Բաբելոնում։ Դուբալ շրջանից նա այսպես էր խաբում ժողովրդին. «Ես Նաբուգոդոնոսորն եմ՝ Նաբոնիդի որդին»։ Այդ ժամանակ Բաբելոնի ժողովուրդը խռովություն բարձրացրեց իմ դեմ և անցավ Արաքայի կողմը։ Նա գրավեց Բաբելոնը և դարձավ թագավոր՝ Բաբելոնում»։***

Դարեհ արքան ասում է. «Ես զորք ուղարկեցի Բաբելոն։ Վինդափարնա անվամբ իմ պարսիկ ծառային դարձրեցի պետ և ասացի նրան. «Գնա, ջախջախի բաբելական զորքը, որ չի հնազանդվում ինձ»։ Վինդափարնան ճանապարհվեց դեպի Բաբելոն։ Արամազդն ինձ օգնեց։ Արամազդի ողորմությամբ՝ Վինդափարնան հաղթեց բաբելացիներին և նրանց կապած բերեց ինձ մոտ»»[43]*։*

Դարեհը մահապատժի է ենթարկում բոլոր՝ ապստամբության գլուխ անցածներին։

Հետաքրքիր է, որ ըստ այդ արձանագրության՝ Բաբելոնում այդ ժամանակ գոյություն ուներ հայկական համայնք, որի կազմում, հավանա-

---

41 Հայ ժողովրդի Պատմություն, սկզբից մինչև XVIII դարի վերջը, Երևան 1975 թ., էջ 89:

42 Է.Լ. Դանիելյան, Ա. Ա. Մելքոնյան, Հայոց Պատմություն, Երևան 2008 թ., էջ 43:

43 Дарий I «Бехистунская надпись». Համացանց:

բար, եղել են Բաբելոնը մոտ երկու հարյուր տարի իրենց իշխանության տակ պահած հայ-քասեցիների սերունդներից։ ***«Միջագետքում հնուց ի վեր եղել է հայկական բնակչություն (ինչպես նաև հնդիրանական). դա պարզ ցույց են տվել նորագույն հայտնագործությունները։ Նույնիսկ մ.թ.ա. VI դարում պարսից Դարեհ I Աքեմենյան թագավորի ժամանակ Բաբելոնում եղել է հայկական բնակչություն, և ըստ Բեհիսթունի արձանագրության՝ Դարեհի դեմ Բաբելոնում ապստամբողը եղել է վերը հիշված հայ Արաքան»***[44]։

Դարեհը, երբ հաստատվեց Բաբելոնում, ինչպես՝ Նաբուգոդոնոսորը և Կյուրոսը, ինքն էլ առնչվեց Դանիել մարգարեի հետ, որն արդեն խորը ծերության էր հասել։ Դարեհն էլ, տեսնելով Դանիելի առաքինի վարքը, նույնպես մեծարեց նրան, ինչը նորից դարձավ պատճառ, որպեսզի բաբելոնյան իշխանավորներից ոմանք, նախանձելով Դանիելին, սկսեն խարդավանքներ նյութել նրա դեմ, ինչի արդյունքում Դանիելը նորից հայտնվեց առյուծների գբում, սակայն Տերը նորից Իր մարգարեին անվնաս պահեց։

Իսկ երբ ամեն ինչ պարզվեց, Դարեհը պատժեց դավադիրներին, և խոնարհվելով Դանիելի Տեր Աստծու առջև՝ հրովարտակ գրել տվեց և տարածեց. ***«Այն ժամանակ Դարեհ արքան հետևյալը գրեց բոլոր ազգերի, ժողովուրդների և լեզուների մարդկանց, որ բնակվում էին ամբողջ աշխարհում. «Թող շատանա ձեր խաղաղությունը. իմ կողմից արվեց այս հրամանը իմ թագավորության բոլոր իշխանություններին, որպեսզի երկնչեն և դողան Դանիելի Աստծուց, որովհետև նա է կենդանի Աստվածը և կա հավիտյան. նրա արքայությունը չի կործանվի, և նրա տերությունը կմնա մինչև վերջ։ Նա է, որ օգնական է լինում և փրկում, հրաշքներ է գործում երկնքում և երկրում, նա է, որ Դանիելին փրկեց առյուծների բերանից»***[45]։



Դարեհի այս պատգամը, բնականաբար, հասել է նաև Հայաստան։ Ճշմարիտ հավատքի շողերը թե՛ նման պատգամների, թե՛ անձնական

---

44 Ռ.Ա. Իշխանյան, Հայ ժողովրդի ծագման ու հնագույն պատմության հարցեր, Երևան 1988 թ., էջ 77–78:

45 Դան. 7:25–28

շփումների միջոցով պարբերաբար ճառագել են Հայոց աշխարհում։

Դառնալով Վահագն Երվանդյանի մասին հայոց մեջ պահպանված պատմական սուղ կամ դեռ չբացահայտված դեպքերին՝ միայն կարող ենք արձանագրել, որ նրանից հետո Հայոց գահին նստեց մի քանի արքա, որոնց մասին չեն պահպանվել տեղեկություններ, բացի նրանց անվանումներից և, որ նրանք աքեմենա-պարսկական ծագում ունեին.

Հիդարնես I (Ք.ա. VI-V դդ.),

Հիդարնես II (Ք.ա. V դ.),

Արտաշիր (Ք.ա. V դարի II կես),

Իսկ Արտաշիրից հետո հայոց գահին է նստում Երվանդ II Օրոնտեսը՝ Ք.ա. մոտ 404-360-ական թթ.։

Հունական ռազմաջոկատի անցումը Հայաստանով

Այս Երվանդ II-ի ժամանակ Աքեմենյան Պարսկաստանի գահին էր նստել Արտաքսերքսես II-ը (404-358 թթ.)։

*Նրա դեմ ապստամբություն բարձրացրեց Կյուրոս Կրտսեր անվամբ մեկը։ Սա իրեն հավատարիմ զորքերին միացրեց նաև հունական 10 հազարանոց վարձու մի ռազմաջոկատ, որի առաջնորդն էր զորավար և պատմագիր Քսենոփոնը։ Սակայն Կյուրոս Կրտսերի պարտությունն ու մահը ստիպեցին հունական այդ զորագնդին՝ իրենց առաջնորդով հանդերձ, ձեռնունայն բռնել հետդարձի ճանապարհը դեպի հայրենիք՝ Հունաստան։ Մի քանի երթուղներից նրանք ընտրեցին Հայաստանով ճանապարհը. **«Զորավարները որոշեցին, որ պետք է իջնել լեռների միջով դեպի կարդուխների երկիրը. քանզի ասել էին, թե նրանց երկրով անցնելուց հետո՝ կհասնեն Արմենիա, որին իշխում էր Օրոնտեսը, և որը մեծ էր ու հարուստ»**[46]։*


Քսենոփոնը Պարսկաստանից նահանջի ժամանակ եղած դեպքերը սկսեց գրի առնել, ինչը վերածվեց պատմական հետաքրքիր տեղեկություններով հարուստ գրքի, որն անվանվեց «Անաբասիս»։

*Քանի որ նրանք անցան Հայաստանով, այդ գրքում տեղ գտան նաև Հայաստանի մասին որոշ տեղեկություններ։ **«...Գետն անցնելուց հետո՝ հելլեննները կեսօրվա շուրջ դասավորվեցին ու ճանապարհ ընկան Արմենիայի միջով և ամբողջ ժամանակ դաշտավայրով ու հողաբլուրներով***

[46] Քսենոփոն, Անաբասիս, Երևան 1970 թ., էջ 81:

գնալով՝ անցան ոչ պակաս, քան հինգ փարսախ... Այն գյուղը, ուր նրանք հասան, մեծ էր, ուներ ապարանքներ՝ սատրապի համար, իսկ տների մեծագույն մասի վրա կային աշտարակներ: Այստեղ նաև պարենն առատ էր: Այստեղից առաջ գնացին երկու տասը փարսախ, մինչև անցան Տիգրիս գետի ակունքը... Եվ նրանք հասան ապարանքի մոտ, որի շուրջը բազմաթիվ գյուղեր կային, լի՝ զանազան պարեններով... Այստեղ նրանք արդեն ունեին անհրաժեշտ բոլոր տեսակի պարենի և բարիքների առատություն՝ մորթելու անասուններ, հաց, անուշահոտ հին գինիներ, չամիչ, ամեն տեսակ ընդեղեն»[47]:

Մտնելով հայկական գյուղերը՝ նրանք իրենց կերակրի և հանգստի կարիքները բավարարում էին տեղաբնակների ունեցվածքի հաշվին՝ երբեմն էլ վճարելով ապրանքի դիմաց: Բացի գինուց՝ հայերն օգտագործել են նաև գարեջուր, ինչը զարմացրել է գարեջրից անտեղյակ Քսենոփոնին: Դրանից պետք է եզրակացնել, որ հույները, չեն իմացել, որ կարելի է գարուց նման խմիչք ստանալ: ***«Տներում կային այծեր, ոչխարներ, եզներ, հավեր և սրանց ձագերը... Այնտեղ կար նաև ցորեն և գարի, և ընդեղեն, և կրատերների մեջ գարուց պատրաստած գինի, որի երեսին լողում էին գարու հատիկներ. Կրատերի մեջ կային նաև եղեգներ՝ մեծ ու փոքր՝ առանց ծնկի: Ծարավելու դեպքում մարդ պետք է եղեգի ծայրը բերանին դներ ու ծծեր: Եվ այն շատ թունդ էր, եթե ջուր չխառնեին, իսկ սովոր մարդու համար շատ ախորժելի ըմպելիք էր»***[48]:



Հույներն աշխատել են այն ուղիներն ընտրել, որ խուսափեն քաղաքներից, քանզի կարող էին մեծ ընդհարումներ լինել: Իսկ ցրտից ու սովից հյուծված զորքը շատ մեծ կորուստներ կունենար, դրա համար էլ ընտրել են այնպիսի երթուղիներ, որ թե՛ հեռու պահվեին մեծ ընդհարումներից և թե՛ ապահովվեին սննդով: ***«Հունական ռազմաջոկատը Հայաստանով անցնելիս չի հանդիպել քաղաքների, բերդերի ու տաճարների: Հավանական է, որ հույները պարզապես շրջանցել են դրանք՝ խուսափելով ընդհարումներից և ընտրելով իրենց ճանապարհը պարեն ունեցող ու անպաշտպան գյուղերի միջով, որոնք և արժանացել են Քսենոփոնի ուշադրությանը: Նա նկարագրում է գյուղական տներն ու կենցաղը: Յուրաքանչյուր գյուղ ունեցել է իր ավագը: Քսե-***

[47] Քսենոփոն, Անաբասիս, Երևան 1970 թ., էջ 92–93:

[48] Քսենոփոն, Անաբասիս, Երևան 1970 թ., էջ 97:

նոփոնի նկարագրած միջավայրը ունի գյուղական համայնքների բոլոր հատկանիշները»[49]***։***

Այս ժամանակաշրջանում, չնայած որ Հայաստանն Աքեմենյան Պարսկաստանին հարկեր էր վճարում և այլևս չուներ առաջվա կարգավիճակը (երբ Հայաստանն էր տարբեր երկրներից հարկեր ստանում), սակայն, միևնույն է, երկրի տնտեսությունը կարողանում էր իր բարգավաճումն ապահովել։ ***«Հայաստանը,-ասում է Քսենոփոնը,-մեծ է, հարուստ և բարեկեցիկ»։ Հույն պատմիչի այս բնութագրումը պարզ մի ապացույց է, որ իրոք՝ VI-IV դարերում Հայաստանը գտնվել է տնտեսական զարգացման բավական բարձր աստիճանի վրա։ Այդ զարգացման ցուցանիշ է հանդիսանում նաև Հայաստանի երկու սատրապությունների՝ Աքեմենյան Պարսկաստանին տարեկան վճարած 600 արծաթ տաղանդի հարկագրումը, որի կշիռը հավասար էր մոտ 19,584 կիլոգրամ արծաթի, իսկ արժեքով՝ մոտ 2,400,000 ոսկի ռուբլու։ Իր ժամանակի համար այս մեծ հարկագրումը կարող էր վճարել միայն տնտեսապես զարգացած երկիրը, մանավանդ, եթե համեմատության համար նշենք, որ Հին Արևելքի ամենահարուստ, ամենազարգացած երկրներից Եգիպտոսը տարեկան վճարում էր 700, Բաբելոնը՝ 1000, իսկ Փոքր Ասիան, իր երեք սատրապությունների հետ միասին, 1760 արծաթ տաղանդ»***[50]***։***

Որպես հարկ՝ բացի արծաթից, հայերը տվել են նաև նժույգներ և գինի, ինչի մասին է տեղեկացնում է Պերսեպոլիսի հարթաքանդակներից մեկը։ ***«Հայաստանը հնագույն ժամանակներից եղել է ձիաբուծության (բուծվում էր նիսեյական տեսակը) կենտրոն, որտեղից Առաջավոր Ասիայի երկրներ են առաքվել ազնվացեղ ձիեր։***

Ըստ Ստրաբոնի՝ Հայաստանից տարեկան Պարսկաստան էր ուղարկվում 20 հազար նժույգ՝ Միթրական (Միհրական) տոնի համար»[51]***։***



Հայաստանով է անցել Աքեմենյան կայսրության արքայական 2400

[49] Հայ ժողովրդի պատմություն, Երևան 1985 թ., էջ 37:

[50] Հայ ժողովրդի Պատմություն, սկզբից մինչև XVIII դարի վերջը, Երևան 1975 թ., էջ 95:

[51] Է.Լ. Դանիելյան, Ա. Ա. Մելքոնյան, Հայոց Պատմություն, Երևան 2008 թ., էջ 43:

կմ ճանապարհի 330 կմ հատվածը, ինչն էլ իր հերթին նպաստել է տնտեսության զարգացմանը։

Այսպես, Հայաստանում շարունակվում էր կյանքը։ Երվանդ II Օրոնտեսին Ք.ա. 336 թ. փոխարինում է Երվանդ III Օրոնտեսը։ Նրա ժամանակ Պարսկաստանի գահը զբաղեցնում էր Դարեհ III Կոդոման՝ Աքեմենյան հարստության վերջին ներկայացուցիչը։

Ալեքսանդր Մակեդոնացին և Հայաստանը

«Հայերն աշխարհի ամենահին ժողովուրդներից մեկն են, նրանք ունեին մարմարյա պալատներ, երբ դեռ Աստերիքսն աշխարհ չէր եկել։ Բաբելոնը, փարավոնները, Հռոմը, քրիստոնեության սկիզբը՝ 3000 տարվա ընթացքում հայերը եղել են Արևելքի և արևմուտքի պատմության վկաներ։ Նրանք գործ են ունեցել Դարեհի, Քսերքսեսի, Ալեքսանդր Մեծի, Կեսարի, Նապոլեոնի և Կլեմանսոյի հետ։ Իրենց երկիրը՝ Հայաստանը, բաղկացած է մի շարք բարձրադիր սարահարթերից, որ ձգված են Արարատ լեռան երկու կողմից. այստեղ է, ըստ լեգենդի, հանգրվանել Նոյան տապանը»[52]։

Դիտարկենք այն ժամանակաշրջանը, երբ Մակեդոնիայի գահին է նստում քսանամյա Ալեքսանդրը՝ փոխարինելով իր հորը՝ Փիլիպոս II-ին, որի ժամանակ ձևավորվել էր կայուն պետություն և մարտունակ բանակ։ Ալեքսանդրն, ամրապնդելով երկրի սահմանամերձ գոտիները, պատերազմ է սկսում Աքեմենյան Պարսկաստանի դեմ և ճանապարհին գրավելով Պարսկաստանի իշխանությանը հպատակված տարածքները՝ ընդհուպ մոտենում է բուն Պարսկաստանի սահմաններին։

Իսկ Պարսկաստանում գահակալող Դարեհ III-ը պատրաստվում է դիմագրավել Ալեքսանդրին՝ ներգրավելով իր բոլոր ուժերը նրա հաղթարշավը կասեցնելու համար։

Այդ պատերազմի և նրանում հայերի դերի մասին լավագույնս ներկայացվել է «Մեր Հաղթանակները» երկհատորյակի առաջին հատորում, որից էլ մեջբերենք տվյալ հատվածը։ ***«Ք.ա. 336 թ. հոր՝ Ֆիլիպ Բ-ի սպանությունից հետո Մակեդոնիայում գահ է բարձրանում քսանամյա Ալեք-***

[52] Жан-Пьер Ришардо, Армяне чего бы это ни стоило, смотри – Армяне [сборник], Ереван 1991 г., ст. 252.

սանդրը (Ալեքսանդր Ա կամ Ալեքսանդր Մակեդոնացի, Ք.ա. 336-323 թթ.)։ Ք.ա. 334 թ. մակեդոնա-հունական զորքերը Ալեքսանդրի գլխավորությամբ անցնում են Հելլեսպոնտոսը և շուտով Գրանիկոս գետի ափին պարտության մատնում պարսից փոքրասիական սատրապների միացյալ ուժերին։ Այս պարտությունն անակնկալի է բերում Աքեմենյան վերջին տիրակալ Դարեհ Գ-ին, որ ևս գահ էր բարձրացել Ք.ա. 336 թ.։ Նա բազմահազար զորքով ընդառաջ է գնում Ալեքսանդրին։ Ք.ա. 333 թ. գարնանը Կիլիկիայի Իսոսի դաշտում տեղի է ունենում մեծ ճակատամարտ։ Ճակատամարտի ժամանակ Դարեհ Գ-ի գլխավորությամբ պարսիկներն առաջնորդում էին աքեմենյան բանակի կենտրոնը, մարերը՝ աջ թևը, և հայերը՝ ձախ թևը։ Չնայած թվական մեծ գերակշռությանը՝ պարսից զորքը Իսոսի մոտ ծանր պարտություն է կրում։ Դատելով փաստերից՝ պարտության պատճառը մարերի առաջնորդությամբ կռվող աջ թևի փախուստն էր, որին հաջորդած խուճապից հետո սկսում է նահանջել ամբողջ բանակը։ Դարեհը փախչում է՝ ռազմականից ավելի ծանր՝ բարոյական պարտություն կրելով. գերի են ընկնում նրա մայրը, կինը և զավակները։

Պատմահայր Մովսես Խորենացին տեղեկացնում է, որ Ալեքսանդր Մակեդոնացու դեմ մարտնչել է Վահե Հայկազունին, որ զոհվել է «նրա ձեռքով» (գիրք Ա, գլ. ԼԱ)։

Անտիկ պատմագրությունից մեզ հայտնի է, որ հայերն աքեմենյան զորքի կազմում մասնակցել են Մակեդոնացու դեմ մղված երկու՝ Իսոսի և Գավգամելայի ճակատամարտերին։ Քանի որ հայտնի է, որ Գավգամելայի ճակատամարտում հայկական զորքերը ղեկավարել են Օրոնտես-Երվանդն ու Միթրաուստեսը, մնում է ենթադրել, որ Վահե Հայկազունին Իսոսի ճակատամարտին մասնակցած 47 հազարանոց հայկական բանակն է առաջնորդել և զոհվել այդ ճակատամարտում։

Իսոսի հաղթանակից հետո Ալեքսանդրը, ունենալով բացառիկ պատանդներ, չի հետապնդում Դարեհին, այլ շարունակում է արշավանքը դեպի Եգիպտոս։

Ի տարբերություն Միջերկրականի արևելյան ավազանի, որտեղ մակեդոնացիներին ցույց է տրվում լուրջ դիմադրություն՝ Եգիպտոսը նվաճվում է առանց զինված դիմադրության։

Ալեքսանդրն իրեն հայտարարում է եգիպտական աստված Ամոնի որդի և փարավոնների ժառանգ, հիմնում իր անվամբ առաջին քաղաքը՝ Ալեքսանդրիան։

Ալեքսանդրը Եգիպտոսից շարունակում է շարժվել Դարեհ Գ-ի հիմնական ուժերի դեմ։ Վճռական ճակատամարտը տեղի է ունենում Ասորեստանի հյուսիսում՝ Արբելայից ոչ հեռու գտնվող Գավգամելայի մոտ, 331 թ. հոկտեմբերի 1-ին։

Պատմական տեղեկանք. ***«Հայերին ղեկավարում էին Օրոնտեսն ու Միթրաուստեսը, կապադովկիացիներին՝ Արիակոսը։ Կելեսիրիայի և Միջագետքի ասորիներին առաջնորդում էր Մազեյոսը»։*** *Նույն հեղինակը մի քանի էջ հետո ավելացնում է՝* ***«Աջ թևի առջևում շարված էին հայկական և կապադովկիական հեծելազորները և հիսուն մանգաղավոր մարտակառք»։*** *Արրիանոս Փլավիոս, Ալեքսանդրի արշավանքը, գիրք* III, *8 (5-6) և 11 (7)։*

«Աջ թևում կանգնած էին Մեծ Հայքի հայերը, կադուսիներն ու կապադովկիացիները, ասորիներն ու մարաստանցիները. նրանք նույնպես ունեին մանգաղակիր մարտակառքեր»։ *Քվինտուս Կուրտիուս Ռուֆուս, Ալեքսանդր Մակեդոնացու պատմությունը, գիրք* IV, XII, *12*

Ճակատամարտն սկսվում է առավոտյան և շարունակվում ամբողջ օրը։ Դարեհը կրկին պարտվում և փախուստի է դիմում։ Մակեդոնացին սկսում է հետապնդել Դարեհին, ինչը, սակայն, ձախողվում է աքեմենյան բանակի աջ թևի հերոսական գործողությունների հետևանքով, իսկ, ինչպես նշվել է, աջ թևի վճռորոշ ուժը հայկական զորքն էր։ Ստեղծվում է մարտավարական առումով արտակարգ բարդ իրավիճակ։ Աքեմենյան զորքի կենտրոնը ղեկավարող Դարեհ Գ-ն և ձախ թևը սկսում են նահանջել այն ժամանակ, երբ աջ թևն, ընդհակառակը, հակառակորդին մեծ կորուստներ պատճառելով՝ հաղթականորեն սկսել էր ճեղքել հունա-մակեդոնական զորքի աջ թևի մարտական դասավորությունը։ Հունա-մակեդոնական զորքի ձախ թևի հրամանատար Պարմենիոնն օգնություն է խնդրում Ալեքսանդրից, որը թվում է, թե կատարել էր մարտի իր մտահղացման հիմնական մասը. թեև մեծ դժվարությամբ, սակայն ճեղքել էր պարսիկների մարտակարգը և շատ հաջող հետապնդում էր իրականացնում։ Ալեքսանդրը հարկադրված է լինում դադարեցնել Դարեհի հետապնդումը և հրաժարվում է այդ պայմաններում սովորական համարվող թևանցման իրականացման մտքից։ Հարկադրված՝ ավելի խոր զորաշարժի դիմող մակեդոնական հեծելազորը համաշխարհային ռազմարվեստի պատմության մեջ առաջին անգամ իրականացնում է բարդ զորաշարժ՝ շրջանցում և թիկունքից հարձակվում աքեմենյան զորքի աջ թևի վրա։ Մակեդոնական ամբողջ բանակի կողմից շրջապատված հայոց այրուձին



հայտնվում է մարտադաշտի եզրին սեղմված իրավիճակում։ Հակառակորդի հիմնական ուժերին փախուստի մատնելուց և շրջանցումն իրականացնելուց հետո Ալեքսանդրը հույս ուներ մարտն ավարտել հակառակորդի աջ զորաթևի լիակատար ջախջախումով, մանավանդ որ Դարեհ Գ-ի խայտառակ փախուստը հուսահատության պետք է հասցրած լիներ հայոց այրուձիու զորամասերին։ Սակայն այս անելանելի թվացող իրավիճակում կատարվում է անսպասելին... Շարունակվող կատաղի մարտի ընթացքում (ջախջախման միանգամայն իրական սպառնալիքի պայմաններում), երբ պետք է կորցված լիներ զորքի ամբողջ ղեկավարումը, հերոսաբար կռվող աջ զորաթևի հրամանատարությունը կարողանում է իրականացնել վերախմբավորում և մարտակարգը հետ է շրջում։ Սկսվում են գործողություններ, որոնք դառնալու էին համաշխարհային ռազմարվեստի մեծագույն բարեփոխիչներից մեկի՝ Ալեքսանդր Մակեդոնացու փառքը ստվերող ամենանշանակալի իրադարձությունը։ Աջ թևի զորամասերն առաջնորդող հայոց այրուձին «արագ երթով նահանջի» հրաման է ստանում և ճակատից հակագրոհ սկսած Պարմենիոնի զորաթևի հարվածները կասեցնելուն զուգընթաց, փաստորեն, նոր գրոհի է անցնում իր թիկունքում հայտնված հեծելազորի վրա։



Շրջանցող զորաթևի հրամանատարությունը ստանձնած Ալեքսանդրին այս քայլը դնում է անելանելի իրավիճակի մեջ, քանի որ նրա մտքով իսկ չէր կարող անցնել, որ պարտված զորքի «մնացորդները» հանդգնություն կունենան՝ գրոհելու իր բանակի հարվածային խմբավորման վրա։

Իրադարձությունների անսպասելի շրջադարձը փոխում է մարտավարական իրավիճակը, և նախաձեռնությունն անցնում է հայոց այրուձիին։ Մարտավարական զարգացումների հիմնական թելադրողը դառնալով՝ հայոց այրուձին հուժկու գրոհով ճեղքում է իր թիկունքում հայտնված մակեդոնական հեծելազորի մարտակարգը և դուրս գալիս շրջապատումից։ Հայոց այրուձիի զորաշարժը (նահանջը) արդեն իսկ անվանի և բազմափորձ զորավարի հուշակ վայելող Ալեքսանդրի համար կրկնակի ծանր էր, քանի որ.

1. չի հաջողվում ջախջախել հայոց այրուձին,

2. նահանջելիս հայոց քաջերը ճեղքում են Ալեքսանդրի գլխավորած զորաթևի մարտակարգը, որն ամենահուսալին էր համարվում։

Պատմական տեղեկանք. ***«Իսկ մակեդոնացիների ձախ թևում, որն, ինչպես արդեն ասվեց, պահպանում էր Պարմենիոնը, մարտը թե՛ մեկ, թե՛ մյուս կողմի համար այլ պայմաններում էր ընթանում։ ...Պարմենիոնը հրամայեց իր հեծյալներին հայտնել Ալեքսանդրին, թե ինչ ծանր վիճակում են իրենք, և եթե, իբր, արքան արագորեն չգա օգնության, ապա ինքը չի կարողանա կասեցնել ընդհանուր փախուստը։ Երբ Պարմենիոնից այդ լուրը եկավ, արքան արդեն հեռու էր գնացել՝ սպառնալով փախչող թշնամու թիկունքին։ Նա հրամայեց կանգնեցնել սլացող ձիերին, կանգ առավ նաև ողջ ջոկատը։ Ալեքսանդրը կատաղած էր, որ իր ձեռքից խլեցին հաղթանակը և որ Դարեհին այժմ ավելի հեշտ կլինի փախչելը, քան՝ նրան հետապնդելը։***

...Ասպանդակելով ձիերին՝ բոլորը նետվեցին թշնամու վրա, և վերջիններս սկսեցին ոչ թե դանդաղորեն նահանջել, այլ՝ արագ երթով»։

Քվինտուս Կուրտիուս Ռուֆուս,
Ալեքսանդր Մակեդոնացու պատմությունը,
գիրք *IV, XVI*. 1-6

Հերոսաբար մարտնչած և արժանապատվորեն հայրենիք վերադարձած հայկական զորքերը Գավգամելայի ճակատամարտից հետո վերականգնում են Հայաստանի անկախությունը՝ Օրոնտաս-Երվանդ Գ-ն Մեծ Հայքում, իսկ Միթրաուստեսը՝ Փոքր Հայքում։ Մազեյոսը Մակեդոնացուն է հանձնում Բաբելոնը՝ փոխարենը նրա կողմից նշանակվելով Բաբելոնի սատրապ։ Երվանդ Գ-ի և Միթրաուստեսի օրինակին են հետևում և իրենց երկրներն անկախ հայտարարում Բակտրիայի կառավարիչ Բեսոսը, Փոքր Մարաստանի սատրապ Ատրոպատեսը և ուրիշներ։ Այսպիսով, հայկական զորքերի հերոսական մասնակցությունը Գավգամելայի ճակատամարտում, փաստորեն, ձախողում է Ալեքսանդրի ծրագրերը՝ այդ ճակատամարտով վերջ դնելու Աքեմենյան տերությանը։ Այն գոյատևում է ևս որոշ ժամանակ։



Ալեքսանդր Մակեդոնացին և անկախ Հայաստանը

Գավգամելայի ճակատամարտից հետո Ալեքսանդրը շարունակեց արշավանքը։ Դարեհ Գ-ը փախուստի ճանապարհին սպանվեց յուրայինների կողմից, որով էլ վերջ դրվեց Ք. ա. 550թ. Աքեմենյան տերությանը։

Հայաստանն այդպես էլ չնվաճվեց Ալեքսանդր Մակեդոնացու կողմից և չմտավ նրա տերության կազմի մեջ։ Հայաստանում շարունակեցին իշխել Օրոնտաս-Երվանդ Գ-ն և Միթրաուստեսը, որոնք Գավգամելայի ճակատամարտից և Աքեմենյան տերության կործանումից հետո հանդես եկան որպես անկախ թագավորներ համապատասխանաբար Մեծ Հայքում ու Փոքր Հայքում։

Պատմական տեղեկանք. ***«Արրիանոսը, որ առանց որևէ միջնորդի օգտվել է Մակեդոնացու զորարշավի օրագրերից, ինչպես նաև արշավի անմիջական մասնակիցներ Պտղոմեոսի և Արիստոբուլոսի աշխատություններից, բազմիցս խոսելով Ալեքսանդրի նվաճումների մասին և մանրամասն թվարկելով հպատակեցված երկրները, Հայաստանի անունը չի տալիս»։*** *ՀԺՊ, էջ 501։*

Ք. ա. 330-329թթ. ընթացքում Ալեքսանդրը Հայաստան ուղարկեց մի զորաբանակ՝ Մենոն զորավարի գլխավորությամբ՝ հանձնարարելով գրավել Բարձր Հայքի Սպեր (հունական աղբյուրներում՝ Սիսպիրիտիս) գավառի ոսկու հանքերի շրջանը, որը Ք.ա. III հազարամյակից ոսկու արդյունահանման հռչակավոր կենտրոն էր։ Ինչպես վկայում է հույն նշանավոր մատենագիր Ստրաբոնը, մակեդոնական բանակը գլխովին ջախջախվեց, իսկ հրամանատարին հայերը մահապատժի ենթարկեցին։

Պատմական տեղեկանք. ***«Ոսկու հանքեր կան Սիսպիրիտիսի մեջ, Կաբալայում, որտեղ Ալեքսանդրն ուղարկեց Մենոնին՝ զորքով. սա խեղդամահ արվեց տեղաբնիկների կողմից»։*** *Ստրաբոն, «Աշխարհագրություն», XI, 14-8*

Հայաստանում հունա-մակեդոնական զորքի պարտությունից և նրա հրամանատարին հրապարակային մահապատժի ենթարկելուց հետո Ալեքսանդր Մակեդոնացին փորձ անգամ չարեց՝ նոր մի արշավանք կազմակերպելու դեպի Հայաստան։ Թերևս, այդպիսով նա պարզապես խուսափեց փորձությունից։

Մակեդոնացին պարզապես խուսափեց փորձությունից և նոր բանակ չուղարկեց այն երկրի դեմ, որի զորքերի ունակությունը նա տեսել էր նախ Գավգամելայի ճակատամարտում, որտեղ նրանք խափանեցին իր ծրագրերը, ապա տեղեկացել նրանց կողմից Հայաստանի ոսկեհանքերը

նվաճելու ուղարկած մակեդոնական բանակի ոչնչացման մասին։

Ալեքսանդրն արշավանքն ավարտեց Ք.ա. 324թ., որից հետո հաստատվեց Բաբելոնում՝ հռչակելով այն իր տերության մայրաքաղաք։ Ք.ա. 323թ. հունիսի 13-ին, երեսուներեք տարեկան հասակում, առեղծվածային պայմաններում մահացավ՝ մինչ այդ համաշխարհային պատմության մեջ աննախադեպ մի աշխարհակալություն ստեղծած գործիչը։ Մահվանից հետո նրա ստեղծած տերությունը մասնատվեց նույնպիսի արագությամբ, ինչպես ստեղծվել էր։

Հայաստանն աննվաճ մնաց նաև Մակեդոնացու մահվանից հետո, երբ նրա զորավարների միջև սկսվեց ավելի քան երկու տասնամյակ տևած պատերազմների շղթան (դրանք հայտնի են որպես դիադոխների՝ ժառանգորդների պատերազմներ), որ ավարտվեցին Ք.ա. 301թ.՝ Մակեդոնացու աշխարհակալության մասնատումով։

Պատմական տեղեկանք. ***«Ալեքսանդր Մակեդոնացու մահից հետո (323թ. մեր թվ. առաջ) նրա նվաճած երկրները, ինչպես հայտնի է, իրենց մեջ բաժանեցին նրա զորավարները։ Այդ բաժանումը տեղի է ունեցել մի քանի անգամ՝ 323թ. Բաբելոնում, 321թ. Տրիպարադիսում և 315թ. Պերսեպոլիսում։ Բաժանման ցուցակները մեզ հայտնի են։ Սակայն ուշագրավ է, որ բաժանման ենթարկված երկրների շարքում ցուցակներից և ոչ մեկում հիշատակված չէ Արմենիան՝ ո՛չ Մեծ Հայքը, ո՛չ էլ Փոքր Հայքը»։*** *Մանանդյան Հ., Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հ. 1, Երկեր, Ա, Ե., 1977, էջ 97»* [53]։

Այդ ժամանակ Դանիել մարգարեն արդեն ննջել էր, և Ալեքսանդրին բախտ չվիճակվեց հանդիպել նրա հետ և լուսավորվել՝ ինչպես Կյուրոսի II-ը և Դարեհ I-ինը։



Անտիկ շրջանի հրեա պատմիչ և մատենագիր Հովսեփոս Փլավիոսի խոսքով՝ Երուսաղեմում Ալեքսանդրը կարդում էր Դանիել մարգարեի գրքերը[54]*, որտեղ գրված էր, որ մի հույն պետք է կործաներ պարսկական տերությունը։ Ալեքսանդրը համոզված էր, որ այդ մարգա-*

[53] Մեր Հաղթանակները, հտ. Ա, նախագծի հեղինակ Գագիկ Հարությունյան, Երևան 2010 թ., էջ 148–154:

[54] Flavius Josephus, The Antiquities of the Jews, XI, 337 viii, 5.

բեությունը հենց իրեն էր վերաբերում: Ըստ Փլավիոսի՝ նա երազում տեսնում է Տիրոջը, և այդ հայտնությունից ազդված՝ մտնում է Երուսաղեմի տաճարը և զոհ մատուցում Աստծուն:

Փաստորեն, Դանիել մարգարեն անձամբ շփվել է Նաբուգոդոնոսորի, Կյուրոս Մեծի և Դարեհ I-ի հետ, իսկ մահվանից հետո իր «Մարգարեություն՝ ըստ Դանիելի» գրքով՝ արդեն Ալեքսանդր Մակեդոնացու հետ, և նրանք բոլորն էլ խոստովանել են, որ չկա աստված՝ միակ ճշմարիտ Աստծուց բացի:

*Հավանաբար, հավատքի գալով, ինչպես մեր Տիգրան Երվանդյանը, որ հարձակվելով Մարաստանի վրա՝ ավիրեց նրանց կուռքերը՝ Ալեքսանդրն էլ է նույնպիսի կոշտ վերաբերմունք դրսևորում պարսկական կռապաշտական հավատալիքների հանդեպ. **«Տարբեր են եղել Ալեքսանդրի կերպարի ընկալումները՝ պարսկական իրականությունում: Միջին պարսկական (պահլավական) մշակույթում Ալեքսանդրը հիշատակվում էր՝ որպես «անիծյալ»: Նա մեղադրվում էր կրակապաշտական ատրուշանների ոչնչացման և զրադաշտական սուրբ գրությունների վերացման մեջ»**[55]:*

Դանիելը Կյուրոսի ժամանակ ոչնչացրեց Բելի մեհյանն ու կուռքը, սակայն Դանիելի մահվանից հետո բաբելացիներն այն վերակառուցեցին, իսկ երբ Քսերքսես I-ը մտավ Բաբելոն, նա նորից ավերեց այդ ամենը:

*Ալեքսանդրն այս անգամ անխոհեմություն ցուցաբերեց. ճիշտ է, նա կործանեց պարսկական պաշտամունքային համակարգը, սակայն մտնելով Բաբելոն՝ կարգադրեց վերակառուցել մարդկության և, հատկապես, հայերի թշնամի Բելի մեհյանը: **«Ալեքսանդրը, մտնելով Բաբելոն, հրամայեց բաբելացիներին վերականգնել տաճարները, որոնք Քսերքսեսը հրամայել էր կործանել, այդ թվում և՝ տաճարը Բելի՝ աստծո, որին առանձնահատուկ պաշտում էին բաբելացիները»**[56]:*

Հավանաբար, Աստծո դեմ ապստամբած Բելի պաշտամունքի վերականգնումն էլ դարձավ պատճառ, որ Մակեդոնացին գամվի մահճին:

Հայաստանն Աստվածաշունչ մատյանում հիշատակվում է՝ որպես առաջին մարդկանց բնակավայր, քանզի այստեղ, ինչպես ասվել է առաջին հատորում, Տիգրիս և Եփրատ գետերի ակունքների մոտ Արարչի կողմից ստեղծվեց եդեմական Դրախտը: Նաև Նոյ նահապետի ժամանակ Հայաստանն արդեն դարձավ մարդկության երկրորդ օրրանը: Այս բոլորը քաջ հայտնի էր հին աշխարհի մարդկությանը, և շատերը, տեսնելով այս աշխարհի ժամանակավոր և ունայն բնույթը, ձգտում էին գտնել անմահության գաղտնիքը: Դրա համար էլ ուղղություն էին վերցնում դեպի այս խորհրդավոր լեռնաշխարհը: Այդ առումով հատկապես հայտնի է

---

55 ՎԻՔԻՊԵԴԻԱ ազատ հանրագիտարան.

56 Արրիանոս Փլավիոս, Ալեքսանդրի արշավանքը, գիրք III, 16 (4):

մարդկության հնագույն պատմության մեջ հիշատակվող անձանցից մեկի՝ Շումերի արքա Գիլգամեշի դրամատիկ ճանապարհորդությունը դեպի անմահների երկիր՝ Արատտա, որտեղ՝ Արարատ լեռան ստորոտում, նա հանդիպեց Նոյ նահապետի հետ։

Այս դեպքերին նորից անդրադառնալու պատճառն այն է, որ նման պատմություն պահպանվել է նաև Ալեքսանդր Մակեդոնացու մասին։ ***«Անմահության հասնելու համար Ալեքսանդր Մեծն, ըստ հունական վեպի (գրի առնված Ք.ա. 240թ.), բռնում է «ճանապարհը դեպի Հայոց երկիր, որտեղ ակունքն է Եփրատի ու Տիգրիսի»***[57]***։ Նա հասնում է հրաշք-երկիր, ապա անցնում մութ աշխարհով, ներկայանում օրհնյալ մեկին և հասնում կենաց աղբյուրին։***

Իսկ Ալեքսանդրի մասին սիրիական վեպում նրա ճանապարհին հիշվում է Մասիս լեռնաշղթան[58]***։ Փաստորեն, հին արևելյան և հելլենիստական վիպական ավանդություններում «դեպի Արատտա ճանապարհը» փոխարինվում է «դեպի Հայոց երկիր ճանապարհով», Մաշու լեռները՝ Մասիս լեռնաշղթայով, երկու դեպքում էլ հերոսը գնում է դեպի Եփրատի (ու Տիգրիսի) ակունքները, անցնում խավարով, դրախտ հիշեցնող վայրով, ապա մութ աշխարհով կամ մահվան ջրերով, հանդիպում աստվածընտրյալ հերոսին և ստանում անմահություն։ Իրականում երբևէ Հայաստան չմտած Ալեքսանդր Մակեդոնացին վիպական ավանդության մեջ բռնում է նրա (Գիլգամեշի) ճանապարհը՝ քանի որ հին առաջավորասիական հոգևոր ընկալումներում մեր երկրի հետ էին կապված դրախտային և անմահությանը վերաբերող պատկերացումները***[59]***»***[60]***։***

Հնարավոր է, որ մահամերձ Ալեքսանդրը, տեսնելով, որ բժիշկներից օգուտ չկա, փնտրել է այլ միջոց վաղաժամ մահվանից խուսափելու համար, իսկ բաբելական իմաստունները տեղեկացրել են նրան Գիլգամեշի պատմության մասին, ինչից խանդավառված՝ Ալեքսանդրը ցանկացել է ինչ-որ կերպ հասնել Հայաստան։ Նրա՝ Հայաստան գալու բաղձանքի մասին ասք է ձևավորվել, ինչը տարածվել է տարբեր ժողովուրդների մեջ։ Վերը նշվեցին գրավոր հիշատակություններ, որ պահպանվել են հունական և սիրիական աղբյուրներում, սակայն նման պատմություններ կան նաև պարսկական ու արաբական աղբյուրներում։

«Մակեդոնացու նկատմամբ բացառապես դրական վերաբերմունք է ցուցաբերում 11-րդ դարի պարսիկ բանաստեղծ Ֆիրդուսին, ով այլաբանորեն մեծ արքայի մասին խոսել է իր հեղինակավոր «Շահնամե» պոեմում։ Շահնամեում Ալեքսանդրը ներկայացված է՝ որպես մի պատանի,

---

57 Lipinski, 1971, p. 46:

58 Lehmann–Haput, 1927, S. 797–798; Lipinski, 1971, p. 47; Тураев, 124, ц. 262–263; Ինգլիզեան, 1947 թ., էջ 120:

59 Ղանանալյան, 1969 թ., էջ 21–22, 242:

60 Արտակ Մովսիսյան, Սրբազան լեռնաշխարհը, Երևան 2000 թ., էջ 33–34:

որ աշխարհից աշխարհ նժդեհելով՝ ցանկանում է գտնել կենաց աղբյուրը՝ անմահության գաղտնիքը:

Հայտնի է, որ նշանավոր զորավարը հիշատակված է նաև մուսուլմանների սուրբ գրքում՝ Ղուրանում: Այնտեղ նա հիշատակված է Զուլ ալկարնայն անվանումով: Ինչպես Շահնամեում, այնպես էլ Ղուրանում Ալեքսանդրը գնում է «անմահության երկիր», որտեղից էլ սկիզբ են առնում Տիգրիս և Եփրատ գետերը. («անմահության երկիրը» զուգակցվում էր Հայաստանի հետ) և հենց այդ ճանապարհին էլ դառնում է մարգարե»[61]:

Հետաքրքիր է, որ Մակեդոնացուց պարտված և փախուստի դիմող Դարեհ III-ն էլ փրկվելու նպատակով ուղղություն է վերցնում Հայաստան, որպեսզի այնտեղ պատսպարվելով՝ ազատվի հետապնդումից և հետո անցնի Մարաստան: ***«Դարեհը պատերազմի դաշտից իսկույն սլացավ Մարաստան՝ ուղղություն վերցնելով դեպի հայոց լեռները»***[62]:

Հայաստանը Սելևկյանների ժամանակ

Ալեքսանդր Մակեդոնացու մահվանից հետո նրա գրաված հսկայական տարածքները բաժանվեցին իր զորավարների միջև: Մերձավոր արևելյան տարածքներն իր ձեռքն առավ Սելևկիոսը, որի իշխանության ներքո էին գտնվում Լևանտը, կենտրոնական Անատոլիան, Միջագետքը, Աղվանստանը, Հյուսիսային Հնդկաստանի տարածքները և այլ վայրեր: Այդ տարածքներում Ք.ա. 312 թվականից մինչև Ք.ա. 63 թվականը՝ հաստատվեց Սելևկյան հարստությունը:

Իսկ հայերը, ինչպես միշտ, ջանացին իրենց անկախությունը պահպանել՝ դրա համար չխնայելով ուժ ու եռանդ, ինչը պատճառ հանդիսացավ, որ հարևան երկրներն էլ հեռու մնան սելևկյան ոտնձգություններից:

«Երվանդ III արքան, հակահարված հասցնելով Ալեքսանդր Մակեդոնացու զորավարներին, հաջողությամբ պաշտպանեց Մեծ Հայքի թագավորության անկախությունը: Նրա աջակցությամբ իրենց անկախությունը պահպանեցին նաև Փոքր Հայքի, Պոնտոսի և Կապադովկիայի թագավորությունները»[63]:

Հայաստանը Սելևկյանների շրջանում ոչ միայն կարողացավ պահպանել իր անկախությունը, այլև՝ վարել հակասելևկյան քաղաքականություն: ***«Դիոդորոս Սիկիլիացու (Սիցիլիացու) «Պատմական գրադարան» երկասի-***

---

61 ՎԻՔԻՊԵԴԻԱ ազատ հանրագիտարան.

62 Արրիանոս Փլավիոս, Ալեքսանդրի արշավանքը, գիրք III, 16 (1):

63 Հայոց Պատմություն, Երևան 2012 թ., էջ 44:

րության համաձայն՝ մակեդոնացիների կողմից գահընկեց արված Կապադովկիայի արքա Արիարաթեսը կարողացել է վերականգնվել հայրական գահին՝ շնորհիվ Մեծ Հայքի արքա Արդոատեսի[64] տրամադրած զորքերի։ Դա տեղի է ունեցել Ք.ա. 301-300թթ., երբ անկախացել է նաև Պոնտոսի թագավորությունը (ամենայն հավանականությամբ՝ սա ևս տեղի է ունեցել Մեծ Հայքի աջակցությամբ)»[65]։

ԱԼԵՔՍԱՆԴՐ ՄԱԿԵԴՈՆԱՑՈՒ ԱՐՇԱՎԱՆՔՆԵՐԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԸ



Այսպիսով, այդ շրջանում Հայաստանը երվանդ III-ի գլխավորությամբ (նրան տարբեր պատմիչներ տարբեր անվանումներ են տվել՝ Արդոատես, Օրոնտես և այլն) կարողացավ մնալ անկախ և ինքնուրույն տերություն։

Մեծ Հայքից դուրս եղող հարավարևմտյան սահմանամերձ կոմմագենեն նույնպես մնաց Երվանդի իշխանության ներքո։ Սա, հետագայում բարգավաճելով, դարձավ առանձին տերություն՝ նորից Երվանդունիների գլխավորությամբ։

«Երվանդականների օրոք Հայաստանն ընդհանուր առմամբ պահպանում էր աքեմենյան շրջանում իր ունեցած սահմանները։ Մ.թ.ա. III դարի առաջին կեսում Երվանդյանների իշխանությունը տարածվում է հայկական Մոփք երկրամասին հարող անդրեփրատյան կոմմագենե (հին կումմուխ) երկրի վրա։ Կոմմագենեն և Մոփքը վերածվում են վարչական միավորի, որն այնուհետև առանձնացվում է հայկական թագավորությունից և դառնում ինքնուրույն՝ Երվանդյան Շամ (Սամոս) թագավորի իշխանության ներքո։ Սրան հաջորդում է իր որդի Արշամը։ Այս թագավորները մի շարք քաղաքներ են հիմնադրում Մոփքում ու Կոմմագենում, որոնք

64 Ուսումնասիրողների մի մասը կարծում է, որ «Արդոատեսը» Օրոնտես Գ-ի անվան աղճատված ձևն է, սակայն կա կարծիք, որ դա «Արտավազդ» անվան մի տարբերակ է, կամ եզակի կիրառությամբ ինքնուրույն անուն:

65 Մեր Հաղթանակները, հտ. Ա, Երևան 2010 թ., էջ 156:



դառնում են Առաջավոր Ասիայի կարևորագույն առևտրական ուղիների հանգուցակետեր: Այսպես, Շամի օրոք, շուրջ 245 թ. մ.թ.ա. ստեղծվում է Սամոսատ (Շամշատ) քաղաքը Կոմմագենում և Սամոկարտը՝ Մոփքում: Արշամը կառուցում է Արշամաշատը (Արսամոսատան) Մոփքում և երկու քաղաք միևնույն անունով՝ Կոմմագենեում»[66]:

Երվանդունիները, շենացնելով երկիրը, չէին խորշում նաև հելլենական մշակույթի բարիքներից օգտվել: Այդ է պատճառը, որ չնայած անկախության առկայությանը՝ Հայաստան էր ներթափանցել հելլենիստական մշակույթը՝ գիրը, կրոնը, տոմարը, ճարտարապետական ոճը և այլն:

«Հայկազյան-Երվանդյան արքայատան, այդ թվում Մոփք-Կոմմագենեի արքայաճյուղի ներկայացուցիչներն իրենց անուններով ու պատկերներով հատել են դրամներ, խթանել երկրի տնտեսական զարգացումը, խրախուսել հելլենիստական մշակույթը, մասնակցել այդ քաղաքակրթության կերտմանը»[67]:

---

66 Հայ ժողովրդի պատմություն, Երևան 1985 թ., էջ 39–40:

67 Հայոց Պատմություն, Երևան 2012 թ., էջ 45:

Երվանդունիների վերջին արքա Երվանդ IV-ի արքունիքն արդեն գտնվում էր Արմավիրում։ Երվանդը թագավորում է 20 տարի, որի ընթացքում նա առաձնահատուկ ուշադրությամբ էր հետևում նոր մայրաքաղաքի կառուցման աշխատանքներին։ ***«Երվանդի թագավորության տարիները նշանավորեցին շինարարական գործունեությամբ, որը հիմնականում ծավալվում էր Այրարատում։ Խորենացու վկայությամբ՝ Երվանդը հեռանում է Արմավիրից և Ախուրյանի ու Արաքսի գետախառնուրդի մոտ միակտուր ապառաժ բլրի վրա կառուցում իր նոր մայրաքաղաքը՝ Երվանդաշատը։ Նոր մայրաքաղաքի գոյության մասին ակնարկում են նաև Արմավիրի հունարեն արձանագրությունները[68]։ Մայրաքաղաքից մի փոքր հյուսիս՝ Ախուրյանի ափին, կառուցվում է Երվանդակերտ դաստակերտը, իսկ էլ ավելի հեռու՝ նույն հյուսիսային ուղղությամբ՝ Երվանդավանը։ Ախուրյանի աջ ափին թագավորը ստեղծում է պաշտամունքային նոր կենտրոն՝ Բագարանը»***[69]։

Երվանդի տիրապետության վերջին շրջանն անցնում է բավականին շիկացած մթնոլորտում. տարիքի հետ անվստահություն է առաջանում իր շրջապատի հանդեպ, ինչն էլ իր հերթին դժգոհություն է առաջացնում երկրում։ Այդ պայմաններում Սելևկյանները Անտիոքոս III-ի (ն.Ք. 223-187թ.) գլխավորությամբ նոր արշավներ են ձեռնարկում՝ գրավելով Ատրպատականը, արևելյան տարածքները՝ մինչև Հնդկաստան, գրավում են նաև հայկական թագավորություններ Ծոփքն ու Կոմմագենեն։ Այդ ամենից հետո Անտիոքոսն իր բանակն ուղղում է Հայաստանի կողմը։ Այդ ռազմարշավի համար պայմանները շատ նպաստավոր էին Անտիոքոսոի համար, քանզի Հայաստանի շուրջը համարյա գրավված էր, իսկ երկրի ներսում էլ տիրում էր անառողջ մթնոլորտ։ Անտիոքոսի բանակում կար երկու հեղինակավոր հայազգի զորավար, որոնցից մեկի անունն էր Արտաշես. նա էր հիմնականում առաջնորդում Սելևկյան բանակը։

Հայաստանում Երվանդ IV-ի կառավարումից դժգոհ իշխաններն էլ բռնում են Արտաշեսի կողմը։ Եվ Արտաշեսն՝ իրեն հարած հայերի և Սելևկյան զորագնդերի հետ հատում է Հայոց սահմանները և հարձակվում է Երվանդի բանակի վրա։ ***«Երվանդը փախուստի է դիմում դեպի մայրաքաղաք՝ այնտեղ պատսպարվելու համար։ Արտաշեսի զորավար Սմբատը, հետապնդելով նրան, գալիս է ու պաշարում Երվանդաշատը։ Այստեղ նրան միանում է Արտաշեսը, որն արդեն տիրացել էր Երվանդի դաստակերտին՝ Երվանդակերտին։ Արտաշեսի բանակը խուժում է քաղաք, և զինվորներից մեկը վաղրով (դաշույնով) սպանում է Երվանդին։ Դրանից հետո Արտաշեսը վերացնում է Երվանդի իշխանության վերջին մնացորդը՝ գրավելով Բագարանը և սպանելով Երվանդի եղբորը՝ Երվանդին։ Դեպքերի այդօրինակ ընթացքը հաստատվում է նաև Արմավիրի հու-***

---

68 Հ. Մանանդյան, Արմավիրի հունարեն արձանագրությունները, էջ 27 և հաջ.։

69 Հայ ժողովրդի պատմություն, հ. I, Երևան 1971 թ., էջ 515։



նարեն արձանագրություններ-ի տվյալներով: Նրանց մեջ նույնպես խոսվում է պատերազմում թագավորի մահվան և երկրի նվաճման մասին[70]*:*

Այսպիսով՝ III դարի վերջում Երվանդունիների դինաստիան դադարում է իշխել: Հայկական լեռնաշխարհում հաստատվում է Սելևկյան գերիշխանությունը, որի ներկայացուցիչները ստրատեգոսներն էին՝ Զարեհը՝ արևմուտքում, Արտաշեսը՝ արևելքում»[71]*:*

Արտաշեսյաններ, թե Արշակունիներ

«Ով ցանկանում է հայ ժողովրդի մասին արդարացի դատել, չի կարող այս խնդրին առօրյա իմացությամբ մոտենալ. նա պետք է ամեն ինչ ուսումնասիրի հնագույն ժամանակներից սկսած, ըմբռնումով մոտենա հայ ժողովրդի պատմությանն ու լեզվին և չպետք է հենվի տասնամյակից տասնամյակ քարշ տրված դատողությունների վրա, եթե անգամ երբևէ դրանք հնչել են գիտակ ու հավաստի շուրթերից»[72]*:*

Հայաստանի պատմության այս շրջանում հանդիպում ենք հակասական իրավիճակների, որոնց պարզաբանումը խիստ կարևոր է մեր պատմությունն աղճատումից զերծ պահելու համար:

Նշենք, որ տարբեր պատմիչներ տարբեր տեսակետներ են հայտնել այս վերջին՝ Երվանդունիներից հետո Հայոց գահին նստած արքաների մասին: Տեսնում ենք, որ Երվանդ IV-ին փոխարինում է Արտաշեսը: Նա համարվել է Արտաշեսյան հարստության հիմնադիրը: Սակայն նաև տեսնում ենք, որ այդպես համարելով՝ շատ բաներ խաթարվում են Հայոց պատմության էջերում:

Հետաքրքիր է, որ ըստ պատմաբանների՝ Երվանդ IV-ի մահով

---

70 К. В. Тревер, Очерки по истории культуры древней Армении, ст. 142:

71 Հայ ժողովրդի պատմություն, հ. I, Երևան 1971 թ., էջ 516:

72 Կառլ Ռոթ, Տես Երկիր Դրախտավայր. Օտարերկրացիները Հայաստանի և հայերի մասին.... Երևան 2014 թ., էջ 449:

ավարտվում է Երվանդունիների դինաստիան, սակայն տվյալ Արտաշեսը Սևանա լճի ափամերձ տարածքներում գտնված արձանագրություններում տեղեկություն է թողել, ըստ որի՝ ինքն էլ է պատկանում Երվանդունիների ճյուղին։

«...Մեզ են հասել և իր՝ Արտաշեսի վավերագրերը՝ արամեերեն լեզվով գրված վիմական արձանագրություններ։ Վերջինների մեջ նա հանդես է գալիս՝ որպես «Արտաշես արքա, Բարի, որդի Զարեհի, Երվանդյան»»[73]*։*

Պարզվում է, որ Արտաշեսը, սպանելով Երվանդունիների վերջին ներկայացուցչին, ինքը դառնում է նորի՛ց Երվանդունիների դինաստիայի շարունակողը։ Սրանից կարելի է եզրակացնել, որ տվյալ Արտաշեսը, ինքնակոչ Երվանդյան է, ով այդ քայլին է դիմել, որպեսզի իրեն ի ցույց դնի՝ որպես արքայական տոհմի ներկայացուցիչ և կարողանա նստել Հայոց արքայական գահին։

«Իշխանությունը գրաված նոր տիրակալն իրեն հայտարարում էր նախորդ դինաստիայի շարունակող, որպեսզի դրանով ամրապնդի իր իշխանության իրավական հիմքերը և բարձրացնի իր հեղինակությունը»[74]*։*
Փաստորեն, այս Արտաշեսը, հայոց գահը ձեռք բերելու համար գործիք դառնալով Սելևկյանների ձեռքին, հնարավորինս իր անկախությունը պահած Հայաստանին դարձրեց նրանց հպատակ և հարկատու։



Սակայն նրան վերագրում են նաև բազմաթիվ առաքինություններ և գործեր, որոնցով նորից նպաստեց Հայաստանի անկախության վերականգմանը և ինչ-որ չափով հզորանալուն։

Խնդիրը այն է, որ նրան, ինչպես ասվեց, համարում են, «Արտաշիսյան» դինաստիայի հիմնադիր։ Սակայն ժամանակին այսպես չեն ընդունել. Մովսես Խորենացու Պատմության մեջ ընդհանրապես չենք հանդիպում որևէ Արտաշեսի, որից սկսված լինի իր անվամբ դինաստիա։

«Փաստերի և կարծիքների հանգամանալի քննությամբ ցույց է տրվում, որ Հայաստանում Արտաշիսյան դինաստիա գոյություն չի ունեցել, որ այդ մասին որևէ տեղեկություն չկա ո՛չ հայ, ո՛չ էլ օտար աղբյուրներում, որ այդ կարծեցյալ դինաստիան հետևանք է նաև Մովսես Խորենացու համապատասխան տեղեկությունների (Արտաշես Բ Արշակունու

---

73 Հայ ժողովրդի պատմություն, Երևան 1985 թ., էջ 41:

74 Հայ ժողովրդի պատմություն, հ. I, Երևան 1971 թ., էջ 529:

մասին պատմածների) այլաբանական և անճիշտ ընկալումների»[75]*:*

Ըստ Պատմահոր՝ այդ ժամանակաշրջանում, հավանաբար, հենց Արտաշեսից միառժամանակ անց՝ նրա որդուց հետո (որին դեռ կանդրադառնանք) հայոց գահին է նստում պարթևների արքա Արշակ Մեծի եղբայր Վաղարշակը, և ոչ թե՝ ձևավորվում է տվյալ անհայտ ծագմամբ Արտաշեսի «դինաստիան»:

Հենում շատերը հենց այդպես էլ ընդունել են: Միայն շատ ավելի ուշ արևմտյան որոշ պատմաբաններ սկսեցին գրել աշխատություններ՝ ընդդեմ Մովսես Խորենացու Պատմության: Այդ ժամանակներից էլ առաջնային սկսեց դառնալ եվրոպական և այլ արևմտամետ պատմաբանների կարծիքը, որ ձևավորել է այս Արտաշեսի երևակայական «դինաստիան»:

«Նորություն չի լինի, եթե ասենք, որ 19-րդ դարի վերջին քառորդում, հատկապես գերմանացի աղբյուրագետ-արևելագետ Ալֆրեդ Գուտշմիդի և Անտոն Գարգաշյանի ուսումնասիրություններից հետո ստեղծվել էր մի վիճակ, երբ վստահելի չէր համարվում և ոչ մեկը Մովսես Խորենացու տեղեկություններից՝ առաջին հերթին՝ հնագույն և հին ժամանակաշրջաններին վերաբերողները: Նկատենք նաև, որ դրանք շատերի կողմից համարվեցին «անճիշտ», «հակապատմական, «հորինովի», «կեղծ», «միտումնավոր», և տեղի ունեցավ հրաժարում այդ ամենից:

Սա, իհարկե, ծայրահեղ, գերմերժողական մոտեցում էր, որը չհիմնավորվածության պատճառով և նոր փաստերի հարկադրանքով շուտով հերքվեց, սակայն թողեց իր ավերիչ ազդեցությունը, որը, ցավոք, հանդուրժում են մինչև այսօր. նկատի ունենք խորենացիական բազում տեղեկությունների (նույնիսկ՝ տասնյակ գլուխների) բացահայտ անտեսումը»[76]*:*

*Այս թեմային անդրադարձել է Լևոն Շահինյանն իր տարբեր աշխատություններում, հատկապես ավելի ծավալուն և մանրակրկիտ ուսումնասիրությամբ աչքի ընկնող «Հայաստանը և առաջին Արշակունիները» գրքում: Տվյալ աշխատությամբ հեղինակը հիմնովին ապացուցում է Մովսես Խորենացու աշխատության ճշմարտացիությունը, և պարզաբանում է «Արտաշեսյան» և «Արշակունի» դինաստիաների հետ կապված հակասությունները: Այդ գիտական լուրջ աշխատությունից մեջբերենք միայն մի քանի հատված եզրակացություններից և ամփոփումից, որպեսզի այս հատորը չափից դուրս չծանրաբեռնենք, գիտական ուսումնասիրությունների մանրամասներով: Հեղինակը, բերելով տվյալ Արտաշեսի մասին տեղեկություններ Ստրաբոնից, Պլուտարքոսից, Պոլիբիոսից, Դիոդոր Սիկիլացուց, Պորփյուրից և Հերոնիմոսից, հետևյալ եզրահանգումն է անում. **«Իր թագավորության տարիներին (մ.թ.ա. 189-160 թթ) Արտաշեսը միավորել է պատմական Հայաստանի մի շարք երկրամասեր՝ բացի, թերևս, Ծոփքից,***

---

75 Լևոն Շահինյան, Հայաստանը և առաջին Արշակունիները, Երևան 1993 թ., էջ 13:

76 Լևոն Շահինյան, Հայաստանը և առաջին Արշակունիները, Երևան 1993 թ., էջ 6–7:

Փոքր Հայքից, Պարսկահայքից և Բարձր Հայքի առանձին գավառներից. հիմնադրել ու կառուցել է Արտաշատ մայրաքաղաքը: Ազդեցիկ դիրք է ունեցել ժամանակի քաղաքական կյանքում: Ակնհայտ է նաև, որ նա հաճախ է մղել ներքին ու արտաքին պատերազմներ, միշտ էլ հակասությունների մեջ է եղել Սելևկյանների հետ, իսկ վերջում Մոփքի հարցով, նույնիսկ հակադրվել է Հռոմին (Կապադովկիայի թիկունքում Հռոմն էր կանգնած), սակայն հարկադրված տեղի է տվել, նորից խոնարհվել է իր բարերարին:

Այս է բոլորը: Ավելին վերագրել Արտաշեսին, մանավանդ, գունազարդել նրա պատմական կերպարը՝ ըստ հայկական ու վրացական աղբյուրների, որոնք նրան չեն հիշում, նրան համարել դինաստիայի հիմնադիր, հայկական հողերի առաջին միավորող և այլ զարմանալիքներ, ոչ միայն հիմնավոր չէ, այլև կնշանակի այլափոխել, խեղաթյուրել փաստերը, ինչպես ասվեց, դրանք կտրել ժամանակից, ժամանակակիցներից ու միջավայրից, գնալ Հռոմի միտումնավոր պատմագրության հետքերով: Մի խոսքով, Արտաշեսին պետք է տալ այն, ինչ որ նա կատարել է, ինչով ներկայացված է, և ոչինչ ավելին՝ ո՛չ դինաստիայի հիմնադիր, ո՛չ հայկական հողերի առաջին միավորող (հակասում է փաստերին), ո՛չ հողային հարց կարգավորող (Արտաշիսյան քարերը նա չի դրել), ո՛չ ալանների դեմ պայքարող ու հաղթող, ո՛չ Սաթենիկի ամուսին, ո՛չ Արտավազդի, Տիրանի, Տիգրանի, Մաժանի, Զարեհի, Վրույրի հայր (թեթևաձեռն խեղաթյուրվում են փաստերը) և նման բաներ: Լավագույն դեպքում, եթե նույնիսկ առանց քննադատական վերաբերմունքի, բառ ու տառով ընդունենք օտարաբան պատմիչների ասածները, Արտաշեսին կարելի է համարել մեզ հետաքրքրող ժամանակաշրջանի հայոց ամենահաջողված թագավորներից մեկը, որի ոչ տոհմածագումն է հայտնի, ոչ էլ՝ անմիջական հաջորդները, իսկ Տիգրան Բ-ն էլ, ինչպես կտեսնենք, միտումնավոր կերպով է կապվել այս Արտաշեսի հետ»[77]:

Ուրեմն, այս Արտաշեսը եղել է մի անձնավորություն, որ ո՛չ նախկին, ո՛չ գալիք դինաստիաների հետ որևէ առնչություն չի ունեցել, սակայն, ամեն դեպքում, քիչ գործեր չի արել իր տիրապետության շրջանում Հայաստանը հնարավորինս բարգավաճ պահելու համար: Նրա ժամանակ Հայաստանը այնքան է հզորացել, որ նույնիսկ ապաստան է տվել Հռոմի թշնամի Հաննիբալին. «Արտաշեսը Հռոմից անկախ քաղաքավարություն էր վարում: Նա ապաստան տվեց Հռոմի ոխերիմ թշնամուն՝ Կարթագենի զորավար Հաննիբալին: Հայոց թագավորության կենտրոնում՝ Արարատյան դաշտում, մ.թ.ա. 189-188 թթ. Արտաշես արքան հիմնադրեց Մեծ Հայքի թագավորության նոր մայրաքաղաքը՝ Արտաշատը, որի կառուցումը նկարագրել է Մովսես Խորենացին: Հաննիբալի խորհրդով է ընտրվել Արտաշատի տեղը բլուրների վրա: Հույն պատմիչ Պլուտարքոսն Արտաշատը

[77] Լևոն Շահինյան, Հայաստանը և առաջին Արշակունիները, Երևան 1993 թ., էջ 42–43:

բնութագրել է՝ որպես «շատ գեղեցիկ քաղաք»»[78]*:*

Բայց ինչո՞ւ ենք այսքան սևեռվում այս բարդ խնդրի վրա, եթե նաև հայ գիտնականներից շատերը համարում են, որ այս Արտաշեսից է առաջ եկել տվյալ դինաստիան և մինչև մ.թ. I դարի կեսերը տիրապետել են այդ «Արտաշեսյան» դինաստիայի ներկայացուցիչները, և ապա դրանից հետո են Հայոց գահին նստել Արշակունիները: Ի՞նչն է մեզ խանգարում, որ մենք էլ համակարծիք լինենք մեծամասնության այդ տեսակետին:

Նախ, եթե ընդունենք այդ տեսակետը, ուրեմն մենք էլ կդառնանք կողմնակիցն այն կարծիքի, թե իբր Մովսես Խորենացին տվյալ հարցում առանցքային սխալ է թույլ տվել: Եվ երկրորդ, որն ամենաանընդունելին է, մենք ստիպված կլինենք՝ կամա-ակամա ընդունելու Հայկական լեռնաշխարհում հայերի եկվորության մերժելի և խիստ վտանգավոր տեսակետը:

Խնդիրն այն է, որ «Արտաշեսյան» դինաստիայի ջատագովները պնդում են, իբրև թե Վաղարշակը՝ որպես անձ գոյություն չի ունեցել: Իսկ դա եթե ընդունենք, ինքնըստինքյան դառնում ենք կողմնակիցները նրանց, որ փորձում են հաստատել, թե հայերը եկվորներ են եղել Հայկական լեռնաշխարհում, և հենց Երվանդ Սակավակյացով է սկսվել հայոց թագավորությունը և հայերի բնակությունը՝ Մեծ Հայքի տարածքում: Իսկ ի՞նչն է մեզ այդպես մտածել տալիս: Եթե Վաղարշակը՝ որպես անձ իրականում գոյություն չի ունեցել, բնականաբար, գոյություն չէր կարող ունենալ նաև Մար Աբաս Կատինան, ով հայտնաբերել է հին հայոց պատմությունը՝ Նինվեի գրադարաններում և բերել ու հանձնել Վաղարշակին, քանի որ հենց Վաղարշակն էր նրան պատվիրել իրականացնել այդ առաքելությունը: Իսկ Մար Աբասի բերած պատմությունից էլ օգտվել է Մովսես Խորենացին՝ հայոց Պատմահայրը: Այդ պատմությունն է մեզ տեղեկություններ հասցրել մեր բուն նախնիների՝ Հայկ Նահապետի, նրա որդիների և թոռների, Արամ Մեծի, Արա Գեղեցիկի և նրանցից հետո եկող մեր բազմաթիվ մյուս նահապետների և արքաների մասին: Իսկ եթե այդ շարքից դուրս է հանվում և ի չիք է դարձվում Վաղարշակ Պարթևը, ինքնին ի չիք է դառնում որպես անձ՝ նաև Մար Աբասը՝ իր բերած պատմությամբ հանդերձ, իսկ Մովսես Խորենացու պատմությունն էլ դառնում է մտացածին, առասպելների հավաքածու, ինչպես որ մինչ օրս ջանացել և ջանում են համոզել արևմտյան հին ու նոր պատմաբանները:

Եվ եթե չեն եղել ո՛չ Հայկը, ո՛չ իր ժառանգները, ուրեմն մնում է ընդունել, թե հայերի ինքնությունն իբր «պարզաբանող» այդ աղբյուրների պնդումները «ճիշտ» են: Դա բերում է նրան, որ հայերն այս տարածքներում հայտնվել են ընդամենը Ն.Ք. VI-V դարերում: Սա է հիմնական պատճառը, որ մենք այս պարագայում ավելի կողմնակից ենք Մովսես Խորենացուն, այլ ոչ՝ արևմտյան պատմաբանների տեսակետին:

---

[78] Է.Լ. Դանիելյան, Ա. Ա. Մելքոնյան, Հայոց Պատմություն, Երևան 2008 թ., էջ 49:

«Հայ Արշակունիների թագավորության հիմնադրման ժամանակի և հիմնադրի մասին Մովսես Խորենացու և հայ մյուս պատմիչների տեղեկությունները, հակառակ գոյություն ունեցող մերժողական կարծիքներին ու այլաբանական բացատրություններին, պատմական ստույգ իրողությունների ճշգրիտ արտացոլումներն են։ Ըստ այդ տեղեկությունների, որոնք հաստատվում են, օտարաբան պատմիչների մի շարք հաղորդումներով կամ զուգահեռ նշումներով՝ Արշակունիների թագավորությունը Հայաստանում հիմնադրվել է մ.թ.ա. 134թ., հիմնադիրն է Վաղարշակը՝ Պարթև արքայից արքա Արշակ Մեծի (Միհրդատ Ա-ի) եղբայրը, որը (Վաղարշակը) թագավորել է 22 տարի՝ մ.թ.ա. 134-112թթ.։ Ստույգ են նաև այն բոլոր տեղեկությունները (ոչ միայն Մովսես Խորենացու ավանդած), որոնք վերաբերում են Վաղարշակի արտաքին ու ներքին գործունեությանը, ժամանակին ու ժամանակակիցներին և ամփոփված են Խորենացու «Հայոց պատմության» Ա գրքի Հ-Թ և Բ գրքի Ա-Թ գլուխներում, մասնակի հավելյալ նշումներ կան նաև հայ և օտար պատմիչների մոտ։

Իր բոլոր տեղեկությունները Մովսես Խորենացին քաղել է ու հաղորդել է Վաղարշակի պալատական պատմիչ Մար Աբաս Կատինայի, այսինքն՝ ժամանակակցի ու ականատեսի գրած Մատյանից կամ Պատմությունից»[79]։

Բայց և այնպես պետք է նշել, որ հավասարակշիռ դիրք պահպանելու համար, ջանալով ուղիղ ճանապարհից հնարավորինս չշեղվել դեպի աջ կամ ձախ ծայրահեղություններ՝ մենք ստիպված ենք եղել հունա-հռոմեական աղբյուրների վկայությունների և Խորենացու պատմության որոշակի վիճելի տեղեկությունների միջև մանևրել. իսկ թե որքանով է դա մեզ հաջողվել, ցույց կտա ժամանակը։

«Հայաստանում երբևէ և ոչ մի աղբյուրով գոյություն չի ունեցել Արտաշեսյան թագավորական հարստություն։ Անտիոքոս Մեծի՝ երբեմնի «ստրատեգ», ապա մ.թ.ա. 189-160թթ. Մեծ Հայքի թագավոր Արտաշեսին դինաստիայի հիմնադիր դարձնելը երևակայության ծնունդ է, մասամբ նաև՝ Մովսես Խորենացու համապատասխան տեղեկությունները այլաբանորեն և անճիշտ ընկալելու արդյունք։ «Ստրատեգ» Արտաշեսի ո՛չ ժառանգներն են հայտնի, ո՛չ ժառանգորդները և ո՛չ էլ որևէ հատկանիշ նրա՝ հիմնադիր լինելու մասին։ Պարզապես հիշատակություն չկա Արտաշեսյան հարստության մասին՝ ո՛չ հայ, ո՛չ էլ օտար աղբյուրներում։ Իսկ որ թագավորական մի ամբողջ հարստություն, այն էլ գրավոր խոսքի գոյության պայմաններում, այդպես անհետ «կորչեր» պատմությունից, անհնար է պատկերացնել։ Գոնե «ստրատեգ» Արտաշեսին ճանաչողները և նրան ոչ քիչ մեծարողները (Պոլիբիոս, Ստրաբոն, Դիոդոր, Պլուտարքոս, Հերոնիմոս և այլք) որևէ հուշ կամ հիշատակ կթողնեին, որ նա դինաստիայի հիմնադիր եղավ։ Եվ քանի որ այդպիսի նշում չկա ո՛չ ուղղակի,

[79] Լևոն Շահինյան, Հայաստանը և առաջին Արշակունիները, Երևան 1993 թ., էջ 380:

ո՛չ էլ անուղղակի, պատմաբանը իրավունք չունի՝ հավատալու չեղածին, մանավանդ իրավունք չունի՝ ստեղծագործելու»[80]*։*

Եվ ուրեմն, հարկ է ընդունել, որ տվյալ Արտաշեսից հետո Հայոց գահին նստել է նրա որդին՝ Արտավազդը, իսկ նրան արդեն հաջորդել են Արշակունիները և ձևավորել Արշակունյաց դինաստիան, որի առաջին ներկայացուցիչը եղել է հենց ինքը՝ Վաղարշակ Պարթևը։ Եվ պետք է անընդունելի համարել, թե Արշակունիները Հայաստանում գահակալել են շատ ավելի ուշ շրջանում։ ***«Հայաստանում Արշակունիների հիմնադրման հարցը պատմագրական նախորդ ուսումնասիրություններում ստացել է երկու լուսաբանում։***

Գիտնականների մի մասը, հենվելով հայկական սկզբնաղբյուրների, հատկապես Խորենացու ավանդած տեղեկությունների վրա, հայ Արշակունիների հիմնադրումը զետեղել է մ.թ.ա. II դարի երկրորդ կեսին՝ հիմնադիր համարելով Վաղարշակին, իսկ մյուս մասը, առաջնորդվելով հունա-հռոմեական աղբյուրների վկայություններով, հիմնադիր է ճանաչել Տրդատին, հիմնադրման ժամանակաշրջանը՝ մ.թ. I դարի կեսերը»[81]*։*

Վաղարշակին՝ որպես հայոց գահին նստած Արշակունի արքա, իրենց աշխատություններում անդրադարձել են տարբեր դարերի բազմաթիվ հայ պատմիչներ. ***«Այսպես, օրինակ, Վաղարշակի մասին վկայում է Խորենացին, Մովսես Կաղանկատուացին, Հովհաննես Դրասխանակերտցին, Թովմա Արծրունին, Ուխտանեսը, Սամուել Անեցին, Մխիթար Անեցին, Վարդան Բարձրաբերդցին, Մխիթար Այրիվանեցին և շատ ուրիշներ, անգամ Սեբեոսի աշխատությամբ մեզ հասած այսպես կոչված՝ դպրության հեղինակը (Անանուն Ա)»***[82]*։*

Իսկ հայոց վրա Վաղարշակի թագավորելու տարեթիվը պարզելու նպատակով ուսումնասիրություններ ունեն արդեն ավելի ուշ շրջանի տարբեր գիտնականներ, որոնցից են Գուդշմիդը, Սեն Մարտենը, Գաթրճյանը, Միքայել Չամչյանը, Մկրտիչ Էմինը, Ք. Պատկանյանը և ուրիշներ. գիտնականներ, որ նույնպես ընդունում են Վաղարշակի՝ Հայոց Արշակունի թագավոր լինելու փաստը։

Լևոն Շահինյանի աշխատություններում բերվում են փաստեր Վաղարշակի՝ պատմական անձ լինելու մասին ոչ միայն հայ և օտար աղբյուրներից, այլև այդ ժամանակաշրջանում գործածության մեջ եղած դրամների տվյալներից։ ***«Այսպիսով, գործ ունենք բոլորովին այլ ակունքներ ունեցող տեղեկությունների մի ամբողջ խմբի հետ, որոնք ոչնչով կասկածելի չեն և մեկ անգամ ևս հաստատում են Վաղարշակի՝ հայոց թագավոր լինելը՝***

---

80 Լևոն Շահինյան, Հայաստանը և առաջին Արշակունիները, Երևան 1993 թ., էջ 381:

81 Լևոն Շահինյան, Մովսես Խորենացի, պատմություն և ժամանակագրություն, Երևան 1989 թ., էջ 175:

82 Լևոն Շահինյան, Մովսես Խորենացի, պատմություն և ժամանակագրություն, Երևան 1989 թ., էջ 176:

մ.թ.ա. 2-րդ դարի երկրորդ կեսին, հաստատում են, մեր համոզումով՝ անհերքելի։

Այս բանի կամ պատմական այս ճշմարտության ապացույց են նաև Վաղարշակի ու նրա անմիջական հաջորդ Արշակ Ա-ին հատկացված դրամները, որոնք հանգամանորեն նկարագրված և ներկայացված են նշանավոր դրամագետ Ալեքսանդր Պետրովիչի «Արշակունի դրամներ» («Arsaciden-Münzen») արժեքավոր աշխատության մեջ»[83]***»***[84]***։***

Պետրովիչի աշխատությունում ներկայացված Պարթևական դրամների այդ տեսականու մեջ, որ երեսուներեքն է, միայն 27-ը հատկացված է Վաղարշակին։

Վաղարշակի մասին այս բաժինն ավարտենք՝ նորից անդրադառնալով Լևոն Շահինյանի գրքին, քանզի նրա արժեքավոր աշխատությունները հիմք ընդունելով է, որ կարող ենք մեր՝ Հայոց հնագույն պատմությունը համարել վավեր տեղեկությունների աղբյուր։ ***«Ասելն արդեն ավելորդ է, որ տարբեր աղբյուրների նմանատիպ փոխհամաձայնություններն անհերքելի ապացույց են հօգուտ նրանց արժանահավատության։ Հօգուտ այն բանի, որ ժամանակագրորեն ևս Վաղարշակի՝ իրական գործիչ լինելը մ.թ.ա. 2-րդ դարի երկրորդ կեսին որևէ կասկած չի հարուցում, որ նրա թագավորության սկզբնատարին՝ մ.թ.ա. 134 թվականը՝ հարակից ժամանակագրական մանրամասներով ստույգ պատմական իրողություններ են, քանի որ հաստատվում են, ինչպես տեսանք, ամենատարբեր աղբյուրների համատեղ քննությամբ։ Հաստատվում են այնպես, որ կարծեք թե, հատուկ պատվերով գրված լինեն՝ լրացնելու միմյանց թերասացությունները, կանխելով կասկածանքի նույնիսկ նվազագույն հնարավորությունները»***[85]***։***

Բնական է, որ ավելի ցանկալի է տեսնել Հայոց գահին հայկազուններ, քան՝ պարթևների, սակայն կարևորը ցանկությունը չէ, այլ՝ իրականությունը, դեռ չասած, որ պարսկական ծագում ունեցող Հիդարնեսներից հետո արդեն վերջին Երվանդունիները, ըստ Ստրաբոնի, սերվել են հենց իրենցից՝ Հիդարնեսներից, և նույնպես ունեցել են պարսկական ծագում։ ***«Ստրաբոնն իր հերթին Երվանդունիներին սերված էր համարում Դարեհ Ա-ի զինակիցներից մեկից՝ Հիդարնեսից***[86]***»***[87]***։***

Իսկ եթե անհայտ ծագման այս Արտաշեսն ինքն իրեն հռչակել է վերջին Երվանդունիների շառավղի շարունակող, ապա երևակայական «Արտաշեսյան» դինաստիան պետք է ունենար պարսկական ծագում, այլ ոչ՝ հայկական։ Այնպես որ՝ այստեղ ընտրությունը Հայկազունների և Պարթև-

---

83 A. Petrowicz, Arsaciden–Münzen, Wien, 1904.

84 Լևոն Շահինյան, Հայաստանը և առաջին Արշակունիները, Երևան 1993 թ., էջ 100:

85 Լևոն Շահինյան, Հայաստանը և առաջին Արշակունիները, Երևան 1993 թ., էջ 128–129:

86 Strabo, XI, 14, 15:

87 Հայ ժողովրդի պատմություն, հ. I, Երևան 1971 թ., էջ 504:

ների միջև չէ, այլ՝ պարսկական և պարթևական ծագում ունեցողների։
Եվ, ուրեմն, այս տեսանկյունով՝ էլ որևէ աշառության պատճառ չկա։

ԱՐՇԱԿՈՒՆԻՆԵՐ.
Վաղարշակ

«Քսան անգամ այլափոխվեց երկրի երեսը, բայց հայ ազգը, փյունիկ թռչունի նման, ամեն անգամ էլ վերածնվեց իր աճյունից»[88]։

Ովքե՞ր էին պարթևները, ի՞նչ ծագում ունեին և ինչպես ստեղծեցին իրենց սեփական պետությունը. այդ թեմային շատերն են անդրադարձել, սակայն որոշ տարբերություններ կան հնչեցված կարծիքներում։ Ոմանք նշում են, որ պարթևները պատկանել են սակերի «պարն» ցեղին, որտեղից էլ ձևավորվել է «պարթև» անվանումը։ Իսկ սակերը պատկանել են իրանական լեզվախմբի սկյութական ցեղերին։

Սակայն ըստ Մովսես Խորենացու՝ պարթևները սերել են Աբրահամ նահապետից և նրա կին Քետուրայից, իսկ նրանց որդիներն այդ կողմերը եկել են Ն.Ք. մոտ 1900թ., և տվյալ ժամանակից սկսած՝ սկսել են ձևավորվել՝ որպես ազգություն, բայց իրենց մեծ բարձունքին հասել են այդ ժամանակներից մոտ 1600 տարի հետո։

Հիշենք նաև, որ մեր հայոց մեծ Հայկ-Մելքիսեդեկ Նահապետը սերտ բարեկամական հարաբերություններ ուներ Աբրահամ նահապետի հետ։ Հարկ է նաև հիշել, որ Աբրահամի սերնդից՝ հրեաների նշանավոր թագավոր Դավիթն էլ իր հերթին կրում էր նաև հայկական արյուն։ ***«Իսկ Քաջ Արշակը, որ սերում էր Աբրահամի զավակից՝ ծնված Քետուրա կնոջից, որին Սառայի մահվանից հետո [Աբրահամը] կնության էր առել, թագավորում է պարսիկների, մարերի ու բաբելացիների վրա և անվանվում Պարթև, այսինքն՝ բռնություն։ Նա քաջերի դեմ բազում պատերազմներ է մղում, հաղթում նրանց և ամբողջ թագավորությունն իրեն է ենթարկում»[89]։***

Իսկ երբ Աբրահամի և Քետուրայի այդ որդիներն իրենց ընտանիքներով ուղղություն էին վերցրել դեպի արևելք, ըստ Սեբեոսի՝ նրանցից մի ճյուղ բաժանվելով եկել և բնակություն է հաստատել Հայաստանում՝ ժա-

---

88 Ժան Ժակ Մորգան, Տես Երկիր Դրախտավայր. Օտարերկրացիները Հայաստանի և հայերի մասին.... Երևան 2014 թ., էջ 337:

89 Հովհաննես Կաթողիկոս Դրասխանակերտցի, Հայոց Պատմություն, Երևան 1996 թ., էջ 27:

*մանակի ընթացքում տարրալուծվելով հայերի մեջ։ **«Դամասկոսից, ասում են՝ Իսահակից փախչելով, գնաց Սարեսակը՝ Աբրահամի ընդոծինը, եկավ բնակվեց ստորոտում երկու լեռների՝ Արագած կատարի և Գեղ լեռան, որոնք նայում են Արայի մեծ դաշտին...***

Եվ ունեցավ երեք որդի. նրանցից Փառոխը, որը Եղիազարն է, իրենց բնակության տեղը կոչեց Փառոխատ, իսկ իրենց որսի և զորավարժանքների դաշտը՝ Փառական։ Սրանք խառնվեցին Արմենակի ազգին»[90]։*

*Իսկ հիմնական մասը, որ բնակություն հաստատեց Իրանից դեպի հյուսիս-արևելք ընկած տարածքներում, դարեր անց բազմանալով՝ դարձավ կայուն և հզոր ազգ։ Նրանց հզորությունը սկիզբը դրեց պարթևների առաջնորդ Արշակ Քաջը։ **«Ուստի, թագավորում է Արշակ Քաջը, որ Աբրահամի սերնդից էր, Քետուրայի զավակներից, որով հաստատվում էր Տիրոջ խոսքն Աբրահամին, թե՝ «Քեզանից ազգերի թագավորներ կծնվեն»»**[91]։*

*Արշակ Քաջի՝ պարթևական նորաստեղծ տերության այդ հիմնադրի ջանքերով ձևավորված պետությունը շուտով արդեն իր ժառանգների ջանքով պետք է վերածվեր հզոր կայսրության։ **«Արշակը եռանդուն գործողություններով ընդարձակում է իր երկիրը և կարողանում է դիմագրավել Սելևկոս Բ-ի ճնշմանը, որը ստիպված է լինում ճանաչել նրա ինքնուրույնությունը»**[92]։*

*Արշակ Քաջին փոխարինում է նրա որդին՝ Արտաշիրը, նրան էլ՝ արդեն Արշակ Մեծը։ **«Ալեքսանդրից հետո քուշանների երկրում՝ Բահալ Շահաստանում, թագավորեց Արշակ Քաջը. ապրելով 130 տարի՝ թագավորեց 57 տարի։ Նրանից հետո նրա որդի Արտաշիրը՝ 31 տարի։ Նրանից հետո 52 տարի՝ նրա որդի Արշակը, որ Մեծ կոչվեց»**[93]։*

*Այդ ժամանակաշրջանում օրեցօր հզորացող պարթևները ոչ միայն անկախանում են տարածաշրջանի ամենահզոր տիրակալներ Սելևկյաններից, այլև սկսում են տիրանալ նրանց պատկանող տարածքներին. **«Մ.թ.ա. III դարի վերջին և II դարի սկզբին միջազգային պատերազմում հակամարտող ուժերի փոփոխություն է տեղի ունենում։ Իրանի հյուսիս-արևելքից շարժվելով՝ պարթևներն աստիճանաբար տեր էին դառնում Սելևկյան տիրույթներին»**[94]։*

Պարթևների լեզվում «արշակը», որը նշանակում է «արքա», ավելի շուտ նման է պատվանվան, որ կրել են նրանց թագավորներից շատերը։ Այսպես՝ Արշակ Քաջին փոխարինում է Արշակ II-ը (Արտաշիրը), և ավելի ուշ՝ պարթևների գահին (մոտ ն.Ք. 170-120 թթ.) նստում է արդեն՝ Արշակ

---

90 Սեբեոս, Պատմություն, Երևան 2005 թ., էջ 15:

91 Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, Երևան 1990 թ., էջ 66:

92 Հայ ժողովրդի պատմություն, հ. I, Երևան 1971 թ., էջ 552:

93 Սեբեոս, Պատմություն, Երևան 2005 թ., էջ 23:

94 Է.Լ. Դանիելյան, Ա. Ա. Մելքոնյան, Հայոց Պատմություն, Երևան 2008 թ., էջ 48:

Մեծը (Միհրդատ I)։ Այս Արշակ Մեծի օրոք է, որ պարթևները դառնում են հզոր կայսրություն։

Ըստ Մովսես Խորենացու՝ Արշակ Մեծը, մակեդոնացիների գահը զբաղեցնող Անտիոքոսին սպանելով, իր իշխանությանն է ենթարկում ամբողջ տարածաշրջանը։ ***«Պատմում են, որ Արշակ Մեծը, Պարսից և Պարթևաց թագավորը, որ ինքն էլ ցեղով պարթև էր, ապստամբեց մակեդոնացիների դեմ, թագավորեց բոլոր Արևելքի և Ասորեստանի վրա, սպանեց Նինվեում Անտիոքոս թագավորին և բոլոր տիեզերքը հնազանդեցրեց իր ձեռքի տակ»***[95]*։*

Իսկ այդ ժամանակաշրջանում Հայաստանում Արտաշեսի մահվանից հետո նորից սկսվում են ներքին խժդժություններ, քանզի Արտաշեսի որդի ոմն Արտավազդ, չընդօրինակելով իր հոր վարքն ու գործելակերպը՝ սկսում է ապրել ցոփ ու շռայլ կյանքով։ Անտեսելով տերության հոգսերը՝ սա նաև դաժանությամբ է վարվում իր հպատակների հետ, ինչն էլ երկիրը տանում է տնտեսական և բարոյական անկման։ Այս ամենից ելք չտեսնելով՝ հատկապես, որ այդ շրջանում երկրի չորս բոլորը պատված էր թշնամիներով, հայ իշխանները որոշում են դաշնակցել այդ ժամանակվա ամենահզոր և կայուն ժողովրդի՝ պարթևների հետ։ Եվ ի մի գալով՝ պատվիրակություն են ուղարկում Արշակ Մեծի մոտ, որպեսզի նա միջամտի, որ Հայաստանում տիրող այդ անառողջ վիճակը երկիրը չտանի կործանման։

«Արտաշեսը երկար ժամանակ իշխանությունը վարելուց հետո խաղաղությամբ մեռավ՝ իր տերությունը թողնելով անարժան Արտավազդ որդուն, որի ժամանակ հայերն իրենց տարտամ դրությունից ձանձրանալով՝ ստիպված եղան դիմել պարթևներին, որ գան ու իրենց երկրին տիրություն անեն»[96]*։*



Արշակ Մեծն էլ, հայ իշխանների խնդրանքի համաձայն, իր եղբայր Վաղարշակին, ով ճանաչված էր՝ որպես առաքինի, իմաստուն, և հզոր անձնավորություն, ուղարկում է Հայաստան, ինչն էլ ճակատագրական ելք է ունենում իր արատավոր համբավով հայտնի Արտավազդի համար։ ***«Արտաշեսի մահվանից հետո հայերը՝ նրա***

---

95 Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, Երևան 1990 թ., էջ 20:

96 Ս. Պալասանյան, Պատմություն Հայոց, սկզբից մինչև մեր օրերը, Թիֆլիզ 1890 թ., էջ 50:

որդուց՝ դաժանաբարո Արտավազդից դժգոհ, դիմեցին Արշակին (նույն ինքը՝ Միհրդատ I-ին), որը դադարեցնելով ներքին անհամաձայնությունները՝ Հայաստանում թագավոր կարգեց իր եղբայր Վաղարշակին... Արտավազդը, չկարողանալով տանել անարգանքը, ինքն իրեն սրախողխող արեց»[97]:

Ուսումնասիրելով տարբեր պատմիչների աշխատությունները Հայաստանի պատմության մասին՝ իր աշխատությունում ռուս պատմաբան Սերգեյ Գլինկան ավելի ընդհանրացված է նկարագրում այդ դեպքերը: Նա Արտաշեսին փոխարինող Արտավազդին համեմատում է Ասորեստանի վերջին արքա Սարդանապալի հետ, ով համարվում է անառակության հոմանիշ. հետաքրքիր է, որ երկուսի կյանքն էլ համանման ճակատագրական ավարտ է ունենում: ***«Հայաստանում ի հայտ եկավ կրքերի, ճոխության գերի, ցանկասիրության կապանքներով շղթայված մի նոր «Սարդանապալ», դա Արտավազդն էր՝ Սելևկյանների վերջին ճյուղը: Բարեբախտաբար, Հայաստանում դեռ գտնվեցին հայրենիքին նվիրված որդիներ, որ որոշեցին գահընկեց անել այդ նոր «Սարդանապալին» և վերականգնել Հայաստանը: Զգուշանալով տիրակալի ստրկամիտ ծառայողներից՝ Արշակին խնդրեցին Հայաստանի գահին նստեցնել իր եղբորը՝ Վաղարշակին: Այս դեպքերի հետ կապված՝ կան որոշ տարբերություններ՝ Մովսես Խորենացու, Զամչյանի, Կաթողիկոսի (Հ. Դրասխանակերտցի) և Հայաստանի մասին գրող մյուս հեղինակների մոտ: Սակայն, չնայած բոլոր տարաձայնություններին՝ հաստատապես կարելի է ասել, որ Արշակունիների թագավորելը Հայաստանում չի եղել ստիպողաբար. ո՛չ պատերազմով, ո՛չ նվաճումով:***



Հայաստանը չի կորացել ոչ մի պայմանի առջև, չի նեղել իրեն և ոչ մի պարտավորությամբ, այլ կամավորապես է հրավիրել արժանավորին նստել թագավորական գահին և իշխել Հայաստանին:

Դեռ նոր էր տարածվել լուրը, որ Հայաստանի սահմաններն անցել են Արշակը և նրա եղբայր Վաղարշակը, ժողովուրդը ամեն կողմից շտապում էր նրանց ընդառաջ գնալ՝ ողջունելով որպես Հայաստանի ազատարարներին:

Կարծես թե վերականգնվում էր Ասորեստանյան Սարդանապալի պատմությունը, և Հայաստանի «Սարդանապալ»-Արտավազդը, իմանալով

---

97 В. А. Аабаза, История Армении, С.–Петербургъ. 1888 г., ст. 33–34.

այդ ահեղաձայն փոթորկի ներթափանցման մասին, արթնացավ ցանկասիրության քնից։ Դուրս պրծնելով իր հարճերի գրկից՝ նա պատրաստվեց առաջնորդել բանակը։ Ժողովուրդը, որ կորացել էր ծանր լծի տակ, դիմադրեց նրան՝ դժգոհության գոչյուններով։ Այդ եղեռնագործի գլխին ամենուրեք ճայթում էին անեծքներ։ Շողոքորթները, որ քարշ էին գալիս իրենց կուռքի ոտների մոտ, անմտորեն համոզեցին նրան թաքնվել պալատում, քանի որ զորավարների քաջությունը նրան անվտանգությամբ կշրջափակի։ Վաղուց հայրենիքից և առաքինություններից հրաժարված Արտավազդը չէր կարող հրաժարվել մարդկությանը խայտառակող այդպիսի կյանքից։ Նա իսկույնևեթ հեռացավ պալատի խորքը և տրվեց ցանկասիրության թմբիրին։

Մինչ այդ՝ Արշակը և Վաղարշակը սրընթաց շարունակում էին արշավը, շրջանների տեղապահները, գաղտնի ծանուցված լինելով հայրենիքի հավատարիմ զավակների կողմից, շտապում էին միանալ Պարթևական բանակին։

Որոտացին զենքերի ձայները մայրաքաղաքի պարիսպների մոտ։ Քաղաքային դարպասների հետ քաղաքացիները բացեցին և իրենց ուրախացած սրտերը։ Թաքնվեցին շողոքորթները, դատարկվեցին պալատները։ Հալածվելով սարսափից և խղճից, որը մերկացնում է տանջարարներին՝ Արտավազդը շտապեց Արաքսի մոտ և նրա ափերին սրով խոցեց իր կրծքավանդակը։

Հայերի համընդհանուր ցանկությունը Վաղարշակին նստեցրեց Հայաստանի գահին։ Իսկ ժանտագործին, որ երես էր թեքել ժողովրդից, ոչ ոք սատար չկանգնեց»[98]։

[98] Сергей Глинка, “Обозрение истории Армянского народа”, Москва 1832 г., ст. 155–157.

Վաղարշակի թագավորելը

«Կա աշխարհասփյուռ մի ժողովուրդ (հայերը), որի հեռավոր ծագումը հասնում է մինչև Քրիստոսի թվարկությունից առաջ X դարը: Այս ժողովուրդը ճանաչել է աշխարհակալության փառքը և ունեցել արժանավոր թագավորություն, որը հաղթել է մեծ տերությունների՝ հարմարեցնելով նրանց իրեն: Այս ժողովուրդը ճանաչել է նաև ավերում, կործանում, վատթարագույն չարիքներ: Այս ժողովուրդը, որին շատ հանգամանքներում կամեցել են ջնջել, հարատևել է ապրելու ցանկությամբ իր ճակատագրի բերումով տարբեր վայրերում, տարբեր ժամանակներում խաղացել է էական դեր»[99]:

Վաղարշակը, գալով Հայաստան, սկսում է շտկել երկրի բարձիթողի արված գործերը. նա մեծ ջանքեր է ներդնում, որպեսզի Հայաստանի թե՛ ներքին և թե՛ արտաքին խաթարված վիճակը կարգավորվի. ***«Իսկ նրա (Արշակ Մեծի) Վաղարշակ եղբայրը եկավ Հայաստան, բարեկարգեց Հայոց շփոթ ու խռովահույզ երկիրը, հիմնեց նախարարություններ, նրանց տվեց անուն, բարձ և գահ»***[100]:

Մեծ զորք հավաքելով՝ Վաղարշակն ասպատակում է արևմտյան կողմերը և ազատագրում Պոնտոսը և շրջակա տարածքները՝ մակեդոնացիների իշխանությունից՝ այդ տեղերն էլ կարգավորելով և իր իշխանությանը հպատակեցնելով: Վաղարշակը, Արտավազդի գործած ավերների հետևանքները վերացնելով և բազմաթիվ այլ օգտակար գործեր անելով, շենացնում է երկիրը: ***«Նա (Արշակ Մեծը)... Հայաստանում թագավոր է նշանակում իր եղբայր Վաղարշակին՝ մի ողջամիտ, խոհեմ ու քաջ մարդու: Նա թշնամիների դեմ բազում հաղթական կռիվներից հետո վայելուչ կերպով բազմաթիվ քաղաքական և կենցաղօգուտ գործեր է կատարում: Նախ՝ իր պերճապաճույճ վարքով հովանի է դառնում իր թագավորությանը, ապա նախարարներին իրեն ենթարկելով՝ կապում է արքունիքի հետ և իր տերության բոլոր կողմերում ղեկավարներ է նշանակում պատվական ու պիտանի մարդկանց, որոնց մի մասը Հայկի սերնդից էր, իսկ մյուսները՝ հաջողակ մարդկանցից... Դրանից հետո հույներին ևս քաջաբար դուրս քշելով ու նվաճելով՝ նա իր ձեռքի տակ է վերցնում Պոնտոսն ու Կեսարիան, որոնք իր շրջակա գավառների հետ կոչում է Միժակ: Եվ***

---

99 Ֆրեդերիկ Մակլեր, Տես Երկիր Դրախտավայր. Օտարերկրացիները Հայաստանի և հայերի մասին.... Երևան 2014 թ., էջ 457:

100 Թովմա Արծրունի և Անանուն, Պատմություն Արծրունյաց տան, Երևան 1978 թ., 65 էջ:

այնտեղից Կովկասյան լեռան ստորոտներով վերադառնալով դեպի ծովափնյա տարածքները՝ տեղի վայրենի ցեղերին հրաման է տալիս՝ թողնել ավազակությունը, մարդասպանությունը, չար սովորությունները և հպատակվել արքունի հրամաններին ու հարկերին և արքունիքի կողմից արժանանալ ցեղապետությունների պատվին ու աստիճանին։

Եվ այդպես, հոգ տանելով արքունիքից դուրս եղողների մասին՝ նա հետո ստեղծում է վայելուչ կարգեր իր պալատում ևս...

***Այսպես, կարգավորելով արքունական կարիքները՝ այնուհետև նշանակում է կողմնակալներ, կուսակալներ, նահապետներ, սպասալարներ, զորագլուխներ։ Կարգում է նաև բդեշխներ, որոնցից մեկը Գուգարքի՝ հյուսիսային կողմի, իսկ մյուսը՝ Աղձնիքի՝ հարավային կողմի համար»*[101]։**

Խորենացին մանրամասն ներկայացնում է Վաղարշակի գործերը՝ նրան համարելով մեծ բարեփոխումներ անող անձնավորություն, և հերթով նշում է, թե Արծրունիների, Գնթունիների, Սլկունիների, Մանդակունիների, Անգեղյա և այլ իշխանական տոհմերի ներկայացուցիչներին ինչերի վրա է կարգում։

Իսկ Արշակ Մեծը Վաղարշակի իշխանության տակ է դնում շրջակա այլ երկրների կառավարումը ևս։ Եվ որպեսզի այդ հսկայական տարածքները կարողանա կառավարել, որպես նստավայր՝ ընտրում է կենտրոնական մասերում գտնվող Մծբին քաղաքը։ ***«Սա իր եղբորը՝ Վաղարշակին թագավորեցնում է մեր Հայոց աշխարհի վրա, այդպես նպատակահարմար համարելով, որպեսզի իր թագավորությունն անխախտ մնա։ Նրան թագավորության քաղաք է նշանակում Մծբինը և նրան սահմաններ է որոշում՝ Ասորիքի արևմտյան կողմից մի մասը, Պաղեստինը, Ասիան, ամբողջ Միջերկրայքը և Թետալիան՝ Պոնտոս ծովից մինչև այնտեղ, ուր Կովկասը վերջանում է Արևմտյան ծովի մոտ, նաև Ատրպատականը, «և էլի՝ որքան քո միտքն ու քաջությունը կհասնեն, որովհետև, ասում է՝ քաջերի սահմանը նրանց զենքն է, որքան կկտրե, այնքան էլ կտիրե»»*[102]։**

Վաղարշակը հայոց այն թագավորներից է, ում բարեգործություններ մասին շատ մանրամասն են ներկայացրել պատմիչները։ Մենք ընտրողաբար ի ցույց դրեցինք նրա գործերի մասին տեղեկություններ։ Հետաքրքրվողները կարող են ամբողջությամբ ընթերցել Խորենացու և մյուս հեղինակների գործերը։

Վաղարշակը հատուկ ուշադրության է արժանացնում բագրատունիներին, որոնց կարգում է թագադիր ասպետներ։ ***«Որովհետև մակեդոնացիներին սանձահարելուց հետո, երբ պատերազմը դադարեց, քաջ պարթևը ձեռնարկում է բարեկարգություններ՝ նախևառաջ բարիքների***

---

101 Հովհաննես Կաթողիկոս Դրասխանակերտցի, Հայոց Պատմություն, Երևան 1996 թ., էջ 27–28:

102 Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, Երևան 1990 թ., էջ 20:

փոխարեն հատուցելով զորավոր և իմաստուն Շամբաթ Բագարատին, որ հրեաներից էր՝ իշխանություն տալով նրան՝ որդուց որդի, թագադիր լինել Արշակունիներին, (և սահմանելով) որ նրանից սերվող ցեղը Բագրատունի կոչվի՝ նրա անունով, որ ներկայումս մեծ նախարարություն է մեր աշխարհում»[103]*,- գրում է Պատմահայրը։*

Վաղարշակը ոչ միայն թագադիր ասպետի պատվի է արժանացնում Բագարատին այլև դարձնում է սպարապետ։ ***«Նախ Բագարատին, որը [սերում էր] հրեա Շամբաթից, որի մասին ասում էին, թե Դավթի ցեղից է, անձամբ իրեն թագադիր է դարձնում, քանի որ նա իր անձը նրան որպես ընծա էր մատուցում, քան՝ շատ ուրիշները։ Նրան կարգում է նաև սպարապետ և բյուրավոր ու հազարավոր մարդկանց իշխան»***[104]*։*

Ինչպես վերը տեսանք, հրեաների մեծ թագավոր Դավթի նախնիների մեջ եղել են հայկական ծագում ունեցող անձինք։ Իսկ եթե Բագարատը Դավթի սերնդից էր, ուրեմն նա իր մեջ կրում էր նաև հայկական գեն։

Բագարատը և իր ցեղակիցները պաշտում էին երկինք և երկիր արարող միակ ճշմարիտ Աստծուն և իրենց հեռու էին պահում կռապաշտության ունայնությունից։ Սակայն Վաղարշակը, գալով Հայաստան, իր հետ բերում է նաև տարբեր ազգերին պատկանող կուռքերի արձաններ, և տեղադրելով մեհյանում՝ երկրպագում դրանց, մյուսներին էլ հորդորելով, որ իր օրինակին հետևեն։

Բագարատը, ոչինչ համարելով այն բոլոր շնորհները, որ ստացել էր Վաղարշակից, ամուր է մնում իր հավատքի մեջ, և տեղի չի տալիս արքայի ո՛չ հորդորներին և ոչ էլ՝ սպառնալիքներին։ ***«Այս բոլորից հետո Արմավիրում մեհյան շինելով՝ արձաններ է կանգնեցնում արեգակին, լուսնին և իր նախնիներին։ Վաղարշակը շատ խնդրեց, որ նույնպես և խոսքերով հարկադրեց հրեա Շամբատի զավակ Բագարատին, որ և թագադիր ասպետ էր, որպեսզի թողնի հրեական կրոնը և կուռքեր պաշտի. բայց երբ նա հանձն չառավ, թագավորը նրա կամքին թողեց»***[105]*։*

---

103 Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, Երևան 1990 թ., էջ 67:

104 Հովհաննես Կաթողիկոս Դրասխանակերտցի, Հայոց Պատմություն, Երևան 1996 թ., էջ 28:

105 Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, Երևան 1990 թ., էջ 76:

Հայոց պատմության գյուտը

«Հայաստանը միակ տեղն է, որն ինձ փոխեց. ես կասեի՝ ամբողջովին: Ես իհարկե տեսել եմ և՛ աշխարհի հրաշալիքները, և՛ մշակույթի ստեղծագործություններ աշխարհի տարբեր ծայրերում, և այդ ամենը ինձ հիացմունքով է լցրել, բայց ինձ փոխեց հենց Հայաստանը»[106]:

Հայաստանի արքաներից շատերն են իրենց հայրենանվեր գործերի համար արժանացել սերունդների կողմից մեծարանքի, և մինչ օրս էլ կան նրանց կողմից կառուցված թե՛ մասնակի և թե՛ ամբողջապես պահպանված քաղաքներ, ամրոցներ, ջրատարներ, կոթողներ և այլ շինություններ: Սակայն ամենահրաշալի և եզակի կոթողային աշխատանքը, որ դարերի խորքից հասել է մեզ, կարելի է համարել Հայոց հնագույն պատմության գյուտը, որն իրականացավ հենց Վաղարշակի ջանքերով, առանց որի՝ մենք խիստ թերի պատմություն կունենայինք: Եվ, ուրեմն, մենք Վաղարշակին ենք պարտական, որ տեղեկացել ենք մեր՝ հայոց ազգի նահապետ Հայկի և նրա ժառանգների կյանքի ու գործերի մասին:

*Այսպես՝ երբ Վաղարշակն ամեն ինչ կարգավորեց՝ Հայաստանում առաջացած ներքին և արտաքին խնդիրները հարթելով, նա սկսեց խորհել, թե արդյոք ովքե՞ր են հնում զբաղեցրել այն արքայական գահը, որին բազմել էր ինքը: Հայաստանի սահմաններում կատարված ուսումնասիրությունները ոչ մի դրական արդյունք չտվեցին: Եվ քանի որ Վաղարշակը շատ էր ցանկանում այդ հարցը պարզել, որոշեց դրա պատասխանը գտնել Նինվեում գտնվող այդ ժամանակների համար ամենամեծ գրադարանում. **«Սա իր իշխանությունը լիովին կարգի բերելով և իր թագավորությունը հաստատելով՝ կամեցավ իմանալ, թե ովքե՞ր արդյոք և ինչպիսի՞ մարդիկ են տիրելիս եղել Հայոց աշխարհի վրա՝ իրենցից առաջ, արդյոք ինքը քաջերի՞ տեղն է գրավում, թե՝ ապիկարների: Նա գտավ մի ուշիմ ասորի՝ Մար Աբաս Կատինա անունով, քաղդեական և հունական գրության մեջ վարժ, և նրան ուղարկեց իր եղբոր՝ Արշակ Մեծի մոտ՝ արժանավայել ընծաներով, (խնդրելով) բանալ նրա առաջ արքունական դիվանը: Եվ նրան թուղթ է գրում այս բովանդակությամբ.***

«Արշակ թագավոր՝ ցամաքի և ծովի, որի անձն ու կերպարանքն իսկապես մեր աստվածներին են նման, բախտն ու հաջողությունները՝ բոլոր թագավորներից գերազանց և մտքի լայնությունը՝ ինչպես երկնքինը՝ երկրի վրա. Վաղարշակ՝ քո կրտսեր եղբայրն ու նիզակակիցը, որ քեզանից

[106] Տոնինո Գուերրա, իտալացի բանաստեղծ, գրող և սցենարիստ:

նշանակվեց Հայոց Թագավոր։ Ողջ եղիր՝ մշտական հաղթությամբ։

Որովհետև քեզանից պատվեր ստացա քաջության և ամեն տեսակ իմաստության հոգ տանել՝ երբեք զանց չարի քո խրատն՝ անփութությամբ, այլ ամեն բանի խնամք և հոգ տարա՝ որքան միտքս կտրում էր և հնարավոր էր։ Եվ այժմ քո խնամակալությամբ թագավորությունս կարգավորելով՝ միտքս դրի իմանալ, թե ինձանից առաջ ովքե՞ր են տիրել Հայոց աշխարհիս և որտեղի՞ց են այն նախարարությունները, որ այստեղ կան։ Որովհետև այստեղ ո՛չ հայտնի կարգեր են եղել և ո՛չ մեհենական պաշտամունքներ, և աշխարհիս գլխավորներից ո՛չ առաջինն է հայտնի և ոչ՝ վերջինը, և ոչ՝ ուրիշ մի օրինավոր բան կա, այլ ամեն ինչ խառնիխուռն է և վայրենի։

Ուստի, աղաչում եմ քո տերությանը, որ հրամայես արքունական դիվանը բանալ՝ քո հզոր տերությանը ներկայացող այդ մարդու առաջ, որպեսզի քո եղբոր և որդուն ցանկալի (պատմությունը) գտնելով՝ փութով բերե։ Հավատացած եմ, որ մեր բավականությունը, որ կունենանք (քո) կամքը կատարելով, քեզ ևս ուրախություն կլինի։ Ողջ եղիր, աստվածների մեջ բնակությամբ՝ երևելի՛դ»։

Արշակ Մեծն, ընդունելով Մար Աբաս Կատինայից գրությունը, մեծ հոժարությամբ հրամայում է առաջարկել նրան արքունական դիվանը, որ Նինվեում էր՝ միանգամայն ուրախանալով, որ այսպիսի մտադրություն ունի իր եղբայրը, որին հանձնարարել էր իր թագավորության կեսը։ (Մար Աբասը), աչքի անցկացնելով բոլոր մատյանները, գտնում է մի մատյան՝ հունարեն գրված»[107]*։*

Եվ դա հենց այն մատյանն էր, որի հիման վրա Մովսես Խորենացին գրեց Հայոց Պատմությունը, առանց որի՝ մեր պատմությունը կսկսվեր Երվանդ Սակավակյացով, այսինքն՝ մոտ 2000 տարի կրճատված։

«Այս մատյանն Աղեքսանդրի հրամանով քաղդեերեն լեզվից թարգմանված է հունարենի և պարունակում է բուն հների և նախնիքների պատմությունները։

Որի սկզբում, ասում է, նշանակված են եղել Զրվանը, Տիտանը և Հապետոսթեն, և այս երեք նախարարական մարդկանց սերունդներից բոլոր նշանավոր մարդիկ՝ յուրաքանչյուրն իր տեղում դասավորված, երկար տարիների ընթացքում։

Մար Աբաս Կատինան, այս մատյանից հանելով միայն մեր ազգի հավաստի պատմությունը հույն և ասորի գրերով, բերում է Մծբին՝ Վաղարշակ Թագավորին։ Եվ բարեկազմ ու քաջ աղեղնավոր, արի Վաղարշակը, կորովախոսն ու հանճարեղը, ընդունելով այն, համարելով առաջինն իր գանձերի մեջ, հրամայում է մեծ զգուշությամբ պահել արքունիքում և մի

---

[107] Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, Երևան 1990 թ., էջ 20–21:

մասը նրանից՝ հրամայում է արձանի վրա դրոշմել»[108]*։*

Շատերի գործերից միայն հուշեր են մնացել, իսկ Վաղարշակի ամենամեծ գանձը, որ գտնված Հայոց պատմությունն է, մնացել և ուսումնասիրության առարկա է դարձել գիտական աշխարհում մինչ օրս, իսկ հայերի համար այն մեր լինելության ճանաչման հիմքն է։

«Բազում զավթիչներ ու ավարառուներ կամեցել են ոչնչացնել ձեռագիր մատյանները, որոնցում և՝ հայոց ազգի ու մեր երկրի՝ որպես «Հայաստանի» պատմությունը...

Ի հակադրություն այդ ամենի, զարմանալի այս անձը՝ Վաղարշակ Առաջին Արշակունի ու Իմաստուն թագավորը, ընդհակառակը, կամեցել է, որ գտնվի հայոց մեծաց ինքնության, կյանքի գործերի, ինչպես նաև բովանդակ կենսակերպի կարգավորության՝ նախկին ու մինչ իր գահակալության ժամանակը դեռևս մաս-մաս ներկա եղելումը, ստեղծվի ու գրով ամրակայված լինի հայոց կենսագոյությունում կերպացյալ ու բովանդակյալ հոգևորությունն ամբողջացնող պատմությունը։

Եվ հենց Վաղարշակ Իմաստունի կողմից <u>հայոց պատմության նախաձեռնության ու գործի</u> և ապա՝ Մովսես Խորենացու «Պատմութիւն Հայոց» երկի շնորհիվ է, որ մենք այժմ «հայ» ենք կոչվում»[109]*։*

Արշակ

Եվ այսպես Արտաշեսից հետո, Հայոց պատմագրության ընթացքին՝ հետևելու երկու ուղի կա։

Մեկը մեր պատմահայր Մովսես Խորենացու պատմությունն է, որը, կարելի է ասել, ըստ Մար Աբաս Կատինայի է. նաև վաղ և ուշ միջնադարյան բազմաթիվ պատմիչների աշխատություններն են, որոնք, բացի Խորենացու պատմությունից, օգտվել են նաև այլ աղբյուրներից. և սրանք բոլորն էլ ընդունում են Արշակունիների տարբերակը։

Մյուսը ձևավորվել է գիտական աշխարհում մոտավորապես վերջին հարյուրամյակում, սա էլ ընդունում է Արտաշեսյանների տարբերակը։

Այս երկու ուղիներն, իհարկե, ունեն որոշ ընդհանրություններ՝ Տիգրան Մեծ և Արտավազդ արքաների հետ կապված, բայց և ունեն ավելի շատ հակասություններ։

Խորենացին խոսում է մինչև առաջին դարի հայոց արքաների մասին, որոնք են՝ Վաղարշակը, Արշակը, Արտաշեսը, Տիգրան Մեծը, Արտավազդը

---

[108] Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, Երևան 1990 թ., էջ 22:

[109] Ռոմիկ Քոչարյան, Պատմությունը եվ հերմենեվտիկան, Երեվան 2016 թ., էջ 414:

և Արշամը: Իսկ ըստ ներկայիս գիտական աշխարհի՝ այդ ժամանակաշրջանի արքաներն են՝ Արտաշեսը, Արտավազդը, Տիրանը, Տիգրան Մեծը, Արտավազդը, Արտաշես Բ, Տիգրան Գ, Արտավազդ Գ, Տիգրան Դ և էրատո թագուհին:

Տեսնում ենք՝ թե՛ թվի և թե՛ անվանումների առումով բավականին տարբերություններ կան:

Ի՞նչ կարող ենք ասել. շատ խրթին հարցի առաջ ենք հայտնվել: Եթե ընդունենք ներկայիս շրջանառվող կարծիքը, մենք մեր պատմությունից ստիպված ենք լինելու օտարել Վաղարշակին, Մար Աբասին և նրա հայտնաբերած հայոց պատմությունը, որ կազմում է Մովսես Խորենացու Հայոց Պատմության մեկ երրորդ մասը՝ կարելի է ասել, ամենակարևոր հատվածը՝ սկսած Հայկ Նահապետից մինչև Վաղարշակի որդի Արշակը: Նաև պետք է հրաժարվենք Աբգարին՝ որպես հայոց թագավոր ընդունելուց:

Տեսնում ենք, որ այս դեպքում մեր կորուստները զգալի են, իսկ եթե ընդունենք Խորենացուց մեզ հասած տեղեկությունները, ապա պետք կլինի մյուս տարբերակում նշված արքաներից շատերի հետ կապված խնդիրները պարզաբանել, ինչից ելնելով՝ մենք հավատարիմ ենք մնում Մովսես Խորենացու պատմությանը. ընտրում ենք նրա մոտեցումը: Իսկ ինչ վերաբերում է մյուս տարբերակին, ամեն դեպքում, մասամբ դեռ անդրադառնալու ենք դրան:

Հիշենք, որ Մար Աբասը ոչ միայն Հայոց պատմությունն է հայտնաբերել, այլև եղածի վրա ավելացրել է այն, ինչին անձամբ է ականատես եղել, այսինքն՝ Վաղարշակի և Արշակի մասին պատմությունները:

Եվ եթե իսկապես գոյություն է ունեցել Մար Աբասը, ուրեմն հաստատապես գոյություն է ունեցել նաև հայոց Վաղարշակ պարթև արքան, ում մոտ էլ նա ծառայության մեջ է եղել համապատասխան պաշտոնում:

Ուրեմն, չկասկածելով, Մար Աբասի և իր պատմության իսկությանը, շարունակենք պատմությունը:

Այսպիսով, Վաղարշակը, բացի իր ավագ որդուց՝ Արշակից, իր մյուս որդիներին Մծբինից հեռացնում է՝ շնորհելով նրանց արքայազների ապրելակերպին համապատասխան բնակավայր և ապրուստի աղբյուրներ:

*Տարիքն առնելով՝ Վաղարշակը հայոց գահը ժառանգում է իր ավագ որդուն՝ Արշակին, և վախճանվում է: **«Արշակը՝ Վաղարշակի որդին, Հայոց վրա թագավորում է տասներեք տարի. իր հոր առաքինություններին նախանձավոր և հետևող գտնվելով՝ նա շատ բարեկարգություններ մտցրեց»**[110]:*

Արշակը նաև պատերազմող մարդ էր: Նա պատերազմ է մղում պոնտացիների դեմ և հաղթանակում: Սակայն նա, ի տարբերություն Վաղարշակի, կրոնական հարցերում ավելի անհանդուրժող է գտնվում՝ հալա-

[110] Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, Երևան 1990 թ., էջ 77:

*ծանքի ենթարկելով հայաստանաբնակ հրեաներին. **«Չնայած որ պատմաբաններն ասում են, որ Արշակ Առաջինը, նստելով Հայաստանի գահին, շարունակեց (ըստ Արտաշեսի) առաքինի կյանքով ապրել, սակայն տվյալ պատմաբաններից երևում է, որ նա չընդօրինակեց հավատքի հանդեպ հանդուրժողականությունը...***

Նա հալածեց եբրայեցի Բագարատի սերունդներին, ովքեր պաշտում էին կենդանի Աստծուն, և ստիպում էր նրանց երկրպագել անզգա կուռքերին: Սակայն չտատանվելով նախահայրերի հավատքից՝ նրանք արհամարհեցին սպառնացող բռնությունը»[111]:*

*Դեռ այդ հոգևոր առումով խավար ժամանակաշրջանում, երբ Հայաստանում մոռացության էին մատնել իրենց հայրերի Տեր Աստծուն, այդ նույն հավատքը կրող Բագարատի որդիներն իրենց կյանքն էին զոհում՝ հանուն երկինք և երկիր արարող Աստծո: **«Բագարատի որդիները սրանից նեղվեցին, որպեսզի կուռք պաշտեն. նրանցից երկուսը սրով արիաբար վախճանվեցին իրենց հայրենական կրոնի համար, որոնց չեմ տատանվում կոչել՝ հետևող Անանյաններին և Եղիազարյաններին. իսկ մյուսները միայն այսքան բան հանձն են առնում՝ շաբաթ օրերը ձի հեծնել որսի և պատերազմի համար և տղա զավակներին անթլփատ թողնել, եթե լինեն, որովհետև կին չունեին: Եվ Արշակից հրաման դուրս եկավ բոլոր նախարարություններին՝ նրանց կին չտալ, եթե պայման չդնեն թլփատությունից հրաժարվելու: Նրանք հանձն են առնում միայն այս երկուսը, բայց կուռքերին երկրպագելը՝ ոչ»**[112]:*

Եվ ուրեմն, Հայոց սուրբ հողում մինչ Քրիստոս արդեն իսկ եղել են նահատակություններ՝ հանուն այն հավատի, որի կրողները դարեր առաջ եղել են նաև այս սուրբ երկրի բնիկները՝ հայերը:

Ինչպես տեղեկացնում է Մովսես Խորենացին, իր Հայոց Պատմության գրքի սկզբից մինչև Արշակի մասին այս տեղեկությունները ներառյալ՝ բոլորը Մար Աբաս Կատինայի աշխատությունից է վերցված:

*Եվ ահա, Արշակի պատմությամբ այն հասնում է իր ավարտին, իսկ շարունակությունը գրելիս Խորենացին արդեն օգտվում ուրիշ աղբյուրներից: **«Այստեղ սպառվում են Ծերունի Մար Աբաս Կատինայի պատմությունները»**[113]:*

---

111 Сергей Глинка, “Обозрение истории Армянского народа”, Москва 1832 г., ст. 167.

112 Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, Երևան 1990 թ., էջ 78:

113 Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, Երևան 1990 թ., էջ 78:

Արտաշես

«Հայաստանը գեղեցիկ է։ Բայց չկա և չի կարող լինել Հայաստան՝ առանց հայերի՝ աշխարհի այդ հնագույն ժողովրդի, որն իր աշխատանքով և աշխատանքի իմաստությամբ փառավորել է այս քարքարոտ հողը, դարձրել իր անմահության հիմքը»[114]։

Այստեղից սկսած՝ Խորենացու պատմության մեջ եղող տեղեկությունները Մար Աբաս Կատինայի գրքի հետ արդեն կապ չունեն, և ուրեմն, Խորենացին այլ հավաստի աղբյուրներից է օգտվել։

Խորենացին պատմությունն այստեղից սկսում է հետևյալ կերպ. ***«Կսկսենք պատմել քեզ Ափրիկանոս ժամանակագրի հինգերորդ գրքից, որին վկայում են Հովսեփոս և Հիպոլիտա և ուրիշ շատերը՝ հույներից։ Որովհետև նա ամբողջապես փոխադրեց (հունարենի)՝ ինչ որ Եդեսիայի, այսինքն՝ Ուռհայի դիվանում գրվածքներ կային մեր թագավորների մասին։ Այս մատյաններն այնտեղ փոխադրված էին Մծբինից և Պոնտոսի Սինոպից՝ մեհենական պատմություններից։ Թող ոչ ոք չկասկածի, որովհետև մենք ինքներս մեր աչքով տեսանք այն դիվանը»[115]։***

Սակայն, ինչպես ասվեց, դրանք հակասության մեջ են մերօրյա պատմական տեղեկությունների հետ։

Իսկ մենք շարունակելով աշխատությունը կաշխատենք հնարավորինս հավասարակշիռ դիրք պահպանել Խորենացու և ներկայիս գիտական աշխարհում ընդունված տեղեկությունների միջև։

Այսպիսով, Արշակի փոխարեն հայոց գահին է նստում նրա որդի Արտաշեսը, որը հզոր և պատերազմող մարդ էր։ Այդ ժամանակաշրջանում խիստ հզորանում են Հռոմեացիները և արշավելով աշխարհի չորս կողմերը՝ իրենց են հնազանդեցնում տվյալ տարածքներում գտնվող երկրները։ Արտաշեսն այդ հռոմեական վտանգի դեմն առնելու համար որոշում է նախ տարածաշրջանում ամրապնդել դիրքերը և ապա մտածել նաև առաջխաղացման մասին։

Այդ ժամանակ Պարսկաստանի գահին նստած Արշակ անվամբ արքան չուներ իր նախնիների հզորությունը, ինչից օգտվելով՝ Արտաշեսն իր կամքը թելադրեց նրան. ***«Թույլ Արշակը, որ տիրում է Պարսկաստանում քսաներեք տարի, չհամարձակվեց դիմակայել հայոց արքային։ Նրա պետության խորքերում Արտաշեսը անարգել իր համար կառուցեց պալատ-***

---

[114] Միխայիլ Դուդին, Տես Երկիր Դրախտավայր. Օտարերկրացիները Հայաստանի և հայերի մասին.... Երևան 2014 թ., էջ 611:

[115] Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, Երևան 1990 թ., էջ 78:

ներ, և պատվիրեց դրամ կտրել՝ իր պատկերով: Այդպիսով, մերկացնելով սուրը՝ Պարսկաստանի գահին թողեց միայն իշխանության ուրվական: Սակայն ոչ Պարսկաստանին տիրելը և ոչ էլ տիեզերքը գրավելու անմիտ ցանկությունը (ինչպես ենթադրում են որոշ պատմաբաններ) մղեցին նրան սանձել Պարսկաստանին, այլ՝ ագահ Հռոմեացիների տերության դեմ վստահելի պատվար կանգնեցնելու միտումը, և Արևելքն ազատելը՝ նրանց կործանարար ազդեցությունից»[116]:

Ամրապնդելով թիկունքը՝ Արտաշեսը պարսից արքային թողեց գահին, սակայն՝ որպես իր լուռ ու մունջ կամակատարի: Իսկ ինքը, մեծ զորաժողով անելով, զորքի գլուխն անցած, շարժվեց դեպի արևմուտք: ***«Նա մեծ զորքով շարժվում-գնում է արևմուտք՝ լյուդացիների վրա, և ձերբակալելով Կրեսոս թագավորին՝ հրամայում է նրան գցել տանջարանի մեջ, որպեսզի տապակվի: Իսկ Կրեսոսը, հիշելով Սողոնի խոսքերը, ասում է. «Մարդը չպիտի երանի տա իր բարեբախտությանը՝ մինչև իր վախճանը»:***

Արտաշեսը, նավարկելով դեպի ցամաք, գրավում է Պոնտոսն ու Թրակիան, կործանում է լակեդոմացիներին, փախուստի է մատնում փոկացիներին: Նրան անձնատուր են լինում ղոգացիները: Հելլադան դյուցազունների համար զոհ է մատուցում: Եվ այս ամենից հետո երբեք չի գոռոզանում իր մտքում, այլ՝ արտասվելով ասում էր. «Ավա՛ղ անցավոր փառքին»»[117]:

Արտաշեսը, խիստ հզորանալով, իր գրաված տարբեր երկրներից մեծ զորք հավաքելով՝ ցանկանում է էլ ավելի առաջանալ դեպի արևմուտք: Սակայն դա նրա համար ճակատագրական ավարտ է ունենում: Արտաշեսն ուներ, ինչպես ասում են, անթիվ-անհամար զորքեր: Որպեսզի կողմնորոշվեր բանակի քանակի հարցում, ամեն մի զինվոր մի քարի կտոր էր գցում կույտի վրա, որպեսզի հետո հաշվելով՝ իմանան մոտավոր քանակը: Սակայն հենց այդ բազմաթիվ և բազմազան զորքն էլ դարձավ նրա մահվան պատճառը:

«Արտաշեսը, երկու ծովերի մեջ եղած ցամաքը նվաճելով, Օվկիանոսը լցնում է նավերի բազմությամբ՝ կամենալով ողջ Արևմուտքն իրեն հպատակեցնել, որովհետև Հռոմում մեծ խռովություն և շփոթություն լինելով՝ ոչ ոք նրան ուժեղ դիմադրություն ցույց չտվեց: Բայց չեմ կարող ասել, ի՛նչ բանի ազդեցությամբ, ահագին աղմուկ և շփոթություն է ծագում, և բազմաթիվ զորքերն սկսում են միմյանց կոտորել. իսկ Արտաշեսը փախչելիս մեռնում է, ինչպես ասում են՝ իր զորքից՝ քսան և հինգ տարի թագավորելով»[118]:

---

116 Сергей Глинка, “Обозрение истории Армянского народа”, Москва 1832 г., ст. 171.

117 Հովհաննես Կաթողիկոս Դրասխանակերտցի, Հայոց Պատմություն, Երևան 1996 թ., էջ 31:

118 Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, Երևան 1990 թ., էջ 80:

Այդ շրջանում Հայաստանում ավելի պաշտում էին պարսկական ծագում ունեցող կուռքերին, սակայն Արտաշեսը, գրավելով արևմտյան երկրները, իր հետ Հայաստան բերեց հունա-հռոմեական պանթեոնի կուռքերի արձաններ՝ նոր պաշտամունքային համակարգ ստեղծելով Հայաստանում։

«Այդ թագավորը փոխեց նաև աստվածուհիներին, որոնց իրենից առաջ երկրպագում էին մոգերը և ժողովուրդը։ Հայաստանում որպես գլխավոր աստվածների՝ նախկինում ընդունում էին Արևին, Լուսնին և Արամազդին, սակայն Արտաշեսը Արմավիր բերեց հունական աստվածուհիներ Արտեմիսին, Հերակլեսին և Ապոլոնին»[119]։

Պետք է եզրակացնել, որ Արտաշեսը խռովության զոհ դարձավ հենց այն պատճառով, որ իր հաղթանակների համար երկինք ու երկիր արարող Աստծուն փառավորելու փոխարեն նոր կուռքերով լցրեց Հայաստանը։ Այնինչ նա լավ գիտեր, որ հենց իր կողքին բագարատի որդիները պաշտում էին ու փառաբանում և նույնիսկ նահատակվում էին Ճշմարիտ Աստծո փառքի համար։ ***«Հունաստանում Արտաշեսը վերցրեց պատկերները Դիոսի, Արտեմիսի, Աթենասի, Հեփեստոսի, Ափրոդիտեի, և հրամայեց դրանք տանել Հայաստան։ Դեռ չէին հասցրել դրանք հասցնել մեր երկրի սիրտը, երբ իմացան Արտաշեսի մահվան մասին լուրը, և դրա համար (այդ պատկերների ուղեկցությամբ) շտապ իրենց գցեցին Անի ամրոցը»***[120]։

Արտաշեսին շատ են մեծարել ոչ միայն հայ, այլև՝ օտար պատմիչները՝ իրենց աշխատություններում նրա մասին թողնելով հիշատակություններ։ ***«Արշակի որդի Արտաշեսը, անսովոր կերպով փառավորվել է հայ բանահյուսության մեջ և հեղինակների կողմից»***[121]։

Մովսես Խորենացին որոշ կասկածամտությամբ է վերաբերվում Արտաշեսի մասին օտար աղբյուրներում եղած տեղեկություններին, սակայն ի վերջո ընդունում է, որ դրանք կարող են ճշմարիտ լինել։

Հետաքրքիր է, որ այդ օտար պատմիչներն էլ Արտաշեսին համարում են Արշակունի։ Թեև փոքր-ինչ ծավալուն են նրանց վկայությունները, սակայն հարմար գտանք՝ այն ամբողջությամբ ներկայացնել։ ***«Այս բանն են ասում հունաց պատմագիրները, ո՛չ մեկը կամ երկուսը, այլ՝ շատերը, որի մասին տարակուսելով՝ մենք շատ քննություն կատարեցինք։ Որովհետև մի քանի պատմություններից լսել էինք, թե Կյուրոսն է սպանել Կրեսոսին և Լյուդացվոց թագավորությունը վերացրել...***

Բայց որովհետև շատերն են, որ ասում են, թե մեր Արտաշեսն է բռնել Կրեսոսին և հարմար ոճով են պատմում, ուստի և ես համոզվում եմ։ Որովհետև Պոլիկրատեսն այսպես է ասում. «Իմ աչքում պարթև Արտաշեսը բարձր է Աղեքսանդր Մակեդոնացուց. որովհետև իր աշխարհում մնալով՝

---

119 В. А. Аабаза, История Армении, С.–Петербургъ. 1888 г., ст. 36.

120 Степанос Тарноский – Асохик, Всеобщая история, Москва 1864 г., ст. 26–27.

121 В. А. Аабаза, История Армении, С.–Петербургъ. 1888 г., ст. 35.

տիրեց Թեբեին ու Բաբելոնին, և Ալյուս գետը չանցած՝ լյուդացոց զորքը կոտորեց և Կրեսոսին բռնեց, և նախքան Ասիա հասնելը՝ Ատտիկեի դղյակում հռչակվեց։ Ավա՛ղ բախտին. գոնե իր տերության մեջ լիներ վախճանված և ոչ թե՝ փախուստի ժամանակ»։

Սրա նման ասում է Եվագրոսը. «Աղեքսանդրի և Դարեհի պատերազմը փոքր է թվում՝ Արտաշեսի (պատերազմի) հետ համեմատելիս, որովհետև նրանց ժամանակ ցերեկվա լույսը փոշու պատճառով պայծառ չէր երևում, իսկ սա նետաձգությամբ արեգակն ստվերով պատեց կեսօրին՝ արհեստական գիշեր ստեղծելով։ Նա փախստական չթողեց, որ լյուդացիներին լուր տաներ, այլև հրամայում է՝ նրանց Կրեսոս թագավորին տապակի վրա դնել։ Ուստի հոսող ջրերը չկարողացան գետը հորդացնել, (որովհետև զորքը) խմելով՝ նրան իջեցնում էր ձմեռվա նվազության, քանի որ զորքի բազմությամբ ցույց տվեց, որ թվերը տկար են (նրանց քանակը արտահայտելու), այնպես որ ավելի՝ չափ էր հարկավոր, քան՝ հաշիվ։ Բայց նա սրանով չհպարտացավ, այլ արտասվեց՝ ասելով. «Ավա՛ղ այս անցավոր փառքին»»։

Սկամադրոսն էլ այսպես է գրում. «Լյուդացիների հպարտացած Կրեսոսին մոլորության մեջ է գցում Պյութիայի գուշակը՝ պատասխանելով. «Կրեսոսը, Ալյուս գետն անցնելով, իշխանություններ կկործանե»։ Նա օտարների (իշխանությունները) կարծելով իրենը՝ կործանեց, որովհետև պարթև Արտաշեսը նրան բռնելով՝ հրամայեց երկաթե տապակի վրա դնել։ Կրեսոսը հիշելով աթենացի Սողոնի խոսքերը՝ իր լեզվով բացականչեց. «Ո՛վ Սողոն, Սողոն, դու գեղեցիկ խոսեցիր, թե չի կարելի մարդու բարեբախտությանը երանի տալ՝ մինչև նրա մահը»։ Նրա մոտ եղած մարդիկ, այս լսելով, Արտաշեսին պատմեցին, թե Կրեսոսը մի նոր աստծու կանչեց։ Արտաշեսը գթալով հրամայեց նրան իր մոտ բերել, և երբ նրանից հարցրեց և իմացավ, թե ինչ է նրա բացականչածը, հրամայեց ներել նրան ու չտանջել»։

Փղեգոնիոսն էլ գրում է. «Պարթև Արտաշեսը բոլոր թագավորներից հուժկու եղավ. նա ոչ միայն լյուդացիներին վանեց և Կրեսոսին կապեց, այլև Հելլեսպոնտոսում և Թրակիայում տարերքների բնությունը փոխեց, ցամաքի վրայով ծովագնացություն կատարեց, ծովով անցավ իբրև հետևակ. նա սպառում էր թեսալացիներին, նրա համբավը հիացնում էր Հելլենական (աշխարհը)։ Նա կործանեց լակեդեմոնացիներին, փախցրեց փոկեացիներին, ղովկրացիներն անձնատուր եղան, բեովտացիները նրա կալվածների մի մասն են, ամբողջ Հելլադան ահաբեկված էր նրանից։ Քիչ ժամանակ հետո (նրա) աղետները գերազանցեցին բոլորին. Կյուրոսն այնքան չթշվառացավ մասքութների դեմ պատերազմելիս, այնպիսի (չարիքներ) չկրեց Դարեհը սկյութներից փախչելիս, ոչ էլ Կամբյուսեսը Եթովպացոց աշխարհում. փոքր է և Քսերքսեսի զորքով Հելլադա հարձակվելը,

որտեղ նա թողեց գանձարանն ու խորանները, և ինքը հազիվ փախչելով՝ կենդանի մնաց։ Իսկ սա մեծամեծ հաղթանակներով փառավորելուց հետո իր զորքերից խողխողվում է»։



Արդ՝ ես այս պատմությունները արժանահավատ եմ համարում, իսկ այն կրեսոսը, որ, ինչպես պատմում են, եղել է Կյուրոսի կամ Նեքթանեբոսի ժամանակ, կա՛մ սուտ է, կամ մի անունով կոչված են շատ թագավորներ, ինչպես շատերը սովորություն ունեն»[122]*։*

Արտաշեսի մահվանից հետո հայոց գահը զբաղեցնում է նրա հռչակավոր որդի Տիգրանը, որին անվանում են նաև Տիգրան II, Տիգրան Միջին, և ի վերջո՝ Տիգրան Մեծ։

Տիգրան Մեծ

«Ջարմանք է հարուցում այս փոքր ազգի ուժերի հարատևությունն ու տոկունությունը գոյության պայքարի տեսակետից, որ այսքան դարեր սեպաձև մխված է հզոր ազգերի մեջ. Պարսից պետություն, Պարթևաց, Մակեդոնացոց, Հռոմեացոց, Արաբացոց տերությունները։ Մեծամեծ ազգեր անհետացան բնաջինջ աշխարհիս երեսից, իսկ հայոց ազգը ոչ միայն կենդանի մնաց, այլև կյանքով ու հույսով տոչորվում է գիտության ծարավով և սիրով դեպի աշխատանքը»*[123]*։

*Տիգրանը մանկուց դաստիարակվում է արքայազնին վայել կերպով։ Արտաշեսը հատկապես ուշադրություն էր դարձնում նրա ռազմական ունակությունների զարգացմանը. «**Բայց իր որդի Տիգրանին նա հանձնում է Վարաժն անունով մի պատանու, որ Դատի որդին էր՝ Գառնիկի զավակներից, Գեղամի սերնդից, որովհետև այդ պատանին նշանավոր էր***

[122] Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, Երևան 1990 թ., էջ 81–82:

[123] Ալեքսանդր Ելիսեև, Տես Երկիր Դրախտավայր. Օտարերկրացիները Հայաստանի և հայերի մասին.... Երևան 2014 թ., էջ 395:

նետաձգությամբ՝ (պատվիրելով) Տիգրանին սովորեցնել»[124]*։*

Հոր մահվանից հետո Տիգրանը, նստելով Հայոց գահին, զորաժողով է անում և զորքի գլուխն անցած՝ ելնում է դիմակայելու հունական բանակին, որը Արտաշեսի մահվան լուրը լսելով, և տեսնելով նրա պառակտված զորքի փախուստը՝ գոտեպնդված արշավում էր Հայաստանի կողմը։ ***«Տիգրանը, նրանց դեմ դուրս գալով, նրանց արշավանքը արգելում է և հետ մղում»***[125]*։*



Այդ ժամանակաշրջանում Հայաստանը գտնվում էր երկու հզոր տերությունների՝ Հռոմի և Պարթևստանի միջև։ Որպեսզի Տիգրանի գահն ամուր մնար, պետք էր մի հենարան։ Եվ որպես այդպիսին՝ Տիգրանն ընտրեց Պոնտոսի թագավորությունը, որի տիրակալն էր Միհրդատ VI Եվպատորը։ ***«Այդ դաշնադրությամբ կողմերը պայմանավորվեցին իրենց ազդեցության ոլորտների և տիրակալության սահմանների ծավալման շուրջ. Միհրդատ VI-ն իր ռազմական գործողությունները և նվաճումները կատարելու էր դեպի արևմուտք, այսինքն՝ Հռոմի դեմ, իսկ Տիգրան II–ը՝ դեպի հարավ, հարավ-արևմուտք և հարավ-արևելք, այսինքն՝ Սելևկյանների և Պարթևաց տերությունների դեմ»***[126]*։*

Միասնական բանակով Տիգրանը և Միհրդատը արշավում են և գրավում Կապադովկիան։ Օրեցօր հզորացող հայ-պոնտական այդ դաշինքն ամրապնդվում է նաև խնամիական կապով. ***«Այդ իրավիճակում Տիգրան Մեծը Պոնտոսի թագավորի հետ դաշինք կնքեց, ինչն ամրագրվեց իր ամուսնությամբ Միհրդատի դստեր՝ Կլեոպատրայի հետ»***[127]*։*

Տիգրանի և Միհրդատի հզորանալը սկսում է անհանգստացնել հռոմեացիներին և պարթևներին, նրանք սկսում են բանակցություններ վարել, որպեսզի ընդհանուր վտանգի դեմն առնեն։ Սակայն մինչ այդ դաշինքի հասունանալը Տիգրանը որոշում է հնարավորինս շուտ խափանել այն։ Դա իրականացնելու նպատակով նախ իր տիրապետության տակ է վերցնում Վիրքն ու Աղվանքը։ Իսկ երբ մահանում է պարթևների արքա Միհրդատ II-ը, դա համարելով նպատակահարմար պահ՝ Տիգրանն սկսում

---

124 Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, Երևան 1990 թ., էջ 79:

125 Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, Երևան 1990 թ., էջ 82:

126 Հայոց Պատմություն, խմբ. Հր. Ռ. Սիմոնյանի, Երևան 2012 թ., էջ 49:

127 Է.Լ. Դանիելյան, Ա.Ա. Մելքոնյան, Հայոց Պատմություն, Երևան 2008 թ., էջ 51:

է իր ռազմարշավը։ «Հայկական զորքերը մտան «Յոթանասուն հովիտները»։ Լուրջ դիմադրության չհանդիպելով՝ նրանք շարունակեցին առաջխաղացումը և ներխուժեցին Ատրպատական-Մարաստանի սահմաններն ու կտրել-անցնելով երկիրը՝ մտան բուն Մարաստան։

Հետապնդելով պարթևական զորքին՝ նրանք հասան մինչև Էկբատան՝ պարթևական արքայից արքայի նստավայրերից մեկը։ Էկբատանի պաշարման ժամանակ հրի մատնվեց պարիսպներից դուրս գտնվող թագավորական դղյակը՝ Ադրապանան։ Ահաբեկված պարթևական թագավոր՝ Գոդերձը, շտապեց հաշտություն կնքել ու հրաժարվեց ոչ միայն «Յոթ հովիտներից», այլև Ատրպատական-Մարաստանի և Հյուսիսային Միջագետքի երկրների գերիշխանությունից...

Հաղթելով պարթևներին՝ նա իրեն վերապահեց մինչ այդ պարթևական թագավորին պատկանող «արքայից արքա» տիտղոսը»[128]*։*

Շարունակելով ռազմարշավը՝ հայոց բանակը Տիգրանի գլխավորությամբ գրավում է հարավային կողմում ընկած այլ տարածքներ ևս, ապա ելնում է դեպի հյուսիսային Միջագետք՝ այդտեղից շարժվելով դեպի Արևմուտք.

Ք.ա. 85-84թթ. - Մեծ Հայքի տերությանն են միանում Հայոց Միջագետքը, Կորդուքը, Օսրոենեն, Միգդոնիան։

Ք.ա. 83 թ. - Տիգրան Մեծը տիրում է Սելևկյան տերությանը։

Ք.ա. 83-81թթ. - Տիգրանյան տերությանն են միանում Կոմմագենեն, Դաշտային Կիլիկիան և Փյունիկիան։ Հայոց տիրակալի գերիշխանությունը ճանաչում են Հրեաստանը, Պարսից ծոցի մերձափնյա արաբական ցեղերը։

Ք.ա. 80-70թթ. - կառուցվում են աշխարհակալության նոր մայրաքաղաք Տիգրանակերտը, Արտաշատից Տիգրանակերտ ձգվող Արքունի պողոտան. Տիգրան Մեծի անունով հիմնադրվում է մի քանի նոր քաղաք։

Ք.ա. 74թ. - հայկական զորքերի երրորդ արշավանքը Կապադովկիա։

Ք.ա. 72-69թթ. - Տիգրան Մեծի արշավանքը Փյունիկիա։ Հաղթանակ Նաբաթեական թագավորության նկատմամբ, որն ընդունեց Տիգրան Մեծի գերիշխանությունը»[129]*։*

Տիգրանը, գրավելով և իր իշխանության տակ վերցնելով բազմաթիվ երկրներ, միևնույն ժամանակ զբաղվում էր երկրի շենացման գործերով՝ կառուցելով նոր քաղաքներ, զարգացնելով առևտուրը։ Տուրքերի ներմուծմամբ հարստացնում է ոչ միայն արքունիքը, այլև բարեկեցիկ կյանք է ապահովում ժողովրդի համար։ ***«Ք.ա 80-70-ական թթ. խաղաղ տարիներին Տիգրան II Մեծը զբաղվել է շինարարական աշխատանքներով, հատկապես քաղաքների հիմնադրմամբ և ճանապարհաշինությամբ, խթանել է***

---

128 Հայ ժողովրդի պատմություն, խմբ. Մ.Գ. Ներսիսյան, Երևան 1985 թ., էջ 47:

129 Արտակ Սիվսիսյան, Հայոց պատմության աշխարհակալությունները, Երևան 2008 թ., էջ 45:



***երկրագործության, արհեստների և առևտրի զարգացումը: Աղձնիքում նա հիմնեց և ճոխությամբ կառուցապատեց իր նորակերտ տերության մայրաքաղաք Տիգրանակերտը, որի ապարանքների, փողոցների, հրապարակների, թատրոնի, պարտեզների շուրջը 25մ բարձրությամբ ամրակուռ պարիսպների մասին վկայում են հռոմեացի պատմագիրներ Ապպիանոսը, Պլուտարքոսը և ուրիշներ: Տիգրանակերտ անվանումով քաղաքներ հիմնադրվեցին Արցախում, Ուռհքում և այլուր: Բարեկարգվեցին ճանապարհներն ու առևտրական մայրուղիները, կառուցվեց Արտաշատ-Տիգրանակերտ «Արքունի պողոտան»: Խթանելով և հովանավորելով քաղաքների արհեստներն ու առևտուրը՝ հելլենիստական քաղաքներից շուրջ միլիոն մարդ վերաբնակեցրեց ինչպես նորակերտ քաղաքներում, այնպես էլ Արմավիր, Արտաշատ, Երվանդաշատ, Զարեհավան, Զարիշատ հին քաղաքներում: Տիգրան II-ն իր պատկերով և հունարեն «Արքայից արքա», «աստված» մակագրությամբ արծաթյա և պղնձյա դրամներ հատեց Արտաշատում, Տիգրանակերտում, Դամասկոսում և Անտիոքում, որոնք շրջանառության մեջ դրվեցին ինչպես ներքին, այդպես էլ միջազգային շուկաներում»**[130]:

Տիգրանը, լինելով հունա-հռոմեական մշակույթի մեծ ջատագով, Հայաստանում տարածեց այդ մշակույթին պատկանող տարրեր: Նա հայոց առաջին թագավորն էր, որ այդ մշակույթի ոճին համաձայն՝ մորուք չէր պահում, այլ սափրվում էր: Նրան հետևեց իրենից հետո հայոց գահին նստած մի քանի հայ արքա ևս:

*Տիգրանը, երբ իջնում է դեպի Պաղեստին, այնտեղ բազմաթիվ հրեաների է գերեվարում և բնակեցնում Մեծ Հայքի տարբեր կողմերում, սակայն հրեաների թագուհին կարողանում է Տիգրանի գումը շարժել, ինչից հետո Տիգրանը, դադարեցնելով ասպատակությունը, վերադառնում է Հայաստան: **«Տիգրանի մեծաթիվ զորքի երևալը Փյունիկիայի հարավում սարսափ է տարածում նաև սահմանակից Պաղեստինում: Հրեաստանի թագուհին, վախենալով հայկական զորքի ներխուժումից, մեծաքանակ ու արժանավայել ընծաներ է ուղարկում Տիգրանին և ընդունում նրա գերիշխանությունը»**[131]:*

---

130 Հայոց Պատմություն, խմբ. Հր. Ռ. Սիմոնյանի, Երևան 2012 թ., էջ 50–51:

131 Հայ ժողովրդի պատմություն, Սկզբից մինչև XVIII դարի վերջը, Երևան 1975 թ., էջ 124:

Ըստ Մովսես Խորենացու՝ այդ թագուհին պատկանում էր Աստվածաշնչյան Մակաբեների ճյուղին։ ***«Իսկ հրեաների Աղեքսանդրիա կամ Մեսադինա թագուհին, որ Հուդա Մակաբեի Շմավոն եղբոր որդի Հովհաննեսի որդի Աղեքսանդրի կինն էր եղել... մեծ գանձ տալով (Տիգրանին) այնտեղից հետ դարձրեց»***[132]։

Տիգրանը և Հռոմը

«Հայ ժողովուրդն իր պատմության բոլոր ժամանակներում եղել է ստեղծագործ, քաղաքակրթության առաջամարտիկ, նա վճռական դեր է խաղացել Միհրդատ Պոնտացու՝ Հռոմի դեմ մղված պայքարում... Նա մեծ ազդեցություն է ունեցել ողջ Արևելքի վրա»[133]։



Տիգրանը, ըստ Միհրդատ Պոնտացու հետ պայմանավորվածության, զբաղված էր իր լիազորությունների շրջանակում գտնվող տերությունների գրավմամբ և ձևավորվող կայսրության ամրապնդմամբ։ Միհրդատն, ըստ այդ նույն պայմանավորվածության, աշխատում էր արևմուտքի կողմերում ընկած երկրները Պոնտոսի տիրապետության տակ առնել։

Եթե պարթևները և սելևկիացիները պարտվելով հնազանդվեցին Տիգրանին, ապա Միհրդատի կողմից Հռոմին հնազանդված երկրների գրավումն անպատասխան չմնաց, քանզի հռոմեացիները ելան՝ Միհրդատի դեմն առնելու և գրավված տարածքները վերադարձնելու։

Մի քանի պատերազմի արդյունքում, ի վերջո, Միհրդատը պարտություն կրեց հռոմեացի զորավար Լուկուլլոսից և իր մոտ մնացած փոքրաքանակ զորքով նահանջեց դեպի Պոնտոս։

Հռոմի դեմ նոր պատերազմ ձեռնարկելու համար նա այլևս բավարար ուժեր չուներ, ինչից ելնելով՝ օգնական զորքեր խնդրեց իր դաշնակիցնե-

---

132 Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, Երևան 1990 թ., էջ 83:

133 Ֆրեդերիկ Մակլեր, տե՛ս Երկիր Դրախտավայր. Օտարերկրացիները Հայաստանի և հայերի մասին.... Երևան 2014 թ., էջ 457–458:

րից, այդ թվում՝ նաև Տիգրանից, բայց մերժում ստացավ։ Տիգրանը մտադրություն չուներ ընդհարվել Հռոմի հետ, քանզի զբաղված էր իր գրաված տարածքները կարգավորելու և ըմբոստներին հնազանդեցնելու գործով։

Սակայն Միհրդատին օգնության ձեռք մեկնելուց հրաժարվելը դարձավ պատճառ ոչ միայն Միհրդատի վերջնական պարտության և Պոնտոսի գրավման՝ հռոմեացիների կողմից, այլև մեծ վտանգ ներկայացրեց հենց իր՝ Տիգրանի կողմից ստեղծված կայսրության համար։

Հռոմեացիների՝ Պոնտոս ներխուժումից հետո Միհրդատն, ուրիշ տեղ ապաստան չգտնելով, նորից դիմեց Տիգրանին։ Չնայած փախստական Միհրդատի նկատմամբ Տիգրանն արքայավայել ընդունելության չցուցաբերեց, սակայն թույլ տվեց ապաստանել Հայաստանի ծայրամասերից մեկում։

Հռոմեացիները խոստացել էին Տիգրանին չմիջամտել նրա գործերին և ճանաչել նրա կողմից գրավված տերությունների վրա Տիգրանի գերիշխանությունը՝ պայմանով. եթե նա օգնություն չցուցաբերեր Միհրդատին։ Սակայն Պոնտոսը գրավելուց հետո պատճառ բռնելով Միհրդատի՝ Հայաստանում գտնվելը՝ պահանջեցին, որ Տիգրանը նրան հանձնի իրենց՝ քաջ գիտակցելով, որ Տիգրանը նման քայլի չի գնա։

Դա պատճառ ներկայացնելով՝ ուխտադրույժ հռոմեացիները ներխուժեցին Ծոփք և զավթեցին այն, հետո էլ ձեռնարկեցին Տիգրանակերտի պաշարումը։

Տիգրանն էլ, զորաժողով անելով, հարձակվեց հռոմեացիների վրա, սակայն ընկնելով ծուղակի մեջ՝ պարտություն կրեց Լուկուլլոսից, և թողնելով մայրաքաղաքը պաշարված՝ նահանջեց։

Տարբեր պատմիչներ են անդրադարձել այդ պատերազմին։ Ըստ Պլուտարքոսի՝ հայերը կորցրել են 100 հազար զինվոր, իսկ ըստ Փլեդոն Տրալլացու՝ 5 հազար։

Հուսալքվելով պարտությունից՝ ոմանք դավաճանաբար թշնամու ձեռքն են հանձնում Տիգրանակերտը, ինչն էլ հռոմեացիները, անխնա կողոպուտի ենթարկելով, մատնում են կրակի։

Այդ պարտությունը տեսնելով՝ մի քանի երկրներ սրտապնդվելով անջատվում են Տիգրանի կայսրությունից։

Իրենց հաղթանակով ոգևորված՝ հռոմեացիները ձմռան ցրտերից հետո շարժվում են դեպի Հայաստանի խորքերը՝ ուղղություն վերցնելով դեպի Արտաշատ։ Իսկ Տիգրանը, օգնական ուժեր ստանալով հարևան երկրներից, սկսում է հռոմեացիների դեմ պատերազմել՝ խույս տալով ճակատամարտից։

Տիգրանն աշխատում է նրանց այդ ընթացքը կասեցնել՝ հանկարծակի հարձակումներով և պարենի հայթայթմանը խոչընդոտելով։

Բացի տարբեր զենքեր կիրառելուց՝ հայոց բանակը հռոմեացիներին

*ահաբեկելու և խռովքի մատնելու համար պատերազմի մեջ է մտցնում նաև խոշոր կատաղի շների, որոնք հարձակվելով՝ վախի մեջ էին ստեղծում թշնամու բանակում: Իսկ այսուայնկողմ փախչող հռոմեացիներին դյուրին թիրախ էին դարձնում նետաձիգները՝ թունավոր նետերով խոցելով նրանց: **«Հայոց արքա Տիգրան II-ը, որ ապրում էր մ.թ.ա. I-ին դարում, օգտագործում էր հսկա, դոգանման շներ հռոմեացի լեգեոնների հարձակումը կասեցնելու համար»**[134]:*

*Այդպես, հռոմեացիները մի կերպ հասնում են Արածանի գետի ափերի մոտ, որտեղ նրանց սպասում էր Տիգրանը՝ իր բանակով: Այդտեղ տեղի ունեցած ճակատամարտի արդյունքում Լուկուլլոսը ստիպված է լինում դադարեցնել ռազմարշավը և սկսել ակտիվ նահանջ: Դա պետք է պայմանավորված լիներ հայերի հաղթանակով, սակայն այդ մասին նորից տարբեր կարծիքներ են պահպանվել պատմիչների մոտ: Պլուտարքոսը համարում է, որ հաղթել են հռոմեացիները, սակայն անբարենպաստ եղանակային պայմանների պատճառով սկսել են նահանջել: Իսկ Ցիցերոնը նահանջի պատճառը համարել է կարոտը, որին, իբրև, չէին դիմանում հռոմեացի զինվորները: Բայց ավելի տրամաբանական է այդ նահանջը պայմանավորել հենց հռոմեացիների պարտությամբ, այլ ոչ թե՝ աչառու պատմիչների տարբերակներով. **«Հակառակ Պլուտարքոսի՝ Դիոն Կասիոսը վկայում է, որ այս ճակատամարտում հայկական հեծելազորը շատ նեղն էր գցել հռոմեացիներին և շատերին սպանել ու վիրավորել էր: Նույն հեղինակը վկայում է նաև, որ հայերի նետերի սլաքները թունավոր էին և ունեին երկու ծայր, որոնք այնպես էին իրար կցված, որ թե՛ վերքի մեջ մնալով և թե՛ դուրս հանելով՝ արագ մահ էին պատճառում:**

Հույն պատմիչի այս վկայություններից դժվար չէ նկատել, որ հռոմեական զորքի ապստամբությունը և նահանջը ոչ թե ցրտի և հայրենիքի կարոտի, այլ՝ այդ զորքի տված մեծ կորուստների ու պարտության հետևանք էր»[135]:*

*Ի վերջո, Լուկուլլոսը, թողնելով բոլոր գրաված տարածքները, հեռանում է Տիգրանի ձևավորած կայսրությունից: Իսկ Հռոմում Լուկուլլոսին փոխարինում է մի այլ զորավար. **«Պարտված և վարկաբեկված Լուկուլլոսին Ք.ա 67թ. փոխարինեց Գնեոս Պոմպեոսը»**[136]:*

Տիգրանը, հերթով մտնելով հռոմեացիների կողմից գրավված տարածքները և կոտորելով տեղում մնացած հռոմեական զորքը, ջանում է նորից իր նախնական տեսքին բերել կայսրությունը:

«Այսօր հաճախ չեք հանդիպի պատմական հրապարակումներ, որոնք

---

134 О. Красновская, Н. Пшеничникова и др., Кавказская овчарка, Москва 1998 г., ст. 10.

135 Հայ ժողովրդի պատմություն, Սկզբից մինչև XVIII դարի վերջը, Երևան 1975 թ., էջ 134:

136 Հայոց Պատմություն, խմբ. Հր. Ռ. Սիմոնյանի, Երևան 2012 թ., էջ 55:



արտացոլում են Տիգրան Մեծի կողմից կառուցված կայսրության հզորությունը: Շատ փաստաթղթեր վկայում են, որ Հռոմն արժանի մրցակից է ճանաչել միայն Մեծ Հայաստանին»[137]*:*

Իր հերթին, Միհրդատ Եվպատորը, Տիգրանի կողմից ստանալով 10 հազար զինվոր, ազատագրում է Փոքր Հայքը և մտնում Պոնտոս, ապա տեղի բնակչության աջակցությամբ կոտորելով այդտեղ ապաստանած հռոմեացի լեգեոներներին՝ նորից հաստատվում է իր հայրենիքում:

*Ըստ պատմաբանների՝ Տիգրանն, իր մարտարշավներն իրականացնելով, գրավված երկրներին վերաբերվել է հանդուրժողականությամբ, ինչի հետևանքով այդ ժողովուրդները նրան ընդունել են՝ որպես ազատարարի: **«Տիգրանի նվաճումները չեն ուղեկցվում բարբարոսական, վանդալիստական գործողություններով: Ընդհակառակը՝ հայտնի է մի քանի հետաքրքիր փաստ, որ լույս է սփռում հայոց տիրակալի կերպարի վրա. Դրանցից հատկանշելի են փյունիկյան քաղաքների գրավման հետ կապված իրադարձությունները, երբ գրավելուց հետո հայոց տիրակալը Ք.ա. 81թ. դրանց շնորհեց «ազատություններ», ինչը, մերօրյա հասկացությամբ, լայն ինքնավարության իրավունքն է, ինչից զրկված էին այդ քաղաքները Սելևկյանների տիրապետության շրջանում: Ի նշան երախտագիտության և ի նշանավորումն այդ իրադարձության՝ քաղաքները, (որոնց մեջ էին Բերիթը՝ ներկայիս Լիբանանի մայրաքաղաք Բեյրութը, Լաոդիկեն և այլն) իրենց քաղաքային տոմարը սկսեցին հաշվել այդ թվականից և նոր հատած քաղաքային դրամները թվագրել այդ տոմարով**[138]*: Հայոց տիրակալն **իր նվաճումներում անգամ ազատարար էր»***[139]*:*

Սակայն, տարիներ անց Տիգրանի մոտեցումներում ի հայտ են եկել որոշ բացասական փոփոխություններ, ինչը բնորոշ էր աշխարհակալ տիրակալներից շատերին:

---

137 Ուինսթենսթ Արթուր Սմիթ, Օքսֆորդի Հնագույն պատմության ինստիտուտի գիտաշխատող:

138 ՀՊժ, հ. I, 1971 թ., էջ 572–573 (բաժնի հեղինակ՝ Գ. Խ. Սարգսյան):

139 Արտակ Մովսիսյան, Հայոց պատմության աշխարհակալությունները, Երևան 2008 թ., էջ 46:

Կայսրության անկման նախանշաններ

Տիգրանն՝ իր հոր նման, լինելով հելլենական մշակույթի կողմնակից, Հունաստանից բերված քուրմերի միջոցով ավելի է տարածում նրանց հեթանոսական պաշտամունքը Հայոց աշխարհում: Երկրի տարբեր վայրերում նա կառուցում է մեհյաններ՝ այդ հունական չաստվածների անուններով, կանգնեցնում է դրանց կուռքերը: Տիգրանը, լինելով Հայաստանում նոր տիպի հեթանոսական պաշտանմունքի տարածող և ջատագով, կարգադրում է, որ Հայաստանում գործող մնացած բոլոր պաշտամունքներից հրաժարվելով՝ երկրպագեն իր ներմուծած հելլենական կուռքերին:



Եվ նորից միայն Բագարատի սերունդն է ընդդիմանում հերթական կռապաշտ արքայի հրամանին՝ գլուխ չխոնարհելով հունահռոմեական տարատեսակ կուռքերի առջև. ***«Բայց թե ինչպիսի ջանքեր գործ դրին մեր թագավորները՝ նրանց (Բագարատի սերունդներին) ստիպելու, որ կուռքեր պաշտեն, և թե նրանցից քանիսը և ովքեր աստվածապաշտությամբ***

վերջացրեցին իրենց կյանքը, հետո կարգով կպատմենք»[140]*։*

*Ամուր պահելով իրենց հավատն առ Աստված՝ նրանք նորից կրեցին ծանր հալածանքներ, սակայն այս անգամ ամեն ինչ ավարտվեց առանց զոհերի. **«Եվ այսպես՝ մեհյաններ շինելով և մեհյանների առաջ բագիններ կանգնեցնելով՝ բոլոր նախարարներին հրամայում է զոհեր մատուցանել և երկրպագություն անել։ Բագրատունյաց ցեղի մարդիկ այս բանը հանձն չառան։ (Տիգրանը) նրանցից մեկի, որ Աստղ էր կոչվում, լեզուն կտրեց, որովհետև անարգել էր արձանները. մյուսներին ուրիշ չարչարանքների չենթարկեց, համաձայնեցին թագավորի զոհերից, նույնպես և՝ խոզի միս ուտել, թեպետ իրենք զոհեր չմատուցեցին ու չերկրպագեցին կուռքերին»**[141]։*

Տեսնում ենք, որ աստվածպաշտությունն, Աստծո կամոք, թեկուզ փոքր չափերով, դեռ գործում էր Հայոց սուրբ հողում, որտեղ ոմանք արժանանում էին նույնիսկ նահատակության պսակի՝ փառավորելով Արարչին։

*Տիգրանն ստեղծեց մեծ կայսրություն. բազմաթիվ երկրներ դարձան Հայաստանի վասալներ, երկիրը շատ հարստացավ, իսկ Տիգրանի փառքը տարածվեց ամենուր։ Այդ փառքն ու մեծությունը կրելը հեշտ բան չէր, և ոչ բոլոր տիրակալներն են կարողացել բեռը պատվով կրել։ Ցավոք, Տիգրանն էլ, որ կարողացավ ստեղծել այդ մեծ կայսրությունը և կրել դրա հետ կապված հոգսերը, չկարողացավ խոնարհությամբ կրել նաև կայսրին պատշաճ փառքը։ Նա այնքան տարվեց կայսերական մեծությամբ, որ իր պաշտած հունահռոմեական կուռքերի դասում կամեցավ իրեն էլ տեսնել, և, ի վերջո, գայթակղությանը չդիմանալով՝ ինքն իրեն հռչակեց՝ որպես պաշտամունքի արժանի «աստված». **«Հայոց Տիգրան Մեծ թագավորը մի ամբողջ պաշտամունք էր իր ժողովրդի համար՝ որպես «Աստված»։***



Թագավորի նախնիների և ապա հենց իր՝ իշխող թագավորի պաշտամունքը պետական պաշտոնական ծավալով, ընդհանուր երևույթ էր հելլենիստական երկրներում։ Կենդանի թագավորի պաշտամունքի սկիզբը կապվում է Տիգրան II-ի անձի հետ։ Առաջին դրսևորումը Տիգրանի «Աստված» պատվանունն էր, որ վկայակոչված է

[140] Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, Երևան 1990 թ., էջ 44:
[141] Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, Երևան 1990 թ., էջ 83:

անտիկ պատմագիրների մոտ, մյուսը՝ Տիգրանի պատկերով դրամները, որոնց վրա դրոշմված է նույն պատվանունը: Նույնպիսի եզրակացությունների տեղիք է տալիս դրամների վրա պատկերված արքայի դիմանկարը, որ ներկայացված է իդեալականացված դիմագծերով, ինչպիսիք հատուկ են աստվածացված անձնավորություններին: Եվ դա հասկանալի է, երբ նկատի ենք առնում Տիգրան Մեծի փառքն ու համբավը՝ իր ժամանակվա աշխարհում [Կրասսոս, 33.1]»[142]:

Նա սկսեց այնպես մտնել այդ երևակայական «աստվածության» դերի մեջ, որ այդ սկսեց դառնալ շատ ակնհայտ: Սկզբնական շրջանում նրան համարում էին ազատարար, բայց հետո պատկերը փոխվեց: Հայաստան ժամանած հռոմեացի դեսպան Կլավդիոսն, այդ ամենի ականատեսը լինելով, նամակով տեղեկացնում է Լուկուլլոսին. ***«Հայկական կառավարումը ծանր ճնշում է, և անտանելի է հույների համար՝ հատկապես ներկայիս թագավորը, որ դառնում է ավելի ամբարտավան և բռնակալական իր պատերազմական հաջողությունների չափի աճմանը զուգընթաց, որ ամեն մի արժեքավոր և ուրիշների կողմից հարգանքի արժանի բան համարում է, որ պատկանում է ոչ միայն իրենը, այլև հենց իր՝ միայն իր համար է ստեղծված»***[143]:

Իհարկե, հռոմեացի պատմիչները՝ մասնավորապես, Պլուտարքոսը, շատ բաներ են չափազանցրել և անտեսելով իրականությունը՝ գովաբանել են իրենց, և անհարկի նվաստացրել են հակառակորդին, բայց և այնպես, իրեն «աստված» հռչակած մարդը չէր կարող համապատասխան կերպարի մեջ չմտնել: ***«Նրան ծառայում էին բազմաթիվ թագավորներ,- գրում է Պլուտարքոսը,- բայց նրանցից երկուսին նա մշտապես ման էր տալիս իր հետ՝ ծառայի և թիկնապահի կարգավիճակով, որոնք, երբ նա ձիավարում էր, վազում էին կողքից՝ հասարակ հագուստներով... Ինչ վերաբերում է մյուսներին, ապա նրանք գտնվում էին ամենահոսկական ստրկական վիճակում, այսինքն՝ մարդկանց կարգավիճակում, ովքեր վերջնականապես հրաժեշտ են տվել ազատությանը»***[144]:

Այսպիսով, մոտ 25 տարի լինելով կայսեր դերում և դրանով չբավարարվելով՝ Տիգրանը հպատակներին էլ պարտադրեց պատվել իրեն ոչ միայն՝ որպես կայսեր, այլև պաշտել՝ որպես «աստված»: ***«Ընդունելով «աստված» պատվանունը՝ Տիգրան II Մեծը պարտադրեց իր անձի պաշտամունքը»***[145]:

Իսկ պատմությունը ցույց է տալիս, որ նման «բարձունքներում» երկար չեն մնում, այլ շատ շուտով սկսում են անկում ապրել: Դեռ հազարա-

142 Ռաֆիկ Նահապետյան, Հունական և հռոմեական անտիկ սկզբնաղբյուրների ազգագրական տեղեկությունները Հայաստանի և հայերի մասին, Երևան 2018 թ., էջ 133:

143 Девид Лэнг, Армяне народ-созидатель, Центрполиграф, Москва 2004, ст. 158.

144 Девид Лэнг, Армяне народ-созидатель, Центрполиграф, Москва 2004 г., ст. 158–159.

145 Է.Լ. Դանիելյան, Ա.Ա. Մելքոնյան, Հայոց Պատմություն, Երևան 2008 թ., էջ 51:



*վոր տարիներ առաջ Սուրբ Գրքում Աստված զգուշացրել է. **«Տղամարդու սիրտը գոռոզանում է կործանումից առաջ և խոնարհվում է՝ փառքի հասնելուց առաջ»**[146]: Այդպե՛ս կործանվեց Աքքադական կայսրության տիրակալ Նարամսինը, որ նույնպես իրեն «աստված» հռչակեց և շուտով ոչ միայն իր կայսրությունը կորցրեց, այլև զրկվեց կյանքից:*

Տիգրանի կայսրությունում էլ սկսեցին ի հայտ գալ ստեղծված իրավիճակին համապատասխան նախանշաններ: Նախ երկրի ներսում խարդավանքներ հարուցվեցին իր հարազատ որդիների կողմից, և ապա արտաքին թշնամիները՝ պարթևներն ու հռոմեացիները սկսեցին հարձակումներ գործել՝ անցնելով կայսրության սահմանները:

Շատ շուտով կորցնելով կայսրությունը՝ Տիգրանը, կեղծ աստվածության բարձունքներից գահավիժելով, նորից հայտնվեց սովորական մահկանացուների շարքում:

Ի վերջո, իջնելով հպարտության կործանարար բարձունքներից՝ նա առնչվեց խոնարհության հետ, ինչի արդյունքում էլ, ի տարբերություն Նարամսինի, չզրկվեց կյանքից, և վերջին 10 տարիներին էլ շարունակեց իշխել, բայց միայն որպես Մեծ Հայքի արքա:

Խարդավանքներ

Լուկուլլոսին դուրս վռնդելուց հետո, կարծես, ամեն բան կարգավորվեց Կայսրությունում: Արտաքին թշնամիները նոր սպառնալիքներով չէին անհանգստացնում տերությանը: Մինչդեռ սպառնալիքներ ծագեցին հենց երկրի ներսում: Տիգրանի որդիներն, իշխանատենչությամբ բռնված, սկսեցին խարդավանքներ հյուսել նրա դեմ:

Տիգրանի ավագ որդին՝ Զարեհը, ստանալով իշխաններից ոմանց աջակցությունը, խռովություն է բարձրացնում, սակայն պարտվելով՝ սպանվում է կռվի դաշտում: Երկրորդ որդին նույն կերպ է վարվում և

[146] Առակ. 18:12:

արժանանում է Զարեհի ճակատագրին: Նրա անունը պատմությունը մեզ չի հասցրել:

Նաև երրորդ որդին, որի անունը նույնպես Տիգրան էր, հետևելով իր եղբայրների օրինակին՝ ապստամբում է հոր դեմ, հավանաբար, իր պապի՝ Պոնտոսի արքա Միհրդատ Պոնտացու հորդորներով, քանզի թե՛ Զարեհը և թե՛ Տիգրանը Տիգրան Մեծի Կլեոպատրա կնոջից էին, որ Միհրդատի դուստրն էր:

*Նա էլ պարտվելով փախչում է պարթևների Հրահատ III թագավորի մոտ, ով նրան սիրալիր ընդունելով՝ ամուսնացնում է իր աղջկա հետ՝ հուսալով, որ վաղ թե ուշ՝ Տիգրան Կրտսերը կնստի Հայոց գահին: Հենց դա իրականացնելու միտումով վերստին հզորացած պարթևները հարձակում են գործում Հայաստանի վրա: **«Հաջորդ տարին՝ 66 թվականին, Հրահատը հարձակվեց Հայաստանի վրա իր մտադրությունները իրագործելու նպատակով: Սկզբում պարթևների գործը հաջող էր ընթանում. նրանք հասան մինչև Արտաշատ և պաշարեցին այն: Տիգրանը հեռացավ սարերը: Սակայն Արտաշատի ուժեղ դիմադրությունից ընկճված՝ Հրահատը ետ քաշվեց իր երկիրը՝ Տիգրան Կրտսերին թողնելով զորքի մի մասը. Տիգրանը վերադարձավ և ջախջախեց այդ զորամասերը, իսկ որդին, հույսը կտրելով պարթևներից, փախավ այս անգամ արդեն հռոմեացիների մոտ»***[147]:

Պոմպեոս

«Չէ՞ որ գոյություն է ունեցել Հայկական կայսրություն, և այդ կայսրության տարածքը, օրինակ, Տիգրանի օրոք նույնիսկ հսկայածավալ է եղել»[148]:

Հռոմը, Լուկուլլոսի փոխարեն հռոմեական բանակի հրամանատար կարգելով Գնեոս Պոմպեոսին, նրան տալիս է մեծ արտոնություններ, որպեսզի ինչը որ ի զորու չեղավ անել Լուկուլլոսը, նա՛ իրականացնի: Պոմպեոսն էլ, լինելով հմուտ զորավար, միաժամանակ սկսում է թե՛ պատերազմական գործողություններ ծավալել և թե՛ բանակցություններ վարել: Բանակցելով պարթևների Հրահատ արքայի հետ՝ նրան իր կողմն է գրավում՝ Հայաստանի թիկունքում նման հզոր բարեկամ ձեռք բերելով:

147 Հայ ժողովրդի պատմություն, հ. I, Երևան 1971 թ., էջ 595:

148 Կառլ Ռոթ, Տես Երկիր Դրախտավայր. Օտարերկրացիները Հայաստանի և հայերի մասին.... Երևան 2014 թ., էջ 448:

Իսկ պատերազմել սկսում է նախ Հռոմի անհաշտ թշնամի Միհրդատ Պոնտացու դեմ։

Տիգրանն՝ արդեն տարիքն առած, ներքին և արտաքին խնդիրների կարգավորումից հոգնած, նորից հրաժարվում է օգնության ձեռք մեկնել Միհրդատին, հատկապես, որ իր որդիների կողմից հարուցած վերջին խարդավանքների հեղինակը համարում էր հենց իրեն՝ Պոնտոսի արքային։

***«Տիգրան թագավորը մեծ տիրակալ էր, որ ուներ շատ ավելի մեծ առաքինություններ, քան իր ժամանակակից Միհրդատը, որ հարուցում է պատմաբանների հիացմունքը։ Սա հատկապես ճիշտ է, եթե հաշվի առնենք, որ Միհրդատն իր պետությանը «հիանալիորեն» մղեց ինքնասպանության, մինչդեռ Տիգրանն իր ժողովրդի համար ապահովեց հավերժական կյանքի իրավունք»**[149]։*

*Պոմպեոսի բանակը ներխուժում է Պոնտոս, որտեղ կրկնակի պակաս զորք ունեցող Միհրդատը չի համարձակվում բացեիբաց ճակատամարտ տալ հռոմեացիների դեմ։ **«Նկատի ունենալով հակառակորդի գերակշռությունը՝ Միհրդատը խուսափում է կանոնավոր ճակատամարտից և սկսում է մղել պարտիզանական մանր կռիվներ։ Սակայն Պոմպեոսը Գայլ գետից դեպի հարավ՝ Փոքր Հայքի Դաստիր բնակավայրի մոտ գտնվող նեղ կիրճում շրջապատում է Միհրդատի բանակն ու վերջնական պարտության մատնում նրան։ Միհրդատը փոքրաթիվ ուժերով փախչում է սկզբում Կողքիս, իսկ հետո՝ Բոսպոր (Ղրիմ), որտեղ և 63 թ. (մ.թ.ա.) ինքնասպանությամբ վերջ է տալիս իր խռովահույզ ու փոթորկալից կյանքին»**[150]։*

Տիգրանի համար ստեղծվում է իրավիճակ, որը նրան այլ ելք չի թողնում, եթե ոչ՝ բանակցությունների միջոցով սրված իրավիճակը հարթելը։ Ժամանակին իրեն հնազանդ պարթևները դարձել էին նորից անկախ և հզոր տերություն՝ սպառնալով իրեն թիկունքից։ Իր վաղեմի դաշնակից Միհրդատն արդեն կնքել էր մահկանացուն, իսկ նախկին աջակցի փոխարեն հռոմեացիների կողմից արդեն գրավված Պոնտոսը սպառնում էր հյուսիսից, արևմուտքից էլ Հայաստանի կողմն էին շարժվում Պոմպեոսի լեգեոնները։

Անելանելի վիճակից որպես միակ ելք՝ Տիգրանը տեսավ Պոմպեոսի առջև գլխահակ կանգնելը՝ նրա ներողամտությունը հուսալով։ Ժամանակի հզոր կայսրը, որից դողում էին ոչ միայն բազմաթիվ թագավորություններ, այլև՝ պարթևների և հռոմեացիների կայսրությունները, որպես հպարտության արդյունք՝ պետք է արդեն պատկառելի տարիքում խո-

---

149 Ռենե Գրուսեն, ֆրանսիացի պատմաբան–արևելագետ։

150 Հայ ժողովրդի պատմություն, Սկզբից մինչև XVIII դարի վերջը, Երևան 1975 թ., էջ 137։

*նարհվեր երիտասարդ Պոմպեոսի առջև. **«Տիգրանն այլ ուղի ընտրեց՝ 75-ամյա ծերունին մենակ ու անզեն ներկայացավ Պոմպեոսի ճամբար՝ Այս քայլը, ինչպես էլ որ այն գնահատելիս լինեն անտիկ պատմագիրները, իմաստուն քայլ էր, դիվանագիտական ու հոգեբանական տեսակետից՝ անվրեպ. հաշվի էր առնված, հավանորեն, նաև Պոմպեոսի բարեսիրտ ու սնապարծ բնավորությունը...***

Տիգրանը գնաց մինչև վերջ. նա հանեց և մի կողմ դրեց իր թագը՝ Իհարկե, սա գուցե ավելորդ էր, բայց նույնպես մտածված էր՝ Զգացված Պոմպեոսը՝ տակավին երիտասարդ, իսկույն գրկեց ծերունուն և բազմեցրեց իր կողքին»[151]՝*

Նման կերպ բանակցություններ սկսելով Պոմպեոսի հետ՝ Տիգրանը խաղաղության է հասնում՝ համաձայնվելով հրաժարվել այն բոլոր երկրներից, որ գրավել էր՝ ստեղծելով իր հզոր կայսրությունը՝ Բացի այդ՝ նա հռոմեացիներին պետք է հարկ մուծեր նաև դրամական տեսքով՝ պատերազմական տուգանք՝

Տիգրան Մեծը, թերևս, այն հազվագյուտ աշխարհակալներից եղավ, ով հասարակ ժողովրդին հնարավոր կորուստներից փրկելու համար կարողացավ խոնարհել իր արքայական գլուխն ու թագը՝ հաղթողի առաջ՝

«Թերևս Տիգրանն առաջին թագավորն էր, որ հասկացավ պատերազմի և խաղաղության բոլոր նրբությունները. սկսելով արյունալի պատերազմներ՝ ստեղծեց մեծ կայսրություն, ապա հաստատեց խաղաղություն ժողովրդի բարգավաճման համար»[152]՝*

Այդ ամենից հետո Տիգրանը սկսում է համարվել հռոմեական ժողովրդի բարեկամ և դաշնակից՝ Բայց և այնպես, նա դարձավ ոչ միայն, այսպես կոչված, «Հռոմի բարեկամ», այլև՝ հարկատու՝

*Երբեմնի հզոր կայսրությունից, որ գոյատևեց մոտ 25 տարի, հետք չմնաց՝ Տիգրանը դարձավ շրջակա երկրները տիրող սովորական արքաներից մեկը՝ Ինչ կարգավիճակով որ նա նստեց Հայոց գահին, նույնով թողեց այն՝ **«Այսպիսով, ներքին հակասությունների և հռոմեական նվաճողական քաղաքականության հետևանքով քայքայվում է Տիգրան II-ի տերությունը՝ Հայաստանը դադարում է Առաջավոր Ասիայի հզոր տերություն լինելուց և ամփոփվում է Հայկական լեռնաշխարհի սահմաններում...***

Հաշտության դաշնագրից հետո Տիգրան II-ը թագավորում է ևս տաս տարի՝ Նա մահանում է 55 թ. (մ.թ.ա.)՝ 85 տարեկան հասակում»[153]՝*

Այս գրքում նշված հայոց արքաների կողմից ստեղծված հսկայածա-

---

151 Հայ ժողովրդի պատմություն, Սկզբից մինչև XVIII դարի վերջը, Երևան 1975 թ., էջ 597:

152 Քեվին Ռոբինսոն, Նյու Յորքում Մակմիլանի ինստիտուտի Արևելյան պատմության ուսումնասիրության ռեկտոր:

153 Հայ ժողովրդի պատմություն, Սկզբից մինչև XVIII դարի վերջը, Երևան 1975 թ., էջ 139, 140:

վալ և երկարակյաց կայսրությունների կողքին ավելացավ նաև Տիգրանի կողմից ձևավորված կայսրությունը, որը ժամանակի առումով թեև շատ ավելի կարճատև էր, տարածքային առումով էլ՝ նրանցից ոչ ավել, բայց և այնպես, բավականին պատկառելի էր։ ***«Տիգրանյան աշխարհակալությունն՝ իր գերիշխանության սահմաններով, ընդգրկում է շուրջ երեք միլիոն քառակուսի կմ տարածք։ Մեզանում առավել տարածված է Տիգրանյան աշխարհակալության այն քարտեզը, որում նշվում են միայն Տիգրան Մեծի նվաճումները՝ առանց նրա գերիշխանությունը ճանաչած երկրների ընդգրկման, ինչն անընդունելի է»***[154]։

Տիգրանը Մեծը զգալի հետք թողեց ոչ միայն Հայոց, այլև՝ համաշխարհային պատմության էջերում, նրա մասին հիշատակում են Ցիցերոնը, Պլուտարքոսը, Պատերկուլուսը, Ստրաբոնը և շատ ուրիշներ։ ***«Հռոմի ամենաականավոր դեմքերից մեկը՝ Ցիցերոնը, Սենատում արտասանած իր ճառերում Տիգրան Մեծին բնորոշում էր*** “vehemens” ***տերմինով, որը Հռոմում քաղաքական գործչին տրվող բարձրագույն գնահատականն էր***[155]։ ***Նրանից քիչ ուշ ապրած նույնպես հռոմեացի մատենագիր Վելլեոս Պատերկուլոսը Տիգրան Մեծին կոչում է «իր ժամանակի հզորագույն թագավոր» և «թագավորներից մեծագույն»***[156]***, իսկ Պոմպեոս Տրոգոսը տեղեկացնում է, որ նրան մեծարում էին՝ «աստված» կոչելով***[157]***...»***[158]։

«Հռոմեական ամենատաղանդավոր զորավարներն անգամ, անհաշտ թշնամիներ լինելով հանդերձ, ընդունում էին, որ աշխարհի ամենահզոր և մեծ թագավորներն էին Միհրդատ Պոնտացին և Տիգրան Հայը [Կրասոս, 33.1]»[159]։

Տիգրանի մասին հիշատակել են ոչ միայն այդ անտիկ շրջանի հեղինակները, այլև նրանց ժառանգները՝ մասնավորապես, եվրոպացի կոմպոզիտորների կողմից գրվել է 23 օպերա՝ Տիգրան Մեծի մասին, որ բեմադրվել են Եվրոպայի ամենաքաղաքակիրթ քաղաքների թատրոններում։

«Տիգրան Մեծն, անկասկած, իր դարաշրջանի ամենախելամիտ և համարձակ թագավորն էր, ընդ որում, որպես զորավար՝ արքա Տիգրանը ստվերել է Մարկոս Լիկինիոս Կրասոսին և Միհրդատ Եվպատորին»[160]։

Հայաստանի Հանրապետությունում արքայի պատվին անվանակոչված

---

154 Արտակ Մովսիսյան, Հայոց պատմության աշխարհակալությունները, Երևան 2008 թ., էջ 45:

155 ՀԺՊՔ, հ. 1, 2007 թ., էջ 358–361 (նշված աղբյուրներով հանդերձ):

156 ՀԺՊՔ, հ. 1, 2007 թ., էջ 361 (և նշված աղբյուրները):

157 Տիգրան Մեծի աստվածացման մասին վկայող այս և այլ փաստերի մասին տես Հակոբյան, 2005 թ., էջ 224–227:

158 Արտակ Մովսիսյան, Հայոց պատմության աշխարհակալությունները, Երևան 2008 թ., էջ 46–47:

159 Ռաֆիկ Նահապետյան, Հունական և հռոմեական անտիկ սկզբնաղբյուրների ազգագրական տեղեկությունները Հայաստանի և հայերի մասին, Երևան 2018 թ., էջ 133:

160 Կարլ Շիփման, Ցելի համալսարանի հնագույն պատմության ֆակուլտետի պրոֆեսոր:

է Երևանի քաղաքային նշանակության փողոցներից մեկը՝ Տիգրան Մեծի պողոտան։



«...անարդար է, որ այսօր մենք ավելի հաճախ նրանց մասին ենք խոսում, ովքեր Տիգրանի վասալներն էին։

Եգիպտական փարավոն Պտղոմեոս XII-ին հաջողվեց պահպանել իր իշխանությունը միայն Տիգրանի ռազմական և քաղաքական աջակցության շնորհիվ»[161]։

Օրենքով սահմանվել է «Տիգրան Մեծի պատվո շքանշան», «Արքայից արքայի» քարակերտ արձաններ են տեղադրվել ինչպես մայրաքաղաք Երևանում, այնպես էլ՝ Վաղարշապատում և Արտաշատում։

Արտավազդ II

«Հայերը հին ժողովուրդ են՝ աշխարհի հնագույններից մեկը, և զարմանալի կենսունակ։ Մտովի մի հայացք գցելով նրա պատմական անցյալի վրա՝ անհնար է զարմանք չապրել. մի կողմից՝ նրա հասակը թաղված է դարերի ու առասպելների խորքում և մյուս կողմից՝ նրան բաժին են ընկել սարսափելի տանջանքներ, հետապնդումներ, հանցագործություններ այնքան, որ ակամա հարց է առաջանում. ինչպես է կարողացել այս ազգը գոյատևել և ինչպես է, որ աշխարհում դեռևս ապրում են հայեր»[162]։

Արտավազդը II-ը նստեց հոր գահին՝ դառնալով Մեծ Հայքի արքա։ Նա չուներ այն ներուժը, ինչը որ ունեին իր երեք ապստամբ եղբայրները, որ պատերազմող մարդիկ էին։

Արտավազդին առանձնապես չէին հետաքրքրում պատերազմական գործողությունները. Նա բանակցությունների միջոցով էր ցանկանում

[161] Մայքլ Էլպիստոն, Լոնդոնի Հնագիտական թանգարանի հնագույն պատմության պրեզիդենտ։

[162] Դենի Կոշեն, տե՛ս Երկիր Դրախտավայր. Օտարերկրացիները Հայաստանի և հայերի մասին.... Երևան 2014 թ., էջ 342–343։

կարգավորել քաղաքական հարցերը և լինելով ավելի արվեստի մարդ, քան՝ պատերազմի՝ ձգտում էր հանգիստ կյանքով ունենալ։ ***«Արտավազդ II-ը պատանի տարիներին ստացել էր հելլենիստական կրթություն և դաստիարակություն, զբաղվել մտավոր գործունեությամբ. գրել է պատմական երկեր, ճառեր և թատերգություններ, որոնք չեն պահպանվել»***[163]։

Արտավազդը, գտնվելով երկու հզոր և իրար թշնամի տերությունների՝ Պարթևստանի և Հռոմի միջև, ստիպված էր երկու կողմերի հետ էլ պահպանել հնարավորինս բարի-դրացիական հարաբերություններ, սակայն դա միշտ չէ, որ հաջողվում էր։

Եվ ահա հռոմեական զորքը Մարկոս Կրասոսի գլխավորությամբ արշավում է դեպ արևելք՝ որպես թիրախ ունենալով պարթևներին։ ***«Մ.թ.ա. 60 թվականին Հռոմում կազմվել էր Հուլիոս Կեսարի, Պոմպեոսի և Մարկոս Կրասոսի, այսպես կոչված, «առաջին եռապետությունը»։ Սա մի դաշինք էր, որի կողմերից յուրաքանչյուրը հետապնդում էր իր շահը։ Կեսարը ցանկանում էր մնալ Գալլիայում, Պոմպեոսը՝ իշխել Իսպանիայում, Մարկոս Կրասոսն էլ ձգտում էր դեպի Արևելք։ Կրասոսը՝ այդ ընչաքաղց վաճառական-զորավարը, Սպարտակի ապստամբության ճնշողը, հույս ուներ ոչ միայն նվաճել ու կողոպտել պարթևների երկիրը, այլև երազում էր Ալեքսանդր Մակեդոնացու օրինակով հասնել մինչև բակտրիացիները, հնդիկները և նրանցից այն կողմ գտնվող ծովը»***[164]։



Տեսնելով Կրասոսի առաջխաղացումը՝ պարթևների արքան առաջարկում է բանակցությունների միջոցով խնդիրները կարգավորել, բայց դա չէր մտնում Կրասոսի ծրագրերի մեջ։ Իսկ քանի որ Հայաստանը դարձել էր Հռոմի դաշնակից և բարեկամ, ըստ Տիգրան Մեծի և Պոմպեոսի միջև կնքված պայմանագրի՝ Արտավազդն էլ ստիպված էր հռոմեացիներին աջակցել իր ռազմական ուժերով։

Արտավազդը Կրասոսին առաջարկում է իր օգնությունը և խորհուրդ է տալիս Հայաստանի կողմից հարձակում գործել, բայց Կրասոսն ընտրում է այլ տարբերակ։

Պարթևների արքան զորքի մի մասն ուղարկում է հռոմեացիներին դիմակայելու համար, իսկ մյուս մասով արշավում է դեպի Հայաստան՝ Հռոմի դաշնակից Արտավազդին վտանգազերծելու։ Ըստ Պլուտարքոսի՝

---

163 Հայոց Պատմություն, խմբ. Հր. Ռ. Սիմոնյանի, Երևան 2012 թ., էջ 49:

164 Հայ ժողովրդի պատմություն, խմբ. Մ.Գ. Ներսիսյան, Երևան 1985 թ., էջ 59:

Արտավազդը, տեսնելով, որ մեծ պատերազմ է սպասվում, լուր է ուղարկում Կրասոսին՝ տեղեկացնելով, որ էլ չի կարող նրան աջակցել հայոց զորքերով, քանզի պետք է փորձի դիմադրել պարթևներին: Իսկ Կրասոսը, հանկարծակիի գալով այդ լուրից, սպառնագին խոսքերով հանդիմանում է Արտավազդին: Նա էլ տեսնելով, որ մի կողմից թշնամին է հարձակվում, մյուս կողմից դաշնակիցն է սպառնում, որոշում է հարցերը բանակցությունների միջոցով լուծել երկրի սահմանները հատած թշնամու հետ՝ հատկապես, որ վախ ուներ, թե պարթևներին հնազանդեցնելուց հետո Կրասոսը Հայաստանն էլ կդարձներ Հռոմի նահանգներից մեկը:

Արտավազդի կողմից բարեկամություն հաստատելու առաջարկը պարթևների Օրոդես արքայի կողմից ընդունվում է, և Կրասոսը ոչ միայն զրկվում է դաշնակցից, այլև ձեռք է բերում նոր հակառակորդ՝ ի դեմս Արտավազդի:

Պարթևներն իրենց Սուրեն զորավարի գլխավորությամբ ծուղակի մեջ են գցում հռոմեացիներին և շրջապատելով՝ գլխովին ջախջախում են նրանց. այդ մարտում սպանվում է նաև Կրասոսը՝ իր որդու հետ միասին:

Այդ ժամանակ Արտաշատում Արտավազդը և պարթևների Օրոդես արքան՝ իրենց մտերիմներով, իբրև նշան իրենց բարեկամության, որն ամրապնդվել էր նաև խնամիական կապով՝ խնջույքից հետո ամֆիթատրոնում ներկայացում էին դիտում, ինչի ընթացքում էլ հաղթանակի լուրն է տեղ հասնում՝ շատ առանձնահատուկ կերպով: ***«Սուրեն զորավարը ճակատամարտում սպանված Կրասոսի գլուխն ուղարկում է Արտաշատ, որտեղ այդ ժամանակ գտնվում էին պարթևների Օրոդես թագավորը և պարթև մեծամեծներից շատերը: Այստեղ հռոմեացիների դեմ տարված հաղթանակի և թագաժառանգ Բակուրի ու Արտավազդի քրոջ ամուսնության կապակցությամբ տեղի էին ունենում տոնահանդեսներ: Կրասոսի գլուխը բերում են այն ժամանակ, երբ արքունի թատրոնում հույն դերասանների խումբը ներկայացնում էր Էվրիպիդեսի «Բաքոսուհիները»:***



Հանդիսատեսը բուռն ցնծություն է ապրում, երբ գլխավոր դերակատար Յասոնը ցուցադրում է Կրասոսի կտրված գլուխը և արտասանում ողբերգության հետևյալ տողերը. «Տուն վերադառնալով՝ մենք բերում ենք լեռներից նոր սպանած եղջերուն՝ բախտավոր մի որս»: Այս

տեսարանը հանդիսատեսն ընդունում է բուռն ծափահարություններով»[165]***:***

Հռոմի կրած ծանր պարտությունից հետո արդեն բարեկամ դարձած հայ–պարթևական դաշնությունն սկսում է հռոմեացիների կողմից գրավված երկրների նվաճումը, ինչի արդյունքում հարուստ ավարով և բազմաթիվ գերիներով վերադառնում են իրենց երկրները:

Հայոց զորավարներից այդ պատերազմում հիշվում են Վասակը և Բարզափրան Ուշտունին: ***«Հավանաբար, 52 կամ 53թ. (մ.թ.ա.) Արտավազդը գրավում և կրկին Հայաստանին է միացնում Ծոփքը, որը դեռևս 63թ. Պոմպեոսը հանձնել էր Կապադովկիային:***

Արտավազդ II-ը, օգտվելով հռոմեացիների պարտությունից, վերականգնում է Հայաստանի պետական ինքնուրույնությունը»[166]***:***

Միաժամանակ անց դեպի արևելք նոր ռազմարշավ է սկսում Հռոմի նոր եռապետ Մարկոս Անտոնիոսը 100 հազարանոց բանակով: 36թ. ներխուժում է Հայաստան և Կարնո դաշտում ճամբար է դնում՝ նպատակ ունենալով այդտեղից մեծ հարձակում գործել պարթևների վրա:

Մինչ այդ՝ նա ցանկանում է զորքի մի մասով արշավել և գրավել Ատրպատականը, որը պարթևների դաշնակիցն էր: Այդ արշավի համար Արտավազդն ստիպված, այս անգամ էլ բանակցելով Հռոմի հետ, վերստին կնքում է բարեկամական դաշինք՝ Անտոնիոսի բանակին կցելով մոտ 15 հազարանոց հայկական զորք: Սակայն պարթևների դեմ սանձազերծած պատերազմին հրաժարվում է մասնակցել, քանի որ նրանք էլ իր դաշնակիցն էին:

Ատրպատականի դեմ մղվող պատերազմը երկարաձգվում է, ինչը հյուծում և հուսալքում է հռոմեացիներին: Իսկ մինչ այդ՝ պարթևները հարձակվում են ետ մնացած հռոմեական լեգեոնների վրա և կոտորում նրանց՝ այրելով պարիսպները քանդելու համար նախատեսված մեքենաները:

Ի վերջո, Անտոնիոսն այդ ռազմարշավի ընթացքում ծանր պարտություն է կրում՝ կորցնելով 35 հազար զինվոր:

Հռոմեացիներն սկսում են նահանջել դեպի Հայաստան՝ պարթևների հարձակումների ներքո: Միայն Արտավազդի աջակցությամբ կարողանալով ազատվել պարթևների հետապնդումից՝ նրանք հանգիստ են առնում Հայաստանում: Անտոնիոսը վերադառնում է Հռոմ՝ պարտության համար սենատին բացատրություն տալու, և արդարանալու՝ իր կնոջ՝ Եգիպտոսի թագուհի Կլեոպատրայի առաջ:

Այլ ելք չգտնելով իրեն արդարացնելու համար՝ Անտոնիոսը պարտության պատճառը վերագրում է Արտավազդին:

---

165 Հայ ժողովրդի պատմություն, Սկզբից մինչև XVIII դարի վերջը, Երևան 1975 թ., էջ 143–144:

166 Հայ ժողովրդի պատմություն, Սկզբից մինչև XVIII դարի վերջը, Երևան 1975 թ., էջ 144:

Արտավազդի մեղավորության հարցում համոզելով Սենատին՝ նա նոր զորքով այս անգամ հարձակվում է արդեն հենց Հայաստանի վրա։ ***«Ք.ա. 34թ. Անտոնիոսը խոշոր ուժերով ներխուժեց Մեծ Հայք։ Արյունահեղ պատերազմից և ավերածություններից երկիրը փրկելու համար Արտավազդ II-ը կնոջ և որդիների՝ Տիգրանի ու Արտավազդի հետ անձնատուր եղավ Անտոնիոսին։ Կողոպտելով և ավարի մատնելով Մեծ Հայքի բազմաթիվ գավառներ՝ Անտոնիոսը մեկնեց Եգիպտոս։ Նա Ալեքսանդրիա քաղաքում կազմակերպեց հաղթահանդես և Արտավազդ II-ին ազատություն պարգևելու խոստումով հորդորեց խոնարհվել ոսկյա գահին բազմած Կլեոպատրայի առաջ ու բարձրաձայն ներում աղերսել։ Սակայն Հայոց թագավորը և նրա ընտանիքը հրաժարվեցին նվաստացումից, որի համար նետվեցին բանտ»***[167]։

Հայոց արքայի և նրա ընտանիքի այդ քայլը խոցեց հպարտ Կլեոպատրայի սիրտը, իսկ Անտոնիոսը, որ ցանկանում էր դրանով հաճելի երևալ իր տիկնոջ մոտ, այդպիսով, ընդհակառակը, ամոթով մնաց։ Արտավազդի արքայավայել կեցվածքից տպավորված՝ օտար պատմիչներն արձանագրել են այդ դեպքն իրենց աշխատություններում. ***«Ոսկե շղթաներով կապված Արտավազդը, նրա ընտանիքի անդամները և մյուս գերիները տարվում էին առջևից։ Հռոմեացիներն Արտավազդին և նրա ընտանիքի անդամներին ազատություն էին խոստանում, եթե նրանք Կլեոպատրայի առջևից անցնելիս նրան անվանեին «թագուհիների թագուհի»։ Սակայն հայոց թագավորն ու նրա ընտանիքը, մահը գերադասելով ստրկական աղերսանքով ձեռք բերված ազատությունից, արհամարհանքով ու հպարտությամբ անցնում են Կլեոպատրայի առջևից։ «Հայերը,-ասում է Դիոն Կասիուսը,-ցույց տվին իրենց հոգու վեհությունը, ուստի և փառավոր անվան արժանացան»»***[168]։

Անտոնիոսի գործելակերպից դժգոհ, մասնավորապես՝ պարթևների դեմ մղված անհաջող ռազմարշավի, և ավելի իր կնոջը՝ Եգիպտոսի թագուհի Կլեոպատրային հաճոյանալու, քան թե կայսրության խնդիրներով զբաղվելու համար, Հռոմը առաջնությունը տալիս է Օկտավիանոսին, ով էլ պատերազմով ելնում է Անտոնիոսի դեմ։

«Ք.ա. 31թ. սեպտեմբերի 2-ին Հուլիոս Կեսարի քրոջ որդի և որդեգիրը՝ երևելի զորավար Օկտավիանոսը, Հունաստանի Ակտիում քաղաքի մոտ տեղի ունեցած ծովային ճակատամարտում պարտության մատնեց Անտոնիոսին, որն իր կյանքին վերջ տվեց ինքնասպանությամբ։ Հենց այդ ժամանակ էլ Կլեոպատրայի հրամանով գլխատվեց Արտավազդ II-ը։ Ք.ա. 30թ. ամռանը, երբ Օկտավիանոսը մտավ Եգիպտոս, Կլեոպատրան

---

167 Հայոց Պատմություն, խմբ. Հր. Ռ. Սիմոնյանի, Երևան 2012 թ., էջ 58–59:

168 Հայ ժողովրդի պատմություն, Սկզբից մինչև XVIII դարի վերջը, Երևան 1975 թ., էջ 147:

նույնպես դիմեց ինքնասպանության»[169]*:*

*Արտավազդի մահը հռոմեացիների հանդեպ խորին ատելություն առաջացրեց հայերի մոտ, ինչի հետևանքով սկսվեց զավթիչների դեմ պայքար, որը գլխավորում էր Արտավազդի որդիներից պարթևների մոտ ապաստանած Արտաշեսը, ով փոխարինեց հորը՝ նստելով հայոց գահին: Պարթևների կողմից տրամադրված զորքի գլուխն անցած՝ նա մտավ Հայաստան և սրի քաշեց երկիրը զավթած հռոմեացիներին: **«Մ.թ.ա. 30թ. գահակալած Արտաշեսի հրամանով Հայաստանի քաղաքները և բերդերը գրաված հռոմեական կայազորները ոչնչացվեցին»**[170]:*

Այնուհետև Արտաշեսը հայ-պարթևական բանակն ուղղում է հռոմեացիների հետ դաշինք կնքած Ատրպատականի արքա Արտավազդի կողմը: Ժամանակին Կլեոպատրան, իմանալով հայերի հետ այս Արտավազդի թշնամական տրամադրվածության մասին և ջանալով բարեկամանալ սրա հետ, այդ մտադրությամբ է գլխատում Հայոց արքա Արտավազդ II-ին՝ գլուխն ուղարկելով Ատրպատականի արքա Արտավազդին:

Հայ-պարթևական զորքին չկարողանալով դիմակայել՝ Ատրպատականի արքան գերի է ընկնում, իսկ Ատրպատականը միացվում է Հայաստանին:

*Արտաշեսի գահակալությունը տևում է 10 տարի. սա էլ հոր նման խարդավանքի զոհ է դառնում: **Արտաշես II-ի տասնամյա գահակալությունն անկախ էր: Արտաշես II-ը պահանջեց Հռոմի կայսր Օկտավիանոս-Օգոստոսից, որ դեռևս Անտոնիոսի կողմից պատանդ տարած իր եղբայրներն ազատ արձակվեին: Մ.թ.ա. 20թ. հռոմեական կողմնորոշում ունեցող դավադիրները սպանեցին Արտաշես II-ին»**[171]:*

Արտաշեսի սպանությունից հետո դավադիրները ճանապարհ են բացում հռոմեական զորքերի առջև, որոնք անարգել մտնում են Հայաստան և գրավում մայրաքաղաք Արտաշատը:

«Այստեղ Տիբերիոս կլավդիոսը 20 թ. (մ.թ.ա.) Արտավազդ II-ի միջնեկ որդուն՝ Տիգրան III-ին, հանդիսավոր կերպով հայտարարում է Հայաստանի թագավոր: Սա, ավելի քան տասը տարի ապրած ու դաստիարակված լինելով Հռոմում՝ դարձել էր նրա ջատագովներից և հլու-հնազանդ կամակատարներից մեկը...

Տիգրան III-ի գործունեության մասին տեղեկություններ չեն հասել, սակայն, անկասկած, նա վարել է հռոմեասեր քաղաքականություն: Նրա մահից հետո 6 թ. (մ.թ.ա.) հայերն ապստամբում են Հռոմի դեմ և գահ բարձրացնում թագաժառանգ Տիգրան IV-ին»[172]*: Այս Տիգրանը սկզբնական շրջանում կարողանում է ըմբոստանալ Հռոմի դեմ, և վերականգ-*

169 Հայոց Պատմություն, խմբ. Հր. Ռ. Սիմոնյանի, Երևան 2012 թ., էջ 59:

170 Է.Լ. Դանիելյան, Ա.Ա. Մելքոնյան, Հայոց Պատմություն, Երևան 2008 թ., էջ 56:

171 Է.Լ. Դանիելյան, Ա.Ա. Մելքոնյան, Հայոց Պատմություն, Երևան 2008 թ., էջ 56–57:

172 Հայ ժողովրդի պատմություն, Սկզբից մինչև XVIII դարի վերջը, Երևան 1975 թ., էջ 149–150:

նում Հայաստանի անկախությունը: Սակայն Հռոմը չէր կարող հանդուրժել Տիգրան IV-ի բռնած քաղաքական դիրքորոշումը, քանի որ Հռոմը այդ ժամանակ հասել էր աննախադեպ հզորության: Իրավիճակից ելնելով՝ Տիգրան IV-ը, որ թագավորում էր իր քրոջ՝ էրատոյի հետ միասին, ի վերջո բանակցությունների արդյունքում հնազանդվում է Հռոմին:

«Տիգրան թագավորը, սակայն, շուտով սպանվեց հյուսիսից Հայաստան ներխուժած լեռնականների դեմ պատերազմելու ժամանակ, էրատոն էլ հրաժարվեց գահից»[173]:

Տեսնում ենք, որ Մակեդոնացին չկարողացավ մտնել Հայաստան, Դարեհը մշտական պատերազմական վիճակների մեջ էր Հայաստանի հետ, և ի վերջո, եկավ եզրակացության, որ. ***«Հայերին հնարավոր չէ հաղթել, հայերին կարելի է միայն բաժանել»***: Իսկ Հռոմեացիները մեկ հաղթում էին հայերին, մեկ՝ պարտվում. մեկ դառնում էին բարեկամ դաշնակիցներ, մեկ՝ անհաշտ թշնամիներ: այդպես էր նաև հայերի և պարթևների հարաբերությունները. ***«Մարերը, հայերը և բաբելացիները՝ այս աշխարհագրական տեղանքի երեք մեծագույն ժողովուրդները, առաջիններն էին, որ տևական պատերազմներ էին մղում իրար դեմ և խաղաղության դաշինք կնքում, և իրերի այս վիճակը շարունակվեց մինչև Պարթևական կայսրության հիմնադրումը: Պարթևներն իրենց ենթարկեցրեցին մարերին ու բաբելացիներին, սակայն երբեք չզավթեցին հայերին: Նրանք հաճախակի արշավանքներ էին ձեռնարկում հայերի երկրի խորքը, սակայն ժողովուրդը երբեք չհպատակեցվեց»***[174]:



Այժմ հասնելով Ն.Ք. I դարի վերջը՝ մի քիչ ետ գնանք՝ դեպի Արտավազդը II-ի ժամանակները:

Խնդիրն այն է, որ Մովսես Խորենացին գրում է ոմն Արշամի մասին, որ Արտավազդի մահվանից հետո եղել է Հայոց թագավոր: Սակայն այստեղ խոսքը, հավանաբար, Մեծ Հայքի հարավարևմտյան մասում գտնվող տարածքների մասին է. այսինքն՝ Հայկական Միջագետքի՝ Եդեսիա և Մծբին քաղաքներով: Հիշենք, որ հայոց Վաղարշակ արքան Հայաստանի համար որպես մայրաքաղաք էր ընտրել Մծբինը, և դարեր շարունակ այդ տարածքներում ապրել են հազարավոր հայեր: Երբ Արտավազդ թագավորը գահակալեց Մեծ Հայքում, Հայոց Միջագետքում էլ որպես թագավոր

---

173 Հայ ժողովրդի պատմություն, խմբ. Մ.Գ. Ներսիսյան, Երևան 1985 թ., էջ 65:

174 Ստրաբոն, Աշխարհագրություն, գլուխ XVI. 9:

նստեց այդ Արշամը, ով ըստ Մովսես Խորենացու՝ եղել է Տիգրան Մեծի եղբայրը։

Այդ տարածքներում հիմնական բնակիչները եղել են հայերը և ասորիները, դրա համար էլ նրան հայերն անվանել են Արշամ կամ Արջամ, իսկ ասորիները՝ Մանովա։ ***«Արշեզի կյանքի վերջին տարում, որ նրա թագավորության քսանմեկերորդ տարին էր, Հայոց զորքերը ժողովվելով՝ նրա հրամանով իրենց վրա թագավորեցրին Արջամին կամ Արշամին, որ Արտաշեսի որդին էր, Տիգրանի եղբայրը, Աբգարի հայրը։ Ասորիներից ոմանք այս Արշամին կոչեցին Մանովա, ինչպես շատերը սովորություն ունեն երկու անուն կրել»***[175]*։*

Ինչպես տեղեկանում ենք, Հայոց այս թագավոր Արշամին փոխարինում է իր որդին՝ Աբգարը, որ նստում էր Եդեսիայում, ում մասին էլ ավելի հանգամանորեն կխոսվի արդեն երրորդ հատորում։

«Ընդգրկելով Մեծ Հայքի հարավը և Հայոց Միջագետքը՝ հայկական պետականությունն այդ ժամանակ ունեցավ ևս մեկ դրսևորում՝ ի դեմս Ուռհա-Եդեսիայում գահակալող Հայոց Աբգար արքայի թագավորության»[176]*։*

Այսպիսով հասանք Ն.Ք. առաջին դարի վերջը. այս կետում ավարտվում է Հայաստանի պատմության՝ նախքան Քրիստոս XXIV դարի երկրորդ կեսից մինչ Ն.Ք. I-ին դարի վերջը պարփակող ժամանակաշրջանը։

---

175 Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, Երևան 1990 թ., էջ 89:

176 Է.Լ. Դանիելյան, Ա.Ա. Մելքոնյան, Հայոց Պատմություն, Երևան 2008 թ., էջ 57:

Վերջաբան

«Ո՛վ Հայաստան, նախնիների երջանիկ և հինավուրց պետություն,
ուր հավաքվեցին տիեզերքի համընդհանուր գեղեցկություններն աննման.
այնտեղ դու այլևս չկաս, քանզի ճակատագրին հակառակ մի ժողովուրդ ես՝
ցան ու ցրիվ ու հալածված, որ նախկին բոլոր գեղեցկություններն ես կրել։
Ու դրախտի մեջ, որտեղ հայերը ծնվեցին՝ բերկրելով աղբյուրների ցողերով,
որդիները նրա չունեն էլ անուշ ժպիտն արևի»[1]։

*Փառք Աստծո, մենք արդեն ձեռքի տակ ունենք **«Հայաստան. Արարչագործությունից մինչև երկրորդ Գալուստ»** գրքաշարի առաջին և երկրորդ հատորները։ Այդ երկու հատորներում ծանոթացանք Հայոց պատմության ամենասկզբից՝ Հայկական լեռնաշխարհի տարածքում Դրախտի արարումից մինչև Ն.Ք I դարի վերջն ընդգրկող ժամանակաշրջանում եղած պատմական խորհրդակիր դեպքերն ու իրադարձությունները, քանզի. **«Ամեն գաղտնի բան՝ վաղ թե ուշ դառնում է հայտնի»[2]։***

Այս հատորում լուսաբանվեց Սարգոն Աքքադացու գործունեությունը և նրա՝ հայկական արմատների հարցը, նրա թոռ Նարամսինի՝ Հայաստանի դեմ մղած պատերազմը, այդ պատերազմում նրա պարտությունը և հայերի ու նրանց դաշնակիցների կողմից Աքքադական կայսրության կործանումը։ Ապա տեղեկացանք Արամ Մեծի, Արա Գեղեցիկի և նրանց՝ անմիջապես հաջորդող հայոց տիրակալների մասին՝ ընդունելով նրանց՝ որպես իրական պատմական դեմքեր և որպես Հայոց պատմության մեջ իրենց մեծ հետքը թողած արքաներ։

Տեղեկացանք նաև Հայաստանից դեպի Բաբելոն քասեցիների ռազմարշավի և արիների՝ դեպի հյուսիսային Հնդկաստան ռազմարշավների մասին։ Ավելի խորը և մանրամասն դիտարկեցինք Հայկական լեռնաշխարհից հիքսոսների՝ դեպի Եգիպտոս արշավանքը, և իմացանք, որ եղել է մի խորհրդավոր առաքելություն, ինչից մղված՝ նրանք իրականացրել են այդ ռազմարշավը՝ իրենց տիրապետությունը հաստատելով Եգիպտոսում և պահպանելով այն մոտ 200 տարի։

Իմացանք Հայաստանի հետ Հոր նահապետի անմիջական կապի մասին։ Նաև տեղեկացանք առավել հրաշալի իրողության՝ Ռահաբի և Հռութի առեղծվածային պատմության մասին, ինչից հետևում է, որ հայոց ազգն Աստվածամերձ ժողովուրդ է։ Նաև տեղեկացանք Հայոց Միտանի

---

[1] Ջիոզվե Ֆակերացցի։ Տե՛ս Երկիր Դրախտավայր. Օտարերկրացիները Հայաստանի և հայերի մասին..., մտահղացել է Ալբերտ Իսոյանը. Երևան 2014 թ., էջ 581։

[2] Սոկրատես։

պետության ստեղծման և կործանման մասին: Անցնելով Արարատյան թագավորության՝ Ուրարտուի շրջանով՝ հասանք Երվանդունիներին, աշխատեցինք պարզաբանել նաև խնդրահարույց Արտաշեսյան-Արշակունի հարցը: Եվ ներկայացնելով Հայոց գահին նստած հաջորդ արքաներին՝ ի վերջո, հասանք այս հատորի ավարտին:

«Թող օրհնյալ լինեն այն բոլոր-բոլոր հայերը, ովքեր օգնեցին՝ ճանաչել իրենց երկիրը, սիրել նրա հողը, ջուրն ու երկինքը:

Եվ թող օրհնյալ լինի հայկական քարը, որից սկսվեց Հայաստանի բնակիչների հոգսերի ու խիզախումների հետ ծանոթությունը»[3]:

Մենք տեսանք նաև, որ Աստվածաշունչ մատյանն իր Աստվածային խորհուրդներով և առեղծվածներով սերտ կապ ունի հենց հայերի և Հայաստանի հետ, որով հարստացվում և, բառի բուն իմաստով, հրաշալի է դառնում մեր պատմությունը: Սակայն պետք է զգուշանալ, որ չլինի թե ընկնենք անապարծության մեջ, այլ փառք տանք մեր հայրերի Տեր Աստծուն մեզ տրված զարմանահրաշ առանձնաշնորհների համար:

«Այսպիսով, անհրաժեշտ պարտավորություն եմ համարում հորդորական խրատ ավանդել աստվածային խնամքով պաշտպանված և բարեզարդված իմ սիրելի Հայոց ազգին, որ հանկարծ երբեք չպարծենա և չմեծամտանա՝ հիշելով այն աստվածատուր բարեմասնությունը, որ հատկացված է իրեն՝ օգտվելով Դավթի խոսքից. «Տերն այսպես չվարվեց բոլոր ազգերի հետ» (Սաղմ. ՃԽէ. 20):

Երջանիկ մարգարեի այս խորհրդավոր խոստովանությունը պարտավոր ենք անգիր իմանալ և ամբողջ սրտով ու ջերմեռանդությամբ աղաղակել շնորհների Աղբյուրին, ինքնաբուն Բարությանը, այսպես. «Դու ես պարծանքը մեր զորության, և մեր եղջյուրները Քո կամքով պիտի բարձրանան» (Սաղմ. ՁԸ. 18):

Ազգիս պարծանքը թող բարի և հաճելի Աստծուն, երբ ուղղվեն դեպի Աստված՝ ճանաչելով Նրան ամենակարող զորություն և ինքնաբուն բարություն, և կատարեն Նրա՝ անբավ մեծության կամքը: Դրա համար պարտավոր ենք մեր կամքն ու միտքը կրթել սուրբ Գրքի այս խոսքով. «Ո՛չ իմաստունը թող պարծենա իր իմաստությամբ, ո՛չ հզորն իր զորությամբ, ո՛չ էլ մեծատուն իր հարստությամբ: Պարծեցողը պետք է պարծենա նրանով, որ իմանում ու ճանաչում է Տիրոջը, երկրում իրավունք և արդարություն է գործադրում» (Ա. Թագ. Բ. 9)»[4]:

Հավանաբար, ոմանք կասեն, թե այսօր հարկ է մտածել ապագայի մասին, այլ ոչ թե ետ նայել անցած-գնացած օրերին: Սակայն ներկայացվող

---

[3] Ռամիլ Հաքիմով, Սովետական գրականություն, ամսագիր, թիվ 11, Երևան, 1980 թ., էջ 57–82:

[4] S. Մատթեոս Ա. Կոստանդնուպոլսեցի, Հայելի Աստվածային Շնորհաց, Ս. Էջմիածին 2019 թ., էջ 226–227:

յուրահատուկ այս պատմությունը ոչ միայն կարող է ոգևորել և ուժ տալ՝ ներկան կերտելու, այլև՝ հայոց ապագա իրողությունների մասին գաղափար կազմելու համար։

Մեր ազգի պատմությունը, հավանաբար, միակն է, որի՝ հազարամյակների խորքից մեզ հասած տեղեկությունների վրա հիմնվելով՝ հնարավոր է բավականին ստույգ պատկերացում կազմել Հայաստանին և հայ ժողովրդին գալիքում սպասվող իրողությունների մասին։ Իսկ երբ այդ պատմական տեղեկություններին գումարվում են նաև մեր բարեպաշտ հայրերի մարգարեական խոսքերը Հայաստանի ապագայի վերաբերյալ, ապա ամեն բան, շատ ավելի հիմնավոր և հստակ տեսք է ստանում։

«Իսկ ով ցանկանում է բազմահմուտ լինել, թող նա տենչա իմաստություն, որ գիտի անցյալը և կռահում է գալիքը... կանխապես ճանաչում է թէ՛ նախանշանները, թէ զարմանահրաշ բաները և թէ՛ ժամ ու ժամանակների եղքերը»[5]*։*

Իսկ այն, որ մեզ շուտով սպասվում է հրաշալի ոսկե դար, այդ մասին արդեն իսկ տեղեկացրել ենք առաջին հատորում, և դա պետք է իրականանա զուտ Աստվածային անմիջական ներգործության արդյունքում, մարդկային գործոնը հիմնականում դեր չի խաղալու, որպեսզի ոչ ոք չասի թե «ես արեցի», այլ բոլորը միաբերան փառավորեն Արարչին իր օրհնաբեր այցելության համար հայոց ազգին։ Իսկ մենք էլ մեր կողմից ջանանք հնարավորինս աստվածահաճո դիրք գրավել, որպեսզի այդ հրաշափառ օրերին արժանանանք մասնակից լինել։ Ինչպես տեղեկացվեց, այս աշխատությունը նախատեսվում է սահմանափակել չորս հատորների շրջանակում, և վերջին՝ չորրորդ հատորում էլ, եթե Տերը կամենա, կներկայացվեն մեր ապագային վերաբերող այդ տեղեկությունները։

Այս չար ժամանակներում, ցավոք, խաթարվել է մարդ-Աստված հարաբերությունը, իսկ դա միշտ հղի է եղել բազմաթիվ և բազմապիսի պատուհասներով, աղետներով, վշտերով և դժբախտություններով՝ թէ՛ անհատ անձանց և թէ՛ ամբողջ ազգերի համար։ Իսկ մեր ազգի զարմանալի յուրահատկությունն իր ամբողջ տաժանքից հետո հրաշալիորեն ի հայտ կգա, երբ սկսի նորոգվել մարդ-Աստված հարաբերությունը, և ըստ մարգարեությունների՝ այդ ժամանակ է, որ վերստին աշխարհի քարտեզի վրա Հայկական լեռնաշխարհի տարածքում նորից կգրվի Մեծ Հայք անվանումը։

Այսօր ոմանք ունայնամտաբար կարծում են, թե Աստվածաշունչն է մեր դժբախտությունների պատճառը։ Կարծիք են հայտնում, թե հետևելով քրիստոնեական պատվիրաններին՝ մարդը դառնում է թշնամու հանդեպ խեղճ և հանդուրժող։ Բայց և նույն այս կարծիքի հեղինակներն ասում են, թե քրիստոնեությունը զենքի ուժով է մտցվել Հայաստան, ուրեմն ինչպե՞ս

5 Իմաստ. 8:8:

եղավ, որ այդ «խեղճացնող» կրոնը հանկարծ նման դրսևորումներ ի ցույց դրեց, որ ամենամոլի հեթանոս Տրդատին իր ամբողջ զորք ու զրահով ծնկի բերեց և պարտադրեց ընդունել քրիստոնեությունը: Տեսնում ենք, որ սա միանգամայն անտրամաբանական, անհեթեթ, խղճուկ մոտեցում է հարցին: Մի՞թե Հայաստանում մնացած, հավանաբար, վերջին քրիստոնյա Գրիգոր Լուսավորիչն, ավելի քան 13 տարի անց գուբից ելնելով, չգիտես՝ որտեղից հայթայթած զենք ու զրահով մի ամբողջ ահռելի բանակ կազմեց և զինելով նրանց՝ սկսեց Հայաստանում բոլորին պարտադրել՝ դառնալ քրիստոնյա: Հիշենք, որ ամբողջ աշխարհում այդ ժամանակ հալածվում էր քրիստոնեությունը, և դեռ չկար ոչ մի քրիստոնյա պետություն. ոչ մի երկրի քրիստոնեական բանակ չէր կարող ներխուժել Հայաստան և պարտադրել քրիստոնեությունը: Եվ ուրեմն ի՞նչ. ոչ մի ռազմական միջամտություն չի՞ եղել. Իհարկե, եղել է. սակայն ո՞վ է եղել այդ միջամտության գլուխը: Այն, հարկ է ընդգծել, հենց նույն մոլեգին կռապաշտ Տրդատն էր, իր արքունիքն ու արքային հնազանդ հայոց բանակը: Ուրեմն ի՞նչ տեղի ունեցավ, ինչպե՞ս նա, որ տարիներ շարունակ Հայաստանի ամբողջ տարածքում հալածանքի էր ենթարկում քրիստոնյաներին, հանկարծ դարձավ նրանց ջերմեռանդ պաշտպանը և արդեն սկսեց հալածել հեթանոսներին, որոնց պաշտպանն ու ջատագովն էր մինչ այդ:

Տեղի ունեցավ այն, որ Նոյի, Հայկի, Արամի, Արա Գեղեցիկի պաշտած Աստվածն այցելեց Իր ժողովրդին՝ Իր ծառա սուրբ Գրիգորի միջոցով, և տեղի ունեցավ Հայոց մեծ դարձը՝ օտարոտի կռապաշտությունից դեպի իրենց բարեպաշտ նախնիների Տեր Աստվածը: Մարդկանցից ոչ մեկը ուժ չգործադրեց Տրդատի և հայոց արքունիքի վրա, որպեսզի նրանք ուրանան կռապաշտությունը և ընդունեն քրիստոնեությունը, ինչպես որ Տրդատը, ժամանակին ուժ գործադրելով սուրբ Գրիգորի վրա, ցանկանում էր նրան կռապաշտության հետևորդ դարձնել: Աստծո հրաշքով երկիրը կռապաշտության դժնդակ խավարից ելավ դեպի Աստվածային իմանալի Լույսը: Բոլոր ազգերի միջից նման այցելության արժանացան միայն հայերը՝ աշխարհում դառնալով առաջին քրիստոնյա պետությունը:

Այսօր հայության մեջ կան մարդիկ, որ կարծում են, թե հայերի հարազատ կրոնը հեթանոսությունն է: Ի՞նչ հեթանոսության մասին է խոսքը. լավագույն դեպքում, պետք է համարել, որ նրանք անտեղյակ են, իսկ վատագույն դեպքում, որ շատ լավ էլ տեղյակ են և ցանկանում են տեսնել ամբողջ հայոց ազգը՝ որպես կռապաշտ-հեթանոսության ընդունող ու գովերգու: Իսկ թե Հայաստանում իրականում ինչպիսի՞ն է եղել այդ ունայնության պաշտամունքը, մասամբ կներկայացնենք ստորև:

Միակ Արարիչ Աստծուց հեռանալուց հետո հայերն ընկան բազմաթիվ և տարատեսակ կռապաշտական հավատալիքների մեջ: Որքան էլ զազրելի է, նրանք երկար ժամանակ, ընդհուպ մինչև քրիստոնեության ընդունումը,

պաշտել են նույնիսկ բաբելացիների Բել կուռքին՝ հայոց այն թշնամուն, որին մեր բարեպաշտ նահապետ Հայկը «շուն» կոչեց և նետահարելով գամեց գետնին։

Հայկի զորավիգ Տեր Աստծուն թողնելով՝ հայերը գլուխ խոնարհեցին և սկսեցին պաշտել այդ «շանը»։ ***«Պարզվում է, որ բաբելա-ասսուրական Բել-Նեբրովթ-Մարդուկը պաշտվել է նաև Հայաստանում։ Դա մի իրողություն է, որը խոսում է բաբելա-ասսուրական թագավորների հզորության և Հայոց բարձրավանդակի վրա ունեցած երբեմնի իշխանության մասին... մեզ հետաքրքրողը Բելի պաշտամունքն է Հայաստանում, որի մասին ունենք չափից ավելի փաստեր։ Այսպես օրինակ՝ Ուրզանայի արձանագրություններից մեկում ասվում է. թող հաղթի «Բելը» (ВДИ, 1951, N 2, էջ 339)։ Կարմիր բլուրից գտնված մի արձանագրության մեջ Ռուսան դիմում է Խալդիի, Թեյշեբայի, Շիվինիի և Մարդուկի օգնությանը (Ն. Հարությունյան, Ուրարտական նոր արձանագրություններ)։ Ժողովրդական ավանդությունները վկայում են, որ Բել-Նեբրովթը պաշտվել է Նեմրութ սարի վրա եղած դամբարանում։ Այդ մասին եղած զրույցներ են արձանագրել Ն. Սարգսյանը, Գ. Սրվանձտյանը, Ք. Պատկանյանը, Բենսեն և ուրիշներ։ Ըստ այդմ, Նեմրութ սարի անունը նույնանում է Նեբրովթ-Բել աստծու անվանը... Հայ պատմիչները վկայում են Հայաստանում Բել-Բերշամինայի սպիտակափառ արձանի պաշտամունքի մասին, որ գոյատևել է մինչև քրիստոնեություն»*[6]։

Ուրարտուի շրջանում հայերը պաշտում էին օտարոտի անվանումներով տասնյակ այլ կուռքերի Թեյշեբա, Շիվինի, Շիելարդի և այլն։ Իսկ Աքեմենյան Պարսկաստանի գերիշխանության շրջանում Հայաստան ներմուծվեց նրանց կրոնին հատուկ Արամազդի, Անահիտի, Միհրի, Տիրի (սա համարվել է Արամազդի ատենադպիրը)[7] *և այլոց պաշտամունքը։*

Իսկ թե պարսկական կռապաշտությունը Հայաստանում ինչպիսի զազրելի դրսևորումներ է ստացել՝ ավելի, քան՝ կար այն երկրներում, որտեղից ներմուծվել էր Հայաստան, այդ մասին զարմանքով գրում է Ստրաբոնը։

«Պարսից բոլոր աստվածությունները պաշտվում են նաև Մարաց և Հայոց կողմից. բայց Անահիտի պաշտամունքը Հայոց մեջ գերազանցում է բոլորին. զանազան տեղեր նրա անվան տաճարներ են կանգնեցված և հատկապես Եկեղիքում։ Նշանակել են այդ տեղերում ստրուկներ և ստրկուհիներ։ Այս բոլորը զարմանալի չէ, այլ այն, որ ժողովրդի ամենանշանավոր մարդիկ իրենց կույս աղջիկներին նվիրաբերում են աստվածուհուն, և նրանք, ըստ այդմ, երկար ժամանակ պոռնկանում են

---

[6] Մնացականյան Ասատուր, Հայ-ուրարտական առնչությունների հարցի շուրջը։ Գարուն, հ. 9, 1969 թ., էջ 50–51։

[7] Խաչատրյան Հայկ, Հայոց հնօրյա զվարճախոսները, Երևան 2003 թ., էջ 120։

աստվածուհու համար. որից հետո ամուսնանում են և ոչ ոք անվայել չի համարում կենակցել նրանց հետ: Գրեթե նույնը պատմում է Հերոդոտը՝ լյուդիացիների մասին. բոլորն էլ պոռնկանում էին: Այնքան բարեհաճ են վերաբերվում այդ հայ կույսերն իրենց սիրեկաններին, որ ոչ միայն հյուրընկալություն են ցույց տալիս, այլև տալիս են նրանց նվերներ՝ հաճախ ավելի շատ, քան իրենք են ստանում, ըստ որում՝ մեծահարուստ տներից են և լավ հասույթ ունեն: Բայց ամեն մի պատահական անձի հյուրասիրություն չեն ցույց տալիս, այլ հատկապես իրենց աստիճանի մարդկանց»[8]:

Ահա՝ սա է այդ «նվիրական» պաշտամունքը, որ մեր հայրենակիցներից ոմանք այսօր համարում են իրենց հարազատ կրոնը և այլոց էլ ջանում են հակել իրենց կողմը:

*Իսկ Սելևկյանների ժամանակ Հայաստանում առաջնային դարձան հունա-հռոմեական չաստվածներ Զևսը, Ապոլոնը, Աֆրոդիտեն և այլք. սրանք էլ իրենց հերթին նոր ապականություններ ներմուծեցին Հայոց աշխարհ: Այս նոր կռապաշտության ներմուծողները եղան Տիգրան Մեծը և նրա հաջորդները: Իսկ այս պաշտամունքի բարոյական կողմի մասին կարելի է հետևություն անել՝ տեղեկանալով Տիգրան IV-ի և նրա քրոջ՝ էրատոյի վարքին. **«Նրա (Տիգրան III-ի) մահից հետո (մ.թ.ա.), Հռոմի մտադրություններն անտեսելով՝ հայկական գահը զբաղեցրեց նրա որդի Տիգրան IV-ը՝ ամուսնանալով հելլենիստական աշխարհում տիրող բարքերի համաձայն՝ իր քրոջ՝ էրատոյի հետ»*** [9]:*

Պարսիկ Սասանյանների ժամանակ Հայաստան ներթափանցեց զրադաշտական կրակապաշտությունը: Այդ բոլորից հետո սկսեցին պաշտամունքի առարկա դառնալ նաև տարբեր արարածներ՝ աստղեր, մոլորակներ և այլն:

*Իսկ Գրիգոր Լուսավորչի ժամանակ, երբ Աստծո անմիջական հրաշքով դարձի եկած Տրդատը Հայաստանը հռչակեց քրիստոնյա պետություն և արգելեց այլ կրոնի գործունեությունը Հայոց աշխարհում, այդ ժամանակ, ըստ Հովհան Մամիկոնյանի, երբ կռատներից քուրմերին դուրս էին հանում և բացում նրանց ծածկած գլուխները, ի զարմանս իրենց՝ տեսնում էին, որ դրանք օտարազգի թխամորթ հնդիկներ էին, որոնց անվանում էին «գիսաններ»: **«Սբ. Գրիգորը հավաքել տվեց քուրմերին և կռատան պաշտոնյաների բոլոր մանուկներին և աղաչում էր դառնալ Աստվածային հավատքին: Սակայն նրանք հանձն չառան կատարել, այլ դիմելով իշխաններին՝ ասացին. «Լավ իմացե՛ք և (լավ հիշե՛ք). որ եթե կենդանի մնանք, փոխարենը կհատուցենք ձեզ, իսկ եթե մեռնենք, ապա***

---

[8] Ստրաբոն, Աշխարհագրություն, գլուխ XI, (Meineke, II. էջ 740–9, Tardeu, II. էջ 456–68):

[9] Հայ ժողովրդի պատմություն, խմբ. Մ.Գ. Ներսիսյան, Երևան 1985 թ., էջ 65:

աստվածները մեր փոխարեն կհատուցեն»։

Այս խոսքերը լսելով՝ Անգեղ տան իշխանը հրամայեց խուզել նրանց մազերը և տանել Փայտակարան քաղաքի բանտատունը՝ չորս հարյուր երեսունութ մարդ։ Բայց ամենազարմանալին նրանց կերպարանքն էր. բոլորն էլ սևամորթ էին, գիսախուիվ և զազրատեսիլ, որովհետև ծագումով հնդիկներ էին։ Դրա պատճառն այն էր, որ այստեղ գտնված կուռքերն էլ՝ Դեմետրը և Գիսանեն, հնդիկ իշխաններ էին... հենց նրանք էլ, գալով Աշտիշատ, հիմնադրեցին այն նույն բագինները, որ Հնդկաստանում էին պաշտում»[10]։

Եվ հավանաբար, նրանք էլ եղել են Հայաստանում հինդուիզմի տարածողները՝ հիմնադիրներն այս օտարոտի կռապաշտական խառն ու գարշելի համակարգի, որ միաժամանակ գործել է Մեծ Հայքի տարածքում։

Եվ հավատալիքների այս դիվական խճուճը ոմանք համարում են հայերի հարազատ կրոն։

*Կարծիք են հայտնում նաև, թե Լուսավորիչն այրել է տվել մեհյաններում պահված բոլոր գրքերը, և դա միանգամից զարմանք և անհանդուրժողականություն է առաջացնում, թե ինչպե՞ս կարելի է ոչնչացնել այդ գրականությունը։ Իսկ ի՞նչ եք կարծում, այդ զազրատեսիլ գիսանների մեհյաններում այդ ի՞նչ գրականություն պետք է պահված լիներ, որ դրա համար կարելի լիներ այդպես ցավել։ Եվ որպեսզի պարզ լինի, թե ինչ են իրենցից ներկայացրել այդ գրքերը, հետևենք Պողոս առաքյալի քարոզչությանը. երբ նա Եփեսոսում ավետարանում էր հեթանոս հույներին, որոնք, տեսնելով առաքյալից ելնող զորությունը և լսելով Աստծո խոսքը, հեթանոսությունից հեռանալով, ընդունեցին քրիստոնեություն. **«Եվ նրանց բոլորի մեջ ահ ընկավ. և Տեր Հիսուսի անունը փառավորվում էր։ Եվ հավատացյալներից շատերը գալիս խոստովանում էին ու պատմում իրենց արարքները։ Եվ կախարդությամբ զբաղվողներից շատերը բերում էին իրենց գրքերը և բոլորի առաջ այրում. նրանց գինը հաշվեցին և գտան, որ հիսուն հազար արծաթ դահեկան էր։ Եվ այսպես՝ Աստծու խոսքը աճում էր ու զորանում»***[11]։

Թխամորթ հնդիկների և այլ՝ պարսկա-հունական կռապաշտական համակարգերին հետևող քուրմերի մոտ, բնական է, որ հիմնականում մոգության, կախարդության և նմանատիպ գարշանք պարունակող գրականությունից զատ՝ այլ բան չէր էլ կարող լինել։ Իսկ դրանք բոլորը, շատ բնական է, որ պիտի խարույկը գցվեին, հատկապես, որ դրանց տերերից շատերը հավատքի գալով կամավոր էին այդ գրքերը հանձնում կրակին՝ չնայած դրանք մեծ գումարներ արժեին։

---

[10] Հովհան Սմպադ Սմբատյան, Տարոնի պատմություն, Երևան 1989 թ., էջ 46–47:

[11] Գործք. 19:17–20:

«Չորրորդ դարում, երբ քրիստոնեությունը Հայաստանում ընդունվում է Պետական կրոն, հնդկական համայնքը ևս, հայ հեթանոսների հետ միասին, կատաղի դիմադրություն է ցույց տալիս հայոց արքայի զորքերին: Այնուամենայնիվ, դիմադրությունը հաղթահարվում է, և Գրիգոր Լուսավորչի հրամանով մկրտվում է 5 հազարից ավելի հնդիկ»[12]:

*Իհարկե, ոչ՝ այս հնդիկների, այլ պարսկա-հունական պաշտամունքին ծառայող մեհյանների հայազգի քուրմերի մոտ նմանատիպ ծիսական բնույթի դիվական գրքերից զատ եղել են նաև պատմական տեղեկություններ պարունակող որոշ գրքեր, ինչի մասին վկայում է հենց Մովսես Խորենացին: Ք.հ. I դարի վերջերին Անի կամ Հանի քաղաքի քուրմը թողել է պատմական և այլ բնույթի տարբեր տեղեկություններ, նաև այդ ժամանակ Հայաստանում թագավորող Արտաշես արքայի և հռոմեացիների հետ նրա հարաբերությունների մասին. **«Այս բանը մեզ հաստատապես պատմում է Հանիի Ողյումպ քուրմը, որ գրել է մեհենական պատմություններ և ուրիշ շատ գործեր, որ մենք պատմելու ենք»**[13]: Իհարկե, այդ պատերազմական թոհուբոհի մեջ կարող էին տուժել նաև ոչ ծիսական բնույթի գրքերը, սակայն հատակ է, որ նման տեղեկություններ պարունակող գրքերը նպատակաուղղված չեն ոչնչացվել:*

*Ըստ Խորենացու՝ ասորի քարոզիչ Բարդածանն, արդեն Ք.հ. II դարի վերջերին գալով Հայաստան, մտնում է Դարանաղյաց գավառի նույն Անի քաղաքի արխիվը. **«Մտավ նա, կարդաց մեհենական պատմությունը, որի մեջ նաև թագավորների գործերը. նա իր կողմից ավելացրեց իր ժամանակի անցքերը, բոլորը փոխադրեց ասորի լեզվի և ապա նրանից՝ հունարենի»**[14]:*

Այդ տեղեկություններից օգտվել է նաև Խորենացին, ով Հայոց պատմությունը գրել է Գրիգոր Լուսավորչի մահվանից մոտ 140 տարի անց: Այսինքն, այդ մեհենական պատմությունների գրքերը գոյություն են ունեցել Խորենացու ժամանակ: Ուրեմն, հիմնական օգտակար տեղեկություններն ամեն դեպքում պահպանվել են:

Ոմանք էլ կարծիք են հայտնում, թե Գրիգոր Լուսավորիչն իբր ոչնչացրել է նաև հայոց գրերը, որ, իբր, եղել է ներկայումս գործող մեր Մաշտոցյան այբուբենը: Սակայն դա ավելի սիրողական մակարդակի անձանց կարծիքն է, այլ ոչ՝ լուրջ մասնագետների:

Եթե Մաշտոցյան գրերը օգտագործվել են մինչ Լուսավորիչը, ուրեմն, բնականաբար, դրանք պետք է օգտագործվելիս լինեին նաև դրանից առաջ: Իսկ Մեծ Հայքի տարածքում մինչ Մաշտոցը՝ հազարամյակների

---

12 Վարուժան Կիրակոսյան, Հայերը և քրիստոնեության քարոզչությունը Հնդկաստանում, Քրիստոնյա Հայաստան երկշաբաթաթերթ, 2002 թ., Հունիս Բ, թիվ 12 (128), էջ 5:

13 Մովսես Խորենացի, Հայոց Պատմություն, Երևան 1990 թ., էջ 112:

14 Մովսես Խորենացի, Հայոց Պատմություն, Երևան 1990 թ., էջ 130:

ընթացքում գոյություն ունեցած 12 գրային համակարգերի շարքում, ըստ գիտնականների, ներկայիս մեր այբուբենը տեղ չի գտել:

«...Նախամաշտոցյան Հայաստանում կիրառվել է տասներկու գրային համակարգ»[15]*: Հայաստանում Ուրարտական շրջանում օգտագործել են ասուրական սեպագրեր, որոնք հետագայում ինչ-որ չափով փոփոխվելով՝ հարմարեցվել են հայոց լեզվին: Այնուհետ օգտագործման մեջ են եղել հունական, արամեական, ասորական և միջին պարսկական կամ պահլավական գրերը, և սրանք գործել են՝ մինչև Լուսավորիչը: Ուրեմն, ինչո՞ւ պետք է նա թողներ այս գրերը և հատուկ ոչնչացնել տար մաշտոցյան ենթադրյալ գրերը: Կամ եթե Մաշտոցյան այբուբենը Լուսավորչից առաջ գոյություն է ունեցել, ուրեմն ինչի՞ համար միևնույն ժամանակ պետք է գործածության մեջ լինեին նաև վերը նշված այդ չորս օտար գրերը:*

Եթե հայոց լեզուն եղել է առաջին մայր լեզուն, որով խոսել է համայն մարդկությունը՝ մինչ լեզուների խառնակումը, բնական է, որ եթե այդ ժամանակ եղել են գրեր, ուրեմն այդ գրերը պետք լիովին համապատասխանեին այդ լեզվին, այսինքն՝ հայերենին. ***«Հայերեն լեզուն հենց այն է, որով բացատրվում էին մինչ Ջրհեղեղ ապրողները»***[16]*:*

Իսկ քանի որ Մաշտոցյան երկնառաք այբուբենը կատարելապես համապատասխանում է հայերենին, պետք է հետևություն անել, որ այն ժամանակ էլ գործել է այս նույն այբուբենը, սակայն Աստծուց հեռանալով և ընկնելով կռապաշտության մեջ՝ այդ գրերն էլ վերացվել են, և միայն՝ երբ հազարամյակներ անց հեռանալով կռապաշտությունից՝ նորից դարձանք մեր Տեր Աստծուն, այդ երկնառաք գրերն էլ նորից տրվեցին մեզ՝ Աստծո հավատարիմ ծառա սբ. Մեսրոպ Մաշտոցի միջոցով:

Մի խոսքով, այն, որ Լուսավորչից անմիջապես առաջ գոյություն են ունեցել մաշտոցյան գրեր, անհիմն կարծիք է:

Իսկ ինչ վերաբերվում է լուրջ գիտնականներին, նրանք կարծում են, որ իսկապես ոչնչացվել է մի գրային համակարգ: Բայց դա բացարձակ կապ չունի Մաշտոցյան այբուբենի հետ: Այն, այսպես կոչված, «մեհենագիրն» է:

Մեհենագիր. անվանումն արդեն իսկ ասում է, որ դրանք մեհյաններում քուրմերի կողմից օգտագործվող, հիմնականում կրոնական բնույթի գրառումների համար նախատեսված գրեր են եղել, ինչն օգտագործվել են իրենց տարատեսակ հմայություններ, մոգություններ, թուղթ ու գրերը թղթին հանձնելու համար:

Երբ Հայաստանում արգելվեց գործող տարատեսակ կռապաշտական

---

15 Արտակ Մովսիսյան, Նախամաշտոցյան Հայաստանի գրային համակարգերը, Երևան 2003 թ., էջ 230:

16 Я. и Д. Арзановы, Начертания истории Царства Армянского, Москва 1827 г., ст. 30.

համակարգերի գործունեությունը և կրակի տրվեցին այդ դիվական գրքերը, մեհենագիրն էլ ուղղակի դարձավ անօգտագործելի և, ինքնըստինքյան, ոչնչացավ։ Գիտական տեսակետ կա, որ «դանիելյան» գրերը եղել են հենց այդ մեհենագրերը, որոնց անկատարության պատճառով դրանք անօգտագործելի դարձան։

Իսկ եթե, այդ գրերը մեծ դեր ունեցած լինեին, ապա ինչո՞ւ պետք է դրանց հետ միասին՝ օգտագործեին նաև արամեերեն, հունարեն և այլ գրային համակարգերը. չէ՞ որ բոլորն էլ կարող էին միայն այդ մեհենագրային համակարգից օգտվել, ինչպես որ Մաշտոցի կողմից բերված գրերը դարձան միակը Հայաստանում։

Ասում են նաև, որ իսպառ ոչնչացվեցին մեհյանները, սակայն հայտնի է, որ ոչնչացվել են այն շինությունները, որոնք այդ հարյուրավոր գարշահոտ «գիսաններին» կողմից տարիներ շարունակ պղծվել են կախարդությամբ և մոգությամբ, և այդ դիվաբնակ կառույցները սրբագործելը և օգտագործելը դարձել էր անհնարին։ Սակայն եղել են նաև այնպիսի տաճարներ, որոնք Հայաստանում վերակառուցվելով և սրբագործելով՝ պիտանի են եղել օգտագործման համար, ինչպես հունական Պարթենոնն է ժամանակին ծառայել՝ որպես քրիստոնեական տաճար։

Այսպիսով, տեսնում ենք, որ սբ. Գրիգոր Լուսավորչին «վանդալիզմի» մեջ մեղադրելն ուղղակի անհեթեթություն է։ Սակայն ոմանք, լցված անհիմն ատելությամբ, նույնիսկ անվանում են նրան ոչ թե Գրիգոր Լուսավորիչ, այլ՝ Գրիգոր «խավարիչ»։ Եթե որոշ մարդկանց համար որպես «լուսավորիչներ» ընդունվում են այն թխամորթ հնդիկ մոգերը, իսկ դրանց նողկալի գարշահոտը որպես խնկաբույր, բնական է, որ ըստ այդմ էլ Աստվածորդու աքանչելափառ լույսը նրանց համար կդիտվի՝ որպես «խավար»։ Սակայն հարկ է խիստ զգուշանալ Արարչի և Նրա սրբերի հանդեպ բերան բացելուց, քանզի դա հղի է խիստ ծանր և անդառնալի հետևանքներով։

Եկեղեցին Լուսավորչի տոնի օրը նրան նվիրված ընթերցվածքներում տեղադրել է նաև Սողոմոնի Իմաստության գրքից մի հատված. ***«Հանգուցյալ արդարը դատապարտում է կենդանի ամբարիշտներին, և վաղ հասունության հասած երիտասարդությունը դատապարտում է բազմամյա անիրավ ծերությունը։***

Իմաստունի վախճանը տեսնում և չեն հասկանում, թե ինչ է խորհել Տերը նրա մասին և ինչից է զգուշացրել նրան։

Մարդիկ կտեսնեն և կարհամարհեն նրան, մինչդեռ Տերը պիտի ծիծաղի նրանց վրա։

Եվ դրանից հետո նրանք պիտի լինեն անարգ կործանման և ամոթանքի մեջ՝ հավիտենական մեռելների հետ, որովհետև Տերը պիտի պայթեցնի նրանց ուռած, անշունչ մարմինները, հիմքերից պիտի շարժի

նրանց, մինչև որ նրանք իսպառ խոպան դառնան, տանջվեն ցավերի մեջ. և պիտի կորչի նրանց հիշատակը։

Իրենց կուտակած մեղքերից տագնապած՝ նրանք պիտի հասնեն դատաստանի օրվան, և նրանց գործած անիրավությունները պիտի կշտամբեն նրանց՝ ճակատ առ ճակատ։

Այն ժամանակ արդարը շատ համարձակ պիտի կանգնի իրեն նեղողների հանդեպ, և նրանք, ովքեր արհամարհում էին նրա վաստակը, տեսնելով նրան՝ պիտի խռովվեն սաստիկ երկյուղից և պիտի զարհուրեն նրա սքանչելի փրկության համար։

Նրանք պիտի զղջան իրենց մտքում և հոգու նեղությունից ճնշված՝ պիտի հառաչեն ու ասեն. «Սա այն մարդն է, որին մենք ծաղրում էինք մի ժամանակ և նախատինք էինք տալիս։

Մենք՝ անմիտներս, նրա վարքը մոլորություն էինք համարում, իսկ նրա վախճանը՝ անարգանք։

Բայց նա ինչպե՞ս դասվեց Աստծու որդիների շարքը՝ դառնալով սրբերին վիճակակից։

Ուրեմն, մենք մոլորվեցինք ճշմարտության ճանապարհից, արդարության լույսը չլուսավորեց մեզ, և մեր սրտերում չծագեց արդարության Արեգակը։

Մենք խրվեցինք անօրինության և կորստյան շավիղների մեջ, գնացինք անկոխ անապատներով և չճանաչեցինք Տիրոջ ճանապարհները։

Ի՞նչ շահ բերեց մեզ հպարտությունը, և ի՞նչ նպաստ բերեց մեզ հարստությամբ պարծենալը։

Այդ ամենն անցավ՝ ինչպես ստվեր, և թռավ՝ ինչպես մարդու վաղանցուկ համբավ...

Բայց արդարները պիտի ապրեն հավիտյան. նրանց վարձը Տիրոջից է, և նրանց խնամքը՝ Բարձրյալից։

Դրա համար էլ նրանք Տիրոջ ձեռքից պիտի ընդունեն արքայության վայելչությունն ու գեղեցիկ թագը, քանի որ Տերն իր աջով նրանց հովանի և իր բազկով նրանց պաշտպան է լինելու»[17]։

Նման մոտեցումը քրիստոնեության հանդեպ՝ ավելի խորացավ ԽՍՀՄ-ի անաստվածության շրջանում, երբ մարդկանց մեջ մանկուց ներարկեցին աթեիստական գաղափարներ և ատելություն՝ Արարչի հանդեպ։ Սա ուղղակի հոգևոր խորը կուրության արդյունք է։ Սակայն հույս ունենք, որ մեր պատմության առեղծվածային դեպքերին ծանոթանալով՝ շատերն այնքան խելամիտ կլինեն, որ կփնտրեն բացարձակ ճշմարտություն ոչ թե հեռուներում՝ իրենց երևակայական մտորումների պատրանքներում, այլ՝ հենց բուն Աստվածաշունչ մատյանում, որ մեր Առաքելական Սուրբ Եկեղեցին՝ հայրաբանական մեկնություններով հանդերձ, հասցրել է մեզ։

[17] Իմաստ. 4:16–20, 5:1–17:

Ոմանք էլ ասում են, որ Աստվածաշունչը զուտ հրեական ստեղծագործություն է մարդկանց մոլորեցնելու համար: Իսկ իրականում հենց նման կարծիքն է մոլորություն, տգիտություն և խորը հոգևոր կուրություն:

Հայերն աշխարհում միակ ազգն են, որ մինչ հրեաների՝ որպես ազգ ձևավորվելը, ազգովի պաշտել են երկինքն ու երկիրն արարող Ճշմարիտ Աստծուն, իսկ քրիստոնեության շրջանում նորից իրենցից հեռացնելով օտար ազգերից ներմուծած կռապաշտական պաշտամունքային համակարգերը՝ կրկին դարձել են նույն իրենց բարեպաշտ նահապետների Տեր Աստծուն պաշտող առաջին ժողովուրդը:

Աստվածաշնչում հստակ մատնանշվում է Դրախտի տեղը՝ Հայկական լեռնաշխարհի կենտրոնում, նմանապես և Արարատ լեռը՝ Նոյան տապանով հանդերձ:

*Եթե այս ամենը գրված լիներ մարդկային աչառու միտումներով, ապա ինչո՞ւ չկա անդրադարձ մարդկության համար այս երկու ամենակարևոր կետերին, որ գտնվել են ոչ թե Պաղեստինում, այլ՝ հենց Հայկական լեռնաշխարհում: Հազարավոր ապացույցներ կարելի է բերել, որ Աստվածաշնչի հեղինակը հենց Ինքն Աստված է, Որի շնորհի ներգործությամբ մարգարեներն ուղղակի, որպես գրիչ՝ գրի են առել այդ ամենը: Եվ հարկ է տեղեկանալ, որ Աստծո բոլոր մարգարեները, որ գրել են Հին Կտակարանը, բոլորն էլ հալածվել են հենց հրեաների կողմից: Նրանցից շատերին ուղղակի տանջամահ են արել: Իսկ քրիստոնեության շրջանում հրեաների հերթական զոհը դարձավ սբ. Ստեփանոս Նախավկան՝ նորից իրենց ազգակից, ով հանդիմանել էր նրանց կույր ու անհաղորդ մնալու համար. **«Կամակորնե՛ր, որոնց սիրտն ու ականջները փակ են Աստծու կոչին, դուք միշտ Սուրբ Հոգուն հակառակվում եք. ինչպես որ ձեր հայրերն էին, այնպես էլ՝ դուք: Ձեր հայրերը մարգարեներից որի՞ն չհալածեցին: Եվ սպանեցին նրանց, որոնք նախօրոք պատմեցին Արդարի գալստյան մասին, որի մատնիչներն ու սպանողները եղաք դուք այժմ»**[18]:*

Ցավալի է, որ առաջին քրիստոնյա պետության ժողովուրդն ամենատարրական գիտելիքն էլ չունի քրիստոնեության մասին, և ամեն մի թյուր և իրականում թշնամական միտք առանց քննելու՝ իսկույն ընդունում է իրականության տեղ: Աստված մեր հայր Հայկ-Մելքիսեդեկից հետո ընտրեց Աբրահամ նահապետին: Նրա սերունդների՝ հրեաների միջոցով գրվեց Հին Կտակարանը, որի ամբողջ իմաստն այն էր, որ ի ցույց դրվի մարդկության ստեղծումը, ապա՝ նրա մեղանչումն Աստծո հանդեպ, դրա հետևանքով՝ մահկանացու դառնալը և հավիտենական կորստի դատապարտվելը:

Եվ, որ ամենակարևորն է, այստեղ մշտապես շեշտադրվում է Փրկչի Առաջին գալուստը: Իսկ Աստծո Որդին, մարմնանալով եկավ աշխարհ,

[18] Գործք. 7:51–52:

որ երկնքի փակված դռները բաց անի մեղանչած մարդկության առջև։

Նրան այդ ժամանակ հիմնականում սպասում էին միայն իրենք՝ հրեաները։ Բայց հենց իրենք էլ մերժեցին և այն աստիճան մոլեգնեցին, որ Ում դարեր շարունակ սպասում էին, որոշեցին մահվան մատնել, քանի որ ա՛յլ պատկերացում ունեին Մեսիայի մասին։ Նրանց պետք էր ոչ թե մարդասեր Աստված՝ հավիտենական կյանքի դռներն իրենց համար բացող, այլ՝ մի բռնակալ՝ նեռ, որ ամբողջ աշխարհը սկուտեղի վրա իրենց կմատուցեր։

Տերն էլ թույլ տվեց, որ այդ «խստապարանոց» ժողովուրդը (ում մասին հենց այդպես էլ գրում է Հին Կտակարանը) դառնա գործիք՝ փրկության ծրագիրն իրականացնելու համար, այսինքն, խաչի անարգ մահվան մատնի մարդացած Աստծուն, Որի մահվամբ և հրաշափառ հարությամբ հավիտենականության դռները պետք է բացվեին մարդկության առջև։

Առաջին մարդը՝ Ադամը, մեղք գործեց, իսկ դրա հետևանքը՝ մահը, տարածվեց համայն մարդկության վրա։ Գրված է՝ «մեղքի վարձը մահն է, և առանց արյան՝ թողություն չկա»։ Եվ մեղանչած մարդկության փոխարեն ամենասուրբ և անմեղ Աստված կամավորապես իրականացրեց Իր իսկ կողմից հաստատված օրենքի պահանջները. Անմեղն Իր ամենասուրբ արյունը հեղեց խաչափայտի վրա՝ որպես քավություն և թողություն՝ մեղավոր մարդկության համար, որպեսզի փրկի նրանց՝ մեղավորների համար նախատեսված հավիտենական պատժից։

Եվ հարություն առնելով՝ Տերը նստեց հավիտենական փառքի մեջ, Հոր աջ կողմում՝ որպես թե՛ Փրկիչ և թե՛ ահեղ Դատավոր։

Իսկ ինչ վերաբերում է հրեաներին, ինչպես ասվեց, նրանք չընդունեցին աշխարհի Փրկչին՝ մեր Տեր Հիսուս Քրիստոսին, Ով ասում էր նրանց. ***«Դուք հոր կողմից սատանայի զավակներ եք, և ձեր հոր ցանկություններն եք ուզում կատարել՝ թեև նա ի սկզբանե մարդասպան էր և ճշմարտության մեջ չմնաց, որովհետև նրա մեջ ճշմարտություն չկար։ Երբ որ նա սուտ խոսի, ինքն իրենից է խոսում, քանի որ նա սուտ է և ստի հայր»***[19]։

Այսպիսով, նրանք, մեջքով շրջվելով Աստծուն, խոնարհվեցին և երկրպագեցին սատանային՝ մարդկային ցեղի թշնամուն, որին անվանում են նաև «առաջին մարդասպան», «հին օձ», «ստի հայր» և այլն, ով էլ գայթակղիչ առաջարկներ էր անում հրեաներին՝ ասելով. «Ամբողջ աշխարհը ձեզ կտամ, եթե ինձ երկրպագեք»։

Եվ հրեաները հոժարակամությամբ երկրպագեցին դրան՝ ինչ-ինչ նյութական ակնկալիքներից ելնելով՝ ի կորուստ իրենց թշվառ հոգու։

Հրեաների առջև փակվեցին երկնային դռները, իսկ հեթանոսների առջև դրանք լայն բացվեցին։ Դրա պատճառով էլ ասվեց հրեաներին. ***«Բայց ասում եմ ձեզ, որ արևելքից և արևմուտքից շատերը պիտի գան***

[19] Յովհ. 8:44:

ու երկնքի արքայության մեջ սեղան պիտի նստեն Աբրահամի, Իսահակի և Հակոբի հետ. իսկ արքայության որդիները պիտի ելնեն արտաքին խավարը. այնտեղ պիտի լինի լաց և ատամների կրճտում»[20]*:*

Նրանք արդեն 2000 տարի սնվում են միայն այս աշխարհի անցողիկ պատրանքներով՝ իրենք իրենց զրկելով հավիտենականությունից, որ պատրաստված է միայն Փրկչին հավատացողների և ընդունողների համար:

Եվ ուրեմն, աստվածպաշտությունը վերակսվեց Հայաստանից, դարեր անց փոխանցվեց հրեաներին, իսկ Տեր Հիսուս Քրիստոսի աշխարհ գալով՝ վերստին տրվեց հայերին: Հայաստանն առաջին քրիստոնյա պետությունը դարձավ, հայերն էլ՝ առաջին քրիստոնյա ժողովուրդը:

Իսկ թե ինչո՞ւ հատկապես հայերը, լինելով Աստծո ժողովուրդ, այս երկու հազար տարվա ընթացքում ապրեցին թե՛ վերելքներ և թե՛ ծանր անկումներ, կարելի է պատկերացնել՝ դիտարկելով Աստծուց հեռանալու և ապա զղջմամբ և ապաշխարությամբ նորից Նրա մոտ վերադառնալու շրջափուլերը:

Հրեաները, որ հինկտակարանյան շրջանում արժանացել էին՝ Աստծո ժողովուրդը լինելուն, շատ անգամ թողնելով Նրան՝ մտել էին խորը կռապաշտության խորխորատները, ինչի հետևանքով էլ տարատեսակ փորձանքների մեջ էին ընկել:

*Նրանց՝ բազմաթիվ աստվածուրաց և կռապաշտ արքաներից էր նաև Աքաաբ արքան, ով հալածում էր Աստծո պաշտոնյաներին: Այդ ժամանակ Տիրոջը հավատարիմ մնացած մարգարե Եղիան հանդիմանեց Աքաաբին, սակայն նա խելքի չեկավ, ինչի հետևանքով Եղիան Տիրոջ պատվերով մարգարեացավ, և երեք տարի անձրև չտեղաց, և ամբողջ երկիրը ծանր երաշտի պատճառով կործանման եզրին հասավ: Իսկ Եղիան, հետապնդումից խուսափելով, հեռացավ ու թաքնվեց օտար երկրում: Սակայն երեք տարի անց գնաց և կանգնեց Աքաաբի առաջ. **«երբ Աքաաբը տեսավ Եղիային, ասաց. «Այդ դո՞ւ ես Իսրայելը տակնուվրա անողը»: Եղիան ասաց. «Ես չեմ Իսրայելը տակնուվրա անողը, այլ՝ դու և քո հոր տունը, որ, լքելով ձեր Տեր Աստծուն՝ գնացել եք Բահաղիմին հարողների հետևից»**[21]*:*

Եվ ուրեմն, երկրի վրա եկող դժբախտությունները միանշանակ Տերունական պատվիրանների հանդեպ արհամարհանքից են: Երբ թողնում ենք Տիրոջը և հեռանում Ամենակարողի աջի հովանուց, բնականաբար, կրում ենք դրա դառը հետևանքները: Իսկ եթե նորից դառնանք զղջմամբ և ապաշխարությամբ, ըստ այդմ էլ՝ երկնային օրհնություններն առատորեն կիջնեն երկրի վրա:

---

[20] Մատթ. 8:11–12:

[21] Գ. Թագ. 18:17–18:

Տարբեր դարերի հայ մատենագիրները բազմաթիվ վկայություններ են թողել մեր քաղաքների և երբեմն էլ ամբողջ երկրի ավերածությունների պատճառների մասին, և դրանք բոլորն էլ հոգևոր բնույթ են կրել, ինչի մասին, կամոքն Աստծո, շատ մանրամասն կտեղեկացվի արդեն հաջորդ հատորներում:

*Ուրեմն, մեր երկրի իրական բարգավաճումը կախված է միայն ու միայն Տիրոջ օրհնությունից. չէ՞ որ գրված է. **«Եթե Տերը տունը չշինի, իզուր են չարչարվում այն շինողները, եթե Տերը քաղաքը չպահպանի, իզուր են հսկում պահապանները նրա»**[22]:*



*Ուրեմն, եթե դառնանք առ Աստված, շատ շուտով կտեսնենք այն հրաշքները, որ կսկսեն կատարվել մեր երկրի հետ: **«Եթե Իմ ժողովուրդը, որի վրայ Իմ անունն է դրված, զղջա, աղոթի և Իմ երեսը փնտրի ու հետ դառնա իր չար ճանապարհներից, Ես էլ երկնքից կլսեմ, կներեմ նրանց և կբուժեմ նրանց երկիրը»**[23]: Հատկապես, որ մարգարեական խոստում ունենք, ըստ որի՝ Հայաստանին և հայ ժողովրդին շատ շուտով սպասվում է հրաշալի Ոսկեդար:*

Իհարկե, ասվեց, որ միայն Տիրոջից է կախված մեր երկրի օրհնությունը, Աստծո ողորմության դռների բացումը, և Մեծ Հայքի՝ վերստին վերականգնումը, բայց միայն ազգի և հայրենիքի համար դառնալ առ Աստված՝ հույժ թերի է: Պետք է հիշենք, որ մենք մահկանացու ենք, և այս վաղանցուկ կյանքում միլիարդավոր մարդիկ են ապրել և իրենց մահկանացուն կնքելով՝ հեռացել այս աշխարհից, որոնց թվում նաև շատերիս մերձավորներից: Մենք էլ ենք կանգնած այդ հերթի մեջ, և ոչ

22 Սաղմ. 126:1:

23 Բ Մնաց. 7:14:

ոք չգիտե, թե ո՛ր մեկիս հերթը ե՛րբ կհասնի, քանզի մահը չի հարցնում ո՛չ տարիք, ո՛չ առողջություն, ո՛չ էլ դիրք ու պաշտոն։ Իսկ մենք՝ բոլորս, ինչ-որ մի պահից սկսած՝ պարտադրված ենք անցնել մահվան դարպասներով։ Իմաստուն է այն մարդը, ով գիտի, որ իրեն սպասվում է անխուսափելի ու ճակատագրական մի իրադարձություն և ջանում է հոգ տանել այդ մասին։ Իսկ չխորհելով և հեռու վանելով դրա վերաբերյալ մտքերը՝ միևնույն է, դրանից չես խուսափի, այլ ուղղակի անպատրաստ կգտնվես քո կյանքի ամենաճակատագրական պահին։ Գուցե չես հավատում մահվանից այն կողմ առկա իրադարձություններին՝ որպես անշրջանցելի իրականություն։ Միևնույն է՝ այն կհառնի քո առաջ, և ամենադառն և ցավագին իրավիճակի դեմ կկանգնես։ Այնինչ, աշխարհից պատրաստված հեռանալն, ընդհակառակը, անխուսափելի իրողության առջև կկանգնեցնի՝ արդեն մեղքերի թողություն գտած։ Քանզի Քրիստոս՝ աշխարհի Փրկիչը, հենց դրա՛ համար եկավ աշխարհ։ Եկավ, որ մեզ Իր հետ տանի Երկինք՝ հավիտենական սիրո, խաղաղության և անվերջանալի երանությունների հայրենիք՝ երկնքի Արքայությունը։

Ուրեմն, իհարկե, մտածենք մեր հայրենիքի մասին, բայց առավել ևս չմոռանանք մեր երկնային հայրենիքի մասին, քանզի առաջինը, ինչպես և՝ մենք, ժամանակավոր է, իսկ մյուսը՝ հավիտենական։ Բայց պետք է գիտակցել, որ եթե կա հավիտենական բերկրության երկիր նրանց համար, ովքեր այս կյանքում անհոգ չապրեցին, այլ հոգ տարան հանդերձյալի համար, բնական է, որ կլինի և այլ վայր նրանց համար, ովքեր անհոգություն ցուցաբերեցին անխուսափելի գալիքի հանդեպ։ Իսկ այդ վայրի անվանումը բոլորը գիտեն, սակայն, ցավոք, քչերն են հավատում դրա գոյությանը, որտեղ կլինի այն ամենի միանգամայն հակառակը, ինչը որ սպասվում է Աստծո Արքայությունում։ ***«Մարդու Որդին կուղարկի իր հրեշտակներին, և նրանք կհավաքեն Նրա արքայությունից բոլոր գայթակղությունները և նրանց, որոնք անօրինություն են գործում։ Եվ կգցեն նրանց բոցավառ հնոցի մեջ. այնտեղ կլինի լաց և ատամների կրճտում։ Այն ժամանակ արդարները երկնքի արքայության մեջ կծագեն, ինչպես արեգակը։ Ով լսելու ականջ ունի, թող լսի»***[24]*։*

Եվ ինչպես որ երանություններն են փրկվածների համար հավիտենական լինելու, այդպես և ցավերն ու վշտերը՝ կորստի մատնվածների համար։

Եկեղեցու միակ և ամենակարևոր դերը հենց այն է, որ մարդկանց հասցնի փրկության բարի լուրը։ Արժեք չունի քրիստոնեությունը, եթե նրանից սպասվող ակնկալիքները միայն այս վաղանցուկ կյանքում ինչ-ինչ խնդիրներ լուծելու համար են։ Առաքյալն ասում է. ***«Եթե միայն այս կյանքի համար ենք հույս դրել ի Քրիստոս, ողորմելի ենք, քան բոլոր մարդիկ։ Բայց արդ, մեռելներից հարություն է առել Քրիստոս՝***

[24] Մատթ. 13:41–43:

ննջեցյալների առաջին պտուղը. քանզի մի մարդով մահ եղավ և մի մարդով՝ մեռելների հարություն: Ինչպես Ադամով բոլորը մեռնում են, նույնպես և Քրիստոսով ամենքը պիտի կենդանանան»[25]:

Եկեղեցու կողմից դարեր շարունակ իրականացվող շատ կարևոր ազգապահպան գործունեությունը՝ մշակույթի և լեզվի պահպանումը, անուրանալի է, սակայն այդ ամենը ծառի գեղեցիկ և շատ կարևոր սաղարթն է միայն, իսկ բուն պտուղը հոգիների փրկությունն է:

Ոմանք ասում են, թե ներկայումս շատ եկեղեցիներ են սկսել կառուցել, և որ դա պետք է դադարեցնել ու այդ գումարներով կենցաղային հարցեր լուծել: Դա նշանակում է, որ Առաջին Քրիստոնյա պետության տվյալ ներկայացուցիչները բացարձակ տեղեկություն չունեն Եկեղեցու դերի և նշանակության մասին: Նրանց համար դա սոսկ մոմավառության, տարբեր ծիսական արարողությունների վայր է, և ծեսերին մասնակցում են՝ ուղղակի ավանդույթից դրդված՝ ո՛չ իմաստը հասկանալով և ո՛չ էլ՝ կարևորությունը:

Վահան Թեքեյանը բանաստեղծության ձևով հուշում է. ***«Եկեղեցին Հայկական՝ դեպի երկինք բարձրացող գաղտնի մի ճամփա ունի...»:***

Այո, դա այդպես է, և վաղուց ժամանակն է, որ այդ ***«գաղտնի ճանապարհի»*** *մասին բոլորն իմանան:*

Գրված է. ***«Մարդկանց սահմանված է մե՛կ անգամ մեռնել և այնուհետև՝ դատաստան»***[26]:

Եվ քանի որ ***«մեղքի վարձը մահն է, իսկ Աստծու շնորհը՝ հավիտենական կյանք՝ մեր Տեր Քրիստոս Հիսուսի միջոցով»***[27]*, ուրեմն անհոգ չլինենք մեզ տրված այս միակ հնարավորության հանդեպ. ջանանք մեր հոգիների փրկության համար քայլ անել.* ***«Ասում եմ ձեզ, Աստծու հրեշտակների առաջ այսպես ուրախություն կլինի մեկ մեղավորի համար, որն ապաշխարում է»***[28]:

Իսկ եթե այս հավատն այսօր տիրեր մեր առաջին Քրիստոնյա պետությունում, ապա թե հազարավոր եկեղեցիներ ևս կառուցեին, բավարար չէր լինի բոլորի հոգևոր կարիքները հոգալու համար:

Իհարկե, պետք է մտածել հայրենիքի և ընտանիքի ու այլ կարևոր արժեքների մասին, սակայն պետք է հիշել Տերունական խոսքը. ***«Ի՞նչ օգուտ է մարդուն, եթե աշխարհը շահի, բայց իր անձը կորցնի ու տուժի. որովհետև, ով որ Ինձ և Իմ խոսքերը ամոթ համարի, նրան մարդու Որդին էլ ամոթահար պիտի անի, երբ գա Իր և Հոր և սուրբ հրեշտակների փառքով»***[29]:

---

25 Ա Կորնթ. 15:19–22:

26 Եբր. 9:27:

27 Հռոմ. 6:23:

28 Մարկ. 15:10:

29 Ղուկ. 9:25–26:

Իմաստուն լինենք. փնտրենք ամենակարևորը, և այդժամ մյուսներն ավելի դյուրին կերպով կստանանք՝ ըստ խոստման։ ***«Նախ խնդրեցե՛ք Աստծու արքայությունը և Նրա արդարությունը, և այդ բոլորը Աստված ձեզ ավելիով կտա»***[30]։

Ուրեմն, սիրելի հայրենակիցներ, եթե դեռ անպատրաստների շարքում եք գտնվում, և քանի դեռ Տերը մեզ կյանք է շնորհում, հարկ է, որ աշխատեք գտնել եկեղեցուց ելնող ***«փրկության գաղտնի ճանապարհը»***։

Դե ի՞նչ. այս զգուշացումով ավարտենք ***«Հայաստան. Արարչագործությունից մինչև երկրորդ Գալուստ»*** *գրքի երկրորդ հատորը՝ հայ ազգի մեծ բարեկամներից Ռաֆայել Զինուրովի խոսքով.*

«Ձեմ սխալվել ես բնավ. բոլոր հայերը մասունքն են հին աշխարհի։
Դուք կարող եք վիճարկել այս վճիռը,
Բայց հիշենք՝ անցած հազարամյակների ընթացքում
Ջափից շատ բան է անհետացել, նույնիսկ սանսկրիտը...

Անհետացան այն երկրները և բոլոր պետությունները,
Որոնք ամբողջ աշխարհը ցնցեցին։
Փարավոնները, Բաբելոնը և հզոր Հռոմը ոչնչացան...
Ջկան այդ բոլոր կայսրությունները՝ միջնաբերդերը նենգության։

... Նրանք բոլորը չքվեցին, իսկ Հայաստանը կա։
Դա ասում է աշխարհի քարտեզը։ Խնդրում եմ, հաշվի առեք դա։
Համաշխարհային պատմության մեջ ֆենոմեն է սա։
Ջեք գտնի ամբողջ աշխարհում այսպիսի մասունք-մարդիկ։

Հնագույն կայսրությունների հասակակիցն է հայ ժողովուրդը ,
Ինչպես ամուր բազալտե ժայռ, հավերժ է և անսասան։
Քանզի Թորգոմի ժառանգները դեռ մինչուրարտական
Ժամանակներից շարունակում են իրենց ազգատոհմը»[31]։

Կա՛ Հայաստանը և հայոց ազգը. ուստի այդ մասունքը լավ ճանաչելու համար կշարադրենք նաև այս գրքի III *հատորը։ Այն կսկսվի արդեն մեր Տեր և Փրկիչ Հիսուս Քրիստոսի ծննդյան (մ.թ.)՝ առաջին դարի անմիջապես սկզբից, և հենց սկզբից էլ կներկայացվի տեղեկություն նորից հրաշափառ մի երևույթի մասին, որ նույնպես կրելով համամարդկային բնույթ՝ դարձյալ շնորհված է Հայոց ազգին։*

Աշոտ դպիր Արևշատյան

---

30 Մատթ. 6:33:

31 Уфаеци (Зинуров Рафаил Наримановичь), Армения–путь тысячелетий, том I, Москва 2010 г., ст. 16–17.

Օգտագործված գրականության ցանկ

1. Անժելա Տերյան, Եվրոպայի ժողովուրդների հնագույն գրավոր աղբյուրները իրենց նախահայրենիքի՝ Հայաստանի ու հայերի մասին, Երևան 2014:
2. Անժելա Տերյան, Հայաստանը արարչագործության և քաղաքակրթության բնօրրան, Երևան, 2002:
3. Ա. Շ. Մնացականյան Հայ-ուրարտական առնչությունների հարցի շուրջը: Գարուն, հ. 9, 1969:
4. Աստուածաշունչ, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 1999:
5. Ա.Վ. Մուշեղյան, Մովսես Խորենացու դարը, Երևան 2007:
6. Արտակ Մովսիսյան, Հայոց պատմության աշխարհակալությունները, Երևան, 2008:
7. Արտակ Մովսիսյան, «Հնագույն պետությունը Հայաստանում՝ Արատտա», Երևան 1992:
8. Արտակ Մովսիսյան, «Սրբազան Լեռնաշխարհը», Հայաստանը Առաջավոր Ասիայի հնագույն հոգևոր ընկալումներում, Երևան, 2000:
9. Արտակ Մովսիսյան, Նախամաշտոցյան Հայաստանի գրային համակարգերը, Երևան 2003:
10. Արտակ Մովսիսյան, Բարեպաշտ արքաների աշխարհակալությունը, Երևան, 1997:
11. Բոգդան Գեմբարսկի, տես Սև Գիրք, Երևան 2011:
12. Գաբրիելյան Հ. Կ., «Հայերի բնօրրանը՝ Հայկական լեռնաշխարհը», տես – Հանդես ամսօրյա, 1998:
13. «Դասեր Հայոց եւ Հայաստանի հնագոյն պատմութեան», Բազմավեպ, 1912թ., հատոր Հ, թիվ 12, Վենետիկ Սուրբ Ղազար:

14. Ե. Մոմջյան, Անիվի ծագման պատմությունից, տես – Գիտություն և տեխնիկա, 1970–ական թ.:

15. Եւսեբի Պամփիլեայ Կեսարացիոյ, Ժամնակականք Երկմասնեայ, Ի Վէնէտիկ, 1818:

16. Երկիր Դրախտավայր. Օտարերկրացիները Հայաստանի և հայերի մասին..., մտահղացել է Ալբերտ Իսոյանը. Երևան 2014:

17. Եւսեբի ժամանակագիր, Երևանի Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարան:

18. Զենոն Կոսիդովսկի, «Բիբլիական ավանդապատումներ», Երևան 1980:

19. Զենոն Կոսիդովսկի, Երբ արևը աստված էր, Երևան 1987:

20. Էդվարդ Դանիելյան, Ա. Մելքոնյան, Հայոց Պատմություն, Երևան–2008:

21. Էդուարդաս Մեժելայտիս, «Իմ կրկնակի Արարատը», Երևան 1994:

22. Էլիզէ Ռէկլիի, Ռուսական Հայաստան կամ Արաքսի ավազանը, Վաղարշապատ 1890:

23. Թովմա Արծրունի և Անանուն, Պատմություն Արծրունյաց տան, Երևան 1978:

24. Ժագ Դը Մորգան, Հայ ժողովուրդի պատմութիւնը, Պոսթըն, 1947:

25. Լեոնիդ Վոլինսկի, «Երկու շաբաթ Հայաստանում», տես – «Յոթ գարունների երկրում» գիրք II, Երևան 1981:

26. Լևոն Միրիջանյան, Հայկյաններ, Երևան 1988:

27. Լևոն Շահինյան, Հայաստանը և առաջին Արշակունիները, Երևան 1993:

28. Կղեմեսի առաջին նամակը Կորնթացիներին, Գլուխ ԺԲ, տես– Գանձասար Աստվածաբանական հանդես, Ե, Երևան, 1994:

29. Հակոբ Սիմոնյան, Հիքսոսներ, ամսագիր Անդին 10, 2013:

30. Համլետ Ս. Մարտիրոսյան, Հայոց հնագույն պատմության էջեր, Երևան 2011:

31. Հարություն Մարտիրոսյան, Քարի դարից Ուրարտու, Երևան 1971:

32. Հայ ժողովրդի պատմություն, հ. I, Երևան 1971:

33. Հայ ժողովրդի պատմություն, Երևան 1985:

34. Հայոց Պատմություն, խմբ. Հր. Ռ. Սիմոնյանի, Երևան 2012:

35. Հայ ժողովրդի պատմություն, հ. I, Երևան 1971:

36. Հայ ժողովրդի Պատմություն, սկզբից մինչև XVIII դարի վերջը, Երևան 1975:

37. Հայկ Խաչատրյան, «Քերթողահայրը», Սովետական գրող, Երևան 1985:

38. Հերոդոտոս, Պատմություն ինը գրքից, Երևան 1986:

39. Հ. Վահան Վ. Ինգլիզեան, «Հայաստան Սուրբ Գրքի մէջ», Վիեննա, 1947:

40. Հրանտ Մաթեվոսյան, Հատընտիր հ. 1, «Մեծամոր», Երևան 2005:

41. Հ. Յ. Ավգեր, տես- «Բազմավեպ» ամսագիր, Վենետիկ 1912:

42. Հովհաննես Ահրամանյան «Հայ Արիներ» Թիվ 85, 86, 87, մայիս, հունիս, հուլիս, 2007:

43. Հովհաննես կաթողիկոս Դրասխանակերտցի, Հայոց պատմություն, Երևան 1996:

44. Հ. Ֆ. Պ. Լինչ, Հայաստան ուղեւորութիւններ եւ ուսումնասիրութիւններ, հատոր Ա, Կ. Պոլիս 1913:

45. Ղեւոնդ Ալիշան, Հայաստան յառաջ քան զլինելն Հայաստան, Վենետիկ, Սուրբ Ղազար, 1904:

46. Ղեւոնդ Ալիշան, «Յուշիկք հայրենեաց Հայոց», հատոր Ա, Ս. Ղազար Վենետիկոյ, 1920:

47. Մարիբաս Կատինայի ասորի բնագրի բեկորներուն գիւտը, Յ. Տաշեան, «Հանդես ամսօրեա, 1897, համար Ի:

48. Մաքսիմ Ռիլսկի, Կամուրջներ, Երեւան 1973:

49. Մելքոնյան Հ. Գ., Հայ-Ասորական Հարաբերությունների պատմությունից, Երևան 1970:

50. Մեր Հաղթանակները, հտ. Ա, նախագծի հեղինակ Գագիկ Հարությունյան, Երևան 2010:

51. Մելքոնյան Հ. Գ., Հայ-Ասորական Հարաբերությունների պատմությունից, Երևան 1970:

52. Միքայել Չամչյանց, Պատմություն Հայոց, Երևան 1985:

53. Միքայէլ Չամչյանց, Խրախճան պատմութեան Հայոց, ի Վէնէտիկ 1811:

54. Միխայել Դուդին, «Գարուն» ամսագիր, թիվ 12, Երեւան 1982:

55. Մխիթարայ Այրիվանեցիոյ Պատմութիւն Հայոց, Մոսկվա 1860:

56. Մհեր Հակոբյան, Հայկազունիները, Երևան 2012:

57. Մովսես Խորենացի, «Աստվածաբանական երկեր», Ս. Էջմիածին, 2007:

58. Մովսես Խորենացի, Պատմություն հայոց, Երևան 1968:

59. Յոթ գարունների երկրում, գիրք II, Երևան 1983:

60. Նիկողայոս Ադոնց, Հայաստանի պատմություն: Ակունքները X–VI դդ. մ.թ.ա.: Հայերի ծագումը: Հոդվածներ, Երևան 1972:

61. Շուշան Խաչատրյան, Աստվածաշունչը հայերի և Հայաստանի մասին (Համացանաց):

62. Պալասանեան Ս., Պատմութիւն Հայոց, սկզբից միչեւ մեր օրերը, Թիֆլիս 1890:

63. Ջահուկյան Գ. Բ., Ջրույցներ հայոց լեզվի մասին, Երևան 1992:

64. Ռ.Ա. Իշխանյան, Հայ ժողովրդի ծագման ու հնագույն պատմության հարցեր, Երևան 1988:

65. Ռաֆիկ Նահապետյան, Հունական և հռոմեական անտիկ սկզբնաղբյուրների ազգագրական տեղեկությունները Հայաստանի և հայերի մասին, Երևան 2018:

66. Ռոմիկ Քոչարյան, Պատմությունը եվ հերմենեվտիկան, Երևան 2016:

67. Սամվել Դիլանյան, Մանկական հանրագիտարան, Երևան, 2001:

68. Ս. Մ. Այվազյան, Հնագույն Հայաստանի մշակույթային պատ–մությունից, Երևան 1986:

69. Սամուէլի Քահանայի Անեցւոյ, Հաւաքմունք ի գրոց պատ–մագրայ, Վաղարշապատ 1893:

70. Սանդրո Սարդարյան, Հայաստանը քաղաքակրթության բնօրրան, Երևան, 2004:

71. Սարգիս Այվազյան, «Ակնհայտ երևում է, որ ուրարտերենը հայերեն է». կայք «Անկախ նորություն» Երեքշաբթի, 26 մարտի 2019:

72. Սարգիս Այվազյան, Ուրարտերեն –հայերեն, Երևան 2008:

73. Սեբեոս, Պատմություն, Երևան 2005:

74. Ստրաբոն, Աշխարհագրություն, գլուխ XVI. 9:

75. Վարուժան Կիրակոսյան, Հայերը և քրիստոնեության քարոզչությունը Հնդկաստանում, Քրիստոնյա Հայաստան երկշաբաթաթերթ, 2002 թ., Հունիս Բ, թիվ 12 (128):

76. Տ. Մատթեոս Ա. Կոստանդնուպոլսեցի, Հայելի Աստվածային Շնորհաց, Ս. Էջմիածին 2019 թ.:

77. Տեսութիւն պատմութեանց Աստուածաունչ Սուրբ Գրոց, բացաքննեալ երկասիրութեամբ տեառն տեառն Ստեփաննոսի

վարդապետի Ագնոց արքեպիսկոպոսի և ընդհանրական Աբբայի Մխիթարեանց, Վենետիկ, հատոր Ա, 1819:

78. Փեթ Ալեքսանդր, Աստվածաշնչի հանրագիտարան, Երևան 1999:
79. Քսենոփոն, Կյուրպեդիա, Երևան 2000:
80. Քսենոփոն, Անաբասիս, Երևան 1970:
81. Абаза В. А., История Армении, С. Петербург 1888.
82. Авдиев В. И. История Древнего Востока, Ленинград 1953.
83. Азимов А. Ближний Восток. 100 веков истории»: Эксмо; Москва 2011.
84. Айзек Азимов, "Египтяне", Москва 2007.
85. Александр Гумбольд, немецкий натуралист, путешественник, смотри Еженедельник «Етер», Ереван 2009 г., октябрь 29.
86. Алек Макелман, Тайна копья Лонгина, Москва 2006.
87. Амвросий Медиоланский, св. О девственницах, 24. В кн.: Творения святителя Амвросия, епископа Медиоланского по вопросу о девстве и браке. Казань, 1901.
88. А. П. Лопухина, Толкования Библия, 1, Петербургь, 1904–107.
89. А. П. Лопухинь, Библейская История Ветхого Завета, Монреаль, 1986.
90. Архиепископ Вениамин (Пушкарь), Священная Библейская история. Санкт Петербург – Владивосток 2008.
91. Археологическая экспедиция 1916 года въ Ванъ, доклад Н. Марра и І. Орбели, Петербург 1922.
92. Б. А. Тураев История Древнего Востока, том І, Ленинград 1936.
93. Барбара Мертц, "Древний египет, храмы, гробницы, иероглифы", Москва 2007.

94. Баганова Мария, Всемирная история в сплетнях, Москва 2011.

95. Б.Б. Пиотровский, Ванское царставо (Урарату), Москва 1959.

96. «Библейский Словар», Доктор Эрик Нюстрем 19–й в. ст. 367, изд. 1989 Cov.

97. Валерий Брюсов, Поэзия Армении, Москва 1916.

98. Валентина Новомирова, Гиксосы, журнал «Вера и жизнь», Киев 1/1998.

99. Валерий Брюсов, в книге «Русские писатели об Армении», Ереван 1946.

100. Васильев, Л.С. История Востока, Т. 1., Москва 2016.

101. В.В. Струве, История древнего востока, Москва 194.

102. Вестник Европы. Книга V, Том III. Евгенний Марков. Русская Армения. Санктпетербург 1901.

103. Виктор Абаза, История Армении, С. Петербургъ, 1888.

104. Владимир Борисович Миронов, Древний Восток и Азия, Москва, 2006.

105. Гари Адес “История страни Египет”, МИДГ орг., Москва 2008.

106. Гр. Капанцян, Хайаса–Колыбел армян, Ереван 1947.

107. Д. Г. Брэстедъ, История Египта, Москва 1915.

108. Двеид Рол, Утраченный завет. Изд–во Эксмо — Москва 2005.

109. Дэвид Рол, Боги Авариса, Москва 2011.

110. Девид Лэнг, “Армяне народ–созидатель”, Москва, 2004.

111. Девид Рол, Генезис цивилизации. Откуда мы произошли, Изд–во Эксмо, Москва 2002.

112. Деопик Дега Витальевич, История Древнего Востока, Москва 2016.

113. Джовани Гуайт. 1700 лет вернвсти. Москва 2005.

114. Доктор Генри Г. Геллей, 19–й век, “Краткий Библейский Толкователь”, Торонто, Канада, 1989.

115. Древняя Анатолия, изд. «наука», г. ред. Акад. Б. Пиотровский, Москва 1985.

116. Д. Брестед, Б. Тураев, "История Древнего Египта”, Москва, 2007.

117. Ефрем Сирин. Тварение т. 6, толкование на книгу пророчества Иезекииля, Москва 1995.

118. Жан–Жак Гласснер, Месопотамия, Москва «Вече», 2012.

119. Жан–Пьер Ришардо, Армяне чего бы это ни стоило, смотри – Армяне [сборник], Ереван 1991.

120. Жюль Леклерк. Поездка на Арарат. С.– Петербург 1893.

121. Зинуров Рафаиль Наримановичˇ (Уфаеци), Армения–путь тысячелетий, том I, Москва 2010.

122. И. Алиев, История Мидии, 1, Баку, 1960, ст. 64, прим, 8; H.R. Hall, The Ancient History of the Near East, L. 1952.

123. И. В. Виноградов, смотри История древнего востока, Москва 1989.

124. И. М. Дьяконов, «К праистории армянского языка», ИФЖ, 4, Ленинград 1985.

125. И. М. Дьяконов, История Мидии, М.–Л., 1956.

126. И. М. Дьяконов, Ассири–вавилонские источники по истории Урарту (АВИИУ), 1, прим. 4:

127. И.М. Дьяконов, Предыстория Армянского народа, Ереван 1968.

128. И. Л. Снегирев и Ю. П. Францов, Древний Египет, Ленинград 1938.

129. Иоанн Златоуст. Беседы о покаянии, VII, 5. Ibid. P. 371.

130. Иосиф Флавий, “Иудейские древности, том 1, “Феникс” Ростов–на–Дону, 2000.

131. Иоанн Кассиан Римлянин. Писания, Москва 1892.

132. История человечества, том II, (смотри) Дж. П. Мэллори, Индоевропейский феномен: Лингвистика и археология Москва 2003.

133. История человечества, том II, (смотри) Гамаль Мохтар, Долина Нила (1780–700), Москва 2003.

134. История Древнего Востока, под ред. В. И. Кузищина, Москва 1979.

135. История древнего востока, под ред. В.И. Кузищина (изд. третье, переработанное и дополненное), Москва 2005.

136. История древнего востока, под. ред. И. М. Дьяконов, Москва 1983.

137. История Древнего мира, том 1. Ранняя Древность. Ирина Сергеевна Свенцицкая (Сборник) Москва 2010.

138. К. В. Тревер, Очерки по истории культуры древней Армении.

139. К. В. Рыжов, Священная Иудея, Москва 2006.

140. К. Л. Кустодиев (протоирей), Опытъ истории Библейской женшины, Санктпетербургъ 1870.

141. К. П. Патканов, смотри Магда Нейман, Армяне, Ереван 1990.

142. Краткое историческое описание царства Арменскаго, Яковом Шамировым, Санктпетербургъ 1786.

143. Кристиан Жак, Египет великих фараонов, Москва 1992.

144. Кьяра Децци Бардекси, Месопотамия: колыбель человечества, Изд. «Ниола–Пресс», Москва 2008.

145. Лия Аветисян, Индия и армяне, Армянский фактор (независимый ежедневник), 31. 07. 2015 г., № 18.

146. Л.Л. Карапетян. "Хозяйство и духовная культура древной Армении". Ереван 1999.

147. Магда Нейман, Армяне, смотри – Армяне [сборник], Ереван 1991.

148. Малая история искусств, Москва 1976.

149. Матвей Вениаминов, К вопросу о гиксосах, Вера и Жизнь, Киев 3/1999.

150. Мария Павловна Згурская, Древний Египет, Харьков 2008.

151. М. Д. Бухарин, И. А. Ладынин, Б. С. Ляпустин, А. А. Немировский, История Древнего Востока, Москва 2009.

152. Мойшезон Борис Гершевич, Арменоиды – аристократия древности, журнал «Ной» №19, Москва 1996.

153. Надеждинъ Николай Ивановичъ, Армяно–Григорианская Церков. Санкпетербургь 1843.

154. Назаров П.Г., Происхождение дадонской арты евреской арцы, ур–арту и стран артавы, част 14, Челябинск 1997.

155. Наука и человечество, международный ежегодник, Т. В. Гамкрелидзе, В. В. Иванов. Индоевропейцы, Москва, 1989.

156. "Народы Кавказа", том 2, 1962.

157. Н. Б. Янковская, Ашшур, Митании, Аррапхе, в книге – История Древнего мира, Москва 1989.

158. Н. В. Арутюнян, «Биайнили» (Урарту), Ереван, 1970.

159. Нефедов С. А., История древнего мира, Москва 1996.

160. Н. Нефедьева, Взгляд на Армянсквую область, Санктпетербургъ 1839.

161. О. Красновская, Н. Пшеничникова и др., Кавказская овчарка, Москва 1998.

162. Оппенхейм А. Лео, Древняя Месопотамия. — 2–е, испр. и доп... — Москва: Наука, 1990.

163. Православный собеседникь, Казань 1906.

164. Поучения святителя Николая Сербского на каждый день года (из «Охридского пролога»), Минск 2014.

165. Полное собрание творений святителя Иоанна Златоуста в 12–ти томах, том 10–12, Минск 2005.

166. Протоиерей Олег Стеняев, Беседы на Ежангелия от Матфея, т. I, Мсква 2013.

167. П. Юнгеровъ, Частное историко–критическое введение въ священныя Ветхозавътныя книги. Книги законоположительныя, историческия и учительныя. Казан 1907.

168. Р. Грейвс, Белая богиня. Историческая грамматика поетической мифологии, Екатеринбург, 2005.

169. Р. Грейвс, Мифы Древней Греции, Санкт–Петербург, 2016.

170. Реваз Джапридзе, Четыре дня в стране Айоса, Тбилиси 1988.

171. Ригведа, Москва, 1972, I, 31, 10. I, 130, 6. II, 20, 24, III, 59, 5. Литература древнего Востока, 1984, Махабхарата (63, 65).

172. Р. М. Мунчаев, Кавказ на заре бронзового века, изд. “Наука”, Москва 1975.

173. С. А. Межлумян. Палеофауна эпох энеолита, бронзи и железа на теретории Армении. Ереван 1972.

174. С. А. Нефедов, Иллюстрированная история древнего мира, Екатеринбург 1994.

175. Сабатино Москати, Цивилизации Древнего Востока, Москва 2010.

176. Святой Ефремь Сиринь, Творения, том 7, Москва 1995.

177. Сергея Глинки, Две Повести въ стихахъ, Москва 1831.

178. Сергей Глинка, Обозрение истории армянского народа, Москва 1832.

179. С. К. Дикшит, Введение в археологию, Москва 1960.

180. Словарь иностранных слов, вошедших в состав русского языка.–

Павленков Ф., 1907.

181. Стивен Бертман, Месопотамия, университет Виндзора, «Вече», Москва 2007.

182. Степанос Тароский – Асохик, Всеобщая история, Москва 1864.

183. Страбон, изд. "Наука", Москва 1964.

184. Сьюзен Уайс Бауэр, История Древнего мира. От истоков Цивилизации до падения Рима История Древнего мира, АСТ, Москва, 2011.

185. Феодорит Кирский, блаж. Изъяснение трудных мест Божественнаго Писания. Толкование на книгу Иисуса Навина. Творения. Т. I. Москва, 1855.

186. Филон Александрийский, Против Флакка о посольстве к Гаю. Иосиф Флавий, О древности еврейского народа, Против Апиона, Москва 1994.

187. Филипп Симон, Мари–Лор Буэ, Древний Египет, Москва 2009.

188. Хачатурян В.А., Урарты или урартийцы – кто они?, Ереван 1991.

189. Х. Ф. Б. Линч, Армения, II, Тифлис, 1910.

190. Штайндорф Георг, Когда Египет правил Востоком. Пять столетий до нашей эры, Москва 2013.

191. Эдриан Джилберт, Тайны волхвов, Москва 1998.

192. Элизе Реклю «Мнения европейцев об Армянском вопросе», «Дрошак», 2 издание 1908.

193. Эммануэль Анати, "Палестина до древних евреев", Москва 2007.

194. Эмили Бомон, Древний Египет, Москва 2009.

195. Энциклопедический Словарь, Брокгауза и Ефрона, Том I, С–Петербургь 1890.

196. Энциклопедический Словарь, Брокгауза и Ефрона, Москва 2003.

197. Энциклопедия Библейская, труд и издание архимандрита Никифора, Москва 1891 3–е издание, Москва, 2005.

198. Энтони Холмс, Древний Египет, Москва 2014.

199. Я. и Д. Арзановы, Начертания истории Царства Армянского, Москва 1827.

200. De op. Trin. In. Jos., 10. In: Scognamiglio R..Giosuè nell'esegesi dei Padri. "Parole di Vita", №6 (1986).

201. Fulgenzio di Ruspe. Le condizioni della penitenza e della fede. Ibid.

202. Cipriano di Cartagine. Lettera 69, al Figlio Magnio. In: La Chiesa. Lettere scelte. Milano, 1997.

203. J. B. Chabot, la pretendue chronique de Mariabas le Chaideen, «Jonr. Asiatique», 1905, p. 251.

204. «Jonrnal Asiatique», 1903.

205. Matthew Henry's, Commentary, In One Volume Genesis to Revelation, Grand Rapids, Michigan, USA 1960.

206. Maximillien de Lafayette, "Civilization and Arts of Armenia from Pre–History to the Present Day: Its Culture, Society, Stars, Artists and Celebrities" Volume 1, USA San Bernardino, CA 25 May 2015.

207. Origene. Omelie su Giosuè, III, 5. Ibid.

208. Origene, Omelie su Ciosue, III, 5, Roma, 1993.

209. Origene. Omelie su Giosuè, III, 5. Ibid. P. 81. О человечестве Христа как "окне" в христологии Оригена см., напр.: Scognamiglio R. "Anthropos apodemon" (Mt. 25, 14). Problema e stimoli per la Cristologia di Origene. In: Origeniana Quarta. Roma, 1980.

210. Pesiqta Rav Kahana, 13, 4. մեջբերում. Stemberger G. Il Midrash. Uso rabbinico della Bibbia. Boligna, 1992.

211. Robert Drews, "The Coming of the Greeks," PRINCETON UNIVERSITY PRESS Princeton, New Jersey 1988.

212. Russotto M. Giosue, Finalmente la terra! Milano.

213. Soulevement national de l Armenie Chretienne... ecrit par Elisee Vartabed... traduit en francais par M. I Abbe Grejoire Karabed de I Academie armenienne de Venise. Paris.

214. Համացանց

215. Библия и наука.

216. Всемирная история, История народов и государств.

217. Диодор Сицилийский, Историческая библиотека, книга II.

218. Кирпотин, Валерий Яковлевич, «О былинном эпосе эпос Давид Сасунский».

219. Константин Ковалев.

220. Наталиа Барисовна Соболь.

221. Пивоваров С., Торосян А., Загадка тысячелетий или кто такой Моисей?.

222. Пьер Монтэ, Египет Рамсесов: Москва 1989 г.

ՅԱՆԿ

Երկու խոսք 4

Առաջաբան 7

ԳԻՐՔ I

ՀԱՅԱՍՏԱՆԸ ԵՎ ՆՈՐ ԶԵՎԱՎՈՐՎՈՂ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 13

Հայաստան և Սարգոն Առաջին 13

Հայաստան և Աքքադ 20

Սարգոնի ծնունդը 23

Արքայական ծագումը 27

Հայաստանը և Նարամ-Սուենը 30

Նարամ-Սուենն՝ «աստված» 31

Նարամ-Սուենի ոտնձգությունները Հայաստանի հանդեպ 34

Սև ամպեր Աքքադական կայսրության գլխին 35

Ովքեր էին կուտիները 37

Պարզաբանումներ՝ Աքքադի վրա կուտիների հարձակման վերաբերյալ 44

Արմանում – Արմենիա 45

Աստծո կամքի իրականացնողները 51

Աստծո պատիժը 56

Հայաստան և Շումեր 58

Հայաստանը և շրջակա պետությունները 62

Արամ I Մեծ 64

Արևելյան տարածքների ազատագրումը 66

Մեդացիների մասին 68

Հարավային տարածքների ազատագրումը 71

Արամ արքայի Արշավը դեպի Արևմուտք 74

Պայապիսի և Հայաստանի որոշտարածքների հետ կապված խնդիրները 76

Նինոս *78*
Նինոսն՝ ասորական արձանագրություններում *83*
Արամ Մեծի վախճանը *86*
Արա Գեղեցիկ *88*
Պատերազմը *95*
Արալեզների պատումը *100*
Արայան Արա՝ կարդոս *104*
Ապստամբություն *108*
Շամիրամի առեղծվածը *112*
Զրադաշտ *118*
Սոսանվեր Անուշավանը՝ Հայոց թագավոր *121*
Ազատագրում *124*
Հայաստանը Պարետի օրոք. Քասեցիներ *128*
Զագրոսի՞ լեռնաշղթա, թե՞ Հայկական լեռնաշխարհ *131*
Քասեցիների էթնիկական պատկանելության մասին *134*
Խիստ զարգացած «թափառաշրջիկ քոչվորները» *136*
Նոր արշավանք՝ Հայաստանից Հնդկաստան. Արիներ *140*
Ամփոփում *144*

ԳԻՐՔ – II

ՆԱԽԱՀՆԱՄՈՒԹՅԱՆ ԿԱՄՔԻ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂՆԵՐԸ ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՌՆԱՇԽԱՐՀԻՑ *146*
Հիքսոսներ *146*
Սուրբ երկիր Արարատից դեպի Սուրբ երկիր Պաղեստին *147*
Մարտարշավ դեպի Եգիպտոս *152*
Գիտական աշխարհի կարծիքները հիքսոսների ազգային պատկանելության մասին *160*
Քաղաքակիրթ ա՞զգ, թե՞ վայրենաբարո քոչվորներ *165*
Քուռարաքսյան քաղաքակրթության կենտրոն Հայաստանի հնագույն մշակույթը և հիքսոսները *169*

Հայ - հիքսոսներ
Մետաղագործություն, զենք, զինամթերք 176
Բրոնզ 177
Հիքսոսների երկաթե զենքերը 179
Հիքսոսների նետ ու աղեղը 182
Զիաբուծության հայրենիքը ևս Հայաստանն է 183
Շումերները՝ ձիու մասին 188
Զիասարքեր 190
Ուշ շրջան 191
Մարտակառքերի հայրենիք՝ Հայաստան 195
Հայաստանը և անիվի գյուտը 197
Հայկական լեռնաշխա՞րհը, թե՞ տափաստանային երկրները 199
Լճաշեն 202
Մարտակառքերը և Հնդեվրոպական աշխարհը 206
Հիքսոսներ և քասեցիներ 212
Հիքսոսները և արիները 214
Մարտակառքեր - եզրահանգում 215
Հիքսոս, Հաքսոս, թե Հայքսոս 219
Հիքսոսները Հայկական լեռնաշխարհից եկած
Հայկի սերունդներն էին՝ հայերը 224
Եզրակացություն 228
Հիքսոսների իշխանությունը Եգիպտոսում և հրեաների գալուստը
հիքսոսյան Եգիպտոս 231
Այն մասին, թե ինչպես Հակոբն իր սերունդներով նույնպես
եկավ Եգիպտոս 236
Հիքսոսները և հրեաները հավատակիցներ էին 243
Սեթ 248
Արեգ քաղաքի մասին 249
Մեսիական երկրորդ առաքելությունը Հայաստանից 250
Հիքսոսների ելքը 256
Հրեաները Եգիպտոսում հիքսոսներից հետո 260

Հիքսոսները Քանանում 263
Հիքսոսների ելքը Քանանից 266
Վերջաբան 268

ԳԻՐՔ – 3

ՆՈՐ ԲԱՅԱՀԱՅՏՈՒՄՆԵՐ 270
Արդար և Երանելի Հոբի մասին 270
Բարեպաշտությանը հետամուտ տարածքներ 274
Հոբ և Եսավ 276
Հոբի գրքի մասին 279
Հայկական գործոնը հին աշխարհի լայնածավալ տարածքներում 282
Արևելք 285
Հոբը և Հայաստանը 287
Հոբի Գիրքը և Հին Կտակարանը 292
Հոբի Գրքի և Հին Կտակարանի ընդհանրությունները 293
Սուրբ Գիրք՝ մինչ Հին Կտակարանը 295
Հոբի գրքից եզրակացություններ՝ հայերի մասին 296
Վերջաբան 298
Միտանի 299
Խուրիներ 303
Միտանի - արիներ 306
Միտանիի ներքին կառուցվացքը և հարևան երկրների
հետ նրա հարաբերությունները 310
Ռազմական ոլորտ 312
Միտանի – Եգիպտոս 314
Միտանիի անկումը 316

ԳԻՐՔ – IV

ԽՈՐՀՈՒՐԴ ՄԵԾ ԵՎ ՍՔԱՆՉԵԼԻ 320
Ելք Եգիպտոսից 320
Ամաղեկ 324

Հիքսոս - Ամաղեկ 329
Քանանի մատույցներում 330
Իսրայելի մուտքն Ավետյաց Երկիր 332
Ռահաբը՝ որպես բարեպաշտության և հավատքի ուսուցիչ 340
Ռահաբի և իր ընտանիքի ազատագրումը 351
Ռահաբ և Սաղմոն 352
Անհավանական իրողություններ 354
Ի՞նչ պետք է հասկանալ «կռապաշտություն» հասկացության տակ .. 355
Ղովտ - Ռահաբ, Սոդոմ - Երիքով 358
Ջուգահեռների ամփոփում 361
Ի վերջո, ո՞վ էր Ռահաբը.եթե՝ բարեպաշտ, ապա ինչո՞ւ՝ պոռնիկ 368
Ռահաբը՝ որպես կենդանի նահատակ 372
Հռութ 377
Հռութ և Բոոս 385
Անհամատեղելիություն 388
Խորհուրդ մեծ և սքանչելի 391
Դավիթը տեր է կանգնում իր պապենական ժառանգությանը 399
Վերջաբան 402

ԳԻՐՔ – V

ՀԱՅԱՍՏԱՆ. ԱՆԿՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՆՈՐ ՎԵՐԵԼՔՆԵՐԻ ՇՐՋԱՆ 404
Հայ-խեթական հարաբերություններ 404
Հայասան և հայերի «եկվորության» խնդիրը 408
Հայ - ասուրական հարաբերություններ 411
Ուրարտու-Վանի թագավորություն. Արամե 414
Սարդուրի I 418
Իշպուինի 420
Մենուա 422
Արգիշտի I 428
Արգիշտին և Ասորեստանը 433
Սարդուրի II 438

Ռուսա I 442
Մուսասիր 445
Արգիշտի II 448
Ռուսա II 455
Շինարարությունը՝ Ռուսա II-ի օրոք 459
Սարդուրի III 460
Ասորեստանի վախճանը 462
Վանի թագավորության մշակույթը 468
Մետաղագործություն 470
Խեցեգործություն 473
Զարդեր 473
Ջիաբուծություն 474
Շինարարություն 475
Գյուղատնտեսություն 478
Գինեգործություն 480
Ոռոգում 481
Անասնաբուծություն 484
Ամփոփում 485
Ուրարտու պետությունը եղել է Հայկական լեռնաշխարհի տարածքում 486
Հայաստանի նույնանիշ անվանումները 487
Ծագումնաբանություն. Հայե՞ր, թե՝ ուրարտացիներ 492
Հայերե՞ն, թե՞ ուրարտերեն 501
Սեպագիր արձանագրություններ 505
Հայկական լեռնաշխարհում գործածության մեջ են եղել տարբեր գրային համակարգեր 509
Սեպագրերի լեզուն՝ խուրիերեն 513
Սեպագրերի լեզուն՝ հայերեն 516
Արարատյան երկրի արքայական դինաստիաների մասին 520
Պատերազմ 525
Թագադրում 528

Պարզաբանումներ *529*
Հայկազուններից անցումն այլ դինաստիայի *530*
Հայկազունների վերահաստատվելը հայոց գահին *532*
Մշակույթի փոփոխություն *536*
Հրաչյա *538*

ԳԻՐՔ VI

ԵՐՎԱՆԴՈՒՆԻՆԵՐԻՑ՝ ՄԻՆՉ ԱՌԱՋԻՆ ԴԱՐ *546*
Երվանդունիներ *546*
Մարտարշավ՝ դեպի Բաբելոն *554*
Կյուրոս և Տիգրան *556*
Վահագն Երվանդյան *561*
Հայաստանն Աքեմենյան Պարսկաստանի ժամանակաշրջանում *564*
Հունական ռազմաջոկատի անցումը Հայաստանով *568*
Ալեքսանդր Մակեդոնացին և Հայաստանը *571*
Հայաստանը Սելևկյանների ժամանակ *580*
Արտաշեսյաններ, թե Արշակունիներ *584*
ԱՐՇԱԿՈՒՆԻՆԵՐ. Վաղարշակ *592*
Վաղարշակի թագավորելը *597*
Հայոց պատմության գյուտը *600*
Արշակ *602*
Արտաշես *605*
Տիգրան Մեծ *609*
Տիգրանը և Հռոմը *613*
Կայսրության անկման նախանշաններ *617*
Խարդավանքներ *620*
Պոմպեոս *621*
Արտավազդ II *625*
Վերջաբան *633*

Օգտագործված գրականության ցանկ *651*

Աշոտ դպիր Ահնշատյան

ՀԱՅԱՍՏԱՆ ԱՐԱՐՉԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԻՑ ՄԻՆՉԵՎ ԵՐԿՐՈՐԴ ԳԱԼՈՒՍՏ

Հատոր II

Համակարգչային ձևավորումը՝ Հեղինե Փիլոյանի
Ալվարդ Օհանջանյանի

Չափսը՝ 70x100 1/16։
Թուղթը՝ օֆսեթ։ Տպագրությունը՝ օֆսեթ։
33 տպ. մամուլ։ Տպաքանակը՝ 1000 հատ։
«Էդիթ Պրինտ» հրատարակչություն
ք. Երևան, Դավիթ Մալյան 43։
Հեռ.՝ (+374 10) 52 08 48։
E-mail։ info@editprint.am

EDIT PRINT
43 D.Malyan str., Yerevan
Tel.: (374 10) 520 848
www.editprint.am
info@editprint.am

ԷԴԻԹ ՊՐԻՆՏ
Երևան, Դ. Մալյան 43
հեռ.՝ (374 10) 520 848
www.editprint.am
info@editprint.am